ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք բուհերի ոչ մասնագիտական
և նախապատրաստական բաժինների
սովորողների համար



Երևան
ՌՀՀ հրատարակչություն
2026


HOMORES SACRA

МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

ИСТОРИЯ РОССИИ

Учебник для учащихся непрофильных и подготовительных отделений вузов

Ереван
Издательство РАУ
2026

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍ–ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք բուհերի ոչ մասնագիտական և նախապատրաստական բաժինների սովորողների համար

Երևան
ՌՀՀ հրատարակչություն
2026

ՀՏԴ 94(470+571)(075.8)
ԳՄԴ 63.3(2)ց73
Ռ 950

Գլխավոր խմբագիր՝
բան. գիտ. դոկտոր, պրոֆ. **Գայանե Գևորգյան**

Մասնագիտական խմբագիրներ՝
պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. **Երվանդ Մարգարյան**
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ **Բենիամին Մայիլյան**

Ռուսերենից թարգմանել են՝ մանկ. գիտ. թեկն., դոցենտ **Ժ.Ռոստոմյանը** (1-6 գլուխներ), բան. գիտ. թեկն., դոցենտ **Ն. Իսկանդարյանը** (7-13 գլուխներ), բան. գիտ. դոկտոր, պրոֆ. **Գ.Գևորգյանը** (14-18 գլուխներ), դոցենտ **Կ.Սահակյանը** (19-22 գլուխներ, գրակ. և նկարազարդ. ցանկեր)

Ռ 950 **Ռուսաստանի պատմություն**: Դասագիրք բուհերի ոչ մասնագիտական և նախապատրաստական բաժինների սովորողների համար. – Եր.: ՌՀՀ, 2026. – 616 էջ:

Դասագիրքը կազմվել է՝ բուհերի ոչ մասնագիտական և նախապատրաստական բաժինների սովորողներին Ռուսաստանի պատմություն դասավանդելու հայեցակարգին համապատասխան: Այն ստեղծվել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի և առաջատար բուհերի գիտաշխատողների ջանքերով՝ Ռուսաստանի պատմությանն առնչվող նորագույն մոտեցումների հաշվառմամբ:

Դասագրքում ներկայացված են Ռուսաստանի պատմության զարգացման հիմնական փուլերը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Գիրքը նախատեսված է նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքը կազմակերպելու, սեմինարներին և ատեստացիաներին արդյունավետորեն նախապատրաստվելու համար:

ՀՏԴ 94(470+571)(075.8)
ԳՄԴ 63.3(2)ց73

ISBN 978-9939-67-399-8

© ՌՀՀ հրատարակչություն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

§ 1. Պատմությունը՝ «կյանքի ուսուցիչ» 11
§ 2. Ռուսական քաղաքակրթության ստեղծման նախադրյալները: Ռուսաստանը՝ որպես պետություն-քաղաքակրթություն 14
§ 3. «Ռուսաստանի պատմություն» առարկան և ժամանակագրական ու աշխարհագրական շրջանակները 21
§ 4. Պատմական աղբյուրները և դրանց դերը պատմության ուսումնասիրության հարցում 27

Գլուխ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ՌՈՒՍԻԱՆ IX ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIII ԴԱՐԸ

§ 5. Հնագույն ժամանակներում ժամանակակից Ռուսաստանի տարածքում կազմավորված պետությունները և ժողովուրդները 32
§ 6. Արևելյան Եվրոպան մ.թ. I հազարամյակում. սլավոնների վերաբնակեցումը
§ 7. Ռուսիա պետության ստեղծումը 46
§ 8. Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում և դրա նշանակությունը 57
§ 9. Ռուսիան X դարի վերջից մինչև XII դարի 20-ական թվականները 60
§ 10. Ռուսական տարածքները XII դ. կեսերին և XIII դ. առաջին երրորդում 67
§ 11. Արտաքին քաղաքականությունը և միջազգային կապերը 73

Գլուխ 3. ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ XIII–XV ԴԴ. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

§ 12. Մոնղոլական արշավանքը և Ոսկե Հորդայի ստեղծումը 78
§ 13. Բաթու խանի արշավանքից հետո ռուսական հողերի ճակատագիրը 81
§ 14. XIV դար՝ Մոսկվայի «բարձրացումը» 88
§ 15. Արևելյան Եվրոպան XIV–XV դարերում 98
§ 16. Ռուսական պետության կազմավորումը 105
§ 17. Ռուսական հողերի հասարակական կարգը 108
§ 18. Ռուսիայի մշակույթը IX–XV դարերում 113

Գլուխ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ

§ 19. Ռուսաստանը XVI դարի առաջին երեք տասնամյակում 126
§ 20. Իվան IV-ի կառավարումը: Ներքին քաղաքականությունը 129
§ 21. Իվան IV-ի վարած արտաքին քաղաքականությունը 135
§ 22. Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը XVI դարում 139

Գլուխ 5. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVI–XVII ԴԴ. ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ: ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
§ 23. Խառնակության պատճառները և պատմական նախադրյալները....146
§ 24. Խառնակ ժամանակների սկիզբը....149
§25. Խառնակ ժամանակների բարձրակետը....153
§ 26. Ազգային-ազատագրական շարժման վերելքը: Ժողովրդական աշխարհազոր....157
§ 27. Խառնակ ժամանակների ավարտը....162

Գլուխ 6. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐՈՒՄ
§ 28. Ռուսաստանի սոցիալական և քաղաքական զարգացման հիմնական միտումները....167
§ 29. Պետությունը և եկեղեցին....174
§ 30. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը....177
§ 31. Սիբիրի յուրացումը....182
§ 32. Ռուսական մշակույթը XVI–XVII դարերում....185

Գլուխ 7. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՊԵՏՐՈՍ I-Ի ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ
§ 33. Բարեփոխումների պատճառներն ու բնույթը....195
§ 34. Ռուսաստանի միջազգային դիրքը XVIII դարի սկզբին: Հյուսիսային պատերազմը....197
§ 35. Պետրոս I-ի տնտեսական և սոցիալական քաղաքականությունը....203
§ 36. Պետրոս I-ի բարեփոխումները կենտրոնական կառավարման ոլորտում և տեղական ինքնակառավարման մարմինները: Ռազմական բարեփոխումներ....208
§ 37. Դիմադրություն բարեփոխումներին....214
§ 38. Պետրոս I-ի բարեփոխումները մշակութային ոլորտում: Բարեփոխումների կարևորությունը....215

Գլուխ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ ԵՎ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
§ 39. Պալատական հեղաշրջումների դարաշրջանը....222
§ 40. Եկատերինա II-ի ներքին քաղաքականությունը: «Լուսավոր աբսոլյուտիզմ»....231
§ 41. Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակները, խնդիրները և արդյունքները XVIII դարի երկրորդ կեսին....240
§ 42. Ռուսաստանը XVIII–XIX դարերի սահմանագծին: Պավել I....243

Գլուխ 9. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ
§ 43. Ալեքսանդր I-ի «փառահեղ դարը»....246

§ 44. Արտաքին քաղաքականությունը: 1812 թվականի Հայրենական պատերազմը 249
§ 45. Դեկաբրիստների շարժումը 253
§ 46. Նիկոլայ I-ը և նրա դարաշրջանը 256
§ 47. 1820-1850 թթ. արտաքին քաղաքականությունը 258
§ 48. XIX դարի առաջին կեսի հասարակական միտքը 262

Գլուխ 10. ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ
§ 49. Ալեքսանդր II-ի մեծ բարեփոխումները 268
§ 50. Ալեքսանդր III-ի վարած ներքին քաղաքականությունը 273
§ 51. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը XIX դարի երկրորդ կեսին 277
§ 52. Ռուսաստանի ժողովուրդները և կառավարության ազգային քաղաքականությունը 281
§ 53. XIX դարի երկրորդ կեսի հասարակական շարժումները 283

Գլուխ 11. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ
§ 54. Ռուսական կայսրությունը դարերի սահմանագծին 290
§ 55. Ռուսաստանը միջազգային հարաբերությունների համակարգում 293
§ 56. Ռուսական առաջին հեղափոխությունը 297
§ 57. I և II Պետական դումաները 304
§ 58. Ստոլիպինի բարեփոխումները 307
§ 59. Ռուսաստանը I համաշխարհային պատերազմի ժամանակ 310

Գլուխ 12. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
§ 60. Գիտությունը և կրթությունը 315
§ 61. Ճարտարապետությունը և գեղանկարչությունը 319
§ 62. Ռուսաց լեզուն և գրականությունը 323
§ 63. Թատրոնը և երաժշտությունը 327

Գլուխ 13. 1917–1922 թթ. ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ
§ 64. 1917 թվականի հեղափոխական ճգնաժամի պատճառները 332
§ 65. Միապետության անկումը 335
§ 66. Ռուսաստանը փետրվարից մինչև հոկտեմբեր 337
§ 67. Քաղաքացիական պատերազմը 341
§ 68. Բոլշևիկների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ 348

Գլուխ 14. 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
§ 69. Խորհրդային Ռուսաստանի ներքին և արտաքին իրավիճակը քաղաքացիական պատերազմի ավարտից հետո 354
§ 70. Անցում նոր տնտեսական քաղաքականության 357
§ 71. Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների (ԽՍՀՄ) ստեղծումը 362
§ 72. Քաղաքը և գյուղը 1920-ական թվականներին: Քաղաքական պայքարը ՆԷՊ-ի ժամանակաշրջանում 365
§ 73. Խորհրդային հասարակությունը 1920-ական թվականներին 369

Գլուխ 15. ԽՍՀՄ-Ը 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 74. «Ամբողջ ճակատով խորհրդային հարձակման» սկիզբը 374
§ 75. Երկրի արդիականացման և պաշտպանունակության ամրապնդման ուղեգիծը 377
§ 76. Զանգվածային կոլեկտիվացում և արդյունքները 381
§ 77. 1930-ական թվականների քաղաքական համակարգի առանձնահատկությունները 386
§ 78. Սովետական հասարակության նոր կերպարանքը 391
§ 79. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1920–1930-ական թվականներին 394
§ 80. Խորհրդային Միությունը Հայրենական Մեծ պատերազմի նախօրեին 399

Գլուխ 16. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ
§ 81. Նացիստական հարձակման դիմագրավումը 407
§ 82. Բռնազավթման ռեժիմը: Պարտիզանական շարժում: 412
§ 83. Արմատական բեկում պատերազմի ընթացքի մեջ 416
§ 84. Խորհրդային թիկունքը պատերազմի տարիներին 421
§ 85. Մեծ հաղթանակը 427

Գլուխ 17. ԽՍՀՄ–ը 1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ 1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ
§ 86. Տնտեսության հետպատերազմյան վերականգնումը 433
§ 87. Հասարակական-քաղաքական իրավիճակը երկրում 1940-ականների վերջից մինչև 1950-ականների սկիզբը 437
§ 88. Հասարակական-քաղաքական կյանքը 1950-ականների կեսերից մինչև 1960-ականների կեսերը 440
§ 89. Ագրարային խնդրի լուծման որոնումները 445
§ 90. Արդյունաբերական ոլորտը 1955–1964 թվականներին 447
§ 91. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 451

Գլուխ 18. ԽՍՀՄ-Ը 1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1980-ԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ
§ 92. Երկրի տնտեսական զարգացումը 458
§ 93. Խորհրդային հասարակությունը «զարգացած սոցիալիզմի» ժամանակաշրջանում 463
§ 94. ԽՍՀՄ-ը միջազգային ասպարեզում 466
§ 95. Աճող բացասական միտումներ տնտեսության մեջ 1980-ականների սկզբին 470
§ 96. ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքական մարտահրավերների աճը 1980-ականների առաջին կեսին 473

Գլուխ 19. ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ ԵՎ ԽՍՀՄ ՓԼՈՒԶՈՒՄԸ
§ 97. Վերակառուցման քաղաքականության սկիզբը: 1985-1986 թվականներ 476
§ 98. Արմատական վերակառուցման ժամանակաշրջան: 1987–1989 թվականներ 480
§ 99. Վերակառուցման քաղաքականության ճգնաժամ: 1990–1991 թվականներ 484
§ 100. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը վերակառուցման ժամանակաշրջանում 488
§ 101. ԽՍՀՄ փլուզումը 490

Գլուխ 20. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ 1990-ԱԿԱՆՆԵՐԻՆ
§ 102. Տնտեսական բարեփոխումների սկիզբը 494
§ 103. 1993 թվականի քաղաքական ճգնաժամը 497
§ 104. Ռուս հասարակությունը բարեփոխումների շրջանում 501
§ 105. Ճգնաժամային երևույթների հաղթահարումը երկրի կյանքում 504
§ 106. Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությունը 508

Գլուխ 21. ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ
§ 107. Մշակույթի ընդհանուր բնութագիրը 512
§ 108. Գրականություն 517
§ 109. Կերպարվեստ 523
§ 110. Թատրոն 528
§ 111. Երաժշտություն 531
§ 112. Կինոարվեստ 534
§ 113. Ճարտարապետություն 538

Գլուխ 22. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԸ

§114. Համաշխարհային պատմության հիմնական միտումները, խնդիրներն ու հակասությունները XXI դարի սկզբին 544
§ 115. Ռուսաստանի քաղաքական զարգացումը XXI դարի սկզբին 549
§ 116. Երկրի տնտեսական զարգացումը XXI դարի սկզբին 553
§ 117. Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությունը XXI դարի սկզբին 558
§ 118. 2014–2022 թթ. արտաքին քաղաքական իրադարձությունները 562

Գրականության ցանկ 569
Համացանցային ռեսուրսների ցանկ 576
Ցուցադրությունների ցանկ 579
Հավելված 595

ԳԼՈՒԽ 1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ

§ 1. Պատմությունը՝ «կյանքի ուսուցիչ»

Ռուսաստանի պատմության ուսուցումը բարձրագույն դպրոցում: Հին ժամանակներից պատմությունն ընկալվել է որպես magistra vitae, այսինքն՝ մարդու և հասարակության կյանքում՝ որպես ուսուցիչ, դաստիարակ:

Պատմությունը և պատմական գիտելիքները բացառիկ կարևոր դեր են խաղում մարդու՝ իրեն շրջապատող աշխարհի ընկալման և ճանաչողության գործում: Պատմականության գիտակցումը անհրաժեշտ և կարևոր բաղադրիչ է անհատի բազմակողմանի զարգացման գործում, ուստի այն առանցքային է համարվում կրթության ու դաստիարակության բոլոր մակարդակներում:

Մասնագիտական բարձրագույն կրթության մեջ պատմության իմացությունը հատուկ նշանակություն է ձեռք բերում: «Կրթությունը ՌԴ-ում» դաշնային օրենքում բարձրագույն դպրոցի նպատակ է սահմանված «բարձրորակ կադրերի պատրաստումն ապահովելը», ինչպես նաև «անհատի մտավոր, մշակութային և բարոյական զարգացման պահանջմունքները բավարարելը»:

Այդ մասին ասվում է օրենքի 69-րդ հոդվածում, ըստ որի՝ մասնագիտական նախապատրաստության բարձր մակարդակը ենթադրում է մշակութային և բարոյական զարգացվածություն, որում առաջնահերթ դեր ունի պատմությունը: Ահա թե ինչու Ռուսաստանում տարբեր մասնագիտություններ ընտրած ուսանողների համար «Պատմություն» առարկան դիտվում է համընդհանուր պարտադիր դասընթաց: Ըստ որում՝ առաջնահերթություն է հայրենական պատմության ուսումնասիրությունը, որովհետև երբ խոսում ենք պատմության սոցիալական դերի մասին, յուրաքանչյուրի համար հենց իր երկրի պատմությունն է առավել կարևոր:

Ռուսաստանի պատմությունը և համաքաղաքացիական նույնականությունը Ռուսաստանում: Ռուսաստանի պատմական անցյալի մասին պատկերացումը Ռուսաստանի Դաշնության ժողովրդի քաղաքացիական ինքնության հիմքն է:

Ազգի միասնականությունը պայմանավորված է ոչ միայն լեզվի ընդհանրությամբ, միևնույն տարածքում ապրելով, այլև ծագման ընդհանրության գիտակցմամբ, առավել կարևոր իրադարձությունների իմացությամբ, որոնք հետագայում կանխորոշել են երկրի զարգացումը՝ հաղթանակները և պարտությունները: Անհատը պետք է իմանա հերոսների և նշանավոր գործիչների մասին, որոնք գործել են պետականության ամրապնդման, ռուսական մշակույթի ստեղծման համար: Պատմության ընդհանրության գիտակցումն ընկած է ազգի մշակութային–պատմական ծածկագրի հիմքում, որը ներառում է առավել նշանակալից հոգևոր արժեքները և ավանդույթները:

Ընդհանուր պատմական անցյալին համամասնակից լինելու զգացումը ապահովում է երկրի՝ ներկայումս գոյություն ունեցող քաղաքացիական հասարակության

միասնությունը: Այն նաև նպաստում է դարերի ընթացքում կուտակված պատմական փորձի պահպանմանը և հաջորդ սերունդներին փոխանցմանը: Այն կօգտագործվի ներկայի և ապագայի կառուցման մեջ՝ դրանով իսկ ապահովելով բազմաթիվ սերունդների կապը, կօգնի ամբողջ խորությամբ գիտակցելու երկրի միասնականությունը ժամանակի և տարածության մեջ:

Այդ փորձը, որը պահպանվում է պատմական գիտակցությամբ, հստակ վկայում է, որ հաջողությունների և հաղթանակների գլխավոր գրավականը միշտ եղել է միասնությունը՝ այն գաղափարը, որը անցնում է երկրի ողջ պատմության միջով:

Խոսվելու է Ռուսիայի կազմավորման, Ռյուրիկովիչների առաջին տիրապետության ժամանակ Նովգորոդի և Կիևի միավորման, պատմական նոր շրջափուլում Ռուսական պետության կազմավորման մասին, որի արդյունքում Մոսկվայի շուրջ միավորվեցին Ռուսիայի հյուսիսարևելյան, հյուսիսարևմտյան հողատարածքները, ժողովրդի միասնականության, XVII դարասկզբին հաղթահարված, այսպես կոչված, խառնակության ժամանակների, 1812 թ. և Հայրենական մեծ (1941-1945 թթ.) պատերազմների հաղթանակների մասին: Հենց պատմությունից ենք իմանում, թե որքան նշանակալից է եղել այն ժամանակ բնակչության բոլոր շերտերի, հասարակության և պետության միասնությունը: Նույն պատմությունն էլ սովորեցնում է, թե որքան վտանգավոր է պառակտումը, և անընդունելի՝ հասարակության ներսում սոցիալական ու քաղաքական զանազան ուժերի պայքարը, որոնք կարող են երկիրը հասցնել կործանման:

Առանձնահատուկ կարևորություն ունի Ռուսական պետության կազմի մեջ մտած ժողովուրդների միասնությունը. Ռուսաստանը հենց սկզբից ձևավորվել է որպես բազմազգ երկիր, և այդպիսին է այն առ այսօր: Ժողովուրդների հարաբերություններում ներդաշնակության հասնելը, նրանցից յուրաքանչյուրի մշակութային նվաճման գիտակցված արժևորումը՝ որպես համառուսական մշակույթի մաս, միշտ եղել է պետության կայունության գրավականը: Չնայած ազգամիջյան հարաբերություններին բնորոշ հիմնախնդիրներին, հակասություններին և բախումներին, որոնք տեղ են գտել նաև Ռուսաստանի պատմության մեջ, կարևոր է պետության ազգային քաղաքականության դրական փորձը՝ ուղղված այդ խնդիրների հաղթահարմանը, ազգամիջյան և միջկրոնական խաղաղության հաստատմանը:

Պատմական հիշողության սեփականությունը, անշուշտ, ժողովրդի կատարած սխրանքներն են հանուն երկրի պաշտպանության, ազատության և անկախության, ինչպես նաև Ռուսաստանի ազգային շահերի և անվտանգության համար մղված պայքարը:

Երկրի բնակիչները կարող են հպարտանալ նախնիների՝ Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոսի, Արկտիկայից մինչև եվրասիական տափաստանների նվաճումներով: Այդպես ստեղծվեց աշխարհի ամենամեծ պետությունը: Բնության դժվարին պայմաններում բազմաթիվ սերունդների լարված աշխատանքի արդյունքում կառուցվեցին քաղաքներ, ստեղծվեցին տրանսպորտային մայրուղիներ, արդյունահանվեցին օգտակար հանածոներ: Հողագործությամբ սկսեցին զբաղվել հյուսիսային տարածքներում. աշխարհում չկար որևէ այլ վայր, որտեղ նման աշխարհագրական պայմաններում մշակվեին հողերը:

Համընդհանուր ճանաչման արժանացավ Ռուսաստանի գիտության և արվեստի ստեղծագործ հանճարը: Դրանք են ռուսական սրբերի խորամիտ պատկերանկարչությունը, բացառիկ Սանկտ-Պետերբուրգը, ռուսական գեղարվեստական մշակույթի «ոսկե» և «արծաթե» դարերի գլուխգործոցները, նաև ռուս մարդու՝ դեպի տիեզերք թռիչքը, որը իրականացվեց Յուրի Գագարինի և բոլոր նրանց շնորհիվ, որոնք նախապատրաստել էին այն: Կարելի է նշել բազմաթիվ հանճարեղ գաղափարներ, նաև Լոբաչևսկու, Մենդելեևի, Վերնադսկու հայտնագործությունները:

Ռուսական մշակույթը, որի նվաճումները ճանաչված են ամբողջ աշխարհում, ոչ միայն հպարտության առարկա է, այլև ազգային միասնության հոգևոր հիմքն է, քանի որ արտահայտում է երկրի ամբողջ բնակչության գաղափարները և արժեքները:

Այսպիսով, պատմության իմացությունը տալիս է երկրի հոգևոր և մշակութային արժեքների հասկացվածություն, նվաճումների և հաղթանակների շնորհիվ ծնում հպարտության զգացում, մղում պետականության ստեղծման և ամրապնդման գործին, ինչն էլ իր հերթին առաջացնում է անհրաժեշտություն՝ գիտակցաբար պահպանելու և պաշտպանելու այդ նվաճումները, արժեքները, որոնք էլ հայրենասիրական դաստիարակության գլխավոր բաղադրիչներն են:

Ռուսաստանի պատմությունը և համաշխարհային պատմությունը: Քանի որ քաղաքացիական նույնականության ձևավորման կարևոր գործոններից է պատմականության գիտակցումը, այն նախ և առաջ հենվում է հայրենիքի պատմության վրա: Եվ պատմականության գործընթացը տեղի է ունենում անմիջականորեն մեկ երկրի, պետության, ժողովրդի շրջանակում: Այս իմաստով, առանձին վերցրած, ժողովուրդը, ազգը պատմության սուբյեկտներ են: Բայց նաև ողջ մարդկությունն է պատմության սուբյեկտ: Այսպես առաջանում է դիալեկտիկական բարդ փոխազդեցությունը երկրի պատմության և համաշխարհային պատմության միջև:

Հենց այդ պատճառով Ռուսաստանի պատմական անցյալը խորությամբ ուսումնասիրելը հնարավորություն է տալիս բացահայտել տվյալ երկրի պատմության և համաշխարհային պատմական գործընթացների փոխկապակցվածությունը:

Սա նշանակում է, որ Ռուսաստանի պատմությունը համաշխարհային պատմության անքակտելի մասն է: Դա արտահայտվում է նրանում, որ ողջ մարդկության զարգացման ընթացքում տեղի ունեցած և տեղի ունեցող գործընթացներն այս կամ այն կերպ կատարվում են նաև Ռուսաստանում: Եվ ընդհակառակը՝ Ռուսաստանը մեծ ազդեցություն է ունենում համաշխարհային իրավիճակի վրա:

Ռուսաստանի պատմության ուսումնասիրության ժամանակ կարևոր է ցույց տալ, թե որքան մեծ է Ռուսաստանի դերը համաշխարհային իրադարձությունների և գործընթացների, համաշխարհային պատերազմների վերածված լայնածավալ բախումների մեջ, միջազգային ասպարեզում ուժերի հարաբերակցության փոփոխության, աշխարհի շատ տարածաշրջաններում ազատագրական շարժումների, համաշխարհային մշակույթի զարգացման մեջ:

§ 2. Ռուսական քաղաքակրթության ստեղծման նախադրյալները: Ռուսաստանը՝ որպես պետություն-քաղաքակրթություն

Ռուսաստանի պատմությունը քաղաքակրթական տեսությունների համատեքստում: Համաշխարհային և առանձին վերցրած մեկ երկրի պատմությունների միջև եղած դիալեկտիկական փոխազդեցության մեջ կարևոր է հասկանալ ոչ միայն ողջ մարդկության պատմական գործընթացի միասնականությունը, այլև առանձին երկրի, ժողովրդի պատմական ուղու առանձնահատկությունները, ինչը, ըստ էության, կազմում է նրա մշակութային ծածկագիրը և ստեղծում ազգի նույնական լինելու զգացողությունը: Ներկայումս Ռուսաստանի առջև դրված պատմական մարտահրավերների պայմաններում այդ հարցը հատուկ նշանակություն է ձեռք բերում: Խոսքը Ռուսաստանի ինքնիշխանության մասին է, այն բանի մասին, թե ինչ է իրենից ներկայացնում ռուսական երկիրը՝ որպես այլ երկրներից և ժողովուրդներից տարբերվող, որպես յուրահատուկ հանրույթ (սոցիում): Այդ հարցը լուծվում է քաղաքակրթական շրջանակներում պատմական գործընթացի էության ըմբռնմամբ: Դրա հիմնական գաղափարները ձևավորվել են XIX դարի կեսերին, երբ Եվրոպայում և աշխարհի այլ տարածաշրջաններում մեծ նշանակություն ձեռք բերեց ազգային ինքնագիտակցության զգացումը: Այն նվազեցնում էր ողջ մարդկության պատմական ուղու միասնականության մասին Վերածննդի և Լուսավորչականության ժամանակաշրջաններում իշխող պատկերացումների դերը: Ներկայումս շատ գիտնականներ արդեն ընդգծում են այս կամ այն ժողովրդին (ժողովուրդներին մոտ խմբերին) բնորոշ մշակութային և ինքնագիտակցության հատկանիշները, որոնք պահպանվում են տվյալ ազգի գոյության ողջ ընթացքում: Արդյունքում առաջանում է մշակութային-պատմական եզակի տեսակ, որը կոչում են քաղաքակրթություն: Այս տեսության մշակման գործում մեծ ներդրում ունեն գերմանացի մտածող Օսվալդ Շպենգլերը, բրիտանացի Առնոլդ Թոյնբին, իսկ ռուս մտածողներից՝ Նիկոլայ Յակովլևիչ Դանիլևսկին, որը զարգացրեց սլավոնական քաղաքակրթության գաղափարները կամ ժողովրդի սլավոնական պատմամշակութային տեսակը՝ միաժամանակ խոսելով դրանում Ռուսաստանի հատուկ դերի մասին:

Սլավոնական քաղաքակրթության վերաբերյալ կարելի է ասել, որ չնայած լեզուների և ժողովուրդների ծագման մերձավորությանը՝ քաղաքակրթական տեսանկյունից ընդհանրություն չստեղծվեց: Սլավոնական ժողովուրդները, որոնք առանձնանում են որպես արևմտյան և հարավային սլավոններ, այնուամենայնիվ պատկանում են պատմամշակութային տարբեր տեսակների: Սակայն սլավոնական աշխարհի արևելքում ձևավորվեց ռուսական քաղաքակրթությունը, որի հիմքում ռուս ժողովուրդն է: Աստիճանաբար այդ քաղաքակրթությունը միավորեց այլ ժողովուրդների, որոնք, ապրելով Ռուսաստանի պատմական և աշխարհագրական սահմաններում, դարձան ռուսական քաղաքակրթության մաս՝ յուրաքանչյուրը ռուսական մշակույթը յուրացնելու, նաև զարգացնելու իր չափով: Իր հերթին ռուս ժողովրդի հիմնական գծերը և պատմական զարգացման առանձնահատկությունները պայմանավորված են եղել ինչպես ունեցած աշխարհագրական դիրքով, այնպես էլ հոգևոր արժեքներով:

Աշխարհագրական միջավայրի դերը ռուսական քաղաքակրթության ձևավորման գործում: Բազմաթիվ հետազոտողներ նշել և նշում են աշխարհագրական միջավայրի նշանակալից, եթե ոչ վճռորոշ դերը ռուսական քաղաքակրթության ձևավորման գործում: Տվյալ դեպքում՝ որպես այդպիսին, չափազանց կարևոր է համարվում տարածքի լայնածավալության գործոնը: Ներկայումս Ռուսաստանը, ինչպես և առաջներում Խորհրդային Միությունը, աշխարհի ամենամեծ երկիրն է: Անգամ ամենահեռավոր ժամանակներում՝ Կիև կենտրոնով «Ռյուրիկովիչների կայսրության» դարաշրջանում և դրան հաջորդող դարերում, երբ մայրաքաղաք դարձավ Մոսկվան, ապա՝ Սանկտ- Պետերբուրգը, Ռուսական պետությունը աչքի էր ընկնում իր տարածքների ընդարձակությամբ: Ռուս բանաստեղծները, փիլիսոփաները բազմիցս ընդգծել են, որ ռուսական տարածքների ընդարձակ լինելը պայմանավորել է ռուսական հոգու ազատությունը: Ինչպես գրել է Ն.Ա. Բերդյաևը. «Ռուսաստանի հարթավայրային լինելը և նրա տարածության անսահմանությունը ցույց են տալիս ռուս ժողովրդի հոգու չափը: Եվ պատահական չէ, որ ռուս ժողովուրդն ապրում է անընդգրկելի հարթավայրում, անսահման հեռուներում՝ կտրուկ սահմանազատումների և բաժանումների բացակայությամբ»: Սակայն կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի լայնարձակ տարածությունը ձևավորվել է ռուս ժողովրդի այնպիսի հատկանիշի արդյունքում, ինչպիսին է նոր տարածքներ յուրացնելու ընդունակությունը, որի շնորհիվ էլ ստեղծվեց աշխարհի ամենամեծ պետությունը:

Հարկ է կարևորել նաև Ռուսաստանի աշխարհագրական դիրքը: Առ այսօր տարաձայնություններ կան այն մասին, թե քաղաքակրթական որ գոտուն է ձգտում Ռուսաստանը՝ Արևմուտքի՞ն, թե՞ Արևելքին: Իսկ իրականում Ռուսաստանը նախ և առաջ հյուսիսային երկիր է: Այս իմաստով նրա հետ կարող է մրցակցել միայն Կանադան, բայց նրա գրեթե ողջ բնակչությունը կենտրոնացած է հարավի համեմատաբար նեղ շերտում: Դարերի ընթացքում Ռուսաստանում անշեղորեն տեղաշարժ է եղել դեպի հյուսիսային աշխարհագրական լայնություններ. աշխարհում հողագործության ամենահյուսիսային օջախները այստեղ են՝ մինչև Հյուսիսային ծովը, իսկ Հյուսիսային բևեռում օգտակար հանածոների արդյունահանումն է: Ռուսաստանի տարածքի մեծ մասի դաժան կլիման զգալիորեն ազդել է երկրի պատմական զարգացման և նրա քաղաքակրթական առանձնահատկությունների վրա:

Ի սկզբանե Ռուսաստանը գյուղացիական երկիր էր, իսկ նրա հիմնական հողատարածքները՝ հատկապես Մոսկվա կենտրոնով, Ռուսական պետության ձևավորման փուլում «հայտնվեցին հողագործության ռիսկային» գոտում: Հողերի նվազ բերքատու լինելը, վեգետացիոն կարճատև շրջանը չէին կարող ոչ միայն ապահովել հավելուրդային մթերք, այլև բավարարել բնակչության նվազագույն պահանջը: Արտադրության աճը ապահովվում էր նոր տարածքների յուրացման հաշվին: Ցանքատարածությունների համար հողը «մաքրվում էր» անտառներից, ինչն էլ լուրջ ջանքեր էր պահանջում: Այդպիսի պայմաններում կենսադիմացկունությունը հնարավոր էր միայն փոխադարձ օգնությամբ, աջակցությամբ, որոնք էլ կանխորոշել էին հանրության կոլեկտիվ, աշխատանքային ավանդույթների երկարատև պահպանությունը՝ միաժամանակ նպաստելով արհեստների զարգացմանը, քաղաքային կյանքին:

Երկիրը, որը դարերի ընթացքում յուրացվեց ռուս ժողովրդի կողմից, բնական արգելքներ չունեցող ընդարձակ հարթավայր էր: Ուժեղ հարևանների հետ պայքարում պահանջվում էր մշտապես ելք փնտրել դեպի ծով՝ արտաքին աշխարհի հետ կապ, հաղորդակցություն ունենալու համար: Այդ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ էր ապահովել երկրի անվտանգությունը. վատ պաշտպանված, լայնատարած սահմանների կայուն ապահովության համար պետք էր ստեղծել մեծաքանակ ցամաքային բանակ, որին կերակրելը, պահելը պահանջում էին հսկայական միջոցներ: Ահա ինչու համազգային շահերի պաշտպանությունը մշտապես ստիպում էր ունեցած ռեսուրսների հավաքում, իշխանության և կառավարման կենտրոնացում: Այդպես ձևավորվեց ուղղահայաց ուժեղ իշխանությամբ պետությունը: Հասարակության բոլոր շերտերը, անհրաժեշտ ուժերի և ռեսուրսների հավաքման շահերից ելնելով, հայտնվում էին պետությունից այս կամ այն կախվածության մեջ՝ ունենալով պարտավորություն՝ կա՛մ ծառայել բանակում, կա՛մ տանել հարկային բեռը: Վերջինս էլ հանգեցրեց ճորտատիրական կարգերի առաջացմանը, քանի որ այն թույլ էր տալիս ապահովելու պետության համար ծառայության մեջ գտնվողների կարիքները՝ ի հաշիվ գյուղացիության վճարված հարկերի:

Այսպիսով, ռուս ժողովրդի պատմական լինելիության արտաքին, օբյեկտիվ և խիստ բնույթը, ընդարձակ տարածություններում կարգ ու կանոն, անվտանգություն ապահովելու անհրաժեշտությունը նպաստեցին այնպիսի ազգային խառնվածքի ձևավորմանը, ինչպիսիք են դժվարին պայմաններում անձնազոհ աշխատանքը, նոր տարածքների յուրացումը և դրանց պաշտպանությունը, ինչպես նաև կյանքի համայնքային ու տնտեսության խմբային ձևերի ամրապնդումը և վերջապես հավատարմությունը պետական ուժեղ իշխանության գաղափարին, որում ժողովուրդը տեսնում էր անվտանգության իր հենարանը: Զուր չէր Ն.Մ. Կարամզինի՝ կենտրոնացված ուժեղ պետության նկատմամբ ժողովրդի վերաբերմունքի մասին արտահայտությունը. «Ինքնակալությունը Ռուսաստանի պալադիումն[1] է. դրա ամբողջականությունն անհրաժեշտ է Ռուսաստանի երջանկության համար»:

Ռուսաստանի տարածքի ևս մեկ կարևոր առանձնահատկություն պետք է հիշատակել, որը նշանակալից է նրա պատմական զարգացման և ռուսական քաղաքակրթության ձևավորման համար: Երկիրը փաստացի զբաղեցնում է Եվրասիայի՝ Բալթիկ ծովից մինչև Խաղաղ օվկիանոս ողջ հյուսիսային տարածքը, բևեռային ծովերից մինչև շոգ տափաստաններ: Այն գտնվում է երկու՝ Եվրոպա և Ասիա մայրցամաքներում: Այսպիսով, Ռուսաստանը վերցրել է երկու աշխարհամասերի՝ Արևմուտքի և Արևելքի պատմական ժառանգությունը. միաժամանակ այն յուրատեսակ կամուրջ է, որը կապում է աշխարհի այդ կարևորագույն տարածաշրջանները:

Տարբեր ժամանակներում Ռուսաստանի տարածքով անցել են առևտրային կարևոր ճանապարհներ, որոնք միմյանց են կապել տարբեր տարածաշրջաններ և

[1] *Պալադիում* – քիմիական տարր, որի նշանն է *Pd*: Ազնիվ մետաղ է, պատկանում է պլատինային մետաղների շարքին:

քաղաքակրթություններ: Դրանք են՝ վարյագներից մինչև հույներ ընկած տարածքը՝ Եվրոպայի հյուսիսից դեպի Բյուզանդիա, Մետաքսի մեծ ճանապարհի հյուսիսային ուղին՝ Չինաստանից Կենտրոնական Ասիայի տափաստաններով դեպի Արևելյան Եվրոպա և այնտեղից էլ՝ Արևմուտք:

Հետագայում էլ ռուս ժողովրդի կողմից ստեղծվել են հաղորդակցության այնպիսի միջոցներ, ինչպիսիք են Տրանսսիբիրյան մեծ երկաթգիծը և Հյուսիսային ծովային ճանապարհը, որոնք հզոր ներուժ ունեին միջմայրցամաքային կապերի ապահովման գործում:

Ռուսական քաղաքակրթության և մշակույթի «համամարդկային» բնույթը: Ռուսաստանը ուներ և ունի հսկայական տարածքներ և գտնվում է միջազգային, անգամ միջքաղաքակրթական հաղորդակցությունների կիզակետում: Դրանով պայմանավորվեց այլ ժողովուրդների հետ կապեր հաստատելու, նրանց հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը: Այս ամենի ու նաև ռուսական քաղաքակրթության զարգացման արդյունքում ձեռք բերվեց մի եզակի փորձ. ռուսական տարածքներում տարբեր ժողովուրդների համատեղ կեցության փոխազդեցություն տեղի ունեցավ, կյանքի բոլոր ոլորտներում (տնտեսության մեջ, մշակույթում, կենցաղում) իրականացվեց փորձի փոխանակություն, միմյանց նվաճումների փոխադարձ յուրացում: Ամբողջության մեջ այս ամենին սատարում էր Ռուսական պետության քաղաքականությունը՝ ուղղված ազգամիջյան խաղաղության և բարիդրացիական հարաբերությունների պահպանմանը: Նման քաղաքականությունը Ռուսաստանի կազմի մեջ մտած ժողովուրդներին օգնեց պահպանել ինքնությունը: Շատ ժողովուրդներ՝ ներառյալ ամենափոքրաթիվները, առ այսօր չեն անհետացել երկրի էթնիկ քարտեզից: Ավելին, ռուսական իշխանությունների և ռուս լուսավորիչ գործիչների, ուղղափառ եկեղեցու միսիոներների ակտիվ մասնակցությամբ և աջակցությամբ շատ ժողովուրդներ ձեռք են բերել սեփական գիրը (որպես կանոն՝ ռուսերենի այբուբենի հիմքով), գրագիտությունը, ինչն էլ նպաստել է ազգային գրականության և մշակույթի զարգացմանը:

Ինչ խոսք, քաղաքականության և հասարակական շփումների ծայրահեղ բարդ ոլորտում եղել են հակասություններ և ընդհարումներ: Պատահել են այնպիսի իրադարձություններ, երբ առանձին ժողովուրդների տեղահանել են իրենց ավանդական բնակության տարածքներից, բայց դրանք եղել են բացառիկ դեպքեր՝ թելադրված աշխարհաքաղաքական և ռազմական ծայրահեղ իրավիճակով: Ներկայումս Ռուսաստանի Դաշնությունում Հայրենական մեծ պատերազմի ժամանակ բռնաճնշումների ենթարկված ժողովուրդների իրավունքների վերականգնման ծրագիր է իրականացվում:

Բազմազգ և բազմակրոն հասարակության համագործակցության և փոխազդեցության ունակությունը պայմանավորված է ռուս ժողովրդի սրտաբացությամբ, մյուս ժողովուրդների մշակույթի խոր ընկալմամբ, նրանց նվաճումների փոխառմամբ և իրացմամբ: Ռուսական խառնվածքի այդ «համամարդկային» որակի մասին վառ կերպով խոսել է Ֆ. Մ. Դոստոևսկին, որն առանձնացնում էր ռուս ժողովրդի ազգային խառնվածքում գոյություն ունեցող «կարեկցանքի համամարդկային բնույթը» և նրա ձգտումը՝ հասնելու «համաշխարհայնության և համամարդկայնության»: Ռուսական

քաղաքակրթության այս հատկանիշը արտահայտվել և ի հայտ է եկել՝ աշխարհում կատարվող իրադարձությունների նկատմամբ անտարբեր չլինելու, աշխարհում ներդաշնակության և արդարության հաստատման համար ազդեցություն ունենալու ձգտմամբ: Դա նաև այլ ժողովուրդների ստեղծագործական նվաճումների նկատմամբ ռուսական մշակույթի վերաբերմունքն է, նրա արձագանքը:

Այդպես եղավ, երբ Բյուզանդիայից Ռուսիան փոխառավ սրբապատկերներ ստեղծելու արվեստը, և հենց ռուսական հողում այդ հոգևոր-գեղարվեստական ուղղությունը հասավ իր գագաթնակետին: Սա պարզ փոխառություն չէր, այլ Դոստոևսկու նկատած «վերամարմնավորումն էր», այսինքն՝ տեղի էր ունենում համաշխարհային մշակույթի նշանակալից նվաճումների օրգանական ձուլումը ռուսականին: Սրանց առավել վառ արտահայտությունն են Ռուսիայի «ոսկե» և «արծաթե» դարերի նվաճումները:

Կրոնը և հավատը Ռուսաստանի պատմության և ռուսական քաղաքակրթության մեջ: Երկրների և ժողովուրդների պատմության մեջ, նրանց հոգևոր մշակույթում, ավանդութային արժեքներում և քաղաքակրթական ծածկագրում կարևոր դեր ունի կրոնը: Եվ սա պահպանվել է անկախ աթեիզմի տարածումից կամ հավատի նկատմամբ եղած անտարբերությունից: Ռուսաստանի պատմության մեջ դավանանքը յուրահատուկ դեր ունի, քանի որ ի սկզբանե Ռուսաստանը ձևավորվել է որպես բազմազգ և բազմակրոն պետություն: Ռուսաստանի համար ավանդական դարձան մի քանի դավանանքներ, որոնք միշտ ռուսական պետության քաղաքականության մեջ նկատի են առնվել:

Համաշխարհային կրոններից մեկի՝ իսլամի՝ ժամանակակից Ռուսաստանի տարածքում գոյության սկիզբը եղել է X դարը, երբ Վոլգյան Բուլղարիան ընդունեց իսլամը: Ներկայումս այդ հավատն արդեն ավանդական է Պովոլժիեի և Ուրալի մի շարք տարածքներում ապրող բնակչության, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի հանրապետությունների համար: XVIII դարում ռուսահպատակ դարձան կալմիկյան մի քանի ցեղեր: Այդպես առաջին անգամ Ռուսաստանում հայտնվեցին ևս մեկ համաշխարհային դավանանքի՝ բուդդայական կրոնի հավատացյալները: Սիբիրի յուրացմամբ Ռուսաստանի կազմի մեջ մտան Բուրյաթիան, իսկ XX դարում՝ Տուվան, որոնց համար ևս բուդդիզմը ավանդական կրոն է: Վերջապես XVIII դարում՝ Ռեչ Պոսպոլիտայի բաժանումից և արևմտյան հողերը Ռուսաստանի միավորելուց հետո, հրեական բազմաքանակ բնակչությունը հայտնվեց Ռուսաստանում, ճանաչվեց եբրայական կրոնը, որն ազատորեն դավանում էին Ռուսական կայսրությունում: Ժամանակակից ՌԴ օրենսդրության, մասնավորապես «Խղճի և կրոնական ազատությունների մասին օրենքի» համաձայն՝ իսլամը, բուդդիզմը, հուդաիզմը քրիստոնեությանը հավասար ճանաչվել են «Ռուսաստանի ժողովուրդների պատմական ժառանգության անօտարելի մաս»: Միաժամանակ ընդգծվում է ուղղափառ քրիստոնեության հատուկ դերը Ռուսաստանի պատմության, նրա հոգևոր և մշակութային ժառանգության մեջ:

Իրականում հազար տարի առաջ Ռուսիայի կողմից ուղղափառության ընդունումը նշանակալից երևույթ էր ռուսական քաղաքակրթության ստեղծման մեջ: Ռուսիան

մտավ աշխարհի քրիստոնյա ժողովուրդների ընտանիք, բայց նաև պահպանեց իր ինքնատիպությունը: Այդ ժամանակից ի վեր Ռուսաստանը հավատարիմ է մնացել Բյուզանդիայից ստացած քրիստոնեական հավատի ընտրությանը՝ ուղղափառությանը: Այդ իրադարձությունը իսկապես դարձավ քաղաքակրթական ընտրություն, քանի որ հենց ուղղափառությունն է ռուս ժողովրդի հոգևոր որակը, նրա ազգային և հոգևոր նույնականության վկայությունը: Քրիստոնեական հավատքի հիմնական սկզբունքների աներկբայելի միասնության մեջ, այնուամենայնիվ, արևմտյան և արևելյան այս երկու բաժանումներում դոգմատիկ, կազմակերպչական և աշխարհայացքային բնույթի կարևոր տարբերություններ կան:

Ուղղափառ հավատքը ռուսական ինքնագիտակցության և նույնականության մեջ կարևոր դարձավ այն ժամանակ, երբ Ռուսաստանը փաստորեն մնաց միակ ինքնիշխան ուղղափառ պետությունը կրոնադավանական այլ ուղղությունների պատկանող երկրների և ժողովուրդների շրջապատում: «Ռուս» և «ուղղափառ» հասկացությունները ընկալվում էին որպես հոմանիշային բառեր: «Քրիստոնյաներ» (այսինքն՝ ուղղափառներ) բառը վերաիմաստավորվեց և սկսեց անվանվել առհասարակ ժողովուրդ: Շուտով այս իմաստն էլ փոխվեց, դարձավ «գյուղացի» («христиане» – «кресьяне» «крестьяне»), որն այն ժամանակ բնակչության ճնշող մեծամասնությունն էր: XV դարի վերջին և XVI դարի սկզբին ձևավորվեց «Մոսկվան երրորդ Հռոմն է» գաղափարը, որը նշանակում էր՝ Ռուսիան նախկինում գոյություն ունեցող քրիստոնյա կայսրությունների՝ Հին Հռոմի և Բյուզանդիայի իրավահաջորդն է: Դեպի Ռուսաստան էին ձգտում Բալկաններում և Կովկասում ապրող ուղղափառ դավանանքի ժողովուրդները: Իսկ արևմտառուսական հողերի ուղղափառ բնակչությունը, որը գտնվում էր Լեհ-լիտվական պետության կազմում, Ռուսաստանի աջակցությամբ ջանքեր էր գործադրում՝ պահպանելու իր հավատը, սակայն պետության թուլացման և Ռեչ-Պոսպոլիտայի անկման դեպքում ընդհանուր հավատը դարձավ գլխավոր նախադրյալը, որպեսզի այդ հողերը մտնեն Ռուսաստանի կազմի մեջ: Ուղղափառության բնութագրիչ գիծը, ի տարբերություն արևմտյան քրիստոնեության, կրոնական և պետական իշխանությունների «սիմֆոնիկ» լինելու գաղափարն էր: Այսինքն՝ եկեղեցին հույսը դնում էր պետության կողմից օգնության և պաշտպանության վրա, ինքն էլ իր կողմից պետությանն էր աջակցում ամեն հարցում: Այդ միասնականությունը ամրապնդում էր ինքնակալության և ուժեղ պետության գաղափարը, որը նշանակալից էր ռուսական քաղաքակրթության համար:

Ռուսական պետականության զարգացմանը, երկրի տարածքների ընդարձակմանը զուգահեռ մեծ նշանակություն էր ձեռք բերում միապետի իշխանության ներքո տարբեր դավանանքների ժողովուրդներ միավորած կայսրության գաղափարը: Ռուսաստանը կայսրություն հռչակվեց 1721 թ., թեև փաստացի այդպիսին էր այդ թվականից շատ առաջ: Ուղղափառ եկեղեցին աջակցում էր այդ գործընթացին, չնայած բազմադավան երկրում նրա դիրքը չէր կարող չփոփոխվել: Ուղղափառ եկեղեցու արտոնյալ դիրքը պաշտպանելով՝ Ռուսական կայսրությունը, այդուհանդերձ, ապահովում էր մյուս ժողովուրդների կրոնների ազատությունը: Առաջ եկավ միասնականության և

նույնականության առավել բարձր մակարդակի պահանջ, քան ուղղափառ քրիստոնեությանը պատկանելը: Բացի այդ՝ աշխարհիկ գիտության զարգացումը և հասարակական ու մշակութային կյանքի տարբեր բնագավառների աշխարհիկացումը հանգեցրին նրան, որ կրոնը և հավատը վերածվեցին մարդու խիղճն ու բարոյականությունը բնութագրող խորապես անձնական զգացմունքի:

Այնուամենայնիվ, ուղղափառության պատմական դերը ռուսական քաղաքակրթության և նրա մշակութային ծածկագրի ձևավորման մեջ բացառիկ է: Ուղղափառ եկեղեցու կողմից ներդրում են համարվում ռուսական պետության կազմավորմանը և պետականության ամրապնդմանն ուղղված ջանքերը, հայրենասիրության և հայրենիքի պաշտպանությանը ծառայելու գաղափարները: Ինչպես նաև անհնար է գերագնահատել եկեղեցու ունեցած խոր ազդեցությունը ռուսական հոգևոր, գեղարվեստական մշակույթի մեջ:

Ռուսական քաղաքակրթության հիմնական գծերը և ավանդութային արժեքները: Այսպիսով, Ռուսաստանում՝ երկու աշխարհամասերի միջև տարածված բազմաէթնիկ (полиэтничный) և բազմադավան (мультиконфессиональный) հանրույթով երկրում, ի հայտ եկավ ռուսական քաղաքակրթությունը, որը յուրացրել և պահպանել է ռուս ժողովրդի յուրահատկությունները, սակայն զարգացրել և բազմապատկել է դրանք համառուսաստանյան միասնությամբ:

Դա արտաքին բարդ պայմաններում ստեղծարար աշխատանքի, նոր տարածքներ յուրացնելու ձգտման, այնտեղ բնակվող ժողովուրդների հետ հարաբերությունները կարգավորելու, ծագող մարտահրավերների և սպառնալիքների դեպքում ուժերը և ռեսուրսները հավաքագրելու պատրաստակամության կարողությունն է, սոցիալական և միջէթնիկ տարաձայնությունների հարթման և միասնական լինելու ունակությունը, հույսը ուժեղ պետական իշխանության և նրա աջակցության վրա դնելն է, հայրենիքի համար զոհվելուն պատրաստ լինելը, հոգևոր մշակույթի ոլորտում բարոյական ինքնակատարելագործման ուղիներ որոնելը:

Այդ արժեքներին նվիրվածությունը, դրանց պաշտպանությունը և հաջորդ սերունդներին փոխանցելը անխուսափելի պայման է, որը վկայում է հասարակության քաղաքակրթական նույնականությունը: Ներկայումս դրանք որոշարկված են օրենքի մակարդակով և պաշտպանվում են Ռուսական պետության կողմից:

ՌԴ նախագահի՝ 2022 թվականի նոյեմբերի 9-ի հրամանագրով հաստատվել են ռուսական հոգևոր-բարոյական ավանդական արժեքների պահպանության և ամրապնդման պետական քաղաքականության հիմունքները, որոնցում ներառված են «մարդու կյանքը, արժանապատվությունը, ազատությունն ու իրավունքները, հայրենասիրությունը, քաղաքացիականությունը, հայրենիքին ծառայելը և նրա ճակատագրի նկատմամբ պատասխանատվությունը, բարոյական բարձր նպատակները, ամուր ընտանիքը, ստեղծարար աշխատանքը, հոգևորի առաջնահերթությունը նյութականի նկատմամբ, մարդասիրությունը, գթասրտությունը, արդարությունը, փոխօգնությունը և փոխադարձ հարգանքը, պատմական հիշողությունը և սերունդների ժառանգորդությունը, Ռուսաստանի ժողովուրդների միասնությունը»: Առաջին տեղում են կյանքը,

արժանապատվությունը, մարդու իրավունքները, որոնք երաշխավորվում են բարոյական բարձր մակարդակում մարդկային համակեցության ամրապնդմամբ՝ ընտանիքից մինչև պետություն։

Ռուսաստանը պետություն-քաղաքակրթություն է։ Ռուսական քաղաքակրթությանը բնորոշ հիմնական գծերն ու արժեքները ձևավորվել են՝ պետականության ստեղծման և ամրապնդման հետ փոխկապված։ Դա էլ պայմանավորել է Ռուսաստանի պետություն-քաղաքակրթություն դառնալը, ինչը վկայում է պետության զարգացման նոր մակարդակի մասին և արտացոլված է ՌԴ արտաքին քաղաքականության հայեցակարգում՝ հաստատված ՌԴ նախագահի՝ 2023 թ. մարտի 31-ի հրամանագրում։

Դա մի որակ է, որն արձանագրում է ռուսական պետականության ժամանակակից իրավիճակը. այն, ի տարբերություն ազգային պետության կամ ազգ-պետության, ներառում է մի ամբողջ քաղաքակրթություն՝ ձևավորված էթնիկ, դավանաբանական, մշակութային տարբեր պատկանելության մարդկանց միասնությունից, որում հանրությունը խտացվել, միակցվել է ընդհանուր բարոյահոգեբանական արժեքներով։

Պետություն–քաղաքակրթությունը ռուս ժողովրդի՝ այդ արժեքների և ավանդույթների պահպանման երաշխիքն է։ Այդ մասին ուղղակիորեն ասված է 2022 թ. նոյեմբերի 9-ի վերոհիշյալ օրենքում, որում խոսվում է գաղափարական ապակառուցողական գործողությունների, ռուսական ինքնության ժխտման, պատմական իրողության ձևախեղման, այլ սպառնալիքների նկատմամբ հակազդեցության մասին։ Հենց դրանով ռուսական պետություն-քաղաքակրթությունը արմատականորեն տարբերվում է ներկայումս ձևավորված մի քանի երկիր-կառավարիչ մոդելից, որի էությունը հասարակությանը որոշակի ծառայություններ մատուցելն է։ Պետություն–քաղաքակրթությունն ուղղակիորեն ինքն է վերցնում հասարակության բարոյահոգեբանական վիճակի պատասխանատվությունը, նրա քաղաքակրթական հիմքերի պահպանությունը, ինչը կարևոր է երկրի անվտանգության ապահովման գործում։

§ 3. «Ռուսաստանի պատմություն» առարկան և ժամանակագրական ու աշխարհագրական շրջանակները

«Ռուսաստանի պատմություն» առարկայի ժամանակագրական շրջանակները։ Այս դասընթացի նյութը Ռուսաստանի պատմությունն է։ Բնութագրենք «պատմություն» հասկացության ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները։ Պատմության սկզբնական սահմանը մարդու, հետևաբար մարդկային հասարակության ի հայտ գալն է։ Համաշխարհային մասշտաբներով դա տեղի է ունեցել մոտավորապես 2,5 միլիոն տարի առաջ Աֆրիկայում՝ Homo (մարդ) ցեղի ի հայտ գալով։ Ռուսաստանում Homo ցեղը հայտնվել է ժամանակակից Դաղստանի տարածքում մոտավորապես 2 միլիոն տարի առաջ։ Ելնելով այն բանից, որ այսօրն արդեն պատմություն է դառնում, այս դասընթացի նյութը հասնում է մինչև ներկա ժամանակները։

Պատմության պարբերացման խնդիրը։ Պատմության ժամանակագրության հետ կապված՝ գլխավոր հարցը պարբերացումն է։ Պատմական փուլերի ներկայացումը

կախված է պատմական գործընթացի էության ըմբռնումից և դրա օրինաչափություններից: Օրինակ, եթե հասարակական գիտակցության կամ պատմաբանի ստեղծագործության մեջ գերիշխում է այն միտքը, թե պատմության ընթացքը որոշում է տվյալ պահին իշխանության գլուխ կանգնած մարդը, ապա հիմնական շրջափուլեր են դառնում միապետի կառավարման տարիները: Հարկ է նկատել, որ Ռուսաստանում, որտեղ դարեր շարունակ իշխում էր ինքնակալությունը, և հաճախ իշխանության փոփոխությամբ փոխվում էր նաև քաղաքականությունը, պատմության պարբերացումը, ըստ միապետերի, հնարավոր էր, թեպետ գիտական չէր: Ոչ միայն առօրյա գիտակցության մեջ, այլև պատմաբանների հետազոտություններում, գիտահանրամատչելի աշխատանքներում կատարվում են այդպիսի պարբերացումներ, ինչպես օրինակ՝ «Իվան Ահեղի ժամանակաշրջան», կամ «Պետրոս I-ի կառավարման շրջան», «Եկատերինյան դարաշրջան» (Եկատերինա II-ի ժամանակների մասին) և այլն:

Խորհրդային Միությունում գերիշխում էր հասարակական–տնտեսական համակարգերով պարբերացումը, որը բխում էր Կ. Մարքսի պատմական մատերիալիզմի փիլիսոփայությունից: Այս պարբերացումը ազդեցություն ունի նաև ժամանակակից պատմական գիտակցության վրա, և այժմ էլ գործածվում են «ավատականության դարաշրջան», «անցումը կապիտալիզմին» և այլ եզրույթներ:

Այս հարցի վերաբերյալ ժամանակակից պատմագիտությունն ունի տարբեր մոտեցումներ: Ընդունելի է այն պարբերացումը, որը ելնում է հասարակության զարգացման մակարդակից, փոփոխությունների առկայությունից կամ բացակայությունից, որոնց վրա էլ հիմնված են այդ փոփոխությունները:

Դարերի ընթացքում հասարակության մեջ գերիշխել են հնուց եկած ավանդույթներն ու կանոնները. հասարակական կարգը քիչ էր փոփոխվում, ամեն ինչ լինում էր «դարձ ի շրջանս յուր»: Արտադրության հիմքում գյուղացիների ու արհեստավորների աշխատանքն էր: Վճռորոշ դեր ուներ կրոնը, որը կարգավորում էր կենցաղում իշխող կանոնները և սովորույթները: Հետագայում դրանք վերածվեցին դոգմաների: Այդ դարաշրջանը ստացել է «ավանդական հասարակություն» անվանումը: Արդյունաբերության զարգացմանը զուգընթաց հասարակության մեջ տեղի էին ունենում սոցիալական խոր փոփոխություններ: Սկսվեց արդյունաբերական հասարակության դարաշրջանը: Այս դարաշրջանը առաջ բերեց նոր խնդիրներ և սոցիալական հակասություններ, որոնց հաղթահարումն արդեն տեղի էր ունենալու զարգացման մի նոր փուլում, որը սովորաբար անվանվում է հետարդյունաբերական հասարակություն: Համապատասխանաբար արդյունաբերական հասարակության զարգացման բարձր աստիճանում մշակույթի նոր ուղղությունների առաջացմամբ դարաշրջանը անվանվեց արդիական (մոդեռնիստական), որին էլ փոխարինում է հետարդիականը (պոստմոդեռնիստականը):

Պարբերացման վերաբերյալ ամենատարբեր մոտեցումները բարդացնում են պատմական նյութի համակարգումը նախ և առաջ ուսումնական նպատակներով: Սակայն պատմական գիտակցության մեջ վաղուց ստեղծվել է որոշակի ընդհանուր պատկերացում մարդկության պատմության շրջանների մասին, որն այս կամ այն

կերպ և չափով կիրառվում է տարբեր աշխատություններում, ուսումնական դասընթացների ժամանակ: Դեռևս դպրոցական դասագրքերից բոլորին հայտնի են համաշխարհային պատմության տարբեր փուլերի բաժանումները՝ Հին աշխարհի պատմություն, Միջին դարերի պատմություն, Նոր պատմություն, Նորագույն պատմություն:

Այս համակարգման հիմքը դրված է եղել դեռևս Վերածննդի դարաշրջանում, որը ընկալվում էր որպես նոր դարաշրջանի կամ նոր ժամանակների սկիզբ: Այդ ժամանակ տեղի ունեցավ Հին Հունաստանի և Հին Հռոմի, որոնց անվանում էին Անտիկ (antiquitas – լատիներեն՝ հնություն) կամ Հին աշխարհ, գաղափարների «վերածնունդ»: Հետագայում այս դարաշրջանի մեջ ներառեցին Հին Արևելքի՝ Եգիպտոսի, Միջագետքի, Հնդկաստանի և Չինաստանի քաղաքակրթությունները, անգամ այն երկրները, որոնք դեռ գտնվում էին զարգացման մինչպետական աստիճանին:

Անտիկ շրջանի և նոր աշխարհի միջև ընկած հազարամյա ժամանակաշրջանը ստացավ Միջին դարեր անվանումը: Սովորաբար դրա սկիզբը համարում են Արևմտյան Հռոմեական կայսրության անկումը (մ.թ. 476 թ.): Միջնադարի ավարտը համարվում է այն ժամանակաշրջանը, երբ աշխարհագրական մեծ հայտնագործությունների սկիզբն էր, այսինքն՝ սկսած XV դարի վերջից, երբ 1492 թ. Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան: Միջնադարը հաճախ կապվում էր հետամնացության և հետընթացի հետ, այսինքն՝ «միջնադար» բառը կիրառվում էր բացասական իմաստով: XIX դարասկզբում ռոմանտիզմը, ընդհակառակը, վերականգնեց միջնադարի հեղինակությունը, իսկ պատմաբանների հաջորդ սերունդները, հիմք ընդունելով գիտական փաստերը, տվեցին առավել հավասարակշիռ գնահատական այդ դարաշրջանին, թեև բավականին գաղափարայնացված: Միջնադարի պատմության կամ մշակույթի նկատմամբ հետաքրքրությունը, լինեն դրանք վիկինգները, ասպետականությունը, թե ինկվիզիցիան, անընդհատ աճում է:

Նոր ժամանակները կամ Նոր պատմության դարաշրջանը շարունակվեց մի քանի հարյուրամյակ մինչև XX դարի սկիզբը: Հաճախ սահմանային իրադարձություն է համարվում Առաջին համաշխարհային պատերազմը, դրա սկիզբը՝ 1914 թ. կամ ավարտը՝ 1918 թ.: Նոր ժամանակներում եվրոպական երկրներում գիտությունն ու արդյունաբերությունն անշեղորեն զարգանում էին, որոնք էլ արտացոլվեցին նախ՝ գիտական հեղափոխությամբ (XVII դ.), ապա՝ XVIII դարավերջից սկսված արդյունաբերական հեղափոխությամբ: Եվրոպական մայրցամաքում ձևավորվեցին մի քանի խոշոր պետություններ, որոնք միջազգային ասպարեզում պայքարում էին գերիշխանության համար. դրանք Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Օվկիանիայի երկրների նկատմամբ ծավալեցին զավթողական քաղաքականություն, ինչն էլ պատճառ դարձավ գաղութատեր կայսրությունների առաջացմանը: Հակասությունների արդյունքում առաջատար պետությունների միջև սրվում էին հարաբերությունները, որը 1914 թ. սկսված Համաշխարհային պատերազմի գլխավոր պատճառներից մեկն էր:

Առաջին համաշխարհային պատերազմով սկսվեց Նորագույն պատմության դարաշրջանը, որը շարունակվում է մինչ այժմ: Այն անվանում են նաև ժամանակակից պատմություն: 1914-1918 թթ. համաշխարհային պատերազմը չլուծեց աշխարհում

գոյություն ունեցող խոշոր հակասությունները: Ավելին, դրա արդյունքները նոր համաշխարհային պատերազմի կանխադրույթներ դարձան, որը Արևմուտքի երկրների թողտվությամբ ծավալվեց նացիստական Գերմանիայի և նրա դաշնակիցների կողմից: Երկրորդ համաշխարհային պատերազմում նացիզմի ջախջախման գործում վճռորոշ էր Խորհրդային Միության ներդրումը: Պատերազմից հետո ԽՍՀՄ-ը դարձավ երկու գերտերություններից մեկը: Նորագույն պատմության բովանդակությունը պայքարն է համաշխարհայնացման (գլոբալիզացիայի) և գերիշխանության դեմ, ինչը շարունակվում է նաև այսօր՝ պատմական նոր պայմաններում: ՌԴ-ն՝ այդ քաղաքականությունում որպես Խորհրդային Միության ժառանգորդ, շարունակում է պայքարը: Հարկ է նշել, որ հիշյալ պարբերացումը ավելի շատ հարմար է եվրոպական պետություններին և առաջին հերթին՝ Արևմտյան Եվրոպայի երկրների պատմությանը: Այն ամենևին էլ նպատակահարմար չէ Արևելքի երկրների համար, քանի որ հիշյալ երկրներում Միջնադարը և Նոր ժամանակները կունենան բոլորովին այլ ժամանակագրական շրջաններ:

Ռուսաստանի պատմության հիմնական շրջափուլերը: Ռուսաստանի պատմական փորձը ցույց է տալիս, որ համաշխարհային պատմության լայնորեն տարածված և միանգամայն ընդունելի պարբերացումն ամենևին չի համընկնում Ռուսաստանի պատմության փուլերի հետ: Քանի որ Ռուսաստանի պատմության մեջ վճռորոշ դերը պատկանում է պետությանը, ինչը արտացոլվում է պետություն-քաղաքակրթություն գաղափարի մեջ. երկրի պատմության հիմնական փուլերը Ռուսաստանի պետականության գոյության այս կամ այն ձևն են: Կարևոր է ընդգծել, որ անցումը մի ձևից մյուսին Ռուսական պետության պատմության շրջանակներում է: Յուրաքանչյուր հաջորդող շրջափուլ ժառանգորդն է նախորդի:

Ինչպես արդեն նշվեց, պատմությունը սկսվում է մարդու և մարդկային հասարակության առաջացմամբ: Ահա թե ինչու «Ռուսաստանի պատմություն» դասընթացի շրջանակներում անհրաժեշտ է խոսել այն ժողովուրդների և պետությունների մասին, որոնք հնում եղել են Ռուսիայի տարածքում: Առավել կարևորվում են հնագույն պետությունները, հնագիտական մշակույթները, որոնք եղել են Հնագույն Արևելքում, և դրանց տիրապետության տակ եղած տարածքները, հունական գաղութները՝ Հին Հռոմի մերձսևծովյան կալվածքները, որոնք գոյություն չունեն ժամանակակից Ռուսաստանում:

Առաջին փուլը հարկ է համարել Ռուսիայի դարաշրջանը: Այն ընդգրկում է Ռուսիա պետության ստեղծման ժամանակից (IX-X դդ.) մինչև XV դարը, երբ ավարտվեց Ռուսական պետության ձևավորումը՝ Մոսկվա կենտրոնով: Այս փուլը երբեմն անվանում են հնագույն (հատկապես՝ մինչև XIII դ.՝ Բաթու խանի արշավանքը), թեև աղբյուրներում նշվում է մինչև XV դարը, երբ Ռուսիան վերանվանվեց և դարձավ Ռուսաստան (Россия): Այս դարաշրջանում Ռուսիան անցել է տարբեր փուլեր՝ հարաբերական միասնությունից մինչև առանձին հողերի փաստացի ինքնիշխանություն. ուժեղանում և թուլանում էին իշխանության առանձին կենտրոններ: Բաթու խանի արշավանքից հետո (1237-1242 թթ.) Ռուսիայի մեծ մասը հայտնվեց Հորդայից կախվածության մեջ: Համայն Ռուսիայի գերագույն տիրակալների, այսինքն՝ «Համայն Ռուսիայի մեծա-

հարգ իշխանների» (այդպես էին անվանվում) կարգավիճակը Կիևյան իշխաններից անցավ Վլադիմիրյաններին: Վլադիմիրասուզդալյան հողերի կազմում առաջացավ Մոսկովյան իշխանապետությունը (իշխանական տունը՝ княжество), որը ղեկավարող իշխանները պայքարում էին հանուն Վլադիմիրյան գահի, իսկ դրան տիրելուց հետո՝ ռուսական մնացած բոլոր հողերի միավորման համար: Արդյունքում XV դարի երկրորդ կեսին ավարտվեց Հորդայից կախվածությունը, ստեղծվեց Ռուսական պետությունը՝ Մոսկվա կենտրոնով, որը գլխավորեց Իվան III-ը և իրեն հռչակեց ոչ միայն գլխավոր իշխան, այլև ողջ Ռուսիայի տիրակալ:

Սկսվեց Ռուսաստանի պատմության հաջորդ դարաշրջանը: XVI-XVII դդ. անվանում են Ռուսական պետության դարաշրջան. հաճախ օգտագործվում է «Մոսկովյան պետություն» անվանումը: 1547 թ. Իվան Ահեղը իրեն կոչեց «ցար»: Այս ժամանակահատվածը երբեմն անվանում են Ռուսաստանի կամ Մոսկվայի ցարական տիրապետության դարաշրջան: Նկատենք, որ «ցար» տիտղոսը այլ պետությունների հետ հարաբերությունների ժամանակ օգտագործում էին դեռևս Իվան Ահեղի պապը՝ Վասիլի III-ը, և հայրը՝ Իվան III-ը: Այս դարաշրջանի սահմանային իրադարձությունը եղավ Խառնակ ժամանակը, երբ Ռյուրիկովիչների հարստության[2] իշխանությունը Մոսկվայի գահին կասեցվեց, և հաստատվեց նոր գահատոհմ, որը պատմության մեջ հայտնի է Ռոմանովների հարստություն անվանմամբ: Ռուսական պետականությունը, չնայած բոլոր աղետներին և խռովություններին, կանգուն մնաց և հարատևեց:

Ռուսաստանի պատմության նոր դարաշրջանի սկիզբը կապված է Պետրոս Առաջինի անվան հետ, երբ կատարվեցին փոփոխություններ, այդ թվում՝ պետական կառավարման և մշակույթի մեջ: Ստեղծվեցին կանոնավոր բանակ և նավատորմ, Բալթիկ ծով ելք ունենալու պայքարում հաղթեցին Շվեդիային՝ Եվրոպայի հյուսիսի հզորագույն պետությանը: Արմատապես փոխվեց Ռուսաստանի միջազգային դրությունը. այն պաշտոնապես հայտարարվեց կայսրություն (1721 թ.): Մայրաքաղաքը դարձավ Սանկտ Պետերբուրգը: Այս դարաշրջանը, որն անվանվում էր Ռուսական կայսրության դարաշրջան, շարունակվեց մինչև 1917 թ., երբ սկսվեց Ռուսական մեծ հեղափոխությունը:

Ռուսական մեծ հեղափոխության և Քաղաքացիական պատերազմի արդյունքում հաղթեց խորհրդային իշխանությունը, և 1922 թ. կազմավորվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ), որի կազմում միութենական կամ ինքնավար հանրապետությունների իրավունք ձեռք բերեցին նախկին Ռուսական կայսրության մեջ եղած շատ ժողովուրդներ: Միութենական հանրապետությունները իրենց երկրի ներքին կառավարման մեջ զգալի ինքնուրույնություն ստացան լեզվի, մշակույթի հարցերում: Համաձայն ԽՍՀՄ սահմանադրության՝ հանրապետությունները իրավունք ունեին դուրս գալ ԽՍՀՄ կազմից: Այդպես սկսվեց պատմության մի նոր դարաշրջան, որը սովորաբար անվանում են խորհրդային

[2] Միջազգայնորեն ընդունված «դինաստիա» եզրույթին հայերենում փոխարինում է «հարստություն» եզրույթը:

դարաշրջան: Դա եղել է մեծ փորձությունների և նշանակալից նվաճումների ժամանակահատված: Վճռորոշ իրադարձությունը, որը երկար ժամանակ կանխորոշում էր համաշխարհային պատմության ընթացքը և մտավ ռուսական պատմական գիտակցության մեջ՝ որպես համազգային միասնության գլխավոր օղակ, Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ հաղթանակն էր:

Խորհրդային Միությունը գոյություն ունեցավ մինչև 1991 թ.: Փլուզվեց սոցիալ-քաղաքական և տնտեսական խոր ճգնաժամի արդյունքում: Սկսվեց նոր փուլ՝ ժամանակակից Ռուսաստանի Դաշնության նոր դարաշրջանը, որը շարունակվում է մինչ օրս: Ռուսաստանի Դաշնությունը (ՌԴ) պահպանել է ԽՍՀՄ ժառանգորդությունը, և նրա գոյությունը շարունակությունն է ինչպես ԽՍՀՄ-ի, այնպես էլ Ռուսական կայսրության, մոսկովյան ցարական իշխանության և մինչպետականությունը գոյություն ունեցած Ռուսիայի: Այս պարբերացումը դրված է Ռուսաստանի պատմության հիմքում, և դրա համապատասխանությամբ է կառուցված այս դասագիրքը: Ըստ որում՝ վերոնշյալ դարաշրջանները բաժանվում են ժամանակահատվածների, որոնցից յուրաքանչյուրին առանձին գլուխ է նվիրված:

Ռուսաստանի պատմության աշխարհագրական շրջանակները: Երկրի պատմության ուսումնասիրության գործում կարևոր դեր ունեն աշխարհագրական շրջանակները: Ռուսաստանի պատմության համար առաջին հերթին դա ժամանակակից Ռուսաստանի Դաշնության տարածքն է, թեև հազարամյա պատմության ընթացքում երկրի սահմանները մշտապես փոփոխվել են, ինքնակալության կազմում այլ երկրներ և ժողովուրդներ են եղել: Այդ նպատակով Ռուսաստանի պատմության ուսումնասիրության ժամանակ հարկ է դիտարկել պատմականորեն գոյություն ունեցած պետությունը՝ Ռուսիան, և Ռուսական պետությունը՝ Մոսկվա կենտրոնով, Ռուսական կայսրությունը և, իհարկե, Խորհրդային Միությունը: Ուկրաինական պատմագիտության մեջ կա վարկած, թե Ռուսիայի պատմությունը պատկանում է բացառապես ուկրաինականին, իսկ Ռուսաստանի պատմության և ռուսական պետականության սկիզբը XIV դարն է՝ մոսկովյան իշխանության շրջանը: Բայց Ռուսիայի՝ IX- XIII դարերի պատմությունը վկայում է, որ բոլոր հողերը՝ Վոլինյանից մինչև Սուզդալյան, Նովգորոդից մինչև Չեռնիգով, գոյություն ունեին որպես միասնական տարածք, որը արտահայտվում էր նաև քաղաքականության և իրավունքի, տնտեսության և դավանանքի, լեզվի և մշակույթի ոլորտներում: Բավական է ասել, որ Սուզդալյան իշխան Յուրի Դոլգորուկին Մոսկվայի հիմնադիրն էր. նա Կիևի մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախի որդին էր, կյանքի վերջում միայն կարողացավ զբաղեցնել հայրական աթոռը, մահացավ և թաղվեց Կիևում: Բաթու խանի արշավանքից հետո Ռուսիայի տիրապետությունը շարունակվում էր հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան հողերում, որտեղ էլ կազմավորվեց Ռուսական պետությունը:

§ 4. Պատմական աղբյուրները և դրանց դերը պատմության ուսումնասիրության հարցում

Պատմական աղբյուրները՝ որպես գիտականության հիմք: Հումանիտար և բնագիտական ուղղության այլ գիտություններից պատմությունը տարբերվում է նրանով, որ հետազոտության առարկան անցյալն է: Պատմությունն ուսումնասիրում է հազարամյա և բազմադարյա իրադարձություններ և դեպքեր, ինչպես նաև այն, ինչը եղել է երեկ, նաև այսօր, բայց արդեն կատարված: Ցանկացած դեպքում ուսումնասիրում է այն, ինչն արդեն չկա: Պատմաբանը, ի տարբերություն բուսաբանի, քիմիկոսի, սոցիոլոգի, բժշկի, անմիջական շփում չունի այն նյութի հետ, ինչը նա քննում է: Նրան օգնում է այն հանգամանքը, որ անցյալն անհետ չի կորչում: Մատերիայի հիմնական հատկանիշներից մեկը արտացոլելու կարողությունն է, այն է՝ նյութական և հոգևոր մշակույթի հուշարձաններում հետք թողնելու հատկությունը: Տեղի ունեցած իրադարձությունները, երևույթները, գործողությունները անպայման իրենց հետքն են թողել արտացոլման գործընթացի արդյունքում: Պատմաբանը գործ ունի այդ իրադարձությունների փաստերի և վկայակոչումների հետ, որոնց կրողները պատմական աղբյուրներն են:

Այսպիսով, պատմական աղբյուրները պատմագիտության հիմքն են, քանի որ հենց դրանցում է պահված այն ամբողջ նյութը, անցյալի բոլոր անցքերը, որոնք ուսումնասիրության առարկա են դառնում:

Իրեղեն աղբյուրները, հնագիտական տվյալները: Տեղեկույթի ամրակայման և պահպանման միջոցից, կրողի բնույթից կախված՝ աղբյուրները բաժանվում են 2 խմբի՝ ի ցույց դրվողների և նախագաղափարների: Այսպես առանձնացվում են նյութական կամ իրեղեն աղբյուրները: Դրանք առարկաներ կամ ամենատարբեր նշանակության իրեր են, որոնք պարունակում են արժեքավոր և օբյեկտիվ տեղեկություններ կյանքի մակարդակի, կենցաղի յուրահատկության, արտադրության զարգացման, տեխնոլոգիաների, մշակույթի և արվեստի նվաճումների մասին, կարող են լինել նաև սոցիալական շերտավորման վկայություն և այլն: Առօրյա կյանքի և կենցաղի մասին վկայող այս աղբյուրների նկատմամբ առանձնակի հետաքրքրությունը ռուսական պատմագիտության մեջ ի հայտ եկավ XIX դարի երկրորդ կեսին՝ որպես որոշակի հակակշիռ ավանդական պատմագրությանը, որի հիմնական ուշադրությունն ուղղված էր պետությանը, իշխանավորներին, զինվորականներին: Նյութական աղբյուրները՝ հնատիպ իրերը, առարկաները, գրավեցին պատմաբանների ուշադրությունը, ինչը կարևոր խթան եղավ թանգարանների և թանգարանային գործի զարգացման համար: Գիտության մեջ ձևավորվեց, այսպես կոչված, պատմահնագիտական ուղղությունը, որի ներկայացուցիչներին հետաքրքրում էր անցյալի ուսումնասիրությունը՝ հենված իրեղեն աղբյուրների վրա: Ռուսաստանում այդ ուղղության հիմնադիրը եղան կոմս Ա.Ս. Ուվարովը և Ի.Ե. Զաբելինը՝ Մոսկվայի պատմության թանգարանի ստեղծման գլխավոր ոգեշնչողները:

Իրեղեն աղբյուրների հիմնական զանգվածը գտնվում է հողի մեջ: Դրանք կարող են դուրս բերվել հնագիտական պեղումների միջոցով, որի մեթոդները մշտապես

կատարելագործվում են, իսկ ծավալը՝ ընդլայնվում: Ներկայումս հնագիտությունը դարձել է ինքնուրույն ճյուղ պատմագիտության մեջ: Քանի որ հնագիտությունը դեռևս հնագույն լանդշաֆտների աննշան մասն է ուսումնասիրել, կարելի է համարել, որ նյութական մշակույթի պահպանված առարկաների ճնշող մեծամասնությունը դեռևս հողի տակ է, և դրանք դեռ պետք է հանվեն: Այդ իրերը հատկապես մեծ նշանակություն ունեն դարաշրջանների ուսումնասիրության համար մանավանդ այն դեպքերում, երբ գիրը դեռևս գոյություն չուներ, և դրանք կարևոր տեղեկությունների հաղորդման գործում համարվում են միակ իրեղեն ապացույցները: Հնագիտությունը կարևոր է նաև հաջորդող դարաշրջանների, անգամ ժամանակակից պատմության համար, քանի որ հայտնաբերված իրերը, առարկաները պատասխանում են ժողովրդագրությանը, բնապահպանությանը, հողօգտագործմանը վերաբերող հարցերին, որոնք չեն արտացոլվել պահպանված փաստաթղթերում:

Գրավոր աղբյուրներ. արխիվներ: Հնագիտական աղբյուրները, իրենց ողջ նշանակալիությամբ ու կարևորությամբ հանդերձ, ունեն մի թերություն. դրանք լուռ են: Նրանց «խոսել» կարող է ստիպել միայն արհեստավարժ հնագետը: Խոսքը ոչ միայն շփման, հաղորդակցման, այլև իմացությունը, տեղեկույթը պահպանելու, այլ ժամանակներ փոխադրելու, հայտնելու կարևոր միջոց է: Գրի ստեղծմամբ հնարավոր եղավ բառերով ինչ-որ բան արտահայտելը գրի առնել: Գրավոր խոսքի ի հայտ գալով՝ անցյալը «լիարժեքորեն» խոսեց: Հնարավոր եղավ պահպանել և փոխանցել տեղի ունեցած իրադարձությունների փաստերն ու փաստաթղթերը, մարդկանց հարաբերությունների մասին տեղեկությունները, ներկայացնել ամենատարբեր գաղափարներ, ձևակերպել խնդիրները և այլն: Ներկայումս պատմության ուսումնասիրության համար գրավոր աղբյուրները ամենակարևորներն են: Հասկանալի է՝ խոսքը պատմական այն շրջափուլերի մասին է, երբ կար գիրը, ստեղծվեց պետությունը, և այն շարունակվեց մինչև մեր օրերը:

Գրավոր աղբյուրները կարելի է բաժանել մի քանի տեսակների՝ կախված դրանց ձևից, բովանդակությունից, ում է հասցեագրված, ստեղծման նպատակներից: Այսպես, Ռուսաստանի պատմության համար հնում՝ մինչև XVII դարը, կարևոր էին այսպես կոչված պատմողական աղբյուրները: Լատիներենում «narratio» նշանակել է պատմություն, պատմվածք: Այս դեպքում առաջին տեղում են տարեգիրները: Նրանք իրենց տարեկան գրառումների հիմքում դնում էին կարճ գրություններ՝ տարվա մեջ տեղի ունեցած գլխավոր իրադարձությունների մասին, որոնք լրացվում էին ընդարձակ պատմություններով՝ տարեգրային պատմվածքներով (летописные повести): Պատմողական (նարրատիվ) աղբյուրների թվին են պատկանում նաև առանձին գրական ստեղծագործություններ, օրինակ՝ «Ասք Իգորի գնդի մասին» նշանավոր պոեմը, սրբերի կենցաղի մասին նյութերը:

Պետության ստեղծման պահից զարգանում է գրված օրենքը (писаное право), որը ենթադրում է օրենքների գրառում: Արդյունքում ձևավորվում են օրենսդրական աղբյուրները:

Կենսագործունեության ընթացքում մարդիկ մշտապես միմյանց հետ զանազան հարաբերությունների, շփումների մեջ են, ինչը պահանջում է ամրագրել դրանք

ակտերով և պայմանագրերով: Սա ծնում է աղբյուրի մի տեսակ, որը կոչվում է ակտերի նյութեր: Դրանց են պատկանում մեզ հասած հնագույն շնորհագրերը՝ հայրենաժառանգ կալվածքների (вотчин) անցումը եկեղեցու տիրապետությանը: Հանդիպում են նաև պարտքի բազմաթիվ անդորրագրեր, ամուսնական պայմանագրեր, կայքագրեր, գրավագրեր, փաստաթղթեր՝ կապալի և վարձու աշխատանքի մասին:

Պետության զարգացումից կախված՝ ընդլայնվում էր պետական ապարատը, ստեղծվում էին դիվանատներ, գրասենյակներ, որոնց բազմաբնույթ գործունեությունը արտացոլված է ծավալուն փաստաթղթերում, և որոնց արդյունքում ի հայտ եկան գործավարական աղբյուրները: Դրանց մեջ կան տվյալներ՝ բնակչության կազմի (մարդահամարի), հարկահավաքության, մաքսատուրքերի մասին, բազմաբնույթ վիճակագրություն, ամփոփումներ և հաշվետվություններ, առանձին անձանց բողոքների և խնդրանքների հիմքով գործեր, դատական գործեր և այլն: Ժամանակի հետ ավելանում էր հիմնարկությունների, ընկերությունների, հետագայում նաև կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների գործավարությունների թիվը:

Յուրատեսակ աղբյուրներ են անհատների մասին պատմող նյութերը: Դրանք օրագրերն են, հուշերը, անձնական նամակագրությունը, անցյալի մասին բազմաթիվ վկայությունները և հնարավորություն են տալիս դատելու այս կամ այն գործիչի հայացքների, կեցվածքի մասին: Այս ամենով հանդերձ՝ պետք է նկատի ունենալ, որ այդ աղբյուրները բավականին սուբյեկտիվ են, քանի որ արտահայտում են հեղինակի անձնական կարծիքը, մոտեցումները: Դրանից բացի՝ հուշերում գրված տեղեկությունների ճշգրտությունը կախված է այն բանից, թե որքանով են ստույգ և անխաթար վաղուց կատարված իրադարձությունների մասին հեղինակի հիշողությունները: Որպես գրավոր աղբյուրներ՝ կարելի է դիտարկել նաև գեղարվեստական գրականությունը, պարբերական մամուլը և այլն:

Գրավոր աղբյուրների մեծ մասը պահվում է պահոցներում (արխիվներում): Յուրաքանչյուր հիմնարկություն ունի գերատեսչական պահոց: Պատմական նշանակություն ունեցող փաստաթղթերը մշտական պահպանության են հանձնված դաշնային մակարդակի պետական պահոցներում, օրինակ՝ ՌԴ պետական, Ռուսաստանի՝ Հնագույն ակտերի պատմության պետական և տարածաշրջանային մակարդակի՝ հանրապետությունների, երկրամասերի, մարզերի պետական պահոցները: Օրենքով յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի օգտվելու պետական պահոցների փաստաթղթերից՝ բացառությամբ գաղտնի տեղեկույթ պարունակողներից: Պատմությամբ հետաքրքրվող հետազոտողների՝ աղբյուրներից օգտվելը դյուրին է դառնում այն պատճառով, որ շատ փաստաթղթեր դուրս են բերվում պահոցներից և տպագրվում: Ռուսաստանի պատմության ուսումնասիրության համար կարևոր են այնպիսի հրատարակությունները, ինչպիսիք են «Ռուս տարեգիրների լիակատար ժողովածուն», «Ռուսական կայսրության օրենքների լիակատար ժողովածուն», «Ռուսաստանի քաղաքական կուսակցությունները. XIX-ի դարավերջ և XX-ի 30-ականներ», հուշերի հրապարակումները (այդ թվում՝ «Ռուսական արխիվ»՝ «Русский архив» և «Ռուսական եղելավեպ»՝ «Русская старина» և այլն): Դրանք կարևոր են նաև փաստաթղթերի ավելի

հուսալի պահպանության առումով, քանի որ պահոցները երբեմն ոչնչանում են հրդեհի, հեղեղների և այլ պատճառներով: Ներկայումս ակտիվ կերպով իրականացվում են փաստաթղթերի թվայնացումը և դրանց տեղադրումը համացանցում:

Նյութական իրերը և գրավոր փաստաթղթերը պատմական աղբյուրների հիմնական մասն են կազմում: Թեև, դրանցից բացի, գոյություն ունեն աղբյուրների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են գեղարվեստի գործերը (կտավներ, փորագրանկարներ, քանդակներ), կինոնյութերը, ձայնագրությունները, ժողովրդական բանավոր ստեղծագործությունը, պատմության՝ բանավոր վկայությունների հետագա գրառումը:

Դասագիրքը գրված է «Ռուսաստանի պատմությունը ոչ մասնագիտական բարձրագույն կրթության բուհերի սովորողների համար հայեցակարգի» հիման վրա, հաստատված է 2023 թ. փետրվարին Ռուսաստանի կրթության և գիտության նախարարության Պատմագիտական կրթության զարգացման գծով փորձագիտական խորհրդի կողմից: Հարկ է նկատի ունենալ, որ այս գիրքը չի կրկնում միջնակարգ դպրոցի դասագրքերը: Դպրոցական դասընթացը անսահմանորեն հարուստ է նյութի առատությամբ, կոնկրետ փաստերով և իրադարձություններով: Դասընթացի նյութը, որը ներկայացված է այս դասագրքում, ուղղված է Ռուսաստանի պատմությունից արդեն հայտնի տեղեկությունների՝ բուհական մակարդակում ամփոփմանը՝ առանձնացնելով առավել այժմեական թեմաները:

Նյութի յուրացման և ինքնաստուգման նպատակով յուրաքանչյուր գլուխ ավարտվում է առաջադրված հարցերով: Առարկայի ավելի հիմնավոր մեթոդական մասը պետք է ներկայացվի ուսումնամեթոդական այն համալիրներում, որոնց մեջ կարևորվում է նաև այս դասագիրքը: Այսպիսով, ՌԴ կրթության նախարարության կողմից առաջադրված «Ռուսաստանի պատմություն» դասընթացի ուսումնամեթոդական համալիրը մշակված է:

Դասագիրքը բաղկացած է երկու մասից (մոդուլներից): Առաջին մասը բազային մոդուլն է՝ Ռուսաստանի պատմության վերաբերյալ: Երկրորդ մասում տեղադրված են մեկական մոդուլներ՝ մասնագիտական-ճյուղային պատմությունից: Ընդամենը այդպիսի վեց մոդուլ է՝ «Ինժեներական գործի պատմություն», «Գյուղատնտեսության պատմություն», «Տրանսպորտի պատմություն», «Բժշկության պատմություն», «Կրթության պատմություն», «Մշակույթի պատմություն»: Դրանցում լուսաբանվում են այդ ոլորտներին և Ռուսաստանին առնչվող հիմնական գործընթացները, իրադարձությունները, նվաճումները՝ ընդգրկելով տեղեկություններ համաշխարհային գիտության, տեխնիկայի և մշակույթի պատմությունից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. «Հայրենի պատմության իմացությունը քաղաքացիական նույնականության հիմքն է» միտքը հիմնավորող ապացույցներ բերե՛ք:

2. Ո՞ր գործոններն են առավել կարևոր ռուսական քաղաքակրթությունը բնութագրելիս։
3. Որո՞նք են Ռուսաստանի պատմության աշխարհագրական շրջանակները։ Ի՞նչ դեր է խաղացել աշխարհագրական միջավայրը ռուսական քաղաքակրթության ձևավորման մեջ։
4. Ո՞ր դավանանքների ներկայացուցիչներն են ապրում Ռուսաստանում։ Կրոնը ինչպիսի՞ նշանակություն է ունեցել Ռուսաստանի պատմության համար։
5. Որո՞նք են «Ռուսաստանը պետություն–քաղաքակրթություն է» հայեցակարգի հիմնական գծերը։ Ո՞ր փաստաթղթերում է արտացոլվել այն։
6. Օգտվելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից՝ տվե՛ք «ավանդական հասարակություն», «արդյունաբերական հասարակություն», «հետարդյունաբերական հասարակություն» հասկացությունների ընդգրկուն բնութագրերը։
7. Ներկայացրե՛ք Ռուսաստանի պատմության հիմնական ժամանակաշրջանները։ Ցո՛ւյց տվեք առավել կարևոր պատմական երևույթներն ու գործընթացները այդ ժամանակաշրջաններից յուրաքանչյուրում։
8. Հիշե՛ք, թե ինչպես եք սովորել Ռուսաստանի պատմությունը դպրոցում։ Ո՞ր շրջաններն ու իրադարձություններն են եղել Ձեր կարծիքով առավել կարևոր, հետաքրքիր և ինչո՞ւ։
9. Պատմե՛ք պատմական աղբյուրների տեսակների մասին։ Ձեր կարծիքով՝ պատմության ուսումնասիրության հարցում դրանցից որո՞նք են համարվում առավել կարևոր։
10. Օգտվելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից՝ պատրաստե՛ք և սահիկաշարերով ներկայացրե՛ք XVIII – XX դարերի նշանավոր ռուս պատմաբանների (2-3) մասին պատմող նյութ։

ԳԼՈՒԽ 2. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԸ ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ. ՌՈՒՍԻԱՆ IX ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XIII ԴԱՐԸ

§ 5. Հնագույն ժամանակներում ժամանակակից Ռուսաստանի տարածքում կազմավորված պետությունները և ժողովուրդները

Նախնադար: Մարդկության պատմության մեջ նախնադարը ամենաերկար ու ձիգ ժամանակաշրջանն է: Այն ընդգրկում է մարդու հայտնվելու ժամանակից (2,4 -2,3 միլիոն տարի առաջ) մինչև առաջին քաղաքակրթությունների ստեղծումը (մ.թ.ա. IV հազարամյակ): Ռուսաստանի տարածքում մարդու հայտնվելու և ապրելու առավել հին հետքերը, որոնք 2,1-2 միլիոն տարի առաջ են եղել, գտնվել են Հյուսիսային Կովկասում: Մեծ նշանակություն ունեն գտածոները՝ հայտնաբերված Ալթայում՝ Դենիսովյան քարանձավում: Այստեղ գտնված մնացորդները պատկանում են Homo-յի հատուկ ենթատեսակի, որն անվանվեց դենիսովյան մարդ, և որը բնակություն է հաստատել տվյալ տարածքում 200 հազարից մինչև 73 հազար տարի առաջ:

Արդեն այն ժամանակ մարդիկ սովորել էին պատրաստել և օգտագործել աշխատանքի գործիքներ: Պատմության հնագույն ժամանակաշրջանը բաժանվում է երեք դարաշրջանի:

1. Քարե դար (2,4-2,3 միլիոն տարի մ.թ.ա. մինչև V-IV հազարամյակները). այդ անունն է տրվել, քանի որ աշխատանքում օգտագործում էին քարե գործիքներ:

2. Բրոնզե դար (մ.թ.ա.IV-II հազարամյակներ)՝ բրոնզե և պղնձե գործիքների ի հայտ գալու պատճառով. շարունակվում էր նաև քարի գործիքների օգտագործումը:

3. Երկաթե դար (մ.թ.ա. II հազարամյակի վերջից մինչև մ.թ. I հազարամյակի կեսերը), որը բնութագրվում է երկաթե աշխատանքային գործիքների և զենքերի տարածմամբ և օգտագործմամբ:

Քարե դարը բաժանվում է երեք շրջափուլերի՝ հին (պալեոլիթ), միջին (մեզոլիթ) և նոր (նեոլիթ): Քարե դարի հին փուլի վերջում՝ պալեոլիթի շրջանում, ի հայտ է գալիս մարդու Homo sapiens տեսակը: Այդ դարաշրջանի մարդու՝ Ռուսաստանի տարածքում առավել լավ ուսումնասիրված և հայտնի կեցավայրեր են Վորոնեժի մարզի Կոստյոնկա գյուղի մոտակայքը (40 հազար տարի առաջ) և Վլադիմիրի ծայրամասում՝ Սինգիր բնակավայրին մոտ տարածքը (30 հազար տարի առաջ): Այդ դարաշրջանի մարդիկ ապրել են կոլեկտիվներով, կառուցել են խոշոր, երկարաժամկետ բնակավայրեր, պատկերացումներ են ունեցել կրոնից և կախարդություններից: Այդ մասին են վկայում Բաշկորկոստանի Կապի քարանձավում եղած կենդանիների ժայռապատկերները (18 հազար տարի առաջ):

Նեոլիթի դարաշրջանում, երբ փոքր-ինչ կատարելագործված էին աշխատանքային գործիքները, տեղի է ունենում այսպես կոչված նեոլիթյան հեղափոխությունը: Յուրացնող տնտեսությունից անցում է կատարվում արտադրող տնտեսության:

Որսորդության և հավաքչության ժամանակ մարդիկ օգտվում էին բնության պատրաստի բարիքներից: Նոր քարի դարում սկսեցին նաև իրենց աշխատանքով ստեղծել անհրաժեշտ բարիքներ: Նրանք սկսեցին զբաղվել հողագործությամբ և անասնապահությամբ: Այդ ժամանակ արդեն մարդիկ բավականին տարածվել, ցրվել էին ներկայիս Ռուսաստանի տարածքով, և նրա շատ շրջաններում հայտնաբերվել են մարդկանց՝ խմբերով ապրելու հետքերը, որոնք կենցաղի և օգտագործված իրերի միատեսակ լինելու պատճառով համարվում են հնագիտական որոշակի մշակույթի կրողներ: Այսպես, Ռուսաստանի միջին շերտում՝ ներկայիս Մերձմոսկվայում, հետազոտվել են Լյալովյան մշակույթի բնակավայրեր (մ.թ.ա. V-IV հազարամյակ): Այդպես են անվանել Լյալովո գյուղի մոտակայքում գտնվելու համար, որը ներկայիս Զելենոգրադի մոտ է:

Բրոնզե դարաշրջանը (մ.թ.ա. III-II հազարամյակներ) հայտնի է որպես զանգվածային տեղաշարժերի (միգրացիա) ժամանակաշրջան, որում բնակչության հսկայական զանգվածներ են եղել ընդգրկված: Առավել ակտիվ էին Եվրասիայի անտառատափաստանային և տափաստանային գոտու, ներառյալ Միջին և Ստորին Մերձվոլգյան, Ուրալի և Սիբիրի տարածքների, քոչվոր-անասնապահ ցեղերը: Պատմագրության համար մեծ արժեք է ներկայացնում Ռուսաստանի անտառային և անտառատափաստանային գոտում՝ Մերձդնեպրից մինչև Մերձբալթիկա և մինչև արևելք՝ Կամայի գետաբերան ընկած տարածքում, բրոնզեդարյան մշակույթի հետքերի հայտնաբերումը: Այն անվանում էին քուղանման գոտի ունեցող կերամիկայի և մարտական կացինների մշակույթ: Սրանք մշակութային ազդակներ են, որոնք ցույց են տալիս հարավից ու հարավ-արևմուտքից կատարված զանգվածային տեղաշարժերը: Այս շրջանի մշակույթին բնութագրական էին կավե ամանների զարդարումը՝ քուղի հետքի նման, և հողի մեջ թաղված քարե կացինների առկայությունը: Սրանով պայմանավորված՝ Ռուսաստանի կենտրոնական հատվածում և Ռուսական հարթավայրի հյուսիս-արևելքում ստեղծվել են մետաղագործական նոր օջախներ, ինչպես նաև արտադրական տնտեսություններ, որոնց հիմքում անասնապահությունն էր: Հնագիտական, մարդաբանական և հնագիտաժառանգաբանական տվյալների համախումբը ապացուցում է քուղանման գոտիով կերամիկայի մշակույթի պատկանելությունը հնդեվրոպական լեզվախմբի ցեղերին:

Երկաթե դարին անցումը նշանավորվեց Եվրասիայի և՛ անտառային, և՛ տափաստանային գոտիներում տարածված հնագիտական նոր մշակույթով, որոնց կրողները համարվում են Ռուսաստանի շատ ժողովուրդների նախնիները: Այսպես, ներկայիս Մոսկվայի տեղում և շրջակայքում հայտանբերվել են Դյակովյան մշակույթի ներկայացուցիչների բնակատեղիներ (մ.թ.ա.VII դ.- մ.թ.Vդ.): Իսկ անվանումը պայմանականորեն է կոչվում դյակովյան, քանի որ նախկինում այդտեղ եղել է Դյակովո գյուղը:

Հին ժամանակներ: Բրոնզե դարում՝ մոտավորապես մ.թ.ա. IV հազարամյակում, աշխարհի մի շարք տարածաշրջաններում ստեղծվում են առաջին քաղաքակրթությունները: Այդ ժամանակից էլ սկսվում է Հին աշխարհի պատմությունը: Գլխավոր առանձնահատկությունը գրերի ստեղծումն էր, որը հնարավորություն էր տալիս

գիտելիք կուտակել և առավել արդյունավետ իրականացնել կառավարումը: Հին աշխարհի համար բնութագրական էր հասարակական բարդ կառուցվածքի քաղաքակրթությունների (գիր ունեցող և չունեցող) համատեղ գոյակցությունը: Գիր չունեցողների մասին հնարավոր է դատել՝ համադրելով գրային մշակույթ ունեցող հարևան երկրների տվյալները և հնագիտական ու լեզվաբանական եզրահանգումները:

Հին քաղաքակրթություններն ընդունված է բաժանել հինարևելյան և անտիկ շրջանների: Եթե «անտիկ» հասկացությունը սահմանափակվում էր Հին Հունաստանով և Հին Հռոմով, ապա «Հին Արևելք» հասկացությունը մինչև XX դարը ներառում էր Եգիպտոսի և Մերձավոր Արևելքի քաղաքակրթությունները: 1930-ական թթ. խորհրդային եգիպտագետ Վ.Վ. Ստրուվեն առաջարկեց նրանում ընդգրկել նաև Հին Հնդկաստանի և Հին Չինաստանի ինքնատիպ հասարակությունները՝ դրանով իմաստավորելով ողջ Հին աշխարհը՝ որպես արտադրության կազմակերպման ստրկատիրության ժամանակաշրջան: Թեպետ այժմ այդ շրջանի ստրկատիրության դերը տարբեր հասարակություններում միանաշանակ չի գնահատվում, ռուսական պատմագիտության մեջ պահպանվել է Հին աշխարհի բոլոր քաղաքակրթությունների համալիր դիտարկման, ուսումնասիրության ավանդույթը և դրանց զարգացման ուղիների վերլուծությունը:

Հնադարի ողջ ժամանակահատվածում մարդը կախված էր շրջակա միջավայրի փոփոխություններից, այդուհանդերձ նախնադարի համեմատությամբ առավել բարդ էին սոցիալ-քաղաքական այն կառույցները, որոնք պայմաններ էին ստեղծում կայուն զարգացման համար: Դեռևս XIX դարում Լ.Ի. Մեչնիկովը գիտնականների ուշադրությունը հրավիրեց Նեղոս, Եփրատ, Տիգրիս, Գանգա և Հուանհե խոշոր գետերի ափամերձ հարթավայրերում առաջացած հին քաղաքակրթությունների վրա: Ոռոգման համակարգերի կառուցումը այս շրջաններում գյուղատնտեսություն վարելու պայման էր. դրանց կազմակերպման համար պահանջվում էին վարչական պաշտոններ: Վերջինն էլ իր հերթին նպաստում էր հնագույն քաղաքակրթությունների քաղաքական ձևավորմանը:

Կիմերները (գամիրներ), սկյութները և սարմատները: Բրոնզե դարի վերջում և երկաթե դարի վաղ շրջանում (II հազարամյակի վերջում և I հազարամյակում) հարավային Ռուսաստանի տարածքում ապրում էին քոչվոր ցեղեր, որոնց պայմանականորեն անվանում էին կիմերներ: Նրանց մասին տեղեկացնում են Հոմերոսը և մ.թ.ա. V դարի հույն գիտնական-պատմիչ Հերոդոտոսը:

Կիմերներին փոխարինեցին քոչվոր ցեղերի մեջ առավել հայտնի սկյութները, որոնք իրանալեզու ժողովուրդ էին: Նրանք բնակվում էին Մերձսևծովյան տարածքից մինչև Դնեպրի միջին մասն ընկած հատվածում և այդտեղից տարածվում մինչև Ալթայի լեռները, Միջինասիական տափաստանները: Հերոդոտոսի վկայությամբ՝ սկյութների մեծամասնությունը քոչվոր անասնապահներ էին, իսկ Դնեպրի շրջանում ապրում էին սկյութացի հողագործները: Խորհրդային գիտնական Բ.Ա. Ռիբակովը ենթադրում էր, որ սկյութացի հողագործները իրականում սլավոնների նախնիներն են, սակայն գիտնականների մեծամասնությունը չպաշտպանեց այդ վարկածը:

Մ.թ.ա. IV դարում սկյութները ստեղծեցին իրենց պետությունը։ Սկյութական քաղաքներից մեկը գտնվում էր Ղրիմում՝ ներկայիս Սիմֆերոպոլի տեղում։ Մ.թ.ա. II դարում դրա տեղում Սկիլուր ցարը նոր բերդ կառուցեց՝ սՍկյութական Նեապոլը։ Դա էլ դարձավ ու2 շրջանի Սկյութական թագավորության մայրաքաղաքը, որը գոյություն ունեցավ մ.թ.ա. III դարից մինչև մ.թ. III դարը։ Այս թագավորության մասին իր «Աշխարհագրություն» աշխատության մեջ գրել է հույն գիտնական Ստրաբոնը (մ.թ.ա. 64 թ.–մ.թ. 23 թ.)։

Դա ստրկատիրական պետություն է եղել։ Ժառանգորդ ցարի իշխանությունը աստվածացվում էր, սակայն գործունեությունը սահմանափակում էին «Մեծատուններ ի խորհուրդը» և «Ժողովրդական ժողովը»։ Սկյութական թագավորությունում մեծ ազդեցություն ունեին զինվորական առաջնորդները, քրմերը և զորականները։

Հնագույն դամբանաթմբերի պեղումների ժամանակ սկյութների դարաշրջանից գտնվել են բազմաթիվ առարկաներ՝ սկուտեղներ, զենքեր, ոսկերչական զարդեր։ Արքայական դամբանաթմբերը մինչև քսան մետր բարձրության էին հասնում, իսկ երևելիներին (մեծատուններին) թաղում էին զենքերով, թանկարժեք իրերով. նրանց հետ թաղում էին սպանված հարճերին, ստրուկ-ծառաներին և ձիերը։

Մ.թ.ա. VI–III դդ. Ալթայում ձևավորվել էր Պազիրիկյան մշակույթը, որը սկյութականին մոտ էր հիմնականում հուղարկավորության կարգով։ Այս տարածաշրջանի կլիմայական առանձնահատկություններով պայմանավորված՝ այստեղ լավ են պահպանվել օրգանական նյութերը, առարկաները։ Այսպես, Պազիրիկյան գերեզմանոցից գտնվել է խավոտ գորգերից ամենահինը, նաև թաղված ազնվականների մումիաներ։ Դրանցից ամենանշանավորը Ալթայան արքայադստեր՝ Ուկոկայի մումիան է՝ գըտնված 1993 թ.։ Սկյութականին նման իրեր են հայտնաբերվել նաև միջին Ենիսեյի ավազանի և մասամբ՝ Օբ-Ենիսեյան գետամիջյան հատվածում՝ որպես Տագարյան մշակույթի (մ.թ.ա. VIII/VII – մ.թ. III դդ.) նմուշներ։ Դրանց ստեղծողները եղել են ոչ միայն քոչվոր անասնապահները, այլև նստակյաց հողագործները, որոնք օգտագործում էին գյուղատնտեսական բրոնզե գործիքներ։ Դարաշրջանների սահմաններին Տագարյան մշակույթին փոխարինելու եկան Տաշտիկյանները (մինչև մ.թ.V դար), որոնց էթնոգենետիկական արմատները հասնում են մեր օրեր։ Դրանք ժամանակակից խակասներն են։ Սկյութների հզորությունը քայքայվեց արևելքից՝ Դոնից դեպի արևելք բնակվող սարմատների ցեղերի կողմից։ Հերոդոտոսը դրանց անվանում էր սավրոմատներ։ Մ.թ.ա. III դարից սկսվեց սկյութա-սարմատական պատերազմների դարաշրջանը։

Մ.թ.ա. III դարի վերջից Սկյութական պետության սահմանները սարմատների ճնշման տակ կրճատվում են։ Սկյութները մնում են միայն Ղրիմում և Դնեպրի ներքին հոսանքում։ Պատերազմներում շատ սկյութներ զոհվեցին, մնացյալը փախան Դանուբի կողմերը, մյուսները խառնվեցին զավթիչներին։ Ղրիմում հետսկյութական պետությունը ոչնչացվեց գերմանական գոթերի կողմից։ Դրանից հետո՝ ժողովուրդների Մեծ տեղաշարժի (վերաբնակեցման) ժամանակ, սկյութները կորցրին իրենց էթնիկ նույնականությունը՝ ձուլվելով բազմաթիվ այլ ցեղերի։

Արևմտյան սարմատները (յազիգները և ռոկսոլանները) մ.թ. I-II դդ. դակերի հետ միացան և պատերազմում էին հռոմեացիների դեմ, որոնք Դակիան դարձրել էին

հռոմեական ծայրագավառ: Որպեսզի յազիգների և ռոկսոլանների ասպատակությունները դադարեցնի, Հռոմեական կայսրությունը համաձայնեց հարկեր վճարել: Սարմատներին Հռոմը սկսեց վարձել զինվորական ծառայության համար: Սարմատների մի մասը վերաբնակեցվեցին Իտալիայում, Գալիայում, Հռոմեական գավառներում, Ադրիատիկ ծովի ափին և Դանուբի ափերին: Անգամ յազիգների հեծելազորի մեկ ջոկատ ուղարկվեց Բրիտանիա՝ ծառայության:

Ուշ անտիկյան շրջանի հեղինակները գրում էին նաև արևելյան սարմատների՝ «հավերժ մարտնչող», «անսանձ» ալանների մասին: Նրանց մասին գիտեին անգամ չինացի գիտնականները: Ալանների միջնադարյան սերունդներն էին յասերը, որոնք հիշվում են նաև հին ռուսական տարեգրության մեջ: Յասերը Հյուսիսային Կովկասում ժամանակակից օսեթների նախնիներն են եղել:

Հյուսիսային Մերձսևծովյան հունական քաղաք–գաղութները: Մ.թ.ա. I հազարամյակում Մերձսևծովում և Մերձազովում ի հայտ եկան հին հունական քաղաք-գաղութները. Օլվիան՝ Դնեպր-Բուգյան աջափնյա գետաբերանին, Գորգիպիան (ժամանակակից Անապան), Խերսոնեսը (այժմ՝ Սևաստոպոլ), Կիրկինիտիդան (Եվպատորիա), Թեոդոսիան (Ղրիմ), Պանտիկապեյը (Կերչ), Թանաիսը (Դոնի գետաբերան) և այլն: Ըստ իրենց հասարակական կառուցվածքի՝ դրանք համապատասխանում էին հունական պոլիսներին՝ քաղաքներին: Այս քաղաքներում պետական իշխանությունը հիմնականում ներկայացնում էին տիրակալները:



Խերսոնեսի պեղված վայրերը: XIX դարավերջ և XX դարասկիզբ:

Հույները Սև ծովը անվանում էին Պոնտ Եվկինյան (Հյուրընկալ ծով), քանի որ նրանք տեղի բնակչության կողմից դիմադրության չէին հանդիպում, թեև նրանց համարում էին բարբարոսներ: Նրանք սկյութներից գնում էին հացահատիկ, անասուն, կաշի, կաթ, պանիր: Մերձսևծովյան հացը արտահանում էին Էլլադա, որտեղից էլ

Մերձսևծով էին բերում գինի, ձիթապտուղ և դրա յուղը, արհեստագործական արտադրանք: Գաղութներում զարգանում էին այգեգործությունը և արհեստները:

Սկյութները սիրում էին հույներից գեղեցիկ իրեր գնել, ինչպես նաև պատվիրել նրանց արհեստավորներին պատրաստելու սկուտեղներ, մանյակներ, ճարմանդներ, սաներ, որոնք արված էին «գազանների պատկերներ արտահայտող» ոճով: Գիտնականները այդպես են անվանում այդ առարկաները, քանի որ իրերի վրա պատկերված էին առյուծներ, վայրի խոզեր, գիշատիչ թռչուններ և ձիեր: Հաճախ պատահում էին նաև անասնապահների պատկերներով իրեր:

Հռոմի իշխանության ծաղկման շրջանում հունական գաղութները գտնվում էին նրա տիրապետության տակ, իսկ Հռոմեական կայսրության արևելյան մասի անջատումից հետո (395 թ.) մի շարք գաղութներ անցան կայսրության այդ հատվածի ենթակայությանը (Ղրիմում՝ Խերսոնեսը, Սուդակը):

Բոսպորյան թագավորությունը, Դերբենտ, Մետաքսի մեծ ճանապարհը: V դարում Ղրիմի և Թամանի արևելյան ափին եղած հողերը միավորվեցին և կազմեցին Բոսփորյան (Բոսֆորի) թագավորությունը: Այս անվանումը կապված է Կերչի նեղուցի՝ Կիմերյան Բոսփորի անվան հետ: Մայրաքաղաքը Պանտիկապեյն էր: Մ.թ.ա. II դարում փոքրասիական Պոնտական պետությունը (Պոնտոսը) իրեն միացրեց Բոսփորի թագավորությունը: Դա տեղի ունեցավ պոնտական թագավոր Միհրդատ VI Եվպատորի (մ.թ.ա. 132–63 թթ.) օրոք, որը շուտով սկսեց պատերազմել Հռոմի դեմ, պարտվեց և զոհվեց: Բոսփորը ենթարկվեց Հռոմին: VI դարի առաջին կեսին այն մտավ Արևելյան Հռոմեական կայսրության (Բյուզանդիայի) կազմի մեջ:


Հնագույն քաղաքներից է Կասպից ծովի արևմտյան ափին գտնվող Դերբենտը: Այն երկու գետերի՝ Սուլխոդուլի և Ռիբասի գետախորշում է, որտեղ Կովկասյան լեռները գրեթե մոտենում են ծովին՝ թողնելով մի նեղ՝ երեք կիլոմետրանոց հարթավայր ծովի ափի երկարությամբ: Այս հարթավայրում ձգվող Դերբենտը ստացավ երկրորդ անունը՝ «Կովկասյան լեռնանցք»: Դերբենտի ռազմավարական կարևորությունը գիտակցում էին և՛ հին հույները, և՛ հռոմեացիները: Մ.թ.ա. VI դարում Դերբենտի մասին գրել է Հեկատիոս Միլեթացին, հետագայում՝ V և IV դարերում, գրել են Հերոդոտոսը և Հարես Միթիլենացին: Դերբենտը բազմիցս պատերազմական գործողությունների վայր է եղել, ապրել ծաղկման և անկման ժամանակահատվածներ: Մ.թ.ա. III դարում՝ Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության անկումից հետո, Դերբենտի վրա գրոհել են Սելևկյան պետության ռազմիկները, իսկ մ.թ.ա. I դարում Դերբենտ են արշավել հռոմեացիները՝ Լուկոուլլոսի և Պոմպեոսի գլխավորությամբ: Նրանք բոլորը, ինչպես նաև սկյութները, սարմատները, ալանները, ավելի ուշ՝ հոները փորձել են զավթել քաղաքը:

Դեռևս հնագույն ժամանակներում Հին աշխարհում ձևավորվել էր «քաղաքակրթական յուրատեսակ գոտի», որը չընդհատվող շղթա էր Ատլանտիկից մինչև Հեռավոր Արևելք: Թեև դա զբաղեցնում էր Եվրասիայի համեմատաբար ոչ մեծ հատվածը, այնուամենայնիվ հենց այդ տարածքում էր կենտրոնացել Եվրասիայի բնակչության մեծ մասը, և հենց այդ տարածաշրջաններն էին առավել դինամիկ ձևով զարգանում: Այդ շղթայի երկու հիմնական օղակների միջև գոյություն ունեին տարաբնույթ կապեր,

այնպես որ դրանցից մեկում կատարվող փոփոխությունները ազդում էին մյուս օղակների վրա: Այդ կապերի արտահայտությունն էր դեռևս հնում ստեղծված հաղորդակցության համակարգը՝ Մետաքսի մեծ ճանապարհը: Այդ ուղիով էին գնում առևտրականների քարավանները և զորքերը, փոխանցվում էին տեխնոլոգիաները, գաղափարները, դավանանքները: Հսկայական եկամուտներ բերող այս տարածքների հսկողության համար դաժան պայքար էր գնում:

Քոչվորների աշխարհը: Վերոնշյալ գոտուց հյուսիս ձևավորվում էր մեկ այլ՝ դարձյալ արևելքից արևմուտք ձգվող, քոչվորների բնակության գոտին: Սակայն քոչվորները նշանակալից դեր ունեցան հատկապես Միջնադարում, երբ նրանք առավել վտանգավոր դարձան հողագործ ժողովուրդների համար:

Ժողովուրդների վերաբնակեցման մեծ դարաշրջանում թյուրքալեզու որոշ քոչվոր ցեղերի շրջանում տեղի ունեցավ անցում տոհմացեղային կարգից դեպի պետականություն: Թյուրքական ցեղերը միավորվեցին մեկ ցեղի իշխանության ներքո և մեկ հարստության (դինաստիայի) ղեկավարությամբ: Այդ միավորումների հիմքով ստեղծվեցին պետություններ, որոնք հաճախ զբաղեցնում էին հսկայական տարածքներ՝ «քոչվորական կայսրություններ»: Դրանք իրենց կառուցվածքով տարատեսակ էին, և նրանց տիրապետության տակ բազմաթիվ գերված ժողովուրդներ կային:



Կերչը XIX դարում:

VI դարի կեսերին Միջին Դանուբյան տարածքը զավթեց ավարների թյուրքական ցեղը, և առաջացավ Ավարական խաքանությունը (թյուրքերի գերագույն տիրակալը կոչվում էր խաքան): VII դարում Ավարական կագանատը բազմիցս պատերազմել է Բյուզանդիայի դեմ և ավերել հողեր, որոնցում հետագայում առաջացավ Ռուսիան: VIII դարի վերջին Ավարական կագանատը ջախջախեց Կարլ Մեծը:

VI–IX դդ. Չինաստանից մինչև Կովկաս ընկած հսկայական տարածքում, միմյանց փոխարինելով, իշխում էին թյուրքական խաքանությունները, այնուհետև՝ ույգղուրականը։ Մետաքսի մեծ ճանապարհի մի մասը վերցնելով իրենց հսկողության տակ՝ թյուրքերը շահագրգռված էին ուղիղ առևտրական կապեր հաստատել Բյուզանդիայի հետ և դարձան վերջինիս դաշնակիցը Իրանի, այնուհետև՝ արաբների դեմ պայքարում։

VII դարի սկզբում մերձսևծովյան և մերձկասպյան տափաստաններում հիմնավորվեցին բոլղար (բուլղար) և խազար թյուրքական ցեղերը, որոնք վայելում էին Բյուզանդիայի աջակցությունը։ Նույն՝ VII դարում, խազարները դուրս մղեցին բուլղարներին։ Դրանց մի մասը, քոչելով դեպի Դանուբ, ներխուժեց Բյուզանդիա և Բալկաններում հիմնադրեց Բուլղարական առաջին թագավորությունը թյուրքական խաների գլխավորությամբ և հիմնականում՝ սլավոն բնակչությամբ։ Բուլղարների մեկ այլ հատված շարժվեց դեպի Միջին Պովոլժիե, որտեղ IX դարում նույնպես ստեղծեցին իրենց պետությունը՝ Վոլգյան Բուլղարիան, իսկ արդեն 922 թ. ընդունեցին մահմեդականություն։

Թյուրք-խազարների ցեղերը VII դարում ստեղծեցին իրենց պետությունը՝ Խազարական խաքանությունը։ Այն հսկում էր առևտրի կարևոր գետային ճանապարհները Կասպից ծովից դեպի Սև և Բալթիկ ծովեր, ինչպես և քոչվորների տեղաշարժի՝ Ասիայից Եվրոպա տանող հիմնական ուղիները։ Լինելով Բյուզանդիայի դաշնակիցը՝ խազարները խանգարում էին արաբների՝ դեպի Արևելյան Եվրոպա առաջ գնալուն և օգնում Բյուզանդիային՝ դիմադրելու արաբներին։ Խազար որոշ ընտանիքներ ընդունեցին էբրայականությունը, բայց բնակչության հիմնական մասը մնաց հեթանոս։

Ժողովուրդների մեծ տեղաշարժ–վերաբնակեցումը. սլավոնների տարաբնակեցումը։ Մ.թ. II–IV դդ. Եվրոպայում սկսվեց հզոր տեղաշարժ (միգրացիա), որն անվանվեց Ժողովուրդների մեծ տեղաշարժ–վերաբնակեցում։ Դրա արդյունքը եղավ մայրցամաքի անտիկ էթնոքաղաքական քարտեզի ոչնչացումը։ Եթե մ.թ. I դարում Եվրոպայի հարավային և արևմտյան հատվածները զբաղեցնում էր Հռոմեական կայսրությունը, որն այդ ժամանակ միակ պետությունն էր Եվրոպայում, իսկ հյուսիսում և արևելքում մարդիկ ապրում էին մինչպետական զարգացման փուլում, ապա 1-ին հազարամյակի վերջում ձևավորվեց նոր՝ միջնադարյան էթնիկ–քաղաքական կառույց, որի հիմնական բաղադրիչներն այժմ էլ կան։ Այդ կառույցին բնորոշ էին բազմաքանակ պետական կազմավորումներ։ Սա մի տարածք էր, որն այժմ փաստացի ընդգրկում է ամբողջ Եվրոպական մայրցամաքը։

Ժողովուրդների մեծ վերաբնակեցման սկիզբը I-II հազարամյակներում էր։ Առաջինը տեղաշարժը սկսեցին գերմանական ցեղերը, այդ թվում՝ գոթերը, որոնք հարավարևելյան Մերձբալթիկայից գնացին դեպի մերձսևծովյան հյուսիս։ Փաստացիորեն Եվրոպայի տարածքում ժողովուրդների տեղաշարժերի (միգրացիոն) չդադարող գործընթացը խթանեցին Կենտրոնական Ասիայից քոչվորների արշավանքները։ 370-ականներին հոները մտան Հյուսիսային Մերձսևծով և սկսեցին նեղել գոթերին։ Սրանք էլ իրենց հերթին տեղափոխվեցին Ներքին Դանուբ և մտան Հռոմեական կայսրության

սահմանները: Տեղաշարժը սկսեցին Միջին Դանուբի շրջանում ապրող գերմանական ցեղերը:

V դարի երկրորդ կեսին հոները Միջին Դանուբում ստեղծեցին բազմաէթնիկ ուժեղ տիրակալություն, որն առաջնորդում էր Աթիլլան (մահացել է 453 թ.): Նա սպառնում էր և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հռոմեական կայսրություններին (IV դարի վերջին Հռոմեական կայսրությունը բաժանվեց երկու մասի՝ Հռոմ և Կոստանդնուպոլիս (Նոր Հռոմ) կենտրոններով): Այս երկու կայսրությունների իշխանության տակ էին հայտնվել գերմանական մի քանի հանրություններ: Գերմանական մյուս խմբավորումները, հեռանալով հոների ճնշումից, անցան Հռոմեական պետության սահմանները, հիմնավորվեցին այնտեղ (սկզբում, որպես կանոն, կայսրության իշխանությունների համաձայնությամբ) և, ի վերջո, դարձան նստակյացներ՝ ստեղծելով սեփական նախապետական կազմավորումները՝ այսպես կոչված բարբարոսական թագավորությունները: Հոների թագավորության անկումից (Աթիլլայի մահից) հետո էլ գերմանական ցեղերի շարժումը չդադարեց: Այդ ժամանակ գերմանական ցեղերը գործում էին ինքնուրույն: 476 թ. հոների և գերմանական ցեղերի հարվածներից թուլացած Արևմտյան Հռոմեական կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց: V դարի վերջին Իտալիայում ձևավորվեց Օստգոթական թագավորությունը:

Հռոմեական կայսրության նախկին տարածքում իրենց թագավորությունները ստեղծեցին գերմանական մյուս խմբավորումները. վեստգոթերը՝ Հարավային Գալիայում և Իսպանիայում, ֆրանկները՝ Հյուսիսային Գալիայում, բուրգունդները՝ Վերին Հռենոսում, վանդալները՝ Հյուսիսային Աֆրիկայում:

Ընդհանուր առմամբ կլիմայական փոփոխությունները և որպես հետևանք՝ ժողովուրդների տեղաշարժերը մեծ դեր խաղացին Հռոմեական կայսրության անկման և կայսրությանը կապված քաղաքական ուժերի, այդ թվում՝ Հարավային Ռուսաստանի տարածքում գտնվողների կործանման մեջ:

IV–V դդ. տեղաշարժերին (միգրացիաներին) սլավոնների մասնակցության մասին ոչինչ հայտնի չէ: Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ սլավոնները եղել են Միջին Դանուբում՝ Աթիլլայի պետության բնակչության մեջ: Բայց որպես ինքնուրույն ուժ՝ սլավոնները V դարում հանդես չեն եկել, և նրանց մասին այդ ժամանակաշրջանի աղբյուրներում չի հիշատակվում: Իսկ VI դարում, ընդհակառակը, Ժողովուրդների մեծ վերաբնակեցման գործընթացում սլավոնները հայտնվում են գլխավոր դերերում:

Բյուզանդական կայսրություն: Ի տարբերություն Արևմտյան Հռոմեական կայսրության՝ Արևելյան Հռոմեական կայսրությունը Ժողովուրդների մեծ վերաբնակեցման դարաշրջանին դիմացավ, պահպանեց զարգացած տնտեսությունը, հռոմեական պետականության ավանդույթները և անտիկ մշակույթը: Նրա բնակիչները իրենց տերությունը համարում էին Հռոմեական կայսրության ուղիղ և միակ շարունակողը և հունարենով իրենց անվանում էին ռոմեյաներ, այսինքն՝ հռոմեացիներ: Արևմուտքում կայսրությունը վերականգնելու փորձերը Բյուզանդիան ընկալում էր որպես հափշտակում, բռնատիրում:

X դարի սկզբին է տեղի ունեցել Կիևի իշխան (X դարի սկզբին տեղի է ունեցել Կիևի իշխան) Օլեգի այցը Կոստանդնուպոլիս և այն պայմանագրի կնքումը (911 թ.), որով ապահովվում էր ռուս առևտրականների մուտքը բյուզանդական շուկա: Այդ ժամանակվանից սկսած՝ Ռուսիայի հետ հարաբերությունները կարևոր դարձան կայսրության արտաքին քաղաքականությունում: 988 թ. Ռուսիան ընդունեց քրիստոնեությունը: Այդ ժամանակ Վասիլի 2-րդ կայսրը գրավեց Բուլղարիան՝ վերականգնելով Դանուբով անցնող VI դարի սահմանը: Բյուզանդական կայսրությունն ապրեց բազմաթիվ ցնցումներ և բազմիցս վերականգնեց իր հզորությունը, ինչպես օրինակ, 1204 թվականին՝ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի զավթումից հետո: Ինքնակալությունը վերջնականապես կործանվեց 1453 թ. օսման–թուրքերի հարվածներից: Կործանումից հետո էլ Բյուզանդիայի մշակութային ազդեցությունը շարունակում էր մնալ: Պատմաբաններն ասում էին. «Բյուզանդիա՝ Բյուզանդիայից հետո»: Բազմաթիվ մտավորականներ և արվեստագետներ հեռանում էին կործանվող կայսրությունից դեպի Արևմտյան Եվրոպա կամ Ռուսիա՝ իրենց հետ տանելով գիտելիք, սրբապատկերներ և ձեռագրեր:

Համաշխարհային պատմության խոշորագույն քաղաքակրթություններից մեկը՝ Բյուզանդիան, պատմական հզոր դեր է ունեցել՝ որպես անտիկ և քրիստոնեական աշխարհները, Արևմուտքը և Արևելքը կապող օղակ՝ դառնալով ուղղափառության տարածման գլխավոր կենտրոնը: Տարբեր ժամանակներում Բյուզանդիայի կազմի մեջ մասնակի կամ ամբողջովին եղել են ավելի քան քսան ժամանակակից երկրներ. նրա պատմությունն այդ երկրների ազգային պատմության մասն է:

Հին ժամանակների նշանակությունը համաշխարհային պատմության և մշակույթի համար: Հին դարաշրջանը քաղաքական տարբեր համակարգերի և կազմակերպությունների, քաղաքային բարդ կենցաղի օրինակներ է ցույց տալիս: Համաշխարհային և ազգային բազմաթիվ դավանանքները (բուդդիզմ, եբրայականություն, քրիստոնեություն, կոնֆուցիականություն), հունական փիլիսոփայությունը, հռոմեական իրավունքը, այժմ գոյություն ունեցող գրեթե բոլոր գրական ժանրերը, արվեստի անտիկ տեսությունը, գիտատեխնիկական նվաճումները Հին Աշխարհի ժառանգությունն են: Մարդկությունն առ այսօր օգտվում է դրանցից:

§ 6. Արևելյան Եվրոպան մ.թ. I հազարամյակում. սլավոնների վերաբնակեցումը

Արևելյան Եվրոպայի էթնիկ-քաղաքական քարտեզը մ.թ.1-ին դարերին: Դարաշրջանի սկզբում՝ Քրիստոսի ծննդից սկսած, Արևելյան Եվրոպան էթնիկ տեսանկյունից ներկայացնում էր խայտաբղետ պատկեր: Սև ծովի հյուսիսային ափամերձ շրջաններում շարունակում էին գոյություն ունենալ հունական նախկին գաղութները, իսկ այդ նույն ժամանակ Հռոմեական կայսրության առաջադիր ամրակետերն (ֆորպոստներ) էին Խերսոնեսը, Օլվիան, նաև Հռոմից կախվածություն ունեցող Բոսպորյան

պետությունը Հարավային Մերձազովում: Արևելյան Եվրոպայի հարթավայրային մյուս հատվածներում բնակվում էին զարգացման մինչպետական աստիճանում գտնվող ժողովուրդներ:

Հարավում՝ Սև ծովին մոտ հյուսիսային տափաստաններում, իշխում էին իրանալեզու քոչվորները՝ սարմատները, որոնք մ.թ.ա. 1-ին հազարամյակում փոխարինեցին իրենց հետ լեզվական ազգակցություն ունեցող սկյութներին: Բալթիկ ծովի հարավարևելյան ափերից մինչև Օկա գետի վերին հոսանքներում եղող անտառային գոտին զբաղեցնում էին բալթյան լեզվախմբի ժողովուրդները (այժմ՝ լատվիացիները և լիտվացիները): Ավելի հյուսիսում՝ խառը և փշատերև անտառների գոտում, ապրում էին ուգրո-ֆիննական ցեղերը, որոնք պատկանում էին ուրալյան լեզվաընտանիքին: Մ.թ. I-II դդ. Հարավային Մերձբալթիկայից դեպի Սև ծովին մերձակա հյուսիսային հողերը շարժվեցին գերմանացի–գոթերը: Նրանք կարողացան գերիշխող դիրք ունենալ Արևելյան Եվրոպայի հարավում:

Այն հարցը, թե մ.թ. 1-ին հարյուրամյակներին որտեղ են եղել սլավոնները, որոնք Արևելյան և Կենտրոնական Եվրոպայում մի քանի դար հետո դարձան գերիշխող էթնոս, դեռևս վիճելի է, քանի որ հայտնի է՝ «սլավոններ» անվանումը հնդեվրոպական լեզվաընտանիքի այլ ժողովուրդների համեմատությամբ պատմական աղբյուրներում ի հայտ է եկել մ.թ. VI դարում: Շատ հետազոտողներ ենթադրում են, որ հնում սլավոնները հիշատակվել են որպես «վենեդներ»: Մ.թ.ա. I հազարամյակի վերջում և մ.թ. I հազարամյակի սկզբում մի շարք անտիկ հեղինակներ այս էթնիկ անունով էին կոչում մի ժողովրդի, որը բնակվել է Արևելյան Եվրոպայի արևմտյան կամ հարավարևմտյան մասերում: Ավելի ուշ՝ միջնադարում, «վենեդներ» անվանումը՝ որպես հոմանիշ «սլավոնների», երբեմն գործածվում էր արևմտաեվրոպացի հեղինակների կողմից: Սակայն այս դեպքում էլ խնդիրն այն է, որ «վենեդներ/վենետներ» էթնոանվանումը անտիկ գրականության մեջ կարող էր նշանակել տարբեր ծագման ժողովուրդներ: Ահա ինչու միշտ չէ, որ կարելի է այս անունը կիրառել սլավոնների նկատմամբ: Բացի դրանից՝ վենեդների տեղայնացումը այս կամ այն հիշատակման մեջ, որը հավանական է՝ վերաբերել է սլավոնների նախնիներին, նկատելիորեն անորոշ է: Այսպես, մ.թ.ա. հռոմեացի պատմիչ Տացիտոսի (կամ Տակիտոսի) տվյալներով վենեդները ապրում էին գերմանացիների և սարմատների տարածքների միջակայքում: Այդ պատճառով «մինչև պատմական ասպարեզ դուրս գալը» սլավոնների գտնվելու վայրը որոշելու հարցում առաջնահերթությունը տրվում է հնագիտության տվյալներին:

Սակայն այստեղ էլ բարդություններ կան, քանի որ ակնհայտ, ուղիղ հաջորդականություն (ժառանգորդություն) VI-VII դդ. սլավոնական արժանահավատ հուշարձանների և ավելի հին հնագիտական մշակույթի միջև չի հայտնաբերվել: Հնագետների մի մասը ենթադրում է, որ մ.թ. սկզբում սլավոնները ապրել են ժամանակակից Լեհաստանի հարավ-արևելքում և Լեհաստանի սահմաններից արևելք ընկած տարածքներում: Այս դեպքում նրանց հետ են կապում պշեվորյան (пшеворский) հնագիտական մշակույթը (Վիսլայի վերին հոսանքներում) և մասամբ՝ չեռնյախովյան (Միջին Դնեպրից և Վերին Մերձդնեստրից մինչև Դանուբի ստորին ավազանը), որի կազմի մեջ մտել

են սարմատները, գոթերը և այլ ժողովուրդներ: Այլ հետազոտողներ կարծում են, որ հին սլավոնները ապրել են ավելի հյուսիս՝ Արևմտյան Բուգի և Դեսնայի միջակայքում՝ ժամանակակից Բելառուսի Պոլեսիեում (Полесье), և պատկանել են նշանահատողնեբի, այն է՝ зарубинецкий կոչվող հնագիտական մշակույթին:

Անկասկած սլավոններին պատկանող հնագիտական մշակույթի առաջին նմուշները V դարավերջի և VI-VII դդ. ծաղկման շրջանում են: Դա այսպես կոչված պրագա–կորչակյան և կանեփաթելի (пеньковский) մշակույթն էր: Պրագա-կորչակյան մշակույթի հուշարձանները տարածված են եղել VI–VII դդ. Էլբայից մինչև Միջին Դնեպրի արևմտյան հատվածը, Վերին Մերձդնեստրը, Դանուբի ստորին ջրերը: Կանեփաթելի ժամանակաշրջանի հուշարձանատեսակների տարածվածությունը եղել է Պրուտ գետից արևելք և Դանուբի ստորին ավազանից մինչև Միջին Դնեպրի ձախ ափը:

Սլավոնների մասին առաջին տեղեկությունները պարունակող գրավոր աղբյուրները գլխավորապես բյուզանդական են (Արևելյան Հռոմեական կայսրությունը պայմանականորեն գիտական գրականության մեջ անվանում են Բյուզանդիա):

VI դարում բյուզանդական աղբյուրներում սլավոնները հանդես են գալիս հունարեն՝ Σκλαβινοί – սլովենե, լատիներեն՝ Sclaveni և անտ անվանումներով:

Բյուզանդացի հեղինակները «սլովենե» բառով անվանում էին այն խմբավորումը, որը ներկայացնում էր Պրագա-կորչակյան մշակույթը, իսկ «անտ» էին անվանում կանեփաթելի մշակույթի ներկայացուցիչներին:

VI դարում սկսվում է սլավոնների՝ տարբեր վայրերում բնակեցումը, որը Մեծ տեղաշարժերի ավարտական փուլն էր: Տեղաշարժն իրականացվում էր երեք հիմնական ուղղություններով՝ 1) հարավ՝ դեպի Դանուբ գետը և Բալկանյան թերակղզին (Բյուզանդիայի տարածք), 2) արևմուտք՝ դեպի Միջին և Վերին Դանուբի ստորին ավազան և Օդեր ու Էլբա գետերի միջակայք (այն տարածքները, որտեղից գերմանական խմբավորումները հեռացան դեպի արևմուտք), 3) արևելք և հյուսիս՝ Արևելաեվրոպական հարթավայրից դեպի բալթերի և ուգրո-ֆինների հողերը: Արդյունքում սլավոնների կողմից բնակեցվեցին Բալկանյան ամբողջ թերակղզին, հյուսիսում՝ Արևելյան Եվրոպայի անտառային գոտին մինչև Ֆիննական ծոցը, արևմուտքում՝ Նեման և Արևմտյան Դվինայի միջին հոսանքից մինչև Վոլգայի վերին հոսանքները, արևելքում՝ Դոնը և Օկան, Դանուբի ստորին և միջին հոսանքներից մինչև Օդեր և Էլբա գետերի գետամեջը, Բալթիկ ծովի հարավային ափերը՝ Յուտլանդական թերակղզուց մինչև Օդերի և Վիսլայի գետամեջը:

Սլավոնների՝ երեք ուղղություններով տեղաշարժերը ձևավորեցին երեք՝ առ այսօր գոյություն ունեցող սլավոնական ճյուղերը՝ հարավային, արևմտյան և արևելյան: Երկար ժամանակ կարծիք կար, որ արևելյան սլավոնների նախնին *անտ* ցեղն է, որը VI դարում իսկապես արևելյան հատվածում աշխարհագրորեն սլավոնական լեզվի կրողն էր, իսկ արևմտյան և հարավային մասերում՝ սլովենեն: Բայց հնագետների ուսումնասիրությունները ժխտեցին այդ տեսակետը: Պարզվեց, որ մի կողմից արևելյան սլավոնների նախնիների մեջ եղել են պրագա–կորչակյան մշակույթի կրողներ, այսինքն՝ սլովենեներ, իսկ մյուս կողմից՝ անտ ցեղը, որի խմբավորումները քայքայվեցին

VII հարյուրամյակի սկզբներին տեղաշարժերի պատճառով, իրենց ներդրումն ունեն ինչպես հարավային սլավոնների (գրեթե ավելի շատ, քան սլովենները), այնպես էլ արևմտյանների կազմավորման մեջ: (Պարզվեց, որ մի կողմից արևելյան սլավոնների նախնիների մեջ եղել են պրագա–կորչակյան մշակույթի կրողներ, այսինքն՝ սլովենեներ, իսկ մյուս կողմից՝ անտ ցեղը, որի խմբավորումները քայքայվեցին VII հարյուրամյակի սկզբներին տեղաշարժերի պատճառով նրանք իրենց ներդրումն ունեն ինչպես հարավային սլավոնների (գրեթե ավելի շատ, քան սլովենները), այնպես էլ արևմտյանների կազմավորման մեջ):

Սլավոնների հասարակական կարգը: Եթե VI դարի աղբյուրներին հայտնի էին սլավոնական լեզվակիրների երկու անվանում («սլովենե» և «անտ»), ապա VII դարից սկսած՝ հիշվում են սլավոնական խմբավորումների այլ անվանումներ ևս: Պատմական գրականության մեջ սովորաբար դրանց անվանում են «ցեղեր»: Բայց «ցեղ» անվանումը միջնադարում կիրառվում էր այլ նշանակությամբ և սլավոնական մինչպետական հասարակություններին չէր վերաբերում: Այն՝ որպես գիտական պայմանական եզրույթ, նույնպես պիտանի չէ, քանի որ ժամանակակից գիտությունն ապացուցել է՝ ցեղային (ցեղերում գործում էին ազգակցական-արյունակցական կապերը, ցեղի անդամների միջև հավասարություն էր) և պետական կառույցների միջև գոյություն է ունեցել զարգացման մեկ այլ փուլ: Այդ փուլին բնորոշ են եղել իշխանության ժառանգական փոխանցումը և ազնվականության աստիճանն ու դիրքը ժառանգաբար ստանալը: Այդպիսի հասարակությունները գիտության մեջ անվանվում են ցեղավար (вождество): VI-VIII դդ. արտագաղթի հետևանքով սլավոնների ցեղախմբերի կառուցվածքը փշրվեց, և ստեղծվեցին նոր խմբավորումներ, որոնք իրենց բնույթով համապատասխանում էին հենց ցեղավար[3] խմբերին (вождество): Աղբյուրները վկայում են՝ դրանցում իշխանները, հասարակությունը ղեկավարողներն էին, իսկ ազնվականները՝ արհեստավարժ զինվորականներ էին՝ անձնական հավատարմությամբ կապված իշխանների հետ (հին ռուսերենում կոչվում էր дружина): Այդ ժամանակվա սլավոներենում չկային այս անվանումները ընդհանրացնող հասկացություններ: Բայց Բյուզանդական կայսրությունը՝ սլավոնների հզորագույն հարևանը, որը ստիպված էր իր տարածքի մի մասը զիջել, ուներ այդ անվանումները: Բյուզանդացիները սլավոնական մինչպետական հանրույթներին, որոնք ապրում էին ինչպես Բալկանյան թերակղզում, այնպես էլ կայսրության սահմաններից հեռու, անվանում էին «սլավիններ» («славины»). այս եզրույթը առաջացել է «սլավոններ» ձևից: Հետևաբար այս հասկացությունն իրավաչափ է գործածելու և տվյալ հանրույթները պայմանականորեն կոչելու համար:

Արևելյան Եվրոպայի սլավոնական հանրույթները: XII դ. արևելասլավոնական մինչպետական հանրույթների բնակեցումը նկարագրված է հին ռուսական տարեգրությունում՝ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» («Повесть временных лет»): Ըստ այս պատմության՝ Միջին Դնեպրում՝ Կիևի տարածքում, բնակվեցին դաշտավայրայինները[4] (поляне), հյուսիս-արևմուտքում՝ Դնեպրի աջակողմյան վտակ

[3] *Ցեղավար* – (вождество), սրանք այն ցեղերն են, որոնք ունեն մեկ առաջնորդ:

[4] Այսուհետ ցեղախմբերի անվանումները կտրվեն այնպես, ինչպես գրված է ռուսերենում:

Պրիպյատի ափին՝ դրեվլյանները (древляне), Պրիպյատի և Արևմտյան Դվինայի միջև՝ դրեգովիչները (дреговичи), Արևմտյան Դվինայի վերին հոսանքում՝ Դնեպրի և Վոլգայի ափերին՝ կրիվիչները (кривичи), իսկ Արևելյան Եվրոպայի հյուսիսային մասում՝ Իլման լճի ափին՝ սլովենները (словене), Դնեպրի ձախ ափին՝ Դեսնա, Սեյմ, Սուլա գետափերին՝ հյուսիսցիները (северяне), Արևմտյան Բուգի ափին՝ բուժանները (бужане), որոնք հետագայում կոչվեցին վոլինյաններ՝ волыняны), Դնեպրի ձախ վտակից՝ Դեսնայից հյուսիս՝ Սոժի ափին՝ ռադիմիչները (радимичи), Վերին Օկայում՝ վյատիչները (вятичи), Մերձդնեստրից մինչև Դանուբի ստորին հոսանքները՝ ուլիչները (уличи) և տիվերցիները (тиверцы)։ Այս տեղեկությունները հաստատում են նաև օտար աղբյուրները։ X դ. բյուզանդական կայսր Կոնստանտին VII Ծիրանածինը (Багрянородный) իր՝ «Կայսրության կառավարման մասին» աշխատությունում հիշատակում է մի շարք սլավինների (հենց այս եզրույթը գործածելով) կախվածությունը ռուս իշխաններից։ Դրանց թվում եղել են կրիվիչները, դրեվլյանները, դրեգովիչները, հյուսիսցիները, ուլիչները։ Ամենահին աղբյուրը, որը հիշատակում է արևելասլավոնների հանրույթների մասին, այսպես կոչված «Բավարական աշխարհագետ» աշխարհագրական գրությունն էր՝ ստեղծված IX դարի երկրորդ կեսին Արևելաֆրանկյան թագավորությունում։ Գրության մեջ արևմտասլավոնական խմբավորումների հետ հիշատակվում են նաև մի քանի արևելասլավոնական խմբեր։

«Պոլյաններ», «դրեվլյաններ», «դրեգովիչներ», «բուժան-վոլինյաններ» սլավոնները ձևավորվել են Լուկա-Ռայկովեցկու (VIII-IX դդ.) հնագիտական մշակույթի սահմաններում։ Հյուսիսցիների հանրույթը համապատասխանում է Դնեպրի ձախափնյա ռոմենական մշակույթին (VIII–X դդ.)։ VIII դարավերջից և IX դարում Սոժի ափին արձանագրվել են ռադիմիչների, իսկ Օկայի ափին՝ վյատիչների հուշարձանները։ Դեռևս վիճելի է ամենահյուսիսային հանրույթների՝ կրիվիչների և սլովենների տարածման ժամանակաշրջանը։ Գոյություն ունի մի տեսակետ, ըստ որի՝ Արևելյան Եվրոպայի հյուսիսում կրիվիչները հայտնվել են շատ ավելի վաղ շրջանում՝ V դարում։ Սակայն ոմանք էլ կարծում են, որ դա VIII դարում է եղել, անգամ՝ IX հարյուրամյակում։ Սլովենների՝ Իլմեն լճի և Վոլխով գետի ափերին բնակեցումը տեղի է ունեցել ինչպես VII, այնպես էլ VIII և IX դդ.։

Սլավոնների կենտրոններ դարձան ամրաշինված բնակավայրերը՝ գրադները։ Պոլյաններինը Կիևն էր, դրեվլյաններինը՝ Իսկորոստենը, վոլինյաններինը՝ Վոլինը, կրիվիչներինը՝ Պոլոցկը և Սմոլենսկը։ Վերջինս IX-X դդ. ուշ շրջանի քաղաքից ավելի արևմուտք էր գտնվում, այն է՝ Գնեզդովո հնագիտական համալիրի տեղում։ Սլովենների կենտրոնը Նովգորոդն էր (IX դ. այդպես էր կոչվում ներկայիս քաղաքից 2 կիլոմետր հեռավորության վրա գտնվող, ավերակի վերածված վայրը. այն ժամանակ համարվել է Ռյուրիկովների ամրաշեն բնակավայր), ուլիչներինը՝ Պերեսեչեն։ Արևելյան Եվրոպայի սլավոնների մնացած կենտրոններ-բնակատեղիները վիճելի են կամ ոչ հստակ։

Արևելյան սլավոնների տնտեսության հիմքում հողագործությունն էր։ Կիրառվում էին հերկելու գործիքներ՝ երկաթե մասերով արորը, հարավում և հյուսիսում՝ արորի տարատեսակները։ Տնտեսության մեջ երկրորդ տեղում էին անասնապահու-

թյունը, որսորդությունը, ձկնորսությունը, անտառային մեղվաբուծությունը (վայրի մեղուներ պահելը)։ Գոյություն ունեին արհեստների տարբեր տեսակներ՝ փայտե իրերի, մետաղե գործիքների և զարդերի պատրաստում, զինագործություն, կավագործություն, մանածագործություն։ Առանձին ընտանիքներ իրենց տնտեսություններով միավորվում էին հարևանների հետ, կազմում հանրույթներ։ Դրանց անդամները համատեղ օգտագործում էին խոտհարքները, անտառային բարիքները, իսկ հերկվող հողերը բաժանված էին գյուղացիական տնտեսությունների միջև։ Ազգակցական հանրույթից անցումը հարևանականին, այսինքն՝ մարդկանց համակեցության ընդհանուր միավորմանը, VI–VIII դդ. սլավոնների տեղաշարժի և բնակեցման արդյունք էր։

Սլավոնների կրոնը հեթանոսությունն էր[5], որը բազմաստվածություն էր։ Ըստ որում՝ տարբեր սլավոնների մոտ տարբեր աստվածություններ էին։ Ամենատարածված աստվածներն էին Պերունը (որոտի աստվածը), Վելեսը (գյուղատնտեսության և ունեցվածքի հովանավոր աստվածը), Սվարոգը (կրակի), Դաժդ-աստվածը (արևի), Ստրիբոգը (քամիների), կանացիության աստված Մոկոշը։ IX–X դդ. հիմնական պաշտամունքի աստվածը Պերունն էր, որին առաջին հերթին երկրպագում էին իշխանական–իշխանազորային միջավայրում։ Պաշտամունքային կոապաշտատներում տեղադրում էին կուռքերի՝ աստվածների արձանները։

§ 7. Ռուսիա պետության ստեղծումը

Քաղաքական ժառանգությունը վաղմիջնադարյան Եվրոպայում: Վաղմիջնադարյան եվրոպական պետությունների ձևավորումը տեղի է ունեցել երկու փուլով։ Առաջին փուլը ընդգրկում է V–VI դդ.։ Այս շրջանում պետությունները առաջանում էին գլխավորապես այն տարածքներում, որոնք համարյա համընկնում էին նախկին Հռոմեական կայսրության տարածքին, այսինքն՝ անտիկ քաղաքակրթության գոտուն՝ Արևմուտքում (նեղ իմաստով՝ Էլբայից ավելի արևմուտք գտնվող) և Հարավային (Ալպերից հարավ) ցամաքային Եվրոպայում և Բրիտանիայում։ V–VI դդ. ստեղծված պետություններից և ոչ մեկը (Ֆրանկյան, Օստգոթյան, Բուրգունդյան, Լանգոբարդյան, Վեստգոթյան, Սվեվյան, Անգլասաքսոնյան թագավորությունները) չկարողացավ գոյատևել մինչև մ.թ. 2-րդ հազարամյակը։


Երկրորդ փուլը ընդգրկում է IX–X հարյուրամյակները։ Սովորաբար արձանագրվում է, որ այս ժամանակ պետականաշինությունը տարածվել էր Արևելյան, Հյուսիսային և Կենտրոնական Եվրոպաներում։ Իսկ Հարավային և Արևմտյան Եվրոպաներում, որտեղ պետականություն կար անտիկ դարաշրջանից, V-VI դդ. ստեղծվեցին վաղմիջնադարյան պետություններ, որոնք IX–X դդ. վերափոխվեցին նոր պետությունների, ըստ որում՝ առ այսօր գոյություն ունեցողների՝ Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա,

[5] *Язычество* – «լեզու» բառից բխում էր «ժողովուրդ» բառը, այսինքն՝ ժողովրդական, ընդհանուր հավատ։

Անգլիա (որպես միասնական թագավորություն)։ Այսպիսով՝ IX–X դդ. եվրոպական մայրցամաքում տեղի ունեցավ քաղաքական ժառանգականության փոխանցումը, թեև տարբեր աստիճանով։ Եվ այդ ժամանակ ստեղծված պետությունները գոյություն ունեն նաև այսօր այն իմաստով, որ սակավ փոփոխություններով պահպանվել են նրանց տարածքները, անվանումները, ինչպես նաև դրանց համապատասխանող էթնիկական հանրույթները։ Հետևաբար Ռուսիայի՝ որպես պետության ձևավորումը, համաեվրոպական քաղաքական ժառանգականության բաղկացուցիչ մասն էր։ Մ.թ. առաջին հազարամյակի երկրորդ կեսին նոր պետությունների ձևավորման գործընթաց տեղի ունեցավ ոչ միայն արևելասլավոնական հողերում։ Արևելյան Եվրոպայի մյուս շրջաններում էլ պատմության մեջ առաջին անգամ ձևավորվեցին նոր պետություններ՝ Խազարների պետությունը՝ Դոնի և Վոլգայի ստորին հոսանքներում, Վոլգյան Բուլղարիան՝ Միջին Պովոլժիեում, Ալանիան՝ Հյուսիսային Կովկասում։ Այդ ժամանակահատվածում ներկայիս Ռուսաստանի ասիական հատվածում ևս առաջացան առաջին պետությունները։ Դրանք էին Թյուրքական կագանատը և դրա ժառանգորդները Հարավային Սիբիրում, Բոխայ պետությունը՝ Հեռավոր Արևելքում։

Տեղական և արտասահմանյան աղբյուրները Ռուսիայի կազմավորման մասին։ XII դարի կիևցի տարեգիրը՝ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» («Повести временных лет») գիրքը կազմողը, իր ստեղծագործության գլխավոր նպատակը համարում էր այն, որ պատմի, թե «ինչպես ստեղծվեց Ռուսական պետությունը» («откуда есть пошла Русская земля»)՝ Ռուսիայի կազմավորման հիմքում առաջին հերթին նկատի ունենալով իշխանական դինաստիաների ի հայտ գալը, որոնց այդ ժամանակ պատկանում էր իշխանության մենատիրությունը։ Համաձայն այս գրքի՝ IX դարի կեսերին Արևելյան Եվրոպայի հյուսիսի ժողովուրդները՝ սլովենները, կրիվիչները և նրանց ֆիննալեզու հարևանները՝ չուդերը (чудь)՝ էստոնացիների նախնիները, և Բելոզերոյի շրջանում ապրող ողջ բնակչությունը, այսինքն՝ սլովեններից արևելք ապրողները հարկ էին վճարում «ծովի այն կողմից» եկող վարյագներին։ 862 թ. նրանք ապստամբեցին և քշեցին վարյագներին։ Հարկ է նկատել, որ IX դարով և մասամբ X դարի առաջին կեսով արված թվագրությունը այնքան էլ ճշգրիտ չէ։ XII դարում գրված «Պատմություն ժամանակի և տարիների մասին» գրքում IX և X դդ. ժամանակագրական տվյալները ներկայացված են սակավ տվյալների հիման վրա։ Դրանից հետո սկսվեցին ներքին երկպառակությունները, և սլովենները, կրիվիչները, չուդերը որոշեցին իրենց իշխանին փնտրել դրսում։ Նրանք դիմեցին վարյագներին, որոնք իրենց կոչում էին ռուսեր։ Նրանց դիմումին արձագանքեցին երեք եղբայրները։ Դրանցից ավագը Ռյուրիկն էր, որը իշխանական գահին նստեց Նովգորոդում՝ սլովենների կենտրոնում, մյուսը Սինեուսն էր, որն իշխում էր Բելոզերոյում, երրորդը՝ Տրուվորն էր, որը կառավարում էր Իզբորսկում՝ Պսկովի մերձակայքում։ Ռյուրիկի ջոկատայիններից երկուսը՝ Ասկոլդը և Դիրը, Դնեպրով իջնելով հարավ՝ դաշտավայրային հողեր, դարձան Կիևի իշխանները։ Ռյուրիկի մահից հետո իշխան դարձավ Ռյուրիկի տոհմի անդամներից զարմիկ Օլեգը, որը պետք է իշխեր մինչև Ռյուրիկի մանկահասակ որդի Իգորի չափահաս դառնալը։ 882 թ. Օլեգը արշավանք սկսեց Նովգորոդից դեպի Կիև, սպանեց Ասկոլդին ու Դիրին և Նովգորոդին միացրեց Կիևը (տե՛ս հավելվածը՝ քարտեզ հ.1)։

Քանի որ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» գրքի հեղինակը IX դարի 2-րդ կեսի իրադարձությունների մասին գրել է 2,5 դար հետո, օրինաչափ է այն հարցը, թե որքանով է համապատասխանում իրականությանը նրա գրածը, որը հիմնված էր բանավոր պատմությունների վրա: Իսկ ի՞նչ են Ռուսիայի մասին պատմում օտար աղբյուրները:



Ռյուրիկ, Սինեուս, Տրուվոր: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

Ռուսիա էթնոքաղաքական հանրույթի մասին ամենավաղ տեղեկությունը տալիս է 839 թվականին հրատարակված արևմտաեվրոպական լատինալեզու աղբյուրը՝ Բիրտինյան տարեգիրքը: Այստեղ խոսվում է Ֆրանկական միապետ Լյուդովիկոս Բարեպաշտին Բյուզանդիայի դեսպանի ուղեկցությամբ «Ռոս» (Rhos) ժողովրդի դեսպանների կատարած այցի մասին: Դրանից առաջ՝ 838 թվականին, ռոս ժողովրդի դեսպանն այցելել էր Բյուզանդիայի կայսրին (այս հրապարակման մեջ արտահայտվել է բյուզանդական, հունական գրության ձևը. Ռուսիա («Русь») անվանումը ու-ի փոխարեն երկարացված օ-ով է գրված): Ըստ որում՝ իշխանի անունը նշված չէ, կա միայն տիտղոսը՝ խաքան (chacanus):

Բյուզանդական մի շարք աղբյուրներ պատմում են 860 թվականին մայրաքաղաք Կոստանդնուպոլսի վրա Ռուսիայի արշավանքի մասին: Ընդ որում՝ չի նշվում, թե որտեղից են եկել հարձակվողները: Եվ վերջապես IX դարի արաբական աղբյուրները հիշատակում են Արևելյան Եվրոպայում ինչ-որ տեղ ապրող «ռուս» կոչվող ժողովրդի մասին: Դրանց գլխավորը կոչվում էր խաքան, ինչպես և հիշատակվում է Բերտինյան տարեգրքում: Հետևաբար պետք է նկատի ունենալ, որ գիտահանրամատչելի գրականության մեջ տարածված «русы» կամ «руссы» եզրույթները իրականում չեն եղել: Հին ռուսերենում եղել է Русь հավաքական գոյականը, որը նշանակել է և՛ երկիրը, և՛ ժողովուրդը, իսկ դրա եզակի թիվը եղել է русин:

Միակ տեղեկությունը, որ հնարավորություն է տալիս մոտավորապես տեղայնացնել Ռուսիան, վերոնշյալ «Բավարական աշխարհագետ» աղբյուրն է՝ հավանական

թվագրությամբ (IX դարի 3-րդ քառորդ)։ Այստեղ Ռուսիան (Ruzzi) տեղագրված է խազարների՝ քոչվորների հարևանությամբ, որոնց պետությունը գտնվում էր Վոլգայի և Դոնի ստորին հատվածներում։

Այսպիսով, Ռուսիան ամենայն հավանականությամբ տեղակայվել է Արևելյան Եվրոպայի հարավում։ Հետևաբար IX դարի կեսերից, այսինքն՝ մինչև Կիևում «վարյագ–ռուսների» հայտնվելը (համաձայն «Ժամանակավոր տարիների պատմության») արևելասլավոնական տարածքներում ձևավորվել է քաղաքական մի միավոր՝ Ռուսիա անվանմամբ։ Նրա առաջնորդը կրում էր Խաքան տիտղոսը։ Խաքանը կամ կագանը արևելյան տիտղոս է, ծագմամբ՝ թյուրք–մոնղոլական, ըստ որում՝ գլխավորի, առաջնորդի այս անվանումը համարվում էր ամենաբարձր տիտղոսը (խանից էլ բարձր)։ Արևելյան Եվրոպայում խաքան էին կոչվում երկու քաղաքական միավորների առաջնորդները։ Առաջինը VI դարի 2-րդ կեսին Միջին Դանուբի ավազանում ավարների՝ Կենտրոնական Ասիայից գաղթածների հիմնած Ավարական խաքանությունն էր։ Սա մի քաղաքական միավոր էր, որի մեջ՝ որպես ենթակա բնակչություն, մտնում էր սլավոնների մի որոշ մաս։ Այն գոյություն ունեցավ մինչև VIII դարի վերջը և IX դարի սկզբին կործանվեց Ֆրանկների կայսր Կարլ Մեծի կողմից՝ ստորին Դանուբի ավազանի սլավոնական ժողովուրդների ակտիվ աջակցությամբ։

Երկրորդը Խազարական խաքանությունն (կագանատ) էր՝ պետություն, որը VII դարում հիմնվել էր Դոնի և ստորին Վոլգայի ափերին թյուրք-խազարների կողմից։ Խազարիայի հարկատուներից էին Արևելյան Եվրոպայի մի քանի սլովենեներ, հյուսիսայինները, ռադիմիչները, վյատիչները, հնարավոր է՝ նաև դաշտավայրայինները (поляне)։ Հետազոտողների մեծ մասը ենթադրում է՝ Ռուսիայի տիրակալը փոխառել է խաքան տիտղոսը, որպեսզի ցուցադրի իր կարգավիճակի հավասարությունը Խազարիայի խաքանի հետ։

«Վարյագական հարցը»: XVIII դարում Հին ռուսական պետության առաջացման վերաբերյալ սկսվեց մի երկարատև բանավեճ՝ այսպես կոչված «նորմանների» և «հականորմանների» վեճը։ Այս բանավեճը հարկ է բաժանել 2 փուլի, որոնցից յուրաքանչյուրի ընթացքում նշված եզրույթները ստացել են տարբեր բովանդակություններ։ XVIII–XIX դդ. բանավեճը այն մասին էր, թե իրենց էթնիկական պատկանելությամբ ովքեր էին Ռյուրիկի հետ Ռուսիա եկած վարյագները։ Բանավիճող կողմերի հիմնական նախադրյալն այն էր, որ վարյագ իշխանների «հրավիրումը» և նրանց դինաստիայի հիմնադրումը դիտվում են որպես պետության ձևավորման ակտ։

Ընդ որում՝ «նորմանականները» ենթադրում էին, որ տարեգրության մեջ նշված «վարյագները» սկանդինավներն են (արևմտաեվրոպական եզրաբանությամբ՝ վաղ միջնադարի նորմանները հյուսիսային մարդիկ էին), իսկ նրանց ընդդիմախոսները նորմանների էթնիկական բնույթի մասին առաջարկում էին այլ մեկնաբանություն՝ «վարյագներին» նույնացնելով արևմտյան սլավոնների, ֆինների, կելտերի, բալթիական և այլ ժողովուրդների հետ։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին բանավեճը ըստ էության մարեց։ Դրա պատճառն առաջին հերթին լեզվաբանական և հնագիտական բացահայտումներն էին։



Օլեգը: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

Ռուսական հնագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ռուսիայի տարածքում X դարում կային սկանդինավյան ծագման ծանր սպառազինությամբ մարտիկներ: Դա համապատասխանում էր գրավոր աղբյուրների հիշատակումներին, համաձայն որոնց՝ ռուս իշխանների այլերկրյացի մարտիկ-ջոկատայինները եղել են վարյագները: Լեզվաբանական փնտրտուքները ևս հաստատեցին առաջին ռուս իշխանների (Ռյուրիկի, Օլեգի, Իգորի, Օլգայի) անունների և X դարի առաջին կեսին նրանց շրջապատի բազմաթիվ դեմքերի սկանդինավյան ծագումը: Դրան հետևեց այն եզրակացությունը, որ այդ անունները կրողներն ունեին հենց սկանդինավյան և ոչ թե այլ ծագում: Սակայն XX դարի ռուսական պատմագրության մեջ թե՛ Ռուսիայի, թե՛ մեկ այլ երկրի պետության ձևավորման խնդիրը սկսվեց դիտարկվել այլ տեսանկյունից:

Պատմաբանները պետականության ձևավորումը դադարեցին նույնացնել կառավարող դինաստիայի հետ: Այն դիտարկվեց որպես ինչ-որ տեղից և իշխանության եկող ինչ-որ մեկից անկախ և սոցիալ-տնտեսական նախադրյալներ պահանջող օբյեկտիվ գործընթաց: Դինաստիաների ի հայտ գալը գիտության մեջ մեկնաբանվում էր ոչ ավելի, քան որպես դրվագ պետականաշինության երկարատև գործընթացում: Հետազոտողները, բացառությամբ եզակի դեպքերի, ընդունեցին վարյագների սկանդինավյան ծագումը: Եթե մինչև հեղափոխությունը բանավեճը վարյագների նորմաններ լինելու-չլինելու վերաբերյալ էր, ապա XX դարում հարցը դրվեց այլ կերպ. «վարյագնե՞րն (նորմաննե՞րն) են հիմնել պետությունը»:

Ի՞նչ են ասում պատմական աղբյուրները Ռուսիա պետության ստեղծման մեջ վարյագների դերի մասին:

VIII դարի վերջից սկանդինավյան ժողովուրդները սկսում են այսպես կոչված «վիկինգների շարժումը», այն է՝ նորմանների զինված ասպատակությունները դեպի հարևան երկրներ՝ մայրցամաքային Եվրոպա և Բրիտանական կղզիներ: Երբեմն դրանք ուղեկցվում էին մասնակիցների՝ այս կամ այն տարածքում բնակության հաստատմամբ: Սկանդինավիայից Արևելյան Եվրոպայի հյուսիս տեղափոխվածների մասին հնագիտական ապացույցները սկսում են IX դարից: Իսկ արդեն տասներորդ դարում հիշատակումներ կան նաև դեպի հարավ՝ Միջին Դնեպր գնացածների մասին: 839 թվականին «Ռուս ժողովրդի խաքանի» դեսպանները Լյուդովիկոս Բարեպաշտի պալատում հայտնվեցին միայն «սվոենաների» (շվեդների) անցկացրած ստուգումից հետո: 871 թվականին ֆրանկների միապետ Լյուդովիկոս II -ի՝ Բյուզանդիայի կայսեր Վասիլիին ուղղված նամակում Ռուսիայի տիրակալը անվանվում է «նորմանների խաքան», ինչը խոսում է նրա սկանդինավյան ծագման մասին: Այսպիսով, հիմք չկա

կասկածելու տարեգրային նորություններին, համաձայն որոնց՝ մոտավորապես IX դարի կեսերին արևելասլավոնական ամենազարգացած 2 հանրույթներ՝ դաշտավայրայինները՝ Կիևում և սլովենները՝ Նովգորոդում, կառավարվում էին նորմանական ծագման տիրակալների կողմից:

Արևմտյան աղբյուրներից հայտնի է, որ IX դարի կեսերին վիկինգների առաջնորդներից է եղել Ռյուրիկի անվանակից դանիական կոնունգ (իշխան) Ռյորիկը: Տարեգրության մեջ հանդիպող Ռյուրիկ անվանը դրա նույնական լինելը հավանական է. այդ կարծիքին են նաև շատ հետազոտողներ: Դա թույլ է տալիս բավարար կերպով բացատրել, թե ինչու սլովենները և նրանց հարևանները, քշելով վարյագներին, իշխանի փնտրտուքներում, միևնույնն է, դիմում են հենց վարյագներին: Արևելյան Եվրոպայի հյուսիսի ժողովուրդներից հարկեր գանձող վարյագները՝ Միջին Շվեդիայի նորմանները, անկասկած տարածքով ավելի մոտ էին այդ տարածաշրջանին, սակայն Ռուս ժողովրդի երկիր իշխանավարելու հրավիրվեցին այլ «նորմաններ»՝ դանիականները, որպեսզի կարողանան պաշտպանել հյուսիսային այդ տարածքները շվեդներից և հսկողություն ունենան Արևելյան Եվրոպայի հյուսիսում: Այսպիսով, Ռուսիա պետության ստեղծման ընթացքում նորմանների նշանակալից դերը կասկած չի հարուցում: Ռուսիա տեղափոխված սկանդինավյան ծագում ունեցողները իշխանական դինաստիաներից էին, որոնց զգալի մասը ռուս առաջին իշխանները և ազնվական վերնախավն էր: Բայց հիմքեր կա՞ն խոսելու ռուսական պետականության ստեղծման ընթացքի և բնույթի վրա նորմանական ազդեցության մասին: Այստեղ հարկ է համեմատել Ռուսիայի պետականության ստեղծումը արևմտյան սլավոնների պետականության ստեղծման հետ. առաջինի պետականության ստեղծման մեջ կայի՞ն արդյոք յուրահատուկ գծեր, որոնք կարող էին կապված լինել վարյագների հետ:

Ինչ վերաբերում է պետության կազմավորման ընթացքին, ապա Ռուսիայից առաջ՝ IX դարի առաջին կեսին, առաջացավ արևմտասլավոնական պետությունը՝ Մեծ Մորավիան, որը վերացավ X դարի սկզբներին հունգարների արշավանքների արդյունքում: Արևմտասլավոնական այն պետությունները, որոնք պահպանեցին իրենց անկախությունը՝ Չեխիան, Լեհաստանը, կազմավորվեցին IX –X դարերում՝ Ռուսիայի հետ միաժամանակ: Հետևաբար Ռուսիա պետության կազմավորման գործընթացում նորմանների կողմից այն արագացնելու մասին խոսելը անհիմն է: Ռուսիա պետության և արևմտասլավոնական պետությունների ստեղծման բնութագրիչ գծերը նման էին: Ե՛վ Ռուսիայում, և՛ Մորավիայում, և՛ Չեխիայում, և՛ Լեհաստանում պետական տարածքների միջուկը կազմեցին «սլավինականներից» մեկնումեկը, իսկ հարևանները աստիճանաբար ներգրավվեցին և ընկան կախվածության մեջ: Վերոբերյալ բոլոր երկրներում հիմնական պետականաստեղծ ուժը եղել է իշխանական ջոկատը: Ամենուրեք, բացի Մորավիայից, նկատվել է ամրացված հին բնակատեղիների (գրադների) փոխարինումը նորերով, որոնք պետական իշխանության հենարանն էին: Այսպիսով, նորմանների ազդեցության հետքերը չկան նաև պետականաստեղծման մեջ:

Պատճառն այն է, որ սկանդինավները գտնվում էին քաղաքական և սոցիալական զարգացման այն նույն մակարդակին, որում սլավոններն էին (նրանց պետու-

թյուններն էլ ստեղծվել են IX–X դարերում), և համեմատաբար հեշտ ներգրավվեցին այդ նույն գործընթացներին, որոնք կային արևելասլավոնական հողերում:

Այնուամենայնիվ, Ռուսիա պետության կազմավորման մեջ կա մի շերտ, որը կարելի է կապել վարյագների հետ: Դա արևելյան բոլոր սլավոններին մեկ պետության մեջ միավորելն է: Սա չի եղել ո՛չ արևմտյան և ո՛չ էլ հարավային սլավոնների շրջանում: Ավելի շուտ այստեղ դեր է ունեցել քաղաքական ուժեղ միջուկը՝ ռուս առաջին իշխանները և նրանց ջոկատները, որոնք սկզբնական շրջանում եղել են նորմանական ծագման: Սրա հետ կապված՝ հարկ է նկատել, որ Ռյուրիկի (եթե ճիշտ է նրա նույնացումը դանիական Ռյորիկի հետ) ջոկատում մարդիկ էին, որոնք ծանոթ էին այն ժամանակվա ամենազարգացած արևմտաեվրոպական՝ Ֆրանկյան պետությանը: Ռյորիկը գրեթե չորս տասնամյակ ֆրանկյան միապետներին և թագավորներին՝ Կարլ Մեծի սերունդներին, նաև Ֆրիսլանդիայի (ժամանակակից Նիդերլանդների) հողերը պահում էր ավատական կախվածության մեջ: Նա և իր շրջապատը, որի զգալի մասը ոչ թե Դանիայից էին, այլ Ֆրանկյան միապետությունից, ի տարբերություն այդ ժամանակաշրջանի մյուս նորմանների մեծամասնության, ունեին պետական կառավարման հմտություններ: Հնարավոր է, որ դա արտահայտվեց Ռյուրիկի հաջորդների՝ Արևելյան Եվրոպայի հսկայական տարածքների յուրացման ժամանակ: Բայց այդ ազդեցությունը Ռուսիայի պետականության կազմավորման վրա հարկ է համարել ոչ թե սկանդինավյան, այլ ֆրանկյան: Վաղ միջնադարում այդպիսի ազդեցությունները տիպական էին. Ֆրանկյան կայսրությունը զգալի ազդեցություն է ունեցել ինչպես արևմտյան սլավոնների, այնպես էլ սկանդինավցիների՝ սեփական պետությունների կազմավորման գործընթացների վրա: Եվ դա էլ կապվում է միայն նորմանական մեկ խմբավորման հետ, այն է՝ մինչև Ռյուրիկը Արևելյան Եվրոպա եկածների՝ ռուս իշխանների մոտ վարձվածների հետ: Իսկ ահա X դարի սկզբին և XI դարում եկածները պետականաստեղծ գործում ազդեցություն չեն ունեցել:

Ռյուրիկը, ըստ էության, գլխավորում էր Արևելյան Եվրոպայի հյուսիսի բազմաէթնիկ միավորումը, որի մեջ, բացի սլավոնական՝ իլմենյան սլովեններից և կրիվիչներից, մտնում էին ֆիննալեզու ցեղերը՝ չուդերը, վեսիները և հավանաբար մերիները (ապրում էին Վոլգա–Կլյազմենյան գետերի միջակայքում): Արդյունքում Ռյուրիկի հաջորդների հիմնավորվելը հարավում՝ սլավոնական հողերի խորքում, և նրանց գլխավորած պետությունը սլավոնական էր, իսկ ընտրախավը՝ ծագումով սկանդինավցիները, արագ ձուլվեցին սլավոններին:

Վիճահարույց է Русь անվան ծագումը, որը դարձավ արևելյան սլավոնների պետության և ժողովրդի անվանումը: Շատ հետազոտողներ, հիմք ընդունելով «Պատմություն ժամանակի և տարիների մասին»-ը, ըստ որի՝ Ռյուրիկի հետ եկած վարյագները русь-«ռուս» էին անվանում տեղացիներին, կարծում են, որ այս անվանումը սկիզբ է առել հենց վարյագներից: Դեռևս XX դարի տարեգրությունների հետազոտող Ա.Ա. Շախմատովը ցույց տվեց, որ վարյագների և Ռյուրիկի «Ռուսիա» անվանումը նույնական է շատ ավելի վաղ՝ XI հարյուրամյակի վերջում, գրված մի տեքստի՝ այսպես կոչված «Նախնական ժողովածու»-ի հետ, որը դարձել է Նովգորոդյան առաջին

տարեգրության մաս: Մի շարք գիտնականներ ենթադրում են, որ русь անվանումը գոյություն է ունեցել Արևելյան Եվրոպայի հարավում մինչև վարյագ իշխանների և նրանց ջոկատների գալը, սակայն միայն վերջիններիս կողմից այդ անվանման ընդունումից հետո այն սկսեց գործածվել: Կարծիք կա նաև այս անվանման իրանական (սարմատալանական), ինչպես նաև սլավոնական արմատ լինելու վերաբերյալ: Բացառված չէ, որ գոյություն են ունեցել երկու՝ նման հնչողության անվանումներ. հյուսիսայինը՝ Ռյուրիկի և իր շրջապատի կողմից ներմուծված, և հարավայինը՝ Միջինդնեպրյանը, որոնք հետագայում միմյանց բաղարկվել են:

Ռուսիա պետության կազմավորումը: Ո՛չ IX դարի առաջին կեսին Արևելյան Եվրոպայում ստեղծված «Ռուսիա» անվանմամբ քաղաքական կառույցը, ո՛չ Ռյուրիկի՝ սլովենների հողերի իշխանական կառավարումը, ո՛չ Օլեգի՝ մեկ իշխանության ղեկավարության ներքո Կիևի և Նովգորոդի միավորումը (IX դարավերջ) չեն նշանակում, որ պետության կազմավորումն ավարտվեց: Դրա կազմավորման համար տասնամյակներ են անհրաժեշտ եղել:

Եթե ամբողջացնենք X դարի առաջին կեսի աղբյուրներում առկա պայմանագրերը, որոնք Բյուզանդական կայսրության հետ կնքել են Կիևյան իշխաններ Օլեգը և Իգորը 911 և 944 թթ., Կոնստանտին Ծիրանածնի՝ «Կայսրության կառավարման մասին» (948-952) ստեղծագործության մեջ Ռուսիայի մասին առկա տվյալները և արաբ աշխարհագետ Ալ Իստահրիի (մոտավորապես 950 թ.) աշխատությունը, ապա ստացվում է X դարի առաջին կեսի Ռուսիայի քաղաքական կառուցվածքի հետևյալ պատկերը. արևելաեվրոպական հարթավայրը՝ հյուսիսից հարավ, գտնվել է միմյանց հետ ազգակցական կապեր ունեցող ռուս իշխանների ամիջական ենթակայության տակ: Ռուսական մարզերից մեկը տարածվում էր Միջին Դնեպրով, որի կենտրոնը (նաև ամբողջ Ռուսիայի գլխավոր կենտրոնը) Կիևն էր: Իր նշանակությամբ երկրորդը Մերձվոլխովյան տարածքն էր՝ Նովգորոդ կենտրոնով, երրորդը՝ Դնեպրի վերին ավազանում էր՝ Սմոլենսկ կենտրոնով: Նովգորոդում և հավանաբար Սմոլենսկում կային իշխանական գահեր, որոնք Կիևյան հարստության ներկայացուցիչներին էին պատկանում: Ռուս իշխանների կալվածքները այդ ժամանակ զբաղեցնում էին լեհերի, սլովենների և մասամբ՝ կրիվիչների հողերը.



Իշխան Սվյատոսլավի կռիվը հույների դեմ: 15-րդ դարի Ռաձիվիլովյան տարեգրության մանրանկարչությունից

Մնացած «սլավինները»՝ Դնեպրից դեպի արևմուտք գտնվող դրեվլյանները, դրեգովիչները, կրիվիչների որոշ մասը, վոլինյանները և ուլիչները, հյուսիսցիները և ռադիմիչները, արևելքում պահպանեցին իրենց ներքին կառուցվածքը և տեղական իշխաններին՝ հարկատու

դառնալով Կիևյան իշխանին: Այսպիսով՝ դրվեց պետական տարածքի հիմքը վարյագներից մինչև հույներ՝ այսպես կոչված առևտրային ճանապարհով (Բալթիկ ծովից Արևելյան Եվրոպայի գետերով մինչև Սև ծով) և Ռուսիայից կախվածություն ունեցող արևելասլավոնական հանրույթների համակարգով: Իշխանապետությանը ծառայող հսկիչների ջոկատները աշնանից գարուն կտրում- անցնում էին արևելասլավոնական հանրույթների տարածքներով և հարկահավաքություն էին անում, որի զգալի մասը մթերք էր. ըստ Կոնստանտին Ծիրանածինի վկայության՝ ամռանը այդ մթերքը տանում և վաճառում էին Կոստանդնուպոլսում: Ենթակա տարածքներում հարկերի հավաքման նպատակով շրջագայությունը անվանում էին «полюдье»՝ «հարկահավաքության շրջագայություն»:

Իշխանուհի Օլգայի՝ Ռուսիան կառավարելու սկզբնական շրջանում (945–960 թ. սկիզբ) Կիևի անմիջական ղեկավարությանը ենթարկվեցին դրեվլյանները: Նրանք չափից ավելի շատ հարկ տալու պատճառով ապաստամբեցին Իգորի դեմ, սպանեցին նրան և ընդունեցին Կիևի իշխանությունը: Սվյատոսլավ Իգորևիչի օրոք՝ 960-ական թթ., տեղի ունեցավ վյատիչների հպատակեցումը, որոնք մինչ այդ հարկ էին վճարում ոչ թե Կիևին, այլ խազարներին: 970-ականներին Սվյատոսլավ Իգորևիչը Բալկաններում իր երկու ռազմական գործողությունների միջակայքում Կիևյան դինաստիային անմիջականորեն ենթակա հողերը բաժանեց իր որդիների միջև. ավագը՝ Յարոպոլկը, նստեց Կիևում, Օլեգը՝ Դրեվլյանների հողում, Վլադիմիրը՝ Նովգորոդում:

Վլադիմիր Սվյատոսլավիչը, համիշխանություն ունենալով Կիևում (978 կամ 980 թթ.), իրեն ենթարկեցրեց մեկուսացած վյատիչներին, ինչպես նաև ռադիմիչներին: Ռուսիայից կախվածության մեջ ընկան Արևելյան Մերձկարպատներում բնակվող խորվաթները և վոլինյանները: Սակայն Վլադիմիրի գլխավոր գործերից մեկը եղավ արևելասլավոնական ողջ տարածքների անցումը Կիևի անմիջական ղեկավարությանը՝ իշխան-տեղապահների (կուսակալների) միջոցով: Բացառություն էր միայն վյատիչների տարածքը, որտեղ առանձին հատվածներում տեղական իշխանիկները պահպանեցին իրենց դիրքը մինչև XI դարի երկրորդ կեսը:

Գրավոր աղբյուրներում պահպանվել է միայն վարյագ Ռոգվոլոդի գլխավորությամբ վյատիչների կողմից կրիվիչների մի մասի ջախջախման պատմությունը: Բայց հնագիտական աղբյուրների տվյալները վկայում են, որ X դարի վերջին և XI դ.սկզբում դադարեց սլավոնական ցեղերի՝ դրեգովիչների, ռադիմիչների, հյուսիսցիների, վոլինյանների, խորվաթների բազմաթիվ բնակավայրերի ինքնուրույն գոյությունը: «Տարեգրային նորությունները» հիշատակում է այն մասին, որ Վլադիմիրի՝ իր որդիներին նախկին «սլավինների» հողերում տիրակալներ նշանակելը, նոր տարածաքաղաքական կառուցվածք ստեղծելը, որով արևելասլավոնական հողերը գտնվում էին Կիևյան իշխանական դինաստիայի անմիջական իշխանության ներքո, հենց իր՝ Ռուսիայի կնքահոր անվան հետ է կապվում:

Նովգորոդում (սլովենների հողում) Վլադիմիրը իշխան նշանակեց ավագ որդուն՝ Վիշեսլավին, նրա մահից հետո՝ Յարոսլավին, Տուրովում՝ դրեգովիչների հողում՝ Սվյատոպոլկին, դրևլյանների հողում՝ Սվյատոսլավին, Ռոստովում (ֆիննալեզու

ժողովուրդների տարածք՝ գաղութացված սլավյանների կողմից)՝ Յարոսլավին, ավելի ուշ՝ Բորիսին, Վլադիմիր-Վոլինսկում (վոլիններում)՝ Վսեվոլոդին, Պոլոցկում (պոլոցկյան կրիվիչներ)՝ Իզյաչեսլավին, Սմոլենսկում (սմոլենսկյան կրիվիչների հողում)՝ Ստանիսլավին, Մուրոմում (նախնական շրջանում ֆիննալեզու մուրոմների տարածքում)՝ Գլեբին: Եվ վերջապես վերջին որդին՝ Մստիսլավը, դարձավ Տմուտորոկանյան իշխանության՝ Արևելյան Մերձազովի ռուսական իշխանական անկլավի գլխավորը: Կենտրոնը Թամանյան թերակղզին էր՝ արևելասլավյանական տարածքներից դուրս:

Այսպիսով՝ հենց X դարավերջին՝ Վլադիմիր Սվյատոսլավիչի իշխանության ժամանակ, ավարտվում է Ռուսիա պետության ձևավորումը:

Արտաքին քաղաքականությունը: Ձևավորված Ռուսիա պետության հյուսիսում բալթերը և ուգրո-ֆիններն էին, որոնք գտնվում էին դեռևս զարգացման մինչպետական փուլում: Արևելքում՝ Միջին Պոլոժիեում, ամենամոտ հարևանը Վոլգյան Բուլղարիան էր՝ հիմնված թյուրքալեզու քոչվորների՝ բուլղարների կողմից: Հարավ-արևելքում՝ Դոնի շրջանում և Վոլգայի ստորին հոսանքում, Խազարական կագանատն էր՝ խոշոր պետություն, որտեղ նույնպես իշխում էին թյուրքալեզու խազարները: Մերձևծովյան հյուսիսային տափաստաններում, մոտենալով Ռուսիայի հարավային սահմաններին, ապրում էին մեկ այլ թյուրքալեզու քոչվորներ՝ պեչենեգները: Սև ծովի ստորին հատվածում՝ Բալկանյան թերակղզու հարավում և Փոքր Ասիայում, գտնվում էր Արևելյան Հռոմեական (Բյուզանդական) կայսրությունը, Դանուբի ներքին հոսանքում՝ Ռուսիայի սահմանին մոտ՝ Բոլգարական թագավորությունը, որը հարավսլավոնական պետություն էր: Ռուսիան արևմուտքում սահմանակից էր Լեհաստանի և Հունգարիայի հետ, որոնք նույնպես, ինչպես արևելյան սլավոնները, X դարում փորձում էին կազմավորել իրենց պետությունները:

IX դարի երկրորդ կեսին Ռուսիային առավել վտանգավոր հակառակորդ էր խազարական խաքանատը: Տարեգրի պատմության համաձայն՝ Օլեգը ստիպեց հյուսիսցիներին և ռադիմիչներին վճարել հարկերը ոչ թե խազարներին, այլ Կիևին: Վյատիչները խազարներից կախվածությունը պահեցին մինչև 960-ական թվականները: Խազարներին հարկատու լինելուց նրանց ազատագրումը տեղի ունեցավ Սվյատոսլավ Իգորևիչի 965 թ. արշավանքի արդյունքում: Նա վճռական պարտության մատնեց խազարական խաքանատը, ինչից հետո այդ պետությունը դադարեց գոյություն ունենալուց: Ձևավորվող Ռուսիա պետության արտաքին քաղաքականության առավել կարևոր ուղղությունն էր Բյուզանդիայի հետ հարաբերությունը, որը համարվում էր վաղմիջնադարյան աշխարհի ամենազդեցիկ պետության՝ Հին Հռոմի ժառանգորդը: Ռուսիան կարող էր իր ռազմական ուժը ցուցադրելով միայն արժանանալ Բյուզանդական կայսրության կողմից ճանաչման:

Ռուսիայի առաջին արշավանքը դեպի Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիս (Ռուսիայում այն կոչում էին Царьград – այսինքն՝ ցարի՝ կայսեր քաղաք) տեղի ունեցավ դեռևս 860 թ.: Դրանից հետո շուտով Բյուզանդիայի հետ հաստատվեցին խաղաղասիրական հարաբերություններ և տեղի ունեցավ ռուս երևելիների մի մասի մկրտությունը: 907 թ. խոշոր նավատորմիղով Ցարգրադին մոտեցավ

Օլեգը, որի կառավարման տարեթվերը՝ համաձայն «Ժամանակավոր տարիների պատմության», համարվում են 882-912 թթ.: Նրան հաջողվեց ստիպել կայսրությանը կնքելու Ռուսիայի համար շահավետ խաղաղության պայմանագիր: Այդ տեքստը՝ թվագրված 911-ի սեպտեմբերի 2-ով, պահպանվել է տարեգրության մեջ: Բյուզանդիան դարձավ Ռուսիայի գլխավոր առևտրային գործընկերը: Ամեն տարի կիևյան իշխանի դրուժիննիկները շրջիկ հարկահավաքությունից հավաքած մթերքները և ապրանքները Բյուզանդիա էին արտահանում: Դրանք առաջին հերթին մորթեղեն և մեղվաբուծական (մեղր և ակնամոմ) ապրանքներ էին: Փոխարենը այնտեղից բերում էին երևելիների համար սոցիալական հեղինակություն ստեղծող ապրանքներ, նախ և առաջ՝ թանկարժեք գործվածքեղեն:

941 թ. դեպի Կոստանդնուպոլիս մեկ ուրիշ արշավանք կազմակերպեց Օլեգի ժառանգորդ Իգորը (913-945): Սակայն բյուզանդացիները ջախջախեցին նրա նավատորմը: Երեք տարի անց՝ 944 թ. կնքվեց ռուս-բյուզանդական նոր պայմանագիր, որը նույնպես հասել է մեր օրեր:



Իգոր: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

Իշխանուհի Օլգայի կառավարման ժամանակ Բյուզանդիայի հետ պահպանվեցին խաղաղ հարաբերություններ: 957 թ. (մի այլ կարծիքով՝ 946 թ.) Օլգան ուղևորվեց Կոստանդնուպոլիս և այնտեղ մկրտվեց որպես քրիստոնյա:

Իգորի և Օլգայի որդի Սվյատոսլավը (960-ի սկզբներից մինչև 972 թթ.) համագործակցելով Բյուզանդիայի կայսր Նիկանորոս Փոկացու հետ՝ 967-968 թթ. գրավեց Դանուբի Բուլղարիան: Իսկ հետո՝ 970-971 թթ., Սվյատոսլավը իրեն ենթակա բուլղարների հետ միություն կազմելով՝ պատերազմ սկսեց Բյուզանդիայի դեմ: Այդ ժամանակ Բյուզանդիայում իշխանության էր եկել նոր կայսր՝ Ցիմիսխին: Սվյատոսլավի համար պատերազմն անհաջող էր: Ճիշտ է, բյուզանդացիներին չհաջողվեց հասնել վճռական հաղթանակի, սակայն կիևյան իշխանը ստիպված էր պայմանագիր կնքել, ըստ որի՝ նա հրաժարվում էր Բալկանյան թերակղզում իր ունեցած բոլոր նվաճումներից: Ռուսիայի համար կարևոր էին Մերձսևծովյան հյուսիսի տափաստանային տարածությունները զբաղեցրած քոչվոր պեչենեգների հետ հարաբերությունները: Երբեմն պեչենեգյան ցեղերը Ռուսիայի դաշնակիցներ էին, սակայն հաճախ էլ նրանց միջև տեղի էին ունենում ռազմական ընդհարումներ: 968 թ., երբ Ռուսիայի կառավարիչ Սվյատոսլավ Իգորևիչը Բալկաններում էր, պեչենեգները պաշարել էին Կիևը. մեծ դժվարությամբ հաջողվեց պաշտպանել քաղաքը: Դանուբից վերադառնալով՝ 972 թ. պեչենեգների հետ ընդհարման ժամանակ Սվյատոսլավը զոհվեց: Տասներորդ դարավերջին պեչենեգների ճնշումը հատկապես ուժեղ էր Հարավային Ռուսիայի վրա և Վլադիմիր Սվյատոսլավիչը հարավային սահմանների պաշտպանության նպատակով տափաստանը Ռուսիայից Դեսնա, Սեյմ,

Սուլա, Ռոս գետերով անջատվող սահմանի երկարությամբ սկսեց կառուցել ամրոցներ, ինչպես նաև արգելափակիչ ամրապատնեշներ: Ամրոցներում նա բնակեցնում էր Ռուսիայի հյուսիսային մարզերից գաղթածներին: Ռուսիայի հյուսիսային հարևանների՝ բալթերի և ուգրոֆինների հետ հարաբերությունները կառուցվում էին հարկատվության հիմունքով: XI–XII դդ. ռուս իշխաններին հարկատու էին լիտվացիները, լատվիացիների նախնիներ լատգալները, զեմգալները, կուրշերը և էստոնացիների նախնիներ չուդերը, պեչորան, պերմը, յուգրան Արևելյան Եվրոպայի հյուսիս-արևելքում, չերեմիսները և մորդվացիները՝ Միջին Պովոլժիեում:




Իշխանուհի Օլգայի զրույցը Կոնստանտին VII Ծիրանածնի հետ: Օլգայի մկրտությունը: Մանրանկար Ռադզիլովյան տարեգրությունից, XV դ.

§ 8. Քրիստոնեության ընդունումը Ռուսիայում և դրա նշանակությունը

Ռուսիայի միասնական պետական տարածքի կազմավորումը՝ միասնական դինաստիայի կառավարմամբ, պահանջում էր ավարտին հասցնել նաև գաղափարախոսական և դավանաբանական ոլորտների հիմնական խնդիրը: Այն դարձավ Վլադիմիր Սվյատոսլավիչի գործը, որի համար հետագայում նա փառաբանվեց որպես սուրբ: Քրիստոնեությունը ընդունվեց 980-ական թթ. վերջին՝ ընդօրինակելով բյուզանդական տարբերակը՝ ուղղափառությունը:

Սլավոնաբնակ հողերում տարածված հեթանոսական նախկին կուռքերը Կիևյան իշխանների կառավարության օրոք դարձան անընդունելի: Անհրաժեշտ էր միասնական կրոն: Վլադիմիրի՝ Կիևի աթոռին բազմելուց և ավագ եղբորը՝ Յարոպոլկին, գահից հեռացնելուց անմիջապես հետո (վերջինս Կիևում ղեկավարում էր 972-ից մինչև 978 կամ 980 թթ.) նա փորձեց ստեղծել համառուսական հեթանոսական աստվածների պանթեոն՝ Պերունի գլխավորությամբ: Բայց մի քանի տարի անց որոշեց հիմնավորապես հեռանալ ավանդույթներից՝ ընդունելով միաստվածություն:

Ըստ տարեգրության մեջ եղած լեգենդի՝ իշխանը ընտրեց կրոնի չորս տարբերակներից՝ արևելյան քրիստոնեություն (ուղղափառություն), արևմտյան քրիստոնեություն (կաթոլիկություն), իսլամ և եբրայականություն, մեկը: Ուղղափառությունը իշխում էր Բյուզանդիայում, և հարավային սլավոնների մեծամասնությունը նույնպես դավանում էր ուղղափառություն: Կաթոլիկությունը տարածված էր Արևմտյան Եվրոպայում և արևմտյան սլավոնների մեծ մասում, իսլամը պետական կրոն էր Ռուսիային հարևան Վոլգյան Բուլղարիայում, եբրայականությունը Խազարիայի սոցիալական վերնախավի կրոնն էր: Ի դեպ, վերջինս որպես պետություն՝ փաստացի արդեն գոյություն չուներ, իսկ եբրայական համայնք կար հենց Կիևում: Իրական այլընտրանքը, այնուամենայնիվ, գործում էր քրիստոնեության երկու ճյուղերի միջև: Դրանց կենտ-



Վլադիմիրը: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

րոններն էին Հռոմը և Կոստանդնուպոլիսը, որոնք վաղուց պայքարում էին՝ առաջնություն ստանալու սլավոն ժողովուրդների հանրույթներում: Սլավոններից քրիստոնեության արևմտյան ճյուղին էին պատկանում չեխերը, խորվաթները և լեհերը, արևելյանին՝ բոլգարները և սերբերը: Քրիստոնեությունը Բյուզանդիայից Ռուսիա ներթափանցել էր դեռևս IX դարում: Ըստ բյուզանդական աղբյուրների՝ 860-ական թթ. մկրտվել է ռուսական ազնվականության մի մասը: 944 թ. Բյուզանդիայի՝ Իգորի հետ կնքած պայմանագրում հիշատակվում է ռուսների մեջ եղած քրիստոնյաների մասին: 946 կամ 957 թթ. Վլադիմիրի տատիկը՝ Ռուսիայի տիրուհի Օլգան, գնացել էր Կոնստանդնուպոլիս Կոնստանտին VII Ծիրանածնի մոտ և ընդունել քրիստոնեություն՝ ստանալով Ելենա անունը: 950-960 թթ. Օլգան փորձեց քրիստոնեությունը դարձնել Ռուսիայի պետական կրոն: Ընդ որում՝ բանակցությունները վարում էր ոչ թե Բյուզանդիայի, այլ Գերմանիայի թագավորի հետ (այդ ժամանակ Բյուզանդիայի հետ հարաբերությունները վատացել էին, և իշխանուհին դիվանագիտական խաղ էր խաղում): Բայց Օլգայի որդի Սվյատոսլավը և նրա շրջապատը ընդունում էին հեթանոսությունը և ընդդիմացան իշխանուհու ծրագրերին: Դրանք մնացին անկատար: Հետագայում Օլգան (մահացել է 969 թ.) փառաբանվեց որպես սուրբ՝ որպես Ռուսիայում քրիստոնեության նախակարապետ:

X դարի երկրորդ կեսը և XI դարի սկիզբը եղել են Կենտրոնական, Հյուսիսային և Արևելյան Եվրոպաների շատ ժողովուրդների քրիստոնեացման ժամանակաշրջան: 960-ական թթ. քրիստոնյա երկիր դարձավ Լեհաստանը, 1000 թ.՝ Հունգարիան. այդ նույն ժամանակահատվածում քրիստոնեությունը հաստատվեց Սկանդինավյան երկրներում: Այդպիսով, քրիստոնեության ընդունումը դարձավ ժամանակի հրամայականը և Ռուսիային հնարավորություն տվեց մտնելու այն ժամանակվա չափանիշներով քաղաքակիրթ երկրների շարքը:

Ռուս-բյուզանդական մի շարք իրադարձություններից հետո տեղի ունեցավ Ռուսիայի մկրտությունը: 988 թ. բյուզանդական զորահրամանատար Վարդաս Փոկացու կազմակերպած խռովության դեմ պայքարում կայսրեր Վասիլի Բ-ին (Բարսեղ) և Կոնստանդինին օգնության եկավ Վլադիմիր Սվյատոսլավիչը: Օգնության պայմանն էր ռուս իշխանի ամուսնությունը նրանց քրոջ՝ Աննայի հետ: Իրենց հերթին բյուզանդական կայսրերը պայման դրեցին, որ իրենց քույրը կամուսնանա ռուս իշխանի հետ, եթե Վլադիմիրը քրիստոնյա դառնա: Բայց Վասիլը և Կոնստանդինը ձգձգում էին իրենց խոստման կատարումը: Այդ ժամանակ Վլադիմիրը գրավեց Կորսունը (Տավրի-

կյան Խերսոնեսը)՝ Ղրիմում բյուզանդական իշխանության կենտրոնը: Դրանից հետո նրանց քույրը ուղարկվեց Կիևի իշխանի մոտ, և ինչպես վկայում է տարեգիրը, Վլադիմիրը մկրտվեց հենց Խերսոնեսում: Վերադառնալով Ռուսիա՝ Վլադիմիրը կազմակերպեց Կիևի բնակիչների զանգվածային մկրտությունը: Դրան հետևեց քրիստոնեության տարածումը ողջ Ռուսիայում: Ռուսական եկեղեցու գլխավորը դարձավ միտրոպոլիտը, որը ենթակա էր Կոստանդնուպոլսի պատրիարքին:



Տասանորդական (Десятинной) եկեղեցու հիմնարկեքը Կիևում 989 թ.:
Նկարիչ՝ Վ. Պ. Վերեշչագին

Քրիստոնեության ընդունումը մի նոր կարգավիճակ շնորհեց Ռուսիա պետության կազմավորման գործընթացին՝ նրան եվրոպական ասպարեզում տալով նոր դիրք: Այն նպաստեց երկրի մշակութային զարգացմանը: Նախ քրիստոնեացումը Ռուսիային ավելի մերձեցրեց զարգացած մշակույթ ունեցող Բյուզանդիային, երկրորդ՝ մոտեցրեց սլավոնական քրիստոնեական մշակույթին (առաջին հերթին Դանուբյան Բոլգղարիային, որը մեկ հարյուրամյակ առաջ էր ընդունել քրիստոնեությունը), երրորդ՝ բյուզանդական մշակույթի միջնորդությամբ մուտք ունեցավ անտիկ և մերձավորարևելյան մշակութային ժառանգություն:

Աշխարհընկալման մեջ աստիճանաբար ձևավորվում էր նորը, քրիստոնեականը, ընդունվում էին քրիստոնեական նորմերը: Քրիստոնեացումից հետո երկրում լայնորեն տարածվեց գիրը. Ռուսիայում սկսեց զարգանալ նաև թարգմանչական (հունարենից) գրականությունը, ճարտարապետությունը, ստեղծվեցին գրականության և կերպարվեստի նոր գործեր:

§ 9. Ռուսիան X դարի վերջից մինչև XII դարի 20-ական թվականները

Տարածքային-քաղաքական կառուցվածքը: Պատմագիտական գրականության մեջ Ռուսիայի քաղաքական կառուցվածքը նկարագրելիս սովորաբար կիրառվում էին Հին ռուսական պետություն, Հին Ռուսիա եզրույթները, իսկ դրա բաղկացուցիչ մասերը անվանում էին «իշխանապետություն» (княжество): Առաջին երկու եզրույթների պայմանականությունն ակնհայտ է. հասկանալի է՝ այն ժամանակվա մարդիկ չէին կարող իրենց երկիրն անվանել «հին»: Մինչև XIV դարավերջ անգամ «իշխանապետություն» բառը գոյություն չուներ: Իսկ ինչպե՞ս էին այն ժամանակվա մարդիկ անվանում իրենց երկիրը և նրա բաղկացուցիչ մասերը:

Ամբողջության մեջ պետությունն անվանվում էր Ռուսիա (Русь) և դրան հոմանիշ՝ Ռուսական հող (Русская земля): «Հող» հասկացությունը տարածքային բնութագիր էր (Ռուսական, Բուլղարական, Հունական ևն), նշանակում էր այն, ինչը հիմա անվանում են «անկախ պետություն»: «Ռուսական հողի» հսկայական տարածքները կառավարվում էին գերագույն իշխանին՝ Կիևի իշխանին ազգական իշխանների կողմից, որոնք անվանվում էին «գավառայիններ» (волостями): «Волость» եզրույթն ավելի ուշ շրջանում (տևեց մինչ XX դարը) նշանակում էր վարչատարածքային փոքր միավոր, որում միայն գյուղական բնակավայրեր էին: Մինչմոնղոլական դարաշրջանում այն չի արձանագրվել: Վաղ շրջանի գավառը՝ «волость», խոշոր տարածքային միավոր էր, որը ներառում էր գահանիստ քաղաքը, այսինքն՝ իշխանի կողմից կառավարվող՝ престол: Ռուսական հողերի խոշորագույն գավառների կենտրոններն էին Նովգորոդը, Չեռնիգովը, Պերեյասլավլը, Սմոլենսկը, Պոլոցկը, Ռոստովը, Մուրոմը, Վլադիմիր-Վոլինսկին, Տուրովը, Պերեմիշլը, Տերեբովլը:

Երկար ժամանակ այն կարծիքն էր գերիշխում, որ հինռուսական քաղաքները ձևավորվել են գլխավորապես այսպես կոչված ցեղային կենտրոնների հիման վրա, որոնք գոյություն են ունեցել դեռևս մինչպետական սլավոնական ցեղային հանրույթների շրջանում: Սակայն հնագիտության զարգացումը սասանեց այդ համոզմունքը: Պարզ դարձավ, որ ցեղային շատ կենտրոններ դադարել են գոյություն ունենալուց՝ դեռևս քաղաք չդարձած: Հաստատվեց նաև, որ Ռուսիայի խոշոր քաղաքների մեծ մասը առաջացել է արդեն «պետականության» շրջանում: Այսպես, Նովգորոդը իր այսօրվա տեղում է եղել X դարի կեսերին. վաղ ժամանակներում սլովենների կենտրոնը եղել է այսպես կոչված Ռյուրիկովյան քաղաքավայր՝ ուշ շրջանի քաղաքից 2 կիլոմետր հեռավորության վրա (այն, ըստ երևույթին, սկզբից էլ կոչվել է Նովգորոդ): Սմոլենսկը ներկայիս տարածքում հիմնվել է միայն XI դարում, իսկ Վերին Մերձդնեպրի ավազանում՝ ներկայիս Սմոլենսկից 12 կիլոմետր հեռավորության վրա, եղել է այդ շրջանի նախկին կենտրոնը. այժմ անվանվում է Գնեզդովո: Հավանական է, որ հենց այդ ավանն է սկզբնապես կոչվել Սմոլենսկ: Պոլոցկն էլ իր գտնվելու նախկին բնակավայրից տեղաշարժվել է ընդամենը 0,5 կիլոմետրի չափով: Մինչպետականության շրջանում գոյություն ունեցած կենտրոնները փոխարինվեցին նորերով, և դա վերաբերել է ոչ

միայն խոշորներին: Ըստ հնագիտական տվյալների՝ X դարի վերջին և XI-ի սկզբին, այսինքն՝ հենց միասնական պետության ձևավորման ավարտի հետ զանգվածաբար դադարել է հին բնակավայրերի գոյությունը, և արևելասլավոնական տարածքում առաջացել են նորերը: Դա բացահայտորեն կապված էր սլավինների «ինքնավարության» վերացման և նրանց տարածքում Կիևյան իշխանական տան անմիջական կառավարման հետ: Այսպիսով՝ Ռուսիայի, ինչպես խոշոր, այնպես էլ փոքր քաղաքներն առաջին հերթին առաջացել են որպես պետական կենտրոններ, հենակետեր Ռյուրիկովիչների և նրանց ջոկատների համար: Բնական է, որ դրանք անմիջապես դառնում էին առևտրի և արհեստների կենտրոններ:



Սոֆիայի տաճարը

Ռուսիայում իշխանության ժառանգորդությունը խիստ կանոններով չէր: Ընդհանուր առմամբ գործում էր այսպիսի սովորույթ. իշխանությունն ուղղակիորեն անցնում էր ոչ թե հորից որդուն, այլ ավագ եղբորից կրտսերին, իսկ եղբայրներից փոքրի մահվան դեպքում՝ նրա ավագ զարմիկին (եղբայրներից ավագի որդուն): Սակայն այս կարգը (պատմագրության մեջ այն ստացել է «սանդղաձև բարձրացում» («лествичное восхождение») անվանումը) խստորեն չէր պահվում:

Իշխանական որևէ տոհմին պատկանելը նշանակում էր, որ նրա ներկայացուցիչներից յուրաքանչյուրը համարվում էր «ռուս իշխան»: Կիևյան իշխանը, ի հեճուկս ժամանակակից գրականության մեջ մեծարվող «մեծ իշխան» տիտղոսի, ոչ մի տիտղոս չուներ: Դրա անհրաժեշտությունն էլ չկար. ով համարվում էր տոհմում ավագը և նստում էր Կիևում, նա էլ ճանաչվում էր Ռուսիայի գերագույն կառավարիչը: XI դարի վերջից Կիևի իշխանների վերաբերյալ գործածվում է «իշխան ողջ Ռուսիայի» եզրույթը, բայց սա պատվարժանության բնորոշում էր և ոչ թե պաշտոնապես տրված տիտղոս:

Քաղաքներում, որտեղ չկային իշխանական գահեր, իշխանի անունից կառավարում էին փոխիշխանները (посадник): Վարչական հաջորդ բարձր պաշտոնը գյուղապետինը, տանուտիրոջը, հազարապետինն (тысяцкий) էր: Եթե փոխիշխանները քաղաքներում էին, որտեղ իշխաններ չկային, ապա տանուտերերը (գյուղապետերը), ընդհակառակը, որպես կանոն, գործում էին աթոռանիստ քաղաքներում: Փոխիշխանները, տանուտերերը և քաղաքի կամ շրջանի զինվորական պետերը՝ վոյեվոդները (ռազմական ջոկատների հրամանատարները), նշանակվում էին իշխանների կողմից՝ իշխանական ջոկատների (дружины) արտոնյալ դասից՝ բոյարներից: Հազարապետերին ենթակա էին քաղաքային բնակչության հարյուր հոգուց բաղկացած խմբերի, ստորաբաժանումների ղեկավարները՝ հարյուրականները (сотские): Ջոկատայինների մյուս խմբին, որ գնում էր հարկահավաքության, անվանում էին սուսերակիրներ (мечники). նրանց հետ էին լինում նաև դատական պաշտոնյաները: Իշխանի գլխավորած պետական կառավարման համակարգում փոքր պաշտոններ ունեցող դեմքերին կոչում էին մունետիկներ (бирячи):

Պետության տարածաքաքաղաքական միասնությունը չէր բացառում երկպառակիչ պատերազմներ սկզբում հանուն Կիևյան իշխանական տան, հետո նաև առանձին գավառների, շրջանների համար:

970-ական թթ. եղավ առաջին երկպառակությունը, երբ իշխանության համար միմյանց դեմ պայքարում էին Սվյատոսլավի որդիները՝ Յարոպոլկը, Օլեգը և Վլադիմիրը: Ավելի դաժան բնույթի էր Վլադիմիրի որդիների միջև եղած պայքարը, որը տևեց 1015-1026 թթ.: Այն ավարտվեց Յարոսլավ և Մստիսլավ Վլադիմիրովիչների միջև Ռուսիայի բաժանմամբ. առաջինի իշխանության կենտրոնը մնաց Կիևը, իսկ երկրորդի մայրաքաղաքը դարձավ Չեռնիգովը: 1036 թ. Մստիսլավի մահից հետո միայն Յարոսլավը ստացավ ողջ Ռուսիայի իշխանությունը:

Նպատակ ունենալով խուսափել հետագա երկպառակությունների կրկնությունից՝ Յարոսլավն իր կտակում երկու սկզբունքային նորություն մտցրեց: Նախ՝ նա, ի տարբերություն հոր և պապի, Կիևն ու Նովգորոդը թողեց ավագ որդուն՝ Իզյասլավին, երկրորդ՝ Ռուսիայի հարավում Իզյասլավի հետ իշխանությունը պետք է բաժանեին նաև նրա երկու եղբայրները՝ Սվյատոսլավը և Վսեվոլոդը: Նրանց համար այս տարածքներում ստեղծվեցին գավառներ՝ Չեռնիգով և Պերեյասլավլ կենտրոններով: Իզյասլավը որոշ չափով Սվյատոսլավի և Վսեվոլոդի հետ պետք է կիսեր երկրի գերագույն իշխանությունը: Այս կարգը գործեց մինչև 1068 թ., իսկ հետո սկսվեց երկպառակության տասնամյա շրջանը, որի ընթացքում Կիևի գահը զավթեց սկզբում Յարոսլավիչների հեռավոր զարմիկ, պոլոցկյան իշխան Վսեսլավ Բրյաչիսլավիչը (1068-1069), իսկ հետո՝ Սվյատոսլավ Յարոսլավիչը (1073-1076): Միայն 1078 թ. հետո Վսեվոլոդ Յարոսլավիչը՝ վերջին արու զավակը Յարոսլավի սերնդից, գրավեց Կիևյան գահը և կարողացավ պետության մեջ կայունացնել իրավիճակը:

Վսեվոլոդի մահից հետո (1093 թ.) գահն անցավ իր եղբոր ավագ որդուն՝ Իզյասլավին. նրա և Սվյատոպոլկի միջև նորից բռնկվեց պառակտիչ պայքար, այս անգամ արդեն Յարոսլավի թոռների և ծոռների միջև: Պատերազմն ընթանում էր Վլադիմիր-Վոլինյան,

Պերեմիշլյան և Տերեբովլյան գավառների համար, որի հակամարտությանը տարբեր կողմերից մասնակցում էին օտարազգիներ՝ հունգարներ և պոլովցիներ: XI–XII դդ. սահմանագծին Յարոսլավի ժառանգներին գավառների բաժանման հարցում հաջողվեց հասնել համաձայնության: Կայունության և գերագույն իշխանության ամրապնդման նոր շրջանը սկսվեց 1113 թ., երբ Կիևի գահին նստեց Վսեվոլոդ Յարոսլավիչի որդին՝ Վլադիմիր Մոնոմախը (իշխանի «Մոնոմախ» մականունը կապված էր մոր հետ. նա Բյուզանդիայի կայսր Կոնստանդին IX Մոնոմախի (1042-1055 թթ.) դուստրն էր):

Մինչմոնղոլական Ռուսիայի հասարակական կարգը: Ռուսիայի՝ մինչև մոնղոլների տիրապետությունը եղած հասարակարգի մասին պատմագրության մեջ տարակարծություններ կան: 1930-ական թթ. ռուս գիտնականների շրջանում տարածված էր այն կարծիքը, որ հասարակական կառուցվածքը ֆեոդալական, ավատական է եղել: Ֆեոդալիզմը պայմանական գիտական եզրույթ է՝ առաջացած XVIII դարում (լատիներեն feodum – տիրապետել, տիրակալել իմաստով. այդպես էին Եվրոպայում միջին դարերում անվանում սեփականության ձևերից մեկը: Հայաստանում այն կոչվում էր հենց սեփականության անունով՝ կալվածատեր): Գիտական տարբեր դպրոցների ներկայացուցիչներ այդ եզրույթում ներառում էին տարբեր բովանդակություններ՝ հասարակական–տնտեսական կարգերից (այսինքն՝ աշխարհի տարբեր մասերում գոյություն ունեցող հասարակական հարաբերություններն ամբողջությամբ) մինչև քաղաքական–իրավական համակարգը, որը միջնադարում գոյություն ուներ Արևմտյան Եվրոպայում:

Խորհրդային գիտնականները 1930-ական թթ. «ֆեոդալիզմ» հասկացությունը ընդունեցին լայն (մարքսիստական) նշանակությամբ՝ որպես հասարակական–տնտեսական կարգ: Սակայն ֆեոդալիզմի առաջացման ուղիների մասին տեսության մեջ հետազոտողները տեսան միայն մեկ ուղղություն, այսպես կոչված հայրենակալվածքային՝ վոտչինային տեսությունը (անվան մեջ կարևորվում է հայրական կալվածքներ ժառանգելը): Համաձայն այս պատկերացումների՝ ավատականության էությունը գյուղացիական հանրույթը վոտչինայով՝ խոշոր մասնավոր հողատերերով, փոխարինելն էր: Հենց խոշոր մասնավոր հողատիրական սեփականությունն ընդունվեց ֆեոդալական կարգի տնտեսական հիմք:

1930-ական թթ. Ռուսիայում ֆեոդալական հասարակության ձևավորման մասին հայեցակարգը մշակողը Բ.Դ. Գրեկովն էր, որի կարծիքով այն հենվում էր երեք գլխավոր դրույթների վրա.

1) ֆեոդալիզմի (ավատականության) ծագման հիմքում ընկած էին մասնավոր խոշոր հողային սեփականությունները, այսպես կոչված վոտչինաները,

2) սեփականության այդ ձևը՝ վոտչինաները, Ռուսիայում IX–X դդ. արդեն կային,

3) գյուղացիական հանրույթի մաս կազմող գյուղացիների որոշակի մասը կախվածության մեջ էր հողային սեփականատերերից:

Հինռուսական հասարակության մասին Գրեկովի հայացքները երկար ժամանակ տեղ էին գտել դպրոցական և բուհական դասագրքերում, սակայն հետագայում

մերժվեցին, քանի որ հակասում էին պատմական տվյալներին: Օրինակ, պատմության մեջ տեղեկություններ չկային IX-X դարերում խոշոր հողային սեփականատերերի՝ ազնվականության մասին: Առաջին վկայությունները հայտնվել են միայն XI դարում: 1950-ական թթ. սկզբներից արդեն Ռուսիայում ֆեոդալական հարաբերությունների ծագման վերաբերյալ առաջ քաշվեց մեկ այլ վարկած: Լ. Վ. Չերեպնինի կարծիքով՝ վաղ շրջանում՝ X-XI դդ., Ռուսիայում գերիշխող էր ոչ թե մասնավոր խոշոր հողային սեփականությունը, այլ գործում էր պետության՝ հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքը՝ հարկերի և պետական տուրքերի հավաքման միջոցով:

1960–1980-ական թթ. շատ հետազոտողներ պաշտպանում էին վաղմիջնադարյան Ռուսիայում գերիշխող պետական-ֆեոդալական հարաբերությունների մասին տեսակետները, ինչպես նաև հարկահավաքությունը՝ որպես շահագործման հիմնական ձև լինելը: Այդ ժամանակ էլ տարածվեցին վարկածներ, որոնցում այլ կերպ գնահատվեց Ռուսիայում IX–X դդ. մասնավոր խոշոր հողատիրության բացակայության փաստը և դրա համեմատաբար քիչ տարածվածությունը հաջորդող երկու հարյուրամյակների ընթացքում: Առաջ քաշվեց նոր՝ Ռուսիայում մինչմոնղոլական շրջանում միմյանց հակադրվող սոցիալական շերտերի (դասերի) գոյությունը բացառող հայեցակարգ: Համաձայն այս տեսակետի՝ IX–X դդ. տոհմացեղային կարգի վերջին փուլն էր, իսկ XI–XIII դդ. արդեն գոյություն ունեին հանրային տեսակի քաղաք-պետություններ, որոնցում ամեն բան վճռում էր ժողովուրդը. իշխանները լոկ պաշտոնական դեմքեր էին՝ հրավիրված հանրույթի կողմից: Այդ պետություն-հանրույթը կոչվում էր իշխանական մարզ (волость): Աղբյուրները չեն հաստատում մինչմոնղոլական Ռուսիայի հասարակական կարգի մասին այս տեսակետը: Ինչպես արդեն նշվել է, волость էին կոչվում բացառապես իշխանական տիրույթները: Սեփականության այդ իրավունքը քաղաքներին չէր վերաբերում: Հինռուսական հուշարձաններում հիշատակվող դեմքերը, որոնց «քաղաք–պետություն» տեսության կողմնակիցները համարում են «համայնքի առաջնորդներ», իրականում իշխանի զինվորական ծառայողներն էին: Բոյարները մի ամբողջ հանրային շերտ էին, որոնք ներկայանում էին որպես տեղական ինքնավար (զեմստվոյական) առաջնորդներ: Ավելի վաղ աղբյուրներում դրանք իշխանական հսկող ջոկատների (дружинников) բարձր կարգն էին:

Եթե հետևենք աղբյուրներին, վաղմիջնադարյան Ռուսիայում սոցիալական էլիտայի կարգավիճակ ունեին իշխանը և ջոկատը (дружина): Սլավոնների մոտ ջոկատները առաջացան VI-VIII դդ.՝ տարաբնակեցման դարաշրջանում: X դարում Կիևի իշխանների ջոկատներն արդեն հասարակական շերտ էին, որոնց որպես վճար՝ տրվում էր իշխանի տուրքերից և հարկերից առաջացած եկամուտներից որոշակի մաս: XI դարում նկատվում է ջոկատների բաժանում երկու մասի՝ «ավագների» (սա «առաջինն» էր, «մեծը», «լավագույնը») և «ջահելների»: Ջոկատի «ավագները» կոչվում էին բոյարներ, իսկ «ջահելները»՝ պատանյակներ: XI դ. երկրորդ կեսից ջահելների ջոկատը շերտավորվեց. դրա մի մասը դարձավ իշխանական զինվորական ծառա, անվանվեցին «պատանի», մյուս մասը՝ «մանուկներ». սա արտոնյալ խավ էր: Ջոկատայիններից ձևավորվում էր պետական ապարատը: Հենց նրանք էին պաշտոնի նշանակում

փոխիշխաններին, հազարապետերին (գավառապետերին), վոյեվոդներին (քաղաքապետերին, զորավարներին), հարկահավաքներին, սուսերակիրներին, արյան գին վճարողներին (вирник)։ Այժմ արդեն ջոկատայինները եկամուտ ունեին ոչ միայն իշխանի տվածից, այլև իրենց պաշտոններից (այսպես՝ իշխանին ենթակա տարածքից հավաքած հարկի մեկ երրորդը ստանում էր փոխիշխանը, իր դատական մաքսերից բաժին էր ստանում վիրնիկը)։ Ջոկատի վերնախավից ձևավորվեց իշխանին կից խորհուրդ։ XI դարում շնորհիվ իշխանական պարգևների ջոկատայինները սկսեցին ձեռք բերել սեփական հողատարածքներ։ Ըստ էության Կիևյան Ռուսիայում ջոկատների ինստիտուտը ասես իշխանի գլխավորությամբ կազմակերպություն լիներ, որում միավորված էր իշխող դասի ամբողջ աշխարհիկ մասը։ Վաղ միջնադարում այդ շարքերում հայտնվել հնարավոր էր միայն ջոկատային լինելով։

Քաղաքային և գյուղական անձնապես ազատ բնակչությունը, որը վճարում էր պետական հարկերն ու տուրքերը, անվանվում էր մարդիկ (люди)։ Գյուղական բնակչությունը տարածքներով միավորված էր հարևան համայնքների հետ։ Գյուղական մի քանի բնակավայրերի միավորումը դառնում էր տարածքավարչական միավոր, որի կենտրոնը լինում էր ոչ մեծ քաղաք կամ խոշոր գյուղական բնակավայր։ Այդ տարածքավարչական միավորներից էին հավաքվում պետական հարկերն ու տուրքերը։ Հարկերի և տուրքերի ցանկում հիմնականը հողի հարկն էր, դրանից բացի՝ պետական եկամուտների նշանակալից մասը կազմում էին մաքսերը՝ արյան գնի վճարից և վաճառքից առաջացած գումարից։


Բնակչության առանձին տեսակ էին ռամիկները (смерды)։ Հաճախ նրանց ներկայացնում են որպես գյուղացի–համայնքայիններ, սակայն ավելի հավանական է, որ ռամիկներին դիտել են որպես իշխանից կախյալ մարդիկ, որոնք զբաղվում էին գյուղական տնտեսությամբ, միաժամանակ զինապարտ էին։ Նաև գոյություն ունեին մարդկանց այնպիսի խմբեր, որոնք կազմակերպվել էին ըստ «մասնագիտության», սպասարկում էին իշխանական տնտեսությունը. անտառային մեղվապահներ (бортники), կուղբապահներ (бобровники), բազեակիրներ (сокольники) և զինապարտների դասը։ Մասնավոր հողատիրության զարգացման հետ առաջ է գալիս պարտքի դիմաց հողատիրոջից կախված գյուղացիների դասը (закуп–люди)։ Հասարակության մեջ կային նաև այնպիսի մարդիկ, որոնք համարվում էին պարոնների (տերերի) սեփականությունը, այսինքն՝ որպես ստրուկներ գտնվում էին կախվածության մեջ։ Դրանց անվանում էին կալվածատան սպասավորներ (челядьи) կամ ճորտեր (холопы)։

Այսպիսով, Ռուսիայի հասարակական կարգի մինչմոնղոլական ժամանակահատվածը կարող է համարվել որպես «ֆեոդալական», բայց պայմանով, որ ֆեոդալականություն հասկացության տակ ընկալվում է ոչ թե հասարակական կարգը, որում անքակտելիորեն իշխում է խոշոր մասնավոր հողային սեփականությունը, այլ կարգ, որում իշխում է ռազմական-զինապարտային կորպորացիան, և որը եկամուտ է ստանում հասարակ բնակչությունից երեք հնարավոր ճանապարհներով։ Կառավարիչը իր ենթակա զինվորականներին բաժանում է պետական եկամուտներից ստացված

միջոցները, ուղարկում է պետական պաշտոնների, սեփական հողային կալվածքներից վճարում է ծառայության համար:

Հարկ է նկատել, որ ժամանակակից պատմագրությունը միջնադարյան Եվրոպայի այլ երկրների հասարակական կարգի մասին գրելիս պաշտպանում է այն տեսակետը, որ մասնավոր հողային անբաժանելի սեփականություն ոչ մի տեղ և երբեք չի եղել. միջնադարյան բոլոր եվրոպական պետություններում առավել կամ նվազ չափերով գոյություն են ունեցել պետական հողեր, և ազնվականությունը ստանում էր եկամտային մաս պետական պարհակի, այլ հարկերի բաշխումից: Իսկ հարկերը հավաքվում էին հասարակ բնակչությունից: Այս իմաստով Ռուսիայի զարգացումը եվրոպական այլ երկրներից սկզբունքային տարբերություն չուներ: Տարբերություն կար մասնավոր խոշոր հողատերերի զարգացման թափի և մասշտաբների մեջ. Արևելյան, Հյուսիսային և Կենտրոնական Եվրոպայում վաղ միջնադարում այն աճում էր դանդաղ և տարածվում էր նվազ չափերով, քան մայրցամաքի արևմուտքում: X–XII դդ. Ռուսիայում «ֆեոդալների» կորպորացիան ներկայանում էր իշխանների և նրանց շրջապատի ջոկատների երևելիներով: Այդ շրջանում ազնվականության եկամուտների ստացման մեջ գերիշխում էին վերոնշյալ առաջին երկու միջոցները, երրորդը դեռևս գտնվում էր ենթակայի դիրքում: Նա եթե անգամ ձեռք էր բերում սեփական հողային տարածքներ, միևնույնն է, հինռուսական բոյարը շարունակում էր իր գլխավոր եկամուտը ստանալ կառավարման պետական համակարգին մասնակցությունից:

Ռուսական Պրավդա: Արևելասլավոնական հասարակության իրավական ավանդական նորմերը՝ ձևավորված հեթանոսության շրջանում (այսինքն՝ սովորական սովորույթներով ձևավորված իրավունքը), անվանվում էր «Ռուսական Իրավունք»՝ այս դեպքում «правда» նշանակում էր «օրենք»: Մինչև XI դ. սկիզբը դրանք բանավոր էին, սակայն դեռևս 911 և 944 թթ. Օլեգի և Իգորի՝ Բյուզանդիայի հետ կնքած պայմանագրերում դրանք մասամբ արձանագրված էին: XI–XII դդ. սկզբում այդ նորմերը մի քանի անգամ համակարգվել և գրավոր կերպով հաստատագրվել էին: Իրավական նորմերի առաջին կարգավորումը անցկացվեց Յարոսլավ Վլադիմիրովիչի (1016–1018 թթ. և 1019–1054 թթ.) կողմից Կիևի գահին հաստատվելուց հետո: Օրենքների այդ հավաքածուն ընդունված է անվանել «Յարոսլավի օրենք» կամ «Հնագույն օրենք»: Նրանում հաստատված էին քրեական հանցագործությունների մի մասի՝ սպանության, անդամախեղության, ծեծի, անձնական ունեցվածքի գողության համար նախատեսված պատիժները: XI դ. երրորդ քառորդում Յարոսլավի որդիների՝ Իզյասլավի, Սվյատոսլավի և Վսեվոլոդի նախաձեռնությամբ ստեղծվեց նոր կոդեքս, այսպես կոչված «Յարոսլավիչների օրենք»:



Յարոսլավ Իմաստուն: Վերականգնումը՝ Մ.Մ. Գերասիմովի

Դրանում արտահայտված էին իշխանական մասնավոր սեփականության մասին նորմերը. հոդվածների մեծ մասը նվիրված էր իշխանի մարդկանց՝ նրա տնտեսությունը կառավարողների և նրանից կախված բնակչության, և իշխանական ունեցվածքի՝ ներառյալ հողերին տիրելու պաշտպանությանը: «Յարոսլավի օրենքը» և «Յարոսլավիչների օրենքը» հետագայում միավորեցին միասնական դատաստանագրքում, որը ընդունված է գիտության մեջ անվանել «Ռուսական օրենքի» կարճ խմբագրում»:

XII դ. սկզբին Վլադիմիր Մոնոմախի Կիևյան իշխանական տունն իշխանի նախաձեռնությամբ ձեռնարկեց իրավական նորմերի վերամշակում: Արդյունքում ի հայտ եկավ նախկինի համեմատությամբ նոր, զգալիորեն ավելի ընդլայնված օրենսգիրք, այսպես կոչված «Ռուսական օրենք՝ ընդարձակ խմբագրությամբ»: Սրանում արտացոլվեց բոյարական հողային սեփականության ստեղծումը, պարտքի դիմաց հողատիրոջից կախման մեջ գտնվող գյուղական բնակչության նոր տեսակի առաջացումը և այլն: Ըստ «Ընդարձակ օրենքի»՝ ռազմապետական վերնախավի բոլոր ներկայացուցիչները՝ իշխանական այրերը (բոյարները), իրենց սպանության դեպքում ժառանգները ստանում էին կրկնակի արյան գին (вира): Օրինակ, ազատ շարքային մարդու սպանության համար որպես արյան գին վճարվում էր 40 գրիվնա, իսկ բոյարի արյան գինը 80 գրիվնա էր: Երկար ժամանակ՝ մինչև XV դարը, «Ընդարձակ խմբագրությամբ ռուսական օրենքը» գլխավոր իրավական օրենսգիրքն էր:

§ 10. Ռուսական տարածքները XII դարի կեսերին և XIII դարի առաջին երրորդում

Քաղաքական մասնատման սկիզբը: XII հարյուրամյակում Ռուսիան մտավ քաղաքական զարգացման մի փուլ, որը նախահեղափոխական պատմագրության մեջ ընդունված էր անվանել ավատական-կալվածատիրական տեսակարար փուլ, իսկ խորհրդային շրջանում՝ ավատական մասնատման, բաժան-բաժան լինելու փուլ: Ըստ էության, այդ փուլում տեղի ունեցավ միասնական պետության բաժանումը ինքնուրույն քաղաքական միավորների: Գիտնականները այդ բաժանումներին տարբեր թվագրումներ են տվել՝ XI դ. երկրորդ կեսից մինչև XII դ. կեսերը: Սակայն պետության վերջնական անկումն ավելի շատ կապվում է 1132 թ. հետո եղած իրադարձությունների հետ, երբ մահացավ Կիևի իշխան Մստիսլավ Վլադիմիրովիչը՝ Վլադիմիր Մոնոմախի որդին: Սրա համար կան ծանրակշիռ հիմքեր: Իրոք, Մոնոմախի (1113–1125) և նրա որդի Մստիսլավի (1125–1132) կառավարման 20-ամյա շրջանում Կիևի իշխանությունը Ռուսիայի նկատմամբ բավականին ամուր էր, թեև Վլադիմիր Մոնոմախից և իր որդի Մստիսլավից առաջ կառավարող Սվյատոպոլկ Իզյասլավիչի (1093–1113 թթ.) օրոք պետությունը որոշ չափով թուլացել էր: Գավառների մեծ մասում՝ Նովգորոդում, Սմոլենսկում, Պերեյասլավլում, Վլադիմիր-Վոլինսկում, Տուրովում, Ռոստովում, իշխաններ էին Վլադիմիր Մոնոմախի որդիներն ու թոռները: Մյուս գավառները (մարզերը)՝ Չեռնիգով, Պերեմիշլ, Տերեբովլ մայրաքաղաքներով, ենթարկվում էին Կիևյան իշխաններին, իսկ Պոլոցկի իշխաններին նրանց անհնազանդության պատճառով Մստիսլավը

զրկեց գահից և աքսորեց Բյուզանդիա։ Մստիսլավ Վլադիմիրովիչի մահից հետո սկսվեց երկպառակությունների շրջանը, և իշխանական տների անջատումը կենտրոնից կատարվում էր ամբողջ թափով (տե՛ս Հավելվածը, քարտեզ հ.2)։

Մարզի՝ ինքնուրույն պետություն դառնալը կարելի էր որոշել նրանով, որ գահը փոխանցվում էր ժառանգաբար՝ առանց Կիևի իշխանների մասնակցության։ Փաստեր կան, որ այդպիսի պրակտիկա էր հաստատվել XII դ. երկրորդ կեսում։ Այսպես, երբ իշխան Վսեվոլոդ Օլեգովիչը 1127 թ. Չեռնիգովից վռնդեց իր հորեղբորը՝ Յարոսլավ Սվյատոսլավիչին, զայրացրեց Կիևի իշխան Մստիսլավ Վլադիմիրովիչին։ Ըստ որում՝ տարեգրի պատմածից պարզ է դառնում, որ Չեռնիգովում Յարոսլավի համաիշխան լինելը (1123 թ.) տեղի էր ունեցել Մստիսլավի և իր հոր՝ Վլադիմիր Մոնոմախի հավանությամբ։

Ավելի ուշ չեռնիգովյան իշխանական տունը կառավարելը դարձավ տեղի իշխանական ճյուղի ներքին գործը։

XII դ. Ռուսիայի քաղաքական զարգացման առանձնահատկությունների մասին կարելի է դատել այդ ժամանակաշրջանին բնորոշ եզրույթներով և հասկացություններով։ Առավել նկատելի փոփոխությունը «հող» (земля) եզրույթի՝ ոչ միայն Ռուսիայի ողջ տարածքը (Русская земля) բնորոշելու նպատակով կիրառությունն էր, այլև վերաբերում էր երկրի առանձին մարզերին, տարածաշրջաններին։ Քաղաքական այն կազմավորումները, որոնք պատմագրության մեջ XII–XIII դդ. ռուսական իշխանական տներն էին, անվանվում էին «հող» եզրույթով։

Ռուսական հողը XII դարում և XIII դարի սկզբներին։ Ռուսիայի տարածքում XII դարում կային 12 առանձին հողատարածքներ՝ Կիևյան, Պերեսլյավսկյան, Չեռնիգովյան, Վոլինյան, Գալիցկյան, Սմոլենսկյան, Սուզդալյան, Նովգորոդյան, Պոլոցկյան, Ռյազանյան, Մուրոմսկյան և Պինսկյան (XII դարում այդ հողի կենտրոնը Տուրովն էր, բայց «Տուրովյան հող» անվանումը աղբյուրներում չի հանդիպում, իսկ XIII դ. առաջին կեսում Պինսկն էր)։ Հաճախ լրիվ անվանման փոխարեն կիրառում էին գահանիստ քաղաքի անունը (Նովգորոդ, Սուզդալ ևն)՝ հասկանալով տվյալ հողերի ամբողջ տարածքը։

Գրականության մեջ և քարտեզներում հաճախ հանդիպում է «Գալիցկո-Վոլինսկյան հող» հասկացությունը. XII դ. այդպիսի անվանումով հող գոյություն չուներ։ Կային Գալիցկյան և Վոլինսկյան հողեր՝ իշխանական տարբեր դինաստիաներով. դրանց միավորումը տեղի ունեցավ XIII դ. կեսերին։

Գրականության մեջ ամրագրված «Վլադիմիր–Սուզդալյան» իշխանական տունը կամ «Վլադիմիր–Սուզդալյան հողերը» պատմական իրականության մեջ չեն եղել։ XI Ռուսիայի հյուսիս–արևելյան մարզի մայրաքաղաքը Ռոստովն էր։ Ապա XII դ. սկզբներին առաջին իսկ ինքնուրույն իշխանի՝ Յուրի Վլադիմիրովիչ Դոլգորուկիի ժամանակ աթոռանիստ քաղաք դարձավ Սուզդալը։

Այդ պատճառով էլ Յուրիի և նրա սերունդների կալվածքները ամրագրվեցին որպես «Սուզդալյան հող» (հազվադեպ են այդ կալվածքները անվանվել հին մայրաքաղաքի անունով, որը մնաց տեղի թեմական կենտրոն՝ «Ռոստովյան հող»)։



Անդրեյ Բոգոլյուբսկի։ Վերականգնումը՝ Մ.Մ. Գերասիմովի

Յուրիի որդի Անդրեյ Բոգոլյուբսկին մի անգամ էլ տեղափոխեց մայրաքաղաքը, այս անգամ՝ Կլյազմայի Վլադիմիր, բայց «Վլադիմիրյան հող» անվանումը դրանից հետո պատմագրության մեջ չի հանդիպել։

Հողերը ձևավորվում էին խոշոր գավառներին (մարզերին) հաջորդած ժամանակահատվածում՝ XI–XII դդ.։ Հակառակ տարածված կարծիքի՝ այդ հողերը չէին կրկնում մինչպետական հանրույթների (IX–X դդ.) սահմանները։ Այսպես՝ Չեռնիգովյան հողն իր մեջ ներառել էր հյուսիսցիների նախկին տարածքների մեծ մասը, ռադիմիչների և վյատիչների տարածքների որոշ մասերը. կրիվիչների տարածքում երկու՝ Սմոլենսկյան և Պոլոցկյան հողերն էին։ Ըստ ոմանց՝ սրանցից Սմոլենսկյանը ներառել էր ռադիմիչների և վյատիչների հողերի մի մասը, իսկ Պոլոցկյանը՝ դրեգովիչների տարածքի մի հատվածը։ Խոշոր գավառները վերանվանվեցին հողեր, իսկ գավառ հասկացությունը ավելի հաճախ սկսեց նշանակել այս կամ այն իշխանի հողերի մաս։

Անցումը քաղաքական մասնատվածության հետընթաց չէր, հասարակության զարգացման մեջ հետքայլ չէր։ Գլխավոր պատճառը Ռուսիայի տարածաշրջանային կենտրոնների ուժեղացումն էր։ Խոշոր գավառներում՝ միասնական պետության բաղկացուցիչ հատվածներում, X դարի վերջից մինչև XII դարի սկիզբը տեղի էին ունեցել բնակչության աճ, քաղաքների ամրացում, իշխանների և բոյարների սեփական կալվածքների ձևավորում։ Իշխաններն արդեն ոչ այնքան ձգտում էին մի գահից մյուսին՝ ավելի բարձրին անցումը, ինչը տիպական էր XI դարում, որքան ամրապնդել սեփական և ժառանգների իշխանությունը իրենց ունեցած գավառի նկատմամբ։ Նրանց շուրջը ձևավորվում էր տեղական բոյարների և կրտսեր ջոկատայինների խավը, որը նույնպես ամուր կերպով կապված էր տվյալ գավառին՝ չցանկանալով այն թողնել և չզգալով կենտրոնական իշխանության աջակցության կարիքը։ Արդյունքում գավառներում ամրապնդվում էր դինաստիական որոշակի գիծ՝ Ռյուրիկովիչների իշխանական ճյուղը։


Բոլորից վաղ դինաստիական ժառանգականության իրավունքն ընդունելով՝ կենտրոնից անջատվեց Պոլոցկյան գավառը. դեռևս X դարի վերջին այն Վլադիմիր Սվյատոսլավիչի կողմից հանձնվել էր իր որդուն՝ Իզյասլավին, և ամրացվել էր նրա սերունդներին։ Մստիսլավ Վլադիմիրովիչի՝ Պոլոցկյան իշխաններին դինաստիական ժառանգությունից զրկելը երկար չտևեց։ Նրա մահից հետո Պոլոցկյան իշխանները վերադարձան տարագրությունից և վերադարձրին իրենց կալվածքները։

Գալիցկյան հողը ամրապնդվեց Պերեմիշլ և Տերեբովլ կենտրոններով գավառների միավորումից հետո՝ Յարոսլավ Վլադիմիրովիչի թոռան՝ Ռոստիսլավ Վլադիմիրովիչի որդիների կառավարման օրոք (XI դարի վերջ և XII դարասկիզբ)։

XII դ. սկզբում Վլադիմիր Մոնոմախի որդի Յուրի Դոլգորուկին Ռոստովի հողերը Սուզդալյան հողերից անջատելու սկիզբը դրեց։ Սուզդալյան հողը սկսեցին կառավարել նրա հետնորդները։ 1127 թ. տեղի ունեցավ Յարոսլավի որդի Սվյատոսլավ Յարոսլավիչի կալվածքի բաժանումը իր ժառանգներին։ Մեծ մասը՝ Չեռնիգով կենտրոնով, հասավ Օլեգ և Դավիդ Սվյատոսլավիչների սերնդին, և փոքր մասը՝ Մուրոմ կենտրոնով, մնաց իրեն։ Վերջինս հետագայում ևս բաժանվեց երկու մասի՝ Մուրոմյան և Ռյազանյան՝ դառնալով Յարոսլավ Սվյատոսլավիչի տարբեր ճյուղերի սերունդների կալվածքները։ Սմոլենսկյան հողը ժառանգաբար պետք է անցներ Վլադիմիր Մոնոմախի թոռան՝ Ռոստիսլավ Մստիսլավիչի (Սմոլենսկում համիշխան է եղել 1120-ական թվականներին) սերունդներին։

Վոլինյան հողերում, XII դարի կեսերից սկսած, իշխում էին Վլադիմիր Մոնոմախի մյուս թոռան՝ Իզյասլավ Մստիսլավիչի ժառանգները։ Տարածքի գլխավոր գահակալը Վլադիմիր Վոլինսկին էր։ XII դարի երկրորդ կեսին Սվյատոպոլկ Իզյասլավիչի (մահացել է 1113 թ.) հետնորդները հաստատվեցին Տուրովյան գավառում, որը XIII դարում հայտնի էր որպես «Պինսկյան հող»՝ իր նոր մայրաքաղաքով։

Թվարկված հողերի համեմատությամբ առանձնահատուկ կարգավիճակ ունեին Կիևյան և Նովգորոդյան հողերը։ Կիևի գահը շարունակում էր ընկալվել որպես ավագ իշխանություն՝ պահպանելով «հնի» և «առաջնորդի» բնորոշումը, իսկ Կիև քաղաքը՝ համարվել ողջ Ռուսիայի մայրաքաղաք։ Գերիշխող տեսակետը, համաձայն որի՝ Կիևը կորցրել է իր քաղաքական նշանակությունը 1169 թվականին՝ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու գլխավորած սուզդալյան կոալիցիայի կողմից գրավվելուց հետո, իրականությանը չի համապատասխանում։ Կիևի՝ համառուսական մայրաքաղաքի կարգավիճակը պահպանվել է մինչև Բաթու խանի արշավանքը։ Կիևի իշխաններն ունեին բացառիկ իրավունք՝ կրել «ողջ Ռուսիայի իշխան» տիտղոսը, ինչը նրանց դարձնում էր բարձրագույն իշխանության խորհրդանիշ։ Այս հանգամանքը Կիևյան գահի նկատմամբ ձևավորել էր լայն հավակնություններ տարբեր իշխանական տների շրջանում, ինչը հաճախ հանգեցնում էր դաժան հակամարտությունների։ Ժամանակի ընթացքում Կիևյան հողը սկսեց ընկալվել որպես կոլեկտիվ տիրապետության օբյեկտ. ազդեցիկ իշխանական տոհմերը ձգտում էին ոչ միայն վերահսկել Կիևը, այլև տնօրինել նրա ենթակայության ներքո գտնվող քաղաքների կառավարումը։



Աստվածածնի (աշնան տոնի) եկեղեցին Ներլիում

Ինչ վերաբերում է Նովգորոդի հողերին, ապա XII դարում տեղի բոյարական դասի զգալի ուժեղացումը վճռորոշ ազդեցություն ունեցավ իշխանների ընտրության գործընթացի վրա։ Արդյունքում՝ որևէ իշխանական տոհմ չկարողացավ կայուն կերպով ամրապնդվել Նովգորոդում։ Այստեղ ձևավորվեց Ռուսիայում եզակի պետական կառավարման մոդել, որի պայմաններում իրական իշխանությունը պատկանում էր ոչ թե հրավիրված իշխաններին, այլ քաղաքային համայնքին՝ բոյարության ղեկավարությամբ։ Նովգորոդի բարձրագույն պաշտոնական դեմքերը եղել են ընտրված փոխիշխանը, XII դ. վերջից՝ նաև հազարապետը, որը հանդես էր գալիս որպես ռազմական և վարչական հեղինակություն։ Նշանակալից դեր ուներ նաև եկեղեցու ղեկավարը՝ Նովգորոդի արքեպիսկոպոսը, որի ազդեցությունը առկա էր թե՛ կրոնական, թե՛ հասարակական ոլորտներում։ Նովգորոդի իշխանության ենթակայության տակ էին գտնվում լայնածավալ հողեր։ Նովգորոդը հարկեր էր վերցնում հյուսիսում բնակվող ուգրո-ֆիննական ժողովուրդներից, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի հյուսիս-արևելյան և անգամ Ուրալ գետից այն կողմ՝ արևելքում, ապրող յուգրաներից (խանտերի և մանսիների նախնիներից)։ Նովգորոդը առևտրային լայն կապեր էր հաստատել, որոնք ձգվում էին Բալթիկայով դեպի Սկանդինավյան երկրներ և Հյուսիսային Գերմանիա։

Կիևյան իշխանական տանը չհաջողվեց վերահսկողություն հաստատել նաև Պերեյասլավսկի հողերի վրա՝ կենտրոնացված Պերեյասլավլ քաղաքի շուրջ, որը գտնվում էր Կիևից հարավ-արևելք։

XII դարում այս տարածքը գտնվում էր Վլադիմիր Մոնոմախի տարբեր ճյուղերի ժառանգների հսկողության ներքո։ Բաթու խանի արշավանքի նախօրեին Պերեյասլավսկի հողերը, որոնք այդ ժամանակ արդեն կորցրել էին իրենց նախկին կարևորությունը, վերահսկվում էին Մոնոմախովիչների սուզդալյան ճյուղերի իշխանների կողմից։

Չնայած վարչական կամ քաղաքական առումով բաժանմանը՝ ամբողջությամբ պահպանվեցին ինչպես «Ռուսիա», այնպես էլ «Ռուսական հող» հասկացությունները՝ անգամ ինքնուրույն ճանաչված հողերի դեպքում։ Միևնույն ժամանակ՝ այս երկու հասկացությունները ձեռք բերեցին երկրորդ՝ ավելի նեղ, սահմանափակ իմաստ, որով անվանվում էին միջինդնեպրյան տարածքները, որոնք ընդգրկում էին Կիևյան, Պերեյասլավսկյան հողերն ու Չեռնիգովյան շրջանի մի մասը։

Հողերը, այսինքն՝ իշխանական տոհմերը, համեմատաբար կայուն քաղաքական կազմավորումներ են համարվել։ Երբ խոսվում է մշտական պառակտիչ պատերազմների մասին, դա չի նշանակում, որ իշխանների նպատակը եղել է ամեն ինչ նվաճելը։ Մինչմոնղոլական շրջանում բացառիկ դեպքեր են եղել, երբ




Կամուրջ, կառույց Նովգորոդում՝ գտնված XX դ. հնագետների կողմից։

իշխանները իրենց սահմաններից դուրս՝ այլ իշխանական ճյուղերի վերահսկողության ներքո գտնվող հողերում, խախտել են մայրաքաղաքների խաղաղությունը: Օրինակ՝ 1216 թվականին՝ Լիպեցկյան ճակատամարտում, Սմոլենսկյան ճյուղի Նովգորոդի իշխանը՝ Մստիսլավ Մստիսլավովիչը, ջախջախեց Վլադիմիրյան իշխաններ Յուրի Վսեվոլոդովիչին և նրա եղբոր՝ Յարոսլավի ուժերը և որոշեց Վլադիմիրյան գահի ճակատագիրը: Սակայն ինքն անձամբ գահին չնստեց, քանի որ դրա իրավունքը չուներ, փոխարենը գահ բարձրացրեց Յուրիի և Յարոսլավի երրորդ եղբորը՝ Կոնստանտին Վսեվոլոդովիչին, որը Մստիսլավի դաշնակիցն էր:

Միայն փոքր հողերի (Պոլոցկյան, Ռյազանյան) նկատմամբ եղել են դեպքեր, երբ ուժեղ հարևանները փորձում էին դրանցում գլխավոր նշանակել իրենց ազգականներին: Պառակտիչ պատերազմները տեղի էին ունենում նախ՝ հանուն «համառուսական» որոշակի ճյուղերին չպատկանող գահերի (Կիև, Նովգորոդ, XIII դ. սկիզբ՝ Գալիչ), երկրորդ՝ գավառների ներսում հողերի վերաբաշխման նպատակով՝ տարբեր ճյուղերի իշխանների միջև, երրորդ՝ հողերի միջև եղած սահմանների շուրջ հակամարտությունների ձևով:

XIII դարի սկզբին Ռուսիայում հստակորեն ձևավորվել էին իշխանական չորս ուժեղ տոհմային ճյուղեր, որոնք համապատասխանում էին Ռյուրիկովիչների չորս սերունդներին: Դրանք էին՝ Չեռնիգովյան ճյուղը (Օլեգ Սվյատոսլավիչի սերունդը), Սմոլենսկյան ճյուղը (Ռոստիսլավ Մստիսլավիչի ժառանգները), Սուզդալյան ճյուղը (Յուրի Վլադիմիրովիչ Դոլգորուկիի սերունդը) և Վոլինյան ճյուղը (Իզյասլավ Մստիսլավիչի հետնորդները): Այս չորս իշխանական տների միջև ընթացող պայքարը կենտրոնացած էր այն գահերի շուրջ, որոնք չէին ամրագրվել որևէ կոնկրետ տոհմի կողմից: Դրանք էին Կիևի, Նովգորոդի և Գալիչի գահերը: Վերջիններս 1199 թվականից ի վեր զրկված էին տեղական կայուն իշխանական դինաստիաներից: Գալիչի համար մղվող պայքարը հատկապես բարդացել էր արտաքին միջամտությունների հետևանքով՝ հիմնականում արևմտյան հարևանների՝ Հունգարիայի և Լեհաստանի կողմից: Այդ պայքարը հատկապես դաժան բնույթ էր կրում Հարավային Ռուսիայում 1230-ական թթ.: Այդ ժամանակաշրջանում սկսվեց երկարատև պատերազմ Կիևի և Գալիչի իշխանության համար: Պայքարին հիմնականում մասնակցում էին Վոլինյան, Սմոլենսկյան և Չեռնիգովյան իշխանները:



Իշխանական սաղավարտ՝ գտնված մարտադաշտի տարածքում՝ Լիպիցե գետի մոտ

Պատմագիտական գրականության մեջ տարածված այն կարծիքը, թե XII դարի կեսերից Ռուսիայի քաղաքական կենտրոնը տեղափոխվել էր Կիևից հյուսիս-արևելք՝

դեպի Սուզդալյան հող, և որ Կյազմայի Վլադիմիրը սկսել էր զբաղեցնել Կիևի տեղը՝ որպես համառուսական գլխավոր քաղաք, իրականությանը լիովին չի համապատասխանում: Վլադիմիրը համառուսական մայրաքաղաքի կարգավիճակ է ստանում միայն XIII դարի երկրորդ կեսին: Սուզդալյան հողերի կառավարիչ Յուրի Դոլգորուկիի որդի Վսեվոլոդ Մեծ Բույնը (1177–1212 թթ.) կրում էր «մեծ իշխան» տիտղոսը, սակայն նրա քաղաքական հավակնությունները սահմանափակվում էին Սուզդալյան հողերով և չէին գերազանցում դրանց սահմանները: Նրա ամբողջական տիտղոսն էր՝ «Սուզդալյան մեծ իշխան», ինչը նշանակում էր, որ նա համարվում էր տվյալ հողի գերագույն իշխան, բայց ոչ ամբողջ Ռուսիայի առաջնորդ:

XII դարի երկրորդ կեսին և XIII դարի սկզբին հինռուսական վերնախավի (էլիտայի) կառուցվածքում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Այս ժամանակահատվածում շրջանառության մեջ մտավ նոր հասկացություն՝ «իշխանական արքունիք» (княжий двор), որը XIII դարի ընթացքում աստիճանաբար դուրս մղեց ավելի հին՝ «ջոկատ» (дружина) եզրույթը: Վերջինս դադարեց գործածվել որպես զինապարտ ծառայող դասի ընդհանրական անվանում: Ռուսերեն «двор» եզրույթը գործածվում էր երկու հիմնական իմաստով: Լայն իմաստով այն ընդգրկում էր իշխանի ենթակայության զինապարտների ամբողջությունը՝ ներառյալ բոյարներին, մինչդեռ նեղ իմաստով այն վերաբերում էր միայն այն խմբին, որը մշտապես գտնվում էր իշխանի շրջապատում և կազմում էր արքունիքը: Նեղ իմաստով արքունիքի անդամները կոչվում էին ազնվականներ (дворяне) կամ սպասավորներ (слуги): Ջոկատը արքունիքով փոխարինելու գործընթացը պայմանավորված էր, նախ և առաջ, բոյարական հողատիրության զարգացմամբ: Այն թուլացրեց բոյարների՝ որպես ջոկատային վերնախավի, անձնական կապը իշխանի հետ: Բոյարները սկսեցին ծառայել առավելապես այն իշխաններին, որոնք կառավարում էին իրենց սեփական տարածքներին մոտ գտնվող քաղաքներում: Նրանք այլևս չէին տեղափոխվում իշխանի հետ գավառից գավառ՝ ինչպես նախորդ դարերում էր ընդունված: Բոյարների և իշխանի միջև կապի թուլացումն ի վերջո հանգեցրեց ջոկատի՝ որպես միասնական իշխանական ծառայողական կառուցվածքի՝ աստիճանական վերացմանը:

§ 11. Արտաքին քաղաքականությունը և միջազգային կապերը

Միասնական Ռուսիայի ժամանակաշրջանը: XI–XII դարերում Ռուսիան Եվրոպայի խոշորագույն և ամենազարգացած պետություններից մեկն էր: Ինչպես պետական կազմավորման սկզբնական շրջանում, այս ժամանակահատվածում ևս նրա արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններն էին Բյուզանդական կայսրության և Հյուսիսային Մերձսևծովի քոչվոր ցեղերի հետ հարաբերությունների կարգավորումը: Միաժամանակ ձևավորվեցին բազմաբնույթ կապեր արևմտյան հարևանների՝ Լեհաստանի, Չեխիայի, Հունգարիայի, Գերմանիայի և Սկանդինավյան երկրների հետ:

Այս հարաբերությունները ներառում էին ինչպես ակտիվ առևտրատնտեսական կապեր, այնպես էլ ռազմաքաղաքական դաշինքներ և դինաստիական ամուսնություններ, որոնք նպաստում էին Ռուսիայի ինտեգրմանը միջնադարյան եվրոպական քաղաքական համակարգին: Կիևյան Ռուսիայի միջազգային հարաբերությունների ցանցը տեսանելի է հատկապես Յարոսլավ Վլադիմիրովիչի և Վլադիմիր Մոնոմախի ընտանիքների օրինակով: Յարոսլավ Մունրին ամուսնացած էր Շվեդիայի արքայադստեր հետ: Նրա քույրը ամուսնացել էր Լեհաստանի տիրակալի հետ: Յարոսլավի որդիներից Իզյասլավը ամուսնացել էր Լեհաստանի արքայադստեր, Սվյատոսլավը՝ Գերմանիայի, իսկ Վսեվոլոդը՝ Բյուզանդիայի կայսր Կոնստանտին Մոնոմախի դստեր հետ: Նրա դուստրերից Անաստասիան դարձել էր Հունգարիայի թագավորի կինը, Ելիզավետան՝ Նորվեգիայի արքայի, իսկ Աննան Ֆրանսիայի թագուհին էր: Վլադիմիր Մոնոմախը ամուսնացած էր անգլոսաքսոնական Անգլիայի վերջին թագավոր Հարոլդի դստեր հետ: Նրա քույրը ամուսնացել էր Սրբազան Հռոմեական կայսրության արքա Հենրիխ IV-ի հետ: Ավագ որդի Մստիսլավը ամուսնացած էր Շվեդիայի թագավորի դստեր, իսկ կրտսեր որդիներից Յուրի Դոլգորուկին՝ պոլովցի իշխանի դստեր հետ: Մոնոմախի դուստրերից մեկը ամուսնացել էր Հունգարիայի թագավորի հետ, իսկ մյուսը բյուզանդական գահին հավակնող ազդեցիկ ազնվականի կին էր:

Քրիստոնեության ընդունումից հետո Բյուզանդիայի հետ հարաբերությունները թեև գլխավորապես խաղաղ բնույթի էին, այնուամենայնիվ երկու պատերազմ է եղել. 1043 թ. Յարոսլավի ավագ որդու՝ Վլադիմիրի գլխավորությամբ զորքը արշավել է Կոստանդնուպոլիս, և 1116 թ. Դանուբի մոտ կայսրության դեմ պատերազմել է Վլադիմիր Մոնոմախը՝ ձգտելով Բյուզանդիայի գահին նստեցնել մի ինքնակոչի՝ իր փեսային:

Ռուսիայի հարավային սահմանների նկատմամբ դեռևս լուրջ վտանգ էին ներկայացնում Հյուսիսային Մերձսևծովյա տափաստանների քոչվորները: XI դ. առաջին կեսին այս տարածքում շարունակում էին իշխել պեչենեգները: 1036 թ. Յարոսլավին հաջողվեց Կիևի մատույցներում խոշոր պարտության մատնել պեչենեգներին: Դրանից հետո Հյուսիսային Մերձսևծովյան տափաստաններից նրանց դուրս մղեցին մեկ այլ թյուրքալեզու քոչվորներ՝ թուրքերը, սակայն սրանց էլ անմիջապես ջախջախել և դուրս են մղել պոլովցիները (կիպչակները): Այդ ժամանակից սկսած՝ մինչև մոնղոլական արշավանքները նրանք դարձան Արևելյան Եվրոպայի տափաստանների տերերը: Պոլովցիների հետ ռուս իշխանների հարաբերությունները առանձնանում էին բազմակողմանիությամբ: Հաճախ էր լինում, որ նրանք պատերազմներում ռազմական միություն էին կազմում պոլովցիների հետ, անգամ երկպառակիչ պատերազմներում, երբ մի իշխանը մյուսի դեմ կռվում որպես դաշնակից՝ ներգրավում էր պոլովցիներին: Շատ տարածված են եղել ռուս իշխանների ամուսնությունները պոլովցի իշխանուհիների հետ: Եվ այդուհանդերձ, հատկապես XI դարի երկրորդ կեսին պոլովցիները՝ որպես ինքնուրույն ուժ, հաճախ էին արշավում Ռուսաստանի դեմ:

Մասնատվածության դարաշրջանը: Ռուսիան առանձին հողերի մասնատելուց հետո իշխաններից ուժեղագույնները սկսեցին վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Բալթիկ ծով ելք ունենալու շնորհիվ Նովգորոդի իշխանը ինչպես



Վսեվոլոդ Մեծ Բույնը:
Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

դիվանագիտական, այնպես էլ առևտրային ամուր կապեր ուներ Սկանդինավյան երկրների և Հյուսիսային Գերմանիայի քաղաքների հետ, Սուզդալյան իշխանական տունը կապեր ուներ ամենամոտ հարևանի՝ Վոլգյան Բուլղարիայի հետ: Խաղաղ հարաբերությունների միջակայքերում տեղի էին ունենում ռազմական բախումներ: 1164 թ. Սուզդալյան իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին (1157–1174 թթ.) կազմակերպեց լայնածավալ արշավանք դեպի Վոլգյան Բուլղարիա, իսկ 1183 թվականին նրա որդին՝ Վսեվոլոդ Մեծ Բույնը, զորք ուղարկեց դեպի հարավ-արևմուտք՝ Գալիցկյան և Վոլինյան հողեր, որոնք դիվանագիտական և առևտրատնտեսական սերտ կապեր էին պահպանում Հունգարիայի և Լեհաստանի հետ: Այս ժամանակաշրջանում՝ սկսած XI դարից մինչև XIII դարի սկիզբը, «համառուսական» արտաքին քաղաքականություն՝ որպես այդպիսին, փաստացի գոյություն չի ունեցել: Տարբեր իշխանություններ գործում էին ինքնուրույն՝ ելնելով իրենց տարածաշրջանային շահերից ու քաղաքական նպատակադրումից:

Ռուսիայի արտաքին քաղաքականության մեջ, ինչպես և նախորդ ժամանակաշրջաններում, առաջնային կարևորություն ունեին հարավռուսական՝ Կիևյան, Չեռնիգովյան, Պերեսլավլյան, Գալիցկյան և Վոլինյան իշխանական տների՝ պոլովցիների հետ հարաբերությունները: Վլադիմիր Մոնոմախի և նրա որդու՝ Մստիսլավի (1113–1132 թթ.) կառավարման օրոք պոլովցիները, որոնց ռազմական հարվածները զգալիորեն թուլացել էին, գրեթե չէին անհանգստացնում Ռուսական պետությանը: Այնուհանդերձ, Ռուսաստանի հողերի մասնատվածության ժամանակաշրջանում, որը ուղեկցվում էր իշխանների միջև պառակտչական պատերազմներով, պոլովցիների ասպատակությունները կրկին սկսեցին հաճախանալ: Նրանք հարձակվում էին թե՛ ինքնուրույն և թե՛ որոշ ռուս իշխանների հետ դաշնակցած: Հարձակումների երկու ձևերն էլ՝ առանձին և համատեղ՝ հաճախ պատճառում էին զգալի վնաս հարավռուսական հողերին, ավերում և սնանկացնում էին տեղական իշխանական տները:

Հակամարտությունը Հարավային Ռուսիայի և պոլովցիների միջև հատկապես սուր բնույթ ստացավ 1170–1180 թթ.: Այդ ժամանակ պոլովցիները ստեղծել էին երկու խոշոր միավորումներ՝ Կոբյակ և Կոնչակ խաների գլխավորությամբ: Քոչվորների ասպատակություններին ի պատասխան՝ Կիևի իշխան Սվյատոսլավ Վսեվոլոդիչը (չեռնիգովյան Օլգովիչների սերնդից) և իր հետ համիշխան Ռյուրիկ Ռոստիսլավիչը (սմոլենսկյան Ռոստիսլավիչների սերնդից) կազմակերպեցին մի շարք արշավանքներ դեպի տափաստան: Դրանցից ամենախոշորը եղավ 1184 թ. արշավանքը, որի ժամանակ

խան Կոբյակը գերեվարվեց: Սակայն սերունդներին է փոխանցվել և առավել հայտնի դարձել 1185 թվականին իրականացված չհաջողված արշավանք, որը կազմակերպել էր չեռնիգովյան իշխաններից մեկը՝ Իգոր Սվյատոսլավիչ Նովգորոդ-Սևերսկին: Այդ արշավանքը նշանավորվեց իրենց բնույթով եզակի մի քանի իրադարձություններով՝ արևի խավարումով, տափաստանում ամբողջ զորքի ոչնչացմամբ, Իգորի և ևս երեք իշխանների գերեվարությամբ, Իգորի՝ գերությունից փախուստով: Հենց այդ փախուստի շնորհիվ՝ նա մեծ տպավորություն թողեց իր ժամանակակիցների վրա. ստեղծվեցին երկու տարեգրային պատմվածքներ և «Ասք Իգորի գնդի մասին» նշանավոր պոեմը:

XII դ. պահպանվել էին Ռուսիայի կապերը Բյուզանդական կայսրության հետ: Գլխավորապես դրանք եկեղեցու գործերին առնչվող շփումներ էին. ռուսական մետրոպոլիան շարունակում էր մնալ Կոնստանդնուպոլսի պատրիարքության նշանակալից և բաղկացուցիչ մասը: XII դ. գրեթե բոլոր մետրոպոլիտները ծագումով հույներ էին: Բացի այդ՝ պահպանվել էին նաև դինաստիական կապերը, ընդ որում՝ ոչ միայն ռուս իշխաններն էին կնության վերցնում բյուզանդական ազնվական գերդաստանների աղջիկներին, այլև ռուս իշխանական գերդաստանների աղջիկներն էին ամուսնանում և Բյուզանդիա գնում: Այսպես, Մստիսլավ Վլադիմիրովիչի դուստրը Կայսր Իոան Կոմնինի եղբոր կինն էր:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ հին քաղաքակրթություններ են գոյություն ունեցել ժամանակակից Ռուսաստանի տարածքում, և ինչպե՞ս են դրանք փոխազդել միմյանց վրա:
2. Ինչպե՞ս տեղի ունեցավ սլավոնների սփռումը Արևելյան Եվրոպայի տարածքում: Վերաբնակեցումների վրա ինչպիսի՞ գործոններ էին ազդում: Քաղաքական զարգացման ո՞ր աստիճանում էին գտնվում սլավոնական մինչպետական հանրույթները VI–IX դդ:
3. Տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից օգտվելով՝ «Պատմություն ժամանակի և տարիների մասին», դրա ստեղծման և բովանդակության մասին հաղորդում պատրաստե՛ք:
4. Ինչպե՞ս կազմավորվեց Ռուսիա պետությունը: Այդ մասին պատմական ինչպիսի՞ աղբյուրներ են հիշատակում:
5. Տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից օգտվելով՝ պատրաստե՛ք զեկուցում Ռուսաստանի պատմագրության մեջ «վարյագների հարցի», այսինքն՝ նորմանական տեսության շուրջ բանավեճ սկսելու մասին:
6. Թվարկե՛ք այն հիմնական իրադարձությունները, որոնք կապված են Ռուսիայի՝ քրիստոնեություն ընդունելու հետ: Պատմական ինչպիսի՞ նշանակություն ունեցավ Ռուսիայի մկրտությունը:

7. Պատմե՛ք այն քոչվոր ժողովուրդների մասին, որոնք ապրում էին Ռուսիայի հարավային սահմանների մոտ: Ինչպիսի՞ առավել կարևոր իրադարձություններ են կապված քոչվորներին հակազդելու հետ:
8. Ինչպիսի՞ն էր Ռուսիայի տարածաքաղաքական կառուցվածքը: Երկրում ո՞ր քաղաքներն էին առավել կարևոր համարվում:
9. Պատմե՛ք Ռուսիայի հասարակության մասին: Տվե՛ք սոցիալական հիմնական շերտերի բնութագիրը: Ինչպիսի՞ տարբերություններ կային սպասավորների (люди), ռամիկների (смерды) և ճորտերի (холопы) միջև:
10. Ինչո՞ւ է համաշխարհային պատմության մեջ Բյուզանդիան անվանվում խոշոր քաղաքակրթություններից մեկը: Ինչպե՞ս էին զարգանում Ռուսիայի և Բյուզանդիայի միջև հարաբերությունները:
11. Պատմե՛ք Ռուսիա պետության տարբեր անվանումների մասին: Ռուսիայի բնակիչների կողմից այդ անվանումներից որո՞նք էին գործածական, և որո՞նք հետագայում գիտական աշխատություններում կիրառվեցին որպես Ռուսիայի անվանումներ: Ի՞նչ է իշխանական մարզը (волость):
12. Ի՞նչ հողերի բաժանվեց Ռուսիան: Պատմե՛ք Կիևյան և Նովգորոդյան հողերի առանձնահատկությունների մասին:

ԳԼՈՒԽ 3. ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՂԵՐԸ XIII–XV ԴԴ. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

§ 12. Մոնղոլական արշավանքը և Ոսկե Հորդայի ստեղծումը

Մոնղոլական արշավանքների սկիզբը: XIII դարի սկզբին Կենտրոնական Ասիայի տափաստաններում մոնղոլ և թյուրքալեզու ցեղերը միավորվելով ստեղծեցին ուժեղ, ռազմականացված պետություն: Այն գլխավորեց Թեմուչժինը, որը վերցրեց Չինգիզ խան անուն-տիտղոսը: Մոնղոլական պետությունը սկսեց զավթել հարևանների տարածքները: XIII դարի առաջին քառորդում նրանք իրենց ենթարկեցրին Հարավային Սիբիրը, Հյուսիսային Չինաստանը, Տիբեթը, Միջին Ասիան և Իրանը:

1223 թ. տեղի ունեցավ ռուս իշխանների առաջին բախումը մոնղոլների հետ: Չինգիզ խանի ռազմիկներից մի խոշոր խումբ, որը գտնվում էր Միջին Ասիայում, հարավից շրջանցեց Կասպից ծովը, ջախջախեց անդրկովկասյան պետություններին (Հայաստան, Վրաստան) և հյուսիսկովկասյան ալաններին, դուրս եկավ Մերձազովի տափաստաններ և պարտության մատնեց պոլովցիներին: Օգնության խնդրանքով պոլովցիները դիմեցին ռուս իշխաններին, որոնք արձագանքեցին նրանց խնդրանքին: Ստեղծվեց հարավռուսական իշխանների ռազմիկներից կազմված զորք, որը Կիևի իշխան Մստիսլավ Ռոմանովիչի, Չեռնիգովի իշխան Մստիսլավ Սվյատոսլավիչի և գալիցկյան իշխան Մստիսլավ Մստիսլավիչի գլխավորությամբ արշավեց դեպի տափաստան: Սակայն հենց մարտերը սկսվեցին, զորքի կազմակերպվածությանը փոխարինեց անջատողականությունը, որի արդյունքում Կալկե գետի ափին ռուսական զորքը և նրա դաշնակից պոլովցիները ջախջախվեցին: Մոնղոլների զորքը, հետապնդելով նահանջողներին, հասավ Հարավային Ռուսիայի սահմաններին, բայց հետո շրջվեց դեպի տափաստան և գնաց արևելք՝ դեպի Վոլգա: Այդ ժամանակ մոնղոլների պլաններում դեպի Ռուսիա լայնածավալ արշավանք չկար:

Հաջորդ տարիներին մոնղոլներն ավարտեցին Միջին Ասիայի և Արևմտյան Իրանի զավթումը. նրանց տիրապետությանն անցան Վոլգայից արևելք գտնվող տափաստանները: 1235 թ. Չինգիզ խանի ժառանգորդները (1227 թ. արդեն մոնղոլական կայսրության հիմնադիրը մահացել էր) կուրուլտայում (համագումարում) որոշում էին կայացրել արշավելու դեպի Արևմուտք՝ Եվրոպան զավթելու նպատակով: Միացյալ զորքերի հրամանատար էր նշանակվել Բաթու խանը՝ Չինգիզ խանի թոռը:

Արշավ դեպի Ռուսիա: Զավթիչների առաջին զոհը դարձավ Վոլգյան Բուլղարիան. այն ջախջախվեց 1236 թ.: 1237 թ. վերջերին Բաթու խանի զորքը մոտեցել էր Ռուսիայի սահմաններին: Մոնղոլները առաջին հարվածը հասցրին հյուսիսարևելյան ռուսական հողերին: Սկզբում ընկավ Ռյազանի իշխանական տունը, իսկ հետո՝ 1238 թ. սկզբին, Բաթուն գրավեց Սուզդալյան հողերը: Այստեղ նա հանդիպեց համառ դիմադրության: Դեռևս Ռյազանի սահմանին՝ Կոլոմնայի տակ, մոնղոլները դաժան մարտե-

րում առավելության հասան Վլադիմիրի իշխան, Յուրի Վսեվոլոդիչի որդի Վսեվոլոդի գլխավորած զորքի նկատմամբ: Նրանք համառ դիմադրությամբ զավթիչներից պաշտպանում էին Մոսկվա և Վլադիմիր տանող ճանապարհները: 1238 թ. մարտի սկզբին մոնղոլներն ավերեցին Սուզդալյան հողերի մեծ մասը: Վլադիմիրի իշխան Յուրի Վսեվոլոդիչը զոհվեց մարտերից մեկում՝ Սիտ գետի ափին: Բաթու խանի զորքերը մտան Նովգորոդի սահմանային հողերը, երկշաբաթյա պաշարումից հետո գրավեցին հարավարևելյան սահմանի առաջադիրքը (ֆորպոստը)՝ Տորժոկը, սակայն դեպի Նովգորոդ չգնացին, այլ վերադարձան տափաստան՝ ճանապարհին ավերելով Սմոլենսկի և Չեռնիգովյան հողերի որոշ մասը: Ըստ որում՝ նրանք ստիպված էին յոթ շաբաթ մնալ Չեռնիգովյան ոչ մեծ քաղաք Կոզելսկի մոտ, որի բնակիչները հերոսաբար կռվում էին զավթիչների դեմ:

1239 թ. աշնանը մոնղոլների ջոկատները գրավեցին Դնեպրի ձախափնյա բոլոր գլխավոր քաղաքները՝ Պերեսլավլի և Չեռնիգովի հողերի մայրաքաղաքները, ավերեցին նաև Սուզդալյան հողերի արևելյան՝ Բաթու խանի արշավանքի ժամանակ չվնասված սահմանները: 1240 թ. աշնանը Բաթու խանը արշավանք սկսեց Հարավային Ռուսիայով դեպի Կենտրոնական Եվրոպա: Երկարատև պաշտպանությունից հետո առաջինը ընկավ Կիևը, ապա ավերվեցին Վոլինսկյան և Գալիցկյան հողերը: Դրանից հետո՝ 1241-ին և 1242 թ. սկզբին, մոնղոլական զորքերը հրով-սրով անցան Լեհաստանով, Հունգարիայով, Խորվաթիայով: Բայց նրանց ուժերը սպառվում էին և Մոնղոլիայից ստանալով մեծ խան Հոքաթայի (Ուգեդեյի)՝ Չինգիզ խանի որդու մահվան լուրը՝ Բաթուն վերադարձավ:



Մոնղոլները գրավում են Մոսկվան: Մանրանկարչական պատկեր. տարեգրային ժողովածու, XVI դ.

Ի տարբերություն 1223 թ., երբ Հարավային Ռուսիայի իշխանները կարողացան կազմակերպել միացյալ արշավ ընդդեմ մոնղոլների, 1237–1240 թթ. ռուս իշխանների կողմից իրենց գործողությունները համակարգելու փորձ անգամ չարվեց: Դրա պատճառը 1230-ական թվականներին սկսված և ձգձգված երկպառակությունն էր, պայքարը Կիևի և Գալիչի համար: Դա շարունակվում էր անգամ այն ժամանակ, երբ մոնղոլները գրավեցին Դնեպրի ձախափնյա քաղաքները՝ Պերեյասլավլը և Չեռնիգովը: Արդյունքում այդ ժամանակվա հարավռուսական հզոր իշխաններ Միխայիլ Վսեվոլոդիչ Չեռնիգովսկին (նա արշավանքի նախօրեին իշխում էր Կիևում) և Վոլինին ու Գալիչին իշխող Դանիիլ Ռոմանովիչը փախան իրենց հողերից՝ չփորձելով զավթիչների դեմ կազմակերպել դիմադրություն:

Ոսկե հորդա: Իր արշավանքների ավարտին Բաթու խանը հիմնավորվեց Հարավային Վոլգայի հողերում: Այստեղ էր գտնվում Եվրասիայի տափաստաններով

Իրտիշից մինչև Ստորին Դանուբ ձգվող նոր պետության կենտրոնը: Այն կոչվում էր Ուլուս Ջուչի (Բաթու խանի հոր անունով) կամ ըստ ռուսական աղբյուրների՝ Орда՝ Հորդա: «Ոսկե հորդա» անվանումը առաջին անգամ հիշատակվում է XVI դ., երբ Ուլուս Ջուչին արդեն գոյություն չուներ:

«Հորդա» բառը նախապես նշանակել է ռազմական: Ռուսիայում Բաթու խանի արշավանքներից հետո բառի իմաստը ընդլայնվեց, և այն սկսեց գործածվել նաև «պետություն» նշանակությամբ: 1260-ական թթ. Հորդայի կառավարիչները խզեցին վասալական հարաբերությունները մեծ խաների հետ, որոնք նստում էին Մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորումում: Եվ Հորդան դարձավ ամբողջովին ինքնուրույն պետություն, որտեղ քոչվորների հետ ապրում էին նաև նստակյաց բնակիչներ, ծաղկում էին քաղաքները, աճում էր առևտուրը: Հորդայի մայրաքաղաքն էր Ստորին Վոլգայի ափին գտնվող Սարայ քաղաքը:

Եվրասիայի ընդարձակ տարածքում Հորդայի իշխանության տարածումը նպաստեց առևտրային ճանապարհների աշխուժացմանը դեպի Մերձսևծով:

Ղրիմում իտալացի վաճառականները հիմնել էին Ջենովյան Կաֆֆա, (Թեոդոսիա), Վենետիկյան Տանա (Ազակ, Ազով) և այլ բնակավայրեր: XIV դ. Կաֆֆան, որը բնակչության թվով գերազանցում էր Կոստանդնուպոլսին, դարձավ Մերձսևծովի խոշորագույն տնտեսական կենտրոնը:

Նվաճողի իրավունքով մոնղոլ խաները ռուս իշխաններից պահանջում էին գնալ Հորդա և ճանաչել իրենց կախվածությունը: 1240-ականների կեսերին Յարոսլավ Վսեվոլոդիչը (1238 թ. եղբոր՝ Յուրիի մահից հետո դարձել էր Վլադիմիրի մեծ իշխանը), Վոլինյան և Գալիցկյան իշխան Դանիիլ Ռոմանովիչը, Չեռնիգովի իշխան Միխայիլ Վսեվոլոդիչը և այլ իշխաններ եկան Բաթուի մոտ, ճանաչեցին նրա գերիշխանությունը: Ի նշան Հորդայից կախվածության՝ Բաթու խանի կողմից նրանց տրվեց՝ իշխանավարելու, հարկեր վճարելու և մի շարք այլ պարտավորություններ կատարելու շնորհագիր-հրամանագրեր: Հարկատվությունից ազատված էր միայն հոգևոր դասը: Մոնղոլներին հատկանշական էր հավատի նկատմամբ հանդուրժողականությունը: Եվրոպայում և Ռուսիայում բազմէթնիկ բնակչությանը տրվեց «թաթար» անվանումը՝ մոնղոլալեզու ցեղերից մեկի անունով:

Զավթիչների հաջողությունը կապված էր Չինգիզիդների կայսրության հսկայական ռազմական ուժի հետ: Մոնղոլների դեմ չկարողացան կանգնել այնպիսի հզոր պետություններ, ինչպիսիք են չինական Ցզին և Հարավային Սուն կայսրությունները, Խորեզմը:

Մոնղոլ զավթիչները կիրառում էին իշխելու երկու մոդել. առաջինն անմիջական կառավարումն էր, երկրորդը՝ կառավարում տեղական իշխանների միջոցով, որոնք կախված էին իրենցից: Մինչև Ռուսիան գրավելը մոնղոլները փաստորեն ամենուրեք կիրառում էին առաջին մոդելը: Նրանք 1240-ական թթ. հասկացան, որ Ռուսիային, ինչպես նաև մի շարք այլ երկրների՝ Դանուբյան Բուլղարիային, Փոքր Ասիայի պետություններին (ինչու չի ասվում Հայաստան, Կիլիկիա, Պոնտոս) կարելի է կառավարել տեղական իշխանների միջոցով: Բայց Ռուսիայում մինչև XV դ. դեռևս զգուշա-

նում էին, որ ռուսական քաղաքները և տարածքները կանցնեն մոնղոլների անմիջական կառավարման ներքո: Այդ զգուշավորությունը նպաստեց օտարից երկարատև կախվածությանը, որը դիտվում էր որպես փոքրագույն չարիք: Օտար իշխանության հաստատումը և երկարատև պահապանումը մասամբ կապված էր այն բանի հետ, որ մոնղոլ կառավարիչներին (սկզբում մեծ խանին, հետո նաև Հորդայի խաներին) էր փոխանցվել ցեսար (ցար) տիտղոսը, որով մեծարում էին բարձր՝ կայսերական կարգի ղեկավարներին:

§ 13. Բաթու խանի արշավանքից հետո ռուսական հողերի ճակատագիրը

Հարավային և արևմտյան ռուսական հողեր: Կիևյան հողը արշավանքից հետո կորցրեց իր նախկին նշանակությունը: 1243 թ. Կիևի նկատմամբ իշխանությունը մոնղոլները փոխանցեցին Վլադիմիրյան մեծ իշխան Յարոսլավ Վսեվոլոդիչին, իսկ նրա մահից հետո՝ նրա որդուն՝ Նովգորոդի իշխան Ալեքսանդր Նևսկուն (1249 թ.): Սակայն Ալեքսանդրը չգնաց իշխանավարելու Կիևում: Նա որոշեց իր իշխանության ներքո միավորել Նովգորոդյան և Վլադիմիրյան իշխանական տները (1252 թ.): Այդպիսով, Հորդայի կողմից ճանաչված իշխանը՝ «ավագագույնը» ողջ Ռուսիայում, գերադասեց՝ իր մայրաքաղաքը լինի Վլադիմիրը և ոչ թե Կիևը: Մինչև 1290-ական թ. սկիզբը Կիևյան իշխաններ էին համարվում Վլադիմիրյան գահին նստած Ալեքսանդր Նևսկու ժառանգորդները: 1280-ականներին Կիևը հայտնվեց Նողայի (Ногая)՝ Հորդայի արևմտյան մասի՝ Դանուբից մինչև Դնեպր եղած տարածքի կառավարչի ազդեցության ոլորտում: Վերջինս փաստորեն Հորդայի մայրաքաղաքում՝ Սարայում, իշխող խաներից դարձել էր անկախ: 1290-ականներին, երբ սկսվեց պայքար Նողայի և Թոխտայի միջև, Հորդային հակամարտող պարագլուխների ցանկությամբ Կիևում իշխանավարելու իրավունք ստացան հարավռուսական տարածքների ճանաչում չունեցող իշխանները: Այդպիսով, Կիևը դադարեց համարվել Ռուսիայի գլխավոր իշխանի ենթակայության տարածքներից, իսկ XIII դ. վերջում՝ նաև ողջ Ռուսիայի մետրոպոլիտի նստավայրը: 1299 թ. մետրոպոլիտ Մաքսիմը տեղափոխվեց Վլադիմիր: Կիևը զրկվեց համառուսական մայրաքաղաք լինելու կոչումից: 1320-ական թթ. Կիևյան հողերը կախվածության մեջ ընկան լիտվական Մեծ իշխանական տնից, իսկ 1360-ական թթ. երկար ժամանակ գտնվում էին լիտվական հողերի կազմում:

XIII դ. երկրորդ կեսին Չեռնիգովյան հողում ուժեղանում է քաղաքական մասնատվածությունը. ստեղծվում են մեծ թվով իշխանական տներ, որ կառավարվում էին Օլգովիչների տեղական դինաստիայի տարբեր ճյուղերի կողմից: Այստեղ գլխավոր կենտրոն է դառնում Բրյանսկը: Դեռևս XIII դ. սկսվեցին ասպատակությունները Լիտվայի կողմից, որն այդ ժամանակ ուժեղ պետություն էր: Իսկ 1360-1370 թթ. Չեռնիգովյան հողերի մեծ մասը իրեն ենթարկեց Լիտվայի մեծ իշխան Օլգերդին: Իրենց ինքնուրույնությունը պահպանեցին Չեռնիգովյան հյուսիսարևելյան և վերին Օկայի հողերը:

Ռուսիայի հարավ-արևմուտքում Վոլինյան և Գալիցկյան հողերի միավորումը իշխան Դանիիլ Ռոմանովիչի և նրա եղբայր Վասիլկայի տիրապետության ներքո ձևավորեց մի ուժեղ պետություն, որը կարողացավ խուսափել հողերի մասնատումից: 1245 թ. ճանաչելով Բաթու խանի իշխանությունը՝ այնուամենայնիվ, Դանիիլը փորձում էր դուրս գալ հպատակությունից: 1253 թ. կաթոլիկ Եվրոպայից աջակցության հույս ունենալով՝ նա Հռոմի պապից ընդունեց արքայական թագը: Սակայն օգնություն չստացավ, և 1250-ականներին ստիպված եղավ մոնղոլական գերազանցող ռազմական ուժի ճնշման տակ վերջնականապես ընդունել իր կախյալությունը Հորդայի խան Բերկեից: Դանիիլ Ռոմանովիչի ժառանգները Գալիցկյան-Վոլինյան հողերում իշխեցին մինչև 1340 թ.: XIV դ. առաջին կեսում հարավ-արևմտյան Ռուսիայի նկատմամբ ուժեղացան հարևան պետությունների՝ Լիտվայի, Լեհաստանի և Հունգարիայի ճնշումները: Դարակեսին երկարատև պայքարից հետո Գալիցկյան հողն անցավ Լեհաստանի թագավորությանը, իսկ Վոլինյանը՝ Լիտվայի մեծ իշխանական տանը:

Սմոլենսկյան հողերում իշխան-կալվածատերերը միմյանց հետ իշխանական կապերը չամրապնդեցին, ինչպես դա արվեց Չեռնիգովում: XIII–XIV դդ. նվազեց Սմոլենսկյան իշխանական տան քաղաքական նշանակությունը: Արդեն XIII դարի երկրորդ կեսին Սմոլենսկյան իշխանները ճանաչեցին Վլադիմիրյան մեծ իշխանի քաղաքական ղեկավարությունը, իսկ 1330-ական թթ. դարձան լիտվական մեծ իշխանի վասալները: Այս հարյուրամյակի երկրորդ կեսին լիտվական և վլադիմիրյան մեծ իշխանները հանուն Սմոլենսկի նկատմամբ ազդեցության՝ պայքարում էին միմյանց դեմ: Սմոլենսկի իշխանները ստիպված էին խուսավարել այս ուժերի միջև: Արդյունքում XIV դարավերջին և XV-ի սկզբին լիտվական մեծ իշխան Վիտովտը իրեն ենթարկեց Սմոլենսկը, և երկար ժամանակ Սմոլենսկյան հողերը գտնվում էին Լիտվական պետության կազմի մեջ:

Պերեյասլավսկյան իշխանության տարածքը Բաթու խանի արշավանքից հետո անցավ Հորդայի անմիջական ղեկավարության տակ, իսկ 1360-ական թթ., ինչպես Չեռնիգովյան հողը, միացվեց Լիտվական մեծ իշխանությանը:

Պոլոցկյան հողերը մինչև Բաթու խանի արշավանքը արդեն զգալիորեն թուլացած էին Լիտվական իշխանությունների և Մերձբալթիկայում XIII դարից հաստատված գերմանացի խաչակիրների շարունակական ճնշումների հետևանքով: XIII դարավերջին և XIV-ի սկզբին այս տարածքը ի վերջո մտավ Լիտվական մեծ իշխանության կազմի մեջ: Այդ ժամանակ Լիտվայի հետ միավորվեցին նաև Պինսկյան հողերը:

Ռյազանյան հողը կարողացավ պահել իր հարաբերական ինքնուրույնությունը, թեև XIV դարավերջին ռյազանյան իշխանները ճանաչեցին իրենց նկատմամբ մոսկովյան իշխանների քաղաքական ղեկավարությունը: Ռյազանյան հողին հարևան Մուրոմյան ոչ մեծ հողը ինքնուրույն դերակատարում չի ունեցել և XIV դարի վերջին մտավ Մոսկվայի անմիջական իշխանության ներքո:

Հյուսիսարևելյան Ռուսիան: Բաթու խանի արշավանքից հետո ընկած ժամանակահատվածում Սուզդալյան հողին բնութագրական էր ռուսական մյուս հողերից տարբերվող դիրքը: Հենց այս հողում XIV դ. սկսվեց ռուսական բոլոր հողերի միավորումը նոր միասնական պետության մեջ, որի կենտրոնը դարձավ Մոսկվան: Ինչպիսի՞

գործոններ նպաստեցին, որ այդպիսի միավորող կենտրոն հայտնվեց հենց Հյուսիսարևելյան Ռուսիայում։

Նախ, ի տարբերություն չեռնիգովյանի, սմոլենսկյան և վոլինյան իշխանների՝ Հյուսիսարևելյան Ռուսիայի կառավարիչները գրեթե չեն մասնակցել երկպառակող, քայքայիչ պատերազմին, որը 1230-ական թթ. տեղի է ունեցել Հարավային Ռուսիայում։ Երկրորդ՝ XIII դ. կեսերին Սուզդալյան ճյուղի իշխաններին հաջողվեց հսկողության տակ առնել նովգորոդյան իշխանական տները։ Նովգորոդը ավելի շահեկան դիրքում էր, քան Գալիչը, որը սահմանակից էր մողոլների կողմից գրավված տափաստանին, և Կիևը, որը կորցրել էր իր նշանակությունը, իսկ մինչմոնղոլական շրջանում Նովգորոդը ժառանգաբար չէր պատկանել որևէ իշխանական ճյուղի։ Երրորդ՝ ի տարբերություն Վոլինյանի, որն անմիջականորեն սահմանակից էր Լիտվային, Սմոլենսկյան, Չեռնիգովյան հողերի, որոնց սահմաններին լիտվացիները հասան XIII դ. վերջերին՝ Պոլոցկյան իշխանությունը իրենց ենթարկելուց հետո, Հյուսիսարևելյան Ռուսիան մինչև XIV դ. երկրորդ կեսը, երբ ամրապնդվեց Մոսկովյան իշխանությունը, Լիտվայի անմիջական ճնշմանը չի ենթարկվել, իսկ մինչև XV-ի սկիզբը նրա և Լիտվայի մեծ իշխանական տան միջև պահպանվում էր մի ինքնատիպ թափարգել (բուֆեր)՝ սմոլենսկյան իշխանության տեսքով։ Չորրորդ՝ վլադիմիրյան իշխանների «համառուսական» նկրտումներին նպաստում էր այն, որ հենց նրանք էին Հորդայի կողմից ճանաչվում որպես Ռուսիայի «ավագագույններ»։ «Ավագագույն» լինելու խորհրդանիշի համար սկիզբ ծառայեց Վլադիմիրյան իշխանների կողմից Կիևին իշխելը, բայց XIII դ. վերջին այդ կապը կորսվեց։ Եթե մինչմոնղոլական շրջանում «ողջ Ռուսիայի իշխան» կոչվելու իրավունքը ունեին կիևյան իշխանները, ապա Հորդայի ժամանակահատվածում այդ իրավունքը անցավ վլադիմիրյան իշխաններին։ Եվ վերջապես՝ հինգերորդ՝ կարևոր գործոն դարձավ XIII դ. վերջին մետրոպոլիտի տեղափոխությունը Կիևից. որպես մշտական նստավայր ընտրվեց Հյուսիսարևելյան Ռուսիան։

Ինչպես Չեռնիգովյան հողերում, այնպես էլ Հյուսիսարևելյան Ռուսիայում, մոնղոլական արշավանքներից հետո տեղի ունեցավ իշխանության բաժանում (Վսեվոլոդ Մեծ Բույնի սերունդների) կառավարման որոշակի ուղղություններով։ Բացի դրանից՝ գոյություն ուներ «մայրաքաղաքային» իշխանական տուն՝ Մեծ Վլադիմիրյանը։ Վերջինս սկսեց Ռուսիայում խաղալ այն նույն դերը, ինչը XII–XIII դ. ուներ Կիևյան իշխանությունը։ Սակայն ի տարբերություն կիևյան իշխանների՝ Վլադիմիրյան իշխանական տունը չէր բնութագրվում իշխանական տարբեր ճյուղերի համատեղ կառավարմամբ. այստեղ չկային տարածքներ, որոնք չկառավարեր մեծ իշխանը։ Իշխանական Մեծ տան հողերը գտնվում էին այն մարդու իշխանության ներքո, որը զբաղեցրել էր Վլադիմիրյան գահը։ Դա իշխաններին հնարավորություն տվեց ուժեղանալուց հետո Վլադիմիրյան մեծ իշխանության միջոցով իշխող դիրք գրավել Ռուսիայի հյուսիսարևելքում։

1260-ական թթ. Հյուսիսարևելյան Ռուսիայում կային 13 իշխանական տներ՝ Մեծ Վլադիմիրը, Գալիցկա-Դմիտրովսկը (ավելի ուշ այն բաժանվեց Գալիցկու՝ Գալիչ Մերսկի մայրաքաղաքով, և Դմիտրովսկու), Գորոդեցկին, Կոստրոման, Մոսկվան,

Պերեյասլավսկը (Պերեյասլավլ- Զալեսսկին), Ռոստովը, Ստարոդուսկին, Սուզդալը, Տվերսկին, Ուգլիցկին, Յուրևյանը և Յարոսլավլը։

Ալեքսանդր Նևսկու կառավարումից հետո (1252–1263) սկիզբ դրվեց մի պրակտիկայի, երբ Վլադիմիրյան մեծ իշխանությունը Ոսկե Հորդայից հրամանագիրը ստանում էր այն իշխանի անունով, որը Յարոսլավ Վսեվոլոդիչի՝ Վլադիմիրյան առաջին մեծ իշխանի սերունդներից էր և ընդունվում էր Հորդայի կողմից։ Վլադիմիրյան մեծ իշխանությունը ամենախոշորն էր։ Ուստի իշխանը, որը ստանում էր Հորդայի հրամանագիրը, դառնում էր ոչ միայն գերագույն ավատատերը (սյուզերեն) մյուսների նկատմամբ, այլև ունենում էր զգալիորեն մեծ ներուժ և իշխող դիրք ողջ Հյուսիսարևելյան Ռուսիայում։ Այդ իսկ պատճառով պայքարը մեծ իշխանության համար դարձել էր որոշիչ գործոն քաղաքական զարգացման մեջ։

1263–1271 թթ. Ալեքսանդրից հետո ավագության կարգով Վլադիմիրի մեծ իշխան դարձավ Յարոսլավ Վսեվոլոդիչի սերունդներից Յարոսլավ Յարոսլավիչը՝ Տվերի իշխանը, իսկ հետո՝ 1272–1276 թթ., Յարոսլավիչների կրտսերը՝ Վասիլի Կոստրոմսկոյը։ 1277 թ. մեծիշխանական գահին մոտեցավ Յարոսլավ Վսեվոլոդիչի թոռների սերնդից ավագը՝ Պերեսլյավսկի իշխան Դմիտրի Ալեքսանդրովիչը։ Սակայն 1280-ական թվականներից նրա այդ իրավունքը ակտիվորեն սկսեց վիճարկել ավագության կարգով հաջորդը՝ Ալեքսանդր Նևսկու որդին՝ Անդրեյը՝ իշխան Գորոդեցկին։ Այդ պայքարում նա փորձում էր աջակցություն ստանալ Սարայի խաներից, իսկ Դմիտրին օգնության համար դիմեց նողայների (նոգայների) օգնությանը, որոնք այդ ժամանակ ինքնուրույն կառավարում էին Հորդայի արևմտյան հատվածը։ Արդյունքում 1280–1290 թթ. Հյուսիսարևելյան Ռուսիայի իշխանները բաժանվեցին երկու խմբավորման։ Նոգայների ազդեցության ոլորտում էին, Դմիտրի Ալեքսանդրովիչից բացի, նրա կրտսեր եղբայրը՝ Մոսկվայի իշխան Դանիիլը, Ալեքսանդրովիչների հորեղբոր տղան՝ Տվերյան իշխան Միխայիլ Յարոսլավիչը (Յարոսլավ Յարոսլավիչի որդին), ինչպես նաև Սուզդալի, Յուրևի և Դմիտրովի իշխանները։ Բացի Անդրեյ Ալեքսանդրովիչից՝ Սարայի խաների կողմն էին հակված Յարոսլավլի, Ռոստովի և Ստարոդուբի իշխանները։ Իշխանների միջև պայքարը բազմիցս վերածվել է զինված պայքարի՝ հորդայական ուժերի մասնակցությամբ։ 1281, 1282, 1285 թթ., ինչպես նաև 1293–1294 թթ. ձմռանը Անդրեյի կոչով Վոլգյան Հորդայից Հյուսիսարևելյան Ռուսիա մտան Հորդայի զորքերը, իսկ 1283–1284 թթ. ձմռանը և 1289ից մինչև 1294-ի սկիզբը՝ Նոգայի ջոկատները, որոնք գործում էին հաջակցություն Դմիտրիի և նրա դաշնակից իշխանների։ Միայն 1294 թ.՝ Դմիտրիի մահից հետո, Անդրեյին հաջողվեց հաստատվել մեծիշխանական գահին։ Ավագության կարգով մեծ իշխանության կոչման հավակնորդներից երկրորդը Դանիիլ Մոսկովսկին էր։ 1296 թ. նա և իր դաշնակիցներ Միխայիլ Տվերսկին և Իվան Պերեսլյավսկին, որը Դմիտրի Ալեքսանդրովիչի որդին էր, Անդրեյի դեմ դուրս եկան։ Սակայն հորդայական զորքերի միջամտությամբ՝ նրանք ստիպված էին գնալ համաձայնության և ընդունել իրենց՝ որպես Թոխտա խանի վասալներ։ Հաջորդ տարիներին Թոխտան պատերազմ սկսեց նոգայների դեմ, որն ավարտվեց պարտությամբ և վերջինիս մահով։

Նովգորոդ և Պսկով: XIII դ. երկրորդ կեսին և XIV դ. Նովգորոդյան հողում վերջնականապես ստեղծվեց մի կարգ, որը գիտության մեջ ընդունված է անվանել «հանրապետական»՝ ընտրովի փոխիշխանների և հազարապետերի գլխավորությամբ: Մարմինը, որում կարևոր հարցեր էին վճռվում, քաղաքային վեչեն էր՝ լիիրավ քաղաքացիների ժողովը:

Ընդ որում՝ Նովգորոդը որպես գլխավոր ավատատեր (սյուզերեն) էր ճանաչում Վլադիմիրի մեծ իշխանին, այսինքն՝ Հյուսիսարևելյան Ռուսիայի գերագույն կառավարչին: Նովգորոդյան հողերի քաղաքական համակարգը ո՛չ ռուսական բոլոր տարածքները միավորող միտումներ ուներ և ո՛չ էլ ռուսական տարածքների միջև առաջինը լինելու ձգտում: Վլադիմիրյան մեծ իշխանների նկատմամբ վասալության ընդունումը հնարավորություն էր տալիս խուսափելու Հորդայի հետ անմիջական շփումներից (դրանք դրված էին մեծ իշխանների ուսերին) և միաժամանակ ներգրավելու Հյուսիսարևելյան Ռուսիայի ռազմական ուժերը՝ Նովգորոդի արևմտյան սահմանի հողերը Լիվոնյան օրդենից, Շվեդիայից և Լիտվայից պաշտպանելու համար: Նովգորոդի տնտեսության մեջ կարևոր դեր էր խաղում արտաքին առևտուրը, առաջին հերթին Հանսայի միության[6] քաղաքների հետ:

XIV դ. Նովգորոդից անկախացավ Պսկովյան հողը, որտեղ ևս Նովգորոդյանին նման կառավարման հանրապետական ձև էր ստեղծվել: Ըստ որում՝ պսկովցիները XIV դ. գլխավոր ավատատեր էին ճանաչում մե՛կ Վլադիմիրի մեծ իշխանին, մե՛կ Լիտվայի մեծ իշխանին:


Ռուսիայի մյուս հողերում ինչպես մինչմոնղոլական, այնպես էլ ավելի ուշ շրջանում քաղաքների բնակիչները կարող էին հավաքվել վեչեում, բայց որպես կանոն՝ արտակարգ իրավիճակներում: Վեչեն՝ որպես կառավարման մարմին, կայունացնող դեր ուներ միայն Նովգորոդում և Պսկովում:

Ալեքսանդր Նևսկի: Իշխան Ալեքսանդր Յարոսլավիչը, որը հայտնի է Նևսկի մականունով (Ալեքսանդրի այս մականունը կապված էր նրա՝ Նևայի ափին շվեդների նկատմամբ տարած հաղթանակի հետ, սակայն այն հիշատակված է միայն XV դ. աղբյուրներում), ծնվել է 1221 թ.: Նա Յարոսլավ Վսեվոլոդիչի որդին էր, որի իշխանությունն այդ ժամանակ տարածվում էր Պերեսլավլ-Զալեսսկում: 1230-ականներին Յարոսլավը հաստատվեց Նովգորոդի իշխանական գահին, իսկ 1236 թ. վերցրեց Կիևյան գահը: Հեռանալով Կիև՝ նա տասնհինգամյա Ալեքսանդրին թողեց՝ իշխանավարելու Նովգորոդում: Ալեքսանդրը հենց Նովգորոդում էր, երբ սկսվեց Բաթու խանի արշավանքը դեպի Հյուսիսարևելյան Ռուսիա, որն անցավ նաև Նովգորոդի հարավարևելյան սահմաններով:

Մոնղոլական սպառնալիքը դեռ չէր հեռացել, երբ Նովգորոդյան հողը արևմուտքից ենթարկվեց նոր հարձակման: 1240 թ. ամռանը շվեդական բանակը փորձեց զավթել Նևայի գետաբերանը՝ Նովգորոդը (Վոլխովով և Լադոգա լճով) Բալթիկ ծովին

[6] Հանսայի միությունը Հյուսիսային և Արևմտյան Եվրոպայի խոշոր տնտեսական միություն էր՝ ազատ քաղաքների առևտրային կապերով:

միացնող ջրային զարկերակը: Այդ մասին իմանալով՝ Ալեքսանդրը իր և նովգորոդցիների փոքրաթիվ ջոկատներով մարտարշավ կազմակերպեց և 1240 թ. հուլիսի 15-ին հարձակվեց հակառակորդի վրա: Մեծ կորուստներ կրելով՝ շվեդները ստիպված էին հեռանալ:



Ալեքսանդր Նևսկի: Սրբապատկեր: 19-րդ դար:

Նույն տարում Նովգորոդի հողեր ներխուժեցին գերմանացի խաչակիրները՝ Տևտոնյան օրդենի Լիվոնյան բաժնի ասպետները, որոնք XIII դ. սկզբից գրավել էին ներկայիս Էստոնիայի և Լատվիայի հողերը. այն ժամանակ այդտեղ էին ապրում էստոնացիների և լատվիացիների նախնիները: Նրանք գրավեցին նաև Նովգորոդյան նշանակությամբ երկրորդ քաղաք Պսկովը: Այդ ժամանակ Ալեքսանդրը գժտվեց նովգորոդյան բոյարների հետ և գնաց հոր մոտ, որը իր եղբոր՝ Յուրի Վսեվոլոդիչի զոհվելուց հետո՝ 1238 թ., դարձել էր Վլադիմիրի մեծ իշխանը: Երբ գերմանական ջոկատները հայտնվեցին Նովգորոդից 30 վերստի վրա[7], նովգորոդցիները խնդրեցին Յարոսլավին վերադարձնել Ալեքսանդրին: Վերադառնալով Նովգորոդյան գահին՝ Ալեքսանդրը մի քանի հարված հասցրեց խաչակիրներին՝ ազատագրելով ռուսական զավթված հողերը և Պսկովը: Դրանից հետո Ալեքսանդրն ինքը մտավ Օրդենների հող: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1242 թ. ապրիլի 5-ին Չուդ լճի սառույցների վրա, որը Նովգորոդյան հողերի և Օրդենի տարածքների ասես բնական սահմանն էր: Ճակատամարտը հայտնի դարձավ որպես Սառցային մարտ:

Խաչակիրները ճեղքեցին ռուսական զորքի կենտրոնը, բայց հարվածներ ստացան եզրերից, շրջապատվեցին և լիովին ջախջախվեցին: Ըստ այդ տարի կնքված պայմանագրի՝ Օրդենը հրաժարվեց ռուսական հողերի նկատմամբ իր պահանջներից:

1245 թ. Ալեքսանդրը ծանր պարտության մատնեց Նովգորոդյան հողերի հարավային սահմանները ներխուժած լիտվացիներին:

Միաժամանակ մոնղոլ խաները սկսեցին կանոնակարգել իրենց դիրքը ռուս իշխանների նկատմամբ: Յարոսլավը՝ Ալեքսանդրի հայրը, Բաթու խանից ստանալով բոլոր ռուս իշխանների նկատմամբ «ավագությունը», 1246 թ. սեպտեմբերին գնաց Մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորում՝ վերցնելու հրամանագիրը. այնտեղ նրան թունավորեցին: Մեծ խան Գույուկը և նրա մայրը՝ Թուրակինը, թշնամաբար էին տրամադրված Բաթու խանի նկատմամբ, որն էլ Յարոսլավի թունավորման պատճառ եղավ: Դրանից հետո Թուրակինը իր մոտ կանչեց Ալեքսանդրին, բայց Նովգորոդի իշխանը հրաժարվեց գնալ: Նա Բաթուի մոտ գնաց միայն 1247 թ. վերջին եղբոր՝

[7] *Վերստ* – երկարության չափ, հավասար է 1,06 կմ-ի:

Անդրեյի հետ: 1248 թ. մահացավ Գույուկ խանը, որից հետո Բաթուն թույլ տվեց եղբայրներին մտնել Կարակորում: Այստեղ մեծ խանուհին՝ Գույուկի այրին, Ալեքսանդրին փոխանցեց Կիևը և բոլոր ռուս իշխանների նկատմամբ «ավագությունը», իսկ Վլադիմիրի գահը տրվեց Անդրեյին:

1249 թ. վերջին Ալեքսանդրը վերադարձավ Ռուսիա: Վերադառնալուց հետո նա մերժեց Հռոմի պապ Ինոկենտիոս IV-ի՝ մոնղոլների դեմ միություն ստեղծելու և կաթոլիկ եկեղեցու հետ միավորվելու առաջարկը: Շուտով Մոնղոլական կայսրությունում իրավիճակը փոխվեց: 1251 թ. Բաթուն մեծ խանական գահին նստեցրեց իր հովանավորյալին՝ Մունկեին: Դրանից հետո Հորդա կանչվեցին Ալեքսանդր և Անդրեյ Յարոսլավիչները: Ալեքսանդրը գնաց, իսկ Անդրեյը՝ ոչ՝ հավանաբար նկատի ունենալով, որ իր ուղևորությունը անբարենպաստ է լինելու, իսկ նախկին մեծ խանական պալատի վերաբերմունքը՝ ոչ արդյունավետ: Այդ ժամանակ Բաթուն Վլադիմիր ուղարկեց Նևրույի թիկնազորը: Անդրեյ Յարոսլավիչը փախավ Շվեդիա: Ավելի ուշ նա վերադարձավ Ռուսիա և իշխում էր Սուզդալում: Բաթուն Ալեքսանդրին տվեց Վլադիմիրի իշխանական մեծ տան հրամանագիրը:

Ալեքսանդրը մեծ իշխանական գահը զբաղեցրեց 11 տարի: Միաժամանակ նա Նովգորոդի և Կիևի իշխանն էր: Նրա կառավարման օրերից սկիզբ դրվեց մի ավանդույթի, որի համաձայն՝ Նովգորոդը իր իշխան էր ճանաչում նրան, որը նստած էր Վլադիմիրի գահին:

Իր՝ որպես մեծ իշխան, կառավարման տարիներին Ալեքսանդրը շարունակեց Նովգորոդի հյուսիսարևմտյան սահմանները ամրապնդելու քաղաքականությունը: 1256 թ. նա հաջող արշավանք իրականացրեց շվեդների կողմից զավթված Ֆինլանդիա, 1262 թ. իր որդի Դմիտրիի գլխավորությամբ կազմակերպեց խոշոր արշավանք դեպի Լիվոնյան միաբանության (Օրդենի) հողեր: Այդ նույն ժամանակ նա մասնակցեց այն միջոցառումներին, որոնք կարգաբերում էին մոնղոլական իշխանության՝ 1257, 1259 թթ. հարկային վերգրումները և Ռուսիայի նկատմամբ ունեցած իրավասությունները: 1262 թ. Հյուսիսարևելյան Ռուսիայի մի շարք քաղաքներում սպանվեցին կամ վտարվեցին մոնղոլ հարկահավաքները: Բացառված չէ, որ այդ ժամանակ էլ Ալեքսանդրը գաղտնիորեն նպաստել էր այդ գործողություններին: Նույն թվականին Ռուսիայի մեծ իշխանը մեկնեց Հորդա, որպեսզի Բերկե խանին խնդրի, որ նա ռուս զինվորներին չներգրավի խան Հուլավուի դեմ պատերազմում: Հուլավու խանը իշխում էր մոնղոլների կողմից զավթված Իրանում, նաև Հայաստանում: Ալեքսանդրը, հաջորդ տարվա աշնանը վերադառնալով Ռուսիա, հիվանդացավ և 1263 թ. նոյեմբերի 14-ին 42 տարեկանում մահացավ Վոլգայի ափին գտնվող փոքր քաղաքում (Городце-на-Волге):

Պատմական ավանդույթով Ալեքսանդր Նևսկին ընկալվել է որպես ռուսական պատմության հերոսներից մեկը: Նրա մահից հետո առաջացավ Ալեքսանդրի՝ որպես սրբի պաշտամունքը. այդպես շարունակվեց և՛ նախահեղափոխական Ռուսաստանում, և՛ ԽՍՀՄ-ում. ստեղծվեցին Ալեքսանդր Նևսկու անունով շքանշաններ: Վերջին շրջանում ինչպես հրապարակումներում, այնպես էլ մի շարք գիտական աշխատություններում նկատելի է Ալեքսանդր Նևսկուն «պսակազերծելու» միտումը: Մի կողմից

շվեդների և գերմանացիների դեմ մարտերը, որոնցում նա հաղթել է, կոչվում են փոքր կռիվներ, սահմանային հասարակ ընդհարումներ: Մյուս կողմից՝ Ալեքսանդր Նևսկուն են վերագրում «Ռուսիայի վրա Հորդայի լծի հաստատումը»՝ համարելով, որ այն տեղի ունեցավ հենց 1257 և 1259 թթ. վերգրումների արդյունքում:

Իրականում 1240 և 1242 թթ. ռազմական բախումներն ամենևին էլ սովորական չեն եղել. ավելի վաղ շվեդ զինվորականները Նևայի ափին հայտնվել են միայն մեկ անգամ՝ 1164 թ., իսկ նրանց հաջորդ հարձակումը այս տարածքի վրա եղել է 1300 թ.: Գերմանացի խաչակիրներին ո՛չ մինչև 1240–1242 թթ., ո՛չ էլ ավելի ուշ երբեք չի հաջողվել տիրել Պսկովը: Հյուսիս-արևմուտքից Ռուսիայի նկատմամբ ագրեսիայի լուրջ բռնկում եղավ այն պահին, երբ ռուսական հողերը և ռազմական ներուժը թուլացած էին մոնղոլական արշավանքներից, ուստի Ալեքսանդրի հաղթանակի պլանները ձախողվեցին: Ինչ վերաբերում է մոնղոլական լծի հաստատմանը, ապա ըստ էության ռուսական հողերի կախյալությունը մոնղոլ խաներից ձևավորվեց 1240-ական թթ., երբ Ալեքսանդրը դեռևս պատկանում էր «կրտսեր» իշխանների դասին և ազդեցություն չուներ իրադարձությունների վրա:

1252 թ. նա գնաց Հորդա և դժգոհեց իր եղբորից՝ Անդրեյից (պատմագիտության մեջ լայնորեն տարածված այս վարկածը, որը կասկածելի է, ի հայտ եկավ միայն XVIII դ.): Իրականում նա Հորդա գնաց Բաթու խանի կանչով: Այսպիսով Ալեքսանդրի «քողազերծումը» ավելին չէ, քան տուրք նորաձևությանը և արձագանք նրա սրբացմանը:

Ալեքսանդր Նևսկին եղել է տաղանդավոր զորահրամանատար և հաշվենկատ, պրագմատիկ, սկզբունքային քաղաքական գործիչ: Սկզբում նա կապեր ուներ Հռոմի պապի հետ, իսկ երբ Կարակորումում համոզվեց Մոնղոլական կայսրության ռազմաքաղաքական հզորության մեջ, մերժեց Հռոմի՝ եկեղեցիների հետ միավորվելու առաջարկությունը: Ալեքսանդրի երկարաժամկետ գործունեության հետևանքը եղավ այն, որ Կիևի փոխարեն ողջ Ռուսիայի մայրաքաղաքը դարձավ Վլադիմիրը: Ալեքսանդրը մոնղոլական ղեկավարների կողմից ճանաչվել էր որպես ողջ Ռուսիայի գլխավոր իշխան և իր տիրապետության կենտրոն էր ընտրել Վլադիմիրը: Այս դիրքը պահպանվեց նաև նրա հետևորդների օրոք: Ըստ որում՝ մինչև XIII դարավերջը և՛ Ալեքսանդրը, և՛ նրա հետևորդները համարվում էին նաև Կիևի իշխաններ:

§ 14. XIV դար՝ Մոսկվայի «բարձրացումը»

Մոսկովյան իշխանական տունը նրա առաջին կառավարիչների օրոք: Աղբյուրներում Մոսկվա անվան առաջին հիշատակումը եղել է 1147 թ., երբ Սուզդալի իշխան Յուրի Դոլգորուկին Մոսկվայում խնջույք կազմակերպեց՝ ի պատիվ Կիևի համար պայքարում դաշնակցած Սվյատոսլավ Օլգովիչի: Մինչմոնղոլական շրջանում Մոսկվան փոքր քաղաք էր Սուզդալյան հողերի հարավարևմտյան սահմանին՝ այնտեղ, որտեղ Սուզդալի սահմանները մոտեցել էին երեք՝ Ռյազանյան, Չեռնիգովյան և Սմոլենսկյան հողերի սահմաններին: Իշխանական գահը Մոսկվայում հայտնվեց միայն



Յուրի Դոլգորուկի: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

1263 թ.՝ այն բանից հետո, երբ Ալեքսանդր Նևսկին Մոսկվան կտակեց իր փոքր որդուն՝ Դանիիլին, որը ծնվեց հոր մահից երկու տարի առաջ՝ 1261 թ.: Նոր իշխանական տունը զբաղեցնում էր Մոսկվա գետի միջին հոսանքը և Կլյազմայի վերին հոսանքը: Նրա սահմանների զգալի մասը համընկնում էր հարևան հողերի սահմանների հետ: Այսպես, Մոսկվա գետի վերին հոսանքը գտնվում էր Սմոլենսկի իշխանների տարածքում, իսկ ստորին հոսանքը պատկանում էր Ռյազանի իշխաններին: Դանիիլ Ալեքսանդրովիչը՝ որպես ինքնուրույն քաղաքական գործիչ, ասպարեզ մտավ 1280-ական թթ.: Նա միավորվեց իշխանների դաշինքին, որը գլխավորում էր նրա մեծ եղբայրը՝ Դմիտրին, և որին իշխանների իր խմբավորմամբ դիմակայում էր միջնեկ եղբայրը՝ Անդրեյը: Դմիտրիի մահից հետո (1294 թ.) Դանիիլը դառնում է այդ դաշինքի գլխավորը, որը կողմնորոշված էր դեպի Հորդայի արևմտյան թևը՝ Նոգայը (Նողայը): Սակայն նրա՝ Թոխտա խանից կրած պարտությունից հետո դաշինքը քանդվեց. այն լքեց Դանիիլի գլխավոր դաշնակից Միխայիլ Յարոսլավիչը: 1302 թ. մահացավ մյուս դաշնակիցը՝ Իվան Դմիտրիևիչ Պերեյասլավսկին: Այնուամենայնիվ Դանիիլ Ալեքսանդրովիչը XIV դարի առաջին տարիներին անգամ այդպիսի անբարենպաստ պայմաններում կարողացավ նկատելիորեն ամրացնել իր իշխանական տունը: 1300 թ. նա, խառնվելով ռյազանյան իշխանների երկպառակությանը, կարողացավ ստանալ Մոսկվա գետի ստորին հոսանքի հատվածը՝ Կոլոմնա քաղաքով:

Մոտավորապես այդ նույն ժամանակ Մոսկովյան տիրույթների մեջ մտավ Մոժայսկը՝ Մոսկվա գետի վերին հոսանքով: Վերջապես 1302 թ. վերջին Դանիիլը վերցրեց Պերեյասլավլը, որը մահից առաջ նրան էր կտակել անզավակ Իվան Դմիտրիևիչը: XIII–XIV դդ. սահմանագծին Հարավային Ռուսիայի իշխանական տներից Դանիիլի մոտ եկան բավական շատ պետական զինվորական ծառայության մարդիկ, որոնց տերերը առաջներում եղել էին Նողայի դաշնակիցները և այդ ժամանակ արդեն զրկվել էին իրենց իշխանությունից: Սա բավականին ամրապնդեց Մոսկվայի իշխանի ռազմական ուժը: Բացի այդ՝ հավանական է, որ XIII դ. վերջին և XIV դ. սկզբին Մոսկվայի իշխանական տանը քաղաքականորեն աջակցում էին Հարավային Ռուսիայի ուժեղ իշխանները՝ Գալիցկյան-Վոլինյանները, որոնք Մոսկվայի իշխանի հետ ունեին ամուսնական կապեր: Սակայն Դանիիլը Վլադիմիրի մեծ իշխանի կոչման համար եղբոր՝ Անդրեյի դեմ պայքարը չկարողացավ շարունակել, քանի որ 1303 թ. մարտի 5-ին մահացավ (տե՛ս հավելված, քարտեզ հ.3):

Դանիիլ Ալեքսանդրովիչի մահը նշանակում էր, որ մոսկովյան իշխանները, Մեծ իշխանի տիտղոսը ժառանգելու գոյություն ունեցող նորմերի համաձայն, դուրս են

մնում հավակնորդների շարքից։ Դանիիլի ավագ որդին՝ Յուրին, դառնալով Մոսկվայի իշխան, զիջում էր Միխայիլ Տվերսկուն՝ իր պապի կողմից հորեղբորը, ինչպես նաև իր հորեղբոր՝ Անդրեյ Ալեքսանդրովիչի որդուն՝ Միխայիլին։ Նա պետք է այս երկուսից էլ երկար ապրեր, որպեսզի ստանար մեծ իշխանի գահը։ Բայց գոյություն ուներ մեկ այլ՝ «տիտղոսակիր» դառնալու սկզբունք. հարկ էր, որ իշխանի հայրը գահի համար պահանջված լիներ։ Բայց քանի որ Դանիիլը այդպես էլ չէր արժանացել մեծ իշխանի տիտղոսին, Մոսկվայի իշխաններին սպառնում էր մեծ իշխանի կոչման պայքարում ընդմիշտ դուրս մնալը, և այդ դեպքում Մոսկվան կարող էր մնալ Սուզդալյան հողի ծայրամասային իշխանական տան մայրաքաղաք և ոչ ավելին։

Այնուամենայնիվ, մեծ իշխանի հարցը լուծվում էր խանի հրամանագրով։ Սովորաբար խաները չէին խախտում Ռուսիայում եղած գահաժառանգության ավանդույթը, թեև սկզբունքորեն Հորդան ղեկավարողը կարող էր ցանկացած որոշում կայացնել իշխանական տների վերաբերյալ։ Եվ երբ՝ 1304 թ., վախճանվեց Մեծ իշխան Անդրեյ Ալեքսանդրովիչը, և նրա ժառանգին՝ Միխայիլ Յարոսլավիչ Տվերսկուն էր պատկանում «ավագությունը», պահանջ, հայց ներկայացրեց նաև Յուրի Դանիլովիչ Մոսկովսկին։ Երկու հավակնորդ-հակառակորդները գնացին Հորդա՝ վիճարկելու Վլադիմիրի գահը, քանի որ նախկին՝ մինչմոնղոլական ժամանակաշրջանում, «ողջ Ռուսիայի իշխան» տիտղոսն ունեին կիևյան իշխանները, մոնղոլների ժամանակ այն լրացվեց «Մեծ» բնութագրիչ բառով։ Հենց «ողջ Ռուսիայի մեծ իշխանն» էր համարվում նա, ով ստանում էր Վլադիմիրի գահի հրամանագիրը, թեև արդեն XIII դ.վերջից վլադիմիրյան իշխանները չէին տիրում հին ռուսական մայրաքաղաք Կիևին։ Պատմագրության մեջ ընդունված է «Վլադիմիրի մեծ իշխան» եզրույթը, սակայն սա պայմանական է՝ ստեղծված գահանիստ քաղաքի անվանումից. աղբյուրներում այն կոչվում է կա՛մ «մեծ իշխան», կա՛մ առկա է տարածքի անվանումով, երբ իշխանի ղեկավարությանը ենթակա են, և նրա իրավունքները տարածվում են այդ մասում, օրինակ՝ «ողջ Ռուսիայի մեծ իշխան»։

Պատմագրության մեջ գերիշխում է այն տեսակետը, որ Յուրի Դանիլովիչը Հորդայի աջակիցն էր, իսկ Միխայիլ Յարոսլավիչը՝ Հորդայի տիրապետությունից ազատագրվելու մարտիկն էր։ Սակայն աղբյուրներում եղած տեղեկությունները այլ պատկեր են ներկայացնում։

Թոխտա խանը 1305 թ. իշխանների վեճը վճռեց Միխայիլի օգտին։ Յուրին էլ, փոխանակ ամբողջովին ենթարկվելու խանի որոշմանը, սկսեց պահել Պերեյասլավլը, որը պետք է անցներ նոր մեծ իշխանին։ Արդյունքում 1305 թ. վերջին Միխայիլը արշավանք սկսեց դեպի Մոսկվա, հավանաբար խանի դեսպանի հետ։ Յուրին ստիպված հանձնեց Պերեյասլավլը, սակայն Միխայիլի հետ վիճարկում էր Մեծ Նովգորոդի իշխանությունը, որը նույնպես մեծ իշխանության բաղադրիչ մաս էր։ 1308 թ Նովգորոդի գահին նստեց Միխայիլը, որից հետո միայն ևս մեկ անգամ արշավեց դեպի Մոսկվա։ 1310 թ. ժառանգ չունենալու պատճառով Նիժեգորոդսկյան (նախկին Գորոդեցկյան) իշխանական տունը տիրոջ մահից հետո ոչ ոք չժառանգեց։ Միխայիլը գնաց Հորդա՝ Նիժնի Նովգորդի համար հրամանագիր ստանալու նպատակով։ Այդ ընթացքում

Յուրին՝ նիժեգորոդյան իշխան Միխայիլ Անդրեևիչի մոտիկ ազգականը, զբաղեցրեց Նիժեգորոդյան գահը։

Այդ ժամանակ մոսկովյան իշխանները, ի դեմս համայն Ռուսիայի մետրոպոլիտ Պյոտրի (1308 թ.), ունեցան ազդեցիկ դաշնակից։ Պյոտրը, ծագումով գալիցկյան, նշանակվել էր Կոստանդնուպոլսում՝ Միխայիլ Յարոսլավիչի կամքին հակառակ, որը առաջադրել էր իր թեկնածուին՝ տվերյան մի հոգևորականի։ Պյոտրի՝ Վլադիմիր գալուց հետո մեծ իշխանը փորձում էր հասնել նրա պաշտոնանկությանը, սակայն դա նրան չհաջողվեց, իսկ մոսկովյան Դանիլովիչները աջակցում էին մետրոպոլիտին։

1312 թ. մահացավ Թոխտա խանը, և հաջորդ տարի Միխայիլը գնաց Թոխտային հաջորդող Ուզբեկ խանի մոտ՝ հաստատելու մեծ իշխանի իր լիազորությունները։ Նրա բացակայության ժամանակ Յուրին՝ որպես համիշխան, ղեկավարում էր Մեծ Նովգորոդը։ Դրանից հետո՝ 1315 թ., նրան կանչեցին Հորդա՝ խանի մոտ։ Այստեղ Յուրին ձերբակալվեց, իսկ Միխայիլին թաթարական մի ուժեղ ջոկատի ուղեկցությամբ ուղարկեցին Ռուսիա։ Սկզբում՝ 1316 թ., նա ջախջախեց նովգորոդցիներին Տորժոկ բնակավայրի մոտակայքում և խաբեությամբ գերի վերցրեց Յուրի Մոսկովսկու եղբորը՝ նովգորոդցիների առաջնորդ Աֆանասիին։

Այսպիսով, Հորդայի հավատարիմ ծառան Միխայիլ Տվերսկոյն էր, իսկ Յուրին չէր հնազանդվում խանին։ Թեև մոսկովյան իշխանը ոչ թե դեմ էր օտարների իշխանությանն ընդհանրապես, այլ խաների որոշակի կամարտահայտություններին, որոնք սահմանափակում էին իր շահերը։ Նա հույս էր փայփայում հետագայում ստանալու խանի բարեհաճությունը և մեծ իշխանի կոչման հրամանագիրը (այլ կերպ դառնալ Վլադիմիրի մեծ իշխան այդ ժամանակ ուղղակի անհնար էր)։ Եվ այդպիսի առիթ եղավ։ Քանի դեռ Միխայիլը գտնվում էր Ռուսիայում, Յուրին կարողացավ նվաճել Ուզբեկ խանի բարեհաճությունը՝ ամուսնանալով խանի քրոջ հետ, և 1317 թ. ստացավ մեծ իշխանի կոչման մասին հրամանագիրը։ Դերերը փոխվեցին։ Այս անգամ էլ մոսկովյան իշխանն էր գնում Ռուսիա Հորդայի դեսպանի հետ։ Միխայիլը ճանաչեց Մեծ իշխանի տիտղոսի անցումը Յուրիին։ Բայց երբ նա սկսեց ավերել Տվերի իշխանական տունը այն հաշվարկով, որ վերջնականապես ոչնչացնի հակառակորդին, Տվերի իշխանը ջախջախեց Յուրի Դանիլովիչի զորքը։ Ըստ որում՝ Յուրիի կինը՝ Ուզբեկ խանի քույրը, գերի ընկավ, որտեղ էլ շուտով մահացավ։ Դրանից հետո լուրեր տարածվեցին, թե նրան թունավորել են։ Միխայիլ Յարոսլավիչի՝ իբր Հորդայի զորքի նկատմամբ տարած հաղթանակի մասին լուրերը կեղծ էին։ Յուրիի կողմում կար միայն Հորդայի մի ջոկատ՝ խանի դեսպան Կավգադիի ղեկավարությամբ, որը մարտում անմիջական մասնակցություն չի ունեցել։

1318 թ. Միխայիլը և Յուրին գնացին Հորդա։ Այստեղ Տվերի իշխանին մեղադրանք ներկայացվեց հարկերը չվճարելու, խանի դեսպանին հակառակվելու և խանի քրոջ մահվան համար։ 1318 թ. նոյեմբերի 22-ին Միխայիլ Յարոսլավիչը մահապատժի ենթարկվեց։ Սակայն Յուրի Դանիլովիչը չկարողացավ երկար ժամանակով պահել Մեծ իշխանի տիտղոսը։ 1322 թ. նա հավաքած հարկերը չուղարկեց Հորդա, որից օգտվեց Տվերի նոր իշխան Միխայիլի որդի Դմիտրին։ Նա եկավ Ուզբեկի մոտ՝ Յուրիից

բողոքելու, և ստացավ Մեծ իշխանի տիտղոսի հրամանագիրը: Այնուամենայնիվ Յուրին շարունակում էր Մեծ իշխան համարել իրեն: 1323 թ. Նովգորոդի և Շվեդիայի միջև կնքված պայմանագրում հենց այս տիտղոսով էլ նա հանդես էր եկել և պահում էր Նովգորոդի գահը: 1324 թ. նա ստիպված գնաց Հորդա՝ դատաքննության: Այնտեղ էր գտնվում նաև Դմիտրի Միխայլովիչը, որը, առանց սպասելու խանի որոշմանը, սպանեց Յուրիին: Այդ կամայական անձնահաճ քայլի համար որոշ ժամանակ անց նա մահապատժի ենթարկվեց, բայց մեծ իշխանի տիտղոսը Ուզբեկ խանը հրամանագրով վերստին տվեց Տվերի իշխանական տանը, այս անգամ՝ Դմիտրիի եղբորը՝ Ալեքսանդրին:

Շուտով պատմական հանգամանքները նորից դասավորվեցին հօգուտ Մոսկվայի: 1327 թ. Տվերում բռնկվեց տարերային ապստամբություն՝ ընդդեմ թաթարական ջոկատի, որը գլխավորում էր խանի դեսպան Չոլխանը՝ Ուզբեկ խանի հորեղբոր որդին: Մեծ իշխան Ալեքսանդր Միխայիլովիչը սատարում էր ապստամբներին: Հետևանքը եղավ Հորդայի զորքերի արշավը Տվեր, որին ակտիվորեն մասնակցում էր Մոսկվայի նոր իշխան Յուրիի կրտսեր եղբայր Իվան Կալիտան: Այս իրադարձություններից հետո նա ստացավ Մեծ իշխանի տիտղոսը՝ այդ իրավունքը կիսելով Սուզդալի իշխան Ալեքսանդր Միխայիլովիչի հետ: Վերջինիս մահից հետո (1331 թ.) Իվան Դանիլովիչը մնաց Վլադիմիրի միակ Մեծ իշխանը:

Իվան Դանիլովիչ Կալիտային՝ Մոսկվայի տներից առաջինին, հաջողվեց մնալ Մեծ իշխան մինչև իր կյանքի վերջը (1340 թ.): Այդ ընթացքում նա կարողացավ ընդլայնել Մեծ իշխանի տան կալվածքները: Իվանը ստացավ նաև Ռոստովի իշխանության կեսին՝ Դմիտրովի իշխանական տանը տիրելու հրամանագրերը: Նա Գալիչի, Ուգլիչի, Բելոզերոյի իշխաններից գնեց դրանց տիրելու գերագույն ինքնիշխանության իրավունքը, որից հետո տեղի իշխանների կարգավիճակը դարձավ մեծ իշխանին «ծառայող իշխաններ»:

Իվան Կալիտայի օրոք համայն Ռուսիայի մետրոպոլիտի նստավայրը տեղափոխվեց Մոսկվա: Դեռևս Մաքսիմի օրոք (1299 թ.) այն Կիևից տեղափոխվել էր Վլադիմիր, իսկ հաջորդ մետրոպոլիտի՝ Պյոտրի (1308–1326) նստավայրն արդեն Մոսկվայում էր: Ի դեպ, այնտեղ էր հաստատվել նաև մետրոպոլիտ Պյոտրին փոխարինող հույն Ֆեոգնոստը (1328–1353): Ըստ որում՝ մետրոպոլիտի մայր տաճարը ձևականորեն մինչև XV դ. կեսերը գտնվում էր Կիևում և միայն 1354 թ.՝ Մեծ իշխան Իվան Իվանովիչ Կալիտայի որդու օրոք, պատրիարքությունը մետրոպոլիտի երկրորդ նստավայր ճանաչեց Վլադիմիրը: Ինչ վերաբերում է մետրոպոլիտ Պյոտրին, ապա Իվան Կալիտան հասավ նրա սրբագործմանը, որի արդյունքում Պյոտրը դարձավ առաջին մոսկովյան սուրբը:



Իվան Կալիտա: Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին:

Իվան Կալիտայի մահից հետո մեծ իշխան դարձավ նրա ավագ որդի Սեմեոնը (1340–1353)։ Այդուհանդերձ, չցանկանալով չափից ավելի ուժեղացնել Մոսկվան, Ուզբեկը անջատեց Մեծ իշխանությունից Վլադիմիրի և Նովգորոդի իշխանական տները, որոնք Սուզդալի իշխանի կողմից էին հանձնված Մոսկվայի իշխանական տանը։ Այնուամենայնիվ Սեմեոն Իվանիչը կարողացավ ունենալ կարևոր ձեռքբերումներ. ստանալ անժառանգ մնացած Յուրևի իշխանությունը, իսկ իրեն պատկանող Մոսկվային միավորել Օկայի ձախ ափին գտնվող Ռյազանը։

Սեմեոնի իրավահաջորդը՝ նրա եղբայր Իվան Իվանովիչը, դարձավ Մոսկվայի իշխանական տան և Վլադիմիրի մեծ իշխան։ Նրա իշխանավարումը երկար չտևեց։ Իվան Իվանովիչը մահացավ 1359 թ. նոյեմբերին։ Այդ նույն ժամանակ Հորդայում սկսվեց երկպառակիչ պայքար, փոխվեցին մի քանի խաներ։ Երբ նոր-նոր գահին նստած Նավրուզ խանի մոտ եկան ռուս իշխանները, խանը Իվան Իվանիչի 9-ամյա որդու՝ Դմիտրիի փոխարեն գերադասեց նիժեգորոդյան իշխան Անդրեյ Կոնստանտինովիչին։ Վերջինս, սակայն, հրաժարվեց հրամանագրից հօգուտ իր կրտսեր եղբոր՝ սուզդալյան իշխան Դմիտրիի։ 1360 թ. ամռանը Դմիտրին զբաղեցրեց Վլադիմիրի գահը։

«Մեծ իշխանական տուն» տիտղոսի կորուստը նշանակում էր՝ մոսկովյան իշխանների տիրակալությունից դուրս էին մնում հսկայական տարածքներ, այդ թվում՝ Վլադիմիր, Պերեյասլավլ, Կոստրոմա, Յուրև-Պոլսկ, Դմիտրով, Յարոսլավլ քաղաքները։



Դմիտրի Դոնսկոյ։ Որմնանկար Մոսկվայի Կրեմլի Տաշածաքար պալատում։

Դմիտրի Դոնսկոյ։ Երեսունամյա շրջանը, որի ընթացքում Մեծ իշխանությունը պահպանում էին մոսկովյան իշխանները, զուր չանցավ։ Մոնղոլական ավանդական քաղաքականությունը՝ թույլ չտալ վասալ կառավարիչներից որևէ մեկի չափից ավելի ուժեղացումը, այս դեպքում չաշխատեց։ Հորդայի փորձը՝ 1350–1360-ական թթ. փոխել ուժերի հարաբերակցությունը Հյուսիսարևելյան Ռուսիայում, նույնպես չհաջողվեց ոչ միայն այդ ընթացքում մոսկովյան ներուժի կուտակման շնորհիվ, այլև հենց Հորդայում տիրող իրավիճակի սրացման պատճառով։ Արդեն 1362 թ., օգտվելով Հորդայում առկա կառավարիչխաների՝ միմյանց դեմ ունեցած մի քանի հակամարտություններից, մոսկվացիները Դմիտրի Իվանովիչի համար կարողացան ստանալ Մեծ իշխանի հրամանագիրը։ Դմիտրի Կոնստանտինովիչի՝ նախապես իր համար հրամանագիր ապահովելու փորձը՝ Վլադիմիրի մեծ իշխանի գահին վերադառնալու նպատակով, 1363 թ. անհաջողության մատնվեց ռազմական ուժի գործադրմամբ։ Այսպիսով, երեք տարվա ընթացքում Մոսկվան վերականգնեց իր դիրքերը, որ գոյություն ունեին Իվան Իվանովիչի

ժամանակ: 1360-ական թթ. վերջին, երբ Դմիտրին մեծացել, հասունացել էր, հրահրվեց Մոսկվայի և Տվերի միջև հակամարտությունը: Չցանկանալով ենթարկվել Մոսկվայի իշխանների կամքին՝ Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը արշավանք սկսեց: Նա իր կողմն էր գրավել Լիտվայի՝ քրոջ հետ ամուսնացած Մեծ իշխան Օլգերդին, նաև փորձում էր նախապես ստանալ Մամայ էմիրի (իշխանի) աջակցությունը: Այդ ժամանակ Մամայը արևմտյան Հորդայի՝ Վոլգայից արևմուտք ընկած հողերի գլխավորն էր:

1371 թ. Մամայը իր դրածո Մուհամեդ–Բյուլեկ խանի անունից (Մամայն այդպես էլ չկարողացավ դառնալ խան, քանի որ Չինգիզ խանի ժառանգներից, սերնդից չէր) Վլադիմիրի Մեծ իշխանի տիտղոսի վերաբերյալ հրամանագիր հանձնեց Միխայիլին: Սակայն նույն թվականին Դմիտրի Մոսկովսկին եկավ Հորդա և հարուստ նվերների գնով կարողացավ ստանալ հրամանագիրը իր անունով: Օլգերդը 1368, 1370 և 1372 թվականներին երեք արշավանք իրականացրեց Մոսկվայի դեմ, սակայն հաջողության չհասավ: Համաձայն 1372 թվականի ամռանը կնքած պայմանագրի՝ Մեծ իշխանական տունը ճանաչվեց Դմիտրիի ժառանգական կալվածք, իսկ Օլգերդը պարտավորվեց չաջակցել Միխայիլ Տվերսկոյին:

1374 թվականին Դմիտրիի և Մամայի միջև հակասություն առաջացավ, որը վերածվեց վեցամյա պատերազմի:


Առաջին անգամ ռուսական իշխանական տունը բացահայտ հակամարտում էր Հորդայի հետ: Բայց Մամայի հետ հակամարտությունը չսասանեց Հորդայի՝ Ռուսաստանի նկատմամբ խան-ցարի իշխանության ավանդաբար օրինական համարվելը, քանի որ հաշվարկված էր մի իրավիճակ, որի ժամանակ Հորդայում իրական իշխանությունը ոչ թե խանի ձեռքում էր, այլ ժամանակավոր մեկի. դա ընդունված նորմի խախտում էր: Հետևաբար Մամայի դեմ պայքարը դիտվում էր որպես կռիվ անօրինական իշխողի դեմ:

Այս իրավիճակում Միխայիլ Ալեքսանդրովիչ Տվերսկոյը կրկին ներկայացրեց Վլադիմիրի Մեծ իշխանի տիտղոսը վերցնելու պահանջ և 1375 թ. Մամայից ստացավ Մեծ իշխանի հրամանագիրը: Ի պատասխան այդ հրամանագրի՝ Դմիտրի Իվանովիչ Մոսկովսկու գլխավորությամբ դեպի Տվեր շարժվեց հսկայական զորախումբ, որի մեջ մտնում էին Հյուսիսարևելյան Ռուսիայի բոլոր իշխանական տների ջոկատները, ինչպես նաև Չեռնիգովյան, Սմոլենսկյան հողերի իշխանական մի շարք տների ջոկատները և նովգորոդցիները: Միխայիլ Տվերսկոյի իշխանական տունը հարկադրված էր կապիտուլյացիայի ենթարկվել՝ ճանաչելով իրեն Դմիտրիի վասալ («կրտսեր եղբայր»), իսկ Մեծ իշխանական տունը՝ վերջինիս հայրական ժառանգությունը («отчина»):[8]

Սրան Մամայը պատասխանեց՝ Մոսկվայի դաշնակիցների տարածքներին հարվածելով: 1377 թ. նրա զորքը Պյանե գետի մոտ պարտության մատնեց մոսկովյան և նիժեգորոդյան ազնվականության գնդերին: 1378 թ. Մամայը Բեգիչի գլխավորությամբ զորք ուղարկեց Մոսկվայի վրա, բայց Դմիտրին Վոժե գետի մոտ՝ Ռյազանի հողերի սահմանին, ջախջախեց մոնղոլական զորքին:

---

[8] *Отчина* – Ռուսիայում հողը ժառանգելու տեսակ, որով կալվածքը հորից անցնում էր որդուն:



Կուլիկովյան ճակատամարտը։ Մանրանկար՝ ծաղկած ձեռագիր տարեգրությունից, XVI դ.

1380 թ. Մամայը, այլևս հույս չդնելով սեփական ուժերի վրա, դաշինք կնքեց Լիտվայի մեծ իշխանի՝ Օլգերդի որդի Յագայլոյի հետ։ Վերջինս զորքով գնաց միանալու Մամային, և եթե դա տեղի ունենար, ապա Մոսկվայի հակառակորդները ուժերի զգալի առավելություն կունենային։ Բացի այդ՝ Մամայը ստիպել էր Ռյազանի իշխան Օլեգ Իվանովիչին ճանաչել իր իշխանությունը։

Օլեգի զորքն այդպես էլ չմիացավ Մամայի զորքին, ավելին, Ռյազանի իշխանը Դմիտրիին լուր տվեց Հորդայի զորքի տեղաշարժի մասին։ Իմանալով Մամայի նպատակների մասին՝ Դմիտրի Իվանովիչը կարողացավ մեծ ուժեր հավաքել։ Մոսկովյան իշխանական տան և Վլադիմիրյան մեծ իշխանության զորքերից բացի՝ Դմիտրի Իվանովիչի դրոշի տակ հավաքվեցին ուրիշ իշխանական տների (Յարոսլավլի, Վյազեմսկի, Տարուսսկի, Նովոսիլսկի) զորքերը։ Մոսկվա ներկայացան և Դմիտրիի մոտ ծառայության անցան նաև լիտվական զորքերը՝ Յագայլոյի եղբայրների՝ Անդրեյ և Դմիտրի Օլգերդովիչների գլխավորությամբ։

Օգոստոսի կեսերին ռուսական զորքը Մոսկվայից շարժվեց դեպի Կոլոմնա։ Այստեղ էին եկել Մամայի պատվիրակները։ Նրանք պահանջում էին վճարել ճիշտ այնքան հարկ, որքան վճարվել էր Ջանիբեկ խանի ժամանակ (1340–1350 թթ.)։ Դմիտրին դեռևս 1371 թ. Մամայի հետ համաձայնեցրել էր մի նվազագույն վճար, որը դադարեցվել էր 1374 թ.։ Պայմանավորվել չհաջողվեց։ Կողմերը համաձայնության չեկան։

Օգոստոսի վերջին Դմիտրին զորքով շարժվեց Օկա գետի մյուս կողմը և հասավ Դոնի վերին հոսանքներին, որն արդեն Հորդայի տարածքն էր։ Այստեղից հետախուզությունը տեղեկություններ բերեց, որ Մամայը զորքով կանգնած է Դոնի ափին և սպասում է Յագայլոյի լիտվացիներին։ Այդ ժամանակ, որպեսզի թույլ չտան հակառակորդի ուժերի միավորումը, Դմիտրին որոշեց Դոնի ձախ ափից անցնել աջ ափ, որը նույնպես Հորդայի տարածքն էր, և անմիջապես մարտի բռնվել։

Ճակատամարտի տեղը Կուլիկովյան դաշտն էր, որը գտնվում էր Դոնի և նրա աջ վտակ Նեպրյավդվոյի միջև։ Ռուսական զորքերը հինգ գունդ էին։ Առջևում «պահակային» գունդն էր, նրա հետևում՝ «մեծ» գունդը, եզրերում՝ աջ և ձախ գնդերը։ Կաղամախուտում դարանակալել էր մի գունդ՝ Վլադիմիր Անդրեևիչ Սերպուխովսկու և վոյեվոդ Դմիտրի Միխայլովիչ Բոբրոկ-Վոլինսկու գլխավորությամբ[9]։

1380 թ. սեպտեմբերի 8-ի առավոտյան Մամայի հեծելազորը հարձակվեց պահակային գնդի վրա։ Հեծելազորի ճնշման տակ գունդը հետ քաշվեց դեպի հիմնական

[9] *Վոյեվոդ* – Ռուսիայում այդպես էին անվանում քաղաքի, գավառի պետին, նաև զորքը ղեկավարողին՝ զորավարին։

ուժերը: Երկու ժամ անընդհատ մոնղոլները փորձում էին կոտրել նրանց, բայց այն պահին, երբ կշեռքի նժարը թեքվում էր դեպի Հորդայի զորքերի կողմը, դարանակալած գունդը հարվածեց հարձակվող կողմի թևին: Դրանով որոշվեց ճակատամարտի ելքը. «մեծ» գունդը կարողացավ հակահարձակման անցնել, և Հորդայի զորքը փախուստի դիմեց: Ռուսական զորքը իրականացրեց Հորդայի հիմնական ուժերի առաջին ջախջախումը: Ըստ որում՝ դա տեղի ունեցավ Հորդայի գրաված հողում: Դմիտրի Իվանովիչին այս հաջողության հետևանքով անվանեցին Դմիտրի Դոնսկոյ:

Թեև հաղթանակը լիակատար էր, բայց հաղթողները հսկայական կորուստներ ունեցան: Մամայը, փախչելով մարտի դաշտից, փորձեց մնացած զորքը հավաքել՝ Ռուսիայի վրա նոր արշավանքի համար: Բայց նա ստիպված էր Թոխտամիշ խանի դեմ դուրս գալ, որը 1380 թ. սկզբին տիրում էր Հորդայի արևելյան և վոլգյան հատվածը: Մարտ տեղի չունեցավ. Մամայի էմիրները անցան օրինական տիրակալի կողմը, իսկ ժամանակավորը (Մամայը) փախավ Ղրիմ, որտեղ էլ շուտով սպանվեց:

Այսպիսով, Դմիտրի Դոնսկոյը թույլ չտվեց Մամային վերականգնելու իշխանությունը ռուսական հողերի նկատմամբ: Սակայն Կուլիկովյան հաղթանակի շնորհիվ գրանցվեց մեկ այլ արդյունք՝ Հորդայի միասնականության վերականգնումը, որի իշխանությունը զավթեց խան Թոխտամիշը:

Ավանդաբար ընդունված է համարել, որ Թոխտամիշ խանի՝ 1382 թ. հաջող արշավանքը դեպի Մոսկվա վերականգնեց Հյուսիսարևելյան Ռուսիայի կախվածությունը Ոսկե հորդայից, որը վերացված էր Մամայի տիրապետության տարիներին: Այդուամենայնիվ, իրադարձությունների այդպիսի մեկնությունը չի համապատասխանում իրականությանը: Ինչպես վերևում ասվեց, Մամայի հետ Դմիտրի Իվանովիչի հակամարտությունը պայքար էր ապօրինի խանի («ցարի») դեմ, որը փաստացի տիրում էր Հորդայի իշխանությանը: Օրինական և իրական կառավարող «ցարերի» ավատահիշխանությունը (սյուզերենիտետ) այդ հակամարտության մեջ չէր ժխտվում: Այդ պատճառով էլ Կուլիկովյան հաղթանակը մեկ որոշակի արշավանքի արդյունքն էր, բայց ոչ օտար իշխանության տապալում ընդհանրապես: Երբ իշխանության եկավ օրինական խանը՝ Թոխտամիշը (այսինքն՝ Չինգիզ խանի ժառանգը), Մոսկվայում ճանաչեցին նրա իշխանությունը իրենց նկատմամբ: Սակայն Դմիտրին չէր շտապում վերականգնել հարկերի վճարումը: Դա պատճառ եղավ, որ 1382 թ. Թոխտամիշը արշավանք կատարի դեպի Մոսկվա, գրավի և ավերի այն:

Այս հակամատության արդյունքը սովորաբար գնահատվում է որպես Մոսկվայի լիակատար պարտություն: Սակայն այդ դեպքում ինչո՞ւ Թոխտամիշը Դմիտրիին թողեց Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսը, մանավանդ որ Մամայը երկու անգամ՝ 1371 և 1375 թթ. հրամանագրերով Մեծ իշխան էր նշանակել Միխայիլ Ալեքսանդրովիչ Տվերսկուն:

1382 թ. խանի կողմից Մոսկվան ավերակների վերածելու փաստը չպետք է մթագնի հակամարտության արդյունքների ընդհանուր պատկերը: Հորդայի զորքերի մոտենալու ժամանակ Դմիտրին հեռացավ մայրաքաղաքից: Թոխտամիշը, երբ օգոստոսի վերջին վերցրեց Մոսկվան, Դմիտրիին չկարողացավ պայմաններ թելադրել:

Ընդհակառակը, ստիպված էր արագ հեռանալ Մոսկվայից՝ վախենալով հակահարվածից։ Ավելին, Մոսկվա-Հորդա հակամարտությունը Հյուսիսարևելյան Ռուսիայի գլխավոր քաղաքի ավերմամբ չի ավարտվել։ 1382 թ. աշնանը Դմիտրին ավերեց խանի կողմը բռնած իշխան Օլեգի ռյազանյան հողը՝ ցույց տալով նրան Օկայի ծանծաղուտները։ Այդ ժամանակ Մոսկվա եկավ խանի պատվիրակը՝ Դմիտրիից պահանջելով գնալ Հորդա։ Այսպիսով, Թոխտամիշի հեռանալուց հետո Դմիտրին խանի մոտ անգամ պատվիրակ չուղարկեց՝ սպասելով, թե երբ խանն ինքը հաշտության քայլը կկատարի։ Պատվիրակի այցից հետո էլ Մեծ իշխանը չէր շտապում, և Հորդա պատվիրակություն գնաց միայն հաջորդ՝ 1383 թ. գարնանը։ Ընդ որում՝ Դմիտրին ինքը չգնաց, պատվիրակությունը անվանապես գլխավորում էր նրա ավագ որդին՝ 11-ամյա Վասիլին։

Այդ ժամանակ՝ դեռևս 1382 թ. աշնանից, Հորդայում էր գտնվում Միխայիլ Տվերսկոյը։ Նա ոչ առանց հիմքի հաշվարկել էր, որ Թոխտամիշից պետք է ստանա Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսի հրամանագիրը։ Սակայն այդ ծրագիրը չիրականացավ։ Խանը ոչ միայն Դմիտրի Դոնսկոյին տվեց Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսը, այլև Մեծ իշխանական տունը ճանաչեց որպես Մոսկվայի իշխանական տան ժառանգաբար անցնող սեփականություն, այսինքն՝ արեց այն, ինչը երկար տարիներ Դմիտրին փորձում էր ստանալ հարևան ռուս իշխաններից, և ինչը չէր արել Մամայը։ Ի պատասխան այդ քայլի՝ Մոսկվան համաձայնեց վճարել հարկերից առաջացած պարտքերը։ Թոխտամիշը գերադասեց չշարունակել Մոսկվայի հետ հակամարտությունը՝ հաշվի առնելով նրա բացահայտ գերազանցությունը Հյուսիսարևելյան Ռուսիայի մյուս իշխանական տների նկատմամբ։ Որպես փոխհատուցում Տվերի իշխանին՝ նրա կալվածքները (հյուսիսարևելյան քաղաքական այլ կազմավորումներ՝ նիժեգորոդյան–սուզդալյան և յարոսլավլյան իշխանական տները) դուրս բերեց Վլադիմիրի մեծ իշխանի տիրապետությունից և վերադարձրեց Տվերի իշխանին։

Դրանով հին համակարգը, որով Մեծ իշխան էր դառնում Հյուսիսարևելյան Ռուսիայի իշխաններից նա, ով իշխանական վճռորոշ արտոնություններ էր ունենում մյուս իշխանների նկատմամբ, դադարեց գոյություն ունենալ։ Փաստորեն մոսկովյան իշխանական տունը ժառանգաբար ստացավ «Համայն Ռուսիայի մեծ իշխաններ» անվանական կարգավիճակը, իսկ մյուսները դարձան ինքնուրույն։

Բռնատեր Մամային չենթարկվելը չէր ենթադրում հորդայական խան-ցարի գերիշխանության ժխտում. նրա իշխանությունը շարունակում էին ընդունել։ Իսկ ահա առանց հարկերը վճարելու օրինական խանի հետ հարաբերությունները չհաջողվեց կառուցել։ Հորդայում իշխանությունը օրինական խանինն էր, նրան էլ վճարվում էին հարկերը։

Թոխտամիշի հետ հարաբերությունները չնվազեցրին Կուլիկովյան ճակատամարտի նշանակությունը ժամանակակիցների պատկերացումներում և սերունդների հիշողությունում. այն դարերի միջով անցավ և դարձավ ռազմական սխրանքի խորհրդանիշ. դրան նվիրված գրական գործեր ստեղծվեցին և՛ XIV դ. վերջին, և՛ XV, և՛ XVI դարերում։

Դմիտրի Դոնսկոյը իր ամբողջ գործունեության ընթացքում նպատակադրված էր Վլադիմիրի մեծ իշխանությունը վերածել ժառանգական տիրույթի՝ այն զերծ պահելով Հյուսիսարևելյան Ռուսիայի այլ իշխանական տների հավակնություններից և ազատելով Հորդայի կողմից ուղղակի կարգավորման ազդեցությունից՝ միավորելով այն Մոսկովյան իշխանությանը՝ որպես միասնական կենտրոնացված պետության հիմք: 1372 թ. նրան հաջողվեց հասնել դրան Լիտվայի, 1375 թ. Տվերի կողմից ճանաչմամբ: 1383 թ. Դմիտրիին հաջողվեց Հորդայի խանից հրամանագիր ստանալ, որով Մեծ իշխանությունը ճանաչվում էր որպես Մոսկովյան իշխանական տան ժառանգություն: Այսպիսով՝ Մոսկվայի իշխանությանը հաջողվեց ռազմական պարտությունը վերածել քաղաքական խոշոր հաղթանակի: Որպես արդյունք՝ իր կտակում, որը գրել էր մահից առաջ (1389 թ. մայիսի 19-ին), Դմիտրին առաջինն էր Մոսկվայի իշխաններից, որ փոխանցեց իր որդուն՝ Վասիլիին, Մոսկվայի և Վլադիմիրի մեծ իշխանական տների կառավարումը: Ապագա Ռուսաստանի պետական տարածքների ձևավորման հիմքը դրեց Մոսկվայի և Վլադիմիրի իշխանական տների միավորումը:

§ 15. Արևելյան Եվրոպան XIV–XV դարերում

Արևելասլավոնական հողերը և «մեծ իշխանական» տների կազմավորումը Արևելյան Եվրոպայում: «Հորդայի շրջանում» (XIII դարի երկրորդ կեսից մինչև XV դ.) ռուսական հողերում տեղի ունեցան տարածաքաղաքական էական փոփոխություններ: Եթե Բաթու խանի արշավանքի նախօրեին Ռուսիայում գոյություն ուներ մեկ տասնյակից ավելի խոշոր քաղաքական կազմավորումներ, ապա երկուսուկես դար անց՝ XV դարի վերջին՝ Հորդայի պետության կործանումից և ռուսական հողերի՝ Հորդայի կախվածությունից ազատելուց հետո, արևելասլավոնական տարածքներում ձևավորվել էր բոլորովին այլ քաղաքական իրավիճակ:

Գերիշխում էին երկու խոշոր պետական կազմավորումներ՝ Լիտվայի մեծ իշխանությունը (սլավոն, լիտվացի բնակչության առկայությամբ և այն տարածքային միջուկով, որի 9/10 մասը կազմում էին ռուսական հողերը) և մոսկովյան մեծ իշխանությունը: Որպես հին կառուցվածքի մնացուկներ՝ պահպանվել էին միայն երկու հողեր՝ Պսկովինը (XIV դ. անջատված Նովգորոդից) և Ռյազանինը (երկուսն էլ ուժեղ կախվածության մեջ էին Մոսկվայից): Այդպիսով, XIII դարի երկրորդ կեսից մինչև XV դ. Արևելյան Եվրոպայում տեղի ունեցավ տարածքաքաղաքական խոշոր վերաբաժանում, որի ժամանակ «հողերի» հաստատված կայուն վիճակը փոխվեց: Տեղի ունեցան մասշտաբային վերամիավորումներ քաղաքական մեկ կազմավորումից մեկ այլ կազմավորման մեջ (դրանց անվանում էին «հորինվածներ» – «примыслами»), որի արդյունքում, ի վերջո, քաղաքական ասպարեզում մնացին երկու իրական ուժեր: «Հորինվածների», այսինքն՝ կազմավորումների փոփոխությունները ոչ միայն Մոսկվայի և Լիտվայի իշխաններին էին բնութագրական: «Օտար» հողերի վերամիավորում իրականացնում էին նաև Ռյազանի և Սմոլենսկի իշխանները, իսկ Հյուսիսարևելյան Ռուսիայի սահմաններում՝ որպես Վլադիմիրի մեծ իշխանություն, վերամիավորում էին

իրականացնում Պերեսլյավլյանսկը, Ռոստովը, Սուզդալը և Տվերը։ Հյուսիսարևելյան Ռուսիայում «օտար» հողերի վերամիավորումը իրականացրին ոչ թե մոսկովյան, այլ Պերեսլյավլ-Զալեսսկու, Ռոստովի և Յարոսլավլի իշխանները։ Այսինքն՝ «հորինված-ները» մի երևույթ էր, որը բնորոշ էր արևելասլավոնական հողերի քաղաքական զար-գացմանը «հորդայական շրջանում»։

Մինչև 1478 թ., երբ մոսկովյան իշխանները միավորեցին Մեծ Նովգորոդը, ռու-սական տարածքին «հորինված հողերի» միավորումը զավթելու ճանապարհով չի իրագործվել։ Ուժով խլվել են միայն Հորդային և Լիտվային պատկանող տարածքները, ռուսական քաղաքները և գավառները միավորում էին այս կամ այն «իրավական»՝ այդ ժամանակ ունեցած պատկերացումների տեսանկյունից։ Իրականությանը չի համա-պատասխանում նաև տարածված այն պատկերացումը, թե, իբր անցնելով լիտվական իշխանության ներքո, ռուսական հողերը ազատվում էին հորդայական կախվածությու-նից (ինչի պատճառով էլ իբր ձգտում էին լինել Լիտվայի «ձեռքի տակ»)։ Այդ հողերից հարկերը Հորդա էին գնում նաև Լիտվայի՝ մեծ իշխանության կազմի մեջ մտնելուց հետո էլ՝ նրանց իշխանների՝ Հորդայի կառավարության հետ ունեցած համաձայնագրով։

Ռուսական հողերի տարածաքաքաղաքական փոփոխությունները Հորդայի անմիջական նախաձեռնությամբ հազվադեպ էին լինում։ Մեծ մասամբ նախաձեռնու-թյունը գալիս էր ռուս իշխաններից. Հորդան միայն սատարում էր և օգտվում դրանից։ Բայց XIII դ. կեսերին Արևելյան Եվրոպայում գլխավոր իշխանության կենտրոնի ի հայտ գալը ոչ ռուսական հողերին այդպիսի փոփոխությունների հնարավորություն տվեց։ Սկզբունքորեն խանը կարող էր ընդունել ցանկացած որոշում իշխանական տների վերաբերյալ. մնում էր միայն գտնել «իրավական հիմնավորումը»՝ այս կամ այն տարածքի յուրացման համար, և հասնել հորդայական կառավարիչների բարեհաճու-թյանը։ Իշխանները սկսեցին ակտիվորեն օգտվել այդ հնարավորություններից։ Մյուս-ներից լավ դա իրականացնում էին լիտվական և մոսկովյան իշխանները, ինչի հե-տևանքով Արևելյան Եվրոպայի քարտեզի վրա տասնյակ «ավելորդ» հողեր ի վերջո գրավվեցին երկու իշխանությունների կողմից։

XIII դ. առաջին կեսին ստեղծված Լիտվա պետությունը հակահարված տվեց գերմանացի խաչակիրներին, որոնք փորձում էին զավթել լիտվական տարածքները (ինչպես դա արել էին XIII դ. սկզբներին՝ գրավելով լատվիացիների և էստոնացիների նախնիներով բնակեցված Արևելյան Մերձբալթիկայի հողերը)։ Շատ շուտով Լիտվան սկսեց զավթողական արշավ դեպի ռուսական հողերը, որոնք Բաթու խանի նվաճու-մից հետո թուլացած էին։ XIV դ. սկզբում Լիտվայի կազմում հայտնվեցին Պոլոցկյան և Պինսկյան հողերը։ Լիտվա պետության գլխավորին XIV դ. անվանում էին Մեծ իշխան, այդտեղից էլ պետության անվանումն էր՝ Լիտվական մեծ իշխանություն։ Լիտվան հատկապես ուժեղացավ Գեդեմինի (1316–1341) և նրա որդու՝ Օլգերդի (1345–1377) իշ-խանությունների օրոք։ Օլգերդի օրոք Լիտվային միացվեցին Վոլինյան, Պերեսլյավս-կյան և Կիևյան հողերը, ինչպես նաև Չեռնիգովյան հողերի մեծ մասը և Սմոլենսկյանի մի մասը։

XV դ. սկզբին Վիտովդը (1392–1430) միավորեց Սմոլենսկը: Այդպիսով, Լիտվայի Մեծ իշխանությունը իրեն միացրեց Ռուսիայի զգալի մասը՝ նրա հարավային և արևմտյան հողերը, բացի Գալիցկյանից, որն անցել էր Լեհաստանին:

Լիտվա պետությունը կառուցվել էր ռուսականի օրինակով: Գործում էին ռուսական իրավական նորմերը, գործավարության լեզուն ռուսերենն էր (հին ռուսերենը), լիտվական ազնվականության շրջանում տարածվեց ուղղափառությունը, թեև կառավարող դինաստիայի մեծամասնությունը՝ Գեդեմինովիչները, մնացել էին հեթանոս: Լիտվայի մեծ իշխանության լիակատար «ռուսացմանը» խանգարեց 1385 թ. Լիտվայի և Լեհաստանի միավորումը (Կրևյան միավորում), որից հետո Գեդեմինովիչները սկսեցին կառավարել Լեհական թագավորությունում, իսկ լիտվացիները, այդ թվում՝ ազնվականությունը և կառավարող տան անդամների մի մասը մկրտվեցին՝ ընդունելով կաթոլիկություն: Այդուամենայնիվ, մինչև XVII դարը ռուսերենը մնաց Լիտվայի մեծ իշխանության պետական լեզուն:

Նույն ժամանակահատվածում հյուսիսարևելյան Ռուսիայում XIV դ. առաջանում է ռուսական հողերը միավորելու այնպիսի կենտրոն, ինչպիսին Մոսկվան էր: Մոսկովյան իշխանները հաղթեցին Վլադիմիրի իշխանական մեծ տան համար պայքարում, որին տիրանալը իրավունք էր տալիս կոչվելու «Համայն Ռուսիայի մեծ իշխաններ»: «Համայն Ռուսիայի մեծ իշխան» տիտղոսը, որը կիրառվում էր արդեն XIV դ.սկզբից, ներառում էր մինչմոնղոլական դարաշրջանում եղած Կիևյան իշխանների կոչումները: Դրանք էին՝ «Համայն Ռուսիայի իշխան» տիտղոսը՝ առանց «մեծ» մակդիրի, ինչպես նաև «Սուզդալյան մեծ իշխան» կոչումը, որը, Վսեվոլոդ Մեծ Բույն իշխանից սկսած, շնորհվում էր այն իշխաններին, որոնք նստում էին Վլադիմիրի գահին: Դմիտրի Դոնսկոյի կառավարման վերջին տարիներին մոսկովյան իշխանների վերահսկողության տակ էր անցել նախկին Սուզդալի հողերի մեծ մասը: Բացի իր նախորդների կողմից իրականացված հողերի միավորումներից՝ Դմիտրին վերացրեց Ռոստովի և Ստարոդուբսկի իշխանությունների ինքնավարությունը, իսկ տեղական իշխանները վերածվեցին իրեն «ծառայող» իշխանների: Հյուսիսարևելյան Ռուսիայում Մոսկվայից անկախ մնացին միայն Տվերի, Սուզդալ-Նիժեգորոդի և Յարոսլավլի իշխանական տները: Ռյազանի և Մուրոմի հողերը ճանաչեցին Մոսկվայի քաղաքական գերակայությունը: Նովգորոդյան հողերը ճանաչեցին Մոսկվայի և Վլադիմիրի մեծ իշխանի ավատաիշխանական (սյուզերեն) իրավունքը, իսկ Պսկովի իշխանները չէին կողմնորոշվում որ կողմն անցնել. Պսկովի իշխանությունը տատանվում էր Մոսկվայի և Լիտվայի միջև: Քաղաքական հին կառուցվածքի անհետացմամբ անցյալում մնաց նաև էթնիկ հանրույթի միասնական ռուս (русь) անվանումը: Ռուսիայի հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան տարածքներում սկավում է ռուս՝ նոր անվանմամբ՝ վելիկոռուս (великорусской) ազգի կազմավորումը: Ըստ որում՝ ռուս էթնոանվանումը շարունակվում էր կիրառվել արևելասլավոնական ողջ տարածքում: Եթե մինչմոնղոլական շրջանում դա նշանակում էր կա՛մ ամբողջությամբ միմյանց միավորված ռուսական հողեր, կա՛մ Միջին Դնեպրյան ավազանում գտնվող (Կիևյան իշխանությունը Պերեյասլավսկու և Չեռնիգովի մի մասի հետ) «ռուսական հողեր», ապա XIII դ. երկրորդ

կեսին և XIV դ. Ռուսիայի տարբեր մասերում նկատվում էր այս անվանմամբ իրենց հողը կոչելու միտումը: Այսպես, XIV դ. Հյուսիսարևելյան Ռուսիայում սկսեցին ռուսական հողեր կոչել այն տարածքները, որոնց վրա տարածվում էր Վլադիմիրի մեծ իշխանի իշխանությունը, այսինքն՝ նաև Սուզդալյան և Նովգորոդյան հողերը միասին վերցրած:

Մոսկովյան մեծ իշխանությունը XV դ. առաջին կեսին: Վասիլի Առաջին Դմիտրիևիչի (1389-1425) իշխանության սկզբում մոսկովյան տարածքներին միացվեցին նշանակալից չափով նոր տարածքներ: Թոխտամիշ խանի հրամանագրով Վասիլին ստացավ Հյուսիսարևելյան Ռուսիայի խոշորագույն իշխանական տներից մեկը՝ Նիժեգորոդի իշխանական տունը: XIV դ. կեսերին արդեն Մոսկվայից կախվածություն ուներ Մուրոմի իշխանական տունը, թեև ձևականորեն պահպանում էր իր ինքնուրույնությունը, և Տարուսկյան իշխանական տունը՝ Չեռնիգովի հողերի Վերին Օկայի տարածքը: 1390-ականների երկրորդ կեսին՝ Թոխտամիշի ջախջախումից հետո, Միջին Ասիայում ղեկավար է նստում Թեմուրը (1395-ին), և Հորդայում գլուխ է բարձրացնում խառնակությունը (смута): Արդյունքում իրական իշխանությունը հայտնվեց էմիր Եդիգեյի ձեռքում, որը խաներին փոխում էր՝ ըստ իր հայեցողության: Եդիգեյի գլխավոր խնդիրը Թոխտամիշի դեմ պայքարն էր: Վերջինիս աջակցում էր Լիտվայի մեծ իշխան Վիտովտը, որի դստեր հետ էր ամուսնացել Վասիլի Առաջինը: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1399 թ. Վորսկլե գետի մոտ: Ճակատամարտում Վիտովտը և Թոխտամիշը ջախջախվեցին:

Թոխտամիշի անկման ժամանակից սկսած՝ Վասիլի Առաջինը դադարեցրեց Հորդայի հետ հարաբերությունների պահպանումը և հարկերի վճարումը: Բացի այդ, ի պատասխան սուզդալյան-նիժեգորոդյան իշխանական տան իշխաններից մեկի փորձի՝ զավթել Նիժնի Նովգորոդը, Մոսկովյան զորքը Վասիլի Առաջինի եղբոր՝ Յուրի Դմիտրիևիչի գլխավորությամբ 1399-1400 թթ. ձմռանը արշավանք կազմակերպեց Հորդայի տարածքի խորքերը՝ ավերելով Միջին Պովոլժիեն: 1403 թ. Հորդայի հետ շփումները վերականգնվեցին, այնուամենայնիվ դրանից հետո էլ Վասիլին չվերականգնեց հարկերը: Փաստորեն սա նշանակում էր այդ պայմաններում չընդունել կախյալությունը, երբ իրական իշխանությունը Հորդայում, ինչպես և Մամայի ժամանակ, պատկանում էր ժամանակավոր մեկի և ոչ թե իսկական «ցարին»: Այս քաղաքականության արդյունքում 1408 թ. Եդիգեյը արշավեց Մոսկվայի վրա: Ժամանակավորի զորքերը քաղաքը պաշարեցին: Վասիլի Առաջինը հեռացավ մայրաքաղաքից՝ պաշտպանությունը թողնելով ղեկավարելու իր քեռուն՝ Կուլիկովյան ճակատամարտի հերոս Վլադիմիր Անդրեևիչ Սերպուխովսկուն, և եղբայրներին՝ Անդրեյին ու Պյոտրին: Շուտով Հորդայից լուր ստանալով, որ Թոխտամիշի որդին փորձում է գահընկեց անել իր նշանակած խամաճիկ խանին, Եդիգեյը հեռացավ Մոսկվայից: Եդիգեյի արշավանքը չնպաստեց Վասիլի Առաջինի հետ համաձայնության գալուն: Եդիգեյի կառավարման շրջանում՝ մինչև 1411 թ., իսկ հետո՝ 1414-ին, Եդիգեյի վերադարձը իշխանության ոչ միայն չնպաստեց հարկերը վճարելուն, այլև պահպանվեց Հորդայի հետ պատերազմական վիճակը: Պատերազմական գործողություններ էին տարվում Նիժեգորոդյան իշխանա-

կան տան դեմ՝ փորձելով Եդիգեյի միջոցով վերադարձնել Նիժնի Նովգորոդը: 1419 թ. Եդիգեյը զոհվեց երկպառակիչ պատերազմում, և Հորդայում իշխանության եկավ «օրինական» կառավարիչ խան Ուլուգ-Մուհամեդը՝ լիտվացի Վիտովտի դրածոն: Սակայն նա ևս հակառակորդներ ուներ, և Հորդայի գահին Ուլուգ-Մուհամեդը կարողացավ հաստատվել միայն 1420-ական թթ. երկրորդ կեսին: Հորդայում հենց հերթական «խափանումը» կազմակերպելու ժամանակ ստացան Վասիլի Առաջին Դմիտրիևիչի մահվան լուրը (1425 թ. փետրվարի 27-ին): Մոսկվայի մեծ իշխանի միակ մտահոգությունն իր միակ որդուն՝ Վասիլի Վասիլևիչին (ծնված՝ 1415 թ.), գահին նստեցնելն էր: Վասիլի Առաջինն ուներ չորս հարազատ եղբայրներ: Ռուսական հին կարգով կառավարելու իրավունքը գերադասելի էր փոխանցել եղբայրներին, քան որդուն: Որպեսզի ապահովի մեծ իշխանական տան ժառանգումը Վասիլի Վասիլևիչին, Վասիլի Առաջինը նախապես դիմեց մետրոպոլիտ Ֆոտիայի և իր աներ՝ Լիտվայի մեծ իշխան Վիտովտի աջակցությանը: Վասիլին վերջինիս թոռն էր: Ֆոտին և Վիտովտը Վասիլի Առաջինի կտակի երաշխավորը դարձան, որով նա Մեծ իշխանական տունը փոխանցում էր իր որդուն: Դրանից բացի՝ Վասիլի Դմիտրիևիչը իր կենդանության ժամանակ ստացավ որդու՝ Մեծ իշխանության տիրակալ լինելու հրամանագիրը խան Ուլուգ-Մուհամեդից, որը Հորդայում իր հակառակորդների դեմ պայքարում ունեցել էր Վիտովտի աջակցությունը: Սակայն այս բոլոր միջոցները անօգուտ էին. Վասիլի Առաջինի վախճանից հետո Մոսկովյան մեծ իշխանական տանը սկսվեց ձգձգվող երկարատև երկպառակությունը:

Վասիլի Վասիլևիչը հենց նստեց գահին, սկսվեց հակամարտությունը նրա և ավագ հորեղբոր՝ Յուրի Դմիտրիևիչի, Զվենիգորոդի և Գալիցկի իշխանի միջև: Վերջինս համարում էր, որ իշխանությունը պետք է անցնի իրեն: Մետրոպոլիտ Ֆոտիայի միջնորդությամբ Յուրին ժամանակավորապես հրաժարվեց պայքարից, բայց կողմերը պայմանավորվեցին վեճը հանձնել «ցարի» դատին, այսինքն՝ Հորդայի խանին: Վասիլին և Յուրին Հորդա գնացին միայն 1431 թ.: Մինչ այդ Յուրիի պլաններին խանգարում էին Ֆոտին և Վասիլի Երկրորդի պապը՝ հզոր Վիտովտը, որը մահանում է 1430 թ.: Դրանից հետո Լիտվայի մեծ իշխանական տանը նույնպես երկպառակիչ պայքար է սկսվում, որը տևում է 1430-ականների ողջ ընթացքում: 1431 թ. մահանում է նաև համայն Ռուսիայի մետրոպոլիտ Ֆոտին: Այս իրավիճակում Յուրի Դմիտրիևիչը կարող էր Մեծ իշխան դառնալու հույս ունենալ: Բայց Հորդայի խանը Ուլուգ–Մուհամեդն էր, որը Վասիլի Վասիլևիչին դեռևս նրա հոր կենդանության օրոք տվել էր Վլադիմիրի մեծ իշխանի տիտղոսն ու հրամանագիրը: Եվ այս անգամ էլ նա երիտասարդին տվեց մեծ իշխանի տիտղոսը:

Խանի որոշումը չդադարեցրեց զարմիկի և հորեղբայրների միջև պայքարը: 1433 թ. Յուրի Դմիտրիևիչը զավթեց Մեծ իշխանի գահը, հետո մոսկովյան ազնվականության ճնշման տակ զիջեց այն զարմիկին: 1434 թ. Յուրին նորից հեռացրեց Վասիլիին իշխանությունից, բայց շուտով մահացավ, և Վասիլի Վասիլևիչն արդեն դարձավ լիիրավ գահակալ: Այս անգամ նրա դեմ է դուրս գալիս Յուրիի ավագ որդին՝ Վասիլին: Միայն 1436 թ. Մեծ իշխանը կարողացավ հեռացնել Յուրիի որդուն: Դրանից հետո

Վասիլի Երկրորդի դեմ ընդդիմությունը գլխավորեց Յուրի Դմիտրիևիչի մյուս որդին՝ Դմիտրի Շեմյակը: Նրանց միջև հակամարտությունը փուլերով էր՝ պայքար, ապա հանգիստ պահեր, և այսպես՝ մինչև 1445 թ.: Այդ նույն ժամանակ Վասիլի Երկրորդը ստիպված էր կռվել նաև Ուլուգ–Մուհամեդի դեմ, որը հակառակորդների կողմից վռնդվել էր Հորդայից և փորձում էր հաստատվել Նիժնի Նովգորոդում: Վասիլի Երկրորդի զորքը, որին չմիացավ Դմիտրի Շեմյակի գունդը, Սուզդալի տակ պարտություն կրեց Ուլուգ–Մուհամեդի որդուց, իսկ ինքը՝ Մեծ իշխանը, գերի ընկավ: Սկզբում խանը բանակցություններ էր վարում Շեմյակի հետ մեծ իշխանի տիտղոսը նրան տալու համար, բայց հետո գերադասեց գերությունից ազատել Վասիլիին՝ նրան պարտադրելով վճարել հսկայական փրկագին: Մեծ իշխանի՝ հորդայականներին տված պարտավորությունը որպես ծանր բեռ ընկավ բնակչության ուսերին. դա էլ առիթ դարձավ նրա դեմ դավադրության, որը գլխավորում էր Դմիտրի Շեմյակը: 1446 թ. փետրվարին Վասիլի 2-րդին բռնեցին Տրոիցե-Սերգիևի մենաստան ուխտագնացության ժամանակ: Նրան կուրացրին (այստեղից էլ Темный–Խավար մականունը): Շեմյակը նրան և ընտանիքին աքսորեց Ուգլիչ, իսկ հետո՝ Վոլոգդա: Բայց շուտով մոսկովյան շատ ազնվականներ և ծառայողներ սկսեցին անցնել նախկին Մեծ իշխանի կողմը: Նա Տվերի իշխան Բորիս Ալեքսանդրովիչի աջակցությամբ փախավ աքսորավայրից: 1446 թ. վերջին Վասիլիի կողմնակիցների ջոկատը գրավեց Մոսկվան: Դմիտրի Շեմյակը ստիպված էր փախչել Վոլգայից այն կողմ՝ իր կալվածքի կենտրոն Գալիչ: Հակառակորդների միջև ռազմական գործողությունները շարունակվեցին մի քանի տարի: Ի վերջո պարտվելով՝ Շեմյակը փախավ Մեծ Նովգորոդ, որտեղ 1453 թ. Վասիլի 2-րդի հրամանով նրան թունավորեցին:

Երկպառակիչ պատերազմը թուլացրեց Մոսկվայի մեծ իշխանական տան արտաքին քաղաքական դիրքերը: Միայն իր կառավարման վերջում, երբ Վասիլի 2-րդի իշխանությանը ոչինչ չէր սպառնում, նա կարողացավ ընդլայնել մոսկովյան տարածքները՝ գնելով Օկայի աջ ափից մինչև Դոնի վերին հոսանքն ընկած ռյազանյան հողերը:

XV դ. Ռուսիան կառավարողի անվանը ավելացնում էին «ցար» եզրույթը: XV դ. սկզբի գրական հուշարձանում՝ «Բանք»-ում, բազմիցս «ցար» է անվանվել Դմիտրի Դոնսկոյը: Այդ ստեղծագործությունը նվիրված էր վերջինիս գործունեությանը: 1374–1380 թթ. Դմիտրիին այդ իրավունքը տրվեց նրա՝ Մամայի ժամանակ Հորդայից անկախ կառավարում իրականացնելու համար: Եվ այդ կոչմանը Մեծ իշխանն արժանացավ միայն իր մահից հետո: Իսկ ահա Դմիտրիի թոռ Վասիլի 2-րդին իր կենդանության օրոք երբեմն «ցար» էին անվանում: 1440-ական թթ. սկսած՝ անցումային շրջան եղավ Մոսկվայի մեծ իշխաններին «ցար» կոչումով պատվելու հարցում: Ըստ որում, այդ անվանում-տիտղոսի արժանապատիվ լինելը ընդգծելու համար որոշվեց, որ այն տրվի Բյուզանդական կայսրության օրինակով, ինչպես եղել էր մինչմոնղոլական շրջանում: Այս գաղափարը համարվեց բնական, քանի որ Ռուսիան իրեն համարում էր Բյուզանդիայի քաղաքակրթական ժառանգորդը, ուստի Բյուզանդիայի անկումից հետո, որի տիրակալի անունը «կայսր» («ցեզար») էր, որը ռուսերենում «ցար» էր հնչում, ուրեմն Ռուսիայում ևս տիրակալը կոչվեց ցար: 1453 թ. Մոսկվայի մեծ իշխանական տունը

միակ ուղղափառ պետությունն էր, որն իրական ուժ էր ներկայացնում. այդ ժամանակ թուրքերը զավթել էին Բուլղարիան և Սերբիան:

Այդ տարիներին է վերաբերում նաև ռուսական եկեղեցու ինքնուրույնության հաստատումը: Կոնստանդնուպոլսի պատրիարքի կողմից Ֆլորենցիայի միության կայսրին և Հռոմա-կաթոլիկական եկեղեցու որոշումներին հավանություն տալուց հետո (1439) ռուս իշխանները Վասիլի 2-րդի գլխավորությամբ հրաժարվեցին դրանք ընդունել: 1448 թ. Ռյազանի եպիսկոպոս Իոնին, առանց Կ. Պոլսի պատրիարքական աթոռի հավանության, մետրոպոլիտ ընտրեց ռուս եպիսկոպոսների ժողովը: Այդժամ արդեն ռուս եկեղեցու գլխավորին նշանակելը կախված էր միայն Մեծ իշխանի կամքից. այսինքն՝ եկեղեցական գործերում կար միայն մեկ աշխարհիկ ղեկավարի՝ ինքնակալի՝ ցարի արտոնությունը:

Սակայն ցարը չի կարող ենթարկվել մեկ այլ ցարի. նա պետք է լինի ինքնիշխան կառավարիչ: Մոսկվայի մեծ իշխանի ցարական արժանապատվության մասին գաղափարը հակասության մեջ էր Հորդայի՝ դեռևս իշխողի դերում եղող խաների անվանման հետ: Վերջիններս ևս Ռուսիայում ավանդաբար կոչվում էին «ցար»:

Հորդայի փլուզումը: 1380-ական թթ. վերջում Հորդայի խան Թոխտամիշը առճակատման մեջ էր Միջին Ասիայի մոնղոլ ղեկավար Թեմուրի հետ: 1391 և 1395 թթ. կռիվների արդյունքում Թեմուրը ջախջախեց Հորդան՝ ավերելով գլխավոր քաղաքային կենտրոնները: Զավթիչը մոտեցավ Ռուսիայի սահմաններին՝ սնանկացնելով Ելեց քաղաքը: Մոսկվայում պատրաստվում էին արշավանքի հետմղմանը, սակայն հյուսիսային անտառային տարածքներ ներխուժումը Թեմուրի պլանների մեջ չկար, և նա զորքերը տարավ դեպի տափաստան: XIV դ. վերջին՝ այդ ջախջախումից հետո, Հորդայում տեղի է ունենում քաղաքային կյանքի անկում, և ուժեղանում է դեզինտեգրացիոն (ամբողջը մասերի բաժանելու) գործընթացը: 1440-ական թթ. ձևավորվում է Ղրիմի խանությունը, որի տարածքում էին Ղրիմն ամբողջությամբ և հյուսիսից նրա շրջակա տափաստանը: Նրա առաջին խանը դարձավ Հաջի-Գիրեյը: Այդ նույն ժամանակ՝ 1421–1437 թթ., Ուլուգ-Մուհամեդի ժառանգորդների իշխանության ներքո դեռևս համեմատաբար միասնական Հորդայում՝ Միջին Վոլգյան հողերում, ստեղծվում է Կազանի խանությունը: XV դ. կեսերին Արևմտյան Սիբիրի տարածքում կազմավորվում է Սիբիրի խանությունը՝ Բաթու խանի կրտսեր եղբոր ժառանգորդներից Շիբանի գլխավորությամբ: Վոլգայի ստորին հոսանքի ձախ ափին Նոգայների հորդան՝ Եդիգեյի ժառանգների գլխավորությամբ. դրա իշխողները խաներ չէին, քանի որ Եդիգեյը Չինգիզ խանի սերնդից չէր: Նախկին միասնական Հորդայի «կենտրոնական» մասը, որը զբաղեցնում էր Դնեպրից Վոլգա տարածքը, ռուսական աղբյուրներում անվանվել է «Большей Ордой», այսինքն՝ Գլխավոր Հորդա: Նրա ղեկավարը ձևականորեն համարվում էր մյուս խաներից անկախ ավատաիշխան: Հենց Գլխավոր հորդայի խաներին էին ընդունում Մոսկվայի մեծ իշխանությունում և շարունակում էին նրանց հարկեր վճարել: 1430–1440 թթ. այստեղ մրցակցում էին երկու՝ Կիչի-Մուհամեդ և Սեիդ-Ահմեդ խաները: 1450 թ. Սեիդ-Ահմեդի հորդան փլուզվեց, և իշխանությունը Գլխավոր Հորդայում անցավ Կիչի-Մուհամեդին, իսկ մահից հետո (1459)՝ նրա որդիներ Մահմուդին և Ահմադին:

§ 16. Ռուսական պետության կազմավորումը

Մոսկովյան մեծ իշխանական տունը 1462–1480 թթ.: Վասիլի 2-րդի մահից (1462) հետո գահին նստեց նրա ավագ որդին՝ 22-ամյա Իվանը: Հենց հաջորդ տարին նա Մոսկվայի տարածքին միացրեց ձևականորեն ինքնուրույն մնացած Յարոսլավլի իշխանությունը: Միավորումը կատարվեց տեղի իշխանների հետ պայմանավորվածության արդյունքում, որոնք ստացան դրամական փոխհատուցում և հողային հատկացումներ այլ վայրերում: Մեծ իշխանը Յարոսլավլի համար Հորդայի գլխավոր խանից հրամանագիր չխնդրեց: Դրա պատասխան քայլը եղավ այն, որ 1465 թ. խաներից Մահմուդը շարժվեց դեպի Մոսկվա: Բայց գտնվելով Դոնի վերին հոսանքում՝ նրա վրա հարձակվեց իր հակառակորդը՝ Ղրիմի խան Հաջի-Գիրեյը, որը նրան ուժեղ հարված հասցրեց, և դեպի Ռուսիա արշավանքը ձախողվեց (տե՛ս հավելվածը, քարտեզ հ. 4): Հաջորդ քայլը Նովգորոդի հողերի միավորումն էր: Նովգորոդը XIII դ. երկրորդ կեսից ճանաչում էր Վլադիմիրի մեծ իշխանության քաղաքական գերակայությունը (XV դ. փաստացի մոսկովյան իշխանությունը), թեև գործնականում պահպանում էր ինքնուրույնությունը և ըստ էության բոյարական հանրապետություն էր: 1470–1471 թթ. նովգորոդյան ազնվականության մի մասը հակված էր անցնելու Լիտվայի մեծ իշխանի՝ Կազիմիր IV-ի տիրակալության ներքո (նա նաև Լեհաստանի թագավորն էր): Իվան III -ը արշավանք սկսեց Նովգորոդի դեմ, 1471 թ. ամռանը Շելոն գետի ափին պարտության մատնեց նովգորոդցիներին և ստիպեց ճանաչել իր իշխանությունը: Նովգորոդի անկախության վերացումը տեղի ունեցավ 1477–1478-ի սկզբին իրականացված արշավանքի արդյունքում: Նովգորոդի բոյարական կառավարությունը Իվան III-ի պայմաններով կապիտուլացվեց: Վերջինս պահանջում էր, որ Նովգորոդը չառանձնանա իր պետության մնացած բաղկացուցիչ մասերից: Իսկ արշավանքի պատճառն այն էր, որ 1477 թ. մայիսին նովգորոդցիները մերժեցին Մոսկվայի մեծ իշխանին անվանել «տեր» («господин») կամ «տիրակալ» («господарь»)[10], թեև նովգորոդյան նախորդ պատվիրակները կարծես թե տվել էին իրենց համաձայնությունը: Մոսկովյան կողմը Նովգորոդի հողերը իրեն ենթարկելու հիմնավորումը համարում էր այն, որ հին ժամանակներից Նովգորոդը պատկանում էր Ռյուրիկի ժառանգներին. սկզբում՝ Կիևյան իշխաններին, ապա՝ Վսեվոլոդ Մեծ Բույնի կառավարումից սկսած՝ վլադիմիրյան իշխաններին:

Հորդայից կախվածության վերացումը: 1465 թ. Ղրիմի թաթարներից Գլխավոր հորդայի խանի կրած պարտությունը նպաստեց իր եղբոր՝ Ահմատի կողմից իշխանության զավթմանը: Մոսկվան 1460-ականների վերջին և 1470-ականներին շարունակում էր պահպանել Գլխավոր հորդայից կախվածությունը և Հորդային հարկեր ու տուրքեր էր վճարում:

[10] *Господарь* – եզրույթ, որն այն ժամանակվա հասկացությամբ ցույց էր տալիս կախվածության բարձր աստիճան: Դրանից առաջացավ «государь» ձևը:

1460-ականների վերջին, ինչպես նշվեց նախորդ մասում, Լեհաստանի թագավոր և Լիտվայի մեծ իշխան Կազիմիր IV-ը հավակնում էր Մեծ Նովգորոդի ավատաիշխանությանը: Ընդդեմ Իվան III-ի՝ Կազիմիրը դաշինք կնքեց Հորդայի խան Ահմատի հետ և փորձեց ձեռք բերել Նովգորոդի նկատմամբ իր իրավունքները: 1471 թ. ամռանը Կրակով եկավ խանի պատվիրակությունը ամենայն հավանականությամբ դրական պատասխանով: Բայց այդ նույն ժամանակ Իվան III-ը պարտության մատնեց նովգորոդցիներին և նրանց ստիպեց ընդունել իր իշխանությունը: Դրանից հետո Ահմատը որոշեց պատժել ինքնագլուխ վասալին:

1472 թ. հուլիսի 29-ին խանը մոտեցավ Օկայի աջ ափին գտնվող Ալեկսին քաղաքին: Ալեկսինի կայազորը համառ դիմադրություն ցույց տվեց և երկու օր հակառակորդին պահեց քաղաքի մատույցներում: Երբ քաղաքը գրավվեց և այրվեց, Օկա գետի ձախ ափին հայտնվեցին մոսկովյան զորքերը: Թաթարների՝ գետով տեղափոխվելու փորձը ետ մղվեց: Օգոստոսի մեկի գիշերը Ահմետը նահանջեց:

1472 թ.՝ հենց արշավանքը հետ մղելուց հետո, Իվան III-ը դադարեց հարկերն ու տուրքերը վճարել և սկսեց Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի հետ դաշնակցելու բանակցությունները՝ ընդդեմ Կազիմիրի և Ահմատի: Սա, ըստ էության, նշանակում էր Գլխավոր Հորդայից կախվածության դադարեցում: Այդուամենայնիվ, մոսկովյան իշխանը չէր ձգտում սրել Հորդայի հետ հարաբերությունները՝ հաշվարկելով ձգձգել նոր բախումը: 1473-1475 թթ. շարունակվեցին պատվիրակությունների փոխնիփոխ այցելությունները: Սակայն 1476 թ., երբ արդեն հարկեր չվճարելու հինգերորդ տարին էր, խանի պատվիրակը եկավ Մոսկվա և Իվան III-ից պահանջեց գնալ Հորդա՝ խանի մոտ: Մեծ իշխանը չգնաց, և հակամարտությունն անխուսափելի դարձավ: Հիշելով 1472 թ. անհաջողությունը՝ Ահմատը մինչև 1480 թ. երկրորդ արշավանք չկազմակերպեց, քանի դեռ ռազմական դաշինքի մասին չէր պայմանավորվել Լիտվայի հետ: 1480 թ. ամռանը նա ի վերջո շարժվեց դեպի Մոսկվա, և Ուգր գետի մոտ տեղի ունեցավ այսպես կոչված երկամսյա հակամարտությունը հորդայական և մոսկովյան զորքերի միջև, երբ երկու կողմն էլ կանգնած էին իրենց դիրքերում: Ուգր գետը անջատում էր մոսկովյան տիրույթները լիտվականից: Այստեղ կողմերից և ոչ մեկը վճռական գործողությունների չդիմեց: Կազիմիր IV-ը այդպես էլ Ահմատին օգնության չեկավ, և նոյեմբերի սկզբին՝ ցրտերը սկսվելուց հետո, խանը իր զորքը տափաստան տարավ:

Փաստորեն Հորդայից կախվածության հարաբերությունները դադարեցին 1472 թ.՝ դեպի Մոսկվա Ահմատի առաջին արշավանքից հետո: Հաջորդ տարիներին Ռուսիային ճանաչեցին հարևան պետությունները: Այսպես, լեհ ժամանակագիր Յան Դլուգոշը 1479 թ., այսինքն՝ մինչև Ուգրիի ափի դիմակայությունը գրում էր, որ Իվան III-ը «թոթափել էր բարբարոսների լուծը».Ղրիմի խան Մենգլի-Գիրեյը 1474 թ. Մոսկվայի հետ բանակցություններ էր վարում Ահմատի դեմ դաշնակցելու համար: 1480 թ. ոչ թե «լծի թոթափում» եղավ, այլ Գլխավոր Հորդայի խանը փորձեց վերականգնել իր իշխանությունը Մոսկվայի մեծ իշխանության նկատմամբ: Ահմատի նահանջից և նրա վաղաժամ զոհվելուց հետո (1481-ի հունվար) Սիբիրի թաթարների և Նոգայի հորդայի հարձակումների արդյունքում Գլխավոր Հորդան արդեն ուժ չուներ հավակնելու

ավատաիշխանության (սյուզերենիտետի)։ Հետևաբար կախվածության լուծարումը մեկանգամյա գործողություն չէր, այլ 1470-ական թթ. մի շարք իրադարձությունների։

Հորդայի իշխանությունը չճանաչելը տեղի ունեցավ այնպիսի պայմաններում, երբ առաջացավ կործանված Բյուզանդական կայսրության կայսեր (ցարի) տիտղոսը Մոսկվայի մեծ իշխանին փոխանցելու անհրաժեշտությունը, որն անհամատեղելի էր հորդայական «ցարին» ենթարկվելու պահանջին։ Այսինքն՝ ազատագրումը իրականացավ այն ժամանակ, երբ հաղթահարվում էր մարդկանց ուղեղներում ամուր կերպով արմատացած այն գաղափարը, թե Ռուսիայի նկատմամբ Հորդայի խաների իշխանությունը օրինական է։

Գլխավոր Հորդան Ահմատի որդիների իշխանությամբ շարունակեց գոյություն ունենալ ևս երկու տասնամյակ։ Իվան III-ը ձգտում էր չեզոքացնել Գլխավոր Հորդային՝ պահպանելով Մենգլի-Գիրեյի՝ Ահմետովիչների թշնամու հետ դաշնակցային կապերը։ Ի վերջո, 1502 թ. Ղրիմի խանը վերջնականապես ջախջախեց Գլխավոր Հորդան և բնակչությանը՝ որպես հպատակների, միավորեց իր կազմում։

1480–1505 թթ. Մոսկովյան տիրույթների աճը։ Ռուսական պետության խորհրդանիշերի ձեռքբերումը։ Հորդայի կախվածությունից ազատագրվելուց հետո Մոսկվայի մեծ իշխանի տիրույթների ընդարձակումը շարունակվեց։ 1485 թ. քարտեզից վերացավ Հյուսիսարևելյան Ռուսիայի վերջին ինքնուրույն իշխանական տունը՝ Տվերը, որը մի ժամանակ Մոսկովյան իշխանական տան հակառակորդն էր։ Դեպի Տվեր արշավանքի առիթը եղան տեղի իշխան Միխայիլ Բորիսովիչի բանակցությունները Լիտվայի հետ։ Սա հակասում էր 1484 թ. կնքած Մոսկվա-Տվերյան պայմանագրին, որով Տվերը զրկվել էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից։ Միխայիլը փախավ, և դրանից հետո Իվան III-ը Տվերի իշխանական տունը փոխանցեց որդուն՝ Իվանին, որը մայրական կողմից Տվերի իշխան Բորիս Ալեքսանդրովիչի թոռն էր։

Իվան III-ը դեռևս 1460-ական թթ. նախաձեռնեց գործողություններ, որոնցով ձգտում էր Մոսկվայից կախվածության մեջ պահել իր արևելյան հարևանին՝ Կազանի խանությանը, որը զբաղեցնում էր Միջին Պովոլժիեի տարածքները։ 1467–1469 թթ. դեպի Կազան մի քանի արշավանք կազմակերպվեց՝ նպատակ ունենալով այնտեղ իշխանության բերել Ուլուգ-Մուհամեդի որդուն՝ Կասիմին, որը Վասիլի II-ի ժամանակներից ծառայում էր Մոսկվայի մեծ իշխաններին։ Նրան նվիրվեց Օկայի ափին գտնվող Գորոդեց Մեշչերսկին, որն ավելի ուշ կոչվեց Կասիմով։ Այն ժամանակ այդ նպատակին հասնել չհաջողվեց, սակայն 1487 թ. մոսկովյան զորքը գրավեց Կազանը, և այնտեղ Իվան III-ի կամքով խան դարձավ Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի խորթ որդին՝ Մուհամմեդ-Էմինը։

1487 թ.սկսվեցին Լիտվայի մեծ իշխանության դեմ սահմանային պատերազմներ, որոնց ընթացքում Չեռնիգովյան իշխանական տան մի քանի իշխան-Ռյուրիկովիչներ, որոնք պահպանել էին իրենց հողերը Լիտվա պետության սահմաններում, անցան Մոսկվայի կողմը։ 1500 թ. Վեդրոշե գետի ափին՝ Դորոգոբուժայի մոտ, Մոսկովյան զորքը ջախջախեց լիտվական ուժերին։ Համաձայն երկու պայմանագրերի (1494 և 1503 թթ.), որոնք կնքվեցին Լիտվայի մծ իշխան Ալեքսանդր Կազիմիրովիչի և Իվան III-ի

միջև, վերջինիս անցան ընդարձակ տարածքներ՝ ողջ հին Չեռնիգովյան հողը, ինչպես դրա վերին Օկայի մասը, այնպես էլ Սևերշչինան (հյուսիսային հատվածը)՝ Չեռնիգով, Բրյանսկ, Նովգորոդ-Սևերսկին, նաև Սմոլենսկյան հողերի արևելյան մասը՝ Վյազմա և Դորոգոբուժ քաղաքներով:



Իվան III-ի կնիքը

1489 թվականին Մոսկվայի իշխանությանը ենթարկվեցին Վյատսկի հողերը՝ Վյատկա և Կամա գետերի միջև գտնվող ռուսաբնակ տարածքը, որը հասարակական կառուցվածքով նման էր Նովգորոդի մոդելին:

Իվան III-ի կառավարման վերջին տարիներին ակտիվորեն ձևավորվում էին նոր ռուսական, միասնական պետության ինստիտուտները, ինչպես նաև դրա խորհրդանիշերը: Իվան III-ի պաշտոնական տիտղոսը դառնում է թագավոր՝ ցար և համայն Ռուսիայի մեծ իշխան (господарь и великий князь всея Руси): Նման տիտղոսներով հավակնություն էր դրսևորվում տիրելու ռուսական բոլոր հողերին, այդ թվում՝ նաև Լիտվայի մեծ իշխանության կազմում գտնվող տարածքներին: Ձևավորվում են թագավորին կից խորհուրդ՝ Բոյարական դուման և պետական պաշտոնյաների քարտուղարությունը (дьяк): 1497 թ. ընդունվեց համառուսական իրավական օրենսգիրքը՝ Դատաստանագիրքը (судебник)՝ փոխարինելով տարածաշրջաններում գործող իրավական նախկին օրենսգրքերին: Ի տարբերություն դրանց՝ այն կիրառվում էր ողջ Ռուսաստանում:

1490-ական թթ. հաստատվում է պետական կնիքը, որը հետագայում դարձավ Ռուսաստանի զինանշանը՝ երկգլխանի արծվի պատկերով: Հետազոտողները տարակարծիք են այն հարցում, թե որպես պետական խորհրդանիշ երկգլխանի արծիվ պատկերելու ավանդույթը բյուզանդակա՞ն է, թե՞ գերմանական (Հռոմեական սրբազան կայսրությանը): Վերջապես XV դ. վերջից նախկինում եղած Ռուսիա անվանը զուգահեռ կիրառվում է նաև պետության նոր անվանումը՝ Ռուսաստան (Россия): Россия-ն (Ῥωσία) ծագում է Русь անվան հունական, բյուզանդական ձևից, որը ամրագրված է X դարից:

§ 17. Ռուսական հողերի հասարակական կարգը

Մոնղոլական ներխուժումից հետո առաջին հարյուրամյակ: Մոնղոլական ներխուժումը լրջորեն վնասեց Ռուսիայի տնտեսությունը: Իրենց գոյությունը դադարեցրին տասնյակ քաղաքներ, մեծ թվով գյուղական բնակավայրեր: Մոռացվել էին շատ արհեստներ: Բայց արդեն XIV դ. սկզբից նկատվում էր գյուղատնտեսության և արհեստների առաջանցիկ զարգացում:

Մոնղոլական տիրապետության ժամանակ Ռուսիայում սոցիալ-տնտեսական հարաբերություններին բնորոշ էր այսպես կոչված «պետական ավատատիրության»

համակարգը: Իշխող շերտը կորպորատիվ մի միավորում էր, որ կոչվում էր «իշխանական տուն», եկամուտը ստանում էր շարքային ազատ բնակչությունից՝ պետական համակարգի հարկերի և տուրքերի (հատկապես հողի հարկի), դատական տուրքերի և մաքսային հարկերի միջոցով: Նույն ժամանակ աստիճանաբար կազմավորվեցին մասնավոր խոշոր հողային մենատիրությունները, առաջին հերթին՝ բոյարներինը (պետական զինվորական ծառայության պարտավորություններ ունեցող՝ զինապարտ երևելիների վերին շերտը) և եկեղեցունը: Բաթու խանի արշավանքից հետո էլ ավելցուկային ապրանքից հարկահավաքության պետական համակարգը շարունակում էր ունենալ իր առաջնային դերը: Օտարների իշխանության առաջին հարյուրամյակում մասնավոր սեփականությունն աճում է աննշան չափերով, քանի որ պահպանվում էր պետական շահագործման և հարկահավաքության նախկին համակարգը: Նկատի ունենանք, որ պետության ուսերին ընկել էր նաև Հորդային հարկեր վճարելու պարտավորությունը, ինչը լրացուցիչ բեռ էր և դանդաղեցնում էր մասնավոր խոշոր հողային մենատիրությունների աճը:

XIV դ. առաջին կեսին իշխող շերտի եկամուտների ստացման համակարգը ամենից լավ ուսումնասիրվել է Մոսկվայի իշխանական տան նյութերի հիման վրա: Դրա կենտրոնական մասը կազմում էր քաղաքային գավառը, որը բաժանվում էր «օգտակար բաների ուղիների» (пути) և գավառակների (станы): Գավառակում ապրում էր բնակչության այն մասը, որը պատկանում էր այսպես կոչված «զինապարտների և ծառայաշնորհյալների՝ ծառայությամբ շնորհի արժանացած դասին», մարդկանց, որոնք կատարում էին մասնագիտական այս կամ այն գործը՝ ապահովելով իշխանի և ազնվականության պահանջները: Օգտակար եկամուտներ բերող ուղիները (так называемые пути) տրվում էին բոյարներին՝ այսպես կոչված «կերակրման վարիչներին» (кормленщики): Այս համակարգի շրջանակներում նրանց տրամադրվում էր իշխանական որոշ տարածք, որի հարկային մուտքերի մի մասը նրանք պահում էին իրենց՝ որպես վարձատրություն ծառայության դիմաց: Այս ձևով բոյարները կարող էին միաժամանակ վարչական և տնտեսական իշխանություն ունենալ: Մնացած իշխանական տարածքները կազմում էին փոքր վարչական միավորները՝ մարզերը (волости), որոնք գտնվում էին պետական վերահսկողության ներքո:

XIV դ. գավառակ (волость) եզրույթն այլ իմաստ ուներ: Եթե մինչմոնղոլական շրջանում դա տարածքային մի միավոր էր՝ գլխավոր քաղաքով, և ենթարկվում էր որևէ իշխանի, ապա XIV դ. «волость» էին անվանում տարածքային փոքր միավորը, որը ներառում էր գյուղական մի քանի բնակավայրեր՝ չընդգրկելով որևէ քաղաք: Ինչպես «օգտակար բաների հատվածը» (пути), այնպես էլ գավառակները (волости) հանձնվում էին կերակրող բոյարներին:

Մասնավոր հողային տիրույթները՝ իշխանականը, բոյարականը, մենաստանայինը, ինչպես և առաջներում էր, անվանվում էին գյուղեր (селами):

XIV դ. առաջին կեսին առաջ է գալիս մի նոր երևույթ. իշխանները «կերակրելու» նպատակով մի քանի գյուղ էին տալիս ոչ թե բոյարներին, այլ «զինապարտների և ծառայաշնորհյալների»՝ ազնվականության ցածր դասին, այն է՝ ազատ ծառայողներին:


XIV դ. երկրորդ կես և XV դ.: XIV դ. երկրորդ կեսին հյուսիսարևելյան ռուսական հողերը Մոսկվային միավորելուն զուգընթաց նկատվում է մասնավոր հողատիրության զգալի աճ: Մոսկովյան իշխանների պալատականների թվի աճը նպաստեց, որպեսզի մեծ իշխանների պետական հողերը ժառանգական տիրապետության իրավունքով՝ որպես հայրենաժառանգ կալվածք (вотчина), զանգվածորեն բաժանվեն բոյարներին և ազատ ծառայողներին: Մեծ տարածքներ շնորհվեցին նաև այն եկեղեցիներին և մենաստաններին, որոնք սատարում էին մեծիշխանական քաղաքականությունը:

XV դարավերջին նոր թափով սկսվեց հողաշնորհում-հողաբաժանումը: Նովգորոդյան հողերի միավորումից հետո Իվան III-ը բռնագրավեց նովգորոդյան բոյարների կալվածքները և դրանք բաժանեց կալվածքում ծառայողներին: Կալվածքը (поместье), ի տարբերություն հայրենաժառանգի, պայմանական սեփականություն էր. այն չէր կարելի վաճառել, տալ ժառանգներին, նվիրել: Դրանից բացի՝ կալվածքը պատկանում էր տիրոջը այնքան ժամանակ, քանի դեռ նա չէր ավարտել իր ծառայությունը: Ըստ էության, այդ հողերի գլխավոր սեփականատերը մնում էր մեծ իշխանը: Շատ շուտով սեփականության այդպիսի բաժանումը տարածվեց նաև մոսկովյան պետության մյուս շրջաններում:

XIV–XV դդ. ազնվականությունն առաջվա պես երևելիների միավորումներում (կորպորացիաներում) էր, որոնք Իշխանական պալատ անվանումն ունեին: Պալատի վերին դասում բոյարներն էին, ստորինում՝ «ազատ ծառայողները» կամ պալատականները: XV դ. մեծիշխանական պալատի ստորին դասի՝ շերտի համար ի հայտ է գալիս մի նոր եզրույթ՝ «բոյարական զավակներ» (дети боярские): Մոսկովյան միասնական պետության սոցիալական կառուցվածքի հիմնական հենասյունը դարձավ մեծիշխանական (թագավորական) պալատը:

Կալվածատեր-իշխանների պալատները մեծիշխանականի նկատմամբ ունեին ենթակա դիրք: XV դ. վերջին «բոյար» եզրույթը ձեռք է բերում մեծիշխանական պալատական պաշտոնյայի իմաստ. «բոյարներ» կոչվում են Մեծ իշխանի նեղ շրջապատի մտերիմները և Բոյարական դումայի՝ ցարին կից խորհրդի անդամները:

XIV–XV դդ. Ռուսիայում շարքային բնակչությունն ուներ զանազան անվանումներ: Դրանք և՛ հին եզրույթներ էին (սպասավորներ – люди, որբեր – сироты), և՛ այն խմբերի անունները, որոնք տևականորեն ապրել են տվյալ հողում (հնաբնակներ – старожильцы, նորեկներ – новоприходцы), կամ էլ անվանումներ՝ կախված պարտավորության բնույթից (արծաթագործներ – серебряники, անազատ գյուղացիներ – половники):



Իվան III-ի դատաստանագրքից, 1497 թ.

XIV դ. վերջից տարածվում, իսկ արդեն XV դ. վերջին ամրակայվում է հողագործների համար ընդհանուր անվանում՝ գյուղացիներ (крестьяне, այսինքն՝ «христиане»)։ Գյուղացիների զգալի մասը դեռևս կախված էր պետությունից։ Այդ գյուղացիներին տրվեց «սևեր» (черные – հարկատու) անվանումը, իսկ նրանց զբաղեցրած հողերը կոչվում էին «սև հողեր» (черные земли)։ Ինչպես սև գյուղացիները, այնպես էլ այն գյուղացիները, որոնք ապրում էին մասնավոր սեփականատիրական հողերում, միավորված էին հանրույթում։ Հանրային կառուցվածքը ձևավորվել էր բնության երևույթների և կենսական անհրաժեշտությունների ազդեցությամբ. այն թույլ էր տալիս գյուղացիական տնտեսություններին ճգնաժամային իրավիճակներում գոյատևել՝ ի հաշիվ հանրույթում ընդգրկված տնտեսությունների։

XV դ. պետությունը միջոցներ ձեռնարկեց գյուղացիների՝ մի բնակավայրից մեկ այլ բնակավայր տեղափոխվելու դեմ, որն այդ ժամանակ տարածված երևույթ էր։ XV դարավերջին հաստատվում է համապետական նորմ՝ ամրագրված Իվան III-ի Դատաստանագրքում։ Մի կալվածքից մեկ այլ կալվածք կարելի էր տեղափոխվել միայն աշնանը՝ Յուրիի օրից (նոյեմբերի 26-ից) մեկ շաբաթ առաջ կամ հետո։ Ի դեպ, այս կարգը գործել է մինչև գյուղացիների ճորտացումը, և գյուղացիական բնակչության ներքին տեղափոխությունների պետական կարգավորում էր։

XIV–XV դդ. կար նաև բնակչության այնպիսի շերտ, ինչպիսին ճորտերն (холопы) էին։ Մարդիկ, որոնք համարվում էին իրենց տերերի սեփականությունը։ Նրանք կարող էին տիրոջ հողում աշխատել, լինել տնային ծառայող, բայց պատահում էր նաև, որ հայտնվում էին կալվածատիրոջ վարչական կազմում՝ բարձր պաշտոնների։

Ռուսական քաղաքները շարունակում էին մնալ ինչպես քաղաքական իշխանության, այնպես էլ արհեստների և առևտրի կենտրոններ։ Նովգորոդն ուներ առևտրական լայն կապեր Բալթիկայում (հատկապես Գանզեյսկյան միությունում, որը հյուսիս-գերմանական քաղաքների առևտրային միություն էր)։ Հյուսիսարևմտյան Ռուսիայի քաղաքները առևտուրն իրականացնում էին Վոլգայով։ Բայց Ռուսիայում քաղաքները, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրների, չդարձան ինքնուրույն քաղաքական ուժ. նրանք գտնվում էին իշխանաբոյարական ազնվականության հսկողության տակ, որոնք, ըստ էության, հիմնականում ապրում էին քաղաքներում։ Բացառություն էին Նովգորոդը և Պսկովը, որտեղ գործում էր հանրապետական կարգը՝ իշխանության բարձրագույն մարմնով՝ վեչեով։ Այստեղ իշխանությունից հեռացված էին իշխանները. ղեկավարում էին տեղական բոյարները և ոչ թե առևտրաարհեստավորական վերնախավը։ Նովգորոդի (1478) և Պսկովի (1510)՝ Մոսկվային միավորվելուց հետո, որը տեղի ունեցավ Վասիլի III-ի օրոք, դադարեց գործել այս քաղաքների կառավարման՝ մյուսներից տարբերվող հանրապետական ուղին։

XIII դարի երկրորդ կեսից մինչև XV դար. ռուսական հողերի պատմական զարգացումը եվրոպական ընդհանուր համատեքստում։ Ռուսական պետականությունը ստեղծվեց բնական-աշխարհագրական յուրահատուկ պայմաններում։ Արևելաեվրոպական հարթավայրում գերակշռում են նվազ բերքատու հողեր, իսկ եղանակային խիստ պայմանների հետևանքով հողագործական աշխատանքների սեզոնը շատ

կարճ էր։ Դրանով էին պայմանավորված ցածր բերքատվությունը և որպես հետևանք՝ հասարակության մեջ արտադրական աշխատանքով չզբաղվող մարդկանց խմբերի գոյատևման համար անհրաժեշտ հավելուրդային ապրանքի ոչ մեծ ծավալները։ Այն տարածաշրջաններում, որտեղ գերակշռում են ոչ բարենպաստ պայմանները, բնակչության առջև դրված էին զարգացման երկու հնարավոր ուղիներ։ Առաջինը՝ մնալ մինչպետականության փուլում՝ քաղաքական վերնաշենքը ստեղծելու համար հասարակության մեջ չառաջացնել գերլարում։ Արևելյան Եվրոպայի շատ ժողովուրդներ, այդ թվում՝ Միջին Պովոլժիեն (բացի վոլգյան բուլղարներից), Արևելյան Մերձբալթիկան (բացի լիտվացիներից) գնացին հենց այդ ուղով, և XIII–XV դդ. պետականությունը նրանց երկրներ ներմուծվեց դրսից. նրանց տարածքները միավորվեցին Ռուսիային, Հորդային, Լիվոնյան օրդենին։ Երկրորդ ուղին պետական, համեմատաբար կոշտ կառույցների ստեղծումն էր, որն ընդունակ կլիներ բռնագրավելու, հավաքելու, կենտրոնացնելու հավելյալ մթերքը և ապա՝ ռացիոնալ բաժանելու այն։ Հենց այդ ուղին ընտրեցին արևելյան սլավոնները։ Վաղ միջնադարում՝ Կիևյան Ռուսիայի ժամանակաշրջանում, հասարակական կարգի գլխավոր գիծը եղել է հիմնականում պետական ինստիտուտների միջոցով հավելուրդային մթերքը բռնագրավելը (այսպես կոչված «պետական ավատատիրություն)։

Նոր միասնական ռուսական պետության կենտրոնը ձևավորվեց ռուսական հողերի հյուսիս-արևելքում, որտեղ ավելի շատ, քան Հարավային Ռուսիայում, զգացվում էր բնական-աշխարհագրական գործոնների բացասական ազդեցությունը։ Իրավիճակն ավելի վատթարացավ XIII դ., երբ Եվրոպայում սկսվեց համատարած ցուրտը (այսպես կոչված փոքր սառցակալումը)։ Ըստ որում՝ առանց այդ էլ հավելուրդային մթերքի զգալի մասը երկրից դուրս էր գալիս՝ որպես Հորդայի մթերք։ Ռուսական պետականությունը հայտնվեց ավելի ծանր պայմաններում, քան նրա ստեղծման ժամանակ էր։ Դա անխուսափելիորեն բերեց միասնական պետության որոշ կառույցների «դաժանությանը»։ Միայն այդպիսի դաժանությունը հնարավորություն տվեց, որպեսզի ազատագրվեն ինչպես Հորդայից կախյալությունից, այնպես էլ դիմակայեն լիտվական ուժեղ պետության ճնշումներին։ Լիտվական մեծ իշխանությունը XIV–XV դարերում նկատելիորեն գերազանցում էր մոսկովյան մեծ իշխանությանը ինչպես բնակչության թվով, այնպես էլ ունեցած տարածքով։ Միայն նովգորոդյան հողերի միացումից հետո Մոսկովյան պետությունը դարձավ ավելի խոշոր և միանգամից ճանաչվեց ամենամեծը Եվրոպայում, թեև մեծ համարվեց՝ հիմնականում ի հաշիվ թույլ բնակեցված հյուսիսային շրջանների։ Բնակչության թվով, միևնույնն է, Լիտվան գերազանցում էր։ Լիտվայի մեծ իշխանության ուժեղացմանը նպաստում էր Լեհաստանի հետ դինաստիական միավորումը. 1386 թ. մեծ իշխան Յագայլո Օլգերդովիչը, ամուսնանալով Լեհաստանի թագուհու հետ, դարձավ նաև Լեհաստանի թագավոր։ Ճիշտ է, դա չբերեց երկու պետությունների միավորմանը, սակայն երբեմն-երբեմն նրանք կառավարվում էին մեկ տիրակալի միջոցով (1386–1392 թթ. տիրակալը Յագայլոն էր, իսկ 1447–1492 թթ.՝ Կազիմիր IV-ը)։ Լիտվայի կառավարիչները տիրում էին ռուսական հողերի նշանակալից մասին (ունեին «Լիտվայի մեծ իշխան» և «ռուսական մեծ իշխան»

տիտղոսները) և դեմ չէին իրենց ենթարկեցնել ողջ Ռուսիան: Որպեսզի իրենք էլ չընկնեն Լիտվայի իշխանի տիրապետության տակ և թույլ չտան նույնը Հյուսիսարևմտյան հանրապետություններին՝ Նովգորոդին և Պսկովին, որոնք ընդունում էին Վլադիմիրյան մեծ իշխանության տիրակալությունը, Մոսկովյան պետությունը պետք է ձևավորվեր որպես առավելագույն կերտրոնացված և ռազմականացված, ուժեղ կենտրոնական իշխանություն:

Մոնղոլական արշավանքից հետո Ռուսիայի՝ եվրոպական երկրների հետ ունեցած ավանդական կապերը թուլացան: Ձևավորված մոսկովյան պետությունը որոշ չափով «կտրված» էր եվրոպական երկրներից: Մոսկովյան իշխանական տան դինաստիական կապերը մինչև Իվան III-ի ժամանակաշրջանը դուրս չէին եկել հարևան ռուսական հողերից, Հորդայից և Լիտվայից (բացառություն էր Վասիլի I-ի դստեր ամուսնությունը Բյուզանդիայի կայսեր եղբոր հետ): Մշտական կապեր էին պահպանվում հարևան երկրների՝ Հորդայի, Լիտվայի, Լիվոնյան օրդենի, նաև Բյուզանդիայի (գլխավորապես եկեղեցական գործերով) հետ: Նոր, խոշոր ռուսական պետությանը՝ Ռուսաստանին, առաջիկայում սպասվում էր գրավել արժանի տեղ եվրոպական ասպարեզում: Եվ արդեն XV դ. վերջին՝ Իվան III-ի կառավարման շրջանում միջազգային կապերը ընդլայնվում են: Այստեղ կարևոր քայլ եղավ 1472 թ. Մեծ իշխանի երկրորդ ամուսնությունը Բյուզանդիայի վերջին կայսեր զարմուհու՝ Սոֆյա (Զոյա) Պալեոլոգի հետ, որն ամրացրեց մոսկովյան կառավարչի նկրտումները բյուզանդական ժառանգության նկատմամբ: XV դ. վերջից հաստատվում են մշտական դիվանագիտական շփումներ Շվեդիայի, Դանիայի, իտալական պետությունների, ինչպես նաև երկու՝ Հռոմեական Սրբազան (գերմանական) և Օսմանյան (թուրքական) կայսրությունների հետ: Ձարգանում է մոսկովյան կառավարիչների իշխանության «ցարական» լինելու մասին գաղափարը. սկսած 1474 թ.-ից՝ Իվան III-ը հաճախ անվանվում էր «ցար», այդ թվում՝ միջազգային մի շարք փաստաթղթերում:

§ 18. Ռուսիայի մշակույթը IX–XV դարերում

Գիրը և գրականությունը: Սլավոնական լեզուների գիրը ստեղծել են IX դարի կեսերին բյուզանդական քարոզիչներ, եղբայրներ Կիրիլը (Կոնստանդինը) և Մեֆոդին: Նրանք իրենց գործունեությունը ծավալել էին հարավային սլավոնների շրջանում և Մեծ Մորավիայում, որը արևմտասլավոնական պետություն էր Միջին Դանուբում և գոյություն է ունեցել IX–X դդ.: Նրանք ստեղծել էին սլավոնական երկու այբուբեն: Դրանցից մեկը կոչվում էր глаголица, որը լայն ճանաչում չստացավ, իսկ մյուսը՝ կիրիլիցան (քարոզիչներից մեկի անունով), դարձավ ուղղափառ քրիստոնեություն դավանող արևելյան սլավոնական պետությունների՝ Բուլղարիայի, Սերբիայի և Ռուսիայի գիրը:

Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում՝ ներառյալ հարավսլավոնականի մի մասը, որոնցում վաղ միջնադարում հաստատվել էր քրիստոնեության

կաթոլիկական (հռոմեական) տարբերակը, ժամերգության լեզուն նույնպես լատիներենն էր. գրական հին լեզու, որն անհասկանալի էր բնակչության մեծ մասին: Դրան հակառակ, սլավոնական ուղղափառ երկրներում, այդ թվում՝ Ռուսիայում եկեղեցական արարողությունը կատարվում էր սլավոներեն: Հետևաբար գրական լեզուն էլ դարձավ սլավոնականը, որը մոտ էր խոսակցական լեզվին և հասկանալի էր ողջ բնակչությանը:

Կիրիլիցան որպես գիր Ռուսիայում օգտագործվում էր դեռևս քրիստոնեության ընդունումից առաջ՝ X դ. սկզբից: Բայց ամենուր սլավոնական գիրը տարածվեց երկրի մկրտությունից հետո: Արդեն XI–XII դդ. միջնադարյան չափանիշներով գրագիտությունը բավականին բարձր մակարդակի էր: Դրա վառ վկայությունն են կեչու կեղևից պատրաստված շնորհագրերը, տարաբնույթ բովանդակությամբ (հիմնականում՝ գործնական) նամակները: Դրանք հայտնաբերվել են ավելի քան տասը հինռուսական քաղաքների պեղումների ժամանակ: Կեչու կեղևի վրա գրված շնորհագրերի ամենամեծ քանակը գտնվել է Նովգորոդում (1951 թ. հենց այստեղ է հայտնաբերվել առաջին շնորհագիրը), որի հողային պայմանները նպաստել էին հողում դրանց լավ պահպանվածությանը: Այդ շնորհագրերի տերերը եղել են հինռուսական հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչներ (այդ թվում՝ նաև կանայք):



Կեչու կեղևի վրա գրված շնորհագիր: Նովգորոդ: XII դ. կեսեր

XI դարում և XII-ի սկզբին Ռուսիայում տարածվում են մեծ թվով թարգմանական (հիմնականում հունարենից) ստեղծագործություններ՝ ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ բովանդակության: Դրանց մեծ մասը ժամերգություններն էին, սրբերի կյանքի մասին պատմող, օրհներգական (гимнография) հուշարձաններ: Այդ տեքստերը սլավոներեն թարգմանվել են հիմնականում Բուլղարիայում, թեև ստեղծվել են նաև ռուսական թարգմանական ավանդույթներ: Նյութը, որի վրա գրվում էին ձեռագիր գրքերը, եղել է մագաղաթը՝ հատուկ ձևով մշակված հորթի կաշին:

Հինռուսական ամենավաղ շրջանի գրական գործը, որ հասել է մինչև մեր օրերը, «Խոսք օրենքի և վերին օգնության մասինն» է: Այն գրվել է XI դ. առաջին կեսին Բերեստովում (իշխանական գյուղ Կիևի տակ) Սբ. Փրկիչ եկեղեցու քահանա Իլարիոնի կողմից, որն ավելի ուշ (1051–1054 թթ.) եղել է Ռուսաստանի մետրոպոլիտը: Իր ստեղծագործության մեջ Իլարիոնը փառաբանում է Ռուսիայի՝ քրիստոնեություն ընդունելը և քրիստոնյա ժողովուրդների ընտանիք մտնելը: Դրանում հեղինակը նկարագրում է Վլադիմիրի մեծ ծառայությունը Ռուսիան մկրտելու հարցում, ինչպես նաև նրա որդու՝ Յարոսլավի գործունեությունը՝ նոր հավատը երկրում տարածելու մեջ:



Մոգերի երկրպագությունը։ Սիյյան ավետարանի մանրանկար, 1340 թ.

XI դ. Ռուսիայում ձևավորվում է պատմական գրականության ժանրը՝ տարեգրությունը։ Որոշ գիտնականներ ենթադրում են, որ տարեգրության ի հայտ գալը կարելի է համարել X դ. վերջը՝ Վլադիմիրի ժամանակաշրջանը։ Մյուսները առաջին տարեգրական ժողովածուի ի հայտ գալը վերագրում են Յարոսլավի ժամանակներին՝ XI դ. առաջին կեսին, երրորդները՝ XI դ. երկրորդ կեսին։ Առաջին տարեգրական ժողովածուն, որի տեքստը վարկածային սկզբունքով վերակազմվել է մեզ հասած աղբյուրների հիման վրա, XI դ. վերջին գրված այսպես կոչված «Նախնական ժողովածուն է» («Начальный свод»)։

XII դ. սկզբին Կիևի մերձակայքում գտնվող Պեչորյան մենաստանում ստեղծվել է միջնադարյան գրականության նշանավոր ստեղծագործությունը՝ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» («Повесть временны́х лет»)։ Ընդունված է նրա հեղինակ համարել կուսակրոն Նեստորին։ Այն ներկայացնում է ռուսական պատմությունը՝ որպես մի լայն կտավ։ Այն դիտարկվում է որպես սլավոնական պատմության բաղկացուցիչ մաս։ Իսկ սլավոնների պատմությունը ներգրավված է համաշխարհային պատմության մեջ (այդ ժամանակներում համաշխարհային պատմություն ասելով՝ նկատի էին ունենում աստվածաշնչյանը և հռոմեաբյուզանդականը)։ Հեղինակը օգտվել է բյուզանդական մի շարք թարգմանված աղբյուրներից՝ «Նախնական ժողովածու»-ից և իրեն բանավոր փոխանցված մի շարք լեգենդներից։ «Պատմությունը» սկսվում է սլավոնների՝ Եվրոպայում բնակեցման նկարագրությամբ և այլ ժողովուրդների հետ ունեցած նրանց փոխհարաբերությունների մասին տեղեկություններով։ Այնուհետև պատմվում է արևելյան սլավոնների, նրանց սովորույթների, Ռուսիա պետության կազմավորման, նրա առաջին կառավարողների գործերի մասին։ Համեմատաբար ավելի մանրամասն են ներկայացված այն իրադարձությունները, որոնք տարեգրությանը նախորդող կամ հաջորդող ժամանակներում են եղել (XI և XII դարի սկիզբ)։ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» ստեղծագործությամբ են սկսվում հետագա դարերում գրված տարեգրությունների մեծ մասի տեքստերը։

Հինռուսական գրականության մեջ յուրահատուկ ժանր էր սրբերի կյանքի պատմությունը՝ վարքագրությունը (жития)։ Վարքագրությունների մեջ համեմատաբար վաղ շրջանի ստեղծագործություններ են առաջին ռուս սրբերի՝ 1015 թ. երկպառակությունների ժամանակ սպանված իշխաններ Բորիս և Գլեբ Վլադիմիրովիչների մասին գրվածները։ XI դ. վերջին կազմվեց Կիև-Պեչորյան մենաստանի վանահայր Ֆեոդոսիայի (մահացել է 1074 թ.) մասին վարքագրությունը՝ գրված Նեստորի՝ «Պատմություն ժամանակի և տարիների մասին» երկի ենթադրյալ հեղինակի կողմից։

XII դ. սկզբին է պատկանում ուխտագնացությունների կամ ուղևորությունների ժանրի առաջին ստեղծագործությունը, որը նկարագրում է չեռնիգովյան մենաստաններից մեկի վանահայր Դանիիլի ուխտագանցությունը դեպի Սուրբ հող՝ Պաղեստին։

Նաև XII դ. սկզբով են թվագրվում իշխան Վլադիմիր Վսեվոլոդիչ Մոնոմախին պատկանող ստեղծագործությունները։ Դրանցից է «Խրատը» («Поучение»)՝ ուղղված երեխաներին, որում Մոնոմախը իր պատկերացումներն է ներկայացնում իշխանի պարտականությունների, կենսական արժեքների մասին, թվարկում այն ճանապարհորդությունները՝ արշավ, երթ, ուղևորություն, որոնք հեղինակը իրականացրել է։ Սա, կարելի է ասել, ինքնակենսագրություն է, որում նամակ կա իր հորեղբոր որդուն՝ Օլեգ Սվյատոսլավիչին՝ հորդորելով դադարեցնել պառակտիչ պատերազմը։

XII դարի վերջին է ստեղծվել իր գեղարվեստական արժեքով նշանավոր «Ասք Իգորի գնդի մասին» գործը։ Այն նվիրված է 1185 թ. Նովգորոդ-Սևերսկու իշխան Իգոր Սվյատոսլավիչի՝ պոլովցիների դեմ կատարած անհաջող արշավանքին։ Իգորը, ուշադրություն չդարձնելով արշավանքին ուղեկցող մի շարք հանգամանքների և դիպվածների (օրինակ՝ արևի խավարմանը) շարունակեց արշավանքը, որի հետևանքով կոտորվեց ողջ զորքը, գերեվարվեցին չորս իշխանները, այդ թվում նաև ինքը։ Այս բոլոր դիպվածները և Իգորի փախուստը գերությունից եզակի երևույթներ էին և ժամանակակիցների վրա ուժեղ տպավորություն էին թողել (ի դեպ, «Ասքից» բացի՝ այս իրադարձության են նվիրված ևս երկու տարեգրային պատմվածք)։ «Ասք Իգորի գնդի մասին»-ը քնարական ժանրի հուշարձան է։ Այս տիպի ստեղծագործությունները, որպես կանոն, գոյություն ունեին բանավոր՝ բանահյուսական ստեղծագործություններ են, և բացի «Ասք Իգորի գնդի մասին»-ից, գլխավորապես տարեգրությունների միջոցով մեր օրեր հասել են այդպիսի բանահյուսական մի քանի պատառիկ։ «Ասք Իգորի գնդի մասին»-ի հիմնական գաղափարը արտաքին վտանգների առաջ բոլոր ռուս իշխանների միասնական գործելու անհրաժեշտությունն է։ Գլխավոր չարիքը, որը խոչընդոտեց դրան, իշխանական սերնդեսերունդ ձգվող թշնամությունը և երկպառակիչ պատերազմներն էին։ Լինելով ժամանակի իրադարձությունների մասին ստեղծագործություն՝ «Ասքը» միաժամանակ պատմական մտածողության վառ հուշարձան է։ Հենց XI դ. երկրորդ կեսին, երբ Ռուսիայում ուժեղացան երկպառակությունները, այս գործով հեղինակը փորձում էր գտնել դժբախտությունների արմատները։

XII դարավերջին Հյուսիսարևելյան Ռուսիայում ի հայտ եկավ հինռուսական գրականության մեկ այլ հիանալի ստեղծագործություն՝ «Դանիիլ Զատոչնիկի ասքը»։ Այն գրված էր իշխանին դիմելու ձևով. հեղինակը, լինելով շնորհազրկված, ձգտում է նորից վաստակել իշխանի բարեհաճությունը և ապացուցել իր օգտակարությունը՝ որպես իմաստուն խորհրդատու։ Այս «Ասքը» հագեցած է ասացվածքներով։

Հինռուսական գրականության ևս մեկ նշանավոր գործ է «Ասք Ռուսական հողի կործանման մասին»։ Սա ստեղծվել էր դեպի Ռուսիա մոնղոլական արշավանքների տարիներին։ «Կործանման մասին ասքը» մեզ է հասել հատվածաբար. պահպանվել է միայն սկիզբը, և ինչպես «Իգորի մասին ասքը», բանաստեղծական բնույթի է։ Այն գովերգում է ռուսական հողի գեղեցկությունը, նախկին հզորությունը Վլադիմիր

Մոնոմախի և նրա որդու՝ Յուրի Դոլգորուկիի, թոռան՝ Վսեվոլոդ Վելիկոյե Գնեզդոյի ժամանակների մասին, դատողություններ անում «հիվանդությունների»՝ խռովությունների, երկպառակությունների վերաբերյալ, որոնք մաշեցրին Ռուսիայի ուժերը Յարոսլավ Վլադիմիրովիչի մահից հետո:

Գրականությանը զուգահեռ գոյություն ուներ ժողովրդական բանավոր ստեղծագործությունը՝ բանահյուսությունը: Ինչպես և ուրիշ ժողովուրդների մոտ, պետության ձևավորման դարաշրջանում ստեղծվեց էպոսը՝ պատմությունը հերոս-դյուցազունների մասին: Նրա սյուժեները պահպանվել են, գրվել են բիլինաներից (ռուսական ժողովրդական վեպերից) հետո: Որոշ բիլինաների սյուժեներ ծնվել են դեռևս նախաքրիստոնեական շրջանում: Բայց էպոսի՝ բիլինաներից ստեղծման ամենաարդյունավետ ժամանակաշրջանը դարձավ X դ. վերջը՝ Վլադիմիր Սվյատոսլավիչի կառավարման շրջանը: Այդ իշխանը բիլինաներում դարձավ Ռուսիայի ղեկավարի ընդհանրացված կերպարը: Բիլինաների մյուս մասը առնչվում է XI դ. վերջին և XII դարասկզբին պոլովցիների դեմ մղված պայքարին: Անունների համընկնման շնորհիվ՝ պայքարի գլխավոր կերպարը՝ Վլադիմիր Մոնոմախը, նույնացվեց Վլադիմիր Սվյատոսլավիչի հետ:

Մոնղոլական արշավանքները կործանեցին մշակութային նշանակալից արժեքներ. այրվեցին ձեռագրեր, ավերվեցին ճարտարապետական հուշարձաններ: Մոռացության մատնվեցին մի շարք արհեստագործական տեխնիկական միջոցներ: Սակայն կառուցվածքային լուրջ փոփոխություններ հոգևոր մշակույթի ոլորտում տեղի չունեցան: XIII դարի երկրորդ կեսից մինչև XV դ. Ռուսիայում շարունակվում էին զարգանալ նախորդ ժամանակաշրջանի ավանդույթները:

Գրի մշակույթի, գրքերի կենտրոնները, ինչպես և նախկինում, մենաստաններն էին: XIV դ. Հյուսիսարևելյան Ռուսիայում տեղի է ունենում համակեցության կանոններով ապրող մենաստանների աճ: Այդ շարժումը (համակեցության կանոններով մենաստանների) կապված էր Սերգի Ռադոնիժսկու (1322–1392) և նրա աշակերտների ու հետևորդների գործունեության հետ: Գրքագրության խոշոր կենտրոններ դարձան Տրոյիցե-Սերգիև մենաստանը Մոսկվայի մոտ (հիմնադրված Սերգիի կողմից), Սավվինո-Ստորոժևսկին Զվենիգորոդի մոտ, Կիրիլլո-Բելոզերսկին և Ֆերապոնտովը՝ Վոլոգդայի մոտ, Սոլովեցկին՝ Սպիտակ ծովի ափին:

Զարգանում էր նաև տարեգրային ժանրը: Տարեգրային աշխատանքի նոր կենտրոններ դարձան Տվերը, Պսկովը, Մոսկվան, Նիժնի Նովգորոդը: Կանոնավոր կերպով իրականացվում էր նովգորոդյան տարեգրությունը: Նրա գլխավոր հուշարձաններն էին Նովգորոդյան I-ին տարեգրությունը ավագ խմբագրությամբ[11] (XIII դ. վերջ) և Նովգորոդյան I-ին տարեգրությունը կրտսեր խմբագրությամբ (XV դ. կեսեր): Հարավարևմտյան Ռուսիայում տարեգրային ականավոր հուշարձան է եղել Գալիցկո-Վոլինյան տարեգրությունը՝ ձևավորված XIII դարավերջին: Հյուսիսարևելյան Ռուսիայում տարեգրության կարևոր փուլանիշ դարձավ XIV դ. սկզբին մեծիշխանական ժողովածուն, որը մտավ Լավրենտևյան տարեգրության կազմի մեջ:

[11] *Извод* – նշանակում է հին սլավոնական ձեռագրերի խմբագրություն:

XV դ. սկզբից Մոսկովյան մեծ իշխանությունում վերականգնվում է այսպես կոչված համառուսական տարեգրության ավանդույթը, այսինքն՝ տարեգրությունների ժողովածուների ստեղծում՝ նվիրված ողջ Ռուսիայի պատմությանը՝ հնագույն ժամանակներից սկսած: Այդ տիպի առաջին ժողովածուն ընդգրկվեց Տրոյիցկյան տարեգրությունների ցանկում XV դ. սկզբին: Համառուսաստանյան ժողովածուների նյութերի միավորումը նովգորոդյան տարեգրության հետ եղավ Սոֆիայի I և Նովգորոդի IV տարեգրություններում, որոնք XV դարակեսի հուշարձաններ են: Համառուսական մոսկովյան տարեգրության մի քանի ժողովածուներ ստեղծվեցին Իվան III-ի օրոք՝ XV դարավերջին: XIV դ. Ռուսիայում կիրառվում է գրելու մի նոր նյութ՝ թուղթը, որը դուրս մղեց մագաղաթին:

XIII–XV դդ. բավականին շատ եղան սրբերի վարքագրությունները: XIII դ. երկրորդ կեսին գրվեցին Ալեքսանդր Նևսկուն, Հորդայում 1246 թ. սպանված իշխան Միխայիլ Վսեվոլոդիչ Չեռնիգովսկուն նվիրված վարքագրությունները: XIV դ. առաջին քառորդի վերջում գրվեցին իշխան Միխայիլ Յարոսլավիչ Տվերսկուն (1318 թ. Հորդայում մահապատժի ենթարկված), իսկ նույն դարի երկրորդ կեսին՝ մետրոպոլիտ Պյոտրին նվիրված վարքագրությունները: Նույն հարյուրամյակում Պսկովում գրվեց «Իշխան Դովմոնտի վարքը» պատմվածքը: Դովմոնտը ծագումով լիտվացի էր և XIII դ. Պսկովի իշխանն էր: XIV դարավերջը և XV-ի սկիզբը նշանավոր վարքագիր Եպիֆանի Իմաստունի գործունեության ժամանակաշրջանն է: Նրա համեմատաբար հայտնի ստեղծագործություններից են Սերգի Ռադոնիժսկուն, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի հյուսիս-արևելքում ապրող հեթանոս ուգրոֆիննական ցեղերի մոտ լուսավորություն տարածող եպիսկոպոս Ստեֆան Պերմսկուն նվիրված վարքագրությունները: XV դ. վերջին քառորդի ամենահայտնի վարքագիրը եղել է Պախոմի Սերբը՝ ծագումով Բալկաններից: Նա գրեց Կիրիլ Բելոզերսկու (Ռուսիայի հյուսիսի ամենախոշոր մշակութային կենտրոնի՝ Կիրիլ-Բելոզերսկյան մենաստանի հիմնադիր), Նիկոն Ռադոնեժսկու և ուրիշների մասին վարքագրությունները:

Վարքագրությանը մոտ ժանր էին իշխաններին նվիրված պատմվածքները: Դրանցից են «Ասք Դմիտրի Իվանովիչի կյանքի մասին» (Դմիտրի Դոնսկոյին նվիրված, XV դ. կոթողը), Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչին նվիրված «Գովքը» (նույնպես XV դ. սկիզբ), Տվերի մյուս իշխան Բորիս Ալեքսանդրովիչին ընծայված «Գովաբանական ասք աբեղա Ֆոմայի մասին» (գրված՝ XV դ. կեսին) ստեղծագործությունները:

XIV–XV դդ. գրականության մեջ հատուկ տեղ են զբաղեցնում այսպես կոչված Կուլիկովյան շարքի ստեղծագործությունները, որոնք վերաբերում էին 1380 թ. Կուլիկովյան ճակատամարտին: Դրանցից մեկը «Պատմվածք Կուլիկովյան ճակատամարտի մասին» ստեղծագործությունն է, որը տեղ է գտել Սոֆիայի I-ին, Նովգորոդյան IV տարեգրությունների մեջ: Մյուս ստեղծագործությունը, որը գրվել է 1380 թ. անմիջապես հետո, կոչվում է «Задонщина»: Սա բանաստեղծական բնույթի է՝ «Ասք Իգորի գնդի մասին» ստեղծագործության զգալի մասի վերամշակումը: Կուլիկովյան ճակատամարտի մասին ամենատարածված ստեղծագործությունն է «Ավանդազրույց Մամայան կոտորածի մասին»՝ ստեղծված XVI դ.:

Կան նաև ճամփորդական նոթերի ժանրով գրված ստեղծագործություններ: XIV դ. վերջին են պատկանում Իգնատի Սմոլյանինի, ինչպես նաև մետրոպոլիտ Պիմենի՝ Կոստանդնուպոլիս կատարած ճանապարհորդությունների մասին պատմվածքները: 1460-1470-ականներին տվերյան վաճառական Աֆանասի Նիկիտինը ռուսներից առաջինն ուղևորվեց դեպի Հնդկաստան, որը նկարագրված է «Ճամփորդություն երեք ծովերից այն կողմ» պատմվածքում:

Միաժամանակ զարգանում էր բանավոր ժողովրդական ստեղծագործությունը: Ստեղծվում էին (հատկապես Նովգորոդում), նոր բիլիններ՝ դյուցազունների մասին, միաժամանակ վերամշակվում էին նաև այն հին սյուժեները, որոնք ստեղծվել էին մինչմոնղոլական արշավանքների շրջանում: Այդ ժամանակահատվածի համար նոր ժանր էր պատմական երգը (историческая песня): Ամենավաղ շրջանի պատմական երգերից մեկը «Երգ Շչելկանի մասինն» է, որը պատմում է 1327 թ. Հորդայի պատվիրակ Չոլխանի այցի դեմ Տվերի ապստամբության մասին:

Կերպարվեստ: Գեղանկարչական գործերը Ռուսիայում վաղ միջնադարում ստեղծվում էին հիմնականում եկեղեցական թեմաներով և եկեղեցու համար: Դրանք որմնանկարներ, նկարազարդումներ, խճանկարներ և սրբապատկերներ էին, որոնք զարդարում էին եկեղեցիների և տաճարների պատերը: Մեծ թվով գեղանկարչական գործեր են պահպանվել Կիևի Սոֆիայի տաճարում: Դրանց մեջ են Աստվածամայր Մարիայի (Մարիամի), Քրիստոսի, առաքյալների պատկերները (բոլորը՝ խճանկար), բազմաթիվ որմնանկարներ՝ Սուրբ գրքի թեմաներով: Դրանցից բացի՝ կան նաև իշխան Յարոսլավ Վլադիմիրովիչին և նրա ընտանիքին նվիրված որմնանկարներ, քանի որ իշխանի նախաձեռնությամբ է կառուցվել Սոֆիայի տաճարը:

Որմնանկարներով հարուստ է Նովգորոդի մոտ գտնվող Ներեդիցեի Փրկչավերափոխման (Спасо-Преображения) տաճարը: Հնագետների և պատմաբանների ուսումնասիրություններով հաջողվեց վերականգնել նկարչի անունը, որը ստեղծել էր այդ որմնանկարները: Նրան անվանում էին Օլիսեյ Գրեչին:



Աստվածամայրը: Սոֆիայի տաճարը Կիևում

Մինչմոնղոլական շրջանից մեր ժամանակներ հասած սրբապատկերներից (икона) ամենանշանավորները «Սուրբ Դմիտրի Սոլունսկի» և «Դեիսուս» գործերն են:

Եկեղեցական գեղանկարչությունից բացի՝ Ռուսիայում ընդունված էին նաև ձեռագիր գրքերի պատկերազարդումները, մանրանկարչությունը: Մասնավորապես պատկերազարդ է և մեզ է հասել հնագույն հինռուսական ձեռագիր՝ «Օստրոմիրովյան ավետարանը» (1056–1057 թթ.): Մանրանկարչական զարդարանքներով է նաև Սվյատոսլավ Յարոսլավիչի «Ճառընտիրը» (1073 թ.), «Մստիսլավի ավետարանը» (XII դարասկիզբ) և այլն:



Սվյատոսլավի ճառընտիրը, 1073 թ.

XIII–XV դդ. գեղանկարչությունը շարունակում էր մինչմոնղոլական ժամանակաշրջանի ավանդույթները: XIV դարավերջի նշանավոր նկարիչ էր Բյուզանդիայից եկած Ֆեոֆան Գրեկը: Պահպանվել են նրա նկարազարդումները Նովգորոդի Իլյին փողոցում գտնվող Փրկչավերափոխման եկեղեցում, սրբապատկերները՝ Մոսկվայի Բլագովեշչենսկյան տաճարում: Հին ռուսական արվեստի գագաթն է Անդրեյ Ռուբլյովի (1360–1430 թթ.) ստեղծագործությունը: Նրան են պատկանում Զվենիգորոդում Ուսպենսկու տաճարի, Մոսկովյան Անդրոնիկովի և Տրոյիցե-Սերգիև մենաստանների, Վլադիմիր Ուսպենսկու տաճարի որմնանկարները (վերջինը կատարել են համատեղ՝ Անդրեյ Ռուբլյով, Դանիիլ Չոռնի): Ռուբլյովի վրձնին է պատկանում «Երրորդություն» սրբապատկերը, որն արվել է Տրոյիցե-Սերգիև մենաստանի համար:



Սբ. Նիկոլայ Հրաշագործ: Աստվածածնի ծննդյան տաճար, Ֆերապոնտովի մենաստան, որմնանկար: Նկարիչ՝ Դիոնիսիյ

XV դ. վերջին ստեղծագործել է ևս մեկ նշանավոր գեղանկարիչ՝ Դիոնիսին: Նրան են պատկանում Պանֆուտև Բորովսկու մենաստանի Ծննդյան տաճարի որմնանկարները, «Դեիսուս» կոմպոզիցիան Կրեմլի Ուսպենսկյան տաճարում, Ֆերապոնտովյան մենաստանի որմնանկարները:



Երրորդություն։ Նկարիչ Անդրեյ Ռուբլյով



Պյոտր Ալեքսանդրիսկի։ Որմնանկար Ներեդիցայի Փրկչավերափոխման եկեղեցում։ Նովգորոդ

Ճարտարապետությունը միջնադարյան Ռուսիայում: Ռուսիայում շենքերը կառուցում էին հիմնականում փայտից։ Այն ծառայում էր որպես շինանյութ, ինչպես տների, շենքերի կառուցման, այնպես էլ ամրոցների պատերի շինության համար։ Քարով շինությունների կառուցումը սկսվում է քրիստոնեության ընդունումից հետո։ Դրանք առաջին հերթին տաճարներն ու եկեղեցիներն էին։ Քարե կառույցների շինարարությունը զարգանում էր բյուզանդական ճարտարապետության ազդեցությամբ, բայց ռուս վարպետները դրանում ինքնատիպ գծեր ներմուծեցին, որը գալիս էր փայտի ճարտարապետությունից։

Ճարտարապետական ամենավաղ քարե շինությունը Կիևի Աստվածածնի վերափոխության եկեղեցին է՝ կառուցված X դ. վերջին՝ Վլադիմիր Սվյատոսլավիչի օրոք։ Այն չի հասել մեր օրերը, քանի որ 1240 թ. Կիևի վրա մոնղոլների հարձակման ժամանակ ավերվել է։ 1030-ական թթ. վերջին Կիևում կառուցվեց Սոֆյայի տաճարը, որը XVII դ. վերակառուցումից հետո պահպանվել է փոփոխված տեսքով։ 1040-ականների երկրորդ կեսին Նովգորոդում կառուցվեց նույնանուն՝ Սոֆյայի տաճարը (ներկայիս տեսքը մոտ է նախնականին)։ Չեռնիգովի Փրկչավերափոխության տաճարը կառուցվել է XI դ. կեսերին։ XI դ. երկրորդ կեսին Ռուսիայում կառուցվեց երրորդ Սբ. Սոֆյայի տաճարը, այս անգամ՝ Պոլոցկում։

XII դ. ճարտարապետության մեջ զուգակցված են տեղական ավանդույթները Բյուզանդիայից փոխառնված արևմտաեվրոպական ռոմանական ոճական ձևերի և տարրերի հետ։ Այդ ժամանակ էլ ստեղծվում են տեղական ճարտարապետական ուղղություններն ու ճարտարապետաշինարարական դպրոցները։



Սոֆյայի տաճարը Կիևում

Նովգորոդյան հողում XII դ. նշանավոր հուշարձաններից է Յուրևի մենաստանում գտնվող Գեորգիևյան տաճարը, Անտոնիի մենաստանի Աստվածածնի Ծննդյան տաճարը, Յարոսլավովյան պալատի (Параскевы Пятницы) եկեղեցին[12]: Սուզդալյան հողում ճարտարապետական վերելքը կապվում է Անդրեյ Բոգոլյուբսկու (1157–1174 թթ.) իշխանության հետ: Նրա օրոք են ստեղծվում Վլադիմիրի Վերափոխման տաճարը, քաղաքի մուտքի այսպես կոչված «Ոսկե դարպասները», Ներլիում (իշխանի քաղաքից դուրս գտնվող աթոռանիստի հարևանությամբ) Աստվածածնի (աշնան տոնի) եկեղեցին: XII դ. վերջում Վլադիմիրում վեր հառնեց Դմիտրևյան տաճարը: XII դ. կեսերին Պերեյասլավլ-Զալեսսկիում կառուցվեց Փրկչի պայծառակերպության (Спасо-Преображенский) տաճարը, որը նույնպես



Դմիտրևյան տաճարը Վլադիմիրում

[12] Параскевы Пятницы – հունար. παρασκευή բառից է: Հարության զատկից առաջ եղած ուրբաթը, երբ զատկի նախապատրաստությունն է: Ըստ ուղղափառ հավատի՝ Պարասկևայի հայտնության օրը հենց այդ ուրբաթն է, երբ նա երիտասարդ կնոջ կերպարանքով երկնքից երկիր է իջնում, անցնում մարդկանց կողքով, լսում, թե նրանցից ով ինչ խնդրով է իրեն դիմում, արդյոք մարդիկ ճիշտ կանոնո՞վ են ապրում, բուժում է նրանց հոգևոր և ֆիզիկական տկարությունները: Ռուսերեն տարբերակը՝ Прасковья.



Փրկչավերափոխման եկեղեցին Նովգորոդի Իլյին փողոցում

ճարտարապետության ուշագրավ հուշարձաններից է: 1230-ական թթ. կառուցվեց ևս մեկ տաճար՝ Գեորգիևյան տաճարը Յուրև-Պոլսկում (в Юрьеве-Польском):

Հարավային Ռուսիայում ճարտարապետական նշանավոր հուշարձան է Կիևի մերձակայքում գտնվող Բերեստովի Փրկչի պայծառակերպության եկեղեցին՝ կառուցված XII դ. և XIII դ. առաջին կեսերին:

Մոնղոլական արշավանքներից հետո առաջին տասնամյակը նշանավորվեց նրանով, որ Ռուսիայի մեծ մասում դադարեցվեց քարե տաճարների կառուցումը. երկրի աղքատության պայմաններում նրանից հարկերի տեսքով նյութական ռեսուրսների դուրսբերումը ստիպում էր դադարեցնել թանկ շինարարությունը: Այն վերսկսվեց միայն XIII դ. վերջերից: Հյուսիսարևելյան Ռուսիայում առաջին քարե կառույցը եղավ Տվերի Փրկչավերափոխման տաճարը՝ կառուցված այդ նույն դարի երկրորդ կեսին՝ 1285 թ.: Զգալի թվով նշանակալից ճարտարապետական կառույցներ՝ եկեղեցիներ երևան են XIII–XV դդ. Նովգորոդում: Դրանցից էին Լիպնեում Նիկոլի (1292 թ.), Ֆեոդոր Ստրատիլատի (1360–1361) եկեղեցիները, Փրկչավերափոխմանը Նովգորոդի Իլյին փողոցում (1374 թ.), Պետրոս–Պողոսինը Կոժևնիկոյում (1406 թ.): Պսկովում 1365-1367 թթ. կրկին վերաշինվեց քաղաքի գլխավոր՝ Տրոյիցկյան տաճարը:

XIV դ. բավականին շատ և խոշոր չափերի շինարարություն է սկսվում Մոսկվայի իշխանական տանը: 1367 թ. սպիտակ քարից կառուցվում է Կրեմլը (առաջին քարե ամրոցը Հյուսիսարևելյան Ռուսիայում):



Մոսկովյան Կրեմլի Վերափոխման տաճարը

XIV դ. վերջից թափով զարգանում է մենաստանների և քաղաքների շինարարությունը Մոսկովյան Ռուսիայում: XV դ. սկզբին են կառուցվում Զվենիգորոդի Վերափոխման, Զվենիգորոդի մերձակայքում գտնվող Սավինո-Ստրոժևսկու մենաստանի, ինչպես նաև Տրոյիցե-Սերգիև մենաստանում Երրորդության տաճարները: XV դ. երկրորդ կեսին՝ Իվան III-ի օրոք, սկսվում է Մոսկովյան Կրեմլի անսամբլի կառուցումը: 1470-ական թթ. Մոսկվայում կառուցվում

է Վերափոխման տաճարը, որը հարյուրամյակներ շարունակ եղել է Ռուսաստան պետության գլխավոր տաճարը: Նրա շինարարությունը գլխավորում էր Իտալիայից հրավիրված ճարտարապետ Արիստոտել Ֆիորավանտին: 1485 թ. սկսվեց Կրեմլի պատերի՝ սպիտակ քարերի փոխարեն աղյուսով կառուցումը (այս շինարարությունն էլ ղեկավարում էին իտալացի վարպետները), որն ավարտվեց 1490-ական թթ.: Վեր էին հառնում Ավետման տաճարը և Գրանիտե (Гранovитая) պալատը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմե՛ք Մոնղոլական պետության առաջացման և սահմանների ընդարձակման մասին: Ե՞րբ է տեղի ունեցել մոնղոլ և ռուս զորքերի առաջին հանդիպում-բախումը: Ինչո՞վ է դա ավարտվել:
2. 2. Ինչպե՞ս անցավ Բաթու խանի զավթողական արշավանքը: Ինչպիսի՞ աշխարհաքաղաքական փոփոխություններ նա բերեց Արևելյան Եվրոպայում:
3. Պատմե՛ք Ոսկե Հորդայի առաջացման, ծաղկման և անկման մասին: Ո՞ր ղեկավարներն ավելի նշանակալից դեր ունեցան այդ պատմական դեպքերի մեջ:
4. Ի՞նչ վիճակում էին ռուսական հարավային և արևմտյան հողերը մոնղոլական արշավանքից հետո:
5. Քաղաքական ինչպիսի՞ գործընթացներ էին տեղի ունենում Հյուսիսարևելյան Ռուսիայում XIII դարի կեսերին և հատկապես երկրորդ կեսին:
6. Տվե՛ք Ալեքսանդր Նևսկու բնութագիրը՝ որպես ռազմահրամանատար և քաղաքական գործիչ: Ինչպիսի՞ կարևոր պատմական խնդիրներ է լուծել նա:
7. Շնորհանդեսի տեսքով ներկայացրե՛ք «Մոսկովյան իշխանների» դինաստիական գծապատկերը՝ Դանիիլ Ալեքսանդրովիչից մինչև Իվան III: Ներկայացրե՛ք իշխանների կենսագրությունը և կառավարման տարիները:
8. Ինչպիսի՞ գործոններ նպաստեցին Մոսկովյան իշխանական տան ուժեղացմանը XIV դ. առաջին կեսին: Ներկայացրե՛ք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները:
9. Ինչպիսի՞ կարևոր պատմական իրադարձություններ են կապված Դմիտրի Դոնսկոյի գործունեության հետ: Ինչո՞վ էր իշխանի՝ Հորդայի նկատմամբ վարած քաղաքականությունը տարբերվում իր նախորդներից:
10. XV դ. երկրորդ քառորդում ո՞րն էր Մոսկովյան իշխանական տան իշխանների միջև պատերազմի պատճառը: Ինչպե՞ս անցավ այդ պատերազմը, և ինչո՞վ այն ավարտվեց:
11. Ինչպիսի՞ միջոցներ օգտագործեց Իվան III-ը Հորդայից կախվածությունը վերացնելու համար:
12. Իվան III-ի ժամանակ ո՞ր տարածքները միացվեցին Մոսկվային: Պատմե՛ք՝ ինչպես տեղի ունեցավ Նովգորոդյան հողերի միացումը, և ինչպիսի՞ն էր դրա հետևանքը:

13. Ինչպե՞ս էր փոխվում հասարակական կարգը ռուսական հողերում: Տվե՛ք «հայրենաժառանգ կալվածք» և «կալվածք» հասկացությունների բնութագրերը:
14. Ի՞նչ ժանրերի գրական ստեղծագործություններ են ստեղծվել Ռուսիայում: Ի՞նչ կարևոր իրադարձություններ են արտացոլվել այդ գործերում:
15. Բառարանից օգտվելով՝ տվե՛ք սրբապատկեր, որմնանկար, և խճանկար եզրույթների բնութագիրը: Բերե՛ք կերպարվեստի տվյալ տեսակների օրինակներ:
16. Հետևե՛ք և կա՛պ գտեք Ռուսիայի պատմական ճակատագրի և ռուսական ճարտարապետության միջև:
17. Օգտվելով տեղեկատվական լրացուցիչ աղբյուրներից՝ պատրաստե՛ք հաղորդում Ռուսիայում ճորտատիրական շինարարության զարգացման մասին:

ԳԼՈՒԽ 4. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVI ԴԱՐՈՒՄ

§ 19. Ռուսաստանը XVI դարի առաջին երեք տասնամյակում

Մոսկվայի շուրջ ռուսական հողերի միավորման ավարտը: XVI հարյուրամյակը Մոսկովյան մեծ իշխանության շուրջ ռուսական հողերի միավորման գործընթացի ավարտն էր. կառավարիչներն սկսեցին իրենց անվանել համայն Ռուսիայի տիրակալներ: Այս տիտղոսը, այնուամենայնիվ, անխուսափելի բախումների առիթ էր արևմտյան սահմաններին գտնվող գլխավոր հակառակորդի՝ Լիտվայի մեծ իշխանության հետ, որի միապետները պաշտոնապես իրենց անվանում էին Լիտվայի, Ռուսական և Ժեմայտյան հողերի մեծ իշխաններ (Ժեմայտիան առանձին մարզ էր Լիտվայում), և ոչ առանց հիմքի. մոսկովյան տիրակալի նոր տիտղոսում սպառնալիք էին տեսնում իրենց տարածքային ամբողջականության և տիրակալության նկատմամբ:

Մոսկվայի և Վիլնոյի միջև եղած հակամարտությունը, որն իր արմատներով գալիս էր XIV դարից, տեղափոխվեց նոր հարյուրամյակ: 1500–1503 թթ. տեղի ունեցավ հերթական պատերազմը, որի ժամանակ Մոսկովյան մեծ իշխանության դաշնակիցներ էին Պսկովյան հանրապետությունը և Ղրիմի խանությունը, իսկ Լիտվայինը՝ Մերձբալթիկայում գտնվող Լիվոնյան օրդենը: Պատերազմի ժամանակ ուժերի գերակշռությունը երևաց հենց առաջին տարում, երբ ռուսական բանակը Վեդ-ռոշում ջախաջախիչ պարտության մատնեց լիտվացիներին: 1503 թ. ստորագրված հաշտության արդյունքում Մոսկվայի վերահսկողության տակ անցան Չեռնիգովյան հյուսիսային և Բրյանսկի հողերը, իսկ Օրդենը պարտավորվեց տարեկան տուրք վճարել Մոսկվայի մեծ իշխանին՝ Դերպտի եպիսկոպոսության հողերին տիրելու համար: Նույն թվականին Իվան III-ը իր զարմիկ, Ռյազանի իշխանի կտակով ստացավ Ռյազանյան մեծ իշխանության տարածքի մեկ երրորդը: (Տե՛ս Հավելվածը, քարտեզ հ. 4):

Ռուսական հողերը միավորելու գործը շարունակեց և ավարտեց Իվան III-ի թոռանգը՝ մոսկովյան մեծ իշխան Վասիլի III Իվանովիչը (1505–1533): 1510 թ. նա պաշտոնապես իր տերության կազմի մեջ միավորեց Պսկովյան հանրապետության հողերը, որը վաղուց Մոսկվայի հետ պահպանում էր դաշնակցային հարաբերություններ: Դա ամրապնդեց երկրի դիրքերը Մերձբալթիկայում, միաժամանակ սրեց Լիտվայի մեծ իշխանության հետ հարաբերությունները: Շուտով սկսվեց ռուս-լիտվական հերթական պատերազմը (1512–1522 թթ.): Այդ հակամարտության մեջ Ռուսաստանի գլխավոր հաջողությունը եղավ 1514 թ. անառիկ ամրոցի՝ Սմոլենսկի գրավումը: Երկու ամիս անց Օրշայի մոտ եղած մարտում ռուսական զորքի պարտությունը բեկում չառաջացրեց պատերազմի ընթացքի մեջ: Ըստ զինադադարի պայմանների՝ Սմոլենսկը, որը մեկ դարից ավելի գտնվում էր լիտվական իշխանությունների տիրապետության տակ, անցավ Մոսկովյան պետությանը՝ տևական ժամանակ դառնալով հուսալի վահան արևմտյան ուղղությամբ: Այդ ժամանակ իրադրությունը բարդացել էր Ռուսաս-



Վասիլի III-ը

տանի հարավային մասում. Ղրիմի նոր խան Մեհմեդ-Գիրեյ I-ը թշնամական էր տրամադրված Վասիլի III-ի նկատմամբ:

Վասիլի III-ը սկսեց բանակցել ոյազանյան մեծ իշխան Իվան Իվանովիչի հետ, որին Մոսկվայում վերցրել էին պահակախմբի հսկողության տակ: Այդ պայմաններում ոյազանյան իշխանության հողերը 1521 թ. պաշտոնապես մտան Մոսկովյան մեծ իշխանության կազմի մեջ: Այս իրադարձությամբ մոսկովյան տիրակալների իշխանության տարիներին ավարտվեց ռուսական հողերի՝ ավելի քան երկու դար տևած միավորման գործընթացը:

Իշխանության ամրապնդումը: Մոսկվայի ռազմաքաղաքական հզորության աճին զուգընթաց, աստիճանաբար դառնալով ռուսական հողերի անվիճելի քաղաքական կենտրոն, ամրացան նաև Մոսկովյան Մեծ իշխանի դիրքերը: Արդեն Իվան III-ի ժամանակ զգալիորեն ուժեղանալով՝ նա ավելի հստակորեն էր ցուցադրում ձևավորվող ինքնակալության գծերը: Քանի որ Իվան Կալիտայի ժառանգները դեռևս շարունակում էին պետությունը դիտել որպես իրենց նախնիների ժառանգություն (հայրենաժառանգ կալվածք), նրանց իշխանության բնույթում կատարված փոփոխությունները նախ և առաջ նկատելի էին «իրենց ընտանեկան գործերի» համապատկերում, որոնք ձեռք էին բերում պետական իրադարձության մասշտաբներ: Վասիլի III-ը ժառանգություն ստացավ հայրական կալվածքների առյուծի բաժինը, նրա կրտսեր եղբայրները՝ անհամեմատ համեստ բաժիններ, ինչը նրանց թույլ չէր տալիս լինել ինքնուրույն քաղաքական դերում: Վերջիններիս անժառանգ լինելու դեպքում նրանց մահից հետո տարածքներն անցնում էին Մեծ իշխանին, և Վասիլի III-ը թույլատրեց ամուսնանալ (այն էլ իր իշխանության վերջում) եղբայրներից ամենակրտսերին՝ կալվածատեր Անդրեյ Իվանովիչ Ստարիցկուն: Երկու մյուս կալվածքները՝ կալուգյանը (1518 թ.) և ուգլիցկյանը (1521 թ.), Վասիլի III-ը իր՝ ժառանգ չունեցող եղբայրների մահից հետո, միացրեց իր կալվածքներին: Մեծ իշխանի «ընտանեկան բռնապետությունը» այդպիսով նպաստում էր պետության մեջ իշխանության կենտրոնացմանը:

Պակաս դրամատիկ չէր իրավիճակը նաև Վասիլի III-ի ընտանիքում: Առաջին կնոջ՝ Սոլոմոնիա Սաբուրովայի հետ ապրելով քսան տարի՝ նա այդպես էլ ժառանգ չունեցավ և մտածում էր երկրորդ անգամ ամուսնանալու մասին: Եկեղեցական կանոնիկ կարգով ամուսնալուծության պատճառ չկար. «չբեր» կինն էլ հրաժարվում էր վանք մտնել, թեև անգամ նրա միանձնուհի դառնալը Վասիլի III-ին երկրորդ անգամ ամուսնանալու իրավունք չէր տալիս: Այդուամենայնիվ, Մեծ իշխանը հասավ լուռ համաձայնության: Բոյարական դումայի և բարձրագույն հոգևորականության ակտիվ մասնակցությամբ Սաբուրովային բռնի կերպով ձեռնադրեցին միանձնուհի (ձևականորեն այդ գործում նախաձեռնությունը բոյարներինն էր և Մոսկվայի մետրոպոլիտ Դանիիլինը):

Մեծ իշխանի ղեկավարումից բոյարների և բարձր հոգևորականության կախվածությունը, որը վառ կերպով արտահայտվեց իշխանական մեծ ընտանիքում ամուսնալուծության ժամանակ, հավանորեն միանգամից չի եղել. այն մոսկովյան մեծ իշխանների շրջապատում եղած գաղափարաքաղաքական երկարատև պայքարի արդյունք էր: Դեռևս Վասիլիի հայրը՝ Իվան III-ը, «կամայականորեն» լուծեց գահաժառանգության հարցը. սկզբում ժառանգ հռչակեց թոռանը, ապա՝ որդուն՝ քննադատությունների առաջն առնելով «Ում ուզեմ, նրան էլ կտամ իշխանությունը» արտահայտությամբ: Ըստ որում՝ բոյարները Իվան III-ին հիշում էին որպես «խորհուրդ սիրող», բանավեճերը խրախուսող ինքնակալ (սիրում էր, երբ իրեն անվանում էին «ընդառաջող»): Նրա որդին, ըստ ժամանակակիցների, կարևոր հարցերի մեծ մասը որոշելիս կա՛մ անձամբ էր վճռում, կա՛մ վստահելի մարդկանց նեղ շրջանում քննարկելով (այս դեպքում՝ նեղ շրջանն էլ ինքն էր):

XVI դ. մեծ իշխանության նկատմամբ բարձր հոգևորականության դիրքորոշումը շատ հարցերում վճռվում էր հիմնականում եկեղեցական երկու հակամարտող կողմերի՝ «հովսեփականների» («иосифлянство») և «բաց առագաստներով սլացողների» («нестяжательство») պայքարի արդյունքում: Դրանցից առաջինի հաղթանակը նշանակում էր, որ եկեղեցին պահպանում էր իր հսկայական հարստությունը և կալվածքները, սակայն հոգևորականությունը զրկվում էր անկախությունից՝ պարտավորվելով իր հեղինակությամբ ամեն կերպ աջակցել տիրակալի ցանկացած գործողության:

Եկեղեցական միջավայրում աստիճանաբար ձևավորվեց «Մոսկվան երրորդ Հռոմն է» գաղափարական դոկտրինը, որը մոտավորապես 1523 թ.ավելի հստակ ձևակերպվեց պսկովյան կուսակրոն Ֆիլոֆեյի կողմից. «Երկու Հռոմը ընկան, երրորդը կանգուն է, իսկ չորրորդը անգոյ է» (հին սլավոներեն՝ «Два убо Рима падоша, а третий стоит, а четвертому не быти»): Այս դրույթը, հենվելով Իոանն Բոգոսլովի (Աստվածաբանի) «Հայտնության» տեքստի վրա, որում հիշատակվում են երեք իրար փոխարինող մեծ կայսրությունները, հաստատում էր, որ երրորդի անկումով սկսվելու է Աշխարհի կործանումը և Ահեղ դատաստանը: Սա ոչ միայն Մոսկվան դարձրեց Հռոմեական և Բյուզանդական երկու կայսրությունների գաղափարական ժառանգորդը, այլև Մոսկվայի ինքնակալների ուսերին դրեց հսկայական պատասխանատվություն:

Մեծ իշխան Իվան IV-ի իշխանության սկիզբը: XVI դ. առաջին երեսուն տարիներին Մոսկվան արդեն բարձրաձայն հայտարարում էր «Վլադիմիր Մոնոմախի ժառանգության» նկատմամբ Ռուսիա պետության սահմաններում իր իրավունքների մասին: Այս հավակնությունները ամբողջությամբ համընկնում էին արևելասլավոնական ժողովուրդների տարածքների հետ՝ ձևակերպելով Մոսկվայի՝ որպես միակ և վերջին ուղղափառ պետության, կայսերական կարգավիճակի գաղափարը: Թեև այն դեռևս չէր կազմավորել կայուն պետական իշխանության համակարգ, Մոսկվան արդեն ձևավորում էր իր քաղաքական ու գաղափարական առաքելությունը՝ որպես ամբողջ ուղղափառ աշխարհի միավորող և պաշտպան ուժ: Եվրոպայի տարածքում խոշորագույն պետությունը (1533 թ. մոտ 2,8 միլիոն քառակուսի կմ) կառավարվում էր որպես հսկայական հայրենաժառանգ կալվածք (вотчина), իսկ պետությունն ինքը ընկալվում էր



Իվան IV-ի ծննդյան պատվին կառուցված Համբարձման եկեղեցին Կոլոմենսկում

որպես տիրակալի սեփականություն: «Պետություն» և «պետական» հասկացությունների տարանջատում չկար, և անգամ իշխանության մարմինները, որոնք կատարում էին հրամաններ, ժամանակի ընթացքում ամբողջությամբ բյուրոկրատական դարձան և XVI դ. առաջին երեսուն տարիներին գործում էին որպես մեծիշխանական հայրենաժառանգ կալվածքի՝ պալատի և գանձարանի գրասենյակ: Իշխանության այդպիսի մոդելը շատ բան էր պահանջում հենց ինքնակալից, իսկ նրա խառնվածքն իր հերթին հսկայական ազդեցություն էր ունենում պետության կենսագործունեության բոլոր կողմերի վրա:

Ավելի վառ կերպով այն ի ցույց դրվեց Վասիլի III-ի մահից հետո: Նրա ավագ որդին և ժառանգը՝ Իվան IV Վասիլևիչը (1530–1584), ընդամենը երեք տարեկան էր, իսկ հանգուցյալ մեծ իշխանի վերջին կամքի համաձայն՝ մինչև նրա չափահաս դառնալը խնամակալական և գահապահպան լիազորություններն անցան Վասիլի III-ի այրուն՝ մեծ իշխանուհի Ելենա Վասիլևնային (ծննդյամբ՝ Գլինսկայա):

Լինելով խելոք և խիստ կին՝ իշխանուհի խնամակալը գործնականում անմիջապես ազատեց որդուն համեմատաբար ավելի վտանգավոր հակառակորդից՝ կալվածատեր իշխան Յուրի Իվանովիչ Դմիտրովսկուց, որին սովամահ արեցին բանտախցում: 1537 թ. իշխանուհին ոչնչացրեց Իվան III-ի որդիներից վերջինի՝ իշխան Անդրեյ Իվանովիչ Ստարիցկու կալվածքը: Տնտեսական և քաղաքական հետևանքներ ունեցավ մեծ իշխանուհու՝ 1535 թ. իրականացրած դրամական բարեփոխումը, որի շնորհիվ երկրում սկսեց գործել միասնական դրամական համակարգ: Սակայն Ելենա Գլինսկայայի հանկարծահաս մահը (1538) յոթամյա մեծ իշխան Իվանին թողեց բոյարների խնամքին, որոնք, օգտվելով մեծիշխանական տան իշխանության թուլացումից, առաջնորդվելով անձնական շահերով, զբաղվում էին գանձարանի թալանով, իրենց ոչ հարմար անձանց և հակառակորդների ոչնչացմամբ: Սա դարձավ սովորական երևույթ անչափահաս մեծ իշխանի արքունիքում, որն այդ ժամանակ ի վիճակի չէր փոխել ստեղծված դրությունը:

§ 20. Իվան IV-ի կառավարումը: Ներքին քաղաքականությունը

XVI դ. կեսերի քաղաքական ճգնաժամը: 1547 թ. հունվարին իր խորհրդատու-դաստիարակ, Մոսկվայի մետրոպոլիտ Մակարիայի նախաձեռնությամբ 16-ամյա Իվան IV-ը Մոնոմախի գլխարկով, որը Իվան Կալիտայի ժամանակից պահվում էր

գանձարանում և ինչ-որ ժամանակ պատկանել էր բյուզանդական կայսրերին, հանդիսավորապես թագադրվեց և սկսեց օգտագործել ցար տիտղոսը։



Մոնոմախի գլխարկը

Քաղաքական այս ակտը հասցեագրված էր համայն Ռուսիայի ինքնակալի հպատակներին՝ փորձելով ցույց տալ ցարի անհասանելի բարձրությունը և այդ նպատակով կիրառելով «Երկրային ցար» և «Երկնային ցար» զուգորդությունը։ Ռուսաստանի պաշտոնական գործավարությունում հաստատվեց մի ձևակերպում, համաձայն որի՝ իրադարձությունների զարգացման ցանկացած տարբերակում գործում էր «կամոքն Աստծո մինչև մեծ միապետ» («волен Бог да великий государь») սկզբունքը։

Երկրի սահմաններից դուրս՝ բացառությամբ Լիտվայի, որտեղ ռուս ցարերին դեռ երկար ժամանակ շարունակում էին կոչել Մոսկովյան մեծ իշխաններ, «ցար» տիտղոսը այլ երկրներում անհնազանդություններ չառաջացրեց։ Շուտով՝ թագադրումից հետո, Իվան IV-ը ամուսնացավ, ինչը նշանակում էր, որ նա դարձել էր չափահաս, և դա ընդունվում էր պաշտոնապես, այսինքն՝ բացառվում էր որևէ խնամակալության կամ գահապահության հնարավորություն։

Ընտրյալ Ռադայի կառավարությունը։ 1547 թ. հունիսին Մոսկվայի մեծ հրդեհը սադրեց մայրաքաղաքի բնակչության ապստամբությունն ընդդեմ ցարի ամենամոտ հարազատների՝ իշխան Գլինսկիների, որոնց մեղադրում էին այդ աղետի համար։ Գլինսկիները և նրանց մտերիմները, որոնք նախկինում փաստացի կառավարում էին երկիրը, կորցրին իշխանությունը, և պատանի Իվան IV-ի շրջապատում աստիճանաբար ձևավորվեց կառավարման նոր շրջանակ, որը գիտական գրականության մեջ անվանվում է Ընտրյալ ռադա։ Ռադայում համեմատաբար ազդեցիկ դեմքեր էին՝ կրեմլյան Բլագովեշչենսկ տաճարի ավագ երեց Սիլվեստրը և գավառական ազնվականական ընտանիքից դուրս եկած Ալեքսեյ Ադաշևը։ Մինչև 1560 թ. նրանք պահպանում էին իրենց ազդեցությունը ցարի վրա, իսկ Ընտրյալ ռադայի գործունեության ընթացքը նշանավորվեց պետական մի շարք կարևոր վերափոխություններով։

Այդ ժամանակին է վերաբերում 1549 թ. հրավիրված առաջին ինքնավար, զեմստվոյական ժողովը (земский собор), որն անվանվեց նաև «Հաշտության ժողով»։ 1550 թ. ցարը հաստատեց համառուսական օրենքների նոր ժողովածուի տարբերակը՝ «Ցարական դատաստանագիրքը», որում ճշգրտվել էին 1497-ի նախկին դատաստանագրքի մի շարք դրույթներ։ 1551 թ. Մոսկվայում՝ եկեղեցական ժողովում, քննարկվում էին եկեղեցական կյանքին վերաբերող հարցեր, սակայն աշխարհիկ իշխանության՝ եկեղեցական կալվածքները սահմանափակելու փորձը հանդիպեց «հոգևորականության» համախմբված դիմադրությանը։ Ժողովի որոշումները գրվեցին եկեղեցական գրքում, որն ուներ 100 գլուխ (հենց այդ պատճառով տաճարն էլ սկսեցին անվանել «Հարյուրգլխանի»)։



Իվան IV Ահեղ

Այդ ժամանակաշրջանի համար կարևոր նորամուծություն էր ինքնավարության բարեփոխությունը: Քաղաքային և գյուղական համրությունները պաշտոնապես լիազորվեցին վճռելու իրենց ներքին կյանքին վերաբերող հարցերը, և առաջին հերթին իրականացնել պետական գանձարանին տրվող հարկերը և տուրքերը: Այդ կարևոր գանձապետական գործը ստիպված էին տեղական բնակչությանը վստահել, քանի որ բացակայում էր փոխարքաների գործունեության նկատմամբ իրական հսկողություն սահմանելու հնարավորությունը, ուստի համրությունը պատասխանատու էր հարկերի՝ ժամանակին և ամբողջական հավաքման համար:

Եվս մեկ կարևոր և էական քայլ էր Ընտրյալ ռադայի այն որոշումը, որ տեղի բնակչությունը այլևս չէր կերակրելու մայրաքաղաքից նշանակված տեղական վարչախմբին: Սա ծանր բեռ էր՝ դրված բնակչության վզին: Կերակրումը փոխարինեցին հատուկ հարկով՝ կերակրման ծախսի հատուցմամբ, որը փոխանցվում էր պետական գանձարան, որտեղից էլ հետո վճարվում էր փոխարքայի կամ կուսակալի պարգևավճարը:

XVI դ. կեսերին երկրի վարչական գործունեության մեջ նշանակալից էին կենտրոնական իշխանության մարմինները՝ նորաստեղծ գերատեսչությունները: Այս մարմինները, որպես կանոն, ղեկավարում էին իրենց հանձնարարված (հրամայված) հարցերի շրջանակը ողջ պետության տարածքում: Գերատեսչություններում ծառայող պաշտոնյաները՝ ատենադպիրները և գործավար-գրագիրները, ամբողջովին կախված էին պետական գանձարանից տրվող պարգևավճարներից, ուստի դառնում էին ինքնակալական իշխանության ամրապնդման հուսալի հենարանը:

1550-ականների վերջին Իվան IV-ի Ընտրյալ ռադայի ազդեցությունը սկսեց թուլանալ: Դրան նպաստեցին ինչպես կառավարության թույլ տված հաշվեսխալները և վրիպումները (մասնավորապես՝ արտաքին քաղաքական ոլորտում), այնպես էլ սուբյեկտիվ գործոնները. հասուն ցարը ճնշվում էր իր շրջապատի կողմից ցուցաբերվող խնամակալական պահվածքից: 1560 թ. համարվում է Ընտրյալ ռադայի անկման ժամանակը: Ավելի վառ սկսեցին արտահայտվել միապետի խառնվածքի բացասական՝ կասկածամտության, դաժանության գծերը: Դրանք մեծ մասամբ առաջացել էին 1538–1547 թթ. մանկական՝ բոյարների կամայականություններից ունեցած տպավորությունների ազդեցությամբ: Ընտրյալ ռադայի առավել երևելի ներկայացուցիչները հեռացվել էին գործերից (Սիլվեստր), բռնադատվել (Ալեքսեյ Ադաշև) կամ ցարի անբարյացակամությունից փրկություն էին գտել արտասահմանում (իշխան Անդրեյ Միխայլովիչ Կուրբսկի): Ավելի ուշ Իվան Ահեղը իշխան Կուրբսկու հետ գրավոր բանավեճում հնարավորինս հստակ ներկայացրել է իր պատկերացումները միապետի իշխանության մասին՝ հակադրելով այն բոյարական օլիգարխիայի սարսափների հետ:

Իվան Ահեղի օպրիչնինան: 1565 թ. հունվարին Մոսկվայից գնալով Ալեքսանդրովյան արվարձան՝ Իվան IV Ահեղը հայտարարեց թագավորական գահը թողնելու մտադրության մասին՝ մեղադրելով շրջապատին՝ դավաճանության և միապետի ու իր ընտանիքի նկատմամբ ունեցած չարամտության համար: Ցարը մայրաքաղաք վերադառնալու պայման դրեց՝ արմատականորեն վերափոխելու պետական կառուցվածքը՝ տալով միապետին անձնական, անսահմանափակ իշխանություն: Երկիրը մասնատվեց երկու անհավասար մասերի: Տարածքի մեծ հատվածում, որն անվանվեց զեմշչինա, պահպանվեց նախկին կարգը, իսկ փոքր մասում, որը կոչվեց օպրիչնինա (այն ներառում էր տնտեսական առումով առավել զարգացած տարածաշրջանները), մտցվեց նոր կարգ: «Օպրիչ» նշանակում էր «բացի» և այն ժամանակվա իրավական գործառության մեջ համարվում էր ժառանգության այն մասը, որը տրվում էր հանգուցյալի այրուն: Օպրիչնինան դարձավ ցար Իվանի սեփական ավատակալվածքը, որտեղ նա գործում էր իր ուզածով՝ ամենևին չնեղելով իրեն ինչ-որ սահմանափակումներով: Տիրակալի անձի պահպանության նպատակով ստեղծվեց օպրիչնիկների հատուկ կազմ՝ հազար մարդով, սակայն շուտով մեծացավ վեց անգամ: Այն մարդիկ, որոնք վերցվել էին որպես օպրիչնիկ, հրաժարվում էին իրենց ունեցվածքից, անգամ այն հարազատներից և հարազատական կապերից, որոնք ապրում էին օպրիչնինայի սահմաններից դուրս: Զեմշչինայի տարածքում կորսված կալվածքները փոխհատուցվում էին օպրիչնիկական գավառներում, որտեղից քշում էին այն ծառայողներին, որոնք ընդգրկված չէին լինում օպրիչնիկների կազմում: Օպրիչնիկների հիմնական կեցավայրը դարձավ Ալեքսանդրովյան ծայրագավառը, իսկ առավել երևացող գործիչներ էին Մալյուտա Սկուրատովը, ինչպես նաև Ալեքսեյ և Ֆեոդոր Բասմանովները:

Փաստորեն օպրիչնինայի ստեղծումից անմիջապես հետո սկսվեցին ցարին ոչ հաճո մարդկանց նկատմամբ դաժան դատաստանները: Սկզբում այդ դատաստանները կետային էին և չէին տարբերվում 1560-ական թթ. սկզբի մահապատիժներից: Սակայն աստիճանաբար մեծացավ պատիժ կրողների տրամաչափը՝ ընդգրկելով ավելի շատ մարդկանց, որոնց ֆիզիկական ոչնչացման ճանապարհը մահապատիժն էր (դատավճռի կայացմանը և դրա ի կատար ածմանը հետևում էր անձամբ միապետը): Իվան Ահեղի ներկայությամբ մահապատժի ենթարկվածների մեջ էին նրա կաթնեղբայր, ախոռապետ-բոյար Ի.Պ. Չելյադնին, որը սպանվեց ինքնակալի ձեռքով, ինչպես նաև ցարի հորեղբոր տղան՝ Վլադիմիր Անդրեևիչ Ստարիցկին, որին թունավորեցին:

Ցարին անցանկալի մարդկանց նկատմամբ եղած ահաբեկչությունը շատ արագ կորցրեց իր «հասցեական» բնույթը: Օպրիչնիկները անգամ օրենքով համարվում էին օրենքից վեր (զեմստվոյականների նկատմամբ ցանկացած գազանություն հայտարարվում էր ճիշտ): Օգտվելով այն դրույթից, որ սպանված մարդկանց հաշվառում չէր կատարվում, դաժանությունները սահմաններ չէին ճանաչում. իբրև թե հաշվառումն անհնարին էր: Զոհերի քանակով ամենազանգվածայինը (մոտավորապես երեք հազար մարդ) եղել է 1570 թ. սկզբին: Օպրիչնիկների ջոկատի կողմից Մեծ Նովգորոդում իրականացրած ջարդը այն մեղադրանքով էր, թե իբր քաղաքի բոլոր բնակիչներն անխտիր դառնալու էին լեհ թագավորի հպատակները: Սրան հետևեց Պսկովի ավերումը,

սակայն այս անգամ՝ առանց բնակչության հետ հաշվեհարդարի: Ահաբեկչության զարգացման անողոք տրամաբանության համաձայն՝ պատժիչ մեքենան օրինաչափորեն սկսեց ոչնչացնել նաև իր ծառայողներին: 1570 թ. ամռանը Մոսկվայում զանգվածային մահապատիժների ժամանակ ուրիշ «տիրակալի դավաճանների» հետ սպանվեցին նշանավոր օպրիչնիկներ հայր և որդի Բասմանովները և իշխան Վյազեմսկին: Ըստ որում՝ օպրիչնիկները ռազմական բարձր պատրաստություն և որակներ չունեին: Երբ Ղրիմի թաթարները 1571 թ. ճանապարհ էին բացում դեպի Մոսկվա, օպրիչնիկները պարզապես փախան՝ թողնելով մայրաքաղաքի մատույցներն անպաշտպան: Քաղաքն այրեցին, իսկ Իվան Ահեղն ստիպված եղավ ապաստան գտնել Վոլոգդայում: 1572 թ. օպրիչնինան վերացվեց, անգամ դրա մասին հիշատակումը սպառնում էր հիշողին ենթարկել բրերով ծեծի:[13]



Ալեքսանդրովսկյան արվարձան

Օպրիչնինական քաղաքականության արդյունքները և գնահատականը: «Օպրիչնինա» ֆենոմենի ուսումնասիրության ընթացքում պատմագիտությունն այդպես էլ չկարողացավ քաղաքական այդ երևույթի վերաբերյալ ունենալ մեկ ընդհանուր կարծիք: Մասնագետների մի մասը օպրիչնինայում տեսան ոչ ազնվատոհմիկ, գավառական երևելիների վրա հենվող բոյարների կամայականությունների դեմ պայքար: Երկրորդները օպրիչնինան ընկալում էին որպես միջոց՝ կանխելու ծայրագավառների անջատողականությունը և ամրապնդելու երկրի միավորումը, կենտրոնամետ դառնալը: Երրորդները ցարի գործողությունները բացատրում էին ինքնակալի իշխանությունն ամրապնդելու ձգտմամբ: Այլք ենթադրում էին, որ Իվան Ահեղի գործողություններում ոչ մի տրամաբանություն հնարավոր չէ գտնել. օպրիչնինայի վայրագությունների տարիները բացատրվում են բացառապես ինքնակալի հոգեկան առողջության սրացող վիճակով: Այս բոլոր վարկածներից որևէ մեկը որպես հիմնական կամ միակը ընդու-

[13] *Բիր* – հաստ, սրածայր ձող, նաև՝ հաստ մահակ:

նելուն խանգարում են փաստերը: Օպրիչնինական կորպուսում միայն ցածր ծագում ունեցող ծառայողներ չէին ընդգրկված, իսկ ապակենտրոնացման միջոցով կենտրոնացումը դիտվում էր տարօրինակ:

Այսպես թե այնպես օպրիչնինայի հետևանքները եղան կործանարար. տարբեր հաշվարկներով օպրիչնինական ահաբեկչության զոհեր դարձան 5-6 հազար մարդ, իսկ ավելի զարգացած տնտեսական հարաբերություններով տարածաշրջանները (այդ թվում՝ Մոսկվան) սնանկացան, ամայացան: Մեծ Նովգորոդը՝ Ռուսիայի ամենահարուստ քաղաքը, այդպես էլ չկարողացավ վերադառնալ տնտեսական բարեկեցության նախկին մակարդակին: Օպրիչնինական կարգուկանոնից Իվան Ահեղը ամբողջովին չհրաժարվեց, անգամ պաշտոնապես դրանք վերացնելուց հետո էլ: Հաշվեհարդարները ոչ հաճելի մարդկանց նկատմամբ շարունակվում էին, իսկ 1575-1576 թթ. Իվան Ահեղն անսպասելիորեն հրաժարվեց ցարի տիտղոսից՝ երկրի գլխավոր հայտարարելով քրիստոնյա դարձած թաթարների արքայորդի Սիմեոն Բեկբուլատովիչին, իսկ իր համար առանձնացրեց «Մոսկովյան հատուկ թագավորապատկան կալվածքը»: Իվան Վասիլևիչը Սիմեոնին ուղարկած խնդրագրերում իրեն անվանում էր «Իվանեց Մոսկովսկի», թեև դեռևս շարունակում էր իր ձեռքում պահել պետության կառավարման բոլոր լծակները: 1576 թ. ցարը նույնքան անսպասելի դադարեցրեց այդ «քաղաքական դիմակահանդեսը», որի իմաստը մի շարք պատմաբանների կարծիքով այն էր, որ նա փորձում էր կրկին վերականգնել օպրիչնինական կարգերը: Իվան Ահեղի թագավորելու մինչև վերջին օրը շարունակում էր գործել նրա «հատուկ պալատը», որի գործերի կառավարման համար նույնիսկ ստեղծվեցին գերատեսչություններ՝ կրկնօրինակելով համապետական կառույցներին՝ պալատական դատարան, պալատական պաշտոններ նշանակող գերատեսչություն և այլն:

Օպրիչնինայից հրաժարվելուց հետո այս ռեժիմը ժողովրդի մեջ չթողեց ոչ մի բարի հիշողություն. եթե Իվան Ահեղը ժողովրդական հիշողությունում ավելի շատ մնաց որպես դրական հերոս («խիստ, բայց արդարամիտ»), ապա օպրիչնիկները ժողովրդի կողմից վաստակեցին մոայլ մականուն՝ «անլույս խավար» (այսինքն՝ «զարհուրելի դժոխք»՝ «кромешник»), իսկ նրանց պարագլուխ Մալյուտա Սկուրատովը բանահյուսության մեջ ներկայացվում է միանշանակորեն որպես բացասական կերպար: Իվան Ահեղի այս փորձը չկրկնեցին նրա մերձավոր ժառանգորդները, թեև 1573 թ. կազմած կտակում ցարը ենթադրում էր այդպիսի հնարավորություն. «Իսկ եթե կստեղծեն օպրիչնինա, դա էլ իմ երեխաների կամքն է… ինչպես իրենց շահավետ կլինի, կկատարեն. իրենց համար օրինակ արդեն կա»: Իվան Ահեղի ժառանգորդ ցար Ֆեոդոր Իվանովիչը (1584–1598)՝ Իվան Կալիտայի վերջին ժառանգը ռուսական գահին, և նրա շրջապատը գերադասեցին օպրիչնինայի կարգը և նրա հոր «հատուկ պալատը» չվերականգնել, հենց որ գահին նստի նոր միապետը: Վերջինիս՝ Ֆեոդոր Իվանովիչի 14-ամյա կառավարումը հետագայում հիշվում էր որպես ծաղկման, հանդարտության, խաղաղության ժամանակաշրջան, հատկապես Իվան Ահեղի ժամանակի և էլ ավելի դրամատիկ ցնցումներով աչքի ընկնող XVII դ. սկզբի Խառնակ ժամանակների հետ համեմատած:

§ 21. Իվան IV-ի վարած արտաքին քաղաքականությունը

XVI դ. Ռուսաստանի միջազգային հարաբերությունների համակարգը: Եվրոպայի արևելքում XV դ. վերջին և XVI դ. սկզբին ստեղծված քաղաքական իրադրությունը այս տարածաշրջանում արմատապես փոխեց ուժերի հարաբերակցությունը: Ոսկե հորդայի մասնատվելը մի քանի ինքնուրույն խանությունների և Մոսկվայի մեծ իշխանության շուրջ ռուսական հողերի միավորման ավարտը Մոսկվային դարձրին Արևելյան Եվրոպայի գերիշխող ուժերից մեկը: Այդ նույն ժամանակ Օսմանյան կայսրության սրընթաց հզորացումը և զավթողական փորձերը Եվրոպայում եվրոպական արքունիքներին մղեցին սուլթանի դեմ դաշնակից գտնել «մոսկովիտ»-ների հետ միությունում: Սակայն կրոնական անդունդը, որը բաժանում էր քրիստոնեության երկու ճյուղերին՝ ուղղափառությանը և կաթոլիկությանը, չնպաստեց եվրոպական պետությունների և Ռուսաստանի իրական միությանը, մանավանդ որ վերջինս դեռևս չէր բախվել Օսմանյան կայսրության հետ: Ավելին, Ռուսաստանը կենտրոնացել էր իր արտաքին քաղաքական նպատակների իրականացման վրա, որոնք դեռևս դուրս չէին եկել Արևելյան Եվրոպայի սահմաններից (տե՛ս Հավելվածը, հ.5 քարտեզը):

Ռուսական պետությունը և թաթարական խանությունները XVI դարում: XVI դ. Ռուսական պետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից էր Պովոլժիեի և Հյուսիսային մերձսևծովյան թաթարական խանությունների դեմ պայքարը: Դրանք առաջացել էին Ոսկե հորդայի քայքայման արդյունքում: Դրանցից մի քանիսը Ռուսաստանի համար վտանգավոր հարևաններ էին: Հատկապես բավական բարդ էին հարաբերությունները Ղրիմի խանության հետ, որի բարեկեցությունը կախված էր հյուսիսային հարևանների՝ Ռուսիայի և Լիտվայի մեծ իշխանությունների հողերում կատարած ասպատակությունների հաջողությունից:

Երբեմն Մոսկվայի տիրակալներին հաջողվում էր Ղրիմյան խաներին դարձնել իրենց դաշնակիցը ընդդեմ Լիտվայի, սակայն հազվադեպ չէին և հակառակ դեպքերը: Հարավային սահմանի հողերը հաճախ էին ենթարկվում ղրիմյան թաթարների հարձակումներին և մի քանի տասնամյակ ավերում ու սնանկացնում էին նաև կենտրոնական գավառները՝ հասնելով մինչև Մոսկվա (համեմատաբար հզոր արշավանքներ են եղել 1521, 1541, 1571, 1572, 1591 թթ.): XVI դ. պայմաններում Ղրիմի խանությանը պատասխան հարվածներ հասցնելն անհնարին էր՝ նկատի ունենալով խանությունների հեռու գտնվելը և մեծաքանակ զորքի համար Ղրիմի թերակղզու դժվարամատչելի լինելը: Բացի այդ՝ Ղրիմի խանությունները վասալական կախվածություն ունեին Օսմանյան կայսրությունից, որն այդ ժամանակ իր հզորության բարձրակետում էր: Ռուսական կողմից այդ ուղղությամբ ակտիվ ռազմական գործողություններ իրականացվեցին լոկ 1550-ականներին, և շուտով ճակատի գիծը փոքրացավ: Ղրիմի դեմ պայքարում միակ հնարավոր մարտավարությունն այդ ժամանակ եղան «պասիվ» գործողությունները, մասնավորապես՝ պաշտպանական համակարգի ամրացումը՝ տափաստան քաղաք-ամրոցների կառուցման ուղիով: Ի միջի այլոց երկիրն այդ նպատակի

համար մարդկային և տնտեսական բավարար ռեսուրսներ ձեռք բերեց միայն այդ հարյուրամյակի վերջում, երբ կառուցվեցին Վորոնեժ, Լիվնա (1586), Ելեց (1592), Բելգորոդ, Կուրսկ (1596) և մի շարք այլ քաղաքներ։ Ղրիմյան սպառնալիքի չեզոքացման մյուս միջոցը Դոնի տարածքում սփռված կազակների (բաղկացած հիմնականում Ռուսիայից փախած մարդկանցից) խրախուսումն էր հարձակվելու Ղրիմի վրա։ Զապորոժյան կազակների՝ դեպի Ղրիմ հարձակումները կազմակերպելը, կանոնավոր կերպով խանին և նրա շրջապատին դիվանագիտական հարուստ նվերներ ուղարկելը ռուսական քաղաքականության կարևոր բաղադրիչներից էին։ Սակայն ներդրված ջանքերը միշտ չէին, որ արդյունք էին տալիս. 1571 թ. Դևլեթ-Գիրեյ խանին հաջողվեց այրել Մոսկվան։ Մեկ տարի անց Մոսկվայից 50 վերստ հեռավորության վրա գտնվող Մոլոդիայի համար ճակատամարտում, որտեղ թաթարական զորքը թվային կազմով էապես գերազանցում էր, եռօրյա ծանր մարտերից հետո իշխաններ Մ.Ի. Վորոտինսկու և Խվորոստինինի գլխավորած ռուսական զորքը կարողացավ հետ մղել թաթարներին։

Ռուսական պետության արտաքին քաղաքական մյուս ուղղությունն էին Պովոլժիեի կազանյան և աստրախանյան խանությունները։ Դրանցից առաջինը գտնվում էր երկրի կենտրոնական, խիտ բնակեցված և հարուստ գավառների հարևանությամբ (կազանյան թաթարների հարձակմանն էին ենթարկվում Կոստրոման, Նիժնի Նովգորոդը, Մուրոմը) և այդ պատճառով էլ ավելի վտանգավոր և խոցելի էին։ Կազանը վերահսկողության տակ պահելու համար միջոցներ էին ձեռնարկվում դեռևս Իվան III-ի ժամանակներից, և երբեմն հաջողվում էր կազանյան խաներին դարձնել Մոսկվայի դրածոն, սակայն ամուր թևարկու չէին լինում։ Ավելին, 1520-ական թթ. Կազանում պարբերաբար իշխում էին Ղրիմի խանության դինաստիայի ներկայացուցիչները, ինչը Ռուսաստանին դնում էր երկու ճակատով պատերազմելու անհրաժեշտության առջև։ Արևելյան սահմաններում սպառնալիքի ոչնչացումը հատկապես նկատելի էր դարձել մինչև 1540-ական թթ. վերջերը։ Իվան Ահեղի կառավարությունը դեպի Կազան մեկը մյուսի հետևից կազմակերպեց մի շարք արշավանքներ, որոնք այդուհանդերձ չպսակվեցին հաջողությամբ։ Լավ ամրություններ ունեցող քաղաքի պարիսպներին ռուսական զորքը կարողացավ մոտենալ սոսկ ամռան վերջերին, երբ արդեն հարկ էր մտածել զորքի ձմեռելու համար պիտանի հենակետային բազաների մասին, որոնք չկային։ Այդ պատճառով ստիպված էին մտածել ծանր հրետանու հետքաշման մասին։ Հարցը լուծվեց 1551 թ., երբ Կազանի անմիջական հարևանությամբ բարձրացրին Սվիյաժսկ ռուսական ամրոցը։ 1552 թ. ռուսական զորքը գրոհով վերցրեց Կազանը՝ պայթեցնելով ամրոցի պատի մի հատվածը։ Կազանին ենթակա տարածքը մտավ ռուսական պետության կազմի մեջ, սակայն նախկին խանության բնակչությունը դեռ մի հինգ տարի էլ շարունակում էր դիմադրություն ցույց տալ։

Աստրախանի՝ ռազմական տեսանկյունից զգալիորեն թույլ խանությունը 1554 թ. իրեն ճանաչեց որպես ռուս ցարի վասալ, իսկ 1556 թ. նախկին ինքնիշխան կարգավիճակը վերականգնելու փորձի համար Աստրախանը գրավվեց ռուսական զորքի կողմից։ Վոլգա գետը իր բոլոր հոսանքներով անցավ Ռուսաստանի վերահսկողության ներքո, ինչն էլ հնարավորություններ տվեց ընդլայնել և ապահովել հեռանկարներ՝

Ասիայի երկրների հետ առևտրային շփումների համար: Վերջնարդյունքում սա շահավետ էր Պովոլժիեի բնակչությանը: Պովոլժիեն հարստացնում էր երկիրը այստեղ զարգացած ձկնորսության, ձկնկիթի և աղի արդյունահանությամբ: Ռուսաստանի իշխանության ներքո տարածաշրջանի ամրապնդման նպատակով Վոլգայի ափերին XVI դ. վերջերին կառուցվեցին քաղաք-ամրոցներ Սամարան (1586), Ցարիցինը (1589), Սարատովը (1590): Արևելքում ռուսական արտաքին քաղաքական գործունեության շարունակությունը եղավ Սիբիրի հպատակեցումը, որն սկսված էր Իվան Ահեղի իշխանավարության ավարտին՝ կազակական ատաման Երմակ Տիմոֆեևիչի (1581 կամ 1582 թ.) արշավանքով: Արդյունքում վերջնականապես ոչնչացվեց Սիբիրյան խանությունը (1598 թ.):

XVI դ. երկրորդ կեսին Արևելյան Եվրոպայի արևելքում քաղաքական փոփոխությունները նշանակալից կերպով հարստացրին Ռուսաստանի էթնիկ կազմը. այն ներառում էր թյուրքական ժողովուրդներին. որպես կարևոր և նշանակալից տարր՝ ընդարձակվեց ուգրոֆիննական ներկայությունը:

Ռուսական արտաքին քաղաքականության արևմտյան ուղղությունը: Արևմտյան ուղղությամբ Ռուսաստանի շահերը բախվում էին առաջին հերթին Լեհ-լիտվական պետության (1569 թվականից՝ Ռեչ Պոսպոլիտայի) հետ: Այս երկու երկրներն էլ փոխադարձաբար ունեին դարերի խորքից եկած տարածքային պահանջներ: Մոսկվայում համարում էին իրենցը բոլոր այն տարածքները, որոնցում բնակչության մեծամասնությունը արևելասլավոնական ժողովուրդներն էին, իսկ Վիլնոն պահանջում էր վերադարձնել հյուսիսային և սմոլենսկյան հողերը և հավակնում էր ստանալ Նովգորոդը և Պսկովը: Հարևան պետությունների հետ հակասությունները Իվան IV-ի փոքր տարիքում հանգեցրին այսպես կոչված Ստարոդուբյան պատերազմին (1534–1537), որը կողմերից և ոչ մեկին վճռորոշ հաջողություն չբերեց: Որոշակի բարդություններ կային նաև հյուսիս-արևմուտքում՝ Բալթիկ ծովի ուղղությամբ: Ռուսաստանը ելք ուներ դեպի Ֆիննական ծոցի ափերը և անգամ Նարովի գետի գետաբերանում կառուցել էր Իվանգորոդ նավահանգիստը, սակայն ապրանքահոսքը գնում էր ավելի հարմար նավահանգիստներ՝ Լիվոն (Ռիգա), Ռևել (Տալլին) և Նարվա: Լիվոնյան վաճառականները եվրոպական երկրներից բերված ապրանքը վերավաճառում էին Ռուսաստանում բարձր հավելագներով, իսկ որոշ ապրանքներ էլ լիվոնյան իշխանությունները ընդհանրապես թույլ չէին տալիս, որ մտնի Ռուսաստան: Նրանք իրենց մոտ պահում էին նաև ռազմական գործի այն մասնագետներին, որոնց վարձել էր Ռուսաստանը: Խնդրի լուծման թույլ տարբերակ դարձավ XVI դ. երկրորդ կեսին Սպիտակ ծովում բացված առևտրային նավագնացությունը: 1553 թ. անգլիացի ծովայինները դեպի Հնդկաստան տանող հյուսիսային ճանապարհի որոնման ժամանակ գտան Հյուսիսային Դվինայի գետաբերանով անցնող ուղին, և շուտով այստեղ գտնվող Խոլմոգոր (հետո՝ 1584 թ. հիմնադրված Արխանգելսկ) քաղաքը դարձավ Ռուսաստանի հյուսիսային գլխավոր առևտրական դարպասը: Սպիտակ ծովով նավարկությունը եղանակային պայմաններին (սառույցներ, փոթորիկներ) պատճառով հնարավոր էր միայն մայիսից սեպտեմբեր: Սա ստիպեց օրախնդիր դարձնել Բալթիկ ծովի ափերին դիրքերի ամրապնդումը այն

դեպքում, երբ այստեղ ևս մեկ հակառակորդ կար՝ Շվեդիան։ Հյուսիսարևմտյան հարևանի հետ պատերազմը (1554-1557) արդյունք չտվեց, և Մոսկվայի ռազմաքաղաքական ակտիվությունը վերակողմնորոշվեց դեպի Լիվոնյան օրդենի հողերը։

Լիվոնյան պատերազմը։ XVI դ. կեսերին Լիվոնյան օրդենը քայքայված վիճակում էր և Իվան Ահեղի կառավարության համար թույլ հակառակորդ էր։ Ռազմական գործողություններ սկսելու անմիջական առիթ էր «դերպտսկյան տուրքը»՝ Լիվոնյան օրդենի իշխանությունների կողմից այն Ռուսաստանին չվճարելը։ Սա այն գումարն էր, որ Լիվոնյան օրդենը պարտավորվել էր վճարել Ռուսաստանին՝ սահմանային Դերպտսկյան եպիսկոպոսության հողերին տիրելու համար՝ 1503 թ. խաղաղության պայմանագրի համաձայն։ 1558 թ. հունվարին ռուսական զորքի ներխուժմամբ սկսվեցին ռազմական հակամարտությունները, որոնք տևեցին քառորդ դար և ներքաշեցին երկրների, որոնք մերձբալթյան տարածաշրջանում շահեր ունեին։ Այն կոչվեց Լիվոնյան պատերազմ և ձգվեց 1558–1583 թթ.։ Պատերազմի առաջին փուլում Ռուսաստանին հաջողությունն էր ուղեկցում. նվաճվել էին լիվոնյան ամրոցներ Նարվան և Դերպտը, ջախջախվել էին օրդենի հիմնական ուժերը և գերի էր վերցվել օրդենի մեծ մագիստրոսը։ Սակայն ուժերի հարաբերակցության փոփոխությունը տագնապեցրեց մյուս պետություններին, և Դանիայի նախաձեռնությամբ կնքվեց ռուս-լիվոնյան հաշտությունը։ Օգտագործելով հաշտության պահը՝ 1561 թ. օրդենյան իշխանությունները իրենց տարածքները փոխանցեցին լեհ թագավոր Սիգիզմունդ II Օգոստոսի հովանավորության տակ։ Այդ պահից սկսած՝ Լիվոնիայի համար պայքարը մղվում էր ոչ թե իր դարն ապրած օրդենի, այլ ուժեղ հակառակորդի՝ Լեհ-լիտվական պետության դեմ։ Այդ փուլում ռուսական զենքի խոշոր նվաճում էր լիտվական կարևոր ամրոցի՝ Արևմտյան Դվինայի միջին հոսանքներում գտնվող Պոլոցկի գրավումը (1563 թ.)։ Ի դեպ, ռուսական զորքը երբեմն զգալի պարտություններ էր կրում, և 1560-ականների վերջին պատերազմում ուժերի հավասարակշռություն էր։ Պատերազմը նպաստեց Լիտվայի և Լեհաստանի էլ ավելի մերձեցմանը, և 1569 թ. Լյուբլինյան միավորումը (ունիա) միավորեց երկուսին, և առաջացավ Ռեչ Պոսպոլիտան։ Լիվոնյան առանձին տարածքների նկատմամբ իրենց իրավունքի մասին հայտարարեցին Դանիան (զավթելով Էզել և Դագո կղզիները) և Շվեդիան՝ նվաճելով հյուսիսէստոնական Ռևել նավահանգիստ-ամրոցը։ Կնքելով հրադադար Լեհաստանի հետ՝ Իվան Ահեղը ուժերը կենտրոնացրեց Շվեդիայի դեմ պայքարում։

Որպեսզի Ռուսաստանի իշխանության ներքո Լիվոնիայի անցումը դյուրին լիներ, ցարը մշակեց Ռուսաստանի նկատմամբ Լիվոնյան թագավորության վասալության մի նախագիծ (1570 թ.), որով դանիական արքայազն Մագնուսը գլխավորում էր Լիվոնյան թագավորությունը։ Այդ ժամանակ Մագնուսը ամուսնացել էր Իվան Ահեղի զարմուհու՝ Մարիա Ստարիցկու հետ։ Սակայն Շվեդիայի դեմ պատերազմի առաջին փուլում Ռուսաստանը մեծ հաջողություններ չգրանցեց, քանի որ հիմնական ուժերը ուղարկվել էին հարավ՝ Ղրիմի խանի հարձակումները հետ մղելու համար։ Միայն 1577 թվականին ռուսական զորքերը ցարի գլխավորությամբ հասան զգալի հաջողությունների՝ գրավելով Լիվոնիայի գրեթե ողջ տարածքը՝ բացառությամբ Ռիգայի և

Ռևելի: Ռուսական զինված հաջողությունները Շվեդիային և Ռեչ Պոսպոլիտային ստիպեցին միավորել ջանքերը ընդհանուր հակառակորդի դեմ, և 1578 թվականին Ռուսաստանը միաժամանակ պատերազմում էր երկու ուժեղ հակառակորդների դեմ: Սկսվեց պարտությունների շրջանը: 1579 թ. Լեհաստանի թագավոր Ստեֆան Բատորին Ռուսաստանից վերցրեց Պոլոցկը, 1580 թ.՝ Վելիկիե Լուկին, շվեդական զորքերը 1581 թ. տիրեցին Նարվային, Կորելին, Կոպորիեին և Իվանգորոդին՝ զրկելով Ռուսաստանին դեպի Բալթիկ ծով ելքից: Լեհ-լիտվական զորքերը պաշարեցին Պսկովը, որի պաշտպանները հնգամսյա հերոսական դիմադրությունից հետո (1581–1582) կարողացան պահել քաղաքը: Գլխավոր հարձակման ժամանակ հակառակորդին հաջողվեց գրավել ամրոցի երկու աշտարակները, սակայն քաղաքային կայազորը գլխավորող վոյեվոդ, իշխան Ի.Պ. Շույսկին իր զորքին միացած արհեստաառևտրական դասի մարդկանց ու հոգևորականության համատեղ ուժերով կարողացավ հակահարված տալ թշնամուն և խափանել Բատորիի պլանները:

1582 թ. Ռուսաստանի և Ռեչ-Պոսպոլիտայի միջև կնքած զինադադարը, իսկ 1583 թ. Շվեդիայի հետ կնքած խաղաղության պայմանագիրը հնարավորություն տվեցին դադարեցնելու Մերձբալթիկայում քառորդդարյա հակամարտությունը, որի հետևանքով Ռուսաստանը ոչ միայն չկարողացավ տիրել լիվոնյան հողերին, այլև կորցրեց Ֆիննական ծոցի ափերի սեփական հողերը: Դրանք վերադարձնել հաջողվեց 1595 թ. կնքված խաղաղության պայմանագրով, որով էլ ավարտվեց ռուս-շվեդական պատերազմը (1590–1595 թթ.):

XVI դ. Ռուսաստանի արտաքին քաղաքական ջանքերը ընդհանուր արդյունքում էական էին, քանի որ գրեթե երկու անգամ, հիմնականում արևելյան ուղղությամբ, մեծացել էր երկրի տարածքը: Ռուսաստանը արևմտյան ուղղությամբ աշխարհաքաղաքական խնդիրներ լուծելու հնարավորությանը դեռ չէր տիրապետում:

§ 22. Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումը XVI դարում

Ռուսաստանի տնտեսական զարգացման առանձնահատկությունները XVI դարում: XVI դ. սկզբում Մոսկովյան մեծ իշխանության բնակչության թիվը մոտավորապես կազմում էր 2,5 միլիոն մարդ: Հարյուրամյակի ընթացքում այն աճեց մինչև 5-6 միլիոնի: Այս ցուցանիշով երկիրը կարող էր համեմատվել հարևան Ռեչ-Պոսպոլիտայի հետ, գերազանցել Շվեդիային և Նիդերլանդներին, սակայն նշանակալիից չափով զիջում էր Ֆրանսիային և Հռոմեական կայսրությանը: Սակայն Ռուսաստանը, որի մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում էր միջինում մեկ մարդ, բնակչության խտությամբ հետ էր մնում եվրոպական բոլոր երկրներից: Նույն Ռեչ-Պոսպոլիտայում այդ ցուցանիշը գրեթե 10 անգամ բարձր էր, իսկ Իսպանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում մեկ քառակուսի կիլոմետրի վրա ապրում էր 15-25 մարդ: Բնակչության՝ Ռուսաստանին բնորոշ ցածր խտությունն ունեցավ տնտեսական, սոցիալական և քաղաքական հետևանքներ: Տնտեսության տեսանկյունից դա նպաստեց բնատնտեսության

պահպանմանը. իշխանության յուրաքանչյուր մարզ, ըստ էության, ինքնաբավ սուբյեկտ էր՝ քիչ կարիք ունենալով շփվել հարևանների հետ: Ռուսաստանը ագրարային երկիր էր և այդ առումով շատ չէր տարբերվում եվրոպական կամ ասիական այլ պետություններից: Սակայն Ռուսաստանի ագրարային տնտեսությունը ներդաշնակ էր այսպես կոչված «ներքին համաբնակեցման» (колонизация) անավարտ գործընթացին: Մշակության համար պիտանի հողերի մեծ պահուստ գոյություն ուներ, որը դեռևս չէր օգտագործվում գյուղատնտեսության մեջ: XVI դարում այդպիսի հողերի քանակն էլ ավելի էր աճել:

Ռուսաստանը արդյունաբերության զարգացման մակարդակով զգալիորեն հետ էր մնում եվրոպական մի շարք երկրներից՝ ներկայանալով որպես հիմնականում տնայնագործական և պարզունակ արտադրությամբ զբաղվող երկիր: Մինչ XVI դարի վերջը երկրի գրեթե միակ արտադրական կենտրոնը Մոսկվայի մանածագործական ձեռնարկությունն էր՝ Պուշեչնի դվորը (Пушечный двор): Քաղաքները հիմնականում ավելի շատ վարչաքաղաքական կենտրոնների դեր էին կատարում, քան արհեստագործության կամ առևտրի: Նույնիսկ խոշոր քաղաքներում արհեստավորների և վաճառականների տնտեսությունների բաժինը ընդհանուրի մեջ մեկ երրորդից էլ պակաս էր: Բնակչության ցածր խտությունը, իր հերթին, ուներ երկակի ազդեցություն: Մի կողմից՝ այն պահպանեց և զարգացրեց համայնքային ավանդական կարգերը, քանի որ ծանր իրավիճակներում աջակցություն կարելի էր ակնկալել միայն մոտակա հարևանից: Մյուս կողմից՝ մարդկանց աշխարհագրական ցրվածությունը խոչընդոտում էր համախմբված համազգային սոցիալական խավերի ձևավորմանը, որոնք կկարողանային գիտակցել և պաշտպանել սեփական շահերը: Այս իրողությունների քաղաքական հետևանքն էր այն, որ Ռուսաստանում դժվար էր ձևավորել համախմբված ներկայացուցչական միապետական համակարգ: Արդյունքում այլընտրանքային ուղին դարձավ ինքնակալական միտումների խորացումը:

Երկրի հսկայական տարածքը պահանջում էր մեծ քանակի զորք, սակայն ռուսական պետությունը ի վիճակի չէր այն գումարով պահել: Կառավարությունը ստիպված էր բաժանել հողը զինվորական ծառայություն իրականացնողներին՝ որպես կալվածք, որը, ի տարբերություն վոտչինայի՝ հայրենաժառանգ կալվածքի, չէր կարող օգտագործվել տիրոջ հայեցողությամբ: Կալվածատիրոջը ստացած հողի հետ անցնում էին նաև այդ հողում ապրող գյուղացիները, որոնք պարտավոր էին նրան վճարել հարկերը՝ կոռը և բահրան: XVI դ. հենց այսպիսի կալվածատերերից էր բաղկացած ռուսական հիմնական զորքը, որը առաջին իսկ կանչով ներկայանում էր հավաքատեղի՝ ձիերով, իր հաշվին զինած ճորտերով, զենքով: Եվրոպայում սկսված «վառոդի



XVI դ. արքունական հեծելազորը

հեղափոխությունը» օրակարգ բերեց հետևակ զորքի ստեղծման խնդիրը՝ զինված հրաձգային զենքով։ 1550 թ. Ռուսաստանում ստեղծվեցին հրաձգային գնդեր (стрелецкие полки), որոնք պետության հաշվին ապահովվում էին զենքով և հանդերձանքով, ծառայության համար պարգևներ էին ստանում։ Հրաձիգը ծառայությունից ազատ ժամանակ իրավունք ուներ զբաղվելու տարբեր գործերով՝ արհեստով, առևտրով։

Ռուս հասարակությունը XVI դարում։ XVI դ. ռուսական հասարակության սոցիալական կառուցվածքը չափազանց բարդ էր։ Ցարի հպատակները բաժանվում էին անհավասար երկու խմբերի՝ ծառայողների և չծառայողների։

Ծառայողների թվին էին պատկանում վերոնշյալ կալվածատերերը և հրաձիգները։ Պետք է նշել, որ այս երկու խավերը համասեռ սոցիալական խմբեր չէին։ Կալվածատերերը համարվում էին հայրենիքին ծառայողներ. նրանց զինվորական ծառայությունը ժառանգաբար փոխանցվող պարտականություն էր, որն սկսվում էր 15 տարեկանից։ Ծառայությունը հաճախ շարունակվում էր մինչև մահ կամ ծերություն։ Ծառայության դիմաց նրանք ստանում էին կալվածքներ, իսկ որոշ դեպքերում՝ առանձնահատուկ ծառայությունների դիմաց՝ այդ կալվածքները վերաձևակերպվում էին որպես հայրենաժառանգ (вотчина), այսինքն՝ ժառանգաբար փոխանցվող սեփականություն։ Դրամական պարգևներ հազվադեպ էին տրվում և հիմնականում անկանոն կերպով։ Այս խավը բավականին տարասեռ էր՝ կազմված բոյարներից ու արքունական պալատի բարձր պաշտոնյաներից մինչև գավառական կալվածատերեր ու բոյարների զավակներ։ Ի տարբերություն նրանց, հրաձիգները (ծառայողներ, որոնք ստանում էին պետական դրամական պարգևներ) ժառանգաբար չէին ծառայում ցարին։ Նրանց ընտրում էին, այսպես կոչված «հարմար էին համարում» (այստեղից էլ՝ պատմագիտության մեջ գոյություն ունեցող եզրույթը՝ «հարմար համարված ծառայողներ»)։ «Հարմար ծառայողներին», այսինքն՝ հրաձիգների դասին էին պատկանում քաղաքապահ կազակները, որոնք ընդգրկված էին կայազորում, թնդանոթաձիգները, դարպասի պահապանները և մի քանի այլ դասի մարդիկ։ «Հարմար համարված ծառայողներին» կալվածքներ չէին տրվում. նրանք ծառայության համար պետական գանձարանից դրամական պարգևներ էին ստանում։

XVI դ. Ռուսաստանի բնակչության մեջ առանձին խումբ էր հոգևորականությունը, որը բաժանվում էր սևերի (կուսակրոններ, որոնք ապահովում էին եկեղեցական բարձր հիերարխիան) և սպիտակների։ Հոգևորականությունը մասամբ ապրում էր հավատացյալների նվիրատվություններով, մասամբ էլ՝ պետական գանձարանից տրվող պարգևավճարներով («руги»)։ Հասարակական այս շերտի ներկայացուցիչներն իրենց յուրահատուկ սոցիալական կարգավիճակը ընդգծում էին՝ իրենց անվանելով խնդրատուներ, «ցարի ուխտավորներ». ցարի ծառայողներն իրենց կոչում էին «ցարի՝ տիրոջ ծառաներ», իսկ ծառայության մեջ չգտնվողները՝ «ցարի՝ տիրոջ որբեր»։

Ծառայության մեջ չգտնվողները՝ «ցարի որբերը», բնակչության մեծ մասն էին։ Ի տարբերություն «ծառայողների»՝ զինապարտությունը չէր մտնում նրանց պարտականությունների մեջ, թեև դրանից նրանք լրիվ ազատված չէին. քաղաքային բնակչությունը թշնամու հարձակման ժամանակ պարտավոր էր մասնակցել քաղաքի պաշտպա-

նությանը, իսկ գյուղացիները ներգրավվում էին զինվորական արշավներին՝ որպես հետևակի «հենակ» («посохи»), որը կատարում էր գլխավորապես ճահիճների և գետանցման, ռազմական ճամբարի շրջակայքի ամրացման աշխատանքներ՝ զորքի առաջխաղացման համար: Սակայն այս ամենից զատ՝ չծառայողների հիմնական գործառույթը տնտեսության մեջ աշխատանքն էր և պետական գանձարանին հարկեր վճարելը:

Բնակչության այս դասի նշանակալից հատվածը քաղաքներում արվարձանավորներն էին (посадские люди), որոնք հիմնականում զբաղված էին առևտրաարհեստավորական գործունեությամբ:

XVI դ. վերջին երկրում հաշվվում էր ավելի քան երկու հարյուր քաղաք, սակայն դրանց որոշ մասում՝ հատկապես հարավային և հարավարևմտյան սահմանների քաղաք-ամրոցներում, ամենևին չկային արվարձանավորներ. այնտեղ գտնվում էին միայն տեղական կայազորները: Խոշոր, 10 հազարից ավելի բնակչությամբ քաղաքները Ռուսաստանում շատ չէին: Դրանց թվին են պատկանում Մոսկվան, Վելիկի Նովգորոդը, Պսկովը, Յարոսլավլը, Նիժնի Նովգորոդը և Կազանը: Մնացած քաղաքներում բնակչությունը շատ չէր, և XVI դ. վերջին քաղաքային բնակչությունը չէր գերազանցում երկրի ողջ բնակչության հինգ տոկոսը:

Արվարձանավորները առավելապես զբաղվում էին առևտրով և արհեստներով, ըստ որում՝ մեծ մասամբ մեկ մարդը զբաղվում էր երկուսով էլ՝ և՛ առևտրով, և՛ արհեստով: Մեծ քաղաքներում արվարձանավորները բաժանվում էին ազատաբնակների (սովորաբար այդպես էին անվանում քաղաքի ոչ պետական, այլ մասնավոր սեփականության հողում ծնվածներին) և հարյուրականների: XVI դ. հարյուրականներ էին կոչվում վաճառականների արտոնյալ՝ Քարվանսարաների (Гостиная группа) և Մահուդագործների (Суконная) խմբերը: Սրանց բոլորից առանձնանում էր ավելի հարուստ վաճառականների ոչ մեծ խումբը:

Գյուղացիությունը և ճորտատիրական իրավունքի ձևավորման սկիզբը: Երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը, որը բաժանվում էր երկու հիմնական խմբի՝ պետական, հարկատու (черносошный) և սեփականացված՝ կալվածատերերին պատկանող գյուղացիների (владельческий), որոնք հարկերից բահրա էին վճարում և իրենց հողատիրոջ (աշխարհիկ կամ եկեղեցական) համար լրացուցիչ աշխատանք կատարում (դա էլ կոռ հարկատեսակն էր): Առանձին խումբ էին կազմում պալատական կոչվող գյուղացիները, որոնք պատկանում էին Մեծ իշխանին, ցարին և նրա ընտանիքի անդամներին:

XVI դարում գյուղացիության կազմում նկատվում էին նշանակալից փոփոխություններ. տեղական կալվածատիրության զարգացման հետ կապված՝ պետական, հարկատու գյուղացիներին (черносошный) զանգվածաբար տեղափոխում էին կալվածատերերին պատկանող (владельческий) դաս, ինչի հետևանքով դարավերջին արդեն երկրի կենտրոնական և հարավային գավառներում ոչ մի պետական, հարկատու գյուղացի չմնաց:

Իր հերթին ռուսական պետության հյուսիսում այդպես էլ չզարգացավ կալվածքների վերաբաշխման փորձը: Կալվածատերերին պատկանող գյուղացիները, համաձայն 1497 և 1550 թթ. Դատաստանագրքերի, Յուրիի օրը՝ նոյեմբերի 26-ին, իրավունք ունեին տեղափոխվելու մի կալվածատիրոջից մյուսի մոտ՝ պայմանով, որ պետք է վճարեին տեղափոխավարձ նախկին կալվածատիրոջը՝ որպես «ապրուստի վարձ»: Սակայն արդեն XVI դ. վերջին այս հնարավորությունից էլ զրկվեցին:

Լիվոնյան ձգձգված պատերազմի և օպրիչինայի կատարած ահաբեկչության հետևանքով տեղի ունեցավ բնակչության զանգվածային աղքատացում, առաջին հերթին՝ գյուղացիության սնանկացում, քանի որ նրանք հաճախակի էին մի կալվածքից մեկ այլ կալվածք տեղափոխվում, ինչն էլ թուլացնում էր ցարական զորքի մարտունակությունը:

Այդ պատճառով 1581 թ. Իվան Ահեղի կառավարությունը ստիպված էր հրաման արձակել «անձեռնմխելի տարիների» մասին, այսինքն՝ այն տարիներին, որոնք հայտարարված էին «անձեռնմխելի», Յուրիի օրվա տեղափոխությունների իրավունքը չէր գործում: «Անձեռնմխելի տարիների» արգելանքին որպես արձագանք՝ հաճախացավ կալվածատերերին պատկանող գյուղացիների փախուստը կալվածքներից, որը 1597 թ. նոր՝ «սահմանված ամառների մասին» հրամանագրի առիթ դարձավ. ներմուծվեց հնգամյա ժամկետ՝ փախած գյուղացիներին հետախուզելով գտնելու և նախկին տիրոջը վերադարձնելու համար:

XVI դ. վերջին տասնամյակների օրենսդրությունը վկայում է ռուսական հասարակության մեջ ճորտատիրական նկրտումների ուժեղացումը:

Ճորտատիրական իրավունքի ձևավորումը սոցիալական կարևոր գործընթաց էր, որը հսկայական ազդեցություն ունեցավ Ռուսաստանի հետագա ողջ պատմության վրա: Գյուղացիության ճորտացման նախադրյալները ձևավորվեցին ամենատարբեր ոլորտներում. դրան նպաստեցին և՛ ռուսական պետության տնտեսության ագրարային՝ ամենուր բնատնտեսությունը պահապանող տեսակը, և՛ երկրի բարդ աշխարհաքաղաքական իրավիճակը, որը ստիպում էր մեծ բանակ ունենալ այն դեպքում, երբ պետական գանձարանն ի վիճակի չէր այդպիսի քանակության զորք պահելու: Իշխանությունը խնդրի լուծման հաջող որոշում համարեց ճորտացումը, թեև դա նպաստում էր հասարակության մեջ սոցիալական լարվածության աճին ինչպես գյուղացիների և կալվածատերերի, այնպես էլ հողատերերի միջև, որոնք պայքարում էին միմյանց դեմ աշխատուժի ձեռքբերման համար: Հասունացած հակասությունները զգացնել տվեցին XVII դ. սկզբին, երբ բռնկվեց քաղաքացիական պատերազմը, և սկսվեցին Խառնակ ժամանակները:

Բարեփոխության արդյունքները: Ռուսաստանի պատմության մեջ կարևոր դեր ունի XVI դարը: Ավարտվեց Մոսկվայի շուրջը ռուսական հողերի միավորման երկար գործընթացը: Որպես Եվրոպայի արևելքում հզոր և ազդեցիկ ուժ՝ Ռուսաստանը կարողացավ իր առջև դնել ավելի հավակնոտ խնդիրներ, որոնք նպաստեցին նրան ճանաչելու միակ անկախ, ուղղափառ պետությունը, որը ժառանգել էր «Երկրորդ Հռոմի»՝ Կոստանդնուպոլսի վեհությունը: Հնարավորությունների նոր հորիզոնները, այնուամենայնիվ, պահանջում էին փոփոխություններ պետական և հասարակական կյանքի

բոլոր ոլորտներում: Քաղաքական կառուցվածքի բարելավված մոդելների փնտրտուքում անցավ Իվան IV-ի կեսդարյա ժամանակաշրջանը:

Իվան Ահեղի տնական կառավարման արդյունքները միանշանակ չէին: Նրա իշխանության վերջում ռուսական պետության տարածքները զգալիորեն մեծացան՝ ի հաշիվ Պովոլժիեի ընդարձակ տարածքների միացման և Արևմտյան Սիբիրի յուրացման: Ըստ որում՝ Բալթիկ ծով ելքի համար մղվող երկարատև պատերազմը դրական արդյունք չտվեց. շարունակում էին լարված մնալ հարավային և արևմտյան հարևանների հետ հարաբերությունները:

Երկրի ներքին քաղաքական կյանքում կենտրոնական իշխանության մակարդակով փորձարկվեց օպրիչնինայի մոդելը, որը միապետի բացարձակ անսահմանափակ իշխանության արտահայտություն էր. այդ նույն ժամանակ տեղերում կազմակերպվում էր զեմստվոյական ընտրական համակարգը: Ռուսաստանի տնտեսական կյանքում ակնհայտ էր դառնում այն, որ աճող ճնշումներին տնտեսական կյանքը չի դիմանում, և պետության արտաքին քաղաքական ակտիվության համար երկրի ներսում անհրաժեշտ էր լրջագույն սոցիալական ձևափոխություն՝ ճորտատիրության ձևով:

XVI դ. երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման հակասությունները նախանշեցին Ռուսաստանի զարգացման ուղին հետագա հարյուրամյակների ընթացքում: Եվ թեև XVI դ. վերջին տասնամյակում երկիրը կարողացավ վերադարձնել Լիվոնյան պատերազմի ժամանակ կորցրած տարածքները և մասնակիորեն վերականգնել թուլացած տնտեսությունը, սակայն դեռևս պահպանվում էր սոցիալական հակամարտության պատճառը՝ պայմանավորված բնակչության զգալի մասի անձնական ազատության աստիճանական կորստով:

Այնուամենայնիվ, XVI–XVII դդ. սահմանագծին ճգնաժամային սուր վիճակի հաղթահարումը պահանջում էր տնտեսական և քաղաքական արտակարգ միջոցներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ինչպիսի՞ն էր Վասիլի III-ի դերը Մոսկվայի շուրջ հողամիավորման գործում:
2. XVI դ. առաջին երեսնամյակում ինչո՞վ է բացատրվում ռուսական պետության ռազմաքաղաքական առավել մեծ ակտիվությունը արևմտյան՝ լիտվական ուղղությամբ:
3. Մոսկվայի շուրջը ռուսական հողերի միավորումը ավարտվել է այն նույն ժամանակ, երբ նման գործընթացներ էին տեղի ունենում Իսպանիայում և Ֆրանսիայում: Արդյոք սա հերքո՞ւմ է այն թեզը, թե մոնղոլական արշավանքները դանդաղեցրել են Ռուսիայի պատմական զարգացման ընթացքը:
4. Օգտվելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից՝ պատրաստե՛ք հաղորդում Ընտրովի ռադայի գործիչներից մեկի մասին:

5. Ձեր կարծիքով՝ XVI դ. կեսերին Ընտրովի ռադայի անցկացրած բարեփոխումները կարո՞ղ էին արմատականորեն փոխել Ռուսաստանի քաղաքական կարգը։
6. Պատմաբանների մշակած հայեցակարգերից մեկով օպրիչնինայի ստեղծումը բացատրվում է որպես Իվան IV-ի պայքարը՝ հանուն Ռուսաստանի կենտրոնացվածության։
7. Օպրիչնինայի ավարտին օպրիչնինան կազմակերպողներից շատերը դարձան դրա զոհը։ Նման երևույթներ եղել են տարբեր երկրներում, պատմական տարբեր շրջափուլերում։ Ինչպե՞ս կարող եք բացատրել այդպիսի գործողությունների կրկնվելը։
8. Ինչպիսի՞ն էին Ռուսաստանի հարաբերությունները Ոսկե հորդայի ժառանգորդ պետությունների հետ։
9. Կարելի՞ է պնդել, որ Ռուսաստանի հարավային սահմաններում եղած լարվածության պայմաններում երկրի արտաքին հարաբերություններում առաջնահերթային էր Լիվոնիայի համար պատերազմը։
10. Համաձա՞յն եք այն թեզին, թե XVII դ. սկզբի քաղաքացիական պատերազմը ուղղակիորեն կապված էր Իվան Ահեղի վարած արտաքին և ներքին քաղաքականության հետ։
11. Ձևակերպե՛ք այն պատճառները, որոնց հետևանքով XVI դ. Ռուսաստանի տնտեսությունը մնացել էր ագրարային այն դեպքում, երբ եվրոպական մի շարք երկրներում արագորեն զարգանում էր արդյունաբերությունը։
12. Կարելի՞ է արդյոք ընդունել, որ Ռուսաստանում ճորտատիրական կարգերի ձևավորման սկիզբը երկրի սոցիալ-քաղաքական և տնտեսական զարգացման միակ տարբերակն էր։

ԳԼՈՒԽ 5. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVI–XVII ԴԴ. ՍԱՀՄԱՆԱԳԾԻՆ: ԽԱՌՆԱԿ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 23. Խառնակության պատճառները և պատմական նախադրյալները

Խառնակ ժամանակները, էությունը և պարբերացումը: XVII դ. սկիզբը Ռուսաստանի համար նշանավորվեց սոցիալ-տնտեսական և քաղաքական սուր ճգնաժամով, որը ժամանակակիցների կողմից անվանվեց Խառնակ ժամանակներ կամ Խառնակություն (Смута): Այդ դժվարին պատմական շրջափուլի ուսումնասիրության ընթացքում գիտնականները իրադարձությունների վերաբերյալ առաջ քաշեցին մի շարք հայեցակարգեր: Մասնավորապես՝ խորհրդային շրջանի պատմագիտության մեջ Խառնակ ժամանակները անվանվում էին կա՛մ որպես հեղափոխություն (գյուղացիական, անգամ՝ պալատական հեղափոխություն), կա՛մ որպես գյուղացիական պատերազմ և կա՛մ լեհ–շվեդական ներխուժում: Ռուսական պատմագիտության զարգացման ժամանակակից փուլում գիտնականները հակված են Խառնակ ժամանակները ընկալել՝ որպես քաղաքացիական պատերազմի դրսևորում, քանի որ XVII դ. սկզբի իրադարձությունները՝ որպես դասակարգային պայքար «վերևների» և «ներքևների» միջև, դասական հայեցակարգին չեն համապատասխանում: Հասարակությունը բաժանված էր իրար հակընդդեմ ճամբարների ոչ թե «հորիզոնական» բաժանմամբ, այլ ավելի շուտ՝ «ուղղահայաց» կերպով, ըստ որում՝ բաժանման գիծը բարիկադի տարբեր կողմերում կարող էր կանգնեցնել ոչ միայն սոցիալական միևնույն խմբի ներկայացուցիչներին, այլև հակառակորդներ դարձնել նույն ընտանիքի անդամներին:

Պատմական ցանկացած լայնածավալ իրադարձության նման «Խառնակ ժամանակները» ևս մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների արդյունք էր: Առաջինների շարքին պետք է դասել ամենից առաջ անցած հարյուրամյակի ընթացքում աստիճանաբար ձևավորված ճորտատիրական կարգը, որը լարվածություն էր առաջացրել ոչ միայն կալվածատիրոջ և ազատությունն ու հողը կորցրած գյուղացու, այլև հենց կալվածատերերի միջև: Անշուշտ, իր դերն ունեցավ նաև երկրի կենտրոնական հատվածի և նրա ծայրագավառների միջև աճող հակամարտությունը: Մայրաքաղաքում գտնվող իշխանությունը ձգտում էր իր հսկողության տակ պահել գավառներում եղած իրավիճակը, սակայն երկրի լայնատարածության պատճառով ուշացած էին տեղ հասնում տեղեկությունները, և Մոսկվան փաստորեն հնարավորություն չուներ հետևելու ամեն ինչին, իսկ գավառն էլ չէր կարողանում կենտրոնից ստանալ իրեն հուզող հարցերի պատասխանները, անհրաժեշտ որոշումները: Այս տեսանկյունից «Խառնակ ժամանակները» դարձավ «Տարածաշրջանների խռովություն»՝ բունտ:

Խառնակության ժամանակագրական սահմանները և դրա պարբերացումը պատմագիտության մեջ դեռևս վիճարկելի է: Գիտնականների մեծ մասը համակարծիք է, որ

քաղաքացիական պատերազմի սկիզբ պետք է համարել 1604 թ. աշունը, երբ Կեղծ-Դմիտրի I-ը զորքով մտավ ռուսական պետության սահմաններից ներս: Այլ կարծիքներ ևս կան, որոնք վերաբերում են դեռևս Իվան Ահեղի վախճանի (1584 թ.) օրերին, անգամ երկիրը մասնատած օպրիչնինայի ժամանակներին (1565 թ.):

Քաղաքացիական պատերազմի սկիզբ են համարվում նաև Բորիս Գոդունովի՝ գահակալ դառնալու (1598 թ.) և XVII դ. առաջին տարիները: Իսկ «Խառնակ ժամանակների» ավարտը միավորված աշխարհազորայինների կողմից Մոսկվայի ազատագրումն էր (1612 թ.) և Միխայիլ Ֆեոդրովիչ Ռոմանովին ցար ընտրելը (1613 թ.): Վերջին տարիներին տարածված է այն տեսակետը, որ Խառնակության՝ որպես քաղաքացիական պատերազմի ավարտը հատկապես բարդացավ օտարերկյա ներխուժմամբ և Ռեչ Պոսպոլիտայի հետ Դեուլինյան հրադադարի կնքմամբ (1618 թ.): Պատմաբանները «Խառնակ ժամանակների» պարբերացման հարցում էլ տարբեր մոտեցումներ ունեն: Ոմանք դրանում առանձնացնում են այսպիսի փուլեր՝ դինաստիական, երբ Իվան Ահեղի մահից հետո պայքար էր մղվում իշխանության համար (1584–1605), սոցիալական՝ զանազան հասարակական խմբերի զինված հակամարտությունը (1606–1610), ազգային՝ օտար զորքերից երկրի ազատագրումը (1611–1618): Երկրորդները հետևում են այն հայեցակետին, համաձայն որի՝ առանձին սոցիալական խմբեր «Խառնակ ժամանակներին» մասնակցել են ինչ-որ հաջորդականությամբ՝ համապատասխանաբար առանձնացնելով «բոյարական», «ազնվականական» և «ժողովրդական» փուլեր: Երրորդ խմբի պատմաբանները գերադասում են գնահատական տալ՝ ելնելով երևույթի խորությունից և ներքին հակամարտության դաժանության աստիճանից՝ առանձնացնելով նախնական փուլը (մինչև 1606 թ.), գագաթնակետը (մինչև 1612 թ.) և Խառնակության հաղթահարումը (մինչև 1618 թ.):

«Խառնակ ժամանակների» պատճառները: XVII դ.սկզբի ճգնաժամի օբյեկտիվ պատճառները սերտորեն կապված են սուբյեկտիվ պատճառների հետ: 1601–1603 թթ. սովը «առաջացավ» բնության ուժերի ազդեցությամբ՝ անկախ մարդկային կամքից, և այդ առումով, անշուշտ, այն կարելի է դիտել որպես մի շարք պատահական համընկնումների արդյունք: Սակայն պատահական չի կարող համարվել գյուղացիական տնտեսության զարգացման ցածր մակարդակը, որի դեպքում հաց արտադրողների մեծ մասը չուներ հացի պահուստ, որը կարող էր անվտանգության ինքնատիպ բարձիկ լինել: Նույն կերպ սուբյեկտիվ գործոն չի կարելի համարել տարածաշրջանների միջև եղած տնտեսական թույլ կապերը, որոնց պատճառով խոչընդոտվում էր նրանց միջև պահուստները վերաբաժանելու օպերատիվությունը (չէ՞ որ բերքն ամենուրեք չէր ոչնչացել): Սուբյեկտիվ գործոնը, որ նպաստեց ներքին բախումների սրացմանը, Ռյուրիկովիչների իշխող դինաստիայի տրամախաչումը եղավ, և դա առաջացրեց իշխանության օրինակարգության ճգնաժամ, որն արտահայտվեց ընտրված միապետի նկատմամբ անվստահությամբ և իշխանության հավակնորդ ինքնակոչերի ի հայտ գալով: Այնուամենայնիվ XVII դ. սկզբին ինքնակոչերի հաջողությունը պայմանավորված էր միանգամայն օբյեկտիվ պատճառներով: Մասնավորապես՝ հարյուրամյակների ընթացքում ձևավորված Ռուսական պետության հպատակների պատկերացումներում

միապետի իշխանությունը դիտվում էր որպես պետության ժառանգաբար տիրողի իշխանություն: Անգլիայում իշխող դինաստիայի հերթափոխումը փաստորեն տեղի ունեցավ Ռուսաստանի հետ համաժամանակյա: Սակայն այստեղ տեղի չունեցան այնպիսի ցնցումներ, ինչպիսին եղավ Ռուսաստանում «Խառնակ ժամանակներում»:

XVII դ. Ռուսաստանում էլ ավելի խորացող, երկարատև ու գնալով դաժանացող ներքին դիմադրությանը նպաստող գործոն էր նաև հարևան պետությունների միջամտությունը: Հատկապես շատ էին միջամտում Ռեչ Պոսպոլիտան և Շվեդիան: Իսկ երբեմն այդպիսին էին լեհ թագավորի, Հռոմի պապի, ճիզվիտների խարդավանքները, որոնք գրեթե համարվում էին Խառնակության գլխավոր պատճառը: Ինչ խոսք, արտաքին գործոնն իր դերն ունեցել է, և քաղաքացիական պատերազմի ընթացքում լեհ-լիտվական իշխանությունների միջամտությունները ժխտելу նույնքան ճիշտ չէ, որքան հաստատելը, որ Ռուսաստանն իր նպատակների համար չի օգտագործել Ռեչ Պոսպոլիտայի ներքին գժտությունները: Եվ այդուամենայնիվ երկրի վրա արտաքին ազդեցությունները կարող են լրջորեն խաթարել ներքին կյանքը միայն մեկ դեպքում, եթե ներքին բախումների համար հող կա: Չի կարելի նաև անտեսել ռուսական պատմագիտական դպրոցի դասական Վ. Օ. Կլյուչևսկու բնութագրական դիտարկումը, ըստ որի՝ առաջին ինքնակոչը «լոկ թխվել է լեհական վառարանում, մինչդեռ դրա թթխմորը Մոսկվայից էր»:

Ռուսաստանը Խառնակության նախօրեին: Ճգնաժամի հասունացումը: «Խառնակ ժամանակների» նախապատմությունն են XVI դ. վերջի և XVII դ. սկզբի իրադարձությունները: Իվան Ահեղի մահից հետո ցար դարձավ նրա ավագ որդին՝ Ֆեոդոր Իվանովիչը (1584-1598), որն անկարող էր ընդունել ինքնուրույն քաղաքական որոշումներ: Թույլ միապետի օրոք իրական իշխանության համար պայքարը ավարտվեց 1586 թ. վերջին՝ իր աներոջդու (թագուհու եղբոր)՝ բոյար Բորիս Ֆեոդորովիչ Գոդունովի հաղթանակով, որի լրջագույն հակառակորդներն էին Շույսկի իշխանները:



Բորիս Գոդունով



Բորիս Գոդունովին պատկանող օղազրահ

Խելացի քաղաքական գործիչ Բորիս Գոդունովը ղեկավարեց պետությունը Ֆեոդոր Իվանիչի ինքնակալության շրջանում: Այդ տարիներին աստիճանաբար վերականգնվեց երկրի տնտեսությունը, և ամրապնդվեցին հարավային և հարավարևելյան սահմանները: 1591 թ. հաջողվեց հետ մղել Ղրիմի խան Գազի-Գիրեյ II-ի՝ դեպի Մոսկվա արշավանքը: 1595 թ. Ռուսաստանի կազմի մեջ կրկին մտան հյուսիսարևմտյան սահմանի հողերը, որոնք զիջվել էին Շվեդիային Լիվոնյան պատերազմի արդյունքում: Ռուսաստանի հոգևոր կյանքում կարևոր իրադարձություն էր ռուսական ուղղափառ եկեղեցու կարգավիճակի բարձրացումը. շնորհիվ Բորիս Գոդունովի վարած դիվանագիտական արվեստի՝ Կոստանդնուպոլսի պատրիարքը 1589 թ. համաձայնեց Մոսկվայի և համայն Ռուսիայի մետրոպոլիտին հայտարարել Իով պատրիարք: Միաժամանակ շարունակվեց գյուղացիության ճորտացումը, որն արտահայտվեց նաև 1597 թ. ընդունած հրամանագրում՝ «սահմանված ամառների մասին», որով հնգամյա ժամկետ էր դրվում տիրոջից փախած գյուղացիներին հետախուզելու, գտնելու և տիրոջը վերադարձնելու համար:

Խնդրահարույց էր ցարական դինաստիայի ապագան: Ցար Ֆեոդորն ամուսնացավ Իրինա Գոդունովայի հետ, սակայն երկար ժամանակ զավակ չէին ունենում: Եվ վատառողջ ցարի վախճանի դեպքում նրան փոխարինելու էր կրտսեր եղբայրը՝ արքայորդի Դմիտրի Իվանովիչը, որը ապրում էր աքսորում՝ հոր թողած կալվածքում՝ Ուգլիչ քաղաքում:

1591 թ. Դմիտրի Իվանովիչը մահացավ անհասկանալի պայմաններում: Թեև քննչական հանձնաժողովը մահվան պատճառ համարեց էպիլեպսիայի նոպայի ժամանակ պատահական ինքնասպանությունը, ժողովրդի մեջ խոսում էին, որ նրան սպանել են Գոդունովի հանձնարարությամբ:

Մեկ տարի անց ծնվեց արքայադուստր Ֆեոդոսիան, որն ապրեց մեկուկես տարի: Քիչ հավանական է, որ ցար Ֆեոդորի մահից հետո Բորիս Գոդունովը հաշվարկած լիներ ցարական գահը ստանալը. իրադարձությունների զարգացման շատ ավելի հավանական սցենար էր գահի փոխանցումը Գոդունովի որդուն՝ Ֆեոդոր Բորիսովիչին, որը արքայորդի Դմիտրիի մահից հետո համարվում էր ցարական անզավակ ամուսինների ամենամոտ զարմիկը: Սակայն ցար Ֆեոդորի մահվան ժամանակ Ֆեոդոր Գոդունովը ընդամենը ինը տարեկան էր: Եվ 1598 թ. փետրվարին պատրիարք Իովի գլխավորությամբ արագորեն կազմակերպեցին զեմստվոյական ժողով, և պատրիարքը ցար հայտարարեց Բորիս Գոդունովին, որն այդ «ընտրությունում» միակ թեկնածուն էր:

§ 24. Խառնակ ժամանակների սկիզբը

XVII դ. սկզբի ճգնաժամային երևույթները: Բորիս Գոդունովի գահակալության (1598-1605 թթ.) սկիզբը բարեհաջող էր: Նոր ինքնակալ, որը ակնկալում էր հպատակների սերը, ներում էր բոլոր նախկին հարկային ապառքները, ավելացնում էր ծառայողների աշխատավարձը, մտցնում հնգամյա արգելանք (մորատորիում) մահվան

դատավճիռների նկատմամբ: Սակայն որպես քաղաքական գործիչ ձևավորվելով օպրիչնինայի տարիներին՝ նա հասկացավ, որ բոյարական նշանավոր ազգանուն ունեցող ներկայացուցիչները չեն կարող անկեղծորեն նվիրված լինել «վատահամբավ դուրսպրծուկին»: 1600 թ. ծանր հիվանդանալով՝ թվացյալ ինքնակալը կասկածում էր, որ իր հիվանդությունը կախարդության, «աչքով տալու» հետևանք է: Ցարի տկարության մեղքը գցեցին Ռոմանովների բոյարական ընտանիքի վրա, որը երկրում ժողովրդականություն էր վայելում և ցարական մարող դինաստիայի հետ խնամիական կապեր ուներ: Ձևականորեն ձգտելով չխախտել մահապատիժի արգելումը՝ Գոդունովը հրամայեց խուզել Ռոմանովների ընտանիքի ավագի՝ հոգևորական Ֆեոդոր Նիկիտիչի (Ֆիլարետ հոգևոր անվամբ) մազերը, իսկ Ռոմանովների մնացած չորս կրտսերներին աքսորեց, որոնցից երեքին ցարի գաղտնի հրամանով հենց նրանց հսկողները սպանեցին: Ռոմանովների և նրանց կողմնակիցների նկատմամբ բացահայտ և գաղտնի հաշվեհարդարները չավելացրին ցարի հանդեպ ժողովրդի սերը (տե՛ս Հավելվածը, քարտեզ հ.6):

Հավատալով «հարության» գաղափարին՝ ժողովուրդը համոզված էր, թե արքայորդի Դմիտրիի «հարությունը» լինելու է: Երեք տարի շարունակ (1601–1603 թթ.) բերք չեղավ, ինչի հետևանքով հացի և այլ մթերքների գները քսանապատիկ բարձրացան: Սկսված սովի հետևանքով հացի գնի թանկացումներ եղան, մարդիկ զանգվածաբար մեռնում էին, մահաբեր համաճարակն էլ իր հերթին էր մոլեգնում, սրվեց քրեական իրավիճակը, եղան նաև կանիբալիզմի դեպքեր: Ցար Բորիսը իրավիճակը հսկողության տակ պահելու նպատակով հացի համար սահմանեց պետական գներ, կարիքավորներին ցարական գանձարանից փող և պետական պահուստներից հաց բաժանեց, սակայն իրավիճակն ավելի վատթարացավ: Փողը գողանում էին պաշտոնյաները, հացը բոլորին չէր բավականացնում, իսկ Մոսկվայում ցարի օգնությունը ստանալու համար տարբեր գավառներից եկած մարդկային խմբերի կուտակումները մեծացրին համաճարակով հիվանդացող և մահացող մարդկանց թիվը:

XVII դ. մարդիկ այս ամենը համարում էին Աստծու պատիժ, իսկ համընդհանուր աղետի մեղավոր էին համարում Բորիս Գոդունովին, որը խաբեությամբ և սպանություններով (այդ մասին բոլորն էին բարձրաձայնում) հափշտակեց ցարական թագը: Մարդիկ երազում էին այն մասին, որ կվերադառնա արքայի գահի օրինական ժառանգը՝ Դմիտրին, որը հրաշքով փրկված կլինի Գոդունովի ուղարկած մարդասպաններից:

Քաղաքացիական պատերազմի սկիզբը: Գոդունովների անկումը: Դմիտրիի մասին գաղափարը նյութականացավ Կեղծդմիտրի I-ի կերպարում: Նրա ծագման մասին ավելի ճշմարտանման է այն վարկածը, որ նա գալիցկյան գավառի բոյար Յուրի Օտրեպևի որդին է և եղել է Ռոմանովների ծառան: Իսկ վերջինների շնորհազրկումից հետո կուսակրոն է ձեռնադրվել՝ Գրիգորի անվամբ: Մի քանի վանք փոխելուց հետո Օտրեպևը դարձավ Կրեմլի Հրաշագործ մենաստանի աբեղա՝ ծառայելով պատրիարք Իովայի աթոռանիստում: Խելացի վանականը շուտով դարձավ պատրիարքի անձնական քարտուղարը: Վերջինը նրան հաճախ էր իր հետ տանում ցարի պալատ: Շուտով

Գրիգորիին մատնեցին՝ մեղադրելով այն բանում, որ նա զրույցների ժամանակ իր անձի համար գուշակում էր ցարական ապագա: Ձերբակալությունից փախչելով՝ նա անցավ սահմանը և մտավ Ռեչ Պոսպոլիտա: Այստեղ մի կողմ գցեց վանականի փարաջան և իրեն ներկայացրեց որպես Իվան Ահեղի՝ հրաշքով փրկված որդի: Լեհ-լիտվական խոշոր կալվածատերերը, կաթոլիկ հոգևորականությունը և Սիգիզմունդ III թագավորը ինքնակոչին սկսեցին գաղտնի աջակցել, քանի որ բացահայտ օգնությունը կհանգեցներ ռուսական պետության հետ պատերազմի, ինչը Ռեչ Պոսպոլիտան չէր ուզում, քանի որ այդ ժամանակ Մերձբալթիկայում պատերազմում էր Շվեդիայի դեմ: Ի պատասխան Ռեչ Պոսպոլիտայի աջակցության՝ ինքնակոչը առատ խոստումներ էր տալիս՝ համաձայնվելով Լեհական թագավորությանը հանձնել Սմոլենսկի և հյուսիսային հողերը, հուսադրում էր Վատիկանին, որ Ռուսաստանի հոգևոր իշխանությունը կենթարկեցնի Հռոմի պապին: Թագավորից ստացած փողը հավաքելով և ունենալով ոչ մեծ թվով վարձկան զինվորներ՝ Կեղծդմիտրի I-ը 1604 թ. աշնանը ներխուժեց Ռուսաստանի հյուսիսային տարածքը:

Ծավալված իրադարձությունները ի ցույց դրեցին Գոդունովի թուլությունը և հասարակության՝ նրան աջակցելու նվազագույն մակարդակը: Հյուսիսային քաղաքները մեկը մյուսի հետևից առանց մարտերի հանձնվում էին և երդում տալիս «արքայորդուն»: Բացառություն եղավ միայն Նովգորոդ-Սևերսկին, որի պատերի ներքո տեղի ունեցած մարտերում գոդունովյան զորքը ջախջախիչ պարտություն կրեց: Կեղծդմիտրիին միացան Դոնի և Զապորոժիեի կազակները, կապիտուլյացիայի ենթարկված քաղաքների կայազորերը, պալատական հողերի գյուղացիները: Իրավիճակը չփոխեց անգամ 1605 թ. հունվարին Դոբրինիչայի մոտ ինքնակոչի (Կեղծդմիտրիի) հիմնական ուժերի կրած պարտությունը: Ինքնակոչ արքայորդին թաքնվեց լավ ամրացված Պուտիվլում, իսկ ցարական զորքերը նվազեցին, մաշվեցին Կրոմ ամրոցի պաշարման ժամանակ: 1605 թ. թեժ պայքարի օրերին Բորիս Գոդունովը հանկարծամահ եղավ, իսկ նրա 16-ամյա որդին՝ ցար հռչակված Ֆեոդոր Բորիսովիչը, անգամ չհասցրեց թագով պսակվել որպես թագավոր: Արդեն մայիսին Կրոմի տակ կանգնած զինվորները երդվեցին ծառայել արքայորդի Դմիտրիին, իսկ հունիսին Գոդունովներին գահընկեց արեցին (ցար Ֆեոդոր Բորիսովիչին և Մարիա Գրիգորևնային՝ այրիացած թագուհուն, որին նույնպես սպանեցին):

Կեղծդմիտրի I-ի կառավարումը: «Արքայորդու» մուտքը Մոսկվա մայրաքաղաքի բնակչությունն ընդունեց ցնծությամբ: Որպեսզի ոչ մի կասկած չլինի նրա իրական լինելու հարցում, Մոսկվա բերեցին Իվան Ահեղի այրուն՝ Դմիտրի արքայորդու մորը՝ Մարֆա Նագային: Եվ նա հրապարակավ ինքնակոչին ճանաչեց որպես իր «փրկված» որդի: Դրան հետևեց Օտրեպևի թագադրումը, որն անվանվեց ցար Դմիտրի Իվանովիչ (1605–1606 թթ.): Նրա կառավարումը երկարատև չէր, բայց ցայտուն էր: Նոր ցարի վարքը իր բնույթով հասարակ էր, արմատապես տարբերվում էր նախորդներից՝ ընդունված սովորույթների և էթիկետի նկատմամբ իր պահվածքով: Դա դուր էր գալիս Մոսկվայի բնակչությանը, որի միջավայրում Կեղծդմիտրի I-ը այնքան ընդունված էր, որ երբեմն քաղաքում շրջում էր առանց պահապանների: Ունենալով արտասովոր

ընդունակություններ, խելք և համարձակություն (սա ընդունում էին անգամ չկամեցը)՝ ինքնակոչն արագ գտնում էր այն հարցերի պատասխանները, որոնք Բոյարական դումայի համար անգամ անլուծելի էին: Կեղծդմիտրիի նկատմամբ ժողովրդական սերն ավելացավ նրա այն հրամանագրերի շնորհիվ, որոնցով տերերից փախած գյուղացիներն ազատվում էին վերադարձվելու պահանջից, իսկ այն ճորտերը, որոնց սովի տարիներին տերերը փողոց էին շպրտել, նույնպես ազատվում էին կալվածատիրոջից:

Կեղծդմիտրի I-ի օրոք միջազգային հարաբերություններում կատարած քայլերը, ըստ էության, շարունակում էին իրենց նախորդի արտաքին քաղաքական գիծը: Առավել լարված էին հարաբերությունները Շվեդիայի հետ: Ինքնակոչը արշավանքի էր պատրաստվում դեպի թուրքական Ազով ամրոցը, որը Դոնի գետաբերանում էր: Այս քայլը Լեհ-լիտվական պետության հետ հարաբերությունների կարգավորման սկիզբն էր: Տարածված կարծիքին հակառակ՝ Կեղծդմիտրին չդարձավ լեհ թագավորի դրածոն: Նա ընդգծում էր իր նվիրվածությունը ուղղափառությանը՝ չձեռնարկելով ոչ մի քայլ կաթոլիկ հավատի քարոզչության համար: Նույն կերպ ցարը չէր շտապում կատարել իր խոստումը և Ռեչ Պոսպոլիտային հանձնել սահմանային տարածքները (մասնավորապես, չհանձնելու դիմաց նա գումար առաջարկեց): Ավելին, ինքնակոչը գաղտնի կապեր հաստատեց լեհ թագավորի հակառակորդների հետ, որոնք հնարավոր էին համարում «Դմիտրի Իվանովիչին» տեսնել Լեհ-լիտվական գահին Սիգիզմունդ III-ին գահընկեց անելուց հետո:

Ինքնակոչի՝ Ռեչ Պոսպոլիտային տված խոստումներից միակն այն էր, որ նա ամուսնացավ լեհ խոշոր կալվածատեր Յուրի Մնիշեկի դստեր՝ Մարինայի հետ: Հենց դա էլ վերջնական արդյունքում բերեց Կեղծդմիտրի I-ի մահվան: Ցարի հարսնացուի հետ Մոսկվա եկան բազմաթիվ հյուրեր Լեհաստանից և Լիտվայից, և նրանց վարքը մոսկվացիներին թվաց հանդուգն (շատ քաղաքաբնակների հանեցին իրենց տներից, որպեսզի հյուրերին տեղավորեն): Բնակչության դժգոհությունից օգտվեցին դավադիրները՝ իշխան Վասիլի Շույսկու գլխավորությամբ: 1606 թ. մայիսի 17-ի գիշերը նրանք կոչնակ հնչեցրին՝ հրահրելով բնակչությանը ոչնչացնել լեհերին, որոնք իբր ցանկանում էին սպանել ցարին՝ Դմիտրի Իվանովիչին: Իսկ իրենք այդ ընթացքում գրավեցին Կրեմլը և ինքնակոչի հետ դատաստան տեսան: Հեղաշրջումից երեք օր անց մոսկվացիների խմբերը հավաքվեցին Կարմիր հրապարակում և ցար հռչակեցին դավադրության գլխավորին՝ իշխան–բոյար Վասիլի Իվանովիչ Շույսկուն (1606–1610): Թագադրման շտապողականությունը (նոր միապետը չսպասեց զեմստվոյական ժողով հրավիրելուն և պատրիարքի կողմից նրան գահին բազմեցնելու արարողությանը), հեղաշրջման իրավիճակի երկիմաստությունը (շատ մոսկվացիներ դուրս էին եկել ոչ թե ընդդեմ ինքնակոչի, այլ պաշտպանելու ցարին լեհերից), նաև Կեղծդմիտրիի դիակի անհետացումը նպաստեցին ինքնակոչի վերակենդանացմանը, առավել ևս, որ «Դմիտրի Իվանովիչը» բարեհաջող մտել էր «բարի ցարի» կերպարի մեջ, որը տուժել էր «չար բոյարներից»: Հասարակության մեջ նման տրամադրությունների առաջացումը պատահական չէր: Բոյարները, հետևելով իրենց շահադիտական նպատակներին, պայքարելով ցարական գահի կամ գահին մոտ գտնվելու համար, Խառնակության

սկզբում նշանակալից դեր ունեցան կատարվող իրադարձություններում: Այդ պատճառով էլ որոշ պատմաբաններ այն անվանում են «բոյարական խառնակություն»: Բոյարները հեշտությամբ երես դարձրին Գոդունովի ընտանիքից, հետո ազատվեցին Կեղծդմիտրիից՝ գահին բերելով «բոյարական ցարին»՝ Վասիլի Շույսկուն: Եվ ցար Դմիտրիի նոր, «հրաշք փրկության» մասին լուրերն անմիջապես տարածվեցին առաջին ինքնակոչի մահանալուց հետո:

§ 25. Խառնակ ժամանակների բարձրակետը

Ցար Վասիլի Շույսկի: Իվան Բոլոտնիկովի ապստամբությունը: Ցար Վասիլի Շույսկուն հենց սկզբից էլ ժողովուրդը քիչ էր աջակցում: Դրա պատճառներն էին ինչպես իր նախորդի մեծ ժողովրդականությունը, այնպես էլ նոր միապետի անձնական ցածր որակները: Շատերն էին հիշում, թե ինչպես քաղաքական իրադրությունից կախված՝ փոխվում էին նրա խոսքերը Դմիտրի ցարորդու մահվան վերաբերյալ (ակամա ինքնասպանություն, հրաշք փրկություն, մահ մարդասպանների ձեռքով): Անբարենպաստ տպավորություն թողեց նաև նրա հաստատումը՝ ասելով, թե իբր նա համաժողովրդական ընտրությամբ է անցել, մինչդեռ նրան ոչ այնքան ընտրել էին, որքան աղաղակներով մերժել՝ որպես «բոյարների ցար»): Ավելին, նրա՝ գահը ընդունելու ժամանակ տված խոստումը՝ առանց Բոյարական դումայի խորհրդի ոչ մի կարևոր որոշում չկայացնել, չարժանացավ հավանության, և ամբողջովին հաստատեց Շույսկու հեղինակությունը՝ որպես «բոյարների ցար»: Հակառակ տված խոստմանը, որ ոչ մեկից վրեժխնդիր չի լինելու, նոր ցարի սխալներից էր Կեղծդմիտրի I-ի մեծատոհմիկ մտերիմներին ծայրամասային քաղաքներ աքսորելը: Սա իրավիճակն անկայուն դարձրեց սահմանային քաղաքներում, իսկ Վասիլի Շույսկին սկսեց ընկալվել որպես երդմնազանց մարդ:

Արդեն 1606 թ. ամռանը Վասիլի ցարի դեմ ապստամբեց Աստրախանի բնակչությունը, բայց իրադարձությունները հատկապես մեծ թափ ստացան հարավարևմտյան գավառներում, Հյուսիսայինում և «դաշտային» քաղաքներում, այսինքն՝ Վայրի Դաշտ անունով տարածքին մոտ գտնվող քաղաքներում: Հրաժարվելով հավատալ Կեղծդմիտրի I-ի զոհվելու փաստին՝ այդ վայրերի բնակիչները քշում էին ցարական զորավարներին (վոյեվոդներին) և ձևավորում ապստամբական զորք: Խռովարարների ղեկավարությունը ստանձնեց իշխան Ա.Ա. Տելյատևսկու՝ մարտական նախկին ծառայող, ճորտ Իվան Բոլոտնիկովը: Վերադառնալով թուրքական գերությունից՝ Ռեչ Պոսպոլիտայում նա հանդիպեց արկածախնդիր մեկի, որը ներկայացավ որպես փրկված ցար Դմիտրի Իվանովիչ և «ամենամեծ զորավար» նշանակեց Բոլոտնիկովին: Հյուսիսային վայրում մի մարդու հայտնվելը, որն անձամբ տեսել է բոյարների կողմից գահընկեց արված դեռ կենդանի ցարին, ոգևորեց ապստամբներին, և զորքը շարժվեց դեպի Մոսկվա՝ ճանապարհին պարտության մատնելով Վասիլի Շույսկու ուղարկած ջոկատներին: Բոլոտնիկովյան զորքի սոցիալական կազմը խայտաբղետ էր, և այդ

շարժման մեջ տեսնել միայն ճորտերի և գյուղացիների ապստամբություն, հիմնավորված չէր: Ապստամբ զորքի զգալի մասը ծառայողներ էին հարավային գավառներից, այդ թվում՝ բոյարների երեխաներ (ռյազանյան պալատականներ Պրոկոպի Լյապունովը և Գրիգորի Սունբուլովը, Տուլայից բոյարի որդի Իստոմ Պաշկովը), որոնք Բոլոտնիկովի նման ապստամբության սկզբում ղեկավարում էին զորքը:

Ազնվականությունը Խառնակ ժամանակների իրադարձություններում նշանակալից դեր ուներ: Նկատի ունենալով նրանց աշխարհագրական ցրվածությունը, դասային միասնության գիտակցման բացակայությունը, տնտեսական շերտավորվածությունը և կառավարման կառույցներում ներգարավվածության տարբեր աստիճանները՝ նրանք հայտնվեցին հակամարտող ճամբարներում և հաճախ փոխում էին իրենց քաղաքական նախապատվությունները:

Արդեն 1606 թ. հոկտեմբերին ապստամբները մոտեցան Մոսկվային՝ փակելով Մոսկվան այլ քաղաքներին կապող գրեթե բոլոր ճանապարհները: Միայն դեկտեմբերին, երբ ազնվականության զգալի մասը Լյապունովի գլխավորությամբ անցավ կառավարական ճամբար, Վասիլի Շույսկուն հաջողվեց հետ մղել Բոլոտնիկովի կողմնակիցներին դեպի Կալուգա, որտեղ նրանք կարողացան դիմանալ պաշարմանը և նահանջեցին դեպի Տուլա: Այդտեղ նրանց միացան ինքնակոչ արքայազն Պյոտր Ֆեոդորովիչի ջոկատները: Այս ինքնակոչը, որ հանդես էր գալիս որպես ցար Ֆեոդոր Իվանովիչի՝ երբեք գոյություն չունեցած որդի, դեռևս Կեղծդմիտրի I-ի իշխանության օրոք գործում էր Թերեքում, իսկ հետո՝ Վոլգայում: Չորս ամիս Տուլայի պաշարումից հետո՝ 1607 թ. հոկտեմբերին, Բոլոտնիկովը և Կեղծպյոտրը ցարական զորքերի կողմից կապիտուլացվեցին: Ինքնակոչին մահապատժի ենթարկեցին, Իվան Բոլոտնիկովին, ցարի խոստման համաձայն, կենդանի թողեցին, բայց շուտով նրան գաղտնի կուրացրին և ջրախեղդ արեցին:

Կեղծդմիտրի II: Արտաքին միջամտությունների սկիզբը: Բոլոտնիկովյան ապստամբության ժամանակ եղած հակամարտությունների մասշտաբները վկայում են սոցիալական խոր հակասությունների մասին, որոնք արդեն «փոքր արյունահեղությամբ» չէին վճռվում: Երկիրը սրընթաց կերպով ներքաշվում էր քաղաքացիական պատերազմի մեջ: Իշխանություն կրողը, անկախ իր անձնական որակներից և գահի նկատմամբ ունեցած իրավունքից, ընկալվում էր որպես պայքարի դրոշ սեփական նպատակներին հասնելու համար: Դա հատկապես վառ կերպով արտահայտեց Կեղծդմիտրի II-ի համար սկսված շարժումը: Այս ինքնակոչը հայտնվեց 1607 թվականին Ռուսական պետության արևմտյան սահմաններին: Կեղծդմիտրի II-ի ծագումն անհայտ էր, ակնհայտ էր միայն, որ նա ո՛չ դեմքով, ո՛չ բնավորությամբ նման չէր Կեղծդմիտրի I-ին: Նա դրածո էր ուրիշների ձեռքում. նրա վրա մեծ ազդեցություն ունեին Ռեչ Պոսպոլիտայից վարձու ջոկատներով ժամանած իշխան Ռ. Ռուժինսկին, Յա.Պ. Սապեգան և կազակների ատաման Ի. Զարուցկին: Կեղծդմիտրի II-ը հնազանդորեն խաղում էր իր դերը, բազմիցս փորձում դիմել փախուստի: Սակայն մարդիկ նրա հետևից էլ էին գնում՝ անգամ լիովին գիտակցելով նրա ինքնակոչ լինելը: Մարինա Մնիշեկը՝ Կեղծդմիտրի I-ի այրին, նոր ինքնակոչին ընդունեց որպես իր՝ «հրաշքով փրկված» ամուսնու:

Մի շարք մարտերից հետո՝ 1608 թ. ամռանը, Կեղծդմիտրի II-ը և իր զորքը հիմնավորվեցին Մերձմոսկովյան Տուշինո գյուղում (այստեղից էլ նրա մականունը՝ Տուշինյան գող կամ պարզապես Գող)։ Այստեղ նա ստեղծեց իր սեփական արքունիքը՝ Բոյարական դումայով, հրամաններով, անգամ՝ պատրիարքով։ Պատրիարք դարձավ Ռոստովի և Յարոսլավլի գերված մետրոպոլիտ Ֆիլարետը (Ռոմանով)։ «Տուշինյան գողի» շրջապատի մարդկանց ճնշելը և Վասիլի Շույսկու՝ ժողովրդականություն չվայելելը հանգեցրին նրան, որ Մոսկվայի շրջակայքի քաղաքներից զանգվածաբար անցնում էին ինքնակոչի կողմը, և նրանք գրեթե ամբողջովին պաշարեցին քաղաքը։ Անհաջողությամբ ավարտվեց տուշինցիների փորձը՝ տիրելու Տրոյիցե-Սերգիևյան մենաստանին։ Հոգևորականները, շրջակայքի գյուղացիները և Մոսկվայից ուղարկված զինվորական փոքր ջոկատը 16 ամիսների ընթացքում հերոսաբար պաշտպանում էին մենաստանը։ «Սուրբ Սերգեյի տան» պաշտպանները ցուցադրեցին ինքնազոհության, դիմացկունության հրաշալի օրինակներ։ Մենաստանը մնաց, թեև պաշարման վերջում տուշինցիների բազմահազարանոց զորքին դիմադրում էին զենք օգտագործելու ունակ երկու հարյուրից էլ պակաս պաշտպաններ։

Չհավատալով հպատակների նվիրվածությանը՝ Վասիլի Շույսկին օգնություն խնդրեց Շվեդիայից՝ համաձայն 1609 թ. փետրվարին Վիբորգում կնքված պայմանագրի։ Սահմանային Կորելը իր գավառով հանձնելով Կարլ IX-ին՝ Ռուսաստանը ստացավ հինգհազարանոց վարձկանների կորպուսը, որը գլխավորում էր գեներալ Յակով Դելագարդին։ Ռեչ Պոսպոլիտայի իշխանությունների համար, որոնք Շվեդիայի հետ պատերազմական դրության մեջ էին, ռուս-շվեդական պայմանագրի կնքումը ևս Ռուսաստանին պատերազմ հայտարարելու առիթ դարձավ։ 1609 թ. սեպտեմբերին լեհ-լիտվական զորքերը մոտեցան սահմանային ռուսական ամրոցին՝ Սմոլենսկին, և երկար ժամանակ այն պահեցին պաշարման մեջ։ Քսան երկար ամիսներ բոյար Մ.Բ. Շեինի գլխավորությամբ կայազորը, քաղաքի բնակիչները և մոտակա գյուղերի գյուղացիները գոտեպնդում էին թագավորական բանակին, որը զրկված էր սահմանային հողերը թողնելու հնարավորությունից, քանի որ թիկունքում պահում էր չգրավված ամրոցը։



Միխայիլ Սկոպին- Շույսկի

Այդ նույն ժամանակ շվեդական վարձկանները իշխան-բոյար Միխայիլ Սկոպին-Շույսկու և Ներքին Վոլգայում հանդես եկող բոյար Ֆեոդոր Շերեմետևի թիկնազորի հետ տուշինցիներին ծանր հարվածներ հասցրին, պարտության մատնեցին և ազատագրեցին նովգորոդյան հողերը, Միջին և Վերին Պովոլժիեները, ստիպեցին հակառակորդին դադարեցնել Տրոյիցե-Սերգիև մենաստանի պաշարումը և միավորվելով Ալեքսանդրովյան ազատաբնակների ավանում՝ շարժվեցին դեպի Մոսկվա։ Քաղաքները, որոնք նախապես աջակցում էին ինքնակոչին, այս անգամ համբուրում էին Վասիլի Շույսկու խաչը։

Կատարվածից վախեցած՝ Կեղծդմիտրի II-ը Տուշինոյից փախավ Կալուգա, իսկ նրա կողմնակիցների մի մասը որոշեց անցնել լեհ թագավորի կողմը: 1610 թ. փետրվարին նրանք Սիգիզմունդ III-ի հետ պայմանագիր կնքեցին՝ արքայազն Վլադիսլավին ցար ընտրելու մասին՝ պայմանով, որ հարգվի ուղղափառ հավատի անձեռնմխելիությունը, պահպանվեն ռուսական քաղաքական ինստիտուտները. ենթադրվում էր Բոյարական դումայի նկատմամբ ցարի իշխանության սահմանափակում: Թագավորի կողմից տուշինցիների առաջարկների ընդունումը նշանակում էր Ռուսաստանի ներքին գործերին միջամտություն և Լեհաստանի գործողությունների տեղափոխում Ռուսաստան՝ որպես ռազմական բացահայտ ներխուժում:

Վասիլի Շույսկու գահընկեց լինելը և «գահաթափուրության» սկիզբը: Վասիլի Շույսկու դիրքը դարձավ երերուն, և 1610 թ. մարտին Տուշինյան ճամբարի փլուզումը բարդացրեց ցարի դրությունը, քանի որ բոյարական ընդդիմությունը, որը նախկինում նրա կողմից էր, այդ ժամանակ, վախենալով ինքնակոչի հաղթանակից, այլևս նրա կարիքը չուներ: Ցարի հեղինակությանը ևս մեկ հարված էր հանրաճանաչ զորահրամանատար, իշխան Սկոպին-Շույսկու հանկարծամահ լինելը: Ժողովրդի մեջ նրա մահվան պատճառը համարում էին թունավորումը, եթե ոչ անձամբ ցարի, ապա նրա եղբոր՝ իշխան Դ. Շույսկու կողմից: Վերջինս, Սկոպին-Շույսկու մահից հետո գլխավորելով զորքը, ուղևորվեց պաշարված Սմոլենսկ: 1610 թ. հունիսին Կլուշինո գյուղի մոտ ջախջախիչ պարտություն կրեց հետման Ստանիսլավ Ժոլկևսկուց: Ցարի անհաջողության մասին այս լուրը լցրեց համբերության բաժակը: 1610 թ. հուլիսի 17-ին ցարի հակառակորդների կողմից ուղղորդված մոսկվացիների բունտի ժամանակ գահընկեց արեցին միապետին և կուսակրոն ձեռնադրեցին:

Մոսկվան այդ ժամանակ Կալուգայի ուղղությամբ գտնվում էր պաշարման մեջ. այդտեղից քաղաքին էին մոտենում Կեղծդմիտրի II-ի կողմնակիցները, իսկ Սմոլենսկի ճանապարհով՝ լեհ-լիտվական զորքերը՝ հետման Ժոլկևսկու գլխավորությամբ: Մայրաքաղաքում իշխանության գլուխ հայտնված Բոյարական դուման ճիշտ համարեց բանակցություններ սկսել լեհական կողմի հետ՝ ցարի գահը առաջարկելով Սիգիզմունդ թագավորի որդուն՝ Վլադիսլավին: Օտար երկրի արքայազնին սահմանափակ պայմաններով գահին բարձրացնելը, որը շատ բանով կրկնում էր տուշինցիների առաջարկը, բոյարները համարեցին «չարյաց փոքրագույնը»՝ Կեղծդմիտրի II-ի Մոսկվան զավթելու հետ համեմատած: Ժոլկևսկու հետ նախնական համաձայնության եկան օգոստոսին, իսկ արդեն 1610 թ. սեպտեմբերին Սմոլենսկի մոտ թագավորի հետ բանակցությունների մեկնեց ռուսական պատվիրակությունը՝ Ռոստովի մետրոպոլիտ Ֆիլարետի և բոյար Վասիլի Գոլիցինի գլխավորությամբ: Ըստ Բոյարական դումայի հետ պայմանավորվածության՝ Ժոլկևսկին Կրեմլ բերեց լեհ-լիտվական կայազորը և ապա գնաց լեհական սեյմ՝ իր հետ որպես «ավար» տանելով գահընկեց արված ցար Վասիլի Շույսկուն և եղբայրներին: Նահանջելով Կալուգա՝ Կեղծդմիտրի II-ը այդ նույն թվականի դեկտեմբերին անփառունակ կերպով սպանվեց իր մտերիմների կողմից:

§ 26. Ազգային-ազատագրական շարժման վերելքը: Ժողովրդական աշխարհազոր

Բռնազավթված Մոսկվան: 1611 թվականի սկզբին Ռուսաստանի դրությունը լավատեսություն չէր ներշնչում: Մոսկվայի և մի շարք այլ քաղաքների՝ լեհ արքայազն Վլադիսլավին հավատարմության երդում տալուց հետո Շվեդիան, որը մինչ այդ համարվում էր Ռուսաստանի դաշնակից, դարձավ հակառակորդ և պատերազմ սանձազերծեց երկրի հյուսիսարևմտյան սահմաններին: Միևնույն ժամանակ հարավային գավառները թալանվում էին թաթարների և նոհայների հաճախակի արշավանքներից: Ամենամեծ վտանգը, սակայն, Ռեչ Պոսպոլիտայից էր: Չնայած լեհ արքայի որդին՝ Վլադիսլավ Ժիգիմոնտովիչը, համարվում էր «ընտրված» ռուսական ցար, իրականում նրա իշխանությունը ճանաչված չէր: Նրա իշխանության սահմանափակման մասին բանակցությունները՝ պայմանով, որ նա ընդունի ուղղափառություն, մտել էին փակուղի. լեհ արքա Սիգիզմունդ III-ը կտրականապես հրաժարվում էր թե՛ ուղղափառ դարձնել որդուն և թե՛ նրա օգտին հրաժարվել գահի հավակնությունից՝ պնդելով, որ ցարի գահը պետք է փոխանցվի հենց իրեն:

Այդ ընթացքում լեհ-լիտվական զորքերը շարունակում էին պաշարել Սմոլենսկը, իսկ սմոլենսկցիները համառորեն հրաժարվում էին հավատարմության երդում տալ լեհ թագավորին: Մոսկվայում էլ իրավիճակը դուրս էր եկել Բոյարական կառավարության վերահսկողությունից: Վլադիսլավի արքայական խաչը համբուրելու որոշումը և նրա իշխանության ճանաչումը հասարակության շրջանում ընկալվեց որպես դավաճանություն, ինչի հետևանքով բոյարական կառավարման հեղինակությունը լրջորեն անկում ապրեց: Իշխանությունն ըստ էության անցավ Կրեմլում տեղակայված լեհ-լիտվական կայազորի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Գոնսևսկու ձեռքը: Վերջինս, հենվելով Տուշինոյում կայացած բոյարների և նախկին տուշինցիներից կազմված աջակիցների վրա, թագավորի անունից ինքնակամ բաժանում էր բարձր պաշտոններ, աստիճաններ, կալվածքներ ու հայրենաժառանգ կալվածքներ: Բոյարական կառավարությունը, լիովին կորցրած իրական իշխանությունը, ստիպված էր պարզապես հաստատել նրա բոլոր որոշումները:

Իրավիճակի հետ կապված՝ դժգոհությունը գնալով մեծանում ու խորանում էր: Առաջինը բողոքի ձայն բարձրացրեց Մոսկվայի և համայն Ռուսիայի պատրիարք Գերմոգենը: Չկարողանալով խանգարել լեհ-լիտվական կայազորի Մոսկվա մտնելուն՝ նա արքայազն Վլադիսլավից պահանջեց անմիջապես ներկայանալ Սմոլենսկ և ընդունել ուղղափառություն, հակառակ դեպքում պատրիարքը հրաժարվում էր ստորագրել բոյարական շնորհագրերը՝ կապիտուլյացիայի մասին: Գտնվելով պահակախմբի հսկողության տակ՝ Գերմոգենը կարողացավ ռուս մարդկանց փոխանցել մի քանի ուղերձներ, որոնցով կոչ էր անում զավթված Մոսկվային հասնել օգնության: Պատրիարքի կոչը լսեց ժողովուրդը, և 1611 թ. սկզբներին Բոյարական դումայի պալատական անդամ Պրոկոպի Լյապունովը սկսեց Ռյազանում աշխարհազոր հավաքել՝ կոչ անելով

միանալ մյուս քաղաքների բնակիչների պայքարին: Ռյազանյան աշխարհազորին միանալու համար Նիժնի Նովգորոդից, Կոստրոմայից, Վլադիմիրից և այլ քաղաքներից ջոկատները շարժվեցին դեպի Ռյազան: Ընդհանուր գործին համաձայնեցին միանալ նաև Կեղծդմիտրի II-ի նախկին կողմնակիցները: Նրանց միավորումները Կալուգայից և Տուլայից գնացին դեպի Մոսկվա:

1611 թ. ապստամբությունը Մոսկվայում: Առաջին աշխարհազորը: Իրավիճակը Մոսկվայում գնալով ավելի էր լարվում: Մայրաքաղաքի բնակիչները սպասում էին աշխարհազորի մոտենալուն, հաճախացել էին քաղաքացիների և լեհ-լիտվական կայազորի ներկայացուցիչների միջև բախումները: Պատրիարք Գերմոգենը հրաժարվեց աշխարհազորայիններին դիմել ցրվելու և տներ վերադառնալու կոչով: Վերջապես լարվածությունը «ջրի երես դուրս եկավ». 1611 թ. մարտի 19-ին մոսկվացիները դուրս եկան զավթիչների դեմ՝ հանձն առնելով թնդանոթներ տեղադրել Կրեմլի աշտարակներին և Կիտայգորոդում: Լեհ-լիտվական կայազորը, ի պատասխան դրա, կոտորած սկսեց քաղաքում: Վատ զինված և թույլ կազմակերպված մոսկվացիները թվական զգալի առավելություն ունեին հակառակորդի նկատմամբ: Մայրաքաղաք հասան նաև աշխարհազորի առաջին ջոկատները, որոնք մարտի մեջ մտան Սրետենկում, Յաուզայի դարպասների մոտ և Զամոսկվորեչիեում: Ապստամբները սկսեցին նեղել հակառակորդին, և այդ ժամանակ Գոնևսկին ռուս կողմնակիցների խորհրդով հրամայեց վառել քաղաքը: Լեհ-լիտվական կայազորը թաքնվել էր Կրեմլի և Կիտայգորոդի պատերի տակ, մինչդեռ մոսկվացիների մեծ մասը զոհ գնացին կրակի տարերքին: Մերձմոսկովյան ճանապարհները ողողված էին փախստականների խմբերով: Աշխարհազորի հիմնական ուժերը քաղաք հասան մարտի վերջին և քաղաքի տեղում մոխրակույտ գտան:

Առաջին աշխարհազորի ուժերը, ըստ ժամանակակիցների, հասնում էր մինչև հարյուր հազար մարդու: Նրանք պաշարեցին Մոսկվան՝ կարողանալով փակել գրեթե բոլոր մատույցները: Թշնամուն փրկեց ռուսական ճամբարում տիրող անջատվածությունը, միմյանցից մեկուսացած լինելը: Աշխարհազորը բաղկացած էր ոչ վաղ անցյալում իրար դեմ կռվող ուժերից: Պ.Պ. Լյապունովի հետ Մերձմոսկվա եկան Վասիլի Շույսկուն հավատարիմ մարդիկ, հիմնականում ազնվականներ. իշխան Դ.Տ. Տրուբեցկոյի և ատաման Ի.Մ. Զարուցկու դրոշների տակ կռվում էին երեկվա «տուշինյան գողին» կողմնակից մարդիկ: Աշխարհազորայիններին բաժանում էր նաև սոցիալական երկպառակությունը. Զարուցկու ճամբարի կազակները ոչ վաղ անցյալում մեծ մասամբ գյուղացիներ ու ճորտեր էին եղել, վստահություն չունեին ազնվականական մասի նկատմամբ: Ընդհանուր լեզու չէին գտնում նաև երեք առաջնորդները. 1611 թ. հունիսի 30-ի՝ աշխարհազորի մասին որոշման մեջ ձևականորեն նրանց հայտարարել էին հավասարազոր ղեկավարներ, որոնք պարտավոր էին որոշումներ ընդունել ընդհանուր համաձայնությամբ, սակայն ղեկավարումը կենտրոնացած էր Լյապունովի ձեռքում: Հասունացող հակամարտությունից օգտվեց պաշարված լեհ-լիտվական կայազորի հրամանատարությունը: Պատրաստելով կեղծ հրամանագիր, որով Լյապունովն իբր կոչ էր անում ոչնչացնել կազակներին, նրանք հրահրեցին Լյապունովի

սպանությունը՝ կազակներին մղելով այդ քայլին: Աշխարհազորի ղեկավարությունն անցավ Զարուցկուն և Տրուբեցկոյին, ինչի պատճառով ազնվականների զգալի մասը հեռացավ աշխարհազորից: Մերձմոսկվայում մնացած ուժերը արդեն չէին բավականացնում քաղաքը պաշարելուն, իսկ թույլ կարգապահությամբ կազակական զանգվածը զբաղված էր նաև հարևան գյուղերը կողոպտելով՝ ապահովելով իրենց մթերքով և անասնակերով: Խառնակության ժամանակ կազակները սոցիալական հզոր ուժ ստեղծեցին տարասեռ մարդկանց խմբերից, որոնք անկարգություններ հրահրող էին, նաև անարխիստ: Շատ հետազոտողներ հենց նրանց մեջ են տեսել քաղաքացիական պատերազմի շարժիչ ուժը, իսկ նրանց ժամանակակիցները հաճախ կազակներին անվանում էին «ամեն տեսակ չարիքի պետեր»:

Երկրորդ աշխարհազոր: Իրավիճակը հուսահատեցնող էր: Առաջին աշխարհազորի ջախջախվելուն զուգահեռ ռուսական պետության հակառակորդները նոր հաջողությունների հասան: 1611 թ. հունիսին քսանամսյա պաշտպանությունից հետո ընկավ Սմոլենսկը, նույն տարվա հուլիսին շվեդ գեներալ Դելագարդիի զորքը զավթեց Վելիկի Նովգորոդը: Նովգորոդցիներին պարտադրեցին մի համաձայնագիր, որով նրանք իրենց տիրակալ էին ճանաչում շվեդ արքայազներից մեկին: Սակայն 1611 թ. ավարտին Նիժնի Նովգորոդում սկսվեց նոր աշխարհազոր ստեղծելու շարժումը: Հայրենասիրական այդ մղումը նախաձեռնեց նիժեգորոդյան զեմստվոյական ավագ Կուզմա Մինինը, որն առաջարկեց համերկրացիներին, որ աշխարհազորի կազմակերպման համար յուրաքանչյուրը զոհաբերի ունեցվածքի մեկ երրորդը: Ձևավորվող աշխարհազորի միջուկը կազմեցին սմոլենսկյան ազնվականները, որոնք լեհերի՝ Սմոլենսկը գրավելուց հետո զրկվել էին իրենց կալվածքներից: Նրանց ռազմական առաջնորդ համաձայնեց դառնալ իշխան Դմիտրի Միխայլովիչ Պոժարսկին:

1612 թ. սկզբին ձևավորված նիժեգորոդյան աշխարհազորն իր արշավը սկսեց Վոլգա գետի ափով՝ ճանապարհին համալրելով իր ուժերը տեղի պահապան մարդկանցով և Պովոլժիեի հարուստ քաղաքներից միջոցներ վերցնելով զանձարանի համար:



Կուզմա Մինին



Դմիտրի Պոժարսկի

Ապրիլին աշխարհազորը մտավ Յարոսլավլ, որտեղ մնաց չորս ամիս։ Դեպի Մոսկվա շարժվելուն խանգարում էր լուրն այն մասին, որ առաջին աշխարհազորի ջոկատները 1612 թ. մարտին երդվել էին ծառայել Իվանգորոդում և Պսկովում ի հայտ եկած մի նոր ինքնակոչի՝ Կեղծդմիտրի III-ին։ Իմանալով Մոսկվայի մատույցներից «պսկովյան գողի»՝ ատաման Զարուցկու և իր կողմնակիցների փախուստի, ինչպես նաև պաշարված լեհ-լիտվական կայազորի զինվորներին օգնության շտապող հետման Յան-Կարոլ Խոդկևիչի զորքի ու մթերքի մեծ պաշարով սայլախմբի մասին՝ երկրորդ աշխարհազորի ուժերը (մինչև 12 ու կես հազար մարդ) շարժվեցին դեպի մայրաքաղաք։ Նրանք հասցրին փակել թշնամու ճանապարհը. 1612 թ. օգոստոսի 22–24-ի մարտերում երկու աշխարհազորայինները համատեղ կռվում հետ մղեցին Խոդկևիչին՝ թողնելով Կրեմլի լեհ-լիտվական կայազորին (մոտավորապես 3 հազար մարդու) առանց մթերքի և աջակցության։

Մեկ ամիս անց աշխարհազորերի առաջնորդները՝ իշխաններ Տրուբեցկոյը և Պոժարսկին, պայմանավորվեցին իրենց ուժերը միավորելու և մարտական գործողությունները համատեղ ղեկավարելու մասին։ Դարձյալ մեկ ամիս անց՝ 1612 թ. հոկտեմբերի 26-ին, թշնամու կայազորը կապիտուլացվեց, և աշխարհազորի ջոկատները մտան Կրեմլ։ Հաղթանակը հնարավոր դարձավ միայն քաղաքացիական պատերազմը դադարեցնելու հարցում շահագրգիռ սոցիալական ուժերի համախմբման շնորհիվ։ Դրանում մեծ դեր ունեցան առաջին հերթին գավառական ազնվականությունը և քաղաքային բնակչության վերնախավը։



Լեհ ինտերվենտներին Մոսկվայից քշելը, 1612 թ.։ Նկարիչ՝ Է.Է. Լիսսներ



Միխայիլ Ֆեոդորովիչ Ռոմանով։ Նկարիչ՝ Վ.Պ. Վերեշչագին

1613 թ. աշխարհաժողովը (Զեմսկիյ սաբոր): Խառնակ ժամանակների ավարտին հաղթանակած աշխարհազորը առաջնահերթ խնդիր համարեց ցարի ընտրությունը, որն ունակ կլիներ դառնալ համազգային միավորող ուժ և առաջնորդել երկրի ազատագրումը օտար նվաճողներից։ Նախկին անհաջող փորձերն ի ցույց էին դրել, որ միայն Մոսկվայի բնակչության մասնակցությամբ կազմակերպված ընտրությունները չէին կարող ապահովել լայն լեգիտիմություն։ Այդ պատճառով աշխարհազորի առաջնորդները որոշեցին Մոսկվայում գումարել զեմստվոյական ժողով՝ ընդգրկելով երկրի բոլոր շրջանների ներկայացուցիչներին։ Մոսկվայից հատուկ հրավերներ ուղարկվեցին տարբեր քաղաքներ՝ կոչ անելով, որ յուրաքանչյուր քաղաք ընտրություն կատարի և ուղարկի իր պատվիրակներին՝ մասնակցելու ցարի ընտրությանը։ Սակայն ժողովի կազմակերպումը բախվեց մի շարք գործնական դժվարությունների։ Նախապես նշանակված օրը՝ դեկտեմբերի 6-ին, ինչպես նաև հաջորդ ժամկետին՝ 1613 թ. հունվարի 6-ին, անհրաժեշտ թվով պատվիրակներ չհավաքագրվեցին։ Մինչև փետրվարի կեսերը շատ քաղաքների ներկայացուցիչներ դեռ չէին հասել Մոսկվա. այդ թվում՝ ոչ միայն հեռավոր Կազանից, այլև նույնիսկ համեմատաբար ավելի մոտ գտնվող Կալուգայից։

Մոսկվայում հավաքվածների շրջանում բացակայում էր միաբանությունը. առաջադրվում էին տարբեր թեկնածուներ՝ «Վորոնյոկ»-ը (Կեղծդմիտրի II-ի երկու տարեկան որդին), աշխարհազորը գլխավորողները, բոյարական ընտանիքների մի քանի ներկայացուցիչներ, անգամ օտարերկրյա գահաժառանգների կողմնակիցներ։ Մեծաքանակ կազակությունը, որը կապվածություն չուներ որևէ գավառի հետ, ժողովի

աշխատանքներին չէր մասնակցում, բայց ցանկանալով ընտրված ցարից շուտ ստանալ իրենց շնորհագիրը՝ առաջարկում էին գահի ճակատագիրը վճռել՝ վիճակ հանելով: 1613 թ. փետրվարի 21-ին կազակները պահանջեցին ցար հռչակել 16-ամյա Միխայիլ Ֆեոդորովիչ Ռոմանովին: Ժողովրդի կամարտահայտությանը հակառակվել չհամարձակվեցին ո՛չ աշխարհազորի ղեկավարները, ո՛չ էլ զեմստվոյական ժողովի ներկայացուցիչները: Վերջիններս այդպես էլ չկարողացան հավաքվել լրիվ կազմով: Ընտրված ցարը գտնվում էր Կոստրոմայի մոտ և իր ընտրված լինելու մասին չէր էլ ենթադրում: Ի դեպ, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, ցարի ընտրությունը Խառնակ ժամանակների համար բեկումնային դարձավ: Քաղաքացիական պատերազմը չավարտվեց, բայց երկիրը ունեցավ տիրակալ, որի օրինականությանը հավատում էր երկրի բնակչության մեծամասնությունը՝ հուսալով, որ Խառնակությունը վերջ կունենա:

§ 27. Խառնակ ժամանակների ավարտը

Իրավիճակը երկրում Միխայիլ Ֆեոդորովիչի թագավորության սկզբում: Միխայիլ Ռոմանովի ընտրությունը Կառավարությունը ձգտում էր ներկայացնել որպես երկարամյա Խառնակության ավարտ: Հաճախ այդ նույն տեսակետն էին արտահայտում ավելի ուշ շրջանի պատմաբանները, որոնք արդեն գիտեին՝ 1613 թ. ընտրված միապետի գլխին դրված ցարական թագը սկիզբն է նոր կառավարող դինաստիայի, թեև Միխայիլ Ֆեոդորովիչի կառավարման սկզբում դա դեռ ակնհայտ չէր, և քաղաքացիական պատերազմն էլ նրա գահակալությունից մի քանի տարի անց դեռևս շարունակվում էր: 1613-1614 թթ. մոսկովյան կառավարությունը առաջվա պես հսկողություն չուներ երկրի զգալի մասի վրա. հյուսիսարևմտյան տարածաշրջանի խոշորագույն քաղաքը՝ Վելիկի Նովգորոդը, գտնվում էր շվեդական բռնազավթման ներքո, արևմուտքում և հարավ-արևմուտքում Սմոլենշչինայի և Սևերշչինայի զգալի հատվածներ գտնվում էին լեհ-լիտվական իշխանությունների ձեռքում, հարավ-արևելքում՝ Վոլգայի ստորին հատվածում՝ Աստրախանում, կանգնած էին ատաման Իվան Զարուցկու կազակները, որոնք չէին ճանաչում Մոսկվայում կայացած ցարի ընտրությունը: Անհանգիստ էր մթնոլորտը նաև կենտրոնական գավառներում, որտեղ անկարգություններ էին անում լեհ-լիտվական ջոկատները և ռուս ավազակների հրոսակախմբերը: Ընտրված միապետը Կոստրոմայից Մոսկվա շարժվելիս մոտավորապես մեկ ամիս մնաց Յարոսլավլում՝ զգուշանալով զինված կազակական խմբերի հարձակումներից: Դրանից բացի, կային նաև գահին տիրելու այլ թեկնածուներ, որոնք վիճարկում էին Միխայիլ Ռոմանովի իրավունքը: Ատաման Զարուցկին և Մարինա Մնիշեկը ցար էին հայտարարել «Վորոնյոկին», շվեդները առաջարկում էին արքայազն Կարլ-Ֆիլիպի թեկնածությունը, եթե ոչ որպես ռուս ցարի, ապա գոնե Շվեդիայի վասալ Նովգորոդյան պետության կառավարողի, Ռեչ Պոսպոլիտայում էլ ընտրված ռուսական ցար էին համարում արքայազն Վլադիսլավին:

Միխայիլ Ֆեոդորովիչը, որն իր տարիքի պատճառով դեռևս չէր տիրապետում քաղաքական փորձառությանը, ստիպված էր բազմաթիվ բարդ հարցեր լուծել պետական կառավարման տարբեր ոլորտներում: Հարկ էր վերականգնել Խառնակության ժամանակ խաթարված դիվանագիտական հարաբերությունները հարևան պետությունների հետ: Այդ նպատակով արդեն 1613 թ. պատվիրակներ ուղարկվեցին Ղրիմի խանություն, Նողայների հորդա, Օսմանյան կայսրություն, Պարսկաստան, Անգլիա, Դանիա և Սրբազան Հռոմեական կայսրություն: Օտար պատվիրակների պատասխան այցերը Մոսկվա վկայում էին, որ ռուսական նոր իշխանությունը ճանաչվում էր միջազգային ասպարեզում: Սակայն այլ երկրներից ռազմական կամ ֆինանսական օգնություն ստանալ չհաջողվեց: Խառնակությունից հետո Ռուսաստանը ստիպված էր հենվել միայն սեփական ներքին ռեսուրսների վրա, ինչը տնտեսական ծայրահեղ անկման պայմաններում դարձել էր լրջագույն խնդիր: Այդ դժվարին իրավիճակում Միխայիլ Ռոմանովի գահակալության առաջին տարիներին կառավարությունը յոթ անգամ դիմեց արտակարգ հարկահավաքության՝ «պահանջմունքի» և «հնգամասի» ձևով: Այս հարկերը թեև ժամանակավոր էին, բայց ֆինանսական հսկայական միջոցներ էին՝ համալրելու պետական գանձարանը: «Հնգամասի» հարկով բնակչությունից գանձվում էր ունեցվածքի հինգերորդ մասը: Այս ծանր հարկային բեռը տարածվում էր ամբողջ բնակչության վրա՝ անկախ սոցիալական դիրքից, ինչը մեծ դժգոհություն և սոցիալական լարում էր առաջացնում:

1613–1618 թթ. ռազմական գործողությունները: Ռեչ Պոսպոլիտայի և Շվեդիայի դեմ շարունակվող պատերազմներին զուգահեռ անհրաժեշտ էր հաստատել կարգուկանոն նաև Մոսկվային ենթակա տարածքներում, որտեղ Խառնակության ավարտից հետո դեռ պահպանվում էին կենտրոնին չենթարկվելու միտումները: Այդ տարածքներում փորձեր էին արվում խոչընդոտել նոր դինաստիայի կայունացումը: Այսպես, ատենադպիր Նիկանոր Շուլգինը, որը միջթագավորության շրջանում ղեկավարում էր Կազանի թագավորությունը, 1613 թ. փորձեց խափանել Միխայիլ Ռոմանովի գահակալության երդմնակալության գործընթացը: Միայն 1614 թ. ամռանը Մոսկվային հաջողվեց վերահսկողություն հաստատել Նիժնի Պովոլժիեի նկատմամբ: Գերեվարվեց կազակ ատաման Իվան Զարուցկին և նրա կողմնակից Մարինա Մնեշիկը: Խռովարար առաջնորդը և չորսամյա «Վորոնյոկը» Մոսկվայում հրապարակավ մահապատժի ենթարկվեցին, իսկ Մարինա Մնեշիկը մահացավ անորոշ հանգամանքներում:

1615 թ. ամռանը մեծ դժվարությամբ ճնշվեց կազակակների՝ ատաման Բալովնյայի ղեկավարած ապստամբությունը: Ապստամբները սկսեցին թալանել ռուսական հյուսիսային գավառները՝ հասնելով մինչև Մոսկվա: Նրանց հաջողվեց հաղթել միայն խաբեությամբ. առաջնորդները Կրեմլ հրավիրվեցին բանակցությունների պատրվակով և այնտեղ գերեվարվեցին:

Միխայիլ Ֆեոդորովիչի կառավարման սկզբնական շրջանում շարունակվում էին Ռեչ Պոսպոլիտայի և Շվեդիայի զորքերի դեմ ռազմական գործողությունները: Արդեն 1613 թ. գարնանը ռուսական ուժերը կարողացան հարավարևմտյան սահմաններից՝ Պուտիվլից, դուրս մղել օտարերկրյա ջոկատներին: Իշխան Դմիտրի Չերկասկու

հրամանատարությամբ ռուսական զորքը ազատագրեց մի շարք քաղաքներ և պաշարեց Սմոլենսկը: Սակայն հարձակողական ուժը թուլացավ, և Սմոլենսկի պաշարումը ձգվեց գրեթե չորս տարի:

Շվեդների դեմ պատերազմում պայքարը ընթանում էր փոփոխական հաջողությամբ: Ռուսական զորքերը կարողացան գրավել Տիխվինի մենաստանը և Գդով քաղաքը Պսկովի մերձակայքում, սակայն 1614 թ. ամռանը իշխան Դմիտրի Տրուբեցկու զորքերը Բրոննիցայի մոտ կրեցին պարտություն: Շվեդ թագավոր Գուստավ II Ադոլֆի ղեկավարած ուժերը 1615 թ. փորձեցին գրավել Պսկովը, սակայն ապարդյուն: Սա ստիպեց Շվեդիայի կառավարությանը վերանայել Ռուսաստանի դեմ պատերազմի շարունակման նպատակահարմարությունը:

Շվեդիայի և Ռեչ Պոսպոլիտայի դեմ պատերազմների ավարտը: Շվեդիայի և Ռուսաստանի միջև 1615 թվականին սկսված բանակցությունները ավարտվեցին 1617 թվականի փետրվարին՝ Ստոլբովսկյան խաղաղության պայմանագրի ստորագրմամբ: Շվեդիան դուրս բերեց իր զորքերը Նովգորոդից, սակայն ռուսական սահմանային ամրոցներն ու քաղաքները՝ Իվանգորոդը, Յամը, Կոպորիեն և Կորելը, մնացին շվեդների վերահսկողության տակ, ինչն էլ փաստորեն հեռացրեց Ռուսաստանին Բալթիկ ծովի ափերից: Սա կարելի է համարել շվեդական դիվանագիտության կարևոր և մեծ հաջողություն:

Ռուսաստանի համար, որը միաժամանակ պայքարում էր երկու ուղղությամբ և չուներ անհրաժեշտ նավատորմ՝ ծովային առևտուր կազմակերպելու համար, Ստոլբովսկյան պայմանագիրը համարվեց ընդունելի: Այդ պատճառով էլ դրա կնքումը հանդիսավորությամբ նշվեց ինչպես շվեդների, այնպես էլ ռուսների կողմից: Արդեն այդ ընթացքում վերսկսվել էին ռազմական գործողությունները լեհ-լիտվական ուղղությամբ: 1617 թվականին ռուսական գահին հավակնող արքայազն Վլադիսլավը կազմակերպեց արշավանք և գրավեց Վյազմա և Դորոգոբուժ քաղաքները: Իրավիճակը սրվում էր նաև այն պատճառով, որ արքայազնի զորքի կեսից ավելին ռուսաստանցիներ էին:

1618 թվականի ամռանը Ռեչ Պոսպոլիտայի բանակին միացան զապորոժյան կազակները՝ Սագայդաչնի գլխավորությամբ, և Վյազմայի ու Կալուգայի շրջաններում կայունացված ճակատը փլուզվեց: Հետագայում՝ աշնանը, արքայազնի և զապորոժյան կազակների զորքերը միավորվեցին Մերձմոսկովյան Տուշինոյում՝ նախաձեռնելով գրոհ Մոսկվայի վրա: Մոսկվայի պաշտպանները մեծ դժվարությամբ կարողացան հետ մղել գրոհը: Չհասցնելով կրկին պաշարել Տրոյիցե-Սերգիևի մենաստանը՝ լեհական կողմը կորցրեց ձմեռային բնակարաններում բանակը տեղավորելու հույսը և համաձայնեց 1618 թվականի դեկտեմբերի 1-ին ստորագրել հաշտության պայմանագիր՝ Դեուլինո գյուղի մոտ: Պայմանագրով նախատեսվում էր, որ հաշտությունը տևելու է 14.5 տարի: Ռեչ Պոսպոլիտային հանձնվեցին Սմոլենսկյան և Սևերյան հողերը, ինչպես նաև հյուսիսարևմուտքում գտնվող 14 ռուսական քաղաքներ՝ Սմոլենսկ, Բելայա, Դորոգոբուժ, Նովգորոդ-Սևերսկի, Ստարոդուբ, Չեռնիգով, Նևել և Սեբեժ: Արքայազն Վլադիսլավի՝ ռուսական գահի նկատմամբ հավակնություն ունենալը և լեհ-լիտվական

կողմից Միխայիլ Ռոմանովին Ռուսաստանի ցար չճանաչելը բախումների վերսկսումը դարձնում էին անխուսափելի։

Խառնակ ժամանակների հետևանքները և արդյունքները։ Առաջին քաղաքացիական պատերազմը թանկ նստեց ռուսական պետության վրա։ Մոտավոր հաշվարկներով այն խլեց երկրի բնակչության մեկ հինգերորդ մասի կյանքը՝ ավելի քան մեկ միլիոն մարդ։ Ժողովրդագրական կորուստները վերականգնելու և բնակչության թվով XVI դարի մակարդակին վերադառնալու համար Ռուսաստանից պահանջվեց կես դար։

Խառնակության տնտեսական հետևանքներն էլ ծանր էին։ Շատ քաղաքներ մի քանի անգամ հրդեհվեցին և ենթարկվեցին կողոպուտի։ Դատարկված գյուղերն ու դաշտերը, որոնք վերածվել էին անտառների, դարձան ռուսական բնանկարի սովորական մասնիկ։ Նշանակալիորեն նվազել էին գանձարան մուծվող հարկերը, ինչը պայմանավորված էր հատկապես հարկատու բնակչության կրճատմամբ։ Մի մասը մահացել էր կամ գերի ընկել, մյուս մասը կազակ էր դարձել կամ թափառող մարդիկ էին, կամ էլ, օգտվելով Խառնակության հետևանքով առաջացած քաոսից, պարզապես խուսափում էին հարկ վճարելուց։ Հարկերի նվազումը զրկեց կառավարությանը ռազմաքաղաքական ոլորտում անհրաժեշտ միջոցներից, ինչը քաղաքացիական պատերազմի թողած միջազգային խնդիրների լուծումը երկարաձգեց տասնամյակներով։ Բալթիկ ծովից Ֆիննական ծոց ելքի կորստի և Ռեչ Պոսպոլիտային Սմոլենսկի ու Սևերսկի հողերի զիջման արդյունքում Ռուսաստանի արևմտյան սահմանը վերադարձրին XVI դ. սկզբում եղած վիճակին։ Նախկին սահմանների վերականգնումը Ռուսաստանին հաջողվեց միայն կես դար հետո Ռեչ Պոսպոլիտայի դեմ ունեցած երկու արյունահեղ պատերազմների միջոցով, իսկ Բալթիկայի ափերը գրեթե հարյուր տարի անց վերադարձրին։

Խառնակ ժամանակների հետևանքը եղավ Ռուսաստանի կառավարող շրջաններում հաստատված պահպանողական գաղափարախոսությունը։ Խառնակությանը նախորդող ժամանակները վերջինիս համապատկերում թվում էին կայունության և բարեկեցության «ոսկե դար»։ Եվ հասարակական ու քաղաքական ճիշտ կարգը առաջին Ռոմանովների ժամանակ ձևակերպվում էր հետևյալ բանաձևով՝ «ինչպես նախկին մեծ միապետերի ժամանակ է լինում»։ Այսպիսով, քաղաքացիական պատերազմի՝ մեկուկես տասնամյակում կորցրածը վերագտնելու և նախկին դիրքերը վերականգնելու համար ծախսվեց կես դար։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք Խառնակ ժամանակների առավել կարևոր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները։ XVII դ. սկզբում Ռուսաստանում անխուսափելի՞ էր քաղաքացիական պատերազմը։

2. Ինչո՞վ կարելի է բացատրել այն, որ Բորիս Գոդունովը՝ փորձառու քաղաքական գործիչը, մինչև ցար դառնալը արդյունավետորեն կառավարում էր երկիրը, իսկ XVII դ. սկզբին, ունենալով կառավարման անսահմանափակ ռեսուրս, չկարողացավ երկրում իրավիճակը պահել հսկողության տակ:
3. Խառնակ ժամանակների ամենավառ և ինքնատիպ գիծը եղավ ինքնակոչերի հայտնվելը: Ինչո՞վ կարելի է բացատրել գահի ինքնակոչ հավակնորդների ժողովրդականություն վայելելը:
4. Տվե՛ք Կեղծդմիտրի I-ի բնութագիրը՝ որպես մարդու և քաղաքական գործչի: Կարելի՞ էր նրան համարել «լեհ թագավորի խամաճիկը»:
5. Ժամանակակից պատմագիտությունը հրաժարվեց Իվան Բոլոտնիկովի ապստամբությունը բնութագրել որպես գյուղացիական պատերազմ: Դուք այդ տեսակետին համաձա՞յն եք:
6. 1612 թ. Մոսկվայի ազատագրումը զավթիչներից մեծ մասամբ հնարավոր դարձավ շնորհիվ ռուս հասարակության ինքնակազմակերպման: Ինչո՞ւ Խառնակության տարիների փորձը հետագայում կիրառություն չգտավ՝ զիջելով իր տեղը ավանդական դարձած ինքնակալությանը:
7. Խառնակության մաս էր երկրի ներքին գործերին հարևան պետությունների մասնակցությունը: Կարելի՞ է համարել, որ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի գլխավոր պատճառը արտասահմանյան գործոնն էր: Խառնակ ժամանակների ո՞ր փուլում իրադարձությունների ընթացքի վրա առավել նշանակալից էր օտար պետությունների ազդեցությունը:
8. Ինչպիսի՞ դեր ունեցան առաջին և երկրորդ աշխարհազորերը լեհ զավթիչների դեմ պայքարում:
9. Օգտվելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներից՝ պատրաստե՛ք հաղորդում Ռուսաստանի ազատագրման գործում Կուզմա Մինինի և իշխան Դմիտրի Պոժարսկու ունեցած դերի մասին:
10. Խառնակ ժամանակների ներքին և արտաքին ծանր պայմաններում ո՞ր գործոնները հնարավորություն տվեցին Ռուսաստանին՝ պաշտպանելու իր ազգային անկախությունը:
11. Ձեր կարծիքով՝ ի՞նչը կարելի է համարել Խառնակ ժամանակների առավել ծանր հետևանք:
12. 1613 թ. ընտրված ցար Միխայիլ Ռոմանովը XVII դ. սկզբի ռուսական քաղաքական իրականության մեջ փորձառու, արժանավոր, վառ կերպար չէր: Ինչո՞վ կարելի է բացատրել այն փաստը, որ հենց նրա օրոք հաջողվեց հաղթահարել Խառնակությունը:

ԳԼՈՒԽ 6. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

§ 28. Ռուսաստանի սոցիալական և քաղաքական զարգացման հիմնական միտումները

XVII դ. Ռուսաստանի տնտեսությունը: XVII դարը Ռուսաստանում սկսվեց երկարատև և արյունահեղ Խառնակությամբ, որին հաջորդեց քաղաքացիական պատերազմի ծանր հետևանքների հաղթահարման երկար գործընթաց: Երկիրը կորցրեց բնակչության մոտ 20 տոկոսը, ինչպես նաև զգալի տարածքներ արևմտյան և հյուսիս-արևմտյան սահմաններում: Հաջորդող տասնամյակների ընթացքում կառավարությունն աշխատում էր հաղթահարել տնտեսական ճգնաժամը և վերականգնել պետության ներքին կառուցվածքները: Հատկապես բարդ էր հարկահավաքի համակարգի վերականգնումը: Տնտեսական և ժողովրդագրական իրական պատկերը պարզելու համար իշխանությունները ստիպված էին կազմակերպել յուրատեսակ «պարեկային ստուգումներ»՝ տեղերում վիճակը գնահատելու նպատակով: Ստացված տվյալների հիման վրա աշխատող բնակչության հարկային բեռը երբեմն ժամանակավորապես թեթևացվում էր, իսկ որոշ դեպքերում՝ ծանրանում:

Մարդկային կորուստները վերականգվեցին միայն XVII դ. կեսերին, երբ բնակչությունն աճեց, և տնտեսությունը զարգացավ: Ինչպես և նախկինում, Ռուսաստանի տնտեսության հիմքում գյուղացիական տնտեսությունն էր: Արդյունաբերությունը ևս առաջվանն էր (աղի արդյունահանություն, սև մետալուրգիա, կաշվի, հյուսնի, մանածագործական, ոսկերչական գործ) և հիմնականում կենտրոնացած էր խոշոր քաղաքներում՝ Մոսկվայում, Յարոսլավլում, Նիժնի Նովգորոդում, Կազանում, Վոլոգդայում, Վելիկի Նովգորոդում և Պսկովում:

Գործվածքի արտադրությունը Ռուսաստանում դեռ նոր էր ձևավորվում: XVII դարում ամբողջ երկրում գործում էր ընդամենը կտորեղենի 60 արտադրական ձեռնարկություն: Դրանցից առավել աչքի ընկնողները հիմնադրվել էին արտասահմանցի գործարարների կողմից՝ ցարական կառավարության աջակցությամբ: Դարավերջին այդ ձեռնարկությունների միայն կեսն էր պահպանվել: Ռուսաստանի առաջին արտադրական կենտրոններից էին երկաթագործական գործարանները, որոնք հիմնվել էին 1630-ական թվականներին Տուլայի շրջակայքում հոլանդացի վաճառականներ Ա. Վինիուսի, Պ. Մարսելիսի և Ֆ. Ակեմի կողմից:

Չնայած նրան, որ երկրի բնակչության մեծ մասը շարունակում էր ապրել բնամթերային տնտեսությամբ՝ ինքնուրույն արտադրելով կենսական անհրաժեշտության բոլոր միջոցները, ցարական գանձապետական քաղաքականությունը հարկային պարտավորությունները կապում էր դրամական վճարումների հետ: Սա ստիպում էր նույնիսկ գյուղացիությանը ներգրավվել առևտրային հարաբերություններում:

Ինչպես XVI դարում, այդպես էլ XVII-ում, երկրի առևտրի հիմնական ուղիները գետային ճանապարհներն էին: Վոլգա գետը կարևոր դեր ուներ՝ հնարավորություն տալով առևտուր անել Արևելքի ժողովուրդների և երկրների հետ: Գետային ճանապարհների այս համակարգը երկրի կենտրոնը կապում էր Արխանգելսկի նավահանգստին, որը Ռուսաստանի հիմնական ելքն էր դեպի Արևմտյան Եվրոպայի առևտրային շուկաներ:

XVII դարում Ռուսաստանի տնտեսական և առևտրային կյանքում զգալի դեր ունեցավ Սիբիրը, որն ընդգրկված էր պետության կազմում և հայտնի էր բարձրորակ մորթեղենի ու մուշտակի արտահանմամբ: Սիբիրի պաշարները կարևոր ներգործություն ունեցան պետության գանձարանի համալրման գործում: Տնտեսության համար մեծ նշանակություն ունեին ամենամյա տոնավաճառները: Համեմատաբար խոշոր տոնավաճառներ էին գործում Բրյանսկի և Նիժնի Նովգորոդի մերձակայքում, ինչպես նաև Տիխվինում և Իրբիտում: Միջազգային առևտրի խոշոր կենտրոններ էին Արխանգելսկն ու Աստրախանը, որոնք կապում էին Ռուսաստանը արևմտյան և արևելյան շուկաների հետ:

XVII դարի կեսերին ցարական կառավարությունը որդեգրեց տնտեսական նոր քաղաքականություն՝ հովանավորչություն (պրոտեկցիոնիզմ), որի նպատակը հայրենական վաճառականների պաշտպանությունն էր օտարերկրյա մրցակիցներից՝ հատկապես արևմտաեվրոպացի վաճառականներից (անգլիացիներից և հոլանդացիներից): Արտասահմանցի վաճառականների իրավունքներն ու արտոնությունները սահմանափակվեցին 1667 թվականին ընդունված Նոր առևտրային կանոնադրությամբ, որը ռուսական տնտեսական ինքնիշխանության կարևոր քայլերից մեկն էր:

Քաղաքական կարգի էվոլյուցիան: Խառնակությունից հետո առաջնային խնդիրներից էր կենտրոնական իշխանության խարխլված հեղինակության վերականգնումը: Այդ բարդ ու պատասխանատու գործը դրվեց նորաստեղծ Ռոմանովների դինաստիայի առաջին ցարերի ուսերին: Դինաստիայի հիմնադիրը՝ Միխայիլ Ֆեոդորովիչը (1613–1645), գահին բարձրացավ ընդամենը 16 տարեկանում՝ չունենալով ոչ պետական կառավարման փորձ, ոչ էլ համապատասխան կրթություն: Նրա իշխանության տարիները նշանավորվեցին կայունության աստիճանական վերականգնմամբ, քանի որ նա հետևում էր փորձառու բոյարների խորհուրդներին:

Ի տարբերություն հոր՝ Միխայիլի որդուն, Ալեքսեյ Միխայլովիչին (1645–1676) արդեն նպատակաուղղված պատրաստում էին որպես ապագա ինքնակալի: Սակայն նա ևս գահին նստեց 16 տարեկանում՝ դեռևս երիտասարդ և անփորձ լինելով: Դինաստիայի երրորդ ներկայացուցիչը՝ Ֆեոդոր Ալեքսեևիչը (1676–1682), դարձավ ցար՝ նույնիսկ 15 տարին չլրացած:

Այդ պատճառով նոր դինաստիայի առաջին ցարերը ստիպված էին հենվել իրենց շրջապատի փորձառու մարդկանց վրա, որոնց փորձն ու գիտելիքները, համադրվելով ինքնակալների խառնվածքի առանձնահատկություններին, ձևավորում էին նրանց կառավարման քաղաքական ոճը: Սակայն դա չէր նշանակում Ռոմանովների առաջին ցարերի իշխանության սահմանափակում. ոչ մի իրավական ակտ չէր



Ալեքսեյ Միխայլովիչ, մանրանկար տիտղոսաթերթից, XVII դար

կարգավորում նրանց իշխանության սահմանները։ Ինքնակալությանը հակակշիռ չէին ոչ Բոյարական դուման, ոչ եկեղեցին, և ոչ էլ զեմստվոյական ժողովները։

XVII դարում Բոյարական դումայի կազմը էականորեն թարմացվեց։ Դրանից աստիճանաբար դուրս մղվեցին ազնվականության հետ սերտ կապեր ունեցող ներկայացուցիչները (իշխաններ Մստիսլավսկիներ, Շույսկիներ, Վորոտինսկիներ), որոնց տեղը զբաղեցրին ցարական ընտանիքի կանանց ազգականները՝ Ստրեշնևները, Միլոսլավսկիները, Նարիշկինները։ Վերջիններս ազնվական կամ մեծատոհմիկ չէին համարվում և ամբողջությամբ կախված էին ցարի դիրքորոշումից։ Բոյարական ազդեցությունը թուլացնելու բացահայտ քայլ էր 1682 թվականին տեղակարգության (местничество) չեղարկումը։ Այս սկզբունքը վերջին երկու հարյուրամյակների ընթացքում միապետներին ուղղորդում էր զինվորական կամ վարչական պաշտոնների նշանակման ժամանակ՝ հիմնվելով անձանց ազնվական ծագման վրա՝ այդ կերպ փորձելով հարթել նրանց միջև եղած անխուսափելի հակասությունները։


Ավելի նվազ չափով էին ցարերի ինքնակալական իշխանությունը սահմանափակում զեմստվոյական ժողովները։ Դրանք անկանոն էին հավաքվում և ունեին խորհրդակցական գործառույթ։ Իհարկե, նրանք երբեմն ակտիվորեն մասնակցում էին պետական գործերին (մասնավորապես՝ 1649 թ. համաժողովում մշակել էին օրենսգրքի տեքստը), բայց արդեն XVII դ. կեսերին համաժողովներ հրավիրելու պրակտիկան դադարեց (զեմստվոյական վերջին համաժողովը լրիվ կազմով տեղի է ունեցել 1653 թ.)։ Եկեղեցին ևս չկարողացավ դառնալ ցարական իշխանության մրցակիցը, քանի որ այն թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսանկյուններից ամբողջովին կախված էր աշխարհիկ իշխանությունից։ Ֆիլարետ (1619-1633) և Նիկոն (1652-1658) պատրիարքների հատուկ դիրքերը պայմանավորված էին ոչ թե եկեղեցու ուժեղացմամբ, այլ նրանց անձնական քաղաքական կշռով (նրանցից առաջինը Միխայիլ Ֆեոդորովիչ ցարի հայրն էր, երկրորդը՝ երիտասարդ ցար Ալեքսեյ Միխայլովիչի «մտերիմ ընկերը»)։

XVII դարում Ռուսաստանում բացակայում էին քաղաքական կամ հասարակական այն ինստիտուտները, որոնք կարող էին սահմանափակել ցարի իշխանությունը։ Այդ պայմաններում հատկապես ամրապնդվեցին աբսոլյուտիզմի երկու հիմնական հենարանը՝ բանակը և չինովնիկական ապարատը (աստիճանավորները)։ Բանակի ուժեղացումն ուղեկցվում էր կենտրոնական կառավարման մարմինների համակարգի ընդլայնմամբ։ Գործում էին մոտ երեք տասնյակ մշտական և մի շարք ժամանակավոր

(դյուժիններով) կառույցներ, որոնք ղեկավարվում էին թե՛ ոլորտային և թե՛ տարածքային սկզբունքներով: Միաժամանակ աճում էր գերատեսչական աշխատակիցների՝ գործավարների, քարտուղարների և գրասենյակային այլ ծառայողների թիվը: Նրանց բարեկեցությունը լիովին կախված էր պետական պարգևներից, ինչը նրանց առավել կախյալ էր դարձնում միապետական իշխանությունից և ավելի մերձեցնում ցարական ապարատին:

1630 թվականին սկսվեց երկրի զինված ուժերի աստիճանական վերակազմավորումը: Ռուսական բանակում ստեղծվեցին այսպես կոչված «նոր կառուցվածքի» գնդեր, որոնք զինվում և պատրաստվում էին եվրոպական ձևաչափով: Դրանք հետևակային զորամասերի, դրագունների, վարձկան հեծյալների (рейтары) և հուսարների զորախմբեր էին: Դարավերջին այս զորախմբերը զգալիորեն «նեղացրել» էին տեղական՝ ավանդական հեծելազորի և նշանաձիգների դիրքերը: Նոր կառուցվածքի գնդերի պահման ծախսերը ամբողջությամբ հոգում էր պետական գանձարանը: Այս զորախմբերը աչքի էին ընկնում իրենց կանոնավոր կազմակերպվածությամբ և կարգապահությամբ: Միապետը կարող էր նրանց օգտագործել ոչ միայն արտաքին քաղաքական խնդիրների լուծման նպատակով, այլև երկրի ներսում հասարակական անհնազանդություններն ու հակամարտությունները ճնշելու համար:

Ճորտատիրական իրավունքի ձևավորումը: XVII դ. երկրորդ կեսի ժողովրդական շարժումը: XVII դարում սոցիալական պայթյունները Ռուսաստանում բավականին հաճախադեպ էին, և պատահական չէ, որ դինաստիայի երկրորդ ցարի երկարատև կառավարումը թե՛ ժամանակակիցների և թե՛ հետագա պատմաբանների կողմից արժանացավ «խռովությունների դար» անվանմանը: Ամենալուրջ խնդիրներից մեկը հարկատու դասի՝ հատկապես գյուղացիության ճորտացումն էր: Դարի սկզբին բռնկված քաղաքացիական պատերազմը, որը սրվեց նաև կառավարության կողմից ճորտացման քաղաքականության ակտիվացման հետևանքով, չհանգեցրեց խնդիրների լուծմանը: Արդեն 1610-ական թվականներից Միխայիլ Ֆեոդորովիչի կառավարությունը շարունակեց Խառնակ ժամանակների ընթացքում ձևավորված ազատ կազակության ներառումը կայսրության սոցիալական կառուցվածքի մեջ: Կազակների վերնախավը պետությունից ստանում էր կալվածքներ (поместья) և հայրենաժառանգ հողեր (вотчины)՝ ընդգրկվելով գավառական ազնվականության շարքերը, իսկ շարքային կազակները ծառայության էին ընդունվում հիմնականում կայազորերում: Միաժամանակ, շատ կազակներ, որոնք նախկինում ճորտ կամ գյուղացի էին եղել, վերադառնում էին իրենց նախկին տերերի մոտ կամ դառնում նոր կալվածատերերի ճորտեր: Պետությունը, հաղթահարելով դարասկզբի ճգնաժամերը, ձեռնարկեց քայլեր՝ խստացնելու վերահսկողությունը գյուղացիության տեղաշարժերի նկատմամբ: Եթե նախկինում փախած գյուղացուն կարելի էր հետապնդել հինգ տարի, ապա 1637 թվականին սահմանվեց իննամյա հետախուզման ժամկետ: 1642 թվականին այս ժամկետը դարձավ տասնամյա, իսկ այն դեպքերում, երբ ճորտին բռնի էին տեղափոխել այլ կալվածատիրոջ մոտ՝ 15 տարի: Սրան զուգահեռ խստացվեց նաև հարկատու քաղաքային բնակչության նկատմամբ հսկողությունը: Արգելվում էր ոչ միայն տեղափոխվել մեկ քաղաքից մյուսը, այլև նույն բնակավայրի ներսում փոփոխել սոցիալական կարգավիճակը:



Օրենքների ժողովածու, 1649 թ.

Շատ քաղաքացիներ, չդիմանալով հարկային ծանր բեռին, ստիպված էին իրենց գրավադրել բոյարների կամ խոշոր կալվածատերերի մոտ՝ դառնալով նրանցից կախյալ անձինք:

Գյուղացիների փախուստները կալվածատերերի տիրույթներից աղքատացնում էին վերջիններիս, և նրանք կառավարությունից պահանջում էին էլ ավելի խստացնել ճորտացման քաղաքականությունը: Քաղաքացիների ազատ տեղաշարժը նույնպես խնդիր էր առաջացնում՝ ծանրացնելով մնացած հարկատուների բեռը: 1646 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարի կառավարությունը փորձեց համալրել պետական գանձարանը՝ մանր հարկերը միավորելով մեկ խոշոր հարկի՝ աղի հարկի տեսքով: Սակայն այս քայլը զգալիորեն վատթարացրեց բնակչության նյութական վիճակը: Վարչական այս քաղաքականությունը զուգակցվում էր ցարի մերձավորների՝ պալատական գանձարանի անզուսպ թալանի հետ: 1648 թվականին Մոսկվայում սկսվեց լայնածավալ ժողովրդական ապստամբություն, որը պատմության մեջ հայտնի է որպես «Աղի խռովություն»: Ապստամբությունները տարածվեցին ամբողջ երկրով մեկ՝ հատկապես երկրի հյուսիսային քաղաքներում, որտեղ ակտիվ էր հարկատու քաղաքացին, և հարավային շրջաններում, որտեղ հիմնական ուժը կազմում էին ծառայողները: Սարսափած այս զարգացումներից՝ Ալեքսեյ Միխայլովիչը ստիպված եղավ որոշ զիջումների գնալ: Ապստամբներին թույլատրվեց հաշվեհարդար տեսնել իրենց ատելի պաշտոնյաների հետ: Բացի այդ, ցարը հրավիրեց զեմստվոյական ժողով՝ օրենքների նոր ժողովածու (Սոբորնոյե Ուլոժենիե) ստեղծելու նպատակով:

1649 թվականին ստեղծված հատուկ հանձնաժողովը կազմեց, իսկ զեմստվոյական ժողովը հաստատեց «Օրենքների ժողովածուի» (Соборное уложение) տեքստը, որն առաջիկա երկու հարյուրամյակների ընթացքում դարձավ ռուսական օրենսդրության հիմքը: Նախորդ տարվա՝ 1648 թ. Աղի խռովությանը ակտիվ մասնակցած սոցիալական տարբեր շերտերի պահանջները մասնակիորեն հաշվի առնվեցին: Հարկատու բնակչության ճնշող մասի պահանջով վերացվեցին արտոնյալ՝ ազատաբնակների ավանները, իսկ ազնվական դասը հասավ գյուղացիության վերջնական ճորտացմանը: Նոր օրենսգրքով փախած գյուղացիների նկատմամբ սահմանվեց անժամկետ հետախուզում, իսկ ճորտական կարգավիճակը ճանաչվեց ժառանգական: Սա իրավական առումով ամրագրեց Ռուսաստանում ճորտատիրական կարգի ամբողջական հաստատումը: 1675 թվականին կալվածատերերին թույլատրվեց գյուղացիներին վաճառել առանց հողի, ինչը գյուղացիության զգալի մասին վերածեց «կենդանի ապրանքի»:

Չնայած «Օրենքների ժողովածուի» ընդունմանը, սոցիալական լարվածությունը երկրում չմարեց: Արդեն 1650 թվականին Ռուսաստանի հյուսիսարևմտյան խոշոր



Պղնձյա խռովությունը Կոլոմենսկում: Նկարիչ՝ Է.Է. Լիսսներ

քաղաքներում՝ Վելիկի Նովգորոդում և Պսկովում, բռնկվեցին ժողովրդական հուժկու ընդվզումներ: Հատկապես Պսկովում ապստամբները, անտեսելով ցարի հրամանագրերը, համառություն հանդես բերեցին, և Ալեքսեյ Միխայլովիչը պսկովյան խռովությունը ճնշելու համար ստիպված եղավ զորք ուղարկել:

Պետական դրամավարկային քաղաքականության ձախողումները հետագա տարիներին ևս շարունակեցին դժգոհություններ առաջացնել: 1662 թվականին դրանց հետևանքով Մոսկվայում բռնկվեց հերթական խոշոր ապստամբությունը՝ հայտնի որպես «Պղնձյա խռովություն» (Медный бунт):

Ռեչ Պոսպոլիտայի հետ սկսված պատերազմի խորապատկերում ցար Ալեքսեյ Միխայլովիչի կառավարությունը 1654 թ. հավանություն տվեց դրոշմահատել ավելի էժան պղնձե մետաղադրամներ՝ աստիճանաբար շրջանառությունից հանելով նախկին արծաթե դրամները: Արծաթե և պղնձե դրամների նոմինալ հավասարությունը պահպանել չհաջողվեց, մանավանդ որ բնակչությունից հարկը պահանջում-վերցնում էին արծաթե դրամով, իսկ ծառայողներին պետական գանձարանից վճարում էին պղնձյա դրամներով: Դրամական փոփոխություններին չնպաստեցին նաև լայնորեն տարածված դրամանենգությունը (կեղծ դրամների առկայությունը) և անսահմանափակ, առանց հսկողության պղնձյա դրամի հատումը Դրամահատարանի կողմից՝ ցարի աներոջ՝ բոյար Ի. Դ. Միլոսլավսկու անձնական կարիքների համար: 1662 թ. ամռանը մոսկվացիների բազմահազար ամբոխը ներխուժեց ցարի՝ Կոլոմենսկում գտնվող ամառանոցային նստավայրը՝ պահանջելով փոխել պղնձյա դրամները: Թեև խռովարարների նկատմամբ դաժան հաշվեհարդար տեսան, բայց Ալեքսեյ Միխայլովիչը ստիպված էր կատարել նրանց գլխավոր պահանջը. 1663 թ. պղնձյա դրամները դուրս բերվեցին շրջանառությունից:



Ստեփան Ռազին։ Փորագրանկար, XVII դար

XVII դ. երկրորդ կեսի ամենազանգվածային բողոքը Ռուսաստանում եղավ Դոնի կազակ, ատաման Ստեփան Ռազինի գլխավորությամբ։ Դոնի ստորին հոսանքի հողատարածքներում բնակվող փոքրաթիվ կազակությունը լոկ անվանապես էր ենթարկվում Մոսկվայի միապետին։ Իշխանության կողմից որպես փոխհատուցում կանոնավոր տրվող պարգևավճարի՝ փողի, հացի, աղի, մահուդի, զենքի դիմաց Դոնի կազակությունը (հիմնականում Ռուսաստանից Դոն փախած գյուղացիներ, ճորտեր և նրանց ժառանգները), սահմանային ծառայություն էր իրականացնում՝ պաշտպանելով Ռուսաստանի ներքին գավառները տափաստանային քոչվոր ժողովուրդների հարձակումներից։

Կազակները հաճախ կազմակերպում էին արշավանքներ, որ իրականացնում էին իբրև թե «գյուղացիների կապայաձև հագուստների համար» («походы за зипунами»), սակայն ըստ էության դրանք թալանչիական, ավարառու հարձակումներ էին հարևան պետությունների՝ Ղրիմի, Թուրքիայի, Պարսկաստանի վրա։ Երբեմն էլ ավազակային ասպատակություններ էին լինում Վոլգա գետի ստորին հոսանքում բնակվողների նկատմամբ։ Կազակները հրաժարվում էին իրենց մոտ փախած գյուղացիներին հանձնել ռուսական իշխանություններին՝ հղում անելով Մոսկվայի չվիճարկվող սկզբունքին՝ «Դոնից ոչ ոքի չեն հանձնում»։ Ռուսաստանում ճորտատիրական կարգերի վերջնական հաստատումից հետո դեպի Դոն փախչող գյուղացիների հոսքը կտրուկ մեծացավ, ինչը լուրջ հակասություններ առաջացրեց մի կողմից ցարական կառավարության և Դոնի կազակության միջև, մյուս կողմից՝ հին տնակյաց («домовит») կազակների և նոր՝ աղքատացած («голутвенный») կազակների միջև։ Աղքատ կազակները ատաման ընտրեցին Ստեփան Ռազինին, որն 1667-1669 թվականներին առաջնորդեց «Կապայաձև հագուստների համար» անվանմամբ հայտնի դարձած արշավը։ Այս արշավախումբը թալանեց մի քանի առևտրական քարավաններ Վոլգա գետի վրա, գրավեց ռուսական սահմանային Յաիկ գետի ստորին հոսանքում գտնվող ամրոց-քաղաք Յաիցկին, ավերեց Պարսկաստանի որոշ տարածքներ, ապա անպատիժ վերադարձավ Դոն։

1670 թ. Ռազինը կազակներին տարավ արդեն ռուսական տարածքներ՝ օգտագործելով ժողովրդականություն վայելող հակաբոյարական տրամադրությունները և իրեն միացած գյուղացիներին խոստանալով ազատագրել ճորտական կամայականություններից։ Կես տարվա ընթացքում (1670 թ. գարնանից աշուն) Ռազինի կողմնակիցներին հաջողությունն էր ուղեկցում. նրանք կարողացան գրավել քաղաք-ամրոցներ Ցարիցինը, Աստրախանը, Սարատովը, Սամարան։ Ապստամբները գործում էին նաև Սևերսկի Դոնեց գետի ավազանում։

Սիմբիրսկում ցարական զորքերի կողմից ապստամբների ջախջախումը դարձավ բեկումնային իրադարձություն։ Ապստամբությունից հետո «տնակյաց» կազակները

Դոնի շրջանում գերի վերցրին Ստեփան Ռազինին և նրան հանձնեցին Մոսկվային: Ապստամբության ճնշման գործընթացը ուղեկցվում էր ապստամբների նկատմամբ խիստ հաշվեհարդարներով: Ապստամբության վերջին օջախները ոչնչացվեցին 1672 թվականին: Ռազինյան ապստամբության հետևանքը եղավ ցարական կառավարության հսկողության ուժեղացումը Դոնի քաղաքների նկատմամբ:

§ 29. Պետությունը և եկեղեցին

«Հոգևորականությունը» և «ցարականությունը» XVII դարում: «Խռովությունների դարի» սոցիալական սուր վիճակը բարդանում էր ռուսական ուղղափառ եկեղեցու՝ պատմության մեջ խոշոր հակամարտությամբ, որը պառակտեց եկեղեցին: Ռուսական պետության մեջ եկեղեցին, լինելով ամենահարուստ և ազդեցիկ կառույցներից մեկը, այնուամենայնիվ, ամբողջովին կախված էր աշխարհիկ իշխանությունից: Վերջինս, գիտակցելով հոգևորականության ունեցած ազդեցությունը մարդկանց վրա, եկեղեցական ունեցվածքի նկատմամբ ոտնձգություն չէր անում:

Ռուսական ուղղափառ եկեղեցու դիրքերը ամրապնդվեցին պատրիարք Ֆիլարետ Նիկիտիչի ժամանակ: Այդ շրջանը երբեմն անվանում են որպես յուրօրինակ «երկիշխանության» ժամանակներ, երբ հայր-պատրիարքը և նրա որդի-ցարը ռուսական պետությունը համատեղ էին ղեկավարում: Դա արտահայտվում էր այդ տարիների ցարի հրամանագրերում, որոնցում, ոչ հազվադեպ, գրվում էր՝ «անունից միապետի և սրբազան պատրիարքի»: Այդպիսի դեպքերում ցարի անունը գրվում էր առաջինը, թեև, ըստ ժամանակակիցների, կառավարող «տանդեմում» իրական առաջնորդությունը պատկանում էր պատրիարքին, որի «տնաշեն» ոգով դաստիարակված որդի-միապետը անառարկելիորեն ենթարկվում էր նրան: Պատրիարք Ֆիլարետը ստեղծեց սեփական ապարանք-գավիթը՝ միապետի արքունիքի նմանությամբ. պատրիարքական պալատի վարչական պահանջները սպասարկվում էին պատրիարքական հրամաններով: Հետազոտողները հենց Ֆիլարետին են համարում այդ ժամանակվա Ռուսական պետության արտաքին քաղաքականության ոգեշնչողը: Մասնավորապես՝ կարծում են, որ նա էր Սմոլենսկյան պատերազմը սկսելու նախաձեռնողը: Եկեղեցու առաջնորդի հատուկ կարգավիճակը, ի դեպ, պայմանավորված էր իրավիճակի եզակիությամբ, երբ կառավարող միապետը պատրիարքական գահը զբաղեցնողի որդին էր: Պատրիարք Ֆիլարետի մահից հետո աշխարհիկ և հոգևոր իշխանությունները վերադարձան իրենց ավանդական վիճակին:

Մյուս պատրիարքի՝ Նիկոնի հատուկ դիրքը և ազդեցությունը չի կարելի բացատրել նրա՝ ցարական ընտանիքի հետ ունեցած կապերով: Եկեղեցու ապագա գլխավորը ծնվել էր Նիժեգորոդյան գյուղացու ընտանիքում, և ստորակարգության սանդուղքով (հիերարխիա) դեպի վեր բարձրանալուն նպաստել էին նրա անձնական նպատակամղվածությունը, կամային խառնվածքը և կարդացած լինելը: 40 տարեկանում դառնալով Ռուսիայում առավել հարգված մենաստաններից մեկի՝ Սոլովեցկյան

մենաստանի վանահայր՝ Նիկոնը գրավեց ցար Ալեքսեյ Միխայլովիչի ուշադրությունը և շուտով ձեռնադրվեց Նովգորոդի մետրոպոլիտ, իսկ հետո՝ նաև համայն Ռուսիայի և Մոսկվայի պատրիարք։

Ցարը որոշ ժամանակ գտնվում էր այդ արտասովոր անձի հսկայական ազդեցության ներքո. նրան համարում էր «իր յուրահատուկ ընկերը» և անփոփոխ կերպով լսում էր Նիկոնին։ Ժամանակակիցները պնդում էին, որ որևէ հարցում ցարի դրական պատասխանը ստանալու ամենաարագ միջոցը պատրիարքին խնդրագիր տալն էր՝ շրջանցելով պաշտոնական ներկայացուցիչներին։ 1654 թ. Ալեքսեյ Միխայլովիչը Սմոլենսկ գնալիս Մոսկվան հանձնեց Նիկոնի հսկողությանը։ Սոցիալական ցածր դասից բարձրանալով և փաստորեն դառնալով պետության երկրորդ դեմքը՝ պատրիարքը այն միտքը հայտնեց, որ մարդկային հոգու փրկության համար աշխատող ու պայքարող հոգևոր իշխանությունն ավելի բարձր է կանգնած աշխարհիկից, որն ապահովում է սոսկ եղծ և մահկանացու մարմինը։ Նիկոնի կարծիքով որքան արևը բարձր է գտնվում լուսնից, այդքանով էլ բարձր պետք է լինի հոգևորականությունը աշխարհիկ իշխանությունից։

Դեռևս Նովգորոդի մետրոպոլիտ եղած ժամանակ Նիկոնը ցարին ստիպեց անհապաղ քայլ անել. Սոլովկիից Մոսկվա բերեցին օպրիչնիկների ձեռքով սպանված Մոսկվայի մետրոպոլիտ Ֆիլիպի (Կոլիչև) մասունքները, իսկ ցար Ալեքսեյն իր «նախապապ» Իվան Ահեղի անունից ներողություն խնդրեց հանգուցյալ հոգևորականից՝ նրա «չմտածված նախանձի և անզուսպ կատաղության համար»։ Սակայն ցարը հասունանալով սկսեց չընդունել պատրիարքի հայացքները՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունների մասին, ավելի շատ սկսեց նեղվել Նիկոնի խնամակալությունից, և 1658 թ. նրանց անհամաձայնությունը դարձավ հրապարակային հակամարտություն։ Նիկոնը վայր դրեց պատրիարքական աստիճանը, սակայն սխալվեց իր սպասելիքում. սովորաբար բռնկուն, բայց հեշտ հանդարտվող, անչար ցար Ալեքսեյ Միխայլովիչը նրան չխնդրեց վերադառնալ մայր տաճար։ Նիկոնը հեռացավ իր կառուցած Նորերուսաղեմյան հարության մենաստանը, և իր հաջորդին պատրիարքական տաճարում հրաժարվեց օրհնելուց։

1666–1667 թթ. միայն Մոսկվայում հավաքված տիեզերական պատրիարքների մասնակցությամբ եկեղեցական ժողովը վերջնականորեն զրկեց Նիկոնին պատրիարքական աստիճանից։ Նախկին պատրիարքը կյանքի վերջին տարիներն անցկացրեց աքսորում, և միայն վախճանից առաջ ցար Ֆեոդոր Ալեքսեևիչի կամքով նրան վերադարձրին իր եկեղեցական աստիճանը։ Այդ նպատակով Մոսկվա գնալու ճանապարհին Նիկոնը վախճանվեց։

Ռուս ուղղափառ եկեղեցու պառակտումը։ Մայր տաճարը հաստատեց Նիկոնի անունով արված եկեղեցական նորամուծությունները, որոնք բերեցին ռուս ուղղափառ եկեղեցու պառակտմանը։ Բարերարության նպատակով Ռուսիա եկող արտասահմանյան (հիմնականում հունական) եկեղեցական աստիճանավորները քանիցս մատնանշում էին ռուսական և հունական եկեղեցական արարողությունների որոշ տարբերություններ։ Ալեքսեյ Միխայլովիչի օրոք այդ երկրորդական հարցերը հատուկ

հնչեղություն ստացան: Երիտասարդ ցարն իրեն տեսնում էր միակ ինքնիշխան ուղղափառ միապետը և հովանավորը բոլոր ուղղափառների, որոնք, հնարավոր է, առաջիկայում միավորվեին իր գայիսոնի ներքո: Հետևաբար բոլոր ուղղափառներին պետք է միավորեն նաև եկեղեցական միանման արարողությունները: Ցարի շուրջը ստեղծված խմբակում, որ կոչվում էր «Հնագույն բարեպաշտության նախանձախնդիրներ», միանման արարողությունների հարցում կարծիքները բաժանվեցին: Ցարն ինքը և նրա «հատուկ ընկեր» Նիկոնը ճիշտ էին համարում հունական արարողությունները, իսկ ահա ավագ քահանա Ավվակում Պետրովը և նրա կողմնակիցները հանդես եկան՝ ի պաշտպանություն ռուսական ծեսերի պահպանման:

Դառնալով պատրիարք և հենվելով ցարի հովանավորության վրա՝ 1653 թ. Նիկոնը սկսեց վերափոխել եկեղեցական կանոնները: Դրանցից առավել կարևորներն էին երկմատնյա խաչակնքումը եռամատնյա խորհրդանիշով, ութ վերջավորություն ունեցող ռուսական խաչը հունական վեց վերջավորությամբ խաչով փոխարինելը, աղոթքի վերջում երկու անգամվա փոխարեն երեք անգամ «ալելուիա» ասելը, «նոր գրքի» սրբապատկերների ոչնչացումը, աղոթագրքերում և եկեղեցական սպասարկման ժամանակ Հիսուս անվան փոփոխությունը. ռուսերեն «Исус» անվանումը դարձրին հունական հնչողության՝ «Иисус»:

Եկեղեցական կյանքում եղած փոփոխությունները հավատացյալ ժողովրդի մեջ հուզումներ առաջացրին: Բոլորը չէին, որ ընդունում էին եկեղեցական աստիճանավորների և աշխարհիկ իշխանության հաստատած նորամուծությունները: Պառակտում եղավ անգամ ցարի ընտանիքում: Ընտանիքի անդամների մի մասը շարունակում էր առաջնորդվել հին ծեսերով: Եկեղեցական բարեփոխության հակառակորդները՝ հնաձիսականները, կատարվածում տեսնում էին աշխարհի վերջին մոտ լինելու նշանները, իսկ ցարին և պատրիարքին համարում էին երկու պոզերով սատանա, հակաքրիստոս: Հնաձիսականների կամ հնադավանների գաղափարական առաջնորդը՝ ավագ քահանա Ավվակում Պետրովը, որը հրապարակայնորեն հանդես եկավ ծեսերի փոփոխման դեմ, 1653 թ. աքսորվեց Սիբիր:

Աքսորից Մոսկվա վերադառնալով՝ նա պաշտպանում էր իր հայացքները, որի պատճառով կրկին աքսորվեց, այս անգամ՝ Պուստոզերսկ: Սակայն երկրորդ աքսորն էլ չկոտրեց «խելահեղ ավագ քահանային». անգամ հողապատ բանտից նա շարունակում էր իր ուղերձներով աջակցել համախոհներին և մերկացնել «նիկոնովյան հերետիկոսության» հետևորդներին մինչև 1682թ., երբ նրան Ֆեոդոր Ալեքսեևիչ ցարի հրամանագրով այրեցին: Եկեղեցական ոլորտում նորամուծություններից դժգոհ բնակչության մեծ մասը գերադասեց բողոքի պասիվ ձևը, այսինքն՝ խուսափում էին տաճար մտնելուց («նիկոնովյան տիկնիկախաղից»), կիրառում էին գաղտնի վերամկրտություններ և վերապսակումներ այն հոգևորականների միջոցով, որոնք նվիրված էին հին ծեսերին, արարողություններին: Քանի որ հնաձիսականների նկատմամբ ուժեղանում էր ճնշումը, վերջինները սկսում էին հոգու փրկություն փնտրել՝ գնալով Ռուսաստանի քիչ բնակեցված հողերը, իսկ հաճախ էլ դուրս գալով երկրի սահմաններից: Հնաձիսականների մեծ խտությամբ համայնքներ կային Ռուսաստանի հյուսիսում, Պովոլ-

ժիեում և Սիբիրում: Նրանք քիչ չէին նաև Դոնի կազակների շրջանում: Նոր վայրեր տեղափոխվելով՝ հնածիսականները հիմնում էին սեփական բնակավայր-ճգնարաններ, որոնք երկար ժամանակ ծառայել են որպես իրենց փրկության վայրեր՝ կրոնական հալածանքներից հեռու: Սիբիրում գտնվող որոշ այդպիսի ճգնարանային բնակավայրերում նրանք ապրել են՝ արտաքին աշխարհից ամբողջությամբ մեկուսացած, և այդ մեկուսացումը երբեմն շարունակվել է մինչև XX դարը: Ժամանակի ընթացքում այդ փակ համայնքներից մի քանիսը, զրկվելով գրագետ հոգևորականներից և ավանդական ուղղափառ հավատը սպասարկող՝ ուղղումներից զերծ գրքերից, աստիճանաբար վերափոխվել են տարբեր աղանդների: Այդ աղանդների առաջնորդները յուրատիպ ձևով են մեկնաբանել քրիստոնեական դավանության հիմնադրույթները՝ ձևավորելով կրոնական ինքնատիպ հոսանքներ:

XVII դ. վերջը նշանավորվեց բազմաթիվ ինքնահրկիզումներով: Ցարական զինվորական ջոկատները մեկուսացված բնակավայր-ճգնարաններում հայտնաբերել են բնակիչների, որոնք հանուն իսկական հավատի գերադասել են «կրակի կարճատև տանջանքները»: Ըստ որոշ տվյալների՝ այդպիսի հրկիզումների զոհ են դարձել մինչև 20 հազար մարդ: Երբեմն եկեղեցական նորամուծությունների դեմ բողոքները եղել են ակտիվ ձևով. Սոլովեցկյան մենաստանի վանականները 1668 թ. կտրականապես հրաժարվեցին նոր ծեսերը ընդունելուց և մենաստանի ամուր պատերի, մթերքի պահեստավորման և կենտրոնից հետու գտնվելու շնորհիվ՝ 8 տարվա ընթացքում պաշտպանվում էին ցարական ջոկատների պաշարման դեմ, որոնք մեծ դժվարությամբ տիրեցին մենաստանին: Եվ թեև Ռուսաստանի բնակչության մեծ մասը ընդունեց եկեղեցական բարեփոխումները, հնածիսականների պայքարը այդպես էլ չկոտրեցին:

§ 30. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը

Միջազգային ասպարեզում դիրքի վերականգնման փորձերը: Երկրի առաջ կանգնած էին արտաքին քաղաքական սուր խնդիրներ հատկապես Շվեդիայի, Ռեչ Պոսպոլիտայի և Ղրիմի խանության հետ հարաբերություններում: Ղրիմի թաթարները շարունակում էին ասպատակել ռուսական հողերը: Եվ որպեսզի ռուսական հողերն ազատվեին ավազակային հարձակումներից, իշխանությունը հարուստ նվերներ էր ուղարկում Բախչիսարայ, սակայն դա միշտ չէր, որ դրական արդյունք էր տալիս: Շվեդիան և Ռեչ Պոսպոլիտան Խառնակ ժամանակներում նշանակալից տարածքներ էին զավթել, և դրանք ևս պետք էր հետ վերցնել: Իրավիճակը փոքր-ինչ թեթևանում էր նրանով, որ XVI դարավերջին այս երկու պետությունները հակամարտության մեջ էին և պարբերաբար պատերազմում էին միմյանց դեմ: Սա նաև հնարավորություն էր տալիս խուսավարել՝ մեկի հետ դաշնակցելով ընդդեմ մյուսի: Միխայիլ Ֆեոդորովիչի կառավարությունում գտնվեցին մարդիկ, որոնք կողմնակից էին Ռեչ Պոսպոլիտայի հետ բարեկամանալուն, կային նաև մարդիկ, որոնք կողմնակից էին Շվեդիայի հետ դաշնակցելուն: Սակայն Ռուսաստանի համար առաջնային էր հարաբերությունների

կարգավորումը Լեհ-լիտվական պետության հետ, որը ոչ միայն ռուսական տարածքներ էր զավթել, այլև Միխայիլ Ֆեոդորովիչին չէր ճանաչում այդ պետության ցար: Մոսկվայի և Վարշավայի միջև հարաբերությունները ծայրահեղ լարված էին, և արդեն 1620-ական թթ. սկզբին դիվանագիտական հարաբերությունները խզվեցին, թեև Ռուսաստանը պատերազմի մեջ մտնել չէր համարձակվում՝ նկատի ունենալով Խառնակ ժամանակներից հետո ուժերի վերականգնման անհրաժեշտությունը (տե՛ս Հավելվածը, քարտեզ հ.7):

Արևմտառուսական հողերի՝ Մոսկվայի իշխանությանը պատկանելու հարցի շուրջ վեճը վերսկսելու հնարավորություն առաջացավ 1632 թվականին՝ Սիգիզմունդ III թագավորի մահվան արդյունքում: Ռեչ Պոսպոլիտան մնաց առանց միապետի, քանի որ նոր թագավորի ընտրությունը պետք է տեղի ունենար սեյմում, իսկ այդ գործընթացը սովորաբար ձգձգվում էր:

Օսմանյան կայսրությունը և Շվեդիան պատրաստակամություն հայտնեցին Ռուսաստանի կողմից կռվել Լեհաստանի դեմ: Չնայած այն բանին, որ Դեուլինյան զինադադարի ավարտին մնացել էր կես տարի, Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ռեչ Պոսպոլիտայի դեմ: Հետագայում այն կոչվեց Սմոլենսկյան (1632-1634), քանի որ հիմնական գործողությունները ծավալվեցին այդ քաղաքի պատերի տակ: Առաջին հաջողություններից հետո (վերցվեցին մի քանի սահմանային ամրոցներ) ռուսական զորքի հիմնական մասը՝ զորավար Մ.Բ. Շեյինի գլխավորությամբ, կենտրոնացավ Սմոլենսկի պաշարման վրա: Այդ ընթացքում հանգամանքները փոխվեցին. Շվեդիան և Թուրքիան այդպես էլ պատերազմի մեջ չմտան (Ղրիմի թաթարները ավերիչ արշավանք իրականացրին հարավռուսական հողերում), Ռեչ Պոսպոլիտայի սեյմը միաձայն թագավոր հռչակեց Վլադիսլավ IV-ին: Սմոլենսկի մոտ կենտրոնացած ռուսական բանակն ընկավ շրջապատման մեջ և կապիտուլացվեց, որից հետո Պոլյանովկա գետի վրա կողմերը ստորագրեցին խաղաղության պայմանագիր (1634)՝ հաստատելով Դեուլինյան զինադադարով ընդունված սահմանները: Ռուսական դիվանագիտության հաջողված քայլերից էր այն, որ լեհ թագավորը հրաժարվեց Ռուսաստանի գահի նկատմամբ ունեցած հավակնությունից:

Ռուսաստանը և Զապորոժիեի կազակների ապստամբությունն ընդդեմ Ռեչ Պոսպոլիտայի: Ռուս-լեհական հարաբերություններում նոր սրացում տեղի ունեցավ XVII դ. կեսերին՝ կապված Ռեչ Պոսպոլիտայի արևելյան հողերի հետ: Տեղական գյուղացիությունն իր վրա զգում էր «եռակի լուծ»՝ ճորտական, ազգային և կրոնական: Ուղղափառ բնակչությանը նեղելը, միաժամանակ եկեղեցիները միավորելու փորձերը դժգոհություններ էին առաջացնում՝ բազմիցս վերածվելով ժողովրդական բողոքի: Ռազմական միջուկը այդ բողոքներում զապորոժյան կազակությունն էր, որը Դնեպրի ստորին հոսանքում ձևավորվել էր XVI դ.: Դոնի կազակների նման զապորոժցիները, գտնվելով Ռեչ Պոսպոլիտայի իշխանության տակ, օգտվում էին ինքնավարությունից՝ ընտրելով և ներկայացնելով իրենց հետմաններին, և թագավորական գանձարանից ստանում էին պարգևավճար սահմանային ծառայության համար՝ պաշտպանելով երկրի այդ հատվածը ղրիմյան թաթարների հարձակումներից: Զապորոժիեի կազակներն իրենք էլ, հակառակ լեհական իշխանության արգելքներին, քիչ հարձակումներ



Բոգդան Խմելնիցկի

չէին անում Ղրիմի խանության և Թուրքիայի վրա: Հաճախադեպ էին նաև զապորոժյան կազակների հարձակումները ռուսական հողերի վրա: Ավելին, նրանք Ռեչ Պոսպոլիտայի կազմում ակտիվորեն մասնակցում էին Ռուսաստանի դեմ պատերազմներում ինչպես Խառնակ ժամանակներում, այնպես էլ Սմոլենսկի մոտ եղած մարտում:

Հենց սրանով է բացատրվում մոսկովյան իշխանությունների զսպվածությունը, երբ իմացան Մերձդնեպրում 1648 թ. սկսված ապստամբության մասին, որը գլխավորում էր հետման Բոգդան Խմելնիցկին: Մարտական գործողությունների սկզբում Խմելնիցկին օգնության խնդրանքով դիմեց ռուս ցարին, Ղրիմի խանին և շվեդների թագավորին: Զապորոժյան ջոկատները Խմելնիցկու գլխավորությամբ հասան մինչև ժամանակակից Լեհաստանի սահմանները: 1649 թ. Յան-Կազիմիր թագավորը ստիպված էր ստորագրել Զբորովսկյան խաղաղության պամանագիրը: Ըստ այդ պայմանագրի՝ Ռեչ Պոսպոլիտայի սահմանին երեք վոյեվոդությունների միավորմամբ ստեղծվեց ինքնավարություն՝ Չիգիրինե մայրաքաղաքով: Ինքնավարության գերագույն իշխանությունը պատկանում էր զապորոժյան հետմանին, իսկ կազակների թիվը, համաձայն այսպես կոչված գրանցամատյանի, կազմում էր 40 հազար, որոնց էլ լեհական իշխանությունները պարտավորվել էին պարգևավճար տալ:

Սակայն կազակների և լեհական իշխանությունների հակամարտությունը շարունակվում էր, և 1651 թ. Բերեստեչկովի մոտ կրած պարտությունից հետո Խմելնիցկին ստիպված էր ստորագրել Բելոցերկովյան պայմանագիրը, համաձայն որի՝ կրկնակի կրճատվեց գրանցված կազակների թիվը և մեկ երրորդով էլ՝ իր ենթակայության տակ գտնվող տարածքները: Լեհ-լիտվական մեծահարուստները, հակառակ թագավորի և հետմանի կնքած պայմանագրի, շարունակեցին կազակների դեմ ռազմական գործողությունները: Խմելնիցկին ստիպված նորից օգնություն խնդրեց Մոսկվայից՝ առաջարկելով իր իշխանության տակ գտնվող տարածքները միավորել ռուսական հողերին:

Այս հարցի քննարկման նպատակով Մոսկվայում երկու անգամ (1651 և 1653 թ.) հրավիրվեց զեմստվոյական ժողով, որը որոշեց ընդունել զապորոժցիներին «ինքնակալի ձեռքի տակ» և այդ հողերի համար Ռեչ Պոսպոլիտայի դեմ պատերազմել: 1654 թ. Պերեյասլավ քաղաքում տեղի ունեցավ զապորոժյան կազակների ռադան (խորհուրդը), որին մասնակցելու համար հրավիրել էին նաև քաղաքի բնակիչներին: Պերեյասլավի ռադայի որոշմամբ Դնեպրի աջ և ձախ ափերի՝ զապորոժցիների հսկողության տակ գտնվող հողերը անցնում են ռուս ցարի իշխանության ներքո:

Ռեչ Պոսպոլիտայի դեմ տասներեքամյա պատերազմը և ռուս-թուրքական հարաբերությունների սրացումը: Զեմստվոյական ժողովի և Պերեյասլավում ռադայի որոշումները անխուսափելի դարձրին պատերազմը Ռուսաստանի և Ռեչ Պոսպոլիտայի միջև: Ռազմական գործողությունները շարունակվում էին տասներեք տարի (1654–1667): Պատերազմն ուներ նաև գաղափարական հիմնավորում. այն է՝ ավանդական պատկերացումները ռուսական միապետների իրավունքների մասին, ըստ որոնց՝ միապետն իրավունք ունի «Մոնոմախի ողջ ժառանգության նկատմամբ»: Այն իր արտացոլումն էր գտել Ալեքսեյ Միխայլովիչի նոր տիտղոսի մեջ՝ «համայն Մեծ, Փոքր և Սպիտակ Ռուսիայի միապետ»: Ռուսաստանի համար ռազմական գործողությունների սկիզբը բարեհաջող էր: 1654–1655 թթ. ընթացքում ռուսական զորքին հաջողվեց վերադարձնել ոչ միայն Խառնակ ժամանակներում կորցրած տարածքները, այլև գրավել Ռեչ Պոսպոլիտայի արևելյան տարածքների մեծ մասը, այդ թվում՝ լիտվական խոշոր քաղաքներ Վիլնոն և Կովնոն: Լեհաստանի թագավոր Յան-Կազիմիրը փախավ երկրից:

1655 թ. ամռանը Շվեդիան, պատերազմ սկսելով Ռեչ Պոսպոլիտայի դեմ, արդեն մոտ էր վերջակետ դնելու Լեհ-լիտվական պետությանը: Այնուամենայնիվ լեհ խոշոր հողատերերին հաջողվեց օգտագործել հակառակորդների միջև եղած անհամաձայնությունները. Ռեչ Պոսպոլիտայի գահը առաջարկեցին ցար Ալեքսեյ Միխայլովիչին, որով նրանք կարողացան զինադադար կնքել Մոսկվայի հետ, ավելին, Ռուսաստանը շուտով պատերազմ հայտարարեց Շվեդիային (1656–1658): Ռուսական զորքը Շվեդիայի դեմ պատերազմում հիմնականում գործում էր հաջող՝ կարողանալով նշանակալից չափով առաջ գնալ Մերձբալթիկայում: Այդ նույն ժամանակ լեհական զորքը հնարավորություն ստացավ կենտրոնանալ շվեդների դեմ պատերազմում և նրանցից ազատագրել Լեհաստանի տարածքները:

1657 թ.Բոգդան Խմելնիցկու մահով իրավիճակը փոխվեց: Նոր հետման Իվան Վիգովսկին 1658 թ. լեհական իշխանությունների հետ կնքեց Գադյաչյան պայմանագիրը, որով Զապորոժիեի կազակները վերադառնում էին Ռեչ Պոսպոլիտայի իշխանության ներքո: Ապա սկսվեցին ռուսական զորքի խոշոր պարտությունները Կոնոտոպի մոտ (1659) և Չուդնովոյում (1660):

Այս անհաջողությունների խորապատկերում, որպեսզի թույլ չտրվեր լեհ-շվեդական դաշնակցությունը, ռուսական դիվանագիտությունը 1661 թ. վերանայեց Շվեդիայի հետ երեք տարով կնքված զինադադարի պայմանները՝ համաձայնելով վերադառնալ մինչ նախկին պատերազմը եղած սահմաններին: Ռեչ Պոսպոլիտայի դեմ պատերազմն ընթանում էր փոփոխական հաջողություններով և երկար բանակցություններից հետո 1667 թ. ավարտվեց Անդրուսովսկյան զինադադարի կնքմամբ, համաձայն որի՝ Ռուսաստանին վերադարձվեցին Խառնակ ժամանակներում կորցրած սմոլենսկյան և սևերսկյան հողերը: Ռուսական պետության կազմի մեջ մտավ տարածքների մի մեծ հատված, որը գտնվում էր Զապորոժիեի զորքի հսկողության տակ: Սահման համարվեց Դնեպր գետը: Կիևը, որը Դնեպրի աջ ափին է, նույնպես անցավ Ռուսաստանին: Ամբողջությամբ աջ ափը մնաց Լեհ-լիտվական պետությանը:

Ռուսաստանին միավորված տարածքների բնակչությունը ցարի գերագույն իշխանության ներքո ուներ լայն ինքնավարություն, և կառավարվում էր Զապորոժյան զորքի ընտրովի հետմանների կողմից: Սա, սակայն, չէր բացառում հակամարտությունները. մի քանի հետմաններ, որոնք ազատվել էին իրենց պաշտոններից իրական կամ հորինված դավաճանությունների պատճառով, հայտնվեցին աքսորում: Մեծ մասի դրությունը լավացավ. նրանք այլևս չէին պայքարում ուղղափառությանը դավանելու իրավունքի համար:

Ռուսաստանի Հյուսիսային Մերձսևծովին հարող տարածքներում դիրքերի ամրապնդումը սրեց Մոսկվայի և Ստամբուլի հարաբերությունները: Ի դեպ, այս ուղղությամբ լարվածությունը դեռևս երեք տասնամյակ առաջ էր սկիզբ առել, երբ 1637 թ. Դոնի կազակները վերցրին Դոնի ավազանում գտնվող Ազով թուրքական ամրոցը: Կազակները, հենվելով ցար Միխայիլ Ֆեոդորովիչի ոչ բացահայտ աջակցության վրա, հինգ տարի անընդմեջ պահում էին քաղաքը՝ դիմադրելով հակառակորդի գերազանցող ուժերին: Չնայած 1642 թ. Մոսկվայում տեղի ունեցած Զեմստվոյական ժողովն առաջարկեց միավորել Ազովը «մեծ միապետի իշխանության ներքո», ցարական կառավարությունը այդպես էլ չհետևեց այդ որոշմանը:

Դրա փոխարեն Ռուսաստանի տափաստանային սահմանների երկարությամբ սկսեցին լայնածավալ ամրաշինական աշխատանքները, իսկ արդեն 1646 թ. գծվեց ամրաշինված Բելգորոդյան սահմանագիծը, որը դժվարացնում էր Օսմանյան կայսրությանը ենթակա Ղրիմի թաթարների հարձակումները սահմանից ներս գտնվող գավառների վրա: 1669 թ. Դնեպրի աջափնյա հատվածի հետման Պյոտր Դորոշենկոն ճանաչեց իրեն թուրք սուլթանի վասալ՝ սադրելով թուրքական զորքի ներխուժումը: Անդրուսովսկյան զինադադարի պայմաններին համապատասխան՝ 1672 թ. Ռուսաստանն օգնեց Ռեչ Պոսպոլիտային թուրքերի դեմ պայքարում, իսկ 1676 թ. արդեն մտավ ակտիվ պայքարի մեջ ընդդեմ սուլթանական զորքերի: Այդ պատերազմի վճռական պահը ռուս-կազակական զորքի պայքարն էր հետմանների քաղաք Չիգիրինի պաշտպանությունում 1677–1678 թթ., որը հայտնի է «Չիգիրինյան պատերազմ» անունով: Ավերված քաղաքն անցավ հակառակորդին, իսկ այդ ժամանակ Ռուսաստանը սկսեց և 1680 թ. ավարտեց ամրաշինական նոր՝ Իզյումյան սահմանագիծը: 1681 թ. Ղրիմի խանության մայրաքաղաք Բախչիսարայում կնքվեց զինադադարի պայմանագիր՝ քսան տարի տևողությամբ. Ռուսաստանի տարածքները և Օսմանյան կայսրությունը միմյանցից անջատվում էին Դնեպրով, իսկ Զապորոժյան Սեչը, որն առաջ գտնվում էր Ռուսաստանի և Ռեչ Պոսպոլիտայի ենթակայության տակ, հայտարարվեց անկախ: Բախչիսարայի՝ երկու կողմերին էլ չբավարարող խաղաղության պայմանագիրն ընկալվեց որպես ժամանակավոր, զիջումային՝ ապագային թողնելով վիճելի հարցերի լուծումը:

§ 31. Սիբիրի յուրացումը

Ուրալից արևելք գտնվող հողերի՝ Ռուսաստանի կազմի մեջ միավորելը: Եթե արևմտյան ռուսական սահմանները փոփոխվում էին՝ հարյուրամյակի հաշվարկով ընդարձակվելով աննշան չափով, ապա արևելքում Ռուսաստանն իր տարածքը մեծացրեց հսկայական ծավալներով: Դա տեղի ունեցավ՝ ի հաշիվ Սիբիրի, որը 9 միլիոն քառակուսի կիլոմետր տարածք էր: Այն ոչ միայն եռակի չափով մեծացրեց երկրի տարածքը, այլև Ռուսաստանը դարձրեց մոլորակի ամենախոշոր պետություններից մեկը (զիջում էր միայն Իսպանիային՝ իր անդրօվկիանոսյան գաղութներով հանդերձ): Ռուսաստանը, իր կազմի մեջ մտցնելով Ուրալյան լեռներից մինչև Խաղաղ օվկիանոսի ափերը հասնող հսկայական տարածքը, պատմականորեն կարճ ժամկետում՝ ընդամենը կես դարում, դարձավ եվրասիական տերություն: Այս տարածաշրջանը նոսր էր բնակեցված, և մոտավոր հաշվարկներով Սիբիրի բնակչությունը XVII դ. կեսերին հազիվ թե գերազանցեր 250 հազար մարդը: Սիբիրի յուրացման պատմության մեջ շրջադարձային եղավ XVI–XVII դդ. սիբիրյան վերջին խանի՝ Կուչումի ջախջախումը և մահանալը (նրա որդիները և թոռները մի քանի տասնամյակ փորձում էին ընդդիմանալ երկրամասի՝ ռուսների կողմից յուրացմանը):

Դեպի արևելք ռուսական տարածքների ընդարձակումը կատարվում էր արագ՝ անգամ Խառնակ ժամանակների դժվարին տարիներին կանգ չառնելով: Որպես կանոն, առաջինը նոր վայրեր հասնում էին երկրախույզները, որոնք գալիս էին արժեքավոր ցեղատեսակի կենդանիների մորթու հետևից: Կախված այն բանից, թե թանկարժեք մորթի ունեցող սամույրի գլխաքանակը ինչքան է պակասում, արդյունաբերողները գնում էին ավելի հեռու՝ Սիբիրի խորքերը: Ճանապարհին նրանք հետախուզում էին ոչ միայն առավել հեռանկարային որսորդական անդաստանները, այլև գետերի ճանապարհները, տեղի ցեղերի բնակության վայրերը՝ նրանց հետ ստեղծելով առաջին կապերը, շփումները: Երբ արդյունաբերողները հաստատվում էին նոր վայրերում, նրանց մասին առաջինն իմանում էին տեղական, իսկ հետո՝ նաև մոսկովյան իշխանությունները: Սիբիրյան հողերը գտնվում էին Կազանյան արքունիքի գերատեսչության տնօրինության տակ. դրանից 1637 թ. անջատվեց կառավարման ինքնուրույն միավոր՝ Սիբիրի գերատեսչությունը:

Հաջորդ քայլը եղավ նոր վայրերում ռուսական իշխանության հենակետերի ստեղծումը, որտեղ ուղարկում էին կազակների և հրաձիգների ջոկատներ, որոնք կարճ ժամանակում հիմնում էին փայտե ցանկապատված բերդագյուղեր: Մեկը մյուսի հետևից ստեղծվեցին Մանգազեան (1601), Տոմսկը (1604), Տուրուխանսկը (1607), Կուզնեցկը և Ենիսեյսկը (1618), Կրասնոյարսկը (1628), Յակուտսկը (1632), Նիժնեկոլիմսկը (1644), Անգարսկը և Օխոտսկը (1646), Անադիրը (1649), Իրկուտսկը (1652), Ներչինսկը (1653): Հետագայում դրանցից շատերը քաղաքներ դարձան, որոնց մեծ մասը XVII դ. չունեին արհեստավոր բնակչություն. այստեղ ապրում էին բացառապես ծառայողներ, հրաձիգներ, հեծյալ և հետիոտն կազակներ, թնդանոթաձիգներ, ծառայող օտարազգիներ

(Արևմտյան Եվրոպայից եկածներ՝ «немцы») և «լիտվացիներ» (Ռեչ Պոսպոլիտայի նախկին հպատակներ, որոնք գերի էին ընկել Խառնակ ժամանակներում և ռուս-լեհական պատերազմում)։

Սիբիրում ռուսական դիրքերի ամրությունը ապահովում էին կայազորերը, որոնց պահելը և կերակրելը գանձարանի վրա չափազանց թանկ էր նստում։ Ծառայող մարդկանց պարգևավճարից բացի, դարձյալ որպես վճար՝ տալիս էին հաց, ձավարեղեն, աղ։ Դրանք բերվում էին երկրի եվրոպական մասից և նկատի ունենալով ճանապարհի հեռավորությունը, այդ բեռների տեղափոխման դժվարությունները, դրանց գինը բարձրանում էր համարյա տասնապատիկ անգամ։ Այս ամենի հետևանքով կառավարությունը, որը շահագրգռված էր Սիբիրում սեփական հողագործության զարգացմամբ, ոչ միայն խրախուսում էր հողագործների՝ Ուրալից այն կողմ վերաբնակեցումը, այլև աչք էր փակում ճորտությունից գյուղացիների հեռանալու, փախուստի վրա։

Ռուսական պետության համար Սիբիրը եվրոպական շուկայում բարձր գնահատվող մորթեղենի՝ արժեքավոր պահուստի աղբյուր էր։ XVI դ. վերջերից արդեն այն կառավարության կողմից օգտագործվում էր որպես աքսորատեղի՝ հանցագործներին և ոչ ցանկալի դեմքերին այնտեղ ուղարկելու համար (տաժանակիր աշխատանքի մասին XVII դ. խոսք չկար)։ Սիբիրը հանում էր երկրի եվրոպական մասի սոցիալական լարվածությունը. մարդիկ, որոնք չէին ցանկանում հաշտվել իրենց դրության՝ ազատության կորստի և հավատի նկատմամբ ոտնձգության հետ, հեռանում էին Ուրալից այն կողմ, փոխանակ խռովություններով կամ հանցագործություններով արտահայտեին իրենց դժգոհությունը հայրենի հողերում։

Սիբիրի անծայրածիր և հարուստ տարածքները ներգրավեցին ձեռներեցների, որոնք չէին վախենում ռուսական սահմանները հնարավորինս հեռացնել արևելք։ Նրանց թվում էին հայտնի հետազոտողներ, ինչպիսիք են Իվան Մոսկվիտինը, որը 1639 թ. հասավ մինչև Օխոտի ծով, Սեմյոն Դեժնյովը, որը1648 թ. առաջինն անցավ Եվրասիայի արևելյան ծայրամասը (այն ժամանակ նրա հայտնագործության արժեքը լիովին չէր գնահատվում, և միայն 1898 թ. արևելյան այդ կետը նրա անունով կոչվեց), ինչպես նաև Երոֆեյ Խաբարովը, որը 1649 թ. առաջին անգամ հասավ Ամուր գետի ափեր։ XVII դարի ընթացքում դեպի արևելք ճանապարհները խոչընդոտվեցին միայն Խաղաղ օվկիանոսի ջրերով և մանջուրական ջոկատների ներկայությամբ Ամուրի ավազանում։ XVII դարի վերջում Եվրասիայի հյուսիսային մեծ մասը ընդգրկվեց Ռուսաստանի պետական կազմի մեջ։

Սիբիրի նշանակությունը Ռուսաստանի համար: Բանավիճային է մնում սիբիրյան հողերը Ռուսաստանի կազմի մեջ մտցնելու բնույթը։ Նախահեղափոխական պատմագիտության մեջ իշխում էր այն կարծիքը, որ սա զավթում է՝ տիպաբանական նմանություն տեսնելով իսպանական կոնկիստադորների՝ Նոր աշխարհի հանդեպ կատարված գործողությունների հետ (այս նույն տեսակետն են պաշտպանում իրենց աշխատություններում ժամանակակից հետազոտողները)։ Խորհրդային պատմագիտությունը շեշտը դնում էր սիբիրյան ժողովուրդների կամավոր միացմանը Ռուսաստանին և խոսում այդ տարածքների յուրացման մեջ ռուսների առաջադիմական

քայլերի մասին: Երկու տեսակետներն էլ միակողմանի են: Իհարկե, Սիբիրին տիրանալը արմատապես տարբերվում է Ամերիկայում իսպանացիների քայլերից: Ուրալից արևելք ռուս ցարերի իշխանության հաստատումը Սիբիրյան խանության ոչնչացումից հետո չուղեկցվեց տեղական ցեղերի տարագրմամբ կամ ոչնչացմամբ: Միակ սիբիրյան էթնոսը, որի մասին հիշատակումները XVII դ. վերացան, դյուչերներն էին, որոնք ռուս–մանջուրական բախումների ժամանակ զոհ դարձան Մերձամուրում:

Ռուսաստանի եվրոպական մասից տեղափոխվածները, հատկապես նրա հյուսիսային տարածաշրջաններից եկածները վաղուց ապրել էին ուրիշ ժողովուրդների կողքին և ունեին նրանց հետ փոխհարաբերվելու դրական փորձ: Ռուս վերաբնակիչների հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, ինչը նվազեցնում էր բնական ռեսուրսների շուրջ բախումների հավանականությունը: Իսկ տեղացի բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ, որսով և ձկնորսությամբ: Ռուսական վարչակարգը, շահագրգռված մորթեղենի հարկի կանոնավոր մուծմամբ, նույնպես պատշաճ վերաբերմունք էր ցուցաբերում սիբիրյան ժողովուրդների նկատմամբ, որոնք համարվում էին ռուսական պետության հպատակներ: Հատկանշական է, որ XVII դարի կեսերին Սիբիրում ռուսական ռազմական ներկայությունը սահմանափակ էր՝ մոտ 3,500 զինվորական: Մոսկվայի իշխանությունները իրենց վոյեվոդներին բազմիցս հրահանգում էին ցուցաբերել մեղմ և գթասիրտ վերաբերմունք տեղացի ժողովուրդների նկատմամբ: Այնուհանդերձ, անհրաժեշտ է նկատել, որ վոյեվոդները միշտ չէ, որ ամբողջությամբ հետևում էին այս հրահանգներին՝ չխուսափելով կաշառակերությունից և տեղական բնակչության նկատմամբ ոտնձգություններից: Այսօրինակ երևույթները, չնայած տեղական պայմաններին, համատարած էին նաև Ռուսաստանի եվրոպական մասում:

Ինչ խոսք, սիբիրյան ժողովուրդների՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելը բացառապես խաղաղ բնույթ չուներ. XVII դ. աղբյուրները բավականին շատ տեղեկություններ ունեն տեղական բնակչության և եկվորների բախման մասին հատկապես հարկահանության ժամանակ: Սակայն այդ հակամարտության մասշտաբները պետք չէ գերագնահատել. XVII դ. այդպիսի բախումների ժամանակ տեղական բնակչությունից զոհվել է ավելի քան 6 հազար մարդ: Ժողովուրդների և էթնիկ խմբերի մեծ մասը հարյուրամյակի ընթացքում ունեցել է ժողովրդագրական դրական շարժ:

Հարկ է նշել, որ ռուսական քաղաքակրթության ներթափանցումը Սիբիր ունեցավ դրական հետևանքներ և գերակշռեց առանձին փոքր հակամարտություններին: Սիբիր եկած ռուս ծառայողները կարողացան պաշտպանել աբորիգեններին մանջուրական ապատակություններից: Ուրալից այն կողմ կառուցված ցանկապատավոր բերդագյուղերում և ավաններում տեղավորելով ռուս մարդկանց՝ ռուսական իշխանությունը վերացրեց սիբիրյան առանձին էթնոսների միջև եղած թշնամանքը, որոնք դարձան միևնույն պետության հպատակներ: Սիբիր տեղափոխված գյուղացիները և արհեստավորները տեղի ժողովուրդներին ծանոթացրին հողագործության՝ մինչ այդ նրանց անհայտ նորույթներին, արհեստների հմտություններին, այլ զբաղմունքների: Սիբիրի հողերի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու կարևոր արդյունք էր էթնիկ

բազմազանության աճը, որը բնութագրական էր երկրին նաև նախկինում: Ապրելով Ռուսաստանի անծայրածիր տարածքներում՝ ժողովուրդները սովորեցին փոխշահավետ համագործակցության և մշակութների փոխանակության:

Սիբիրի միացումը չափազանց կարևոր եղավ նաև Ռուսաստանի համար. XVII դ. կեսերին մորթեղենի առևտրից ստացած եկամուտները սկսեցին ծածկել սիբիրյան կայազորերին և գերատեսչություններին պահելու ծախսերը, հնարավորություն ստեղծվեց ունենալ ուղիղ տնտեսական կապեր Չինաստանի հետ: Ասիա ներթափանցելու աշխարհաքաղաքական առավելությունները հավասար էին սիբիրյան ընդերքի հարստությանը, որի արժեքը գնահատվեց միայն հաջորդ դարերում:

§ 32. Ռուսական մշակույթը XVI–XVII դարերում

Եկեղեցին և նրա ազդեցությունը մշակույթի վրա: XVI–XVII դարերը դարձան ռուսական հասարակության կառուցվածքային և աշխարհայացքային կերպարանափոխության ժամանակաշրջան՝ բնորոշվելով անցումային փուլով ուշ Միջնադարից դեպի Նոր ժամանակներ: Այս անցման համատեքստում մշակույթի զարգացման վրա եկեղեցու ազդեցության հարցը ձեռք բերեց առանցքային նշանակություն: Միջնադարյան Ռուսիայում կրոնը և եկեղեցին ունեին գերիշխող դիրք ոչ միայն հոգևոր կյանքի, այլև ընդհանուր աշխարհայացքի ձևավորման գործում: Դրանք մշակութային, կրթական և գեղարվեստական գործունեության հիմնական հենասյուներն էին: Բացի գաղափարական գործառույթից, եկեղեցին իր տնօրինության ներքո ուներ զգալի նյութական ռեսուրսներ, մասնավորապես՝ հողային տիրույթներ, որոնք տնտեսական կարևոր նշանակություն ունեին, ինչպես նաև բնակչությամբ բնակեցված տարածքներ: Եկեղեցին ընդգրկված էր նաև պետության կառավարման համակարգում՝ իրականացնելով մի շարք աշխարհիկ գործառույթներ: Եկեղեցական կառույցները ոչ միայն հոգևոր գործունեություն էին իրականացնում, այլև զբաղվում էին վարչաիրավական գործերով, ինչպիսիք էին, օրինակ, դատական պատասխանատուների ներկայացումը դատարան, բանտարկյալների վերահսկումը և այլ առօրյա խնդիրներ: Այս բազմաշերտ դերակատարությունը եկեղեցուն վերածում էր ոչ միայն հոգևոր, այլև վարչաքաղաքական ինստիտուտի՝ ներգրավված հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում:

XVI դարում քրիստոնեական աշխարհի տարբեր հատվածներում ակտիվորեն քննարկվում էր այն հարցը՝ պետք է արդյո՞ք եկեղեցին հարստանա և քաղաքական ազդեցություն ձեռք բերի, թե՞ պահպանի ասկետական իդեալներն ու նյութական ինքնազսպումը: Ռուսական միջավայրում այս խնդիրը սրվեց հատկապես 1503 թ. Մոսկվայում գումարված եկեղեցական ժողովում, որի ընթացքում ձևավորվեցին երկու հակադիր դիրքորոշումներ: Սորսկու անապատի վանահայր Նիլը՝ այսպես կոչված «անընչաքաղցների» առաջնորդը, պնդում էր, որ ճշմարիտ կուսակրոն կյանքը պետք է վարվի խստագույն ասկետիզմով և նյութական ունեցվածքի մերժմամբ: Նրա կարծիքով՝

եկեղեցին պիտի վերապրի աղքատության մեջ՝ ձերբազատված նյութական բեռներից: Նիլ Սորսկու հետևորդները պաշտպանում էին հոգևոր մաքրության իդեալը՝ հակադրվելով եկեղեցու աշխարհիկացման գործընթացին: Ի հակադրություն՝ Վոլոցկիի վանահայր Իոսիֆը և նրա կողմնակիցները (հետագայում հայտնի որպես իոսիֆականներ) պաշտպանում էին եկեղեցու հարստություն ունենալու անհրաժեշտությունը՝ այն դիտարկելով որպես հոգևոր իշխանության ու հավատի պահպանման պայման: Ըստ Իոսիֆի՝ եկեղեցու թուլությունը և աղքատությունը սպառնալիք են հավատքի կայունության համար: Վիճահարույց այս հարցը վերջնականապես լուծեց Մոսկվայի և համայն Ռուսիայի մետրոպոլիտ Մակարիոսը (1542–1563): Վայելելով Իվան IV Ահեղի վստահությունը և հարգանքը՝ նա սատարեց իոսիֆականների դիրքորոշմանը: Նրա նախաձեռնությամբ եկեղեցու կուտակած հարստությունը թողնվեց հոգևորականության տնօրինության ներքո: Չնայած նրան, որ մետրոպոլիտ Մակարիոսը ճանաչում էր ցարական իշխանության գերակայությունը, նրա հոգևոր հեղինակությունը թույլ էր տալիս հանդես գալ որպես բարոյական խորհրդատու՝ խորհուրդ տալով միապետին և միջնորդելով մեղավորների համար: Ռուսական եկեղեցու ազդեցությունն առավելապես մեծացավ այն բանից հետո, երբ 1589 թ. Մոսկվայի մետրոպոլիան պաշտոնապես բարձրացվեց պատրիարքության կարգավիճակի՝ դառնալով հինգերորդ համաշխարհային պատրիարքությունը: Այդ իրադարձությունը ամրապնդեց ռուսական եկեղեցու ինքնուրույնությունը և միջազգային հեղինակությունը:

Մշակույթի ոլորտում եկեղեցու դերակատարությունը դիտվում էր որպես առաջնային, ինչը արտացոլված է հատկապես կրթության համակարգում: Հայտնի է, որ կրթության ամբողջական համակարգը գտնվում էր եկեղեցու հովանու ներքո, իսկ հոգևորականությունը գրագետ հասարակության միակ ամբողջական դասն էր: Դպրոցներում, որոնք կրոնական կրթության կենտրոններ էին, ուսուցումը իրականացվում էր հիմնականում քահանաների կողմից: 1682 թվականին ցար Ֆեոդոր Ալեքսեևիչի նախաձեռնությամբ Ռուսաստանում ստեղծվեց առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ ապագա Սլավոնա-հունա-լատինական ակադեմիան, որը սկզբնական շրջանում դիտարկվում էր որպես հոգևոր կրթության կենտրոն: Հոգևորականությունն էր նաև հրատարակված գրքերի հիմնական սպառողը, իսկ XVI դարում գրքի տպագրության սկիզբը ևս ենթարկվում էր եկեղեցու վերահսկողությանը: 1564 թվականին լույս տեսավ առաջին թվագրված տպագիր գիրքը՝ «Առաքյալը», որի ստեղծողները վարպետներ Իվան Ֆեոդորովն ու Պյոտր Մստիսլավեցն էին: 1700 թ. պետական գրադարանների հավաքածուներում գերակշռում էին տպագիր գրքերը, ինչը կարևոր ցուցիչ էր ռուսական մշակույթի՝ Նոր ժամանակներ անցման վերաբերյալ: Տպագրվում էին հիմնականում այն գրքերը, որոնք մինչ տպագրության սկիզբը արտագրվում էին ձեռքով: Նոր հեղինակների, ինչպես Սեմեոն Պոլոցկու ստեղծագործությունները, հազվադեպ էին տպագրվում: Միջնադարյան շրջանում տարածված սովորույթը շարունակվում էր՝ գրականությունը խորապես կապված էր ուղղափառության թեմատիկայի հետ: Տպագրված և արտագրված տեքստերի հիմքը կազմում էին բյուզանդական ավանդական հուշարձանները, որոնք թարգմանվել էին հունարենից հին

ռուսերեն կամ փոխառվել էին սլավոնական այլ ժողովուրդներից՝ պահպանելով իրենց կրոնական և մշակութային առանձնահատկությունները։

Գրականությունը և հասարակական մտքի զարգացման հիմնական միտումները: XVI դ. ռուսական գրատպության համար բնութագրական էր կոթողային հուշարձանների ստեղծումը։ Այսպես, 1490-ականներին Նովգորոդում արքեպիսկոպոս Գեննադիի նախաձեռնությամբ ստեղծվեց «Գեննադիևյան բիբլիան», որը պատմության մեջ առաջին կանոնիկ գրքերի՝ Հին և Նոր կտակարանների լիակատար ժողովածուն էր՝ գրված եկեղեցասլավոնական լեզվով։ Գեննադիևյան ժողովածուն հետագա Բիբլիաների տպագիր հրատարակությունների հիմք դարձավ։ Մետրոպոլիտ Մակարիի ջանքերով ստեղծվեց «Великие Четьи-Минеи» քրիստոնեական կարևոր տեքստերի ժողովածուն (Գիրք Սուրբ Գրության, կենցաղի և այլնի)՝ դասավորված ժամանակագրական կարգով՝ ըստ ամիսների։ Նրանք կազմել էին ամբողջ տարվա համար աստվածահաճո ընթերցանության տեքստեր։ Ռուսական մշակույթի համար այս ստեղծագործության նշանակությունն այն է, որ «Четьи-Минеи» -ում զետեղված էր Մոսկովյան պետության տարբեր հողերում ապրած ռուս սրբերի կենսագրությունը։ Ավելի ուշ ուրիշ գրքագետներ շարունակեցին «ռուս սրբերի» մասին հավաքչական գործը։ Կազմվեցին պայծառակերպ ճգնավորների վարքերը. նրանք մենաստանների հիմնադիրներ էին։ XVI–XVII դդ. ռուս սրբերի մասին ավելի շատ գրվեց, քան դրան նախորդած պատմական ողջ շրջանում։ XVII դ. վերջին եկեղեցական իշխանությունը սկսեց խստորեն մոտենալ հրաշքների մասին պատմությունների արժանահավատությանը։ Պատրիարք Իոակիմի օրոք 1670-ական թթ. հատուկ հանձնաժողովի աշխատանքի արդյունքում Ռուսաստանի եկեղեցու պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ ճանաչված սրբի պսակազերծումը։ Իշխանություններն արգելեցին երկրպագել Աննա Կաշինսկայային, որի վարքաբանությունը համարվեց ոչ արժանահավատ։ Ճիշտ է, դա տեղի ունեցավ այն պատճառով, որ Աննա Կաշինսկայային երկրպագում էին հատկապես հնաժիսականները։ Վարքաբանական տեքստերի քննադատական վերլուծության ներմուծման փորձը պետրովյան ժամանակներում սկսված «սուտ հրաշքների» դեմ համակարգային պայքարի նախակարապետն էր։

Պատրիարք Նիկոնի բարեփոխումների սկզբից անմիջապես հետո հին հավատի կողմնակիցները ակտիվորեն ստեղծում էին իրենց ճգնավորների մասին պատմող վարքեր։ Դրանցից ամենավաղ ստեղծվածներն են «Բոյարուհի Մորոզովայի կյանքը»։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում «Ավագ քահանա Ավվակումի կյանքը»՝ ստեղծված հնաժիսականների շարժման առաջնորդի կողմից։ Ստեղծագործությունը վարքագրության ժանրին է պատկանում։ Ի դեպ, ինքնակենսագրական ստեղծագործությունները բնութագրական էին Նոր ժամանակների գրականությանը։

XVI դ. ռուսական գրականության մեջ նորարարություն էր Իվան Ահեղի դաստիարակի՝ ավագ քահանա Սիլվեստրի կազմած «Տուն կառուցողը» («Домострой»)։ Նա շարունակում է հին ռուսական՝ հորից որդուն խրատատվության ավանդույթը և ներառում է հինռուսական տեքստերից հատվածներ։ Առաջին անգամ այս ստեղծագործության մեջ ամենօրյա կյանքը ներկայացված է բազմակողմանի՝ ընդգրկելով մինչև

անգամ կենցաղային մանրուքները: Դրանում արտացոլվում է Նոր ժամանակները բնութագրող այն ձգտումը, որ պետք է գրավոր արձանագրել և նպատակահարմար իմաստավորել այն, ինչը առաջներում մնում էր բանավորի ավանդութային ոլորտում:

Հոգևոր միջավայրում հայտնվեցին հրապարակախոսական ստեղծագործություններ, որոնք կարևոր դեր ունեցան պետական գաղափարախոսության ձևավորման գործում: Այս նյութերը հաճախ ներկայացված էին «ասք», «ուղերձ» կամ «մտքերի փոխանակություն» ձևաչափերով և, չնայած համեմատաբար փոքր ծավալին, լայնորեն տարածվում էին ձեռագիր գրքերի ընդօրինակությունների միջոցով: XVI դարի սկզբին առանձնահատուկ նշանակություն ուներ «Ասք վլադիմիրյան իշխանների մասին» հռչակավոր գործը, որտեղ Ռյուրիկովիչների դինաստիայի ծագումն առնչվում էր հռոմեական կայսր Օգոստոսի դինաստիայի հետ: Հատկապես նշվում էր, որ իշխանական գանձարանում պահվող «Մոնոմախի գլխարկը» հանդիսանում է ցարական պսակ, որը նվիրաբերվել է կայսր Կոնստանդին Մոնոմախի կողմից: Այս կերպ հաստատվում էր Մոսկվայի իշխանների օրինականությունը ցարական, այսինքն՝ կայսերական տիտղոսի նկատմամբ: Սակայն եկեղեցական հրապարակախոսությունը սահմանափակված չէր միայն իշխանների փառաբանմամբ: Այսպես, 1490-ական թթ. նովգորոդյան արքեպիսկոպոս Գեննադին ստեղծեց «Բանավեճ կյանքի և մահվան միջև» («Прение живота со смертью») պամֆլետը, որի թարգմանությունը տարածվեց Եվրոպայում: Այդ պամֆլետի էջերում մահը հաշվեհարդար է տեսնում «այս աշխարհի ուժեղների նկատմամբ»՝ ցույց տալով ցանկացած երկրային մեծության թվացյալ, պատրանքային լինելը Աստծու առջև: Արդեն XVIII դ. այս տեքստը բազմացվեց որպես ժողովրդական պարզունակ գրականություն: Իշխանության մասին բանավեճեր հանդիպում են նաև աշխարհիկ հրապարակախոսների ստեղծագործություններում դեռևս Իվան Ահեղի ժամանակներից: Այսպես, ուժեղ իշխանության գաղափարը պաշտպանում էր Իվան Պերեստովը, իսկ օպրիչնինայից փախած իշխան Ա. Մ. Կուրբսկին գրում էր բոնապետին հակառակվելու իրավունքի մասին: Հրապարակախոսական այս կարճ ստեղծագործությունները, որոնք երբեմն շրջանառվում էին որպես գաղտնի գրված նամակներ, մինչև XVII դարի վերջը հաճախ էին տպագրվում և տարածվում՝ ազդելով հասարակական մտքի զարգացման վրա:

Ուսումնասիրվող ողջ շրջանում գրքագիտության կարևոր մաս էր կազմում տարեգրությունը: Կարելի է համարել, որ XVI դ. համառուսական տարեգրությունը հասավ ծաղկման շրջանի: Դրանց դերը ռուս մարդու աշխարհայացքի ձևավորման մեջ որոշվում էր ոչ միայն հայտնած քաղաքական գաղափարներով, այլև նրանով, թե ինչպես էր կցակազմված պատմական նյութը: «Դիմային (ցուցադրական) տարեգրային ժողովածուն» սկսվում էր աշխարհի ստեղծումից մինչև Իվան Ահեղի կառավարումը, որը ներկայացվում էր որպես պատմության թագ ու պսակ: Ժողովածուն պարունակում էր հազար մանրանկար (նկարազարդ), իսկ տեքստը լրացվում էր պատմությունը ներկայացնող «դեմքերով»: Այստեղից էլ՝ անվանումը:

Մետրոպոլիտ Մակարիայի օրհնությամբ կազմվեց «Աստիճանական գիրքը», որում պատմությունը ներկայացվում է որպես աստիճանական սանդուղք, որտեղ

ռուս միապետների սերունդները, սկսած իշխանուհի Օլգայից և իշխան Վլադիմիրից, դասակարգվում են՝ ըստ ուղղափառության ամրապնդման գործում իրենց ունեցած դերի: Այս գիրքը ներկայացնում էր սանդուղքի աստիճաններին գտնվող այն ռուս իշխաններին, որոնք եղել են ուղղափառ հավատքը խթանողները և պահպանողները:

Տարեգրության զարգացման ու պատմական գրականության նոր ժանրերի առաջացման հզոր խթան եղավ Խառնակությունը: Այս ժամանակաշրջանի իրադարձությունները իմաստավորելու փորձերը ծնեցին մի շարք պատմական վավերագրական գործեր, օրինակ՝ «Ասք Տրոյիցե-Սերգիև մենաստանի պաշարման և վանական տնտես Ավրամիայի ու մյուսների մասին»: Ռուս ժողովրդի ինքնագիտակցության ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեցան պատմաբանները, որոնք փնտրում էին ռուսական պատմության սկիզբը: Ոմանք այն կապում էին Մոսկովյան պետության հիմնադիրների՝ իշխան Իվան Դանիլովիչ Կալիտայի և մետրոպոլիտ Պյոտրի ունեցած դերի հետ:

Մյուսների համար ռուսական պատմությունն սկսվեց այն պահից, երբ իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին Վլադիմիրյան աստվածամոր սրբապատկերը տեղափոխեց Վլադիմիր: Ռուսական պատմության մասին պատկերացումներում կարևոր ներդրում էր կիևյան ճգնավոր Իննոկենտի Գիզելի «Սինոփսիսը», որը շարադրում էր Ռուսիայի պատմությունը՝ ընդգծելով ուղղափառ սլավոն ժողովուրդների միասնականությունը: «Սինոփսիսն» առաջին անգամ հրատարակվեց 1674 թ. Կիևապեչորյան մայրավանքում: Հետագայում այն բազմիցս վերահրատարակվել է՝ որպես դպրոցական դասագիրք:

Նոր ժամանակներում գրատպության մշակույթում գլխավոր նորությունը եղավ գեղարվեստական գրականության ի հայտ գալը, որի նպատակը ոչ միայն ընթերցողին

սովորեցնել, դաստիարակելն էր, այլև նրան զբաղեցնել-զվարճացնելը: Այդպիսի տեքստերը, որպես կանոն, գտնվում էին եկեղեցական հսկողությունից դուրս: Ռուսական արձակի հետաքրքիր հուշարձան է «Ասք Դրակուլայի մասին» (XV դ. վերջ), որը պատմում է «մունտյանյան» (ռումինացի) իշխանի՝ Վլադ Ցեպեշի մասին: Այն կազմել է Հունգարիայի դեսպանատանը գտնվող ատենադպիր Ֆեոդոր Կուրիցինը, երբ ճանապարհորդության ժամանակ ծանոթացել է տեղի Դրակուլայի մասին ավանդազրույցներին կամ էլ այդ նույն թեմայով հայտնի գերմանական «թռչող տերևների» մասին նյութին: Ռուսական զվարճալի ստեղծագործության օրինակ է «Պատմվածք Ֆրոլ Սկոբեևի մասինը» (XVII դ. վերջ), որը նկարագրում է նովգորոդցի արկածախնդիր ազնվականի հետ պատահած դեպքերը:


XVII դ. ռուս պոեզիայի սկիզբն էր: Այն ներկայացված է ստեղծագործություններ լայն շերտով՝ սոցիալական սատիրայից (օրինակ՝ «Ասք տերտեր Սավվայի և նրա մեծ փառքի մասին», օգտագործված է բառախաղ՝ «о попе Саве и о великой его славе») մինչև պալատական ներբողները և հոգևոր դասի մարդկանց նվիրված գործերը: Սիմեոն Պոլոցկու (1629–1680) անվան հետ են կապվում դրամատուրգիական առաջին գործերը՝ «Անառակ որդու մասին» կատակերգությունը և այլն:

Այս շրջանում ռուսերեն էին թարգմանվում եվրոպացի հեղինակների գործեր՝ Եզոպոսի առակները, աշխարհագրության, քերականության, դիալեկտիկայի, ճար-

տասանության վերաբերյալ աշխատություններ: Ալեքսեյ Միխայլովիչի կառավարման տարիներին դիվանագիտական գերատեսչության աշխատակիցները սկսեցին ցարի և բոյարների համար կազմել արտասահմանյան մամուլի ամփոփումներ, որոնք անվանում էին «կուրանտներ»: Ավելի ուշ Պյոտր Առաջինը դրա հիմքով ստեղծեց ռուսական առաջին թերթը՝ «Ամփոփագրերը»:

Ճարտարապետություն: ճարտարապետության զարգացումը, ինչպես գրականությանը, նշանակալից չափով եկեղեցուց էր կախված: Դա բացատրվում է նրանով, որ տաճարները հիմնականում կառուցում էին քարից: Որոշ չափով քարից մասնավոր տնաշինարարությունը սկսվեց միայն XVII դ. վերջում: Ուսումնասիրվող դարաշրջանը կարելի է անվանել ռուսական ճարտարապետության ազգային ոճի փնտրտուքի ժամանակաշրջան: Այդ գործընթացի սկիզբը դիտվում էր դեռևս XIV–XV դդ., երբ մոսկովյան ճարտարապետության մեջ հայտնվեց «նորաձևություն». որպես դեկորատիվ ձևավորում՝ օգտագործում էին կոկոշնիկները և կամարների երկայնակի ավարտը: XV դարավերջում և XVI-ի սկզբին ակտիվորեն դիմում էին Արևմուտքի ճարտարապետությանը: Այդ միտումը հատկապես արտահայտվեց Վասիլի III-ի կառավարման տարիներին: Այսպես, Կրեմլի Արխանգելսկյան տաճարը կառուցվեց իտալացի ճարտարապետ Ալեվիզո Նովիի կողմից և ռենեսանսյան՝ վենետիկյան տարբերակով ձևավորում ուներ:

Տեղային կառավարման բարեփոխումները: 1699-ին Պետրոս I-ը, հիմնվելով եվրոպական երկրներ կատարած իր ճանապարհորդության տպավորությունների վրա, ստեղծեց տեղական կառավարման համակարգ՝ բուրգոմիստրի պալատների («զեմսկի խրճիթներ») տեսքով։ Յուրաքանչյուր քաղաքում դրանք ձևավորվեցին ընտրված «լավագույն» մարդկանցից, որոնք պետք է զբաղվեին հարկահավաքչությամբ և դատական գործերով։ «Խրճիթները» ենթակա էին Բուրմիստրի կենտրոնական պալատին (քաղաքապետարան), որը գտնվում էր Մոսկվայում և հավաքում էր բոլոր հարկերը։

Հյուսիսային պատերազմի ամենաթեժ պահին անհրաժեշտություն առաջացավ ուժեղացնել տեղական իշխանությունները՝ զորահավաքի և հարկաբյուջետային միջոցառումների արագ իրականացման համար։ Այդ նպատակով 1709–1710 թվականներին ստեղծվեց ութ գավառներից բաղկացած ցանց՝ ցարի կողմից նշանակված կառավարիչներով, որոնք ունեին լիարժեք լիազորություններ («առաջին» տարածաշրջանային բարեփոխում)։ Նրանց տրվեցին վարչական, ռազմական, դատական և ֆինանսական լիազորություններ (վերցված էին քաղաքապետարանի իրավասությունից), որոնք իրականացվում էին նահանգային գրասենյակների և նոր պաշտոնյաների

(լանդրիխտեր, օբեր-կոմենդատներ, լանդրատներ և այլն) միջոցով: Ստորին կառուցվածքային միավորը դեռևս մնում էր ույեզդը՝ գավառը (մի քանի տասնյակ՝ յուրաքանչյուր նահանգում), թեև փորձեր արվեցին լանդրատի բաժնեմասի տեսքով կառավարման համակարգում նոր օղակներ ներմուծել: Թագավորի ոչ բոլոր մտադրություններն իրականացան, բայց հաջողվեց «ապակենտրոնացնել» իշխանությունը և ավելացնել տեղական կառավարման մարմինների լիազորությունները:

Նահանգը՝ որպես տարածքային կառավարման հիմք, իր մեծ ծավալների պատճառով իրական կառավարման համար մասամբ էր պիտանի: 1719–1720 թվականներին տարածաշրջանային «երկրորդ» բարեփոխման շրջանակներում հայտնվեց միջանկյալ օղակը՝ պրովինցիան՝ գավառը (մոտ՝ 50), որը դարձավ վարչական կառուցվածքային հիմնական միավորը: Յուրաքանչյուր նահանգ կառավարվում էր մի քանի պաշտոնյաների՝ խոշոր վարչական միավորի պետի (վոյեվոդա), նահանգի ֆինանսական մասի պատասխանատուի (կամերիր՝ վոյեվոդայի աջ ձեռք), գանձապետի (ռենտմայստեր) և կոլեգիաների հետ սերտորեն կապված գրասենյակների կողմից: Ույեզդները փոխարինվեցին շրջաններով, որոնք միավորում էին տարածքը որոշակի թվով հարկատու տնային տնտեսություններով: Դրանց գլխավորում էին զեմստվոյի կոմիսարները: Բայցևայնպես գործնականում կառավարման նոր ստորին միավորի ներդրումը, ըստ վիճակագրական սկզբունքների, այդպես էլ չհաջողվեց իրականացնել: Կադրերի սղության պատճառով տարածվածություն չստացան նաև կամերիրի և ռենտմայստերի պաշտոնները:

1720 թվականին Պետերբուրգում ստեղծվեց Գլխավոր մագիստրատ՝ կոլեգիայի իրավունքներով՝ միաժամանակ լուծարելով քաղաքապետարանը: Նրան ենթակա էին վերակենդանացված քաղաքային մագիստրատները, որոնք կազմված էին ընտրված բուրգմայստերներից: Նրանք ղեկավարում էին դատական գործերը, որոշակի հարկերի հավաքումը և քաղաքներում կարգուկանոնի վերահսկումը: Տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների որոշակի ընդլայնումը նպաստեց քաղաքային ենթակառուցվածքների զարգացմանը՝ ճանապարհների, հիվանդանոցների, լուսավորության և այլնի կառուցմանը: Բայց Պետրոս I-ի մահից անմիջապես հետո քաղաքային մագիստրատները վերացվեցին:

Բազմաթիվ բարեփոխումներ նախապատրաստելիս հաշվի էր առնվում այլ երկրների փորձը: Հատուկ գործակալներ էին ուղարկվում Շվեդիա, Պրուսիա, Ֆրանսիա, Դանիա և այլ երկրներ՝ նպատակ ունենալով ուսումնասիրել նրանց օրենսդրությունը տարբեր ոլորտներում (կառավարման, ռազմական, տնտեսական և այլն): Նրանք զեկույցներ էին պատրաստում՝ թվարկելով և վերլուծելով այն ամենը, ինչը հնարավոր էր փոխառել այդ երկրներից: Օրինակ, կոլեգիալ և նահանգային կառավարումը հիմնականում պատճենվեց շվեդական համակարգից, նմանատիպ մոդելների համաձայն ստեղծվեցին կանոնակարգերը (ներառյալ Ընդհանուր կանոնակարգը): Բայց հնարավոր եղավ կույր պատճենումից խուսափել, կառավարման գործիքակազմը փոխառնել և Ռուսաստանին հարմարեցնել՝ բացառելով ռուսական իրականությանը դժվար հարմարվող տարրերը: Գնահատելով կառավարման ոլորտում իրակա-

նացված բարեփոխումների արդյունքները՝ պետք է նշել դրանց հաջողությունը կենտրոնական կառավարման մարմինների կառուցման գործում, ինչը նպաստեց բացարձակ իշխանության հաստատմանը: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմիններ նորաստեղծ կառույցներին, ապա նրանցում քաղաքացիական և ռազմական ադմինիստրացիաների, կանոնավոր և արտակարգ մարմինների գործառույթների միախառնվելը անարդյունավետ էր: Պետրոս I-ի իրավահաջորդների օրոք տեղական ինքնակառավարումը բոլոր մակարդակներում պարզեցվեց, և ըստ ժամանակակից հետազոտողների բնութագրության՝ տեղի ունեցավ իշխանության կազմակերպման վարչա-վոյեվոդական և կոլեգիալ սկզբունքների միավորում:

Ռազմական բարեփոխումներ: Պետրոս I-ը ռուսական կանոնավոր բանակի և նավատորմի ստեղծողն է: Դա թույլ տվեց Հյուսիսային բարդագույն պատերազմում հաղթանակ տանել: Ու թեև կանոնակարգման սաղմերը կարելի է տեսնել նախկին «նոր կարգի գնդերում», բարեփոխիչը կարողացավ դրանց համակարգված հիմք տալ՝ զինված ուժերը համալրման նոր սկզբունքի փոխադրելով: 1699 թվականին ստրելեցական զորքերի ապամոնտաժումից հետո «աշխարհազորայիններից» ու կամավորներից կազմավորվեց 30 նոր գունդ: 1705 թվականից զինվորական անձնակազմի (շարքայիններ) հավաքագրումը սկսեց իրականացվել զորակոչի հիման վրա. բոլոր հողատերերը որոշակի թվով տնային տնտեսություններից (25-ից 90) մեկ նորակոչիկ էին տալիս ցմահ ծառայության համար:

Ի տարբերություն նախորդ կարգի՝ զինվորներին խաղաղ ժամանակ տուն չէին ուղարկում. պահում էին իրենց ստորաբաժանումներում: Սպայական պաշտոնները զբաղեցնում էին ազնվականները, որոնց համար բանակում ծառայությունն ի վերջո դարձավ պատվի խնդիր: Նոր կազմավորումների ողնաշարը պահակային գնդերն էին: Այլ նորամուծությունների թվում պետք է նշել ինժեներական զորքերի ստեղծումը, ռազմական կրթության համակարգի ներդնումը, համապարփակ վերազինումը, զինվորական համազգեստ կրելու պահանջը:



Պրեոբրաժենսկի գնդի շարքային, սերժանտ, սպա

Դեպի ծով (Ազով, Բալթիկ) ելք ստանալն արագացրեց նոր ռազմական ուժի՝ նավատորմի առաջացումը: 1696-ի աշնանը որոշում ընդունվեց հատուկ «նավաշինական ընկերությունների» կողմից՝ ռազմական գործողությունների հարավային թատերաբեմի համար նավերի զանգվածային արտադրության մասին: Հյուսիսային պատերազմի ժամանակ հիմնական նավաշինական գործունեությունը տեղափոխվեց Բալթիկ ծովի ափ: Այստեղ հայտնվեցին նավաշինական տասնյակ գործարաններ, որտեղ սկզբում ստեղծվեցին թիանավերի նավատորմիկներ, այնուհետև բազմահրետանի առագաստանավեր: 1720-ականների սկզբին

ռուսական նավատորմը դարձավ տարածաշրջանի առաջատարներից մեկը: Այն բաղկացած էր 30 գերհզոր հածանավերից, մեկ տասնյակ ֆրեգատներից և երկու հարյուր թիանավերից:

Ուսուցումը պարզեցնելու և մարտական գործողությունների փորձը, ինչպես ցամաքում, այնպես էլ՝ ջրում ընդհանրացնելու նպատակով ստեղծվեցին տարբեր ուղեցույցներ, «հոդվածներ» և ծառայության կանոնակարգեր: Նրանց մեջ կենտրոնացան ինչպես արտաքին տեսական, այնպես էլ գործնական աշխատանքները, ինչպես նաև բազմաթիվ մարտական գործողությունների ընթացքում ձեռք բերված հմտությունների և կարողությունների նկարագրությունները: Նրանցից շատերի առաջացումը հնարավոր դարձավ արքայի անձնական մասնակցության շնորհիվ:

§ 37. Դիմադրություն բարեփոխումներին

Ստրելեցների անկարգությունները: Ժողովրդական զանգվածային ցույցեր: Ներդրված նորամուծությունները բարձր գնով էին ձեռք բերվում. բնական տուրքերն ու հարկերը աճեցին, գյուղացիության ճորտացման գործընթացն ավարտվեց, մարդիկ զոհվում էին պատերազմների և սոցիալական բախումների ժամանակ: Այն, որ բարեփոխումները բարդ էին ընթանում, վկայում է ինչպես անհատների, այնպես էլ խոշոր սոցիալական խմբերի կողմից եղած դիմադրությունը: Դժգոհություն արտահայտեցին նաև հոգևորականները, ծառայող մարդիկ (սկսած ծայրամասային կազակներից մինչև մայրաքաղաքի բոյարները) և հնադավան հավատացյալները: Բողոքը տարբեր ձևեր ու մասշտաբներ էր ընդունում՝ սկսած խնդրագրեր ներկայացնելուց ու դեպի նահանգի ծայրամասեր փախուստից մինչև դավադրություններ ու լայնածավալ ընդվզումներ:

1698-ին, երբ ցարը գտնվում էր Մեծ դեսպանության մեջ, բռնկվեց Ստրելեցիների ապստամբությունը: Դրա պատճառն այն էր, որ կառավարությունը չկարողացավ տրամադրել ստրելեցներին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր նրանց ծառայության համար: Արդեն այն ժամանակ ապստամբների նպատակներից մեկը այն օտարերկրացիներին, որոնց Պետրոսը զանգվածաբար հրավիրում էր ծառայելու, ոչնչացնելն էր, քանի որ նրանց աշխատավարձերը ավելի բարձր էին, քան ստրելեցներինը: XVIII դարի առաջին քառորդի երեք խոշոր ապստամբությունների՝ Աստրախանի (1705–1706), Բաշկիրյան (1705–1711) և Բուլավինյան (1707–1708) հիմնական նպատակը հին կարգերին վերադառնալու ցանկությունն էր: Չնայած անկարգությունների մասնակիցների հալածանքներին և մահապատժներին՝ Աստրախանում և Բաշկիրիայում ապստամբների պահանջները մասամբ բավարարվեցին: Կոնդրատիյ Բուլավինի գլխավորած Դոնի կազակների հուզումների ելքը այլ էր: Հիմնական ջոկատների ջախջախումից և ատամանի մահից հետո Դոնի բանակի ինքնակառավարումը կտրուկ սահմանափակվեց, և արգելվեց փախստական գյուղացիներին անվերապահորեն ընդունելը. բոլոր նոր ավանները լուծարվեցին:

Հոգևորականներ: Ազնվականություն: Հոգևորականության շատ ներկայացուցիչներ՝ պատրիարք Ադրիանիոսի գլխավորությամբ, դեմ արտահայտվեցին Պետրոս I-ի «արևմտամետ» քաղաքականությանը: Հնադավանների միջավայրում, որը դեմ էր նաև պաշտոնական եկեղեցուն, Պետրոս I-ի բարեփոխումները նույնպես բացասաբար էին ընդունվում: Ցարի գործունեության մերժման ծայրահեղ ձևը նրան որպես «նեռ» ներկայացնելն էր, որի թագավորությունը կավարտվեր աշխարհի վերջով: Ազնվականների շարքում կային շատ մարդիկ, ովքեր համաձայն չէին իրականացվող բարեփոխումների ընթացքին, ինչի արդյունքում դավադրություններ կազմակերպվեցին կառավարության դեմ: Առանձնահատուկ նշանակություն ստացավ «Ցարևիչ Ալեքսեյի գործը». դրա հիմնական բովանդակությունը դժգոհների մի մասի համախմբումն էր գահաժառանգի շուրջ: Նրանց թվում էին ազնվականներ և եկեղեցական քահանայապետության ներկայացուցիչներ: Նրանք մտադիր էին կասեցնել ու հետ շրջել բարեփոխումները, եթե արքայազնը հաջողեր իշխանության գալ: Դա պարզվեց 1716 թվականին Ալեքսեյի՝ արտասահման փախուստից հետո անցկացված հետաքննության ընթացքում: Արտասահմանից նրան շուտով վերադարձրին: Քաղաքացիական և եկեղեցական բարձրագույն պաշտոնյաների դատարանի դատավճռով նա մահապատժի դատապարտվեց դավաճանության համար, որը չիրականացվեց, քանի որ 1718 թվականի հունիսի 26-ին Ալեքսեյ արքայազնը մահացավ «ապոպլեքսիայից» (ըստ պաշտոնական վարկածի): Ամեն դեպքում հարկ է նշել, որ ազնվական ծագում ունեցող անձանց մեծամասնությունը, ազնվականության լայն շրջանակները պաշտպանում էին Պետրոս I-ի բարեփոխումները:

§ 38. Պետրոս I-ի բարեփոխումները մշակութային ոլորտում: Բարեփոխումների կարևորությունը

Կրթություն: Պետրոս I-ի գործունեությունը մշակութային ոլորտում բազմաթիվ նորարարությունների տեղիք տվեց: Ամենակարևոր ոլորտներից էր գիտության և կրթության զարգացումը: Բարեփոխումներ իրականացնելու համար Պետրոսին անհրաժեշտ էին մեծ թվով գրագետ, մասնագիտորեն պատրաստված մարդիկ: Նոր մասնագետներ ձեռք բերելու երկու ճանապարհ կար՝ ստեղծել ուսումնական հաստատություններ Ռուսաստանի ներսում կամ խոստումնալից երիտասարդներին արտասահման ուղարկել: Սկսելով նավաշինարարությունը՝ ցարը 1696 թ. հրաման արձակեց ազնվական ընտանիքներից ավելի քան 60 երիտասարդների՝ տարբեր երկրներ ծովագնացություն սովորելու ուղարկելու մասին: Միաժամանակ սլավոնա-հունա-լատինական ակադեմիայի նախկին ուսուցիչներին՝ Իոաննիկոս և Սոֆրոն եղբայրներին, Լիխուդին, հանձնարարվեց բացել իտալերենի ուսուցման դպրոց (1697 թ.): Դա պահանջվում էր այն պատճառով, որ ցարը նախատեսում էր վենետիկյան նավաշինարարների փորձը օգտագործել Ռուսաստանում: Օսմանյան կայսրության հետ հաշտություն կնքելուց հետո «իտալական» դպրոցը փակվեց: Հետագայում մարդկանց արտասահման ուղարկելը և նոր աշխարհիկ դպրոցների ստեղծումը, որոնք կբավարարեին կոնկրետ

ոլորտի մասնագետների պահանջարկը, դարձավ նորմա: Օրինակ, դեսպանատան նախաձեռնությամբ ստեղծվեցին Նիկոլայ Շվիմերի և Էռնեստ Գլյուկի դպրոցները, որտեղ դասավանդում էին ամենապահանջված առարկան՝ օտար լեզուներ: 1701 թվականին Մոսկվայում հիմնադրվեց մաթեմատիկական և նավագիտական գիտությունների դպրոցը, որը գտնվում էր Սուխարևի աշտարակում:



Սուխարևի աշտարակը

Դպրոցի ավագ դասարանների հիման վրա 1715 թվականին Սանկտ Պետերբուրգում միաժամանակ ստեղծվեցին ռազմածովային ակադեմիան, հրետանային դպրոցը, իսկ ավելի ուշ ավելացան ճարտարագիտական և բժշկական դպրոցները: Պետրոս I-ի՝ գրքերի հրատարակման ծավալուն ծրագիրը ներառում էր ուսումնական գրականություն, մասնավորապես՝ թվաբանության դասագիրք, որը կազմվեց Լեոնտի Ֆիլիպովիչ Մագնիտսկու կողմից: Հատուկ դպրոցներում կրթությունը բարդանում էր ոչ միայն ուսուցիչների և ուսումնական միջոցների պակասի պատճառով, այլև այն պատճառով, որ ընդունված երիտասարդներին պետք էր զրոյից դասավանդել: Որպեսզի իրենց տրամադրության տակ ունենան մաթեմատիկայի բնագավառում ավելի շատ հիմնական գիտելիքներ ունեցող մարդիկ, ցարը 1714 թվականին հրամայեց բացել «թվային» դպրոցներ: 1720-ականների վերջին այնտեղ սովորում էր մոտ 2 հազար մարդ, բայց միայն 302-ը հաջողությամբ ավարտեցին իրենց ուսումը: Շատ աշակերտներ դպրոցն ընկալեցին որպես պարտականություն, որից ձգտում էին խուսափել: Դրա պատճառով դասավանդման արդյունավետությունը նվազում էր: Կայսրի մահից հետո «թվային» դպրոցները անկում ապրեցին:

Զգալի հաջողություններ ձեռք բերվեցին կրթված հոգևորականներ պատրաստելու գործում, ինչը դարձավ նաև Պետրոս I-ի դարաշրջանը բնորոշող երևույթ: 1680-ականներին ստեղծված սլավոնա-հունա-լատինական ակադեմիան վերջնականապես վերափոխվեց բարձրագույն ուսումնական հաստատության: Որի ուսուցման հիմնական լեզուն լատիներենն էր՝ այն ժամանակվա գիտության լեզուն: Հոգևոր կանոնադրության (1721թ.) պահանջով բոլոր թեմերում՝ եպիսկոպոսական դատարաններում, բացվեցին դպրոցներ: Այսպիսով, ձևավորվեց մի համակարգ, որը միավորում էր հոգևոր կրթության բոլոր մակարդակները: Ջանքերն ուղղված էին ոչ միայն կրթությանը, այլև երիտասարդության դաստիարակությանը: 1717 թվականին լույս տեսավ Պետրոս I-ի պատվերով պատրաստված «Երիտասարդության ազնիվ հայելի» գիրքը՝ ուղղված վարվելակարգի նորմերի ձևավորմանը: Դրանում սահմանված կանոններից շատերը պարտադիր էին ցանկացած բարեկիրթ մարդու համար:

Գիտության զարգացումը: Պետրոս Առաջինի օրոք մեծ ուշադրություն էր դարձվում գիտության զարգացմանը: Ցարը հասկանում էր, որ առանց առաջադեմ գիտության

Ռուսաստանը կախված է մնալու այլ երկրներից: Դեռ Մեծ դեսպանության օրոք նա հավաքում էր տարբեր «հետաքրքրություններ» և գիտության, արվեստի նմուշներ: 1714 թ. արվեստի, գիտության այդ հավաքածուները տեղափոխվեցին մի գրասենյակ՝ Կունստկամերա, որը 1719 թվականին բացվեց հանրության դիտման համար: Ինքնակալի հրամանով նախատեսվում էր պահպանել Ռուսաստանում գտնվող հազվագյուտ իրերը, առարկաները, օրինակ՝ նրա պատվերով Սիբիրից հավաքվեց ու մայրաքաղաք տեղափոխվեց սկյութ-սարմատական ժամանակաշրջանի նմուշների հավաքածուն: 1722 թվականի՝ Բոլգար քաղաքի հնագույն շենքերի վերականգնման մասին դեկրետը նշանավորեց ճարտարապետական հուշարձանների պաշտպանության պատմության սկիզբը: Միապետն անձամբ ծանոթ էր և նամակագրության մեջ էր բազմաթիվ եվրոպացի գիտնականների, մասնավորապես՝ Գ.Վ. Լայբնիցի հետ: Ցարին շնորհվեց Փարիզի ակադեմիայի անդամի կոչում: 1724 թվականին Պետրոսը հրամայեց ստեղծել Գիտությունների ակադեմիա, որը պետք է գիտական հետազոտություններ իրականացներ Ռուսաստանում: Այս ծրագիրն իրականացավ կայսեր մահից հետո միայն:

Նորարարություններ մշակույթի և առօրյա կյանքում: Պետրոս I-ը շատ բան արեց Ռուսաստանի և Եվրոպայի միջև մշակութային տարբեր ոլորտներում տարբերությունները նվազեցնելու համար: 1700 թվականից սկսած՝ տարիների ավանդական հաշվարկը (աշխարհի արարումից) փոխարինվեց եվրոպական երկրներում ընդունված ելման կետով՝ Քրիստոսի ծնունդով: Տարին այժմ սկսվում էր ոչ թե սեպտեմբերի 1-ին, այլ հունվարի 1-ին: Օրվա ժամերը բաժանեցին ցերեկվա և գիշերվա միջև, ինչը պահանջում էր փոխել ժամացույցի թվահարթակը: Հայտնվեց ռուսական առաջին թերթը՝ «Վեդոմոստի»-ն: Հրամանագրերի գալարաթղթերը փոխարինվեցին տետրակներով: Պաշտոնյաները ստիպված եղան հարստացնել իրենց հմտությունները գրասենյակային աշխատանքում: Ցարը մտածում էր նաև լատինական այբուբենին անցնելու մասին. նրա շրջապատում մոդայիկ էր դարձել լատինատառ ստորագրելը: Այնուամենայնիվ այս գաղափարից հրաժարվեցին այբուբենի՝ 1708–1710 թվականների բարեփոխման ժամանակ: Պաշտոնական գրության և հեշտ ընթեռնելի լատինական անտիկ տառատեսակի հիման վրա նրանք ստեղծեցին ռուսական քաղաքացիական տառատեսակը, որն օգտագործվում էր աշխարհիկ գրքեր տպելու համար: Միաժամանակ նախկինների փոխարեն շրջանառության մեջ մտցվեցին արաբական թվանշաններ, որոնք նշանակվում էին հին այբուբենի տառերով:

Պետրոսը նաև ուշադրություն դարձրեց, թե ինչպես են իր հպատակները անցկացնում իրենց ազատ ժամանակը: Դա առաջին հերթին վերաբերում էր ազնվականությանը: Ցարը և նրա շրջապատը եվրոպական ոճով տոնակատարություններ էին կազմակերպում, բայց ազնվական դասի շատ ներկայացուցիչներ չէին շտապում հետևել նրանց օրինակին: 1718 թվականին հրամանագիր տրվեց «ասամբլեաներ» (պարահանդեսների ապագա նախատիպը) անցկացնելու մասին: Այսպիսով, Պետրոսը փորձեց ստեղծել սոցիալական հաղորդակցության նոր ձևեր: Շատ մարդիկ դժվարությունների էին հանդիպում պարահանդեսների գնալիս: Օրինակ՝ ցարն ինքը պարել

սովորել էր դեռ երիտասարդ տարիներին՝ գերմանական թաղամասում ապրելիս, սակայն նրա հասակակիցների մեծ մասը դժվարությունների էին բախվում «պարի գիտությանը» տիրապետելու հարցում:

Հարուստ ընտանիքների կանանց համար բաց ուսերով պաշտոնական զգեստները խնդիր դարձան: Չէ՞ որ մինչ թագավորական հրամանագրերի ներդրումն ամոթալի էր համարվում անգամ անծածկ գլխով անծանոթների առաջ հայտնվելը: Բայց, չնայած բոլոր դժվարություններին, հենց Պետրոսի պարահանդեսներն էին, որ դուրս բերեցին ռուս կանանց տնային մեկուսացումից և դարձան գենդերային հավասարության հասնելու առաջին քայլը:

Փոխակերպումների դժվարությունները մշակույթի և կենցաղի ոլորտում: Պետրոս I-ինը իր առջև խնդիր էր դրել նպատակաուղղված եվրոպականացնել ռուսական մշակույթը: Նրա համար սա ոչ միայն օգտակար փորձ ձեռք բերելու միջոց էր, այլև քաղաքական կարևոր խնդիր: Փաստն այն է, որ մարդիկ, ովքեր դժգոհ էին Պետրոսի իրականացրած բարեփոխումներից, թեև օրենքի շրջանակներում չէին կարող դիմակայել ցարի կամքին, օտար սովորույթներին հետևելուց հրաժարվելը վերածեցին մի տեսակ քաղաքական մանիֆեստի: Ցարը չէր ցանկանում հանդուրժել նման ցույցերը, ինչը բացատրում է նրա անզիջում կեցվածքը անգամ երկրի համար ոչ այնքան կարևոր՝ մշակութային հարցերում:

Նորամուծությունները հասարակության բոլոր շերտերում գտան և՛ համախոհներ, և՛ հակառակորդներ: Այնուամենայնիվ նորամուծությունների նկատմամբ զգայունության մակարդակը մեծապես տարբերվում էր սոցիալական խմբերի միջև: Ազնվականությունը, որը Ֆեոդոր Ալեքսեևիչի օրոք արդեն որդեգրել էր լեհական բազմաթիվ սովորույթներ, համեմատաբար հեշտությամբ ընդունեց բարեփոխումները: Փոխել գյուղացիների (Ռուսաստանի բնակչության մեծ մասի) կյանքը ցարը նույնիսկ չի էլ փորձել: Գյուղաբնակները մշակութային նորամուծություններին առնչվում էին միայն քաղաքներ այցելելիս: Հոգևորականները, հատկապես գյուղական, նույնպես հիմնականում պահպանեցին իրենց նախկին կենսակերպը: Ամենամեծ խնդիրները ծագեցին միջին և ցածր եկամուտ ունեցող քաղաքաբնակների շրջանում: Մի կողմից նրանք պարտավոր էին կատարել թագավորական հրամանագրերը, մյուս կողմից՝ նրանք հաճախ չէին ունենում միջոցներ նոր կենսամակարդակի անցնելու համար:

Նորարարությունների ներդրման հետ կապված խնդիրները լավագույնս կարելի է ուսումնասիրել՝ օգտագործելով կոստյումի և մորուքի սափրման բարեփոխման օրինակը: Ռուսական զգեստի փոխարինումը «գերմանականով» լուրջ ծախսեր էր պահանջում: Եվրոպական հագուստ կրելու մասին հրամանագիրը ստորագրվեց 1700 թվականին: Սկզբում որպես մոդել ընդունվեց հունգարական տարազը,



Կունստկամերան և աստղադիտարանը Սանկտ Պետերբուրգում

հետագայում նախապատվությունը տրվեց գերմանական և ֆրանսիական նորաձևությանը: Բազմաթիվ քաղաքների բնակչությունը միջնորդություններ էր ներկայացնում՝ խնդրելով նոր հագուստի «թանկության» պատճառով թույլ տալ կրել իրենց հին կոստյումները: Սափրվելու մասին հրամանագիրը մարդկանց դնում էր բարոյական դժվար ընտրության առաջ. երկար ժամանակ հոգևորականները համոզում էին իրենց հոտին, որ սափրվելը ծանր մեղք է, քանի որ խախտում է մարդու նմանությունը արարիչ Աստծուն: Մինչդեռ 1698-ին Մեծ դեսպանությունից վերադառնալով՝ ցարը կտրեց իրեն հանդիպած ազնվականության ներկայացուցիչների մորուքները, իսկ 1705-ին հետևեց արդեն հրամանագիրը՝ մորուքի պարտադիր սափրման մասին (դա չէր վերաբերում միայն հոգևորականներին և գյուղացիներին): Մորուք պահելու միակ միջոցը զգալի հարկ վճարելն էր: Եվրոպական հագուստի ներմուծումը և մորուքների սափրումը համատարած դժգոհություն առաջ բերեցին, ինչը հանգեցրեց 1705–1706 թվականների Աստրախանի ապստամբությանը: Նրանից հետո իշխանությունն ավելի զգույշ սկսեց գործել. օրինակ, 1706 թ.-ին սիբիրցիների և որոշ այլ շրջանների բնակիչների համար հագուստի և մորուքի հետ կապված հրամանը ավելի մեղմ կիրառվեց:

Բարեփոխումների արդյունքները: Իրականացվող բարեփոխումները անկասկած առաջընթաց էին ենթադրում տնտեսության, քաղաքականության, սոցիալական, մշակութային բազմաթիվ ոլորտներում: Լայնածավալ արտադրության հզոր ընդլայնում տեղի ունեցավ: Առևտուրը, առաջին հերթին արտաքին առևտուրը Բալթիկ ծով դուրս գալու արդյունքում մեծ հաջողություններ գրանցեց: Առաջացավ ջրային տրանսպորտի առաջին համակարգերից մեկը: Հատկապես կենտրոնական օղակում բարձրացավ պետական կառավարման արդյունավետությունը, և ընդհանուր առմամբ հաջողված հարկային բարեփոխում իրականացվեց: Ստեղծվեց հզոր բանակ և նավատորմ, որն ապացուցեց իր ուժը ամենաուժեղ թշնամու՝ Շվեդիայի հետ պատերազմում: Ռուսաստանը համաշխարհային ասպարեզում դարձավ ամենահեղինակավոր պետություններից մեկը: Մշակույթի ոլորտում Ռուսաստանը մեծ առաջընթաց գրանցեց հատկապես լուսավորության, աշխարհիկ կրթության, գիտության զարգացման և դրա հետ կապված ենթակառուցվածքների ստեղծման ոլորտներում: Ժամանակի մարտահրավերներին համապատասխան՝ լուծում էին ստանում համազգային մասշտաբի ամենակարևոր խնդիրները, որոնք պետության օրակարգում էին դեռևս մինչպետրոսյան դարաշրջանից:

Քննարկումներ Պետրոս I-ի բարեփոխումների մասին: Պետրոս I-ի բարեփոխումների նշանակության մասին բանավեճերը, որ սկիզբ էին առել դեռ բարեփոխիչի կենդանության օրոք, շարունակվեցին գրեթե երեք դար: XIX դարում դրանք հանգեցրին սլավոնաֆիլների և արևմտամետների միջև վեճի, որոնք քննարկում էին երկրի զարգացման ուղիները: Հակադիր տեսակետների կարելի է հանդիպել նաև այսօր: Միապետի ջատագովները մատնանշում են Ռուսական հզոր կայսրության ստեղծումը, որը դարձավ աշխարհի «առաջին» պետություններից մեկը՝ ճանապարհ բացելով դեպի ծով և Արևմուտքից ետ պահող տեխնիկական թերությունները հաղթահարելով: Ընդգծվում է, որ երկրի կառավարման համակարգը բարելավվեց, և որ պետական

մարմինների աշխատանքում առաջնահերթություն տրվեց գրավոր օրենքներին, որ ցածր խավերից մարդիկ ստացան կարիերայի սանդուղքով առաջխաղացման անսահմանափակ հնարավորություններ («Աստիճանակարգերի աղյուսակ»), որ զարգացման ինտենսիվացումը հնարավորություն տվեց ավելացնել պետական եկամուտները, ընդլայնել նրա տարածքները, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, ձեռնարկել առաջին քայլերը տնտեսության արդյունաբերականացման գործում, շարունակել համառուսաստանյան շուկայի զարգացումը և բազմապատկել միջազգային առևտրի մասշտաբները։

Ընդդիմախոսները մատնանշում են իշխանության և ժողովրդի «ներդաշնակության» բնական կարգի խախտումը, օտար գաղափարախոսության և սոցիալական ինստիտուտների պարտադրումը։ Նրանց կարծիքով՝ բարեփոխման շրջանի նյութական կորուստներն ու մարդկային զոհերն ապարդյուն են եղել։ Բանավեճը շարունակվում է առ այսօր. նորագույն հետազոտությունները այսօր կասկածի տակ են դնում մարդկային և ֆինանսական կորուստների չափը, որոնք նախկինում վերագրվում էին ռուս առաջին կայսրի գործողություններին։ Պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ շատ բան փոխառնվում էր ոչ թե անմիտ կերպով, այլ հաշվի առնելով ռուսաստանյան պայմանները։

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին Պետրոս Առաջինի բարեփոխումների պատճառներն ու նախադրյալները։ Ի՞նչ դեր է ունեցել ինքը՝ միապետը, այս բարեփոխումներն իրականացնելու գործում։
2. Պատմե՛ք Օսմանյան կայսրության դեմ Ռուսաստանի վարած պատերազմի հիմնական իրադարձությունների մասին։ Ի՞նչ արդյունքներ ունեցավ այդ պատերազմը։
3. Նկարագրե՛ք այն ամենակարևոր խնդիրները, որոնք Պետրոս I-ը լուծեց իր արտաքին քաղաքական գործունեության ընթացքում։
4. Նշե՛ք Հյուսիսային պատերազմի հիմնական մարտերը։ Ինչպե՞ս ավարտվեց այս պատերազմը։ Ո՞ր գործոնները թույլ տվեցին Ռուսաստանին հաղթանակ ձեռք բերել։
5. 5.Ի՞նչ փոփոխություններ եղան ազնվականության և վաճառականության կյանքում։ Ո՞րն էր միաժառանգության մասին հրամանագրի էությունը։
6. Գտե՛ք կառավարության քաղաքականության և երկրի տնտեսական զարգացման միջև կապը։ Ի՞նչ նոր հզոր արդյունաբերական շրջան սկսեց ձևավորվել Ռուսաստանում։
7. Պատմե՛ք պետական կառավարման համակարգում տեղի ունեցած վերափոխումների մասին։ Բացատրե՛ք, թե կառավարման որ մարմիններն անցյալում մնացին, և որոնք հայտնվեցին նրանց տեղում։

8. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ պատրաստե՛ք զեկուցում զինվորականներին կրթելու համար ստեղծված զնդերի դերի մասին կանոնավոր ռուսական բանակի ձևավորման գործում:
9. Ժողովրդական ի՞նչ ապստամբություններ տեղի ունեցան Պետրոս I-ի օրոք: Որո՞նք էին դրանց պատճառները և հատկանիշները:
10. Ի՞նչ է արվել Ռուսաստանում կրթության և գիտության զարգացման համար: Այս վերափոխումներից ո՞րն եք համարում ամենակարևորը:
11. Պետրոս Առաջինի դարաշրջանի ո՞ր նորամուծությունները չեն կորցրել իրենց նշանակությունը մեր ժամանակներում:
12. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ պատրաստե՛ք զեկուցում Պետրոս I-ի նշանավոր համախոհներից որևէ մեկի մասին:

ԳԼՈՒԽ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ ԵՎ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

§ 39. Պալատական հեղաշրջումների դարաշրջանը

XVIII դարը՝ բարեփոխումների դար: Պետրոս I-ը մահացավ 1725թ. հունվարի 28-ին: Այդ ժամանակ ամբողջ թափով ընթանում էին բարեփոխումները, որոնց նախաձեռնողն ու ոգեշնչողը հենց նա էր: Բայց Պետրոս I-ը չհասցրեց իր նախատեսածից շատ բան իրականացնել: Ինչպիսի՞ն էր նրա բարեփոխումների և ծրագրերի հետագա ճակատագիրը: Պատմական մտքի և գիտակցության մեջ ձևավորված է այն կարծիքը, որ Պետրոս I-ի անմիջական իրավահաջորդները մոռացության մատնեցին նրա բազմաթիվ ձեռնարկումներ, իսկ մի քանիսն էլ չշարունակվեցին և իրականություն չդարձան: Սա բացատրվում է Պետրոս I-ից հետո իրար հետևից փոխվող մի շարք կառավարությունների թուլակամությամբ, նախաձեռնողականության պակասով և նույնիսկ պահպանողականությամբ: Մասամբ դա ճիշտ է: Եկատերինա I-ը (1725–1727)՝ Պետրոս I-ի կինը, որը գահ բարձրացավ նրա մահից հետո, երկար չկառավարեց և պետական գործունեությամբ առանձնապես աչքի չընկավ: Պետրոս II-ի կառավարման կարճ ժամանակաշրջանում (1727–1730) Մոսկվան կրկին դարձավ կայսեր նստավայրը:

1720-ական և 1730-ական թվականներին նավատորմի նկատմամբ ուշադրությունը զգալիորեն նվազեց. 1730-ականների սկզբին Ռուսաստանը ստիպված եղավ հրաժարվել Կասպից ծովում բազմաթիվ ձեռքբերումներից: Սակայն Պետրոս I-ի օրոք երկրի արդիականացման այնպիսի հզոր ազդակ էր ձևավորվել, որ դա որոշեց բարեփոխումների ճանապարհով երկրի զարգացման ընթացքը հետագա դարում: Պետրոս I-ի նախանշած ուղղություններով բարեփոխումներ իրականացվեցին նրա անմիջական իրավահաջորդների՝ Աննա Իոանովնայի, Ելիզավետա Պետրովնայի և Պետրոս III-ի օրոք: Նույնիսկ կյանքից վաղ հեռացած Պետրոս II-ի օրոք հրապարակվեց 1729 թվականի Պարտամուրհակային կանոնադրությունը, որն ուժի մեջ մնաց ավելի քան 100 տարի: Եկատերինա II-ի երկարատև կառավարման օրոք իրականացվեցին լայնածավալ բարեփոխումներ: Դրանք որոշակի շտկման ենթարկվեցին Պավել I-ի կողմից: Այսպիսով, ամբողջ XVIII դարը կարելի է համարել բարեփոխումների դար, որոնք նախաձեռնել էր դեռ Պետրոս I-ը:

Պալատական հեղաշրջումների պատճառները: Պետրոս I-ի և Եկատերինա II-ի գահակալության տարիներն իրենց նշանակությամբ կարելի է անվանել դարաշրջաններ, թեև դրանք իրարից բաժանում էր ընդամենը երեքուկես տասնամյակ: Այդ ընթացքում մի քանի միապետեր փոխվեցին: Միապետերի փոփոխությունը հաճախ տեղի էր ունենում բռնի ուժի կիրառությամբ՝ առկա գահաժառանգության կարգին հակառակ: Այս իրադարձությունները պետք է անվանել պալատական հեղաշրջումներ, քանի որ

տվյալ դեպքում, ի տարբերություն հեղափոխության, հասարակական և քաղաքական համակարգի խոր փոփոխությունների մասին խոսք լինել չէր կարող: Ամեն ինչ հանգեցրեց նրան, որ իշխանությունը իշխող վերնախավի մի խմբից մյուսին էր փոխանցվում:

Այն ժամանակներին բնորոշ երևույթը ֆավորիտիզմն էր, որը ենթադրում էր, որ մեծ իշխանություն կարող էր կենտրոնանալ միապետի հատուկ վստահությունը վայելող ազնվականներից մեկի ձեռքերում: Ուստի հեղաշրջումների նպատակը կարող էր լինել իշխող անձի, այսինքն՝ ֆավորիտի տապալումը: Այսպիսով, միապետի փոփոխության ժամանակ տեղի էր ունենում բռնի միջամտություն՝ գահի իրավահաջորդության կարգին:

Փաստորեն, նման իրադարձությունները դարձան ժամանակին բնորոշ երևույթ, և հետևաբար 1725–1762 թվականները պատմության մեջ մտան որպես պալատական հեղաշրջումների դարաշրջան: Ճիշտ է, այս ժամանակաշրջանին բաժին ընկան Աննա Իոանովնայի (1730–1740) և Ելիզավետա Պետրովնայի (1741–1761) բավական երկարատև գահակալությունները, սակայն նրանց իրավահաջորդները շատ արագ տապալվեցին: Քաղաքական անկայունությունը պահպանվեց ողջ դարաշրջանում՝ վեր հանելով դրա պատճառները: Ասում են՝ իշխանության թուլությունը կապված էր այն բանի հետ, որ այդ ժամանակ գահին կանայք կամ էլ անչափահասներ էին բազմում: Հազիվ թե արժե դա հաշվի առնել. պատմությունը բազմաթիվ օրինակներ ունի գահի վրա հայտնված կանանց փայլուն կառավարման մասին, իսկ ինչ վերաբերում է երեխաներին, ապա բավական է հիշել Լյուդովիկոս XIV-ին՝ «Արև արքային», որը ղեկավարեց Ֆրանսիան 72 տարի՝ սկսած հինգ տարեկանից:

Այդ ժամանակվա իշխանության անկայունության առավել նշանակալից պատճառներից մեկը Պետրոս I-ի կողմից հաստատված իրավահաջորդության կարգն էր: Կորցնելով իր որդիներին (Ալեքսեյ Պետրովիչը մահացավ հոր հետ կոնֆլիկտի արդյունքում, Եկատերինայից ունեցած որդիները վաղ հասակում մահացան) և մտավախություններ ունենալով իր գործի հետագա ճակատագրի վերաբերյալ՝ Պետրոս I-ը որոշեց գահի իրավահաջորդության հարցը իր ձեռքն առնել: 1722 թվականին նա հրամայեց արձակեց, որ գահաժառանգը որոշվելու է միապետի կամքով: Ինչպես ցույց է տալիս հետագա պատմությունը, դա բազմաթիվ բարդություններ առաջ բերեց: Նախ, հետագա ոչ բոլոր միապետերը ժամանակ ունեցան նման ընտրություն կատարելու (անգամ ինքը՝ Պետրոս I-ը, ծանր հիվանդանալով, ժամանակ չունեցավ և չկարողացավ հայտնել իր կամքը), երկրորդ՝ կտակը կարող էր փոխվել, ինչի պատճառով իշխող միապետի շրջապատում խնդիրներ կարող էին առաջ գալ, ինչն էլ հնարավորություն էր



Ելիզավետա Պետրովնա: Նկարիչ՝ Ժ.Ա. Բաններ

ստեղծում արքայի շրջապատում տարբեր տեսակի խարդավանքների առաջացման համար: Վերջապես, կտակը կարելի էր կեղծել. այդպիսի փորձ եղավ Պետրոս II-ի մահվան և Աննա Իոանովնայի գահ բարձրանալու ժամանակ:

Որպես կանոն՝ հեղաշրջումներն իրականացվում էին ռազմական ուժի, առաջին հերթին՝ պահակախմբի աջակցությամբ: Գվարդիականները, ինչպիսիք էին պրեոբրաժենյան վաշտը 1741 թվականին կամ Օրլով եղբայրներն ու նրանց համակիրները 1762 թվականին, դարձան գահի ճակատագրի փաստացի որոշողները:

Այս առումով ժամանակակից հետազոտողները իշխող անձանց հաճախակի բռնի փոփոխության պատճառները տեսնում են Պետրոս I-ի ժամանակներին և նրանից հետո բնորոշ պետական կառուցվածքի առանձնահատկություններում: Հետագայում՝ հատկապես Շվեդիայի հետ ծանր պատերազմի պայմաններում, պետության հիմնական ջանքերը ուղղվեցին ռազմական ոլորտին: Պետական համակարգում ուժեղ դիրք գրավեց բանակը և մայրաքաղաքում նրա առաջապահը՝ գվարդիան: Քաղաքացիական կառավարման մարմիններն ու հաստատությունները իրենց կարևորությամբ դեռ չէին կարող հավասարվել զինվորականներին: Բյուրոկրատիան՝ որպես վարչակարգի հիմք, դեռ ամբողջությամբ չէր արմատավորվել. նրա դերը հաճախ ստանձնում էին անհատները, ժամանակավոր աշխատողները և ֆավորիտները: Ուստի, այն ժամանակվա պետությունը լրջորեն «կաղում էր»՝ հենվելով հիմնականում զինվորականների վրա: Եվ բավական էր միայն այն, որ դավադիրները ստանային գվարդիականների աջակցությունը՝ գործող իշխանությունը տապալելու համար: Իշխանության համար պայքարում բախվում էին ոչ միայն անձնական հավակնությունները: Հակառակորդ խմբերը տարբերվում էին իրենց ծագմամբ, քաղաքական նախասիրություններով, և երբեմն կարելի էր նկատել օտար ուժերի ազդեցությունը:

Իշխանության փոխանցումը իշխող դինաստիայի մի գծից մյուսին: Այստեղ կարելի է հիշատակել իշխանության համար պայքարը արքայատոհմի ներսում, ցար Պետրոս I-ի սերունդների և նրա եղբոր՝ ցար Իվան V Ալեքսեևիչի հետնորդների առճակատումը, որը արմատներով ձգվում էր մինչև XVII դարի վերջ՝ մինչև Նարիշկինների տոհմի մրցակցությունը Միլոսլավսկիների հետ: Ինքը՝ Պետրոս I-ը, երկու ամուսնությունից էր սերունդ թողել: Կայսրուհի Եկատերինա I-ի՝ Պետրոս I-ի երկրորդ կնոջ մահից հետո գահը անցավ Պետրոս II-ին՝ արքայազն Ալեքսեյի որդուն, որի մայրն էր Պետրոս I-ի առաջին կինը՝ թագուհի Եվդոկիան: Բայց 1730 թվականին 14 տարեկանում Պետրոս II-ը մահացավ ջրծաղիկից, և դինաստիայի այս ճյուղը դադարեց գոյություն ունենալ. դադարեց նաև ցար Միխայիլ Ֆեդորովիչինը՝ արական գծով:

Աննա Իոանովնայի գահակալմամբ գահն անցավ ցար Իվան V-ի ժառանգներին: Ձգտելով հաստատել իր տոհմական գծի ներկայացուցիչներին իշխանության մեջ՝ կայսրուհին զարմուհի Աննա Լեոպոլդովնային հռչակեց իր ժառանգորդը: Նա Աննա Իոանովնայի ավագ քրոջ՝ Եկատերինայի դուստրն էր, որն ամուսնացած էր Մեկլենբուրգի դուքս Կառլոս Լեոպոլդի հետ: Ինքը՝ Աննա Լեոպոլդովնան, ամուսնացած էր Բրաունշվեյգի արքայազն Անտոն Ուլրիխի հետ: 1740 թվականին նա մի որդի է լույս աշխարհ բերում, որին իր մեծ պապի պատվին անվանում են Իվան (Հովհաննես): Այս

անգամ նա է հռչակվում թագաժառանգ: Նույն թվականին մահանում է կայսրուհի Աննան, իսկ երկու ամսական Իվան Անտոնովիչը դառնում է Ռուսաստանի կայսր:

Դուքս Բիրոնը դարձավ նորածին միապետի խնամակալը (ռեգենտը), բայց շուտով գահընկեց արվեց, և խնամակալությունն անցավ կայսեր մորը: Այսպես կոչված «Բրաունշվեգների ընտանիքի» թագավորությունը կարճ կյանք ունեցավ: 1741 թվականի նոյեմբերին մեկ այլ պալատական հեղաշրջման արդյունքում գահ բարձրացավ Ելիզավետա Պետրովնան՝ Պետրոս I-ի և նրա երկրորդ կնոջ՝ Եկատերինայի դուստրը: Այսպիսով, իշխանությունը վերադարձավ Պետրոսի ժառանգներին:

Ելիզավետայի իրավահաջորդը հայտարարվեց Հոլշտեյնի արքայազն Կարլոս Պետրոս Ուլրիխը՝ կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի ավագ քրոջ՝ Հոլշտեյնի դուքս Կառլ Ֆրիդրիխի հետ ամուսնացած Աննա Պետրովնայի որդին: Ելիզավետայի քրոջորդին ժամանեց Ռուսաստան, ընդունեց ուղղափառություն և դարձավ Պետրոս Ֆյոդորովիչ: Նրա համար ընտրված հարսնացուն Անհալթ-Ցերբստի գերմանական ոչ մեծ իշխանությունից Սոֆյա-Ֆրեդերիկա-Ավգուստա անունով մի արքայադուստր էր: Ռուսաստան ժամանելուն պես նա Եկատերինա Ալեքսեևնա անունով ընդունեց ուղղափառություն և դարձավ թագաժառանգի կինը:

Մրցակցություն «հին» և «նոր» ազնվականության միջև: Հակառակ տարածված կարծիքի՝ Պետրոս I-ը անվանի ազնվական բոյարներին բնավ չէր համարում իր բարեփոխումների հակառակորդներ, ընդհակառակը, նա ապավինում էր նրանցից շատերի աջակցությանը: Օրինակ, արքայազն Ֆյոդոր Յուրևիչ Ռոմոդանովսկին գլխավորում էր Պրեոբրաժենսկի Պրիկազը, որի խնդիրն էր պայքարել ցարի քաղաքական հակառակորդների դեմ, արքայազն Միխայիլ Միխայլովիչ Գոլիցինը դարձավ ֆելդմարշալ, արքայազն Յակով Ֆյոդորովիչ Դոլգորուկովը նշանակվեց գեներալ կրիգս-կոմիսար (բանակին հագուստ ու ֆինանսներ մատակարարող պաշտոն), իսկ նրա հարազատները բարձր դիվանագիտական պաշտոններ զբաղեցրին: Միևնույն ժամանակ մարդիկ, որոնք սերում էին սովորական ազնվական ընտանիքներից և նույնիսկ ոչ ազնվականներից, հայտնի դարձան ու բարձր դիրքեր գրավեցին Պետրոս I-ի շրջապատում: Այս «նոր ազնվականության» ամենանշանավոր ներկայացուցիչը Ալեքսանդր Դանիլովիչ Մենշիկովն էր:

Նույն մերձավոր շրջապատում էին Սենատի գլխավոր դատախազ Պավել Իվանովիչ Յագուժինսկին, փոխկանցլեր Պյոտր Պավլովիչ Շաֆիրովը և ուրիշներ: Բնականաբար անվանի ազնվական տոհմերի բազմաթիվ ներկայացուցիչներ առանձնապես գոհ չէին ցածր ծագման մարդկանց այսպիսի արագ բարձրացմամբ: Այս մրցակցությունը պարզ ընդգծվեց, երբ որոշվում էր Պետրոս I-ի իրավահաջորդի հարցը: «Հին ազնվականության» մեծ մասը հույս ուներ, որ մահացած միապետի թոռ Ցարևիչ Ալեքսեյի երիտասարդ որդին կդառնա կայսր, բայց դա ձեռք չէր տալիս Ա.Դ. Մենշիկովին, որը, հենվելով գվարդիայի վրա, հասավ նրան, որ իշխանությունը փոխանցվեց Պետրոս I-ի այրուն՝ կայսրուհի Եկատերինա I-ին: Վերջինս ամբողջությամբ գտնվում էր Մենշիկովի ազդեցության տակ և նրա պնդմամբ համաձայնեց հիմնադրել Գերագույն գաղտնի խորհուրդը: Խորհուրդը դիտարկելու էր քաղաքական կարևորագույն խնդիրներ.

կայսրուհին միայն պետք է հաստատեր դրա որոշումները: Իրականում նրա աշխատանքը ղեկավարում էր Մենշիկովը, որը կարծես հասել էր իշխանության գագաթնակետին: Բայց դա ամենևին դուր չէր գալիս Գոլիցին և Դոլգորուկով անվանի ազնվական տոհմերի անդամներին, որոնք մեծամասնություն էին կազմում Գերագույն գաղտնի խորհրդում: Մենշիկովը կարողացավ Եկատերինա I-ի մահից հետո գահ բարձրացած Պետրոս II-ին ևս ենթարկել իր ազդեցությանը, բայց հենց որ հիվանդության պատճառով որոշ ժամանակով հեռացավ գործերից ու կառավարումից, հայտնվեց շնորհազուրկ վիճակում. 1727 թվականի աշնանը նրան զրկեցին բոլոր պաշտոններից, կոչումներից և ընտանիքի հետ աքսորեցին Սիբիր:

Աննա Իոանովնայի գահակալությունը: Ինքնակալությունը սահմանափակելու փորձերը: Գերագույն գաղտնի խորհրդում այժմ գերիշխող դիրք ունեին Դոլգորուկովներից ու Գոլիցիններից մի քանի իշխաններ: Նրանց անվան հետ է կապվում երկրում քաղաքական իրավիճակի հերթական սրացումը, որը «գերագույն առաջնորդների հնարքներ» անունը ստացավ: Երիտասարդ Պետրոս II-ի մահից հետո Պետրոս I-ի զարմուհին՝ Աննա Իոանովնան, հրավիրվեց ռուսական գահին բազմելու: Նա այդ ժամանակ Կուրլանդիայի այրի դքսուհին էր: Գերագույն գաղտնի խորհրդի անդամ արքայազն Դմիտրի Միխայլովիչ Գոլիցինի նախաձեռնությամբ, որին աջակցում էին այլ «գերագույն առաջնորդներ», Աննան պայմանագրություն ստորագրեց: Նա խոստացավ չընդունել կարևոր որոշումներ (պատերազմի և խաղաղության հարցեր, հարկերի ներդրում, նշանավոր բարձրաստիճան անձանց հետապնդում) առանց Գերագույն գաղտնի խորհրդի համաձայնության: Խոսքը գնում էր ինքնակալության լիազորությունները սահմանափակելու մասին՝ հօգուտ արիստոկրատների նեղ խմբի:

Արքայազն Գոլիցինը ուսումնասիրել էր ժամանակակից Անգլիայի և Շվեդիայի միապետությունների փորձը, որտեղ թագավորի իշխանությունը սահմանափակվում էր դասային կամ ընտրված մարմնի կողմից: Բայց ռուսական ազնվականությունը կտրականապես դեմ էր այս «գյուտին»: Ազնվականության ներկայացուցիչներին հաջողվեց իրենց անհամաձայնությունը փոխանցել Մոսկվա ժամանած կայսրուհուն (արքունիքը տեղափոխվել էր առաջին մայրաքաղաք Պետրոս II-ի օրոք): Համոզվելով ազնվականության աջակցության մեջ՝ Աննա Իոանովնան խախտեց «պայմանները» և սկսեց իշխել որպես ինքնակալ: Ինքնակալությունը սահմանափակելու փորձը ձախողվեց: Գերագույն գաղտնի խորհուրդը լուծարվեց, նրա անդամները ենթարկվեցին բռնաճնշումների, ուղարկվեցին աքսոր, Դոլգորուկով իշխաններից չորսը հետագայում մահապատժի ենթարկվեցին: Կայսերական նստավայրը վերադարձավ Սանկտ Պետերբուրգ:

«Բիրոնովշչինա»: Պալատական հեղաշրջումների դարաշրջանի խնդիրներից մեկը երկրի կառավարման մեջ գերմանական ազդեցության հարցն էր: Դա առավելապես կապված էր Աննա Իոանովնայի գահակալության շրջանի հետ: Նրա սիրելին՝ Էռնեստ Յոհան Բիրոնը, Կուրլանդիայից ժամանեց անմիջապես նրանից հետո և չզբաղեցնելով կառավարությունում կարևոր պաշտոններ, բացառությամբ արքունի աստիճանների, մեծ դերակատարություն ունեցավ ներքաղաքական կյանքում և կադրային

նշանակումներում: Շատերի համար նրա ազդեցությունն այնքան մեծ էր թվում, որ Աննա Իոանովնայի գահակալության շրջանը կոչեցին «Բիրոնովշչինայի» ժամանակաշրջան: Երկիրը կառավարելու համար Աննա Իոանովնան ստեղծեց Նախարարների կաբինետ, որի գլխավոր դերը պատկանում էր դեռ Պետրոս I-ի օրոք Գերմանիայից Ռուսաստան եկած Անդրեյ (Հենրիխ) Օստերմանին: Գլխավոր ռազմական գործիչը ֆելդմարշալ Բուրխարդ Քրիստոֆոր Մինիխն էր, որը նույնպես XVIII դարի սկզբին ժամանել էր Գերմանիայից:


Այնուամենայնիվ «օտար գերակայության» և «Բիրոնովշչինայի» գաղափարը չափազանցություն է թվում: Ե՛վ Բիրոնը, և՛ Օստերմանը, և՛ Մինիխը գործում էին՝ Ռուսական կայսրության շահերից ելնելով: Օստերմանը միջազգային ասպարեզում հետևողականորեն պաշտպանում էր Ռուսաստանի շահերը, իսկ Մինիխը շատ բան արեց ռուսական բանակն ուժեղացնելու համար: Արժե հաշվի առնել, որ Աննա Իոանովնայի օրոք օտարերկրացիների դրամական վարձատրությունը, որը Պետրոս 1-ինի ժամանակներից ի վեր զգալիորեն ավելի բարձր էր, մնաց նույնը: Այսպես կոչված «Բիրոնովշչինայի» ժամանակ մի շարք կարևոր պաշտոններում նշանակվեցին ռուսներ: Գաղտնի գործակալությունը, որը հետաքննում էր քաղաքական հանցագործությունների դեպքերը, գլխավորում էր գեներալ Ալեքսեյ Իվանովիչ Ուշակովը:

Բիրոնը, Մինիխը և Օստերմանը «գերմանական կուսակցություն» չէին ձևավորել, ընդհակառակը, նրանք կատաղի առճակատման մեջ էին միմյանց հետ:

Երբ Աննա Իոանովնայի մահից հետո Բիրոնը դարձավ մանուկ կայսր Իոանի խնամակալը, նա Մինիխի ակտիվ մասնակցությամբ և Օստերմանի համաձայնությամբ արագորեն գահընկեց արվեց: Այս երկու գործիչները շարունակել են մրցել նաև հետագայում, ինչը կայունություն չբերեց «Բրաունշվեգյան ընտանիքի»՝ այն ժամանակվա կառավարությանը և նպաստեց նրա արագ տապալմանը: Նախարարների կաբինետում, Ա. Օստերմանից բացի, ընդգրկված էին ռուս գործիչներ արքայազն Ալեքսեյ Միխայլովիչ Չերկասկին և Արտեմի Պետրովիչ Վոլինսկին: Արտեմի Վոլինսկին առճակատման մեջ մտավ Բիրոնի և Օստերմանի հետ, ինչը նրա մահվան պատճառը դարձավ: Նրա դեմ պետական հանցագործության գործ սարքվեց, և 1740 թվականին նրան մահապատժի ենթարկեցին: Արդյունքում Վոլինսկին պատմության մեջ մտավ որպես «գերմանական գերիշխանության» դեմ մարտնչող մեկը, ինչը նպաստեց պատմական հիշողության մեջ Աննա Իվանովնայի՝ ժամանակի մասին նման պատկերացումների ամրագրմանը:

Ելիզավետա Պետրովնայի գահակալությունը: Ելիզավետա Պետրովնայի կառավարությունում մեծ դեր են խաղացել հիմնականում ռուս ազնվական ընտանիքներից սերած անձինք, որոնք աչքի էին ընկել դեռևս Պետրոս I-ի ժամանակներում: Առաջին հերթին դրանք Շուվալովներն ու Վորոնցովներն էին: Արտաքին քաղաքականությունը հայտնվեց Ալեքսեյ Պետրովիչ Բեստուժև-Ռյումինի ձեռքում: Կայսրուհու սիրելին՝ Ալեքսեյ Ռազումովսկին, առանձնահատուկ տեղ զբաղեցրեց արքունիքում: Նա ծնվել էր Չեռնիգովի մարզում պարզ կազակների, իրականում՝ գյուղացիների ընտանիքում: Նա երգիչ էր Սանկտ Պետերբուրգի արքունի մատուռում, որտեղ էլ այն ժամանակ

դեռևս արքայադուստր Ելիզավետան նրան նկատել էր: Հարկ է, սակայն, նշել, որ նույնիսկ Ելիզավետա Պետրովնայի օրոք շատ օտարերկրացիներ մնացին պետական ծառայության մեջ (գեներալներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, գիտնականներ, արվեստագետներ): Սակայն դա բոլոր ժամանակներում էլ բնորոշ է եղել Ռուսական կայսրությանը. եվրոպական տարբեր երկրներից շատ մարդիկ այստեղ գտել են նոր հայրենիք և իրենց հետքը թողել նրա պատմության ու մշակույթի մեջ:



Մոսկվայի համալսարանի առաջին մասնաշենքը

Տնտեսական ոլորտում մեծ ազդեցություն ուներ կոմս Պյոտր Իվանովիչ Շուվալովը: Նրա նախաձեռնությամբ 1753 թվականին ներքին մաքսատուրքերը վերացնելու մասին հրամանագիր հրապարակվեց: Դա ներքին շուկան ազատեց միջնադարից ի վեր գոյություն ունեցող արգելքներից և խթանեց զարգացումը: Ռուսաստանի պատմության մեջ ոչ պակաս կարևոր միջոց էր 1754 թվականին առաջին բանկերի՝ ազնվական բանկի և առևտրական բանկի ստեղծումը: Մինչ այդ վարկեր կարելի էր ստանալ ֆիզիկական անձանցից, վաշխառուներից, օտարերկրացիներից, որոնք վարկ էին տալիս բարձր տոկոսադրույքներով: Միևնույն ժամանակ տնտեսական քաղաքականությունը բավական հակասական բնույթ ուներ: Առևտրի և արդյունաբերության մեջ լայն տարածում գտան տուրքերը և մենաշնորհները՝ ազդելով առավել եկամտաբեր ոլորտների վրա և սահմանափակելով բազմաթիվ առևտրականների և արդյունաբերողների շահույթն ու գործունեության ազատությունը: Մենաշնորհները սովորաբար պատկանում էին նույն կոմս Պ.Ի. Շուվալովին կամ նրա վստահելի անձանց:

Նշանակալից իրադարձություններ տեղի ունեցան մշակույթի ոլորտում: Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովի գործունեությունը հասավ իր գագաթնակետին. կայսրուհու մերձավոր գործընկեր Իվան Իվանովիչ Շուվալովի աջակցությամբ նրան հաջողվեց հիմնել Մոսկվայի համալսարանը, իսկ 1757 թվականին նույն Իվան Իվանովիչի

նախաձեռնությամբ հիմնադրեց Արվեստի ակադեմիան: Ռուսաստանի ազդեցությունը միջազգային ասպարեզում սկսեց մեծանալ: Կանցլեր Ա.Պ. Բեստուժև-Ռյումինը հետևում էր այն գծին, որին նախորդ թագավորությունների տարիներին հետապնդում էր Ա.Ի. Օստերմանը: Բալթյան և Սևծովյան տարածաշրջաններում իր շահերի ապահովմամբ Ռուսաստանը հակադրվեց Թուրքիային և Շվեդիային, որոնց աջակցում էր Ֆրանսիան: Մայրցամաքային Եվրոպայում առաջնորդության համար պայքարում Ֆրանսիայի հակառակորդը Հաբսբուրգների կայսրությունն էր, որը, պարզվեց, Ռուսաստանի «բնական» դաշնակիցն էր: Այս կայսրությունը սովորաբար անվանում են Ավստրիա: Իրականում Հաբսբուրգների դինաստիան գլխավորում էր այսպես կոչված գերմանական ազգի Սուրբ Հռոմեական կայսրությունը: Հաբսբուրգները եղել են այդ կայսրության մի մասը՝ որպես Ավստրիայի տիրակալներ: Նրանց էին պատկանում նաև մի շարք երկրներ, որոնք «գերմանական կայսրության» մասը չէին:

1740-1750-ական թվականներին Եվրոպայի կենտրոնում Ֆրիդրիխ II-ի եռանդուն գլխավորությամբ Պրուսիայի թագավորությունն ուժեղացավ և առճակատման մեջ մտավ Ավստրիայի և Ֆրանսիայի հետ: Անգլիան աջակցում էր Պրուսիային, քանի որ նա պայքարում էր Ֆրանսիայի դեմ՝ Հյուսիսային Ամերիկայում և Հնդկաստանում գաղութատիրական ունեցվածքի համար: Այս իրավիճակում 1750-ական թվականներին այսպես կոչված «դիվանագիտական հեղափոխություն» տեղի ունեցավ: Ավստրիան միավորվեց Ֆրանսիայի հետ Պրուսիայի դեմ, Ռուսաստանը, շահագրգռված լինելով Կենտրոնական Եվրոպայում կայունության պահպանմամբ, միացավ այդ դաշինքին: Սկսվեց Յոթնամյա պատերազմը (1756–1763): Ամերիկայում և Հնդկաստանում Անգլիան պատերազմում էր Ֆրանսիայի դեմ, իսկ Եվրոպայում Ռուսաստանը և նրա դաշնակիցները պատերազմում էին Պրուսիայի դեմ: Ռուսաստանն ու Անգլիան միաժամանակ հայտնվեցին պատերազմող խմբավորումներում, բայց նրանց միջև պատերազմական իրավիճակ չառաջացավ: Ավելին, ինչպես նախկինում, շարունակվեցին փոխշահավետ առևտրային շփումները երկու երկրների միջև:

1757 թվականին ռուսական զորքերը մտան Արևելյան Պրուսիա, գրավեցին Քյոնիգսբերգը, այնուհետև մի քանի տարի ծանր մարտեր մղեցին Ֆրիդրիխ II-ի զորքերի դեմ: Չնայած պրուսացիների՝ թագավորի գլխավորությամբ ունեցած սկզբնական հաջողություններին՝ 1759-ին ռուսական զորքերը՝ գեներալ Պյոտր Սեմյոնովիչ Սալտիկովի հրամանատարությամբ, Կուներսդորֆի ճակատամարտում կարողացան շրջել ճակատամարտի ընթացքը և ջախջախիչ պարտության մատնել թշնամուն: 1760 թվականին ռուսական կորպուսը մի քանի օրով գրավեց Բեռլինը, իսկ 1761 թվականին Պրուսիայի պարտությունը ակնհայտ դարձավ: Բայց 1761 թվականի դեկտեմբերի վերջին մահացավ կայսրուհի Ելիզավետան, և նրա զարմիկը բարձրացավ գահ՝ Պետրոս III անունով:

Պետրոս III: Պետրոս III-ի թագավորությունը կարճ տևեց և ավարտվեց պալատական հերթական հեղաշրջմամբ: Ըստ ամենայնի՝ շարունակել են ազդել նույն անկայունության գործոնները: Պետք է խոստովանել, որ Պետրոս III-ին գահընկեց անելու պատճառները հենց իր գործողություններն էին: Պատմագրության մեջ հաճախ կարելի

է հանդիպել կայսեր անձի վերաբերյալ բացասական գնահատականի. համարել են, թե նա իշխելու հարցում բացարձակապես անընդունակ մարդ էր է: Մի շարք հեղինակներ էլ, ընդհակառակը, փորձել են ընդգծել Պետրոս III-ի արժանիքները՝ նշելով, որ նա գահընկեց արվեց իր փառասեր ու հավակնոտ կնոջ և նրա կողմնակիցների դավադրության արդյունքում: Ճշմարտության փնտրտուքի ճանապարհին չի կարելի չնկատել Պետրոս III-ի դրական հատկանիշները (նա բավական կրթված էր, ջութակ նվագելու սիրահար էր): Ամենակարևորն այն է, որ նրան հաջողվեց իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք վաղուց հասունացել էին և լիովին համահունչ էին ժամանակի ոգուն:

Պետրոս III-ի որոշմամբ վերացվեց Գաղտնի գործակալությունը, և ձեռնարկատիրության ազատության ընդլայնման ուղղությամբ միջոցներ ձեռնարկվեցին: Վերացվեցին տուրքերը և արտաքին առևտրի ոլորտում մենաշնորհները: Հայտարարվեց եկեղեցական ունեցվածքի աշխարհիկացման մասին, դադարեցվեց հնադավան հավատացյալների հալածանքը: Ի վերջո, 1762 թվականի փետրվարի 18-ին թողարկվեց «Ազնվականների ազատության մասին մանիֆեստը», որը ազնվականներին ազատեց պետության պարտադիր ծառայությունից: Արդյոք այս մանիֆեստով ռի՞սկ էր առաջանում, թե՞ պետությունը ազնվական դասից հավատարիմ սպաներին ու պաշտոնյաներին կկորցնի: Շատ ազնվականներ օգտվեցին ծառայությունը թողնելու իրենց իրավունքից, բայց նրանց մեծ մասը շարունակեց իր ծառայությունը պետական համակարգում: Միայն թե հիմա հարկադրանքի փոխարեն ծառայության հիմնական շարժառիթը դարձավ ազնվականի՝ որպես հայրենիքի ծառայի պարտքի զգացումը, որը նրա մեջ սերմանվում էր մանկուց: Կարևոր դեր էին խաղում նաև աշխատավարձը, կարիերան, շքանշաններն ու պարգևները, ինչը միշտ կարևոր է եղել ազնվականների համար: Մանիֆեստը պարտավորեցնում էր ծնողներին պատշաճ կրթության տալ իրենց երեխաներին, որպեսզի նրանք կարողանան կատարել (եթե ցանկանան) իրենց պարտքը պետության հանդեպ: Ընդհանուր առմամբ այս մանիֆեստը մի կողմից ամրապնդեց ազնվականության՝ որպես իշխող դասի դիրքը, իսկ մյուս կողմից՝ իր ոգով ու իմաստով համապատասխանում էր լուսավորության գաղափարներին, որոնք գնալով ավելի էին տարածվում: Բայց չնայած այս ամենին՝ Պետրոս III-ը գահընկեց արվեց իր գահ բարձրանալու սկզբից ընդամենը վեց ամիս անց: Շատ առումներով նա լիովին չէր ընկալում Ռուսաստանի միապետի իր դերը. կայսրը չէր հարգում ռուսական շատ սովորույթներ և ավանդույթներ: Նա չափազանց անհարգալից վերաբերմունք էր ցուցաբերում ուղղափառ հավատի և ռուս եկեղեցու նկատմամբ և իրեն թույլ էր տալիս մանկամտություն դրսևորել եկեղեցական արարողությունների ժամանակ: Եվ որ պակաս կարևոր չէ, լինելով Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ի երկրպագուն, անմիջապես դադարեցրեց Ռուսաստանի մասնակցությունը Յոթնամյա պատերազմին՝ արհամարհելով բանակի հաղթանակներն ու տված զոհերը, և պատերազմ հայտարարեց Դանիային՝ նպատակ ունենալով վերադարձնել Հոլշտեյն հերցոգության հողերը, որոնք Դանիան մի ժամանակ գրավել էր: Թեև Դանիայի հետ պատերազմը ոչ մի կերպ չէր համապատասխանում ռուսական քաղաքականության շահերին, սակայն, այնուամենայնիվ,

գվարդիան արշավի մեկնելու հրաման ստացավ: Այս ամենը զրգռվածություն և դժգոհություն առաջացրեց ռուսական ազնվականության և հատկապես զինվորականների շրջանում: Ամբողջ ուշադրությունը կենտրոնացել էր Պետրոս III-ի կնոջ՝ Եկատերինայի վրա, որը, ի տարբերություն իր ամուսնու, ամեն ինչ անում էր ռուս ազնվականության, գվարդիայի և եկեղեցու սպասավորների բարեհաճությունը շահելու համար: 1762 թվականի հունիսի 28-ին պալատական հեղաշրջման արդյունքում Պետրոս III-ը գահընկեց արվեց և շուտով սպանվեց: Եկատերինա II անունով գահ բարձրացավ նրա կինը:

§ 40. Եկատերինա II-ի ներքին քաղաքականությունը: «Լուսավոր աբսոլյուտիզմ»:

XVIII դարը՝ Լուսավորության դարաշրջան: Եկատերինա II-ը իշխանության եկավ ռուսական վերնախավի հիմնական մասի աջակցությամբ: Նրա գահակալությունը երկար տևեց և կազմեց մի ամբողջ դարաշրջան Ռուսաստանի պատմության մեջ, որը հայտնի դարձավ Եկատերինայի դարաշրջան անունով: Եկատերինա II-ն ակտիվորեն ներգրավվեց երկրի արտաքին և ներքին քաղաքականության հարցերում, ակնառու հաջողությունների հասավ արտաքին քաղաքականության ոլորտում և մի շարք լայնածավալ բարեփոխումներ իրականացրեց երկրի արդիականացման համար: Այս առումով նրան կարելի է համեմատել Պետրոս I-ի հետ:

Նրա թագավորությունը տևեց XVIII դարի գրեթե ամբողջ երկրորդ կեսը, որը պատմության մեջ հայտնի է Լուսավորության դարաշրջան անունով: Այն չէր կարող չազդել Եկատերինա II-ի վարած քաղաքականության վրա: «Լուսավորչություն» հասկացությունն այստեղ օգտագործվում է ամբողջական աշխարհայացք նշանակելու համար՝ հայացքների մի համակարգ գոյություն ունեցող կարգի, ինչպես նաև դրա փոխակերպման ուղիների ու սկզբունքների վերաբերյալ:

Միջնադարն ավելի ու ավելի էր նահանջում դեպի անցյալ, սակայն նրա տարբեր ինստիտուտները, հարաբերությունները և որոշակի առանձնահատկությունները դեռ պահպանված էին, ինչ-որ տեղ դրանք ընկալվում էին որպես ֆեոդալիզմի մասունքներ, մի այլ տեղ դեռ ներկայացնում էին քաղաքական և հասարակական կյանքի էական հիմքերը: Մարդկանց մեծ մասը դեռ անազատ էր, ճորտատիրական կամ ստրկական հարաբերությունները դեռ պահպանվում էին, դասակարգերի մեջ անհավասարություն կար, եկեղեցին փորձում էր պահպանել իր ազդեցությունը քաղաքականության և մշակույթի ոլորտում: Լուսավորության գաղափարախոսները հանդես եկան այս երևույթների սուր քննադատությամբ: Նրանց մեջ ամենաազդեցիկը ֆրանսիացի մտածողներն էին՝ Վոլտերը, Կ. Լ. Մոնտեսքիոն, Ջ. Ժ. Ռուսոն, Դ. Դիդրոն և նրանց ժամանակակիցներն ու համախոհները Ամերիկայում, Եվրոպայի երկրներում: Նրանք հույս ունեին փոխել իրավիճակը՝ բոլորի համար ազատության և հավասարության



Եկատերինա II-ը և Մ.Վ. Լոմոնոսովը։ Նկարիչ՝ Ի. Ֆյոդորով

գաղափարները տարածելով։ Նրանք պետությունը ընկալում էին որպես մի ինստիտուտ, որի օգտին ազատ մարդիկ իրենց իրավունքների մի մասից կարող են հրաժարվել, որպեսզի իշխանությունները հոգ տանեն քաղաքացիների անվտանգության և իրավունքների ապահովման համար։

Նրանք այդ գաղափարների իրականացման հիմնական միջոցը համարում էին ակտիվ քարոզչությունը (այսինքն՝ կրթությունը, որը բացատրում էր այս ամբողջ երևույթը), ինչպես նաև դրա հիման վրա հրապարակումները, արդար օրենքները։ Երկրների մեծ մասում օրենքների ընդունումը միապետության իրավասությունն էր, ուստի լուսավորիչները երազում էին «փիլիսոփա գահակալի», այսինքն՝ միապետի մասին, որը կընդուներ Լուսավորության իդեալները։ Եվրոպական մի շարք տիրակալներ XVIII դարում այս կամ այն չափով ընդունում էին լուսավորիչների գաղափարները և օգտագործում դրանք իրենց քաղաքականության մեջ։

Դրանց թվին էին պատկանում Պրուսիայի թագավոր Ֆրիդրիխ II-ը, Ավստրիայի կայսրուհի Մարիա Թերեզան, նրա որդին՝ կայսր Ջոզեֆ II-ը և այլք։ Լուսավորիչները հավատում էին, որ իրենց գաղափարներն իրականացնելու համար միապետերը պետք է ունենան անսահմանափակ իշխանություն, մի տեսակ «բռնապետեր» լինեն։ Դրա համար նրանք այդ տեսակի կառավարությունն անվանեցին «լուսավոր բռնապետություն»։ Սկսած XIX դարից՝ պատմագրության մեջ այն քաղաքական ռեժիմը, որի շրջանակներում միապետն այս կամ այն չափով պետական կառավարման ոլորտում արդիականացում և սոցիալական քաղաքականություն էր իրականացնում, կարգավորում էր տնտեսական կյանքը, մշակույթի և կրթության ոլորտն էր խթանում, կոչվեց լուսավորյալ աբսոլյուտիզմ։

Եկատերինա II-ը նույնպես երիտասարդ տարիքից հետաքրքրվում էր Լուսավորության ուսմունքներով և նամակագրության մեջ է եղել Վոլտերի հետ։ Նա փորձեց Եվրոպայում որպես լուսավորյալ կայսրուհի ճանաչվել, և իսկապես, լուսավորիչները նրան սկսեցին կոչել «Հյուսիսի Շամիրամ»։ Եկատերինա II-ի թագավորությունը սովորաբար բնութագրվում է որպես լուսավորյալ աբսոլյուտիզմի ժամանակաշրջան։ Բայց Եկատերինա II-ի իրական քաղաքականությունը որքանո՞վ էր համապատասխանում Լուսավորության գաղափարների իմաստին և էությանը։ Պատմագրության մեջ այս հարցի վերաբերյալ տարբեր կարծիքներ կան։ Որոշ հեղինակներ պնդում են, որ Եկատերինա II-ի ձեռնարկումները եղել են դեկլարատիվ և մակերեսային բնույթ ունեին. իրականացվել են Եվրոպայում ռուսական միապետության կերպարը բարելավելու և երկրում գոյություն ունեցող ավտոկրատ ճորտատիրական համակարգը քողարկելու

նպատակով: Մյուսները, ընդհակառակը, ընդգծում են կայսրուհու՝ Ռուսաստանում լուսավորչական գաղափարախոսության ոգով (որքանով, որ դա հնարավոր էր) իրական արդիականացում անցկացնելու ցանկությունը: Վերջապես ուրիշներն էլ կարծում են, որ Եկատերինա II-ը քաղաքականության մեջ ամենից առաջ իրատես էր. օգտագործել է հնարավոր տարբեր միջոցներ կայսրության ներքին և միջազգային դիրքերն ամրապնդելու նպատակով:

Օրենսդիր հանձնաժողովը: Կարևոր իրադարձություններից մեկը, որն իրականացրեց Եկատերինա II-ը լուսավորիչների գաղափարների ազդեցությամբ, Օրենսդիր հանձնաժողովի գումարումն էր: Կայսրուհու առջև խնդիր էր դրված մշակել նոր օրենսգիրք, քանի որ 1649 թվականին հրապարակված նախորդ համաժողովի օրենսգիրքը արդեն բավական հնացած էր: Որպես հանձնաժողովի ուղեցույց՝ կայսրուհին կազմեց մի «Հրահանգ»՝ հիմնված Եվրոպայում հայտնի փիլիսոփաների և իրավաբանների աշխատությունների վրա:

Ի տարբերություն նախորդ միապետերի օրոք նմանատիպ նպատակով պաշտոնյաներից կազմված այլ հանձնաժողովների՝ Եկատերինայի հանձնաժողովում աշխատելու համար ամբողջ երկրից ընտրվեցին պատգամավորներ: Նրանք հանձնարարականներ էին ստանում իրենց ընտրողներից և քրեական հետապնդումից անձեռնմխելիության իրավունք ունեին: Ընտրություններն անցկացվեցին շրջաններում և քաղաքներում՝ ըստ դասերի: Ընդամենը ընտրվեց 564 պատգամավոր, որոնք ներկայացնում էին ազնվականներին, քաղաքաբնակներին և պետական պաշտոնյաներին, գյուղացիներին, կազակներին և որոշ այլ խավերի, ինչպես նաև կայսրության առանձին ժողովուրդների: Ճորտերից պատգամավորներ չկային. համարվում էր, որ նրանց շահերը ներկայացնում էին կալվածատերերը: Սինոդի հոգևորականներից ընտրվել էր մեկ պատգամավոր: Օրենսդրական հանձնաժողովը գումարվեց 1767 թվականի ամռանը Մոսկվայի Կրեմլի Անկյունազարդ (Գրանովիտյան) պալատում և այնուհետև շարունակեց իր գործունեությունը Սանկտ Պետերբուրգում: 1769 թվականի սկզբին հանձնաժողովն անցկացրեց տասնյակ ժողովներ: Բայց օրենսգիրքը այդպես էլ ուժի մեջ չմտավ. հանձնաժողովը ցրվեց՝ Թուրքիայի հետ պատերազմի բռնկման ու միջոցների սղության պատճառով: Այնուհանդերձ հանձնաժողովի գործունեությունը չի կարելի համարել անպտուղ և անարդյունավետ: Նրա շնորհիվ կառավարությունը կարողացավ իմանալ կայսրության տարբեր խավերի և ժողովուրդների կարիքների ու ձգտումների մասին: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքում կուտակված ծավալուն նյութերը (պատգամավորներին ուղղված հանձնարարականներ, նիստերի արձանագրություններ, օրինագծեր) ակտիվորեն օգտագործվեցին հետագա օրենսդրության մեջ:

Մարզային բարեփոխումներ: Եկատերինա II-ի ամենակարևոր բարեփոխումներից մեկը տեղական ինքնակառավարման մարմինների վերափոխումն էր: Դրա սկիզբը դրվեց 1775 թ. հրապարակված «Համառուսական կայսրության գավառների կառավարման հիմնադրամներ»-ով: Պետրոս I-ի կողմից իրականացված տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումը լիովին դեռ ավարտված չէր: Այն

ժամանակ ներդրվել էր տեղական ինքնակառավարման եռաստիճան համակարգ՝ մարզ – գավառ – շրջան: Բայց այս մակարդակների միջև լիազորությունները հստակ ուրվագծված չէին, տեղական մակարդակում ոլորտային մարմիններ երբեք չստեղծվեցին, և ոստիկանության իշխանությունը բավարար զարգացած չէր: Սա հանգեցրեց շրջանների իշխանությունների թուլությանը և աշխատանքի անարդյունավետությանը, ինչը առավել ցայտուն դրսևորվեց Եմելյան Պուգաչովի ապստամբության ժամանակ (1773–1775):

Եկատերինա II-ի բարեփոխմանը համապատասխան՝ ստեղծվեց կառավարման երկաստիճան համակարգ՝ մարզ – շրջան: Վարչական բաժանման հիմնական միավորը դարձավ մարզը: Պաշտոնապես այս միավորը կոչվում էր փոխարքայություն, բայց միևնույն ժամանակ գուբերնիա բառն էր օգտագործվում նույն իմաստով: Հետագայում Պավել I-ի օրոք «փոխարքայություն» տիտղոսը վերացվեց: Ստեղծված մարզերը, ի տարբերություն նախկին չափազանց խոշորացվածների (դրանցից մի քանիսը կազմավորվել էին Պետրոս I-ի օրոք), դարձան ավելի խիտ, հավաք և բնակիչների թվով հավասար: Յուրաքանչյուր մարզ պետք է ունենար 300-400 հազար հարկատու և բաժանված լիներ մոտավորապես 10 շրջանների: Այսպիսով, երկրի եվրոպական մասում առաջացան մոտ 50 մարզեր, ինչպես նաև Դոնի զինվորների կազակական շրջանը, որն ուներ կառավարման իր առանձնահատկությունները: Ռուսաստանի Դաշնության ներկայիս գործող շրջաններից շատերը պատմականորեն վերաբերում են Եկատերինա II-ի օրոք ձևավորված մարզերին:

Մարզի գլխին կանգնած էր մարզպետը, որը լիակատար իշխանություն ուներ իրեն վստահված տարածքի վրա: Տարածաշրջանային մակարդակում ստեղծվեց արդյունաբերության կառավարման բավական հստակ համակարգ: Յուրաքանչյուր մարզում ստեղծվեցին գանձապետական պալատ, որը կառավարում էր ֆինանսները, հասարակական քամահրանքի մարմին, որը ղեկավարում էին «բարեգործական հաստատությունները» (հիվանդանոցներ, ապաստարաններ): Շրջկենտրոնում վարչական իշխանությունը պատկանում էր քաղաքապետին, շրջանում՝ ոստիկանապետին: 1782 թվականին ստեղծվեցին գործակալական վարչությունները՝ օբեր-ոստիկանապետի գլխավորությամբ, որը պատասխանատու էր օրենքի և կարգի համար և ենթարկվում էր մարզային իշխանություններին:

Դատական մարմինները կազմավորվեցին վարչակազմից առանձին: Նախկինում դատարանը կառավարում էին մարզպետերը և այլ ղեկավարներ: Այժմ նախատեսվում էր, որ գործերը քննվելու են ստորին և վերին ատյաններում և հնարավոր էր լինելու բողոքարկել: Դատարանը խիստ դասակարգային էր: Ազնվականների համար ստորին աստիճանի դատարանը շրջանի ներքին զեմստվոյի դատարանն էր, քաղաքաբնակների համար՝ քաղաքային մագիստրատը: Ճորտերը ենթարկվում էին իրենց տիրոջ դատարանին: Մարզում ամենաբարձր դատական մարմինը դատական պալատներն էին՝ քրեական և քաղաքացիական գործերի համար: Մարզի դատախազը վերահսկում էր օրենքների կատարումը և արդարադատության իրականացումը:

Ներդրված համակարգի կարևոր առանձնահատկությունն ընտրությունների առկայությունն էր: Ազնվականներն իրենց շրջանում ընտրում էին ոստիկանապետին,

ինչպես նաև ստորին դատարանի անդամներին: Քաղաքաբնակներն ընտրում էին քաղաքային մագիստրատների անդամներին: Ամեն դեպքում այս բոլոր մարմինները գործում էին իշխանությունների խիստ վերահսկողության ներքո. ընտրությունները ենթակա էին մարզպետի հաստատմանը:

Մարզային բարեփոխումների նախապատրաստումն ու իրականացումն ուղեկցվում էր տեղական ինքնակառավարման մարմինների միավորմամբ և տարածաշրջանային առանձնահատկությունների վերացմամբ: 1764 թ. դեկրետով Եկատերինա II-ը լուծարեց Զապորոժյան զորամիավորման Հեթմանությունը, իսկ 1775 թվականին՝ Զապորոժյան Սեչը: Իշխանության կազմակերպման համառուսական կանոնները տարածվեցին Լիֆլանդիայի և Էստլանդիայի (Լիտվա, Էստոնիա) վրա:

Ազնվականության և քաղաքաբնակների նկատմամբ իրականացվող քաղաքականությունը: Առաջնորդվելով լուսավորչական գաղափարներով՝ Եկատերինա II-ը ձգտում էր կանոնակարգել և երաշխավորել իր հպատակների իրավունքները: Բայց գործնականում դա առաջին հերթին ազդեց ազնվականության և քաղաքաբնակների վրա, որոնց համար 1785 թվականի ապրիլին միաժամանակ հրապարակվեցին արտոնությունների կանոնադրությունները: «Ազնվականության կանոնադրության» համաձայն՝ հաստատվեցին «ազնվական» դասի գոյություն ունեցող իրավունքները և տրվեցին նորերը: Ազնվականները, ինչպես նախկինում, իրավունք ունեին տիրելու գյուղացիներով բնակեցված հողերին ու գյուղերին, ազատված էին հարկերից ու մարմնական պատժից: Վերաստատվում էր ազնվականների ազատումը պետական պարտադիր ծառայությունից, որը ուժի մեջ էր մտել դեռ 1762 թվականին Պետրոս III-ի մանիֆեստով: Բացի այդ, ազնվականները իրավունք ստացան զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Ազնվականությունը պահպանեց իր մենաշնորհը գինեգործական գործարանների ստեղծման հարցում: Նրանք կարող էին նաև օգտագործել երկրի ընդերքի հարստությունները իրենց կալվածքներում: Նոր տրված արտոնություններից կարելի է նշել ազնվականների կողմից իրենց ծագումնաբանությունը պաշտոնապես պահպանելու և հսկելու իրավունքը: Նրանցից այն խլվել էր XVII դարի վերջին ցար Ֆեոդոր Ալեքսեևիչի կողմից՝ տեղային շահերի վերացման հետ կապված: Ի վերջո, առաջին անգամ ազնվականները իրավունք ստացան ստեղծել իրենց միավորումները շրջաններում և գավառներում, ընտրել ազնվականության առաջնորդներին, անցկացնել «ազնվականական ժողովներ», որտեղ նրանք կարող էին քննարկել իրենց կարիքները և հարցումներ ուղղել գերագույն իշխանությանը: Այսպիսով, Եկատերինա II-ի օրոք ազնվականները ստացան առավելագույն արտոնություններ, ինչը թույլ է տալիս շատ պատմաբանների խոսել «ազնվականության ոսկե դարի» մասին:

Համաձայն «Քաղաքների կանոնադրության»՝ քաղաքի բոլոր բնակիչներին երաշխավորվում էր սեփականության իրավունքը և արհեստներով, առևտրով զբաղվելու հնարավորությունը, ինչպես նաև այլ գործունեություն՝ կախված դասային կարգավիճակից: Ստեղծվեցին համաքաղաքային ինքնակառավարման մարմիններ: Այդ նպատակով քաղաքի ողջ բնակչությունը բաժանված էր վեց դասի. 1) իրական քաղաքաբնակներ (ազնվականներ, ազատ մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք

քաղաքում տներ ունեին), 2) բոլոր երեք գիլդիաների վաճառականներ, 3) արտադրամասային արհեստավորներ, 4) այլ քաղաքների բնակիչներ և օտարազգի վաճառականներ, 5) ականավոր քաղաքացիներ (հարուստ վաճառականներ, բանկիրներ, գիտնականներ) 6) արվարձանաբնակներ:

Վերջին խումբը ներառում էր քաղաքի բնակիչների մեծ մասը, որոնք զբաղվում էին մանր առևտրով և արհեստներով (նրանք, որոնք չէին գրանցվել արտադրամասերում): Շուտով նրանց տրվեց «քաղքենի» (լեհերեն «miasto» – քաղաք բառից) անունը: Յուրաքանչյուր խումբ ընտրեց իր ներկայացուցչին («իրավասու») քաղաքային խորհրդում, որն ընտրում էր քաղաքապետին: Այսպիսով, առաջին անգամ ձևավորվեց միասնական «քաղաքային հասարակություն», որը ներառում էր բոլոր քաղաքաբնակներին՝ ամենքի համար միասնական քաղաքային ինքնակառավարմամբ: Քաղաքային խորհուրդը և քաղաքապետը հիմնականում զբաղվում էին հասարակական բարեկեցության ու քաղաքային տնտեսության հարցերով և գործում էին մարզային իշխանությունների, քաղաքապետի խիստ վերահսկողության ներքո:

Ճորտատիրական իրավունք: Երկրի բնակչության 90 %-ը կազմող գյուղացիության մասով «իրավունքների ոչ մի կանոնադրություն» չտրվեց: Նման գաղափար կար (կանոնադրություն «Գյուղական բնակիչների իրավունքների մասին»), սակայն այն իրականություն չդարձավ: Խոսքը արքունապատկան գյուղացիների մասին է: Գյուղացիների կեսից ավելին ճորտատիրության մեջ էր գտնվում և կախված էին իրենց տերերից: Անձնական անազատության այս ծայրահեղ դրսևորումը բացահայտ հակասության մեջ էր լուսավորության իդեալների հետ: Եկատերինա II-ը չէր կարող դա չհասկանալ: Բայց իբրև իսկական քաղաքական գործիչ՝ նա չէր կարող չհասկանալ նաև, որ ազնվականները, որոնց մեծ մասը ճորտատերեր էին, հասարակության մեջ իր հիմնական սոցիալական հենարանն էին: Ազնվականությունն ամբողջությամբ պաշտպանում էր միապետության սկզբունքը երկրի քաղաքական կյանքում: Ի պատասխան դրան՝ կայսրուհին ազնվականներին բացարձակ իշխանություն շնորհեց իրենց կալվածքներում գտնվող ճորտերի հանդեպ: Այսպիսով, Ռուսաստանում լուսավորյալ Եկատերինա II-ի օրոք ճորտատիրական համակարգը ծաղկում ապրեց:

Գյուղացիների կյանքը տերերի կալվածքներում ամբողջովին կախված էր սեփականատիրոջ կամքից, իսկ երբեմն էլ կալվածատիրոջ կամայականություններից: Հողատերն էր որոշում գյուղացիական տուրքերի չափը, գյուղացիների անձնական ճակատագրերը կախված էին նրա քմահաճույքներից. նա էր արդարադատություն իրականացնում և նշանակում ամեն տեսակ պատիժներ իր հայեցողությամբ: Գյուղացին իր ունեցվածքի ու տնտեսության տերը չէր. օրինականորեն դա նաև հողատիրոջ սեփականությունն էր: Վերջապես ծաղկեց մի այնպիսի այլանդակ երևույթ, ինչպիսին ճորտերի առևտուրն էր: Վախենալով ազնվականության դժգոհությունից՝ Եկատերինա II-ը չհամարձակվեց գյուղացիներին որևէ իրավունք տալ: Այնուամենայնիվ նա ցանկանում էր բարելավել իրավիճակը: Բայց ինչպե՞ս: Կայսրուհին կարծում էր, որ գյուղացիների վիճակը անխուսափելիորեն կբարելավվի, եթե նրանց տերերը դառնան բարի և հոգատար խնամակալներ նրանց նկատմամբ: Երբեմն նրա բարեմաղթանքները

արձագանք էին գտնում ազնվականության շրջանակներում: Բայց ամեն դեպքում գյուղացիները պաշտպանվելու օրինական միջոցներ չունեին իրենց տերերի կամայականություններից:

Եկատերինա II-ը նպաստեց լրագրության զարգացմանը, և ինքն էլ փորձեց պաշտպանել «բարեպաշտության» և արդարության գաղափարները: Միաժամանակ Ռուսաստանում առաջ եկան մտածողներ, որոնք, ավելի խոր ընդունելով լուսավորչական գաղափարները, հանդես եկան ճորտատիրության դեմ սուր մեղադրանքներով ու քննադատությամբ: Նովիկովը իր հրատարակած «Տրուտեն» և «Ժիվոպիսեց» ամսագրերում գրեց ճորտ գյուղի աղքատության և հողատերերի բռնակալ վերաբերմունքի մասին: Օրենսդիր հանձնաժողովի նիստերում պատգամավոր Գրիգորի Կորոբինը հայտարարեց, որ գյուղացիների փախուստի պատճառը նրանց ծանր վիճակն է: Ա.Ն. Ռադիշչևի «Ճամփորդություն Սանկտ Պետերբուրգից դեպի Մոսկվա» գիրքը ուժեղ տպավորություն թողեց, որի հեղինակը ռուսական գյուղում անօրինականության և բռնակալության մասին ոչ միայն ապշեցուցիչ ապացույցներ էր բերում, այլև բարձրացնում էր ճորտատիրության վերացման հարցը՝ սպառնալով իշխանություններին ժողովրդական ընդվզումով, եթե իրավիճակը չփոխվի:

1773–1775 թվականներին Ուրալում և Վոլգայի մարզում Եմելյան Պուգաչովի առաջնորդությամբ ապստամբություն բռնկվեց. նա իրեն հռչակեց կայսր Պետրոս III: Այն սկսվեց որպես կազակական շարժում, բայց շուտով ճորտերը ակտիվ մասնակցություն ունեցան դրան: Ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, բայց «նոր պուգաչովշչինայի» սարսափը մշտապես առկա էր իշխանությունների մտքում: Դա նրանց դրդում էր նոր միջոցներ ձեռնարկել, թեև Եկատերինա II-ի օրոք նրանք անդրադարձան տեղական ինքնակառավարման վերակազմավորման և ձեռնարկատիրության ազատության ընդլայնման խնդիրներին:

Այսպիսով, XVIII դարի վերջին ճորտատիրությունը, հասնելով իր գագաթնակետին, դարձավ պետական քաղաքականության և հասարակական մտքի կարևոր խնդիրներից մեկը: Կարելի է ասել, որ հենց այդ ժամանակ առաջացավ «գյուղացիական հարցը», այսինքն՝ ճորտատիրության հարցը, որը լուծվեց 1861 թ. միայն:

Տնտեսական քաղաքականությունը: Տնտեսական քաղաքականության ոլորտում Եկատերինա II-ը կիսում էր այսպես կոչված «ֆիզիոկրատների» գաղափարները, որոնք կարծում էին, որ հարստության հիմքը ոչ թե փողն է, ոսկին և արծաթը, այլ ապրանքները, առաջին հերթին՝ գյուղատնտեսության մեջ արտադրվածները: Նրանք պաշտպանում էին ազատության լուսավորչական գաղափարը նաև առևտրի և ձեռնարկատիրության ոլորտում: Հետևաբար մեծ ուշադրություն է դարձվել գյուղատնտեսությանը: Եկատերինա II-ի օրոք ստեղծված Ազատ տնտեսական հասարակությունը ակտիվորեն ներգրավված էր դրանում. հրատարակվում էին ամսագրեր, այս թեմայով թարգմանվում էին գրքեր:

1782 թվականին բավական չափավոր մաքսային սակագին սահմանվեց, որը բարենպաստ ազդեցություն ունեցավ արտաքին առևտրի զարգացման վրա: Տարբեր տեսակի մենաշնորհները հասցվեցին նվազագույնի: Ներքին շուկայի և ապրանքա-

դրամային շրջանառության զարգացմանը նպաստեց 1769 թ. թղթադրամի, այսպես կոչված, ասիգնացիաների ներմուծումը:

1775-ին վաճառականներն ազատվեցին շնչահարկից և այլ տուրքերից, որոնք նրանք վաղուց անտի «քաշում էին» արվարձանաբնակների հետ: Այժմ վաճառականները պարտավոր էին հարկ վճարել հայտարարագրված կապիտալից միայն: Կախված իրենց կապիտալի չափից՝ նրանց դասակարգում էին գոյություն ունեցող երեք գիլդիաներից մեկի շարքում: Առաջին գիլդիայի վաճառականները՝ որպես ամենահարուստները, ամբողջ երկրում և արտասահմանում առևտուր անելու իրավունք ունեին: Իրենց իրավունքները ունեին նաև երկրորդ և երրորդ գիլդիաների անդամները: Ընդլայնվեցին արդյունաբերական գործունեության հնարավորությունները: 1775 թ. մանուֆակտուրաներ հիմնելու իրավունք տրվեց նաև ճորտ գյուղացիներին: Առևտրականների դասը ակտիվորեն ներգրավվեց արդյունաբերական ձեռնարկատիրության մեջ: XVIII դարի երկրորդ կեսին արդյունաբերական ձեռնարկությունների թիվը մի քանի անգամ ավելացավ և դարավերջին գերազանցեց 3 հազարը այն դեպքում, երբ Պետրոս I-ի օրոք կար մոտ 200 արդյունաբերական ձեռնարկություն:

Դրանց թվում կային գանձարանին, ինչպես նաև ազնվականներին պատկանող ձեռնարկություններ, որտեղ նրանք օգտագործում էին իրենց ճորտերի աշխատանքը (վոտչինայի մանուֆակտուրա): Բայց վարձու աշխատուժ օգտագործելը գնալով ավելի էր տարածվում հատկապես վաճառականների գործարաններում: Կառավարությունը մերժեց վաճառականների խնդրանքը՝ նրանց ճորտեր ունենալու իրավունք շնորհելու վերաբերյալ, և գործարանների համար ճորտ գյուղացիների գնումը դադարեցվեց: Դա նպաստեց նաև վարձու աշխատուժի ընդլայնմանը:

Ապրանքադրամային հարաբերությունների զարգացումը մեծացրեց հողատերերի՝ եկամուտ ստանալու շահագրգռվածությունը, ինչը հանգեցրեց ճորտատիրական տնտեսության հատուկ ձևերի ստեղծմանը: Սևահողային շրջաններում, որտեղ հողը բերրի էր, կալվածատերերը կրճատեցին գյուղացիական հողահատկացումները և ընդարձակեցին տիրապատկան վարելահողերը, որտեղ կազմակերպեցին վաճառքի համար նախատեսված հացահատիկի արտադրություն: Դրանք մշակվում էին ճորտերի կողմից՝ կալվածատիրոջը տրվելիք տուրքերի (կոռ ու բեգյար) հաշվին: Այսպիսով, դա կոռի վրա հիմնված տնտեսություն էր, ապրանքային տնտեսություն, բայց հիմնված հարկադիր աշխատանքի վրա:

Ոչ սևահողային գավառներում կալվածատերերը, ընդհակառակը, հողի մեծ մասը թողեցին գյուղացիներին, բայց նրանցից պահանջեցին առաջին հերթին բահրա (հողատուրք)՝ դրամական տեսքով: Այսպես առաջացավ հողատուրքի տնտեսությունը: Գյուղացիները հնարավորություն չունեին եկամուտ ստանալու իրենց հողից, որն այստեղ բերրի չէր, նաև պետք է փող աշխատեին հողատիրոջը վճարելու համար. դա իրականացնում էին ոչ գյուղատնտեսական գործունեությամբ՝ արհեստագործությամբ: Նրանք կարող էին զբաղվել ջուլհակությամբ, դարբնությամբ, խեցեգործությամբ, փայտամշակմամբ, կաշվի և մորթու մշակման արհեստներով: Բացի այդ՝ գյուղացիներին վարձում էին ապրանքներ տեղափոխելու համար, կամ կալվածատիրոջ

թույլտվությամբ նրանք գնում էին արտագնա աշխատանքի (տարագնացություն)՝ գումար վաստակելու գործարաններում, որտեղ նրանք, ըստ էության, դառնում էին վարձու աշխատողներ։

Որոշ գյուղացիների հաջողվեց կազմակերպել իրենց սեփական արտադրությունը, ընդլայնել այն և որպես վարձու բանվորներ՝ ներգրավել այլ գյուղացիների։ Գյուղացիական այս ձեռնարկությունները առավել հաճախ տեքստիլ էին արտադրում, և դրանց տերերն աստիճանաբար անցան ներկրվող հումքի օգտագործմամբ մետաքսե և բամբակյա գործվածքների արտադրությանը։ Այստեղ ամենատարածվածը չթի արտադրությունն էր, որը մեծ պահանջարկ ուներ ներքին շուկայում։ Այսպիսով, գյուղացիական արդյունաբերության հենքի վրա ձևավորվեց կապիտալիստական տնտեսության արդյունաբերական ձեռնարկությունների մի տեսակ, որի տերերը ճորտերն էին։ Ձևական առումով, իհարկե, դրանք պատկանում էին կալվածատիրոջը, ինչպես հենց իրենք՝ «կապիտալիստները»։ Բայց ժամանակի ընթացքում այս գյուղացիները կարողացան գնել իրենց ազատությունը։ Այսպես XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանում առաջացան ձեռնարկատիրական մի շարք խոշոր դինաստիաներ՝ Մորոզովները, Ռյաբուշինսկիները, Գարելինները, Զիմինները և շատ ուրիշներ։ Այս դինաստիաների հիմնադիրները Եկատերինայի դարաշրջանի գյուղացիներն էին։

Քաղաքականությունը կրոնի և եկեղեցու ոլորտում: Գալով իշխանության՝ Եկատերինա II-ը ձեռնպահ մնաց եկեղեցական հողերի աշխարհիկացման մասին Պետրոս III-ի որոշումը իրականացնելուց։ Սակայն շահելով եկեղեցու վերնախավի վստահությունն ու աջակցությունը՝ 1764 թ. կայսրուհին հայտարարեց այդ բարեփոխման իրականացման մասին։ Քիչ հավանական է, որ նա այստեղ առաջնորդվել է Լուսավորության հակակղերական գաղափարներով, ավելի շուտ, դա նրա նախորդների կողմից սկսված գծի շարունակությունն էր. այն է՝ սահմանափակել եկեղեցու իշխանությունը և այն ենթարկել պետությանը՝ դրանով իսկ ամրապնդելով միապետությունը։ Վանքերի և եպիսկոպոսական աթոռների կալվածքները անցան պետության վերահսկողության տակ։ Եկեղեցապատկան ճորտ գյուղացիները ևս հայտնվեցին պետության վերահսկողության տակ։ Փոքր մենաստանները փակվեցին։ Կախված իրենց նշանակությունից՝ մնացածները բաժանվեցին երեք դասի։ Ըստ իր դասի՝ յուրաքանչյուր վանք գանձարանից ստանում էր դրամական որոշակի նպաստ։ Այս կերպ վանքերը կարող էին շարունակել իրենց աշխատանքը, գոյությունը, սակայն եկեղեցու կախվածությունը պետությունից անկասկած մեծացավ։ Ընդհանրապես Եկատերինա II-ի օրոք հետևողական քաղաքական գիծ էր տարվում կրոնամիջյան և ազգամիջյան խաղաղության ամրապնդման համար։ Դրան նպաստեցին նաև իսլամի դեմ ձեռնարկված որոշակի միջոցառումները։ 1788 թվականին Ուֆայում ձևավորվեց «Մահմեդական իրավունքի հոգևոր ժողովը», որը երկրում դարձավ մահմեդականների կրոնական կենտրոնը։

Այսպիսով, Եկատերինա II-ը երկիրը արդիականացնելու համար ձգտում էր օգտագործել Լուսավորության գաղափարներից շատերը իր գործունեության մեջ ոչ միայն հանուն լուսավորյալ կայսրուհու իր կերպարը բարելավելու նպատակով։ Հենց այդպես՝ Լուսավորության ոգով միջոցներ ձեռնարկվեցին ազնվականներին պարտադիր

ծառայությունից ազատելու, տեղական ինքնակառավարման մարմիններ կազմակերպելու, վաճառականների կարգավիճակի բարձրացման, ձեռներեցության ոլորտում ազատությունների ընդլայնման, լրագրության և կրթության, կրոնական հանդուրժողականության, եկեղեցական հողերի աշխարհիկացման, օրենսդրական հանձնաժողովի կազմակերպման և այլ հարցերի շուրջ: Բայց միևնույն ժամանակ կայսրուհին մնաց իրատես և լուսավորչական գաղափարները օգտագործում էր բացառապես ֆեոդալական վարչակարգը անբեկանելի պահելու և ինքնակալությունը անվերապահ իր ձեռքերում պահպանելու պայմանով: Այդպիսին էր Եկատերինա II-ի լուսավորական միապետության քաղաքականության էությունը:

§ 41. Ռուսաստանի արտաքին քաղաքականության նպատակները, խնդիրները և արդյունքները XVIII դարի երկրորդ կեսին

Նովոռոսիայի ստեղծումը և զարգացումը: Եկատերինա II-ի օրենսդրական ակտիվ աշխատանքներն ուղեկցվել են արտաքին քաղաքականության ոլորտում մեծ հաջողություններով: Նրա օրոք լուծում ստացան աշխարհաքաղաքական ամենակարևոր խնդիրները: Թուրքիայի հետ երկու պատերազմները (1768–1774 թթ. և 1787–1791 թթ.) ավարտվեցին հաղթանակով: Պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում՝ 1783 թվականի ապրիլի 8-ին, Եկատերինա II-ը հրապարակեց մանիֆեստ՝ Ղրիմի և Ղրիմի խանության ողջ տարածքը Ռուսական կայսրությանը միացնելու մասին: Ռազմաքաղաքական այս քայլերի շնորհիվ Ռուսաստանը ելք ստացավ դեպի Սև ծով՝ Դնեստր գետաբերանից մինչև Կուբանի գետաբերան (տե՛ս Հավելվածը, քարտեզ N 9):

Ռուսաստանում հայտնվեց ռազմական առաջնորդների փայլուն աստղաբույլ: 1768–1774 թվականների ռուս-թուրքական պատերազմում ամենավառ կերպով իրեն դրսևորեց Պ.Ա. Ռումյանցևը, որը 1770 թ. հաղթանակներ տարավ Լարգա և Կահուլ գետերի մարտերում, որոնք մեծապես կանխորոշեցին երկու տերությունների միջև պատերազմի ելքը: Հաջորդ պատերազմում ռուսական բանակի ընդհանուր ղեկավարումն անցավ քաղաքական խոշոր գործիչ, պատասխանատու կառավարիչ, Ռազմական կոլեգիայի ղեկավար, զորքերի զինման և կազմակերպման գործում կարևոր բարեփոխումներ նախաձեռնող Գ.Ա. Պոտյոմկինին: 1788 թվականի դեկտեմբերին նա գլխավորեց Օչակովի վրա (Թուրքական ամրոց Դնեպրի գետաբերանում) հարձակումը: Այս պատերազմում անգերազանցելի էր Ա.Վ. Սուվորովի



Ա.Վ. Սուվորով

հանճարը, որը, իր «հրաշք հերոսներին» գլխավորելով, 1789 թ. վճռորոշ հաղթանակներ տարավ Ֆոկշանում և Ռիմնիկ գետի մոտ: Վերջինում ռուսական զորքերը, հետևելով արագության և ճնշում գործադրելու սուվորովյան սկզբունքին, 70 ժամում անցան մոտ 80 մղոն: Նրանք հեղեղի պես թափվեցին իրենցից չորս անգամ մեծ թվակազմով թշնամու վրա և նրան փախուստի մատնեցին:

1790 թվականի դեկտեմբերի 11-ին Սուվորովի զորքերը Դանուբի գետաբերանում գրավեցին անառիկ համարվող Իսմայիլ ամրոցը, որը ճակատամարտից ոչ շատ առաջ թուրքերը ամրաշինել էին ֆրանսիացի ինժեներների մասնակցությամբ: 1770 թվականին ռուսական նավատորմը, կոմս Ալեքսեյ Գրիգորևիչ Օռլովի գլխավորությամբ Բալթիկ ծովից նավարկելով, ջախջախեց թուրքական նավատորմի ուժերը, որոնք կենտրոնացած էին Էգեյան ծովի Չեսմա ծոցում: Ելքը դեպի Սև ծով հիմք դրեց այստեղ ռուսական ռազմածովային ուժերի ստեղծմանը, ինչպես նաև Սևաստոպոլի հերոսական պատմության սկիզբը դրեց: 1787–1791 թվականների պատերազմի ժամանակ Սևծովյան նավատորմը, ծովակալ Ֆ. Ֆ. Ուշակովի գլխավորությամբ ծովից աջակցություն ցուցաբերելով ռուսական բանակին, մի շարք հաղթանակներ տարավ օսմանյան ծովային ուժերի նկատմամբ:

Ռուսաստանի կազմում ընդգրկված Սևծովյան տարածաշրջանի հյուսիսային տարածքները, ներառյալ Ղրիմի խանությունը, որը մի քանի դար շարունակ գտնվում էր Օսմանյան կայսրությունից վասալության և կախվածության մեջ, կոչվեց «Նովոռոսիա», այսինքն՝ Նոր Ռուսաստան: Բացառությամբ Ղրիմի մի քանի քաղաքների՝ դրանց մեծ մասը սակավաբնակ տափաստանային տարածք էր: XVIII դարի վերջին սկսվեց այս տարածաշրջանի ակտիվ զարգացումը: Հիմնվեցին քաղաքներ և նավահանգիստներ, այդ թվում՝ Օդեսան, Եկատերինոսլավը, Նիկոլաևը, Սևաստոպոլը, Խերսոնը, որոնք դարձան արդյունաբերության, առևտրի և ռուսական մշակույթի կենտրոններ: 1764 թվականի մանիֆեստի հիման վրա այլ երկրներից Ռուսաստան հրավիրվեցին վերաբնակիչներ: Նրանք բնակություն հաստատեցին այն վայրերում, որտեղ բավականաչափ ազատ հողեր ու տարածքներ կային, ստացան զգալի արտոնություններ և դավանանքի ազատություն: Նրանց մեծ մասը (գերմանացիներ, բուլղարներ) հաստատվեց Նովոռոսիայում: Մի քանի տասնամյակ անց Նովոռոսիան ռուսական վարչակազմի ղեկավարությամբ վերածվեց բազմազգ բնակչությամբ (ռուսներ, մալոռուսներ՝ ուկրաինացիներ, հրեաներ, հույներ և շատ ուրիշներ) ծաղկող շրջանի:

Ռուսաստանը և Ռեչ Պոսպոլիտայի բաժանումները: Արտաքին քաղաքականության կարևոր և բարդ խնդիրներից էին Լեհաստանի հետ հարաբերությունները: Լեհաստանը XVI դ. Լիտվայի հետ միավորվելուց հետո ստեղծեց Համագործակցություն՝ Ռեչ Պոսպոլիտա անունով (Լեհ-լիտվական համագործակցության): Այն ժամանակ, երբ եվրոպական շատ երկրներ միապետության և կենտրոնական իշխանության ամրապնդման ճանապարհով շարժվեցին, Լեհաստանում քաղաքականության մեջ որոշիչ դեր խաղացին մագնատների խմբերը, իսկ թագավորական իշխանությունը գնալով թուլացավ: Դա հանգեցրեց երբեմնի հզոր Ռեչ Պոսպոլիտայի աստիճանական թուլացմանը: XVIII դարում Ռուսաստանը շահագրգռված էր Լեհաստան պետության

պահպանմամբ և նրա հետ բարեկամական հարաբերությունների հաստատմամբ: Ռուսական դիվանագիտությանը դա հաջողվել է երկար ժամանակ: 1764 թվականին Սեյմում Ռուսաստանի աջակցությամբ թագավոր ընտրվեց Ստանիսլավ Ավգուստ Պոնիատովսկին: Լեհաստանի արևմտյան հարևանները՝ Ավստրիան և Պրուսիան, դժգոհ էին լեհ-լիտվական համագործակցության վրա Ռուսաստանի աճող ազդեցությունից և առաջ քաշեցին նրա տարածքների բռնազավթման ծրագիրը: Օսմանյան կայսրության հետ սկսված պատերազմի և Լեհաստանում հակառուսական տրամադրությունների սրման համատեքստում Ռուսաստանն այլևս չկարողացավ վարել իր նախկին քաղաքականությունը և 1772 թվականին մասնակցեց լեհ-լիտվական համագործակցության առաջին բաժանմանը: Ռուսաստանը իր կազմի մեջ ներառեց ժամանակակից Բելառուսի և Լատգալեի (այժմ՝ արևելյան Լատվիա) միայն հյուսիսը և արևելքը: Հետագա տարիներին Լեհաստանում ուժեղացան պետության ամրապնդմանն ուղղված շարժումները, որոնց վրա մեծ ազդեցություն ունեցան Ֆրանսիական հեղափոխության առաջ բերած գաղափարները: Սա ընդունելի չէր ո՛չ Բեռլինի, ո՛չ Վիեննայի, ո՛չ էլ Սանկտ Պետերբուրգի միապետական վարչակարգերի համար: 1793 թվականին տեղի ունեցավ Ռեչ Պոսպոլիտայի երկրորդ բաժանումը, որին ի պատասխան՝ Լեհաստանում Թադեուշ Կոսյտուշկոյի գլխավորությամբ ապստամբություն բռնկվեց: Այն ռուսական զորքերի մասնակցությամբ ճնշվեց: 1795 թվականին տեղի ունեցավ Ռեչ Պոսպոլիտայի երրորդ բաժանումը, ինչի արդյունքում լեհական պետությունը դադարեց գոյություն ունենալ, իսկ նրա տարածքն ամբողջությամբ բաժանվեց Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի միջև: Լեհական բուն հողերը բաժին ընկան վերջին երկու տերություններին: Ռուսաստանը ստացավ Լիտվան, Կուրլյանդիան (այժմ՝ Լատվիայի արևմտյան մասը), ինչպես նաև արևմտառուսական հողերը, որոնք ժամանակին Ռուսիա պետության մասն էին կազմում և հիմնականում բնակեցված էին ռուս ժողովրդի հետ ընդհանուր ծագում ունեցող ուղղափառ բնակչությամբ: Այս հանգամանքը չեզոքացրեց դրա բևեռացումը և կաթոլիկացումը, ինչպես նաև նպաստեց այս տարածքներում ազգային, մշակութային և հոգևոր ավանդույթների պահպանմանն ու զարգացմանը:

Ռուսաստանը XVIII դարի միջազգային ասպարեզում: Ֆրանսիական հեղափոխությունը: Արտաքին քաղաքական հաջողությունները նպաստեցին միջազգային ասպարեզում Ռուսաստանի հեղինակության աճին: Բավական է նշել 1780 թվականի Չեզոք սպառազինության հռչակագիրը, որի մասին հայտարարել էր Ռուսաստանը՝ նպատակ ունենալով աջակցել Հյուսիսային Ամերիկայի գաղութարարներին, որոնք պատերազմ էին մղում բրիտանական տիրապետության դեմ: Ռուսաստանը չէր կարող նաև մի կողմ քաշված մնալ, երբ Ֆրանսիայում բռնկվեց և մեծ թափ հավաքեց հեղափոխությունը: Ռուսաստանը միացավ Ֆրանսիայի դեմ տնտեսական շրջափակմանը, արգելեց ֆրանսիական ապրանքների ներմուծումը, և ազատամիտ ծայրահեղականների (յակոբինյանների) ահաբեկչությունից փախած ֆրանսիացի շատ արիստոկրատներ ապաստան գտան Ռուսաստանում: Ֆրանսիայի դեմ պատերազմներին Ռուսաստանը ակտիվ մասնակցություն բերեց արդեն հետհեղափոխական ժամանակներում՝ Պավել I-ի իշխանության շրջանում:

§ 42. Ռուսաստանը XVIII-XIX դարերի սահմանագծին: Պավել I

Կայսեր անհատականությունը: Պավել I-ի գահակալությունը (1796–1801) Ռուսաստանի պատմության մեջ կարճ, բայց շատ ուշագրավ շրջան է: Լինելով կայսր Պետրոս III-ի որդին, որը գահընկեց արվեց դավադրության արդյունքում, Պավելը ստիպված եղավ սպասել 34 երկար տարիներ, մինչև վերջապես հնարավորություն ունեցավ գահ բարձրանալ: Նրա հարաբերությունները Եկատերինա II-ի հետ գնալով ավելի թշնամական էին դառնում: Դա ազդեց Պավելի բնավորության և Եկատերինա II-ի բազմաթիվ նորամուծությունների, կայսրուհու անմիջական շրջապատի նկատմամբ նրա վերաբերմունքի վրա:

Պավել կայսեր թագավորությունը սկսվեց Եկատերինա II-ի մահից հետո, որը տեղի ունեցավ 1796 թվականի նոյեմբերի 6-ին: Գահ բարձրանալով՝ նոր կայսրը ակտիվորեն զբաղվեց պետության կառավարման գործերով: Նրա գահակալության կարճ ժամանակահատվածում ընդունվեցին տասնյակ օրենքներ: Դրանցից շատերը չեղյալ համարեցին Եկատերինա II-ի նորամուծությունները: Նախորդ գահակալության ազդեցիկ մարդկանցից շատերը հալածանքների ենթարկվեցին, աքսորվեցին: Պավել I-ն իրեն շրջապատեց նոր մարդկանցով: Բայց նրանք էլ մայրաքաղաքում ծառայող շատերի նման իրենց բավականաչափ հանգիստ չէին զգում: Կայսրն աչքի էր ընկնում իր տաքարյուն, անհավասարակշիռ բնավորությամբ. ամենափոքր վիրավորանքի, սահմանված կարգը խախտելու համար մեղավորը անմիջապես ենթարկվում էր խիստ պատժի, այդ թվում՝ աքսորի դեպի Սիբիր: Այսպիսով, Պավել I-ը պատմության մեջ մտավ որպես դաժան բռնակալ, որի գործողություններն ու որոշումները մի կողմից բացատրվում էին նրա ծանր բնավորությամբ, մյուս կողմից՝ մոր և նրա մտերիմների նկատմամբ թշնամական վերաբերմունքով: Նրա մոտալուտ մահն այս դեպքում ընկալվեց որպես երկրի ազատագրում բռնակալից:



Պավել I: Նկարիչ՝ Վ.Լ. Բուրովիկովսկի

Պավել I-ի վարած ներքին քաղաքականության հիմնական սկզբունքները: Մի շարք պատմաբաններ ժամանակի ընթացքում փորձ են արել որոշակի տրամաբանություն և համակարգվածություն գտնել Պավել I-ի գործողություններում և որոշումներում: Իսկ արվեստի գործերում նա հանդես է եկել որպես ողբերգական հերոս, մի տեսակ «ռուսական Համլետ», որը գործեց հանուն երկրի բարօրության, բայց չհասկացված ու ատելի մնաց և զոհվեց: Այնուամենայնիվ Պավել I-ի գործունեության մեջ չի կարելի չնկատել որոշակի հետևողականություն և համակարգվածություն:

Ի տարբերություն Եկատերինա II-ի, որն իր քաղաքականության մեջ օգտագործում էր Լուսավորության գաղափարները՝ Պավել I-ը հիմնականում զուտ ոստիկանական և բյուրոկրատական միջոցներով ամրապնդեց միապետականության ռեժիմը: Նա ամեն կերպ փորձում էր ամրապնդել կայսեր անձնական իշխանությունը, ամեն ինչ ու բոլորին ենթարկել իր վերահսկողությանը:

Դրանով է բացատրվում ազնվականներին պարտադիր ծառայությունից ազատելու մասին օրենքի կասեցումը, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրության սկզբունքների վերացումը, ազնվականական միությունների լուծարումը, կալվածատերերի ու ճորտերի հարաբերություններին միջամտելը: 1797 թվականին օրենք ընդունվեց «եռօրյա կոռի» մասին, ըստ որի՝ կալվածատերերին առաջարկվում էր ճորտերին իրենց կալվածքներում աշխատեցնել շաբաթական երեք օրից ոչ ավելի (չհաշված կլիրակիները, երբ աշխատանքն արգելված էր կրոնական նկատառումներով): Ի վերջո, Պավել I-ը ներկայացրեց իրավահաջորդության հստակ կարգը, ըստ որի՝ գահը անցնում էր մահացած կայսեր ավագ որդուն, իսկ նրա բացակայության դեպքում, ըստ ավագության՝ հաջորդ եղբորը:

Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը Պավել I-ի օրոք: Պավել I-ը անհաշտ պայքար էր մղում Ֆրանսիական հեղափոխության ազդեցության դեմ և որոշեց մասնակցել Ֆրանսիայի դեմ ռազմական գործողություններին: Ֆրանսիայում հեղափոխությունն արդեն ավարտվել էր, և իշխանության եկած նոր վերնախավը ձգտում էր գերիշխանություն հաստատել Եվրոպայում: 1799 թվականին Ա.Վ. Սուվորովի գլխավորությամբ տեղի ունեցան ռուսական զորքերի իտալական և շվեյցարական հայտնի արշավանքները: Միջերկրական ծովում գործում էր Ֆ.Ֆ. Ուշակովի ղեկավարած նավատորմը: Ռուսական զենքի հաջողությունները հեղափոխական Ֆրանսիայի նշանավոր գեներալների դեմ Ռուսաստանի դաշնակիցներին անհանգստություն էին պատճառում (առաջին հերթին՝ Ավստրիային և Անգլիային), որոնք վախենում էին ռուսական ազդեցության՝ չափից ավելի ուժեղացումից: Ալպյան լեռների հերոսական անցումից հետո Սուվորովը հայտնվեց Շվեյցարիայում՝ ռուսական զորքերին թվային առումով մի քանի անգամ գերազանցող թշնամու առջև, առանց դաշնակիցների: Արդյունքում Պավել I-ը խզեց հարաբերությունները դաշնակիցների հետ և իր բռնկվող բնավորության համաձայն՝ անմիջապես դաշինք կնքեց Ֆրանսիայի նոր տիրակալ գեներալ Բոնապարտի հետ: Հայտարարվեց Անգլիայի դեմ պատերազմի և դեպի Հնդկաստան արշավի նախապատրաստության մասին: Արտաքին քաղաքականության մեջ այսպիսի անհետևողականությունը է՛լ ավելի սրեց ազնվականության դժգոհությունը հատկապես մայրաքաղաքում: Աստիճանաբար հասունացավ դավադրության ծրագիրը, որը 1801 թվականի մարտի 12-ի գիշերը հանգեցրեց պալատական հեղաշրջման և Պավել կայսեր սպանությանը:

Ո՞րն էր Պավել I-ի մահվան պատճառը, որը ձգտում էր երկրում կարգուկանոն հաստատել, կենտրոնական իշխանությունն ամրապնդել և ակտիվ արտաքին քաղաքականություն վարել: Ակնհայտ է՝ կայսրը մի կողմից գիտակցում էր, որ ազնվականությունը, բանակն ու բյուրոկրատիան իր հիմնական հենարանն են, մյուս կողմից՝

«ազնվական» դասակարգին զրկեց արդեն իսկ ունեցած արտոնություններից և իր երբեմն չափից դուրս բռնակալական նկրտումներով անցավ միապետի և երկրի քաղաքական վերնախավի հարաբերություններում ընդունելի գիծը՝ զրկելով նրան հանգստությունից և սեփական կարգավիճակի նկատմամբ վստահությունից:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ո՞ր ժամանակաշրջանն է կոչվում պալատական հեղաշրջումների դարաշրջան: Որո՞նք էին հեղաշրջումների հիմնական պատճառները:
2. 1730 թվականին փորձ է արվել սահմանափակել ինքնակալության իրավունքները: Ո՞վ և ինչո՞ւ փորձեց փոխել պետական համակարգը: Ո՞րն է այդ փորձի ձախողման պատճառը:
3. Որքանո՞վ էր օտարերկրացիների գործունեությունը Աննա Իոանովնայի կառավարությունում համապատասխանում այն երկրի շահերին, որին նրանք ծառայում էին:
4. Ո՞վ էր ղեկավարում պետական գործերը Ելիզավետա Պետրովնայի օրոք: Ի՞նչ կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել այդ ընթացքում:
5. Ո՞րն էր Պետրոս III-ի գահակալության հակասական բնույթը: Ի՞նչն էր կայսեր գահընկեց արվելու հիմնական պատճառը:
6. Ինչո՞ւ «Ազնվականների ազատության մասին մանիֆեստը» չհանգեցրեց պետական ծառայությունից ազնվականների զանգվածային հեռանալուն:
7. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ ծանոթացե՛ք Եկատերինա II-ի «Հրահանգի» տեքստին: Լուսավորչական միապետական քաղաքականության ի՞նչ բնորոշ գծեր է այն արտացոլում:
8. Պատմե՛ք «Ազնվականներին տրված արտոնությունների կանոնադրության» և «Քաղաքներին տրված կանոնադրության» հիմնական դրույթների մասին: Ո՞րն էր այս փաստաթղթերի պատմական նշանակությունը:
9. Որո՞նք են եղել երկրի տնտեսության ամենակարևոր փոփոխությունները XVIII դարի երկրորդ կեսին:
10. Ինչպե՞ս է Հյուսիսային Սևծովյան տարածաշրջանը միացվել Ռուսաստանին: Ի՞նչ խնդիրների առջև էր կանգնած Նովոռոսիայի ռուսական վարչակազմը:
11. Ռուսաստանը մասնակցել է լեհ-լիտվական համագործակցության մասնատմանը: Որո՞նք էին Ռուսաստանի կառավարության դրդապատճառներն այս դեպքում:
12. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ պատրաստե՛ք հաղորդում XVIII դարի երկրորդ կեսի ռուս ականավոր զորավարներից մեկի մասին:
13. Պավել I-ը հրամայեց կանգնեցնել Պետրոս I-ի հուշարձանը և պատվանդանի վրա մակագրություն թողնել՝ «Պապին՝ ծոռից»: Արդյոք շարունակականությո՞ւն կար Պետրոսի և Պավելի վարած քաղաքականության մեջ:
14. Որո՞նք էին Պավել I-ին գահընկեց անելու պատճառները:

ԳԼՈՒԽ 9. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

§ 43. Ալեքսանդր I-ի «փառահեղ դարը»

Գահակալության առաջին տարիները: Ալեքսանդր I-ի գահակալությունը սկիզբ առավ Սանկտ Պետերբուրգի Միխայլովյան ամրոցի դրամատիկ իրադարձություններից, որտեղ 1801 թ. մարտի 11-ի լույս 12-ի գիշերը սպանվեց Պավել I-ը: Նոր կայսրը դաստիարակվել էր Եկատերինա II-ի արքունիքում Լուսավորության դարաշրջանի իդեալների ոգով: Նրա ուսուցիչն էր եղել Ֆ. Լագարպը, որը չէր թաքցնում իր համակրանքը հանրապետական կառավարման հանդեպ:

Միաժամանակ Ալեքսանդրը ստիպված էր հարմարվել հոր արքունիքին՝ հատկանշական խստավարժություններով և զինվորական կարգապահությամբ: Ամեն անգամ Ալեքսանդր Պավլովիչը իր դերն էր կատարում, որը թելադրված էր որոշակի հանգամանքներով: Նա կարողանում էր գրավել զրուցակցի համակրանքը և հաճախ հաջողությամբ օգտվում էր իր այդ յուրահատկությունից: Գահ բարձրանալով՝ Ալեքսանդր I-ը վերանայեց հոր որոշումներից շատերը: Քաղբանտարկյալները համաներման արժանացան, թույլատրվեց արտերկիր մեկնելը, չեղարկվեց մասնավոր տպարանների գործունեության արգելքը: Նոր կայսրը ազնվականության արտոնություններ, որ տրվել էին 1785 թ. Եկատերինա II-ի կողմից, «Շնորհման հրովարտակում» վերահաստատեց: Բացի այդ, արգելվեցին խոշտանգումներն ու կտտանքները առաջին երկու աստիճանների հոգևորականների և մարմնական պատիժները՝ վաճառականների նկատմամբ:

Ալեքսանդր I-ի գահակալության սկզբում կարևորագույն դերակատարում է ունեցել նրա մտերիմ ընկերների խմբակը՝ այսպես կոչված «Գաղտնի կոմիտեն»: Այն հավաքներ էր կազմակերպում 1801-ից 1803 թվականներին: Նրա կազմում, ցարից բացի, ընդգրկված էին նաև Վ.Պ. Կոչուբեյը, Ն.Ն. Նովոսիլցևը, Պ.Ա. Ստրոգանովը, Ա.Ա. Չարտորիյսկին: «Գաղտնի կոմիտեն» մասնակցում էր կառավարության որոշումների մշակմանը: Այնտեղ քննարկվում էր քաղաքական և վարչական նորամուծությունների հավանականությունը: Ճիշտ է, մտադրություններից ամեն ինչ չհաջողվեց իրագործել: Հենց «Գաղտնի կոմիտեում» էին նախապատրաստվել



Ալեքսանդր I: Նկարիչ Ա.Վ. Պոլյակով

1802 թվականի վարչական բարեփոխումները, համաձայն որոնց՝ Ռուսաստանում առաջացան նախարարություններ՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, ժողովրդական կրթության, առևտրի, արտաքին գործերի, զինվորական ցամաքային ուժերի, ռազմածովային ուժերի: Այսպիսով, պետական գերատեսչություններում ներդրվում էր ինքնակալության սկզբունքը: Նախարարները պարտավոր էին ներկա գտնվել հատուկ հաստատության՝ նախարարների կոմիտեի նիստերին:

«Գաղտնի կոմիտեում» հատկապես մեծ ուշադրության էին արժանանում գյուղացիական հնարավոր բարեփոխումները: 1803 թ. փետրվարի 20-ին հրապարակվեց «Ազատ երկրագործների մասին» հրամանագիրը: Հողատերերը հնարավորություն ստացան փրկագնի դիմաց ազատություն շնորհել իրենց ճորտերին: Ընդ որում, գյուղացուն հատկացվում էր հողատարածք: Սակայն, հակառակ կայսեր ակնկալիքների, շատ քիչ հողատերեր օգտվեցին այս հնարավորությունից:

Շատ բան արվեց նաև հանրակրթության ոլորտում: 1803–1804 թթ. Ռուսաստանը բաժանեցին վեց կրթական շրջանների, որոնցից ամեն մեկում կար համալսարան՝ լայն ինքնավարությամբ: Ռեկտորներ, դեկաններ, պրոֆեսորներ ընտրվում էին համալսարանի խորհրդի կողմից: Ավելին, բուհերն ունեին իրենց դատարանը և նույնիսկ ոստիկանությունը:

Մ.Մ. Սպերանսկու բարեփոխումները: 1807–1812 թթ. կայսրի կողմից հատուկ վստահություն էր վայելում Մ.Մ. Սպերանսկին: Նա զարմանալի ճակատագրի տեր պետական գործիչ էր. գյուղական քահանայի որդի, որը հասել էր բարձր պաշտոնի: 1807-ին նա դարձավ Ալեքսանդր I-ի պետական քարտուղարը: 1808 թվականին նշանակվեց արդարադատության նախարարի տեղակալ: 1809 թվականին Սպերանսկին պատրաստեց քաղաքական և իրավական բարեփոխումների մի նախագիծ: Ըստ նրա մտահղացման՝ Ռուսաստանում պետք է իրականացվեր իշխանությունների տարանջատման սկզբունքը: Այս առումով անհրաժեշտ էր ստեղծել օրենսդիր մարմին՝ Պետդումա: Այն իր հերթին պետք է ձևավորվեր տեղական (իշխանական մարզ, գավառ, մարզ) խորհուրդների ներկայացուցիչներից, որոնք նույնպես ծրագրում էին ստեղծել: Գործադիր իշխանությունը պիտի ներկայացված լիներ նախարարներով, դատական իշխանությունը կներկայացներ Սենատը: Նրանց բոլորի վրա պիտի վեր խոյանար կայսեր մեծապետական գերիշխանությունը, որին պիտի օգներ օրինաքննիչ խորհրդատու օրգանը՝ Պետական խորհուրդը: Ցարը իր ձեռքում միավորելու էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինները: Սպերանսկու նախագիծը իրականություն չդարձավ: Մտահղացված ամբողջ ծրագրից կյանքի կոչվեց միայն Պետական խորհրդի վերափոխման գաղափարը: Այս հաստատությունը գործում էր դեռ 1801 թվականից: Գիտական գրականության մեջ այն կոչվում է Հարկադիր խորհուրդ: Իշխանության այդ մարմինը բարեփոխման էր ենթարկվել 1810 թվականին: Խորհրդի գրասենյակը ղեկավարում էր ինքը՝ Սպերանսկին, որը պետական քարտուղար էր նշանակվել: Նա անխոնջ աշխատող էր, հանդես էր գալիս նոր գաղափարների ու նախագծերի առաջարկներով:

1809 թվականին մտցվեց աստիճանակարգության քննություն: Փաստորեն աստիճանակարգության դեպքում հաստատվում էր կրթական ցենզ: Քաղաքացիական ծառայողը, որը ակնկալում էր հաջողությամբ առաջադիմել իր կարիերայում, պետք է կա՛մ սովորեր համալսարանում, կա՛մ քննություն հանձներ այդ ուսումնական հաստատությունում:

1811 թվականին հստակեցվեցին նախարարությունների գործառույթները: Նույն թվականին սկսեց գործել Ցարսկոյե Սելոյի լիցեյը, մի կրթական հաստատություն, որը նախատեսված էր բարձր աստիճանակարգով պետական ծառայողների պատրաստման համար: Սպերանսկու առաջարկների մեծ մասը չիրականացվեց: Նույնիսկ փոքրաթիվ հաջողված փոփոխություններն առաջ էին բերում մայրաքաղաքի հասարակության դժգոհությունն ու զայրույթը: Սպերանսկու մասին չարախոսում էին, նրա մասին տարածվում էին ամենաանհեթեթ բամբասանքները: 1812 թվականի մարտին Սպերանսկուն ազատում են աշխատանքից և աքսորում Նիժնի Նովգորոդ, ապա՝ Պերմ:

Գահակալության շրջանի երկրորդ կեսը: 1812 թվականի Հայրենական պատերազմի և ռուսական բանակի արտերկրյա արշավանքի արձագանքը անդրադառնում է Ալեքսանդր I-ի գահակալության վերջին տասնամյակի ներքին քաղաքականության վրա: Նա իրեն «արքայից արքա» էր պատկերացնում, Եվրոպայի ազատարար, որը ազգերին շնորհում էր իրավունքներ: 1815 թ. Լեհական թագավորությունը, որը արդեն Ռուսական կայսրության կազմում էր, ստանում է սահմանադրություն: 1818 թվականին կայսրը, ելույթ ունենալով լեհական Սեյմի առջև, նկատեց, որ շուտով սահմանադրություն կտրվի նաև ողջ Ռուսաստանին: 1820 թվականին Ն.Ն. Նովոսիլցևը, որը Մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչի (Լեհական թագավորության տեղապահ) վստահելի անձն էր, պատրաստում է «Ռուսական Կայսրության կանոնադրությունը», փաստացի՝ սահմանադրության նախագիծը: Ենթադրվում էր ստեղծել օրենսդրական մի հաստատություն՝ պետական սեյմ՝ կազմված երկու պալատներից: Գործադիր իշխանությունը պիտի գլխավորեր կայսրը: Նրան տրվում էր օրենսդրական նախաձեռնության իրավունք: Կանոնադրությունը նախատեսում էր քաղաքացիական ազատություններ և դատական իշխանության անկախություն: Սակայն այս նախագիծն էլ իրականություն չդարձավ:

Ալեքսանդր I-ի գահակալության տարիների երկրորդ կեսը ամուր կապված է Ա.Ա. Արակչեևի անվան հետ: 1808-1810 թթ. նա ռազմական գործերի նախարարն էր, 1812 թվականից ղեկավարել է կայսերական դիվանատունը, իսկ 1815 թ. Նախարարների կոմիտեի և Պետական խորհրդի գործունեության վերաբերյալ կայսրին միակ զեկուցողը դարձավ: Արակչեևի պարտականությունների մեջ էր մտնում զինվորական ավանների կազմակերպումը, որոնց ստեղծման գաղափարը պատկանում էր Ալեքսանդր I-ին: Ենթադրվում էր բանակի կարիքների համար միջոցներ տնտեսել, ապահովել պահեստազորային ուժերի նախապատրաստումը, միաժամանակ կրճատել հարկատու դասից զինվորագրված անձանց: Զինվորական ավանաբնակները և՛ գյուղացիներ էին, և՛ զինվորներ: Նրանք միաժամանակ զբաղվում էին և՛ հողագործությամբ, և՛ շարային պատրաստականությամբ:

Փորձն անհաջող դուրս եկավ: Գեներալների կազմը դրան թերահավատությամբ վերաբերվեց: Զինվորական ավաններում տեղի էին ունենում հուզումներ, որոնք դաժանորեն ճնշվում էին: 1831 թ. Նովգորոդի նահանգում տեղի ունեցավ խոշոր ապստամբություն: Բացի այդ, նախնական ծրագիրը ձախողվեց. չհաջողվեց շոշափելի միջոցներ տնտեսել: Եվ վերջապես բարդ էր կանոնակարգել գյուղացիների կյանքը՝ համաձայն շարային կանոնադրության: Զինվորական պատրաստվածության որակը նկատելիորեն ընկավ: Աստիճանաբար այդ փորձը առ ոչինչ դարձավ: 1857 թվականի դրությամբ այլևս զինվորական ավաններ չկային:

§ 44. Արտաքին քաղաքականությունը: 1812 թվականի Հայրենական պատերազմը

Ռուսաստանի մասնակցությունը նապոլեոնյան պատերազմներում: Գահակալության հենց առաջին տարիներից Ալեքսանդր I-ը վճռականորեն փոխեց արտաքին քաղաքականության ուղղությունը՝ գերապատվությունը տալով Անգլիայի հետ հարաբերությունների վերանորոգմանը: 1801 թ. ստորագրվեց ռուս-անգլիական պայմանագիրը: 1804 թ. Ռուսաստանը միացավ հակաֆրանսիական կոալիցիային, որի մեջ գտնվում էին նաև Անգլիան, Ավստրիան և Շվեդիան:

1805 թ. նոյեմբերի 20-ին Ռուսաստանի և Ավստրիայի միասնական բանակը պարտվեց Աուստերլիցի ճակատամարտում: Դա վերջին 100 տարվա ընթացքում Ռուսաստանի առաջին խոշոր պարտությունն էր: Ավստրիան հայտարարեց պատերազմական գործողությունների դադարեցման մասին: 1806 թ. ձևավորվեց չորրորդ կոալիցիան, որի մեջ մտնում էին Անգլիան, Պրուսիան, Ռուսաստանը և Շվեդիան: Պատերազմը ձգվում էր փոփոխական հաջողությամբ: 1806 թ. Պրուսիան պարտություն կրեց Յենի և Աուերշտեդտի մոտ: Ֆրանսիական բանակը գրավեց Բեռլինը: 1806 թ. դեկտեմբերին Պուլտուսկի և 1807 թ. հունվարին Պրեյսիշ-Էյլաուի մոտ ռուսական և ֆրանսիական բանակների ճակատամարտերը որևէ հաղթող կողմ չարձանագրեցին: Դա տեղի ունեցավ ավելի ուշ՝ 1807-ի հունիսին, Ֆրիդլանդի տակ, որտեղ ֆրանսիացիները հաջողության հասան: Այդ ձախողման արդյունքը դարձավ Տիլզիտյան խաղաղության պայմանագիրը, որը կնքվեց 1807 թվականի հունիսի 25-ին: Համաձայն դրա՝ Ռուսաստանը պարտավորվում էր Ֆրանսիայի հետ միության մեջ մտնել, ինչը կնշանակեր հարաբերությունները խզել Անգլիայի հետ: Ալեքսանդր I-ը ճանաչում էր Ֆրանսիական կայսրության սահմանների ընդարձակումը: Ընդ որում, Նապոլեոնը, հակառակ նախնական ծրագրերի, ստիպված եղավ համաձայնել Պրուսիան չբաժանելու մտքի հետ: Ալեքսանդր I-ի կողմից գլխավոր զիջումն այն եղավ, որ նա միացավ Անգլիային մայրցամաքային բլոկադայի ենթարկելու ծրագրին: Ռուսաստանի համար իր տնտեսական գործընկերոջ հետ առևտուր անելուց հրաժարվելը բավականին ցավոտ էր:

1808 թ. Նապոլեոնն ու Ալեքսանդր I-ը հանդիպեցին Էրֆուրտում: Ֆրանսիայի պահանջով Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Ավստրիային, թեև ռուսական

բանակը ռազմական գործողություններին ռեալ մասնակցություն չբերեց: Նապոլեոնն Ալեքսանդրին հնարավորություն տվեց ազատ զգալ Սկանդինավիայում, ինչից էլ Պետերբուրգում օգտվեցին. 1808 թվականին Շվեդիայի դեմ պատերազմ սկսվեց: 1809 թ. Շվեդիան Ֆրիդրիխհամյան պայմանագիր ստորագրեց, որով Ռուսաստանին էին անցնում Ֆինլանդիան և Ալանդյան կղզիները: Ռուսաստանի կազմում ձևավորվեց Ֆինլանդիայի մեծ իշխանությունը՝ ինքնավարության լայն հնարավորություններով:

Արևելյան ուղղություն: XIX դարի սկզբին Ռուսաստանի կազմի մեջ մտան Արևելյան Վրաստանը (Քարթլի և Կախեթի), Արևմտյան Վրաստանը (Իմերեթի և Մեգրելիա): Հարևանները չէին կարող անտարբեր գտնվել և միայն հետևել, թե ինչ է կատարվում: Սկսվեց պատերազմը Պարսկաստանի հետ (1804–1813 թթ.): Ռազմական գործողությունների արդյունքների հիման վրա կնքվեց Գյուլիստանի պայմանագիրը, ըստ որի՝ Պարսկաստանը ճանաչեց ժամանակակից Ադրբեջանի մեծ մասը, Արևելյան Հայաստանը և Դաղստանը՝ որպես Ռուսաստանի մաս: Ռուսաստանը միաժամանակ պատերազմական գործողություններ էր սկսել Օսմանյան կայսրության դեմ (1806–1812 թթ.): Դրա ավարտից հետո կնքվեց Բուխարեստի պայմանագիրը: Թուրքիան ճանաչեց Վրաստանի և Աբխազիայի մի մասը՝ որպես Ռուսաստանապատկան, ինչպես նաև զիջեց Բեսարաբիան: Հարավ-արևմուտքում սահմանը տեղափոխվեց Դնեստր գետից դեպի Պրուտ գետը: Բացի այդ, Օսմանյան կայսրությունը Սերբիային շնորհեց ինքնավարման իրավունքներ:

1812 թվականի Հայրենական պատերազմը և ռուսական բանակի արտերկրյա արշավանքները: Ալեքսանդր I-ը Ֆրանսիայի դեմ նոր պատերազմի էր պատրաստվում: Ռուսաստանին խոր մտահոգություն էր պատճառում մայրցամաքային շրջափակումը. այն ամբողջությամբ չէր պահպանվում: Սա Փարիզում մեծ դժգոհություն առաջ բերեց: Եվ 1812 թվականի հունիսի 12-ին Նապոլեոնի «հզոր բանակը» ներխուժեց Ռուսաստանի սահմաններից ներս: Դրանք միայն ֆրանսիական զորքերը չէին: Պատերազմ սկսելուց առաջ Ֆրանսիան ռազմական դաշինք էր կնքել Ավստրիայի և Պրուսիայի հետ: Նապոլեոնի զորքը թվաքանակով փաստացի երկու անգամ գերազանցում էր ռուսական բանակի ուժերը (տե՛ս Հավելվածը, քարտեզ N 10, 11): Ռուսական զինված ուժերը գլխավորում էր ռազմական գործերի նախարար Մ.Բ. Բարքլայ դը Տոլին: Նա ինքն էր ղեկավարում նաև 1-ին բանակի գործողությունները: 1-ին բանակը նահանջեց, որպեսզի հնարավորություն ունենա միավորվելու Պ.Ի. Բագրատիոնի 2-րդ բանակի հետ: Նահանջելով՝ ռուսական զորքերը սադրում էին թշնամուն խորանալ դեպի սեփական տարածքի խորքերը, որտեղ ֆրանսիացիները առավել խոցելի էին դառնում՝ հայտնվելով իրենց վերահսկողության տակ գտնվող հողերից բավական հեռու: Մինչդեռ Նապոլեոնը շարժվում էր Մոսկվայի ուղղությամբ՝ հույս ունենալով գլխավոր ճակատամարտը տալ այդտեղ: Սակայն ռուսական հրամանատարությունը ամեն կերպ խուսափում էր դրանից: Ֆրանսիացիները վերցրին Սմոլենսկը, հենց այնտեղ էլ միավորվեցին ռուսական 1-ին և 2-րդ բանակները և շարունակեցին իրենց նահանջը:

Այս ռազմավարության արդյունքում հակառակորդի ուժերը սպառվում էին, նրա հսկայական բանակի համար անհրաժեշտ ամեն ինչ ապահովելն ավելի ու ավելի



Կուտուզովը Բորոդինյան դաշտում: Նկարիչ Ս.Վ. Գերասիմով

դժվար էր դառնում: Սակայն մայրաքաղաքի հասարակությանը զայրացրել էր գեներալների անվճռականությունը: Արդյունքում հասարակության ճնշման տակ նոր գլխավոր հրամանատար նշանակվեց Մ. Ի. Կուտուզովը: Նա, այնուամենայնիվ, համաձայնեց ճակատամարտ տալ Մոսկվայի մատույցներում: 1812 թ. օգոստոսի 26-ին տեղի ունեցավ Բորոդինոյի ճակատամարտը: Հակառակորդի հարձակման հիմնական հարվածը իր վրա վերցրեց ռուսական բանակի ձախ թևը: Այնտեղ կառուցվել էին հրետանային թեթև ամրություններ՝ Բագրատիոնի դաշտամրոցներ անունով (2-րդ բանակը գտնվում էր ձախ թևում՝ Բագրատիոնի հրամանատարության տակ): Ֆրանսիացիները յոթ անգամ հարձակվեցին դրանց վրա՝ առանց մեծ հաջողություն գրանցելու: Երբեմն նրանք նույնիսկ ամրություններ էին կարողանում գրավել, բայց ռուսական բանակի ճնշման տակ կրկին նահանջում էին: Ֆրանսիացիները հարձակման անցան ութերորդ անգամ: Բագրատիոնը մահացու վիրավորվեց: Ռուսական բանակը նահանջեց և գրավեց նոր դիրքեր, որտեղ ամուր կանգնեց՝ դիմակայելով հակառակորդի շարունակական հարձակումներին:

Եվս մեկ հարված բաժին հասավ Ռևսկու մարտկոցին, որը գտնվում էր կենտրոնում: Ֆրանսիացիներին մի քանի ժամ պահանջվեց, որպեսզի կարողանան գրավել այդ ամրությունը: Յուրաքանչյուր առաջխաղացման համար ստիպված էին լինում վճարել բազմաթիվ զինվորների կյանքով: Սա հաշվի առնելով՝ Ֆրանսիայի կայսրը չհամարձակվեց մարտի նետել իր վերջին պահեստազորը՝ պահակախմուբը:

Ռուսական բանակի հերոսական դիմադրության շնորհիվ Նապոլեոնը չկարողացավ իրականացնել այն շրջապատելու և ջախջախելու իր ծրագիրը: Ճակատամարտում ակնհայտ հաղթող չկար. երկու կողմերն էլ մեծ կորուստներ կրեցին: Կուտուզովը բանակը փրկելու նպատակով որոշում կայացրեց դուրս բերել զորքերը և Մոսկվան

հանձնել թշնամուն: Սեպտեմբերի 2-ին Նապոլեոնը մտավ ամայի քաղաքը, որտեղ հրդեհներ էին բռնկվել: Ռուսաստանի երկրորդ մայրաքաղաքի գրավումը ֆրանսիացիներին չբերեց սպասված հաղթանակը: Հոկտեմբերի 6-ին նրանք հեռացան Մոսկվայից, որը մի հսկա մոխրակույտի էր վերածվել: Այնուհետև հակառակորդները բախվեցին Մալոյարոսլավեցի մոտ, ինչը Նապոլեոնին թույլ չտվեց առաջ շարժվել հարավային ուղղությամբ:

Ֆրանսիական բանակը ստիպված էր նահանջել Սմոլենսկի ավերված ճանապարհով: Ցրտահարությունները, որոնց նրանք պատրաստ չէին, զգալի վնաս հասցրին ֆրանսիացիներին: Բացի այդ, «հզոր բանակին» դիմադրում էին ոչ միայն կանոնավոր ստորաբաժանումները, այլև պարտիզանական ջոկատները: Նրանք հայտնի դարձան Հայրենական պատերազմի ժամանակ. սխրագործություններով աչքի ընկան և իրենց անունները փառքով պսակեցին պարտիզան-սպաներ Դ.Վ. Դավիդովը, Ի.Ս. Դորոխովը, Ա.Ն. Սեսլավինը, գյուղացիական ջոկատների հրամանատարներ Գ.Մ. Կուրինը և Վ. Կոժինան:

Նոյեմբերի 23-ին Նապոլեոնի բանակից մնացած զինվորները և ինքը՝ կայսրը, անցան Բերեզինա գետը: Նապոլեոնը, առաջ անցնելով սեփական գնդերից, փախչում էր Ռուսաստանից: Իսկ 1812 թ. դեկտեմբերի 25-ին Ալեքսանդր I-ը հրապարակեց մանիֆեստ, որն ավետում էր պատերազմի ավարտը: Այժմ ռուսական բանակը պետք է կռվեր իր հայրենիքի սահմաններից դուրս: 1813 թվականի հունվար–փետրվար ամիսներին ռուսական բանակը գրավեց Վարշավան և Բեռլինը: Ստեղծվեց հակաֆրանսիական մի խմբավորում, որի կազմում էին Ավստրիան, Անգլիան, Պրուսիան և Ռուսաստանը: Դաշնակիցների միացյալ ուժերը 1813 թվականի հոկտեմբերի 4–7-ին կարողացան ջախջախիչ պարտության ենթարկել Նապոլեոնին Լայպցիգի մոտ տեղի ունեցած Ազգերի ճակատամարտում: 1814 թ. մարտի 31-ին ռուսական բանակը մտավ Փարիզ: Նապոլեոնը հրաժարվեց գահից. նրան աքսորեցին Էլբա կղզի:

1814 թվականի սեպտեմբերին իր աշխատանքները սկսեց Վիեննայի կոնգրեսը: Դաշնակիցները փորձեցին համաձայնության գալ նոր ձևավորվող աշխարհակարգի շուրջ, որը պետք է հաստատվեր Նապոլեոնյան Ֆրանսիայի փլուզումից հետո: Սակայն Նապոլեոնը փախավ Էլբայից, հաղթական վերադարձավ Փարիզ և վերսկսեց պատերազմը: Նապոլեոնի «հարյուր օրը» ավարտվեց Վաթերլոոյի ճակատամարտով 1815 թվականի հունիսի 6-ին: Նա ջախջախիչ պարտություն կրեց, և այս անգամ Նապոլեոնին աքսորեցին Սուրբ Հեղինե կղզի: Վիեննայի կոնգրեսը շարունակեց իր աշխատանքը, որի մասնակիցները մինչև 1815 թվականի մայիսի վերջը կարողացան վերջնական համաձայնության գալ: Ռուսաստանը պահպանեց իր տարածքային ձեռքբերումները՝ Բեսարաբիան, Ֆինլանդիան: Բացի այդ, կայսրությանը միացվեց Նապոլեոնի կողմից ստեղծված Վարշավայի դքսությունը, որը վերանվանվեց Լեհաստանի թագավորություն:

1815 թվականի սեպտեմբերի 14-ին նապոլեոնյան պատերազմների արդյունքների հիման վրա Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան ձևավորեցին Սուրբ դաշինք: Այնուհետև դրան միացավ եվրոպական երկրների մեծ մասը: Նրանք իրենց առջև

խնդիր էին դրել պաշտպանել օրինական կարգը և քրիստոնեական արժեքները, ինչը նշանակում էր պայքարել հեղափոխական շարժման դեմ: Այսպես ձևավորվեց Վիեննայի համակարգը, որը հնարավորություն տվեց կարգավորել Եվրոպայի մեծ տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Պրուսիայի (այնուհետև՝ Գերմանական կայսրություն), Ավստրիայի (հետագայում՝ Ավստրո–Հունգարիա) հարաբերությունները:

§ 45. Դեկաբրիստների շարժումը

Գաղտնի միություններ: Նապոլեոնյան պատերազմներից վերադառնալով՝ ազնվականական դասը սկսեց նորովի գնահատել թե' իրեն և թե' երկրում տիրող քաղաքական համակարգը: Սպայական կազմը հասկանում էր, թե ինչ հսկայական աշխատանք ու նշանակալի դեր է ունեցել Ֆրանսիայի տապալման և Եվրոպայում նոր կարգերի հաստատման գործում: Սպայական կազմը հասկանում էր, թե իրենք ինչ հսկայական աշխատանք ու նշանակալի դեր են ունեցել Ֆրանսիայի տապալման և Եվրոպայում նոր կարգերի հաստատման գործում: Նրանք հույս ունեին, որ փոփոխություններ կլինեն նաև Ռուսաստանում: Սակայն, հակառակ սպասումներին, դա տեղի չունեցավ: 1814–1815 թթ. սպայական միջավայրում սկսեցին գաղտնի միություններ ձևավորվել, որոնք իրենց առջև քաղաքական նպատակներ էին դնում: Դրանց անդամները մտածում էին քաղաքական բարեփոխումների և ճորտատիրության վերացման մասին:

1816 թվականին Մուրավյով-Ապոստոլ եղբայրները, Մուրավյովները, Ս.Պ. Տրուբեցկոյը, Յակուշկինը և նրանց համախոհները մասնակցեցին «Փրկության միության» ստեղծմանը: Նրանք իրենց առջև խնդիր էին դրել փոխել քաղաքական համակարգը և սահմանադրություն մտցնել: 1817 թվականին «Միության» մասնակիցների միջև տարաձայնություններ ծագեցին: Յակուշկինը առաջարկում էր Ալեքսանդր I-ի դեմ մահափորձ կազմակերպել, քանի դեռ նա Մոսկվայում էր գտնվում: Այս գաղափարը պաշտպանեցին ոչ բոլորը: Բազմաթիվ հակասություններից բզկտվելով՝ «Փրկության միությունը» ի վերջո փլուզվեց: 1818 թվականին նրա հիմքի վրա ձևավորվեց մի նոր միություն՝ «Բարեկեցության միությունը»: Այս միությանը անդամակցում էին մեծ թվով սպաներ ամբողջ Ռուսաստանից: Այն առավել բազմատարր էր իր կառուցվածքով, քան նախորդը: 1821 թ. «Բարեկեցության միության» դեպքում ևս մասնակիցների միջև տարաձայնությունները հանգեցրին դրա լուծարմանը: Շուտով ձևավորվեցին նոր՝ Հյուսիսային և Հարավային միությունները: Հարավային միության ղեկավարներն էին Պ.Ի. Պեստելը, Մ.Պ. Բեստուժև-Ռյումինը, Մուրավյով-Ապոստոլ եղբայրները և ուրիշներ: Պեստելը նախապատրաստեց մի ծրագրային փաստաթուղթ՝ «Ռուսական ճշմարտություն» անունով: Ըստ դրա՝ ենթադրվում էր հիմնել կառավարման հանրապետական մոդել և վերացնել ճորտատիրությունը: Պեստելը Ռուսաստանը դիտում էր որպես ունիտար պետություն՝ ուժեղ կենտրոնաձիգ կառավարմամբ: Նախատեսվում էր կալվածատիրական հողերի մի մասը փոխանցել հատուկ հանրային հիմնադրամին, որից այն կբաշխվեր գյուղացիների միջև:

Հյուսիսային միությունը ներկայացնում էին Ի.Ի. Պուշչինը, Կ.Ֆ. Ռիլեևը, Մ.Ս. Լունինը և ուրիշներ: Միության նշանավոր մասնակից Ն.Մ. Մուրավյովը կազմեց սահմանադրությունը: Նա, ի տարբերություն Պեստելի, սահմանադրական միապետության կողմնակից էր: Կայսրը դառնում էր պետության թիվ մեկ պաշտոնյան: Ընդ որում, Ռուսաստանը պետք է ստանար դաշնային կառուցվածք, որը ենթադրում էր իշխանության ապակենտրոնացում: Դասային համակարգը և ճորտատիրական կարգերը վերացվում էին: Սակայն, ըստ սահմանադրության, հողատարածքների մեծ մասը մնում էր կալվածատերերի սեփականություն:

Դեկաբրիստների ապստամբությունը և դատավարությունը: 1826 թ. ամռանը, երբ կայսրի մասնակցությամբ նախատեսվում էին ռազմական ստուգատեսներ, Հարավային միության անդամները հույս ունեին պետական հեղաշրջում իրականացնել: Սակայն 1825 թվականի նոյեմբերի 19-ին Ալեքսանդր I-ը անսպասելիորեն մահացավ: Դավադիրները ստիպված եղան շտապ փոխել իրենց ծրագրերը: Ալեքսանդր I-ը ուղիղ ժառանգներ չէր թողել: Իշխանությունը պետք է անցներ նրա կրտսեր եղբորը՝ Կոնստանտին Պավլովիչին, սակայն նա դեռ 1822 թ.-ին էր գահից հրաժարվել: 1823 թվականին Ալեքսանդր I-ը ստորագրել էր համապատասխան մանիֆեստ: Ճիշտ է, այդ մասին քչերը գիտեին: Ալեքսանդր I-ի որոշումը չէր հայտարարվել, ինչը նշանակում է, որ այն ուժի մեջ չէր մտել:

Եթե գահը չէր զբաղեցնում Կոնստանտինը, ապա այն անցնում էր 3-րդ եղբորը՝ Նիկոլայ Պավլովիչին: Սակայն ստեղծված հանգամանքներում նրա իրավունքները անվիճելի չէին թվում: Հենց դրանից էլ փորձեցին օգտվել գաղտնի միությունների անդամները: 1825 թվականի դեկտեմբերի 12-ին Մեծ իշխան Կոնստանտինը կրկին հաստատեց գահից հրաժարվելու իր որոշումը: Դեկտեմբերի 14-ին ծրագրված էր իրականացնել հավատարմության երդում նոր կայսրին: Հյուսիսային միության անդամները հենց այդ օրը ծրագրեցին իրենց գործողությունները: Նրանցից ոմանք ցանկանում էին ձերբակալել թագավորական ընտանիքին, իսկ կայսր Նիկոլայ Պավլովիչին՝ սպանել: Դավադիրները Ս. Պ. Տրուբեցկոյին ընտրեցին «դիկտատոր», որպեսզի ղեկավարեր ապստամբությունը: 1825 թվականի դեկտեմբերի 14-ի առավոտյան Հյուսիսային միության անդամ սպաները Սենատի հրապարակ դուրս բերեցին իրենց ենթակա զորամասերը: Սակայն սենատորներն արդեն հասցրել էին հավատարմության երդում տալ Նիկոլայ I-ին: Տրուբեցկոյը չմիացավ ապստամբներին: Նոր ղեկավար ընտրվեց Է.Պ. Օբոլենսկին: Նախօրեին մշակված պլանն այլևս անիրագործելի էր: Ապստամբները չգիտեին ինչ անել: Աստիճանաբար Սենատի հրապարակ բերվեցին կառավարական զորքերը, այդ թվում՝ հրետանին:

Մայրաքաղաքի գեներալ-նահանգապետ, 1812 թվականի պատերազմի հերոս Մ.Ա. Միլորադովիչը դիմեց Սենատի հրապարակում հավաքված ապստամբ զինվորներին: Նա կոչ արեց նրանց ուշքի գալ և հավատարմության երդում տալ թագավորին: Հանրաճանաչ գեներալի խոսքերը կարող էին ազդեցություն ունենալ զինվորների վրա: Վախենալով նման արդյունքից՝ Պ.Գ. Կախովսկին մահացու վիրավորեց Միլորադովիչին: Երեկոյան հրետանու գործադրմամբ հրապարակը արդեն մաքրված էր ապստամբներից:



1825 թվականի դեկտեմբերի 14-ի ապստամբությունը: Նկարիչ Վ. Տիմմ

1825 թվականի դեկտեմբերի վերջին այս անգամ Հարավային միությունը դուրս եկավ իշխանության դեմ: Իշխանության դեմ ապստամբեց Չեռնիգովյան գունդը՝ Ս.Ի. Մուրավյով-Ապոստոլի, Մ.Պ. Բեստուժև-Ռյումինի և այլոց գլխավորությամբ: Մեկ շաբաթվա ընթացքում այդ գործողությունները ևս ճնշվեցին: 1826 թվականի ամռանը տեղի ունեցավ դեկաբրիստների դատավարությունը: Տարբեր խստության պատիժների դատապարտվեց մոտավորապես 121 մարդ, հինգ դեկաբրիստներ՝ Պ.Ի. Պեստելը, Կ.Ֆ. Ռիլեևը, Ս.Ի. Մուրավյով-Ապոստոլը, Մ.Պ. Բեստուժև-Ռյումինը, Պ.Գ. Կախովսկին, մահապատժի ենթարկվեցին:

Դեկաբրիստների շարժումը մինչ օրս հետազոտողների ուշադրության կենտրոնում է: Դա հատուկ մշակութային երևույթ էր, որը խիստ բնորոշ էր տվյալ դարաշրջանին: Խոսքը ռուս ազնվականության սերնդի մասին է, որն օգտվեց Եկատերինա II-ի կողմից շնորհված արտոնություններից, ազդվեց Ֆրանսիական հեղափոխության թողած մտավոր և մշակութային ներգործությունից, մասնակցեց նապոլեոնյան պատերազմներին, այդ թվում՝ 1812 թվականի պատերազմին: Այդ երիտասարդները հասակ էին առել ռոմանտիզմի դարաշրջանում, ինչն էլ որոշել էր նրանց մտածելակերպի ու վարքագծի ուղղությունը: Նրանց մեծ մասը հեռու էր քաղաքականությունից: 1825-ի ողբերգությունը նրանց արմատապես պոկեց մշակութային, սոցիալական և գուցե նույնիսկ պետական կյանքից, ինչը մեծ ցնցում դարձավ ռուս հասարակության համար:

§ 46. Նիկոլայ I-ը և նրա դարաշրջանը

Վարչական բարեփոխումներ: Արտասովոր հանգամանքներում գահ բարձրանալով՝ Նիկոլայ I-ը համոզված էր, որ բարեփոխումներ են անհրաժեշտ: 1826 թվականից նոր ձևով էր աշխատում Նորին մեծության կայսերական գրասենյակը: Սա նոր իշխանության առանցքային կարևորության ինստիտուտ էր: Այն ապահովում էր Ռուսաստանում սոցիալական և իրավական կյանքի տարբեր ոլորտների օպերատիվ կառավարումը:

Գրասենյակի կազմում ընդգրկված էին մի քանի բաժիններ: 1-ին վարչությունը պատրաստում էր կայսերական հրամանագրերը, արձանագրությունները, վերահսկում էր դրանց իրագործումը, կայսրին էր տրամադրում զեկույցներ և միջնորդություններ: 2-րդ վարչությունը տնօրինում էր օրենսդրության համակարգման հարցերը: Թերևս ամենահայտնին 3-րդ բաժինն էր, որը քաղաքական հետախուզության մարմին էր: Այն նաև գրաքննություն էր իրականացնում, հսկում էր հնադավան հավատացյալներին և աղանդավորներին, պայքարում պաշտոնյաների չարաշահումների դեմ: 3-րդ բաժնի հիմնադիրն ու առաջին վարիչը կայսեր մտերիմ ընկեր Ա. Խ. Բենկենդորֆն էր, 1842 թվականին այս պաշտոնում նրան փոխարինեց Ա.Ֆ. Օրլովը: 4-րդ բաժինը կայսրուհի Մարիային ենթակա հիմնարկների գերատեսչությունն էր, որը պատասխանատու էր բարեգործության համար: 5-րդ բաժինը ստեղծվել է Պ.Դ. Կիսելյովի նախաձեռնությամբ: Այն նախապատրաստում էր պետական գյուղի բարեփոխումը: 6-րդ վարչությունը պատասխանատու էր Անդրկովկասյան տարածաշրջանում վարչական բարեփոխումների նախապատրաստման համար:

Շատ բան էր փոխվում նոր գահակալության ընթացքում: 1826 թվականին հաստատվեց գրաքննության կանոնադրությունը, որը նախատեսում էր գրաքննիչի անձնական պատասխանատվությունը հրապարակված տեքստի համար: Այս օրենսդրական ակտը նշանավորվեց իր ակնհայտ խստությամբ, ինչի համար ստացել է թուջե մականունը: 1828 թվականին հաստատվեց գրաքննության նոր կանոնադրությունը, որը նկատելիորեն ավելի մեղմ էր, քան նախորդը:



Նիկոլայ I

Ռուսական կայսրության օրենսգրքի կազմումը: Օրենքների համակարգումը դարձավ Նիկոլայ I-ի գահակալության ամենակարևոր իրադարձությունը: Նախորդ հարյուրամյակներում փորձեր արվել էին օրինակարգավորել ռուսական օրենսդրությունը և հրապարակել 1649 թվականի օրենսգրքի նման մի աշխատանք: Սակայն, դրանք հաջողությամբ չէին պսակվել: Օրենսդրության համակարգման գործում որոշիչ ներդրում է

ունեցել Մ.Մ. Սպերանսկին, որը փաստացի ղեկավարում էր Նորին մեծություն կայսեր գրասենյակի 2-րդ վարչությունը (պաշտոնապես այն գլխավորում էր հայտնի իրավաբան Մ.Ա. Բալուգյանսկին)։ Սպերանսկին խնդրին սկզբունքորեն այլ մոտեցում առաջարկեց. չգրել օրենսդրական նոր ակտեր, այլ հավաքել ու խմբագրել հները։ Ի վերջո 2-րդ վարչության աշխատակիցները կազմեցին Ռուսական կայսրության օրենքների լիակատար ժողովածուն՝ 45 հատորով, որը ներառում էր ակտեր՝ սկսած հին օրենսգրքից ընդհուպ մինչև 1830 թ.: Գործող օրենսդրությունը հավաքվեց և համակարգվեց Ռուսական կայսրության օրենսգրքում: Այն կազմում էր 15 հատոր և բաշխված էր ըստ ոլորտների։ Օրենսգրքի հրատարակումը իսկական հեղափոխություն դարձավ Ռուսաստանի իրավական կյանքում: Պետական աշխատողների համար այժմ նկատելիորեն դյուրացավ հետևել իրավունքի կանոններին։ Ռուսական բուհերում իրավագիտության ոլորտում լիարժեք ուսուցումը հնարավոր դարձավ՝ ապահովելով մասնագիտական բյուրոկրատիայի կրթությունը։

Գյուղացիության հարցը: Նիկոլայ I-ը գիտակցում էր, որ ճորտատիրությունը անախրոնիզմ է: Սակայն դրա վերացումը թե' հողատերերի համար, թե' գյուղացիների համար չէր կարող անցավ լինել։ Գյուղացիական ռեֆորմի նախագծերը քննարկելու համար հիմնվեցին գաղտնի հանձնաժողովներ։ Նրանց աշխատանքներին մասնակցում էին պետական երևելի պաշտոնյաներ՝ Ե.Ֆ. Կանկրինը, Պ.Դ. Կիսելյովը, Վ.Պ. Կոչուբեյը, Մ.Մ. Սպերանսկին և ուրիշներ։ Նրանց ուշադրության կենտրոնում միայն գյուղացիական խնդիրը չէր: Այսպես, «1826թ. դեկտեմբերի 6-ի հանձնաժողովը», որ գաղտնի կոմիտեներից առաջինն էր, մշակեց պետական բարեփոխումների ծրագիր, որը մեծ մասամբ իրականություն չդարձավ։ Սակայն գաղտնի հանձնաժողովներին հաջողվեց նախապատրաստել մի շարք բարեփոխումներ, որոնք փոխեցին գյուղի կյանքը: Գյուղական կյանքի վերափոխման գործում առանցքային դերը պատկանում էր Պ.Դ. Կիսելյովին: Նա նպաստեց պետական գույքի նախարարության ձևավորմանը, որը ինքն էլ ղեկավարում էր։ Կիսելյովը դարձավ պետական գյուղի բարեփոխումների նախաձեռնողը, որը սկիզբ առավ 1837 թ.: Ընդարձակվեցին գյուղացիության հողակտորները, բարեփոխվեց պետական գյուղի կառավարման համակարգը, ներդրվեցին գյուղացիության ինքնակառավարման տարրեր։

Միևնույն ժամանակ, կառավարությունը չհրաժարվեց ճորտ գյուղացիների կյանքը վերափոխելու մտքից: 1842-ին նախկին ճորտ գյուղացիների մասին հրամանագիր ստորագրվեց. նրանք կարող էին կալվածատիրոջից ազատություն և հողակտոր ստանալ՝ հողի սեփականատիրոջ նկատմամբ տնտեսական որոշակի պարտավորություններ կրելու պայմանով։ Նախկինում Ռեչ Պոսպոլիտայի տարածքում գտնվող շրջաններում ներդրվեց այսպես կոչված գույքագրման համակարգը: Խոսքը հողի սեփականատիրոջ նկատմամբ գյուղացիների պարտավորությունների խիստ կանոնակարգման մասին էր:

Տնտեսական զարգացում: Ֆինանսական բարեփոխումներ: XIX դարի երկրորդ քառորդում Ռուսաստանում սկսվեց արդյունաբերական հեղափոխություն: XIX դարի կեսերին ձեռնարկությունների 18%-ը հագեցած էր շոգեշարժիչ ունեցող մեքե-

նաներով: Ընդ որում, այդ ձեռնարկություններն արտադրում էին ողջ արտադրանքի 45%-ը: Քաղաքներում առաջանում էին մեքենաշինական նոր գործարաններ, հները վերակազմավորվում էին: Օրինակ, Սանկտ Պետերբուրգի Իժորսկյան գործարանում կազմակերպվում է շոգեշարժիչների և շոգենավերի արտադրություն: Դանդաղ, բայց անշեղորեն աճում էին ուրալյան հանքարդյունաբերության արտադրության ծավալները:

Ռուսաստանում հիմնականում Նիկոլայ I-ի նախաձեռնությամբ սկսվեց երկաթուղու շինարարությունը: 1837 թվականին գործարկված առաջին ճանապարհը Սանկտ Պետերբուրգը կապում էր Ցարսկոյե Սելոյի հետ: 1842 թվականին սկսվեց Սանկտ Պետերբուրգից մինչև Մոսկվա երկաթուղու շինարարությունը: Մայրաքաղաքների միջև երկաթուղային կապը բացվեց 1851 թվականին: Այն ժամանակ դա աշխարհի ամենաերկար երկաթուղին էր: Զարգացավ նաև ջրային տրանսպորտը: XIX դարի կեսերին շոգենավերը նավարկում էին Վոլգա, Դնեպր, Վոլխով գետերով: Միայն Վոլգայի ավազանում շահագործվում էր 350 շոգենավ:

Նիկոլայ I-ի օրոք տնտեսական քաղաքականությունը որոշում էր ֆինանսների նախարար Է. Ֆ. Կանկրինը, որը տաղանդավոր ադմինիստրատոր էր և շատ բան արեց հայրենական տնտեսության զարգացման համար: Նրա օրոք Սանկտ Պետերբուրգում հիմնադրվեցին ռուսական տեխնոլոգիական ինստիտուտը, արդյունաբերական և առևտրային նավագնացության դպրոցներ: 1839–1843 թթ. Կանկրինը դրամավարկային բարեփոխումներ իրականացրեց, ինչը կայունացրեց ազգային արժույթի դիրքերը: Ռուսաստանը տուժում էր թղթադրամների՝ ասիգնացիաների ավելցուկից, ինչը հանգեցրել էր դրանց արժեզրկմանը: Նախարարի նախաձեռնությամբ թղթադրամները փոխարինվեցին վարկային պարտատոմսերով, որոնք կարող էին ազատորեն փոխանակվել արծաթե կամ ոսկի ռուբլով: Արդյունքում, հենց արծաթե ռուբլին է դրվել Ռուսական կայսրության ֆինանսական համակարգի հիմքում: Արժույթի հարաբերական կայունությունը պահպանվեց մինչև Ղրիմի պատերազմը:

§ 47. 1820-1850 թթ. արտաքին քաղաքականությունը

Արևելյան ուղղություն: 1826 թվականի հուլիսին Պարսկաստանը ներխուժեց Հարավային Անդրկովկաս, ինչը 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի սկիզբը դարձավ: Ռուսական բանակը՝ Ի. Ֆ. Պասկևիչի գլխավորությամբ, մեծ վնաս հասցրեց հակառակորդին: 1828 թվականի փետրվարին կնքվեց Թուրքմանչայի հաշտության պայմանագիրը, համաձայն որի՝ Ռուսաստանը ձեռք բերեց Էրիվանի և Նախիջևանի խանությունները և զգալի դրամական փոխհատուցում ստացավ (տե՛ս հավելվածը, քարտեզ N 12): Պարսկաստանի հետ պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ, որը դարձավ Օսմանյան կայսրության և Հունաստանի միջև հակամարտության շարունակությունը: Ռուսաստանը, ինչպես Անգլիան և Ֆրանսիան, աջակցում էին հույներին, այդ թվում՝ նրանց ռազմական

միջոցներ տրամադրելով: 1828-ին ռուսական բանակը ուղիղ բախման գնաց թուրքական զորքերի հետ, որոնք մի շարք պարտություններ կրեցին: 1829 թվականին կնքվեց Ադրիանապոլսի պայմանագիրը, համաձայն որի՝ Թուրքիան զիջում է Ռուսաստանին Սև ծովի արևելյան ափը և Դանուբի գետաբերանը: Բացի այդ, սուլթանը ճանաչեց Հունաստանի անկախությունը և Սերբիայի ինքնավարությունը: Ռուսական դիվանագիտության կարևոր ձեռքբերումը XIX դարում 1833 թ. Ունկար-Իսկելեսի պայմանագրի ստորագրումն էր: Այդ պահին Օսմանյան կայսրությանը լուրջ վտանգ էր սպառնում: Եգիպտոսի կառավարիչ Մուհամմադ Ալին՝ թուրք սուլթանի վասալը, սպառնում էր գրավել Ստամբուլը: Սուլթանը ստիպված էր դիմել եվրոպական հզոր տերությունների օգնությանը: Ակտիվ աջակցություն ցուցաբերեց միայն Ռուսաստանը: Հետագայում Սանկտ Պետերբուրգն ու Ստամբուլը ութ տարով դաշինք կնքեցին: Միևնույն ժամանակ Օսմանյան կայսրությունը փակ էր պահում Սև ծովի նեղուցները բոլոր մյուս երկրների համար: Սա կարևոր առավելություններ տվեց ռուսական նավատորմին: Սակայն 1840–1841 թթ. Մեծ Բրիտանիայի ճնշման տակ Ռուսաստանը ստիպված եղավ հրաժարվել Թուրքիայի հետ այս պայմանագրերից, հետևաբար նաև այն արտոնություններից, որ ձեռք էր բերել նավատորմը:

Կովկասյան պատերազմը: Անդրկովկասյան հողերի միացումը Ռուսաստանին պահանջ առաջացրեց վերահսկողություն հաստատել նաև Հյուսիսային Կովկասի վրա: Հակառակ դեպքում 1801 թվականին ստեղծված Վրաստանի նահանգը կմնար թշնամական օղակում: Կովկասյան պատերազմը սկսվեց 1817թ.-ին: 1830-ականների կեսերին այն առավել կատաղի բնույթ ընդունեց: Դա պայմանավորված էր Իմամ Շամիլի գործունեությամբ, որը և՛ կրոնական, և՛ քաղաքական առաջնորդ էր: Լեռնցիների դիմադրությունը հաջողվեց կոտրել միայն 1859 թվականին, երբ ինքը՝ Շամիլը, գերի ընկավ: Դա տեղի ունեցավ Գունիբ ամրոցի անկման արդյունքում: 1864 թվականի մայիսին ռուսական զորքերը գրավեցին Հյուսիսային Կովկասի արևմտյան մասում գտնվող Կբաադա բնակավայրը (ներկայումս՝ Կրասնայա Պոլյանա): Դա չերքեզական ուբիխ ցեղի դիմադրության վերջին կենտրոնն էր: Այս իրադարձությունն էլ հենց Կովկասյան պատերազմի ավարտը դարձավ:

Ղրիմի պատերազմը: 1848 թվականի «Ժողովուրդների գարունից» հետո Ռուսաստանում ավելի ուժեղացավ այն համոզմունքը, թե կայսրությունը յուրահատուկ դիրքում է գտնվում, և որ նրան չեն սպառնում հեղափոխական ցնցումները: Նիկոլայ I-ը կասկած չուներ, որ ինքը ուժեղ դիրք ունի: 1849 թվականին ռուսական բանակը ճնշեց ապստամբությունը Հունգարիայում և դրանով իսկ փրկեց Ավստրիական կայսրությունը անխուսափելի փլուզումից: Թագավորը հույսը դրել էր Ավստրիայի կայսեր երախտագիտության վրա: Ֆրանսիան, որտեղ վերջերս էր իշխանափոխություն եղել, Նիկոլայ I-ի կարծիքով չէր կարող ակտիվորեն միջամտել միջազգային գործերին: Մեծ Բրիտանիան միայնակ էր և չէր կարողանա դիմակայել Ռուսաստանին: Թվում էր, թե կարելի է համաձայնություն ձեռք բերել բրիտանական կառավարության հետ: Այնուամենայնիվ, Սանկտ Պետերբուրգում կարծում էին, որ «հավերժական» հակառակորդներ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միությունը սկզբունքորեն անհնար է: Ենթադրվում

էր, որ այս պայմաններում անհրաժեշտ է լուծել Օսմանյան կայսրության ձգձգված խնդիրը, որին վաղուց կոչում էին «Եվրոպայի հիվանդ մարդ»: Ռուսաստանը հնարավորություն կստանար վերահսկողություն հաստատել Սև ծովի նեղուցների վրա և ամրապնդել իր դիրքերը Բալկաններում: Սակայն գործնականում ամեն ինչ այլ կերպ ստացվեց: Անգլիան չէր պատրաստվում համակերպվել Նիկոլայ I-ի արտաքին քաղաքականության հավակնությունների հետ: Նա շահագրգռված չէր Օսմանյան կայսրության մասնատմամբ, որտեղ նա լուրջ ազդեցություն ուներ: Ֆրանսիայի նոր կայսր Նապոլեոն III-ը նույնպես չէր նախատեսում Սանկտ Պետերբուրգում ձեռնարկված ներկայացման լոկ հանդիսատեսը մնալ: Նա վիրավորված էր այն փաստից, որ Նիկոլայ I-ը չէր ճանաչում իր կայսերական տիտղոսը, և մտմտում էր քառասուն տարի առաջ տեղի ունեցած իրադարձությունների համար ռևանշի մասին:



Սևաստոպոլի պաշտպանությունը: Համայնապատկերային հատված:
Նկարիչ Ֆ.Ա. Ռուբո

Օսմանյան կայսրության կողմից վերահսկվող Սուրբ երկրում կրոնական հակասությունները դարձան նոր պատերազմի առիթ: Այն հարցը, թե ում պետք է պատկանեն Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան եկեղեցու բանալիները՝ ուղղափառների՞ն, թե՞ կաթոլիկներին, դեռ լուծում չէր ստացել: Ֆրանսիայի ճնշման ներքո սուլթանը բանալիները հանձնեց կաթոլիկներին: Սա կարևոր և խորհրդանշական ակտ էր, որը չէր կարող չնկատել Սանկտ Պետերբուրգը: Սրան ի պատասխան՝ ռուսական զորքերը գրավեցին Դանուբյան Մոլդովայի և Վալախիայի մելիքությունները, որոնք գտնվում էին

Օսմանյան կայսրության հովանավորության տակ: 1853 թվականի հոկտեմբերի 4-ին Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Սկզբում ռուսական զորքերը կարողացան հաղթանակներ տանել: 1853 թվականի նոյեմբերի 18-ին Պ.Ս. Նախիմովի ղեկավարությամբ նավատորմը Սինոպ ծոցում ջախջախիչ պարտության մատնեց թշնամուն: 1854 թվականի մարտին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Ռուսաստանին: 1854 թվականի սեպտեմբերին դաշնակիցները մտան Ղրիմ: Ռուսական բանակը՝ Մենշիկովի հրամանատարությամբ, պարտություն կրեց Ալմա գետի մոտ: Նա ստիպված էր նահանջել դեպի Բախչիսարայ:

Ծովի խորքերից մոտենում էր անգլա-ֆրանսիական նավատորմը: Ռուսական առագաստանավային նավատորմի համար դժվար էր մրցել Անգլիայի և Ֆրանսիայի շոգենավերի հետ: Սեպտեմբերի 13-ին դաշնակիցների զորքերը սկսեցին Սևաստոպոլի պաշարումը: 1855 թվականի գարնանը նրանց միացան Սարդինիայի թագավորության զորքերը: Քաղաքի պաշտպանությունը ղեկավարում էին ծովակալներ Վ.Ա. Կորնիլովը և Պ.Ս. Նախիմովը: Այն տևեց 349 օր՝ 1854 թվականի սեպտեմբերից մինչև 1855 թվականի սեպտեմբեր: Այդ ընթացքում Սևաստոպոլը ցամաքից և ծովից զանգվածային 6 ռմբակոծությունների ենթարկվեց: Ռուսական հրամանատարությունը որոշեց Սևծովյան նավատորմի նավերը Սևաստոպոլի ծոցի մուտքի մոտ խորտակել՝ ծովից թշնամու հնարավոր հարձակումը կանխելու համար: Երկու ծովակալները՝ Կորնիլովը և Նախիմովը, ինչպես նաև քաղաքի պաշտպանության մեկ այլ ղեկավարը՝ Վ.Ի. Իստոմինը, զոհվեցին պաշարման ժամանակ: Սխրանքներ գործում էին ոչ միայն զինվորականները: Համառուսաստանյան համբավ ձեռք բերեց վիրաբույժ Ն.Ի. Պիրոգովը, որը փրկեց Սևաստոպոլի բազմաթիվ պաշտպանների կյանքը:

1855 թվականի օգոստոսին դաշնակիցները գրավեցին Մալախով կուրգան ռազմավարական կարևոր բարձունքը: Արդյունքում Սևաստոպոլի կայազորը ստիպված եղավ կապիտուլյացիայի ենթարկվել: Մարտերը տեղի էին ունենում ոչ միայն Ղրիմում, այլև Սպիտակ և Բալթյան ծովերում, Կովկասում և Կամչատկայում: Անգլաֆրանսիական ուժերը հարձակվել էին Ֆինլանդիայի բերդերի վրա և ռմբակոծել Սոլովեցկի վանքը: Պետրոպավլովսկ-Կամչատսկի կայազորը հետ էր մղել դաշնային ջոկատների հարձակումը: Կովկասում ռուսական զորքերը կարողացան գրավել թուրքական Բայազետի և Կարսի բերդերը: Սակայն այդ հաջողությունները չէին կարող քողարկել Ղրիմի ձախողումները: Պատերազմի արդյունքներով 1856 թվականի մարտին ստորագրվեց Փարիզի խաղաղության պայմանագիրը: Ռուսաստանը կորցրեց Հարավային Բեսարաբիան և Դանուբի գետաբերանը: Նա, ինչպես նաև Օսմանյան կայսրությունը, հրաժարվեց Սև ծովում ռազմական նավատորմ ունենալու իրավունքից և դադարեց վերահսկել Դանուբյան իշխանություններին: Ղրիմի պատերազմն ամփոփեց Նիկոլայ I-ի կառավարման շրջանը: Ռուսական բանակը տասնամյակների ընթացքում առաջին անգամ պարտություն կրեց, ինչը հասարակության կողմից չափազանց ցավոտ ընկալվեց: Նախորդ տարիների ընթացքում հասարակության մեջ ձևավորվել էր անսասան ու անպարտելի երկրի կերպարը: Պատերազմի ձախողումը իրապես կապված էր ռազմատեխնիկական առավելությունների հետ, որ ունեին անգլաֆրան-

սիական զորքերը: Ընդ որում, խոսքը ոչ միայն հրաձգային զինատեսակների և շոգենավերի, տրանսպորտային համակարգի, որը չէր կարողանում լուծել իր առջև դրված խնդիրները, այլև կապի միջոցների, ֆինանսական համակարգի կայունության մասին էր: Դաշնակիցների առավելությունների մեծ մասը պայմանավորված էր նրանց համակցված ռեսուրսներով և հնարավորություններով, ինչպես նաև 1820-1840-ական թվականներին Արևմտյան Եվրոպայի երկրների կրած տնտեսական արմատական փոփոխություններով: Այդ փոփոխությունները միայն փոքր չափով ազդեցին Ռուսաստանի վրա:

§ 48. XIX դարի առաջին կեսի հասարակական միտքը

Ռոմանտիզմ: XIX դարի սկիզբը ռոմանտիզմի ժամանակաշրջանն է ինչպես Արևմտյան Եվրոպայում, այնպես էլ Ռուսաստանում: Խոսքը միայն արվեստի ուղղության մասին չէ: Ռոմանտիզմը յուրահատուկ դարաշրջան էր, որը որոշեց մտածելակերպի ոճը, իրավունքի և քաղաքականության, անցյալի ու ապագայի մասին պատկերացումները: Այն առաջ եկավ XVIII դարի վերջին Ֆրանսիական հեղափոխության հետևանքով Լուսավորության դարաշրջանի «ավերակների» վրա: Այդ ժամանակ կասկածի տակ հայտնվեցին նախորդ դարաշրջանին բնորոշ իրողությունները: Եվրոպացի մարդը կասկածում էր մարդկային օրենքների համընդհանուր լինելուն: Նրա առջև խնդիր էր դրվել արդարացնել ազգային յուրահատուկ ուղու գաղափարը: Նույն խնդրին բախվել և փորձել են լուծում գտնել տարբեր երկրների, այդ թվում՝ Ռուսաստանի մտավորականները: Դրա համար անհրաժեշտ էր նորովի ընթերցել ազգային պատմությունը՝ բացահայտելով և ընդգծելով ազգային մշակույթի բնորոշ գծերը: Այս գաղափարները առաջ էին գալիս ոչ միայն հասարակության անդամների, այլև պետական իշխանավորների մտքում: 1811 թվականին Ն.Մ. Կարամզինը կայսրին ներկայացրեց «Հին և նոր Ռուսաստանի մասին» աշխատանքը: Այդ աշխատանքում նա փորձում էր ապացուցել ռուսական պատմական փորձի յուրահատկությունը: Այս առումով նա անհնար էր համարում Արևմտյան Եվրոպայից ուղղակիորեն փոխառել քաղաքական ու իրավական ինստիտուտները: Կարամզինի խոսքով՝ Ռուսաստանում ինքնակալությունը այլընտրանք չուներ, թեկուզ միայն այն պատճառով, որ կառավարման այդ ձևի շնորհիվ ստեղծվել է հսկայական մի պետություն: Ինքնավակալությունը ապահովում էր Ռուսաստանի սոցիալական և իրավական բոլոր ինստիտուտների գործունեությունը: Կարամզինը ճորտատիրությունը աներկբայորեն համարում էր չարիք: Բայց նաև կարծում էր, որ դրա վերացումը ավելի մեծ չարիք կլիներ, քանի որ գյուղացիները, հողատերերը և հենց պետությունը պատրաստ չէին նման արմատական փոփոխությունների: Վերջապես Կարամզինը դեմ էր արտահայտվում «բարեփոխումներ հանուն բարեփոխումների» թեթևամիտ գաղափարին: Նրա կարծիքով՝ փոխակերպումները պետք է իրականացվեն միայն այն դեպքում, երբ դրանք իսկապես անխուսափելի են: Սա ակնարկ էր Մ.Մ. Սպերանսկու ծավալած գործունեության

վերաբերյալ, ինչը ազնվականության և կայսերամերձ շրջանակների զայրույթն էր հարուցում: XIX դարի սկզբին Կարամզինի հայացքները այդքան էլ ակնհայտ չէին: Նա կասկածի տակ էր դնում լուսավորության իդեալները, որոնք այդ տարիների շատ մտավորականների համար ընդունելի էին ու սիրելի (ինչպես օրինակ՝ Սպերանսկու համար): Կարամզինն ապացուցում էր ռուսական ավանդույթի յուրօրինակությունն այն ժամանակ, երբ նրա ժամանակակիցներն առաջնորդվում էին արևմտաեվրոպական մոդելներով:

1830-1840-ականների հանրային բանավեճը: Ռուսաստանի մտավոր կյանքում կարևոր ուղենիշ դարձավ Հանրային լուսավորության նախարար Ս.Ս. Ուվարովի (1832) գրառումը՝ ուղղված կայսրին: Այն հիմնավորում էր «ուղղափառություն, ինքնակալություն, ժողովրդայնություն» երրորդությունը, որը հետագայում ամուր կապվելու էր հեղինակի անվան հետ: Գիտական գրականության մեջ նրան տրվել է ժողովրդայնության պաշտոնական տեսություն անվանումը, որը ժամանակին առաջարկել էր գրականագետ Ա.Ն. Պիպինը: Այս տեսությունն ուներ իր կողմնակիցները: Ավանդաբար դրանց թվին են դասվում պատմաբաններ Մ.Պ. Պոգոդինը, Ն.Գ. Ուստրյալովը, գրականության պատմաբան Ս.Պ. Շևիրևը և ուրիշներ: Ուվարովի գաղափարները ինքնին հետաքրքիր էին: Նախարարը հնարավորություն ունեցավ իր տեսակետները կյանքի կոչել գործնականում՝ գիմնազիաներում և համալսարաններում կրթական ծրագրերը փոփոխելով: Հենց այդ ժամանակ հայտնվեց Ն.Գ. Ուստրյալովի պատմության դասագիրքը, որում առաջարկվում էր ռուսական պետության անցյալի վերաբերյալ պաշտոնապես հաստատված տարբերակը: Ուվարովի գաղափարներն ընկան պարարտ հողի մեջ: Տարբեր հայացքների տեր մտավորականների կողմից ազգային փորձառությունը հասկանալու և ըմբռնելու քայլ կատարվեց: Գործող խմբակները և սալոնները, որտեղ ընթերցվում և քննարկվում էին դարաշրջանի անկյունաքարային տեքստերը (հիմնականում գերմանական դասական փիլիսոփայությունը), դրա համար բարենպաստ միջավայր էին ստեղծել: Այդպիսիներից էին, օրինակ, Վ.Գ. Բելինսկու, Ն.Վ. Ստանկևիչի և ուրիշների ստեղծած խմբակները: Քննարկումների ուղղությունը որոշում էին ապագա հայտնի գրողները, գրականագետները, հասարակական գործիչները (Կ.Ս. Ակսակով, Կիրեևսկի եղբայրներ և այլն): Հիմնականում քննարկվում էին փիլիսոփայության, գրականության, պատմության հարցեր: Խմբակի որոշ այցելուներ քննադատում էին կառավարության քաղաքականությունը, սակայն պաշտոնական հնչող ձայնն ավելի բարձր էր, քան քննադատողներինը: Պատահական չէ, որ «Հյուսիսային մեղու» և «Հայրենիքի որդի» պարբերականները, որոնք վայելում էին կառավարության աջակցությունը և պաշտպանում էին պաշտոնական ժողովրդայնության սկզբունքները, ամենահայտնին էին այդ ժամանակ: Այնուամենայնիվ, չնայած տեսակետների ողջ բազմազանությանը, քչերն էին ժխտում ռուսական պատմական փորձի արժեքը և կարևորությունը: Այդքանով ավելի պարզ է դառնում և՛ իշխանությունների, և՛ հասարակության սուր արձագանքը Պ. Յ. Չաադաևի ելույթին: 1836 թվականին «Հեռադիտակ» ամսագրում հրապարակվեց Չաադաևի առաջին «Փիլիսոփայական նամակը»: Այն գրվել էր ավելի վաղ՝ 1829 թվականին: Չեռագիր տարբերակը,

որը լայնորեն հայտնի էր մոսկովյան հասարակությանը, դեռ սկանդալի պատճառ չէր դարձել: Դա տեղի ունեցավ յոթ տարի անց: «Նամակի» հրապարակմանը կառավարությունը արձագանքեց՝ ամսագիրը փակելով, հրատարակիչ Ն.Ի. Նադեժդինին աքսորելով, իսկ Չաադաևին խելագար հռչակելով: Հեղինակը կասկածի տակ էր դնում Ռուսաստանի պատմամշակութային ժառանգությունը: Նրա գնահատմամբ՝ ի սկզբանե ուղղափառություն ընտրելը սխալ էր: Քրիստոնեության արևելյան ծեսի ընդունման պատճառով Ռուսաստանը հայտնվեց արևմտաեվրոպական մշակույթից կտրված վիճակում:

Պատմագիտության մեջ վաղուց բանավիճում են այն մասին, թե արդյոք Չաադաևը պատկանում է արևմտամետ մտավորականների՞, թե՞ սլավոնաֆիլների թևին: Հարցի ձևակերպումն ինքնին լիովին ճշգրիտ չէր: Չաադաևը ո՛չ մեկին էր հարում, ո՛չ էլ մյուսին, և այդ մասին ինքն է գրել: Այնուամենայնիվ, հատկանշական է, որ նրա ուշ շրջանի տեքստերը նկատելիորեն ավելի մոտ են սլավոնաֆիլ ավանդույթին: Սլավոնասերների պես Չաադաևը ռուսական մշակույթի ակունքները տեսնում էր կրոնի յուրօրինակության մեջ: Նա պնդում էր, թե Ռուսաստանին վիճակված է հատուկ ուղի:

Այսպես թե այնպես Չաադաևի տեքստերը մարտահրավեր էին մայրաքաղաքի սալոնների և խմբակների համար: Դրանց շուրջ վիճում էին, և այդ վեճերից առաջ եկան XIX դարի կեսերի ռուսական մտքի երկու հիմնական ուղղությունները՝ սլավոնաֆիլիությունը և արևմտամետությունը: Սխալ կլիներ այս կամ այն հոսանքը բնութագրել՝ ելնելով նրանց անվանումից: Հայտնի պատճառներով դրանք պատահաբար են հայտնվել: Դրանք նույնիսկ անուններ չեն, այլ ավելի շուտ մականուններ, որոնք առաջացել են «միջկուսակցական» վեճերի ժամանակ: Համապատասխանաբար սլավոնաֆիլները մեծ մասամբ համասլավոնական միասնության կողմնակիցները չէին և քիչ էին հետաքրքրված հարավային և արևմտյան սլավոնների ճակատագրով: Արևմտամետներն էլ ոչ մի կերպ այն ամենի անվերապահ երկրպագուները չէին, ինչ տեղի ունեցավ Արևմտյան Եվրոպայում:

Սլավոնաֆիլների (նրանց պատկանում էին Ակսակով եղբայրները, Կիրեևսկի եղբայրները, Յու. Ֆ. Սամարինը, Ա.Ս. Խոմյակովը) տեսակետը ձևավորվել էր այն պատկերացման վրա, թե Ռուսաստանը իր ուրույն ուղին ունի: Այնուամենայնիվ պարզունակ կլիներ ենթադրել, թե սլավոնաֆիլներն ամբողջությամբ մերժում էին արևմտյան փորձը: Նրանք պնդում էին, որ Ռուսաստանն ունի մի շարք յուրահատկություններ, որոնք խանգարում են նրան կուրորեն հետևելու արևմտյան մոդելներին: Սլավոնաֆիլները հատկապես ընդգծում էին ուղղափառության և գյուղացիական համայնքների դերը: Նրանք համոզված էին, որ դրանք ռուսական կյանքի երկու, համակարգաստեղծ տարրերն էին: Այս պատկերացումները ներհյուսվում էին սլավոնաֆիլների մեծամասնությանը բնորոշ կրոնական աշխարհայացքի համակարգին: Նրանք հավատում էին ռուս ժողովրդի համերաշխ միասնությանը, ինչը նրանց զգալիորեն տարբերում էր ատոմների բաժանված արևմտաեվրոպական հանրույթներից: Դա պայմանավորում էր նաև ինքնակալության հատուկ դերը, որը, ըստ սլավոնաֆիլների, չէր կարող վերածվել բացարձակության: Ինքնակալը ապահովում էր ոչ թե իր իշխանության գերակայությունը, այլ հասարակական ներդաշնակությունը: Նա ոչ թե



Յու. Սամարին: Նկարիչ՝ Ի.Ն. Կրամսկոյ

տիրակալ է, այլ հայր, որը ներկայացնում էր ոչ թե որևէ դասակարգ կամ հասարակության շերտ, այլ ամբողջ ժողովրդին և առաջին հերթին նրանց, ովքեր ամենաշատը թագավորական խնամակալության կարիքն ունեն: Միևնույն ժամանակ սլավոնաֆիլները քննադատում էին Նիկոլայ I-ի քաղաքական ռեժիմը: Նրանք թագավորին չէին համարում ինքնակալ՝ բառի լիարժեք իմաստով:

Ըստ սլավոնաֆիլների՝ դեռ Պետրոս Մեծի ժամանակներից էր ինքնակալության ձևն աղավաղված: Այն ձեռք էր բերել արևմտաեվրոպական բացարձակության դիմագիծ: Այս խնդրի լուծումը նրանք տեսնում էին քաղաքական բարեփոխումների մեջ:

Սլավոնաֆիլները խոսքի ազատության, մամուլի և տեղական ինքնակառավարման մարմինների անկախության աներկբա կողմնակիցներն էին: Փաստացի ցարական կառավարությունը պետք է ճանաչեր «հողի» նկատմամբ հասարակության իրավունքները: Ավելին, շատերը (օրինակ՝ Ակսակով եղբայրները) անհրաժեշտ էին համարում վերակենդանացնել Զեմսկի սոբորը՝ աշխարհաժողովը (земский собор), որը կնպաստեր ցարի և ժողովրդի մերձեցմանը և կվերացներ նրանց միջև «միջնապատը»՝ բյուրոկրատիայի (աստիճանավորության) տեսքով:

Այլ տեսակետ էին ներկայացնում արևմտամետները (Տ.Ն. Գրանովսկի, Ա.Ի. Գերցեն, Ս.Մ. Սոլովյով, Ի.Ս. Տուրգենև, Բ.Ն. Չիչերին և ուրիշներ): Նրանք կարծում էին, որ Ռուսաստանն աստիճանաբար անցնում է զարգացման նույն փուլերը, ինչ Արևմտյան Եվրոպան: Դա հնարավոր էր ասել նաև աշխարհի ցանկացած այլ երկրի համար: Արևմտամետները հավատում էին զարգացման ոչ թե արևմտյան, այլ համընդհանուր ուղուն՝ չժխտելով հնարավոր ազգային առանձնահատկությունները: Արևմտականությունը առաջ էր եկել որպես սլավոնաֆիլության հակազդեցություն: Այն միավորում էր տարբեր հայացքներ ունեցող բազմաթիվ մարդկանց: Նրանց շարքում էին մարդիկ, որոնք ինքնակալության և սահմանադրության, հանրապետության և միապետության կողմնակիցներն էին: Այնուամենայնիվ, կար մի բան, ինչը բոլորին միավորում էր: Նախ, ինչպես արդեն նշվեց, արևմտամետները, ի տարբերություն սլավոնաֆիլների, համոզված էին, որ գոյություն ունեն պատմական զարգացման ընդհանուր օրենքներ: Երկրորդ՝ նրանք կարծում էին, որ ընդհանուր ուղին մարդկությանը տանում է դեպի առաջընթաց, այլ ոչ թե փակուղի: Երրորդ՝ արևմտամետները ելնում էին հասարակական-քաղաքական գործընթացների աշխարհիկ ըմբռնումից: Դրանով նրանք նաև էապես էին տարբերվում սլավոնաֆիլներից, որոնց հայացքների կենտրոնում աստվածաբանական բաղադրիչն էր:

Արևմտամետների և սլավոնաֆիլների միջև բանավեճը մարեց 1860-ականներին: Սա մեծապես պայմանավորված էր ժամանակի նոր մարտահրավերներով: Մինչև Մեծ բարեփոխումների դարաշրջանը կարելի էր վիճել պատմության և փիլիսոփայության մասին: Հիմա արդեն թեմաների շրջանակը զգալիորեն ընդլայնվում էր: Բազմաթիվ սլավոնաֆիլներ և արևմտյան հայացքներ ունեցող մարդիկ ներգրավվեցին բարեփոխումների նախապատրաստման և իրականացման գործընթացում: Արևմտականությունը՝ որպես առանձին ամբողջական ուղղություն, դադարեց գոյություն ունենալ: Սլավոնաֆիլությունը գոյատևեց, բայց ստիպված եղավ վերափոխվել՝ արձագանքելով ժամանակի նոր մարտահրավերներին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք Ալեքսանդր I-ի ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված «ամենակարևոր իրադարձությունները»: Ինչո՞ւ նրա գահակալության շրջանը ստացավ «Փառահեղ դարաշրջան» անվանումը:
2. Օգտագործելով տեղեկատվության հավելյալ աղբյուրներ՝ պատրաստե՛ք պատմություն 1812 թ. Հայրենական պատերազմի հերոսներից մեկի կամ կարևոր մարտերի մասին:
3. Ո՞րն էր 1810-1820-ական թվականներին սպայական կազմի շրջանակներում գաղտնի միությունների մասսայականության պատճառը: Ռուսաստանի վերակառուցման ի՞նչ ծրագրեր են առաջարկվել այս միությունների մասնակիցների կողմից:
4. Նիկոլայ I-ի գահակալության օրոք ի՞նչ նպատակով էր բարեփոխվել Նորին Կայսերական Մեծության գրասենյակը: Ո՞ր հարցերն էին գտնվում նրա ստորաբաժանումների պատասխանատվության գոտում:
5. Ի՞նչ կարևորագույն գործընթացներ են տեղի ունեցել Ռուսաստանի տնտեսության մեջ XIX դարի երկրորդ քառորդում: Ի՞նչ է արել կառավարությունը ֆինանսական համակարգի ամրապնդման համար:
6. Պատմե՛ք և վերլուծե՛ք Ալեքսանդր I-ի և Նիկոլայ I-ի կողմից նախաձեռնված ամենակարևոր իրադարձությունների մասին, որոնք առնչվում էին գյուղացիական խնդրի լուծմանը:
7. Օգտագործելով տեղեկատվության հավելյալ աղբյուրներ՝ պատրաստե՛ք զեկուցում Մ. Սպերանսկու կյանքի և պետական գործունեության մասին:
8. Ներկայացրե՛ք Ղրիմի պատերազմի հիմնական իրադարձությունները: Ինչպե՞ս ավարտվեց պատերազմը: Ինչպե՞ս կարելի է գնահատել Նիկոլայ I-ի վարած արտաքին քաղաքականության արդյունքները:

9. Ի՞նչ գաղափարներ էին ընկած Պ.Յա. Չաադաևի «Փիլիսոփայական նամակի» հիմքում: Ինչո՞ւ իշխանություններն այդքան կոշտ արձագանքեցին այս ստեղծագործությանը:
10. Համեմատե՛ք արևմտականների և սլավոնաֆիլերի տեսակետները: Ինչո՞վ էին նրանք տարբեր, ի՞նչ ընդհանուր բան ունեին: Ի՞նչ եք կարծում՝ սլավոնաֆիլությունը կարելի՞ է համարել քաղաքական դոկտրինա:

ԳԼՈՒԽ 10. ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ

§ 49. Ալեքսանդր II-ի մեծ բարեփոխումները

Գյուղացիական բարեփոխումը: Ղրիմի պատերազմում կրած պարտությունը մեծ ցնցում դարձավ ռուս հասարակության համար: Նիկոլայ I-ի գահակալությունը զարմանալիորեն հաջողված էր թվում: Ռուսաստանում զգալի բարեփոխումներ էին սկսվել, հաջող պատերազմներ էին մղվել, շինարարական խոշոր ծրագրեր էին իրականացվում: 1848 թվականի «ժողովուրդների գարունը» չէր դիպել կայսրությանը: Թվում էր, թե Ռուսաստանը մնացել էր որպես «խաղաղության մայրցամաք» եվրոպական փոթորկվող ծովի մեջ: Սակայն Ղրիմի պատերազմի ավարտից հետո տրամադրությունները բոլորովին այլ էին: Կուրլյանդիայի նահանգապետ, իսկ հետո ներքին գործերի նախարար Պ. Վալուևը իրավիճակը բնութագրում էր այսպես. «Վերևում՝ փայլ, ներքևում՝ նեխում»: Այս ախտորոշումը կառավարության կողմից կտրուկ քայլեր էր ենթադրում: Նա պետք է գնար մի շարք փոփոխությունների, որոնք նախորդ տարիներին չափազանց ռիսկային էին թվում:

Մինչ իշխանության գալը Ալեքսանդր II-ը, շատերի կարծիքով, լայնածավալ բարեփոխումների կողմնակիցը չէր: Միևնույն ժամանակ հաշվի չէին առնվել տիրակալի անձնային հատկանիշները, նրան կրթած մանկավարժների և առաջին հերթին բանաստեղծ Վ. Ժուկովսկու ազդեցությունը: Ալեքսանդր II-ն աչքի էր ընկնում իր մարդասիրությամբ և մարդկանց նկատմամբ հումանիստական վերաբերմունքով: Բնավորության այս գիծը կարևոր է հաշվի առնել, երբ խոսքը գնում է մեծ բարեփոխումների մշակման մասին: Միևնույն ժամանակ Ալեքսանդր II-ը երկմտող մարդ էր, գործերը մինչև վերջ հասցնելու համար նրան չէր բավականացնում վճռականությունը: Այնուամենայնիվ առանց ինքնակալի ամուր կամքի գյուղացիական ռեֆորմը դժվար թե իրականություն դառնար:



Ալեքսանդր II

1856 թվականի մարտին Ալեքսանդր II-ը դիմեց Մոսկվայի ազնվականությանը: Նա ասաց այնպիսի խոսքեր, որոնք հետո տարածվեցին ողջ երկրով մեկ: Ըստ նրա՝ ճորտատիրական կարգերը հարկավոր էր չեղարկել վերևից ու չսպասել, որ այն սկսվի չեղարկվել ներքևից: Այս խոսքերը պարզապես հռչակագիր չդարձան:

1857 թ. կազմավորվեց Գաղտնի կոմիտեն, որը հետո վերափոխվեց Գլխավոր կոմիտեի՝ սկզբում Ա.Ֆ. Օռլովի, ապա Մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաևիչի ղեկավարությամբ: Իշխանությունները նախկինում էլ՝ Նիկոլայ I-ի օրոք, գնացել էին այս ճանապարհով, երբ մի անգամ չէ, որ բարձրացվել էր գյուղացիության բարեփոխումների հարցը: Հարցի նորությունն այն էր, որ կառավարությունը այս անգամ ուղիղ դիմեց տեղական ազնվականությանը: Թագավորի նախաձեռնությամբ ձևավորվեցին նահանգային կոմիտեներ, որոնք բարեփոխումների վերաբերյալ պետք է առաջարկություններ ներկայացնեին:

Նահանգային կոմիտեների կարծիքները հաշվի առնելու համար ստեղծվեցին Խմբագրական հանձնաժողովներ՝ Յա. Ի. Ռոստովցևի նախագահությամբ: Այնտեղ աշխատում էին Ն.Ա. Միլյուտինը, Յա.Ա. Սոլովևը, Յու.Ֆ. Սամարինը, Վ.Ա. Չերկասկին և մյուսները: Ճիշտ է, հանձնաժողովները դիտարկեցին տեղական ազնվականության առաջարկների փոքր մասը միայն:

1861 թվականի փետրվարի 19-ին Ալեքսանդր II-ը ստորագրեց ճորտատիրությունը վերացնելու մասին մանիֆեստը, ինչպես նաև «Ճորտատիրությունից դուրս եկող գյուղացիների մասին ընդհանուր կանոնակարգը»: Գյուղացիներին տրվում էր անձնական ազատություն, սակայն հողը պետք է գնվեր: Քանի դեռ դա տեղի չէր ունեցել, գյուղացին շարունակում էր կատարել իր պարտականությունները: Հողամասերի չափերը որոշվում էին կանոնադրության մեջ, որոնք պետք է ստորագրվեին հողատիրոջ և գյուղացիական համայնքի փոխադարձ համաձայնությամբ: Դրան պիտի օժանդակեր միջնորդ-հաշտարարը՝ պետությունը ներկայացնող պաշտոնյան: Եթե գյուղացու հողակտորը գերազանցում էր տվյալ տարածքում պահանջվող նորմը, ապա ավելցուկը վերադարձվում էր հողատիրոջը (հողամասի «կտորները»): Որոշ դեպքերում (հիմնականում եվրոպական Ռուսաստանի հյուսիսային նահանգներում) գյուղացուն նույնիսկ բաժնեհատելով էին հողատարածքը տալիս: Այնտեղ, որտեղ հողը բերրի էր, գերակշռում էին բաժնեհատումները: Օրենսդրությունը հողատիրոջը իրավունք էր տալիս գյուղացուն տալ հատկացման միայն մեկ քառորդը, բայց անհատույց հիմունքներով (խոսքը, այսպես կոչված, «նվիրատվությունների» մասին է):

Հողի դիմաց փրկագնի մի մասը վճարում էր ինքը՝ գյուղացին, իսկ մեծ մասը (80%)՝ պետությունը: Խոսքը փոխառության մասին էր, որը պետք է մարվեր տարեկան 6 տոկոսով: Փաստորեն հայտնվեց նոր հարկ, որը ծանր բեռան նման դրվեց գյուղացու վրա: Փրկագնման գործողությունը իր ավարտին պիտի հասցվեր 49 տարում: Այս բարեփոխումների ժամանակ գյուղացիության հատկացումները նկատելիորեն նվազեցին (մոտ մեկ երրորդով): Գյուղացին երբեք հողի սեփականատեր չդարձավ: Համայնքն էր տնօրինում հողակտորները, իսկ ինքը՝ հողագործը, ո՛չ կարող էր հողը վաճառել, ո՛չ գրավադրել, ո՛չ էլ վարձակալել: Առանց համայնքի թույլտվության նա նույնիսկ չէր կարող հրաժարվել դրանից: Սա նշանակում էր, որ գյուղացին իրականում կապված էր հողին: Կառավարությունը ձգտում էր հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի գյուղացին մնա հողագործ: Նա վախենում էր երկրի բնակչության մեծամասնության պրոլետարացումից: Դա դիտվում էր որպես լուրջ քաղաքական վտանգ: Ըստ այն

ժամանակվա պետական պաշտոնյաների՝ բանվորների թվի աճը սպառնում էր ապագա հեղափոխական ցնցումներով։

Բարեփոխումների արդյունքում գյուղացիները տուժեցին, սակայն կալվածատերերը ևս մեծ մասամբ ոչինչ չշահեցին։ Նրանց մի զգալի մասը սնանկացավ։ Դժվար էր տնտեսապես գոյատևել որակապես նոր հանգամանքներում։ Ամենից առաջ կալվածատերերը պատրաստ չէին տնային տնտեսություն վարել ճորտերի կողմից անվճար աշխատուժի բացակայության պայմաններում։ Պետական օգնությունը չէր կարող փոխհատուցել բարեփոխումների առաջ բերած հսկայական ծախսերը։

Նման նշանակալի ու կարևոր վերափոխումների իրականացումը ենթադրում էր արմատական փոփոխություններ երկրի կյանքում։ Ճորտատիրությունը երկար ժամանակ եղել է Ռուսաստանի առանցքային սոցիալական ինստիտուտներից մեկը։ Հիմա նա վերանում էր։ Դա պայմաններ էր ստեղծում հետագա վերափոխումների մի ամբողջ շրջափուլի համար, որը զգալիորեն փոխելու էր հասարակական կյանքի տարբեր ոլորտները։

Ինքնակառավարման մարմինները: Փոփոխությունների ճանապարհին ամենակարևոր քայլը 1864 թ. տեղական ինքնավարության մարմինների՝ զեմստվոների հիմնադրումն էր։ Խոսքը գավառների և շրջանների տեղական ինքնակառավարման մարմինների մասին է։ Զեմստվոները հասարակության բոլոր շերտերը ներառող հաստատություններ էին։ Դրանց կազմավորմանը մասնակցել էին թե՛ կալվածատերերը, թե՛ գյուղացիները, թե՛ քաղաքաբնակները։ Զեմստվոյի ժողովներն ընտրվում էին երեք տարով։ Նրանց գործադիր հաստատությունները վարչություններն էին։ Տեղական ինքնակառավարման մարմինը գավառի զարգացման պատասխանատուն էր (տարրական կրթություն, բժշկական օգնություն, ճանապարհաշինություն և այլն)։ Այս ամենը ֆինանսական միջոցներ էր պահանջում։ Զեմստվոյի հաստատությունները իրավունք ստացան բնակչության վրա հատուկ հարկեր սահմանելու, հիմնականում խոսքը գնում էր անշարժ գույքի հարկման մասին։ Տեղական ոստիկանության գործառույթները մնացին գավառապետերի իրավասության տակ։ Զեմստվոներ ստեղծվեցին ոչ ամենուր, այլ եվրոպական Ռուսաստանի 34 գավառներում, որտեղ հողի զգալի մասը պատկանում էր ռուսական ազնվականության ներկայացուցիչներին։ Զեմստվոն զգալի դեր է խաղացել տեղերում։ Նրանք նպաստել են սոցիալական խնդիրների լուծմանը։ Բացի այդ, հասարակությունը համախմբվում էր նրանց շուրջ՝ ներառյալ գավառական ազնվականությունը, որը զեմստվոն դիտարկում էր որպես կառավարության կամայականություններից պաշտպանող օրգան։ Պատահական չէ, որ ինքնակառավարման մարմինների և գավառապետերի միջև հաճախադեպ էին դառնում առճակատումները։

1870 թվականին իրականացվեց քաղաքային ռեֆորմը։ Քաղաքային կանոնակարգի (Городовое положение) համաձայն՝ հիմնադրվում էին հասարակության տարբեր շերտերից կազմված ժողովներ՝ դումաներ։ Դումայի կողմից ստեղծված ղեկավար մարմինը քաղաքային իշխանությունն էր։ Նա էր ընտրում քաղաքապետին։ Ընտրությունները Դուման անցկացնում էր չորս տարին մեկ՝ հաշվի առնելով մասնավոր սեփականության արտոնակարգը (ցենզը), քաղաքաբնակները բաժանվում էին երեք

կուրիաների (համայնքների)։ Ինքնակառավարման մարմինները պատասխանատու էին բժշկական օգնության, ուսումնական հաստատությունների, առևտրի կազմակերպման, քաղաքաշինության և այլնի համար։

Դատական համակարգի բարեփոխումը: 1864-ին ընդունվեց դատական կանոնագիրքը։ Այս որոշմամբ նախորդ դատարանը, որը ձևավորվել էր գրասենյակային համակարգով, լուծարվեց։ Դատական գործընթացը դարձավ մրցակցային, իսկ դատավորները՝ պետական կառավարման համակարգից անկախ։ Ստեղծվեց հասարակության տարբեր շերտերից կազմված երդվյալ ատենակալների կառույցը, հայտնվեցին փաստաբաններ (երդվյալ հավատարմատարներ)։ Դատական նիստերը դարձան հրապարակային։ Բարձրագույն դատարանը մնաց Կառավարող Սենատը։ Ալեքսանդր II-ի օրոք իրականացված բարեփոխումներից ամենահետևողականը դատական բարեփոխումներն էին։

Եվ այնուամենայնիվ, Ռուսաստանում իրավական միասնական դաշտ չառաջացավ։ Դատահիրավական համակարգը կայսրության ծայրամասերում նկատելիորեն տարբերվում էր։ Մի շարք դեպքերում հասարակական դասի առանձնահատկություններն ազդեցություն էին ունենում։ Գյուղացիներին դատում էին հատուկ գործադիր (վոլոստային) դատարաններում, որտեղ որոշումները կայացվում էին սովորական իրավունքի նորմերի համաձայն։ Կային հատուկ դատարաններ զինվորականների և հոգևորականների համար։

Կրթական բարեփոխումները: Նոր ինստիտուտները զգալի առաջընթաց էին ենթադրում կրթական համակարգում։ Ռուսաստանին անհրաժեշտ էին մասնագետներ, որոնք կաշխատեին դատարաններում, փաստաբանական գրասենյակներում, զեմստվոներում և գրական ոլորտում։

1863 թվականին համալսարանի նոր կանոնադրություն ընդունվեց։ Այն ինքնավարություն էր շնորհում համալսարաններին (ինչը զգալիորեն սահմանափակվել էր 1835 թվականի կանոնադրությամբ), որոնք այժմ ընտրում էին պաշտոնյաներին և որոշումներ էին ընդունում կրթական ծրագրերի վերաբերյալ։ Սա նպաստեց հասարակության մեջ բարձրագույն ուսումնական հաստատությունների հեղինակության բարձրացմանը։ Փոփոխությունները ազդեցին նաև միջնակարգ կրթության վրա։ Գիմնազիաները բաժանվեցին դասական (որտեղ հիմնականում ուսումնասիրվում էին հումանիտար առարկաներ և օտար լեզուներ) և ռեալական (նպատակ էին հետապնդում շրջանավարտներին պատրաստել տեխնիկական բուհեր ընդունվելու համար, որտեղ ինժեներներ էին պատրաստելու) կառույցների՝ ուսման 7 տարի տևողությամբ։

Ռազմական բարեփոխումներ: Ղրիմի պատերազմում Ռուսաստանի պարտությունը ռազմական բարեփոխումներ իրականացնելու պատճառ դարձավ։ Դրանք ամուր կերպով կապվում են ռազմական նախարար Դ. Ա. Միլյուտինի անվան հետ։ Խոսքը վերափոխումների մի ամբողջ շարքի մասին էր։ 1862 թվականին զորքերի կառավարումը բարելավելու նպատակով ստեղծվեցին ռազմական շրջաններ։ Կառավարությունը ձեռնամուխ եղավ բանակի վերազինմանը։ Առաջացան ռազմաուսումնական նոր հաստատություններ։ Ի վերջո 1874 թվականին Ռուսաստանում դադարեցվեց

զորակոչը (рекрутский набор), և մտցվեց համընդհանուր զինվորական պարտականություն, որին ենթակա էին 21 տարեկան և դրանից բարձր տարիքի տղամարդիկ: Ծառայության տևողությունը կախված էր զորակոչիկների կրթության մակարդակից:

1870-1880 թթ. քաղաքական ճգնաժամը: Ալեքսանդր II-ի օրոք իրականացվեցին բազմաթիվ բարեփոխումներ, որոնք անդրադարձան նաև ֆինանսների, մամուլի, ազգային քաղաքականության և այլնի վրա, սակայն բարեփոխումները չազդեցին պետական համակարգի վրա: Այն անձեռնմխելի մնաց: Արդյունքում նոր ինստիտուտները դժվարությամբ էին համապատասխանության եզրեր գտնում գործող քաղաքական համակարգի հետ: Դա իրեն զգացնել տվեց արդեն 1860-ականներին: Կառավարությունը փորձեց շտկել բարեփոխումների կուրսը, ինչը հանրության մեջ սուր արձագանք առաջ բերեց: Ալեքսանդր II-ի գահակալության հատկապես վերջին տարիները անհանգիստ էին: Դա ֆինանսական անախորժությունների, միջազգային քաղաքականության մեջ անհաջողությունների, կայսեր ընտանիքում բախումների և ահաբեկչությունների ժամանակաշրջան էր:

1878 թվականին «Հող և ազատություն» հեղափոխական կազմակերպության անդամ Վ.Ի. Զասուլիչը մահափորձ կատարեց Սանկտ Պետերբուրգի քաղաքապետ Ֆ.Ֆ. Տրեպովի դեմ: Վերջինս միայն վիրավորվեց: Դա բանտարկյալների նկատմամբ նրա դաժան վերաբերմունքի պատասխանն էր: Թվում էր, թե հանցագործության փաստի մեջ կասկած չկար: Այնուամենայնիվ երդվյալ ատենակալների դատարանը արդարացրեց Զասուլիչին: Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ հասարակությունը նրան համակրում էր: Հասարակության լայն շերտերը համակրում էին հեղափոխականներին, իսկ իշխանական շրջանակների նկատմամբ, մեղմ ասած, անվստահություն կար:

Նույն թվականին մայրաքաղաքի հենց կենտրոնում հեղափոխական Ս.Մ. Ստեպնյակ-Կրավչինսկին դանակահարեց ժանդարմների պետ Ն.Վ. Մեզենցևին: 1879 թվականին ահաբեկչության հետևանքով սպանվեց Խարկովի գեներալ-նահանգապետ Դ.Ն. Կրոպոտկինը: Նույնիսկ կայսեր դեմ «որս» սկսվեց: 1879 թվականին նրա վրա կրակեցին Սանկտ Պետերբուրգի Դվորցովայա հրապարակում: Ալեքսանդր II-ը հրաշքով խուսափեց ահաբեկչի փամփուշտներից:

Կառավարությունը խստացրեց իր բռնատիրական քաղաքականությունը: Այն արտակարգ լիազորություններ տվեց գլխավոր գեներալ-նահանգապետերին, հաճախակի էին դառնում դատական գործերը արդարադատության հատուկ մարմիններին փոխանցելու դեպքերը: Սակայն այս բոլոր միջոցառումները չլուծեցին խնդիրը: 1880 թվականի փետրվարին Ձմեռային պալատում տեղի ունեցավ պայթյուն, որը կազմակերպել էր Ս.Ն. Խալտուրինը: Կայսրը դրանից ամեն դեպքում չտուժեց: 1880 թվականին ստեղծվեց Գերագույն վարչական հանձնաժողով, որին տրվեցին լայն լիազորություններ՝ վերականգնելու կարգն ու հանգստությունը: Հանձնաժողովը ղեկավարում էր գեներալ Մ.Տ. Լորիս-Մելիքովը: Նա ճիշտ չհամարեց հույսը դնել միայն բռնաճնշումների վրա, որոնց անհրաժեշտությունը նաև չէր հերքում: Նրա կարծիքով, իշխանությունը ստիպված էր ձեռք մեկնել հասարակությանը, բավարարել նրա ողջամիտ

հատվածի նկրտումները: Պատահական չէ, որ Սանկտ Պետերբուրգում սկսեցին խոսել Լորիս-Մելիքովի «սրտի դիկտատուրայի» մասին: Նրա դիրքերն աստիճանաբար ամրապնդվեցին:

Երբ Գերագույն վարչական հանձնաժողովը լուծարվեց, Լորիս-Մելիքովը նշանակվեց ներքին գործերի նախարար, որին փոխանցվեցին նաև կայսերական գրասենյակի՝ իրավասությունները դադարեցված III վարչության լիազորությունները: Նոր նախարարը հանդես եկավ համարձակ որոշումներով և նախաձեռնություններով: 1881 թվականի սկզբին նա առաջարկեց Պետական խորհրդի աշխատանքներին ներգրավել զեմստվոների և քաղաքների ընտրված ներկայացուցիչներին: Երբեմն այս նախագիծը անվանում են Լորիս-Մելիքովի սահմանադրություն, ինչը հազիվ թե ամբողջությամբ տեղին կարող է համարվել: Նախագծի հեղինակն անգամ չէր համարձակվել ակնարկել ինքնակալությունը սահմանափակելու հնարավորության մասին: Եվ այնուամենայնիվ նման որոշման ընդունումը կփոխեր Ռուսաստանում օրենսդրական գործընթացի բնույթը: Հավանաբար կայսրը հակված էր համաձայնել Լորիս-Մելիքովի նախագծին: Սակայն այս նախագիծը իրականություն չդարձավ: 1881 թվականի մարտի 1-ին Ալեքսանդր II-ը սպանվեց «Ժողովրդական կամք» հեղափոխական կազմակերպության անդամների կողմից:

§ 50. Ալեքսանդր III-ի վարած ներքին քաղաքականությունը

Նոր ուղի: 1881 թ. մարտի 1-ին գահ բարձրացավ Ալեքսանդր III-ը. նա թագավորական ընտանիքի երկրորդ որդին էր: Երկար ժամանակ նրան չէին նախապատրաստում գահաժառանգի կարգավիճակին: Ալեքսանդրի համար նախորոշված էր ռազմական կարիերան: Գահաժառանգի դերում դիտարկվում էր նրա ավագ եղբայր Նիկոլայ Ալեքսանդրովիչը, որը փայլուն կրթություն էր ստացել: Նրա ուսուցիչներն էին եղել հասարակական մտքի երևելի ներկայացուցիչներ Կ.Դ. Կավելինը, Ս.Մ. Սոլովյովը, Բ.Ն. Չիչերինը: Նրանք հույս էին փայփայում, որ ապագա ինքնակալը կարդարացնի իրենց բոլոր հույսերը: Սակայն դա իրականություն չդարձավ. Նիկոլայ Ալեքսանդրովիչը մահացավ 1865 թ.: Բնականաբար նրա եղբայրը՝ Ալեքսանդր Ալեքսանդրովիչը, դարձավ գահաժառանգ: Նրա ուսուցիչների շրջանակը այլ էր: Նրա հայացքների ձևավորման մեջ առանցքային դեր էր խաղացել հայտնի փաստաբան, կրոնագետ, իսկ հետագայում նաև հասարակական-քաղաքական գործիչ Կ.Պ. Պոբեդոնոսցևը:



Ալեքսանդր III: Նկարիչ՝ Ի.Ն. Կրամսկոյ

Նոր կայսեր և նրա մերձավոր շրջապատի առջև առաջադրանք էր դրվել՝ ըմբըռնել ճգնաժամային երևույթները, որոնք ամբողջովին պարուրել էին Ռուսաստանը 1870-ական թվականների վերջին և 1880-ականների սկզբին: Այս հարցում հասարակությունը միակարծիք չէր: Ոմանք կարծում էին, որ մեծ բարեփոխումների նախագիծը դեռ չի ավարտվել, ինչն էլ հենց բոլոր խնդիրների պատճառն էր: Ուրիշներն էլ Ալեքսանդր II-ի կառավարման վերջին տարիների դրամատիկ իրադարձությունները բացատրում էին շտապողականությամբ և հիմնավորապես չմտածված վերափոխումներով: Դա ենթադրում էր, որ առաջ կգան տարբեր եզրակացություններ: Ոմանք հույս էին փայփայում, որ բարեփոխումների քաղաքականությունը կշարունակվի: Ուրիշներն էլ հույս ունեին, որ այն կկասեցվի:

Ցարի շրջապատում տեղի էին ունենում քննարկումներ՝ Ռուսաստանի զարգացման հեռանկարների շուրջ: Նրանք վիճում էին Լորիս-Մելիքովի նախագծի վերաբերյալ: Լորիս-Մելիքովի գլխավոր ընդդիմախոսը Պոբեդոնոսցևն էր: Նա կարծում էր, որ նախագծի իրագործումը կնշանակի Սահմանադրության առաջադրում Ռուսաստանում, իսկ դա էլ իր հերթին կազդարարեր երկրի վերջը: Ալեքսանդր III-ը համակարծիք էր Պոբեդոնոսցևի դիրքորոշմանը, ինչը կանխորոշեց վերջինիս հաջողությունը: Պոբեդոնոսցևը կազմեց «Ինքնակալության անխախտության մասին» հռչակագիրը, որը ցարը ստորագրեց 1881 թվականի ապրիլի 29-ին: Լորիս-Մելիքովը և նրա կողմնակիցները հրաժարական տվեցին:

Ներքին գործերի նախարարի պաշտոնը զբաղեցրեց Ն.Պ. Իգնատևը: 1881 թվականի օգոստոսին նրա նախաձեռնությամբ հրատարակվեց «Պետական կարգի պաշտպանությանն ու հասարակական խաղաղությանն ուղղված միջոցների մասին» կանոնակարգը: Այս փաստաթղթում կարծես ամփոփված էին իշխանությունների նախկին ռեպրեսիվ քաղաքականության արդյունքները: Կառավարությունն ընդլայնեց գեներալ-նահանգապետերի և նահանգապետերի լիազորությունները: Այս կամ այն տարածքը հատուկ պաշտպանության կարգավիճակի տակ առնվելու պարագայում տեղական ինքնակառավարման մարմինն իրավունք ուներ անվստահելի անձանց աքսորել առանց դատաքննության, դադարեցնել մամուլի օրգանների հրապարակումը և կրթական հաստատությունների աշխատանքը: XX դարի սկզբին երկրի զգալի մասը գտնվում էր հատուկ կարգավիճակում:

Իգնատևը Ռուսաստանի առջև ծառացած խնդիրների լուծման համար բռնատիրական քաղաքականությունը համարում էր ոչ բավարար: Նա սլավոնաֆիլականության՝ Ի.Ս. Ակսակովի տարբերակի կողմնակիցն էր: Իգնատևը պատրաստեց օրենսդրախորհրդատվական աշխարհաժողով (զեմստվային ժողով) գումարելու նախագիծը (проект созыва законосовещательного земского собора), որը պիտի նպաստեր ցարի և ժողովրդի միջև ուղիղ երկխոսությանը: Այս գաղափարները բյուրոկրատական շրջանակներում բավականին տարօրինակ էին թվում: Եվ կրկին կատեգորիկ կերպով դրան դեմ դուրս եկավ Պոբեդոնոսցևը: Իգնատևին ազատեցին աշխատանքից: Ներքին գործերի նոր նախարարը Դ.Ա. Տոլստոյն էր, որը թագավորության նախորդ քաղաքականության հետևողական հակառակորդն էր:

Ժողովրդական կրթություն: Կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրեց կրթական համակարգին: Վերևներում շատերին թվում էր, թե գիմնազիաներն ու համալսարանները դարձել են հեղափոխական գաղափարների ծլարձակման տեղ և ըստ այդմ՝ բարեփոխումների կարիք կա: Համալսարանական նոր կանոնադրություն ստեղծելու անհրաժեշտության մասին խոսեց ազդեցիկ լրագրող, «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի հրատարակիչ Մ.Ն. Կատկովը: Նրան աջակցում էին Տոլստոյն ու Պոբեդոնոսցևը: 1884 թվականին հաստատվեց կանոնադրության նոր տարբերակը: Փաստաթուղթը Կատկովի ցանկությանը լիովին չէր համապատասխանում, սակայն շատ բաներ փոխեց բարձրագույն կրթության համակարգում: Կանոնադրության համաձայն՝ վերացվում էր համալսարանների ինքնավարությունը: Մանկավարժների թեկնածությունները պետք է համաձայնեցվեին ուսումնական շրջանի հոգաբարձուի հետ, ռեկտոր ոչ թե ընտրելու էին, այլ նշանակելու: Համալսարան ընդունվելիս ուսանողները պարտավոր էին տեղեկանք ներկայացնել իրենց բարեհուսության վերաբերյալ: Սահմանվեց ավարտական պետական քննություն, որն անցկացնում էր ժողովրդական կրթության նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը: Կրթության ուսումնական վարձավճարները բարձրացվեցին: Սահմանվեց ուսանողական պարտադիր համազգեստ: 1887 թվականին հանրային կրթության նախարար Ի.Դ. Դելյանովը հրատարակել է շրջաբերական «Գիմնազիական կրթության կրճատման» մասին, որը հասարակության մեջ հայտնի դարձավ «սպասավորների երեխաների մասին» (о «кухаркиных детях») անվամբ: Նախարարը առաջարկում էր գիմնազիաներ չընդունել կառապանների, սպասավորների, լվացարարուհիների երեխաներին: Բացառություն էր արվում միայն տաղանդավոր երեխաների համար: Ըստ Դելյանովի՝ «խոհարարի երեխաները» դասարանում վատ վարք էին դրսևորում:

Տեղական ինքնակառավարում: Կայսրի շրջապատում լայն լիազորություններ ունեցող և նահանգապետերին անմիջականորեն չենթարկվող զեմստվոների վնասակար լինելու մասին համոզմունք էր ամրապնդվում: Ներքին գործերի նախարարությունում մշակեցին մի նախագիծ, որը նախատեսում էր զեմստվոների փաստացի ընդգրկումը նահանգային վարչակազմում: Նման արմատական լուծումը չափազանցված էր թվում բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք միջամտում էին նախարարության ծրագրերին: Զեմստվոյի նոր կանոնակարգի ընդունումը Տոլստոյի և նրա աշխատակիցների կողմից զգալի ջանքեր պահանջեց: Նախատեսվածի մեծ մասը իրականություն չդարձավ: Եվ այնուամենայնիվ որոշումը հաստատվեց 1890 թ.-ին: Փաստորեն ներդրվում էր զեմստվոների ժողովների ձևավորման դասակարգային սկզբունքը. կալվածատերերը նկատելի առավելություններ էին ստանում: Գյուղացիները ընդամենը ընտրելու էին միայն ավագանու թեկնածուներին, որոնց հավանություն էր տվել նահանգապետը: Բացի այդ, նահանգապետը վերահսկողության լրացուցիչ հնարավորություններ էր ստանում զեմստվոյական հաստատությունների աշխատանքը հսկելու համար: Կառավարությունը նույն ճանապարհով գնաց, երբ բարեփոխման ենթարկեց նաև քաղաքային ինքնակառավարումը 1892 թվականին. նա բարձրացրեց ընտրական արտոնակարգը (цензы), քաղաքապետի թեկնածությունը պետք է հաստատվեր Սանկտ Պետերբուրգում:

Կառավարությունը դարձյալ բախվեց երկարամյա խնդրին. Ռուսաստանը մնում էր «ոչ բավարար չափով կառավարելի»: Պաշտոնյաների կրիտիկական պակաս էր զգացվում: Կառավարության աշխատակազմը գավառի մակարդակով ներկայացնում էր ազնվականության դասի պարագլուխը (բացի այդ, նահանգապետի կողմից նշանակված գավառի ոստիկանության աշխատակիցը): Իշխանական մարզի գյուղացիական ժողովը ղեկավարում էր վոլոստը (волост): Սրանք բոլորը ոչ թե պետական, այլ դասակարգային կառույցներ էին: Կառավարությունը փորձեց լրացնել բյուրոկրատիայի պակասուրդը: 1889-ին մտցվեց զեմստվոյի ղեկավարների պաշտոնը, որը փոխարինում էր հաշտարար միջնորդներին և հաշտարար դատավորներին: Զեմստվոյի ղեկավարները չէին ընտրվելու. նրանք նշանակվելու էին ներքին գործերի նախարարի կողմից (նահանգապետի և գավառի ազնվականության առաջնորդի առաջարկությամբ): Նոր պաշտոնյաները միջամտում էին վոլոստի ժողովների աշխատանքներին և կարող էին դատել գյուղացիներին և դատապարտել նրանց ձերբակալության և տուգանքի:

Տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը: 1881 թվականին ֆինանսների նախարար է նշանակվում Ն. Խ. Բունգեն: Նա կարծում էր, որ պետության առջև սոցիալական խնդիրներ են դրված, և նա պետք է հոգ տանի ռուսական կայսեր ամենակարիքավոր հպատակների մասին: 1881 թվականին բոլոր գյուղացիներին, որոնք ժամանակին դա չէին հասցրել անել, փրկագնվելու հնարավորություն ընձեռվեց: Փրկագնման վճարումների չափը նվազեցվեց: 1883 թվականից Ռուսաստանում Պետրոս I-ի կողմից ներդրված գլխավոր ուղիղ հարկը՝ գլխահարկը (подушная подать) աստիճանաբար վերացավ: Առաջանում էին հարկերի նոր տեսակներ, որոնք վճարվում էին հասարակության ունևոր շերտերի ներկայացուցիչների կողմից, ինչպես օրինակ, ժառանգության և արտասահմանյան անձնագիր ունենալու հարկերը:

1882 թ. կառավարությունը հիմնադրեց Գյուղացիական բանկ, որը պիտի վարկեր տրամադրեր հողատերերին: Հակառակ իր ցանկության՝ Բունգեն ստիպված էր հաշվի առնել նաև կալվածատերերի շահերը: 1885 թ. հիմնադրվեց Ազնվականական բանկը, որը օժանդակություն էր հատկացնում սնանկացած կալվածատերերին:

Օրեցօր փոփոխվող Ռուսաստանը կառավարության առջև սկզբունքորեն նոր խնդիրներ էր դնում: Դրանցից մեկը աշխատավորության հարցն էր: 1880-ականներին Բունգեի նախաձեռնությամբ երկրում մտցվեց առաջին աշխատավորական օրենսդրությունը, որը կարգավորում էր գործատուների և աշխատավորների հարաբերությունները: Ֆինանսների նախարարի՝ սոցիալական ուղղությամբ գործունեությունը բավականին ծանրաբեռնում էր բյուջեն: Բունգեն լիուլի վճարում էր իր վարած քաղաքականության ծախսատարության համար՝ պայքարելով ազդեցիկ քննադատների դեմ, որոնցից մեկը Ն.Մ. Կատկովն էր: Վերջինս ի վերջո կարողացավ հասնել ֆինանսների նախարարի պաշտոնաթողությանը: 1887 թ. Բունգեին փոխարինեց գիտնական ու ձեռներեց Ի.Ա. Վիշնեգրադսկին: Նա հույս ուներ ամրապնդել պետության դերը երկրի տնտեսական կյանքում: Վիշնեգրադսկին աջակցեց պետության կողմից որոշ մասնավոր երկաթգծերի գնմանը: Ֆինանսների նախարարի պաշտոնում նա հնարավորինս կրճատեց պետության ծախսերը՝ դրանով ամրապնդելով ազգային դրամական

արժույթի կուրսը: Չեղարկվեցին իր նախորդի կողմից մտահղացված սոցիալական մի շարք ծրագրեր: Ֆինանսների նախարարությունը ստիպված էր հարմարվել ժամանակի պահանջներին: Կառավարական շրջանակներում հույսը դնում էին հաստատված սոցիալական կապերի կոնսերվացման-պահպանման վրա: 1893 թ. որոշում ընդունվեց գյուղացիական հողերի բաժնեմասերի օտարման անհնարինության մասին: Հիմա դրանք չէր կարելի վաճառել, գրավ դնել, վարձով տալ: Տնտեսական բուռն զարգացումների տարիներին կառավարությունը դեռ շարունակում էր ապրել անցյալով՝ հույս ունենալով պահպանել դասակարգային հասարակության մեջ հաստատված կապերը:

§ 51. Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը XIX դարի երկրորդ կեսին

Արտաքին քաղաքականության եվրոպական ուղղվածությունը Ալեքսանդր II-ի գահակալության տարիներին: «Ասում են, թե Ռուսաստանը զայրանում է: Ռուսաստանը չի զայրանում, Ռուսաստանը կենտրոնանում է»: Սա մեջբերում է արտաքին գործերի նախարար Ա.Մ. Գորչակովի դիվանագիտական ճեպագրից՝ ուղղված արտասահմանում Ռուսաստանի դեսպանատներին (1856 թ., օգոստոս): Ղրիմի պատերազմում պարտությունից հետո Պետերբուրգը ստիպված էր դադար վերցնել՝ ներքին խնդիրներին լուծում տալու համար: Դրանից ամենևին չէր հետևում, թե երկիրը որոշել է ինքնամեկուսանալ՝ որոշ ժամանակով մոռանալով արտաքին քաղաքականության մասին:

Ռուսաստանը հաջողությամբ խուսանավում էր Եվրոպայի առաջատար պետությունների միջև՝ օգտվելով նրանց միջև եղած հակասություններից: Ակնկալում էին ամրապնդվող ու հզորացող Պրուսիայի հետ դաշինք կազմել: Աստիճանաբար միավորվող Գերմանիան գնում էր Ֆրանսիայի հետ բախման: Այն պահին, երբ այդ երկրները բախվեցին, 1870 թ. հոկտեմբերի 19-ին Գորչակովը Ռուսաստանի բոլոր դեսպաններին շրջաբերական ուղարկեց, որում հռչակվում էր, թե Ռուսաստանն այլևս իրեն կապված չի համարում Փարիզյան խաղաղության պայմանագրով: Հետևաբար նա հետամուտ էր Սև ծովում նավատորմ ունենալու իր իրավունքին, ինչպես նաև անհրաժեշտ ռազմական ողջ ոլորտի վերականգնմանը: Արևմտաեվրոպական տերությունները ստիպված էին համակերպվել: Ֆրանս-պրուսական պատերազմից հետո Ռուսաստանը շարունակում էր իր ավանդական քաղաքականությունը Կենտրոնական Եվրոպայի գերմանական պետությունների հետ հարաբերություններ կարգավորելու ուղղությամբ: 1873 թ. ստեղծվեց Երեք կայսրերի դաշինքը, որի մեջ, Ալեքսանդր II-ից բացի, մտան նաև Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կայսրերը:

Միջին Ասիա: 1860-ականներին Ռուսաստանը փոխեց իր արտաքին քաղաքականության ակտիվության վեկտորը: Նա Միջին Ասիա ներթափանցելու կուրս վերցրեց, որտեղ ռուսական շահերը հերթական անգամ բախվեցին անգլիական շահերին: Այնտեղ երեք պետական կազմավորումներ կային՝ Կոկանդի խանությունը, Խիվայի

խանությունը և Բուխարայի էմիրությունը: Դրանք սովորական հարևաններ չէին: Այդ-տեղից պարբերաբար հրոսակային հարձակումներ էին տեղի ունենում Ռուսաստանի տարածքների վրա, բնակավայրերը թալանվում էին, իսկ մարդկանց գերեվարում:

1860-ական թվականներին ռուսական զորքերի շնորհիվ հսկողություն սահմանվեց Կոկանդի խանության, 1868 թ.՝ Բուխարայի էմիրության, իսկ 1873 թ.՝ Խիվայի խանության վրա: Այս քաղաքականությունը պատասխան արձագանք առաջ բերեց: 1876 թ. ապստամբեցին Կոկանդի խանության բնակիչները, որոնց ընդվզումները ճնշվեցին: Արդյունքում Կոկանդի խանությունը բռնակցվեց Ռուսաստանին, իսկ Բուխարայի էմիրությունը և Խիվայի խանությունը պահպանեցին իրենց ինքնուրույնությունը՝ Ռուսական կայսրության հովանավորության տակ: 1880-ական թթ. սկզբներին թուրքմենական ցեղերը ևս ստիպված եղան ճանաչել Ռուսաստանի իշխանությունը:

Հեռավոր Արևելք: Հեռավորարևելյան քաղաքականությունը ենթադրում էր մերձավոր հարևանների՝ Ճապոնիայի և Չինաստանի հետ հարաբերությունների կարգավորում: Ճապոնիայի հետ Ռուսաստանը պետք է ճշտեր Կուրիլյան կղզիների կարգավիճակի հարցը: 1855 թ. համաձայնագրով Կուրիլյան կղզիների մեծ մասն անցել էր Ռուսաստանին. սահմանն անցնում էր Ուրուպ և Ճապոնիային պատկանող Ինտուրուպ կղզիների միջով: Սախալին կղզին պետք է միասնաբար հսկվեր երկու տերությունների կողմից: 1875 թ. այս իրավիճակը վերանայվեց: Այժմ Կուրիլյան կղզիները անցնում էին Ճապոնիային, իսկ Սախալինը՝ Ռուսաստանին:

1858 թ. և 1860 թ. պայմանագրերը թույլ տվեցին Չինաստանի հետ հարաբերությունները բարելավել: Սահմանը հաստատվեց Ամուր և Ուսուրի գետերի ավազաններով: Արդյունքում Ռուսաստանին միացվեց Ուսուրիյսկի երկրամասը: Այս հաջողությունը էական չափով կապված էր Արևելյան Սիբիրի գեներալ-նահանգապետ Ն.Ն. Մուրովյով-Ամուրսկու անվան հետ, որը շատ բան է արել Հեռավոր Արևելքի յուրացման համար:

Ռուսաստանը ստիպված էր վճռել իր ամերիկյան տարածքների, ավելի կոնկրետ՝ Ալյասկայի հարցը, յուրացնելը և պաշտպանելը դժվարությունների հետ էր կապված: Նա սահմանակից էր Բրիտանական կայսրությանը պատկանող Կանադային: Բրիտանիայի հետ մրցակցել նաև Ամերիկա մայրցամաքում բավականին հոգսաշատ էր: Ռուսական կառավարությունը նախընտրեց ընդառաջել Ամերիկայի Միացյալ Նահանգների առաջարկին: 1867 թ. Ալյասկան վաճառվեց ԱՄՆ-ին 7,2 մլն. դոլարով:

Բալկանյան թերակղզին և 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Բալկանյան վեկտորը շարունակում էր մնալ ամենակարևորը Ռուսաստանի արտաքին քաղաքականության համար, որը իրեն պարտասխանատու էր զգում հարավսլավոնական ժողովուրդների ճակատագրի համար: Այդ պրոբլեմը նկատելի սրվեց, երբ Բալկանների ուղղափառ բնակչությունը ապստամբեց Օսմանյան կայսրության դեմ:

Թուրքական իշխանությունները դաժան հաշվեհարդար տեսան դժգոհների հետ, ինչը Ռուսաստանում բուռն արձագանք առաջ բերեց: Ալեքսանդր II-ը և նրա պաշտոնյաները պատերազմի կողմնակից չէին: Ռազմական ռեֆորմը համեմատա-



Գրոհից առաջ։ Նկարիչ՝ Վ.Վ. Վերեշչագին

բար վերջերս էր տեղի ունեցել։ Նրա արդյունքները դեռ չէին կարող դրականորեն անդրադառնալ բանակի վրա։ Երկրի ֆինանսական վիճակը ևս զոհացուցիչ չէր։ Ռուսական հասարակությունը, որը կարծում էր, որ Ռուսաստանի բարոյական պարտավորությունն է աջակցել բալկանյան սլավոններին, պահանջում էր պատերազմ։ Սա այն հազվագյուտ դեպքերից էր, երբ իշխանությունն էր գնում հասարակական կարծիքի ետևից։ Բացի այդ, կառավարությունում զգուշանում էին, թե պատերազմի մեջ չմտնելով՝ Ռուսաստանն ընդմիշտ կկորցնի նախաձեռնողականությունը Բալկաններում։

Ռազմական գործողությունները սկսվեցին 1977 թ. ապրիլին։ Ռուսական բանակն արագ մխրճվեց Օսմանյան կայսրության տարածքի խորքերը։ Սակայն հաջողությունները փոխվեցին անհաջողությունների։ 1977 թ. հարձակման անցած ռուսական զորքերը բախվեցին թուրքական զորքերի դիմադրության հետ Պլևնա բերդի մոտ։ Բերդի գրավման մի քանի գրոհները հաջողությամբ չպսակվեցին։ Ռուսական բանակը մեծ կորուստներ կրեց։ 1877 թ. օգոստոսին թուրքական զորքերը փորձեցին հետ խլել Շիպկայի՝ մարտավարական տեսանկյունից կարևոր լեռնանցքը, որտեղով դեպի Ստամբուլ ուղիղ ճանապարհ էր անցնում։ Գեներալ Ն.Գ. Ստոլետովի՝ 6000 զինվորից կազմված ջոկատը դիմացավ թշնամու հարձակմանը, որի տրամադրության տակ կրկնակի թվով զինվորներ կային։ Շիպկայի համար ճակատամարտը տևեց 6 օր (օգոստոսի 9-15-ը)։ Այդ ընթացքում ռուսական բանակը և բուլղարացի կամավորները 3000 մարդ կորցրին, այսինքն՝ զինվորիների մոտ կեսը։ Բայց, միևնույնն է, նրանք դիմադրեցին մինչև օգնության հասնելը։ Թուրքերը ստիպված եղան նահանջել, նրանց հրամանատարության պլանները ձախողվեցին։ Հետագա 5 ամիսների ընթացքում ռուսական բանակը պահում էր Շիպկա բերդը՝ իր վրա շեղելով թշնամու ուժերի նշանակալի մասը, որը լեռնանցքի վրա հսկողություն սահմանելու հույսը չէր կորցնում։ Միայն 1877 թ. նոյեմբերի 28-ին ռուսական բանակին հաջողվեց վերցնել Պլևնան։ Մոտավորապես նույն ժամանակահատվածում Անդրկովկասում ռուսական զորքերը գրավեցին

Կարսը: Դեկտեմբերի վերջին Շիպկայի լեռնանցքի մոտ գերեվարվեց օսմանյան 30 հազարանոց բանակը: Դեպի Ստամբուլ ճանապարհը բաց էր: 1878 թ. սկզբին գեներալ Մ.Դ. Սկոբոլևի բանակը ընդհուպ մոտեցավ Օսմանյան կայսրության մայրաքաղաքին:

Ռուսաստանը համարձակություն չունեցավ զորքերը մտցնել Ստամբուլ: Դա կնշանակեր ուղիղ բախում Մեծ Բրիտանիայի հետ: Հանգամանքները երկու կողմերին էլ առաջնորդում էին դեպի խաղաղություն: Այն կնքվեց 1878 թ. փետրվարին Ստամբուլի մերձակայքում գտնվող Սան-Ստեֆանո բնակավայրում: Օսմանյան կայսրությունը ճանաչեց բալկանյան մի քանի պետությունների՝ Սերբիայի, Չերնոգորիայի և Ռումինիայի անկախությունը: Դրանից բացի, ձևավորվեց նաև Բուլղարական ինքնավար իշխանությունը: Ռուսաստանը ձեռք բերեց Հարավային Բեսարաբիան, Կարսը, Բայազետը և Բաթումը: Բալկանյան թերակղզում այսպիսի նշանակալի փոփոխությունները հակասում էին եվրոպական առաջատար տերությունների շահերին: Ռուսաստանը ստիպված էր դրա հետ հաշվի նստել:

1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրի արդյունքները վերանայվեցին Բեռլինի կոնգրեսում: Թուրքիային էին վերադարձվում անդրկովկասյան որոշ տարածքներ, կրճատվում էին Սերբիայի և Չերնոգորիայի տարածքները, Բուլղարիան բաժանվեց 3 մասի: Նրանցից մեկը՝ Արևելյան Ռումելիան, մնում էր Օսմանյան կայսրության կազմում՝ որպես ինքնավար մարզ, իսկ երկրորդը՝ Մակեդոնիան, առանց որևէ վերապահման վերադրաձվում էր Թուրքիային: Բուլղարական իշխանությունը՝ Սոֆիա մայրաքաղաքով, ճանաչում էր իր վասալային կախվածությունը սուլթանից: Ավստրո-Հունգարիան բռնազավթեց Բոսնիան և Հերցոգովինան: Ռուսաստանը դիվանագիտական ցավոտ պարտություն կրեց: Նախկին ավանդական դաշնակիցները՝ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, այնքան էլ վստահելի չգտնվեցին: Դա ստիպում էր մտածել Երեք կայսրերի դաշինքի հետագա գոյության նպատակահարմարության մասին:

Արտաքին քաղաքականությունը Ալեքսանդր III-ի գահակալության տարիներին: 1881 թ. կայսրի փոփոխությունը միայն ներքին քաղաքականության ուղու շրջադարձ չէր նշանակում: Ալեքսանդր III-ը չէր համակրում Գերմանիային և հույս ուներ Ֆրանսիայի հետ դաշինք կազմել: Նման արմատական փոփոխությունները չէին կարող մի ակնթարթում իրականանալ: 1881 թ. հնարավոր դարձավ վերականգնել Երեք կայսրերի դաշինքը, որը փլուզման եզրին էր գտնվում: Դա ժամանակավոր միջոց էր, քանի որ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի մասնակցությամբ ձևավորվում էր մի դաշինք, որն ուղղված էր Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ: Արդյունքում նրանց միացավ նաև Իտալիան, ինչը հնարավորություն էր տալիս խոսել արդեն Եռյակ դաշինքի մասին (Тройственный союз): Արգելափակման համակարգը առայժմ միայն ձևավորվում էր: Եվրոպական երկրները տարբեր ուժային կենտրոնների միջև հավասարակշռություն էին պահպանում: 1887 թ. Ռուսաստանը պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ՝ պարտավորություն վերցնելով պատերազմի դեպքում չեզոք դիրք գրավել Գերմանիայի և Ֆրանսիայի միջև: Գերմանիան իր հերթին խոստանում էր մի կողմ քաշվել Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև կոնֆլիկտի դեպքում: Թեև պայմանագիրը կնքվել էր, բայց դժվար էր հույսը դնել միայն Գերմանիայի վրա: Անհրաժեշտ էր

հարաբերություններ կառուցել նաև Ֆրանսիայի Հանրապետության հետ: Մի քանի միջանկյալ պայմանավորվածություններից հետո 1894 թ. ուժի մեջ մտավ նաև Ֆրանսիայի հետ պայմանագիրը: Այդպիսով Եվրոպայում սկսեց ձևավորվել ուժերի նոր տեղաբաշխում:

Ալեքսանդր III-ի գահակալության շրջանում Ռուսաստանը պատերազմներ գրեթե չի վարել, բայց պատրաստվում էր դրանց: Հորիզոնում արդեն հասունանում էր եվրոպական մեծ կոնֆլիկտը: Դրան նպաստեց նաև ռուս-ֆրանսիական դաշինքը և Եռադաշնությունը, որոնք իրենց ուժերն ի մի էին բերում՝ միմյանց դեմ պայքարելու համար:

§ 52. Ռուսաստանի ժողովուրդները և կառավարության ազգային քաղաքականությունը

Բազմազգ կայսրություն: 1897 թ. Ռուսական կայսրությունում անցկացվեց առաջին մարդահամարը: Երկրում բնակվում էր 129,1 մլն. մարդ: 1914 թ. մատույցներում երկիր մոլորակի ամեն 10-րդ մարդը ռուսական կայսեր հպատակն էր: Ռուսաստանը բազմազգ կայսրություն էր, որտեղ ներկայացված էին տարբեր ժողովուրդներ և մշակութային ավանդույթներ: Ռուսաստանը նաև բազմադավան երկիր էր: Բնակչության մեծ մասը (70 %) ուղղափառություն էր դավանում, 11 %-ը՝ իսլամ, իսկ 9 %-ը՝ կաթոլիկություն (առաջին հերթին լեհերը և լիտվացիները), 4 %-ը՝ հուդաիզմ (հրեաները): Ֆինների, լատվիացիների, էստոնացիների, գերմանացիների մեջ գերակշռում էին բողոքականները (գլխավորապես լյութերականները): Ուղղափառությունը պետական կրոնի կարգավիճակ ուներ. անցումը դրանից մեկ այլ կրոնադավանության սկզբունքորեն անհնարին էր: Ռուսաստանը մշակութային, սոցիալ-տնտեսական և իրավական բազմազանութամբ երկիր էր: Տերության տարբեր մասերում իրավաբանական հատուկ նորմեր էին գործում: Մերձբալթյան նահանգներում (ներկայիս Լատվիայի և Էստոնիայի տարածքում) գործում էին օրենքներ, որոնք արմատներով ձգվում էին մինչև շվեդական իրավունքի ավանդույթները: Տեղի ազնվականությունը մեծ մասամբ խոսում էր գերմաներեն, կրտսեր դպրոցում երեխաները կրթվում էին էստոներենով և լատիշերենով: Կայսրության ծայրամասերում գտնվող ազնվականությունը՝ լեհ շլյախտիչները, վրացի իշխանները և շատ ուրիշներ, այս կամ այն չափով ինտեգրվել էին ռուսական ազնվականությանը: Հատկանշական է, որ «ազնվազարմ դասակարգի» կեսից մի փոքր մասն էին միայն ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, որոնց պատկանում էր Ռուսաստանի բնակչության 70 %-ը: Ազնվականը, անկախ ազգային



Ռուսական կայսրության զինանշանը

պատկանելությունց, կարող էր պետական կամ զինվորական կարիերա իրականացնել: Արդյունքում գերմանական, հայկական, վրացական, թաթարական, շվեդական ազգանունների ներկայացուցիչները նշանակալի դեր խաղացին ռուսական պետականության ամրապնդման գործում:

Կառավարությունը քիչ բան չի արել ազգությունների յուրօրինակությունը (самобытность) պահպանելու հարցում: Որպես օրինակ կարելի է նշել ուղղափառ միսիոներների աշխատանքը, որոնց ջանքերի շնորհիվ Պովոլժիեի (մարիյցիներ, մորդվացիներ, չուվաշներ և ուրիշներ), Սիբիրի ժողովուրդները (ալթայցիներ, շորցիներ և այլն) գրաճանաչություն ձեռք բերեցին և ունեցան սեփական գիր: Ընդ որում, ազգային քաղաքականությունը հակասական էր: Հանդուրժողականությունը միահյուսվում էր դաժան ռուսաֆիկացման գծի հետ, որն իրականացվում էր հատկապես արևմտյան ծայրամասերում:

Հրեական հարցը: Ռուսաստանի առջև կանգնած ազգային ամենաբարդ հարցերից մեկը հրեականն էր: 1880 թ. Ռուսաստանում էր ապրում աշխարհի հրեաների կեսից ավելին (մոտ 5 մլն.): Խոսքը առավելապես Ռուսաստանի արևմտյան նահանգներում ապրողների մասին է (Լեհաստանի թագավորության, ժամանակակից Լիտվայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի տարածքներում): Նախկինում այդ հողերը զբաղեցնում էր Ռեչ Պոսպոլիտան: Դրանք հետագայում մտան Ռուսական կայսրության կազմի մեջ Լեհաստանի երեք բաժանումների և Վիեննայի կոնգրեսի արդյունքում: XVIII դարում հրեաների համար ներմուծվեց այսպես կոչված բնակեցման եզրագիծը, որը ամբողջ երկրում նրանց հնարավոր տարածման սահմանն էր նշում: XIX դարի երկրորդ կեսին բնակեցման եզրագծից դուրս կարող էին բնակվել բարձրագույն կրթություն ստացած, առևտրական առաջին և երկրորդ դասին պատկանող հրեաները, բժիշկները, դեղագործները և այլն: Սակայն դա ռուսական հրեաների միայն փոքր մասն էր (7 %): Սահմանափակումներ էին դրվում միայն հուդայականություն դավանող հրեաների առաջ: Քրիստոնեություն ընդունելով՝ հրեան ստանում էր ռուսահպատակության իրավունքների ամբողջությունը: Գործնականում այսպիսի որոշումը մեծամասնության համար անընդունելի էր, քանի որ դա կնշանակեր ընտանիքի և ավանդույթների հետ կապերի դրամատիկ խզում:

Շատ բան փոխվեց Ալեքսանդր II-ի բարեփոխումների արդյունքում, երբ կայսրության հպատակների առջև բացվում էին նոր հնարավորություններ արդյունաբերության, փաստաբանության, լրագրության և այլ բնագավառներում: Այդ հաստիքները կարող էր զբաղեցնել յուրաքանչյուրը՝ անկախ կրոնական պատկանելությունից, ինչից էլ օգտվեցին ռուսական հրեաները:

Ալեքսանդր III-ի գահակալությամբ իրավիճակը փոխվեց: Հրեաների իրավունքներն էականորեն սահմանափակվեցին. նրանց արգելեցին բնակվել անգամ բնակության եզրագծից ներս գտնվող գյուղերում, համալսարան, գիմնազիա, ճեմարան, ուսումնարան ընդունվելու տոկոսային նորմա սահմանվեց և այլն: Այդ քաղաքականության արդյունքը եղավ հրեաների զանգվածային արտագաղթը (մեծ մասամբ դեպի ԱՄՆ): 1881 թ. մինչև 1914 թ. Ռուսաստանից արտագաղթել է մոտ 2 մլն մարդ: Դրանից

բացի, որպես խտրական քաղաքականության պատասխան, հրեաները սկսեցին ակտիվորեն մասնակցել հեղափոխական շարժումներին։

Լեհաստան: 1830-1831 թթ. ապստամբության արդյունքը եղավ Լեհական թագավորության ինքնավարության կարգավիճակի կորուստը։ 1863 թ. բռնկվեց նոր ընդվզում։ Ապստամբները պահանջում էին Լեհաստանի անկախության վերականգնում Ռեչ Պոսպոլիտայի սահմաններում, որն իր մեջ ներառում էր ուկրաինական, բելոռուսական, լիտվական հողեր։ Ապստամբները հույսը դրել էին արևմտաեվրոպական երկրների աջակցության վրա։ Անգլիայում և Ֆրանսիայում նրանց իսկապես ապրումակցում էին. իզուր չէ, որ Պետերբուրգում զգուշանում էին իրենց ներքին գործերին արտաքին միջամտությունից։ Ավստրիայում և Պրուսիայում ապստամբներին չէին համակրում. այդ երկրներում անհանգստանում էին իրենց հողերի վրա լեհական հարձակումներից։ Ռուսական կառավարությունը մտադիր էր ոչ միայն բռնաճնշումների դիմել։ Լեհական թագավորությունում հողի բարեփոխում իրականացվեց, որն ապահովեց գյուղացիներին լրացուցիչ հողաբաժիններով (բնականաբար տեղի կալվածատերերի հաշվին)։ Այսպիսով, տարրալուծվում էր դժգոհության սոցիալական հիմքը։ 1864 թ. աշնան սկզբներին ապստամբությունն արդեն ճնշված էր։ Կառավարությունը ձեռնամուխ եղավ արևմտյան ծայրագավառների ռուսացմանը։ Լեհական թագավորությունը վերանվանեցին Պրիվիսլական երկրամաս, որի վրա տարածվում էին ռուսական ընդհանուր իրավական նորմերը։ Ժողովրդական լուսավորության նախարարությունը փորձ արեց միջնակարգ և բարձրագույն կրթությունը դարձնել ռուսերեն։ Երկրամասի պաշտոնյաների մեծ մասը արդեն ռուսներ էին։ Լեհերին արգելվում էր հողատարածքներ գնել ուկրաինական և բելոռուսական նահանգներում։

Ֆինլանդիա: Դեռ 1809 թ. Ալեքսանդր I-ը հաստատել էր Ֆինլանդիայի մեծ իշխանության ինքնավար կարգավիճակը։ Ալեքսանդր II-ի օրոք Ֆինլանդիայի իրավունքներն ընդլայնվեցին. այն այդ ժամանակ արդեն կարող էր իր դրամական միջոցները թողարկել (դրոշմանիշը)։ 1863 թ. իր աշխատանքները սկսեց Ֆինլանդիայի սեյմը։ 1878 թ. ձևավորվեցին ֆիննական բանակի հատուկ զորամասերը։ Ալեքսանդր III-ի գահակալումով այլ միտումներ սկսեցին թափ հավաքել։ Հարց էր դրված ֆիննական օրենսդրությունը ենթարկել ընդհանուր ռուսաստանյան օրենսդրությանը։ 1890 թ. Ֆինլանդիայի փոստային-հեռագրական հիմնարկությունը դրեցին Ռուսաստանի ներքին գործերի նախարարության իրավասության տակ։ Սակայն սրանք դեռ միայն առաջին քայլերն էին։ 1899 թ.-ից ռուսացման գործընթացը սկսեց նոր թափ հավաքել, երբ հռչակեցին, որ կայսեր հրապարակած նոր օրենքները պարտադիր են Ֆինլանդիայի համար՝ առանց տեղական Սեյմի և Սենատի հավանության։

§ 53. XIX դարի երկրորդ կեսի հասարակական շարժումները

Հասարակական կյանքը Ալեքսանդր II-ի կառավարման տարիներին: Նիկոլայ I-ի մահից հետո Ռուսաստանի հասարակական կյանքը աշխուժացավ։ Ծնվեցին նոր

թերթեր, ամսագրեր, որոնց էջերում քննարկվում էին ապագա բարեփոխումները: Տարբեր երկրներից ներկրում էին չթույլատրված թերթեր և ամսագրեր: Մասնավորապես մեծ հանրաճանաչություն էին վայելում «Բևեռային աստղ» ալմանախը և «Զանգ» թերթը («Колоколъ»): Դրանք հրատարակվում էին Լոնդոնում Ա.Ի. Գերցենի և Ն.Պ. Օգարյովի կողմից:

1860-ական թթ. Պետերբուրգում հրատարակվում էր «Եվրոպայի լրատու» ամսագիրը: Մոսկվայում տպագրվում է «Ռուսական նորություններ» թերթը: Մամուլի այս օրգաններին ուղղվածություն էին հաղորդում լիբերալ հայացքների տեր հեղինակները, նրանց շարքերում ամենահայտնիներն էին Կ.Դ. Կավելինը, Բ.Ն. Չիչերինը: Մարդու անձը բարձրագույն արժեք համարելը նրանց հայացքների անկյունաքարային թեզն էր: Լիբերալ հեղինակների կարծիքով պետության գլխավոր խնդիրը իրավական, քաղաքական, տնտեսական ազատությունների ապահովումն էր, ինչն անհրաժեշտ էր անհատի ստեղծագործական ներուժի իրացման պայմաններ ստեղծելու համար: Այդպիսի ազատություն կարող էր ապահովել միայն կարգուկանոն հաստատելու ընդունակ ուժեղ պետության ընդունած օրենքը: Այդ պատճառով չարժեր քաղաքական բարեփոխումների հարցում շտապողականություն ցուցաբերել: Ընդհուպ մինչև 1880-ական թթ. Կավելինն ու Չիչերինը սահմանադրական վերափոխությունների դեմ էին արտահայտվում: Նրանք գտնում էին, որ պատմական այդ փուլում միայն ինքնակալական իշխանությունն էր ընդունակ իրականացնել իրավական, քաղաքական ու տնտեսական այնքան անհրաժեշտ բարեփոխումները:

Հասարակական մտքի ձախ թևում «Սովրեմեննիկ» ամսագիրն էր, որը խմբագրում էին Ն.Ա. Նեկրասովը, Ն.Գ. Չեռնիշևսկին և Ն.Ա. Դոբրոլյուբովը: Հրատարակության էջերում քննադատվում էին կառավարական միջոցները, խոսվում էր ճորտատիրական կարգերը չեղարկելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով առաջին հերթին գյուղացիության շահերը, ինչպես նաև կառավարման բյուրոկրատական համակարգի վերափոխման մասին: Ամսագրի հրատարակիչները համակրում էին նարոդնիկական շարժման գաղափարները, որոնք 1860-ական թվականներին մեծ տարածում էին գտել ռուսական հասարակության մեջ:

Նարոդնիկություն: Նարոդնիկական գաղափարների հիմքում ընկած էր Գերցենի կողմից առաջ քաշված ռուսական սոցիալիզմի տեսությունը: Նա կարծում էր, որ համայնքային կացութաձևը Ռուսաստանին հնարավորություն էր ընձեռում իրականացնել սոցիալիզմի իր տարբերակը՝ խուսափելով կապիտալիստական կացութաձևից, որն ինքնին կործանարար է, իսկ գյուղում՝ առավելապես: Ըստ Գերցենի՝ մասնավոր սեփականությունը այլանդակում է մարդու էությունը՝ զրկելով նրան իսկական ազատությունից: Այդ հայեցակարգը փորձել էին կյանքի կոչել հասարակության արմատական ներկայացուցիչներից շատերը:

1861 թ. ստեղծվեց «Հող և կամք» կազմակերպությունը, որը նաև տպարան ուներ, որտեղ տպագրում էին հակակառավարական հրապարակումներ: Այս կազմակերպության անդամները վրդովված էին գյուղացիական հարցի վերաբերյալ կառավարության վարած քաղաքականությունից և հույս ունեին, թե շուտով ժողովուրդը

ապստամբություն կբարձրացնի: 1864 թ. նրանցից շատերը ձերբակալվեցին, իսկ կազմակերպությունը կազմալուծվեց: 1862 թ. կասեցվեց «Սովրեմեննիկ» թերթի հրատարակությունը: Չեռնիշևսկուն աքսորեցին տաժանակիր աշխատանքի: Նա դատապարտվեց գյուղացիներին ապստամբության կոչ անող հրապարակումների համար:

1866 թ. Ալեքսանդր II-ի դեմ կազմակերպված անհաջող մահափորձից հետո պետության բռնատիրական քաղաքականությունն ավելի դաժան տեսք ստացավ: Կայսրի վրա կրակած Դ.Վ. Կարակոզովը մահապատժի ենթարկվեց, իսկ խմբակի անդամները ձերբակալվեցին և աքսորվեցին տաժանակիր աշխատանքի:

Չնայած կառավարությունը կանխարգելման դաժան քաղաքականություն էր վարում, սակայն հեղափոխական կազմակերպությունները շարունակվում էին ստեղծվել: 1869 թ. Մոսկվայում կազմավորվեց «Ժողովրդական հաշվեհարդարը», որը գլխավորում էր Ս.Գ. Նեչաևը: Այս կազմակերպությունը հանրաճանաչություն ստացավ ոչ հեղափախական գործունեության շնորհիվ: Նեչաևի հրամանով կազմակերպության անդամներից մեկը՝ ուսանող Ի.Ի. Իվանովը, սպանվեց, որին մեղադրեցին կարգազանցության մեջ: Հանցագործությունը բացահայտվեց, մեղավորները ձերբակալվեցին: Նեչաևին հաջողվեց փախչել արտասահման, սակայն նրան արտահանձնեցին Ռուսաստանին: Նեչաևյան դատավարության գործընթացին ուշադրությամբ հետևում էր Ֆ.Մ. Դոստոևսկին: Նրա տպավորությունները և դիտարկումները ընկան «Դևերը» վեպի հիմքում:

Նարոդնիկության մեջ ձևավորվեց իրենց սեփական տեսությունը: Դրա կենտրոնում երեք գլխավոր տարրերի՝ պետական իշխանության, մտավորականության և ժողովրդի հակամարտությունն էր և փոխազդեցությունը: Իշխանությունը ներկայանում էր որպես օտար, ժողովրդին թշնամի ուժ: Ինքը՝ ժողովուրդը՝ որպես «մեծ համր», միշտ չէ, որ կարողանում է բացատրել իր տառապանքների պատճառը: Նրան մի բան



Պրոպագանդիստի ձերբակալությունը: Նկարիչ՝ Ի.Ե. Ռեպին

էր մնում՝ հույսը դնել ձևավորված փոքրամասնության վրա: Պ.Լ. Լավրովը, Մ.Ա. Բակունինը և Պ.Ն. Տկաչովը նարոդնիկության երեք հիմնական ուղղություններն էին ներկայացնում: Ըստ Լավրովի՝ դեպի հեղափոխություն առաջին քայլը պետք է աներ մտավորականությունը, որը դրանով իր պարտքը կատարած կլիներ ժողովրդի հանդեպ: Առաջին հերթին նա պիտի գյուղացիությանը բացատրեր նրա տառապանքների ակունքը, որը թաքնված էր Ռուսաստանի հասարակական և պետական կառավարման ձևի մեջ: Ակտիվ քարոզաբաժին ստացած ժողովրդին մնալու էր միայն ջնջել երկրի երեսից պորտաբույծ ռեժիմը:

Բակունինն անիշխանության տեսաբանն էր: Նա չէր ընդունում պետություն հասկացությունը և գտնում էր, որ Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը լիովին համակարծիք է այդ տեսակետին: Ըստ Բակունինի՝ այլ կերպ չէր էլ կարող լինել: Ռուս ժողովուրդն իր ոգով անիշխանական է, որը առիթի է սպասում, որ տապալի պետական իշխանությունը: Գյուղացիությունը պարբերաբար դուրս էր գալիս կառավարության դեմ: Ռազինի և Պուգաչովի ապստամբությունները դրա ամենավառ օրինակներն են: Այդ ապստամբությունները, լայն արձագանք չգտնելով, դատապարտված էին ձախողման:

Այժմ արդեն ամբողջ գյուղացիության ոտքի կանգնելը պարտադիր էր, իսկ ազդանշանը մտավորականությունը պիտի տար: Պետության անխուսափելի ջախջախումից անմիջապես հետո Բակունինը հույս ուներ ստեղծել համայնքների և վոլոստների դաշնություն:

Տկաչովը կասկածում էր ժողովրդական ընդվզման հեռանկարին: Փորձը ցույց էր տալիս, որ գյուղացիությունը չի վստահում մտավորականությանը: Տկաչովն ու նրա համախոհները պետական հեղաշրջման հույս ունեին, որը կարող էր իրականացվել մի խումբ դավադիրների կողմից: Նա ենթադրում էր, որ հեղափոխականների ուժը իշխանությունների թուլության մեջ է, այն իշխանության, որին, ըստ Տկաչովի, ոչ ոք իրականում չէր սատարում: 1874 թ. սոցիալիստների հայացքները ընկան դեպի ժողովրդական մասսաներ շարժվելու գաղափարի հիմքում: Դրան մի քանի հազար հեղափոխական էր մասնակցում, որոնց մեծ մասը Լավրովի համախոհներն էր: Նրանք նավաշինարարների, միջնորդ-առևտրականների, արհեստագործների և այլոց տեսքով թափանցում էին գյուղեր: Նպատակ էր դրված գյուղացիներին հասցնել նարոդնիկության գաղափարները կամ նույնիսկ ստեղծել հեղկոմներ: Սակայն քարոզիչները հաջողության չհասան: Ավելին, երբեմն հենց գյուղացիներն էին նրանց մատնում ոստիկանները ձեռքը:

1876 թ. հին անունով նոր կազմակերպություն առաջացավ՝ «Հող և կամք» (Земля и воля): Նրա առաջնորդները դարձան Ա.Դ. Միխայլովը, Գ.Վ. Պլեխանովը և այլք: Սա համեմատաբար ժողովրդայնություն վայելող (թեև բնականաբար ոչ լեգալ), Ռուսաստանի տարբեր հատվածներում համախոհներ ունեցող կազմակերպություն էր: Նրան հաջողվեց հռչակագիր հրապարակել: Կազմակերպության որոշ անդամներ մասնակցել էին ահաբեկչական գործողությունների, ինչը նարոդնիկների մոտ ոչ միանշանակ վերաբերմունք էր առաջացնում: Եվ հենց այդ պատճառով 1879 թ. «Հող և կամք»-ը

բաժանվեց «Սև վերաբաժանում» («Черный передел») (Գ.Վ. Պլեխանով, Վ.Ի. Զասուլիչ և այլք) և «Ժողովրդական կամք» («Народная воля») (Ա.Ի. Ժելյաբով,Վ.Ն. Ֆիգներ, Ս.Լ. Պերովսկայա և այլք) կազմակերպությունների: «Սև վերաբաժանման» անդամները դեմ էին ահաբեկչությանը, իսկ «Ժողովրդական կամք»-ի անդամները արդյունավետ պայքարի այլ ճանապարհ չէին տեսնում: 1881 թ. մարտի 1-ին հենց նրանք կազմակերպեցին Ալեքսանդր II-ի սպանությունը:

Հասարակական կյանքը XIX դարի վերջին: Կայսեր սպանությունից հետո հասարակության մեջ գերիշխում էին առավելապես պահպանողական հայացքները: Դրանք քարոզվում էին «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի, «Ռոսսիյսկի վեստնիկ» ամսագրի (Ռուսական լրատու) (դրանց հրատարակիչը Մ.Ն. Կոտկովն էր), Վ.Պ. Մեշչերսկու «Քաղաքացի» թերթ-ամսագրի կողմից: Պահպանողական մտքի առավել նշանավոր ներկայացուցիչներն էին Կ.Պ. Պոբեդոնոսցևը և Կ.Ն. Լեոնտևը: Նրանք գտնում էին, որ ինքնակալությունը ամենաօպտիմալ քաղաքական համակարգն է՝ միաժամանակ կասկածելով դրա հեռանկարայնությանը: Ի սարսափ իրենց՝ նրանք ընդունում էին, որ Ռուսաստանում հեղափոխությունն անխուսափելի է: Այն հնարավոր չէր կանխարգելել, բայց կարելի էր հետաձգել: Հանուն դրա, ըստ Լեոնտևի, հարկավոր էր «Ռուսաստանը սառեցնել», այսինքն՝ ցանկացած այլակարծության դեմ կոշտ ճնշման ռեժիմ հաստատել: Ալեքսանդր II-ի սպանությունից հետո «Ժողովրդական կամք»-ը ջախջախվեց իշխանությունների կողմից: Բայց նարոդնիկական գաղափարները դեռ հանրաճանաչ էին:

1880-ականներին տարածում գտավ «փոքր գործերի տեսությունը»: Դրա կողմնակիցները կոչ էին անում երիտասարդներին գնալ գյուղ և աշխատել որպես ուսուցիչ, բժիշկ, գյուղատնտես: Դա արվելու էր ոչ թե նրա համար, որ գյուղացիներին հայացքներ քարոզեին, այլ հնարավորինս լավացնեին նրանց կենսապայմանները և տանելի դարձնեին:

Հեղափոխական շարժումն ինքն էլ էականորեն փոխվում էր: 1883 թ. Շվեյցարիայում առաջացավ մարքսիստական (սոցիալ-դեմոկրատական) խմբավորում՝ «Աշխատանքի ազատագրում» անունով: Այն կազմված էր «Սև վերաբաժանում» կազմավորման նախկին անդամներից (Պլեխանով, Զասուլիչ և ուրիշներ): Նրանք հետևում էին Կ. Մարքսի գաղափարներին և կարծում էին, թե սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժը դառնալու են աշխատավորները: Խումբը հրատարակում էր հեղափոխական թերթեր, որոնք ուղարկվում էին հայրենիք: Պլեխանովի կարծիքով Ռուսաստանում հնարավոր էր բուրժուադեմոկրատական հեղափոխություն իրագործել: Ըստ նրա՝ վաղաժամ սոցիալիստական հեղափոխությունը կձախողվեր. հաջող հեղափոխությունը պետք է նախապատրաստվի պատմականորեն:

Պլեխանովի և նրա կողմնակիցների գործունեությունը նպաստեց Ռուսաստանում մարքսիստական խմբակների ձևավորմանը: Թեև Ռուսաստանում մարքսիզմի ժողովրդականության միակ պատճառը դա չէր: Խոսքը համաեվրոպական միտումի մասին էր: Հին աշխարհի ինտելեկտուալները փնտրում էին սոցիալական իրականության գիտական ըմբռնման բանալին: Թվում էր՝ մարքսիզմը պատմական գործընթացի

համեմատաբար պարզ բանաձև էր առաջարկում և ուրեմն մատնանշում էր հասարակության զարգացման հեռանկարները: Պետերբուրգի կամ Մոսկվայի ուսանողը, կարդալով և մեկնաբանելով «Կապիտալը», համաեվրոպական ինտելեկտուալ կյանքի մաս էր դառնում: Նա խոսում էր նույն բաների մասին, որոնց մասին խոսում էին նրա հասակակիցները Փարիզում, Լոնդոնում, Վիեննայում:

Մարքսիզմի հրապույրը այնպիսին էր, որ տեքստերը 259-280ընթերցողին դրդում էին ընդունել նաև հիմնադիր հայրերի տեսության քաղաքական որոշումները: Հետզհետե մարքսիզմը կազմակերպչական ձևեր էր ընդունում: Այսպես, 1895 թ. Պետերբուրգում կազմավորվեց «Աշխատավոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը»: Այս կազմակերպությանը անդամակցեցին Վ.Ի. Ուլյանովը (Լենին) և Յու.Օ. Մարտովը: Սոցիալ-դեմոկրատական խմբակներն ու կազմակերպությունները փորձում էին համառուսաստանյան միություն ստեղծել: 1898 թ. Մինսկում նրանց ներկայացուցիչները համաժողովի հավաքվեցին: Դա փոքրաքանակ ու ոչ հեղինակավոր համաժողով էր, բայց այդտեղ կարևոր որոշում ընդունվեց՝ ստեղծել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն (ՌՍԴԲԿ (РСДРП)): Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին Ռուսաստանի հասարակական կյանքը նկատելիորեն փոխվում էր: Երեք նշանակալի գաղափարական խմբեր էին ձևավորվում, այն է՝ պահպանողականներ, լիբերալներ, սոցիալիստներ: Հասարակական շարժումը կազմակերպչական նոր ձևեր էր ընդունում: Նա բավականին արագ զարգացավ և սալոններից ու խմբակներից ձևափոխվեց կուսակցությունների:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Նկարագրե՛ք «Մեծ բարեփոխումների» հիմնական պատճառները: Պատմե՛ք բարեփոխումների նախապատրաստման և բովանդակության մասին:
2. Օգտվելով տեղեկատվության հավելյալ աղբյուրներից՝ պատրաստե՛ք հաղորդում երկու կամ երեք պետական գործիչների մասին, որոնք իրենց ակտիվ մասնակցությունն են ցուցաբերել Մեծ բարեփոխումներին:
3. Որո՞նք էին Կ. Պ. Պոբեդոնոսցևի սոցիալական-քաղաքական հայացքները: Ինչո՞ւ էր նա գտնում, որ Մ. Տ. Լորիս-Մելիքովի «սահմանադրության» ընդունումը վտանգավոր է Ռուսաստանի համար:
4. Հիշե՛ք, թե ինչ գիտեք Ռուսաստանի հարկային համակարգի մասին: Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել այս համակարգում Ալեքսանդր III-ի գահակալության ընթացքում:
5. Ի՞նչ եք կարծում, Ալեքսանդր III-ի բերած փոփոխությունները հակաբարեփոխումնե՞ր էին, թե՞ պահպանողականության կայունացման քաղաքականություն:

6. Որտե՞ղ են տեղի ունեցել 1877–1878 թվականների ռուս–թուրքական պատերազմի հիմնական մարտերը: Ի՞նչ նշանակություն ունեին դրանք մարտական գործողությունների ընթացքի համար: Ինչպե՞ս ավարտվեց պատերազմը:
7. Որքանո՞վ է ճիշտ այն պնդումը, թե 1878 թ. Վիեննայի համակարգը դադարեց գոյություն ունենալ:
8. Ինչպե՞ս կարելի է բնութագրել ազգային քաղաքականությունը Ռուսաստանում Ալեքսանդր III-ի օրոք:
9. Ինչո՞ւ կառավարությունը որոշեց «գյուղացիական» բարեփոխումներ իրականացնել Լեհական թագավորությունում շատ ավելի «արմատական» տարբերակով, քան ամբողջ երկրում:
10. Ի՞նչ կազմակերպություններ են ստեղծվել պոպուլիստների կողմից: Ի՞նչ մարտավարություն են կիրառել նրանք իրենց նպատակներին հասնելու համար: Ո՞րն էր «Հող և կամք» միության տրոհման պատճառը 1879 թվականին:
11. Համեմատե՛ք պոպուլիստների և մարքսիստների հեղափոխական տեսությունները: Վերլուծե՛ք ռուսական հասարակության մեջ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները հետբարեփոխումների ժամանակաշրջանում, հայտնե՛ք ձեր կարծիքը այն մասին, թե ինչու մեծացավ մարքսիստների համախոհների շրջանակը: Ինչու՞ էր մարքսիզմը գրավիչ ռուս մտավորականների համար:

ԳԼՈՒԽ 11. ՌՈՒՍԱՍՏԱՆԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ – XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

§ 54. Ռուսական կայսրությունը դարերի սահմանագծին

Տնտեսական քաղաքականություն: XIX դարի վերջին Ռուսաստանի տնտեսությունը մեծ առաջընթաց գրանցեց: Մասամբ դա բացատրվում էր ֆինանսների նախարար Վիտտեի գործունեությամբ (1892–1903 թթ.): Նա տնտեսության մեջ պետության ակտիվ մասնակցության, երկաթուղու ազգայնացման և ծանր արդյունաբերությանը աջակցելու կողմնակիցն էր: Այդ քաղաքականությունը ենթադրում էր ֆինանսական միջոցների ներդնում ռուսական տնտեսության մեջ, ինչը ծայրահեղորեն չէր բավականացնում: Առաջին հերթին խոսքը պետական ներդրումների մասին էր: Միջոցների ծախսը բյուջեի որոշ հոդվածների առնչությամբ ենթադրում էր տնտեսում մյուսների՝ առաջին հերթին գյուղի, գյուղացիների և կալվածատերերի հաշվին: 1894 թ. հնարավոր եղավ նշանակալի միջոցներ հավաքագրել գինու մենաշնորհի հաշվին, այսինքն՝ ոգելից խմիչքների առևտրի շուրջ պետական վերահսկողության շնորհիվ: Բայց միևնույնն է, ներքին ռեսուրսները չէին բավականացնում: Պետությունը ստիպված էր ներգրավել օտար ներդրումներ: Դրան կարելի էր հասնել մի ճանապարհով՝ օտար ներդրողների համար ռուսական շուկան գրավիչ դարձնելով: Այդ նպատակով 1895–1897 թթ. իրականացվեց դրամական բարեփոխում. պետությունը ռուբլու համար երաշխավորում էր, ոսկով աջակցում: Դա թույլ տվեց հուսալ, որ ազգային դրամը կամրապնդվի, իսկ դա նշանակում էր գումարի ներհոսք արտասահմանից: Վիտտեն գտնում էր, որ օտարերկրյա ներդրումները ամրապնդում են ռուսական տնտեսությունը, հետևաբար նաև ողջ Ռուսաստանի վիճակը:

Ընդ որում, կառավարությունը աջակցում էր տեղական արտադրողին: Սահմանվում էին մաքսային բարձր տուրքեր օտարերկրյա ապրանքների վրա, որոնք կարող էին մրցել ռուսական նմանատիպ ապրանքների հետ: Վիտտեի քաղաքականությունը առաջ էր բերում միաժամանակ և՛ հիացական արձագանք, և՛ զայրալից արտահայտություններ: Ֆինանսների նախարարին քննադատողները ոչ առանց հիմքի կարծում էին, որ գյուղը չափազանց թանկ է վճարում արդյունաբերության անզուսպ աճի համար: Սակայն նախարարի ընդդիմախոսներն անգամ չէին կարող չնկատել ռուսական տնտեսության աննկարագրելի արդյունքները: XIX դարի վերջին



Ս.Յու. Վիտտե

երկրում ձևավորվեցին արդյունաբերական նոր կենտրոններ՝ Բաքու, Խարկով, Յուզովկա (ներկայում՝ Դոնեցկ): Դոնբասը վերածվեց արագ աճող արդյունաբերական տարածաշրջանի: 1880 թ. այնտեղ արդյունահանվում էր ռուսական թուջի 5 %-ը, իսկ 1900 թ.՝ 52 %-ը: 1860 թ. Դոնբասի արդյունահանվող քարածուխը կազմում էր ռուսաստանյան քարածուխի 33 %-ը, իսկ 1890 թ.՝ 70 %-ը: Առաջանում էին մեքենաշինության նոր կենտրոններ Կոլոմնայում, Լուգանսկում, Սորմովում (Նիժնի Նովգորոդի մոտ): Ալեքսանդրովսկում և Օդեսայում արտադրվում էր գյուղատնտեսական տեխնիկա: Առանց երկաթուղային հաղորդակցության սրընթաց զարգացման անհնար կլիներ հզոր տնտեսական աճը: 1861 թ. երկրում երկաթուղու ընդհանուր երկարությունը կազմում էր 1,5 հազար վերստ, 1891 թ.՝ 30 հազար, իսկ 1901 թ.՝ 58 հազար վերստ: 1891 թ. սկսվեց Տրանսսիբիրյան մագիստրալի կառուցումը: Այն միացնում էր Ռուսաստանի եվրոպական մասը խաղաղօվկիանոսյան ափին: XX դարի սկզբներին Ռուսաստանը երկաթուղու երկարությամբ աշխարհում 2-րդ երկիրն էր. զիջում էր միայն ԱՄՆ-ին:

1890-ական թթ. արդյունաբերական արտադրության ծավալը երկրում աճեց ավելի քան երկու անգամ: Տնտեսական աճի տեմպը նկատելիորեն գերազանցում էր եվրոպական միջին ցուցանիշը: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Ռուսաստանը շատ ցուցանիշներով առաջ էր Ֆրանսիայից՝ զիջելով Անգլիային, Գերմանիային և ԱՄՆ-ին: Այնուամենայնիվ, այս ապշեցուցիչ աճը տեղի ունեցավ գյուղատնտեսական մի երկրում, որտեղ բնակչության ավելի քան 80 %-ն ապրում էր գյուղում: Ազգային եկամուտի մոտ կեսը գոյանում էր գյուղատնտեսությունից: Ռուսաստանն աշխարհում առաջին տեղն էր զբաղեցնում գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման ծավալներով: Կայսրության բնակչությունը և առաջին հերթին գյուղացիությունը անշեղորեն աճում էր: Ժողովրդագրական աճը որոշակի առավելություններ տվեց երկրին, բայց միևնույն ժամանակ այն դժվարություններ առաջ բերեց. օրինակ՝ գյուղացիական հողատարածքների կրճատում, որը ցավագին ընդունվեց ինչպես ֆերմերների, այնպես էլ նրանց համակրող հասարակության անդամների կողմից: Ընդ որում, աչքաթող էր արվում համայնքում գյուղացիական աշխատանքի ցածր արդյունավետությունը, այն գյուղացիության, որը հողատեր էր:

Նոր գահակալություն: Իրավիճակը երկրում XIX–XX դդ.: 1894 թվականին գահ բարձրացավ Նիկոլայ II-ը: Նա ծածկամիտ, զուսպ մարդ էր: Երբեմն նա համառ էր, երբեմն՝ զարմանալիորեն զիջող: Մարդկանց հետ շփման մեջ լինելով չափազանց բարի և նրբանկատ՝ նա իր աշխատակիցների հանդեպ կապվածություն չէր զգում և հեշտությամբ էր նրանց հրաժեշտ տալիս: Կայսրը բացահայտ խոստովանում էր, որ նախընտրում է լողալ հոսանքի հետ՝ փորձելով չմտածել շուրջը կատարվողի մասին: Հասարակությունն ապրում էր այն հույսով, որ գալիք թագավորը կնշանավորի նոր դարաշրջանի սկիզբ: Սակայն կուրսի փոփոխություն չէր նախատեսվում: 1895 թվականի հունվարին կայսրը, ընդունելով տեղական իշխանությունների ներկայացուցիչների պատվիրակությանը, հայտարարեց, որ մտադիր է հետևել իր հանգուցյալ հոր քաղաքականությանը, ինչը հուսահատեցրեց հանրությանը:



Նիկոլայ II: Նկարիչ՝ Ի.Ի. Մացկևիչ

1896 թվականի մայիսին Մոսկվայում տեղի ունեցան թագադրման տոնակատարություններ: Դա հիշվում է Խոդինսկոյե դաշտում տեղի ունեցած ողբերգությամբ, որտեղ պետք է կազմակերպվեին հանրային տոնախմբություններ և նվերներ բաժանվեին բոլորին: Իշխանությունների համար անսպասելի էր խառնաշփոթի առաջացումը, որի ժամանակ ոտնատակ եղավ մոտ 1400 մարդ: Նշանակալի է, որ հենց թագադրման ժամանակ մեծ ողբերգության ֆոնին ազնվականության առաջնորդները և զեմստվոների նախագահները բանակցում էին ընդդիմադիր կազմակերպություն ստեղծելու շուրջ:

1890-ականների վերջին Ռուսաստանը մտավ անկայունության դարաշրջան: Ընդլայնվեց զանգվածային շարժումը, առաջ եկան անօրինական միություններ: 1899 թվականի ձմռանը մայրաքաղաքը ցնցվեց ուսանողների բողոքի ցույցերից: Իշխանությունը դիմեց բռնաճնշումների՝ ստիպելով ուսանողներից մի քանիսին զինվոր դառնալ: Սակայն կոշտ միջոցները չնպաստեցին հասարակության խաղաղեցմանը:

1901 թվականին նախկին ուսանող Պ.Վ. Կարպովիչը սպանեց հանրակրթության նախարար Ն.Պ. Բոգոլեպովին: Մեկ տարի անց ներքին գործերի նախարար Դ.Ս. Սիպյագինը զոհվեց էսեռական կազմակերպության անդամ Ս.Վ. Բալմաշևի ձեռքով: 1902 թվականին Պոլտավայի և Խարկովի գավառներում տեղի ունեցան գյուղացիական ապստամբություններ, որոնք ուժով ճնշվեցին: 1903 թվականի հուլիսին Ռուսաստանի հարավում տարածվեց բանվորների գործադուլը:

Լիբերալ շարժումը: Ռուսական հասարակության տարբեր շերտերը, այդ թվում՝ զեմստվոների բնակիչները բռնկվել էին դժգոհության ալիքով: Նրանք չէին կարողանում համակերպվել նահանգապետերի կամայականություններին, ինքնակառավարման մարմինների լիազորությունների սահմանափակմանը: Զեմստվոների բնակիչները հույս ունեին, թե իշխանությունները ականջալուր կլինեն իրենց ձայնին: Նրանք իրենց ջանքերը համախմբելու ուղիներ էին փնտրում՝ հանդիպելով ոստիկանության հակազդեցությանը: Արդյունքում 1899 թվականին Մոսկվայում առաջացավ ոչ օրինական «Բեսեդա» խմբակը, որը միավորեց զեմստվոյի ղեկավարներին: Խմբակի մասնակիցները փորձեցին ձևակերպել իրենց ընդհանուր պահանջները: Սակայն պարզվեց, որ դա շատ դժվար է: «Բեսեդայի» կազմում միավորված էին տարբեր հայացքների տեր մարդիկ՝ սահմանադրական համակարգի կողմնակիցներ և սլավոնաֆիլներ, որոնք երազում էին վերակենդանացնել Զեմսկի Սոբորը: Եվ այնուամենայնիվ «Բեսեդան» զգալի դեր խաղաց կուսակցական համակարգի ձևավորման մեջ: Զեմստվոյական շարժման նշանավոր գործիչների համար սա քաղաքական միավորման առաջին

փորձն էր: 1902 թվականին Շտուտգարտում (Գերմանիա) զեմստվոյի բնակիչների նախաձեռնությամբ սկսեց հրատարակվել «Ազատագրում» ամսագիրը, որը պետք է օգներ համախմբել սահմանադրական համակարգի կողմնակիցներին: Նրա հրատարակիչն էր ականավոր տնտեսագետ և հասարակական գործիչ Պ. Բ. Ստրուվեն: Ամսագիրը խոսում էր ոչ միայն սահմանադրության, այլև սոցիալական և իրավական լայն բարեփոխումների մասին, որոնք պետք է իրականացվեին Ռուսաստանում: Ընդհանուր գործը միավորում էր տարբեր ծագման, սոցիալական փորձառությունների և հայացքների տեր մարդկանց՝ լիբերալ հայացքներ ունեցող զեմստվոյի անդամներին և անկուսակցական սոցիալիստներին: Երկուսն էլ մասնակցեցին «Ազատագրության միության» հիմնադիր համագումարին, որը տեղի ունեցավ 1903 թվականին Շվեյցարիայում: Այս միավորումը վերջնական ձևավորվման ենթարկվեց 1904 թ.:

§ 55. Ռուսաստանը միջազգային հարաբերությունների համակարգում

Հեռավորարևելյան քաղաքականությունը: 1894–1895 թթ. Ճապոնիան գրավեց Չինաստանի տարածքը (Թայվան և Լյաոդունյան թերակղզին), որը չճանաչվեց եվրոպական տերությունների կողմից: Նրանց ճնշման ներքո (ներառյալ Ռուսաստանի) Ճապոնիան ստիպված էր լքել թերակղզին: 1898 թվականին Ռուսաստանը Չինաստանից այն վարձակալեց 25 տարի ժամկետով: Այս համաձայնագրի հիման վրա Ռուսաստանը ձեռք բերեց Հեռավոր Արևելքում գտնվող Պորտ Արթուր չսառցակալվող նավահանգիստը: Դեռևս 1896 թվականին մեկնարկել էր Չինական արևելյան երկաթուղու (CER) շինարարությունը, որը Չիտան կապում էր Վլադիվոստոկի և Պորտ Արթուրի հետ (տես Հավելվածը, քարտեզ 12):

Նիկոլայ II-ի անմիջական շրջապատում ավելի ուժեղացավ Հեռավոր Արևելքում նոր տարածքներ գաղութացնելու անհրաժեշտության գաղափարը: Դրա ակտիվ ջատագովն էր պետքարտուղար Ա.Մ. Բեզոբրազովը: Բեզոբրազովի կողմնակիցները առևտրային շահեր ունեին Կորեայում, որտեղ նրանք զբաղվում էին անտառահատումներով:

Ռուս-ճապոնական պատերազմը: Մինչև 1903 թ. դեկտեմբերը Ճապոնիան փորձում էր պայմանավորվել Ռուսաստանի հետ Մանջուրիայում և Կորեայում իրենց սահմանների մասին: Սանկտ Պետերբուրգում կարծում էին, որ Ճապոնիան ռազմական առճակատման որոշում չի կայացնի, և չէին շտապում պատասխանել: 1904 թվականի հունվարի 27-ին ճապոնական կործանիչները Պորտ Արթուրում հարձակվեցին ռուսական էսկադրիլիաների վրա: Ահա այսպես սկսվեց պատերազմը: Հենց այդ օրը Կորեայի Չեմուլպո նավահանգստում «Վարյագ» հածանավը և «Կորեեց» հրետանավը պետք է կռվեին հակառակորդի գերակա ուժերի հետ: 1-ին աստիճանի կապիտան Վ.Ֆ. Ռուդնևը որոշում կայացրեց խորտակել նավերը, որպեսզի նրանք չընկնեն թշնամու ձեռքը: 1904 թվականի մարտի 31-ին «Պետրոպավլովսկ» ռազմանավը պայթեց ականի վրա: Նավի անձնակազմի հետ զոհվեցին էսկադրիլիայի հրամանատար,



Պորտ Արթուրի վրա ճապոնական զորքերի հարձակման հետմղումը

ծովակալ Ս.Օ. Մակարովը և մարտական նկարիչ Վ.Վ. Վերեշչագինը: Այսպիսով, արդեն պատերազմի հենց սկզբում Ռուսաստանը կորցրեց խաղաղօվկիանոսյան էսկադրիլիայի զգալի մասը: Նախաձեռնությունն անցավ թշնամուն: Ռազմական գործողություններում ներգրավված ռուսական ցամաքային ուժերի թիվը նկատելիորեն զիջում էր ճապոնական բանակին, որն ուներ երեք անգամ ավելի շատ զորք և ութ անգամ ավելի շատ հրետանի: Դա մեծապես պայմանավորված էր նրանով, որ Տրանսսիբիրյան երկաթուղու կառուցումը դեռ չէր ավարտվել: Ռուսաստանը զորքերը միայն մասամբ կարողացավ տեղափոխել Հեռավոր Արևելք: Արդյունքում 1904 թվականի ապրիլին ռուսական բանակը պարտություն կրեց Յալու գետի ճակատամարտում: Ստիպված էին նահանջել՝ հույս ունենալով, թե օգնական ուժերը վրա կհասնեն: Դրան հաջորդեցին պարտությունները Լյաոյանում (1904 թվականի օգոստոս) և Շահե գետի վրա (սեպտեմբեր, 1904): 1904 թվականի մայիսին ճապոնական բանակը Պորտ Արթուրը կտրեց ռուսական բանակի հիմնական ուժերից: Գրոհ սկսվեց բերդի վրա: Պորտ Արթուրի վրա հարձակման երեք անհաջող փորձի ժամանակ ճապոնացիները կորցրին մոտ 100 հազար մարդ: Քաղաքը ենթարկվեց ինտենսիվ հրետանային կրակի: 1904 թվականի նոյեմբերի 14–16-ին թշնամին օրական 800–1000 արկ արձակեց Պորտ Արթուրի ուղղությամբ՝ յուրաքանչյուրը 220 կգ քաշով: Նման հզորության հրետանային հարվածները հանգեցրին քաղաքի պաշտպանների շրջանում մեծ կորուստների: Ընդհանուր առմամբ, պաշարման ընթացքում ճապոնական բանակը արձակեց 1,5 միլիոն արկ: Նոյեմբերին նա վերցրեց Վիսոկայա լեռը, որը Պորտ Արթուրի վաղաժամ գրավման հեռանկարներ բացեց:

1904 թվականի դեկտեմբերին զոհվեց գեներալ Ռ.Ի. Կոնդրատենկոն, որը ղեկավարում էր քաղաքի պաշտպանությունը: Պաշարման ընթացքում ռուսական բանակը

կորցրեց 13 հազար մարդ (նավատորմի հետ՝ 17 հազար մարդ)։ Մոտ 14 հազար զինվոր դեռ դիմադրողունակ էր, թեև նրանց մի զգալի մասը հիվանդ ու վիրավոր էր։ Արդյունքում գեներալ-աղյուտանտ Ա.Մ. Ստեսելը որոշեց կապիտուլյացիայի ենթարկել բերդը։ Այսպիսով, Պորտ Արթուրի հերոսական պաշտպանությունը տևեց 329 օր՝ 1904 թվականի հունվարի 27-ից մինչև դեկտեմբերի 20-ը։

1905 թվականի փետրվարին ռուսական բանակը նոր պարտություն կրեց Մուկդենի մոտ։ Ճակատամարտը տևեց երեք շաբաթ, կողմերը հսկայական կորուստներ ունեցան, Ռուսաստանը՝ մոտ 90 հազար, Ճապոնիան՝ մոտ 70 հազար մարդ։ 1905 թվականի մայիսի 14–15-ին Ցուշսիմայի նեղուցում թշնամու նավատորմը ջախջախեց Խաղաղօվկիանոսյան 2-րդ ջոկատը՝ փոխծովակալ Զ.Պ. Ռոժեստվենսկու հրամանատարությամբ։ 1905 թվականի ամռանը Ռուսաստանին հաջողվեց ներգրավել զգալի քանակությամբ զորքեր։ Սակայն ռուսական բանակի թվային գերազանցությունը ուշ վրա հասավ։ Երկրում հեղափոխություն էր ծավալվում։ Կառավարությունը խաղաղության խիստ կարիք ուներ և պատրաստ էր էական զիջումների գնալ։ Ճապոնիան նույնպես ձգտում էր դադարեցնել պատերազմը և խնդրեց ԱՄՆ նախագահ Թ. Ռուզվելտին միջնորդ հանդիսանալ խաղաղության բանակցություններում։ Բանակցություններում Ռուսաստանը ներկայացնում էր Ս.Յու. Վիտտեն։ Ճապոնիան պահանջում էր դուրս բերել ռուսական զորքերը Մանջուրիայից և Կորեայից, իրեն փոխանցել Սախալինի թերակղզին ամբողջությամբ, ինչպես նաև փոխհատուցում վճարել։

Պետերբուրգի համար դրանք անընդունելի պահանջներ էին։ 1905 թ. սեպտեմբերի 5-ին Պորտսմուտում (ԱՄՆ) կողմերը խաղաղության պայմանագիր ստորագրեցին։ Ճապոնիան ամենը չստացավ, ինչ որ պահանջում էր։ Նրան փոխանցվեց Պորտ Արթուրի վարձակալման իրավունքը, Ռուսաստանը հրաժարվեց Կորեայում իր հետաքրքրություններից, Սախալինի հարավային մասը և Արևելաչինական երկաթգծի մի մասը զիջեց Ճապոնիային։



Ռուս սպաներն ու զինվորները հրետանու մոտ

1905 թ. աշնանը քաղաքական լարվածության սաստկացմամբ պայմանավորված՝ ռուսական հասարակությունը քիչ էր հետաքրքրված Հեռավոր Արևելքում տեղի ունեցածով: Հետաքրքրությունների կենտրոնում հեղափոխական միջադեպերն էին, որ տեղի էին ունենում Ռուսաստանի եվրոպական մասում և առաջին հերթին մայրաքաղաքում:

Միջազգային հարաբերությունների սրացումը: Անտանտի ստեղծումը: XX դարասկզբին Եվրոպան սրընթաց սլանում էր դեպի համաշխարհային պատերազմ: Դա բացատրվում էր մայրցամաքում Իտալիայի (1861) և Գերմանիայի (1871) վերամիավորումից հետո ուժերի նախկին հավասարակշռության խաթարմամբ: Բնութագրական է, որ Գերմանական կայսրության հիմնադրման մասին բարձրաձայնվել էր Ֆրանսիայի Վերսալյան պալատում, որը ջախջախիչ պարտություն էր կրել՝ Հյուսիսգերմանական միության հետ բախվելով: Գերմանական կայսրությունը տնտեսական աճի զարմանալի տեմպ ուներ: XX դարի սկզբներին տարբեր չափանիշներով դա աննկասկած Եվրոպայի թիվ մեկ պետությունն էր, որը նպատակ ուներ դառնալ հեգեմոնը մայրցամաքում: Ավստրո-Հունգարիան այլ խնդիրներ էր լուծում: Դա բավական փխրուն կազմավորում էր, որը բալանս էր փնտրում ազգային տարբեր էլիտաների հետաքրքրությունների միջև: Կենտրոնական պետությունները սեփական հզորությունն ամեցնելու կամ ոտքի վրա ամուր մնալու համար միմյանց կարիքն ունեին: Եվրոպական համադաշնությունը (концерн), որ հզոր տերությունների շահերի և հետաքրքրությունների հաշվեկշիռն էր ապահովում, պառակտվեց: Դրա այլընտրանքը դարձավ բլոկների մեջ միավորվելը, որը ենթադրում էր հակամարտող կողմերի միջև բախում: 1882թ., ինչպես գիտենք, ձևավորվեց Եռյակ միությունը, որը միավորեց Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Դրա պատասխանը դարձավ 1891-1894 թթ. ֆրանս-ռուսական միությունը, 1904 թ. անգլա-ֆրանսիական համաձայնությունը ձևավորվեց, իսկ 1907թ.՝ անգլա-ռուսական: Այսպես վերջնական տեսքի բերվեց միության ձևավորումը, որը պատմության մեջ հայտնի դարձավ Անտանտա անունով (նշ.՝ համաձայնություն:)

Սպառազինությունների մրցավազքը պատել էր եվրոպական առաջատար երկրները: Գերմանիայում մեծ թափով ընթանում էր նավատորմի կառուցումը, որը կարող էր մրցել բրիտանացիների հետ: Բեռլինում հույս ունեին նաև գաղութները վերաբաշխել՝ ափսոսանք հայտնելով, որ արտածովային տիրույթների «կարկանդակը» վաղուց բաժանվել էր հիմնականում Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Եվրոպական առաջատար տերությունների շահերը բախվում էին ամենուր՝ Չինաստանում, Աֆրիկայում, Բալկաններում: Շատ պետությունների ագրեսիվ, ռազմատենչ կուրսը հիմնված էր նաև այն ժամանակվա գաղափարական որոնումների վրա: XIX–XX դդ. սահմանը եվրոպական ազգայնականության արտասովոր հանրաճանաչության ժամանակաշրջանն էր: Ազգայնական մի նախագիծ հաճախ բացառում էր մյուսը՝ իր կողմնակիցներին մղելով վճռական գործողությունների՝ հարևանի հաշվին պետական շահերի պաշտպանության նպատակով: Սակայն այս ամենը չէր բացառում եվրոպական կայսրությունների միջև համագործակցությունը: Այդ կայսրությունները գլխավորում էին միմյանց հետ ընտանեկան կապերով կապված միապետերը: Ռուսաստանում ապրում

էին Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի բազմաթիվ հպատակներ: Հաճախ մերձավոր ազգականները ծառայում էին հարևան պետությունների դատական համակարգերում: Երկրներին միմյանց կապում էր նաև սերտ տնտեսական համագործակցությունը: Այս ամենը հույս էր ներշնչում, որ պատերազմից կարելի է խուսափել: Որոշ մտավորականներ պնդում էին, որ դա սկզբունքորեն հնարավոր չէ՝ տեխնոլոգիայի զարգացման և հրեշավոր ավերիչ ուժի զենքերի առաջացման շնորհիվ պատճառով: Նրանց կարծիքով պատերազմ սկսելը ինքնասպանություն կլիներ ողջ մայրցամաքի համար: Եվրոպան հավասարակշռություն էր պահպանում խաղաղության և պատերազմի միջև՝ ռիսկի ենթարկվելով «սայթաքել-ընկնել» զինված դիմակայության անդունդը:

§ 56. Ռուսական առաջին հեղափոխությունը

1904 թ. «Կառավարության գարունը»: 1904 թվականի հուլիսի 15-ին ահաբեկչական գործողության արդյունքում սպանվեց ներքին գործերի նախարար Վ.Կ. Պլևեն: Նրան փոխարինեց Պ.Դ. Սվյատոպոլկ-Միրսկին, որը հայտարարեց «հասարակության մեջ վստահության» քաղաքականության սկիզբը: Գրաքննությունը թուլացավ, և մամուլում սկսեցին տպագրվել հոդվածներ, որոնք նախկինում անհնար էր պատկերացնել: Մասնավորապես ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունների համար ուղղակիորեն մեղադրվում էր ռուսական բյուրոկրատիան: Ներքին գործերի նախարարությունը քաղաքական բարեփոխումների նախագիծ էր պատրաստում: Զեմստվոյի անդամները Սվյատոպոլկ-Միրսկուց թույլտվություն խնդրեցին իրենց համագումարն անցկացնելու համար: «Ազատագրման միությունն» իր հերթին հույս ուներ կազմակերպել դատական կանոնադրության ներդրման 40-ամյակին նվիրված ճաշկերութային արշավ (банкетная кампания): Զեմսկու համագումարը տեղի ունեցավ 1904 թվականի նոյեմբերի 6–9-ին Պետերբուրգում: Հավաքվեց 105 պատվիրակ 33 գավառներից: Մեծամասնությունը սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությանը կողմ արտահայտվեց: Այս գաղափարներն ընդունվեցին ամբողջ երկրում անցկացվող մարդաշատ ճաշկերույթների մասնակիցների կողմից: Դրանցում ելույթ ունեցած բանախոսները խոսում էին քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության մասին, որն արտացոլվեց մամուլի էջերում: 1905 թվականի սկզբին 34 քաղաքներում անցկացվեց 120 ճաշկերույթ, որին մասնակցել է մոտ 50 հազար մարդ: Միևնույն ժամանակ Սվյատոպոլկ-Միրսկին սահմանադրության կողմնակիցը չէր: Նրա նախագիծը քննարկում էր Պետական խորհրդի բարեփոխումները և զեմստվոների ու քաղաքների ներկայացուցիչներին դրանց միանալու հրավերը: 1904 թվականի դեկտեմբերին Նիկոլայ II-ը, ականջալուր լինելով իր հորեղբոր՝ Մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչի և Ս. Յուտիի խորհրդին, բարեփոխումների պատրաստի նախագծից ջնջեց ներկայացվածության մասին կետը: 1904 թվականի դեկտեմբերի 12-ի հրամա-

նագրով հռչակվեց բարեփոխումների ծրագիր (մամուլի ազատության ապահովում, կրոնական հանդուրժողականության սկզբունքներ, աշխատանքային օրենսդրության կատարելագործում և այլն), բայց առանց սպասվող քաղաքական վերափոխումների։ Դա հիասթափություն առաջ բերեց նույնիսկ ցարի մերձավոր շրջապատում։ Անկարգությունները տարածվեցին բնակչության ավելի լայն շրջաններում։ Ճաշկերույթների քարոզարշավին հաջորդեցին աշխատավորների ժողովները։ Մայրաքաղաքում նրանց առաջնորդն էր քահանա Գ.Ա. Գապոն։

«Արյունոտ կիրակին»։ 1904 թվականի դեկտեմբերի վերջին Սանկտ Պետերբուրգի Պուտիլովի գործարանի աշխատողների և վարչակազմի միջև ծագեց հակամարտություն, ձեռնարկությունում սկսվեց գործադուլ։

Մի քանի օր անց քաղաքում արդեն շուրջ 150 հազար մարդ էր գործադուլ անում։ Գապոն ցույց էր պատրաստում՝ նպատակ ունենալով խնդրագիր ներկայացնել կայսրին։ Այն վերաբերում էր բանվորների ծանր վիճակին և ավարտվում սոցիալական և քաղաքական բարեփոխումների անհրաժեշտության մասին հայտարարությամբ՝ ներառյալ Հիմնադիր ժողովի գումարումը։ 1905 թվականի հունվարի 9-ի առավոտյան հսկայական բազմությունը քաղաքի տարբեր ծայրերից շարժվեց դեպի Սանկտ Պետերբուրգի կենտրոն։ Ցուցարարները երթի էին դուրս եկել ցարի դիմանկարներով ու պաստառներով։ Նրանց ճանապարհին զինվորներ էին կանգնած։ Ամբոխը կանգ չառավ, և զինվորները ստիպված եղան կրակել։ Պաշտոնական տվյալներով զոհվեց 130, վիրավորվեց 299 մարդ։ Հեղափոխական շրջանակներում կասկած չկար, որ այդ թվերը խիստ նվազեցված էին։



1905թ. հունվարի 9-ը Վասիլևսկի կղզում։ Արյունոտ կիրակի։ Նկարիչ՝ Վ.Ե. Մակովսկի

Զանգվածային շարժումները: «Արյունոտ կիրակին» շոկ էր երկրի համար: Գործադուլների նոր ալիք անցավ Սանկտ Պետերբուրգով: Գործադուլներ սկսվեցին նաև Մոսկվայում: 1905 թվականի փետրվարին սոցիալիստ հեղափոխական Ի.Պ. Կալյաևը մահափորձ կատարեց և սպանեց Մեծ իշխան Սերգեյ Ալեքսանդրովիչին: Իշխանությունն այս ծանր իրավիճակից ելք էր փնտրում: 1905 թվականի փետրվարի 18-ին Նիկոլայ II-ը ստորագրեց շնորհագիր (рескрипт)՝ ուղղված ներքին գործերի նախարար Ա.Գ. Բուլիգինին: Այս փաստաթուղթը հայտարարում էր Ռուսաստանում իշխանության ներկայացուցչական մարմնի ստեղծման անհրաժեշտության մասին: Այլ կերպ ասած, կայսրը համաձայնեց այն բանին, ինչում Պ.Դ. Սվյատոպոլկ-Միրսկին անհաջող փորձում էր համոզել նրան նախկինում: Միաժամանակ հանրությունն ինքնակազմակերպվում էր: Ստեղծվեցին արհեստակցական միություններ՝ բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ուսուցիչների, դեղագործների, գործավարների և այլն: 1905 թ. մայիսին ստեղծվեց «Արհմիությունների միությունը», որը միավորեց արհմիությունների ջանքերը: Գյուղացիական լայնածավալ շարժում էր ծավալվում: 1905-ի առաջին ամիսներին տեղի ունեցավ 126 գյուղացիական ապստամբություն, իսկ ամռանը՝ 791: Հատվեցին հողատերերի անտառները, հրկիզվեցին կալվածքները: Գյուղացիների մեջ տեղի էր ունենում ինքնակազմակերպման գործընթաց: 1905 թվականի ամռանը հիմնադրվեց Համառուսական գյուղացիական միությունը: Տարեվերջին նրա կազմում մոտ 200 հազար մարդ կար:

Բանվորական շարժումն ընդարձակվեց և ձեռք բերեց նոր առանձնահատկություններ: 1905 թվականի հունվար–ապրիլին գործադուլներին մասնակցել էր 810 հզ. մարդ: 1905 թվականի մայիսին Իվանովո-Վոզնեսենսկում ստեղծվեց լիազորված պատգամավորների առաջին խորհուրդը: Նա միավորեց գործադուլին մասնակցած տեքստիլ ձեռնարկությունների աշխատողներին: Բանակն ու նավատորմը խիստ անհանգստացած էին: 1905 թվականի հունիսին ապստամբություն բռնկվեց Սև ծովում գտնվող «Արքայազն Պոտյոմկին-Տավրիդյան» ռազմանավի վրա: Նավաստիները գրավեցին իշխանությունը: Մոտակայքում՝ Օդեսայում, սկսվեց բանվորների գործադուլը: «Արքայազն Պոտյոմինկին-Տավրիդյանին» պակասում էր ածուխ և սնունդ: Նավաստիները փրկություն էին փնտրում: Արդյունքում նավը մեկնեց Ռումինիա, որտեղ հանձնվեց տեղի իշխանություններին: Երկրում իրավիճակը դառնում էր անկառավարելի: Իշխանական շրջանակները հասկացան, որ պետք է գնալ զիջումների: 1905 թվականի օգոստոսի 6-ին հրապարակվեց մանիֆեստ՝ Պետական դումայի ստեղծման մասին, որը պիտի օրենսդրական-խորհրդատվական գործառույթ ունենար: Այդ տարիների լրագրության մեջ ներքին գործերի նախարարի անունով այն կոչվում էր Բուլիգինյան: Հրապարակվեց նաև Դումայի ընտրությունների կանոնակարգը, որը հիմք հանդիսացավ հետագա ընտրական օրենսդրության համար:

Համառուսաստանյան հոկտեմբերյան քաղաքական գործադուլը: 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստը: 1905 թվականի սեպտեմբերին ամբողջ Ռուսաստանում գործադուլներ տարածվեցին: Հոկտեմբերի 10-ին դադարեցվեց երկաթուղային հաղորդակցությունը Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի միջև: Կենտրոնական հեռագրա-



Գործադուլի ժամանակ փոստի և հեռագրատան աշխատակիցների ցույցը, 1905թ.

տունը ևս գործադուլ հայտարարեց: 1905 թվականի հոկտեմբերի 17-ին գործադուլին մասնակցեց 2 միլիոն մարդ: Քաղաքներում լուսավորությունն անհետացավ, թերթերը դադարեցին հրատարակվել, ջրմուղ կայաններն ու հեռախոսները՝ աշխատել: Պետերբուրգում ստեղծվեց բանվոր պատգամավորների խորհուրդ:

Կա՛մ դիկտատուրա, կա՛մ սահմանադրություն. այսպես է նկարագրել Ս.Յու. Վիտտեն կայսեր առաջ կանգնած ընտրությունը: Ինքը՝ Վիտտեն, և ցարի հորեղբայրը՝ Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը, պնդում էին, որ անհրաժեշտ է անհապաղ սահմանադրություն ընդունել, ինչին ի վերջո կայսրը համաձայնեց: 1905 թ. հոկտեմբերի 17–ին Նիկոլայ II-ը ստորագրեց «Պետական կարգի բարելավման մասին» մանիֆեստը, ըստ որի՝ Պետդուման ձեռք էր բերելու օրենսդրական լիազորություններ: Փաստորեն հայտարարվեց սահմանադրական կարգի հաստատում: Բացի այդ, կառավարությանը հանձնարարվեց երաշխավորել և պաշտպանել ժողովրդավարական հիմնական իրավունքները (խղճի, խոսքի, հավաքների, միավորումների ազատություն, անձնական անձեռնմխելիություն): Հոկտեմբերի 19-ին սկսվեց Նախարարների խորհրդի կազմավորումը, որը պետք է դառնար միասնական կառավարություն՝ վարչապետի գլխավորությամբ: Այն պիտի կարողանար համակարգել տարբեր գերատեսչությունների ղեկավարների աշխատանքը: Վիտտեն նշանակվեց Նախարարների խորհրդի նախագահ:

1905 թվականի հեղափոխական ճգնաժամը ցույց տվեց ինքնակալության միայնակությունը, որը չէր կարող հույս դնել նույնիսկ ամենաբարձր բյուրոկրատիայի աջակցության վրա: Համառուսաստանյան հրդեհը հանգցնելը դժվար էր համախմբված իշխանության բացակայության պայմաններում: Կառավարման համակարգը ստիպված էր վերափոխվել՝ հասարակության սպասելիքները բավարարելու համար:

Սոցիալիստական կուսակցությունները: Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը բարձրաձայնում էր Դումայի մոտալուտ ընտրությունների մասին: Ընտրական պայքարը

ենթադրում էր քաղաքական կուսակցությունների առկայություն, որոնք ձևավորվել էին դեռ 1905 թվականից առաջ: Սոցիալիստների մեջ գերակշռում էին երկու գաղափարախոսական մոդելների կողմնակիցները՝ նեռնարոդնիկները (սոցիալիստ հեղափոխականներ, ժողովրդական սոցիալիստներ) և սոցիալ-դեմոկրատները: Նրանք երկուսն էլ հասարակության արմատական վերափոխման հույս ունեին՝ առաջին հերթին սեփականության հանրայնացման և քաղաքական և տնտեսական բոլոր ինստիտուտների վերակազմավորման միջոցով: Յուրաքանչյուրի կոնկրետ դեպքում դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը որոշվում էր յուրովի:

Սոցիալիստ հեղափոխականների (էսեռների) կուսակցության կազմավորումը սկիզբ առավ 1901–1902 թթ.: 1905-ի վերջից և 1906-ի սկզբներից այն վերջնականապես դարձավ մեկ կազմակերպություն: Հենց այդ ժամանակ էլ սոցիալիստ հեղափոխականների առաջին համագումարում ընդունվեց կուսակցության ծրագիրը: 1906 թվականին նրանց թիվը տատանվում էր 50-60 հազար մարդու սահմաններում: Սոցիալիստ հեղափոխական կուսակցությունն իրեն համարում էր նարոդնիկական ավանդույթների ժառանգորդը: Ծրագրի մեջ խոսվում էր Ռուսաստանի՝ դեպի սոցիալիզմ տանող հատուկ ուղու մասին: Սա ենթադրում էր գյուղացիական հարցի լուծում: Կուսակցության գլխավոր տեսաբան Վ.Մ. Չեռնովի կարծիքով՝ հողը պետք է հանրայնացնել, այսինքն՝ փոխանցել ողջ հասարակությանը և դրա բաշխման իրավունքը տալ տեղական ինքնակառավարման մարմիններին: Ռուսաստանին վիճակված էր դառնալ ժողովրդավարական դաշնային հանրապետություն: Համապատասխան որոշումը պետք է ընդուներ համընդհանուր քվեարկությամբ ընտրված Հիմնադիր ժողովը: Ինչպես «Նարոդնայա Վոլյա»-ի անդամները, էսեռները նույնպես կարծում էին, որ քաղաքական պայքարի արդյունավետ միջոցը ահաբեկչությունն է: Նրանք հույս ունեին, որ ահաբեկչությունները կնպաստեն իշխանության կազմաքանդմանը և կմեծացնեն դժգոհությունը հասարակության մեջ: Ահաբեկչությամբ առաջին հերթին էսեռների զինյալ կազմակերպությունն էր զբաղվում: Առաջին հեղափոխության ժամանակ սոցիալիստ հեղափոխականները մոտ 200 ահաբեկչություն են իրականացրել:

Սոցիալիստների մեջ էսեռների մրցակիցները սոցիալ-դեմոկրատներն էին: Փաստորեն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական աշխատավորական կուսակցությունը հիմնադրվել է 1903 թվականին՝ իր երկրորդ համագումարում: Նրա առաջացումը մեծ մասամբ նախապատրաստվել էր 1900 թվականից տպագրվող «Իսկրա» թերթի հրապարակումներով: Համագումարն իր աշխատանքը սկսեց Բրյուսելում և ավարտեց Լոնդոնում: Այս համաժողովի ընթացքում ընդունվեց կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը, ընտրվեցին նրա ղեկավար մարմինները: ՌՍԴԲԿ-ի (РСДРП) նպատակը պրոլետարիատի կողմից իրականացվող սոցիալիստական հեղափոխությունն էր: Սա նշանակում էր մասնավոր սեփականության վերացում և հետևաբար ապրանք-փող հարաբերությունների վերանայում, ինչը չէր կարող գոհացնել իշխող դասակարգին: Նրանց դեմ պայքարելու համար անհրաժեշտ էր պրոլետարիատի դիկտատուրա: Սա կուսակցության առավելագույն հեռահար ծրագիրն էր: Նվազագույն ծրագիրը ենթադրում էր ժողովրդավարական հանրապետության ստեղծում, կալվա-

ծատերերի հողերի ազգայնացում և բնակչությանը քաղաքական և սոցիալական իրավունքների շնորհում: Աշխատանքային օրը չպետք է գերազանցեր ութ ժամը: Ռուսաստանի ժողովուրդները կունենային ինքնորոշման իրավունք: Այս ծրագիրը պետք է իրականացվեր բուրժուադեմոկրատական հեղափոխության արդյունքում, որին ակտիվ մասնակցություն կունենային նաև սոցիալիստները: Հենց երկրորդ համագումարում ՌՍԴԲԿ-ն բաժանվեց բոլշևիկների և մենշևիկների: Նրանց միջև կոնֆլիկտ ծագեց կուսակցության կանոնադրության քննարկման ժամանակ: Վ. Ի. Լենինը և նրա կողմնակիցները (բոլշևիկները) հույս ունեին ստեղծել պրոֆեսիոնալ հեղափոխականների կուսակցություն, որտեղ պիտի իշխեր երկաթյա կարգապահությունը, և անդամների միջև պահպանվեր աստիճանակարգությունը: Լենինի հակառակորդները՝ մենշևիկ Պ.Բ. Աքսելրոդը, Յու.Օ. Մարտովը, Ա.Ն. Պոտրեսովը, իսկ ավելի ուշ՝ նաև Գ.Վ. Պլեխանովը, ելնում էին նրանից, որ նորաստեղծ կուսակցությունում քննարկումների համար տեղ պիտի լինի: Նրանք կարծում էին, որ սոցիալիստական հեղափոխությունը համեմատաբար ուշ տեղի կունենա: Այս հանգամանքից ելնելով՝ անհրաժեշտ էր բուրժուական հեղափոխության սպասումով կազմել ծրագրերը: Կանոնադրության շուրջ քննարկումների ժամանակ մենշևիկները ձեռք բերեցին առավելություն: Սակայն Լենինի կողմնակիցներին հաջողվեց հաղթել կուսակցության ղեկավար մարմինների ընտրություններում: Հենց այդ ժամանակ բոլշևիկները դարձան բոլշևիկներ, իսկ նրանց հակառակորդները՝ մենշևիկներ: 1907-ի գարնանը ՌՍԴԲԿ անդամների ընդհանուր թիվը կազմում էր 150–170 հազար մարդ: Մոտ 60 հազարը բոլշևիկներ էին, իսկ 45 հազարը՝ մենշևիկներ (մնացածը՝ ոչ ֆրակցիոն սոցիալ-դեմոկրատներ):

Լիբերալ կուսակցությունները: 1905 թվականի աշնանը ստեղծվեցին լիբերալ կուսակցությունները: 1905 թվականի հոկտեմբերին «Ազատագրական միության» հիման վրա առաջացավ Սահմանադրական դեմոկրատական կուսակցությունը (կադետներ): Նրա ղեկավարներն էին մտավորականության նշանավոր ներկայացուցիչներ՝ պատմաբաններ Պ.Ն. Միլյուկովը, Ա.Ա. Կիզեվետտերը, Ա.Ա. Կոռնիլովը, Ն.Պ. Պավլով-Սիլվանսկին, իրավաբաններ Լ.Ի. Պետրաժիցկին, Ֆ.Ֆ. Կոկոշկինը, Պ.Ի. Նովգորոդցևը, փաստաբաններ Վ.Ա. Մակլակովը, Ն.Վ. Տեսլենկոն, բնախույզ Վ.Ի. Վերնադսկին, զեմստվոյի անդամներ Ի.Ի. Պետրունկևիչը, Դ.Ի. Շախովսկոյը, Ֆ.Ի. Ռոդիչևը, Պավել և Պյոտր Դոլգորուկովները և ուրիշներ: 1906 թ.-ի գարնանը կուսակցությունն ուներ մոտ 70 հազար անդամ: Կուսակցության ծրագրի հիմնաքարը մարդկային անհատականությունը որպես անվերապահ արժեք ճանաչելն էր: Կադետները պնդում էին կայսրության բոլոր սուբյեկտների հավասարության անհրաժեշտությունը՝ անկախ ազգային պատկանելությունից, կրոնից և դասակարգից, և Ռուսաստանում, ինչպես Անգլիայում է, սահմանադրական կարգի ներդրման անհրաժեշտությունը: Իրական իշխանությունը պետք է պատկաներ խորհրդարանին, ոչ թե թագավորին: Հետևաբար կառավարությունը պետք է ձևավորվեր պատգամավորական կորպուսի կողմից և պատասխան տար այդ կորպուսի առաջ: Կադետները սոցիալական բարեփոխումների կողմնակիցներ էին՝ հողատերերի հողի մեծ մասի օտարում (նախկին սեփականատերերին փոխհատուցելով) հօգուտ պետական ֆոնդի՝ հետագայում

գյուղացիների միջև վերաբաշխելու նպատակով։ Դժվար էր անտեսել աշխատանքի խնդիրը։ Կադետների ծրագրի համաձայն՝ «գործարանային աշխատողներին» տրվում էր հավաքների և գործադուլների իրավունք, և նրանց համար պահանջվում էր 8-ժամյա աշխատանքային օր։ 1905-ի վերջին – 1906-ի սկզբին ստեղծվեց Հոկտեմբերի 17-ի միությունը՝ օկտոբրիստների կուսակցությունը։ Այն կազմված էր լիբերալիզմի աջ թևի ներկայացուցիչներից։ Դրանք արդյունաբերողներ էին (Ա.Ի. Գուչկով, Պ.Պ. Ռյաբուշինսկի) և «Զեմստվոյի» ակտիվիստներ (Պ.Ա. Գեյդեն, Մ.Վ. Ռոձիանկո, Ն.Ա. Խոմյակով, Դ.Ն. Շիպով)։ Գուչկովը դարձավ օկտոբրիստների առաջնորդը։ Օկտոբրիստները գերմանական տիպի սահմանադրական միապետության կողմնակիցներն էին, երբ կայսրը ձևավորում էր կառավարությունը, որին էլ նա հաշվետու էր։ Նրանք հայտարարեցին քաղաքացիական հավասարության անհրաժեշտության մասին և պաշտպանեցին սոցիալական բարեփոխումների ծրագիրը, բայց դեմ էին հողատերերի հողերի օտարմանը։ Օկտոբրիստները կարծում էին, որ գյուղացիության հիմնախնդիրները հիմնականում ծագում են գյուղերում աշխատուժի ցածր արդյունավետությունից։

Աջական կուսակցությունները: Պահպանողականները ստեղծեցին իրենց կուսակցությունները։ Դրանցից ամենամարդաշատը դարձավ Ռուս ժողովրդի միությունը։ Դա տարասեռ միավորում էր, որը գլխավորում էին հավակնոտ առաջնորդներ Ա.Ի. Դուբրովինը, Ն.Ե. Մարկովը, Վ.Մ. Պուրիշկևիչը։ Ռուս ժողովրդի միությունից տարանջատվեց Ռուսաստանի՝ Միխայիլ հրեշտակապետի անվան ժողովրդական միությունը։ Տարանջատման գործընթացը դրանով կանգ չառավ։ Աջ կուսակցությունների անդամների ընդհանուր թիվը բավականին զգալի էր. 1907–1908 թթ. դրանք կազմված էին մոտ 410 հազար մարդուց։ Աջերը դեմ էին պառլամենտարիզմին, սահմանադրությանը, ցարական իշխանության սահմանափակմանը։ Նրանք կարծում էին, որ ինքնակալությունը կայուն-անդրդվելի էր մնացել նույնիսկ 1905 թվականի հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո։ Ճիշտ է, այս հարցում տարբեր կարծիքներ կային։ Որոշ աջ միապետականներ դեմ էին ներկայացուցչական ինստիտուտներին ընդհանրապես։ Մյուսները Դուման համարում էին իշխանության օրենսդրախորհրդատվական մարմին։ Պահպանողական կուսակցությունները չէին կասկածում ռուս ժողովրդի առանձնահատուկ դերին, որը պետք է ունենար հատուկ արտոնություններ։ Վերջապես գրեթե բոլոր աջերին բնորոշ էր ծայրահեղ հակասեմիտիզմը։

1905-ի վերջի հեղափոխական գործընթացը: Ռուսաստանը կանգնած էր սահմանադրական դարաշրջանի շեմին։ Բայց ոչ բոլորն էին գոհ դրանից։ Սոցիալիստները կարծում էին, որ 1905 թվականի հոկտեմբերի 17-ի մանիֆեստի ստորագրումը միայն առաջին քայլն էր դեպի ինքնակալության կապիտուլյացիան։ Նրանք վստահ էին, որ ձեռքբերածով չեն կարող բավարարվել ու կանգ առնել։ 1905 թվականի նոյեմբերին «Օչակով» հածանավը՝ լեյտենանտ Պ.Պ. Շմիդտի հրամանատարությամբ, ապստամբություն բարձրացրեց Սևաստոպոլում։ Նոյեմբերի 15-ին նրանք ստացան նաև 12 ուրիշ նավերի անձնակազմերի աջակցությունը (մոտ 4 հազար նավաստի)։ Ապստամբներին դիմակայեցին նրանց զգալիորեն գերազանցող ուժերով՝ 22 նավով և առափնյա հրետանիով։ Նոյեմբերի 16-ին իսկական ծովային ճակատամարտ տեղի ունեցավ,

որտեղ ապստամբները ջախջախիչ պարտություն կրեցին: Շմիդտը ձերբակալվեց և մահապատժի ենթարկվեց:

Պետերբուրգում աշխատում էր բանվորական պատգամավորների խորհուրդը, որի նախագահն էր Գ. Ս. Խրուստալև-Նոսարը: Նոյեմբերի 26-ին նա ձերբակալվեց, իսկ խորհրդի ղեկավարը դարձավ սոցիալ-դեմոկրատ Լ.Դ. Տրոցկին: Մեկ շաբաթ անց՝ դեկտեմբերի 2-ին, խորհուրդը բնակչությանը կոչ արեց ֆինանսական բոյկոտ հայտարարել կառավարությանը՝ չվճարել հարկերը և հանել ավանդները խնայբանկերից: Կառավարությունը չէր կարող ձեռքերը ծալած նստել. դեկտեմբերի 3-ին ձերբակալվեցին Սանկտ Պետերբուրգի բանվորական պատգամավորների խորհրդի անդամները: Դրան ի պատասխան՝ 1905 թվականի դեկտեմբերի 7-ին Մոսկվայի խորհուրդը գործադուլի կոչ արեց: Հետո դա վերաճեց զինված ապստամբության: Մոսկվայում սկսեցին բարիկադներ կառուցել, խանութները փակվեցին, հաստատությունները դադարեցրին իրենց աշխատանքը, տրամվայները կանգ առան: Ապստամբության հիմնական ուժը զինված միլիցիան էր՝ սոցիալիստ հեղափոխականները և սոցիալ-դեմոկրատները: Քաղաքում իսկական պարտիզանական պատերազմ ծավալվեց: 3-4 հոգանոց ջոկատները ձեղնահարկերից կրակում էին զինվորների վրա, որոնց վնասազերծելը շատ դժվար էր: Երկրորդ մայրաքաղաք տեղափոխվեցին Սեմենովսկու և Լադոգայի գնդերը: Իսկական մարտեր սկսվեցին Մոսկվայում, առաջին հերթին՝ Պրեսնյայի տարածքում: Միայն դեկտեմբերի 21-ին հնարավոր դարձավ ապստամբությունը ճնշել: Երկու շաբաթվա ընթացքում քաղաքում զոհվեց մոտ 1060 մարդ: Հեղափոխական ցույցեր տեղի ունեցան ոչ միայն Մոսկվայում, այլև Ռուսաստանի տարբեր քաղաքներում: Ամենուր հաջողվեց ճնշել դրանք, ինչը վստահություն ներշնչեց իշխանությանը: Հասարակությունը հոգնել էր բռնությունից և հույսը դրել դեռ չընտրված Պետդումայի վրա:

§ 57. I և II Պետական դումաները

«Պետական հիմնական օրենքները»: 1905 թ. դեկտեմբերի 11-ին օրենսդրությամբ որոշվել էր Պետդումայի պատգամավորների ընտրության կարգը: Ընտրությունները չդարձան համընդհանուր, ուղիղ և հավասար, ինչպես երազում էին բազմաթիվ կուսակցությունների ներկայացուցիչներ: Դրանց չէին մասնակցում կանայք, մինչև 25 տարեկան մարդիկ, իրավազուրկները (բանտարկյալներ, անմեղսունակներ), թափառաշրջիկները, բոլոր աստիճանների ուսանողները, զինվորականները և այլն: Ընտրությունների հիմնական առանձնահատկությունն այն էր, որ դրանք ուղիղ չէին, այլ բազմաստիճան: Ընտրողը քվեարկում էր ոչ թե պատգամավորի, այլ ընտրիչի օգտին, իսկ վերջինս այնուհետ ընտրում էր Դումայի պատգամավորին: Նրանք քվեարկում էին ըստ կուրիաների համայնքների?՝ գյուղացիական, հողատերերի, քաղաքային, բանվորական և այլն: Ընտրությունները այնպես էին կազմակերպվել, որ խորհրդարանում տեղերի մոտ կեսը երաշխավորված էր գյուղացիների համար.

դրանով կառավարությունը հույս ուներ նրանց հավատարմությունը ստանալ: 1906 թվականի ապրիլի 23-ին հրապարակվեցին «Հիմնական պետական օրենքները»: Այս փաստաթուղթը կարգավորում էր նոր ներկայացուցչական հաստատությունների՝ Նախարարների խորհրդի և կայսրի համագործակցությունը: Կառավարությունը փորձեց պատգամավորների լիազորությունները կրճատել ու հասցնել նվազագույնի: Այնուամենայնիվ Դուման, ինչպես նաև բարեփոխված Պետական խորհուրդը (նրա անդամների մի կեսին նշանակում էր ցարը, մյուս կեսին ընտրում էին) դարձան օրենսդիր ինստիտուտներ: Առանց նրանց հաստատման՝ օրենքը չէր կարող ընդունվել: Սակայն ներկայացուցչական մարմինները պատասխանատու չէին բանակի և նավատորմի, կայսերական ընտանիքի անդամների դիրքի և արտաքին քաղաքականության հարցերի վերաբերյալ: Օրենքների ընդունման կարգը հետևյալն էր. գերատեսչությունների կամ ընտրված ներկայացուցիչների պատրաստած փաստաթուղթը պետք է հաստատվեր Դումայի և Պետական խորհրդի կողմից: Կայսրն իրավունք ուներ հաստատել կամ մերժել օրինագիծը: Նա իրավունք ուներ լուծարել Դուման: Ցարը նշանակում էր նախարարներին, որոնք իրենց աշխատանքի համար պատասխանատու էին բացառապես իր առաջ:

I Պետդուման: Առաջին դումայի ընտրություններում հաղթեցին կադետները: Նրանց խմբակցությունը ներառում էր 176 պատգամավոր (499-ից): Աշխատավորների խմբակցությունում ընդգրկված էր 96 պատգամավոր (հիմնականում գյուղացիներ՝ անկուսակցական սոցիալիստներ): Դումայում ներկայացված էին նաև 69 այսպես կոչված «ինքնավարներ», որոնք ընտրվել էին կայսրության ծայրամասերից: Պատգամավորների թվում էին հարուստ հողատերեր և աղքատ գյուղացիներ, աշխարհահռչակ գիտնականներ և նույնիսկ ընտրված ոչ գրագետ ներկայացուցիչներ: Նրանցից ոչ մեկը քաղաքական փորձ չուներ: Պետդումայի առաջին նիստը բացվեց 1906 թվականի ապրիլի 27-ին, որի նախագահն էր հայտնի իրավաբան և կադետական խմբակցության անդամ Ս.Ա. Մուրոմցևը: Պատգամավորներն ակնկալում էին ամենակարճ ժամկետում Ռուսաստանի կյանքի գրեթե բոլոր ոլորտներում փոփոխություններ բերել: Քննարկումն առաջին հերթին վերաբերում էր իրավունքների և ազատությունների ընդլայնմանը: Պատգամավորները, որոնց շարքերում քիչ չէին գյուղացիները, չէին կարող անտեսել նաև հողի հարցը: Խմբակցությունները մի քանի նախագծեր պատրաստեցին՝ առաջարկելով դրա լուծման տարբեր ուղիներ: Պատգամավորները կարծում էին, որ իրենց ամենօրյա աշխատանքը պետական համակարգում կհանգեցնի հիմնարար փոփոխությունների, և այն ավելի ու ավելի կնմանվի սահմանադրական միապետության անգլիական տարբերակին: Նրանք կարծում էին, որ իշխանությունը պետք է ականջալուր լինի հանրային կարծիքին: Սրա հետ չհամաձայնեց Նախարարների խորհրդի նախագահ Ի.Լ. Գորեմիկինը, որը 1906 թվականի ապրիլին փոխարինեց Վիտտեին այս պաշտոնում: Գորեմիկինը դեմ էր Դումային զգալի զիջումներ անելուն: Այս մասին նա ուղղակիորեն ասաց պատգամավորներին 1906 թվականի մայիսի 13-ի իր ելույթում. վրդովված Դուման պահանջում էր պատգամավորների առաջ պատասխանատու կառավարություն ձևավորել:



Ի.Լ. Գորեմիկին

Անգամ բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք կադետների հետ բանակցում էին Դումայի մեծամասնության ներկայացուցիչներից կազմված կաբինետի ձևավորման շուրջ, դրան չառարկեցին: Իրենց անխուսափելի հաղթանակին վստահ պատգամավորները չէին պատրաստվում ենթարկվել իշխանություններին: Սակայն կառավարության նախագահ Գորեմիկինը դեմ էր բանակցություններին: 1906 թվականի հուլիսի 8-ին կայսրի հրամանագրով Դուման լուծարվեց: Նա ընդամենը 72 օր աշխատեց: Վրդովված պատգամավորները հավաքվեցին Ֆինլանդիայում՝ Վիբորգում: Այնտեղ կազմվեց «Ժողովրդին՝ ժողովրդական ներկայացուցիչներից» կոչը, որը հայտնի դարձավ որպես Վիբորգի կոչ: Նախկին պատգամավորները կոչ արեցին բնակչությանը չվճարել հարկերը և չգնալ բանակ: Նրանք կարծում էին, որ լսելով իրենց ընտրած ներկայացուցիչներին՝ Ռուսաստանի քաղաքացիները կմիանան համազգային բողոքի ակցիային: Այնուամենայնիվ բնակչությունը մեծ մասամբ անտեսեց Վիբորգի կոչը:

II Պետդուման: Առաջին դումայի լուծարման օրը Նախարարների խորհրդի նոր նախագահ նշանակվեց Պ.Ա. Ստոլիպինը, որը մինչ այդ զբաղեցնում էր ներքին գործերի նախարարի պաշտոնը: Նա հույս ուներ, թե հասարակության հետ կկարողանա լեզու գտնել: Այս նպատակով հասարակության առաջնորդներին կառավարության մեջ ներգրավելու շուրջ բանակցություններ էին վարում, որը, սակայն, արդյունք չունեցավ: Երկրորդ Պետդուման իր աշխատանքը սկսեց 1907 թվականի փետրվարին. այն ավելի ընդդիմադիր դուրս եկավ, քան նախորդը: Զգալիորեն քիչ էին կադետները (98), ավելի շատ էին աշխատավորները (104): Ձևավորվեցին սոցիալ-դեմոկրատների (65), սոցիալիստ հեղափոխականների (37), աջերի և օկտոբրիստների դաշինքի (54) խոշոր խմբակցություններ, ինչպես նաև Լեհական կոլոն (լեհ պատգամավորների խմբակը (46)): Խորհրդարանական մեծամասնությունը, այսպես թե այնպես, ուներ հիմնականում սոցիալիստական հայացքներ: Սակայն Դումայի նախագահ ընտրվեց կադետ Ֆ.Ա. Գոլովինը: Այնուամենայնիվ սահմանադրական դեմոկրատների դրությունը շատ բարդ էր: Նրանք ճնշում էին զգում թե՛ աջից, թե՛ ձախից: Սոցիալիստները Դումայի ամբիոնն օգտագործում էին հեղափոխական ագիտացիայի համար: Պահպանողականները փորձում էին հնարավորինս արգելափակել իրենց ձախ-արմատական գործընկերների աշխատանքը: Այս պայմաններում 1907 թվականի մարտի 6-ին Դումայում կառավարության՝ Ստոլիպինի ներկայացրած բարեփոխումների ծրագրի իրականացման մասին խոսք լինել չէր կարող: Կայսրը հայտնվել էր երկընտրանքի առաջ՝ պահպանե՞լ օրենսդրական դուման՝ փոխելով ընտրական կանոնակարգը և դրանով երաշխավորել կառավարության ներկայացուցչական ինստիտուտի քիչ թե շատ ընդունելի կազմը, թե՞ նրա դերը իջեցնել մինչև խորհրդատվական մարմնի աստիճանի:

Ի վերջո ընտրվեց առաջին տարբերակը: 1907 թվականի հունիսի 3-ին Դուման լուծարվեց, միևնույն ժամանակ ընտրությունների վերաբերյալ նոր կանոնակարգ ընդունվեց: Այժմ ընտրություններում նախապատվություն ստացան հողատերերի կուրիայի ներկայացուցիչները: Կովկասից ու Լեհաստանից ավելի քիչ պատգամավորներ կային, իսկ Կենտրոնական Ասիայից ընդհանրապես չկային: Հետևելով «Պետական հիմնական օրենքներին»՝ ընտրությունների վերաբերյալ նոր կանոնակարգը պետք է ներկայացվեր Դումայի հաստատմանը: Դա տեղի չունեցավ, ինչը գործող օրենսդրության խախտում էր: Պատահական չէ, որ 1907 թվականի հունիսի 3-ի ակտը ՋԼՄ-ներում կոչվեց հունիսի 3-ի հեղաշրջում:

§ 58. Ստոլիպինի բարեփոխումները

Ստոլիպինի բարեփոխումների ծրագիրը: 1907 թվականի մարտի 6-ին Պ.Ա. Ստոլիպինը Պետդումային ներկայացրեց բարեփոխումների իր ծրագիրը: Այն հիմնված էր իրավական պետության գաղափարի վրա, որտեղ ազգային, կրոնական կամ դասակարգային խտրականություններ չէին կարող լինել: Նախկինում գյուղացիությունը, որը կազմում էր Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը, սահմանափակված էր իր իրավունքների մեջ: Օրինակ, նրանց զրկել էին ազատ տեղաշարժի իրավունքից, այսինքն՝ առանց համայնքի թույլտվության՝ գյուղացիները չէին կարող լքել գյուղը: 1906 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունված դեկրետով գյուղացիները փաստացիորեն հավասարվեցին Ռուսաստանում բնակվող բոլոր խավերի ներկայացուցիչներին: Ստոլիպինի կառավարությունը նպաստեց նաև հնադավանների նկատմամբ սահմանափակումների վերացմանը: Նախարարների խորհուրդը բարձրացրեց հրեաների համար բնակեցման սահմանագծի վերացման հարցը, որը, սակայն, կայսեր կողմից չընդունվեց: Կառավարությունը հույս ուներ դատահրավական բարեփոխումներ իրականացնել, ինչի արդյունքում պիտի լուծարվեր գյուղացիական վոլոստային դատարանը: Գյուղացիությունը Ռուսաստանում կարող էր օգտվել դատական համակարգից ընդհանուր հիմունքներով, ինչպես մյուս դասակարգերը: Առաջարկվում էր բարեփոխել տեղական ինքնակառավարման համակարգը՝ ստեղծելով վոլոստային և գյուղական զեմստվոներ: Նախապատրաստվում էր համընդհանուր տարրական կրթություն սահմանելու օրինագիծը: Հատկանշական է, որ բարեփոխումների տարիներին կրթության ոլորտում պետական ծախսերն աճեցին գրեթե չորս անգամ: Կառավարությունը փորձ արեց սոցիալական ծրագրեր իրականացնել, օրինակ, աշխատունակությունը կորցնելու դեպքում աշխատավորների ապահովագրություն մտցնել: Բարեփոխումները իրականացվում էին նույնիսկ այն ժամանակ, երբ Ռուսաստանում հեղափոխություն էր տեղի ունենում: Հաճախակի էին դարձել ահաբեկչական հարձակումները, որոնց զոհ էին դառնում ոչ միայն բարձրաստիճան պաշտոնյաները կամ ոստիկանները, այլև խաղաղ քաղաքացիները: Հեղափոխության տարիներին ահաբեկիչների ձեռքով կյանքից զրկվեց ավելի քան 9 հազար մարդ, վիրավորվեց մոտ 8 հազարը: 1906



Պ.Ա. Ստոլիպին

թվականի օգոստոսի 12-ին Սանկտ Պետերբուրգում՝ Ապտեկարսկի կղզում, որտեղ նախարարական ամառանոցում Ստոլիպինը այցելուներին էր ընդունում, պայթյուն տեղի ունեցավ: Նախարարների խորհրդի նախագահը չտուժեց, բայց բազմաթիվ զոհեր եղան. 27 մարդ սպանվեց, 32-ը վիրավորվեց (այդ թվում՝ Ստոլիպինի 3-ամյա որդին և 15-ամյա դուստրը): Կառավարությունը ձգտում էր երկրում կարգուկանոն հաստատել և ապահովել քաղաքացիների անվտանգությունը: 1906 թվականի օգոստոսի 19-ին ցարի որոշմամբ ստեղծվեցին ռազմական դաշտային դատարաններ: Նրանք պետք է արագ (48 ժամվա ընթացքում) որոշումներ կայացնեին՝ առանց երդվյալ ատենակալների կամ փաստաբանների մասնակցության: Նրանց իրավասության տակ էր գտնվում հանցագործություն կատարելու մեջ բռնված մարդկանց դատավարությունը: Խոսքը մեծ մասամբ վերաբերում էր պետական պաշտոնյաների դեմ ուղղված հանցագործություններին: Ռազմադաշտային դատարանները հիմնականում մարդկանց դատապարտում էին մահվան: 1907 թվականի ապրիլին դրանք վերացվեցին, բայց դեռ շարունակում էին գործել շրջանային ռազմական դատարանները, որոնք նույնքան վճռական էին տրամադրված քաղաքական հանցագործությունների դեմ: Արդյունքում, 1906–1911 թթ. մահապատժի ենթարկվեց մոտ 2800 մարդ, ինչը շատ մեծ թիվ էր XIX դարում տեղի ունեցած մահապատիժների համեմատ: Այդ պատճառով հասարակության հիշողության մեջ դաջվեց կադետ պատգամավոր Ֆ.Ի. Ռոդիչևի ձևակերպումը «Ստոլիպինի փողկապի» (այսինքն՝ կախաղանի) մասին: Ստոլիպինյան նախագծերի մեծ մասը չիրականացվեց: Կառավարության բազմաթիվ նախաձեռնություններ մերժվեցին կամ զգալիորեն խմբագրվեցին Դումայում և Պետական խորհրդում: Որոշ գաղափարներից էլ հրաժարվեց ինքը՝ Ստոլիպինը:

Գյուղացիական բարեփոխումը: 1906 թվականի նոյեմբերի 9-ի կայսերական դեկրետով նախատեսված էր գյուղացիներին թույլ տալ իրենց հողամասով դուրս գալ համայնքից, որն այժմ կարող էր վաճառվել, գրավադրվել կամ վարձակալվել: Դրա համար բոլոր հողակտորները պետք է մեկ թաղամասում կամ ագարակի մեջ լինեին, քանի որ ամենից հաճախ գյուղացիական ընտանիքին պատկանում էր միմյանցից հեռու գտնվող մի քանի հողատարածք: Եթե գյուղացին համայնքից բաժանվելուց հետո շարունակում էր ապրել գյուղում, նրա հողամասը համարվում էր կտրված, առանձնացված համայնքից: Եթե խրճիթը և տնտեսական այլ շինություններ տեղափոխվում էին հողատարածքներին ավելի մոտ վայր, ապա տարածքը կոչվում էր ագարակ: Գյուղացիների ավելի քան մեկ քառորդն օգտվեց բարեփոխումից՝ առանձնանալով համայնքից: Դրանք նախաձեռնող ջիղ ունեցող ֆերմերներն էին, որոնք նախընտրում էին

մենատնտեսությունը: Միևնույն ժամանակ գյուղացիների մոտ կեսը կառավարության աջակցությամբ ազատվեց շերտընդմիջյա հողակտորներից (երբ գյուղացուն էին պատկանում կալվածատիրոջ ընդհանուր հողերի մեջ տարբեր մասերում գտնվող հողերիզներ) և անցավ անջատված տնտեսության՝ մնալով համայնքում: Ի վերջո հնարավոր եղավ նաև արտոնյալ վարկեր ստանալ Գյուղացիական բանկից՝ կալվածատիրական հողերի գնման կամ հողի մշակման բարելավման աշխատանքների համար: Գյուղացիությունը տուժում էր հողատարածքների պակասությունից: Այս խնդիրը լուծելու համար կառավարությունը որոշեց օգտվել Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Հյուսիսային Կովկասի խոպան հողերից: Մինչ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը մոտավորապես 3 միլիոն գյուղացի տեղափոխվեց Ուրալից այն կողմ, ինչը մոտավորապես երկու անգամ ավելին էր, քան նախորդ 20 տարիներին: Սա նպաստեց նոր քաղաքների և ավանների ձևավորմանը և Ասիական Ռուսաստանի տնտեսական աճին: Ստոլիպինի ագրարային քաղաքականության արդյունքները դժվար էր չնկատել: Նրանք զարմացնում էին անգամ օտարերկրյա դիտորդներին: 1908 թվականից մինչև 1913 թվականը՝ հինգ տարիների ընթացքում, հացահատիկի բերքահավաքն աճեց մոտավորապես 20%-ով: Հացի արտահանումն աճեց գրեթե մեկ երրորդով: Սա բարենպաստ ազդեցություն ունեցավ տնտեսության բոլոր ոլորտների վրա: Ռուսաստանում արդյունաբերական արտադրության տեմպերն ամենաբարձրն էին աշխարհում:

Կառավարություն և Պետական դուման: 1907 թվականի հունիսի 3-ի օրենքի համաձայն՝ տեղի ունեցան Երրորդ Պետդումայի ընտրությունները: Իր կազմով այն նկատելիորեն տարբերվում էր նախորդներից: Ամենաշատ ներկայացուցիչները օկտոբրիստներից էին (154 պատգամավոր 442-ից): Դումայի երեք նախագահներն էլ այս խմբակցությունից էին՝ Ն.Ա. Խոմյակովը (նախագահել է 1907–1910 թվականներին), Ա.Ի. Գուչկովը (1910–1911 թթ.), Մ.Վ. Ռոձյանկոն (1911–1912 թթ.): Կադետներն ու առաջադիմականները օկտոբրիստների հարևաններն էին ձախ կողմում (բացառությամբ աշխատավորների և սոցիալ-դեմոկրատների փոքր խմբերի): Օկտոբրիստների աջ կողմում կանգնած էին աջերն ու ազգայնականները: Հոկտեմբերի 17-ի միությունը ստիպված էր բանակցել աջ ու ձախ խմբակցությունների հետ: Արդյունքում ձևավորվեց ձախ և աջ կենտրոնամետ մեծամասնություն: Ստոլիպինի կառավարությունը համագործակցում էր «քմահաճ» պատգամավորների հետ: Նախարարներն իրենց հնարավորությունների սահմաններում ստիպված էին սովորել, թե ինչպես հանրային քաղաքականություն իրականացնել: Ներկայացուցչական ինստիտուտներն ամրապնդեցին իրենց դիրքերը՝ դառնալով քաղաքական համակարգի անբաժանելի մասը: Կառավարության վիճակը բազմաթիվ պատճառներով անորոշ էր մնում: 1909 թվականից հետո Ստոլիպինը աստիճանաբար կորցրեց կայսրի կայսեր բարեհաճությունը: Կառավարության քաղաքականությունը նյարդայնացնում էր ինչպես սոցիալիստներին, այնպես էլ պահպանողականներին: Նախարարական օրինագծերը միշտ չէ, որ ընդունվում էին Պետական խորհրդում: Արդեն 1911 թվականի գարնանը Ստոլիպինը կարող էր հրաժարական տալ: Նրա գործունեության վերջակետը դրվեց 1911 թվականի սեպտեմբերի 1-ին Կիևի օպերային թատրոնում, որտեղ Դ.Գ. Բոգրովը մահացու

վիրավորեց Ստոլիպինին: Կառավարության նոր ղեկավար դարձավ Վ.Ն. Կոկովցովը՝ մի փորձառու չինովնիկ, բայց ոչ ինքնուրույն քաղաքական գործիչ: Իրավիճակը նկատելիորեն բարդացավ 1912-ի Չորրորդ Պետդումայի ընտրություններից հետո: Այնտեղ ավելի քիչ օկտոբրիստներ և ավելի շատ աջեր, կադետներ և առաջադիմականներ կային: Այսինքն՝ կենտրոնը թուլացել էր, իսկ թևերն ուժեղացել: Ավելին, օկտոբրիստները, ընտրությունների ժամանակ իշխանության ճնշման տակ գտնվելով, հակված էին դաշինք կազմել Դումայի ոչ թե աջ, այլ ձախ թևի հետ: Սա նախապայման էր ընդդիմադիր մեծամասնության ձևավորման համար: Կառավարության բուն աշխատանքում խափանումներ նկատվեցին՝ գլխավորապես պայմանավորված այն հանգամանքով, որ նրա գլխին Ստոլիպինի նման գործիչ չկար: 1914 թվականին Նախարարների խորհրդի նախագահ դարձավ Ի.Լ. Գորեմիկինը, որը նախկինում այդքան էլ հաջողակ չէր այս պաշտոնում:

§ 59. Ռուսաստանը I համաշխարհային պատերազմի ժամանակ

Պատերազմի սկիզբը: Առաջին համաշխարհային պատերազմը պատմության մեջ կարևոր փուլ էր: Այն ամփոփեց «երկար» տասնիններորդ դարը (1789-ի Ֆրանսիական հեղափոխության սկզբից մինչև 1914 թվականը ընկած ժամանակահատվածը): Դրան երկար էին պատրաստվում, բայց քչերն էին հավատում, որ այն կսկսվի: Դա «տոտալ պատերազմ» էր, որը փորձություն դարձավ ոչ միայն բանակների, այլև պատերազմող երկրների տնտեսության, սոցիալական և քաղաքական համակարգերի համար (տե՛ս Հավելվածը, քարտեզ թիվ 13): 1914 թվականի հունիսի 28-ին սերբ ազգայնական Գ. Պրինցիպը Սարաևոյում սպանեց Ավստրիայի գահի ժառանգորդ Ֆրանց Ֆերդինանդին: Հուլիսի 10-ին Ավստրո-Հունգարիայի կառավարությունը Սերբիային անընդունելի վերջնագիր ներկայացրեց: Ռուսաստանը, պատասխանատվություն զգալով սլավոնական դաշնակիցների ճակատագրի համար, զորակոչ հայտարարեց, որը չէր կարող անտեսվել կենտրոնական տերությունների՝ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կողմից: 1914 թվականի օգոստոսի 1-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, իսկ օգոստոսի 3-ին նա պատերազմի մեջ մտավ նաև Ֆրանսիայի հետ: Օգոստոսի 4-ին Մեծ Բրիտանիան պատերազմ հայտարարեց Գերմանիային. վերջինս խախտել էր Բելգիայի չեզոքությունը:

1914–1915 թթ. պատերազմը: Ռուսական բանակի գերագույն գլխավոր հրամանատար դարձավ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչը (1915 թվականի օգոստոսին նրան փոխարինեց անձամբ Նիկոլայ II-ը): Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբը ղեկավարում էր գեներալ Ն.Ն. Յանուշկևիչը (1915-ից՝ գեներալ Մ.Վ. Ալեքսեևը): Ենթադրվում էր, որ պատերազմը կարճատև կլինի և կավարտվի «մինչև առաջին տերևաթափը»: Ռուսական հրամանատարությունը հույս ուներ հիմնական հարվածը հասցնել հարավ-արևմուտքում՝ ջախջախելով Ավստրո-Հունգարիային: Սակայն պատերազմի տևականությանը զուգընթաց ստիպված էին ճշգրտել ու փոփոխել ծրագերը:



Ռուսաստանի հպարտությունը ռուս զինվորն է: Հուշամեդալ: 1915 թ.: Մեդալի հեղինակ՝ Գ.Ի. Մալիշև

Ռուսաստանի հիմնական ռազմական ուժերը ի վերջո կենտրոնացան Արևելյան Պրուսիայի ուղղությամբ՝ Ֆրանսիան վերահաս փլուզումից փրկելու նպատակով: Գերմանիան ստիպված էր ուժերը տեղափոխել դեպի արևելք, ինչը Ֆրանսիային թույլ տվեց գերիշխող դիրք ստանալ Մարնի վրա: Սակայն ռուսական զինված ուժերի առաջին հաջողությունները ավարտվեցին: Արևելյան Պրուսիայում օգոստոսի վերջին և 1914 թվականի սեպտեմբերի սկզբին Պ.Կ. Ռեննենկամպֆի և Ա.Վ. Սամսոնովի բանակները պարտություն կրեցին:

Մոտավորապես նույն ժամանակ ռուսական բանակին հաջողվեց ջախջախել ավստրո-հունգարական զորքերին և գրավել Գալիցիան: Արևելյան ճակատը շատ կարևոր էր պատերազմի այս փուլում: Անտանտի դաշնակիցները պետք է հաշվի առնեին Ռուսաստանի շահերը, օրինակ, Սև ծովի նեղուցների ապագայի շուրջ (1915 թ. համաձայնագիր), որոնք պետք է նրան փոխանցվեին Կոստանդնուպոլսի հետ միասին: 1914 թվականի հոկտեմբերի 20-ին Թուրքիան պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի դեմ: Սա նշանակում էր նոր՝ Կովկասի ճակատի բացում: 1914-ի վերջին և 1915-ի սկզբին թուրքերը ջախջախվեցին Սարիղամիշում, իսկ ավելի ուշ՝ Էրզրումում և Տրապիզոնում: Այս մարտերում աչքի է ընկել գեներալ Ն.Ն. Յուդենիչը: 1915 թվականին գերմանական հրամանատարությունը, հասկանալով Արևելյան ճակատի կարևորությունը, այնտեղ կենտրոնացրեց իր զինված ուժերի մեծ մասը: 1915 թվականի գարնանը և ամռան սկզբին Գերմանիան և Ավստրո-Հունգարիան տիրացան նախկինում Ռուսաստանի կողմից գրավված տարածքներին՝ նաև զավթելով հենց ռուսական նահանգները (Լեհաստանը, Բալթյան երկրների, Արևմտյան Բելառուսի մի մասը): «Մեծ նահանջից» հետո ռուսական բանակին հաջողվեց հակառակորդին կանգնեցնել Սմորգոն քաղաքի մոտ (Վիլնայի նահանգ, այժմ՝ Բելառուս): Քաղաքի պաշտպանությունը սկսվեց 1915 թվականի սեպտեմբերի 15-ին և տևեց 810 օր: Սմորգոնի համար մարտերն աչքի ընկան ծայրահեղ արյունահեղությամբ: Ընդամենը մեկ օրում՝ 1915 թվականի սեպտեմբերի 25-ին, սվինամարտի ընթացքում զոհվեց 3,5 հազար ռուս և 5,5 հազար գերմանացի: Հոկտեմբերին գերմանական բանակը քիմիական զենք կիրառեց: Սակայն Սմորգոնը հաջողվեց պաշտպանել: Այս քաղաքի համար մղվող մարտերին մասնակցում էին Սպիտակ շարժման ապագա ականավոր գործիչները՝ Ա.Ի. Դենիկինը և Ա.Պ. Կուտեպովը: Սմորգոնի պաշտպանների թվում էին Խորհրդային Միության ապագա մարշալներ Ռ.Յա. Մալինովսկին, Բ.Մ. Շապոշնիկովը, ինչպես նաև գրող Վ.Պ. Կատաևը:

Ներքաղաքական իրավիճակը: 1914-ի օգոստոսին քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների բացարձակ մեծամասնությունը կողմ էր պատերազմը հաղթական ավարտին հասցնելուն, բայց կային նաև բացառություններ՝ մենշևիկ-

ինտերնացիոնալիստները և բոլշևիկները: 1915 թվականի «մեծ նահանջը» Դումայի պատգամավորներին դրդեց ռազմաճակատում ձախողումների մեղավորներին փնտրել կառավարությունում և կայսեր մերձավոր շրջապատում: Նախարարները պատասխանատու համարեցին Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբին: Հասարակության մեջ տարբեր շրջանակներ ավելի հաճախ խոսում էին «մութ ուժերի» մասին. առաջին հերթին հիշատակվում էր Գ. Է. Ռասպուտինը, որն իսկապես ազդեցություն ուներ թագավորական ընտանիքի և նրա անմիջական շրջապատի վրա: Արդյունքում տուժեց կայսեր հեղինակությունը, ինչը հատկապես ցավալի էր պարտության օրերին: Այս առումով հարց առաջացավ երկրում քաղաքական վերակազմավորման անհրաժեշտության մասին, որը կարող էր ռազմական հաղթանակ ապահովել:

1915 թվականի օգոստոսին ձևավորվեց Առաջադիմական դաշինքը, որը միավորում էր Դումայի խմբակցությունների մեծամասնությանը: Միայն ծայրահեղ աջերը չցանկացան համագործակցել նրա հետ: Դաշինքի փաստացի ղեկավարը կադետների առաջնորդ Պ. Ն. Միլյուկովն էր: Դաշինքի կարևորագույն պահանջը «հասարակական վստահության կառավարություն» ստեղծելն էր (պատգամավորների վստահությունը վայելող չինովնիկների, ինչպես նաև հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ): Իշխանությունը նույնպես համակրում էր Առաջադիմական դաշինքին: Ավելին, որոշ նախարարներ աջակցել էին դրա ստեղծմանը: Հանդիպելով բարձրաստիճան պաշտոնյաների դժգոհությանը՝ կայսրը կադրային փոփոխություններ իրականացրեց: Նախարարների փոփոխությունը տեղի էր ունենում սրընթաց արագությամբ և կոչվեց նախարարական խառնաշփոթ: 1916 թ. սկզբին Գորեմիկինի փոխարեն Նախարարների խորհրդի նախագահ նշանակվեց Բ.Վ. Շտուրմերը, որը Ռասպուտինին մտերիմ պաշտոնյա էր: Սա միայն նպաստեց սոցիալական լարվածության սրմանը:

Բրուսիլովյան ճեղքումը: 1916–1917 թթ. արշավի հիմնական արդյունքները: 1916 թվականին գերմանական հիմնական ուժերը կենտրոնացած էին արևմուտքում, որտեղ մարտեր սկսվեցին Վերդուն ամրոցի մերձակայքում: 1916 թվականի ապրիլին Ռուսաստանում նոր հարձակման պլան նախապատրաստվեց: Նախատեսվում էր Արևմտյան ճակատի ուժերով հիմնական հարվածը հասցնել Վիլնայի ուղղությամբ: Հարավարևմտյան և հյուսիսային ռազմաճակատները պետք է օժանդակ դեր ունենային: Սակայն հանգամանքների բերումով ծրագրերը ստիպված եղան փոխել: Իտալական բանակը փրկելու համար հիմնական հարվածը տեղափոխվեց դեպի հարավարևմուտք:

Ռուսական բանակի ամենակարևոր հաղթանակներից մեկը 1916 թվականի մայիսի 22-ից հուլիսի 31-ի Բրուսիլովյան ճեղքումն էր: Գործողությունն իր անունը ստացավ Հարավարևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, գեներալ Ա.Ա. Բուսիլովի անունից: Դրա արդյունքը ավստրո-հունգարական բանակի խոշոր պարտությունն էր, բայց միևնույն ժամանակ իտալական զորքերի փրկությունը ջախջախումից: Այս հաղթանակը թանկ նստեց Ռուսաստանի վրա. լուրջ կորուստներ եղան: Որոշակի դժվարություններ առաջացան Ռումինիայի՝ Անտանտի կողմից



Ա.Ա. Բրուսիլով

պատերազմի մեջ մտնելու հետ կապված: Ռումինիայի բանակը մարտունակությամբ աչքի չէր ընկնում, ինչը նշանակում էր, որ Ռուսաստանը պետք է բացեր նաև ռումինական ճակատը և սեփական ուժերը տարածեր ճակատի ամբողջ երկարությամբ:

«Գրոհի իշխանության վրա»: 1916-ի երկրորդ կեսին Ռուսաստանում սրվեց ներքին ճգնաժամը: Առաջադիմական դաշինքը որոշեց «գրոհել իշխանության վրա»: 1916 թվականի նոյեմբերի 1-ին Միլյուկովը ելույթ ունեցավ Դումայի ամբիոնից կայսրուհու և վարչապետի փաստացի դավաճանության մեղադրանքով: Ելույթը լայն տարածում գտավ, ինչը վկայում էր իշխանության հանդեպ վստահության աղետալի անկման մասին: Շտյուրմերը հեռացվեց աշխատանքից, փոխարենը նշանակվեց Ա.Ֆ. Տրեպովը: Ըստ էության գերագույն իշխանությունը անտեսեց Դումայի պահանջները. նրանք քաղաքական համակարգի արմատական վերափոխման հույսեր էին փայփայում՝ պատկերացում չունենալով, թե ինչպես կարելի է դրան հասնել: Առաջադիմական դաշինքը կարծում էր, որ ժողովրդական դժգոհությունը վաղ թե ուշ քշել-տանելու է քաղաքական ռեժիմը: Մնում էր միայն սպասել «փոթորկին» կամ ի վերջո ընդունել սեփական պարտությունը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ էր իրենից ներկայացնում XIX դարի վերջի ռուսական արդիականացումը:
2. Ձևակերպե՛ք Ռուսաստանի առաջին հեղափոխության հիմնական պատճառները: Ըստ ձեզ՝ արտաքին քաղաքական ո՞ր գործոններն են ազդել երկրում հեղափոխական տրամադրությունների աճի վրա:
3. Առանձնացրե՛ք Ռուսաստանի առաջին հեղափոխության 3–4 ամենակարևոր իրադարձությունները ձեր տեսանկյունից: Բացատրե՛ք ձեր ընտրությունը:
4. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ ծանոթացե՛ք 1905 թվականի հոկտեմբերի 17-ի կայսերական մանիֆեստի տեքստին: Դրա դրույթներից ո՞րն էին ամենակարևորները քաղաքական համակարգի վերափոխման համար:
5. Պատմե՛ք XX դարի սկզբին Ռուսաստանում ձևավորված քաղաքական կուսակցությունների համակարգի մասին: Նկարագրե՛ք նրանց գաղափարախոսությունը,

նշե՛ք առաջնորդներին և այն սոցիալական շերտերը, որոնց վրա նրանք հենվում էին:

6. Ռուսաստանում ինչպե՞ս տեղի ունեցավ պառլամենտարիզմի ծնունդը: Հիշե՛ք, թե որ պետական գործիչն է առաջին անգամ առաջարկել Պետդումայի ստեղծումը: Սահմանադրական ի՞նչ նախագծեր առաջադրվեցին երկրում XIX դարում:
7. Ինչպե՞ս են ընթացել I, II և III Պետդումաների աշխատանքները: Ինչպիսի՞ն էր պատգամավորների կազմը: Այս իշխանությունների գործունեության տևողությունը ինչո՞ւ էր տարբեր:
8. Ստոլիպինի բարեփոխումները կարելի՞ է համարել հաջողված: Որո՞նք են, ըստ ձեզ, հաջող բարեփոխումների չափանիշները:
9. XX դարի սկզբի կառավարության բարեփոխումները Ս.Յու. Վիտտեի՞, Պ.Ա. Ստոլիպինի՞, թե՞ Նիկոլայ II-ի բարեփոխումներն էին: Կարելի՞ է Նիկոլայ II-ին անվանել բարեփոխող ցար:
10. Պատմե՛ք 1914–1916 թվականներին Առաջին համաշխարհային պատերազմի արևելյան ճակատի հիմնական իրադարձությունների մասին: Ո՞ր մարտերում է հաջողել ռուսական բանակը:
11. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ զեկուցում պատրաստե՛ք Առաջին համաշխարհային պատերազմի ռուս հերոսներից մեկի մասին: Նա կարող է լինել զորավար կամ շարքային զինվոր:

ԳԼՈՒԽ 12. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ԱՍԿԶԲԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

§ 60. Գիտությունը և կրթությունը

Գիտակրթական ենթակառուցվածքների ձևավորումը: Ժամանակին Պետրոս I-ը նպատակ էր դրել Ռուսաստանը դարձնել գիտության համաշխարհային կենտրոններից մեկը և ստեղծել երկրի զարգացման համար անհրաժեշտ կրթական համակարգ: Սակայն մեկ մարդու կյանքը բավարար չէր նման վիթխարի ծրագրերի իրականացման համար: Մի քանի սերունդ պահանջվեց, որպեսզի լուծվի այդ խնդիրը: Առաջին բանը, որ պետք է արվեր, գիտնական մասնագետների պատրաստումն էր, ինչպես նաև նրանց աշխատանքի կազմակերպչական և տեխնիկական հիմքերի ստեղծումը: Երկրի գիտական ենթակառուցվածքի ձևավորումը սկիզբ առավ Սանկտ Պետերբուրգում «Գիտությունների և արվեստների ակադեմիայի» բացման մասին Պետրոս I-ի՝ 1724 թվականի հունվարի 22-ի հրամանագրով: Դրա գործնական իրականացումը սկսվեց կայսրուհի Եկատերինա I-ի օրոք՝ ինքնակալի մահից հետո: Քանի որ դեռևս չկային գիտական կադրեր, Ռուսաստան հրավիրվեցին արտասահմանցի տաղանդավոր գիտնականներ: Նրանք պետք է կրթեին ռուս մասնագետներին. այդ նպատակով ակադեմիային կից համալսարան էր բացվել: Քանի որ այն ժամանակ գիտության լեզուն լատիներենն էր, ակադեմիական համալսարանի համար ուսանողներ գտնելը դժվար էր: Այստեղ էին ուղարկվում հոգևոր ուսումնական հաստատությունների լավագույն սաները: Այսպես, XVIII դարի ամենանշանավոր ռուս գիտնական Մ.Վ. Լոմոնոսովը ակադեմիական համալսարան է ընդունվել 1736 թվականին՝ որպես Սլավոնա-հունա-լատինական ակադեմիայի 12 լավագույն ուսանողներից մեկը: Ավելի ուշ նրան ուղարկեցին Գերմանիա՝ սովորելու: 1745 թվականին դառնալով ակադեմիայի անդամ՝ Լոմոնոսովը փորձեց ամրապնդել ռուսաց լեզվի դերը ակադեմիական համակարգում, սակայն նրա նախաձեռնությունները շարունակություն չունեցան: Դա Ակադեմիական համալսարանին խանգարեց դառնալ երկրի հիմնական բարձրագույն ուսումնական հաստատությունը: 1783 թվականին Ակադեմիական համալսարանն ընդամենը երկու ուսանող ուներ: Շուտով այն դադարեց գոյություն ունենալ ուսանողների պակասի պատճառով: 1754 թվականին



Մ.Վ. Լոմոնոսով

կայսրուհի Ելիզավետա Պետրովնան հանձնարարեց Ի.Ի. Շուվալովին մշակել Մոսկվայի համալսարանի նախագիծը: Դրա ստեղծման գործում մեծ ներդրում ունեցավ Լոմոնոսովը: Համալսարանը, որը բացվեց 1755 թվականին, ուներ «բազային»՝ փիլիսոփայության և երկու «բարձրագույն»՝ իրավագիտության և բժշկության ֆակուլտետներ: Մուտքն ազատ էր բոլոր դասակարգերի համար՝ բացառությամբ ճորտերի:

Քանի որ դասավանդման լեզուն լատիներենն էր, սովորելու ցանկություն քչերն ունեին: Խնդիրը լուծվեց կրոնական դպրոցներից լատիներեն իմացող երիտասարդներին տեղափոխմամբ: Ապագա ուսանողներին վերապատրաստում էին համալսարանին կից նորաբաց գիմնազիայում: Ավելի ուշ Եկատերինա II-ը հրամայեց համալսարանում դասախոսություններ կարդալ ռուսերենով: Դա հնարավոր դարձավ այն պատճառով, որ արդեն 1760-ական թվականներին Ռուսաստանում բավական թվով գիտնականներ կային, որոնց համար ռուսերենը մայրենի լեզու էր: Գիտական և կրթական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ նոր քայլ կատարվեց Ալեքսանդր I կայսեր օրոք: 1802-ից 1804 թվականներին բացվեցին Վիլենսկիի, Դորպատի, Կազանի, Խարկովի համալսարանները և Սանկտ Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտը, որը հետագայում վերածվեց համալսարանի: Բարձրագույն ինժեներական կրթություն ապահովող առաջին ուսումնական հաստատությունը Գլխավոր ճարտարագիտական դպրոցն էր, որը ստեղծվել էր 1810 թվականին: Նիկոլայ I-ի կառավարման տարիները դարձան տեխնիկական ուսումնական հաստատությունների ցանցի զգալի ընդլայնման ժամանակաշրջան: Ալեքսանդր II-ի բարեփոխումների ժամանակաշրջանում կանայք սկսեցին օգտվել բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Սակայն նրանց համար սահմանափակումները մնացին մինչև 1917 թվականը: Դա շատ աղջիկների ստիպեց մեկնել արտասահման՝ սովորելու: Չնայած այս թերություններին՝ XX դարի սկզբին Ռուսաստանում մշակվեց բարձրագույն կրթության զարգացած համակարգ: Երկրի բուհերը տարեկան ավարտում էին հազարավոր մասնագետներ, որոնք ամուր հիմք էին դառնում ռուսաստանյան գիտության զարգացման համար:

Ռուս գիտնականների բացահայտումները: Ռուսաստանում գիտական հետազոտություններ սկսել էին կատարել դեռ նախքան գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Առաջին հերթին դրանք կապված էին սեփական երկրի ճանաչողության և ուսումնասիրության հետ: Սկզբում աշխարհագրական հետազոտություններն ու քարտեզագրումն իրականացվում էին ռազմական նպատակներով: Իրավիճակը սկսեց փոխվել այն բանից հետո, երբ 1724 թվականի դեկտեմբերի 24-ին Պետրոս I-ը հրամանագիր ստորագրեց Վ. Բերինգի հրամանատարությամբ Կամչատկայի առաջին արշավախումբը կազմակերպելու մասին: Այն դարձավ Հյուսիսային մեծ (Երկրորդ Կամչատկա) արշավախմբի (1733–1743) նախաբանը, որի ընթացքում իրականացվել են Սիբիրի, Հյուսիսային Ամերիկայի և Ճապոնիայի ափերի համապարփակ ուսումնասիրությունները: Այս նախագծի շրջանակներում տարբեր ենթակայութունների տակ գտնվող յոթ ջոկատներ զբաղվել են գիտահետազոտական աշխատանքներով: Հենվելով Հյուսիսային մեծ արշավախմբի աշխատանքների օրինակի վրա՝ կարելի է հետևել,


ОПИСАНІЕ
ЗЕМЛИ
КАМЧАТКИ
сочиненное
СТЕПАНОМЪ КРАШЕНИННИКОВЫМЪ,
Академіи Наукъ Профессоромъ
ТОМЪ ВТОРЫЙ.
ВЪ САНКТПЕТЕРБУРГѢ
при императорской академіи наукъ

«Կամչատկայի նկարագրությունը», Ս.Պ. Կրաշենիննիկով

թե ռուսական գիտության մեջ ազգային կադրերը ինչպես էին առաջ գալիս և ձևավորվում: Ակադեմիական թիմի անդամներից մեկը զինվորի որդի Ս.Պ. Կրաշենիննիկովն էր: Որպես ուսանող՝ նա ճամփորդության մեկնեց ակադեմիայի անդամների հետ: Սեփական տվյալների հիման վրա Կրաշենիննիկովը գրեց իր՝ «Կամչատկայի նկարագրությունը» մենագրությունը, որը հետագայում թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և հոլանդերեն: Ժամանակի ընթացքում ռուս գիտնականների աշխարհագրական հայտնագործությունների գոտին ծածկեց ամբողջ աշխարհը: 1820 թվականին Ֆ.Ֆ. Բելինսգաուզենի և Մ.Պ. Լազարևի ղեկավարությամբ արշավախումբ հայտնաբերեց նոր մայրցամաք՝ Անտարկտիդան:

Աստղագիտության զարգացումը խթանեց Գիտությունների ակադեմիայի հիմնադրման տարում ֆրանսիացի աստղագետ Ժ. Դելիլին հրավիրելը. նա կազմակերպեց ակադեմիական աստղադիտարանի ստեղծումը: Արդեն XIX դարի սկզբին ռուսական ակադեմիան կարողացավ դառնալ այն ժամանակվա խոշորագույն միջազգային մի նախագծի կազմակերպիչը: 1816-1855 թթ. Շվեդիայի և Ռուսաստանի տարածքում նրանք ստեղծեցին 2820 կմ երկարությամբ մի գիծ՝ 265 բրգաձև կառույցներից բաղկացած, ինչը հնարավորություն տվեց պարզել Երկիր մոլորակի ճշգրիտ ձևը: Հետագայում այն կոչվեց Ստրուվեի կամար՝ Պուլկովոյի աստղադիտարանի տնօրեն Վ. Յա. Ստրուվեի անունով: Կատարված չափումները իրենց նշանակությունը չկորցրին ընդհուպ տիեզերական թռիչքների դարաշրջանի սկիզբը: Եթե XVIII դարը ռուսական գիտության համար աշակերտելու ժամանակաշրջան էր, ապա XIX դարում ռուս գիտնականները հաճախ հայտնվում էին համաշխարհային գիտության առաջնագծում: Այստեղ կներկայացնենք միայն գլխավոր օրինակները: Դեռևս 1820–1840-ական թվականներին Կազանի համալսարանի պրոֆեսոր Ն. Ի. Լոբաչևսկին աշխատություններ գրեց ոչ էվկլիդեսյան երկրաչափության մասին (неевклидовой геометрии), որոնք փոխեցին տարածության մասին պատկերացումները: Լոբաչևսկու ստեղծագործությունների հեղափոխական բնույթի պատճառով նրան անվանեցին երկրաչափության Կոպեռնիկոս: 1869 թվականին քիմիկոս Դ.Ի. Մենդելեևը ստեղծեց քիմիական տարրերի նոր համակարգը, որը լայնորեն հայտնի է Մենդելեևի պարբերական աղյուսակ անունով: Այս հայտնագործությունը որոշեց բնական գիտությունների հետագա զարգացումը: Ականառու ձեռքբերումներն էին լույսի ճնշման փորձարարական հայտնաբերումը Պ.Ն. Լեբեդևի և ֆոտոսինթեզի ուսումնասիրությունները Կ. Ա. Տիմիրյազևի կողմից: Նոբելյան մրցանակի հիմնադրումից անմիջապես հետո դրա դափնեկիրների թվում կային նաև ռուս գիտնականներ: 1904 թվականին մրցանակ շնորհվեց Ի.Պ. Պավլովին՝ մարսողության

ֆիզիոլոգիայի վերաբերյալ իր աշխատանքի համար, իսկ 1908 թվականին՝ Ի.Ի. Մեչնիկովին՝ իմունիտետի վերաբերյալ իր աշխատանքի համար:

Տարրական և միջնակարգ կրթություն: Պետրոս I-ի օրոք սկսված գիտակրթական ենթակառուցվածքների ձևավորման աշխատանքները տվեցին իրենց պտուղները: Սակայն երկար ժամանակ երկրում բացակայում էր ընդհանուր աշխարհիկ կրթության համակարգը: Հատկապես վատ էր աղջիկների կրթության հետ կապված իրավիճակը: Այն սկսեց փոխվել միայն Եկատերինա II-ի օրոք: 1764 թվականին Սանկտ Պետերբուրգում բացվեց ազնվական աղջիկների ինստիտուտը (Սմոլնիի ինստիտուտ)՝ Ռուսաստանում կանանց միջնակարգ առաջին ուսումնադաստիարակչական հաստատությունը: 1786 թվականին կայսրուհին հաստատեց հանրակրթական դպրոցների կանոնադրությունը, ըստ որի՝ խոշոր քաղաքներում բացվելու էին քառամյա հիմնական դպրոցներ, իսկ ոչ մեծ գավառներում՝ հանրային երկամյա փոքր դպրոցներ: Այնտեղ կարող էին սովորել ոչ միայն տղաները, այլև աղջիկները: Նման դպրոցների փաստացի բացումը երկար տարիներ ձգձգվում էր, քանի որ դրանց համար բավարար միջոցներ և դասախոսական կազմ չկար: Ալեքսանդր I-ը համալսարանական բարեփոխում իրականացրեց՝ լրացնելով կայսրուհու նախաձեռնությունը: Նա 1804 թվականին հրամանագիր ստորագրեց՝ յուրաքանչյուր գավառական քաղաքում գիմնազիաներ ստեղծելու մասին: Իսկ Ալեքսանդր II-ի նախաձեռնած բարեփոխումներով աստիճանաբար սկսեց աճել նաև կանանց գիմնազիաների ցանցը: Ընդհուպ 1918 թվականը գիմնազիաները ուսումնական հաստատությունների հիմնական տեսակն էին, որոնք երիտասարդներին նախապատրաստում էին համալսարան ընդունվելու համար: Այսպիսով, ձևավորվեց մի համակարգ, որը հնարավորություն էր տալիս ամբողջական շրջափուլով՝ տարրականից մինչև բարձրագույն, կրթություն ստանալ:



Զեմստվոյի դպրոցների ուսուցչուհիներ: Պերմի նահանգ: 1905 թ.

Ալեքսանդր II-ի բարեփոխումները նոր թափ հաղորդեցին կրթության զարգացմանը: Արդյունաբերության և առևտրի մասնագետների սուր պակասի պայմաններում 1864 թվականին ստեղծվեցին նոր տիպի միջնակարգ ուսումնական հաստատություններ՝ ռեալական գիմնազիաներ (1872 թվականից՝ ռեալական ուսումնարաններ): Այստեղ կրճատեցին հումանիտար առարկաների թիվը, ավելացրին կիրառական բնույթի առարկաներ, օրինակ, մեխանիկա:

Ռեալական գիմնազիաների շրջանավարտները հնարավորություն ունեցան ուսումը շարունակելու հատուկ բուհերում, բայց ոչ համալսարաններում: 1861-ից հետո հողատերերի խնամակալության տակից դուրս եկած գյուղացիները կարող էին արդյունավետորեն տնտեսական գործունեություն ծավալել և պաշտպանել օրենքով նախատեսված իրավունքները՝ միայն գրագիտությանը տիրապետելու դեպքում: Հետևաբար զեմստվոների ռեֆորմի ժամանակ ամբողջ երկրով մեկ ստեղծվեցին զեմստվոյի տարրական դպրոցներ: Բայց գործադրված ջանքերն ակնհայտորեն բավարար չէին: XIX դարի վերջին երկրում գրագետ էր տղամարդկանց միայն 29,3%-ը և կանանց 13,1%-ը: Պետությունը, որը ստեղծեց առաջադեմ գիտություն, չկարողացավ ապահովել տարրական կրթության մատչելիությունը նույնիսկ բնակչության մեկ երրորդի համար: Սա լարվածության սրման պատճառներից մեկն էր, որը XX դարի առաջին տասնամյակներին վերածվեց սոցիալական սուր ճգնաժամի:

§ 61. Ճարտարապետությունը և գեղանկարչությունը

Բարոկկոյի և կլասիցիզմի դարաշրջանը: Պետրոս I-ի գահակալությունը արագացրեց ռուսական ճարտարապետության և գեղանկարչության մեջ փոփոխությունները: Մեծ տարածում գտավ պետրոսյան բարոկկո ոճը, որի գլխավոր հուշարձանները գտնվում են Սանկտ Պետերբուրգում: Նոր ճարտարապետական արվեստի վառ օրինակ է Դ. Տրեզինիի կողմից 1712–1733 թթ. կառուցված Պետրոպավլովյան տաճարը, որի զանգակատունը ավելի քան երկու դար դարձավ քաղաքի ամենաբարձր կառույցը: Մինչ օրս պահպանված քաղաքացիական կառույցներից Պետրոս I-ի ճաշակը լավագույնս արտացոլված է նրա Ամառային պալատի խիստ համաչափության մեջ, որը նախագծել է Տրեզինին: Հյուսիսային մայրաքաղաքի ճարտարապետությունը ոչ միայն առանձնանում էր ոճական նորամուծություններով: Քաղաքի կառուցման ժամանակ առաջին անգամ սիստեմատիկորեն օգտագործվեցին հատակագծերն ու գծագրերը, իսկ շինարարական աշխատանքները կարգավորվում էին օրենքով:



Ձմեռային պալատ: Փոստային բացիկ: XX դարի սկիզբ

Կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի դարաշրջանում շքեղության ձգտումը, որը տարածվեց ռուսական ազնվականության շրջանում, հանգեցրեց նրան, որ 1740-ական թվականներին պետրոսյան խստաոճ բարոկկոն փոխարինվեց ելիզավետյան պերճ բարոկկոյով: Այս ուղղության խորհրդանիշը կարելի է համարել ճարտարապետ Ռաստրելլի ստեղծագործությունները և հիմնականում Ձմեռային պալատը (1754–1762):

Եկատերինա II-ի գահ բարձրանալը կրկին նշանավորվեց ճարտարապետական նոր ոճերի ի հայտ գալով: Կլասիցիզմը դարձավ առավել տարածված ոճը, որը բնութագրվում էր դասական անտիկ սյունաշարերի հաճախ կիրառմամբ և բարոկկո ոճի պաճուճագեղ դեկորացիաների մերժմամբ: Սանկտ Պետերբուրգում այս ոճի զարգացման գործում ամենամեծ ներդրումն ունեցան արտերկրից ժամանած Ջ.Բ. Վալլեն-Դելամոտը, Ջ. Քվարենգին, Մոսկվայում՝ ռուս վարպետներ Վ.Ի. Բաժենովը և Մ.Ֆ. Կազակովը:

Նեոգոթականը նույնպես դարձավ բնորոշ երևույթ., այն առաջացավ ռոմանտիզմի ազդեցությունից: Նրա համար բնութագրական էր ասպետական անցյալին անդրադառնալը: Այս ոճով Բաժենովը ստեղծեց Ցարիցինոյի պալատի և զբոսայգու համալիրը: Այսպես ռուսական ճարտարապետության մեջ սկսեց զարգանալ պատմականությունը՝ ուղղություն՝ հիմնված անցյալի ոճերի նկատմամբ հետաքրքրության վրա:

XIX դարի վերջի և XX դարի սկզբի ճարտարապետությունը: Գոթական ոճի տակ Բաժենովն արդեն հասկանում էր ոչ միայն եվրոպական միջնադարի, այլև ռուսական հնության շինությունները: Հետագայում էլ ճարտարապետները հաճախ ոգեշնչում էին փնտրում հնադարյան հուշարձաններում: Կ.Ա. Տոնը՝ Նիկոլայ I-ի թագավորության ամենահայտնի ճարտարապետներից մեկը, օգտագործելով կլասիցիզմի տարրեր, ինչպես նաև հին ռուսական և բյուզանդական ճարտարապետության պատկերներ, ստեղծեց ռուս-բյուզանդական ոճը, որով կառուցվել է Քրիստոս Փրկչի տաճարը Մոսկվայում (1837–1883): Հետագայում Վ.Ի. Շերվուդը, երբ կառուցում էր Պատմության թանգարանը (1875–1883), ոգեշնչում էր փնտրում XVII դարի շենքերի «ռուսական զարդանախշերով» դեկորներում:

XIX և XX դարերի սահմանագիծը ռուսական ճարտարապետության մեջ նոր ոճերի՝ մոդեռնիզմի և համաշխարհային ճարտարապետությանը բնորոշ կոնստրուկտիվիզմի տարրերի ներթափանցման ժամանակը դարձավ: Մոդեռնիզմի լավագույն հուշարձանների թվին են պատկանում Ֆ.Օ. Շեխտելի ստեղծագործությունները, օրինակ, Ս.Պ. Ռյաբուշինսկու մոսկովյան առանձնատունը (1900–1903): Ռուսական, ինչպես և եվրոպական մոդեռնը բնութագրվում է բույսերի կյանքից փոխառված մոտիվների օգտագործմամբ՝ հարթ, ավարտուն գծեր, անհամաչափության կանխամտածված ներդրում: Համարձակորեն ներմուծվում են տարբեր ոճերի տարրեր՝ բարոկկո, կլասիցիզմ, գոթիկա և այլն: Այս ժամանակահատվածում և՛ առանձնատները, և՛ բազմաբնակարան շենքերը բնութագրվում են հարմարավետության բարձր մակարդակով՝ մտածված նախագծում, վերելակներ, բարձր առաստաղներ, լավ օդափոխություն:



Հիպերբոլոիդային աշտարակ։
Ինժեներ՝ Վ.Գ.Շուխով

Կոնստրուկտիվիզմի կողմնակիցները շարժվեցին նոր տեխնոլոգիաների և նյութերի կիրառման ճանապարհով՝ անհրաժեշտ ֆունկցիոնալության հասնելու համար։ Նվազագույն միջոցներ՝ դիզայնի առավելագույն պարզությամբ։ Այսպես, 1896 թվականին Համառուսական արդյունաբերական և արվեստի ցուցահանդեսում ինժեներ Վ.Գ. Շուխովը ներկայացրեց իր հիպերբոլոիդային աշտարակը, որի կառուցվածքային տարրերը միայն ձողեր և շրջագծեր էին (հեղինակն օգտագործել էր շրջապտույտի հիպերբոլոիդի հատկությունը)։

Ռուսական գեղանկարչությունը: XVIII–XIX դարերի կեսեր: XVIII դարի սկզբից ռուսական գեղանկարչությունը նույնպես, ինչպես և ճարտարապետությունը, ձևավորվեց՝ յուրացնելով եվրոպական ոճերը։ Դա տեղի էր ունենում թե՛ եվրոպացի վարպետներ հրավիրելու, թե՛ ռուս նկարիչներին արտասահման գործուղելու միջոցով։ Օրինակ՝ Ի.Ն. Նիկիտինը, որին հաճախ անվանում են ռուսական նոր գեղանկարչության հիմնադիր, Պետրոս I-ի «թոշակառու» երեք այլ երիտասարդ արվեստագետների հետ մեկնեց Իտալիա՝ կրթություն ստանալու։

Ռուսական գեղանկարչության զարգացման շրջադարձային կետը Արվեստի ակադեմիայի ստեղծումն էր։ Դա Ռուսաստանում առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունն էր, որը կերպարվեստի ոլորտում մասնագետների պատրաստմամբ էր զբաղվում։ Արվեստի ակադեմիա բացելու փորձ արվել էր դեռ Պետրոս I-ի կողմից, սակայն այս գաղափարը իրականացվեց 1757 թվականին Ելիզավետա Պետրովնայի հրամանով։ Ակադեմիան հիմնադրվեց Սանկտ Պետերբուրգում։ Սկզբում Արվեստի ակադեմիան բավականաչափ ուսանողներ չուներ։ Այնտեղ կարող էին ընդունվել հասարակության տարբեր շերտերի տաղանդավոր երեխաները։ Այդ պատճառով ուսումնառությունը պետության հաշվին էր իրականացվում։ Ուսանողներին չէր կարելի զինվորական ծառայության ուղարկել կամ ճորտ դարձնել։ Ակադեմիայում կրթությունն ի սկզբանե անտիկ շրջանի դասական արվեստը տիրապետելուն էր ուղղված։ Լավագույն շրջանավարտները ստանում էին կրթաթոշակ՝ արտերկրում կրթությունը շարունակելու համար։



Պոմպեյի վերջին օրը։
Նկարիչ՝ Կ.Պ. Բրյուլով

Մեծ ուշադրություն էին դարձնում բնօրինակից պատճենելու տեխնիկային և բնորդների հետ աշխատելուն։ Ակադեմիայում գեղանկարչության մրցույթների թեմաները ամենից հաճախ դառնում էին անտիկ շրջանի դիցաբանության, ողբերգությունների և Աստվածաշնչի վեհ ու հերոսական պատմությունները։

Աստիճանաբար ռուսական գեղանկարչությունը հասավ համաշխարհային մակարդակի: Այսպես, գեղանկարչության ակադեմիական ուղղության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Կ.Պ. Բրյուլովի «Պոմպեյի վերջին օրը» աշխատանքը խանդավառությամբ ընդունվեց ոչ միայն Ռուսաստանում, այլև Իտալիայում, իսկ 1834 թվականին Փարիզի սալոնում այն առաջին մրցանակ ստացավ: Բրյուլովի հաջողության գրավականը դասական գեղանկարչության վարպետ տիրապետումն էր: Բացի այդ, նրան հաջողվեց պատկերել սովորական մարդկանց անձնական մտահոգությունները, ցավերը, ինչն արդեն բնորոշ է մյուս հանրաճանաչ ոճին՝ ռոմանտիզմին: Ի պատասխան ռուսական հասարակության աճող գեղարվեստական պահանջներին՝ 1852 թվականին Նիկոլայ I-ը կարգադրեց այցելությունների համար բացել Էրմիտաժը:

Նոր ուղղություններ նկարչության մեջ: Ալեքսանդր II-ի՝ հասարակությանը ցնցած բարեփոխումները, առաջ բերեցին ռեալիզմի ձևավորման պահանջը: 1863 թվականին ոսկե մեդալ նվաճելու համար մրցույթին մասնակցելու թույլատրված հավակնորդները՝ Արվեստի ակադեմիայի շրջանավարտները, ղեկավարությանը պահանջ ներկայացրին «Օդինի խնջույքը Վալհալայում» թեման փոխարինել ազատ թեմայով: Մերժումից հետո նրանք ցուցադրաբար լքեցին Ակադեմիան և ստեղծեցին Ռուսաստանում առաջին անկախ կազմակերպությունը՝ «Պետերբուրգի արվեստագետների արտելը»: Ավելի ուշ՝ 1870 թվականին, այն դարձավ «Գեղանկարների ճամփորդական ցուցահանդեսների ընկերություն»: Նրանց անվանում էին պերեդվիժնիկներ, որոնք փորձում էին ցույց տալ շրջակա կյանքն իր ողջ բազմազանությամբ: Ճամփորդական ցուցահանդեսների ժամանակ ներկայացվել են Ի.Է. Ռեպինի («Խաչելության երթը Կուրսկի նահանգում»), Վ.Ի. Սուրիկովի («Բոյարուհի Մորոզովան»), Ի.Ն. Կրամսկոյի («Անծանոթուհին»), Ա.Կ. Սավրասովի («Սերմնագռավները վերադարձան») և այլ արվեստագետների գեղանկարները: Գեղարվեստական կյանքը դարձավ հասարակական երևույթ: Արդյունաբերողներ Տրետյակովների ջանքերով Մոսկվայում բացվեց ռուսական գեղանկարչության առաջին թանգարանը: Սկիզբ առավ հին ռուսական սրբապատկերների հավաքման դարաշրջանը: Աստիճանաբար ձևավորվեց նրա գեղարվեստական արժեքի ըմբռնումը: Հետագայում (1898 թ.) Սանկտ Պետերբուրգում բացվեց Ռուսական թանգարանը:



Սերմնագռավները վերադարձան: Նկարիչ՝ Ա.Կ. Սավրասով

1890-ականների սկզբին կերպարվեստի զարգացման գործում նոր շրջադարձ կատարվեց: Այս ժամանակաշրջանի գեղանկարչությունը հաճախ կապված էր «մոդեռնիզմ» հասկացության հետ, բայց ոչ այնքան որոշ առանձնահատկություններ նշելու, որքան գեղարվեստական գաղափարների և միտումների բազմազանության աճի հետ կապված: Ռեալիզմի փոխարեն առաջին


պլան մղվեց հասարակության թերությունները շտկելու ցանկությունը, ստեղծագործող մարդու, նրա հույզերի, ներաշխարհի նկատմամբ հետաքրքրությունը:

Սիմվոլիզմի հետ սերտորեն կապված արվեստագետները ստեղծեցին այնպիսի գործեր, որոնք աներևակայելի էին դեռ ոչ վաղ անցյալում: Ժամանակակիցները ցնցված էին Մ.Ա. Վրուբելի նկարներից («Դևը նստած», «Բոգատիրը»): Ի.Ի. Լևիտանի «տրամադրության բնանկարները» աննախադեպ հոգեբանական ազդեցություն ունեցան: Լ.Ն. Տոլստոյը նրա «Հավերժական անդորր» կտավը անվանել է «համր հոգու աղոթք»: Վ.Ա. Սերովի ստեղծագործություններն առանձնանում էին պատկերվող մարդու էության մեջ ներթափանցելու անսովոր կարողությամբ: Պահանջվող արտահայտչականությանը հասնելու համար նկարիչը երբեմն հայտնվում էր գրոտեսկի և սկանդալի սահմանին (արքայադուստր Օրլովայի դիմանկարը, Իդա Ռուբինշտեյնի դիմանկարը): Այն գաղափարը, թե արվեստում գեղագիտական սկզբունքն է հիմնական դերակատարը և ոչ թե նրա սոցիալական գործառույթը, հիմք է ծառայել «Արվեստի աշխարհ» գեղարվեստական միության համար, որը հիմնադրվեց նկարիչ Ա.Ն. Բենուայի և թատերական գործիչ Ս.Պ. Դյագիլևի կողմից: Նրա կազմում մասնակիցների լայն շրջանակ էր ներգրավված՝ բարդ ոճաբան Կ.Ա. Սոմովից մինչև խորապես կրոնական կտավների հեղինակ Մ.Վ. Նեստերովը:

Ռուսական արվեստը XIX դարի վերջին և XX դարի սկզբին զարգանում էր համաշխարհային միտումներին համահունչ: Ռուսաստանում մոդեռնի (Art Nouveau) դարաշրջանի արվեստը արձագանքեց ժամանակի պահանջներին իմպրեսիոնիզմի, սիմվոլիզմի, պոստիմպրեսիոնիզմի ոճով աշխատող նկարիչների ստեղծագործություններով: Ավելին, XX դարի սկզբին Ռուսաստանը դարձավ համաշխարհային գեղանկարչության առաջատար կենտրոններից մեկը: Ավանգարդի որոշ հոսանքներ այստեղ սկիզբ առան: Դրանցից մի քանիսը նոր խոսք դարձան համաշխարհային արվեստի մեջ և ուղենիշ՝ երիտասարդ հեղինակների համար: Բեկումնային ուժով այդպիսի ստեղծագործությունների թվին կարելի է դասել Ն.Ս. Գոնչարովայի, Վ.Վ. Կանդինսկու և Կ.Ս. Մալևիչի ստեղծագործությունները:

§ 62. Ռուսաց լեզուն և գրականությունը

Ժամանակակից ռուսաց լեզվի կազմավորումը: Նոր դարաշրջանը դարձավ ռուս գրական լեզվի ձևավորման դարաշրջան: Պետրոս Մեծի գահակալության սկզբում գրավոր մշակույթի հիմնական լեզուն եկեղեցասլավոնականն էր: Այն շատ էր տարբերվում խոսակցական լեզվից: Գոյություն ուներ նաև «կարգադրությունների» հատուկ լեզու, որը Մոսկվայում մշակվել էր ատենադպիրների ու մանր չինովնիկների կողմից՝ գործնական գրագրության կարիքների համար: Ցարը պահանջում էր, որ եկեղեցասլավոներենը չկիրառվի աշխարհիկ բնույթի գրագրություններում, սակայն նրա ցանկությունները հիմնականում իրականացվում էին միապետի անձնական հսկողության ներքո գտնվող տպագիր հրատարակություններում: Նույն ժամանակահատվածում


РОССІЙСКАЯ
ГРАММАТИКА
МИХАЙЛА ЛОМОНОСОВА.
ПЕЧАТАНА ВЪ САНКТПЕТЕРБУРГѢ
При Императорской Академіи Наукъ
1755 года.
1/4046

«Ռուսական քերականություն», Մ.Վ. Լոմոնոսով

նոր հասկացությունների հետ մեկտեղ ռուսաց լեզվի մեջ մտան մեծ թվով օտար բառեր: Այս բազմազան հիմքի վրա ազգային գրական լեզվի ձևավորումը մեծ ջանքեր և շատ ժամանակ էր պահանջում:

Անհրաժեշտ էր արձանագրել ռուսաց լեզվի քերականական կանոնները: Այս ուղղությամբ կարևոր քայլ էր Մ.Վ. Լոմոնոսովի «Ռուսական քերականությունը» աշխատությունը (1755 թ.): Ռուսաց լեզվի զարգացմանը նոր լիցք հաղորդեց Եկատերինա II-ի նախաձեռնությամբ և կայսրուհու վստահելի անձ Է.Ռ. Դաշկովայի գլխավորությամբ Սանկտ Պետերբուրգում ռուսաց լեզվի և գրականության ուսումնասիրության համար Ռուսական ակադեմիայի ստեղծումը: Ակադեմիայի գործունեության գլխավոր արդյունքը ռուսաց լեզվի բացատրական բառարանի տպագրությունն էր: Դպրոցական կրթության մեջ եկեղեցասլավոներենից դեպի ռուսերեն անցումը առաջադիմական դեր ունեցավ: Դա տեղի ունեցավ Եկատերինա II-ի կրթական բարեփոխումների ժամանակ: Նա «Հանրային դպրոցների կանոնադրության» մեջ (1786 թ.) հատուկ նշել էր, որ ուսուցումը պետք է լինի «բնական ռուսերեն» լեզվով:

XVIII դարի գրական կյանքը: Ռուսական պոեզիայի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալ էր Վ.Կ. Տրեդիակովսկու և Լոմոնոսովի նախաձեռնությամբ բանաստեղծության մասին բարեփոխումը: Հին ռուսական գրականության մեջ պոեզիան որպես ժանր բացակայում էր: XVII դարի երկրորդ կեսին ռուս բանասիրության կարիքների համար կիրառում էին Ռեչ Պոսպոլիտայից փոխառված վանկային ոտանավորի համակարգը, որտեղ ռիթմը որոշվում էր տողի վանկերի քանակով: Այս փորձը անհաջող դուրս եկավ: Տրեդիակովսկին և Լոմոնոսովը ռուս գրականության համար



Ն.Մ. Կարամզին

հարմարեցրին շարադրանքի այսօր հայտնի վանկաշեշտային համակարգը, որում ռիթմը որոշվում է շեշտված և չշեշտված վանկերի հերթագայությամբ:

XVIII դարի երկրորդ կեսին գրական կյանքն աշխուժացավ: Ժամանցի համար մեծ թվով մասնավոր ամսագրեր առաջ եկան: 1783 թվականին կայսրուհի Եկատերինա II-ը հրապարակեց «Ազատ տպարանների մասին» հրամանագիրը, որը թույլ էր տալիս մասնավոր անձանց բացել տպարաններ: Սա հանգեցրեց գրահրատարակչության պայթյունավտանգ աճի: Եկատերինա II-ի օրոք ծաղկում ապրեց ռուսական կլասիցիզմի (գերակշռում էր XVIII–XIX դարերի գրականության մեջ) լավագույն ներկայացուցիչներ Գ.Ռ. Դերժավինի և Դ.Ի. Ֆոնվիզինի ստեղծագործությունները: Դերժավինը հայտնի դարձավ իր պոեզիայով: Նա կարծում էր, որ բանաստեղծի ճակատագիրը մեծ գործերը փառաբանելու և վատը դատապարտելու մեջ է: Փառաբանման առարկաներից էր կայսրուհու լուսավորչական գործունեությունը: Ֆոնվիզինն իր գրական կոչումը գտավ կատակերգության մեջ: Նրա լավագույն ստեղծագործությունը՝ «Տհասը», ծաղրում է մարդկային արատները:

Կլասիցիզմի՝ հասարակության արատները շտկելուն ուղղված շքեղ պաթոսը չէր կարող բավարարել գրականության բոլոր սիրահարներին: Արդեն XVIII դարի առաջին կեսին ռուսերեն են թարգմանվում Եվրոպայում մոդայիկ դարձած սենտիմենտալիզմի ոճով տեքստերը: 1792 թվականին լույս տեսավ Ն.Մ. Կարամզինի «Խեղճ Լիզան» սենտիմենտալ պատմվածքը: Գայթակղված և լքված աղքատ աղջկա մահվան մասին պարզ շարադրանքը կանանց ամենօրյա ընթերցանության մասը դարձավ: Պատմվածքի հանրաճանաչության գաղտնիքը ոչ միայն թեմայի, այլև Կարամզինի սահուն ու դյուրընթեռնելի լեզվի մեջ էր, որը նյարդայնացնում էր գրական կլասիցիզմի կողմնակիցներին: Կարամզինի լեզվական նորարարությունների շուրջ լուրջ պայքար ծավալվեց:

Ոսկե և արծաթե դարերի գրականությունը: Այն, որ մինչև XVIII դարի վերջը գրական գործունեությունը հայտնվեց հասարակության ուշադրության կենտրոնում, նախապայման դարձավ ռուս գրականության ոսկե դարի համար, որն ընդգրկում էր XIX դարի գրողների ստեղծագործությունները: Ոճային առումով նրանց աշխատանքներում գերակշռում էին ռոմանտիզմն ու ռեալիզմը, որոնք հաճախ միահյուսված էին: Ոսկե դարի ստեղծագործողների աստղաբույլում առաջինը Պուշկինն է: Նրան է պատկանում ժամանակակից ռուսաց լեզվի ստեղծողի փառքը: Պուշկինի ստեղծագործության նկատմամբ նրա ժամանակակիցների հսկայական ուշադրության մասին է վկայում այն փաստը, որ անձամբ կայսր Նիկոլայ I-ն էր ստանձնել բանաստեղծի

գրաքննիչի դերը: Ն.Վ. Գոգոլը, Մ.Յու. Լերմոնտովը, Ի.Ս. Տուրգենևը, Ֆ.Մ. Դոստոևսկին, Լ.Ն. Տոլստոյը, Ա.Պ. Չեխովը ահռելի ներդրում ունեցան ռուս գրականության զարգացման գործում: Նրանց ստեղծագործությունները դարձան դասական գրականություն և շարունակում են ձևավորել ռուս ժողովրդի ինքնագիտակցությունը առ այսօր: Ոսկե դարի գրողները համաշխարհային մշակութային ժառանգության կարևոր մասն են կազմում: Ռուս գրողների ստեղծագործությունները սկսեցին թարգմանվել այլ լեզուներով արդեն XIX դարի առաջին քառորդում: Ռուս գրականության (այդ թվում՝ Պուշկինի ստեղծագործությունների) հանրահռչակողը ֆրանսիացի գրող Պ. Մերիմեն էր: Ռուս գրականության հետ օտարերկրացի ընթերցողի լայն ծանոթությունը տեղի ունեցավ XIX դարի վերջին քառորդում: Ամենապահանջված հեղինակներից էին Տուրգենևը, Դոստոևսկին և Տոլստոյը:

Ոսկե դարին փոխարինելու եկավ ռուսական մշակույթի արծաթե դարը, որը սովորաբար վերաբերում է XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Գրականության մեջ նրա նվաճումները լավագույնս դրսևորվեցին բանաստեղծներ Կ.Դ. Բալմոնտի, Ա.Ա. Բլոկի, Ն.Ս. Գումիլյովի և նրանց ժամանակակիցների ստեղծագործություններում:

Գրքերի հասանելիության խնդիրը: Երկար ժամանակ սուր կերպով զգացվում էր գրքերի հասանելիության հարցը: Համեստ եկամուտ ունեցող շատ գրագետ մարդիկ պարզապես չէին կարող իրենց թույլ տալ գնել դրանք: Մինչպետրոսյան ժամանակներում գրադարաններ կային վանքերում, եպիսկոպոսություններում և պետական որոշ հաստատություններում: Մասնավոր գրադարանները փոքր էին և հազվադեպ հանդիպող: Պետրոս Առաջինի բարեփոխումները ազնվականների շրջանում գրադարանների նորամուծության սկիզբը դարձան և խթան հանդիսացան կրթական և գիտական հաստատությունների գրադարանների ձևավորման համար: Մեծ արժեք ուներ ռուս ցարերի և կայսրերի գրքերի հավաքածուն: Սակայն դրանից օգտվելու հնարավորություն ունեցողների շրջանակը մնաց սահմանափակ: Իրավիճակը սկսեց փոխվել Եկատերինա II-ի օրոք: 1780-ականներին Մոսկվայում սկսեց գործել Ն.Ի. Նովիկովի անվճար ընթերցասրահը: Հայտնվեցին նաև հանրային այլ գրադարաններ: 1795 թվականին կայսրուհին հրամայեց բացել Կայսերական հանրային գրադարան, որը սկսեց գործել Ալեքսանդր I-ի օրոք: Նա կարգադրեց Ռուսաստանում հրատարակված ցանկացած գրքից երկու օրինակ տրամադրել գրադարանին:



«Լուկոմորիե» գրական, գեղարվեստական և երգիծական ամսագիր: 1914թ., խմբագիր-հրատարակիչ Մ.Ա. Սուվորին

Տնտեսական և սոցիալական կյանքի արագ զարգացումը, որը սկսվեց Ալեքսանդր II-ի բարեփոխումների ժամանակ, տպագիր արտադրանքի անընդհատ աճող պահանջարկ առաջացրեց:

1914 թվականին երկրում արդեն գործում էին ավելի քան 200 հազար տարբեր գրադարաններ, որոնց գրապահոցներում 46 մլն. նմուշ կար:

Շուտով սկսեցին հայտնվել հրատարակչություններ, որոնք ուղղված էին զանգվածային ընթերցողին: Դրանց տերերի մեջ ամենատարածված համբավը ձեռք բերեց Ա.Ս. Սուվորինը: 1872 թվականին նա հրատարակեց «Ռուսական օրացույց» տեղեկագիրքը, այնուհետև չորս տասնամյակի ընթացքում ստեղծեց մի կազմակերպություն, որը հրատարակում էր թերթեր, ամսագրեր, գրքեր: Այդ կազմակերպությունը ներառում էր տպարան, թղթի արտադրության գործարան, մասնաճյուղեր երկրի տարբեր քաղաքներում, երկաթուղային կայարաններում գրքի կրպակների ցանց և այլն:

Ընդհանրապես, նոր դարաշրջանում ռուս գրականությունը հսկա թռիչք կատարեց իր զարգացման մեջ: Այնուամենայնիվ, չնայած ձեռք բերված հաջողություններին, Ռուսական կայսրության անգրագետ հպատակների մեծամասնության համար ռուս մեծ գրականությունը, անգամ եթե գոյություն էլ ուներ, ապա միայն բանավոր վերապատումների տեսքով:

§ 63. Թատրոնը և երաժշտությունը

Թատերական կյանքը XVIII դարի առաջին կեսին: Ռուսական երաժշտության և թատրոնի պատմության համար Պետրոս Առաջինի գահակալության տարիները դարձան կարևոր փոփոխությունների դարաշրջան: Բանը միայն այն չէ, որ օտարերկրյա երաժիշտների և արտիստների էին հրավիրում Ռուսաստան. թագավորական արքունիքում նրանց ընդունել էին ավելի քան մեկ դար: Գլխավոր նորամուծությունը արվեստի տեսակների նկատմամբ վերաբերմունքի սկզբունքային փոփոխությունն էր: Եթե XVII դարում նման զվարճանքներ դիտելը մեղք էր համարվում, ապա Պետրոս Առաջինի բարեփոխումների տարիներին աշխարհիկ երաժշտությունն ու թատերական ներկայացումները մերժված և կրոնական տեսակետից կասկածելի երևույթից վերածվեցին մշակույթի նշանակալի իրադարձությունների: Եկեղեցին նույնպես ընդունեց դրանք. թատերական ներկայացումները դարձան աստվածաբանական ուսումնական հաստատությունների գործունեության մաս:

Պետրոս I-ը սիրում էր արտասահմանյան «զվարճանքներ»: Նա դրանց առնչվել էր 1690-ականների սկզբին Գերմանական թաղամասում: Եվրոպայի երաժշտական և թատերական կյանքին ինքնակալի և նրա համախոհների խոր մերձեցումը տեղի էր ունեցել Մեծ դեսպանության ժամանակ, որից հետո սկսեցին դերասաններ փնտրել, որոնք կհամաձայնեին հանդես գալ Մոսկվայում: 1702 թվականին ռուսական իշխանությունները պայմանագիր կնքեցին Ի. Կունստի շրջիկ թատերախմբի հետ: Կարմիր հրապարակում նրա համար կառուցվեց հատուկ թատրոն, որը գոյություն ունեցավ մինչև 1706 թվականը: 1707 թվականին Պյոտր I-ի քրոջ՝ արքայադուստր Նատալյա Ալեքսեևնայի համար Մոսկվայի մոտ գտնվող Պրեոբրաժենսկոյե գյուղում պալատական թատրոն բացվեց: Ներկայացումների ցանկը չափազանց բազմազան էր՝ սկսած



Պ.Ի. Ժեմչուգովա: Նկարիչ՝ Ն.Ի. Արգունով

Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակաշրջանի պիեսներից մինչև նոր դարաշրջանի հեղինակների ստեղծագործությունները, ինչպես օրինակ՝ Մոլիերինը: 1711 թվականին պալատական թատրոնը տեղափոխվեց Պետերբուրգ: Օպերան սկսեց արագ զարգանալ Աննա Իոաննովնայի օրոք, որը սիրում էր արվեստի այս տեսակը: Կատարողներին հիմնականում արտասահմանից էին հրավիրում: Օրինակ, 1735 թվականին Ռուսաստան եկավ կոմպոզիտոր Ֆ. Արայի իտալական օպերային թատերախումբը:

Ճորտերի թատրոնը: XVIII դարի կեսերից և հատկապես XIX դարի սկզբին ծաղկում ապրեց ճորտերի թատրոնը: Նորամուծությունը կալվածատերերին խրախուսում էր իրենց ճորտերից թատերախմբեր ստեղծել: Մերձմոսկովյան Կուսկովո կալվածքում 1760-ական թվականներին ստեղծվեց եզակի թատրոն այն ժամանակվա ամենահարուստ ազնվականներից մեկի՝ կոմս Պ.Բ. Շերեմետևի կողմից. նրա գործը շարունակեց որդին՝ Ն.Պ. Շերեմետևը, որի ժամանակ թատրոնը տեղափոխվեց Օստանկինո: Կրտսեր Շերեմետևը խորապես խորասուզված էր թատերական կյանքի մեջ և նույնիսկ ամուսնացավ իր լավագույն ճորտ դերասանուհիներից մեկի՝ Պ.Ի. Ժեմչուգովայի հետ:

Քանի որ խոշոր հողատերերը հնարավորություն ունեին ընտրել տաղանդավոր երեխաներին, կրթել, գումարներ ծախսել ներկայացումներ բեմադրելու վրա, նրանք հաճախ ունենում էին բարձրորակ բեմադրություններ: Սակայն չնայած ռուսական մշակույթի մեջ ունեցած իր ներդրմանը՝ ճորտերի թատրոնը ծայրահեղ տգեղ երևույթ էր: Որպես դերասան ընտրված գյուղացի երեխաները դաստիարակվում էին բարձր մշակույթի ազդեցությամբ, բայց միևնույն ժամանակ մնում էին տերերի «կնքված սեփականություն»: Ճորտերի թատրոնի դերասանների ողբերգական ճակատագիրը արտացոլված է Ն.Ս. Լեսկովի «Վարսահարդարը» («Тупейный художник») պատմվածքում:

Կայսերական թատրոնը: Ազգային թատերական մշակույթի ձևավորման նոր փուլի խթան հանդիսացավ Յարոսլավլի վաճառական Ֆ.Գ. Վոլկովի գործունեությունը: Ժառանգություն ստանալով՝ նա նախընտրեց զբաղվել դերասանական ներկայացումներով և իր շուրջը հավաքեց մի խումբ խանդավառ մարդկանց, որոնք հրապարակային ներկայացումներ էին տալիս մի մեծ քարե մառանում: Հետագայում առանձին թատրոնի շենք կառուցեցին: Այս մասին իմացավ կայսրուհի Ելիզավետա Պետրովնան, և 1752 թվականին Վոլկովն ու նրա թատերախումբը հրավիրվեցին մայրաքաղաք: Այստեղ նրանք դասական դարաշրջանի ռուս մեծ դրամատուրգներից մեկի՝ Ա.Պ. Սումարոկովի մի քանի գործերից ներկայացրին: 1756 թվականին կայսրուհին հրամանագիր արձակեց՝ «Ողբերգություններ և կատակերգություններ ներկայացնելու ռուսական թատրոնի» բացման մասին, որն այժմ հայտնի է որպես Ալեքսանդրինսկու



Ֆ.Ի. Շալյապինը Իվան Սուսանինի դերում: Օպերա՝ «Կյանքը ցարի համար»: Մ. Գլինկա: Մեծ թատրոն: Մոսկվա: 1901

թատրոն: Նրա տնօրենը դարձավ Սումարոկովը: Այսպես սկսվեց ռուսական կայսերական թատրոնների պատմությունը:

Եկատերինա II-ի օրոք հիմնադրվեցին Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի Մեծ թատրոնները: 1824 թվականին Մոսկվայի թատրոնի դրամատիկական ներկայացումները տեղափոխվեցին հատուկ շենք: Ավելի ուշ, երբ 1825 թվականին բացվեց Մեծ թատրոնի նոր շենքը, դրամատիկական թատրոնը սկսեց կոչվել Փոքր թատրոն: 1820-1830-ական թվականներին գրվեցին պիեսներ, որոնք դարձան ռուսական մշակույթի ոսկե ֆոնդի մի մասը: Դրանք էին Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը» կատակերգությունը (1824), Պուշկինի «Բորիս Գոդունով» ողբերգությունը (1824–1830) և Գոգոլի «Ռևիզորը» կատակերգությունը (1835): Ցավոք, այս ընթացքում անտեղի խիստ գրաքննությունը մեծ վնաս հասցրեց ազգային թատրոնի զարգացմանը: Այդ պատճառով «Խելքից պատուհասը» պրոֆեսիոնալ բեմում հայտնվեց միայն 1831 թվականին: «Ռևիզորը» դրա ստեղծումից անմիջապես հետո բեմ բարձրացավ, բայց դա տեղի ունեցավ միայն Նիկոլայ I-ի անձնական միջամտության շնորհիվ, որը հավանում էր Գոգոլի աշխատանքը:

Ռուսական նվագախմբային երաժշտությունը որոշ չափով ավելի դանդաղ էր զարգանում, քան թատրոնը: XIX դարի սկզբին և՛ պալատում, և՛ մասնավոր սրահներում հիմնականում հնչում էին եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունները: Թեև ռուսական առաջին օպերաները հայտնվեցին XVIII դարում, շատ հետազոտողներ ռուսական ազգային երաժշտության ծնունդը կապում են Մ.Ի. Գլինկայի՝ 1836 թվականին Սանկտ Պետերբուրգի Մեծ թատրոնի բեմում ներկայացված «Կյանք ցարի համար» օպերայի հետ (մյուս վերնագիրը՝ «Իվան Սուսանին»): Քննադատ Վ.Վ. Ստասովը Գլինկային ռուսական երաժշտության մեջ համեմատում էր գրականության մեջ Պուշկինի հետ: Պակաս հայտնի չէր Գլինկայի նաև «Ռուսլան և Լյուդմիլա» օպերան:

Երաժշտության և թատրոնի զարգացման նոր միտումներ: XIX դարի երկրորդ կեսին հասարակության մեջ տեղի ունեցած փոփոխությունները չէին կարող չարտացոլվել թատրոնում: Երկրի կյանքի ժամանակակից խնդիրները ներկայացնող ստեղծագործությունների կարիք էր զգացվում: Դա դրդեց դրամատուրգներին ռեալիստական ուղղվածության գործեր ստեղծել: Վառ օրինակներից մեկը Ա.Ն. Օստրովսկու «Փոթորիկը» (1859) պիեսն էր, որը գրվել է 1850-ականների վերջին՝ սոցիալական վերելքի ժամանակ: Համատեղելով սոցիալական և հոգեբանական դրամայի առանձնահատկությունները՝ այն ողբերգական սրությամբ բարձրացնում է կնոջ դիրքի խնդիրը ընտանիքում և հասարակության մեջ: Ռեալիզմի պահանջը մնաց նաև հաջորդ տասնամյակներում:



Համերգ Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովի գործունեության 25-ամյակի առթիվ: 1890: Պաստառ

XIX դարի երկրորդ կեսին երաժշտության զարգացման մեջ կարևոր փուլ դարձավ Ռուսական երաժշտական ընկերության ստեղծումը (1859 թ.): Այս ձեռնարկման նախաձեռնողը կոմպոզիտոր Ա.Գ. Ռուբինշտեյնն էր, որին աջակցում էր կայսերական ընտանիքը: Հաջորդ տասնամյակների ընթացքում հաստատության մասնաճյուղեր բացվեցին նաև տարբեր քաղաքներում: Այն ոչ միայն հանրահռչակեց երաժշտությունը և համերգներ անցկացրեց, այլև խթան հանդիսացավ նոր ուսումնական հաստատություններ բացելու համար: 1862 թվականին իր աշխատանքը սկսեց Պետերբուրգի կոնսերվատորիան: Նրա առաջին շրջանավարտներից էր Պ.Ի. Չայկովսկին՝ ռուսական երաժշտական ռոմանտիզմի ամենավառ ներկայացուցիչը: Դասընթացն ավարտելուց հետո նա անմիջապես հրավիրվեց Մոսկվայի նորաբաց կոնսերվատորիա՝ դասավանդելու (1866): Չայկովսկին հայտնի դարձավ իր «Եվգենի Օնեգին», «Պիկովայա դամա» օպերաներով, «Կարապի լիճը», «Քնած գեղեցկուհին», «Շչելկունչիկ» բալետներով, սիմֆոնիկ և շատ այլ ստեղծագործություններով: Նա շարունակում է մնալ աշխարհի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից մեկը: Չայկովսկին միջազգային ճանաչման հասավ դեռ կենդանության օրոք: Նրա հաջողության գաղտնիքն այն էր, որ կոմպոզիտորը, որդեգրելով եվրոպական երաժշտության լավագույն նվաճումները, նրանց տվեց ռուսական երաժշտական մշակույթին յուրահատուկ ինքնատիպություն, որը դարերի պատմություն ունի:

Երաժշտության մեջ այլ ուղի փնտրեցին այն կոմպոզիտորները, որոնք միավորվել էին Սանկտ Պետերբուրգի ազատ երաժշտական դպրոցի շուրջ (ստեղծվել է կոմպոզիտոր Մ.Ա. Բալակիրևի կողմից 1862 թ.): Գլինկայի հետքերով նրանք փորձեցին ոգեշնչում գտնել ռուսական ժողովրդական ավանդույթներից և դրա շուրջ բազմաթիվ փորձեր արեցին: Նրանք հայտնի են Հզոր խմբակ անունով, որով նրանց կոչել էր Ստասովը: Այդ խմբակի մեջ էին Մ.Պ. Մուսորգսկին, Ն.Ա. Ռիմսկի-Կորսակովը և ուրիշներ: 1873 թվականին բեմադրվեց Ռիմսկի-Կորսակովի «Պսկովցի կինը» օպերան, իսկ 1874 թվականին՝ Մուսորգսկու «Բորիս Գոդունով» օպերան:

Գալիք արծաթե դարը ծնեց նոր տեսակի մասնավոր թատրոններ: Դրանցից մեկը Մոսկվայի գեղարվեստական թատրոնն էր (MXT), որը հիմնադրվել է 1898 թվականին Կ.Ս. Ստանիսլավսկու և Վ.Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի կողմից: Թատրոնի անձնակազմի քրտնաջան աշխատանքի արդյունքում ոչ միայն ստեղծվեցին փայլուն ներկայացումներ, այլև մշակվեց Ստանիսլավսկու՝ դերասանին կրթելու մեթոդը, որը դարձավ համաշխարհային կատարողական արվեստի զարգացման նոր փուլ: Մոսկվայի

գեղարվեստական թատրոնի հաջողությունը հնարավոր դարձավ բարերար Ս.Տ. Մոռոզովի մշտական ֆինանսավորման շնորհիվ: Արդեն XX դարի սկզբին Ս.Պ. Դյագիլևի գործունեության շնորհիվ Ռուսական երաժշտության և բալետի ժողովրդականությունը զգալիորեն աճեց Եվրոպայում (1908 թվականից նա Փարիզում կազմակերպում էր ռուսական տարեշրջաններ): Օրինակ՝ 1908 թվականին օտար հանդիսատեսը ծանոթացավ «Բորիս Գոդունով» օպերային: Բեմականացմանը մասնակցել էր նաև Ֆ.Ի. Շալյապինը, որի տաղանդավոր գործունեությունը մեծ ազդեցություն է ունեցել համաշխարհային օպերային արվեստի զարգացման վրա: Ռուսական գործիքային երաժշտության, օպերայի և բալետի բեմականացումները համաշխարհային երաժշտության բնագավառի նկատելի մասնաբաժինն են կազմում մինչև մեր օրերը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պատմե՛ք Ռուսաստանում նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթության համակարգի ձևավորման մասին: Ի՞նչ պետական պաշտոնյաներ և գիտնականներ են ներգրավված եղել գործընթացում:
2. Թվարկե՛ք ռուս գիտնականների ամենակարևոր հայտնագործությունները XVIII դարից մինչև XX դարի սկիզբը: Ինչպե՞ս կարող եք բացատրել XIX դարի գիտական հայտնագործությունների աճը հատկապես դարի երկրորդ կեսին, և ի՞նչ եք կարծում, դա ինչի՞ հանգեցրեց:
3. XVII–XX դարերի սկզբի ճարտարապետական ոճերից մեկի մասին զեկուցում կամ սահիկաշար պատրաստե՛ք:
4. Ե՞րբ առաջացավ Արվեստի ակադեմիան: Ի՞նչ դեր է խաղացել նա կերպարվեստի զարգացման գործում:
5. Ո՞րն է շարժական արվեստի ցուցահանդեսների ընկերակցության առաջացման պատմությունը: Նշե՛ք նրա ամենահայտնի ներկայացուցիչներին:
6. Ռուս նշանավոր նկարիչներից մեկի աշխատանքի մասին զեկուցում կամ սահիկաշար պատրաստե՛ք:
7. Ո՞րն էր եկեղեցասլավոնական լեզվի դերը XVII դարի մշակույթի մեջ: Ինչպե՞ս ձևավորվեց ժամանակակից ռուսաց լեզուն:
8. Տրեդիակովսկու և Լոմոնոսովի կողմից իրականացված բանաստեղծական արվեստի բարեփոխման իմաստը ո՞րն է:
9. Նշե՛ք ոսկեդարի գրողներին: Ձեր կարծիքով Ռուսաստանի բնակչության ո՞ր մասը կարող էր կարդալ նրանց ստեղծագործությունները:
10. Որո՞նք էին ճորտերի թատրոնների դրական և բացասական կողմերը:
11. Պատմե՛ք ռուսական երաժշտական մշակույթի զարգացման կարևորագույն իրադարձությունների մասին: Ո՞ր երաժշտական ստեղծագործություններին եք ծանոթ: Ինչու՞ են դրանք հիշարժան:
12. Ձեր կարծիքով XIX դարի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործընթացները մշակույթի զարգացման վրա ազդեցություն ունեցե՞լ են: Արտացոլվե՞լ են մշակույթում: Եթե այո, ապա ինչպե՞ս:

ԳԼՈՒԽ 13. 1917–1922 թթ. ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

§ 64. 1917 թվականի հեղափոխական ճգնաժամի պատճառները

Ռուսական Մեծ հեղափոխության հայեցակարգը: Խորհրդային շրջանի հայրենական պատմագրության համար ավանդական էր Փետրվարյան հեղափոխության իրադարձությունների, Հոկտեմբերյան հեղափոխության ու Քաղաքացիական պատերազմի ուսումնասիրությունը կատարել իրարից անջատ: Ժամանակակից պատմագիտության համաձայն՝ այս իրադարձությունների փոխկապակցումն այնքան խորն է, որ ավելի ճիշտ է այս երևույթները դիտարկել որպես մեկ պատմական գործընթացի տարբեր հայեցակետեր: Հետևաբար վերջին տարիներին առաջարկվեց և ընդունելություն գտավ 1917–1922 թվականների Ռուսական մեծ հեղափոխության հայեցակարգը:

Մինչև 1914 թ. ձևավորված խնդիրները: 1917 թվականի հեղափոխական իրադարձությունները ձևավորվեցին տարբեր գործոնների փոխազդեցության արդյունքում, որոնք պայմանավորված էին XX դարի սկզբում Ռուսական կայսրության զարգացման առանձնահատկություններով: Ռուսաստանը ագրարային երկիր էր, որտեղ բնակչության մոտ 80 %-ը աշխատում էր գյուղատնտեսության ոլորտում: Ուստի վարելահողերի բաշխման հարցը ներքին քաղաքականության առանցքային խնդիրներից էր: Դարասկզբին 100 միլիոն վարելահողերից մոտավորապես 90 միլիոնը բաշխված էր 20 միլիոն գյուղացիական տնային տնտեսությունների միջև, ևս 10 միլիոնը բաժին էր ընկնում 130 հազար հողատերերի կալվածքներին: Այս իրավիճակը չէր կարող գյուղում սոցիալական կոնֆլիկտ չառաջացնել: Հողի պակասից տառապող գյուղացիները երազում էին «սև վերաբաշխման» մասին, այն է՝ իրար մեջ բաժանել կալվածատերերի հողերը:

Գյուղատնտեսության ոլորտի գերակշռությունը չի նշանակում, թե արդյունաբերությունը բացակայում էր երկրում: Ընդ որում, արդյունաբերության զարգացման տեմպերի առումով Ռուսաստանը XX դարի առաջին տասնամյակում համաշխարհային առաջատար երկրների խմբում էր: Արդյունաբերական ընդհանուր արտադրանքով Ռուսական կայսրությունը դեռևս զգալիորեն զիջում էր Մեծ Բրիտանիային, Գերմանիային, ԱՄՆ-ին և Ֆրանսիային: Բայցևայնպես Ռուսաստանում նոր գործարաններ և ֆաբրիկաներ շատ ավելի հաճախ էին բացվում, քան առաջատար արդյունաբերական երկրներում, ուստի այդ բացը աստիճանաբար կրճատվեց: Արդյունաբերական բուռն առաջընթացը սոցիալական կարևոր հետևանքներ ունեցավ: Արդյունաբերական ձեռնարկությունների թվի ավելացումը նշանակում էր աշխատողների թվի ավելացում, իսկ հաշվի առնելով նրանց աշխատանքի անասելի ծանր պայմանները՝ նաև սոցիալական լարվածության աճ քաղաքներում:

Իրենց վիճակից դժգոհ էին ոչ միայն աղքատները, այլև բնակչության ունևոր խավերը: Մինչև 1905 թվականը Ռուսաստանը բացարձակ միապետություն էր, որտեղ գրեթե ողջ բնակչությունը, բացառությամբ պետական բարձրաստիճան բյուրոկրատիայի, կտրված էր քաղաքական որոշումներ կայացնելու հնարավորությունից: Եվ նույնիսկ Պետդումայի ստեղծումից հետո հասարակության դերը քաղաքական կյանքում սահմանափակ էր: Պատահական չէ, որ մտավորականության և բուրժուազիայի շրջանում հանրաճանաչություն ստացավ «պատասխանատու կաբինետի», այսինքն՝ Պետդումայի առջև կառավարության պատասխանատու լինելու կարգախոսը:

Ռազմական իրողություններով պայմանավորված խնդիրներ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուս հասարակության արդեն ծանոթ խնդիրները լրացվեցին պատերազմական հանգամանքներով պայմանավորված դժվարություններով: Զորահավաքի ժամանակ բանակ ուղարկվեցին զգալի թվով ժամկետային զինծառայողներ (հիմնականում՝ գյուղացիներ) և ձիեր: Արդյունքում գյուղատնտեսության ոլորտը կորցրեց իր աշխատուժի և քարշակային ուժի մի մասը: Այդ պատճառով պարենային ապրանքները սկսեցին թանկանալ: 1916 թ. որոշ մարզերում բնակչությանը պարենային ապրանքներով ապահովելու համար քարտային համակարգ ներդրվեց:

Պատերազմի սկզբին կտրուկ աճեց երկաթուղային տրանսպորտի արդյունավետությունը, ավելացավ ռազմական բեռների տեղափոխման ծավալը: Բացի այդ, անհրաժեշտություն առաջացավ ավելացնելու այն փոխադրամիջոցները, որոնք առաջին հայացքից անմիջականորեն կապված չէին ռազմական գործողությունների հետ:



Երկրի ավերված ծայրամասերի համար միջոցների հավաքագրում: 1915 թ.

Օրինակ, մինչ պատերազմը Սանկտ Պետերբուրգում հիմնականում օգտագործվում էր Մեծ Բրիտանիայից ծովով բերված քարածուխ: Սակայն այն բանից հետո, երբ Բալթյան երկրները դարձան ռազմական գործողությունների ասպարեզ, անհրաժեշտ էր մայրաքաղաքի համար ածխի մատակարարումները ապահովել Դոնեցկից:

Տրանսպորտային դժվարությունների պատճառով սովորական դարձան մատակարարումների խափանումները հացահատիկի պաշարներ ունեցող գավառներից դեպի հացահատիկի պակաս ունեցող շրջաններ:



Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեոդրովնան և գթության քույրեր Մեծ դքսուհիներ Օլգան և Տատյանան: 1915 թ.

XX դարի սկզբին Եվրոպական պետությունների ղեկավարները ենթադրում էին, որ սպասվելիք պատերազմը կարճատև է լինելու: Այս տրամաբանությամբ տնտեսության՝ ռազմականապես պատրաստի վիճակում պահելը ավելորդ էր թվում. հաղթանակը ձեռք կբերվեր այն զենքի ու զինատեսակների միջոցով, որոնք ռազմական գործողությունների սկզբում պահեստներում կային: Այս տեսակետին է եղել նաև Ռուսաստանի ղեկավարությունը: Ինչպես ցույց տվեց պրակտիկան, այս ենթադրությունները սխալ դուրս եկան: 1914-ի վերջին ակնհայտ էր, որ նախապատերազմական պաշարները սպառվում էին նախատեսվածից շատ ավելի արագ, և ռազմական գործողությունների ավարտը նույնիսկ միջնաժամկետ հեռանկարում չէր երևում:

Ուստի պատերազմում ներգրավված պետությունները հապճեպորեն արդյունաբերությունը տեղափոխեցին ռազմական ռելսերի վրա: Եվ քանի որ Ռուսաստանը արտադրության ծավալներով զիջում էր եվրոպական առաջատար երկրներին, նրա համար հատկապես դժվար էր արդյունաբերության ոլորտի նման վերակազմավորումը: Մեքենաշինության և մետաղագործության զգալի մասի վերակազմավորումը ռազմական պատվերների կատարման նպատակով հանգեցրեց նրան, որ «քաղաքացիական» արդյունաբերությունը սկսեց մատակարարվել մնացորդային հիմունքներով: Ըստ էության, սկսվեց տնտեսության հիմնական ճյուղերի փլուզման գործընթացը: Տրանսպորտային ճգնաժամը մեծացրեց սննդի պակասը, իսկ վագոնների կառուցման գործարանների վերակազմավորումը ռազմական արտադրության նպատակով շարժակազմի պակաս առաջացրեց: Այսպիսով, 1917-ի սկզբին Ռուսաստանում առաջացավ բարդ տնտեսական ճգնաժամ, որի ժամանակ արդյունաբերության առանձին ճյուղերին բնորոշ դժվարությունները միահյուսվեցին իրար:

Տնտեսական անախորժություններն ունեին նաև իրենց սոցիալ-քաղաքական արտապատկերը: Եթե 1914 թվականին Ռուսաստանում հայրենասիրական զգացումների վերելք էր նկատվում, ապա 1917 թվականի սկզբին երկրի բնակչության մեծ մասն արդեն հոգնել էր պատերազմից: Ավելի ու ավելի հաճախ էր հնչում այն հարցը, թե կոնկրետ ինչի՞ համար ենք մենք պայքարում: Ձախողումները տնտեսության մեջ և պարտությունները ռազմաճակատում ընդդիմադիր քաղաքական ուժերին գլուխ բարձրացնելու հնարավորություն տվեցին: Հիմնվելով ցարական վարչակազմի

ակնհայտ անարդյունավետ կառավարման վրա՝ դումայի պատգամավորները նորից ու նորից պահանջում էին ստեղծել «պատասխանատու կաբինետ»: Կառավարության և Պետդումայի միջև լարվածությունն աճում էր օրեցօր: Միաժամանակ միապետության հեղինակությունը բնակչության լայն շերտերում գնալով նվազում էր: Ժողովրդի մեջ անհեթեթ լուրեր սկսեցին պտտվել այն մասին, որ իբր «մեր թագուհին գերմանացի է և գերմանական կայսրին հեռախոսով թաքուն պատմում է բոլոր գաղտնիքները», լուրեր ցարի ենթադրյալ հարբեցողության և Ռասպուտինի հետ թագուհու մտերմության մասին... Այս բոլոր խոսակցությունները հերյուրանք էին, բայց ցույց տվեցին բնակչության հիասթափության աստիճանը միապետից ու միապետությունից:

1917 թվականին բանակի սպայական կորպուսում տեղի ունեցան կարևոր փոփոխություններ: Թագավորական գահին անվերապահ հավատարմության ոգով դաստիարակված սպաների մեծ մասը զոհվել էր մարտերի ժամանակ: Միաժամանակ կտրուկ ավելացել էր բանակի զորաքանակը: Այսպիսով, այժմ և՛ սպայական թափուր աշխատատեղերը նորաստեղծ գնդերում և ստորաբաժանումներում, և՛ «հին» ստորաբաժանումներում հրամանատարների կորուստները համալրվել էին երեկվա իրավաբանների, լրագրողների, ուսանողների կողմից և այլն: 1917 թվականին սպայական կորպուսի 95 %-ը կազմված էր պատերազմի ժամանակ հմտացած սպաներից, որոնք գահի պաշտպանությունը չէին համարում իրենց պատասխանատվությունը: Այսպիսով, մինչև 1917 թվականը Ռուսաստանը գտնվում էր բարդ տնտեսական, սոցիալական և քաղաքական ճգնաժամի մեջ, որի ընթացքում պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները է՛լ ավելի սրեցին դեռ XX դարի սկզբին զարգացած հակամարտությունները:

§ 65. Միապետության անկումը

Միապետության վերջին ամիսը: 1917 թվականի փետրվարի սկզբին մեծածավալ ձյան հոսքերի պատճառով երկաթուղու աշխատանքը խաթարվեց, ինչը Պետրոգրադում հացի պակաս առաջացրեց: Քաղաքով մեկ մթերային քարտերի ներդրման մասին խուճապային լուրեր սկսեցին տարածվել, իսկ հացի խանութների մոտ հսկայական հերթեր գոյացան: Այս ամենը դարձավ գործադուլների ու փողոցային անկարգությունների կտրուկ աճի պատճառ: Այնուամենայնիվ կառավարությունը համոզեց Նիկոլայ II-ին, որ դրանք իրողություններ են, որոնք արժանի չեն հատուկ ուշադրության, և կայսրը մեկնեց Մոգիլևում գտնվող գերագույն հրամանատարության շտաբ: Սակայն փետրվարի 23-ին գործադուլներն ու ցույցերը տարածվեցին ողջ քաղաքում, իսկ ոստիկանները, որոնք փորձում էին վերջ դնել անկարգություններին, պարզապես ծեծի ենթարկվեցին: Փետրվարի 24-ին կառավարությունը, գիտակցելով, որ լուրջ անկարգություններ են տեղի ունենում, ցուցարարներին ցրելու համար զորք ուղարկեց: Սակայն բոլոր ստորաբաժանումները նախ հրաժարվեցին կրակել ցուցարարների վրա, իսկ հետո անցան նրանց կողմը: Մի քանի օրվա ընթացքում ցուցարարների



Ապստամբած զորքեր։ Պետրոգրադ։ 1917թ., փետրվար

կարգախոսները զուտ տնտեսականից («Հաց») անցան քաղաքականի («Կորչի՛ պատերազմը», «Կորչի՛ միապետությունը»)։ Փետրվարի 26-ի օրվա երկրորդ կեսին կառավարությունը փորձեց քաղաքում ռազմական դրություն մտցնել, սակայն այս միջոցը նույնպես անհաջող էր։ 1917 թվականի փետրվարի 27-ին կայազորի ստորաբաժանումները սկսեցին զանգվածաբար անցնել ցուցարարների կողմը։ Քաղաքում 24 ժամվա ընթացքում զուգահեռաբար և միմյանցից անկախ ձևավորվեցին քաղաքական երկու կենտրոններ։ Պետդումայի անդամները՝ կադետները, օկտոբրիստները և առաջադիմականները, ստեղծեցին Պետդումայի ժամանակավոր կոմիտե։ Իսկ փողոցային ցույցերի առաջնորդները ստեղծեցին Պետրոգրադի աշխատավորների և զինվորների պատգամավորների խորհրդի ժամանակավոր գործադիր կոմիտե (Պետրոգրադի խորհուրդ)։ Այս մարմնում գերակշռում էին ձախ քաղաքական գործիչները՝ սոցիալիստ հեղափոխականները, մենշևիկները, աշխատավորները և այլն։



Կրծքաշան «Վոլին» գնդի զինվորների համար, որոնք առաջինն էին, որ անցան ապստամբների կողմը։

Միևնույն ժամանակ կառավարությունը շտապ հեռագիր ուղարկեց կայսրին, որտեղ միապետին խորհուրդ էր տրվում «պատասխանատու կաբինետ» նշանակել։ Փաստորեն կառավարությունը հայտարարեց, որ նման պայմաններում չի կարող կառավարել երկիրը։

Ճգնաժամից ելք գտնելու փնտրտուքը: Պետք է նշել տեղի ունեցած պետական հեղաշրջման ամենակարևոր առանձնահատկությունները՝ հանկարծակիությունը ու ինքնաբուխությունը, կառավարության կողմից



Պետրոգրադի հեղափոխական պահակազորը Փետրվարյան հեղափոխության օրերին: Լուսանկարիչ՝ Յա.Վ. Շթայնբերգ

ձեռնարկվող միջոցառումների մշտական ձգձգումները և դրանց ցածր արդյունավետությունը, ինչի հետևանքով դրանք կորցնում էին իրադարձությունների վրա իրենց ազդեցությունը, զինվորների անցումը ցուցարարների կողմը, շտապ զորակոչը և քաղաքական խմբակների ձևավորումը: Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ փետրվարյան իրադարձությունները ոչ թե ինչ-որ կուլիսային դավադրության կամ «էլիտար դավադրության» արդյունք էին, այլ դարասկզբից ռուսական հասարակության խորքերում ուժգնացող և հասունացող երկարաժամկետ գործընթացների եզրափակիչ փուլը:

Սկզբում Պետդումայի ժամանակավոր կոմիտեի ղեկավարները կատարվածն ավելի շատ դիտարկում էին որպես պալատական հեղաշրջում: Իսկ այն բանից հետո, երբ երկրի գրեթե ողջ ռազմական ղեկավարությունը հրաժարվեց աջակցել կայսրին, 1917 թվականի մարտի 2-ին նրանց հաջողվեց համոզել Նիկոլայ II-ին հրաժարվել գահից: Ենթադրվում էր, որ կայսեր եղբոր՝ Մեծ իշխան Միխայիլի գահ բարձրանալը թույլ կտա հաղթահարել քաղաքական ճգնաժամը, բայց այդ ծրագիրը ձախողվեց: Հետո նոր հայեցակարգ առաջ քաշվեց. Ռուսաստանի հետագա ճակատագրի մասին որոշումը պետք է կայացնի Հիմնադիր խորհրդարանը: Իսկ մինչ դրա ձևավորումը Պետդումայի ժամանակավոր կոմիտեն ստեղծեց Ժամանակավոր կառավարություն, որը գլխավորում էր արքայազն Գ.Ե. Լվովը: Ավարտվեց միապետական կառավարման շրջանը, Ռուսաստանը թևակոխեց զարգացման նոր շրջափուլ:

§ 66. Ռուսաստանը փետրվարից մինչև հոկտեմբեր

Ներքաղաքական իրավիճակի առանձնահատկությունները 1917 թվականի գարնանը և աշնանը: Ժամանակավոր կառավարությունը իր գործունեության մեջ

պետք է հաշվի առներ Պետրոգրադի խորհրդի առկայությունը: Այս մարմինը հսկայական ազդեցություն ուներ, քանի որ դա ձախ քաղաքական գործիչների կամքի արտահայտությունն էր: Իսկ քանի որ հենց ձախ տրամադրություններն էին գնալով մեծանում ժողովրդի լայն զանգվածների շրջանում, ակնհայտ էր, որ անհնար էր անտեսել Խորհրդի և նրա ղեկավարների կարծիքը:

Արդեն մարտի 1-ին Պետրոգրադի խորհուրդը արձակեց թիվ 1 հրամանը, որը կայազորի զինվորներին և սպաներին քաղաքացիական իրավունքների առումով հավասարեցրեց և արմատապես նվազեցրեց սպայական կորպուսի լիազորությունները՝ զինվորներին կարգապահական տույժերի ենթարկելու մասով: Այն փաստը, որ այս հրամանն ընդունվեց գործող բանակում, ցույց է տալիս, որ արդեն այդ պահին Պետրոգրադի խորհուրդը համառուսական նշանակության անկախ քաղաքական կենտրոն էր: Առանց Պետրոգրադի խորհրդի հետ ինչ-որ համաձայնության հասնելու՝ Ժամանակավոր կառավարությունը չէր կարողանում կառավարել երկիրը: Ընդ որում, խորհրդի ղեկավարները առճակատման գնալու տրամադրվածություն չունեին: Նրանք ելնում էին նրանից, որ Ռուսաստանում տեղի ունեցած բուրժուադեմոկրատական հեղափոխությունը առավելագույնն էր, որի վրա սոցիալիստները կարող էին հույս դնել ստեղծված իրավիճակում: Այսպիսով, քանի որ սոցիալիստական հեղափոխության սոցիալական հիմքը (մարքսիզմի տեսակետից) պրոլետարիատն էր, և բանվորները Ռուսաստանում XX դարի սկզբին գյուղացիական զանգվածների համեմատ աննշան փոքրամասնություն էին կազմում, Պետրոգրադի խորհրդի գործադիր կոմիտեում սոցիալիստական հեղափոխությունը դիտարկում էր ապագայի հեռանկար: Կարճաժամկետ հեռանկարում նախատեսվում էր աջակցել Ժամանակավոր կառավարությանը՝ միաժամանակ ճնշում գործադրելով նրա վրա, որպեսզի թույլ չտրվի ընտրված ուղղությունը հետ մղել դեպի սոսկ ժողովրդավարական բարեփոխումներ:



Պետրոգրադի աշխատավորների և զինվորների պատգամավորների խորհրդի զինվորական բաժանմունքի նիստը: 1917 թ.

Արդյունքում ստեղծվել էր մի իրավիճակ, երբ երկրի օպերատիվ կառավարման գործառույթներն իրականացնում էր Ժամանակավոր կառավարությունը, իսկ Խորհուրդը քաղաքական «ճնշում» էր գործադրում նրա վրա: Այս մոդելը կիրառվում էր նաև մարզային մակարդակով: Գրեթե բոլոր նահանգներում Ժամանակավոր կառավարությանը ենթակա պետական կառույցների կողքին առաջացան տեղական խորհուրդներ, որոնց կողմնորոշումը ուղղված էր Պետրոգրադի խորհրդին: Ժամանակավոր կառավարության ղեկավարները դեմ չէին բարեփոխումներ անցկացնել, որոնք տեղավորվում են լիբերալ հասարակության մինչհեղափոխական առաջարկների շրջանակում: Այսպիսով, որոշակի փուլում Ժամանակավոր կառավարությունն ու Պետրոգրադի խորհուրդը փոխըմբռնում հաստատեցին: Այս համաձայնության շրջանակներում Ռուսաստանում քաղբանտարկյալների համաներում հայտարարվեց, վերացան դասակարգային արտոնությունները, կրոնական ու ազգային տարբեր սահմանափակումները, երաշխավորվեց խոսքի, մամուլի, հավաքների ազատությունը: Այս քաղաքականությանը համահունչ՝ ո՛չ Ժամանակավոր կառավարությունը, ո՛չ Պետրոգրադի խորհրդի ղեկավարները դեմ չէին պատրիարքի ընտրությանը և եկեղեցու նկատմամբ պետական վերահսկողության վերացմանը: Որոշվեց Հիմնադիր խորհրդարանի ընտրություններն անցկացնել համընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա: Այնուամենայնիվ հետզհետե Ժամանակավոր կառավարության և Պետրոգրադի խորհրդի տեսակետները սկսեցին տարբերվել: Լիբերալ բուրժուական քաղաքական գործիչների համար, որոնք գերակշռում էին Ժամանակավոր կառավարությունում, անվիճելի էր թվում «դաշնակցային պարտքը կատարելու» և «պատերազմը մինչև հաղթական ավարտը շարունակելու» անհրաժեշտությունը: Մինչդեռ Ռուսաստանի բնակիչների մեծ մասը հոգնել էր դժվարություններից, նրանք անկեղծորեն չէին հասկանում, թե ինչի համար են պատերազմում և ամեն կերպ պաշտպանում էին դրա շուտափույթ ավարտի տեսակետը:

Միապետության տապալումից հետո տնտեսական անախորժությունները ոչ միայն չվերացան, այլև մեծ մասամբ վատթարացան: Հողային հարցի լուծումը և 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու մասին օրենքի քննարկումը հետաձգվեց մինչև Հիմնադիր խորհրդարանի գումարումը: Գների աճը, սննդամթերքի և վառելիքի մատակարարման խափանումները, անվերջ հերթերը և մարդկանց կենսամակարդակի ընդհանուր անկումը հանգեցրին խոր հիասթափության: Եվ քանի որ երկիրը պաշտոնապես կառավարվում էր Ժամանակավոր կառավարության կողմից, գնալով ավելի շատ պահանջներ էին ներկայացվում «ժամանակավորներին»: Միևնույն ժամանակ անզուսպ և ինքնաբուխ «ժողովրդավարացումը» գործնականում հանգեցրեց անարխիայի, հանցավոր իրավիճակի սրման և ամբողջ երկրի կառավարման մակարդակի կտրուկ անկման: Արդյունքում ոչ միայն սոցիալիստներն ու հասարակության ցածր խավերն էին հիասթափված կառավարությունից, այլև բնակչության ունևոր խավերը: «Ժամանակավորի» սոցիալական բազան սկսեց արագորեն կրճատվել:


Բոլշևիկները գալիս են իշխանության: Ժամանակավոր կառավարությունից մարդկանց հիասթափությունը մեծանալուն զուգընթաց բոլշևիկների ազդեցությունը

սկսեց աճել: Փետրվարյան իրադարձություններում նրանք էական դեր չէին խաղացել: Կուսակցությունն այն ժամանակ սակավաթիվ էր, և նրա ղեկավարներից շատերը կա՛մ աքսորում էին, կա՛մ բանտում: Ըստ այդմ, փոքր էր նաև բոլշևիկների ներկայացուցչությունը Պետրոգրադի խորհրդում: 1917 թվականի մարտին բոլշևիկների վերաբերմունքը «ժամանակավորների» նկատմամբ քիչ էր տարբերվում սոցիալիստական մյուս կուսակցությունների ներկայացուցիչների տեսակետներից:

Իրավիճակը կտրուկ փոխվեց ապրիլին, երբ բոլշևիկների առաջնորդ Վ. Ի. Լենինը աքսորից վերադարձավ Ռուսաստան: Նա առաջ քաշեց «Ամբողջ իշխանությունը՝ սովետներին», «Ո՛չ մի աջակցություն ժամանակավոր կառավարությանը» կարգախոսները և հայտարարեց սոցիալիստական հեղափոխություն իրականացնելու հնարավորության մասին ոչ թե հեռավոր, այլ մոտ ապագայում: Երկար ժամանակ պահանջվեց, որպեսզի այս մոտեցումը ազդեցություն ձեռք բերեր բոլշևիկյան լայն շրջանակների մեջ, բայց աստիճանաբար Լենինին հաջողվեց համոզել կուսակիցներին իր իրավացիության մեջ: Նրա ռազմավարությունը հանգում էր հետևյալին. տնտեսական իրավիճակը երկրում արագ տեմպերով վատանում է, կարիքի ու զրկանքների աճի ֆոնին զանգվածներն ավելի ու ավելի արմատական են տրամադրվելու, ուստի ամենաշահեկան դիրքերում կլինի այն քաղաքական ուժը, որը կարող է «սանձել» սոցիալ-քաղաքական ճգնաժամի այդ ալիքը: Սա նշանակում էր, որ հարկավոր է հեռանալ «ժամանակավորից» և ուժեղացնել սեփական ազդեցությունը խորհուրդներում: Բոլշևիկների առաջնորդի հաշվարկներն արդարացան: 1917 թվականի գարնանը և ամռանը Ժամանակավոր կառավարությունը մի շարք ճգնաժամեր ապրեց: Չկարողանալով ձախի և աջի միջև կենտրոնամետ գիծ գտնել՝ «ժամանակավորները» գնացին սոցիալիստական կուսակցությունների հետ մերձեցման: Մայիսին կառավարության կազմի մեջ ընդգրկվեցին մի քանի սոցիալիստ նախարարներ, իսկ հուլիսին էսեռ (սոցիալիստ հեղափոխական) Ա. Ֆ. Կերենսկին նշանակվեց վարչապետի (նախարար-նախագահ) պաշտոնում:



Ա.Ֆ. Կերենսկի



Վ.Ի. Լենին

Ժամանակավոր կառավարության աստիճանաբար «ձախ տեղաշարժի» պատճառով աջ ազատական իդեալներին ուղղված սոցիալական շերտերը լիովին հիասթափվեցին դրանից: Նրանք հույսները դրեցին Գերագույն գլխավոր հրամանատար, գեներալ Լ.Գ. Կոռնիլովի վրա, որին աջակցում էր սպայական կազմի մի մասը: Բայց 1917 թվականի օգոստոսի վերջին Կոռնիլովի հարձակումը ճնշվեց, և այդ իրադարձությունների արդյունքում մեծացավ բոլշևիկների ազդեցությունը:

1917 թվականի աշնանը Լենինի կողմնակիցները գրեթե լիակատար վերահսկողություն հաստատեցին խորհուրդների վրա, որոնք աստիճանաբար ձևավորեցին իշխանությանը զուգահեռ մի համակարգ, որը գլխավորում էր Խորհուրդների համառուսաստանյան կոնգրեսը: Խորհուրդների երկրորդ համագումարի բացումը նախատեսված էր 1917 թ. հոկտեմբերի 25-ին: Այդ օրը բոլշևիկները ձերբակալեցին Ժամանակավոր կառավարությանը՝ դրանով իսկ Խորհուրդների համառուսաստանյան կոնգրեսը կանգնեցնելով իշխանության զավթման փաստի առաջ: Վ.Ի. Լենինը հայտարարեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակի մասին, իսկ Կոնգրեսի պատվիրակների մեծամասնությունը հավանություն տվեց տեղի ունեցած փոփոխություններին: Որպես նոր Ժամանակավոր կառավարություն՝ մինչ Հիմնադիր ժողովի գումարումը Խորհուրդների համագումարը ստեղծեց Ժողովրդական կոմիսարների խորհուրդը (Սովնարկոմ), որի նախագահը դարձավ Լենինը:

Ռուսաստանի տարածաշրջանների ճնշող մեծամասնությունը ընդունեց քաղաքական ոլորտում տեղի ունեցած փոփոխությունները: Գրեթե ամենուր խորհուրդների դեմ ուղղված ուժերի զինված դիմադրությունը (որտեղ այն ընդհանրապես տեղի ունեցավ) ճնշվեց մի քանի օրվա ընթացքում (Մոսկվայում փողոցային կռիվները տևեցին մոտ 10 օր): Պատահական չէ, որ խորհրդային պատմագրությունը, վկայակոչելով Լենինին, 1917-ի վերջը և 1918-ի սկիզբն անվանեց խորհրդային իշխանության հաղթարշավի շրջան: 1918 թվականի հունվարին վերջնականապես գումարվեց Հիմնադիր ժողովը: Սակայն այն բանից հետո, երբ նա հրաժարվեց ճանաչել խորհրդային իշխանությունը և հաստատել Խորհուրդների համագումարի հրամանագրերը, բոլշևիկները ցրեցին այն: Ժողովրդական կոմիսարների խորհուրդը կորցրեց ժամանակավոր կառավարության կարգավիճակը՝ դառնալով պետական կառավարման մշտական մարմին:

§ 67. Քաղաքացիական պատերազմը

«Էշելոնային» մարտերի ժամանակաշրջանը: Ավանդաբար համարվում է, որ Քաղաքացիական պատերազմի սկիզբը 1918 թվականի գարունն է, երբ այն ձեռք բերեց լայնածավալ ռազմական բախման բնույթ՝ տասնյակ և հարյուր հազարավոր մարդկանց մասնակցությամբ: Սակայն առաջին բախումները սկսվել էին դրանից շատ առաջ: Ուստի պետք է նշել, որ Քաղաքացիական պատերազմի վաղ փուլը սկսվել էր դեռ 1917-1918 թթ. ձմռանը և տևել մինչև 1918 թվականի ապրիլը: Այս փուլում մարտերին մասնակցում էին փոքրաթիվ կամավորական ջոկատներ: Նման կազմավորումները

կրում էին «բրիգադներ» և «դիվիզիաներ» բարձր անունները, թեև դրանց անդամները հեշտությամբ կարող էին տեղավորվել մի քանի էշելոնների մեջ, ինչը թույլ էր տալիս արագ մանևրումներ կատարել երկաթուղով և այս ժամանակաշրջանի գործողություններին տալիս էր տարածքային լայն շրջանակ: Ահա թե ինչու Քաղաքացիական պատերազմի այս շրջանը կոչվում է «էշելոնային»:

«Խորհրդային իշխանության հաղթական երթը», բացառությամբ մի քանի շրջանների, ընդգրկեց գրեթե ողջ Ռուսաստանը: Կովկասյան լեռնաշղթայից հարավ գտնվող տարածքները վերահսկվում էին Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից, որը հրաժարվում էր ճանաչել Ժողովրդական կոմիսարների խորհրդի իշխանությունը: 1918 թվականի գարնանը այս շրջանում ստեղծվեց Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնային Հանրապետությունը, որը շուտով կազմալուծվեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի:

Կիևում ստեղծված Կենտրոնական Ռադան, որը հանդես էր գալիս անկախ ուկրաինական պետության ստեղծման օգտին, ևս չճանաչեց խորհրդային իշխանությունը: Բոլշևիկներին հակադրվեցին Դոնի և Օրենբուրգի կազակները: Նրանք պահանջում էին պահպանել իրենց դասակարգային արտոնությունները՝ առաջին հերթին հողի հետ կապված: Դոնի մոտ սկսվեց կազմավորվել Կամավորական բանակ՝ գեներալներ Լ.Գ. Կորնիլովի և Մ.Վ. Ալեքսեևի գլխավորությամբ, որոնք հայտարարեցին օրինականության վերականգնման և «բոլշևիկ ուզուրպատորներին գահընկեց անելու» մասին: 1918 թվականի հունվարին Ժողովրդական կոմիսարների խորհուրդի կողմից սկսեց ձևավորվել Աշխատավոր-գյուղացիական կարմիր բանակը (ՐԿԿԱ): Առաջին հայացքից խորհրդային զորքերի հարձակումը արագ հաջողություններ գրանցեց: Կարմիր բանակի զորքերը մտան Կիև, Նովոչերկասկ և Օրենբուրգը: Բայց հակախորհրդային ուժերի պարտությունը միայն մասնակի էր: Կորնիլովի կամավորները լարված հարաբերությունների մեջ էին Դոնի կազակների հետ: Եվ այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ կազակների մեծ մասը չի ցանկանում պաշտպանել Նովոչերկասկը, Կորնիլովը 1918 թվականի փետրվարին մեկնեց այսպես կոչված «Սառցե արշավի» դեպի Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար): Արշավն ավարտվեց անհաջողությամբ, իսկ Կորնիլովը զոհվեց գրոհի ժամանակ: Սակայն գեներալ Ա.Ի. Դենիկինը, որը ղեկավարում էր կամավորներին, պահպանեց բանակի ողնաշարը և համախմբեց Դոնի կազակների նոսրացած ստորաբաժանումները երկաթգծի կայարաններում: Ուրալում կազակները չկարողացան պահել Օրենբուրգը, սակայն պահպանելով իրենց հիմնական ուժերը՝ նահանջեցին դեպի Տուրգայի տափաստան՝ ձմեռելու (տես Հավելվածը, քարտեզ թիվ 14):



Լ.Գ.Կորնիլովը կամավորական բանակի սպաների թվում: Նովոչերկասկ: 1917 թվականի դեկտեմբեր

Այդ ընթացքում Ռուսաստանը դեռ պաշտոնապես պատերազմում էր Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ: Ռուս-գերմանական բանակցությունները լարված էին ընթանում և ոչ մի բանի չհանգեցրին: Փետրվարի 18-ին գերմանական և ավստրիական զորքերը հարձակում սկսեցին ռազմաճակատի ողջ երկայնքով՝ Ռիգայից մինչև Իզմայիլ: Կարմիր բանակի ջոկատները չէին կարողանում դիմակայել գերմանական զորքերին: Այս իրավիճակում 1918 թվականի մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանը ստիպված եղավ կնքել Բրեստի հաշտության՝ իր համար անբարենպաստ պայմանագիրը: Ըստ որի՝ Ռուսաստանը հրաժարվեց Բալթյան երկրներից, Ուկրաինայից և Բելառուսից: Այսպիսով, Քաղաքացիական պատերազմի «էշելոնային» շրջանի հիմնական արդյունքը բոլշևիկների իշխանության պահպանումն էր և հակահեղափոխության առաջին օջախների մարտավարական պարտությունը (տե՛ս Հավելվածը, քարտեզ թիվ 15):

Քաղաքացիական պատերազմի հիմնական ճակատների ձևավորումը: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ցարական կառավարությունը սկսեց զորամասեր կազմավորել չեխական և սլովակական ծագում ունեցող ավստրո-հունգարական բանակի գերի ընկած զինվորներից, որոնք երազում էին ստեղծել սեփական պետությունը: 1917 թվականի աշնանը ստեղծվեց Չեխոսլովակիայի կորպուսը, որը պետք է օգտագործվեր ռազմաճակատում: Պատերազմից Ռուսաստանի դուրս գալուց հետո ռուսական կորպուսի հրամանատարությունը պահանջեց, որ այն ուղարկվի Եվրոպա՝ Անգլիայի և Ֆրանսիայի կողմից Գերմանիայի դեմ ռազմական գործողություններին հետագա մասնակցության համար: 1918 թվականի գարնանը կորպուսի ստորաբաժանումները երկաթուղով փոխադրվեցին մինչև Վլադիվոստոկ. էշելոնները ձգվում էին Վոլգայից մինչև Խաղաղ օվկիանոս: Պատմաբանները դեռևս վիճում են, թե ինչով էր պայմանավորված կորպուսի հրամանատարության հակախորհրդային դիրքորոշումը: Ըստ երևույթին կային մի շարք պատճառներ, բայց առաջիններից մեկը Չեխոսլովակիայի ստորաբաժանումները զինաթափելու մասին խորհրդային ղեկավարության որոշումն էր: 1918 թվականի մայիսին կորպուսը ապստամբեց: Խորհրդային իշխանությունը Վոլգայի մարզում, Ուրալում և Սիբիրում տապալվեց: Տեղական հակախորհրդային ուժերը միացան Չեխոսլովակիայի կորպուսին:



Ռազմական և ռազմածովային հարցերի ժողովրդական կոմիսար Լ.Դ. Տրոցկին Կարմիր բանակի զինվորների շարքում: Տրոցկու հետևում կանգնած է դիվիզիոնի հրամանատար Վ.Ի. Չապաևը: 1918 թ.

Ուրալյան կազակները գեներալ Ա.Ի. Դուտովի հրամանատարությամբ նորից գրավեցին Օրենբուրգը: Սամարայում Հիմնադիր ժողովի մի քանի անդամներ սոցիալ-հեղափոխականներից ստեղծեցին կառավարություն, որը կոչվում էր Հիմնադիր ժողովի անդամների կոմիտե (Կոմուչ): Կոմուչը պնդում էր, թե ստանձնել է համառուսաստանյան օրինական իշխանության դերը,

բայց իրականում նա վերահսկում էր միայն Միջին Վոլգայի շրջանը և Ուրալի մի մասը: 1918 թվականի ամռանը Կոմուչի ժողովրդական բանակը և չեխոսլովակները հարձակում սկսեցին Վոլգայի մոտ և գրավեցին Սիմբիրսկը: Նրանց հաջողությունների գագաթնակետը Կազանի գրավումն էր: Խորհրդային իշխանության կողմից վերահսկվող տարածքում գործում էր էսեռների ընդհատակյա խմբակը, որը գործադրում էր իր սովորական մարտավարությունը՝ տեռոր, հակակառավարական ագիտացիա, գործադուլների կազմակերպում: 1918-ի ամռանը Հայրենիքի և ազատության պաշտպանության միությունը (Կամավորական բանակի հրամանատարության անունից ստեղծված ընդհատակյա կազմակերպություն) ապստամբություններ կազմակերպեց Յարոսլավլում, Ռիբինսկում և Մուրոմում: Այս բողոքի ցույցերը ճնշվեցին, բայց դրանց պատճառով բոլշևիկները ստիպված եղան հետաձգել դեպի Վոլգայի շրջան ուժեր ուղարկելը:

1918 թվականի գարնանն ու ամռանը Ռուսաստանի՝ Առաջին համաշխարհային պատերազմի նախկին դաշնակիցների կողմից հարձակում սկսվեց: Բրիտանական զորքերը վայրէջք կատարեցին Մուրմանսկի և Արխանգելսկի տարածքում, որոնց շուտով միացան նաև այլ երկրների ստորաբաժանումներ: Հարձակվող զորքերի հովանու ներքո ստեղծվեց Հյուսիսային շրջանի Գերագույն վարչությունը, որը սկսեց Հյուսիսային բանակի կազմավորումը: 1918 թ. ամառվա վերջից մինչև աշնան սկիզբը օտարերկրյա հարձակումը տարածվեց նաև Սև ծովի ափերին, Անդրկովկասում և Հեռավոր Արևելքում: Սակայն հարձակվող զորքերը խուսափեցին Կարմիր բանակի ստորաբաժանումների հետ ուղիղ մարտերից՝ նախընտրելով նպաստել հակախորհրդային տարբեր կառավարությունների և տեղի բնակչության զորքերի ձևավորմանը: 1919 թվականի մարտին Մոսկվայում ստեղծվեց Կոմունիստական ինտերնացիոնալը (Կոմինտերնը), որի նպատակը համաշխարհային հեղափոխություն նախապատրաստելն էր: Եթե նախկինում ներխուժողները նախատեսում էին նախկին Ռուսական կայսրության տարածքում ստեղծել իրենց վերահսկողության տակ գտնվող բուֆերային պետություններ, ապա այժմ նրանք փորձում էին Խորհրդային կայսրության մեկուսացումը ավելի ամրապնդել և կանխել «հեղափոխական վարակի» տարածումն ամբողջ աշխարհում:

Հարավում Դոնի կազակների նկատմամբ տարած հաղթանակից հետո խորհրդային առաջնորդները հռչակեցին կազակների և գյուղացիների հողօգտագործման հավասարեցման քաղաքականություն: Եթե նախկինում խոսում էին կազակների համար ինչ-որ վերացական և անհասկանալի բաների մասին՝ «լեգիտիմություն, յուրացում, դեմոկրատիա», ապա այժմ հարցը ամենագլխավորի՝ հողի մասին էր: 1918 թվականի ապրիլին Դոնում հակախորհրդային ապստամբություն սկսվեց: Կազակները զինվորական խմբապետ ընտրեցին Պ. Ն. Կրասնովին և կազմավորեցին Դոնի բանակը: Նրանք ոչ միայն վտարեցին բոլշևիկներին Դոնից, այլև պաշարեցին Ցարիցինը (այժմ՝ Վոլգոգրադ): Հյուսիսային Կովկասում Դենիկինը կամավորական բանակը համալրեց Կուբանի կազակներով և վերցրեց Եկատերինոդարը: Այս իրավիճակում Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հրաժարվեց զորքերի ձևավորման իր նախկին՝



Պետրոգրադի մոտ գտնվող զրահատեխնիկայի ջոկատի «Մարս» զրահամեքենան։ 1919թ.։ Դրոշի վրա գրություն՝ «Կեցցե 3-րդ ինտերնացիոնալը, կեցցե սոցիալիստական հեղափոխությունը»։

կամավոր բնույթի քաղաքականությունից և 1918 թվականի գարնանը ձեռնամուխ եղավ կանոնավոր Կարմիր բանակի ստեղծմանը՝ հիմնվելով զորակոչի վրա։

Սեպտեմբերին Արևելյան ճակատում ռազմական գործողություններ սկսվեցին։ Կարմիրները առաջ էին շարժվում Վոլգայի շրջանում, իսկ նրանց հակառակորդ սպիտակները (այդպես սկսեցին կոչվել խորհրդային իշխանության բոլոր հակառակորդները) փորձում էին ճեղքել Կոտլասը՝ Հյուսիսային բանակի հետ միանալու համար։ Միաժամանակ խորհրդային զորքերը փորձում էին պարտության մատնել կամավորական բանակին Հյուսիսային Կովկասում։ Նոյեմբերին ակնհայտ դարձավ, որ Արևելյան ճակատում սպիտակները պարտվեցին և հետ նետվեցին դեպի Ուրալ, իսկ հարավում, ընդհակառակը, Դենիկինի ուժերը ներխուժեցին Ստավրոպոլ։ Այսպիսով, Քաղաքացիական պատերազմի երկրորդ փուլը (1918թ. գարուն-աշուն) նշանավորվեց հիմնական ճակատների ձևավորմամբ, Կարմիր բանակի՝ որպես կանոնավոր բանակի հաստատմամբ, Վոլգայի մարզում՝ սպիտակների, Դոնի և Հյուսիսային Կովկասում կարմիրների պարտությամբ։

Քաղաքացիական պատերազմի վճռորոշ ճակատամարտերը: 1918 թվականի նոյեմբերին Գերմանիայում հեղափոխական իրադարձություններ սկիզբ առան, ինչը հանգեցրեց գերմանական զորքերի տարհանմանը դեպի իրենց հայրենիք։ Առաջացած ռազմաքաղաքական դատարկությունը լրացնելու համար Կարմիր բանակի ստորաբաժանումները շարժվեցին դեպի Ուկրաինա, Բելառուս և Բալթյան երկրներ։ Միևնույն ժամանակ Դոնի բանակի ձախ թևը Դոնբասի միջով գրավելով՝ խորհրդային հրամանատարությունը կենտրոնացված կերպով ջախջախեց կրասնովցիներին։ Այս իրադարձություններին զուգահեռ Դենիկինն էլ իր հերթին Հյուսիսային Կովկասում վերջնականապես ջախջախեց Կարմիր բանակի ստորաբաժանումները։ Այնուհետև նա կամավորական բանակը տեղափոխեց Դոնբաս՝ կանխելով Կրասնովի կապիտուլյացիան։ Տարածաշրջանում հակախորհրդային ուժերը համախմբելու նպատակով Դենիկինը 1919-ի սկզբին ստեղծեց Ռուսաստանի հարավի զինված ուժերը, որում միավորեց կամավորական, Դոնի և կովկասյան (հիմնականում Կուբանի և Թերեքի կազակների) բանակները։

Վոլգայի մոտ Կարմիր բանակի հակառակորդների պարտությունից հետո՝ 1918 թվականի սեպտեմբերին, միավորելով Կոմուչը և Սիբիրի հակաբոլշևիկյան ուժերը, ձևավորվեց Դիրեկտորիա՝ Համառուսաստանյան ժամանակավոր կառավարություն։ Նոյեմբերին ռազմական հեղաշրջման արդյունքում Դիրեկտորիան լուծարվեց, իսկ պատերազմի նախարար, ծովակալ Ա. Վ. Կոլչակը Նախարարների խորհրդի կողմից

ընտրվեց Ռուսաստանի Գերագույն կառավարիչ և Գերագույն գլխավոր հրամանատար: Դենիկինը ճանաչեց Կոլչակի կարգավիճակը, բայց հնարավորություն չուներ օպերատիվ համագործակցություն հաստատել նրա հետ:

1919 թվականի հունվարին Կոլչակի զորքերը գրավեցին Պերմը, իսկ մարտ–ապրիլին մի քանի հարված հասցրին Վոլգայի ուղղությամբ՝ հասնելով Կազանի և Սամարայի մերձակայքին: Սակայն ապրիլի վերջին Կարմիր բանակի Արևելյան ճակատի կազմավորումները հզոր հակահարձակման անցան Բուգուլուկ քաղաքի շրջանում: Պարտություն կրելով՝ Կոլչակի զորքերը սկսեցին հետ քաշվել դեպի Ուրալ, և արդեն հունիսի սկզբին խորհրդային ստորաբաժանումները գրավեցին Ուֆան:



Ռուսաստանի Գերագույն կառավարիչ, ծովակալ Ա.Վ. Կոլչակ: Օմսկ: 1919 թ.

1919 թվականի հունվարին Լիտվայում Կարմիր բանակի Արևմտյան ճակատի ստորաբաժանումները բախվեցին լեհական զորքերին և դուրս մղեցին նրանց Վիլնայից: Խորհրդային ներկայացուցիչները փորձեցին բանակցել Լեհաստանի կառավարության հետ սահմանի որոշման շուրջ, սակայն Վարշավան անտեսեց այդ առաջարկները: Շուտով բռնկվեց նոր՝ խորհրդա-լեհական պատերազմը: Փետրվարին լեհական զորքերը հարձակում սկսեցին Բելառուսի ուղղությամբ. մինչև 1919 թվականի օգոստոսը նրանք գրավեցին Մինսկը և Բորրույսկը, իսկ Ուկրաինայում առաջ շարժվեցին մինչև Ջբրուչ գետը: Կարմիրների համար Արևմտյան ճակատում իրավիճակը բարդանում էր նրանով, որ 1919 թվականի մայիս–նոյեմբեր ամիսներին Սպիտակ զորքերը (հետագայում նրանց հիման վրա ստեղծվեց գեներալ Ն.Ն. Յուդենիչի հյուսիսարևմտյան բանակը) Էստոնիայի տարածքից հարձակում սկսեցին Պետրոգրադի վրա:

1919-ի գարնանը Դոնբասում կատաղի ճակատամարտեր էին ընթանում, որտեղ հաղթեցին դենինկինցիները: Ամռան կեսերին Հարավային Ռուսաստանի զինված ուժերը գրավեցին Խարկովից մինչև Ցարիցին ճակատը: Այդ ժամանակ Կոլչակը պարտվել էր. նրա զորքերը թողեցին Ուրալը և նահանջեցին դեպի Տոբոլ: Հասկանալով, որ Կոլչակի հետ միավորվելու համար Վոլգայի շրջանում առաջխաղացման ծրագրերը իրատեսական չեն, Դենիկինը հրապարակեց «Մոսկվայի դիրեկտիվը», որով նախատեսվում էր հարձակում գործել Մոսկվայի վրա: Հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին կատաղի ճակատամարտ ծավալվեց Օրյոլ–Վորոնեժ գծի ողջ երկայնքով: Այդ պահը կարելի է համարել Քաղաքացիական ողջ պատերազմի օրհասական կետը: Երբեք Սպիտակ շարժման կողմնակիցներն այնքան մոտ չէին եղել հաղթանակին, որքան այդ օրերին: Այնուամենայնիվ խորհրդային ղեկավարությանը հաջողվեց բեկում մտցնել ճակատամարտի մեջ, և Դենինկինի ստորաբաժանումները նահանջեցին դեպի հարավ:

1920 թվականի հունվար-փետրվար ամիսներին Հարավի ռուսական ուժերը սկսեցին տարհանումը Նովոռոսիյսկից դեպի Ղրիմ. Կոլչակի զորքերը լքեցին Կրասնոյարսկը, իսկ Կարմիր բանակի ստորաբաժանումները գրավեցին Արխանգելսկը և Մուրմանսկը (մարտին): Քաղաքացիական պատերազմի երրորդ՝ վճռական փուլը (1918/1919 ձմեռ–1919/1920 ձմեռ) ավարտվեց Խորհրդային Ռուսաստանի անվերապահ հաղթանակով: Հետագա ռազմական գործողությունները հիմնականում տեղական բնույթ էին կրում:

Սպիտակ շարժման պարտությունը: Ղրիմ տարհանումից հետո Հարավի ռուսական ուժերի մնացորդները համախմբվեցին ռուսական բանակում՝ Պ.Ն. Վրանգելի հրամանատարությամբ: Որոշ ժամանակ խորհրդային հրամանատարության հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր արևմտյան ուղղությամբ, որտեղ լեհական զորքերը, վերսկսելով ռազմական գործողությունները, գրավեցին Կիևը: 1920 թ. մայիսին գրեթե միաժամանակ Կարմիր բանակը հակահարձակման անցավ Ուկրաինայում և Բելառուսում, իսկ Վրանգելը Պերեկոպում ջախջախեց խորհրդային բանակի դիմադրությունը և գրավեց Հյուսիսային Տավրիան: Խորհրդային զորքերը շարժվում էին դեպի Լեհաստանի խորքերը՝ հույս ունենալով, թե կարող են հենվել լեհական պրոլետարիատի աջակցության վրա: Այդ հույսերը սին դուրս եկան. օգոստոսին Կարմիր բանակի Արևմտյան ճակատը՝ Մ.Ն. Տուխաչևսկիու հրամանատարությամբ, պարտություն կրեց և ստիպված եղավ նահանջել: Ուստի Ժողովրդական կոմիսարների խորհուրդը նախընտրեց Լեհաստանի հետ զինադադար կնքել: (1921-ին ստորագրվեց Ռիգայի պայմանագիրը, ըստ որի՝ Ուկրաինայի և Բելառուսի արևմտյան շրջանները մնում էին Լեհաստանին): Կարմիր բանակի հրամանատարությունը լեհական ճակատից ուժերը տեղափոխեց Հարավային ճակատ՝ Մ.Վ. Ֆրունզեի հրամանատարությամբ: 1920 թվականի աշնանը վրանգելիստները պարտություն կրեցին. Վրանգելի զորքերը ջախջախվեցին: Բանակի մնացորդները տարհանվեցին Ստամբուլ, և դրանով նշանավորվեց Քաղաքացիական պատերազմի՝ որպես համառուսաստանյան քաղաքականության գործոնի ավարտը: Անդրկովկասում, Կենտրոնական Ասիայում և Հեռավոր Արևելքում կռիվները դեռ շարունակվում էին մինչև 1922 թվականի աշունը, բայց ընդհանուր առմամբ խորհրդային ղեկավարության առջև նոր՝ խաղաղ կյանքի հետ կապված խնդիրներ ծառացան:



1-ին հեծելազորային բանակի հրամանատար Ս.Մ. Բուդյոննին ողջունում է Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Մ.Ի. Կալինինին: Հարավային ճակատ: 1920 թվականի աշուն: Լուսանկարիչ Պ.Ա. Օցուպ

Քաղաքացիական պատերազմի ժամանակ և՛ կարմիրների, և՛ սպիտակների հրամանատարներն ու մարտիկներն իրական հերոսություն դրսևորեցին: Ս.Մ. Բուդյոննու գլխավորությամբ կարմիր և Կ.Կ. Մամանտովի հրամանատարությամբ սպիտակ հեծելազորների իրականացրած

արշավանքները իրենց պատրաստվածությամբ և արդյունավետությամբ միմյանցից քիչ էին տարբերվում: Ռազմական և ռազմածովային գործերի ժողովրդական կոմիսար Լ. Դ. Տրոցկին մեծ նշանակություն էր տալիս ցարական բանակի սպաներից զինվորական մասնագետների ներգրավմանը՝ Կարմիր բանակում ծառայելու նպատակով, և դրանում հաջողություններ էր գրանցել: Կարմիրների շարքերում կռվել էին մոտավորապես նույնքան կաղրային սպաներ, որքան սպիտակների: Եղբայրասպան պատերազմի սարսափելի կողմն այն էր, որ երկու կողմերն էլ անկեղծորեն հավատում էին, որ փրկում են իրենց հայրենիքը, մինչդեռ թշնամին կործանում էր Ռուսաստանը:

Հատկանշական է, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Սպիտակ շարժման մի շարք նշանավոր գործիչներ (օրինակ՝ Դենիկինը) էմիգրացիայի մեջ եղած ժամանակ, գտնվելով նացիստների կողմից գրավված տարածքներում, կտրականապես հրաժարվեցին համագործակցել նրանց հետ: Բայց, չնայած Սպիտակ սպաների անձնական խիզախությանը և ռազմական պատրաստվածությանը, հաղթանակը անցավ կարմիրներին:

Այսպիսով, որո՞նք էին խորհրդային իշխանության հաղթանակի պատճառները: Նրան հակադրվում էր հակախորհրդային շարժումների և կառավարությունների մի հսկայական զանգված, որոնք ոչ միշտ էին համագործակցում միմյանց հետ: Հենց դա թույլ տվեց Կարմիր բանակին կենտրոնացնել իր ռեսուրսները տվյալ պահին ամենակարևոր հակառակորդի ուղղությամբ: Խորհրդային ղեկավարությունն ավելի ճկուն ազգային քաղաքականություն էր վարում, քան հակախորհրդային ճամբարի ղեկավարները: Այնտեղ, որտեղ սպիտակները պնդում էին «Ռուսաստանը՝ միասնական և անբաժանելի» բանաձևը՝ զրկելով իրենց ազգային շարժումների հետ դաշինքի նույնիսկ տեսական հնարավորությունից, կարմիրները հեշտությամբ համաձայնում էին մարտավարական դաշինքներ կնքել և պատրաստ էին հաշվի առնել ազգային շարժումների առաջնորդների ցանկությունները՝ ստեղծելու տարբեր ինքնավարություններ: Խորհրդային գաղափարախոսությունը շատ ավելի համահունչ էր այդ տարիների ռուս բնակիչների մեծամասնությանը բնորոշ էգալիտար հոգեբանությանը, քան սպիտակ քաղաքական գործիչների կարգախոսները: Սակայն, ըստ ամենայնի, կարմիրների հաղթանակում գլխավոր դերը խաղաց սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որն ավելի արդյունավետ դուրս եկավ, քան նրանց հակառակորդներինը:

§ 68. Բոլշևիկների սոցիալ-տնտեսական քաղաքականությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ

Խորհրդային Ռուսաստանին հակադրվում էր տարբեր քաղաքական ռեժիմների խառնակույտ (կոնգլոմերատ): Բոլոր սպիտակ կառավարությունների համար մեկ ընդհանուր սոցիալ-տնտեսական քաղաքականություն չկար: Ընդ որում, եթե օրինակ, Կոմուչի ղեկավարները սոցիալիստներ էին, ապա նրանց փոխարինած Կոլչակը և Համառուսաստանյան Սոցիալիստական Հանրապետության ղեկավարները հավատարիմ

էին աջ հայացքներին: Այսպիսով, սպիտակների համար որևէ ընդհանուր ընթացքի մասին խոսք լինել չէր կարող: Այս կամ այն կերպ ձևավորված «սպիտակ ուժի» կողմից վերահսկվող տարածքների մեծ մասում ներքին քաղաքականության ընդհանուր ուղղությունը հանգում էր «Նեպրեդրեշենչեսթվո» (ապագայի չկանխորոշելը) հասկացությանը: Նրանք գտնում էին, որ միայն բոլշևիկների նկատմամբ հաղթանակից հետո կհրավիրվի Հիմնադիր ժողով, որն էլ կորոշի, թե ինչպես է ապրելու երկիրը հետագայում: Գործնականում, որպես կանոն, սպիտակ կառավարությունները չէին պնդում, թե գյուղացիների կողմից գրավված հողերը անհապաղ պիտի վերադարձվեն: Բոլշևիկների ներքին քաղաքականությունը շատ ավելի բազմակողմանի էր և կենտրոնացված:

«Ռազմական կոմունիզմ»: Արդեն խորհրդային իշխանության առաջին օրերին Խորհուրդների երկրորդ համագումարը հրապարակեց «Խաղաղության մասին» և «Հողի մասին» հրամանագրերը, որոնք որոշեցին նոր կառավարության դիմագիծը՝ «խաղաղություն՝ առանց բռնազավթումների և փոխհատուցումների» և հողի մասնավոր սեփականության վերացում: Բոլշևիկների ազգային քաղաքականության հիմքերը դրվեցին 1917 թվականի նոյեմբերին ընդունված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագրով», որը վերացրեց բոլոր տեսակի ազգային սահմանափակումները և հռչակեց ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը, ընդհուպ անկախ պետության ձևավորում: Պաշտոնապես պետական կառուցվածքի հիմնական խնդիրները վերջնականապես լուծվեցին 1918 թվականի հուլիսին երկրի առաջին սահմանադրության ընդունմամբ: Աշխատավորների, գյուղացիների, կարմիրբանակայինների և կազակների պատգամավորական խորհուրդների համառուսաստանյան համագումարը հռչակվեց իշխանության բարձրագույն մարմին, որի գումարումների միջև ընկած ժամանակահատվածում բարձրագույն օրենսդիր, վերահսկիչ և վարչական մարմնի գործառույթներն իրականացնում էր Համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտեն (ՀԿԳԿ): Հաստատվեց պետության նոր անվանումը՝ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն (ՌՍՖԽՀ): Նոր պետությունը հիմնված էր պրոլետարիատի դիկտատուրայի հայեցակարգի վրա, այսինքն՝ քաղաքական իշխանության այնպիսի ձևի վրա, որը հիմնված էր հիմնականում աշխատավորներից ընտրված խորհուրդների ինքնակառավարման վրա. նրանք դիտվում էին որպես խորհրդային իշխանության սոցիալական հենարան: Համագումարի ընտրությունները ուղիղ, հավասար և համընդհանուր չէին. ընտրությունների հենց ընթացակարգը ընտրական գործընթացներից կտրում էր «անաշխատ եկամուտով» ապրող անձանց և բանվորներին գյուղացիների համեմատ զգալի առավելություններ էր տալիս: Միաժամանակ գործնականում բոլշևիկները արագ հասկացան, որ սահմանադրական ակտերի համար ավանդական այնպիսի հարցերը, ինչպիսիք էին ընտրությունների կարգը, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, կառավարման բարձրագույն մարմինների կազմավորումը, Քաղաքացիական պատերազմի պայմաններում ամենակարևոր դերը չէին խաղում: Շատ ավելի կարևոր էր տնտեսությունը նոր, սոցիալիստական սկզբունքներով կազմակերպելու հարցը: Հեղափոխությունից առաջ այս հարցերը գործնականում չէին մշակվել, հետևաբար

Ժողովրդական կոմիսարների խորհուրդը ուշադրության արժանի որևէ «տնային նախապատրաստություն» չուներ: Աստիճանաբար փորձի և սխալի միջոցով բոլշևիկները գտան մի շարք միջոցներ և լուծումներ, որոնք միասին ձևավորեցին «ռազմական կոմունիզմ» հասկացությունը: Այս քաղաքականությունը ներառում էր հետևյալ հիմնական տարրերը:

1. Գրեթե ամբողջ արդյունաբերական ոլորտը ազգայնացվեց և փոխանցվեց Ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի (ԺՏԲԽ) կառավարմանը: Գավառներում ստեղծվեցին ժողովրդական տնտեսության շրջանային խորհուրդներ (ժողտնտխորհներ): Ազգայնացվեց նաև բանկային ոլորտը: Յուրաքանչյուր արդյունաբերական օբյեկտ ենթարկվում էր Գերագույն տնտեսական խորհրդի ոլորտային գլխավոր վարչությանը (главк): Այս կառավարման համակարգը կոչվում էր գլավկիզմ: Գլավկիզմը մի կողմից առաջացրեց կառավարիչների թվի ավելացում՝ միաժամանակ նվազեցնելով նրանց արդյունավետությունը, մյուս կողմից երաշխավորեց բանակի մատակարարման համար վճռորոշ նշանակություն ունեցող հիմնական ոլորտների աշխատանքը: Տնտեսությունն աշխատուժով ապահովելու համար ներդրվեց աշխատանքային համընդհանուր պարտավորություն:

2. Հողի մասին հրամանագրի համաձայն՝ բոլոր վարելահողերը հանձնվեցին գյուղացիների տնօրինությանը: Միևնույն ժամանակ 1918 թվականի գարնանը ներդրվեց սննդամթերքի դիկտատուրա: ՀԿԳԿ-ի «Սննդամթերքի ժողովրդական կոմիսարին գյուղական բուրժուազիայի՝ հացահատիկի պաշարները թաքցնելու և դրանով սպեկուլյացիա անելու դեմ պայքարելու նպատակով արտակարգ լիազորություններ տալու մասին» որոշման համաձայն՝ հացի մասնավոր առևտուրը փաստորեն արգելվեց:



Պարենային ջոկատը մեկնում է գյուղ: Մոսկվա: 1918 թ.

Գյուղացիները պարտավոր էին հաստատագրված գներով հացահատիկ վաճառել պետությանը։ Բայց քանի որ արդյունաբերության հիմնական ջանքերը ուղղված էին բանակի՝ պաշտպանությանն ուղղված պատվերների կատարմանը, սպառողական ապրանքների լայն տեսականու արտադրությունը կտրուկ նվազեց։ Եվ քանի որ գյուղացիները չէին կարող գնել այդ ապրանքները, իմաստ չկար հացահատիկ վաճառել պետությանը։ Ուստի Ժողովրդական կոմիսարների խորհուրդն անցավ պարենամթերքի մասնազատում պրակտիկային, ըստ որի՝ գյուղացուն թողնում էին հացահատիկի ամբագրված նվազագույնը, որն ապահովում էր հաջորդ տարեշրջանի ցանքը և գյուղացիական ընտանիքի սնունդը մինչև հաջորդ բերքահավաքը։ Այս նվազագույնից բարձր գրեթե ամեն ինչ առգրավվում էր։ Մննդի ավելցուկի հավաքագրումը վստահվեց պարենային ջոկատներին, որոնք հաճախ հանդիպում էին զինված դիմադրության։

3. Գլավկիզմի շրջանակներում ռեսուրսների բաշխումն իրականացվում էր ոչ թե շուկայական, այլ վարչարարական ճանապարհով՝ Գերագույն տնտեսական խորհրդի կարգադրությունների և հրամանագրերի համաձայն։ Եվ քանի որ սննդամթերքի պակաս միշտ կար, դրանք նույնպես վաճառվում էին միայն քարտերով։ Արդյունքում դրամի՝ որպես փոխանակման բազմակողմանի միջոցի արժեքը կտրուկ նվազեց։

4. «Ռազմական կոմունիզմը» ուղղված էր պաշտպանության պատվերների առաջնահերթ իրականացմանը։ Ըստ այդմ, արդյունաբերության մնացած հատվածին մնացորդային հիմունքներով էր մատակարարվում վառելիք, հումք և կիսաֆաբրիկատներ։ Սպառողական ապրանքների աղետալի պակաս կար ոչ միայն գյուղական վայրերում, այլև քաղաքների բնակիչների համար։ Արդյունքում «կարմիր» թիկունքում կյանքի ընդհանուր մակարդակը կտրուկ անկում ապրեց։ Հաշվի առնելով Քաղաքացիական պատերազմի իրողությունները՝ դա բնականաբար հանգեցրեց սոցիալական լարվածության կտրուկ աճի։ Դրա հետևանքով առաջացած քաղաքական բռնաճնշումներն ու պետական ճնշումները դարձան «ռազմական կոմունիզմի» քաղաքականության մաս։ Այս միջոցները մի կողմից ճնշեցին թիկունքում պոտենցիալ դիմադրությունը, իսկ մյուս կողմից լուծեցին տնտեսական կարևոր խնդիրներ՝ խորհրդային կառավարությանը ապահովելով գործնականում ազատ աշխատուժով (աշխատանքային ջոկատներ, «աշխատանքային հավաքներ» «ոչ բանվոր դասակարգերի» ներկայացուցիչների համար և այլն)։

Եղբայրասպան պատերազմի տարիներին և՛ կարմիրները, և՛ սպիտակները զանգվածային մահապատիժներ են իրականացրել, որոնք երբեմն մղձավանջային տեսք ունեին իրենց դաժանությամբ։ Խոսակցություններն այն մասին, թե որ տեռորն էր ավելի սարսափելի՝ սպիտակը, թե կարմիրը, իմաստ չունեին։ Բայց պետք է հաշվի առնել, որ եթե սպիտակների իրականացրած մահապատիժները հիմնականում ինքնաբուխ էին՝ նախաձեռնված տեղական ղեկավարության կողմից, ապա բոլշևիկների համար դրանք եղել են հենց «ռազմական կոմունիզմի» ողջ կառուցվածքի կարևոր մասը, առանց որի այս հայեցակարգը չէր աշխատի։

Քաղաքացիական պատերազմի տարիներին քաղաքական և տնտեսական բռնությունների աճի արդյունքներից մեկը կանաչ (գյուղացիական) շարժումն էր։

Գյուղացիական ջոկատները գործում էին և՛ կարմիրների, և՛ սպիտակների դեմ՝ փորձելով պաշտպանել գյուղական ինքնակառավարման իրավունքը և առաջին հերթին ձերբազատվել ինչպես ավելցուկային մթերքի «կարմիր» յուրացման համակարգից, այնպես էլ «սպիտակ» բռնազավթումներից: Կանաչների շարժումն իր գագաթնակետին հասավ 1920 թվականին, բայց նոր տնտեսական քաղաքականությանն անցնելուց հետո համեմատաբար արագ ճնշվեց:



Խորհրդային քարոզչական պաստառ

Նոր գաղափարախոսություն: Խորհրդային ղեկավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում գաղափարական պայքարի ոլորտին՝ փորձելով նոր իդեալներ, մշակութային ու քաղաքական դիրքորոշումներ ներմուծել Ռուսաստանի ժողովուրդների գիտակցության մեջ:

Դրանում կարևոր դերակատարում ունեցավ Ժողովրդական կրթության կոմիսարիատը և զանգվածային-մշակութային ու կրթական-լուսավորչական Պրոլետկուլտ կազմակերպությունը, որը ստեղծվել էր նոր՝ «կոմունիստական» մշակույթ կառուցելու համար: Փողոցներում զանգվածային երթեր էին անցկացվում, շքեղ ներկայացումներ ու միստերիաներ էին բեմականացվում, նոր տոներ էին հորինվում, «հին ռեժիմի» հուշարձանները քարուքանդ էին արվում, դրանց փոխարեն հեղափոխական գործիչների պատվին էին հուշարձաններ կանգնեցվում: 1918 թվականի փետրվարին, որպես նոր գաղափարական հայեցակարգ կառուցելու քաղաքականության մի մաս, Ժողովրդական կոմիսարների խորհուրդն ընդունեց «Խղճի, եկեղեցու և կրոնական հաստատությունների ազատության մասին» հրամանագիրը: Այն հռչակեց եկեղեցու բաժանումը պետությունից, դպրոցը՝ եկեղեցուց, ինչպես նաև զրկեց եկեղեցուն և կրոնական հաստատություններին սեփականության իրավունքից:

Ամփոփելով, հարկ է ընդգծել, որ Կարմիր բանակի հաղթանակների ակունքն այն էր, որ խորհրդային ղեկավարությունը կարողացավ արդյունավետ (թեև «հին աշխարհի» ներկայացուցիչների նկատմամբ կոշտ և անողոք) տնտեսական քաղաքականություն բանեցնել իր վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Սպիտակ ճամբարի կողմնակիցները ձախողվեցին այս հարցում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին 1917 թվականի ճգնաժամի հիմնական պատճառները: Առանձնացրե՛ք XX դարի սկզբի Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացմամբ պայմանավոր-

ված և պատերազմական ժամանակաշրջանի իրողությունների հետ կապված պատճառները:

2. Հիմնավորե՛ք «Ռուսաստանում միապետության անկումը երկար գործընթացի արդյունք էր» թեզը:
3. Ինչու՞ ժամանակավոր կառավարությունը ստիպված եղավ փոխզիջման գնալ Պետրոգրադի սովետի հետ: Ինչպե՞ս փոխվեց Ժամանակավոր կառավարության կազմը:
4. Վ.Ի. Լենինի վերաբերմունքը Ժամանակավոր կառավարության նկատմամբ ինչո՞վ էր տարբերվում Պետրոգրադի խորհրդի ղեկավարների դիրքորոշումից: Ի՞նչ խնդիրներ դրեց Լենինը բոլշևիկյան կուսակցության առաջ 1917 թվականի գարնանը: Նրանց հաջողվե՞ց դրանք լուծել:
5. Զեկուցու՛մ պատրաստեք բոլշևիկների հաղթանակից հետո ձևավորված նոր իշխանության մարմինների մասին: Նշե՛ք, թե պատմական որ դեմքերն են ղեկավարել այդ պետական մարմինները:
6. Ի՞նչ խնդիրների առջև էր կանգնած Հիմնադիր խորհրդարանը: Ինչու՞ բոլշևիկները որոշեցին ցրել այն:
7. Ի՞նչ եք կարծում, որո՞նք էին Քաղաքացիական պատերազմի հիմնական պատճառները:
8. Ներկայացրե՛ք Քաղաքացիական պատերազմի հիմնական փուլերը և նկարագրե՛ք դրանք:
9. Պատրաստե՛ք զեկուցում կամ սահիկաշար Կարմիր բանակի և Սպիտակ շարժման մի քանի նշանավոր առաջնորդների մասին: Ներառե՛ք Քաղաքացիական պատերազմի մասնակիցներին նվիրված հուշարձանների պատկերներ:
10. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Որո՞նք էին դրա հիմնական դրույթները:
11. Ձևակերպե՛ք Քաղաքացիական պատերազմում բոլշևիկների հաղթանակի հիմնական պատճառները:
12. Ո՞րն է «Ռուսական մեծ հեղափոխություն» հասկացության իմաստը. հարցին պատասխանելիս հաշվի՛ առեք ոչ միայն ներքին, այլև համաշխարհային գործոնները:

ԳԼՈՒԽ 14. 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 69. Խորհրդային Ռուսաստանի ներքին և արտաքին իրավիճակը քաղաքացիական պատերազմի ավարտից հետո

Իրավիճակը արդյունաբերության և տրանսպորտի ոլորտում: Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո Խորհրդային Ռուսաստանի առջև ծառացավ հետպատերազմյան ավերածությունների հաղթահարման և սոցիալիզմի գաղափարների հիման վրա նոր հասարակության ձևավորման խնդիր: Պարզ դարձավ, որ արտագաղթի նախահեղափոխական տարիներին մարքսիստ հեղափոխականների մշակած ուղիներն ու մեթոդները գործնականում կիրառելի չէին: Այդ պայմաններում անհրաժեշտ էր անհապաղ մշակել նոր քաղաքականության ուրվագծերը՝ փորձառականորեն հիմնավորված լուծումներ փնտրելով:

Ինչպես արդեն հայտնի է, քաղաքացիական պատերազմում բոլշևիկների հաղթանակը պայմանավորված էր նաև «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառմամբ: Սակայն այս քաղաքականությունը, որի հիմնական նպատակը պաշտպանության ոլորտի կարիքների ապահովումն էր, արդյունաբերության մյուս ճյուղերը կանգնեցրեց կործանման եզրին: Ռազմական նշանակության արտադրանք չունեցող գործարաններն ու ձեռնարկությունները հումքով և վառելիքով ապահովվում էին մնացորդային հիմունքներով, իսկ աշխատողները սննդամթերքի քարտեր ստանում էին վերջին հերթին: Արդյունքում բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ փակվեցին, իսկ բանվորները կյանքի համար անհրաժեշտ նվազագույն կարիքներն ապահովելու նպատակով ստիպված էին հեռանալ քաղաքներից ու տեղափոխվել գյուղական բնակավայրեր:

Օգտակար հանածոների հիմնական արտադրությունը կտրուկ նվազեց: 1919 թվականից սկսած՝ խորհրդային արդյունաբերությունը գոյատևում էր վառելիքի շարունակական ճգնաժամի պայմաններում: Եթե մոսկովյան ավազանից ածխի մատակարարումը դեռ շարունակվում էր՝ թեկուզ նվազագույն չափով, ապա նավթինը ամբողջությամբ դադարել էր: Վառելիքի խնդիրը հնարավոր չեղավ լուծել մինչև 1921 թվականը: 1921 թվականի մարտին ՌԿԿ(բ) X համագումարում Վ.Ի. Լենինը վառելիքի ճգնաժամը համարեց խորհրդային ղեկավարության առջև ծառացած տնտեսական ամենակարևոր խնդիրը:



Գնացք նստելո

Տրանսպորտի ոլորտում ստեղծվել էր աղետալի իրավիճակ: 1919 թվականի վերջին շարժակազմերի միջին արագությունն ընկավ մինչև 5–5.5 կմ/ժ: Երկաթուղիներն անցան փայտյա վառելիքի օգտագործման: 1920 թվականին իրավիճակը շարունակեց վատթարանալ: 1921 թվականի հունվարի սկզբին Երկաթուղու ժողովրդական կոմիսարիատը որոշեց դադարեցնել երթևեկությունը 19 երկաթուղային գծերով, ամսվա վերջին՝ ևս 12-ով, իսկ փետրվարի սկզբին՝ ևս 31 գծերով: Խորհրդային Ռուսաստանը կանգնած էր տրանսպորտային համակարգի լիակատար կաթվածի շեմին:

1921 թվականի սկզբին արդյունաբերական արտադրանքի մակարդակը կազմում էր նախապատերազմյան ծավալների ընդամենը 14 %-ը: Գործարաններում և ձեռնարկություններում, որոնք դեռ շարունակում էին գործել, առկա էր սարքավորումների մաշվածության բարձր մակարդակ, ինչպես նաև գործիքների և ծախսվող նյութերի խիստ պակաս: Արտադրության նյութատեխնիկական բազայի շարունակական վատթարացումը հանգեցրեց արտադրանքի որակի զգալի անկման: Այսպես, 1920 թվականի մայիսին Արևմտյան ռազմաճակատ ուղարկված հրացանային 14 միլիոն պարկուճներից ոչ մեկը պիտանի չէր օգտագործման համար: Երկրի արդյունաբերությունը տասնամյակներով հետ էր մնացել:

Իրավիճակը գյուղատնտեսության ոլորտում: Գյուղատնտեսության ոլորտում ևս իրավիճակը բարդ էր: Ռազմական կոմունիզմի հիմնական դրույթներից մեկը գյուղատնտեսական ապրանքների ավելցուկի բռնագրավումն էր. բոլոր «ավելցուկները» հարկադիր կերպով առգրավվում էին գյուղացիներից: Այս քաղաքականության արդյունքում գյուղացիները որևէ շահագրգռվածություն չունեին աճեցնելու պետականորեն սահմանված նվազագույնից ավելի բերք: 1920 թվականին գյուղատնտեսության ապրանքայնությունը նվազեց շուրջ 2.5 անգամ, իսկ մշակվող տարածքները կտրուկ կրճատվեցին: 1921 թվականին այս բացասական միտումներն առավել սրվեցին երաշտի հետևանքով, որն ամբողջությամբ ոչնչացրեց բերքի մոտ 20 տոկոսը: Սկսվեց սարսափելի սով, որի զոհ դարձավ մոտավորապես 6 միլիոն մարդ: Պատրիարք Տիխոնը օգնության խնդրանքով դիմեց քրիստոնեական եկեղեցիների ղեկավարներին և նախաձեռնեց դրամահավաք, սակայն այն բավարար չէր խնդիրը լուծելու համար: Սովի դեմ պայքարելու նպատակով Ժողովրդական կոմիսարների խորհուրդը ստիպված էր մի կողմից ընդունել օտարերկրյա բարեգործական կազմակերպությունների օգնությունը, իսկ մյուս կողմից՝ բռնագրավել եկեղեցական արժեքավոր իրերը:



Քաղցած փախստականներ Վոլգայի շրջանում: 1921 թ.

Այս իրադարձությունները վերաբերում են հիմնականում 1921–1922 թվականներին, մինչդեռ դեռևս 1919–1920 թվականներին խորհրդային ղեկավարության առաջնահերթ խնդիրը քաղաքային բնակչությանը ցանկացած գնով կերակրելն էր: Այդ նպատակով ստեղծված պարենամթերման ջոկատները (продотряды) գյուղերում առգրավում էին ամբողջ հացահատիկը՝

առանց տարբերակելու, թե որն է «ավելցուկը», որը՝ անձեռնմխելի նվազագույնը: Այս քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ գյուղացիները ավելի հաճախ էին պարենամթերման ջոկատներին դիմավորում կրակոցներով:

Ինչպես արդեն նշվել է, 1920 թվականը «կանաչ» շարժման գագաթնակետն էր: Ապստամբությունների թիվը հասնում էր տասնյակների, եթե ոչ հարյուրների: Դրանցից առավել հայտնի էին Անտոնով2չինան Տամբովի նահանգում և Արևմտյան Սիբիրում բռնկված ապստամբությունը: Խորհրդային իշխանությունը հայտարարում էր «սողացող հակահեղափոխության» և «խորհրդային իշխանության դեմ կուլակների դավադրության» մասին, սակայն ակնհայտ էր, որ այս շարժումները պայմանավորված էին «ռազմական կոմունիզմի» քաղաքականության բացասական հետևանքներով: Առանց այդ քաղաքականության խորքային վերանայման հնարավոր չէր կանխել միմյանց հաջորդող գյուղացիական ապստամբությունները:

«Ռազմական կոմունիզմը» սոցիալական ոլորտում: Ստեղծված իրավիճակից դժգոհությունն ընդգրկեց նույնիսկ սոցիալական այն շերտերը, որոնք խորհրդային իշխանության ողնաշարն էին համարվում: 1921 թվականի գարնանը ձեռնարկություններում գործադուլներն այնքան լայն տարածում գտան, որ կասկածի տակ դրեցին պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը: Սա ի՞նչ բռնապետություն է, որի դեմ բողոքում է հենց բռնապետը: 1921 թվականի փետրվարին Կրոնշտադտում ապստամբեցին բալթյան նավաստիները: Քաղաքացիական պատերազմի ողջ ընթացքում նրանք համարվում էին բոլշևիկների ամենահավատարիմ աջակիցները: Սակայն այդ ժամանակ Կրոնշտադտի երկնքում ծածանվող պաստառի՝ «Իշխանությունը սովետներին, ոչ թե կուսակցություններին» կարգախոսը խորհրդային ղեկավարության համար ավելի խոսուն էր, քան ցանկացած տնտեսական զեկույց. այն բացահայտ վկայում էր, որ երկրում սոցիալ-տնտեսական ճգնաժամը դարձել էր համատարած: Այս ներքին լարվածությունն ընթանում էր միջազգային անհստակության ֆոնին: 1920-ականների սկզբին արտասահմանյան պետությունների մեծ մասը դեռ չէր ճանաչել ՌՍՖՍՀ-ը: Այդ ընթացքում անգամ բոլշևիկների շրջանում հստակ միասնություն չկար՝ խթանե՞լ համաշխարհային հեղափոխությունը, թե՞ ձգտել կապիտալիստական միջավայրի հետ խաղաղ գոյակցության:

Սակայն ակնհայտ էր, որ ներքաղաքական խնդիրները առաջնային էին, ուստի հիմնական քննարկումը ծավալվեց հենց այս հարցի շուրջ:

Ճգնաժամից դուրս գալու ելքեր: Սկզբնական շրջանում բոլշևիկյան ղեկավարությունը դիտարկում էր ստեղծված ճգնաժամային իրավիճակից դուրս գալու երկու հիմնական տարբերակ: Կոմունիստների մի ստվար խումբ հանդես էր գալիս «ռազմական կոմունիզմի» քաղաքականության շարունակականության օգտին՝ վերլուծելով և ընդունելով դրա կիրառման ընթացքում թույլ տրված ակնհայտ սխալները: Նրանք առաջարկում էին պայքարել ձգձգումների և բյուրոկրատիայի դեմ, ձերբազատվել անկազմակերպվածությունից ու վատ կառավարումից, սակայն չհրաժարվել ընդհանուր գաղափարից՝ սոցիալիստական հասարակության կառուցում բանվորական բանակների օգնությամբ: Այս մոտեցման կողմնակիցները ոչ թե առաջարկում էին հրաժարվել

«ռազմական կոմունիզմից», այլ այն բարեփոխել և հարմարեցնել նոր իրողություններին: Խմբի առաջատար գաղափարախոսը Նիկոլայ Իվանովիչ Բուխարինն էր, որն իր դիրքորոշումը արտահայտել էր 1920 թվականին հրատարակված «Անցման շրջանի տնտեսությունը» գրքում: Նա այնքան պերճախոս էր նկարագրում հեղափոխական բռնության առավելությունները, որ նույնիսկ կուսակցական շրջանակներում գիրքը կատակով անվանում էին «աքսորի և գնդակահարության ձեռնարկ»:

Վ.Ի. Լենինը այլ տեսակետ ուներ: Նրա կարծիքով Խորհրդային Ռուսաստանում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների հիմնական պատճառը աշխատուժի ցածր արտադրողականությունն էր: Այդ հիմնախնդրի լուծման կարևոր ուղին Լենինը տեսնում էր համընդհանուր էլեկտրաֆիկացման մեջ: Այս գաղափարը ձևակերպվեց Լենինյան հայտնի արտահայտության միջոցով. «Կոմունիզմը խորհրդային իշխանությունն է՝ գումարած ամբողջ երկրի էլեկտրաֆիկացումը»: Ռուսաստանի էլեկտրաֆիկացման պետական հանձնաժողովի (ԳՕԷԼՌՕ) պլանը նախատեսում էր երկրի տնտեսության համապարփակ արդիականացում: Դրա հիմնական առանցքը ՊՇԷԿ-ների՝ պետական շրջանային էլեկտրակայանների ցանցի ստեղծումն էր: Ենթադրվում էր, որ յուրաքանչյուր ՊՇԷԿ էներգիա կմատակարարեր մի ամբողջ շրջանի, և նրա մեծ հզորության շնորհիվ արտադրանքը ցածր ինքնարժեք կունենար: Նախատեսվում էր էլեկտրաֆիկացված շրջանները միավորել ավելի մեծ տարածաշրջանային համակարգերում, որոնցում նախատեսվում էր կտրուկ բարձրացնել ոչ միայն ձեռնարկությունների, գործարանների և հանքերի, այլև երկաթուղային և գետային տրանսպորտի, իսկ ապագայում՝ նաև գյուղատնտեսության արտադրողականությունը:

ԳՕԷԼՌՕ-ի պլանի իրագործումը պահանջում էր ֆինանսական և նյութական մեծածավալ ռեսուրսներ, և ամենակարևորը՝ զգալի ժամանակ: Մինչդեռ երկիրը սոցիալ-տնտեսական կործանման եզրին էր, ինչը հրամայական էր դարձնում արագ և արդյունավետ լուծումների որոնումը: Հաշվի առնելով այս ամենը՝ Լենինը, առանց պաշտոնապես հրաժարվելու ԳՕԷԼՌՕ-ի պլանից, առաջ քաշեց Նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) գաղափարը:

§ 70. Անցում նոր տնտեսական քաղաքականության


ՆԷՊ-ը գյուղատնտեսության ոլորտում: XX դարի սկզբին Ռուսաստանը հիմնականում գյուղատնտեսական երկիր էր: Բացի այդ, քաղաքացիական պատերազմի ընթացքում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ցնցումներն ու սովը հանգեցրել էին բնակչության՝ քաղաքներից դեպի գյուղեր զանգվածային արտահոսքին, ինչի արդյունքում գյուղաբնակների թիվը զգալիորեն աճել էր: Այս պայմաններում ակնհայտ էր, որ ՆԷՊ-ը պետք է նախևառաջ ուղղված լիներ գյուղատնտեսության վերականգնմանն ու զարգացմանը: Գյուղատնտեսական քաղաքականության վերանայումը դարձել էր տնտեսության ողջ համակարգի կայունացման կարևոր նախադրյալ:

Նոր տնտեսական քաղաքականությանը անցնելու որոշումը կայացվեց 1921 թվականի մարտին ՌԿԿ(բ) X համագումարում: Նույն տարվա գարնանը պարենամթեր-

ման համակարգը փոխարինվեց պարենային հարկով, որը գործում էր հայելային սկզբունքով. պետությունը վերցնում էր նախապես սահմանված քանակությամբ հացահատիկը՝ որպես հարկ, իսկ մնացած բերքը ազատորեն տնօրինում էին գյուղացիները: Սա խթանեց գյուղատնտեսական արտադրության վերականգնումը և հանգեցրեց գյուղացիների՝ ցանքի մեծացման և հացահատիկի բերքի ավելացման նկատմամբ հետաքրքրության աճին: Հատկանշական է, որ գյուղական տարածքներում առաջացած «սողացող հակահեղափոխությունը», որի դեմ բոլշևիկներն անգամ կանոնավոր զորքերի միջոցով չէին կարողանում արդյունավետ պայքարել, ՆԷՊ-ին անցնելուց մի քանի ամիս անց աստիճանաբար մարեց:

ՆԷՊ-ը արդյունաբերության ոլորտում: ՆԷՊ-ի ամենակարևոր բաղադրիչը արդյունաբերական ոլորտի վերափոխումն էր: Ամբողջ արդյունաբերությունը բաժանված էր երկու մակարդակների, որոնք փոխազդում էին միմյանց հետ, բայց նրանց համար ներդրվեցին «խաղի տարբեր կանոններ»: Առաջին մակարդակում փոքր ձեռնարկություններն էին, որոնք ժողովրդական սպառման ապրանքներ էին արտադրում: Այստեղ, ինչպես նաև առևտրի և սպասարկման ոլորտում, թույլատրվում էին մասնավոր սեփականությունն ու մասնավոր ձեռնարկատիրությունը: Երկրորդ մակարդակում պետական սեփականություն հանդիսացող խոշոր ձեռնարկություններն էին:

Ատելի «բուրժույների» կամ, ինչպես ընդունված էր նրանց անվանել այդ շրջանում, նէպմանների վերադարձը առաջացրեց խոր վրդովմունք և դժգոհություն շարքային կուսակցականների շրջանում: Սակայն Վ.Ի. Լենինը կարողացավ համոզիչ հիմնավորումներ ձևակերպել՝ արդարացնելու մասնավոր սեփականության վերադարձը տնտեսության որոշ ոլորտներ: Նրա հիմնական թեզը հետևյալն էր. հարկ չկա



Երկաթուղային կամրջի վերականգնում

խոչընդոտել մասնավոր սեփականատերերի գործունեությունը, երբ նրանք նպաստում են սպառողական ապրանքների պահանջարկի բավարարմանը: Նրանք մեր օգտին են գործում՝ շտկելով տնտեսության խեղումները: Քանի դեռ մասնավոր սեփականատերը իր գործարանում վերնաշապիկներ է արտադրում պետական տեքստիլ գործարանի մատակարարած գործվածքից, իսկ պրիմուս վառարաններ՝ պետական ձուլարանում արտադրված մետաղից, պետությունն է որոշելու ապրանքների վերջնական գինը և ազդելու երկրի տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Լենինի համոզմամբ՝ քանի դեռ արդյունաբերության «հրամանատարական բարձունքները»՝ մետաղագործությունը, տեքստիլ արտադրությունը, շինանյութերի արդյունաբերությունը և ռազմավարական այլ ոլորտներ, գտնվում են պետության վերահսկողության տակ, մասնավոր ձեռնարկատիրությունը չի կարող սպառնալ խորհրդային իշխանության հիմքերին:

Որոշ դեպքերում խորհրդային ղեկավարությունը թույլ էր տալիս մասնավոր կապիտալի ներթափանցումը նույնիսկ խոշոր արդյունաբերության ոլորտ: Բոլշևիկները, ինչպես այդ շրջանում ասում էին, պատրաստ էին մենաշնորհային պայմաններով որոշ խոշոր ձեռնարկություններ վարձակալությամբ հանձնել արևմտյան ձեռնարկատերերին: Նպատակն այն էր, որ օտարերկրյա կապիտալիստները դրանք զինեն առաջադեմ տեխնոլոգիաներով և վերապատրաստեն խորհրդային ինժեներներին ու բանվորներին՝ սովորեցնելով տեխնոլոգիական նորագույն մեթոդները: Սակայն մեքենաշինության, ավելացված բարձր արժեք ապահովող արտադրության փոխարեն օտարերկրյա կապիտալը հիմնականում ներդրվեց հանքարդյունաբերության ոլորտում: Մենաշնորհային համաձայնագրեր կնքվեցին, օրինակ, Վրաստանի Չիատուրայի մանգանի հանքավայրում, Ուրալի ասբեստի հանքերում, Սախալինի նավթահանքերում և Սիբիրի ոսկու արդյունահանման ոլորտում: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում բացառություն կարելի է համարել միայն Մոսկվայի ծայրամասում գտնվող Ֆիլիի ավիաշինական գործարանի վարձակալումը գերմանական Junkers ընկերության կողմից: Սակայն անգամ այստեղ համաձայնագրի պայմանները լիարժեքորեն չեն պահպանվել: Ընկերությունն իրականում չդարձավ մետաղական ավիաշինության ամբողջական սեփականատեր՝ սահմանափակվելով ներմուծված բաղադրիչներից և պատրաստի մասերից ինքնաթիռների հավաքմամբ: Արդյունքում պայմանագիրը չեղարկվեց:

Տնտեսավարկային ձեռնարկություններ և ձեռնարկամիավորումներ: Ֆինանսական բարեփոխում: ՆԷՊ-ի կառուցվածքային մոդելը պահանջում էր պետական արդյունաբերության վերակազմավորում, քանի որ «նէպմանյան» մակարդակում այն աշխատեցնելու համար պետական հատվածից պահանջվում էր վառելիքի և հումքի մատակարարում: Պետական հատվածի արդյունավետության բարձրացումը նախատեսվում էր իրականացնել տնտեսական հաշվարկի մեխանիզմների և ապրանքադրամային հարաբերությունների տարրերի ներդրման միջոցով: Թեև ձևական առումով պահպանվեց Ազգային տնտեսության բարձրագույն խորհուրդը, սակայն արդյունաբերական օբյեկտները հանվեցին նրա կենտրոնացված կառավարումից և փոխանց-

վեցին ինքնուրույն գործող տնտեսական ձեռնարկություններին: Նման ձեռնարկությունը ստանում էր իրավունք՝ ազատ շուկայում ձեռք բերելու հումք, վառելիք, բաղադրամասեր և այլ ռեսուրսներ, վերամշակելու դրանք և արտադրելու ապրանք, որը նույնպես պետք է իրացվեր ազատ շուկայում: Ստացված եկամուտից անհրաժեշտ էր ֆինանսավորել հաջորդ արտադրական փուլը, կատարել մաշվածության ֆոնդի փոխանցումները, վճարել հարկերը և ապահովել պետական բյուջեի համար որոշակի շահույթ:

Ձեռնարկախումբը միավորում էր միևնույն ճյուղին պատկանող և նույն տարածաշրջանում գործող մի քանի արտադրական միավորներ: Օրինակ՝ Դոնբասի մետալուրգիական արդյունաբերությունը կենտրոնացված էր «Յուգոստալ» ձեռնարկախմբում, Ուրալում ստեղծվեց «Ուրալմետ»-ը, իսկ կենտրոնական արդյունաբերական շրջանի տեքստիլ արդյունաբերության 17 գործարանները միավորվեցին «Մոսսուկնո» անվամբ ձեռնարկախմբում և այլն: Եթե արդյունաբերական որևէ ճյուղում գործարկվում էին քիչ թվով ձեռնարկություններ, ամբողջ ոլորտը հաճախ ընդգրկվում էր մեկ միասնական ձեռնարկախմբի կազմում: Այսպիսի օրինակներ են «Ավիատրեստ»-ը (ավիաշինարարություն), «Ավտոտրեստ»-ը (ավտոմոբիլաշինություն), «ՕՄԱՀՏ»-ը՝ (Օպտիկամեխանիկական արդյունաբերության համամիութենական ձեռնարկախումբ) և այլն: Ընդհանուր առմամբ ՆԷՊ-ի ընթացքում ձևավորվեց ավելի քան 450 տնտեսական ձեռնարկախումբ, որոնց շուրջ 40 տոկոսը գտնվում էր Բարձրագույն տնտեսության խորհրդի իրավասության ներքո, իսկ մնացածը ենթակա էին մարզային տնտեսական իշխանություններին:



Հերթ հանրային սննդի կոմիտեի թիվ 1 ճաշարանի մոտ: Մոսկվա: 1921–1922 թթ.

Թեև տնտհաշվարկային ձեռնարկախմբերը կարողացան արդյունավետորեն լուծել արտադրության կազմակերպման և արտադրողականության բարձրացման խնդիրները, սակայն զգալի դժվարություններ առաջացան արտադրանքի մանրածախ իրացման ոլորտում: Այս խնդիրը հաղթահարելու նպատակով ձևավորվեց պետական տնտհաշվարկային ձեռնարկամիավորումների համակարգ: Հիմնադրվեց 23 խոշոր ձեռնարկամիավորում, որոնք մեծածախ եղանակով գնում էին արտադրանքը ձեռնարկախմբերից և կազմակերպում նրա իրացումը բնակչության շրջանում, իսկ որոշ դեպքերում՝ նաև արտահանման գործընթացները: Օրինակ՝ «Յուգոստալ» և «Ուրալմետ» ձեռնարկախմբերի արտադրանքի վաճառքն իրականացվում էր ԽՍՀՄ մետաղական ձեռնարկամիավորման միջոցով:

Ե՛վ ձեռնարկախմբերը, և՛ ձեռնարկամիավորումները գործունեություն էին իրականացնում ազատ շուկայում՝ կատարելով ինչպես գնումներ, այնպես էլ վաճառք: Նույն ազատ շուկայում գյուղացիները վաճառքի էին հանում իրենց արտադրած գյուղատնտեսական մթերքը և գնում սպառողական ապրանքներ: Նման պայմաններում երկրում դրամական շրջանառության կայունության վերականգնումը դարձավ առաջնահերթ խնդիր: 1922–1924 թվականներին Ֆինանսների ժողովրդական կոմիսար Գ.Յա. Սոկոլնիկովի ղեկավարությամբ իրականացվեց դրամավարկային խորքային բարեփոխում: Դրա շրջանակներում «սովզնակ»-ը փուլային կերպով փոխարինվեց նոր դրամային միավորով՝ չերվոնեցով: Թեև նոր արժույթի վրա նշվում էր, որ այն ազատորեն փոխանակելի է ոսկու հետ, իրականում չերվոնեցը ապահովված էր մի կողմից ոսկու պաշարներով, մյուս կողմից՝ պետությանը պատկանող ապրանքային ռեսուրսներով: Բարեփոխումը վճռորոշ նշանակություն ունեցավ տնտեսության կայունացման համար՝ վերականգնելով փողի՝ որպես փոխանակման համընդհանուր միջոցի և արժեքի չափման գործառույթները: Առանց դրամավարկային այս բարեփոխման ՆԷՊ-ի տնտեսական համակարգի լիարժեք իրականացումը պարզապես անհնար կլիներ:

Հատկանշական է, որ դրամավարկային բարեփոխումների իրականացման գործում կարևոր դեր խաղաց Ն. Ն. Կուտլերը՝ նախահեղափոխական Ռուսաստանի առաջատար ձեռնարկատեր և ֆինանսիստ, Կադետական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, որը 1904–1905 թվականներին զբաղեցրել էր ֆինանսների և ներքին գործերի նախարարների տեղակալի պաշտոնները: Սա ցույց է տալիս, որ բոլշևիկները պատրաստ էին օգտագործել նաև «հին ռեժիմի» փորձառու մասնագետների փորձը՝ նպատակ ունենալով արագ և արդյունավետ վերականգնել տնտեսությունը:

Տնտեսության շուկայական սկզբունքների վերականգնման ֆոնին նկատվեց կոոպերատիվ շարժման կտրուկ աճ: Գյուղատնտեսական, արհեստագործական, վարկային և սպառողական կոոպերատիվները դարձել էին ՆԷՊ-ի տնտեսական մեխանիզմի կարևոր բաղադրիչներ: Մասնավոր հատվածի ձեռնարկությունների զգալի մասը վարձակալության էր տրվում կոոպերատիվներին, որոնք հատկապես կարևոր դեր ստանձնեցին առևտրի և սպառողական ծառայությունների ոլորտում:

§ 71. Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների (ԽՍՀՄ) ստեղծումը

Բոլշևիկների ազգային քաղաքականությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ: 1917 թվականի հեղափոխական իրադարձությունները որոշ չափով անակնկալի բերեցին բոլշևիկներին: Մինչ այդ Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության ենթադրյալ հաղթանակից հետո ազգային հարցի լուծման տարբերակների քննարկումները տեղի էին ունենում հիմնականում ակադեմիական, վերացական փաստարկումների շրջանակներում: Լենինի դիրքորոշումն այս հարցում բավականին բարդ էր: Ընդունելով, որ միացյալ պետությունը լավագույն լուծումն է, նա, այնուամենայնիվ, նշել է, որ բազմաթիվ էթնիկ խմբերով բնակեցված Ռուսական կայսրության առանձնահատկություններից բխում է մինչև անկախության հռչակումը ճանաչել յուրաքանչյուր ժողովրդի ինքնորոշման իրավունքը (տե՛ս Հավելված, քարտեզ թիվ 16):

1917 թվականին բոլշևիկները իրենց ձեռքը վերցրին իշխանությունը. ազգային հարցը անհապաղ պետք է լուծվեր: Խորհրդային կառավարության օրենսդրական վաղ ակտերից էր «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիրը», որը ձևավորվել էր Լենինի նախահեղափոխական հայացքների հիման վրա: Այնուամենայնիվ, քաղաքացիական պատերազմի իրողությունները ստիպեցին ճշգրտումներ կատարել ազգային հարցի տեսության մեջ: Արդյունքում ազգային քաղաքականության հարցերում ճկունությունը դարձավ կարմիրների հաղթանակի կարևոր գործոններից մեկը: Հավատարիմ մնալով «Միացյալ և անբաժան Ռուսաստան» կարգախոսին՝ սպիտակները հրաժարվեցին համագործակցել ազգային անկախության համար պայքարող ուժերի հետ: Խորհրդային առաջնորդները, ընդհակառակը, դյուրությամբ դաշինքներ կնքեցին ազգային շարժումների հետ: Բացի այդ, մարտավարական խնդիրների լուծման նպատակով բոլշևիկները իրականացրին խորհրդային որոշ հանրապետությունների կառուցվածքային վերաձևաչափում: Օրինակ՝ Դոնեցկ-Կրիվոյ Ռոգի և Ուկրաինայի խորհրդային հանրապետությունները միավորվեցին՝ նպատակ ունենալով, որ Դոնբասի պրոլետարիատը ամրապնդեր խորհրդային ազդեցությունը միացյալ հանրապետությունում, քանի որ Դնեպրի շրջանի գյուղացիությանը Ժողովրդական կոմիսարների խորհուրդը համարում էր «մանրբուրժուական» և անվստահելի:


1919 թվականի ամռանը Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն որոշում ընդունեց խորհրդային հանրապետությունների միավորման մասին՝ որպես համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարի միջոց: Այս որոշման նպատակը գործող խորհրդային հանրապետությունների քաղաքական, ռազմական և տնտեսական ներուժի համախմբումն էր: 1920–1921 թվականներին խորհրդային մի շարք հանրապետություններ ստորագրեցին փոխադարձ պայմանագրեր՝ ռազմական, տնտեսական և դիվանագիտական ոլորտներում համագործակցության վերաբերյալ: Քաղաքացիական պատերազմից հետո այս հանրապետությունների միասնությունը ավելի ամրապնդվեց:

1922 թվականին Ջենովայի միջազգային կոնֆերանսին հրավիրված էր միայն ՌՍՖՍՀ պատվիրակությունը, սակայն Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գեորգի Վասիլևիչ Չիչերինը հայտարարեց, որ ինքը ներկայացնում է խորհրդային բոլոր հանրապետությունների շահերը։ Այս հայտարարությունը վկայում էր արդեն ձևավորված դիվանագիտական միության մասին։ Այսպիսով, 1922 թվականին ԽՍՀՄ-ի ստեղծումը խորհրդային հանրապետությունների մերձեցման բավականին երկարատև գործընթացի արդյունք էր։

ԽՍՀՄ-ի ստեղծումը: Միութենական նոր հանրապետություններ: Խորհրդային հանրապետությունների միավորման ձևի հարցը միանգամից չլուծվեց։ Ազգությունների ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստալինն առաջարկեց ինքնավարության ծրագիր, համաձայն որի՝ խորհրդային մյուս բոլոր հանրապետությունները պետք է միավորվեին ՌՍՖՍՀ կազմում՝ ինքնավարության սկզբունքով։ Վ. Ի. Լենինը առաջ քաշեց միավորման այլընտրանքային տարբերակ՝ դաշնայնացում, ըստ որի՝ խորհրդային հանրապետությունները պետք է միավորվեին հավասար իրավունքներով՝ կազմելով նոր դաշնային պետություն և ունենալով վերհանրապետական իշխանության համակարգ։ Ի վերջո, այս տեսակետը հաղթեց։

1922 թվականի դեկտեմբերի վերջին ՌՍՖՍՀ-ի, Ուկրաինական ԽՍՀ-ի, Բելառուսի ԽՍՀ-ի և Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության (ԱՍՖԽՀ) ներկայացուցիչների կողմից ստորագրվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման մասին պայմանագիրը։ 1924 թվականի հունվարին ընդունվեց ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը, որը իրավականորեն ամրագրեց դաշնային պետության ձևավորումը և դրա կառուցվածքային հիմքերը։ Նույն թվականին ՌՍՖՍՀ-ի կազմից առանձնացավ Թուրքեստանի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որի տարածքում ձևավորվեցին միութենական նոր հանրապետություններ՝ Թուրքմենական և Ուզբեկական, իսկ 1929 թվականին՝ Տաջիկական։

1936 թվականին վերացվեց Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը, և նրա կազմում գտնվող Ադրբեջանական, Հայկական և Վրացական հանրապետությունները՝ որպես անկախ միութենական հանրապետություններ, միացան ԽՍՀՄ-ին։ Նույն թվականին Ղազախստանի և Ղրղզստանի ինքնավար հանրապետությունները, որոնք մինչ այդ գտնվում էին ՌՍՖՍՀ կազմում, որպես միութենական հանրապետություններ մտան ԽՍՀՄ կազմի մեջ։ Հայրենական մեծ պատերազմի նախաշեմին Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի և Մոլդովայի միութենական հանրապետությունները ևս ընդգրկվեցին Խորհրդային Միության կազմում։ Բացի այդ, Կարելո–Ֆիննական ԽՍՀ–ն դուրս բերվեց ՌՍՖՍՀ



Վ.Ի. Լենինը և Ի.Վ. Ստալինը Գորկիում։ 1922 թ.

կազմից և դարձավ առանձին միութենական հանրապետություն: Սակայն 1956 թվականին այն կրկին ներառվեց ՌՍՖՍՀ կազմում՝ որպես ինքնավար հանրապետություն:

Բնիկացման քաղաքականություն (Политика коренизации): Ռուսական կայսրությունում արդյունաբերական ձեռնարկությունների անձնակազմը, որպես կանոն, համալրվում էր ազգությամբ ռուս աշխատակիցներով: Քանի որ խորհրդային իշխանության ժամանակ պետական ապարատը նույնպես համալրվում էր հիմնականում արդյունաբերական աշխատողներից (բանվորական միջավայրից), մի շարք շրջաններում ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, երբ ղեկավար պաշտոններում ոչ թե տվյալ տարածաշրջանի «տիտղոսավոր» էթնիկ խմբի ներկայացուցիչներ էին նշանակվում, այլ հիմնականում ռուսներ էին: Սա չէր կարող դժգոհություն չառաջացնել տեղական բնակչության շրջանում հատկապես այն տարածքներում, որտեղ ազգային ինքնագիտակցության մակարդակը բարձր էր:

Ստեղծված իրավիճակը անհանգստացնում էր ԽՍՀՄ ղեկավարությանը, ուստի 1920-ական թվականներին մեկնարկեց բնիկացման քաղաքականությունը, որի հիմնական նպատակն էր ղեկավար պաշտոնների նշանակել տեղական, բնիկ բնակչության ներկայացուցիչներին: Պետական և խորհրդային հաստատությունների աշխատակիցները պարտավոր էին տիրապետել տվյալ էթնիկ խմբի լեզվին. լեզվի քննությունը չհանձնող անձինք ազատվում էին զբաղեցրած պաշտոններից: Գրասենյակային աշխատանքները, կրթական համակարգը և զանգվածային լրատվամիջոցների գործունեությունը կազմակերպվում էին ազգային լեզուներով: Մի շարք դեպքերում այս կամ այն ինքնավարության ժողովուրդների համար անհրաժեշտ էր մշակել գրավոր լեզու: Բուհեր ընդունվելիս առավելություն էր տրվում բնիկ բնակչության ներկայացուցիչներին: Բացի այդ, Կարմիր բանակում ձևավորվեցին ազգային ստորաբաժանումներ, որոնց հրամանատարական կազմը համալրվում էր էթնիկ խմբերի ներկայացուցիչներով, իսկ հրամանները տրվում էին համապատասխան լեզվով:

Աստիճանաբար ակնհայտ դարձավ, որ տեղական բուհերում պատրաստված կադրերը չէին կարող արդյունավետ կերպով գործունեություն ծավալել իրենց հանրապետություններից դուրս: Յոթնամյա դպրոցը միայն «իր» լեզվով ավարտած աշակերտը, գործնականում չտիրապետելով ռուսերենին, զրկված էր կրթությունը ԽՍՀՄ-ի այլ տարածաշրջաններում շարունակելու հնարավորությունից: Նմանատիպ սահմանափակումներ ի հայտ եկան նաև բանակում: Ազգային ստորաբաժանումների հրամանատարները իրենց ստորաբաժանումներից դուրս չունեին իրական կարիերայի հեռանկարներ: Անհասկանալի էր՝ ազգային ստորաբաժանումները ինչպես պետք է պատերազմի պայմաններում փոխգործակցեին Կարմիր բանակի մյուս ստորաբաժանումների հետ: Այս խնդիրների ֆոնին 1930-ականների սկզբին ԽՍՀՄ ղեկավարությունը սկսեց հրաժարվել բնիկացման քաղաքականության պարտադիր և մեխանիկական կիրառումից՝ նախընտրելով կենտրոնացված և ունիվերսալ կառավարում, որն առավել համահունչ էր ձևավորվող ստալինյան վարչաքաղաքական մոդելին:

§ 72. Քաղաքը և գյուղը 1920-ական թվականներին: Քաղաքական պայքարը ՆԷՊ-ի ժամանակաշրջանում

ՆԷՊ-ի ճգնաժամերը: ՆԷՊ-ը բարդ տնտեսական համակարգ էր, որը համադրում էր շուկայական հարաբերություններն ու պետական կարգավորումը: Այն պահանջում էր զգուշավոր հավասարակշռում պետական վերահսկողության և մասնավոր նախաձեռնության միջև: Սակայն այս մոդելի ներդրումը և կայունացումը ուղեկցվում էր լուրջ մարտահրավերներով: ՆԷՊ-ի հիմնական խնդիրներից մեկը քաղաքի և գյուղի տնտեսական շահերի փոխհամաձայնեցումն էր:

Կառավարությունը, ձգտելով կուտակել արդյունաբերության վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ, փորձեց բարձրացնել պետական ձեռնարկությունների արտադրանքի գները և միաժամանակ նվազեցնել այն գինը, որով գյուղացիները վաճառում էին իրենց հացահատիկի ավելցուկը պետական գնումների կենտրոններին: Այս քաղաքականությունը հանգեցրեց այնպիսի տնտեսական անհավասարակշռության, որը հայտնի դարձավ որպես «գնային մկրատ»: Այս պատկերավոր արտահայտությամբ նկարագրվում էր արդյունաբերական ապրանքների և գյուղմթերքի գների միջև խորացող անհամաչափությունը: Կախված այն բանից, թե որքանով էին այդ մկրատները հեռանում իրարից, նվազում էր գյուղացիների՝ պետությանը հացահատիկ վաճառելու շահագրգռվածությունը: Արդեն 1923 թվականին պետությունը բախվեց ՆԷՊ-ի առաջին խոշոր ճգնաժամին: Առևտրային շրջանառությունը գրեթե կասեցվեց. գյուղացիները հրաժարվում էին վաճառել իրենց արտադրանքը



Գյուղացիների՝ հացահատիկով սայլեր հացահատիկի բեռնաթափման կետի մոտ: Չիստոպոլ: 1920-ականների առաջին կես

«կոպեկներով» և արդյունաբերական ապրանքները գնել «եռապատիկ բարձր» գներով: Տնտեսական հավասարակշռությունը վերականգնելու նպատակով պետությունը հարկադրված եղավ մոտ մեկ երրորդով իջեցնել արդյունաբերական ապրանքների գները և բարձրացնել հացահատիկի գնման գները:

Այնուամենայնիվ, 1920-ականների կեսերին ՆԷՊ-ի մոդելը ապացուցեց իր կենսունակությունն ու արդյունավետությունը՝ ապահովելով զգալի տնտեսական աճ: Վերականգնվեց մանրածախ առևտուրը (հատկապես՝ տոնավաճառային), սկսեցին գործել ապրանքային բորսաներ, վերաբացվեցին նախկինում լքված արդյունաբերական ձեռնարկություններ, ակտիվացավ սպառողական և արհեստագործական կոոպերացիան, իսկ մակրոտնտեսական գրեթե բոլոր ցուցանիշները դրսևորեցին կայուն աճի միտումներ: Միևնույն ժամանակ տնտեսական քաղաքականության կայուն վերահսկողության անհրաժեշտությունն ու առևտրաշրջանառության մեջ առկա խոչընդոտների շարունակականությունը հանգեցրին կոմունիստների շրջանում քաղաքական վեճերի սրմանը: Հիմնական հարցը հետևյալն էր՝ ուր ենք գնում: Եթե ՆԷՊ-ը համարվում է մարտավարական նահանջ, ապա որտե՞ղ է այդ նահանջի սահմանը, և ե՞րբ պետք է սկսվի առաջխաղացումը դեպի սոցիալիստական տնտեսություն: Այս հակասությունները, որոնք օրեցօր ավելի ակնառու էին դառնում ԽՄԿԿ(բ) ղեկավարության շրջանում, որոշ չափով արտահայտում էին կուսակցության ներսում զարգացող քաղաքական մրցակցության գործընթացը:

Ներկուսակցական պայքար: ԽՍՀՄ-ի ստեղծման որոշումը խորհրդային ղեկավարության վերջին նշանակալից քաղաքական քայլն էր, որի ընդունման գործում վճռորոշ դեր ունեցավ Վ. Ի. Լենինը: Դեռևս 1922 թվականի մայիսին նա ծանր հիվանդացավ, 1923-ին անցավ թոշակի, իսկ 1924-ի հունվարին մահացավ Գորկիում՝ իր նստավայրում: Լենինի՝ իշխանության լծակներից հեռանալը սրեց ներկուսակցական հակասությունները: Կուսակցական վերնախավում (այսպես կոչված՝ «կուսակցական Օլիմպոսում») ծավալվեց կատաղի պայքար լենինյան քաղաքական ժառանգության համար: Հարկ է նկատել, որ 1920-ականների սկզբին ԽՍՀՄ-ում լուծարվել էին ոչ բոլշևիկյան վերջին կուսակցությունները: Այս պայմաններում քաղաքական մրցակցությունը տեղափոխվեց կուսակցության ներքին դաշտ: Այլ կերպ ասած, պայքարը ԽՍՀՄ-ի ղեկավարման իրավունքի համար իրականանում էր միևնույն կուսակցության շրջանակներում, ինչը պայմանավորեց ԽՍՀՄ պատմության հաջորդ շրջանի քաղաքական դինամիկան:

Պայքարը բոլշևիկյան ղեկավարության շրջանում ընթանում էր երկու փոխկապակցված հարթությամբ: Նախ և առաջ ուշադրության կենտրոնում էին արդյունաբերականացման շուրջ ծավալված հանրային քննարկումները: Բոլոր առաջնորդները հանդես էին գալիս արդյունաբերականացման անհրաժեշտության օգտին, սակայն տարակարծություններ կային դրա տեմպերի, ձևերի և իրականացման մեխանիզմների վերաբերյալ: Քննարկումներն աստիճանաբար վերաճեցին գաղափարական հակասությունների: Ըստ խորհրդային պատմագրության՝ ձևավորվեցին երկու հիմնական ուղղություններ, որոնք պայմանականորեն կարելի է սահմանել որպես կուսակցության գլխավոր գիծ և ձախ ընդդիմության մոտեցում:



Գ.Է. Զինովև: Նկարիչ՝ Ի.Ի. Բրոդսկի



Լ.Բ. Կամենև: Նկարիչ՝ Ի.Ի. Բրոդսկի

«Գլխավոր գծի» կողմնակիցները շեշտադրում էին, որ ՆԷՊ-ի կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր, որ գյուղերում հաստատվել էր սոցիալական խաղաղություն՝ փոխարինելով «սողացող հակահեղափոխությանը»: Նրանց մոտեցմամբ արդյունաբերականացումը պետք էր իրականացնել աստիճանաբար՝ առաջնային ուշադրություն դարձնելով սպառողական ապրանքներ արտադրող «Բ» խմբի արդյունաբերության զարգացմանը: Այդ ապրանքները գյուղացիները կկարողանային գնել՝ իրենց հացահատիկը շուկայում վաճառելով, իսկ Կառավարությունն այդ ավելցուկը կվերավաճառեր արտերկրում՝ կուտակելով արտարժութային պաշարներ: Այս եղանակով միջնաժամկետ հեռանկարում հնարավոր կլիներ անցում կատարել արտադրության միջոցներ ստեղծող՝ «Ա» խմբի արդյունաբերության՝ մասնավորապես՝ ծանր արդյունաբերության ոլորտի զարգացմանը: Ի հակադրություն այս տեսակետին՝ ձախ ընդդիմության առաջնորդները պնդում էին, որ արդյունաբերացման գործընթացը պետք էր սկսել անհապաղ և արագացված տեմպերով: Նրանց համոզմամբ առաջնահերթ պետք էր զարգացնել մեքենաշինությունն ու մետալուրգիան՝ «Ա» խմբի արդյունաբերությունը: Միայն նման քաղաքականությունը, ըստ ընդդիմադիրների, կարող էր ապահովել բանվոր դասակարգի քանակական աճ և ստեղծել սոցիալապես հուսալի հենարան խորհրդային իշխանության համար: Հակառակ դեպքում, ըստ նրանց, սոցիալական ցանկացած փորձ անխուսափելիորեն կվերադարձներ ռուս գյուղացիության «մանրբուրժուական ճահիճում»: Ձախ ընդդիմությունն ընդունում էր, որ արագացված արդյունաբերացումը պահանջում է ֆինանսական զգալի ռեսուրսներ, և առաջարկում էր դրանք հայթայթել՝ կտրուկ ավելացնելով գյուղացիության հարկային բեռը: Ե՛վ «գլխավոր գծի» կողմնակիցները, և՛ ընդդիմադիրները գիտակցում էին, որ նման քաղաքականությունը կնշանակեր ՆԷՊ-ի հիմքերի վերանայում: Տարբերությունն այն էր, որ «գլխավոր գծի» կողմնակիցներն այդ քայլը համարում էին անընդունելի և վտանգավոր, մինչդեռ ընդդիմությունը պատրաստ էր գնալ այդ ճանապարհով՝ արդյունաբերության արագ վերականգնման համար:

Արդյունաբերացման շուրջ ընթացող քննարկումները քաղաքական մրցակցության միայն մի կողմն էին: Միաժամանակ ընթանում էր պայքար Վ.Ի. Լենինի ժառանգորդի կարգավիճակի համար: Յուրաքանչյուր բոլշևիկ առաջնորդի հետևում կանգնած էր միջին օղակի կուսակցական ֆունկցիոներներից կազմված թիմ, որի յուրաքանչյուր անդամ հստակ գիտակցում էր՝ եթե իր հովանավորը հաղթանակի հասնի, ապա իր առջև կբացվեն առաջխաղացման և իշխանության մեջ ամրապնդվելու լայն հնարավորություններ, իսկ հակառակ պարագայում նա կարող է դուրս մղվել քաղաքական կյանքից: Այս պայմաններում թե՛ առաջնորդների, թե՛ նրանց հետևորդների մակարդակում արդյունաբերացման տեսական հիմնահարցերը հաճախ ստվերվում էին ընթացիկ քաղաքական շահերով:

1924 թվականին «գլխավոր գիծը» առաջնորդում էր եռյակը՝ Գ.Ե. Զինովևը, Լ.Բ. Կամենևը և Ի.Վ. Ստալինը: 1925 թվականի հունվարին նրանք հաղթեցին. ընդդիմության առաջնորդ Լ.Դ. Տրոցկին հեռացվեց զբաղեցրած պաշտոններից, իսկ նրա կողմնակիցները «մաքրվեցին» պետական ապարատից: Սակայն եռյակը շուտով կազմալուծվեց, և Ստալինը դարձավ «գլխավոր գծի» անփոխարինելի առաջնորդը: 1926 թվականին Զինովևը և Կամենևը միավորվեցին Տրոցկու հետ՝ կազմավորելով «Միացյալ ընդդիմության» դաշինքը: Միևնույն ժամանակ ոչ ոքի չզարմացրեց, որ մեկ տարի առաջ Զինովևն ու Կամենևը, ինչպես և Տրոցկին, իրենց հակառակորդների տնտեսական հաշվարկները լավագույն դեպքում համարում էին անմտածված, իսկ վատագույն դեպքում՝ հակահեղափոխական:

Նոմենկլատուրային համակարգ: 1920-ականների քաղաքական պայքարի ընթացքում Ստալինի գլխավորած «գլխավոր գիծը» հաջորդաբար հաղթեց մի քանի ընդդիմադիր խմբերի՝ 46-ի պլատֆորմին, Նոր ընդդիմությանը և Միացյալ ընդդիմությանը: Պետական ապարատում Ստալինի և նրա համախոհների հաղթական դիրքերի պահպանման կարևորագույն գործիքը նոմենկլատուրայի ինստիտուտն էր: Դեռ քաղաքացիական պատերազմի օրոք բոլշևիկները կանգնած էին Կարմիր բանակի յուրաքանչյուր ստորաբաժանման և պետական հաստատության համար հրամանատարական կազմի (որպես կանոն՝ հին ռեժիմից սպաներ) և պետական ապարատի (հիմնականում ցարական ժամանակներից մնացած պաշտոնյաներ) օրինապահությունը ապահովող կոմիսար կամ ղեկավար նշանակելու խնդրի առաջ: Զորամասում նշանակված կոմիսարը պետք է գոնե նվազագույն գիտելիքներ ունենար ռազմական գործից, իսկ պետական բանկ կամ երկաթուղային վարչություն ուղարկված թեկնածուն պարտավոր էր տարրական պատկերացում ունենալ այն ոլորտի մասին, որը պետք է վերահսկեր: Այդ պատճառով բոլշևիկները, որոնք ունեին մասնագիտական տարբեր գիտելիքներ և հմտություններ, բարձր պահանջարկ ձեռք բերեցին: Այդպիսի կադրերին առավել արդյունավետ օգտագործելու նպատակով Կուսակցության Կենտկոմի քարտուղարության կազմում ստեղծվեց կազմակերպչական հատուկ վարչություն՝ Կազմբաժին: Բացի այդ, կուսակցության մեջ բանվորների ու գյուղացիների լայն հոսք սկսվեց, որոնք, ի տարբերություն նախահեղափոխական սերնդի կուսակցականների, նորմալ կրթություն չէին ստացել: Կենտկոմը և Կենտկոմի քարտուղարության կազմա-

կերպչական բաժինը ավելի ու ավելի հաճախ էին ստանում խնդրանքներ ստորին օղակներից՝ ուղարկել «բանիմաց ընկերոջ», որը կօգներ կարգավորել տեղացի բոլշևիկների միջև առաջացող թյուրիմացությունները: Արդյունքում տեղական կուսակցական մարմինների ղեկավարությունը սկսեց ընտրվել ոչ թե տեղական կադրերից, այլ կենտրոնից նշանակվել: 1923 թվականին կազմակերպչական վարչությունը այս պրակտիկան հասցրեց իր տրամաբանական ավարտին՝ պաշտոնապես տարածելով նոմենկլատուրայի ցուցակները: Առաջին հայացքից նոմենկլատուրան բացառապես տեխնիկական փաստաթուղթ էր՝ պաշտոնների ցանկ, որոնցում հնարավոր չէր նշանակվել առանց համապատասխան մակարդակում կուսակցական իշխանության կողմից տվյալ թեկնածության հաստատման: Նոմենկլատուրան գործում էր երեք մակարդակով՝ համամիութենական (հաստատում Կենտկոմի կողմից), հանրապետական (հանրապետական Կենտկոմի հաստատում), մարզային (շրջանային կոմիտեի հաստատում): Այս տեխնիկական որոշման շնորհիվ Կազմբաժինը կարողացավ նշանակել շրջանային և շրջանային կուսակցական կոմիտեների նախագահների և քարտուղարների թեկնածուներին:

Ստալինը՝ որպես Համամիութենական կոմունիստական կուսակցության Կենտկոմի գլխավոր քարտուղար, վերահսկում էր Կենտկոմի քարտուղարությունը, այդ թվում՝ նրա կազմում գործող Կազմբաժինը: Սա նրան և իր համախոհներին հնարավորություն տվեց ապահովելու մեծամասնություն հաջորդ համագումարում: Շրջանային կոմիտեների քարտուղարները, որոնք ընտրվել էին «գլխավոր գծի» համակիրներից, տարածաշրջանային կուսակցական կոնֆերանսների մակարդակով զտում էին ընդդիմադիրներին՝ այդպիսով վերահսկելով համագումարի պատվիրակների ձևավորումը: Կուսակցական կադրերի նշանակման նոմենկլատուրային համակարգը դարձավ հիմնական գործիքը, որն ապահովեց Ստալինի հաղթանակը «լենինյան ժառանգության» համար մղվող պայքարում:

§ 73. Խորհրդային հասարակությունը 1920-ական թվականներին

ՆԷՊ-ի սոցիալական հայեցակետերը: ՆԷՊ-ի իրականացումը միանշանակ չընդունվեց հասարակության բոլոր շերտերի կողմից: Կուսակցական և պետական ապարատի մի զգալի հատված դեռևս չէր հրաժարվել «հեղափոխական գրոհի» գաղափարախոսությունից: ՆԷՊ-ի շրջանակներում պայքար ծավալվեց վարչական ապարատի ու բյուրոկրատիայի ուռճացման դեմ: Նրա հակառակորդները հիմնականում գաղափարական «ձախերն» էին և պետական կառույցներում աշխատող այն գործիչները, որոնք կրճատման վտանգի տակ էին հայտնվել: Բացի այդ, քաղաքացիական պատերազմի ժամանակ Կարմիր բանակում պաշտոններ զբաղեցրած անձինք զորացրվելով (քանի որ բանակի կազմը 1920–1923 թթ. կրճատվել էր 5,5 միլիոնից մինչև 600 հազար մարդ) հաճախ չէին ցանկանում վերադառնալ գործարաններ՝ նախընտրելով պահպանել իրենց «պաշտոնավոր անձի» կարգավիճակը: Արդյունքում ծառայակիցների

շրջանում սրվեց մրցակցությունը: Միևնույն ժամանակ նէպմանների հարստացումը նոր տնտեսական պայմաններում, ինչպես նաև հասարակության սոցիալական շերտավորման աճը էապես խորացրին սոցիալական լարվածությունը:



«Նեպման» կարամելի փաթեթավորման թաղանթ

Թեև բանվորների կենսապայմանները որոշ չափով բարելավվել էին, սակայն ոչ բոլորն էին գոհ իրենց դրությունից: Տնտեսվարկային ձեռնարկախմբերը շահույթ ապահովելու նպատակով ձգտում էին կրճատել աշխատողների թիվը, ինչի հետևանքով երկրում, ինչպես նախահեղափոխական տարիներին, կրկին գործազրկություն սկսվեց: Նոր պայմաններում հարստություն կուտակած նէպմանները ևս հասկանում էին իրենց կարգավիճակի անորոշությունն ու անպաշտպանվածությունը. նրանք գիտակցում էին, որ խորհրդային իշխանությունը իրենց ընդունել էր ժամանակավոր ու պայմանական կերպով: Պետության վարած քաղաքականությունն էլ նրանց նկատմամբ տատանվում էր՝ ժամանակավոր հանդուրժողականությունից մինչև պարբերական հետապնդումներ:

Բացի այդ, ԽՍՀՄ բնակչության զգալի մասը գտնվում էր քաղաքականապես անապահով վիճակում: Նախկին ձեռնարկատերերը, ոստիկանները և հոգևորականները զրկվել էին ընտրական իրավունքից և կիսապաշտոնապես համարվում էին իրավազրկված: 1924 թվականի Սահմանադրության համաձայն՝ խորհրդային պետական մարմինների ընտրությունների ժամանակ բանվորներն ու գյուղացիները չունեին հավասար ընտրական պայմաններ: Այսպիսով, բնակչության բավականին լայն շերտեր սոցիալական, քաղաքական կամ տնտեսական պատճառներով դժգոհ էին ՆԷՊ-ից: Այդ դժգոհությունը դարձավ այն գործոններից մեկը, որը նպաստեց 1920-ականների վերջին ՆԷՊ-ից հրաժարվելուն:

Գաղափարախոսությունը: Պետությունը և եկեղեցին: ՆԷՊ-ի ժամանակաշրջանում խորհրդային ղեկավարությունը հրաժարվեց Կարմիր ահաբեկչության գործելակերպից, սակայն քաղաքական ցանկացած իրական կամ պոտենցիալ ընդդիմություն շարունակեց ենթարկվել կոշտ ճնշումների: Ոչ բոլշևիկյան բոլոր կազմակերպությունները հայտարարվեցին ապօրինի: Մենշևիկները, էսեռներն ու անարխիստները ենթարկվեցին զանգվածային բռնաճնշումների: Որոշ «անվստահելի» անձինք արտաքսվեցին երկրից: Մասնավորապես, 1922 թվականին Խորհրդային Ռուսաստանից վտարվել են մտավորականության շուրջ 200 ընդդիմադիր ներկայացուցիչներ:

Այս ամենից զերծ չմնաց նաև հոգևորականությունը: Խորհրդային ղեկավարությունը հոգևորականներին համարում էր գաղափարական գլխավոր հակառակորդ, քանի որ եկեղեցին դեռևս մեծ ազդեցություն էր ունենում հասարակության վրա: 1922 թվականին՝ սովի դեմ պայքարի ժամանակ, Ժողովրդական կոմիսարների խորհուրդը

թույլատրեց եկեղեցու թանկարժեք իրերի զանգվածային բռնագրավումը՝ որպես միջոց սննդամթերք ձեռք բերելու համար: Թեև եկեղեցին պատրաստակամ էր նպաստել այդ գործընթացին՝ տրամադրելով ֆինանսական աջակցություն, իշխանությունները նախընտրեցին բռնի կերպով առգրավել թանկարժեք մետաղներից պատրաստված եկեղեցական սպասքը: Այս աննրբանկատ և կոշտ միջոցները առաջացրին հավատացյալների վրդովմունքը: Սա էլ իր հերթին բոլշևիկներին հնարավորություն տվեց հակաեկեղեցական արշավ սկսել:

1920-ականների սկզբին եկեղեցու ներսում ուժեղացավ վերափոխման շարժումը, որը կապված էր դարասկզբի քրիստոնեական սոցիալիստական գաղափարների վերակենդանացման հետ: Նոր պայմաններում վերափոխվող հոգևորականները փորձեցին համագործակցել խորհրդային պետության հետ: 1923 թվականին նրանք հրավիրեցին եկեղեցական ժողով և պաշտոնապես ճանաչեցին խորհրդային իշխանությունը: Սակայն այս քայլը չազդեց խորհրդային ղեկավարության վերաբերմունքի վրա: Հակակրոնական քարոզչությունը շարունակեց մնալ խորհրդային պաշտոնական գաղափարախոսության հիմնական բաղադրիչներից մեկը: Եկեղեցու դեմ հալածանքները չդադարեցին 1920-ական թվականների ընթացքում:

Մտավորականության մի հատված, այդ թվում՝ արտագաղթածները, փորձեց իր տեղը գտնել նոր Ռուսաստանում՝ առաջ քաշելով շրջադարձային փոփոխությունների մասին գաղափարախոսությունը, ըստ որի՝ բոլշևիկները փաստացի փրկել էին ռուսական պետականությունը: Այս հայեցակարգի համաձայն՝ մտավորականության առաքելությունն էր համագործակցել նոր իշխանության հետ, քանի որ իրական կյանքը վաղ թե ուշ կստիպեր խորհրդային առաջնորդներին հրաժարվել հեղափոխական



Կարմիր բանակի զինվորները ակումբի վերածված եկեղեցում: Նովգորոդի նահանգ

հռետորաբանությունից և անցնել իրատեսական քաղաքականության: ՆԷՊ-ը սմենովեխովականության (ուղենշափոխականության) կողմնակիցների կողմից դիտվում էր որպես «բնականոն կյանքի» վերադառնալու առաջին փուլ, որին իբր պետք է հաջորդեր բուրժուական պետության ձևավորումը: Թեև նման մոտեցումը հետաքրքրում էր որոշ շրջանակների թե՛ ԽՍՀՄ-ում, թե՛ սփյուռքում, սակայն բոլշևիկներն անտարբեր էին սմենովեխականների գաղափարների հանդեպ և չէին պատրաստվում նրանց հետ որևէ փոխհամաձայնության գնալ:

Կրթության ոլորտում խորհրդային իշխանության առաջնահերթություններից մեկը անգրագիտության վերացումն էր: Կառավարությունը կենտրոնացրել էր իր ջանքերը այս խնդրի լուծման վրա, սակայն ֆինանսական ռեսուրսների պակասը խանգարում էր նշանակալի առաջընթացի հասնել: Արդյունքում՝ մինչ 1926 թվականը ԽՍՀՄ-ում գրագիտության մակարդակը կազմել է ընդամենը 55–60 %:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին «ռազմական կոմունիզմի» սոցիալ-տնտեսական և քաղաքական արդյունքները:
2. Ինչպե՞ս Կանաչ շարժումը և Կրոնշտադտի նավաստիների ապստամբությունն ազդեցին խորհրդային պետության քաղաքականության փոփոխությունների վրա:
3. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում ԳՕԷԼՌՕ-ի ծրագիրը: Որո՞նք էին այս նպատակներին հասնելու ուղիները:
4. Անվանե՛ք և բնութագրե՛ք նոր տնտեսական քաղաքականության հիմնական տարրերը:
5. Ի՞նչ դեր խաղացին ձեռնարկախմբերը տնտեսության մեջ: Ինչո՞վ էր տարբերվում պետական տնտհաշվարկային ձեռնարկախումբը տնտհաշվարկային ձեռնարկամիավորումից:
6. Պատրաստե՛ք հաղորդում ՆԷՊ-ի ընթացքում իրականացված ֆինանսական բարեփոխումների վերաբերյալ:
7. Պատմե՛ք խորհրդային հանրապետությունների միավորման խնդրի վերաբերյալ մոտեցումների մասին: Ի՞նչ սկզբունքներով ստեղծվեց ԽՍՀՄ-ը: Ո՞ր հանրապետություններն են եղել ԽՍՀՄ կազմի մեջ պատմական տարբեր ժամանակաշրջաններում:
8. Որո՞նք էին բնիկացման քաղաքականության նպատակներն ու արդյունքները: Ի՞նչ դեր է խաղացել այն առանձին շրջանների զարգացման գործում:
9. Պատրաստե՛ք հաղորդում Վ. Ի. Լենինի վերջին հոդվածների և նամակների վերաբերյալ, որոնք համարվում են նրա քաղաքական կտակը: Քաղաքական և տնտեսական կյանքի ո՞ր հարցերի վրա է առաջնային ուշադրություն դարձրել բոլշևիկների

առաջնորդը: Անձնական ի՞նչ խնդիրներ է նա բարձրացրել՝ կուսակցության ղեկավարության հետ կապված:

10. Ինչու՞ ներկուսակցական պայքարում հաղթեցին Ի. Վ. Ստալինն ու նրա կողմնակիցները: Նշե՛ք Ստալինի քաղաքական հիմնական հակառակորդներին:
11. Օգտագործե՛ք տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ և համեմատե՛ք ՌՍՖՍՀ-ի՝ 1918 թ. և ԽՍՀՄ-ի՝ 1924 թ. Սահմանադրությունները: Ձեր կարծիքով որո՞նք են փոփոխված ամենակարևոր դրույթները:
12. Նկարագրե՛ք խորհրդային պետության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ: Ձեր կարծիքով ի՞նչ գաղափարական նպատակադրությամբ էր առաջնորդվում այս քաղաքականությունը:

ԳԼՈՒԽ 15. ԽՍՀՄ-Ը 1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

§ 74. «Ամբողջ ճակատով խորհրդային հարձակման» սկիզբը

«Վերականգնողական աճի» հիմնախնդիրները: 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում ձևավորվեց քաղաքական և տնտեսական համակարգ, որն ընդհանուր առմամբ պահպանվեց մինչև Խորհրդային Միության փլուզումը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ երկրի զարգացումը ստորադասվում էր հիմնական նպատակին՝ ապահովել արագացված արդիականացում և դրանով իսկ երաշխավորել հայրենիքի պաշտպանունակությունը (տե՛ս Հավելված, քարտեզ №16):

ՆԷՊ-ի շնորհիվ տնտեսությունը սկսեց արագ աճել: 1925 թվականին թեթև արդյունաբերությունն արդեն վերականգնել էր մինչպատերազմյան արտադրության ծավալները, 1926 թվականին՝ նաև ծանր արդյունաբերության: Այդ դեպքում ինչու՞ բոլշևիկները հրաժարվեցին նման խոստումնալից տնտեսական քաղաքականությունից: Պետք է հաշվի առնել, որ ՆԷՊ-ի տարիներին տնտեսական աճը վերականգնողական բնույթ է կրել: Գործարաններ չեն կառուցվել. դրանք քաղաքացիական պատերազմից և դրա պատճառած ավերածություններից հետո վերակառուցվել են: Չնայած սարքավորումների զգալի մասի կորստին և կապիտալ շինությունների վերանորոգման անհրաժեշտությանը՝ ձեռնարկությունների վերագործարկումն ընդհանուր առմամբ պահանջում էր համեմատաբար քիչ ներդրումներ և թույլ էր տալիս արտադրությունը վերականգնել կարճ ժամկետներում: Այսպիսով, ՆԷՊ-ը, իրոք, ապահովեց տնտեսական արագ աճ, սակայն միայն այնքան ժամանակ, քանի դեռ հնարավոր էր վերականգնել գոյություն ունեցող գործարաններն ու ձեռնարկությունները:



«Ռուսաստանը նէպականից կվերափոխվի սոցիալիստականի» (Լենին): Պաստառ: Նկարիչ՝ Գ.Գ. Քլուտսիս

Հայտնի է, որ 1920-ականների կեսերին տնտեսությունը հասել էր նախապատերազմյան արտադրության մակարդակին: Այժմ տնտեսական աճը շարունակելու համար «հիմքից» նոր գործարաններ պետք է կառուցվեին: Իսկ դա իր հերթին պահանջում էր կապիտալ ներդրումների զգալի աճ, ինչպես նաև շինարարության մեկնարկից մինչև արտադրության սկիզբն ընկած երկար ժամանակահատված: Հետևաբար ՆԷՊ-ի մոդելը պետք է փոփոխվեր:

Արդյունաբերացման մեկնարկի վերաբերյալ հիմնարար որոշումն ընդունվեց ՀամԿ(բ)Կ XIV համագումարում 1925 թվականի վերջին:

Սակայն այդ փուլում խոսք չկար կուսակցության «գլխավոր գծի» փոփոխության մասին: Ընդհակառակը՝ «գլխավոր գծի» ներկայացուցիչները, հանդես գալով Նոր տնտեսական քաղաքականության պահպանման կարգախոսով, հաղթեցին ընդդիմությանը: Այդ պատճառով էլ 1926 թվականին արդյունաբերացման գործընթացում սկսեցին կիրառել ՆԷՊ-ի ժամանակ ստեղծված գործիքները՝ տնտեսահաշվարկային ձեռնարկախմբեր և ձեռնարկամիավորումներ, ապրանքների փոխանակում սակարանների և տոնավաճառների միջոցով և այլն: Սակայն շուտով պարզ դարձավ, որ երկիրը չունի բավարար ֆինանսական ռեսուրսներ արդյունաբերացումը պատշաճ մակարդակով իրականացնելու համար: Ժողովրդական կոմիսարների խորհուրդը դիմեց չապահովված դրամային արտարժույթի թողարկման, ավելացրեց ալկոհոլի վաճառքը, ժամանակավորապես բարձրացրեց նէպմանների վրա դրված հարկերը: Սակայն այս միջոցները ևս անբավարար էին արդյունաբերական լայնածավալ շինարարություն ապահովելու համար: Միևնույն ժամանակ արտաքին տնտեսական գործոնները խանգարում էին երկրի ներքին տնտեսական քաղաքականության իրականացմանը:

1927 թվականի ռազմական տագնապը: 1927 թվականին Չինաստանում ծագած քաղաքացիական պատերազմի ընթացքում Ազգային հեղափոխական բանակը (ԱՀԲ), որի ղեկավար կազմում զգալի դեր էր խաղում Չինաստանի կոմունիստական կուսակցությունը, ռազմական գործողությունները շարունակեց Խուանխե գետի հովտում (այսպես կոչված Հյուսիսային արշավի շրջանակներում): Քանի որ Մեծ Բրիտանիան այդ տարածաշրջանը համարում էր իր ազդեցության գոտի՝ սկսած Ափիոնային պատերազմներից, իսկ ԱՀԲ-ն Եվրոպայում ընկալվում էր որպես Կոմինտերնի դրածո, Հյուսիսային արշավը, մի շարք այլ հանգամանքների հետ զուգորդված, հանգեցրեց անգլո–խորհրդային հարաբերությունների կտրուկ վատթարացման: Պատմագիտության մեջ այս իրադարձությունները հայտնի են որպես «1927 թվականի ռազմական սադրանք»:

Այս պայմաններում խորհրդային ղեկավարությունը որոշում ընդունեց անցկացնել պաշտպանական ոլորտի հաշվետուգում (աուդիտ): Ստուգման արդյունքում պարզվեց, որ Կարմիր բանակում ծառայում էին շուրջ 600 հազար զինվոր: Զորքերի հրետանային ապահովումը անբավարար էր, իսկ օդուժը և զրահատեխնիկան դեռևս կազմավորման փուլում էին: Ամենակարևոր բացահայտումը, սակայն, այն էր, որ երկրի ռազմական արդյունաբերությունը ի վիճակի չէր բանակին լիարժեք ապահովելու զենքով և զինամթերքով: Այդ պահից սկսած՝ արդյունաբերացման հարցը մի քանի շաբաթվա ընթացքում վերացական քննարկումների ոլորտից տեղափոխվեց խորհրդային պետական քաղաքականության տիրույթ:

«Մեծ բեկում»: 1927 թվականին «ռազմական տագնապի» ազդեցության ներքո խորհրդային ղեկավարությունը սկսեց աստիճանաբար մեծացնել ջանքերը՝ ուղղված արդյունաբերացման գործընթացի ակտիվացմանը: Ինքնահաշվարկային ձեռնարկախմբերը, ինչպես նախորդ տարի, պատճառաբանելով իրենց շահութաբերությունը պահպանելու անհրաժեշտությունը, հրաժարվեցին իրենց միջոցներով ֆինանսավորել խոշոր կապիտալ շինարարությունը և պահանջեցին պետական նպատակային



Ֆինանսական տեսուչը նէպման կնոջ մոտ: Լուսանկարիչ՝ Ա.Ս. Շեյխեթ

վարկեր: Այդ պատճառով Ժողովրդական կոմիսարների խորհուրդը աստիճանաբար սկսեց սահմանափակել ձեռնարկությունների և ձեռնարկամիավորումների ինքնուրույնությունը՝ վերադարձնելով դրանք Գերագույն տնտեսական խորհրդի կենտրոնական ղեկավարության վերահսկողության տակ: Արդյունքում ֆինանսական և նյութական ռեսուրսները պարտադրաբար ուղղվում էին արդյունաբերացման խնդիրների լուծմանը:

Քանի որ արդյունաբերացման հիմնական նպատակը երկրի պաշտպանունակության ապահովումն էր, գերակայություն ստացան մեքենաշինությունը և մետաղագործությունը, այսինքն՝ «Ա» խումբը, որի առաջնահերթ զարգացման անհրաժեշտության մասին դեռևս նախկինում ահազանգում էին ընդդիմադիրները: ՆԷՊ-ի ժամանակ ստեղծված ապրանքային բորսաները սկսեցին մեկը մյուսի հետևից փակվել՝ ապրանքաշրջանառության կտրուկ անկման պատճառով: Շինարարական ծրագրերը ֆինանսավորելու նպատակով նէպմանների նկատմամբ ժամանակավորապես սահմանված հարկերը դարձան մշտական, ինչի հետևանքով տնտեսության կապիտալիստական հատվածը սկսեց անկում ապրել և դադարեց զարգանալ: ԽՍՀՄ ղեկավարությունը արդյունաբերացման միջոցներ հայթայթելու համար դիմեց բազմապիսի քայլերի. սահմանվեց ներքին «արդյունաբերական վարկ», զգալիորեն մեծացվեցին մորթիների, փայտանյութի և ոսկու արտահանումը, իսկ թանգարանների ու պատկերասրահների պահուստներից վաճառքի հանվեցին արվեստի արժեքավոր նմուշներ: Այնուամենայնիվ այդ միջոցառումները բավարար չէին արդյունաբերական աճը երաշխավորելու համար:

Ժողովրդական կոմիսարների խորհրդում ֆինանսական խնդիրների լուծման հիմնական հույսը հացահատիկի մթերումներն էին: Նախորդ տարիների փորձից ելնելով՝ որոշվեց «փակել մկրատը»՝ բարձրացնելով հացի գնման գները և իջեցնելով արդյունաբերական ապրանքների վաճառքի գները: Սակայն այս անգամ իրավիճակը արմատապես փոխվել էր: Պետական արդյունաբերությունը արդյունաբերացման կուրսի հետևանքով կրճատել էր լայն սպառման ապրանքների արտադրությունը, իսկ կապիտալիստական հատվածը ճնշված էր հարկային բեռով: Սկսվեց «ապրանքային սով». անգամ դրամ ունենալու պարագայում չափազանց դժվար էր ձեռք բերել անհրաժեշտ սպառողական ապրանքներ: Այդ պայմաններում գյուղացիները հացահատիկ վաճառելու որևէ շահագրգռվածություն չունեին, քանի որ ստացված եկամուտով անհնար էր գնել անհրաժեշտ ապրանքը: 1928 թվականին Կառավարությունը սկսեց ճնշման քաղաքականություն այն գյուղացիների նկատմամբ, որոնք հրաժարվում էին հացը վաճառել պետական գործող գներով:

1929 թվականին ԱՄՆ-ում և կապիտալիստական մի շարք երկրներում բռնկվեց համաշխարհային պատմության ամենամեծ տնտեսական ճգնաժամերից մեկը՝ Մեծ

դեպրեսիան: Արևմտյան շուկաներում բոլոր տեսակի ապրանքների գները կտրուկ նվազեցին: Արդյունքում հնարավոր էր ամբողջական գործարաններ գնել գրեթե մետաղի ջարդոնի արժեքով՝ «կոպեկներով»: Սակայն ԽՍՀՄ-ում նման միջոցներ չկային: Այս իրավիճակում միայն մեկ ելք կար՝ իրականացնել զանգվածային կոլեկտիվացում և այսկերպ ձեռք բերել առևտրային հացահատիկի զգալի ծավալներ, իրացնել այն արտասահմանում թեկուզ ինքնարժեքից ցածր գնով և ստացված միջոցներով ֆինանսավորել արդյունաբերացման ծրագիրը:

Այսպիսով, քաղաքական և տնտեսական մի շարք գործոններ հանգեցրին ՆԷՊ-ից հրաժարվելուն: Արդեն 1929 թվականին դրա հիմնական տարրերը՝ երկաստիճան տնտեսությունը, ազատ շուկայական ապրանքային բորսան, պետական արդյունաբերությունը՝ տնտեսահաշվարկային ձեռնարկությունների տեսքով, փաստորեն վերացել էին: Այս գործընթացները ստացան «Մեծ բեկում» հավաքական անվանումը և խորհրդանշեցին երկրի զարգացման ռազմավարական ուղղության կտրուկ փոփոխությունը:

ՆԷՊ-ից հրաժարվելը և արդյունաբերացման հարկադիր քաղաքականության որդեգրումը պատահականություն կամ ստալինյան Կենտկոմի կամայականության և վոլյունտարիզմի հետևանք չէր: 1931 թվականին Ստալինի արտահայտած մի հայտնի միտք զգալիորեն բացահայտում է այդ ժամանակաշրջանի խորհրդային ղեկավարության քաղաքական տրամաբանությունը. «Մենք առաջադեմ երկրներից հետ ենք մնում 50–100 տարի: Այս ճանապարհը պետք է անցնենք տասը տարում: Կա՛մ կհասնենք այդ նպատակին, կա՛մ էլ կջախջախվենք»:

1930-ականներին խորհրդային իշխանությունը հաճախ կայացնում էր կոշտ, իսկ երբեմն էլ՝ դաժան որոշումներ: Թեև չի կարելի արդարացնել Ստալինի և նրա կողմնակիցների գործողությունները, սակայն կարևոր է հասկանալ, որ այդ քաղաքականությունը ձևավորվել էր որպես հուսահատ փորձ՝ հնարավորինս կարճ ժամանակում արդիականացնելու երկիրը աճող միջազգային սպառնալիքների պայմաններում:

§ 75. Երկրի արդիականացման և պաշտպանունակության ամրապնդման ուղեգիծը

Պլանային տնտեսություն: Արագացված արդյունաբերացման մեկնարկը հանգեցրեց ձեռնարկախմբերի ինքնուրույնության կտրուկ նվազման: Այս գործընթացն ավարտին հասավ 1932 թվականի հունվարին Գերագույն տնտեսական խորհրդի, ինչպես նաև ձեռնարկությունների և ձեռնարկամիավորումների համակարգի մնացորդների վերացմամբ: Ձեռնարկությունները ամբողջովին անցան ժողովրդական կոմիսարիատների ենթակայության տակ: 1932 թվականին ստեղծվեցին նման երեք ժողովրդական կոմիսարիատներ՝ ծանր, թեթև և անտառային արդյունաբերության: Հետագա տարիներին այս համակարգը ենթարկվեց մասնատման ու ապախոշորացման, և արդեն 1941 թվականին ԽՍՀՄ-ում գործում էր 26 տնտեսական ժողովրդական կոմիսարիատ:

Ժողովրդական կոմիսարիատների գործունեության հիմնական նպատակը ոչ թե շահութաբերության ապահովումն էր, այլ պետության կողմից սահմանված պլանների կատարումը: Տնտեսական պլանավորումը ԽՍՀՄ-ում կիրառվել էր դեռևս 1920-ականներին, սակայն ՆԷՊ-ի ժամանակաշրջանում այն դիտվում էր որպես տնտեսական ուղենիշների համախումբ, որի իրագործումն ընդամենը նպատակ էր: 1930-ականներից պլանը վերածվեց դիրեկտիվ փաստաթղթի, որի կատարումը պարտադիր էր: Այդ պատճառով խորհրդային տնտեսությունը կոչվեց պլանային:

Պլանային տնտեսության պայմաններում նյութական ռեսուրսների ձեռքբերումը չէր իրականացվում շուկայական սկզբունքներով, այլ կազմակերպվում էր կենտրոնացված եղանակով՝ Պետական պլանավորման կոմիտեի (ՊՊԿ) և համապատասխան այլ կառույցների միջոցով: Նույն կերպ, ապրանքների գները ձևավորվում էին ոչ թե առաջարկի և պահանջարկի ազատ փոխազդեցությամբ, այլ որոշվում էին պետական մակարդակով: Այս համակարգում դրամի դերը զգալիորեն փոխվել էր: Թեև յուրաքանչյուր ձեռնարկություն պարտավոր էր պահպանել ֆինանսական կարգապահություն՝ հատկապես աշխատավարձերի վճարումը ապահովելու համար, սակայն անգամ ընթացիկ հաշվում միջոցներ ունենալը բավարար չէր: Առանց ՊՊԿ-ի համապատասխան թույլտվության ձեռնարկությունը չէր կարող ստանալ «հիմնապաշարային նյութեր»՝ պողպատ, աղյուս, ցեմենտ և այլն: Այսպիսով, պլանային տնտեսության պայմաններում փողը փաստորեն կորցրել էր իր՝ որպես փոխանակման ունիվերսալ միջոցի դերը:

Պլանային տնտեսության զարգացման հիմնական փաստաթուղթը հնգամյա պլանն էր: Այդ պատճառով պլանային տնտեսության պատմությունը սովորաբար բաժանվում է հնգամյա պլանների փուլերի: Նախապատերազմյան շրջանը ներառում էր երկու ամբողջական հնգամյա պլան. առաջինը իրականացվել է 1928–1932 թթ., իսկ երկրորդը՝ 1933–1937 թթ.: Երրորդ հնգամյա պլանի իրականացումը ընդհատվեց Հայրենական մեծ պատերազմի սկսվելու պատճառով:

Հնգամյա պլանը հաստատվում էր Սովետների համագումարի (1936 թվականից՝ Գերագույն խորհրդի) կողմից և ուներ օրենքի ուժ: Սակայն իրականում այն մշտապես ենթարկվում էր փոփոխությունների ու ճշգրտումների: Բանակի հրամանատարությունը, արձագանքելով ռազմական գործի զարգացումներին, փոխում էր պաշտպանական նշանակության ապրանքների արտադրության հայտերը: Տեղական կուսակցական ղեկավարությունը կարևորում էր իր տարածաշրջանում արդյունաբերական շինարարության ընդլայնումը, քանի որ դա մեծացնում էր իր ազդեցության աստիճանը:

Հեղափոխական հռետորաբանությամբ ոգեշնչված բանվորներն ընդունում էին այսպես կոչված «հանդիպակաց պլան»՝ խոստանալով գերազանցել պետական առաջադրանքներն ու յուրօրինակ «նվեր» մատուցել խորհրդային կառավարությանը: Այդպիսի հայտարարությունների ազդեցությամբ պաշտոնապես հայտարարվեց, որ առաջին հնգամյա պլանը իրագործվել է ընդամենը չորս տարում: Սակայն շուտով պարզվեց, որ արդյունաբերական բազմաթիվ օբյեկտներ ապահովված չեն անհրաժեշտ նյութերով՝ աղյուս, ցեմենտ, փայտամածեր, մետաղական կոնստրուկցիաներ և



ԽՍՀՄ փոստային նամականիշեր՝ նվիրված արդյունաբերացմանը

այլն: Դրանցից շատերը հնարավոր եղավ շահագործման հանձնել միայն երկրորդ հնգամյա պլանի ընթացքում: Տնտեսությունում ի հայտ եկան լուրջ անհավասարակշռություններ, որոնց վերացման նպատակով պահանջվեց պլանների մշտական վերանայում ու հարմարեցում: Այսպիսով, պլանային տնտեսության «պլանավորվածությունը» իրականում հարաբերական էր:

Նախապատերազմյան հնգամյա պլանների առանցքային գաղափարը հզոր պաշտպանական արդյունաբերության ստեղծումն էր: Դրա արդյունքում առաջնահերթ զարգացում ստացավ «Ա» խմբի արդյունաբերությունը, մինչդեռ սպառողական ապրանքների արտադրությունը զգալիորեն կրճատվեց: Սա հանգեցրեց ապրանքային «սովի» խորացմանը, որին շուտով գումարվեց սննդամթերքի պակասը: 1931 թվականին ԽՍՀՄ-ում ներդրվեց քարտային բաշխման համակարգ: Պետական ձեռնարկությունների աշխատակիցները կարող էին ձեռք բերել ապրանքներ և սննդամթերք միայն մատակարարման համապատասխան քարտերի ներկայացմամբ: Գյուղացիները, սակայն, ստիպված էին գոյատևել ինքնուրույն: Բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովելու խնդիրը մասամբ լուծվեց միայն 1935 թվականին, ինչի արդյունքում վերացվեց քարտային համակարգը: Այնուամենայնիվ սննդամթերքի և սպառողական ապրանքների մշտատև պակասը դարձավ խորհրդային տնտեսության բնորոշ գիծը:

Արդյունաբերացում հանուն պաշտպանական արդյունաբերության շահերի: Արդյունաբերական ոլորտը զարգացավ արագ և ինտենսիվ տեմպերով: Կառուցվեցին մետալուրգիական մի շարք հսկայական գործարաններ, այդ թվում՝ «Ազովստալ», «Ջապորիժստալ», «Կրիվորոժստալ», ինչպես նաև Կուզնեցկի և Մագնիտոգորսկի՝ երկաթի և պողպատի կոմբինատները: Սև մետալուրգիայի այս խոշոր կենտրոնները հնարավորություն տվեցին զգալիորեն մեծացնել պողպատի և չուգունի արտադրության ծավալները: Համաչափ զարգացավ նաև գունավոր մետալուրգիան: Առաջին հնգամյա պլանի ընթացքում պղնձի արդյունահանումը մոտ մեկուկես անգամ աճեց, իսկ ցինկի և կապարի արդյունահանման ծավալները գրեթե եռապատկվեցին: Եթե

նախահեղափոխական Ռուսաստանում ալյումինի արդյունաբերություն գրեթե չկար, ապա 1930-ականների վերջին ԽՍՀՄ-ը դարձավ ալյումինի ձուլման ոլորտում երրորդն աշխարհում և երկրորդը Եվրոպայում: Զարգացման դինամիկա արձանագրեցին նաև մեքենաշինության և քիմիական արդյունաբերության ճյուղերը:

Ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր: Կիսաարհեստագործական մի քանի արտադրամասերից արդյունաբերական ոլորտների վերափոխվեցին ինքնաթիռաշինությունը, ավտոմոբիլաշինությունը, տրակտորաշինությունը, էլեկտրական արդյունաբերությունը և այլն: Քիմիական արդյունաբերության մեջ սկսվեց ամոնիակի, ազոտական թթվի, քլորի, անիլինի և ֆոսֆորի՝ արդյունաբերական մասշտաբի արտադրություն: Այս նյութերից շատերը նախահեղափոխական Ռուսաստանում կա՛մ ընդհանրապես չէին արտադրվում, կա՛մ արտադրվում էին միայն լաբորատոր պայմաններում: Այս զարգացումների արդյունքում միայն 1927–1933 թվականներին ԽՍՀՄ-ի՝ վառոդի արտադրական կարողությունը եռապատկվել է: Ընդհանուր առմամբ մինչև 1941 թվականը Խորհրդային Միությունում շահագործման են հանձնվել շուրջ 9 հազար արդյունաբերական նոր օբյեկտներ՝ գործարաններ, ֆաբրիկաներ, հանքավայրեր, էլեկտրակայաններ և այլ ենթակառուցվածքներ: Միայն առաջին երկու հնգամյա պլանների ընթացքում արտադրության աճի տեմպերը եղել են ռեկորդային. սև մետաղների արտադրությունն աճել է 4, ինքնաթիռներինը՝ 6,5, ինքնաթիռների շարժիչներինը՝ 18, մետաղամշակման հաստոցներինը՝ 24, իսկ ավտոմեքենաների արտադրությունը՝ 250 անգամ:

Մետալուրգիայի, մեքենաշինության և քիմիական արդյունաբերության բուռն զարգացումը ձևավորեց արդյունաբերական հզոր բազա, որը հնարավորություն տվեց ապահովելու պաշտպանական արդյունաբերության համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Իրոք, ռազմական տեխնիկայի և զինամթերքի զանգվածային արտադրության կտրուկ աճ սկսվել է 1937–1938 թվականներին:

Պաշտպանական արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը 1933–1940 թվականներին

	1933	**1934**	**1935**	**1936**	**1937**	**1938**	**1939**	**1940**
Օդանավեր	3493	3655	1516	3154	4435	5469	10 758	10 565
Ավիաշարժիչներ	5785	7600	5568	5350	Տվյալ չկա	5785	7600	5568
Ավիառումբեր (հազ. հտ.)	284	216	200	600	795	1728	2834	7691
Տանկեր	3640	3440	3061	3989	1559	2271	2986	2790
Հրետանային զենքեր	1797	5164	4895	6983	5443	12 627	16 459	13 724
Ականանետներ	0	0	0	0	0	377	4457	38 349
Ռումբեր (հազ. հտ.)	2135	1991	2389	5675	4924	12 426	18 099	14 921

Ականներ (հազ. հտ.)	0	0	0	0	0	603	2741	18 285
Գնդացիրներ (հազ. հտ.)	32,7	29,5	29,8	34,5	74,7	112	95,4	Տվյալ չկա
Փամփուշտներ (հազ. հտ.)	225	259	450	800	1015	1848	2194	2820

1936 թվականին ռազմական պատվերներ կատարող ձեռնարկությունների, ինչպես նաև դրանց հետ կապված գիտահետազոտական ինստիտուտների և նախագծային բյուրոների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Պաշտպանական արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատը։ որով սկիզբ դրվեց հայրենական պաշտպանական արդյունաբերության համալիրի ձևավորման գործընթացին։

§ 76. Զանգվածային կոլեկտիվացում և արդյունքները

Կոլտնտեսություններ և ՄՏՍ-ներ: «Հողի մասին» հրամանագրի ընդունումից հետո հողատարածքների վերաբաշխման և գյուղատնտեսության ոլորտի ակտիվացման արդյունքում Նոր տնտեսական քաղաքականության մեկնարկը գյուղերում հանգեցրեց հողերի այսպես կոչված «միջինացման»։ Միջին եկամուտ ունեցող գյուղացիների (միջակ գյուղացիներ) մասնաբաժինը նկատելիորեն աճեց ինչպես աղքատ, այնպես էլ հարուստ գյուղացիների (կուլակների) համեմատ։ Միջակ գյուղացին, որպես կանոն, արտադրում էր այնքան, որքան սպառում էր իր ընտանիքը, ուստի նրան հացահատիկ չէր մնում վաճառելու։ 1920-ականների կեսերին խորհրդային ղեկավարությունը բախվեց լուրջ խնդրի՝ գյուղատնտեսության շուկայականության չափազանց ցածր մակարդակին։ (Նախահեղափոխական Ռուսաստանում շուկայահանվող հացահատիկի հիմնական մասը արտադրվում էր ազնվականական խոշոր կալվածքներում և կուլակային տնտեսություններում)։ ՆԷՊ-ի տարիներին բոլշևիկները փորձում էին ապավինել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացմանը, սակայն գյուղական արտելները և կոոպերատիվ ընկերությունները իրենց փոքրաթվության և տնտեսական թուլության պատճառով չէին կարող ազդել ագրարային արտադրության ընդհանուր ծավալների վրա։ Հետևաբար 1929 թվականին «Մեծ բեկման» կարևորագույն գործոններից մեկը գյուղի զանգվածային և բռնի կոլեկտիվացումն էր։

Գյուղացիները պարտադրաբար ընդգրկվում էին կոլեկտիվ տնտեսությունների՝ կոլտնտեսությունների կազմում։ Թեև պաշտոնապես կոլտնտեսություններին անդամակցությունը ներկայացվում էր որպես կամավորություն, սակայն գործնականում, եթե քարոզարշավը հաջողություն չէր բերում, իշխանություններն անցնում էին հարկադրանքի։ 1930 թվականի հունվարի 5-ին Բոլշևիկների Համամիութենական Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ընդունեց «Կոլեկտիվացման

տեմպերի և կոլտնտեսությունների կառուցմանը պետական աջակցության միջոցառումների մասին» որոշումը: Այս փաստաթղթով նախատեսվում էր կոլեկտիվացման գործընթացն ամբողջությամբ ավարտել մինչև 1932 թվականը, իսկ հացահատիկային առաջատար շրջաններում՝ մինչև 1931 թվականի գարուն:



«Գյուղացիական աղքատ և միջին տնտեսությունների համատարած կոլեկտիվացմամբ վերացնել կուլակությունը որպես դասակարգ»: Պաստառ: Նկարիչ՝ Լ.Պ. Վյազմենսկի

Թեև ձևական առումով կոլտնտեսությունը համարվում էր կոոպերատիվ, իրականում այն կատարում էր գյուղատնտեսական մթերքների՝ հաստատագրված գներով առաքման պարտադիր պլանը: Խորհրդային պատմագրությունը սովորաբար նշում է, որ գյուղացիական առանձին տնտեսությունները չունեին բավարար հնարավորություններ գյուղատնտեսական բարդ տեխնիկա ձեռք բերելու համար, մինչդեռ կոլտնտեսությունները միավորված ռեսուրսների շնորհիվ ապահովում էին աշխատանքի արտադրողականության աճ մեքենայացման միջոցով: Տեսականորեն այս մոտեցումը հիմնավորված էր, սակայն իրականում տրակտորների և ներկրվող այլ տեխնիկայի սահմանափակ պաշարները թույլ չտվեցին գյուղական բնակավայրերում աշխատուժի արտադրողականության էական աճ ապահովել: Խորհրդային տրակտորների և կոմբայնների զանգվածային արտադրությունը սկսվեց միայն 1930-ականների երկրորդ կեսին: Այսպիսով, կոլեկտիվացման սկզբնական փուլում կոլտնտեսությունները հիմնականում միավորում էին գյուղում առկա անասունները, տեխնիկան և վարելահողերը: Սակայն հայրենական գյուղատնտեսական տեխնիկայի լայնածավալ արտադրություն սկսելուց հետո կոլտնտեսությունները չունեին համապատասխան մասնագետներ (մեխանիզատորներ), որոնք կարող էին աշխատել այդ տեխնիկայով և ապահովել դրանց սպասարկումը: Այդ պատճառով տրակտորներն ու կոմբայնները տրամադրվեցին շրջանային մեքենա-տրակտորային կայաններին (ՄՏՍ), իսկ կոլտնտեսությունները տեխնիկական սպասարկման համար սկսեցին պայմանագրեր կնքել ՄՏՍ-ների հետ:

Այն բանից հետո, երբ կոլտնտեսությունը կատարում էր մատակարարման պլանը, մարում ՄՏՍ-ի հետ ունեցած հաշիվները և վճարում հարկերը, բերքի մնացորդը տեսականորեն պետք է բաշխվեր կոլտնտեսականների միջև՝ «աշխատանքային օրերի» համամասնությամբ: Սակայն գործնականում կոլտնտեսականների՝ աշխատանքային օրերով հաշվարկված մասնաբաժինն այնքան քիչ էր, որ հաճախ նույնիսկ մեկ անձի նվազագույն սննդային կարիքները բավարարելու համար չէր բավականացնում: Արդյունքում կոլտնտեսականների սննդի հիմնական աղբյուրը դարձան նրանց

տրամադրված փոքր, տնամերձ հողատարածքները, որոնք պահպանվում էին որպես անձնական օգտագործման հողեր կոլտնտեսությանը միանալուց հետո:

Զանգվածային կոլեկտիվացումը և կուլակների վերացումը: Հարկադիր կոլեկտիվացումը և կոլտնտեսային կարգերի հաստատումը գյուղերում առաջացրին զանգվածային դժգոհություն, զայրույթ և ընդվզում: Տեղական ղեկավարությունը, հաճախ անմտությամբ կամ վերադասների բարեհաճությունը շահելու մղումով, լուրջ սխալներ էր թույլ տալիս կոլեկտիվացման գործընթացում: Չնայած մանր անասուններն ու թռչունները պաշտոնապես հանրայնացման ենթակա չէին, սակայն գործնականում կոլտնտեսության շատ նախագահներ պահանջում էին, որ բոլոր մանր անասունները՝ նույնիսկ ոչխարները, հավերը և սագերը, հանձնվեն կոլտնտեսությանը: Այս ամենը հանգեցրեց գյուղացիների կողմից անասունների զանգվածային սպանդին: Շատերը գերադասեցին ոչնչացնել սեփական կենդանիներին, քան հանձնել պետությանը: Բացի այդ, կոլեկտիվացման դեմ բողոքի ակտիվ գործողություններն ու դիմադրության դեպքերը դարձան հաճախակի:

ՆԷՊ-ի տարիներին խորհրդային ղեկավարությունը հացահատիկի մթերման հետ կապված խնդիրները մեկնաբանում էր որպես «կուլակների հացահատիկային գործադուլ», որի ընթացքում, ըստ նրանց, կուլակները փորձում էին ծնկի բերել խորհրդային իշխանություններին: Իսկ այժմ՝ գյուղում «սոցիալիստական գրոհի» ժամանակ, որոշվեց «կուլակներին որպես խավ լիկվիդացնել»: Հալածանքների ալիքը տարածվեց ողջ երկրով: Կուլակներին սկսեցին վտարել իրենց բնակավայրերից գույքի բռնագրավմամբ: Միևնույն ժամանակ ամենավտանգավոր համարվող կուլակները (այն տարիների տերմինաբանությամբ՝ «հակահեղափոխական կուլակների ակտիվը») ձերբակալվեցին և բանտ նետվեցին: Մյուսներն իրենց ընտանիքների հետ վտարվեցին հյուսիսային հեռավոր շրջաններ (այս համակազմին սկսեցին անվանել «հատուկ վերաբնակիչներ») կամ վերաբնակեցվեցին տարածաշրջանում՝ կոլտնտեսության հողերից դուրս հատկացված հատուկ վայրերում:



Իվանովոյի արդյունաբերական շրջանի կոլեկտիվ ֆերմերները հացահատիկ են մատակարարում պետությանը: 1929 թ.

Չնայած հանրահավաքների ամբիոններից և մամուլի էջերից հնչող «հակահեղափոխական կուլակների» պախարակումներին՝ խորհրդային օրենսդրության մեջ երբեք հստակ սահմանում չտրվեց, թե իրականում ով է համարվում կուլակ։ Տեղական իշխանություններն իրենք էին լուծում այդ հարցը, ինչը հաճախ հանգեցնում էր կամայականությունների, անձնական հաշվեհարդարների և սոցիալական անարդարության։ Ընդհանուր հաշվարկներով լուծարվել է մոտ 1,1 միլիոն կուլակային տնտեսություն, ինչը, ըստ խորհրդային վիճակագրության, գերազանցում էր ունևոր գյուղացիների մասնաբաժինը։ Բացի դրանից, քանի որ կոլտնտեսային գյուղերում կյանքը դժվար էր, գյուղացիների մի մասը պարզապես լքեց իր տնտեսությունը՝ տեղափոխվելով քաղաք։ Այդ գյուղացիներին անվանում էին «ինքնակուլակաթափ եղածներ», չնայած նրանց գերակշիռ մասը միջին կամ նույնիսկ աղքատ գյուղացիներ էին։

Կոլեկտիվացումն ընթանում էր աճող տեմպերով։ Եթե 1930 թվականի հունվարի 1-ին կոլտնտեսությունների կազմում ընդգրկված էր գյուղացիական տնտեսությունների միայն 20 %-ը, ապա արդեն մարտի 1-ին այդ ցուցանիշը հասել էր գրեթե 59 %-ի։ Գյուղերում լարվածությունը շեշտակիորեն աճում էր, և երկրի ղեկավարությունը, զգալով սոցիալական պայթյունի վտանգը, ստիպված եղավ ժամանակավորապես զսպել կոլեկտիվացման ընթացքը։ 1930 թվականի մարտի 2-ին «Պրավդա» թերթում հրապարակվեց Ստալինի՝ «Գլխապտույտ հաջողությունից» հայտնի հոդվածը։ Նա ձևականորեն դատապարտեց կոլեկտիվացման ընթացքի «չարաշահումները»՝ բարդելով դրանք տեղական կուսակցական ու խորհրդային աշխատողների վրա։ Նրանցից մի քանիսը նույնիսկ բռնադատվեցին, իսկ գյուղացիներին ժամանակավորապես թույլատրվեց դուրս գալ կոլտնտեսություններից։

Հոդվածի հրապարակումից հետո կոլեկտիվացման մակարդակը զգալիորեն նվազեց՝ հասնելով 21 %-ի։ Սակայն արդեն 1931 թվականի հուլիսի 1-ին այն կրկին բարձրացավ՝ հասնելով 58 %-ի։ Այս տատանումները պայմանավորված էին նրանով, որ կոլտնտեսությունից դուրս գալը ուղեկցվում էր մի շարք սահմանափակումներով և վարչական ճնշումներով։ Ըստ կոլտնտեսության կանոնադրության՝ նրա գույքը անբաժանելի էր և ենթակա չէր մասնավոր բաշխման։ Այսինքն՝ գյուղացին իրավունք ուներ լքել կոլտնտեսությունը, սակայն չէր կարող հետ ստանալ իր նախկին հողաբաժինը, անասունը կամ գույքը։ Բացի այդ, անհատ տնտեսություններին (մենատնտեսներին) հատկացված հողերը սովորաբար գտնվում էին ոչ բարենպաստ, ծայրամասային հատվածներում, որպեսզի «մենատնտեսի սեպը» չմխրճվեր կոլտնտեսության դաշտի մեջ։ Իրենց մեկուսացված հողակտորներում առանց անասունների և տեխնիկայի մնացած գյուղացիների մի մասը ստիպված վերադարձավ կոլտնտեսություն, իսկ մյուս մասը տեղափոխվեց քաղաք՝ փնտրելու ապրուստի այլ միջոցներ։ Այս կերպ կոլեկտիվացման մակարդակը կրկին բարձրացավ, իսկ գյուղացիությունը նախընտրեց դիմադրության պասիվ ձևը՝ զանգվածաբար տեղափոխվելով քաղաք։

Քաղաքային ենթակառուցվածքը պատրաստ չէր ընդունելու առաջին հնգամյա պլանների շրջանակներում կառուցված նորաբնակ տարածքների՝ բարաքների, գետնափոր տնակների և ժամանակավոր խրճիթների բնակիչների հսկայական հոսքը։

Չնայած անմխիթար պայմաններին՝ մարդիկ նախընտրում էին ապրել այդ շինություններում, քան վերադառնալ կոլտնտեսային գյուղ: Միայն 1931 թվականին ավելի քան 4 միլիոն գյուղացի տեղափոխվեց քաղաք: Այս զանգվածային միգրացիան՝ գյուղերից «վտարված» աշխատուժի տեսքով, կարևոր դեր ունեցավ արդյունաբերական հսկաների կառուցման գործում՝ ապահովելով անհրաժեշտ աշխատուժի պահանջարկը: Գյուղական բնակչության թվի նման կտրուկ նվազումը լուրջ մտահոգություններ առաջացրեց խորհրդային ղեկավարության շրջանում: Այդ համատեքստում 1932 թվականի դեկտեմբերին սահմանվեց անձնագրային նոր կարգ, որը արգելում էր կոլտնտեսականներին անձնագիր ստանալ առանց կոլտնտեսության խորհրդի համաձայնության: Առանց անձնագրի հնարավոր չէր լքել գյուղը, աշխատանք գտնել քաղաքում կամ բնակարանում գրանցվել: Այսպիսով, իշխանությունները ստեղծեցին վարչական մեխանիզմ, որը վերահսկում էր գյուղացիության շարժունությունը:

Կոլեկտիվացման արդյունքները: Կոլեկտիվացումը ծանր հարված հասցրեց գյուղատնտեսությանը: Ինչպես արդեն նշվել է, բազմաթիվ գյուղացիներ, չցանկանալով իրենց անասունները հանձնել կոլտնտեսություններին, նախընտրեցին զանգվածային սպանդը: Արդյունքում անասնաբուծությունը հայտնվեց ճգնաժամային վիճակում, և կենդանական ծագման արտադրանքների՝ մսի, կաթի և կաշվի արտադրությունը զգալիորեն նվազեց:

Հացահատիկի արտադրության ոլորտում ևս լուրջ խնդիրներ էին առաջացել: 1928–1932 թվականներին հացահատիկի պետական մթերումները աճել էին՝ 23 միլիոն տոննայից հասնելով 27 միլիոնի, ինչը ձևականորեն վկայում էր կոլեկտիվացման որոշակի արդյունավետության մասին: Սակայն այդ նույն ժամանակահատվածում հացահատիկի ընդհանուր բերքը զգալիորեն նվազեց՝ 84 միլիոն տոննայից հասնելով 67 միլիոնի: Այսպիսով, գյուղացիներին մնում էր ավելի քիչ հացահատիկ, քան նախկինում: Հատկապես անբարենպաստ էր 1932 թվականը (1931-ին հավաքվել էր շուրջ 70 միլիոն տոննա, իսկ 1933-ին՝ 68 միլիոն): Գյուղատնտեսական արտադրության ընդհանուր անկման և կոլտնտեսային գյուղի աղքատացման պայմաններում բերքի համեմատաբար փոքր նվազումն անգամ խիստ բացասական հետևանքներ ունեցավ: Մի շարք շրջաններ չկարողացան իրականացնել հացահատիկի մատակարարման պետական պլանը: Խորհրդային իշխանություններն այս խնդիրը գնահատեցին որպես միտումնավոր վնասարարություն և սկսեցին մթերումներն իրականացնել առավել կոշտ մեթոդներով: Արդյունքում սով բռնկվեց Պովոլժիեում, Ուկրաինայում, Հյուսիսային Կովկասում, Սիբիրում և Ղազախստանում: Տարբեր հաշվումներով սովի հետևանքով զոհվեց 3-10 միլիոն մարդ:

Այս ողբերգությունը մեծ հարված էր Խորհրդային Միության համար, հետևաբար ակնհայտորեն հակագիտական է ուկրաինացի առանձին հրապարակախոսների և «պատմաբանների» փորձերը 1932–1933 թվականների սովը ուկրաինացիների հանդեպ «ցեղասպանության գործողություն» հայտարարելը:

Կոլեկտիվացման ընթացքում անասնագլխաքանակի անկումը (միլիոն գլուխ)


	1928	1932
Խոշոր եղջերավոր անասուններ	60	33
Ձիեր	32	15
Խոզեր	22	9
Ոչխարներ	97	33

Գյուղատնտեսության ոլորտի որոշակի կայունացման հնարավոր եղավ հասնել միայն 1930-ականների երկրորդ կեսին, երբ գյուղերը սկսեցին ստանալ հայրենական արտադրության գյուղատնտեսական մեծաքանակ տեխնիկա: Միաժամանակ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը թույլ տվեց ընդլայնել կոլտնտեսականներին տրամադրվող տնամերձ հողամասերի չափերը: 1935 թվականին բնական անբարենպաստ պայմանների պատճառով հացահատիկի համապետական բերքը կազմեց ընդամենը 56 միլիոն տոննա: Ի տարբերություն նախորդ տարվա՝ այս անգամ հաջողվեց դրանից խուսափել կուտակված պաշարների, ինչպես նաև հացահատիկի պակաս ունեցող շրջաններ պարենամթերքի տեղափոխման վերաբերյալ վարչական արագ որոշումների շնորհիվ:

§ 77. 1930-ական թվականների քաղաքական համակարգի առանձնահատկությունները

«Աջ թեքման» պարտությունը: Հարկադիր արդյունաբերացման մեկնարկը նշանավորեց բոլշևիկների թերևս վերջին «շեղման» սկիզբը: 1928–1929 թվականներին «գլխավոր գծի» կողմնակիցները գործնականում իրականացնում էին ձախ ընդդիմադիրների գրեթե բոլոր առաջարկները՝ սկսել արդյունաբերացումը՝ չսպասելով ֆինանսական ռեսուրսների կուտակմանը, առաջնահերթություն տալ «Ա» խմբի ձեռնարկությունների զարգացմանը, արմատապես ուժեղացնել հարկային ճնշումը գյուղացիության վրա:

Որոշ կոմունիստներ սկսեցին բողոքել ՆԷՊ-ի փաստացի փլուզման դեմ: Նրանք հանդես էին գալիս «Ա» և «Բ» խմբերի արդյունաբերության համաչափ զարգացման օգտին և պաշտպանում էին արդյունաբերացման իրականացումը՝ առանց շուկայական համակարգից հրաժարվելու: Թեև պաշտոնապես այդ տեսակետի կողմնակիցները, որոնք խմբավորված էին Ն.Ի. Բուխարինի շուրջ, կոչվում էին «աջ թեքման» հետևորդներ, իրականում մնացել էին իրենց նախկին դիրքերում: «Գլխավոր գիծը» շեղվում էր այն սկզբունքներից, որոնց հավատարմության երդում էին տվել Ստալինն ու նրա կողմնակիցները դեռևս 1924–1925 թվականներին: Սակայն այս հանգամանքը չնպաստեց «աջ թեքման» կողմնակիցների վիճակի բարելավմանը: Բուխարինի կողմնակիցները, այդ թվում՝ Ա.Ի. Ռիկովը, որն այդ ժամանակ փոխարինել էր Վ.Ի. Լենինին որպես



Ն.Ի. Բուխարին

Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ, նույն կերպ դուրս մնացին նոմենկլատուրային համակարգից, ինչպես տարիներ առաջ Տրոցկու կողմնակիցները։

Պայքար «վնասարարների» դեմ: Թվում էր, թե այն բանից հետո, երբ Ստալինն իսպառ ջախջախեց բոլշևիկյան ողջ դիմադրությունը, կարելի էր ակնկալել ներքին քաղաքականության որոշ չափով ազատականացում։ Սակայն իրականում քաղաքական բռնաճնշումների թափանիվը սկսեց արագորեն պտտվել։ Դրա համար կային մի շարք պատճառներ։

Արդյունաբերացման և կոլեկտիվացման գործընթացներն ուղեկցվում էին բազմաթիվ սխալներով, անհաջողություններով և ծայրահեղություններով։ ԽՍՀՄ բնակչության կենսամակարդակը կտրուկ ընկել էր, իսկ երկրում սոցիալական լարվածությունն աճում էր։ Քաղաքական նկատառումներից ելնելով՝ իշխանությանն ուղղված բաց մեղադրանքներն անթույլատրելի էին, ուստի անհրաժեշտ էր գտնել «մեղավորներ»։ Այս նպատակով հարմար թիրախ դարձան տեխնիկական մտավորականության ներկայացուցիչները՝ ինժեներները, տեխնոլոգները, գիտնականները և այլք։ 1920-ականների վերջին և 1930-ականների սկզբին նրանք գրեթե բոլորը կրթություն էին ստացել դեռևս «հին ռեժիմի» ժամանակ։ Խորհրդային իշխանության շրջանում վերապատրաստված նոր մասնագետները քիչ էին։ Իսկ գաղափարական առումով նախկին կրթական համակարգի ներկայացուցիչներին մեղադրել վնասարարության մեջ՝ հեշտ էր և հարմար։ Առաջին հնգամյա ծրագրի ընթացքում «մասնագետները» հայտնվել էին անելանելի դրության մեջ։ Եթե նրանք բողոքում էին ստանդարտ պայմանները գերազանցող սարքավորումների օգտագործման դեմ, ապա նրանց մեղադրում էին աշխատողների նախաձեռնությունը ճնշելու մեջ, որը նշանակում էր խափանել չորս տարում հնգամյա ծրագրի իրականացումը։ Իսկ եթե տեխնիկան ծայրահեղ ինտենսիվ շահագործման հետևանքով իրականում խափանվում էր, ապա կրկին մեղավոր էին հենց նրանք՝ արդեն որպես «վնասարարներ», որոնք իբր համագործակցում էին թշնամու հետախուզության հետ և միտումնավոր վնասում էին տեխնիկան։

«Վնասարարների» գործով առաջին դատավարությունը տեղի է ունեցել 1928 թվականի մայիս-հուլիս ամիսներին։ Սկզբում «Դոնուգոլ» տրեստի աշխատակիցների ձերբակալություններ տեղի ունեցան Շախտի քաղաքում, ուստի դատավարությունը հայտնի դարձավ Շախտինսկի անունով, սակայն հետագայում այն տարածվեց Դոնբասի ամբողջ տարածաշրջանում։ Պատմաբանների ճնշող մեծամասնությունը ներկայումս համամիտ է, որ այս գործն ամբողջությամբ կազմել են Միացյալ պետական

քաղաքական վարչության (ՕԳՊՈՒ) աշխատակիցները։ Ինժեներներին մեղադրում էին վնասարարության, արտասահմանյան հետախուզական ծառայությունների համար աշխատելու և հակահեղափոխական կազմակերպություն ստեղծելու մեջ։ Որպես կանոն՝ նախաքննության փուլում քննիչները ֆիզիկական և հոգեբանական ճնշում էին գործադրում՝ ստիպելով բանտարկյալներին ինքնամեղադրական ցուցմունքներ տալ։ Դատական նիստում դատավճիռները կայացվում էին հենց այս «խոստովանությունների» հիման վրա՝ առանց որևէ հիմնավոր մեղադրանքի կամ ապացույցի ներկայացման։ Հետագայում նույն ձևանմուշով «վնասարարների» դեմ տասնյակ նմանատիպ գործեր են կազմվել։

Զանգվածային քաղաքական բռնաճնշումներ: Քաղաքական բռնաճնշումները հատկապես մեծ տարածում գտան 1934 թվականին՝ Ս.Մ. Կիրովի սպանությունից հետո։ Թեև պատմաբանների մեծ մասի կարծիքով Կիրովը դարձել է կենցաղային հանցագործության զոհ, պաշտոնական քարոզչությունը այդ իրադարձությունը մեկնաբանել է որպես ԽՍՀՄ-ի և երկրի ղեկավարության դեմ ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերի կողմից սանձազերծված քաղաքական ահաբեկչության ակտ։ Սրանից հետո զանգվածաբար սկսեցին կիրառվել «արտասահմանյան հետախուզական ծառայությունների համար աշխատելու», «հակահեղափոխական կազմակերպություններ ստեղծելու», «ահաբեկչական հարձակումներ նախապատրաստելու» մեղադրանքներ։ Ամբողջ երկրում տարածվեց այս կամ այն վտանգավոր սոցիալական խմբերի «հակահեղափոխական գործողությունները» ճնշելու ալիքը՝ «կուլակների գործը» («նախկին կուլակների» զանգվածային ձերբակալություններ), «ազգային գործողություններ» (բռնաճնշումներ կասկածներ հարուցող էթնիկ խմբերի նկատմամբ), «Մոսկովյան դատավարություններ» (բռնադատումներ «հին բոլշևիկների» դեմ), «հակասովետական տրոցկիստական ռազմական կազմակերպության» գործը (բռնաճնշումներ Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարության (РККА) դեմ) և այլն։

Բռնաճնշումներն իրականացվում էին օրենքի կոպիտ խախտումներով։ Ժամանակի ընթացքում Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԿՎԴ), որը պատժիչ քաղաքականություն էր իրականացնում, ձեռք բերեց այնպիսի մեծ ազդեցություն, որ Ստալինը ստիպված եղավ մի քանի զտումներ իրականացնել ՆԿՎԴ-ի ներսում։ Հատկանշական է, որ Մոսկովյան առաջին դատավարությունը (1936 թ.) կազմակերպել էր ՆԿՎԴ ղեկավար Գ.Գ. Յագոդան։ Սակայն Մոսկովյան երրորդ դատավարության ժամանակ (1938 թ.) Յագոդան արդեն մեղադրյալներից մեկն էր, իսկ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը մինչ այդ ղեկավարում էր Ն.Ի. Եժովը։ Նույն թվականին Եժովը հեռացվեց այս պաշտոնից, 1939 թվականին ձերբակալվեց, իսկ 1940-ին մահապատժի ենթարկվեց։

Ստալինյան ԽՍՀՄ-ում քաղաքական բռնաճնշումները ուղղված էին մի շարք կարևոր խնդիրների լուծմանը։

Նախ՝ դրանք կանխարգելիչ կերպով ճնշեցին երկրում հնարավոր ընդդիմադիր ուժերին։ Հաշվի առնելով, որ երկիրը պատրաստվում էր մոտալուտ պատերազմի, այս խնդիրը ստալինյան ղեկավարության տեսանկյունից չափազանց կարևոր ու հրատապ էր։



Սպիտակ ծով-Բալթյան ջրանցքի կառուցում, որի ժամանակ օգտագործվում էր բանտային աշխատուժը։ 1930-ականների առաջին կես

Երկրորդ, քաղաքական բռնաճնշումները փաստորեն անվճար աշխատուժ տրամադրեցին Ճամբարների գլխավոր տնօրինությանը (ԳՈՒԼԱԳ), որը ՆԳԺԿ-ի տնտեսական կառույցն էր։ ԳՈՒԼԱԳ-ում բանտարկյալների թիվը տարբեր տարիներին հասել է 0,5–1,9 միլիոն մարդու։ Այս թվին պետք է ավելացնել 0,8-ից մինչև 1,3 միլիոն «հատուկ վերաբնակիչներին»՝ տեղահանված «կուլակներին», որոնք պաշտոնապես բանտարկյալներ չէին, բայց չէին կարողացել լքել իրենց աքսորավայրը։ ԳՈՒԼԱԳ-ի բանտարկյալները զբաղվում էին անտառահատմամբ, օգտակար հանածոների արդյունահանմամբ, ճանապարհների, ջրանցքների և արդյունաբերական օբյեկտների կառուցմամբ։ Արդյունքում հնգամյա ծրագրերի իրականացման գործում բանտարկյալների ներդրումը կարևոր դեր խաղաց։

Երրորդ, բռնաճնշումները հնարավորություն տվեցին խորհրդային հասարակության սոցիալական դժգոհությունը վերաուղղել «ժողովրդի թշնամիների» դեմ, որոնք, ըստ իշխանությունների, չարամտորեն վնասում էին սոցիալիզմի կառուցման գործին։

Չորրորդ, դրանք հանդես էին գալիս որպես պետական ապարատը ահաբեկելու միջոց։ Ցանկացած «պատասխանատու աշխատող» հասկանում էր, որ եթե ստացված հրահանգը չկատարի, նա ոչ միայն կենթարկվի պաշտոնական տույժերի, այլև մեծ հավանականությամբ կհայտարարվի «ժողովրդի թշնամի» և կբռնադատվի։

Այսպիսով, քաղաքական զանգվածային բռնաճնշումները 1930-ական թվականներին ԽՍՀՄ-ում դարձան քաղաքական և տնտեսական կառուցվածքի անբաժանելի մասն ու օրգանական բաղադրիչը։ Առանց այս մեխանիզմի ամբողջ համակարգը չէր կարող գործել։

Կուսակցության վերափոխումը իշխանության հատուկ ճյուղի: 1936 թվականին ընդունվեց ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը, որը, ըստ Ստալինի և նրա կողմնակիցների ծրագրերի, ամրագրեց սոցիալիզմի հաղթանակը Խորհրդային Միությունում: Առաջին հայացքից սա դիտարկվում էր որպես առաջընթաց՝ երկրի ժողովրդավարացման և քաղաքական կառուցվածքի ազատականացման ուղղությամբ: Այժմ բոլոր քաղաքացիներն ունեին ընտրելու իրավունք: Սովետների համագումարին փոխարինող Գերագույն խորհրդի և բոլոր մակարդակների խորհուրդների ընտրությունները դարձել էին համահավասար: Քաղաքաբնակների և գյուղացիների միջև գոյություն ունեցող անհավասարությունը վերացվել էր, իսկ «իրավազրկված» հասկացությունը դարձավ պատմական եզրույթ: Հայտարարվել էին խղճի, խոսքի, մամուլի, ժողովների և հանրահավաքների ազատություն, ինչպես նաև անձնական անձեռնմխելիություն և նամակագրության գաղտնիություն:

1936 թվականի Սահմանադրությունը զգալի ազդեցություն ունեցավ արտերկրում հասարակական տրամադրությունների վրա: Խորհրդային քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև նրանց տրամադրվող սոցիալական երաշխիքները մեծ ոգևորություն առաջացրին ոչ միայն արևմտյան երկրների աշխատավորների, այլև լիբերալ մտավորականության շրջանում: Օրինակ՝ ֆրանսիացի հայտնի գրող Ռոմեն Ռոլանը գրել է. «Այս Սահմանադրությունը ցույց է տալիս ամբողջ աշխարհին, որ ԽՍՀՄ-ը վերջնականապես հաղթել է հին համակարգից մնացած պահպանողական ուժերին: Սա իրական ժողովրդավարության հաստատումն է: Սա մեծ կարգախոսների իրականացումն է, որոնք մինչ այժմ միայն մարդկության երազանքն էին՝ ազատություն, հավասարություն և եղբայրություն»: ԽՍՀՄ-ում իրականացվող սոցիալիստական վերափոխումները (ավելի ճիշտ՝ դրանց վերաբերյալ Արևմուտքում ձևավորված պատկերացումները) նպաստեցին 1930-ական թվականներին աշխարհի քաղաքական պատկերում «ձախ թևի» ուժերի ազդեցության աճին: Սակայն արևմտյան մտավորականների մեծ մասը լավ չէր պատկերացնում ԽՍՀՄ-ի իրական վիճակը: Իրականում՝ Սահմանադրությամբ հռչակված առաջադեմ գաղափարների ու սկզբունքների զգալի մասը երբեք չիրագործվեցին:

Ժամանակին Ստալինը հաղթեց «լենինյան ժառանգության» համար մղվող պայքարում՝ կիրառելով նշանակումների նոմենկլատուրային սկզբունքը: Հետագայում այդ մոտեցումը սկսեց արմատապես փոխել կուսակցության էությունն ու սոցիալական դերը: Կուսակցական օղակներում էին արվում բարձր պաշտոնների նշանակումները, կայացվում կարևոր որոշումներ և վերահսկվում դրանց կատարումը: Այդպես Կոմունիստական կուսակցությունը վերածվեց իշխանության յուրօրինակ ճյուղի, որը ժամանակի ընթացքում դարձավ գերիշխող ուժ: Միևնույն ժամանակ խորհրդային պետական մարմինները վերածվեցին քաղաքական կեղծիքի գործիքների՝ հաստատելու և օրինականացնելու այն որոշումները, որոնք արդեն իսկ ընդունվել էին կուսակցության կողմից: Այս գործընթացը երկարատև էր. այն սկսվեց 1920-ականներին և ավարտվեց 1930-ականներին: Արդյունքում ստեղծված իրավիճակը խորհրդային պետության համար դարձավ նորմ մինչև 1980-ականների երկրորդ կեսը:

Միևնույն ժամանակ տեղի ունեցավ իրական իշխանությունը մեկ կենտրոնում համախմբելու գործընթաց: Սկզբում խորհրդային մարմինների ժողովներում անցկացվող քննարկումները աստիճանաբար տեղափոխվեցին կուսակցական կառույցներ: Այնուհետև իշխանության կենտրոնացումը շարունակվեց՝ համագումարներից անցնելով Կենտրոնական կոմիտեին և վերջապես՝ Կենտկոմի Քաղբյուրոյին: Եթե 1920-ականներին բուռն քննարկումների տեղիք էին տալիս համագումարները, որոնց վրա ազդում էին Ստալինը և նրա կողմնակիցները, բայց որոնց արդյունքները ստիպված էին հաշվի առնել, ապա 1930-ականների սկզբից համագումարներում սկսեց տիրել միաձայնություն: Պատվիրակները գրեթե միաձայն կողմ էին քվեարկում առաջարկված բանաձևերի օգտին: Այսպիսով, կուսակցական համագումարները ևս վերածվեցին քաղաքական կեղծիքի: Ամենակարևոր որոշումներն ընդունվում էին կուսակցական բարձրաստիճան ֆունկցիոներների հետզհետե նեղացող շրջանակում. սկզբում՝ Կենտկոմում, ապա միայն Կենտկոմի Քաղբյուրոյում: 1930-ականների վերջում իրական իշխանությունը կենտրոնացած էր Ստալինի ձեռքում, որն առանցքային հարցերում խորհրդակցում էր իր վստահելի գործընկերների՝ Վյաչեսլավ Մոլոտովի, Կլիմենտ Վորոշիլովի, Անաստաս Միկոյանի և Լազար Կագանովիչի հետ: Քաղաքական իշխանության կենտրոնացումը նեղ շրջանակի՝ կուսակցական բարձրաստիճան գործիչների ձեռքում դարձավ խորհրդային պետության բնութագրական առանձնահատկություններից մեկը:

§ 78. Սովետական հասարակության նոր կերպարանքը

Կրթական համակարգի զարգացումը: Երկրի արդիականացումն անհրաժեշտ էր սկսել խորհրդային քաղաքացիների կրթական և մշակութային մակարդակի արմատական բարելավումից: Արդյունաբերացումը հնարավոր չէր իրականացնել առանց հազարավոր ինժեներների, տեխնոլոգների, նախագծողների, գիտնականների և, վերջապես, բանվորների «բանակի» պատրաստման, որոնք ունակ կլինեին օգտվելու տեխնիկական հրահանգներից և սպասարկելու արտադրական մեքենաները: Սակայն այդ մասնագետներին պատրաստելու համար նախ անհրաժեշտ էին տասնյակ հազարավոր որակյալ ուսուցիչներ: Բանակը նույնպես կարիք ուներ ոչ միայն տանկերի և ինքնաթիռների, այլև ժամկետային զինծառայողների, որոնք կարող էին վերապատրաստվել՝ այդ տեխնիկան շահագործելու համար: 1930-ական թվականների առօրյա կյանքի ամենաբնորոշ և առանցքային իրադարձությունը մշակութային հեղափոխությունն էր՝ կրթության ոլորտում մի շարք որոշումների և միջոցառումների ընդունումը: Այն ներառում էր հետևյալ քայլերը:

Նախ կտրուկ սրվեց անգրագիտության դեմ պայքարը: 1930-ական թվականներին մոտ 60 միլիոն մարդ անցել է անգրագիտության դեմ պայքարի համակարգով: 1939 թվականին ԽՍՀՄ-ում գրագիտության մակարդակը հասել էր 90%-ի:

Բարձրագույն կրթության զարգացումը 1923–1940 թվականներին

	1923	1940
Բուհերի քանակը	248	817
Ուսանողների քանակը (հազ. մարդ)	217	812

Երկրորդ՝ մեծ ուշադրություն դարձվեց միջնակարգ կրթության զարգացմանը: 1930 թվականից բոլոր երեխաների համար սահմանվեց պարտադիր տարրական կրթություն՝ չորս դասարանով (առաջին աստիճանի դպրոց): Քաղաքային բնակավայրերում պարտադիր էր ուսման շարունակությունը ևս երեք տարի՝ երկրորդ աստիճանի դպրոցում: Այսպիսով, յոթնամյա դպրոցը դարձավ խորհրդային կրթական համակարգի նոր չափանիշ՝ որպես բավարար հենք մասնագիտական գործունեություն սկսելու համար: Բացի այդ, շարունակվեց և զարգացավ դեռևս 1920-ականներին ձևավորված նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգը, որի հիմնական օղակներն էին ֆաբրիկագործարանային ուսումնարանները (ՖԳՈւ) և տեխնիկումները:

Երրորդ՝ հսկայական ֆինանսական ռեսուրսներ ուղղվեցին բարձրագույն կրթության ոլորտի զարգացմանը:

Քանի որ բանվոր երիտասարդությունը հաճախ չուներ կրթական բավարար պատրաստվածություն՝ բարձրագույն կրթություն ստանալու համար, 1920-ականներին համալսարաններում սկսեցին գործել բանվորական նախապատրաստական ֆակուլտետներ՝ բանֆակեր: Այս նախաձեռնությունը հետագայում զարգացավ և խորացավ 1930-ականներին: Մեծ տարածում ստացան նաև ուսուցման երեկոյան և հեռակա ձևերը: 1928–1940 թվականներին միայն ինժեներների թիվը ժողովրդական տնտեսությունում ավելացավ՝ 48 հազարից հասնելով 295 հազարի: Եթե հաշվառենք ոչ միայն ինժեներներին, այլև բարձրագույն կրթություն ստացած մասնագետներին, ապա նրանց թիվը նույն ժամանակահատվածում աճեց՝ 288 հազարից հասնելով 909 հազարի:

Սոցիալական ոլորտը 1930-ական թվականներին: 1930-ականները արմատական փոփոխություններ առաջացրին խորհրդային հասարակության կառուցվածքում: Սոցիալական «վերելակները» սկսեցին գործել ամբողջ ուժով՝ հնարավորություն ընձեռելով հարյուր հազարավոր մարդկանց հասնել գլխապտույտ կարիերայի աճի: Շատերը դարձան ինժեներներ, բժիշկներ, սպաներ, պետական ծառայողներ՝ զբաղեցնելով այնպիսի պաշտոններ, որոնց մասին մեկ սերունդ առաջ իրենց հայրերը նույնիսկ չէին կարող երազել: Սա մշակութային հեղափոխության հետևանքներից մեկն էր:

Քաղաքակենտրոնացման գործընթացը կտրուկ արագացավ: Գյուղաբնակ բնակչությունը զանգվածաբար տեղափոխվեց քաղաքներ՝ ապահովելով հնգամյա շինարարական ծրագրերի համար անհրաժեշտ էժան աշխատուժ: Սակայն այդ միտումը նաև զգալիորեն ծանրաբեռնեց քաղաքային ենթակառուցվածքները, և խորացրեց բնակարանային ճգնաժամը: Բնակարանների մշտական պակասը դարձավ Խորհրդային Միության տնտեսական և սոցիալական օրակարգի ամենահրատապ խնդիրներից



«Հյուսիսային բևեռ» կայանի պետ Ի.Դ. Պապանինը և Հյուսիսային ծովային երթուղու գլխավոր տնօրինության պետ Օ.Յու. Շմիդտը: 1937 թ.

մեկը: Երկար տարիներ սովետական քաղաքաբնակների համար սովորական էր դարձել զորանոցներում կամ կոմունալ բնակարաններում ապրելը:

Կրթության զարգացմանը զուգընթաց Խորհրդային Միությունում տարվեց մեծ աշխատանք «նոր մարդու» ձևավորման ուղղությամբ: Դրա նպատակն էր դաստիարակել կոմունիստական կուսակցությանը և խորհրդային պետությանը նվիրված հավատարիմ քաղաքացիներ: Խորհրդային առաջնորդների՝ հատկապես Լենինի և Ստալինի պաշտամունքը դարձավ գաղափարական նման դաստիարակության առանցքային բաղադրիչ: Նրանց փառաբանումը իրականացվել է լրատվամիջոցներում, գրականության և արվեստի գործերում: 1930 թվականին Կարմիր հրապարակում կառուցվեց գրանիտե դամբարան, որտեղ դրվեց Լենինի զմռսված մարմինը: Նրա հուշարձանները տեղադրվեցին խորհրդային գրեթե բոլոր քաղաքներում: Ստալինի դիմանկարները, արձանները և խորհրդանշական պատկերները դարձան առօրյա կյանքի բնորոշ տարրեր:

Բացի այդ, ձևավորվել էր նոր ժամանակների հերոսների պաշտամունք: Հատկապես փառաբանվում էին բևեռախույզները, հերոս օդաչուները, որոնք իրականացրել էին գերհեռավոր թռիչքներ, ինչպես նաև ստախանովականները, որոնք սահմանել էին աշխատանքային ռեկորդներ: Այս անձինք ներկայացվում էին որպես խորհրդային քաղաքացու իդեալական մարմնավորումներ, և հասարակության մյուս անդամներին խրախուսում էին ընդօրինակել նրանց:

Խորհրդային ղեկավարությունը եկեղեցու հետ հարաբերություններում շարունակում էր վարել կոշտ և հակակրոնական քաղաքականություն: Հակակրոնական քարոզչությունը օրեցօր ուժեղանում էր: Այդ քարոզչության առանցքային բաղադրիչներից էին «Մարտնչող աթեիստների միության» ակտիվ գործունեությունը, ինչպես նաև աթեիստական գրքերի ու պարբերականների հրատարակումը: Կրոնական կազմակերպությունների իրավունքները զգալիորեն սահմանափակվեցին, և ամբողջ երկրում սկսվեց եկեղեցիների և պաշտամունքի այլ շինությունների փակման ու ապամոնտաժման արշավ:

Շատ հոգևորականներ նույնացվեցին «հակասովետական տարրերի» հետ և ենթարկվեցին բռնաճնշումների: Ներքին գործերի ժողովրդական կոմիսար Նիկոլայ Եժովը հայտնել է, որ միայն 1937 թվականի օգոստոսից մինչև նոյեմբեր ամիսներին ձերբակալվել է 31359 հոգևորական և աղանդավոր, որոնցից 13671-ը դատապարտվել են մահապատժի: Նրանց թվում էին 81 եպիսկոպոս, 4629 քահանա, 934 վանական և 7004 «եկեղեցական-աղանդավորական կուլակական ակտիվիստ»:

§ 79. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը 1920-1930-ական թվականներին

Համաշխարհային հեղափոխությունից մինչև խաղաղ համակեցություն: Վ.Ի. Լենինն ու նրա համախոհները համոզված էին, որ Ռուսաստանում հեղափոխությունը կդառնա յուրօրինակ բռնկիչ (запал), որը կբոցավառի համաշխարհային սոցիալիստական հեղափոխության կրակը: Մի պահ թվում էր, թե այս ծրագրերը իրականություն կդառնան: 1919 թվականին ձևավորվեցին Բավարիայի, Հունգարիայի և Սլովակիայի խորհրդային հանրապետությունները: Նույն տարվա հունվարին մարքսիստական «Սպարտակի լիգայի» անդամները փորձեցին զավթել իշխանությունը Բեռլինում, իսկ 1920 թվականին գերմանական Ռուրի շրջանում տեղի ունեցավ բանվորական ապստամբություն: 1920 թվականին Կարմիր բանակի առաջխաղացումը Լեհաստանի խորքեր հիմնված էր այն համոզման վրա, որ եվրոպական պրոլետարիատը, հատկապես գերմանականը, կաջակցի դեպի արևմուտք շարժվող խորհրդային զորքերին:

Սակայն խորհրդային այս հանրապետությունների գոյությունը կարճ տևեց, իսկ բանվորական ապստամբությունները դաժանաբար ճնշվեցին: 1920-ականների սկզբին արդեն ակնհայտ էր, որ «կապիտալի աշխարհը» ջախջախելու ծրագրերից ժամանակավորապես անհրաժեշտ է հրաժարվել: Օրակարգում դրվեց կապիտալիստական միջավայրի հետ համակեցության սկզբունքների ձևավորման հարցը: Խնդիրն այն էր, որ ոչ միայն բոլշևիկների զգալի մասի համար էր դժվար հրաժարվել համաշխարհային հեղափոխության գաղափարից, այլև արևմտյան քաղաքական շատ գործիչներ հնարավոր չէին համարում որևէ բանակցություն «կոմիսարների» հետ: Սակայն, այնուամենայնիվ, 1921 թվականին Խորհրդային Ռուսաստանը առևտրային պայմանագրեր կնքեց Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի և մի շարք այլ երկրների հետ:



Գ.Վ. Չիչերին

1922 թվականի ապրիլ–մայիսին ՌՍՖՍՀ-ի պատվիրակությունը մասնակցեց Ջենովայում կայացած միջազգային կոնֆերանսին՝ նվիրված Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետպատերազմյան տնտեսական վերականգնմանը: Կոնֆերանսի առանցքային հարցերից էր ցարական կառավարության պարտքերի խնդիրը՝ ռուսական նախկին իշխանությունների կողմից վերցված արտաքին պարտքերի վերադարձը, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների՝ Խորհրդային Ռուսաստանում պետականացված

գույքի փոխհատուցումը: Խորհրդային պատվիրակությունը հայտարարեց, որ պատրաստ է վճարել արևմտյան կողմի առաջարկած 18,5 միլիարդ ոսկի ռուբլին, սակայն միայն այն պայմանով, եթե Խորհրդային Ռուսաստանին փոխհատուցեն արտաքին միջամտության հետևանքով կրած 39 միլիարդ ռուբլու վնասները: Երկուստեք ընդունելի լուծման հասնել չհաջողվեց:

Ջենովայի կոնֆերանսը մի շարք կարևոր արդյունքներ արձանագրեց: Կոնֆերանսի ընթացքում խորհրդային պատվիրակության ղեկավար Գ.Վ. Չիչերինը ձևակերպեց սոցիալ-քաղաքական տարբեր համակարգերով պետությունների խաղաղ համակեցության սկզբունքը. «Ներկա պատմական դարաշրջանում, որը հնարավոր է դարձրել հին և ձևավորվող նոր սոցիալական համակարգերի զուգահեռ գոյությունը, ընդհանուր տնտեսական վերականգնման համար այս երկու սեփականության համակարգերը ներկայացնող պետությունների տնտեսական համագործակցությունը հրամայական անհրաժեշտություն է: Ուստի Ռուսաստանի Կառավարությունը մեծագույն նշանակություն է տալիս սեփականության տարբեր համակարգերի և քաղաքական ու տնտեսական տարաբնույթ ձևերի փոխադարձ ճանաչմանը»:

Ջենովայի կոնֆերանսում խորհրդային դիվանագիտության ամենակարևոր ձեռքբերումը Ռապալլո քաղաքում խորհրդա-գերմանական պայմանագրի ստորագրումն էր, որը նախատեսում էր դիվանագիտական հարաբերությունների վերականգնում: Այս համաձայնագիրը կասեցրեց «դիվանագիտական շրջափակման» քաղաքականությունը, ինչի արդյունքում 1924–1925 թվականներին ԽՍՀՄ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց արևմտյան երկրների մեծ մասի հետ:

1924 թվականին ԽՍՀՄ-ը դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նաև Չինաստանի հետ: Ռուսական նախորդ կառավարությունների կնքած այն պայմանագրերը, որոնք ոտնահարում էին չինական կողմի իրավունքները, պաշտոնապես չեղյալ հայտարարվեցին: Արևելա-չինական երկաթուղին ճանաչվեց որպես խորհրդային-չինական համատեղ ձեռնարկություն, որը կառավարվում է իրավահավասարության սկզբունքների հիման վրա: 1925 թվականին Խորհրդային Միությունը կարողացավ հասնել Սախալինի հյուսիսային մասում տեղակայված ճապոնական զորքերի դուրսբերմանը, որոնք այդ տարածքը գրավել էին քաղաքացիական պատերազմի ընթացքում:

Միջազգային իրավիճակի սրումը 1920-ականների երկրորդ կեսին: 1922–1927 թվականներին Խորհրդային Միության Կառավարությունը միջազգային ասպարեզում հանդես եկավ զինաթափման կամ սպառազինությունների կրճատման նախաձեռնություններով, որոնք, սակայն, այդպես էլ չիրականացվեցին:

Խորհրդային երկրի արտաքին քաղաքական իրավիճակը կտրուկ սրվեց Չինաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով: Ինչպես արդեն հայտնի է, դրանք հանգեցրին ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի հարաբերությունների վատթարացմանը և «1927 թվականի ռազմական տագնապին»: Լոնդոնում խուզարկվել էր խորհրդա-անգլիական ARCOS առևտրային ընկերության գրասենյակը, որի ընթացքում առգրավվել էին փաստաթղթեր, որոնք իբր վկայում էին կոմունիստների դիվերսիոն

գործունեության մասին՝ ուղղված Մեծ Բրիտանիայի և Չինաստանի դեմ: Բրիտանական Կառավարությունը հայտարարեց ԽՍՀՄ-ի հետ դիվանագիտական և առևտրային հարաբերությունների խզման մասին: Կրեմլը հնարավոր էր համարում պատերազմի բռնկումը Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների՝ Լեհաստանի, Ռումինիայի, Ֆինլանդիայի և Բալթյան երկրների դեմ:

Իրավիճակը շարունակում էր սրվել նաև Հեռավոր Արևելքում: Չինաստանի կենտրոնական կառավարությունը Գոմինդան կուսակցության ներկայացուցիչների գլխավորությամբ տեղակայված էր Նանկինում: Քաղաքացիական պատերազմի շարունակականության պայմաններում երկրի ծայրամասերում տիրող իրավիճակը դժվարությամբ էր վերահսկվում: Մանջուրիան ինքնակառավարվող տարածք էր՝ գեներալ Չժան Սյուելյանի ղեկավարությամբ, որը փորձում էր պահպանել հավասարակշռություն Նանկինի կառավարության և Ճապոնիայի միջև: Այն բանից հետո, երբ խզվեցին հարաբերությունները ԽՍՀՄ-ին ապավինող Գոմինդանի և Չինաստանի կոմունիստական կուսակցության միջև, գեներալ Չժան Սյուելյանը որոշեց Չին-արևելյան երկաթուղին վերցնել իր վերահսկողության տակ: 1929 թվականին նրա զորքերը ձերբակալեցին երկաթուղու խորհրդային աշխատակիցներին, որոնցից շատերը մահապատժի ենթարկվեցին: ԽՍՀՄ-ի բողոքներն անտեսվեցին, իսկ Նանկինի կառավարությունը հանդես եկավ գեներալի գործողությունների պաշտպանությամբ՝ խզելով դիվանագիտական հարաբերությունները Խորհրդային Միության հետ: Խորհրդային Միությունը, նպատակ ունենալով պաշտպանել իր շահերը, դիմեց ռազմական միջամտության: Զինված բախման արդյունքում գեներալ Չժան Սյուելյանի զորքերը պարտություն կրեցին, իսկ Չին-արևելյան երկաթուղին կրկին ստացավ համատեղ ձեռնարկության կարգավիճակ: Նույն թվականին Մեծ Բրիտանիան վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները Խորհրդային Միության հետ:

Կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու փորձեր: 1929–1933 թվականների համաշխարհային տնտեսական ճգնաժամը, որն ուղեկցվեց մի շարք երկրներում ազգայնական կուսակցությունների և շարժումների ազդեցության աճով, 1931 թվականին Մանջուրիայի ճապոնական օկուպացիան և 1933-ին նացիստների՝ Գերմանիայում իշխանության գլուխ անցնելը 1930-ականների սկզբին միջազգային հարաբերություններում լարվածության աճի պատճառ դարձան: Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան դրսևորեցին հարձակողական նկրտումներ:

Միջազգային լարվածության պայմաններում ԽՍՀՄ-ը ձգտում էր կոլեկտիվ անվտանգության համակարգի ստեղծել: 1933 թվականին հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ Խորհրդային Միության և ԱՄՆ-ի միջև: Իսկ 1934 թվականին ԽՍՀՄ-ը միացավ Ազգերի լիգային՝ միջազգային մի կազմակերպության, որը հիմնադրվել էր Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ խաղաղության և անվտանգության պահպանման նպատակով:

1935 թվականին Խորհրդային Միությանը հաջողվեց կնքել երկու կարևոր երկկողմ համաձայնագիր՝ խորհրդա-ֆրանսիական և խորհրդա-չեխոսլովակյան: Ըստ այս պայմանագրերի՝ եթե կողմերից մեկը ենթարկվեր հարձակման երրորդ պետության

կողմից, մյուս կողմը պարտավորվում էր օգնություն ցուցաբերել: Սակայն երկու փաստաթղթերում էլ ներառված էին էական վերապահումներ, որոնք սահմանափակում էին պայմանագրերի գործնական կիրառումը: Ֆրանսիայի հետ համաձայնագիրը Փարիզի պահանջով նախատեսում էր ուժի կիրառման պարտավորություն միայն այն դեպքում, եթե հարձակումը իրականացվեր եվրոպական պետության կողմից: Ֆրանսիան մտավախություն ուներ, որ ԽՍՀՄ-ը կարող է ներգրավվել Հեռավոր Արևելքում զինված հակամարտության մեջ և չէր ցանկանում դառնալ դրա մասնակից: Չեխոսլովակիայի հետ կնքված պայմանագրում սահմանվում էր, որ այդ երկիրը ԽՍՀՄ-ին օգնության կհասներ միայն այն դեպքում, երբ հարձակման ենթարկված կողմին աջակցեր նաև Ֆրանսիան: Պրահայում հնարավոր չէին համարում դաշնակցային պարտավորությունների կատարումը՝ առանց Փարիզի հստակ աջակցությունը ունենալու: Չնայած այդ սահմանափակումներին, որոնք որոշակիորեն «ամլացնում» էին կոլեկտիվ անվտանգության գաղափարը, դրանք համարվում էին խորհրդային դիվանագիտության առավելագույն ձեռքբերումը տվյալ ժամանակաշրջանում:

Սակայն դիվանագիտական այս ձեռքբերումները կարճատև եղան: 1938 թվականի սեպտեմբերի 29–30-ին՝ Մյունխենի կոնֆերանսի ժամանակ, Ֆրանսիան ոչ միայն չաջակցեց Չեխոսլովակիային, այլև միացավ Գերմանիայի, Իտալիայի և Մեծ Բրիտանիայի վերջնագրին՝ Պրահայից պահանջելով Սուդետյան երկրամասի փոխանցումը Գերմանիային: Այսպիսով, Մեծ Բրիտանիան ևս որդեգրեց ագրեսորին «խաղաղեցնելու» քաղաքականություն: Չնայած այն հանգամանքին, որ ԽՍՀՄ-ը հայտարարեց պատրաստակամություն՝ օգնություն ցուցաբերելու Չեխոսլովակիային նույնիսկ առանց Ֆրանսիայի մասնակցության, Պրահան նախընտրեց ընդունել վերջնագիրը: Այս կապիտուլյացիոն գործընթացի հետևանքով 1939 թվականի մարտին Չեխոսլովակիան դադարեց գոյություն ունենալ, Սուդետը միացվեց Գերմանիային, Չեխիան դարձավ Բոհեմիայի և Մորավիայի գերմանական պրոտեկտորատ, մի շարք տարածքներ անցան Հունգարիային և Լեհաստանին, իսկ մնացած մասը հռչակվեց որպես Սլովակիայի անկախ պետություն: ԽՍՀՄ-ի համար այս իրադարձությունները նշանակում էին հավաքական անվտանգության համակարգի ստեղծման ձախողում: Դաշնակիցներից մեկը՝ Ֆրանսիան, ապացուցեց, որ անկարող է հավատարիմ մնալ իր դաշնակցային պարտավորություններին, իսկ մյուսը՝ Չեխոսլովակիան, պարզապես դադարեց գոյություն ունենալ: Սակայն, ըստ երևույթին, Կրեմլի համար հիմնական և ճակատագրական հետևությունն այն էր, որ եվրոպական անվտանգության կարևորագույն հարցերը լուծվում էին առանց ԽՍՀՄ շահերը հաշվի առնելու և պարզապես առանց Խորհրդային Միության մասնակցության: Մինչդեռ միջազգային իրավիճակը տարեցտարի թեժանում էր: 1936 թվականին Իսպանիայում սկսվեց քաղաքացիական պատերազմ: ԽՍՀՄ-ը ռազմական խորհրդատուներով և զինտեխնիկայով աջակցություն ցուցաբերեց հանրապետականներին, սակայն Գերմանիայի և Իտալիայի կողմից տրամադրվող զանգվածային օգնության շնորհիվ ֆրանկոյականներին հաջողվեց գերակայություն ձեռք բերել մինչև 1939 թվականի գարունը:



82-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարներ և զինվորներ Պեսչանայա բլրի վրա: Մոնղոլիա, Խալխին Գոլ: 1939 թ.

1937 թվականին Ճապոնիան սկսեց լայնածավալ ներխուժում Չինաստանի տարածք: Արտաքին սպառնալիքը հաշվի առնելով՝ Գոմինդանը և Չինաստանի կոմունիստական կուսակցությունը ստեղծեցին Երկրորդ միացյալ ճակատը, իսկ Խորհրդային Միությունը, ինչպես նախկինում, ռազմական հրահանգիչներ և զինտեխնիկա ուղարկեց՝ աջակցելու Չինաստանին: Սա բավական էր զավթիչների առաջխաղացման տեմպերը դանդաղեցնելու համար: 1938 թվականի ամռանը ճապոնական ղեկավարությունը փորձարկեց Կարմիր բանակի ուժը: Սահմանային հակամարտություն ծավալվեց Խասան լճի շրջանում: 1939 թվականի մայիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում խորհրդային և մոնղոլական զորքերը Մոնղոլիայում՝ Խալխին Գոլ գետի վրա, հետ մղեցին ճապոնական հարձակումները: Չնայած պաշտոնապես այդ իրադարձությունները սահմանային հակամարտություններ էին համարվում, իրենց մասշտաբով դրանք կարելի էր բնորոշել որպես տարածաշրջանային պատերազմ: Հաշվի առնելով, որ 1936 թվականին Գերմանիան և Ճապոնիան կնքել էին ԽՍՀՄ-ի դեմ ուղղված Հակակոմինտերնի պայմանագիրը, Խորհրդային Միությունը երկու ճակատով կանգնած էր պատերազմի իրական վտանգի առաջ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում:

Խորհրդա-գերմանական պայմանագիր: 1939 թվականի ամռանը մեկնարկեց համաժամանակյա դիվանագիտական բանակցությունների յուրահատուկ փուլ: Մոսկվա ժամանեցին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի պատվիրակությունները՝ քննարկելու հավաքական անվտանգության պայմանագրի հնարավորությունը: Միևնույն ժամանակ Լոնդոնում ընթանում էին անգլո-գերմանական գաղտնի բանակցություններ՝ նպատակ ունենալով սահմանել ազդեցության գոտիները: Բեռլինն էլ իր հերթին սկսեց ուսումնասիրել Խորհրդային կառավարության դիրքորոշումը՝ չհարձակվելու պայմանագիր կնքելու հնարավորության վերաբերյալ:

Աստիճանաբար Կրեմլում ամրապնդվեց այն համոզմունքը, որ Լոնդոնն ու Փարիզը իրականում շահագրգռված չէին կոնկրետ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ: Բրիտանական և ֆրանսիական պատվիրակությունները կազմված էին ցածր կոչում ունեցող սպաներից և պաշտոնյաներից՝ սահմանափակ իրավասություններով և իրազեկություններով: Գրեթե յուրաքանչյուր կարևոր հարցի քննարկման ժամանակ նրանք «թայմ-աութ» էին խնդրում՝ վերադաս ղեկավարության հետ խորհրդակցելու համար: Այսպիսով, բրիտանական և ֆրանսիական կառավարությունների նպատակն իրականում բանակցությունների արդյունքը չէր, այլ հենց բանակցային գործընթացի փաստը, որը կարող էր օգտագործվել որպես լծակ՝ Բեռլինի վրա ճնշում գործադրելու համար:

Այս պայմաններում 1939 թվականի օգոստոսի 23-ին ԽՍՀՄ ղեկավարությունը Գերմանիայի հետ կնքեց չհարձակվելու պայմանագիր, որը պատմագիտության մեջ հայտնի է որպես Ռիբենտրոպ-Մոլոտով պակտ: Համաձայնագրին կցված էր գաղտնի արձանագրություն, որում կողմերը սահմանում էին իրենց ազդեցության ոլորտների բաժանման գծերը Արևելյան Եվրոպայում:

Հետագայում արևմտյան պատմագրությունը խորհրդա-գերմանական չհարձակվելու պայմանագիրը մեկնաբանել է բացառապես բացասական համատեքստում: Այս մոտեցումն արտացոլվեց նաև 1990-ականների հայրենական պատմագրության մեջ, որն այդ ժամանակահատվածում բնութագրվում էր արևմտամետ և մեղադրական ուղղվածությամբ: Հաճախ առաջ քաշվում էին ոչ այնքան գիտական, որքան լրագրողական բնույթի դատողություններ, որոնց համաձայն՝ պայմանագիրը ներկայացվում էր որպես բռնապետական (տոտալիտար) երկու ռեժիմների «բնական դաշինք» կամ «գենետիկական հարազատություն»: Այն ընկալվում էր որպես փաստաթուղթ, որը «բացեց պատերազմի դարպասները» և ԽՍՀՄ-ին Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկման մեջ մեղադրելու հիմք դարձավ: Սակայն հարկ է ընդգծել, որ նացիստական Գերմանիայի հետ չհարձակվելու նմանատիպ պայմանագրեր մինչ այդ արդեն կնքվել էին եվրոպական մի շարք պետությունների կողմից: 1934 թվականին այդպիսի պայմանագիր էր ստորագրվել Լեհաստանի կողմից, իսկ 1938-ին՝ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի: 1939 թվականին Լատվիան, Լիտվան և Էստոնիան ևս Գերմանիայի հետ կնքեցին չհարձակվելու պայմանագրեր: Ավելին, 1938 թվականին Լեհաստանը մասնակցեց Չեխոսլովակիայի բաժանմանը՝ իր տարածքին միացնելով Ցյեշինի շրջանը: Այսպիսով, Խորհրդային Միության կողմից Գերմանիայի հետ չհարձակվելու պայմանագրի ստորագրումը չէր հակասում ժամանակի միջազգային դիվանագիտական պրակտիկային: Դրա ստորագրումը հնարավորություն տվեց ԽՍՀՄ-ին 1939 թվականին խուսափել երկու ճակատով պատերազմի սպառնալիքից:

§ 80. Խորհրդային Միությունը Հայրենական Մեծ պատերազմի նախօրեին

Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը: 1939 թվականի սեպտեմբերի 1-ին հիտլերյան զորքերը ներխուժեցին Լեհաստան, և սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Սեպտեմբերի 3-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային, սակայն ռազմական գործողություններ չձեռնարկեցին՝ ի պաշտպանություն Լեհաստանի:

Ելնելով Առաջին համաշխարհային պատերազմի փորձից՝ 1930-ականների ռազմական տեսաբանները ենթադրում էին, որ ապագա լայնածավալ պատերազմը Եվրոպայում ևս կզարգանա «հյուծման ռազմավարության» տրամաբանությամբ: Նրանք կանխատեսում էին, որ խուսանավելու փուլը կավարտվի բավական արագ, կձևավորվի երկարատև և կայուն ռազմաճակատ, իսկ մարտադաշտում վճռորոշ դեր կունենան հետևակը և հրետանին: Հաղթանակի հիմնական պայմանը դիտվում էր

տնտեսական գերակայությունը: Սակայն Վերմախտի հրամանատարությունը որդեգրել էր արմատապես այլ մոտեցում՝ հիմնված «ջախջախման ռազմավարության» վրա: Ըստ այս մոդելի՝ հակառակորդի զորքերը պետք է ոչնչացվեին սրընթաց և կոորդինացված գործողությունների արդյունքում՝ նախքան նրա տնտեսական ներուժը կհասցներ ազդեցություն գործել ռազմական արդյունքի վրա: Գերմանական քարոզչությունը այս ռազմավարությունն անվանեց «բլիցկրիգ» (կայծակնային պատերազմ): Դրա առանցքային տարրերն էին խոշոր, զրահապատ և մոտոհրաձգային մեծ կազմավորումների ակտիվ օգտագործումը, ինչպես նաև օդուժի կենտրոնացումը ռազմաճակատի ռազմավարական նշանակության հատվածներում:

Լեհաստանը դարձավ բլիցկրիգի ռազմավարության առաջին զոհը: 1939 թվականի սեպտեմբերի կեսերին լեհական բանակը պարտություն կրեց Վերմախտից: Այնուհետև Գերմանիայի և Ֆրանսիայի սահմանին դրան հաջորդեց այսպես կոչված «տարօրինակ պատերազմը», որի ընթացքում կողմերը գրեթե չիրականացրին ակտիվ ռազմական գործողություններ: 1940 թվականի ապրիլին նացիստական Գերմանիան գրավեց Դանիան և ծովային դեսանտ իջեցրեց Նորվեգիայի տարածքում: Իսկ 1940 թվականի մայիսի 10-ից մինչև հունիսի 22-ը կայծակնային արշավի ժամանակ Ֆրանսիան լիովին պարտվեց, և բրիտանական արշավախմբի մնացորդները տարհանվեցին Լա Մանշի վրայով: 1941 թվականի գարնանը նացիստները գրավեցին Հարավսլավիան և Հունաստանը: Այդ պահից Խորհրդային Միությունը մնաց Ռայխի միակ դիմակայող ուժը մայրցամաքում:

ԽՍՀՄ տարածքի ընդլայնումը: Ռազմավարական առաջնագծի ապահովման հարցը խորհրդային ղեկավարության համար դարձավ առաջնային կարևորություն ունեցող խնդիր: ԽՍՀՄ-ը ձգտում էր հնարավորինս հեռացնել պետական սահմանները արդյունաբերական և տրանսպորտային կարևոր հանգույցներից՝ կանխելու թշնամու կողմից դրանց գրավման հնարավորությունը: Մասնավորապես, մտահոգություն էր առաջացնում ռազմավարական նշանակություն ունեցող կամուրջների անվտանգությունը, որոնք կարող էին սպառնալ Խորհրդային Միության ներքին անվտանգությանը: Հակառակ եղած կարծիքի՝ 1939 թվականի օգոստոսի 23-ի՝ խորհրդա-գերմանական չհարձակվելու պայմանագրի գաղտնի արձանագրությունը ԽՍՀՄ-ին չէր դարձնում Գերմանիայի դաշնակից: Այն նախատեսում էր ոչ թե տարածքների բռնազավթում Կարմիր բանակի կողմից, այլ ազդեցության ոլորտների բաժանում: Խոսքը վերաբերում էր քարտեզի վրա սահմանային գծի որոշմանը, որից այն կողմ Ռայխի շահերը չպետք է տարածվեին: Կրեմլում ոչ ոք չէր կանխատեսում, որ արդեն 1939 թվականի օգոստոսին Լեհաստանը մի քանի շաբաթում կպարտվի, իսկ Անգլիան ու Ֆրանսիան նրան որևէ գործուն ռազմական օգնություն չեն ցուցաբերի:

Ռիգայի՝ 1921 թվականի խաղաղության պայմանագրով, որը վերջ դրեց խորհրդա-լեհական պատերազմին, Լեհաստանը Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի տարածքներում պահպանեց զգալի տարածքներ: Չնայած Վարշավայի՝ այս հողերը լեհական դարձնելու քաղաքականությանը՝ տեղի բնակչությունը շարունակեց պահպանել իր էթնիկ ինքնությունը: 1939 թվականի սեպտեմբերի 17-ին, երբ



Փոստային նամականիշ՝ նվիրված Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի միավորմանը

լեհական բանակի հիմնական ուժերը ջախջախված էին, իսկ Կառավարությունը փախել էր Ռումինիա, Կարմիր բանակը մտավ Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի տարածքները: Լեհաստանի դեսպանին հանձնվեց պաշտոնական գրություն, որում ասվում էր. «Խորհրդային կառավարությունը չի կարող անտարբեր մնալ այն փաստի նկատմամբ, որ Լեհաստանի տարածքում բնակվող մեզ արյունակից ուկրաինացիներն ու բելառուսները լքված են, անպաշտպան և հանձնված ճակատագրի ողորմածությանը: Հաշվի առնելով իրավիճակը՝ Խորհրդային կառավարությունը Կարմիր բանակի բարձրագույն հրամանատարությանը կարգադրել է զորքերին հրաման տալ՝ անցնելու սահմանը և իրենց պաշտպանության տակ վերցնելու Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի բնակչության կյանքն ու ունեցվածքը»: Նույն տարում այս տարածքներում ձևավորվեցին Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելառուսի ժողովրդական ժողովները: Նրանց դիմումների հիման վրա՝ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1939 թվականի նոյեմբերի 1-ին և 2-ին ընդունեց համապատասխան օրենքներ՝ Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելառուսը Խորհրդային Միության կազմում ընդգրկելու և դրանք համապատասխանաբար Ուկրաինական և Բելառուսական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններին միացնելու վերաբերյալ:

Պատերազմի հնարավորության դեպքում Գերմանիայի համար ռազմավարական հարմար «ցատկահարթակ» կարող էին դառնալ Լատվիան, Լիտվան և Էստոնիան: Իրավիճակը բարդանում էր նրանով, որ այս երկրների Կառավարությունները վարում էին հակասովետական քաղաքականություն: Այս առումով ուշագրավ է 1939 թվականի հունիսի 7-ին Էստոնիայի կողմից Գերմանիայի հետ ստորագրված չհարձակվելու պայմանագիրը, որի գաղտնի հավելվածում նշվում էր, որ Էստոնիան պարտավորվում է «Գերմանիայի համաձայնությամբ իրականացնել Խորհրդային Ռուսաստանի հետ կապված ռազմական անվտանգության բոլոր անհրաժեշտ միջոցառումները»: Բալթյան երկրների քաղաքական վարչակարգերը բնութագրվում էին բռնատիրական և ազգայնական ուղղվածությամբ: Ակնհայտ էր, որ եվրոպական հակամարտության դեպքում նրանք կարող էին դառնալ Խորհրդային Միության թշնամիների դաշնակիցներ: Այս հնարավորությունը չեզոքացնելու նպատակով խորհրդային ղեկավարությունը ձեռնարկեց կանխարգելիչ քայլեր: 1939 թվականի հոկտեմբերին Լատվիան, Լիտվան և Էստոնիան ԽՍՀՄ-ի հետ ստորագրեցին փոխօգնության պայմանագրեր, համաձայն որոնց՝ իրենց տարածքում տեղակայվեցին խորհրդային ռազմական զորակազմեր: 1940 թվականի ամռանը այս երկրներում բռնկվեցին ցույցեր և հանրահավաքներ՝ գործող կառավարությունների հրաժարականի պահանջով: Խորհրդային ղեկավարությունը Մերձբալթյան հանրապետությունների կառավարությու-

ներից պահանջում էր կազմակերպել ժողովրդավարական ընտրություններ: Նոր խորհրդարաններում իշխանության եկան ձախակողմյան ուժեր, որոնք հանդես եկան ԽՍՀՄ-ին միանալու նախաձեռնությամբ: 1940 թվականի հուլիսի 21-ին Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի խորհրդարանները պաշտոնապես դիմեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Խորհրդային միությանը միանալու խնդրանքով: 1940 թվականի օգոստոսի 3-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը վավերացրեց Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի միութենական հանրապետությունների մուտքը ԽՍՀՄ:

Ֆինլանդիայի հետ սահմանը Լենինգրադ քաղաքից մոտ 30 կմ հեռավորության վրա էր, ինչը նշանակում էր, որ քաղաքը գտնվում էր ֆիննական ծանր հրետանու կրակոցների հասանելիության տակ: Այս պայմաններում, երբ Մոսկվայի և Հելսինկիի հարաբերությունները հեռու էին բարեկամական լինելուց, անվտանգային մտահոգությունները Խորհրդային ղեկավարության համար դառնում էին առաջնային: Ֆինլանդիայի հասարակության որոշ շրջանակներում գերիշխում էր «Մեծ Ֆինլանդիայի» գաղափարախոսությունը, որի համաձայն՝ Հելսինկիի վերահսկողությունը պետք է տարածվեր Կոլա թերակղզու, Կարելիայի, Էստոնիայի և Լենինգրադի մարզի որոշ բնակավայրերի վրա: Սահմանային լարվածության աճի պայմաններում Խորհրդային կառավարությունը առաջարկեց Վիբորգի շրջանում փոխանակել Ֆինլանդիայի տարածքը Կարելիայի կրկնակի տարածքի հետ. դա հնարավորություն կտար սահմանը հեռացնել Լենինգրադից 90 կմ-ով: Սակայն ֆիննական կառավարությունը մերժեց առաջարկը, և Խորհրդային Միությունը որոշեց հարցը լուծել ուժային ճանապարհով: 1939 թվականի նոյեմբերի 10-ին սկսվեց խորհրդա-ֆիննական պատերազմը (հայտնի նաև որպես «Ձմեռային պատերազմ» անվանմամբ), որը տևեց մինչև 1940 թվականի մարտի 12-ը: Ռազմական գործողությունների ավարտին Մոսկվայում ստորագրված հաշտության պայմանագրով ԽՍՀՄ-ին անցան Կարելյան Իսթմուսը, Սորտավալա և Սալլա քաղաքներն իրենց հարակից տարածքներով, ինչպես նաև Ռիբաչի և Սրեդնի թերակղզիների մի մասը: Դրանից հետո ԽՍՀՄ կազմում հիմնադրվեց Կարելո-Ֆիննական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

1940 թվականի ամռանը Խորհրդային Միության պահանջով Ռումինիան վերադարձրեց Բեսարաբիան և Հյուսիսային Բուկովինան՝ տարածքներ, որոնք 1918 թվականից գտնվում էին նրա վերահսկողության տակ և համարվում էին ապօրինի բռնակցված: Այս տարածքների միացման արդյունքում 1940 թվականի օգոստոսի 2-ին ԽՍՀՄ կազմում ստեղծվեց Մոլդովական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Երկրի պաշտպանունակության ամրապնդումը: 1939 թվականի մարտին Բոլշևիկների համամիութենական կոմունիստական կուսակցության (ԲԿԿ(բ)) XVIII համագումարում հաստատվեց երկրի զարգացման երրորդ հնգամյա պլանը: Դրա համաձայն՝ նախատեսվում էր կրկնապատկել ազգային եկամուտը և արդյունաբերական արտադրանքի ծավալը, իսկ գյուղատնտեսական արտադրանքը պետք է ավելանար մեկուկես անգամ: Սակայն 1941 թվականին սկսված Հայրենական մեծ պատերազմի պատճառով պլանի իրագործումը կասեցվեց:

Արտաքին քաղաքական զարգացումները ստիպեցին Խորհրդային Միության ղեկավարությանը հատուկ ուշադրություն դարձնել պաշտպանական արդյունաբերության զարգացմանը: 1938–1939 թվականների ընթացքում ռազմական արտադրանքի ծավալն արժեքային արտահայտությամբ աճեց մոտ մեկուկես անգամ: Եթե 1939 թվականին պաշտպանական ծախսերը կազմում էին պետբյուջեի մեկ քառորդը, ապա 1940 թվականին այդ ցուցանիշը հասավ մեկ երրորդի, իսկ 1941 թվականին՝ 43 տոկոսի: Մեծ թափ ստացավ զինտեխնիկայի տեսակների նորացումը: 1939–1941 թվականներին սկսվեց մի շարք նոր մոդելների՝ 122 մմ М-30 և 152 մմ М-10 հաուբիցների, Յակ-1, ԼԱԳԳ-3 և ՄիԳ-3 կործանիչների, Իլ-2 գրոհիչ ինքնաթիռների, Պե-2 ռմբակոծիչների, ինչպես նաև Տ-34 և ԿՎ-1 տանկերի մասսայական արտադրությունը: Պաշտպանական կարողությունների ամրապնդման շրջանակում Կարմիր բանակում սկսեցին ձևավորվել տանկային դիվիզիաներ, որոնք ներառվեցին մեքենայացված զորամիավորումների կազմում: Սակայն ամբողջ բանակի վերազինումը հնարավոր չէր իրականացնել կարճ ժամանակում, հետևաբար պատերազմի մեկնարկին Կարմիր բանակի զինտեխնիկայի և սպառազինության զգալի մասը հնացած էր:

Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը պահանջում էր ոչ միայն ռազմական արդյունաբերության արագ զարգացում, այլև Կարմիր բանակի թվաքանակի էական ավելացում: Եթե 1927 թվականին խորհրդային զինված ուժերում ծառայում էր շուրջ 610,3 հազար մարդ, ապա 1935-ին այդ թիվը հասել էր 1,1 միլիոնի, 1938-ին՝ 1,5 միլիոնի, իսկ 1939 թվականի օգոստոսի 31-ի դրությամբ գերազանցել էր 2 միլիոնը: Այսպիսով, 1930-ականների ընթացքում Կարմիր բանակը կրկնապատկվեց: Սակայն համաշխարհային պատերազմի բռնկման պայմաններում սա անբավարար մակարդակ էր, և 1939 թվականի սեպտեմբերի 1-ին ԽՍՀՄ-ում ընդունվեց «Համընդհանուր զինվորական ծառայության մասին» օրենքը, որը հնարավորություն տվեց Հայրենական մեծ պատերազմի նախաշեմին Կարմիր բանակի ընդհանուր թվաքանակը հասցնել 5,373 միլիոն մարդու: Չնայած այն հանգամանքին, որ բանակի զանգվածային համալրման արդյունքում աշխատունակ բնակչության զգալի մասը դուրս էր մնում արտադրական գործընթացներից, Խորհրդային Միության տնտեսությունը գրանցեց դինամիկ աճ: Երրորդ հնգամյակում աշխատողների և ծառայողների ընդհանուր թիվը շարունակեց ավելանալ՝ մինչև 1940 թվականը հասնելով 31,2 միլիոնի:

Խորհրդային հասարակությունը նախապատերազմյան տարիներին: 1930-ականների վերջերին խորհրդային հասարակությունը զգալիորեն փոխվել էր արդյունաբերացման, կոլեկտիվացման և մշակութային հեղափոխության գործընթացների ազդեցության ներքո:

Թեև արդյունաբերացման գործընթացը 1930-ականների վերջին դեռ ամբողջությամբ ավարտված չէր, սակայն 1926 թվականի համեմատությամբ աշխատավորների տեսակարար կշիռը աճել էր շուրջ 3,6 անգամ՝ վկայելով տնտեսության արդյունաբերական հատվածի դինամիկ աճի մասին: Զգալի առաջընթաց էր գրանցվել նաև կրթության ոլորտում: 1939 թվականի մարդահամարի տվյալներով՝ ինը տարեկանից բարձր

բնակչության շրջանում գրագիտության մակարդակը կազմել էր 81,2 %: Կարևոր հաջողություններ էին արձանագրվել հատկապես տարրական կրթության մատչելիության առումով: Այնուամենայնիվ, միջնակարգ և բարձրագույն կրթության ոլորտում իրավիճակը դեռևս գոհացուցիչ չէր. միջնակարգ կրթությամբ անձինք կազմում էին ընդհանուր բնակչության միայն 7,8 %-ը, իսկ բարձրագույն կրթությամբ քաղաքացիները՝ ընդամենը 0,6 %-ը:

ԽՍՀՄ բնակչության սոցիալական կազմը
(1939 թվականի մարդահամարի տվյալներով)

Սոցիալական խումբը	Տեսակարար կշիռը (%)
Կուսակցական, պետական և այլ հաստատությունների ղեկավարներ (նոմենկլատուրա)	2,5
Ծառայողներ և մտավորականներ	14,1
Բանվորներ	32,1
Կոլտնտեսականներ	46,2
Կոոպերացված արհեստավորներ	2,2
Մենատնտես գյուղացիներ և չկոոպերացված արհեստավորներ	2,8
Այլք	0,1

Խորհրդային իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրում բնակչության կրթական մակարդակի բարելավման ուղղությամբ: 1939 թվականին տարրական (1–4-րդ) դասարաններում սովորում էր 21 միլիոն աշակերտ, միջին (5–7-րդ) դասարաններում՝ 8 միլիոն, ավագ (8–10-րդ) դասարաններում՝ 1,4 միլիոն: Միջնակարգ մասնագիտացված ուսումնական հաստատություններում կրթություն էր ստանում մոտ մեկ միլիոն ուսանող, իսկ բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ ավելի քան 800 հազար երիտասարդ: Բնակչության կրթական մակարդակի աճը կարևոր դեր խաղաց պատերազմի տարիներին: Երբ որակյալ կադրերի զգալի մասը զորակոչվեց բանակ, արդյունաբերությունը կարողացավ ապահովել մասնագետների շարունակականություն՝ ներգրավելով դպրոցը նոր ավարտած երիտասարդների, որոնց բազային կրթական հմտությունները բավարար էին ժամանակակից արտադրական տեխնիկայով աշխատելու համար:

Աճող ռազմական սպառնալիքի պայմաններում խորհրդային ղեկավարությունն անցավ աշխատանքային կարգապահության խստացման քաղաքականության: 1939 թվականի հունվարից սկսած՝ աշխատանքից 20 րոպեից ավելի ուշացումը պաշտոնապես համարվում էր բացակայություն, իսկ կրկնվող դեպքերը հանգեցնում էին աշխատանքից ազատման: Նույն տարվա մայիսին ընդունվեց որոշում՝ կոլտնտեսություններում սահմանելու պարտադիր նվազագույն աշխատանքային օրեր, ինչը միտված էր բարձրացնելու գյուղատնտեսական արտադրության արդյունավետու-

թյունն ու կարգապահությունը: 1940 թվականի ամռանից ցանկացած բացակայություն պետք է դիտարկվեր դատարանում, և նրանք, ովքեր մեղավոր էին ճանաչվում, դատապարտվում էին մինչև վեց ամիս տևողությամբ ուղղիչ աշխատանքների՝ ամսական վաստակի 25 տոկոսի պահումով: Միաժամանակ հաստատվեցին կառուցվածքային և օրենսդրական մի շարք փոփոխություններ. աշխատանքային օրը երկարացվեց՝ 7 ժամից դարձնելով 8 ժամ, վերացվեց հանգստյան օրերի պարբերականությունը՝ սահմանելով յոթօրյա աշխատանքային շաբաթ, օրենքով արգելվեց աշխատողների ինքնակամ հեռացումը ձեռնարկություններից ու հիմնարկներից: Որոշ դեպքերում աշխատողները մեկ ձեռնարկությունից մյուսն էին տեղափոխվում վարչական հրամանով:

Ռազմական արտադրության գերակայությունը և ռեսուրսների վերաբաշխումը հօգուտ պաշտպանական ոլորտի 1930-ականների վերջին հանգեցրին սպառողական ապրանքների պակասին: Նորից սկսեցին նկատվել բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքների մատակարարման ընդհատումներ, և խանութներում երկար հերթեր գոյացան: Մոտալուտ պատերազմի սպառնալիքը հանգեցրեց քաղաքական զանգվածային բռնաճնշումների կուրսի շարունակմանը: Եթե 1935 թվականին ԳՈՒԼԱԳ համակարգում կար շուրջ 966 հազար բանտարկյալ, ապա 1940 թվականին այդ թիվը հասել էր 1 միլիոն 660 հազարի:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին ԽՍՀՄ ղեկավարության կողմից ՆԷՊ-ից հրաժարվելու պատճառները: Ո՞ր կուսակցությունների առաջնորդներն են աջակցել Նոր տնտեսական քաղաքականության շարունակմանը:
2. Ի՞նչ է նշանակում «պլանային տնտեսություն»: Ինչու՞ 1930-ականների խորհրդային տնտեսությունն այդպես անվանվեց:
3. Վերլուծե՛ք 322 էջի աղյուսակի բովանդակությունը: Խորհրդային տնտեսության ո՞ր առաջնահերթություններ են ցույց տալիս այդ աղյուսակները:
4. Պատմե՛ք գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման իրականացման և արդյունքների մասին: Վերլուծե՛ք արդյունաբերացման և կոլեկտիվացման գործընթացների փոխհարաբերությունները:
5. Ի՞նչ գործառույթներ են ունեցել քաղաքական զանգվածային բռնաճնշումները ստալինյան ԽՍՀՄ-ում:
6. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ պատրաստե՛ք հաղորդում քաղաքական բաց դատավարություններից մեկի մասին, որտեղ դատապարտվել են «ժողովրդի թշնամիները»: Ներկայացրե՛ք ձեր կարծիքը սոցիալական կյանքում նման գործընթացների դերի մասին:

7. Ինչպե՞ս բոլշևիկյան կուսակցությունը վերածվեց իշխանության հատուկ ճյուղի:
8. Ինչպե՞ս զարգացավ կրթական համակարգը ԽՍՀՄ-ում: Ինչպե՞ս է այն օգնել «սոցիալական վերելակների» աշխատանքին:
9. Տեղեկատվության հավելյալ աղբյուրներից օգտվելով՝ ռեպորտաժ պատրաստե՛ք 1930-ական թվականներին հայտնի դարձած մեր հայրենակիցներից մեկի մասին: Նա կարող է լինել օդաչու, բևեռախույզ, առաջատար աշխատող և այլն: Նշե՛ք, թե ինչ մրցանակների է արժանացել ձեր հերոսը:
10. Ի՞նչ ջանքեր գործադրեց խորհրդային դիվանագիտությունը հավաքական անվտանգության համակարգ ստեղծելու համար: Որո՞նք էին այդ ջանքերի արդյունքները:
11. Ի՞նչ հանգամանքներում է ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև կնքվել չհարձակվելու պայմանագիր: Ի՞նչ պատմական դեր է խաղացել:
12. Ինչպե՞ս է տեղի ունեցել ԽՍՀՄ սահմանների ընդլայնումը 1939–1940 թվականներին: Ի՞նչ տարածքներ են միացվել: Ի՞նչ նոր հանրապետություններ ստեղծվեցին ԽՍՀՄ կազմում:

ԳԼՈՒԽ 16. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ

§ 81. Նացիստական հարձակման դիմագրավումը

Պատերազմ մեր հայրենիքի համար: Հայրենական մեծ պատերազմը Երկրորդ համաշխարհային պատերազմի (1939–1945 թթ.) անբաժանելի և կարևոր մասն է: Ռուսաստանի քաղաքացիների համար այն ունի բացառիկ և խորքային նշանակություն: Նացիստական Գերմանիայի ղեկավարության պլանների համաձայն՝ ԽՍՀՄ-ի նկատմամբ տարած հաղթանակից հետո նախատեսվում էր Խորհրդային Միության եվրոպական հատվածի բնակչության ճնշող մեծամասնության կա՛մ վտարում, կա՛մ ֆիզիկական ոչնչացում: Կենդանի մնացած սակավաթիվ անձանց սպասվում էր ճորտի կամ ծառայի ճակատագիր գերմանացի գաղութարարների նոր իշխանության ներքո: Իրերն իրենց անուններով կոչելով՝ կարելի է վստահաբար ասել՝ նացիստները ծրագրել էին ԽՍՀՄ-ի եվրոպական հատվածի բնակչության զանգվածային ցեղասպանություն: Մտածե՛ք այս մասին. ես և դու պարզապես կարող էինք չլինել: ԽՍՀՄ քաղաքացիների համար սա գոյության պայքար էր՝ իրենց էթնիկ և քաղաքական ինքնությունը պահպանելու համար: Հետևաբար «Հայրենական մեծ պատերազմ» ձևակերպումը այս համատեքստում միանգամայն արդարացված և հստակ է. սա պատերազմ էր հենց հայրենիքի փրկության համար (տես Հավելված՝ քարտեզ №17):

«Բարբարոսա» պլանը (план «Барбаросса») և դրա իրականացումը: 1941 թվականի հունիսի 22-ի վաղ առավոտյան հիտլերյան Գերմանիայի զորքերը հատեցին Խորհրդային Միության սահմանը, և սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Վերմախտի ստորաբաժանումները տեղաբաշխվեցին ստրատեգիական երեք ուղղություններով: «Հյուսիս» զորախումբը Արևելյան Պրուսիայից գնաց Լենինգրադի ուղղությամբ, «Կենտրոն» բանակախումբը Լեհաստանի հյուսիսային շրջաններից շարժվեց Մոսկվայի ուղղությամբ, «Հարավ» խմբավորումը, որի հիմնական ուժերը կենտրոնացած էին Լեհաստանի հարավում, ներխուժեցին Ուկրաինա, այնուհետև շարժվեցին Դոնի Ռոստով: Պատերազմի գերմանական պլանը՝ «Բարբարոսա», հիմնված էր «ոչնչացման դոկտրինի» վրա: Ըստ այդ ծրագրի՝ թշնամին նպատակ ուներ ԽՍՀՄ-ի սահմանների մոտ՝ Դնեպր և Արևմտյան Դվինա գետերից արևմուտք, արագորեն ոչնչացնել Կարմիր բանակի հիմնական ուժերը և այնուհետև ստեղծված «օպերատիվ վակուումի» պայմաններում առաջանալ դեպի Արխանգելսկ-Աստրախան: «Բարբարոսա» պլանը նախատեսված էր ընդամենը մի քանի ամսվա ընթացքում պատերազմն ավարտելու համար: Վերմախտը նման կայծակնային պատերազմի (բլիցկրիգ) մարտավարություն արդեն փորձարկել էր Արևմտյան Եվրոպայում, և Բեռլինում համոզված էին, որ այն կհաջողվի նաև ԽՍՀՄ-ի դեմ պատերազմում: Թեպետ Կարմիր բանակն ընդհանուր առմամբ որոշակի առավելություն ուներ զորքերի և զինտեխնիկայի քանակով, սակայն հիմնական հարվածային ուղղություններում գերմանական կողմը բազմակի

գերազանցություն էր ապահովել: Արդյունքում նրանց հաջողվեց ճեղքել խորհրդային պաշտպանությունը և առաջ շարժվել դեպի երկրի խորքերը:

Պատերազմի յոթերորդ օրը գերմանական տանկային ստորաբաժանումները միավորվեցին Մինսկի մերձակայքում, ինչի արդյունքում Կարմիր բանակի Արևմտյան ռազմաճակատի հիմնական ուժերն ընկան շրջափակման մեջ: Պատերազմի 20-րդ օրը «Հյուսիս» բանակային խմբավորումը հասավ Պսկով և Տարտու քաղաքներ, իսկ «Կենտրոն» խմբավորման ստորաբաժանումները մոտեցան Դնեպր գետին: Շուտով «Կենտրոն» զորախմբի գլխավոր տանկային ուժերը շարժվեցին դեպի հարավ՝ նպատակ ունենալով հարվածել Կիևը պաշտպանող խորհրդային զորքերի թիկունքին: Արդյունքում սեպտեմբերին շրջափակվեցին ԽՍՀՄ Հարավարևմտյան ռազմաճակատի հիմնական ուժերը: Սեպտեմբերի 30-ին նացիստական Գերմանիան սկսեց «Թայֆուն» օպերացիան՝ հարձակում Մոսկվայի ուղղությամբ: Այդ ժամանակ Վերմախտը արդեն շրջափակել էր Լենինգրադը, գրավել Ուկրաինայի մեծ մասը և ներխուժել Ղրիմի թերակղզի:



Մենք անպայման հաղթելու ենք և ոչնչացնելու ենք թշնամուն: Պաստառ: 1941 թ.: Նկարիչներ՝ Կուկրինիկսի

Պատերազմի հենց առաջին օրերից թշնամին բախվեց կատաղի դիմադրության: Հակառակորդի կողմից հարձակման ենթարկված սահմանային հենակետերից ոչ մեկն առանց հրամանի չի հանձնվել կամ նահանջել: Բրեստի ամրոցի պաշտպանները հերոսաբար դիմադրեցին: Լիտվայի Ռասեյնյայ քաղաքի մոտակայքում ԿՎ-1 ծանր տանկի անձնակազմը գրեթե մեկ օրով կանգնեցրեց թշնամու զգալիորեն գերակշիռ ուժերի առաջխաղացումը: Խորհրդային օդաչուները ևս բացառիկ հերոսություն ցուցաբերեցին պատերազմի առաջին օրերին: Նիկոլայ Գաստելոն օդային մարտում խոցված և այրվող օդանավը ուղղեց թշնամական տեխնիկայի շարասյան մեջ: Վիկտոր Տալալիխինը գիշերային խոյահարմամբ (օդային բախման միջոցով) ոչնչացրեց թշնամու ռմբակոծիչը:

Խորհրդային զինվորները զանգվածային հերոսություններ ցուցաբերեցին: Այս փաստը վկայում է, որ պատերազմի սկսման պահից ԽՍՀՄ քաղաքացիների ճնշող մեծամասնության համար խորհրդային պետությունն ու իշխանությունը դարձան «իրենցը», դարձան մի արժեք, որի համար նրանք պատրաստ էին կենաց-մահու կռիվ մղելու: Այդ օրերին ռուսներն ու ղազախները, ուկրաինացիներն ու թաթարները, Սիբիրի և Կովկասի բնիկ ժողովուրդները միասին կանգնեցին հայրենիքի պաշտպանության դիրքերում: ԽՍՀՄ ժողովուրդների միասնությունն այս պատերազմում դարձավ ևս մեկ վճռորոշ գործոն, որը կանխորոշեց Խորհրդային Միության հաղթանակը: Թշնամին շարունակում էր առաջխաղացումը, սակայն նրա յուրաքանչյուր հաջորդ քայլ

դեպի արևելք ավելի թանկ էր արժենում. կորուստները մեծանում էին, իսկ դիմադրությունը՝ ուժեղանում:

«Հյուծման ռազմավարությունը» ընդդեմ «ջախջախման ռազմավարության»: Հայրենական մեծ պատերազմի առաջին ամիսները ամենադժվարն էին: Թշնամին կայծակնային արագությամբ առաջ էր շարժվում: Կարմիր բանակի ստորաբաժանումների ղեկավարման համակարգում նկատվում էր կազմակերպչական անորոշություն: Մեծ թվով զինվորներ և հրամանատարներ հայտնվեցին շրջափակման մեջ և գերեվարվեցին: Այս փուլում նացիստներն արդեն հավատում էին իրենց հաղթանակին: Գերմանական գլխավոր շտաբի պետ Ֆրանց Հալդերը 1941 թվականի հուլիսի 3-ին իր օրագրում գրել է. «Ընդհանուր առմամբ արդեն կարելի է ասել, որ Արևմտյան Դվինայի և Դնեպրի դիմաց ռուսական ցամաքային բանակի հիմնական ուժերին ջախջախելու առաջադրանքը կատարված է: Ուստի չափազանցություն չի լինի ասել, որ Ռուսաստանի դեմ ռազմարշավը հաղթանակով է պսակվել 14 օրվա ընթացքում»: Սակայն 1941 թվականի ամռանը խորհրդային ղեկավարությունը ձեռնարկեց լայնածավալ քայլեր, որոնց նպատակն էր մոբիլիզացնել երկրի բոլոր ուժերը՝ թշնամուն հաղթելու համար: Խորհրդային իշխանության գերագույն օրգանը Պաշտպանության պետական կոմիտեն (ՊԿԿ) էր, որը ձևավորվել էր 1941 թվականի հունիսի 30-ին: Զինված ուժերի ղեկավարումը հանձնվեց Գերագույն գլխավոր հրամանատարության շտաբին: Երկու կառույցներն էլ ղեկավարում էր Ի. Վ. Ստալինը, որը 1941 թվականի հուլիսին նշանակվել էր նաև Պաշտպանության ժողովրդական կոմիսար. 1941-ի մայիսից զբաղեցնում էր Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի պաշտոնը: Պաշտպանության պետական կոմիտեի կազմում ընդգրկված էին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության առանցքային գործիչներ Վ. Մոլոտովը, Կ. Վորոշիլովը, Գ. Մալենկովը, Լ. Բերիան և այլք:



Մոսկվայի մերձակայքում պաշտպանական շինությունների կառուցում: 1941 թվականի աշուն

Երկրի ղեկավարությունը սկսեց նոր ստորաբաժանումների շարունակական կազմավորումը: Վերմախտը պատրաստվել էր «ջախջախման ռազմավարությամբ» պատերազմին՝ նախատեսելով կարճաժամկետ, կայծակնային հարձակումներով արագ հաղթանակ: Այդ պատճառով գերմանական պլաններում նոր զորամիավորումների համալրում կամ երկարատև դիմակայության համար պատրաստվածություն գրեթե չէր նախատեսվում: Ի հակադրություն նրանց՝ Խորհրդային Միությունը պատրաստվում էր կռվել «հյուծման ռազմավարության» շրջանակներում՝ հաշվարկելով, որ պատերազմը կարող էր լինել երկարատև ու հյուծիչ, իսկ հաղթանակ հնարավոր էր ապահովել՝ միայն տնտեսական գերակայության հասնելով: Քանի որ Կարմիր բանակի կադրային ստորաբաժանումները 1941 թվականի ամռանը լրջագույն կորուստներ կրեցին ռազմաճակատում և հիմնականում «մաշվեցին», Մոսկվայում կայացվեց վճռական որոշում՝ էապես ավելացնել նոր ստորաբաժանումների կազմավորման նախապատերազմական պլանը: Միայն 1941 թվականի երկրորդ կեսին ԽՍՀՄ-ում կազմավորվեց մոտ 300 նոր դիվիզիա: Շատ դեպքերում դրանք ձևավորվում էին հապճեպ, երբեմն՝ ոչ բավարար պատրաստվածությամբ և սպառազինությամբ: Ռազմաճակատում նորաստեղծ ստորաբաժանումները 1.5–2 շաբաթ տևած մարտերից հետո կորցնում էին մարտունակությունը: Սակայն դրանց փոխարեն շտապ կարգով գալիս էին նորերը: Այս կերպ Հիտլերի կայծակնային պատերազմի մեքենան սկսեց աստիճանաբար դանդաղել: 1941 թվականի դեկտեմբերի սկզբին Վերմախտի ուժերը Մոսկվայի որոշ հատվածներում մայրաքաղաքից ընդամենը 20–25 կիլոմետր հեռավորության վրա էին գտնվում, սակայն այդ վերջին կիլոմետրերը նացիստներին չհաջողվեց հաղթահարել:

ԽՍՀՄ-ը սկսեց արդյունաբերության զանգվածային տարհանում դեպի երկրի արևելք՝ գործարաններն ու ձեռնարկությունները գործնականում հեռացնելով գերմանական տանկային խմբավորումների թրթուրների տակից:

Այս մեծածավալ կազմակերպչական աշխատանքը համակարգում էր Վերաբնակեցման խորհուրդը, որի ղեկավարն էր Ն.Մ. Շվերնիկը: Ըստ պաշտոնական տվյալների՝ միայն 1941 թվականի երկրորդ կեսին ԽՍՀՄ-ի արևելյան շրջաններ տեղափոխվեցին ավելի քան 1500 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից շուրջ 1350-ը՝ պաշտպանական նշանակության: Այսպիսով, հայրենական արդյունաբերության կարևորագույն հատվածը փրկվեց ոչնչացումից և կարողացավ վերածվել Կարմիր բանակի հուսալի թիկունքի՝ ապահովելով նրան զենքով, զինամթերքով, տրանսպորտով և տեխնիկայով: Պատմության մեջ սա աննախադեպ կազմակերպչական քայլ էր: Աշխարհի ոչ մի երկիր ոչ մինչ այդ, ոչ էլ հետագայում պատերազմի ամենաբարդ պայմաններում չի իրականացրել արդյունաբերական ներուժի նման մասշտաբային և արագ տեղափոխում:

Տնտեսությունը սկսեց ամբողջապես անցում կատարել «ռազմական ռելսերի վրա», և բոլոր ոլորտների ու ձեռնարկությունների համար առաջնահերթ դարձավ պաշտպանական խնդիրների կատարումը: Արդյունքում կտրուկ կրճատվեց սպառողական և քաղաքացիական նշանակության արտադրանքը: Նվազեց մեքենաների,

լոկոմոտիվների, կոմբայնների և այլ սարքավորումների արտադրության ծավալը: Միևնույն ժամանակ ռազմական տեխնիկայի, զենքի և զինամթերքի արտադրությունը զգալիորեն աճեց: Կապիտալ շինարարության ռեսուրսներն ու ներուժը ևս հիմնականում հատկացվեցին ռազմավարական նշանակության գործարանների և պաշտպանական օբյեկտների շինարարությանը:

Պայքար Մոսկվայի համար: Հակահիտլերյան դաշինքի ձևավորում: 1941 թվականի դեկտեմբերի սկզբին նացիստական զորքերը, բախվելով խորհրդային համառ դիմադրության, մի քանի օրով դադարեցրին իրենց հարձակողական գործողությունները: Նրանց նպատակը պահեստազորերի կուտակումն էր՝ Մոսկվայի ուղղությամբ հարձակումը նոր ուժով վերսկսելու համար: Սակայն այդ կարճ ժամանակահատվածը Խորհրդային հրամանատարությունը կարողացավ արդյունավետ օգտագործել: 1941 թվականի դեկտեմբերի 5–6-ին խորհրդային ուժերը անցան հակահարձակման երեք ռազմաճակատներում՝ Արևմտյան (հրամ. Գ. Կ. Ժուկով), Կալինինի (Ի. Ս. Կոնև) և Հարավարևմտյան (Ս.Կ. Տիմոշենկո): Քանի որ Վերմախտը պաշտպանության չէր նախապատրաստվել, ռազմաճակատն արագորեն տեղափոխվեց դեպի արևմուտք, և գերմանական զորքերը հետ շպրտվեցին Մոսկվայից 100-250 կիլոմետր հեռավորությամբ:

Մոսկվայի մերձակայքում տարած հաղթանակի նշանակությունը հնարավոր չէ գերագնահատել: Սա դարձավ Վերմախտի առաջին լայնածավալ պարտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի ողջ ընթացքում: Հաղթանակը հոգեբանական մեծ նշանակություն ունեցավ ինչպես խորհրդային քաղաքացիների, այնպես էլ օտարերկրյա կառավարությունների համար. փարատվեց նացիստական Գերմանիայի անպարտելիության առասպելը: Ռազմատնտեսական տեսանկյունից չափազանց կարևոր էր Մոսկվայի՝ որպես արդյունաբերական և տրանսպորտային խոշոր հանգույցի պահպանումը: Այս հաղթանակը նաև հստակ ազդանշան էր, որ Գերմանիայի՝ ԽՍՀՄ-ին արագ ջախջախելու փորձը ձախողվել է: Նացիստական «բլիցկրիգի» (կայծակնային պատերազմի) ռազմավարությունը արևելյան ռազմաճակատում կասեցվեց: Պատերազմը մտավ ձգձգվող փուլ, ինչին Խորհրդային Միությունը պատրաստվում էր դեռևս 1930-ական թվականներից:

1941 թվականի ամռանը սկսեց ձևավորվել հակահիտլերյան դաշինքը: Չնայած ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև գոյություն ունեցող քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի խոր տարբերություններին՝ այս երեք տերությունների ժողովուրդներն ու կառավարությունները գիտակցեցին թշնամուն հաղթելու համար ուժերը միավորելու անհրաժեշտությունը: Առաջին կարևոր քայլը եղավ 1941 թվականի հուլիսի 12-ին, երբ ստորագրվեց անգլո-խորհրդային պայմանագիրը, որով կողմերը պարտավորվում էին համագործակցել Գերմանիայի դեմ պայքարում: Այնուհետև 1941 թվականի սեպտեմբերին ԽՍՀՄ-ը միացավ Ատլանտյան խարտիային: 1942 թվականի հունվարի 1-ին Վաշինգտոնի կոնֆերանսում ստորագրվեց Միավորված ազգերի կազմակերպության հռչակագիրը, որը նշանավորեց հակահիտլերյան դաշինքի վերջնական ձևավորումը:

1941 թվականի նոյեմբերից Լենդ-լիզի ծրագիրը տարածվեց ԽՍՀՄ-ի վրա: Դրա համաձայն՝ ԱՄՆ-ը դաշնակիցներին տրամադրում էր անհրաժեշտ օգնություն նացիզ-

մի դեմ պայքարի համար: Մարտերի ընթացքում կորցրած ռեսուրսները՝ օգտագործված զինամթերքը, վառելանյութը և տեխնիկան, փոխհատուցման ենթակա չէին, սակայն պատերազմի ավարտին մնացածը պետք է կա՛մ վերադարձվեր, կա՛մ վճարվեր դրանց համար: Խորհրդային տնտեսության համար Լենդ-լիզի կարևորության և նշանակության վերաբերյալ պատմաբանների շրջանում դեռևս չկա միակարծություն: Թեև տանկերի և ինքնաթիռների մատակարարումները ներքին արտադրության ծավալների ընդամենը մի քանի տոկոսն էին կազմում, այնուամենայնիվ որոշ ապրանքների՝ հատկապես սննդամթերքի, մեքենաների, շոգեքարշների, ռադիոկայանների, ռադարների և պայթուցիկ նյութերի արտադրության համար անհրաժեշտ քիմիական բաղադրիչների առումով Լենդ-լիզը կարևոր դեր էր խաղում: Բացի նյութական աջակցությունից, Մոսկվան անհամբեր սպասում էր Եվրոպայում երկրորդ ճակատի բացմանը, սակայն այդ որոշումը դաշնակիցների կողմից անընդհատ հետաձգվում էր:

§ 82. Բռնազավթման ռեժիմը: Պարտիզանական շարժում:

Նացիստների ծրագրերը Արևելքում «կենսական տարածության» յուրացման համար: Արևմտյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում նացիստական Գերմանիայի բռնազավթման քաղաքականությունն էապես տարբերվում էր ԽՍՀՄ տարածքում իրականացված գործողություններից: Եվրոպայում նացիստները սերտորեն համագործակցում էին տեղական նացիստամետ քաղաքական գործիչների հետ և թույլ էին տալիս, որ տեղական ձեռնարկատերերը ինտեգրվեն Ռայխի տնտեսությանը: Իսկ Խորհրդային Միության տարածքում զավթիչները վարում էին այլ քաղաքականություն:

Պատերազմ սկսելով ԽՍՀՄ-ի դեմ՝ հիտլերյան ղեկավարությունն առաջնորդվում էր այն համոզմամբ, որ «իսկական արիացիների» համար «կենսական տարածքը» բավարար չէ: Այդ տարածքը նրանք նախատեսում էին ձեռք բերել Խորհրդային Միությունում: Բեռլինում մշակվեց «Օստ» գլխավոր պլանը, որը սահմանում էր ԽՍՀՄ-ի կործանումից հետո արևելքում «կենսական տարածության» յուրացման և շահագործման կարգը: Ծրագրի առանցքային բաղադրիչը գրավված տարածքների գերմանական գաղութացման գաղափարն էր: Համաձայն այդ պլանի՝ խորհրդային միլիոնավոր քաղաքացիներ ենթակա էին բնաջնջման, իսկ ողջ մնացածները պետք է սպասարկեին իրենց նոր տերերին:

Զանգվածային մահապատիժներն սկսվեցին գրեթե բռնազավթման առաջին օրերից: Բաբի Յար (Կիև), Ժեստյանայա Գորկա (Նովգորոդի մարզ), Պետրուշինսկայա Բալկա (Տագանրոգ), Խացուն (Բրյանսկի մարզ)՝ սա այն վայրերի ոչ լրիվ ցանկն է, որտեղ նացիստները ԽՍՀՄ քաղաքացիներին ոչնչացնելու համար դիմել են տարաբնույթ գործողությունների: Դաժանությունների մասշտաբների մասին է վկայում նաև Նյուրնբերգի տրիբունալի վճիռը. «Պատերազմական հանցագործությունները կատարվել են այնպիսի մասշտաբով, որպիսին պատերազմների պատմությունը երբեք



Կարմի՛ր բանակի զինվոր, փրկի՛ր մեզ: Պաստառ: 1942 թ.: Նկարիչ՝ Վ.Բ. Կորեցկի

չի իմացել: Խորհրդային Միության դեմ պատերազմում գրավվելիք տարածքների կողոպուտն ու խաղաղ բնակչության նկատմամբ դաժան վերաբերմունքը մանրամասն մշակվել էին դեռևս հարձակումը սկսելուց առաջ»:

2019 թվականից մեր երկրում իրականացվում է «Առանց վաղեմության ժամկետի» դաշնային ծրագիրը, որի շրջանակում բացահայտվել են Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ռուսաստանի Դաշնության ներկայիս տարածքում գերմանացի զավթիչների և նրանց հանցակիցների իրականացրած վայրագությունների բազմաթիվ փաստեր: Ծրագրի արդյունքում հարուցվել են քրեական գործեր: Դատավարություններ են անցկացվել Բելգորոդում, Կալինինգրադում, Օրյոլում, Պսկովում, Դոնի Ռոստովում և այլ քաղաքներում, որտեղ նացիստական հանցագործությունները հաստատվել են դատարաններում և որակվել որպես ցեղասպանություն: 2022 թվականի հոկտեմբերին Սանկտ Պետերբուրգի քաղաքային դատարանը Լենինգրադի պաշարման ընթացքում նացիստների կողմից կատարված հանցագործությունները պաշտոնապես ճանաչել է որպես խորհրդային ժողովրդի ցեղասպանություն:

Հիտլերյան բռնազավթման ամենահրեշավոր դրսևորումներից մեկը Հոլոքոստն էր՝ էթնիկական պատկանելության հիմքով հրեաների զանգվածային ոչնչացումը: Հիտլերյան ռասայական տեսությունը ենթադրում էր նվաճված ժողովուրդների աստիճանակարգում, որի համաձայն՝ հրեաները գտնվում էին ամենաստորին մակարդակում: Նրանց ոչնչացումը իրականացվում էր համատարած կերպով: Ուկրաինացի և բալթյան որոշ գործընկերներ ակտիվորեն ներգրավված էին զանգվածային մահապատիժների կազմակերպման և իրագործման մեջ՝ ձգտելով ձեռք բերել նացիստական հովանավորների բարեհաճությունը:

Ուկրաինացի ազգայնականները, որոնք իրենց առաջնորդ Ստեփան Բանդերայի անունով կոչվում էին «բանդերականներ», գործել են որպես ուկրաինացի ազգայնականների կազմակերպության՝ OUN, (Ռուսաստանի Դաշնությունում ծայրահեղական ճանաչված և արգելված) մաս: Նրանք հույս ունեին, որ նացիստները Ռայխի հովանու ներքո կթույլատրեն ստեղծել ուկրաինական անկախ պետություն, որը կորդեգրի ծայրահեղ ազգայնական ուղեգիծ: Սակայն նացիստական գաղափարախոսության տեսանկյունից ուկրաինացիները, ինչպես բոլոր սլավոնները, համարվում էին «ունտերմենշ», ուստի Բեռլինում չէին ուզում լսել ուկրաինական որևէ պետության մասին, իսկ ։ Բանդերայի շարժման մի շարք առաջնորդներ նույնիսկ ձերբակալվեցին: Այնուամենայնիվ մինչև 1944 թվականը Բանդերայի շատ հետևորդներ շարունակեցին համագործակցել գերմանական զավթիչների հետ:

Պատերազմից հետո արևմտյան որոշ պատմաբաններ առաջ էին քաշում այն թեզը, ըստ որի՝ իբր Վերմախտը «անմեղսակից» էր, իսկ ողջ պատասխանատվությունն ընկնում էր «չարանենգ» ԷսԷս-ի վրա: Սակայն փաստերը հերքում են այս մոտեցումը: Դեռևս պատերազմի նախօրյակին՝ 1941 թվականի մայիսի 13-ին, Վերմախտի գլխավոր հրամանատար Վիլհելմ Կեյտելը հրամանագիր էր ստորագրել, որի համաձայն՝ Վերմախտի զինծառայողները ազատվում էին ԽՍՀՄ քաղաքացիական բնակչության դեմ կատարած հանցագործությունների համար պատասխանատվությունից: 1941 թվականի հոկտեմբերի 10-ին Հարավային բանակախմբի հրամանատար Վալտեր ֆոն Ռայխենաուն ստորագրեց ևս մեկ հրաման՝ «Արևելյան տարածքներում զորքերի վարքագծի մասին», որում բացահայտ նշվում էր Եվրոպայից հրեական և «ասիական» ազդեցության վերացման անհրաժեշտությունը: Այսպիսով, այն պատկերացումը, թե գերմանացի «ազնիվ» զինվորը ճակատում պարզապես կռվում էր՝ առանց իմանալու թիկունքում ԷսԷս-ի կատարած ոճրագործությունների մասին, իրականությանը չի համապատասխանում: Նացիստական մեքենան՝ Վերմախտը, ԷսԷս-ը, քաղաքացիական վարչակազմերը միասին ներխուժել էին Խորհրդային Միություն՝ նրա քաղաքացիներին ոչնչացնելու կամ նրանց մահվանը օժանդակելու նպատակով: Բացի գերմանական զինուժից, ԽՍՀՄ-ի դեմ հարձակմանը մասնակցել են նաև Գերմանիայի դաշնակից երկրների բանակները: Ֆինլանդիայի և Ռումինիայի կողմից վերահսկվող տարածքներում հաստատված բռնազավթման վարչակարգերը ըստ էության չէին տարբերվում գերմանական ռեժիմից:

1941 թվականի վերջին հիտլերյան ղեկավարության հայացքները որոշակիորեն փոխվեցին: Երբ Արևելյան ճակատում մեկը մյուսի հետևից ջախջախվում էին գերմանական դիվիզիաները, Բեռլինում սկսեցին գիտակցել, որ ոչ միայն ժողովրդագրական բավարար ռեսուրսներ չկան արևելյան տարածքները գաղութացնելու համար, այլև Գերմանիայում զգալի աշխատուժի պակաս կա: 1941–1942 թվականների ձմռանից սկսած՝ զավթիչ վարչակազմերին հանձնարարվեց ոչ միայն շահագործել գրավյալ հողերը, այլև կազմակերպել աշխատուժի արտահանում դեպի Գերմանիա: Այդ համատեքստում շրջանառության մեջ դրվեց իրավական նոր տերմին՝ Ostarbeiter (արևելյան բանվոր): Գրավյալ տարածքների նման բնակիչը, բնականաբար, համարվում էր ռասայականորեն ստորադաս՝ ունտերմենշ, սակայն միևնույն ժամանակ ընկալվում էր որպես որոշակի օգտակարություն ունեցող աշխատանքային ռեսուրս: Սկզբնական փուլում օստարբայթերները հավաքագրվում էին կամավորներից, հետագայում նացիստներն անցան բնակչությանը բռնի Գերմանիա տեղափոխելու և հարկադրաբար աշխատեցնելու քաղաքականությանը:

Պարտիզանական շարժում թշնամու թիկունքում: 1920-ականներից մինչև 1930-ականների առաջին կեսը խորհրդային ղեկավարությունը կարծում էր, որ ապագա պատերազմում ԽՍՀՄ-ը ստիպված կլինի դիմակայել բուրժուական պետությունների ակնհայտորեն առավել հզոր դաշինքին: Հետևաբար պատերազմի առաջին փուլը կանխատեսվում էր որպես պաշտպանական, և որոշ տարածքների ժամանակավոր կորուստը դիտվում էր հավանական: Այս կանխատեսման հիման վրա մեծ ուշադրություն էր



Պարտիզանական ջոկատում:
Ձմեռ: 1941–1942 թթ.:

դարձվում պարտիզանական շարժման նախնական կազմակերպմանը: Վերապատրաստվում էին հրամանատարական կադրեր, անտառային գոտիներում կառուցվում էին հենակետեր, ստեղծվում էին զինամթերքի և պարենային պահեստներ: Սակայն հետագայում ռազմական հայեցակարգը վերանայվեց, և պարտիզանական հենակետերը ապամոնտաժվեցին: Այնուամենայնիվ վերապատրաստված հրամանատարական կադրերը պահպանվեցին, և հաճախ հենց այդպիսի հրամանատարներն էին ղեկավարում խորհրդային պարտիզաններին:

Առաջին պարտիզանական ջոկատը, որը մարտի մեջ մտավ պատերազմի վեցերորդ օրը, ստեղծվել էր Բելոռուսիայում Վ. Զ. Կորժի կողմից: 1941 թվականին նա աշխատում էր Պինսկի մարզկոմում, իսկ ավելի վաղ մասնակցել էր պարտիզանական հրամանատարական կազմի վերապատրաստման դասընթացներին: Նմանատիպ դասընթացներ էր անցել նաև Խորհրդային Միության ամենահայտնի պարտիզանական հրամանատարներից մեկը՝ Ս. Ա. Կովպակը: Կուսակցական մարմինների նախաձեռնությամբ լայն տարածում գտավ պարտիզանական ջոկատների ստեղծումը: Սակայն, ինչպես ցույց տվեց պրակտիկան, թշնամու թիկունքում արդյունավետորեն կարող էին գործել միայն այն ստորաբաժանումները, որոնք պարբերաբար աջակցություն էին ստանում «մեծ երկրից»՝ ԽՍՀՄ կենտրոնական ղեկավարությունից: Սրան ի պատասխան՝ 1942 թվականի գարնանը Պ. Կ. Պոնոմարենկոյի ղեկավարությամբ ստեղծվեց Կուսակցական շարժման կենտրոնական շտաբը, որի նպատակն էր համակարգել, ինչպես այդ ժամանակ էր ընդունված ասել, առաջնագծի բոլոր գործողությունները:

Աստիճանաբար պարտիզանական ջոկատները սկսեցին միավորվել՝ ձևավորելով բրիգադներ, իսկ բրիգադներն իրենց հերթին դարձան ավելի խոշոր ռազմական կազմավորումների մաս: Այս գործընթացի արդյունքում թշնամու թիկունքում սկսեցին ձևավորվել «կուսակցական շրջաններ», որոնցում վերականգնվեցին խորհրդային իշխանության տարրերը՝ գյուղական խորհուրդներ, կոլտնտեսություններ, դպրոցներ: Պարտիզանական պայքարի հաջորդ փուլը արշավանքների կազմակերպումն էր՝ ուղղված թշնամու թիկունքում հաղորդակցական ուղիների խաթարմանը, այդ թվում՝ այն տարածքներում, որոնք նացիստները համարում էին «անվտանգ»: Նման արշավանքների շարքում ամենախոշորներից էր Սիդոր Կովպակի և Ալեքսեյ Սաբուրովի գլխավորած պարտիզանական ստորաբաժանումների անցումը Բրյանսկի մարզից Պոլեսիեի շրջանով դեպի Արևմտյան Ուկրաինա: Այստեղ նրանց հաջողվեց երկար ժամանակ կաթվածահար անել Ռովնոյի շրջանում գտնվող Սարնիի երկաթուղային ռազմավարական կարևոր հանգույցը:

Զավթիչների դեմ պայքարում նշանակալի դեր են ունեցել նաև քաղաքային ընդհատակայինները: Նրանք խորհրդային հրամանատարությանը փոխանցում էին կարևոր տեղեկություններ, իրականացնում վնասարարություն և կազմակերպում

պատասխան գործողություններ՝ ուղղված օկուպացիոն իշխանությունների դեմ: Լայն ճանաչում է ձեռք բերել Կրասնոդոնում գործող կոմերիտական ընդհատակյա կազմակերպությունը՝ «Երիտասարդ գվարդիան», որի անդամները ցուցաբերել են բացառիկ հերոսություն: Նմանատիպ ընդհատակյա խմբեր գործել են բազմաթիվ քաղաքներում՝ Կագուլում, Կրիվոյ Ռոգում, Լյուդինովոյում, Մալինում և այլուր:

§ 83. Արմատական բեկում պատերազմի ընթացքի մեջ

Խորհրդային զորքերի հարձակումը 1941/1942 թվականների ձմռանը: Մոսկվայի մոտ հաղթանակից հետո խորհրդային հրամանատարությունը վստահ էր՝ քանի որ նացիստական պահեստազորային բոլոր ուժերը ներքաշված են եղել «Թայֆուն» գործողության մեջ, հնարավոր է մի շարք գործողություններով կազմաքանդել Վերմախտի ճակատային ամբողջ գիծը: Այս ռազմավարական հնարավորությունը օգտագործելու նպատակով խորհրդային զորքերը նախ կտրեցին ռազմաճակատի Տիխվինի ելուստը, ապա, առաջանալով դեպի Լյուբան, փորձեցին ճեղքել պաշարված Լենինգրադի օղակը: Միաժամանակ Կալինինյան ճակատն անցավ գրոհի, իսկ Վյազմայի շրջանում իրականացվեց զանգվածային օդադեսանտային հարձակում՝ նպատակ ունենալով շրջափակել գերմանական բանակային «Կենտրոն» խմբավորման հիմնական ուժերը: Ուկրաինայում Կարմիր բանակի ստորաբաժանումները ներխուժեցին Իզյումի ճակատ և առաջ շարժվեցին Խարկովի ուղղությամբ: Ղրիմում խորհրդային հրամանատարությունը ծովային դեսանտ իջեցրեց: Կարմիր բանակի զինվորները ազատագրեցին Կերչի թերակղզին և պատրաստվում էին մխրճվել պաշարված Սևաստոպոլի տարածք (տե՛ս հավելված, քարտեզ №18):

Սակայն Վերմախտը դեռ շարունակում էր մնալ հզոր ռազմական մեքենա: Հիտլերյան հրամանատարությանը հաջողվեց հաղթահարել օպերատիվ ճգնաժամը. ճակատային գծի տարբեր հատվածներում զորքերի վերախմբավորում կատարվեց, Արևմտյան Եվրոպայից համալրվեցին պահեստազորերը, և 1942 թվականի գարնանը գերմանական բանակն անցավ հակահարձակման: Լյուբանի ուղղությամբ Վերմախտին հաջողվեց շրջապատել և ջախջախել խորհրդային 2-րդ հարվածային բանակը: Խարկովի մոտ գերմանացիները կտրեցին Իզյումի ելուստը, իսկ Ղրիմում վերահսկողություն հաստատեցին Կերչի թերակղզու վրա: Միայն Ռժևի շրջանում գերմանացիների պլանները չիրականացան:

Բեռլինում որոշեցին արմատապես փոխել իրենց ռազմավարությունը: Եթե նախկինում Վերմախտի նպատակը «ջախջախման ռազմավարության» շրջանակներում Կարմիր բանակին պարտության մատնելն էր, ապա այժմ ընտրվեց «հյուծման ռազմավարություն»՝ նպատակ ունենալով ԽՍՀՄ-ին պարտության մատնել տնտեսական ճանապարհով: Նացիստներն այդ ուղղությամբ մշակեցին այսպես կոչված «Կապույտ պլանը» (խորհրդային պատմագրության մեջ՝ «Բլաու» պլան), որի համաձայն՝ Վերմախտը պետք է ճեղքեր խորհրդային ճակատի հարավային թևը, մխրճվեր դեպի

Գրոզնիի և Մայկոպի նավթահանքեր և հնարավորության դեպքում հասներ մինչև Բաքու: Պլանի առանցքային նպատակը Խորհրդային Միությունը նավթի պաշարներից զրկելն էր: Ենթադրվում էր, որ վառելիքի պակասի պայմաններում Խորհրդային Միությունը ստիպված կլիներ կապիտուլյացիայի ենթարկվել:

Մարտական գործողությունները 1942 թվականի ամռանից մինչև 1943 թվականի գարուն: 1942 թվականի ամռանը Վերմախտը սկսեց իրականացնել «Բլաու» պլանը: Սկզբում նացիստներին հաջողվեց ճեղքել խորհրդային ճակատը Վորոնեժի ուղղությամբ, որից հետո «Հարավ» բանակային խումբը սկսեց հարձակման հիմնական ուղղությունը տեղափոխել դեպի հարավ: Թշնամու զորքերը մտան Դոնի մեծ ոլորան, անցան գետը և սկսեցին առաջ շարժվել երկու հիմնական ուղղություններով: Արդյունքում «Հարավ» բանակային կազմավորումը բաժանվեց երկու խմբի: «Ա» խումբը շարժվեց դեպի Հյուսիսային Կովկաս՝ նպատակ ունենալով գրավել նավթով հարուստ շրջանները, իսկ «Բ» խումբը պետք է ապահովեր ձախ թևի անվտանգությունը՝ գրոհելով Ստալինգրադի վրա: Իրավիճակն այնքան սպառնալից էր, որ 1942 թվականի հուլիսի 28-ին պաշտպանության ժողովրդական կոմիսարը հրապարակեց № 227 հրամանը, որը հայտնի դարձավ «Ոչ մի քայլ հետ» կիսապաշտոնական անվանմամբ: Հրամանը կտրականապես արգելում էր նահանջը առանց բարձրագույն հրամանատարության թույլտվության, պարտադրում էր ստեղծել պատժիչ վաշտեր և գումարտակներ, և «անկայուն դիվիզիաների» թիկունքում տեղակայել խափանարար ջոկատներ:

Քանի որ նացիստական հարձակումը Կովկասում մարեց, առաջնահերթությունը փոխանցվեց բանակային «Բ» խմբին: Ստալինգրադի կորստի դեպքում կտրուկ կկրճատվեին Բաքվի նավթը Վոլգայով ԽՍՀՄ կենտրոնական շրջաններ հասցնելու տրանսպորտային հնարավորությունները: 1942 թվականի հուլիսին սկսվեց Ստալինգրադի ճակատամարտի պաշտպանական փուլը: Փողոցային մարտերը հենց Ստալինգրադում չափազանց կատաղի էին: Տարեվերջին գեներալ Վ.Ի. Չույկովի 62-րդ բանակի դիվիզիաները, որոնք պաշտպանում էին քաղաքի հյուսիսային մասը, այլևս չէին կարող բաժանվել գնդերի. դրանք բաժանվում էին գումարտակների, որոնցում մնացել էր 500-700 հոգի: Այս «դիվիզիաները» շարունակում էին երեք քաղաքներում իրենց ձեռքում պահել փոքրիկ պլացդարմներ: Այսպես՝ գնդապետ Ի.Ի. Լյուդնիկովի 138-րդ հետևակային դիվիզիան, «Բարիկադներ» գործարանի տարածքում ամբողջությամբ շրջափակված, շարունակում էր կռվել: Մարտական գործողությունների ավարտին թեև դիվիզիան իր ձեռքում ուներ 700 մետր ճակատի երկայնքով և 400 մ խորությամբ հողակտոր, նացիստները «Լյուդնիկովի կղզին» այդպես էլ չկարողացան գրավել:



Մարտը գործարանի ավերակների վրա: Ստալինգրադի պաշտպանություն: 1942 թ.:

Մինչ Վերմախտը փորձում էր Վոլգա գետը նետել քաղաքի պաշտպաններին, խորհրդային հրամանատարությունը կուտակում էր պահես-

տային ուժեր՝ դրանք կենտրոնացնելով Ստալինգրադից հյուսիս և հարավ: 1942 թվականի նոյեմբերի 19-ին սկսվեց «Ուրան» գործողությունը. հարձակման անցան Ստալինգրադի (հրամ. Ա.Ի. Էրեմենկո), Դոնի (հրամ. Կ.Կ. Ռոկոսովսկի) և Հարավարևմտյան (հրամ. Ն.Ֆ. Վատուտին) ճակատների զորքերը: Արդեն նոյեմբերի 23-ին խորհրդային ստորաբաժանումները շրջափակման մեջ վերցրին Վերմախտի 6-րդ բանակը: Թշնամին փորձեց ճեղքել շրջափակման օղակը և դուրս բերել իր ուժերը, սակայն չկարողացավ: Գրեթե միաժամանակ խորհրդային զորքերը սկսեցին «Մարս» գործողությունը՝ հարձակվելով Ռժևի ուղղությամբ: Թեև այս ճակատում Կարմիր բանակի գործողությունները հաջողություն չբերեցին, սակայն թույլ տվեցին կասեցնել «Կենտրոն» բանակային խմբավորման պահեստազորի շարժը, ինչն էլ թեթևացրեց Ստալինգրադի ուղղությամբ ընթացող մարտերը: 1943 թվականի հունվարի 10-ից 26-ը Դոնի ռազմաճակատի զորամիավորումները երկու մասի բաժանեցին Ստալինգրադում շրջապատված Վերմախտի խմբավորումը, ինչից հետո թշնամու ուժերը՝ ֆելդմարշալ Ֆրիդրիխ Պաուլուսի հրամանատարությամբ, կապիտուլյացիայի ենթարկվեցին:

1943 թվականի հունվարին խորհրդային զորքերը հարվածներ հասցրին խորհրդա-գերմանական ճակատի հյուսիսային հատվածում՝ Լադոգա լճի հարավային ափի երկայնքով, և ճեղքեցին Լենինգրադի շրջափակումը: Այս քաղաքը 1941 թվականի սեպտեմբերի 8-ից գտնվում էր գրեթե լիակատար շրջապատման մեջ: Ո՛չ անընդհատ գնդակոծությունները և օդային հարձակումները, ո՛չ սովն ու սաստիկ ցուրտը չկարողացան կոտրել քաղաքի պաշտպանների կամքը: Դ.Ի. Կյուտինեն, որը հացթուխ էր, զոհվեց սովից, սակայն մինչև վերջին շունչը շարունակում էր հաց թխել ուրիշների համար: Նա դարձավ պաշարված Լենինգրադի հերոսական դիմադրության խորհրդանիշներից մեկը: Չնայած Լենինգրադի շրջափակման ճեղքումը արմատապես չփոխեց ռազմավարական դրությունը, սակայն այն դարձավ նշանակալի իրադարձություն ամբողջ երկրի համար: Միաժամանակ խորհրդային զորքերը հարձակման անցան Միջին Դոնի ուղղությամբ՝ սպառնալով մխրճվել Ռոստովի տարածաշրջան: Այդ պարագայում գերմանական զորքերը կարող էին շրջափակվել Հյուսիսային Կովկասում: Գերմանական հրամանատարությունը, գիտակցելով վտանգը, շտապ սկսեց բանակային «Ա» խմբի զորամիավորումները դուրս բերել Կուբանից և Դոնբասից: Ստեղծված իրավիճակում խորհրդային հրամանատարությունը մշակեց ռազմավարական համարձակ ծրագիր: Այս անգամ Վերին Դոնի ուղղությամբ Կարմիր բանակը ճեղքեց գերմանական պաշտպանական գիծը: Կուրսկի շրջանում իրականացված հարվածի շնորհիվ խորհրդային զորքերը փորձեցին ճեղքել Խարկով–Զապորոժիե–Մելիտոպոլ գիծը և թիկունքից կտրել Դոնբասում կենտրոնացած գերմանական խմբավորումը: Սակայն ծրագիրը ամբողջովին չհաջողվեց: Չնայած դրան՝ Կարմիր բանակը ազատագրեց Կուրսկն ու Խարկովը, իսկ առաջապահ ստորաբաժանումները մարտեր էին մղում Զապորոժիեի մատույցներում: Սակայն նացիստները դուրս բերեցին զորքերը Ռժևի շրջանից, որտեղ նրանք տեղակայված էին դեռևս 1941 թվականի ձմռանից, և Եվրոպայից նորից բերեցին պահեստային ուժեր և իրականացրին հակահարձակողական գործողություն: Խարկովը կրկին ընկավ, և կենտրոնական հատվածում ռազմաճակատի գիծը ստացավ պայտանման ելուստի ձև, որը հետագայում կոչվեց Կուրսկի աղեղ:

Մարտական գործողությունները 1943 թվականի ամռանից մինչև 1944 թվականի գարուն: Խորհրդային պատմագրությունը փաստում է, որ Հայրենական մեծ պատերազմի արմատական շրջադարձը սկսվել է Ստալինգրադի ճակատամարտից և ավարտվել Կուրսկում Կարմիր բանակի հաղթանակով: Որոշ ուսումնասիրություններում արմատական բեկումը թվագրվում է ավելի ուշ՝ այն պահից, երբ խորհրդային զորքերը հասան Դնեպր: Մեր կարծիքով՝ 1943 թվականի ամռանը արդեն տեղի էր ունեցել ռազմական գործողությունների ընթացքի արմատական բեկումը: 1941 թվականի ամռանը նացիստները գիտեին, թե ինչպես են հաղթանակի հասնելու. նրանք կհաղթեին Կարմիր բանակին Դնեպրի արևմուտքում և ռազմադաշտում գոյացած վակուումով կշարժվեին Արխանգելսկ ու Աստրախան: 1942-ի գարնանը նրանք հույս ունեին հաղթանակի հասնել՝ գրավելով Գրոզնիի և Բաքվի նավթահանքերը, ինչի արդյունքում ԽՍՀՄ-ը կմնար առանց վառելիքի և ստիպված կլիներ հանձնվել: 1943 թվականի ամռանը, երբ Վերմախտը սկսեց «Ցիտադել» գործողությունը՝ նպատակ ունենալով շրջափակել Կարմիր բանակի երկու զորամիավորում (այն ժամանակ ԽՍՀՄ-ը ուներ 13 զորամիավորում): Չնայած դեռ Դոնբասի վրա հարձակման որոշ մշուշոտ ծրագրեր կային, բայց այլևս չկար հաղթանակի տանող ճանապարհի տեսլականը: 1943-ի ամռանից սկսած՝ գերմանական ռազմավարությունը վերածվել էր «քիչ թե շատ ավելի երկար դիմանալու» մարտավարության՝ հույս ունենալով, որ հակահիտլերյան կոալիցիան կպառակտվի: Նացիստները այլևս ոչ միայն չունեին ուժ՝ պատերազմում հաղթելու, այլև նույնիսկ չէին կարողանում պատկերացնել, թե ինչպես կարող էին դա անել: Դրա հիմնական պատճառը ոչ այնքան Վերմախտի կտրուկ թուլացումն էր, որքան Կարմիր բանակի հզորացումը: Խորհրդային զինվորներն ու հրամանատարները կուտակել էին անգնահատելի մարտական փորձ, իսկ զորավարների ռազմական արվեստը հասել էր նոր մակարդակի: ԽՍՀՄ տնտեսությունն արդեն հաղթահարել էր «ռազմական ռելսերի» անցման բոլոր դժվարությունները և անընդհատ աճող քանակով անհրաժեշտ ապրանքներ էր մատակարարում ռազմաճակատին: Այս ամենի արդյունքում խորհրդային ղեկավարության կողմից ի սկզբանե որդեգրված «հյուծման ռազմավարությունը» սկսեց ակնհայտ արդյունքներ տալ:

«Ցիտադել» գործողության նպատակը հյուսիսից և հարավից Կուրսկի երկայնքով համաժամանակյա հարվածների միջոցով այնտեղ կենտրոնացած խորհրդային զորքերի շրջափակումն էր: Սակայն խորհրդային հետախուզությունը ժամանակին բացահայտել էր թշնամու ծրագրերը, ինչի շնորհիվ Կարմիր բանակի հրամանատարությունը, ճշգրտորեն տեղեկացված լինելով հարձակման ժամանակի և ուղղության մասին, որոշեց ընդունել Վերմախտի հարվածը նախապես ամրացված դիրքերում, պաշտպանական մարտերում հյուծել թշնամուն, այնուհետև անցնել հակահարձակման: Այս ռազմավարական պլանը հաջողությամբ պսակվեց: Հուլիսի 5-ին սկսված գերմանական հարձակումը արդյունք չտվեց: Իսկ արդեն հուլիսի 12-ին Կենտրոնական (հրամ.՝ Կ.Կ. Ռոկոսովսկի), Վորոնեժի (հրամ.՝ Ն.Ֆ. Վատուտին) և Տափաստանային (հրամ.՝ Ի.Ս. Կոնև) ճակատների զորքերը հակահարձակման անցան՝ նշանակալի կորուստներ հասցնելով թշնամուն: Այնուհետև խորհրդային զորքերը հարձակման անցան ռազմաճակատի՝ Սմոլենսկից մինչև Սև ծով ընկած հատվածում:



Խորհրդային հրետանավորները տեղափոխվում են կրակային դիրք։
Կուրսկի ճակատամարտ։ 1943 թվականի օգոստոս։

Այս շրջանում զգալիորեն զարգացել էին խորհրդային զինվորների մարտավարական հմտությունները։ Օդաչու Ա.Ի. Պոկրիշկինը 1941–1942 թվականներին խոցել էր թշնամու 15 ինքնաթիռ, 1943-ին՝ 38։ Նա մշակեց օդային պայքարի նոր մեթոդ և հաջողությամբ կիրառեց այն իր ավիագնդում, որի արդյունքում «Կուբանյան դարակաշարերի» մեթոդով հարձակումը դարձավ Պոկրիշկինի օդաչուների «ֆիրմային» մարտավարական հնարքը։ Կուրսկի ճակատամարտի ընթացքում 2-րդ (հետագայում՝ 6-րդ) գվարդիական ռմբակոծիչ ավիացիոն կորպուսի օդաչուները Ի.Ս. Պոլբինի հրամանատարությամբ առաջին անգամ կիրառեցին խոյընթաց թռիչքի ռմբակոծության նոր տեխնիկա։ Շուտով այս մեթոդը հայտնի դարձավ որպես «Պոլբինյան պտտան»՝ դառնալով նույնքան նշանավոր, որքան «Կուբանյան դարակաշարերը»։ Մարտավարական նոր մոտեցումներ էին կիրառում նաև հրետանավորները, տանկային անձնակազմերը և հետևակային ստորաբաժանումները։ Խորհրդային զորքերի հարվածները դառնում էին ավելի նպատակային և արդյունավետ։

Կարմիր բանակի լայնածավալ հարձակմանը զուգընթաց պարտիզանական ջոկատները թշնամու թիկունքում իրականացրին նախ «Ռելսերի պատերազմ» գործողությունը, ապա՝ «Համերգ» գործողությունը՝ միաժամանակյա հարձակումներ կազմակերպելով նացիստական հաղորդակցության ուղիների՝ Ռիգայից մինչև Օդեսա ընկած հատվածի վրա։ Այս գործողությունների արդյունքում նացիստները կորցրին իրենց պահեստազորային ուժերը մանևրելու հնարավորությունը, իսկ խորհրդային զորքերը, օգտվելով դրանից, 1943 թվականի աշնանը և ձմռան սկզբին գրավեցին Բելառուսի մի մասը և ձախափնյա Ուկրաինան։ Կարմիր բանակի զորամասերը, չդադարեցնելով հարձակումը, անցան Դնեպրը և ազատագրեցին Կիևը։ 1944 թվականի ապրիլի կեսերին, երբ խորհրդային զորքերը Աջափնյա Ուկրաինայից դուրս մղեցին թշնամուն, ռազմաճակատի որոշ հատվածներում նրանք հասան ԽՍՀՄ պետական

սահմանին: Ավելի վաղ՝ 1944 թվականի հունվարի 27-ին, Լենինգրադը լիովին ազատագրվել էր թշնամու՝ շուրջ երկու տարի տևած շրջափակումից:

§ 84. Խորհրդային թիկունքը պատերազմի տարիներին

Տնտեսական խնդիրները 1941-ի վերջին և 1942-ի սկզբին: Խորհրդային ղեկավարության ընտրած պայքարի ռազմավարությունը պահանջում էր թշնամու նկատմամբ տնտեսական գերակայության հասնել: Արդյունաբերականացման տարիներին ԽՍՀՄ-ը աննախադեպ արդյունաբերական բեկում կատարեց: Այնուամենայնիվ նույնիսկ դա բավարար չէր հաջողության հասնելու համար, քանի որ մինչև 1941 թվականը հիտլերյան Ռայխն այս կամ այն ձևով իր ենթակայության տակ էր առել գրեթե ողջ մայրցամաքային Եվրոպայի արդյունաբերական կարողությունները:

ԽՍՀՄ-ի և Գերմանիայի տնտեսական ներուժի հարաբերակցությունը 1940 թվականին

Ցուցանիշներ	Գերմանիան, բռնազավթված տարածքները	ԽՍՀՄ	Հարաբերակցությունը
Էլեկտրաէներգիայի արտ. (մլր. կվտ/ժամ)	110	48,3	2,3:1
Ածխի արդյունահանում (մլն տոննա)	348	166	2,1:1
Պողպատի ձուլում (մլն տոննա)	43,6	18,3	2,4:1
Ալյումինի ձուլում (հազ տոննա)	190	50	3,8:1
Մետաղահատ հաստոցների առկայություն (հազ հատ)	1600		2,3:1

Ակնհայտ է, որ Գերմանիան, 1941 թվականի հունիսի 22-ին, իր վերահսկողության տակ գտնվող երկրների արդյունաբերական ներուժը հաշվի առնելով, զգալի արդյունաբերական առավելություն ուներ: Հետագայում այս գերազանցությունը շարունակեց աճել: 1941 թվականի երկրորդ կեսին Խորհրդային Միությունը սկսեց արդյունաբերական ձեռնարկությունների զանգվածային տարհանում: Այդուհանդերձ գործարանները, որոնք տեղափոխվում էին վագոններով, անմիջապես չէին կարող արտադրություն ապահովել: Եվ նույնիսկ այն բանից հետո, երբ ձեռնարկությունը նոր տեղակայման վայր էր տեղափոխվում, ժամանակ էր պահանջվում սարքավորումների տեղադրման, կիսաֆաբրիկատների և բաղադրիչների՝ մատակարարների հետ

համագործակցային հարաբերությունների հաստատման, էներգամատակարարման ապահովման համար և այլն: Հետևաբար 1941 թվականի վերջն ու 1942 թվականի սկիզբը ԽՍՀՄ-ում բնորոշվում են որպես արդյունաբերական արտադրանքի կտրուկ անկման շրջան:


Կադրային խնդիրը և դրա լուծումը: Տարհանման ընթացքում հնարավոր է եղել տանել գործարանների հաստոցների մոտ երկու երրորդը, տեղափոխել անձնակազմի միայն մեկ երրորդին: Արդյունքում ժողովրդական տնտեսությունում աշխատողների թիվը կտրուկ նվազել է:

Բանվորների և ծառայողների միջին տարեկան թիվը (միլիոն մարդ)

1940	1941	1942	1943	1944	1945
31,2	27,3	18,4	19,4	23,6	27,3

Երկրի արևելյան շրջաններ տարհանվող ձեռնարկությունները անհրաժեշտ էր ապահովել աշխատողների առնվազն երկու երրորդով: Սակայն, քանի որ զինվորական տարիքի տղամարդիկ հիմնականում զորակոչվում էին բանակ, նոր աշխատողների մեծ մասը տնային տնտեսուհիներն ու ավագ դպրոցի երեկվա աշակերտներն էին, որոնք նախկինում երբեք չէին աշխատել արտադրությունում: Այսպիսով, նվազել էր ոչ միայն աշխատողների թիվը, այլև նրանց մասնագիտական հմտության մակարդակը:

Կադրային խնդիրները հաղթահարելու համար կառավարիչները սկսեցին որոնել արդյունավետ լուծումներ: Գրեթե յուրաքանչյուր ձեռնարկությունում ստեղծվեցին անհատական և թիմային ուսուցման ձևեր, ստախանովյան դպրոցներ ու վերապատրաստման տարաբնույթ դասընթացներ: Սա հնարավորություն տվեց գործարաններն ապահովել համեմատաբար մասնագիտացված աշխատուժով: Թեև այդ աշխատողների որակավորումը ցածր էր, սակայն նախագծողներն ու տեխնոլոգները այս իրավիճակում կարևոր դեր են խաղացել: Դեռևս նախապատերազմյան տարիներին, առկա տեխնոլոգիական հնարավորություններին համապատասխան, նրանք ձգտել էին ոչ թե վերապատրաստել աշխատուժին, այլ արտադրական գործընթացներն այնպես հարմարեցնել, որ հնարավոր լիներ ներգրավել ցածր և միջին որակավորում ունեցող կադրերին: Պատերազմի տարիներին նորարարական լուծումների ներդրման հիշյալ գործընթացը ստացավ նոր թափ: Ինքնաթիռաշինության ոլորտում լայնորեն կիրառվեցին հոսքագծային և հոսքային տեխնոլոգիաներ, տանկաշինության մեջ՝ ավտոմատ եռակցման մեթոդներ, իսկ հրաձգային զենքերի արտադրությունում՝ դրոշմման տեխնոլոգիան:



Սարքավորումների տեղադրում տարհանված գործարանում: Ղազախստան: 1942 թ.:

Այս նորարարական լուծումներն ապահովեցին պաշտպանական արտադրանքի ծավալների աճ՝ հիմնվելով արդեն առկա աշխատուժի վրա։

Մննդի, սպառողական ապրանքների և բնակարանային պայմանների հետ կապված դժվարություններ: Գյուղաբնակների զորակոչը Կարմիր բանակի շարքերը, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի՝ տրակտորների, բեռնատարների և բեռնակիր կենդանիների հանձնումը բանակին կտրուկ վատթարացրին բնակչությանը պարենային ապրանքներով ապահովելու գործընթացը։ ԽՍՀՄ-ում ներդրվեց քարտային մատակարարման համակարգ. խանութներից սննդամթերք կամ սպառողական ապրանքներ ձեռք բերելը հնարավոր էր միայն հատուկ քարտերի միջոցով։ Սակայն հաճախ այդ քարտերը չէին ապահովվում ապրանքով, քանի որ խանութներում պարզապես ոչինչ չկար։ Այս պայմաններում գրեթե բոլոր խոշոր ձեռնարկությունները փորձեցին ստեղծել դուստր տնտեսություններ։ Գործարաններում ձևավորվեցին ձկնորսությամբ և անասնապահությամբ զբաղվողների բրիգադներ, իսկ աշխատողներին հատկացվեցին հողամասեր՝ տնամերձ բանջարանոցների համար, որտեղ նրանք հերթափոխից հետո փորձում էին ինչ–որ բան աճեցնել։ Քարտերը տրամադրվում էին միայն քաղաքային բնակչությանը, իսկ գյուղացիները պետք է սեփական միջոցներով հոգային իրենց կարիքները։ Այս հանգամանքը նպաստեց կոլտնտեսային առևտրի զարգացմանը։ Կոլտնտեսականներն իրենց գյուղմթերքը շուկա էին բերում, իսկ վաճառքից ստացված միջոցներով ձեռք էին բերում արդյունաբերական ապրանքներ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարդկանց կյանքը չափազանց ծանր էր։ Խորհրդային քաղաքացիները, այդ թվում՝ պաշտպանական ձեռնարկությունների աշխատակիցները մշտապես թերսնված էին և հագնում էին հնոտիք։ Բնակարանային խնդիրը հասել էր ահռելի չափերի։ Ընդհանուր առմամբ տարբեր հաշվումներով 12-17 միլիոն մարդ տարհանվել էր երկրի արևելյան շրջաններ։ Նրանց բոլորին անմիջապես բնակարանով ապահովելը գործնականում անհնար էր, ուստի 1941–1942 թվականներին բազմաթիվ մարդիկ ստիպված էին ապրել գետնափոր կացարաններում և վրաններում։ Հետագա տարիներին էլ տարհանվածների զգալի մասը բնակվում էր վատ ջեռուցվող բարաքներում՝ հաճախ օրական 5–10 կիլոմետր ճանապարհ անցնելով աշխատանքի գնալու և վերադառնալու համար։

Զանգվածային աշխատանքային հերոսություն: Չնայած բոլոր դժվարություններին՝ ԽՍՀՄ քաղաքացիները ցուցաբերեցին աշխատանքային իսկական հերոսություն։ Քաղցած, մրսած, հաճախ չքավորության մեջ ապրող մարդիկ գնում էին գործարաններ ու արտադրամասեր և ոչ միայն կատարում, այլև բազմակի անգամ գերակատարում էին արտադրական պլանները։ Տասնյակ հազարավոր աշխատողներ օրական մշտապես կատարում էին երկու նորմ՝ վաստակելով «երկուհարյուրականներ» անվանումը։ Նրանց օրինակով ծավալվեց «հազարականների» շարժումը՝ բանվորներ, որոնք օրական կատարում էին պլանը 1000 տոկոսով։ Թեև «հազարականների» թիվը փոքր էր, սակայն սա ոչ թե առանձին անհատների, այլ մասշտաբային շարժում էր։ Աշխատանքային հերոսության հաջորդ աստիճանն էր «ճակատային բրիգադների» ձևավորումը։ Այստեղ այլևս ոչ թե միայնակ աշխատողներ, այլ ամբողջ արտադրական թիմեր էին

պարտավորվում կատարել օրական պլանը 200 տոկոսով: Առաջին 100 տոկոսը՝ իրենց համար, իսկ երկրորդը՝ այն զինվորի փոխարեն, որը ռազմաճակատ էր մեկնել:

Տեխնոլոգիական ճիշտ ռազմավարության, կառավարչական հնարամտության և աշխատանքային զանգվածային հերոսության այս համադրությունն էր, որ 1943 թվականին վերջապես թույլ տվեց հաղթահարել տնտեսությունը ռազմական հիմքերի վրա դնելու բոլոր դժվարությունները: Ուրալյան զրահապատ թափքերի գործարանի էլեկտրաեռակցողների բրիգադավար Ե.Պ. Ազարկովը, որը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով առաջարկել էր ինտեգրված թիմերի ստեղծման մեթոդը, ավիացիոն արդյունաբերության ժողովրդական կոմիսար Ա.Ի. Շախուրինը, Կրասնեսմաշ գործարանի խառատ Ե.Պ. Մորդվինովան (Ժակովա), որը 16 տարեկանում յուրացրել էր միաժամանակ երկու հաստոցների վրա աշխատելու մեթոդաբանությունը, Չելյաբինսկի Կիրովի գործարանի տնօրեն (լեգենդար «Տանկոգրադ») Ի.Մ. Զալցմանը և խորհրդային միլիոնավոր այլ աշխատողներ իրենց հերոսական աշխատանքի շնորհիվ կարողացան գերազանցել գրեթե ողջ Եվրոպայի տնտեսությանը, որը այդ տարիներին գտնվում էր Ռայխի վերահսկողության տակ: Հետզհետե զենքն ու զինամթերքը սկսեցին ռազմաճակատ հասնել աճող քանակությամբ:

ԽՍՀՄ-ում զենքի կարևորագույն տեսակների արտադրության աճը 1941–1943 թվականներին

	1941	1943
Ինքնաթիռներ	15 735	35 884
Տանկեր և ինքնաշարժ հրետանի	6 590	24 006
Բոլոր տեսակի և տրամաչափի հրետանային զենքեր (հազ. հտ)	30,2	130,3
Ականանետներ (հազ. հտ)	42,3	69,4

Այսպիսով, ռազմաճակատում մարտական գործողությունների արմատական փոփոխությունը նախապատրաստվեց թիկունքում տնտեսական հաղթանակի ձեռքբերմամբ: Հաճախ հրապարակախոսության մեջ կարելի է հանդիպել պատմականամերձ կարծիքների, թե՝ «ԽՍՀՄ-ը նացիստներին դիակներով կասեցրեց»: Սակայն սա սխալ պատկերացում է: Իրականում խորհրդային Միությունը նացիստներին կանգնեցրեց պողպատով, վառոդով, պայթուցիկներով և ռազմական տեխնիկայով:

Գիտությունը և մշակույթը պատերազմի տարիներին: Պատերազմի տարիներին խորհրդային գիտությունը, ինչպես և արդյունաբերությունը, դրվեցին ռազմական հիմքերի վրա: Առաջին պլան մղվեցին հետազոտական այն թեմաները, որոնք թելադրվում էին պատերազմական ժամանակաշրջանի հրատապ պահանջներով: Արդեն 1941 թվականի հուլիսի 10-ին Պաշտպանության պետական կոմիտեին կից ստեղծվեց Գիտատեխնիկական խորհուրդ՝ պաշտպանական նշանակության գիտական հետա-

զոտությունները համակարգելու նպատակով։ Նրա ղեկավարությամբ մեծ թվով գիտահետազոտական աշխատանքներ կատարվեցին քիմիայի, մեքենաշինության և մետալուրգիայի ոլորտներում։ Սակայն հայրենի գիտնականների ներդրումը չի սահմանափակվել միայն նոր զենքերի և ռազմական տեխնիկայի մշակմամբ։ 1942 թվականին միկրոկենսաբան Զ.Վ. Երմոլևան ստեղծեց հայրենական պենիցիլինը՝ դառնալով խորհրդային բժշկության կարևորագույն ձեռքբերումներից մեկի հեղինակը։ Բացի դրանից, խորհրդային բժիշկներն ու կենսաբանները մշակեցին մի շարք դեղամիջոցներ և բժշկական տեխնոլոգիաներ, որոնք փրկեցին հարյուր հազարավոր մարդկանց կյանքը, վերականգնեցին նրանց առողջությունը և աշխատունակությունը՝ նպաստելով թիկունքի և ռազմաճակատի ընդհանուր դիմակայունությանը։ Վերջույթի անդամահատումը՝ կատարված «Բուրդենկոյի մեթոդով», անզգայացումը՝ «Վիշնևսկու եղանակով», ինչպես նաև «Պոստովսկու մածուկի» կիրառումը պատերազմի տարիներին պակաս կարևոր դեր չէին խաղում, քան Ե.Օ. Պատոնի մշակած զրահի ավտոմատ զոդման տեխնոլոգիան կամ M-82 ինքնաթիռի շարժիչը, որը նախագծվել էր Ա.Դ. Շվեցովայի ղեկավարությամբ։ Այս առաջատար լուծումների արդյունքում այն ժամանակ, երբ գերմանացի բժիշկները կարողանում էին ծառայության վերադարձնել Վերմախտի վիրավոր զինվորներից կեսին, խորհրդային բժիշկներն արդյունավետ բուժման շնորհիվ ռազմաճակատ էին վերադարձնում ավելի քան 70 տոկոսին։ Բացի բժշկությունից և զինտեխնիկայից՝ խորհրդային գիտնականները նշանակալի ներդրում ունեցան նաև այլ ոլորտներում։ Մշակվում էին կարտոֆիլի և ցորենի նոր տեսակներ, որոնք հարմարեցված էին Ուրալի և Սիբիրի կոշտ կլիմայական պայմաններին։ Բացահայտվում էին օգտակար հանածոների նոր հանքավայրեր՝ փոխարինելու ժամանակավորապես բռնազավթված տարածքներում մնացած ռեսուրսներին։ Զուգահեռաբար մշակում էին նաև տարբեր փոխարինող նյութեր՝ պաշտպանական արդյունաբերության սակավ ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու նպատակով։

Հաղթանակի հասնելու գործում հսկայական ներդրում են ունեցել նաև մշակույթի գործիչները։ Գրողները, կոմպոզիտորները, արվեստագետներն ու կինոռեժիսորները ստեղծել են այնպիսի ստեղծագործություններ, որոնք բարձրացնում էին ժողովրդի ոգին, ամրապնդում մարտական տրամադրությունը և օգնում հաղթահարելու կորուստների ու զրկանքների ցավը։ Պատերազմի տարիներին կինոռեժիսորները նկարահանում էին ինչպես պատմական, այնպես էլ ժամանակակից թեմաներով ռազմահայրենասիրական ֆիլմեր։ Առանձնահատուկ տեղ էին գրավում ռազմաճակատի իրադարձություններին անմիջապես անդրադարձող ֆիլմերը, որի լավագույն նմուշները ընդգրկված են ռուսական կինոյի ոսկե ֆոնդում։ Այդ թվում՝ «Մի տղա մեր քաղաքից» (ռեժիսորներ՝ Ա.Բ. Ստոլպեր և Բ.Գ. Իվանով, 1942 թ.), «Երկու մարտիկ» (ռեժ. Լ.Դ. Լուկով, 1943 թ.), «Պատերազմից հետո՝ երեկոյան ժամը վեցին» (ռեժ. Ի.Ա. Պիրյև, 1944 թ.) և այլ գործեր։ Արվեստագետները, ընդգրկվելով ռազմաճակատային թատերախմբերում, մեկնում էին պատերազմի դաշտ և ներկայացումներ էին տալիս Կարմիր բանակի մարտիկների համար։ Ըստ վիճակագրության՝ պատերազմի տարիներին նման թատերական խմբերի գործունեությանը մասնակցել է ավելի քան 40 հազար

մշակույթի գործիչ: Էստրադային հայտնի արտիստներ Լ.Օ. Ուտյոսովը, Կ.Ի. Շուլժենկոն, Լ.Ա. Ռուսլանովան ռազմաճակատի առաջնագծում հանդես են եկել հարյուրավոր համերգներով: Խորհրդային ժողովրդի խիզախության և ոգու երաժշտական մարմնավորումը վառ արտահայտվեց Դմիտրի Շոստակովիչի Յոթերորդ սիմֆոնիայում («Լենինգրադյան»), որի առաջին կատարումներից մեկը 1942 թվականին տեղի ունեցավ պաշարված Լենինգրադում:

Ընդհանուր իրավիճակը երկրում: Պատերազմի տարիներին ԽՍՀՄ քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգի հիմնարար հատկանիշները էական փոփոխության չեն ենթարկվել: ԳՈՒԼԱԳ-ը շարունակում էր գործել, իսկ ազգային պատկանելության հիման վրա իրականացվող ձերբակալություններն ու բռնաճնշումները չէին ընդհատվում: «Դավաճանության» անհիմն մեղադրանքներով մի շարք ժողովուրդներ՝ բալկարներ, ինգուշներ, կալմիկներ, կարաչայներ, Ղրիմի թաթարներ, Վոլգայի գերմանացիներ, չեչեններ և այլք, բռնի տեղահանվեցին ԽՍՀՄ արևելյան շրջաններ: Նրանց ազգային ինքնավարությունները լուծարվեցին: Արդյունքում հարյուր հազարավոր անմեղ մարդիկ ենթարկվեցին աքսորի, զրկվեցին իրենց տներից, իրավունքներից և ազգային ինքնությունից: Պատերազմից հետո՝ 1950-ականների վերջին, իսկ այնուհետև ժամանակակից Ռուսաստանի Դաշնությունում ձեռնարկվեցին մի շարք քայլեր՝ բռնադատված ժողովուրդների իրավունքների վերականգնման ուղղությամբ:

Միաժամանակ զգալի փոփոխություններ էին տեղի ունենում պաշտոնական գաղափարախոսության մեջ, որոնք սկիզբ առան 1930-ական թվականներին: Առաջին պլան մղվեցին խորհրդային հայրենասիրության և հայրենական պատմության ժառանգորդության գաղափարները: Հայտնվեցին գրքեր և ֆիլմեր, որոնք փառաբանում էին նախահեղափոխական դարաշրջանի ականավոր պետական գործիչներին և հրամանատարներին: Պատահական չէ, որ պատերազմը, ինչպես 1812 թվականի Հայրենականը, կոչվեց Հայրենական մեծ պատերազմ: 1943 թվականին Կարմիր բանակում ներդրվեցին 1917 թվականից հետո վերացված ուսադիրները: Աչքի ընկած ստորաբաժանումներին շնորհվում էր գվարդիականի կոչում: Նոր շքանշանները (Սուվորովի, Կուտուզովի, Նախիմովի, Ուշակովի, Բոգդան Խմելնիցկու, Ալեքսանդր Նևսկու) ընդգծում էին կապը անցյալ ժամանակների հերոսների հետ:

Պատերազմի տարիներին փոխվեց խորհրդային պետության քաղաքականությունը եկեղեցու նկատմամբ: Արդեն պատերազմի առաջին օրերից Ռուս ուղղափառ եկեղեցին կոչ էր անում հավատացյալներին միավորվել հայրենիքի պաշտպանության համար զավթիչների դեմ պայքարում: Ծխական համայնքներն ակտիվորեն սկսեցին միջոցներ հավաքել Պաշտպանության ֆոնդի համար: Այդ գումարների շնորհիվ ստեղծվեցին «Դմիտրի Դոնսկոյ» տանկային շարասյունը և «Ալեքսանդր Նևսկի» էսկադրիլիան: Եկեղեցու այս դերը չվրիպեց խորհրդային ղեկավարության ուշադրությունից և դրդեց վերանայել պետական-եկեղեցական հարաբերությունների ռազմավարությունը: Իշխանությունները դադարեցրին հալածանքները հավատացյալների նկատմամբ՝ ներառյալ կրոնական տոնակատարություններին մասնակցող անձանց:



«Մենք կռվում ենք խիզախորեն, սվինով խոցում անխնա – Սուվորովի թոռները, Չապաևի երեխաները»: Պաստառ: 1941 թ.: Նկարիչներ՝ Կուկրինիկսի

Վերաբացվեցին նախկինում փակված մի շարք եկեղեցիներ: 1925 թվականին՝ պատրիարք Տիխոնի մահից հետո, իշխանությունները տևական ժամանակ խոչընդոտել էին նոր պատրիարքի ընտրությունը, և եկեղեցին ղեկավարվում էր միայն տեղապահի կողմից: Սակայն 1943 թվականի սեպտեմբերին Ստալինը թույլատրեց անցկացնել պատրիարքի ընտրություններ, և Մետրոպոլիտ Սերգիուսը (Սթարգորոդսկի) ընտրվեց որպես նոր պատրիարք: Նույն ժամանակաշրջանում վերաբացվեց նաև ռուս ուղղափառ եկեղեցու Աստվածաբանական ակադեմիան:

§ 85. Մեծ հաղթանակը

Ռազմական գործողությունները պատերազմի վերջին փուլում: 1944 թվականի ամառային արշավի ամենանշանակալի իրադարձությունները Կարմիր բանակի կողմից իրականացված երկու խոշոր գործողություններն էին: Ռազմաճակատի կենտրոնական հատվածում հունիս-օգոստոս ամիսներին խորհրդային զորքերը իրականացրին «Բագրատիոն» օպերացիան և ազատագրեցին Բելառուսը: Խորհրդանշական էր, որ նույն տարածքում, որտեղ 1941 թվականի ամռանը նացիստները շրջափակել էին Արևմտյան ճակատի սովետական զորքերին, արդեն 1944 թվականին խորհրդային ուժերը ջախջախեցին գերմանական «Կենտրոն» բանակային խմբավորումը՝ հետ շպրտելով Արևելյան Պրուսիա և Լեհաստանի հյուսիս: Նույն ժամանակահատվածում «Հյուսիս» բանակային խումբը, նահանջելով Լենինգրադից, ստիպված եղավ շարժվել դեպի արևմուտք: Սակայն այն հետագայում մեկուսացվեց Կուրլանդյան թերակղզում, որտեղ մնաց շրջափակման մեջ մինչև պատերազմի ավարտը (տե՛ս Հավելված, քարտեզ №19):

1944 թվականի օգոստոսին Կարմիր բանակը սկսեց «Յասի-Քիշնևի» օպերացիան, որի ընթացքում ծանր պարտություն կրեց գերմանա-ռումինական «Հարավային Ուկրաինա» բանակային խումբը: Այս հաղթանակի արդյունքում խորհրդային զորքերը վերջնականապես ազատագրեցին Ուկրաինայի հարավային շրջաններն ու Մոլդովան և ներխուժեցին Ռումինիայի տարածք: Շուտով Ռումինիայի թագավոր Միհայը պետական հեղաշրջում արեց, ձերբակալեց նացիստների կողմնակիցներին և հայտարարեց պատերազմ Գերմանիային՝ միանալով հակահիտլերյան դաշինքին: Նույն ուղին ընտրեց նաև Բուլղարիայի նոր կառավարությունը, որը կազմավորվեց 1944 թվականի սեպտեմբերին: Նույն թվականի աշնանը խորհրդային զորքերը, որոնց կազմում ընդգրկված էին ռումինական, բուլղարական և հարավսլավական ստորաբաժանում-

ներ, Ռումինիայի տարածքով անցնելով, ներխուժեցին Հունգարիա, իսկ դեկտեմբերի վերջին շրջապատեցին Բուդապեշտը

Ընդհուպ մինչև 1945 թվականի գարունը Վերմախտը շարունակում էր մնալ որպես հզոր մարտական մեքենա, և Կարմիր բանակի յուրաքանչյուր առաջխաղացում ձեռք էր բերվում հսկայական ջանքերի և ծանր կորուստների գնով: Նացիստական զորքերը ժամանակ առ ժամանակ անցնում էին հակահարձակման՝ զգալի կորուստներ պատճառելով խորհրդային ստորաբաժանումներին: 1944 թվականի ամռանը և աշնանը Կարմիր բանակի հաղթանակները պայմանավորված էին ոչ թե Վերմախտի թուլացմամբ, այլ խորհրդային բանակի աստիճանական ուժեղացմամբ: Մարտավարական ու հրամանատարական հմտությունների աճը, մարտական փորձի կուտակումը, զենքի և զինամթերքի անընդհատ հոսքը ռազմաճակատ, ինչպես նաև խորհրդային ռազմական տեխնիկայի բնութագրերի անընդմեջ կատարելագործումը, որը ոչ միայն քանակական, այլև որակական գերազանցություն էր ապահովում, նպաստեցին Կարմիր բանակի հաջողությանը:

Բացի այդ, 1944 թվականի հունիսի 6-ին դաշնակիցները Եվրոպայում վերջապես բացեցին երկրորդ լիարժեք ռազմաճակատը: «Օվերլորդ» օպերացիայի շրջանակում նրանք զորքեր իջեցրին Նորմանդիայում՝ Ֆրանսիայի հյուսիսում, և սկսեցին լայնածավալ հարձակում թշնամու դեմ: Գերմանիայի ռազմավարական դիրքը ամսեամիս վատթարանում էր:

1944–1945 թվականների ձմռանը խորհրդա-գերմանական ճակատում գրեթե միաժամանակ ծավալվեցին երկու խոշոր ռազմական գործողություններ: Հունգարիայում նացիստական Գերմանիան փորձեց օգնության հասնել Բուդապեշտում շրջափակման մեջ գտնվող իր զորախմբին: Սակայն այդ փորձերը ձախողվեցին, և հակառակորդը փորձեց Բալատոն լճի շրջանում շրջափակել խորհրդային զորքերի մի մասին: Բալատոնի ճակատամարտն ավարտվեց գերմանական զորքերի պարտությամբ, սակայն ուշագրավ է, որ նույնիսկ 1945 թվականի հունվար-մարտ ամիսներին նացիստները դեռ հարձակողական նպատակներ ունեին, և նրանց հարձակումները զսպելը դյուրին չէր:



Եվրոպան ազատ կլինի:
Պաստառ: 1944 թ.:
Նկարիչ՝ Վ.Բ. Կորեցկի

Այս իրադարձություններին զուգահեռ խորհրդային զորքերը լեհական ստորաբաժանումների մասնակցությամբ իրականացրին «Վիսլա–Օդեր» գործողությունը: Խորհրդային ուժերը ճեղքեցին գերմանական պաշտպանության գիծը Լեհաստանում, մեկուսացրին թշնամու խմբավորումները Արևելյան Պրուսիայում և Վիսլա գետի մոտից հասան մինչև Օդեր գետը: Բեռլինն արդեն

շատ մոտ էր, իսկ խորհրդային ճակատը դեպի արևմուտք ձգված սեպի տեսք ստացավ։ Այս սեպից դեպի հյուսիս և հարավ (Պոմերանիայում և Սիլեզիայում) նացիստական Գերմանիան դեռ պահպանում էր զգալի ուժեր, որոնք սպառնում էին կողային հարձակումներ իրականացնել սեպի հիմքի տակ։ Հետևաբար փետրվարից մինչև ապրիլի առաջին օրերը մարտեր տեղի ունեցան Պոմերանիայի և Սիլեզիայի շրջաններում։ Միայն այդ կողմնակի վտանգները վերացնելուց հետո խորհրդային հրամանատարությունը անցավ Բեռլինի գրոհի նախապատրաստությանը։

Բեռլինը, որը պաշտպանում էին «Վիսլա» բանակային խմբավորման հիմնական ուժերը, նախ շրջապատվեց 1-ին բելառուսական ճակատի (հրամ. Գեորգի Ժուկով) և 1-ին ուկրաինական ճակատի (հրամ. Իվան Կոնև) համակցված գրոհներով, ապա գրավվեց։ Մայիսի 8-ի գիշերը՝ Մոսկվայի ժամանակով արդեն 1945 թվականի մայիսի 9-ին, Գերմանիան պաշտոնապես կապիտուլյացիայի ենթարկվեց։ Նույն օրը խորհրդային զորքերը ազատագրեցին Պրահան՝ ջախջախելով Վերմախտի վերջին խոշոր խմբավորումը։

Ռազմական գործողություններ Ճապոնիայի դեմ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը։ 1945 թվականի հուլիս–օգոստոս ամիսներին կայացավ Պոտսդամի կոնֆերանսը՝ Խորհրդային Միության, Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի ղեկավարների մասնակցությամբ։ Այն դարձավ 1943 թվականին (նոյեմբեր–դեկտեմբեր) Թեհրանում և 1945 թվականին (փետրվար) Յալթայում անցկացված գագաթաժողովների տրամաբանական շարունակությունն ու եզրափակիչ փուլը։ Պոտսդամի կոնֆերանսի ամենակարևոր որոշումներն ուղղված էին նացիզմի վերացմանը, Գերմանիայի ապառազմականացմանը, ինչպես նաև պատերազմի հանցագործների դատապարտմանը։ Միաժամանակ քննարկվեցին նաև հետպատերազմյան աշխարհակարգի ձևավորման հիմնարար սկզբունքները։

Յալթայի կոնֆերանսում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ Խորհրդային Միությունը պատերազմ հայտարարեց Ճապոնիային։ 1945 թվականի օգոստոսի 6-ին Միացյալ Նահանգները միջուկային հարված հասցրեց Հիրոսիմային, իսկ օգոստոսի 9-ին՝ Նագասակիին։ Այդ նույն օրերին Կարմիր բանակը սկսեց Մանջուրիայի ռազմագործողությունը, որի ընթացքում ամբողջությամբ ջախջախվեց Կվանտունյան բանակը՝ Ճապոնիայի ամենամեծ ցամաքային ուժային խմբավորումը Ասիական մայրցամաքում։ Միաժամանակ խորհրդային զորքերը ազատագրեցին Կուրիլյան կղզիներն ու Հարավային Սախալինը, ինչպես նաև ծովային դեսանտներ իջեցրին Հյուսիսային Կորեայի նավահանգիստներում։ Ճապոնիան, կորցնելով իր ցամաքային զորքերի առավել մարտունակ խմբավորումը, ի վիճակի չէր այլևս շարունակել դիմադրությունը։ Օգոստոսի 14-ին Ճապոնիան պաշտոնապես ընդունեց կապիտուլյացիայի պայմանները, սակայն զինված ուժերը սկսեցին զենքերը վայր դնել միայն օգոստոսի 16-ին՝ համապատասխան հրաման ստանալուց հետո։ 1945 թվականի սեպտեմբերի 2-ին տեղի ունեցավ Ճապոնիայի կապիտուլյացիայի պաշտոնական արարողությունը, որը նշանակում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը։

ԽՍՀՄ որոշիչ դերը նացիզմի դեմ հաղթանակում: Խորհրդային Միությունը վճռորոշ դեր խաղաց նացիզմի դեմ հաղթանակում: Հիտլերյան Գերմանիան իր ցամաքային զորքերի հիմնական ուժերը կենտրոնացրել էր խորհրդա-գերմանական ռազմաճակատում: Ընդհանուր հաշվարկներով Կարմիր բանակը ոչնչացրել է Վերմախտի 607 դիվիզիա, մինչդեռ մյուս ռազմաճակատներում արևմտյան դաշնակիցներին հաջողվել է ջախջախել ընդամենը 176 դիվիզիա:

Արդեն պատերազմի առաջին շաբաթներին Վերմախտի կազմում խորհրդային զորքերի դեմ մարտի մեջ մտան Հունգարիայի, Ռումինիայի, Ֆինլանդիայի բանակները, ինչպես նաև Սլովակիայի խամաճիկ կառավարության ստորաբաժանումները: Ավելի ուշ նրանց միացան նաև Իտալիայի զորամիավորումները և կամավորական խմբավորումներ եվրոպական մի շարք երկրներից՝ Բելգիա, Դանիա, Իսպանիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Ֆրանսիա, Խորվաթիա և Շվեդիա: Այս բազմազգ ուժերը նույնպես պարտություն կրեցին խորհրդա-գերմանական ռազմաճակատում:

Հաղթանակի գինը: Հաղթանակը շատ թանկ արժեցավ մեր երկրի համար: Խորհրդային Միության ժողովրդագրական կորուստները կազմել են մոտ 26,6 միլիոն մարդ: Կարմիր բանակի շարքերում ծառայել է շուրջ 8,7 միլիոն մարդ, որոնցից 3–3,5 միլիոնը զոհվել կամ մահապատժի է ենթարկվել նացիստական ռազմագերիների ճամբարներում: Մյուսները նացիստական զավթիչ ռեժիմի վայրագությունների, օդային ռմբակոծությունների, հրետանային գնդակոծությունների և չգրավված տարածքներում խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված հանցավոր գործողությունների հետևանքով են զոհվել: Միայն պաշարված Լենինգրադում սովի հետևանքով մեկ միլիոնից ավելի մարդ է մահացել: Հիշեցնենք, որ պատերազմի ժամանակաշրջանի ժողովրդագրական կորուստների տվյալները որոշ դեպքերում մոտավոր են և ժամանակի ընթացքում ենթակա են ճշգրտման:

Հսկայական էին նաև նյութական կորուստները: ԽՍՀՄ-ում ավերվել են ավելի քան 1700 քաղաքներ, 70 հազար ավաններ և գյուղեր: Ավելի քան 6 միլիոն շինություններ վերածվել են ավերակների, շուրջ 25 միլիոն մարդ անօթևան է մնացել: Պատերազմը աննախադեպ վնաս է հասցրել տնտեսությանը. գրեթե ամբողջությամբ ավերվել են մոտավորապես 32 հազար արդյունաբերական ձեռնարկություններ և 65 հազար կմ երկաթուղի, 98 հազար կոլտնտեսություններ, 1876 սովխոզներ, 2890 ՄՏԿ-ներ: Ընդհանուր նյութական վնասը կազմել է երկրի ազգային հարստության մոտավորապես մեկ երրորդը:



Նյուրնբերգյան դատավարություններ: 1945–1946 թթ.:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, որի մի մասն էր Հայրենական մեծ պատերազմը, գերմանացի և ճապոնացի բազմաթիվ քաղաքական գործիչներ, սպաներ և քաղաքացիական պաշտոնյաներ իրականացրել են պատերազմական հանցագործություններ, որոնք բացահայտելու և մեղավորներին պատասխանա-

տվության ենթարկելու նպատակով ստեղծվեցին միջազգային դատարաններ: Հայտնի են Նյուրնբերգի (նոյեմբերի 20, 1945–հոկտեմբերի 1, 1946), Տոկիոյի դատավարությունները (մայիսի 3, 1946–նոյեմբերի 12, 1948) և Խաբարովսկի դատական գործընթացները (դեկտեմբերի 25–30, 1949), որոնց արդյունքում բազմաթիվ ռազմական հանցագործներ դատապարտվեցին:

Երկրորդ համաշխարհային պատերազմի հետևանքով ընդարձակվեցին Խորհրդային Միության սահմանները: Յալթայի և Պոտսդամի պայմանագրերի հիման վրա ԽՍՀՄ կազմի մեջ ընդգրկվեցին Կուրիլյան կղզիները, Սախալինի կղզու հարավային հատվածը, որը 1905 թվականի ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով բռնազավթված էր, ինչպես նաև Արևելյան Պրուսիայի մի մասը՝ Քյոնիքսբերգ քաղաքի հետ, որը վերանվանվեց Կալինինգրադ և որպես երկրամասի կենտրոն՝ ՌՍՖՍՀ կազմի մեջ մտավ: Միաժամանակ Խորհրդային Միության կազմում հայտնվեց Անդրկարպատյան Ուկրաինան՝ որպես Ուկրաինական ԽՍՀ-ի մարզ: 1944 թվականին Տուվայի Ժողովրդական Հանրապետությունը, օգտվելով ինքնավարության իրավունքներից, կամավոր միացավ Խորհրդային Միությանը (տե՛ս Հավելված, քարտեզ №20):

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին «Բարբարոսա» պլանի նպատակները: Ի՞նչ ռազմավարություն է օգտագործվել այդ պլանը մշակելու համար: Նշե՛ք հիմնական գործոնները, որոնք խանգարել են նացիստներին այն իրագործել:
2. Ինչպե՞ս զարգացան մարտերը 1941 թվականին: Ի՞նչ նշանակություն ունեցավ Կարմիր բանակի հաղթանակը Մոսկվայի ճակատամարտում:
3. Օգտագործելով տեղեկատվության լրացուցիչ աղբյուրներ՝ պատրաստե՛ք զեկուցում Հայրենական մեծ պատերազմի տարիներին Կարմիր բանակի գլխավոր շտաբի գործունեության մասին:
4. Որո՞նք էին 1941 թվականի ամռանը և աշնանը խորհրդային ղեկավարության ձեռնարկած կարևորագույն գործողությունները, որոնք կանխորոշեցին ԽՍՀՄ հաղթանակը:
5. Ինչպե՞ս զարգացավ և գործեց հակահիտլերյան դաշինքը պատերազմի ընթացքում: Նշե՛ք համատեղ գործողությունների դիվանագիտական, տնտեսական և ռազմական գործոնները:
6. Նկարագրե՛ք հիտլերյան բռնազավթիչ ռեժիմը: Ինչպե՞ս էր այն կապված նացիստական գաղափարախոսության հետ:
7. Ինչպե՞ս տեղի ունեցավ պարտիզանական ջոկատների կազմավորումը: Ի՞նչ դեր խաղաց պարտիզանական շարժումը:

8. Ո՞րն է «արմատական փոփոխություն» հասկացության էությունը: Ի՞նչ գործոնների շնորհիվ է արմատական փոփոխություն տեղի ունեցել Հայրենական մեծ պատերազմում:
9. Կազմակերպչական և տեխնիկական ի՞նչ որոշումների շնորհիվ է Խորհրդային Միությանը հաջողվել Գերմանիայի նկատմամբ գերակայության հասնել ռազմական արտադրանքի արտադրության հարցում:
10. Պատմե՛ք պատերազմի վերջին փուլում Կարմիր բանակի հարձակողական ամենակարևոր գործողությունների մասին:
11. Ինչու՞ ԽՍՀՄ-ը հաղթեց Հայրենական մեծ պատերազմում: Որո՞նք էին հաղթանակի գինն ու նշանակությունը:
12. Պատրաստե՛ք հաղորդում խորհրդային նշանավոր հրամանատարներից կամ Հայրենական մեծ պատերազմի հերոսներից մեկի մասին, որի անունով անվանակոչվել են ձեր տարածքում գտնվող փողոցներ կամ այլ վայրեր:

ԳԼՈՒԽ 17. ԽՍՀՄ–ը 1940-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ 1960-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

§ 86. Տնտեսության հետպատերազմյան վերականգնումը

Տնտեսության վերականգնման հիմնախնդիրները: Հայրենական մեծ պատերազմի մարտերը ծավալվեցին ԽՍՀՄ եվրոպական մասում, որտեղ բնակչության, տրանսպորտային ցանցի և արդյունաբերական օբյեկտների խտությունն ամենաբարձրն էր։

Ռազմական գործողությունների գոտում անվնաս էր մնացել գործարանների և ֆաբրիկաների ընդամենը 17 տոկոսը։ ՌՍՖՍՀ-ի ազատագրված տարածքներում պահպանվել էր արդյունաբերական օբյեկտների 13, Բելառուսում՝ 15, Ուկրաինայում՝ 19, Բալթյան հանրապետություններում՝ 32, իսկ Մոլդովայում՝ 49 տոկոսը։ Հատկապես ծանր վնասներ էին կրել մետաղաձուլական և հանքարդյունաբերության ճյուղերը։ Խորհրդային տնտեսությունը կորցրել էր 62 դոմենյան և 213 մարտենյան վառարաններ, ինչպես նաև ոչնչացվեցին կամ հեղեղվեցին 1135 հանքեր, որոնցից նախապատերազմական տարիներին տարեկան ավելի քան 100 միլիոն տոննա քարածուխ էին արդյունահանում։ Էներգետիկ ոլորտում ոչնչացվել էր շուրջ 5 միլիոն կիլովատժամ արտադրական հզորություն։

Երկիրն աստիճանաբար վերադառնում էր խաղաղ կյանքի։ 1945 թվականի սեպտեմբերին լուծարվեց Պաշտպանության պետական կոմիտեն։ 1946 թվականին ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը վերանվանվեց ԽՍՀՄ նախարարների խորհուրդ։ Բանակը զորացրվում էր, և զինվորները ռազմաճակատից վերադառնում էին տուն։ Նույն տարում ընդունվեց չորրորդ հնգամյա պլանը, որը նպատակ ուներ վերականգնել և զարգացնել ժողովրդական տնտեսությունը։ 1947 թվականի դեկտեմբերին վերացվեցին սննդամթերքի և արդյունաբերական ապրանքների քարտերը, ինչպես նաև իրականացվեց դրամական ռեֆորմ։

Տնտեսության աշխուժացումը սկսվել էր դեռևս պատերազմի տարիներին։ Դեռ մինչև պատերազմի ավարտը հաջողվեց վերականգնել և շահագործման հանձնել շուրջ 7,5 հազար արդյունաբերական ձեռնարկություն, 51,9 հազար կմ երկաթուղային հիմնական գծեր, գնացքների վերանորոգման 190 կայան (դեպո) և 2734 խոշոր կամուրջ։ Աշխատանքների մեծ մասը իրականացվել է հետպատերազմյան շրջանում։ Բռնազավթումից ազատագրված միութենական հանրապետությունները ի վիճակի չէին ինքնուրույն վերականգնելու իրենց արդյունաբերական ավերված օբյեկտները։ Դրանց վերականգնումը հնարավոր դարձավ ողջ Խորհրդային Միության համատեղ ջանքերի շնորհիվ։ Այսպես, միայն 1945–1947 թվականներին մյուս հանրապետություններից Բելառուս են առաքվել ավելի քան 50 հազար միավոր արդյունաբերական

տարբեր սարքավորումներ: 1945–1950 թվականներին Ռուսաստանից Դոնբաս է տեղափոխվել շուրջ 90 հազար բանվոր և ինժեներ: Միայն ՌՍՖՍՀ-ից 200 ձեռնարկություն մասնակցել է ուկրաինական «Զապորոժստալ» գործարանի վերականգնմանը: Հաճախ ուղիղ կապեր էին հաստատվում բռնազավթումից չտուժած շրջանների կամ հանրապետությունների միջև, որոնք նպատակային օգնություն էին տրամադրում ազատագրված շրջաններին: Այսպես, օրինակ՝ ՌՍՖՍՀ Կիրովի մարզը ստանձնեց բելառուսական Գոմելի արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները, իսկ Ուլյանովսկի մարզը օգնություն ցուցաբերեց Մոզիրի ձեռնարկություններին:

ԽՍՀՄ արդյունաբերական արտադրության մեջ բռնազավթման ենթարկված շրջանների մասնաբաժինը 1940 թվականին

	ԽՍՀՄ ամբողջությամբ	Այդ թվում՝ բռնազավթված շրջաններում	Բռնազավթված շրջանների մասնաբաժինը համամիութենական արտադրության մեջ (%)
Համախառն արդյունաբերական արտադրանք (անփոփոխ գներ 1926/27, միլիարդ ռուբլի)	138,5	45,9	33
Չուգուն (մլն տոննա)	14,9	10,6	71
Պողպատ (մլն տոննա)	18,3	10,5	58
Սև մետաղների գլանվածք (մլն տոննա)	13,1	7,5	57
Կոքս 6% խոնավության (մլն տոննա)	21,1	15,7	74
Երկաթի հանքաքար (մլն տոննա)	29,9	21,3	71
Ածուխ (մլն տոննա)	165,9	105,2	63
Տրակտորներ (հազար հատ)	31,6	17,9	57

Ավերածությունների վերականգնմանը զուգահեռ կառուցվում էին արդյունաբերական օբյեկտներ: 1940-ականների երկրորդ կեսին շահագործման հանձնվեցին մի շարք խոշոր ձեռնարկություններ. Մինսկում՝ ավտոմոբիլային և տրակտորային գործարաններ, Ռուսթավիում՝ մետալուրգիական կոմբինատ, Ուստ-Կամենոգորսկում՝ կապարի և ցինկի արդյունաբերական համալիր, Սումգայիթում՝ խողովակների գլանման գործարան: Չորրորդ հնգամյա պլանի ընթացքում կառուցվեցին նաև մի շարք հզոր էլեկտրակայաններ՝ Ֆարխադի և Ռիբինսկի, ինչպես նաև Շչեկինսկի և Նիժնետուրինսկի էներգետիկ համալիրները: Այս տարիներին մեկնարկեց ԽՍՀՄ-ի զանգվածային

գազաֆիկացման գործընթացը, որի խորհրդանիշերն էին Սարատով–Մոսկվա, Կոխտլա-Յարվե–Լենինգրադ և Դաշավա–Կիև գազատարները: Խորհրդային արդյունաբերության հետպատերազմյան զարգացման գործում նշանակալի դեր ունեցավ նաև գերմանական գործարաններից ստացված սարքավորումների մատակարարումը՝ որպես ռազմատուգանքի հատուցում:

Տնտեսության վերականգնումը ֆինանսավորելու նպատակով կառավարությունը կիրառեց վարկային համակարգը՝ բնակչությունից հավաքելով կամավոր և հարկադիր փոխառության պարտատոմսեր: 1946–1947 թվականներին ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման նպատակով ԽՍՀՄ-ում իրականացվեցին պետական փոխառության երեք թողարկում: 1949 թվականից սկսեցին թողարկվել նոր՝ միայն տնտեսության զարգացմանը նվիրված պետական փոխառություններ: 1948 թվականին փոխառությունները կազմում էին պետական բյուջեի եկամուտների շուրջ 24 տոկոսը, իսկ 1952 թվականին՝ արդեն 42 տոկոսը:

Հետպատերազմյան հինգ տարիների ընթացքում շահագործման են հանձնվել շուրջ 6200 արդյունաբերական ձեռնարկություններ՝ ներառյալ ինչպես վերականգնված, այնպես էլ նորակառույց օբյեկտները: Արդեն 1948 թվականին ԽՍՀՄ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալը հասել էր նախապատերազմյան մակարդակին, իսկ 1950 թվականին այն գերազանցվել էր 73 տոկոսով: Ըստ ժամանակակից տնտեսագետների գնահատականների՝ այդ ժամանակահատվածում համախառն ներքին արդյունքի միջին տարեկան աճի տեմպը կազմել է մոտ 14 տոկոս, ինչը թերևս ԽՍՀՄ-ի ողջ պատմության մեջ ամենաբարձր ցուցանիշն էր:

Տնտեսական զարգացման առաջնահերթությունների հարցում խորհրդային ղեկավարությունը շարունակել է հավատարիմ մնալ Ա խմբի արդյունաբերության (ծանր արդյունաբերություն) առաջնահերթ զարգացման սկզբունքին: Այս քաղաքականությունն արտացոլում էր ոչ միայն ներքին տնտեսական ռազմավարությունը, այլև պայմանավորված էր ԽՍՀՄ-ի և Արևմտյան երկրների միջև աճող լարվածությամբ, որը հանգեցրեց Սառը պատերազմին: Այս պայմաններում 1945–1950 թվականներին ծանր արդյունաբերության արտադրանքի ծավալները գրեթե կրկնապատկվել են, իսկ մեքենաշինության ոլորտում աճը կազմել է 2,3 անգամ: Միևնույն ժամանակ թեթև արդյունաբերության ոլորտում աճը եղել է ընդամենը 17 տոկոս: Գյուղատնտեսության զարգացումն էլ է ընթացել դանդաղ տեմպերով: Հացահատիկի բերքը նախապատերազմյան մակարդակին հասել է միայն 1953 թվականին:



«Բաժանորդագրվե՛ք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման պետական վարկին»: Պաստառ: Նկարիչ՝ Ա.Կ. Վոլոշին

Տեխնիկական արդիականացման հիմնախնդիրները: Տնտեսության զարգացման և վերականգնման վերոնշյալ բոլոր միջոցառումներին զուգահեռ իրականացվում էին տեխնիկական

արդիականացման հաջորդ փուլի աշխատանքները: 1930-ականների արդյունաբերականացման արդյունքում Խորհրդային Միությունում արդեն իսկ ձևավորվել էր համապատասխան տեխնոլոգիական հիմք: Սակայն Սառը պատերազմի պայմաններում ԽՍՀՄ-ը կանգնած էր նոր մարտահրավերների առաջ, որոնք պահանջում էին հնարավորինս արագ արդիականացնել ավիացիոն արդյունաբերությունը և ստեղծել արդյունաբերական նոր ուղղություններ՝ հրթիռային և միջուկային:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին խորհրդային ռազմական ավիացիան հագեցված էր հիմնականում ներքին այրման շարժիչներով աշխատող ինքնաթիռներով: Սակայն 1940-ականների երկրորդ կեսից առաջացավ ռեակտիվ ինքնաթիռների արտադրության անհրաժեշտությունը, ինչը իր հերթին թելադրում էր զարկ տալ տուրբոռեակտիվ շարժիչների արտադրությանը: Այս տեխնիկապես չափազանց բարդ խնդիրը լուծվեց բացառիկ կարճ ժամանակահատվածում: Արդեն 1946 թվականին սկսվեց ԽՍՀՄ-ի առաջին տուրբոռեակտիվ կործանիչների՝ Յակ-15-ի և ՄիԳ-9-ի սերիական արտադրությունը:

ԱՄՆ-ում ատոմային զենքի ի հայտ գալը Խորհրդային Միությունից պահանջում էր ստեղծել նմանատիպ զինատեսակ: Խորհրդային միջուկային ֆիզիկոսներ Ի.Վ. Սադովսկին, Մ.Ա. Սադովսկին, Յա.Բ. Զելդովիչը և Յու.Բ. Խարիտոնը կարճ ժամանակում հաջողությամբ լուծեցին այդ բարդ խնդիրը: 1949 թվականին անցկացվեցին ԽՍՀՄ-ի առաջին ատոմային ռումբի՝ ՌԴՍ-1-ի փորձարկումները: Սակայն անհրաժեշտ էր լուծել մեկ այլ կարևոր խնդիր ևս՝ միջուկային զենքը նպատակակետ հասցնելու միջոցների ստեղծումը: Այդ ժամանակ Միացյալ Նահանգները արդեն իսկ տիրապետում էր բազմաթիվ հեռահար ռմբակոծիչների: Նրանց կիրառման տեխնիկան փորձարկվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, իսկ համաշխարհային մասշտաբով տարածված ավիաբազաների ցանցը ԱՄՆ-ին հնարավորություն էր տալիս իրականացնել օդային հարվածներ տարբեր ուղղություններով, այդ թվում՝ միջուկային: ԽՍՀՄ-ի հնարավորությունները այս ոլորտում դեռևս սահմանափակ էին: Ուստի ԽՍՀՄ-ը հիմնական շեշտը դրեց բալիստիկ հրթիռների մշակման վրա: 1949 թվականին իրականացվեց R-2 հրթիռի փորձարկումը (շահագործվել է 1951 թվականից), որն ուներ մինչև 550 կմ հեռահարություն: 1953 թվականին փորձարկվեց R-5 հրթիռը (շահագործման մեջ է մտել 1954-ից)՝ 1200 կմ առավելագույն հեռահարությամբ: 1957 թվականին սկսվեց միջմայրցամաքային հեռահարության R-7 հրթիռի փորձարկումը (գործածվել է 1960 թվականից)՝ 11 հազար կմ միջմայրացամաքային հեռահարությամբ: Այսպիսով, աշխատանքը, որը սկսվել էր Հայրենական մեծ պատերազմի ավարտից գրեթե անմիջապես հետո, 1960-ականների սկզբին արդեն միջուկային ենթադրվող հակամարտության դեպքում Խորհրդային Միությանը հարվածին հարվածով պատասխանելու հնարավորություն տվեց:

Թվարկված խնդիրներից յուրաքանչյուրի լուծումը պահանջում էր արտադրական նոր հզորությունների ստեղծում: Տուրբոռեակտիվ շարժիչների արտադրության համար անհրաժեշտ էր ջերմակայուն պողպատ, ինչը ենթադրում էր մետալուրգիական ձեռնարկությունների խորքային և համակարգային վերակառուցում: Միջուկային

ծրագիրը պահանջում էր ուրանի հանքերի ստեղծում, ուրանի հանքաքարի հարստացման գործարանների կառուցում, ինչպես նաև միջուկային ռեակտորների գործարկում՝ զենքի համար անհրաժեշտ պլուտոնիումի արտադրության նպատակով: Իսկ հրթիռաշինության զարգացումը պահանջում էր գրեթե տասնյակ օժանդակ ճյուղերի ստեղծում: Որպես օրինակ՝ կարելի է դիտարկել միջուկային ծրագրերի իրականացումը:

Խորհրդային կառավարությունն այս նպատակով ստեղծեց Առաջին գլխավոր վարչությունը (Первое главное управление), որը պատասխանատու էր հանքարդյունաբերական մասնագիտացված սարքավորումների, պլուտոնիումի արտադրության և ուրանի հարստացման գործարանների կառուցման համար: Հետազոտական, նախագծային և արդյունաբերական բոլոր աշխատանքները պետք է իրականացվեին մի երկրում, որը դեռևս վերակառուցում էր պատերազմի տարիներին նացիստական զավթիչների կողմից ավերված տնտեսությունը: Այս բացառապես բարդ խնդիրը հաջողությամբ լուծվեց՝ դառնալով խորհրդային գիտության և արդյունաբերության նշանակալի ու պատմական ձեռքբերումներից մեկը:

§ 87. Հասարակական-քաղաքական իրավիճակը երկրում 1940-ականների վերջից մինչև 1950-ականների սկիզբը

Չիրականացած հույսեր: Ըստ ժամանակակիցների վկայությունների՝ խորհրդային քաղաքացիների մեծամասնությունը հավատացած էր, որ հաղթանակին կհետևի ռեժիմի լայնածավալ ազատականացումը: Ընդհանուր տրամադրությունը կարելի էր ձևակերպել այսպես. «Մենք հաղթեցինք: Մենք արյամբ ապացուցեցինք մեր հավատարմությունը կուսակցությանը և հայրենիքին»: Երկրով մեկ շրջանառվում էին լուրեր ձերբակալվածների մոտալուտ արդարացման, բռնաճնշումների դադարեցման, կոլտնտեսությունների հնարավոր լուծարման մասին... Սակայն այդ հույսերը չարդարացան:

Հետպատերազմյան շրջանում ստալինյան ղեկավարության ներքին քաղաքականությունը համապատասխանում էր 1930-ականներին բնորոշ մեթոդներին ու միտումներին: Արդեն 1946 թվականին պարզ դարձավ, որ քաղաքական կուրսի ազատականացում պետք չէ ակնկալել: Այդ տարի Բոլշևիկյան համամիութենական կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի Կազմակերպչական բյուրոն «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի վերաբերյալ որոշում ընդունեց, որում խիստ քննադատության ենթարկվեցին հանրաճանաչ բանաստեղծուհի Աննա Ախմատովան և երգիծաբան Միխայիլ Զոշչենկոն՝ իրենց ստեղծագործությունների «հակասովետական» բնույթի և պաշտոնական գաղափարախոսությանը չհամապատասխանելու համար: Հաջորդ տարիներին ընդունվեցին նմանատիպ մի շարք որոշումներ արվեստի այլ ոլորտների ներկայացուցիչների վերաբերյալ:

1946 թվականին սկսվեց լայնածավալ գործ՝ հայտնի որպես «ավիացիոն գործ», որի շրջանակում ավիացիոն արդյունաբերության մի շարք նշանավոր ներկայացուցիչներ և ռազմաօդային ուժերի բարձրաստիճան հրամանատարներ մեղադրվեցին վնասարարության և դիվերսիայի մեջ: Ավիացիոն արդյունաբերության աշխատակիցներին դատապարտեցին իբր՝ «ցածր որակի ինքնաթիռների նախագծման համար, որոնք կարճ ժամանակում շարքից դուրս էին գալիս», ինչպես նաև ռեակտիվ ինքնաթիռների՝ զինված ուժերի զինանոց ընդունելը միտումնավոր դանդաղեցնելու համար: Բացի այդ, ռազմաօդային ուժերի հրամանատարությունը մեղադրվում էր իր ենթադրյալ «հանցակիցներին» պաշտպանելու և այդ խոցելի ինքնաթիռները ընդունելու մեջ: Սակայն իրավիճակի իրական զավեշտն այն էր, որ ամբաստանյալները մեղադրվում էին մի բանում, որի համար նրանք նախկինում պարգևատրվել էին: Ռազմաճակատում կործանիչը կամ գրոհային ինքնաթիռը «ապրում էր» միջինը մի քանի ամիս, ուստի ինքնաթիռների «երկարակեցության» խնդիրը գործնականում երկրորդական էր: Ինքնաթիռներ արտադրողներից առաջին հերթին պահանջվում էր կատարել թողարկման պլանը: Հետագայում նմանատիպ գործեր հարուցվեցին նաև բանակի և նավատորմի ղեկավարների դեմ («Կուլիկ-Գորդով-Ռիբալչենկոյի դավադրություն» 1947 թվականին, «Ռազմավարի գործ» 1946–1948 թվականներին, «Ադմիրալներ Կուզնեցովի, Ալաֆուզովի, Գալլերի և Ստեպանովի գործ» 1948 թվականին և ուրիշներ):

«Ավիացիայի գործին» զուգահեռ 1947 թվականին մեկնարկեց նաև «կոսմոպոլիտիզմի դեմ պայքարի» արշավը, որն ուղղված էր հատկապես մտավորականության շրջանում «Արևմուտքի պաշտամունքի» դեմ: Շուտով այս արշավը ստացավ բացահայտ հակասեմական բնույթ. բռնաճնշումների ավելի հաճախ ենթարկվում էին ազգությամբ հրեա գրողներ, լրագրողներ և երաժիշտներ: 1948 թվականին լուծարվեց հրեական հակաֆաշիստական կոմիտեն, իսկ նրա մի շարք անդամներ մեղադրվեցին լրտեսության մեջ և ենթարկվեցին քաղաքական հետապնդումների: Այս քարոզչական արշավի գագաթնակետը դարձավ այսպես կոչված «թունավորող բժիշկների դեպքը», որի շրջանակում մի խումբ բժիշկների մեղադրեցին միտումնավոր սխալ ախտորոշումներ տալու և հիվանդների մահվանը նպաստելու մեջ: Մեղադրյալների ճնշող մեծամասնությունը ազգությամբ հրեա խորհրդային քաղաքացիներ էին: Վնասարարության մեջ մեղադրվեցին նաև պետության բարձրագույն ղեկավարությանը սպասարկող բժիշկները:

Հետպատերազմյան շրջանում բռնատիրական քաղաքականությունը տարածվեց նաև գիտության ոլորտի վրա: Գիտական որոշ ուղղություններ արգելվեցին: Մասնավորապես, արգելվել էր գենետիկայի զարգացումը: Քննադատության թիրախ դարձան նաև առանձին պատմաբաններ, լեզվաբաններ և տնտեսագետներ:

1949–1950 թվականներին տեղի ունեցավ ևս մեկ խոշոր քաղաքական գործ՝ այսպես կոչված «Լենինգրադի գործը», որի շրջանակում բռնաճնշումների ենթարկվեցին Լենինգրադից մի շարք ազդեցիկ կուսակցական գործիչներ և տնտեսական ղեկավարներ: Գնդակահարվել են ԽՍՀՄ Պետական պլանավորման կոմիտեի նախագահ Ն.Ա. Վոզնեսենսկին, Կենտկոմի քարտուղար Ա.Ա. Կուզնեցովը, ինչպես նաև ՌՍՖՍՀ

նախարարների խորհրդի նախագահ Մ.Ի. Ռոդիոնովը և ուրիշներ։ Ընդհանուր առմամբ տուժել է շուրջ 3,5 հազար մարդ։

1951 թվականին քաղաքական բռնաճնշումները տարածվեցին նաև պետական անվտանգության մարմինների վրա։ Ձերբակալվեցին ՆԳԲ բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ գեներալ Վ.Ս. Աբակումովը, Լ.Ֆ. Ռայխմանը և Ն.Ի. Էյտինգոնը։ Այսպիսով, հետպատերազմյան շրջանը դարձավ խորհրդային քաղաքականության այն փուլը, որի ընթացքում կրկնվեց 1930-ականներին բնորոշ բռնաճնշումների ողջ սպեկտրը։ Կատարվեցին կուսակցական ապարատի «զտումներ», իրականացվեցին ճնշումներ հրամկազմի, տնտեսության «վնասարարների», ազգային պատկանելության հիմքով փոքրամասնությունների, ստեղծագործող մտավորականության, անգամ պետական անվտանգության համակարգի ներկայացուցիչների նկատմամբ։

Նախկին ուղեգիծը և նոր անուններ: 1952 թվականի հոկտեմբերին տեղի ունեցավ ԽՍՀԲԿ 19-րդ համագումարը։ Կենտրոնական կոմիտեի անունից հաշվետու զեկույցով հանդես եկավ Գ.Մ. Մալենկովը։ Համագումարը հաստատեց հինգերորդ հնգամյա պլանի հիմնական դրույթները։ Որոշվեց Համամիութենական կոմունիստական կուսակցությունը վերանվանվել Խորհրդային Միության կոմունիստական կուսակցություն (ԽՄԿԿ)։ Քաղբյուրոյի փոխարեն ստեղծվեց Կենտրոնական կոմիտեի՝ ավելի լայն կազմով նախագահություն։ Համագումարի մթնոլորտը և ընդունված որոշումները լիովին համապատասխանում էին հետպատերազմյան շրջանում իրականացվող քաղաքական խիստ կուրսին։

1945–1953 թվականների ընթացքում նախապատերազմյան քաղաքական կուրսի պահպանման պատճառները մինչ օրս շարունակում են քննարկման առարկա մնալ պատմաբանների շրջանում։ Ստալինը և նրա մերձավոր շրջապատը ներքին քաղաքականության մեջ որևէ ճշգրտման անհրաժեշտություն չէին տեսնում։ Նրանց համոզմամբ իրավիճակը էականորեն չէր փոխվել. ինչպես 1930-ականներին, Խորհրդային Միությունը պետք է պատրաստվեր գալիք պատերազմին, որի նշանները Կրեմլի ղեկավարությունը տեսնում էր դաշնակիցների հետ աճող դիվանագիտական լարված հարաբերություններում, Գերմանիայի պառակտման և Կորեական թերակղզում ծագած ռազմական հակամարտության մեջ։ Սառը պատերազմը, թվում էր, մոտալուտ երրորդ համաշխարհային պատերազմի նախաբանն էր, հետևաբար ներքին քաղաքականության ազատականացման կամ տնտեսական զարգացման առաջնահերթությունների վերանայման վերաբերյալ բոլոր քննարկումները Ստալինի կողմից ընկալվում էին որպես անտեղի և ժամանակավրեպ նախաձեռնություն։



Գ.Մ. Մալենկով

§ 88. Հասարակական-քաղաքական կյանքը 1950-ականների կեսերից մինչև 1960-ականների կեսերը

Առաջնորդության համար պայքարը Ստալինի մահից հետո: 1953 թվականի մարտին Ստալինի մահից հետո նրա մերձավոր շրջապատում սկսվեց իշխանության համար կատաղի պայքար: Այս ներքին մրցակցության պայմաններում ամենավատ մեկնարկային դիրքերում հայտնվեց Նիկիտա Խրուշչովը: Նա Կուսակցության Կենտրոնական կոմիտեի նախագահության միակ անդամն էր, որը Ստալինի մահից անմիջապես հետո պետական պաշտոնների բաշխման արդյունքում որևէ կարևոր պաշտոն չէր ստացել: Նրա լիազորությունները սահմանափակվում էին միայն Կենտկոմի քարտուղարի պարտականություններով: Այնուամենայնիվ հենց Խրուշչովը, դեռևս չունենալով առաջնորդի կարգավիճակ, 1953–1956 թվականների ընթացքում կարողացավ հետևողականորեն ամրապնդել իր դիրքերը և աստիճանաբար ստանձնել քաղաքական նախաձեռնությունը:

1953 թվականի ամռանը ձերբակալվեց, ապա գնդակահարվեց Լ.Պ. Բերիան, որն այդ ժամանակ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալն էր և ներքին գործերի նախարարը: 1953 թվականի սեպտեմբերին Խրուշչովը ընտրվեց ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: 1955 թվականին նա կարողացավ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնից հեռացնել Գ.Ի. Մալենկովին, որին շատերը Ստալինի ժառանգորդն էին համարում:

Խրուշչովի ներքաղաքական կուրսի հիմնական ուղղությունը Ի.Վ. Ստալինի անձի պաշտամունքի հաղթահարումն էր: Ապաստալինացումը ենթադրում էր անմեղ դատապարտյալների ազատ արձակում, մեղավորներին պատասխանատվության ենթարկում, օրինականության սկզբունքների վերականգնում և հասարակական կյանքի որոշակի ազատականացում: Սակայն Խրուշչովի քաղաքականության առանցքային տարրը, որն ի վերջո ապահովեց նրա հաղթանակը, այս գործընթացները չէին: Ստալինյան դարաշրջանում զանգվածային քաղաքական բռնաճնշումներն արդյունավետ գործիք էին՝ վարչական նոմենկլատուրայի վերահսկման և պարտականությունների կատարման ապահովման համար: Այդ համակարգում յուրաքանչյուր նոմենկլատուրային գործիչ գտնվում էր մշտական վերահսկողության ու լարվածության պայմաններում: Խրուշչովը կարողացավ գրավել նրանց վստահությունը՝ երաշխավորելով, որ այդ մեխանիզմը այլևս չի գործելու: 1956 թվականի փետրվարին ԽՄԿԿ 20-րդ համագումարի փակ նիստում նա հանդես եկավ հայտնի զեկույցով՝ «Անձի պաշտամունքի և դրա հետևանքների մասին»: Զեկույցում ներկայացված գրեթե բոլոր մեղադրանքները վերաբերում էին անձնական բռնաճնշումներին՝ հիմնականում ուղղված շարքային կուսակցականների և միջին օղակի աշխատողների դեմ: Միաժամանակ լիովին շրջանցվեցին կոլեկտիվացման, «վնասարարների» գործերի, ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված «էթնիկ գործողությունների», ինչպես նաև Կամենևի, Զինովիևի, Բուխարինի և քաղաքական «շեղում» ունեցողների արդարացման հարցերը: Խրուշչովը



Ն.Ս. Խրուշչով

փաստացի դիմում էր հատկապես կուսակցական ապարատին և պետական նոմենկլատուրային՝ ակնարկելով, որ բռնաճնշումների վտանգն այլևս անցյալում է: Եվ դա բավարար էր, որպեսզի նոմենկլատուրան համախմբվեր նրա շուրջ:

Խրուշչովի և խորհրդային վերնախավի միջև առճակատման գագաթնակետը 1957 թվականի ամռանն էր: Այդ շրջանում Խրուշչովը առաջ քաշեց տնտեսական մի շարք առաջարկներ, որոնք լավ մտածված չէին, սակայն հնարավորություն տվեցին դիմելու հանրությանը՝ Կենտրոնական կոմիտեի նախագահության մյուս անդամներին մեղադրելով բյուրոկրատիայի և պահպանողականության մեջ: Նրա առաջնորդական հավակնությունները սկսեցին անհանգստություն առաջացնել բարձրաստիճան կուսակցական շրջանակներում: Հունիսի 19-ին ԿԿ նախագահության նիստում Գ. Մալենկովը մեղադրեց Խրուշչովին՝ անձի պաշտամունքի վերարտադրման և տնտեսական քաղաքականության սխալների համար: Նախագահության անդամների մեծամասնությունը սկզբում աջակցեց այս քննադատությանը: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ քննարկմանը միջամտեցին Կենտկոմի շարքային անդամները՝ պահանջելով հրավիրել կուսակցության արտահերթ պլենում: Այդ պլենումում Խրուշչովի կողմնակիցներն արդեն կազմում էին մեծամասնություն: Նրանք Մոլոտովին, Կագանովիչին և Մալենկովին մեղադրեցին ստալինյան բռնաճնշումներին մասնակից լինելու մեջ: Այս ղեկավարները հայտարարվեցին «հակակուսակցական խումբ» և հեռացվեցին Կենտրոնական կոմիտեի նախագահությունից: Նրանց փոխարինեցին Խրուշչովի համախոհները: 1958 թվականին Խրուշչովը ստանձնեց նաև Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը՝ միավորելով իր ձեռքում ինչպես կուսակցական, այնպես էլ պետական իշխանությունը: Սա նոր առաջնորդի շուրջ համախմբված կուսակցական ապարատի և նոմենկլատուրայի հստակ և ակնհայտ հաղթանակն էր:

Սակայն Խրուշչովի հաղթանակը նաև բացասական հետևանքներ ուներ: Ստալինյան շրջանի բռնաճնշումների համակարգը, իր ողջ դաժանությամբ հանդերձ, ապահովում էր վերնախավի շարունակական թարմացում և «սոցիալական վերելակների» ակտիվ գործարկում: Քաղաքական բռնաճնշումների արդյունքում իշխանության վերին օղակներում պարբերաբար առաջանում էին թափուր պաշտոններ, որոնք զբաղեցնում էին նոր, հաճախ երիտասարդ ու նախաձեռնող աշխատակիցներ՝ նոմենկլատուրայի շարքերից, ովքեր համոզված էին, որ կարող են արդարացնել «կուսակցության և կառավարության բարձր վստահությունը»: Դա հասարակական-քաղաքական հրեշավոր դաժան համակարգ էր, բայց այն դեռ գործում էր: Խրուշչովը թեև կասեցրեց այս մեխանիզմը, բայց չստեղծեց կառուցակարգային որևէ այլընտրանք՝ վերնախավի

շրջափոխման կամ ռոտացիայի ապահովման համար: Նոմենկլատուրային ցուցակում ընդգրկված պաշտոնյան այժմ մնում էր այնտեղ գրեթե ցմահ. եթե նա չէր կարողանում արդյունավետ կատարել իր պարտականությունները, պարզապես տեղափոխվում էր այլ՝ նմանատիպ պատասխանատվությամբ պաշտոնի:

Խորհրդային հասարակության ապաստալինացում: Անհատի պաշտամունքը մերժելը վերածվեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի առանցքային շարժիչ ուժի: Սակայն խորհրդային ղեկավարությունը այս գործընթացն իրականացնում էր անհետևողականորեն: Մի կողմից՝ ստալինյան շրջանի այս կամ այն հանցագործության մեջ մեղսակցության մեղադրանքը դարձավ հարմար գործիք ներքաղաքական և ապարատային պայքարում: Մյուս կողմից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թե՛ Խրուշչովը և թե՛ նրա բազմաթիվ համախոհներ եղել են 1930–1940-ականների 2-րդ կեսի բռնաճնշումների ակտիվ մասնակիցներ: Ուստի երբեմն նոր քաղաքականության կողմնակիցները ստիպված էին լռել որոշակի իրադարձությունների մասին, երբեմն, ընդհակառակը, ստիպված էին կանխարգելիչ հրապարակային մեղադրանքներ հնչեցնել՝ սեփական դիրքերը պահելու և մրցակիցներին ճնշելու նպատակով:

Կուսակցության որոշ գործիչներ դեմ էին ստալինյան շրջանի պատժիչ մեթոդների բացահայտ քննադատությանը՝ մտավախություն ունենալով, որ դա կարող է ստվեր գցել սոցիալիզմի գաղափարախոսության վրա: Շարքային քաղաքացիների մոտ հաճախ առաջանում էին ողջամիտ հարցադրումներ՝ որքանով էին ստալինյան բռնաճնշումներն ու համակարգային խախտումները պատահական երևույթներ, և որքանով էին դրանք խորհրդային հասարակության օրգանական հատկանիշը: Քանի դեռ այդ քննարկումները մնում էին «խոհանոցային» վեճերի մակարդակում, կարելի էր հանդուրժել: Սակայն հենց որ նման հարցադրումները տեղափոխվում էին հանրային հարթակ՝ դառնալով հոդվածների, բանավեճերի կամ հրապարակային ելույթների թեմա, իշխանությունները անմիջապես արձագանքում էին կոշտ, երբեմն նույնիսկ բռնի միջոցներով՝ ընդհուպ մինչև ձերբակալություններ՝ «խորհրդային իրականության զրպարտության» մեղադրանքով: Այս պայմաններում ձևավորվեց մտավորականության կողմից շրջանառվող խորհրդանշական անվանումը՝ «Ձնհալ»: Ինչպես ձմեռային սառնամանիքներից հետո սկսվող հալոցքը կարող է ցանկացած պահի փոխարինվել նոր սառնամանիքով, նույն կերպ էլ խրուշչովյան ազատականացման գործընթացը ժամանակակիցների ընկալմամբ բնութագրվում էր որպես անորոշ և փխրուն:

Ապաստալինացման գործընթացի առանցքային բաղադրիչներից մեկը դարձավ անարդարացիորեն բռնադատվածների զանգվածային ազատումը: Եթե 1955 թվականին ԳՈՒԼԱԳ-ի ճամբարներում պահվում էր շուրջ 309 հազար քաղաքական դատապարտյալ, ապա 1959 թվականին նրանց թիվը նվազել էր՝ հասնելով 11 հազարի: Միաժամանակ վերացվեց վերաբնակեցվածների իրավազուրկ կարգավիճակը: Լայն տարածում ստացավ նաև անօրինության զոհերի վերականգնման պրակտիկան՝ ներառյալ հետմահու արդարացումները: Սակայն այս գործընթացը ուներ ընտրովի բնույթ:

Պատերազմի նախօրեին և դրա ընթացքում բռնադատված ժողովուրդների նկատմամբ կիրառված իրավական սահմանափակումները մեծ մասամբ վերացվեցին:

Սակայն այս գործընթացում ևս դրսևորվեց Խրուշչովի քաղաքականությանը բնորոշ անհետևողականությունը: Չեչեններին, ինգուշներին, բալկարներին, կարաչայներին և կալմիկներին թույլ տրվեց վերականգնել իրենց ինքնավարությունը, մինչդեռ Վոլգայի գերմանացիների և Ղրիմի թաթարների դեպքում ինքնավար հանրապետությունները այդպես էլ չվերականգնվեցին՝ անկախ նրանց վերադարձի իրավունքի ճանաչումից: Խրուշչովը բազմիցս դրսևորել է շտապողականություն և առանց խորքային վերլուծության դիմել է անմտածված քայլերի: Երբ վերականգնվեցին Չեչենա-ինգուշական և Կալմիկական Ինքնավարությունները, նոր վարչական սահմանները գծվեցին կամայականորեն՝ անտեսելով պատմական, տնտեսական և ժողովրդագրական իրողությունները, ինչը տարածաշրջանում հանգեցրեց ազգային լարվածության աճին:

1954 թվականին Խրուշչովը պնդում էր Ղրիմի շրջանը ՌՍՖՍՀ-ից Ուկրաինական ԽՍՀ-ին տալու մասին: Այս որոշումը կայացվել էր առանց ԽՍՀՄ Սահմանադրության երեք հոդվածի պահպանման՝ իրավական տեսակետից խիստ վիճահարույց ընթացակարգով: Այնուամենայնիվ, խորհրդային իրականության պայմաններում պետական իշխանության մարմինները հիմնականում ձևական բնույթ էին կրում և ծառայում էին որպես քաղաքական բեմազարդ. նրանց հիմնական գործառույթը Կենտկոմի ընդունած որոշումների հաստատումն էր՝ առանց իրավական գնահատման:

Պատերազմի տարիներին զավթիչների հետ համագործակցած խորհրդային քաղաքացիների մեծ մասը 1955 թվականին ստացել է համաներում: Ապաստալինացման հետևանքով նացիստների նախկին շատ համագործակիցներ հնարավորություն են ունեցել վերելք ունենալ աշխատանքային ոլորտներում, այդ թվում՝ հասարակական կյանքի մեջ: Հետագայում դա կարևոր դեր է խաղացել Ուկրաինայում և Բալթյան երկրներում ազգայնական ուժերի ձևավորման գործընթացում:

«Ձնհալի» ֆենոմենը: Պաշտոնապես սահմանված շրջանակից դուրս ապաստալինացման վերաբերյալ հանրային քննարկման ցանկացած փորձ խստորեն ճնշվում էր: Այդ պատճառով առաջին պլան մղվեցին գրականությունն ու մշակույթը, որտեղ հնարավոր էր արվեստի գործերի միջոցով բարձրացնել սուր բարոյական խնդիրներ և փնտրել դրանց պատասխանները: Ըստ էության, «ձնհալ» եզրույթը, որով բնորոշվում էր այս ժամանակաշրջանը, Իլյա Էրենբուրգի նույնանուն պատմվածքի վերնագրի վերարտադրումն է:

Հայտնվեցին գրական-գեղարվեստական նոր ամսագրեր, որոնք չափազանց մեծ տարածում գտան ընթերցողների շրջանում: Հայրենական գրականությունը հարստացավ երիտասարդ գրողների ու բանաստեղծների անունների մի ամբողջ համաստեղությամբ: Հրատարակվեցին աշխատություններ, որոնք անդրադառնում էին ստալինյան բռնաճնշումներին: Վաճառքում կրկին հայտնվեցին նախկինում արգելված հեղինակների, այդ թվում՝ Ախմատովայի և Զոշչենկոյի գրքերը: Փոփոխությունների թարմ շունչը ներթափանցեց կինո, թատրոն և մշակույթի այլ ոլորտներ:

Սակայն այս ամբողջ բազմաձայնությունը պարբերաբար ընդհատվում էր իշխանությունների կոշտ արձագանքով: 1957-ին Բ.Լ. Պաստեռնակը հալածվեց իր՝ «Բժիշկ Ժիվագո» վեպի համար. նրան ոչ միայն ստիպեցին հրաժարվել Նոբելյան





ԽՍՀՄ փոստային նամականիշեր՝ նվիրված ԽՄԿԿ XXII համագումարին

մրցանակից, այլև հեռացրին Գրողների միությունից: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ Խրուշչովը գրականությունից ու արվեստից քիչ էր հասկանում: Արդյունքում պարբերաբար նկատողություններ էին ստանում բանաստեղծ Ա.Ա. Վոզնեսենսկին, գրող Դ.Ա. Գրանինը, քանդակագործ Է.Ի. Նեիզվեստնին և ուրիշներ: Այս ամենը մի կողմից արվեստագետներին ցույց էր տալիս թույլատրելիի սահմանները, իսկ մյուս կողմից աստիճանաբար սեպ խրում մտավորականության և խորհրդային իշխանությունների միջև:

Երկրի ղեկավարությունը փորձեց համախմբել հասարակությանը՝ առաջ քաշելով կոմունիզմի արագ կառուցման մասին կարգախոսը: 1961 թ. ԽՄԿԿ XXII համագումարում ընդունվեց նոր ծրագիր, որը նպատակ ուներ մինչև 1980 թ. ստեղծել կոմունիզմի նյութատեխնիկական բազան, այսինքն՝ գործնականում ապահովել հետևյալ սկզբունքը՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ իր կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների»: Միաժամանակ առաջ քաշվեցին թեզեր՝ պետության աստիճանական լուծարման, ազգային տարբերությունների վերացման և նոր մարդու՝ կոմունիստական հասարակության քաղաքացու դաստիարակման մասին: Սակայն տնտեսական խնդիրների խորացման պայմաններում խորհրդային քաղաքացիների զգալի մասը այդ հայտարարություններին վերաբերվում էր թերահավատությամբ:

Աստիճանաբար Խրուշչովի հեղինակությունը սկսեց անկում ապրել: Գրողների և արվեստագետների մշտական քննադատությունները հանգեցրին նրան, որ մտավորականությունը դադարեց նրան տեսնել որպես անձի պաշտամունքի դեմ պայքարի առաջնորդ: Թեև պաշտոնական քարոզչությունը ձգտում էր բարձրացնել նրա հեղինակությունը, սակայն տնտեսության մեջ ձախողումները և բարեփոխումների հետևողականության պակասը հանգեցրին կուսակցական և տնտեսական նոմենկլատուրայի առաջնորդի դիրքի թուլացմանը: Կենսամակարդակի նվազումը նույնպես հիասթափություն առաջացրեց բնակչության լայն շերտերում: Այսպիսով, ԽՄԿԿ առաջին քարտուղարը գործնականում մնաց առանց աջակցության: Նրա ամենամոտ ընկերները դավադրություն կազմակերպեցին, և 1964 թվականի հոկտեմբերին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում Խրուշչովը պաշտոնանկ արվեց:

§ 89. Ագրարային խնդրի լուծման որոնումները

Իրավիճակը գյուղատնտեսությունում: 1950-ականների սկզբին գյուղատնտեսությունն առավել բարդ վիճակում էր հայտնվել: Արդյունաբերականացման, Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան վերականգնման տարիներին խորհրդային գյուղը արդյունաբերության աշխատանքային ռեսուրսների հիմնական մատակարարն էր, և վերականգնման ավարտին կոլտնտեսային համակարգի կենսունակությունը նկատելիորեն թուլացել էր: Քաղաքային բնակչությունն անընդհատ աճում էր, մինչդեռ ֆերմերների աշխատանքի արտադրողականությունը, եթե անգամ որոշ չափով աճում էր, շարունակում էր մնալ չափազանց ցածր: Մսի, կաթի և շաքարի պակասը սովորական բան էր դարձել առօրյա կյանքում: Տնամերձ հողամասերից գյուղմթերքի պարտադիր մատակարարումները չէին կարող էական ազդեցություն ունենալ ընդհանուր իրավիճակի վրա: Մեկ շնչին բաժին ընկնող հացահատիկի արտադրությունը ցածր էր անգամ նախահեղափոխական մակարդակից: Եղել են դեպքեր, երբ կոլտնտեսությունները պետական պլանը կատարելու նպատակով հանձնել են նույնիսկ սերմացուի հացահատիկը: Մսի արտադրությամբ ԽՍՀՄ-ը այդպես էլ չկարողացավ հասնել 1927 թվականի մակարդակին:

Ագրարային ճգնաժամից դուրս գալու ճանապարհին առաջ քաշվեցին երկու հիմնական տեսակետ: Մալենկովը կարծում էր, որ անհրաժեշտ է կիրառել այն միջոցները, որոնք մշակվել էին ՆԷՊ-ի տարիներին՝ նվազեցնել հարկերը, բարձրացնել պետական գնումների գները և ընդհանրապես օգտվել տնտեսական լծակներից: Իսկ Խրուշչովը պաշտպանում էր գյուղատնտեսության «արդյունաբերականացման» հայեցակարգը, որի համաձայն՝ կոլտնտեսությունները պետք է վերափոխվեին ագրոարդյունաբերական խոշոր ձեռնարկությունների, իսկ կոլեկտիվ ֆերմերները դիտվեին որպես այդ համակարգի աշխատողներ:

Սկզբնական շրջանում Մալենկովի տեսակետը ստացավ որոշակի առավելություն: 1953 թվականի ամռանը և աշնանը կոլտնտեսական տնամերձ տնտեսություններից հանվեցին պարտադիր մատակարարումների պարտքերը, իսկ գյուղատնտեսական հարկը գրեթե կիսով չափ կրճատվեց: Հետագայում զգալիորեն բարձրացվեցին մթերման գները (ցորենինը՝ 6 անգամ, մսինը՝ 12 անգամ), և չեղարկվեցին տնամերձ հողամասերից գյուղմթերքի պարտադիր մատակարարումները: Արդյունքները չուշացան. կոլեկտիվացումից հետո առաջին անգամ խորհրդային գյուղատնտեսությունը դարձավ եկամտաբեր, արտադրության տեմպերը արագացան, իսկ 1958 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքը ավելացավ գրեթե մեկ երրորդով:



Կին մեխանիզատոր, որը խոպան հողերում կոմբայն վարելու պետական քննություն է հանձնում

Անմշակ հողերի յուրացումը: Մալենկովի գյուղատնտեսական քաղաքականությունն ի վիճակի չեղավ դիմակայել Խրուշչովի աճող քաղաքական հավակնություններին: Նրանից պահանջվում էր ամեն գնով առաջադրել այլընտրանքային լուծումներ, որոնք, անկախ իրենց տնտեսական արդյունավետությունից, հնարավորություն կտային Մալենկովին մղել երկրորդ պլան: 1954 թվականից Խրուշչովի նախաձեռնությամբ մեկնարկեց Հյուսիսային Ղազախստանի և Սիբիրի խոպան ու անմշակ հողերի յուրացման մասշտաբային ծրագիրը:

Անմշակ հողերի յուրացումը սկսվեց առանց նախնական պատրաստության, տարածքների մեծ մասում անհրաժեշտ ենթակառուցվածքների և անձնակազմի բացակայության պայմաններում: Հաշվի չէին առնվել յուրացվող շրջանների բնակլիմայական պայմանները, չկային հացահատիկի հարմարեցված տեսակներ և մշակման համապատասխան տեխնոլոգիաներ: Արդյունքում, թեև ծրագրի սկզբնական տարիներին գրանցվեց գերբարձր բերքատվություն (1950-ականների կեսերին խոպան հողերն ապահովում էին ԽՍՀՄ-ում հացահատիկի ընդհանուր բերքի մեկ երրորդից մինչև կեսը), սակայն հետագա տարիներին բերքատվությունը սկսեց կտրուկ նվազել: Որոշ անբարենպաստ տարիների այնտեղ անգամ բավականաչափ սերմացու չէր հաջողվում հավաքել:

Մեխանիզատորները և գյուղատնտեսները հացահատիկային շրջաններից՝ Ուկրաինայից, Վոլգայի մարզից և Հյուսիսային Կովկասից, խոպան հողեր գնացին: Գյուղատնտեսական տեխնիկան և մյուս կարևոր ռեսուրսները զանգվածաբար ուղղվեցին այդ շրջաններ: 1954–1961 թվականների ընթացքում խոպան հողերին բաժին էր հասնում գյուղատնտեսության ոլորտում ԽՍՀՄ ընդհանուր ներդրումների շուրջ 20%-ը: Սակայն չնայած զգալի ներդրումներին՝ ծրագիրը չարդարացրեց սպասելիքները. տնտեսական եկամտաբերությունը սպասվածից շատ ավելի պակաս ստացվեց, իսկ հացահատիկ արտադրող շրջաններում իրավիճակը սկսեց վատթարանալ:

Գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների սրացումը: Իրավիճակը շտկելու նպատակով Խրուշչովը փորձեց հենվել եգիպտացորենի արագացված մշակման վրա՝ ընդգծելով, որ այս մշակաբույսը միաժամանակ ապահովում է թե՛ հասկ, թե՛ ցողուն, որն օգտագործվում է որպես անասնակեր: Նրա համոզմամբ՝ այս «մոնոմշակույթը» կարող էր զգալիորեն բարելավել թե՛ գյուղատնտեսության, թե՛ անասնապահության վիճակը: Հաշվի առնելով անասնաբուծության ոլորտում զգալի առաջընթացը՝ 1957-ին Խրուշչովը նպատակ դրեց «երեք տարում մեկ շնչին ընկնող մսի, կաթի և կարագի արտադրությամբ հասնել և առաջ անցնել Ամերիկայից»: Խորհրդային ղեկավարությունն սկսեց վարչական մեթոդներով խրախուսել եգիպտացորենի զանգվածային տնկումը՝ ընդհուպ մինչև հյուսիսային շրջաններ, այդ թվում՝ Արխանգելսկ: Մինչև 1962 թվականը եգիպտացորենի ցանքատարածությունները հասան 37 միլիոն հեկտարի՝ գերազանցելով խոպան հողերի (33 միլիոն հեկտար) ամբողջ մակերեսը: Սակայն քանի որ տարեկանի և ցորենի ցանքերը զգալիորեն կրճատվել էին, իսկ եգիպտացորենի բերքատվությունն անբարենպաստ բնակլիմայական պայմաններում ցածր էր, հացահատիկի ընդհանուր արտադրությունը սկսեց էլ ավելի նվազել:

Այս պայմաններում երկրի ղեկավարությունը սկսեց որոշումներ կայացնել՝ ոչ այնքան երկարաժամկետ ռազմավարությունից, որքան կարճաժամկետ մարտավարական նկատառումներից ելնելով: 1958 թվականին լուծարվեցին Մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ), և դրանց ամբողջ տեխնիկան վաճառվեց կոլտնտեսություններին: Արդյունքում կոլտնտեսությունները ստիպված եղան մեկ տարվա ընթացքում գնել մեծ քանակությամբ թանկարժեք տեխնիկա: Այս քայլով պետությունը լուծեց ֆինանսական որոշ խնդիրներ, սակայն առանց շրջանառու միջոցների մնացած կոլտնտեսությունները դարձան նորից անշահավետ, և աշխատանքային օրվա համար վճարումը զգալիորեն նվազեց: ՄՏԿ-ների մեխանիզատորների մեծ մասը հրաժարվեց աշխատանքի անցնել կոլտնտեսություններում՝ նախընտրելով տեղափոխվել քաղաք: Գյուղատնտեսական արտադրանքի աճի տեմպերը սկսեցին նվազել: Եթե ծրագրվում էր, որ 1959–1965 թվականներին արտադրության ծավալները կաճեն 70 տոկոսով, ապա իրականում աճը կազմեց ընդամենը 13 տոկոս:

1959 թվականին Կառավարությունը նախաձեռնեց լայնածավալ գրոհ կոլտնտեսականների տնամերձ տնտեսությունների դեմ՝ բարձրացնելով հարկերը և արգելելով անասուններ պահել մասնավոր տնտեսություններում: Այս միջոցառումների հետևանքով երկրում սկսվեց անասունների զանգվածային սպանդ: Թեև որոշ ժամանակ մսի պակասուրդը վերացավ, սակայն 1960-ականների սկզբին ԽՍՀՄ-ում սկսվեց գյուղատնտեսական խոր ճգնաժամ:

Խորհրդային քաղաքացիներն արդեն սովոր էին մսի, կաթի և կարագի պարբերական պակասին, սակայն շուտով սակավ հասանելի մթերքների շարքում հայտնվեցին նաև հացը, շաքարավազը և ձավարեղենը: 1962 թվականին պետական խանութներում կարագի և մսի գները բարձրացվեցին 25–30 տոկոսով, քաղաքների մեծ մասում սկսվեց պարենային քարտերի տրամադրումը: Այդ նույն ժամանակ խոպան հողերում գրանցվեց բերքատվության կտրուկ անկում: Երկրում սկսվեց ինքնաբուխ հանրահավաքների ալիք: 1962 թվականի հունիսին Նովոչերկասկում նման բողոքի ցույցը ճնշվեց ռազմական ուժի կիրառմամբ: 1963 թվականից ԽՍՀՄ-ը սկսեց անցնել հացահատիկի պարբերական ներմուծման համակարգված քաղաքականության՝ փաստացի կորցնելով պարենային անկախությունը: Սա խորհրդանշեց Խրուշչովի և նրա համախոհների ագրարային քաղաքականության վերջնական ձախողումը:

§ 90. Արդյունաբերական ոլորտը 1955–1964 թվականներին

1950-ականների կեսերի տնտեսական խնդիրները: 1955–1964 թվականներին ԽՍՀՄ-ում իրականացված տնտեսական նորարարությունները վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք: Առաջին հնգամյա պլանների ընթացքում արդյունաբերական գերարագ աճը մեծապես պայմանավորված էր գյուղից քաղաք եկող էժան աշխատուժի հոսքով: Երեկվա գյուղացիները, որոնք փախել էին կոլեկտիվացումից, պատրաստ էին ապաստան գտնել բլինդաժներում ու բարաքներում,

դիմանալ սովին ու ցրտին, միայն թե կոլտնտեսային գյուղ չվերադառնային, քանի որ այնտեղ իրավիճակը շատ վատ էր: Հենց աշխատուժի զանգվածային հոսքի շնորհիվ հնարավոր եղավ իրականացնել արդյունաբերացման ծրագրերը և Հայրենական մեծ պատերազմի ընթացքում ավերված ենթակառուցվածքների վերականգնումը:

1950-1960-ական թվականների վերջերին գյուղական բնակչության տեսակարար կշիռը նվազեց, իսկ քաղաքայինը աճեց: Երկրի բնակչության կառուցվածքում քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը հավասարվեց: Նախկին մեթոդներով ու լուծումներով տնտեսության զարգացումն ապահովելն անհնար դարձավ: Հետագայում խորհրդային պատմագրության մեջ Խրուշչովի քաղաքականությունը քննադատվեց վոլյունտարիզմի (կամայապաշտության) համար, այսինքն՝ կամայական և գիտական հիմնավորումներից զուրկ որոշումների համար, որոնք չունեին իրական նյութական հիմքեր: Տնտեսական քաղաքականության բազմաթիվ քայլեր ու որոշումներ ի վերջո դարձան սխալ և հակաարդյունավետ: Սակայն արդյո՞ք դրանք բոլորը իրապես ինքնաբուխ և կամայական էին:

Ինչպես Լենինը 1921-ին և Ստալինը 1929-ին, այնպես էլ Խրուշչովը 1955-ին կանգնած էր տնտեսական նոր մեխանիզմ ստեղծելու խնդրի առաջ, քանի որ նախորդ՝ ծանոթ և փորձարկված մեթոդներն այլևս արդյունավետ չէին:

Կառավարման բարեփոխում: Տնտեսական խորհուրդներ: Պլանային տնտեսության պայմաններում Պետական պլանավորման կոմիտեն պարտավոր էր ապահովել արդյունաբերական օբյեկտների փոխգործակցությունը՝ ազգային միասնական տնտեսական պլանին համապատասխան: Սակայն, եթե 1930-ականներին անհրաժեշտ էր համակարգել մի քանի հազար գործարանների ու ֆաբրիկաների աշխատանքը, ապա արդյունաբերացման ծրագրերի իրականացումից հետո դրանց թիվը արագորեն աճեց: 1955 թվականին ԽՍՀՄ-ում արդեն գործում էր ավելի քան 200 հազար ձեռնարկություն: Ընդլայնվել էին արդյունաբերական օբյեկտների և արտադրանքի տեսականու միջև համագործակցային կապերը: Արդյունքում Պետպլանի կոմիտեն այլևս չուներ բավարար տեխնիկական միջոցներ՝ պլանային տնտեսությունում առաջացած խնդիրները արագ և արդյունավետ լուծելու համար: Սա հանգեցրեց տնտեսության վերահսկելիության նվազման:

1957 թվականի մայիսին մեկնարկեց խորհրդային տնտեսության կառավարման համակարգի բարեփոխումը: Տնտեսական բլոկի նախարարությունների մեծ մասը լուծարվեց, իսկ նրանց ենթակայության տակ եղած ձեռնարկությունները տրվեցին մարզերում ստեղծված ազգային տնտեսական խորհուրդների (սովնարխոզների) գործառնական կառավարմանը: Սկզբում ձևավորվեց 105 տնտեսական խորհուրդ, որոնցից 70-ը՝ ՌՍՖՍՀ տարածքում: Ենթադրվում էր, որ այս բարեփոխումը կնվազեցնի բյուրոկրատիան և ձեռնարկություններին մոտեցնելով կառավարման մարմիններին՝ կբարձրացնի տնտեսության վերահսկելիության աստիճանը:

Գործնականում իրավիճակը սկսեց զարգանալ բացասական սցենարով: Տարածքային տնտեսական խորհուրդների միջև ձեռնարկությունների բաշխումը առանց կենտրոնական համակարգող օղակի հանգեցրեց արդյունաբերության զարգացման

համընդհանուր ռազմավարության մասնատման և անբավարար համակարգման։ Փորձելով շտկել այս իրավիճակը՝ Կառավարությունը ստեղծեց պետական արտադրական մի շարք կոմիտեներ, որոնք պետք է համակարգեին արդյունաբերության առանձին ճյուղերը։ Սակայն տնտեսական խորհուրդների անկախության սկզբունքը պահպանվեց, ինչի հետևանքով նորաստեղծ կոմիտեները մնացին հիմնականում խորհրդատվական մարմինների կարգավիճակում՝ սահմանափակ գործառույթներով և ազդեցությամբ։

Միևնույն ժամանակ տնտեսական յուրաքանչյուր խորհուրդ առաջնահերթություն էր տալիս իր տարածաշրջանային շահերին։ Արդյունքում երկրի միասնական տնտեսությունը սկսեց մասնատվել առանձին հատվածների։ Նույնիսկ նախկինում ձևավորված արտադրական բազմաթիվ կապեր խզվեցին։ Աճող խնդիրներին արձագանքելու նպատակով ԽՍՀՄ ղեկավարությունը փորձեց կատարել ճշգրտումներ նոր կառավարման համակարգում։ 1960-ականների սկզբին ՌՍՖՍՀ-ում, ինչպես նաև Ուկրաինայի և Բելառուսի ԽՍՀ-ներում ձևավորվեցին հանրապետական տնտեսական խորհուրդներ, որոնք կոչված էին սահմանափակելու տարածքային սովնարխոզների «կամայականությունները»։ 1962 թվականին տնտեսական շրջաններն ընդլայնվեցին, ինչի արդյունքում տնտեսական խորհուրդների ընդհանուր թիվը կրճատվեց՝ 105-ից դառնալով 43, որից 24-ը՝ ՌՍՖՍՀ տարածքում։

Բացի այդ, կուսակցական կառույցները ևս ենթարկվեցին վերակազմակերպման. շրջանային բոլոր կոմիտեները բաժանվեցին արդյունաբերական և գյուղատնտեսական մարմինների։ Փաստորեն մեկ մարզում սկսեցին գործել երկու մարզային կոմիտե՝ մեկը արդյունաբերության, մյուսը՝ գյուղատնտեսության համար պատասխանատու։ Ի վերջո 1963 թվականին ստեղծվեց ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդը, որը, ըստ բարեփոխման հեղինակների, պետք է վերջ դներ սովնարխոզների համակարգին և ապահովեր տնտեսական շրջանների արդյունավետ փոխգործակցությունը։ Սակայն բոլոր այս վերակազմակերպումների հետևանքով ոչ միայն չնվազեց ղեկավարող մարմինների թիվը, այլև զգալիորեն աճեց։ 1964 թվականին Խրուշչովի իրականացրած տնտեսական կառավարման բարեփոխումների ընդհանուր ձախողումը դարձավ ակնհայտ։

ԽՍՀՄ արդյունաբերական քաղաքականության արդյունքները մինչև 1964 թվականը: Խրուշչովի և նրա համախոհների ծրագրերը՝ ուղղված տնտեսական աճի տեմպերի էական բարձրացմանը, հաջողությամբ չպսակվեցին։ Սակայն սխալ կլինի խրուշչովյան տասնամյակը դիտարկել բացառապես որպես սխալների և ձախողումների շղթա։ Խորհրդային տնտեսությունը շարունակել է աճել տարեցտարի (թեպետ ավելի դանդաղ, քան ակնկալվում էր), ինչը որոշակի չափով հիմնավորում էր «Հասնել և անցնել Ամերիկային» կարգախոսի կենսունակությունը։ Մի շարք հետազոտողների կարծիքով՝ հենց Խրուշչովի կառավարման տարիներին ԽՍՀՄ-ի և Արևմուտքի առաջատար արդյունաբերական պետությունների միջև տնտեսական զարգացման մակարդակի տարբերությունը նվազագույնի էր հասել Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում։ Այս տասնամյակը, չնայած իր անհաջողություններին, նաև նշանավորվեց խորհրդային տնտեսության մի շարք կարևոր բեկումներով։



Հինգհարկանի բնակելի շենքի կառուցում. Վոլժսկի քաղաք

Խրուշչովյան տարիներին կարևոր նշանակություն ունեցավ զանգվածային բնակարանաշինության ծրագիրը: Թեպետ XX դարի վերջում «խրուշչովկա» բառը հաճախ նվաստացուցիչ երանգ էր ստացել՝ ասոցացվելով հարմարավետության ցածր մակարդակի հետ (վերելակի և աղբատարի բացակայություն, ցածր առաստաղներ, միատեսակ և անդեմ ճակատներ, վատ ձայնամեկուսացում և անհարմար դասավորություն), սակայն այն բեկումնային լուծում էր բնակարանային ճգնաժամի պայմաններում: Մարդիկ տեղափոխվում էին խրուշչովկաներ՝ լքելով բարաքները և կոմունալ բնակարանները: Դա անցում էր դեպի էապես տարբեր կենսամակարդակ՝ առանձին բնակարան, սեփական խոհանոց, անձնական տարածք, որն ապահովում էր կյանքի անհատականացված կազմակերպում՝ առանց հարևանների մշտական վերահսկողության: Չնայած պանելային բնակարանաշինության բոլոր թերություններին՝ այս ծրագրի իրագործումը հնարավորություն տվեց մեղմել բնակարանային խնդրի սրությունը, որը 1930–1940-ական թվականներին խորհրդային հասարակության համար համարյա անլուծելի էր: Ընդ որում, այս հարցը լուծվեց տնտեսության ակտիվացման ճանապարհով: Պանելային բնակարանաշինությունը պահանջում էր երկաթբետոնե արտադրանքի գործարանների լայն ցանցի ստեղծում և շինարարական տեխնիկայի մասսայական արտադրություն: Միաժամանակ լուծվեցին գազամատակարարման, ջրամատակարարման և էլեկտրականության ցանցերի ընդլայնման հարցերը: Այսպիսով, պանելային բնակարանաշինության ծրագիրը միաժամանակ մի քանի ճյուղերի փոխհամաձայնեցված զարգացում էր նշանակում:

ԽՍՀՄ-ը առաջատար դիրքեր էր զբաղեցնում օդանավային տեխնոլոգիաների զարգացման ոլորտում: 1955 թվականից խորհրդային տրանսպորտային ինքնաթիռների արտադրության կտրուկ աճ սկսվեց: Արդեն 1956 թվականին ստեղծվեց խորհրդային առաջին տուրբոռեակտիվ մարդատար ինքնաթիռը՝ Տու-104-ը: Այն դարձավ աշխարհում երրորդ ռեակտիվ մարդատար օդանավը, որը դրվեց զանգվածային արտադրության, և 1956–1958 թվականներին փաստացի եղել է միակ շահագործվող ռեակտիվ ուղևորատար ինքնաթիռը աշխարհում: 1955–1964 թվականներին ԽՍՀՄ-ում քաղաքացիական ավիացիան դարձավ հասարակության լայն շրջանակների համար հասանելի: Դա հնարավոր եղավ տուրբոռեակտիվ և տուրբոպրոպելերային ինքնաթիռների լայնածավալ արտադրության, ինչպես նաև ուղևորափոխադրման ենթակառուցվածքի՝ օդանավակայանների և ավիաուղիների համակարգի զարգացման շնորհիվ:

ԽՍՀՄ-ում սկսվեց արդյունաբերության միանգամայն նոր ճյուղի՝ միջուկային էներգետիկայի ստեղծումը: Գործարկվեցին Օբնինսկի, Սիբիրի, Բելոյարսկի և Նովովորոնեժի ատոմակայանները: 1957 թվականին շահագործման հանձնվեց խորհրդային առաջին միջուկային սուզանավը՝ «Լենինյան կոմերիտմիությունը», իսկ 1959 թվականին նավարկության դուրս եկավ աշխարհում առաջին միջուկային շարժիչով աշխատող սառցահատը՝ «Լենինը»:

1957 թվականից սկսվեց «Ուրալ» էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) զանգվածային արտադրությունը, 1959-ից՝ Մ-20-ը, 1960-ից՝ «Մինսկ-1»-ը: Առաջին էլեկտրոնային հաշվիչ մեքենաները ԽՍՀՄ-ում հայտնվեցին 1950-ականների սկզբին, սակայն այն ժամանակ դրանք եզակի էին, օրինակ՝ ամենաբազմաքանակ «Ստրելա» համակարգիչը ստեղծվել էր ընդամենը յոթ օրինակով: 1950-ականների վերջերից Խորհրդային Միությունում ԷՀՄ-ների արտադրությունը հասավ տասնյակների և հարյուրների, և այս տեխնիկական որակական առումով որևէ կերպ չէր զիջում արևմտյան մոդելներին: Այսպիսով, ԽՍՀՄ-ում ձևավորվեց արդյունաբերության մեկ այլ՝ բարձր տեխնոլոգիական և գիտելիքատար ճյուղ:

Եվ վերջապես ԽՍՀՄ-ը նշանավոր բեկում կատարեց տիեզերական նվաճումների ոլորտում: Երկիր մոլորակի առաջին արբանյակի (1957 թվական), առաջին տիեզերագնաց Յու. Գագարինի (1961 թվական), առաջին կին տիեզերագնաց Վ.Ն. Տերեշկովայի (1963 թվական), բաց տիեզերք դուրս եկած տիեզերագնաց Ա.Ա. Լեոնովի (1965 թվական) նվաճումները ոչ միայն Խորհրդային Միության, այլև ողջ մարդկության պատմության առանցքային էջերն են: ԽՍՀՄ-ը բացեց ճանապարհ դեպի աստղեր ամբողջ աշխարհի համար: Տիեզերական ծրագրի ստեղծողները՝ Սերգեյ Կորոլևը, Նիկոլայ Պիլյուգինը, Նիկոլայ Չելոմեյը, Միխայիլ Կելդիշը, Գեորգի Բաբակինը և այլ խոշոր գիտնականներ ու ինժեներներ, հսկայական ներդրում ունեցան համաշխարհային գիտության և տեխնիկայի զարգացման գործում: Այս նվաճումների իրականացման համար անհրաժեշտ էր հրթիռային և տիեզերական հզոր արդյունաբերություն ստեղծել:

Ամփոփելով կարելի է ասել, որ տնտեսական ոլորտում գրանցված որոշ ձախողումներին ու սխալ հաշվարկներին զուգընթաց 1953–1964 թվականներին ԽՍՀՄ-ին հաջողվեց հասնել արդյունաբերական նշանակալի առաջընթացի: Միևնույն ժամանակ լրջագույն խնդիր էր տնտեսական աճի դանդաղումը, որը մնաց անլուծելի և դարձավ Խորհրդային Միության պատմության հաջորդ փուլի հիմնախնդիրներից մեկը:

§ 91. ԽՍՀՄ արտաքին քաղաքականությունը

Սառը պատերազմը որպես միջազգային հարաբերությունների առանձնահատուկ ժամանակաշրջան: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվեց առճակատում ԽՍՀՄ-ի և նրա նախկին դաշնակիցների միջև: Անգլիայում ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պլանները մշակվել էին դեռևս 1945 թվականի մայիսին, իսկ նույն տարվա վերջին նմանատիպ ծրագիր պատրաստվեց նաև ԱՄՆ-ում: Արևմտյան երկրներում ներկայումս գերակշռում է այն կարծիքը, ըստ որի՝ Սառը պատերազմը նախաձեռնել է Խորհրդային Միությունը: Սակայն փաստերը վկայում են հակառակը: Միացյալ Նահանգները և նրա դաշնակիցները մտահոգված էին ԽՍՀՄ-ի աճող հզորությամբ և նրան դիտում էին որպես ուժ, որը կարող էր մարտահրավեր նետել «արևմտյան ժողովրդավարության» համաշխարհային գերիշխանությանը: Խորհրդային Միությունն իր հերթին փորձում էր կանխել միջազգային մեկուսացումը և ընդլայնել

իր ազդեցության գոտին: Այսպիսով, գործընթացն իր բնույթով երկկողմանի էր: 1950–1960-ական թվականների միջազգային իրավիճակի վերլուծության համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու հիմնական գործոն, որոնք էականորեն տարբերում էին հետպատերազմյան աշխարհակարգը XX դարի առաջին կեսի միջազգային հարաբերություններից:

Նախ՝ աշխարհը դարձել էր երկբևեռ: Եթե 1920–1930-ական թվականներին Արևմուտքը միաձույլ չէր, և խորհրդային ղեկավարությունը կարող էր օգտվել տարբեր պետությունների միջև առկա հակասություններից, ապա 1945-ից հետո ստեղծված իրավիճակը այլևս նման հնարավորություն չէր ընձեռում: 1949 թվականին հիմնադրվեց Հյուսիսատլանտյան դաշինքը (ՆԱՏՕ), որը Արևմուտքն ընդգրկեց հստակ ձևավորված ռազմաքաղաքական բլոկի մեջ: Ի պատասխան՝ Խորհրդային Միությունը ձգտեց ձևավորել մի հակադիր բևեռ՝ ամերիկամետ դաշինքին ընդդիմացող երկրների միավորմամբ: 1949 թվականին Արևելյան Եվրոպայում, ի հակադրություն Մարշալի պլանի (որը նպատակ ուներ ամերիկյան հովանու ներքո վերականգնել ԱՄՆ-ին և ՆԱՏՕ-ին հավատարիմ եվրոպական պետությունների տնտեսությունները), ստեղծվեց Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ), որի հիմնական նպատակն էր խթանել տնտեսական սերտաճումը սոցիալիստական երկրների միջև: 1955 թվականին հիմնադրվեց Վարշավայի պայմանագրի կազմակերպությունը (ԱՀԿ), որը համախմբում էր սոցիալիստական ճամբարի երկրները՝ միավորելով միասնական ռազմաքաղաքական բլոկի մեջ:

ԽՍՀՄ-ի ազդեցության գոտում հայտնվեցին հիմնականում գյուղատնտեսական երկրները: Միայն Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունն (ԳԴՀ) ու Չեխոսլովակիան էին, որ ունեին համեմատաբար զարգացած արդյունաբերություն: Անգլիան, Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ), Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան ընդգրկվեցին ԱՄՆ-ի ազդեցության ոլորտում: Հայրենական մեծ պատերազմի ընթացքում կրած մարդկային և նյութական մեծ կորուստները Խորհրդային Միությանը դրել էին ռազմաքաղաքական և տնտեսական ծանր դրության մեջ: Նա հարկադրված էր դիմակայել մի դաշինքի, որը տնտեսական առումով իրեն գերազանցում էր:

Երկրորդ՝ ատոմային զենքի գործոնը էականորեն փոխեց համաշխարհային ռազմաքաղաքական պատկերը: 1940–1950-ական թվականներին միջուկային զենքի կիրառման հիմնական միջոցը ռազմաօդային ուժերն էին: Այդ համատեքստում ԽՍՀՄ ղեկավարության ձգտումը՝ հակաօդային պաշտպանության համակարգերը հնարավորինս դեպի արևմուտք տեղակայել՝ Խորհրդային Միության արդյունաբերական առանցքային կենտրոնները պաշտպանելու համար, լիովին հասկանալի և տրամաբանական էր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական վերլուծաբանները գիտակցում էին զանգվածային կանխարգելիչ միջուկային հարված հասցնելու միջոցով պատերազմի ելքն արագորեն վճռելու հնարավորությունը, ինչը կարող էր հակառակորդին զրկել ոչ միայն հակազդելու, այլև ընդհանրապես դիմադրություն ցույց տալու ունակությունից, որոշ տարածքներում հրթիռների և ռմբակոծիչների տեղակայման,

հրթիռների արձակման նախազգուշացման կայանների կառուցման, ռազմանավերի սպասարկման և նմանատիպ հարցերը ձեռք էին բերում բացառիկ ռազմավարական կարևորություն: Այդ իրավիճակում խոսքն այլևս օպերատիվ-մարտավարական առավելությունների մասին չէր, այլ գոյաբանական սպառնալիքի, ինչը կարևորեց միջուկային զենքի տեղակայման, միջուկային տեխնոլոգիաների տարածման և զինանոցների չափերի նկատմամբ վերահսկողության հարցերը:

ԱՄՆ-ում և ԽՍՀՄ-ում միջուկային զենքի արտադրության աճը հանգեցրեց «վախի հավասարակշռության». բոլոր կողմերը գիտակցում էին, որ միջուկային պատերազմը փոխադարձ ոչնչացման ճանապարհն է: Հետևաբար Խորհրդային Միության և Միացյալ Նահանգների միջև առճակատման հիմնական ծանրությունը աստիճանաբար տեղափոխվեց տեղային և ծայրամասային հակամարտությունների ոլորտ: Այդ պատերազմներում խորհրդային և ամերիկացի զինծառայողների ուղիղ բախումները համեմատաբար հազվադեպ բնույթ էին կրում: Միաժամանակ հակամարտությունը ստացավ գաղափարական բնույթ. գերտերությունները ձգտում էին միջազգային հարաբերությունների համակարգում հաստատել սեփական աշխարհակարգային պատկերացումները՝ միաժամանակ փորձելով նվազեցնել թշնամու գաղափարախոսության գրավչությունը:

Այսպիսով, Սառը պատերազմին բնորոշ էին աշխարհում երկու հակադիր ռազմաքաղաքական բլոկների ձևավորումն ու միջուկային սպառազինության մրցավազքի սկսվելը: Առճակատումը կրում էր ոչ միայն ռազմաքաղաքական և տնտեսական, այլև արժեքային ու գաղափարական բնույթ: Սառը պատերազմի առանցքում գաղափարների մրցակցությունն էր: Մի կողմից սոցիալական արդարության, հավասարության և համախմբման գաղափարն էր, որը մարմնավորում էին ԽՍՀՄ-ը և նրա դաշնակիցները, մյուս կողմից՝ ազատականության, ժողովրդավարության և անհատի ազատության շեշտադրումը, որին հավատարիմ էին ԱՄՆ-ը և Արևմտյան դաշինքը: Այս արժեքային բևեռացումը Սառը պատերազմը միջազգային հարաբերությունների պատմության մեջ վերածեց եզակի ժամանակաշրջանի:

Սառը պատերազմի ամենակարևոր իրադարձությունները: Սառը պատերազմի տարիներին սրվեցին մի շարք հակամարտություններ, որոնք որոշ դեպքերում մոլորակը հասցրին երրորդ համաշխարհային պատերազմի շեմին: Դեռևս 1945 թվականին՝ Ճապոնիայի կապիտուլյացիայից առաջ, ԽՍՀՄ-ը և ԱՄՆ-ը կնքեցին համաձայնագիր, որի համաձայն՝ ճապոնական զորքերը Հյուսիսային Կորեայում պետք է հանձնվեին խորհրդային հրամանատարությանը, իսկ Հարավային Կորեայում՝ ամերիկյան զինված ուժերին:

Այս զուտ տեխնիկական որոշումը նշանավորեց Կորեական թերակղզու՝ երկու մասի բաժանման սկիզբը: Հյուսիսում հիմնվեց Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետությունը (ԿԺԴՀ), որը դարձավ Խորհրդային Միության դաշնակիցը, իսկ հարավում՝ Կորեայի Հանրապետությունը՝ ամերիկամետ կողմնորոշմամբ: 1950–1953 թվականներին այս երկու պետությունների միջև բռնկվեց պատերազմ: ԿԺԴՀ-ի կողմում էին Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) զինված ուժերը և



Բեռլինի պատը

խորհրդային օդային ստորաբաժանումները: Հարավային Կորեային աջակցում էր ՄԱԿ-ի հովանու ներքո գործող միջազգային դաշինքը, որի հիմնական ռազմական ուժը ամերիկյան զորքերն էին: Կողմերից ոչ մեկը չկարողացավ հասնել ամբողջական հաղթանակի, և պատերազմի ավարտին հակամարտությունը սառեցվեց:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ի հայտ եկավ գերմանական հարցին առնչվող երկրորդ կարևոր հակամարտությունը: Դեռևս Ռայխի կապիտուլյացիայից առաջ դաշնակիցները գերմանական տարածքը բաժանեցին խորհրդային, ամերիկյան, բրիտանական և ֆրանսիական բռնազավթված գոտիների: Պատերազմի ավարտից հետո Խորհրդային Միությունը մի քանի անգամ հանդես եկավ պնդմամբ՝ ստեղծելու միասնական և չեզոք Գերմանիա, սակայն Միացյալ Նահանգները և նրա դաշնակիցները մերժեցին այդ առաջարկները: Արևմտյան դաշնակիցների բռնազավթված գոտում հիմնվեց Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը (ԳՖՀ): Ի պատասխան դրան՝ խորհրդային գոտում ձևավորվեց Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ), ինչը փաստացի հաստատեց Գերմանիայի բաժանումը: Ծագեց մեկ այլ խնդիր՝ Բեռլինում արևմտյան երկրների կողմից բռնազավթված գոտիների կարգավիճակի վերաբերյալ:

Այդ տարածաշրջանին տրվել էր հատուկ կարգավիճակ. այն պաշտոնապես չէր ընդգրկվում Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության կազմում, սակայն սերտորեն կապված էր նրա հետ քաղաքական, տնտեսական և մշակութային առումներով: ՆԱՏՕ-ի անդամ երկրները Արևմտյան Բեռլինի տարածքն օգտագործում էին որպես հենակետ ԳԴՀ-ի և խորհրդային բլոկի դեմ ուղղված հետախուզական և դիվերսիոն գործողությունների համար: Այս անկլավը, որը չուներ պատշաճ պաշտպանված սահմաններ, տեղակայված էր երկրի սրտում: Բեռլինի մի շարք ճգնաժամերից (1948–1949 թթ., 1953 թվ. և 1961 թվ.) ԳԴՀ Կառավարությունը լուծեց հարցը՝ Արևմտյան Բեռլինի պարագծի երկայնքով բետոնե պատ կառուցելով:

Աշխարհը միջուկային պատերազմի բռնկմանը ամենից մոտ էր 1962 թվականին՝ Կուբայի հրթիռային ճգնաժամի ժամանակ: 1961 թվականին Միացյալ Նահանգները սկսեց «Յուպիտեր» տեսակի միջուկային հրթիռների տեղակայումը ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի տարածքում: Դրանք ունակ էին հարվածելու Խորհրդային Միության եվրոպական հատվածի գրեթե ցանկացած կետի: Ի պատասխան դրան՝ 1962 թվականին Խորհրդային Միությունը ձեռնարկեց Ռ-14 տեսակի ռազմավարական հրթիռների գաղտնի տեղակայում Կուբայում, որոնք կարող էին «ռմբակոծել» Միացյալ Նահանգների մեծ մասը: ԱՄՆ հետախուզության կողմից Կուբայում հրթիռների առկայության բացահայտումը ցնցեց ամերիկյան ղեկավարությանը: Թեև Միացյալ Նահանգներն ընդունում էր ԽՍՀՄ-ին սպառնալու հնարավորությունը, բայց սեփական տարածքի՝ հատկապես խիտ բնակեցված շրջանների դեմ ուղղված սպառնալիքը ընկալվեց որպես գոյապաշտպանական մարտահրավեր: Վաշինգտոնն ընդունելի էր համարում Մոսկվային սպառնալը, սակայն ԱՄՆ-ի ամենախիտ բնակեցված շրջաններին սպառնացող վտանգն ընկալվել էր որպես գոյապաշտպանական մարտահրավեր: Տասն օր տևած դիվանագիտական լարված բանակցությունների արդյունքում կողմերը կարողացան հասնել փոխզիջման: ԽՍՀՄ-ը համաձայնեց հանել իր հրթիռները Կուբայից՝ ԱՄՆ-ի երաշխիքների դիմաց, որ այսուհետ չի իրականացնի ներխուժում Կուբայի տարածք, իսկ Միացյալ Նահանգները պարտավորվեց հեռացնել «Յուպիտեր» հրթիռները Թուրքիայից: Այդ պահին միջուկային զենքի ոլորտում ուժերի հարաբերակցությունը ԱՄՆ-ի օգտին էր: Ամերիկան ուներ ավելի քան 3300 միջուկային մարտագլխիկ, որոնք կարող էին հասնել ԽՍՀՄ-ի տարածք, մինչդեռ Խորհրդային Միությունը՝ ընդամենը 600, որոնք կարող էին հարվածել ԱՄՆ տարածքին: Այս համատեքստում Կարիբյան ճգնաժամի արդյունքը կարելի է դիտարկել որպես խորհրդային դիվանագիտության նշանակալի հաղթանակ:

ԽՍՀՄ-ը և սոցճամբարի երկրները: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո միջազգային քաղաքականության կարևոր առանձնահատկություններից մեկն էր այսպես կոչված սոցիալիստական ճամբարի ձևավորումը: Միևնույն ժամանակ պետք է ընդգծել, որ Արևելյան Եվրոպայի երկրներում (դրանք կոչվում էին ժողովրդադեմոկրատական երկրներ) պետական և հասարակական համակարգերի կազմակերպվածությունը էապես տարբերվում էր Խորհրդային Միությունում հաստատված մոդելից: Ավելին, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում սոցիալիզմի կառուցման գործընթացը զարգանում էր ինքնատիպ ուղիով՝ չնմանվելով ո՛չ խորհրդային, ո՛չ էլ արևելաեվրոպական տարբերակներին: Հետևաբար սխալ կլիներ սոցիալիստական բոլոր երկրները դիտարկել որպես ԽՍՀՄ-ի մոդելի պարզ կրկնօրինակներ:

Տնտեսական փոխօգնության խորհուրդը (ՏՓԽ), որը միավորում էր ԽՍՀՄ-ը և ժողովրդական դեմոկրատիայի երկրները, դարձավ համաշխարհային պատմության խոշորագույն միջազգային տնտեսական ինտեգրացիոն նախագծերից մեկը: Սակայն Արևելյան Եվրոպայի պետությունների միջև տնտեսական համագործակցության

խորացումը լուրջ մարտահրավեր էր: Սկզբում դրանք տնտեսապես թույլ էին միմյանց հետ կապված: 1938-ին Բուլղարիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ռումինիայի և Չեխոսլովակիայի միջև կատարվող առևտուրը կազմում էր ընդհանուր առևտրաշրջանառության 11,5%-ը, մինչդեռ միայն Գերմանիայի մասնաբաժինը 23,3% էր: Այնուամենայնիվ արդեն 1959 թվականին ՏՓԽ-ի շրջանակներում առևտուրը յուրաքանչյուր երկրի համար կազմում էր արտաքին առևտրաշրջանառության 75%-ը՝ վկայելով տնտեսական սերտաճման և փոխկախվածության խորացման մասին: Այս ինտեգրման շնորհիվ զգալի առաջընթաց գրանցվեց Արևելյան Եվրոպայի երկրների արդյունաբերական զարգացման ոլորտում: Արևմտյան վերլուծաբանների տվյալներով՝ մինչև 1957 թվականի վերջը Խորհրդային Միությունը ՏՓԽ-ի անդամ երկրներին տրամադրել էր շուրջ 28 միլիարդ ռուբլու (մոտավորապես 7 միլիարդ ԱՄՆ դոլարի) վարկեր: 1948–1951 թվականների ընթացքում, երբ իրականացվում էր Մարշալի պլանը, Բուլղարիան ԽՍՀՄ-ից ստացել է շուրջ 8 միլիարդ ռուբլու (2 միլիարդ դոլարի վարկեր), այսինքն՝ ավելին, քան Հոլանդիան (1 միլիարդ դոլար), Իտալիան (1,3 միլիարդ դոլար) կամ Գերմանիան (1,3 միլիարդ դոլար):

ԽՍՀՄ-ի և սոցիալիստական երկրների փոխհարաբերությունները ոչ միշտ են զարգացել հարթ և ներդաշնակ կերպով: Նախևառաջ պետք է նշել, որ Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում կոմունիստական իշխանությունների հակառակորդները բավական ազդեցիկ էին, իսկ տեղական իշխանությունները հաճախ չէին կարողանում լիարժեք վերահսկել իրավիճակը: Այս առումով բնութագրական էին Հունգարիայի՝ 1956 թվականի իրադարձությունները: Բուդապեշտում բռնկվեցին զանգվածային բողոքի ակցիաներ, որոնք վերաճեցին փողոցային բախումների: Միայն խորհրդային զորքերի ներխուժումը կարողացավ վերականգնել կարգ ու կանոն և կանխել իշխանության անկումը: Երկրորդ՝ սոցիալիստական երկրների որոշ ղեկավարներ դժգոհ էին Մոսկվայի՝ իրենց կարծիքով չափազանց խիստ և խնամակալական քաղաքականությունից, ինչը հաճախ հանգեցնում էր հարաբերությունների լարվածության և նույնիսկ սառեցման: Այսպես, 1948–1954 թվականներին ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի միջև հարաբերություններում նկատվեց կտրուկ լարվածություն: Սոցիալիստական երկրների մեծ մասը այս հակասության պայմաններում հանդես եկավ սովետականամետ դիրքորոշմամբ: 1950-ականների երկրորդ կեսից սկսեցին սրվել նաև ԽՍՀՄ-ի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հարաբերությունները: Չինաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարները բացասական էին արձագանքում ԽՄԿԿ XX համագումարի ընդունած որոշումներին, մասնավորապես՝ Ստալինի քննադատությանը, և աստիճանաբար սկսեցին սահմանափակել տարբեր ոլորտներում Խորհրդային Միության հետ համագործակցությունը: Այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, այս ժամանակահատվածում սոցիալիստական երկրները միջազգային քաղաքական հարթակում հանդես էին որպես միասնական ճակատ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք էին հետպատերազմյան հինգ տարիներին խորհրդային տնտեսության լուծած կարևորագույն խնդիրները: Ինչպե՞ս են դրանք լուծվել:
2. Ինչո՞վ էր պայմանավորված Խորհրդային Միության ղեկավարության ուշադրության կենտրոնացումը հրթիռային տեխնոլոգիայի զարգացման վրա: Ի՞նչ հաջողությունների է հասել ԽՍՀՄ-ն այս ոլորտում:
3. Ի՞նչ փաստարկներ կային, որ խորհրդային ղեկավարությունը հետպատերազմյան շրջանում բռնաճնշումային քաղաքականություն էր վարում: Ինչու՞ ԽՍՀՄ-ը շարունակեց կիրառել 1930-ականներին բնորոշ հասարակական-քաղաքական մեթոդները:
4. Ինչպե՞ս է Ն. Ս. Խրուշչովը կարողացել հաստատվել կուսակցական-պետական ապարատի վերին մասում:
5. Ո՞րն էր Խրուշչովի կողմից իրականացված ապաստալինացման հիմնական խնդիրը: Որո՞նք էին ապաստալինացման հիմնական ուղղությունները:
6. Օգտագործելով տեղեկատվության հավելյալ աղբյուրներ՝ պատրաստել հաղորդում՝ 1956 և 1961 թվականների հիմնական կուսակցական փաստաթղթերի և որոշումների մասին՝ կապված խորհրդային հասարակության ապաստալինացման հետ:
7. Որո՞նք էին Խրուշչովի ժողովրդականության անկման և իշխանությունից նրա հեռացման հիմնական պատճառները:
8. Նկարագրե՛ք գյուղատնտեսության ոլորտի հիմնական խնդիրները: Ինչպե՞ս փորձեց դրանք լուծել խորհրդային ղեկավարությունը:
9. Ո՞րն էր տնտեսական խորհուրդներ ստեղծելու իմաստը: Ինչպիսի՞ն է եղել տնտեսական խորհրդի համակարգի գործունեությունը:
10. Ո՞ր ճյուղերն են առավել դինամիկ զարգացել խրուշչովյան տասնամյակի ընթացքում: Նկարագրե՛ք ձեր պատասխանը օրինակներով:
11. Պատրաստե՛ք հաղորդում խորհրդային նշանավոր գիտնականներից մեկի մասին, որը մասնակցել է ատոմային նախագծի կամ տիեզերական ծրագրի իրականացմանը:
12. Նկարագրե՛ք Սառը պատերազմի պատճառներն ու հիմնական հատկանիշները: Որո՞նք են ամենասուր տեղական հակամարտությունները, որոնց մասին դուք գիտեք:

ԳԼՈՒԽ 18. ԽՍՀՄ-Ը 1960-ԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1980-ԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԸ

§ 92. Երկրի տնտեսական զարգացումը

Տնտեսության զարգացման ռազմավարության ընտրության խնդիրը: 1964 թվականին Ն.Ս. Խրուշչովի հրաժարականից հետո ԽՄԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Լ.Ի. Բրեժնևը: 1966 թվականին կուսակցության բարձրագույն պաշտոնի անվանումը փոխվեց, և Բրեժնևը դարձավ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար: Նույն տարում կուսակցության ղեկավար մարմինը կրկին սկսեց կոչվել ոչ թե նախագահություն, այլ Կենտկոմի քաղբյուրո: Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնը ստանձնեց Ա.Ն. Կոսիգինը: Խրուշչովի տնտեսական բարեփոխումները նշանակալի արդյունք չտվեցին: Նրա՝ իշխանությունից հեռանալուց հետո վերացվեցին տնտեսական խորհուրդները, և վերականգնվեց տնտեսական նախարարությունների համակարգը: Սակայն տնտեսության մեջ դեռևս կային խնդիրներ, որոնք պիտի լուծեր երկրի նոր ղեկավարությունը:

Այդ ժամանակ քննարկվում էին երկու մրցակցող նախագծեր, որոնք նպատակ ունեին խթանել տնտեսական զարգացման գործընթացը: Դրանցից մեկի շրջանակում առաջարկվում էր ստեղծել համապետական տնտեսական կառավարման ավտոմատացված համակարգ (ՀԱՏԿՀ)՝ հաշվողական կենտրոնների ցանց, որը պիտի գործեր յուրաքանչյուր ձեռնարկությունում և գերատեսչությունում: Համակարգը նախատեսված էր կենտրոնացնել Պետական պլանավորման կոմիտեում, ինչը, ըստ հայեցակարգի հեղինակների, հնարավորություն էր տալու կիրառել համակարգչային տեխնիկա՝ զգալիորեն բարձրացնելու պլանային տնտեսության արդյունավետությունը:

Մյուս կողմից, Ա.Ն. Կոսիգինը առաջարկում էր տնտեսական աճի տեմպերի աբագացում՝ այսպես կոչված «նեո-ՆԷՊ»-ի միջոցով՝ ձեռնարկությունների անկախության զգալի ընդլայնմամբ, հաշվետվությունների կրճատմամբ և պարզեցմամբ, և ամենակարևորը՝ տնտհաշվարկի համատարած ներդրմամբ: Կառավարության ղեկավարի կարծիքով՝ տնտեսական քաղաքականության կենտրոնում պետք է լինեին ոչ թե համախառն արտադրանքի պլանային ցուցանիշները, այլ «շահույթ» և «շահութաբերություն» հասկացությունները: Կոսիգինի առաջարկները չէին հակասում պլանային տնտեսության հիմնական սկզբունքներին. դրանք նախատեսում էին գործող տնտեսական մեխանիզմի արդիականացում՝ ներքին արդյունավետության բարձրացման նպատակով: Բարեփոխումների շրջանակում պլանային ցուցանիշների թիվը զգալիորեն կրճատվեց, սակայն պլանավորման սկզբունքը պահպանվեց՝ որպես խորհրդային տնտեսության հիմնասյուն:

Ինչպես 1921-ին և 1929-ին, այնպես էլ 1960-ականներին խորհրդային ղեկավարությունը կրկին կանգնած էր երկրի զարգացման ռազմավարական ուղու ընտրու-

թյան անհրաժեշտության առաջ: Սակայն 1964 թվականին կուսակցության առաջնորդները ընդունեցին թերևս ամենաանհաջող որոշումներից մեկը: Խորհրդային տնտեսության արդիականացման նպատակով առաջարկված «Տեղեկատվության հաշվառման և մշակման համապետական ավտոմատացված համակարգի» (ՕԳԱՏ) տեղակայումը այդպես էլ իրականում չսկսվեց: Ինչ վերաբերում է Կոսիգինի բարեփոխումներին, ապա դրանք մեկնարկեցին, սակայն այնքան սահմանափակ ձևով, որ դրանց ազդեցությունը խորհրդային տնտեսության վրա արագ մարեց:

1960-ական թվականների առաջին կեսին տնտեսական խորհուրդների համակարգի արդյունավետության անկման և ընդհանուր լճացման ֆոնին խորհրդային տնտեսության համախառն սոցիալական արդյունքի տարեկան միջին աճի տեմպը կազմել է 6,5 %: Տասնամյակի երկրորդ կեսին 1965 թվականին մեկնարկած տնտեսական բարեփոխումների շնորհիվ այդ ցուցանիշը հասավ 7,4 %-ի: Սակայն բարեփոխումների շրջանակում ինքնաֆինանսավորման մեխանիզմների աստիճանական սահմանափակումը և դրանց տարածման կրճատումը հանգեցրին նրան, որ 1970-ականների առաջին կեսին աճի տեմպը կրկին նվազեց՝ հասնելով շուրջ 6,4 %-ի: Բարեփոխումների սահմանափակման և հետընթացի հիմնական պատճառը ոչ թե պատահական կամ արտաքին գործոնների արդյունք էր, այլ խորհրդային տնտեսական նոմենկլատուրայի մեծ մասի լուռ դիմադրության հետևանք:

Կոսիգինի ծրագրով նախատեսվում էր, որ գործարանների խորհուրդները ինքնաֆինանսավորման շրջանակներում կարող էին փոխել արտադրվող արտադրանքի տեսականին՝ ընտրելով սպառողների շրջանում առավել պահանջարկ ունեցող ապրանքները: Սակայն գործնականում այս մեխանիզմի իրականացումը բախվում էր լրջագույն խոչընդոտների: Արտադրական գծի կանգնեցումը, սարքավորումների վերածրագրավորումը, ինչպես նաև նոր բաղադրիչների ձեռքբերումը պահանջում էին երկարատև համակարգային փոխգործակցություն մի շարք գերատեսչությունների հետ: Պետական պլանավորման կոմիտեն (Գոսպլանը) և կարգավորող այլ մարմինները հումքի, կիսապատրաստ նյութերի և տեխնոլոգիական բաղադրիչների մատակարարումն իրականացնում էին բացառապես հնգամյա պլանով նախապես հաստատված ծավալներով: Նման պայմաններում ձեռնարկության կողմից ճկունություն ցուցաբերելն անիրագործելի էր: Ավելին, ԽՍՀՄ-ում գործող նախադեպային գնագոյացման համակարգի պայմաններում «շահույթ» և «շահութաբերություն» կատեգորիաներն ունեցել են ձևական և պայմանական բնույթ: Չնայած Կոսիգինը հույս ուներ, որ տնտհաշվարկի պայմաններում շահույթի հաշվին ձեռնարկությունները կարող էին ներդրումներ կատարել սոցիալական



Ա.Ն. Կոսիգին

ոլորտում՝ կառուցելով մանկապարտեզներ, գերատեսչական բնակարաններ, հանգստյան տներ և այլ ենթակառուցվածքներ: Սակայն պլանային տնտեսության պայմաններում միայն հաշվի վրա ֆինանսներ ունենալը բավարար չէր. պահանջվում էր, որ Պետական պլանավորման կոմիտեն հատկացներ «հիմնապաշարներ» («фондируемые ресурсы»)՝ փայտանյութ, աղյուս, ցեմենտ և այլն:

Միևնույն ժամանակ Կոսիգինի բարեփոխումների շրջանակներում ուշադրությունից դուրս մնաց պլանավորված, բայց եկամտաբերություն չունեցող ձեռնարկությունների (այդպիսիները քիչ չէին) ճակատագրի հարցը, որոնց համար գրեթե անհնար էր իրականացնել շահութաբեր արտադրություն՝ հատկապես նոր տնտեսական մեխանիզմների պայմաններում: Այսպիսով, խորհրդային արտադրական ղեկավարությանը՝ գործարանների տնօրեններին և տնտեսական խորհուրդների համակարգին, հանձնարարվեց լուծել վերակազմակերպման հետ կապված մի շարք բարդ խնդիրներ, բայց իրական արդյունքը ամենևին երաշխավորված չէր, նույնիսկ եթե բոլոր դժվարությունները հաջողությամբ հաղթահարվեին: Շատ ավելի դյուրին էր աշխատել նախորդ եղանակով՝ պարզապես իրականացնել հաստատված պլանը և հաշվետվություն ներկայացնել համախառն արտադրանքի ցուցանիշների հիման վրա: Ըստ այդմ, նոմենկլատուրայի աշխատողների մեծամասնությունը բացասաբար էր տրամադրված Նախարարների խորհրդի ղեկավարի առաջարկներին: Արդյունքում Կոսիգինի բարեփոխումը 1970-ականների սկզբին կտրուկ սահմանափակվեց: Սակայն դա չէր նշանակում, թե երկրի տնտեսական զարգացումը կանգ էր առել: 1970-ականներին ԽՍՀՄ-ում սկսեցին գործել մի շարք խոշոր արդյունաբերական համալիրներ, ինչպիսիք էին Վոլժսկու ավտոմոբիլային (ՎԱԶ, Տոլյատի), Կամայի ավտոմոբիլային (ԿԱՄԱԶ, Նաբերեժնիե Չելնի), Վոլգոդոնսկի ծանր մեքենաշինական գործարանները (Ատոմմաշ) և ուրիշները: 1974 թվականից մեկնարկեց նաև Բայկալ–Ամուրյան մայրուղու (ԲԱՄ) կառուցումը, որը, կոչված լինելով խթանել Հեռավոր Արևելքի տնտեսական զարգացումը, ռազմավարական հատուկ նշանակություն ուներ: Սակայն 1970-ականների երկրորդ կեսից սկսած՝ ԽՍՀՄ-ի տնտեսության աճի տեմպերը սկսեցին տարեցտարի նվազել:

«Պայմանագրային» տնտեսություն: Խորհրդային վերնախավի վերածննդի գործընթացները, որոնք սկսվել էին դեռևս 1950-ականների երկրորդ կեսին, 1970-ականներին հասան նոր, ինստիտուցիոնալ մակարդակի: ԽՄԿԿ ներքին կյանքում տեղի ունեցող իշխանական վերադասավորումները, հատկապես նոմենկլատուրայի շրջանակներում, էական ազդեցություն ունեցան խորհրդային համակարգի ողջ կառուցվածքի վրա: 1950-ականների կեսերին Ն. Խրուշչովը, առաջնորդության համար մղվող պայքարում հենվելով կուսակցական նոմենկլատուրայի աջակցության վրա, իրականում «կոտրեց» Ստալինի օրոք հաստատված ղեկավարության փոխատեղման (ռոտացիայի) համակարգը: Լ. Բրեժնևը և նրա կողմնակիցները ստիպված եղան նորից բանակցել նոմենկլատուրայի աշխատողների մեծ մասի հետ՝ որդեգրելով փոխզիջման քաղաքականություն: Շեշտը դրվեց հատկապես տարածաշրջանային կուսակցական ղեկավարների համաձայնության վրա. վերջիններս հայտարարում էին իրենց հավա-

տարմությունը Կենտրոնական կոմիտեին և ցուցաբերում քաղաքական աջակցություն, իսկ դրա դիմաց ստանում էին հարաբերական ինքնավարություն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում: Այս համաձայնությունը հանգեցրեց արդյունաբերական ճյուղերի և վարչատարածքային միավորների ղեկավարների ձևավորմանը, որոնք գործնականում դարձան անփոխարինելի և ամրագրվեցին պաշտոններում տարիներով կամ նույնիսկ տասնամյակներով: Այս երևույթի ամենահստակ օրինակներից են Պավել Բեշչևը, որը 29 տարի (1948–1977) ղեկավարել է ԽՍՀՄ-ի երկաթուղային հաղորդակցության ուղիների նախարարությունը, և Շարաֆ Ռաշիդովը, որը 24 տարի (1959–1983) եղել է Ուզբեկստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի առաջին քարտուղարը:

Այս շրջանի ղեկավարներն ու պաշտոնյաները ձեռք էին բերել հսկայական ազդեցություն և գրեթե ինքնավար կարգավիճակ իրենց գործունեության ոլորտում: Նախարարների խորհուրդը, Պետական պլանավորման կոմիտեն և երկրի տնտեսական կառավարման այլ մարմիններ հրահանգներ տվող մարմիններից աստիճանաբար վերածվեցին խորհրդատվական և արբիտրաժային մարմինների: Նրանցից պահանջվում էր մի կողմից՝ «համոզել» ճյուղային ու տարածքային ղեկավարներին՝ համագործակցելու ի շահ ամբողջ պետության, մյուս կողմից՝ համակարգել և հավասարակշռել տարբեր գերատեսչությունների և մարզերի շահերը՝ համապետական նշանակության խնդիրների լուծման համար: Եթե 1930–1950-ականներին Կառավարությունը և Պետական պլանավորման կոմիտեն իրականացնում էին համապարփակ վերահսկողություն՝ պարտադրելով և հետևելով հրահանգների կատարմանը, ապա 1970–1980-ականներին պետության կենտրոնական կառույցները հիմնականում զբաղված էին համաձայնեցման, հավասարակշռման և կողմերի միջև միջնորդության գործառույթներով: Տնտեսական կառավարման արդյունավետությունը սկսեց հիմնվել ոչ այնքան պաշտոնական կարգապահության, որքան փոխհարաբերությունների դիվանագիտության և անձնական ազդեցության վրա: Հենց այս համակարգային տեղաշարժի պատճառով էլ 1970–1980-ականների խորհրդային տնտեսությունը հաճախ բնորոշվում է որպես «պայմանագրային տնտեսություն»՝ ի հակադրություն նախորդ փուլերի կենտրոնացված և պլանավորված մոդելի:

Վառելիքաէներգետիկ և ռազմարդյունաբերական համալիրների աճող կարևորությունը: Երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակի վրա էական ազդեցություն ունեցան արտաքին տնտեսական գործոնները: 1970-ականների սկզբից ԽՍՀՄ-ը սկսեց ակտիվորեն զարգացնել Արևմտյան Սիբիրի նավթային հանքավայրերը: 1973 թվականին նավթային համաշխարհային ճգնաժամի արդյունքում նավթի միջազգային գները մի քանի անգամ բարձրացան: Այս զարգացումները խորհրդային քաղաքական վերնախավում հանգեցրին այն տրամաբանության արմատավորմանը, որ տնտեսության կառուցվածքային բարեփոխումները ժամանակավրեպ կամ նույնիսկ անիմաստ էին: Նավթի արտահանման հաշվին ստացված եկամուտներով ԽՍՀՄ-ը կարողացավ դրսից ձեռք բերել արդիական տեխնոլոգիաներ, սարքավորումներ, սպառողական ապրանքներ և նույնիսկ սննդամթերք: Սա թույլ տվեց առերևույթ

պահպանել ներքին սոցիալական կայունությունը՝ բնակչության համար ապահովելով սպառման բավարար մակարդակ և տեխնիկական վերազինում արդյունաբերության մեջ: Այս պայմաններում կենտրոնական իշխանությունը շահագրգիռ չէր վարչական կառուցվածքի կամ կառավարման մեխանիզմների էական փոփոխություն կատարելու: Տարածաշրջանային և ճյուղային ղեկավարների լիազորությունները պահպանվում էին, իսկ հաստատված կարգը առերևույթ իրեն արդարացնում էր՝ առանց հիմնարար բարեփոխումների: Այսպես, ԽՍՀՄ տնտեսության մեջ սկսեց գերակշռել վառելիքաէներգետիկ համալիրը (ՏԷԿ), որը դարձավ ազգային տնտեսության հիմնարար սյուներից մեկը: Սակայն զուգահեռաբար սկսեցին դանդաղել տնտեսական աճի տեմպերը: Տեսանելիորեն այս դանդաղեցումը սկզբում աննկատ էր և անհանգստություն չառաջացրեց վերնախավի մոտ:

1970-ական թվականներին խորհրդային արդյունաբերության գերակա ճյուղը շարունակում էր մնալ պաշտպանական արտադրությունը, որի հիմքի վրա ձևավորվեց ռազմարդյունաբերական լիարժեք համալիր (ՌՈՒԿ)՝ որպես տնտեսության առանցքային բաղադրիչ: Մի կողմից՝ ռազմարդյունաբերական համալիրի նպատակային և համակարգված ջանքերի շնորհիվ Խորհրդային Միությանը հաջողվեց միջուկային հրթիռային հավասարության հասնել Միացյալ Նահանգների հետ: ԽՍՀՄ-ի ուժեղացված պաշտպանական հզորությունը հարկադրեց ամերիկյան վերնախավին միջազգային լարվածությունը թուլացնելու ուղիներ փնտրել: Սակայն, մյուս կողմից, ռազմարդյունաբերական համալիրում մեծածավալ ռեսուրսների շարունակական ներդրումը չվերացրեց Խորհրդային տնտեսության «Ա» և «Բ» արդյունաբերական խմբերի միջև 1930-ական թվականներից զարգացած անհավասարակշռությունը: Սպառողական ապրանքների արտադրությունը շարունակվել է ֆինանսավորվել հիմնականում մնացորդային սկզբունքով՝ նախապատվությունը տալով ռազմարդյունաբերական և արդյունաբերական այլ առաջնահերթ ճյուղերին:

Բացի այդ, ԽՍՀՄ-ում ձևավորված տնտեսական համակարգը նախ և առաջ ուղղված էր ավանդական արտադրանքի զանգվածային արտադրության ապահովմանը: Իրոք, ածուխի, նավթի, հանքաքարի արդյունահանման, պողպատի ձուլման և նմանատիպ այլ կարևոր ցուցանիշներով ԽՍՀՄ-ի դիրքերը համաշխարհային տնտեսությունում բավական ամուր էին: Սակայն խնդիրն այն էր, որ 1960-ական թվականներից արևմտյան երկրները սկսեցին կառուցել հետարդյունաբերական տնտեսություններ, որոնցում առաջնային դերը ստանձնեցին բարձր տեխնոլոգիական արտադրանքն ու մոդելային տեսականու նորարարությունները: Աստիճանաբար օրինաչափ դարձավ այն, որ մոդելի հնացած լինելը՝ «մոդայից դուրս գալը», ավելի արագ էր գերազանցում ռեսուրսի ֆիզիկական սպառումը (վերանորոգումը իմաստ չունի, ավելի էժան է դեն նետել այն և նորը գնել): Ձևավորվող «սպառողական հասարակությունը» հանգեցրեց այնպիսի տնտեսության սկզբնավորմանը, որում առանձնահատուկ նշանակություն ձեռք բերեցին ոչ թե սպառողական հատկությունները, այլ գովազդը, արտադրանքի ձևավորումը, ապա և «բրենդը»: Հայտնի արտադրողի «պիտակով» ապրանքը ավտոմատ կերպով ստանում էր լրացուցիչ արժեք, ինչը խորհրդային տնտե-

սագետների մի զգալի մասին անհեթեթ էր թվում: Աշխարհաքաղաքական և տնտեսական նոր պայմաններում խորհրդային տնտեսական մոդելը սկսեց պարտվել ոչ այնքան քանակական, որքան որակական ցուցանիշներով:

§ 93. Խորհրդային հասարակությունը «զարգացած սոցիալիզմի» ժամանակաշրջանում

Փոփոխություններ քաղաքական դաշտում: ԽՍՀՄ-ում բարձր ղեկավարության կողմից արմատական բարեփոխումների մերժումը (թե՛ «Տեղեկատվության հաշվառման և մշակման համապետական ավտոմատացված համակարգի» նախագծի, թե՛ Ա.Ն. Կոսիգինի առաջարկների ձևաչափով) վկայում էր խորհրդային վերնախավի էական այլասերման մասին: Գործող համակարգը հարմարեցված էր խորհրդային նոմենկլատուրայի ներկայացուցիչների շահերին: Նրանք տեղյակ էին «խաղի կանոններին» ու սահմանափակումներին և զբաղեցնում էին հրամանատարական բարձր պաշտոններ: Լայնածավալ բարեփոխումները, անկախ ձևաչափից, սպառնում էին խարխլել այդ կանոնները և բարձր պաշտոններ տալ այլ անձանց:

Զարգացման տեմպերի դանդաղումը և Արևմուտքից հետ մնալու խնդիրները հաճախ դիտվում էին որպես վերացական տեսություններ: ԽՍՀՄ-ի բարձրագույն ղեկավարությունը երկրի ապագա զարգացման հեռանկարների փոխարեն ընտրեց սեփական հարմարավետ գոյության՝ «այստեղ և հիմա» երաշխիքները: Էական բարեփոխումներից հրաժարվելը, որոնք պետք է ծառայեին երկրի արդիականացմանը, կանխորոշեց 1980-ականների երկրորդ կեսի քաղաքական իրադարձությունների ընթացքը:

1967 թվականին Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին նվիրված զեկույցում Բրեժնևն առաջին անգամ հրապարակավ ներկայացրեց «զարգացած սոցիալիզմ» հասկացությունը: Այս հայեցակարգը հնարավորություն ընձեռեց մինչև 1980-ականները միտումնավոր չանդրադառնալ կոմունիզմի կառուցման վերաբերյալ դեռևս չլուծված և ոչ տեղին հարցերին: Ենթադրվում էր, որ «զարգացած սոցիալիզմը» հեռավոր ապագայում կվերածվի կոմունիզմի: Այս մոտեցման շրջանակներում 1977 թվականին ընդունվեց ԽՍՀՄ նոր Սահմանադրությունը, որը 1936 թվականի Սահմանադրության համեմատ քաղաքացիներին ընձեռում էր ավելի շատ իրավունքներ: Օրինակ, 45-րդ հոդվածում հռչակվում էր քաղաքացիների անվճար կրթության և դասագրքեր ստանալու իրավունքը, ինչը նշանակալի առաջընթաց էր խորհրդային հասարակության համար: Սակայն Սահմանադրությամբ պաշտոնապես երաշխավորված մի շարք իրավունքներ միայն հռչակագրերի և բարի ցանկությունների տիրույթում էին մնացել: 44-րդ հոդվածում նշվում էր, որ քաղաքացիներն ունեն բնակարան ունենալու իրավունք, սակայն իրականում նրանք ունեին միայն բնակարանի համար հերթագրվելու իրավունք, իսկ դա կարող էր տևել տասնամյակներ:

Կառավարման նոմենկլատուրային սկզբունքը, որը ձևավորվել էր դեռևս 1930-ական թվականներին, անփոփոխ մնաց նաև 1977 թվականից հետո: Նոր Սահմանա-

դրության 6-րդ հոդվածով օրենսդրորեն ամրագրվեց ԽՄԿԿ-ի ղեկավար դերը խորհրդային հասարակության կյանքում:

1982 թվականին՝ Բրեժնևի մահից հետո, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղարի պաշտոնը (իրականում ԽՍՀՄ ղեկավարի) ստանձնեց Յու.Վ. Անդրոպովը: 1984 թվականին՝ Անդրոպովի մահից հետո, նրան փոխարինեց Կ.Ու. Չեռնենկոն: Այս ղեկավարները փորձեցին իրականացնել որոշ մասնավոր բարեփոխումներ՝ գիտական և տեխնոլոգիական զարգացումն արագացնելու և արտադրություն ներմուծելու, կոռուպցիայի դեմ պայքարի և աշխատանքային կարգապահության ամրապնդման ոլորտում: Սակայն այս միջոցները չեն ազդել հասարակության հիմնական սկզբունքների վրա, որոնք ձևավորվել էին նախորդ տարիներին:

Բարեկեցության աճ և «ստվերային տնտեսություն»: Որոշակի փոփոխություններ տեղի ունեցան նաև հասարակության լայն շերտերում: 1970-1980-ական թվականները խորհրդային ժամանակաշրջանում համարվում են սոցիալական և նյութական բարեկեցության գագաթնակետ: Խրուշչովյան բազմաբնակարան շենքերը սկսեցին փոխարինվել բարելավված հատակագծերով բազմահարկ շինություններով: Ավտոմոբիլային արդյունաբերության արագ զարգացումը անձնական ավտոմեքենան դարձրեց սովորական երևույթ՝ նախկինում շքեղության խորհրդանիշ համարվող մեքենաների փոխարեն: Խորհրդային բնակարաններում սովորական դարձան հեռուստացույցները, սառնարանները և լվացքի մեքենաները, որոնք մեկ տասնամյակ առաջ համարվում էին բացառիկ և հասանելի միայն ընտրյալներին: 1970-ականներին սկսվեց նաև այգեգործական հողամասերի զանգվածային բաշխումը քաղաքացիներին, ինչի արդյունքում գյուղական տունը նույնպես դադարեց դիտվել բացառիկության դրսևորում:

Սակայն, որքան էլ զարմանալի թվա, խորհրդային քաղաքացիների՝ կենսամակարդակից դժգոհությունը ոչ միայն չնվազեց, այլև աստիճանաբար աճեց: 1930-ականներին և դրանից հետո՝ համընդգրկուն պակասուրդի պայմաններում, երկրի առաջ խնդիր էր դրված բնակչությանը բավարար սննդամթերքով և արդյունաբերական ապրանքներով ապահովել: Որակի և դիզայնի հետևից ընկնելու ժամանակ և հնարավորություն չկային, և նման պահանջներ չէին էլ շոշափվում: Սակայն 1970-1980-ական թվականներին մարդիկ ցանկանում էին գնել ոչ թե պարզապես հագուստ, սպասք կամ կենցաղային տեխնիկա, այլ որակյալ և նորաձև արտադրանք: Մինչդեռ արդյունաբերական համակարգը կառուցված էր ընդունված մոդելների և նմուշների լայնածավալ ու երկարաժամկետ արտադրության տրամաբանությամբ: Որակի բարելավումը և արտադրանքի տեսականու հաճախակի արդիականացումը չէին դիտարկվում որպես առաջնահերթություն: Ավելին, 1980-ականների սկզբին նկատվում էր շատ ապրանքների պակաս՝ անկախ դրանց որակական հատկանիշներից: Քանի որ պետական առևտրի գները պահ-



«Ժիգուլի» մեքենաների հանձնում առաջատար անասնաբույծներին: Օմսկի մարզ

պանվում էին կայուն մակարդակի վրա, ինչը ԽՍՀՄ ղեկավարության համար ուներ քաղաքական կարևորություն, աշխատավարձերի աճի համապատկերին երկրում սկսեց ի հայտ գալ թաքնված գնաճ: Բնակչության ձեռքում կուտակվում էին ֆինանսական միջոցներ, սակայն մանրածախ առևտրում ապրանքների պակասը գնալով ավելի ակնհայտ էր դառնում: Այլ կերպ ասած՝ մարդիկ փող ունեին, բայց խանութներում ապրանք չկար:

Առաջ եկավ «ցեխավիկների» (արտադրամասի տերեր)՝ խորհրդային անազնիվ ծառայողների բացառիկության ֆենոմենը: Նրանք, օգտագործելով կասկածելի, իսկ երբեմն բացահայտ հանցավոր սխեմաներ, պետական սարքավորումներով և հումքով արտադրում էին շուկայում չհաշվառված ապրանքներ: «Ցեխավիկներին» աջակցում էին նաև «ֆարցովշչիկները» (վերավաճառողները), որոնք մասնագիտացած էին արտասահմանյան ապրանքների ոչ օրինական վերավաճառքի մեջ: Ապրանքների պակասից օգուտ քաղեցին նաև առևտրի որոշ աշխատակիցներ, որոնք իրենց պաշտոնական դիրքի բերումով կարող էին հնարավորություն ընձեռել գնելու ապրանքներ, որոնք առկա չէին խանութների վաճառասեղաններում: Ձևավորվեց «ստվերային տնտեսությունը»:

Ռազմական գործողությունները, որոնք Միացյալ Նահանգները և ՆԱՏՕ-ի նրա դաշնակիցները իրականացրին XXI դարի առաջին երկու տասնամյակներում, ուղեկցվեցին միջազգային իրավունքի կոպիտ խախտումներով, ինչը հանգեցրեց քաղաքացիական բնակչության մեջ մեծաքանակ զոհերի և հումանիտար աղետների: Բոլոր դեպքերում արևմտյան երկրների գործողություններն ուղղված էին օրինական իշխանության բռնի տապալմանը՝ մարդու իրավունքները հարգելու և ժողովրդավարական ինստիտուտները զարգացնելու պատրվակով: Սակայն բոլոր դեպքերում այն երկրներում, որտեղ միջամտություններ էին եղել, ռազմական գործողություններից հետո կենսամակարդակն ու կյանքի որակը կտրուկ անկում ապրեցին:

Արևմուտքի համաշխարհային գերիշխանության ճգնաժամը: XX դարի վերջին զարգացող երկրների և ամենազարգացած երկրների միջև անջրպետի նվազման միտում սկսեց ի հայտ գալ: Արևմտյան երկրներում տնտեսության և ժողովրդագրության ոլորտում լուրջ դժվարություններ սկսեցին նկատվել, իսկ սոցիալական պարտավորություններից՝ ուղղված տնտեսական աճին և բարգավաճմանը, աստիճանաբար հրաժարվեցին:

Միևնույն ժամանակ աշխարհի այլ տարածաշրջաններում ուժային նոր կենտրոններ սկսեցին հայտնվել՝ տնտեսական աճի բարձր տեմպերով և քաղաքական, սոցիալական, հոգևոր կյանքի սեփական արժեքներով ու ավանդույթներով՝ հաճախ չհամընկնելով արևմտյան գաղափարների հետ: XXI դարի սկզբին սրվեց Արևմուտքի համաշխարհային գերիշխանության ճգնաժամը:

Չինաստանն այս հարյուրամյակում աշխարհի խոշորագույն երկրների թվում ցույց է տվել տնտեսական աճի ամենաբարձր տեմպերը՝ այս ցուցանիշով մրցակցելով միայն Հնդկաստանի հետ: Բնակչության եկամուտների մակարդակն աճում է արագ տեմպերով: Այսօր Չինաստանը ոչ միայն մեծաքանակ սպառողական ապրանքներ արտադրող երկիր է, այլև տիեզերական արդյունաբերության, նորարարական արդյունաբերության և արհեստական ինտելեկտի համաշխարհային առաջատարներից մեկը:

Հնդկաստանը, եթե շարունակի ներկայիս միտումները, առաջիկա մի քանի տասնամյակների ընթացքում կդառնա աշխարհի ամենաբնակեցված երկիրը: 2022 թվականի վերջին, ըստ Համաշխարհային բանկի, այն աշխարհի երրորդ խոշորագույն տնտեսությունն էր՝ զգալիորեն առաջ անցնելով եվրոպական բոլոր երկրներից, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայից, որի գաղութն էր եղել երկար ժամանակ:

Հարավարևելյան Ասիան XXI դարում համաշխարհային տնտեսության շարժիչ ուժն է: Տարածաշրջանում իրական եկամուտներն աճում են միջինը 5%-ով, իսկ աղքատության մակարդակը արագորեն նվազում է:

Ակտիվորեն զարգանում է նաև Լատինական Ամերիկան, որտեղ մի շարք երկրներ, առաջին հերթին՝ Բրազիլիան, աստիճանաբար դառնում են ուժի նոր կենտրոններ և համաշխարհային տնտեսական զարգացման շարժիչ: Անցյալ դարի վերջին և այս դարասկզբին Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում իշխանության եկան ձախ քաղաքական գործիչներ (այսպես կոչված «ձախ շրջադարձ»)՝ հանդես գալով սոցիալական ամենահրատապ խնդիրների լուծումների օգտին: Վենեսուելայում Ուգո Չավեսի, Բոլիվիայում Է. Մորալեսի, Էկվադորում Ռ. Կորրեայի և Նիկարագուայում Դ. Օրտեգայի կառավարությունները հայտարարեցին «XXI դարի սոցիալիզմի» կառուցման մասին:

Արագացված տեմպերով է զարգանում նաև Աֆրիկյան մայրցամաքը, որտեղ երկրների մեծ մասը աստիճանաբար հաղթահարում է հիպերինֆլյացիան և բյուջեի զգալի պակասուրդը: Աֆրիկյան երկրներում բժշկության և կրթության մակարդակը անշեղորեն բարելավվում է, իսկ կյանքի տևողությունը՝ աճում: Աֆրիկայի տնտեսական և ժողովրդագրական ներուժը ցույց է տալիս, որ XXI դարում նրա դերը համաշխարհային տնտեսության և քաղաքականության մեջ անշեղորեն կբարձրանա:

Այս ֆոնին արևմտյան երկրները, որոնք թուլացել են մի շարք ֆինանսական ճգնաժամերից, ինչպես նաև կանոնավոր դրամական միջոցների թողարկման անհրաժեշտության (օրինակ՝ 2020 թվականին կորոնավիրուսի համաճարակի ժամանակ) և միգրացիոն ճգնաժամերի պատճառով, սկսում են զիջել դիրքերը այլ տարածաշրջաններին:

Բազմաբևեռությունը կրում է ոչ միայն տնտեսական կամ աշխարհաքաղաքական, այլև քաղաքակրթական բնույթ: Նոր կենտրոնները, ինչպիսիք են Հնդկաստանը, Իրանը, Չինաստանը, Ռուսաստանը, Թուրքիան, Հարավային Աֆրիկան և ուրիշներ, ունեն Արևմուտքից տարբերվող մշակութային և քաղաքակրթական բնույթ և տարբեր կերպ են ընկալում մարդկային կյանքի հիմնարար կողմերը:

Ինտեգրման միտումները: Եվրոպական ինտեգրման գործընթացը XX դարի վերջին և XXI դարի սկզբին հասավ նոր մակարդակի: 1992 թվականին Մաստրիխտի պայմանագրի (Նիդեռլանդներ) ստորագրումը հանգեցրեց Եվրամիության (ԵՄ) ստեղծմանը: ԵՄ-ի հետագա լայնածավալ ընդլայնումը Արևելյան Եվրոպայի երկրների, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունների (Լատվիա, Լիտվա, Էստոնիա) ընդգրկմամբ հանգեցրեց ուժերի և շահերի հաստատված հավասարակշռության վերափոխմանը և Եվրոպայում արևելաեվրոպական բաղադրիչի ամրապնդմանը, ինչն իր հերթին հանգեցրեց ԵՄ-ի վրա ԱՄՆ ազդեցության աճին և վերպետական մարմինների դիրքերի ամրապնդմանը՝ ի վնաս համակեցության մեջ ընդգրկված երկրների ազգային ինքնիշխանության:

Բացի եվրաինտեգրման ընդլայնումից, կա նաև հակառակ գործընթացի օրինակ. 2016 թվականին՝ հանրաքվեի ժամանակ, բրիտանացիների 51,9 %-ը կողմ քվեարկեցին ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալուն: Հանրաքվեի արդյունքը բացատրվում է նրանով, որ բրիտանացիների մի զգալի մասը սոցիալ-տնտեսական խնդիրները (գործազրկություն, ցածր աշխատավարձ, հանցավորության աճ) կապում էին

Արևելյան Եվրոպայից, առաջին հերթին Լեհաստանից եկած միգրանտների մեծ թվի հետ: Բացի այդ, բրիտանացիներն ավանդաբար կարծում էին, որ երկիրը ԵՄ-ի բյուջեին տալիս է շատ ավելին, քան ստանում է Բրյուսելից: Իր դերը խաղաց նաև ժամանակակից Եվրամիության՝ հասարակ քաղաքացիների համար անհասկանալի ինստիտուցիոնալ շատ բարդ կառուցվածքը:

Ինտեգրացիոն գործընթացներն ակտիվորեն զարգանում են նաև աշխարհի այլ տարածաշրջաններում: 2006 թվականին ստեղծվել է БРИКС-ը, որի կազմի մեջ մտնում են Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը, 2011 թվականից՝ Հարավային Աֆրիկան: 2023 թվականին այս կազմակերպությանն անդամակցելու մասին հայտարարեցին Արգենտինան, Եգիպտոսը, Իրանը, Եթովպիան, ԱՄԷ-ն և Սաուդյան Արաբիան: БРИКС-ը դարձել է աշխարհի խոշորագույն միջպետական ասոցիացիաներից մեկը: Այն իր նոր անդամների հետ վերահսկում է ցամաքի մոտավորապես 32 %-ը, որտեղ բնակվում է աշխարհի բնակչության 45 %-ը: Նրան բաժին է ընկնում նավթի համաշխարհային պաշարների 45 %-ը:

Շարունակում է զարգանալ Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), որը ներառում է Ռուսաստանը, Հայաստանը, Բելառուսը, Ղազախստանը և Ղրղզստանը: ԵԱՏՄ-ի շրջանակներում ստեղծվել է մաքսային միություն՝ նպաստելով անդամ երկրների հետագա տնտեսական ինտեգրմանը: Աշխարհի ամենաներկայացուցչական և հեռանկարային միջպետական ասոցիացիաներից մեկը Շանհայի համագործակցության կազմակերպությունն է (ՇՀԿ), որն ստեղծվել է 2001 թվականին: 2024 թվականին այն ներառում էր Ռուսաստանը, Հնդկաստանը, Իրանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Չինաստանը, Պակիստանը և Տաջիկստանը: Անկախ Պետությունների համագործակցությունը նույնպես շարունակում է կարևոր դեր խաղալ Եվրասիական տարածքում:



БРИКС անդամ-պետությունների առաջնորդներ՝
Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ Սի Ցզինպին,
Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ.Վ. Պուտին, Բրազիլիայի նախագահ Ժ. Բոլսոնարո,
Հնդկաստանի վարչապետ Ն. Մոդի, Հարավային Աֆրիկայի նախագահ Ս. Ռամաֆոսա:
Բրազիլիա: 2019 թ.

Հարավարևելյան Ասիայում ամենաներկայացուցչականը Հարավարևելյան Ասիայի ազգերի ասոցիացիան է (ACEAH), որը ստեղծվել է 1967 թվականին: Առաջին փուլում կազմակերպության նպատակն էր կայունացնել ռազմաքաղաքական իրավիճակը Հարավարևելյան Ասիայում: Հետագայում տարածաշրջանային ինտեգրումը նաև տնտեսական բնույթ ստացավ: 2000 թվականին ACEAH -ի անդամ յոթ երկրների մասնակցությամբ ստեղծվեց ազատ առևտրի գոտի:

Աֆրիկայում 2002 թվականին Աֆրիկյան միասնության կազմակերպության հիման վրա ստեղծվել է Աֆրիկյան միությունը: 2024 թվականին այն ներառում էր 55 երկիր: Մի շարք ինտեգրացիոն միավորումներ հայտնվեցին նաև Լատինական Ամերիկայում: Կուբայի և Վենեսուելայի նախաձեռնությամբ ստեղծվեց Բոլիվարյան դաշինքը Ամերիկայի ժողովուրդների համար (АЛБА)՝ Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների սոցիալիստական դաշինքը: Արևմտյան կիսագնդի բոլոր երկրները (բացի ԱՄՆ-ից և Կանադայից) միացել են Լատինական Ամերիկայի և Կարիբյան երկրների Համայնքին (СЕЛАК), որը հիմնադրվել է 2010 թվականին:

§ 115. Ռուսաստանի քաղաքական զարգացումը XXI դարի սկզբին

Ֆեդերալիզմի ամրապնդումը: 1992 թվականի Դաշնային պայմանագիրը հնարավորություն տվեց լայնորեն ուրվագծել դաշնային և տարածաշրջանային իշխանությունների իրավասությունների ոլորտները: Սակայն կենտրոնի և դաշնային սուբյեկտների միջև հարաբերությունները դյուրին չէին: 2000 թվականին Դաղստանի, Ինգուշեթիայի, Յակուտիայի, Սվերդլովսկի մարզի և Ստավրոպոլի երկրամասի սահմանադրություններն ու կանոնակարգերը տեղական իշխանություններին իրավունք էին տալիս կասեցնել կամ նույնիսկ չեղարկել իրենց տարածքում համառուսաստանյան օրենսդրական ակտերը: Որոշ չափով (այդ ժամանակ գոյություն ունեցող 89-ից) Ռուսաստանի Դաշնության 40 սուբյեկտներում տեղական իշխանությունների ակտերը հակասում էին դաշնային Սահմանադրությանը (տե՛ս քարտեզ թիվ 21):

2000-ականներին Ռուսաստանի ղեկավարության ներքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը տարածաշրջանային օրենսդրությունը դաշնային նորմերին համապատասխանեցնելու աշխատանքն էր: Ակնհայտ էր, որ մեկ կենտրոնից օպերատիվ կերպով դժվար է վերահսկել իրավիճակը 89 դաշնային սուբյեկտներում: Ուստի 2000 թվականի մայիսին ստեղծվեցին յոթ (հետագայում դրանց թիվը հասավ ութի) դաշնային շրջաններ: Նախագահի լիազոր ներկայացուցիչները դաշնային շրջաններում լուծում էին վերահսկողության և համակարգման խնդիրները:

Հետխորհրդային Ռուսաստանում արդյունավետ գործող քաղաքական մեխանիզմի ձևավորման մեջ կարևոր դեր խաղաց 2001 թվականի հուլիսին ընդունված «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքը, որը հնարավորություն տվեց կազմավորել երկրի քաղաքական ուժերը:

1990-ականներին մի շարք մարզերում ձևավորվել էին տեղական քաղաքական էլիտաներ, որոնք համաձայն չէին իրենց իրավասությունների նկատմամբ ոտնձգություններին և անձնական շահերը վեր էին դասում պետության շահերից: Նման էլիտաների ներուժը սահմանափակելու համար 2004 թվականին վերացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների ընտրությունները: 2012 թվականին, երբ պետականամետ շերտի ձևավորման խնդիր լուծվեց, նորից սկսեցին տեղական վարչակազմերի ղեկավարներ ընտրել: Այս միջոցառումների արդյունքում զգալիորեն բարձրացավ վարչական ապարատի արդյունավետությունը: Այս իրավիճակը փոխակերպումների ճանապարհ բացեց նաև այլ ոլորտներում:

Միջազգային ահաբեկչության դեմ պայքարը: 2000-ականների առաջին կեսին Հյուսիսային Կովկասում ահաբեկչական սպառնալիքը շարունակում էր նշանակալից գործոն մնալ Ռուսաստանի ներքին քաղաքականության մեջ: Ռազմադաշտում Ռուսաստանին հաղթելու հույսը կորցնելով՝ անջատականները, որոնց աջակցում էին օտար ծայրահեղականներ (հիմնականում վահաբիտները), դիմեցին ահաբեկչության:

2000 թվականին Վ.Վ. Պուտինը Ա.Ա.Կադիրովին նշանակեց Չեչնիայի ղեկավար: 2003 թվականին հանրապետությունում անցկացվեց հանրաքվե, որն ընդունեց Սահմանադրություն. այն համապատասխանում էր դաշնային օրենսդրությանը: 2003 թվականին Կադիրովն ընտրվեց Չեչնիայի նախագահ: 2004 թվականին նա սպանվեց. այդ հանցագործության պատասխանատվությունը ստանձնեց Շ.Ս. Բասաևը: 2002–2004 թթ. ահաբեկչական հարձակումների ալիքը տարածվեց ողջ երկրով մեկ: Ահաբեկիչները պատանդ վերցրին «Նորդ-Օստ» մյուզիքլի հանդիսատեսին (Մոսկվա, Թատերական կենտրոն Դուբրովկայում, 2002 թվականի հոկտեմբերի 23–26): Պայթյուններ տեղի ունեցան Կրիլյա ռոք փառատոնում (Մոսկվա, Տուշինո օդանավակայան, 2003 թվականի հուլիսի 5), Կիսլովոդսկ-Միներալնիե Վոդի գնացքում (2003 թվականի սեպտեմբերի 3 և դեկտեմբերի 5), Մոսկվայի մետրոյում (2004 թվականի փետրվարի 6 և 2004 թվականի օգոստոսի 31), Սամարայի շուկայում (2004 թվականի հունիսի 4), ինքնաթիռներում (2004 թվականի օգոստոսի 24) և այլն: Ամենաաղաղակիչ վայրագությունը 2004 թվականի սեպտեմբերի 1-ին Բեսլանի դպրոցի գրավումն էր, որի ժամանակ զոհվեց 333 մարդ, այդ թվում՝ 186 երեխա:

Չնայած Արևմուտքի և լիբերալ հասարակության ճնշմանը, որը հանդես էր գալիս միջազգային ահաբեկիչներին զիջումների օգտին, Ռուսաստանի ղեկավարությունը շարունակեց պայքարել ահաբեկչական սպառնալիքի դեմ: 2002 թվականին Չեչնիայում սպանվեց օտարերկրյա վահաբականների առաջնորդ Խաթաբը, իսկ 2004 թվականին՝ նրա իրավահաջորդը՝ Աբու ալ Վալիդը: 2005 թվականին սպանվեց անջատողականների «նախագահ» Ա.Ա. Մասխադովը, իսկ 2006 թվականին՝ նրա իրավահաջորդ Ա.Խ. Սադուլաևը և «փոխնախագահ» Բասաևը: Կարևոր է նշել, որ այս բոլոր գործողությունները կրել են «թիրախային» բնույթ և չեն հանգեցրել զանգվածային զոհերի: Ռուսաստանի դեմ ահաբեկչությունը մարեց, իսկ ծայրահեղականների ակտիվությունը նվազեց: Աստիճանաբար Կովկասում կյանքն սկսեց բնականոն հունի մեջ մտնել: Անջատողականների մնացած փոքր խմբերը կորցրին տեղի բնակչության

աջակցությունը և նահանջեցին դեպի սակավաբնակ լեռնային շրջաններ: Սկսվեց 1990-ականներին տուժած Գրոզնիի լայնածավալ վերականգնումը:

Մինչ օրս դրսից հրահրված ծայրահեղականները ահաբեկչական մեթոդներով փորձում են ապակայունացնել իրավիճակը տարածաշրջանում: Բայց Հյուսիսային Կովկասի բնակիչների ճնշող մեծամասնությունը միանշանակ ընտրություն է կատարել՝ հօգուտ Ռուսաստանի կազմում իրենց հանրապետությունների խաղաղ զարգացման: Այս ընտրության խորհրդանիշը դարձավ ոստիկանության լեյտենանտ Մ.Ն. Նուրբագանդովը: 2016 թվականի հուլիսին ահաբեկիչները, տեսագրելով դրվագը, փորձել են ստիպել նրան կոչ անել ոստիկանության մյուս աշխատակիցներին լքել ծառայությունը: Նայելով տեսախցիկին՝ Նուրբագանդովն ասել է իր վերջին խոսքերը՝ «Աշխատե՛ք, եղբայրներ»: Այս խոսքերը դարձել են իրավապահների ոչ պաշտոնական կարգախոսը:

Յոթբանկայնության վերջը: Չափազանց կարևոր էր կայունություն հաղորդել երկրի տնտեսական ընթացքին՝ ձերբազատվելով 1990-ականների ամենատգեղ ու գարշելի գծերից: Եվ այս ճանապարհին առաջին և գուցե ամենակարևոր քայլը դարձավ նախագահ Վ.Վ. Պուտինի կողմից բիզնեսի և Կառավարության միջև հավասար հեռավորության սկզբունքի հռչակումը: Յոթբանկայնության անդամները հեռացվեցին քաղաքական որոշումների կայացման գործընթացից: Պետությունը ցույց տվեց, որ նույնիսկ ամենահարուստ մարդկանց մեջ չեն կարող լինել անձեռնմխելիներ:

Ռազմական բարեփոխում: Ռազմական բարեփոխումը կարևոր նշանակություն ուներ, որև սկսվեց 2000 թվականին: Չեչնիայում ռազմական գործողությունների փորձը ցույց տվեց, որ բանակը վերազինման և բարեփոխումների կարիք ունի: 1990-ականներին զինվորական ծառայության հեղինակությունը հասարակության մեջ նվազել էր: Մամուլում խոսվում էր կարգապահության անկման, ոչ ծառայողական հարաբերությունների, բանակին անբավարար մատակարարումների, ամառանոցներ կառուցելու համար գեներալների կողմից զինվորների և տեխնիկայի օգտագործման մասին և այլն: Բարեփոխումը պահանջվում էր իրականացնել համապարփակ՝ փոխելով զորանոցային կարգը, հասարակության մեջ ծառայության նկատմամբ վերաբերմունքը և ռազմական միավորումների մարտունակության մակարդակը:

Բանակը ամբողջությամբ պայմանագրային ռեժիմի անցնելու մասին քննարկումը նոր թափ ստացավ. այդ փոփոխությունը պետությունից պահանջում էր զգալի ռեսուրսներ: Որոշվեց, որ անցումը պետք է տեղի ունենա աստիճանաբար: Ճիշտն ասած, պայմանագրային ծառայությունը ներդրվել էր դեռևս 1992 թվականին: 1996 թվականին Բ.Ն. Ելցինը հրամանագիր ստորագրեց, ըստ որի՝ մինչև 2000 թվականը վերացվում էր զորակոչը, և բանակը պետք է համալրվեր բացառապես պայմանագրային զինծառայողներով: Սակայն կատարել այդ ծրագրերը չհաջողվեց: Գործնականում պայմանագրային ծառայության լայնածավալ ներդրումը պահանջում էր ինչպես ֆինանսական, այնպես էլ կազմակերպչական մի շարք խնդիրների լուծում: Պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը 2004 թվականին աստիճանաբար բարձրացան, նրանց համար նահատեսված էր անվճար բուժօգնություն և արտոնյալ պայմաններ ԲՈՒՀ ընդունվելիս, շրջանառության մեջ դրվեց զինվորական հիփոթեքի մասին օրենքը:

Միաժամանակ ակտիվացել էր «դեդովշչինայի» և այլ դրսևորումների դեմ պայքարը: Սկսվել էր զինված ուժերի աստիճանական վերազինումը նորագույն զինատեսակներով, և բանակը վերադարձել էր կանոնավոր զորավարժությունների անցկացմանը: Պաշտպանության նախարարությունը ստեղծել էր զենքի և ռազմական տեխնիկայի պատվիրման միասնական համակարգ, որն ավելի պարզ և թափանցիկ էր դարձրել պաշտպանական արտադրանքի գնման գործընթացը: Այս միջոցառումներն իրականացվել են աստիճանաբար, ոչ հետևողականորեն և անմիջապես դրական արդյունքներ չեն տվել: Սակայն 2010-ականներին ռուսական բանակը զգալիորեն մեծացրել էր իր մարտունակությունը, ինչի մասին վկայում են 2008 թվականից Հարավային Օսիայում տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես նաև ռուսական բանակի գործողությունները Սիրիայում:

Ժողովրդագրական քաղաքականությունը: Մեծ նշանակություն ունեցավ ծնելիության խթանմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Դրա հիմնական տարրը մայրության կապիտալի ներդրումն էր, որը 2007 թվականից վճարվում է երեխայի ծննդյան կամ որդեգրման ժամանակ: Բացի այդ, երիտասարդ ընտանիքները սկսեցին արտոնյալ հիփոթեքային վարկեր ստանալ: Կյանքի մակարդակի ընդհանուր աճը և վերը նշված միջոցառումները հանգեցրին նրան, որ եթե 2000 թվականին Ռուսաստանում ծնվել էր 1,27 մլն երեխա, ապա 2010 թվականին գրանցվել է 1,79 մլն նորածին: 2009 թվականին 15 տարվա մեջ առաջին անգամ նկատվել է Ռուսաստանի մշտական բնակչության աճ (առանց միգրանտների հաշվառման):

Նպատակաուղղված աշխատանք է իրականացվել (առողջապահության ոլորտի ֆինանսավորում, ալկոհոլի և ծխախոտի առևտրի սահմանափակումներ, առողջ ապրելակերպի ակտիվ պրոպագանդա և այլն) հիվանդությունների նվազեցման և



Ընտանիքի, սիրո և հավատարմության օրվա տոնակատարության շրջանակներում ընտանեկան շքերթի մասնակիցները: Մոսկվա, 2023 թ., հուլիս

կյանքի տևողության բարձրացման ուղղությամբ: 2000 թվականին այդ ցուցանիշը եղել է 65,34 տարի, 2010 թվականին այն հասել է 68,94-ի, իսկ 2019 թվականին՝ 73,34 տարվա: 2020 թվականին կորոնավիրուսային համաճարակը ճշգրտումներ մտցրեց կյանքի տևողության դինամիկայում, սակայն հայրենական բժիշկներն առաջինն էին, որ մշակեցին վիրուսի դեմ լայնորեն հասանելի պատվաստանյութ, որի հետևանքով Ռուսաստանում այս հիվանդությունից մահացության մակարդակը զգալիորեն ցածր էր, քան աշխարհի շատ երկրներում:

«Պուտինական մեծամասնություն»: 2000–2020-ական թվականներին Ռուսաստանի քաղաքական զարգացումն առանց հակամարտությունների չի անցել: Սակայն փաստերը հստակ ցույց են տալիս, որ Վ. Վ. Պուտինի գլխավորած ղեկավարների թիմին հաջողվեց հասնել երկրի համաչափ զարգացման: Գործելով պրագմատիկ, վճռական և միևնույն ժամանակ հաշվի առնելով ժողովրդի կարծիքն ու պետության շահերը, խուսափելով ամպագոռգոռ խոստումներից և նախընտրելով խոսել հեռանկարների մասին՝ դրանց հասնելու հնարավորությունը հաշվարկելուց հետո Պուտինի թիմը ցույց տվեց իր արդյունավետ գործունեությունը և կարողացավ գտնել Ռուսաստանի բնակչության մեծամասնությանը հարիր ուղին:

XXI դարում Ռուսաստանի ղեկավարության վարած քաղաքականությունը ապահովել էր երկրում կայուն տնտեսական աճ: Դա իր հերթին նպաստում էր Ռուսաստանի Դաշնության նախագահի նկատմամբ սոցիալական աջակցության բարձր մակարդակին: Մի շարք քաղաքագետներ ընդգծում են քաղաքական դաշտում ձևավորված «պուտինյան մեծամասնության» մասին: Ռուսները դրականորեն գնահատեցին հանցավորության մակարդակի նվազումը, ինչպես նաև ծայրահեղականների և անջատողականների նկատմամբ ձեռք բերված հաղթանակը: Ռուսաստանի բնակչության զգալի մասը աջակցել է տնտեսական աճին և կենսամակարդակի բարձրացմանը միտված քաղաքականությանը, պետական սկզբունքների ամրապնդմանը, ազգային պատմության, մշակույթի և ավանդական արժեքների պահպանմանը, ինչպես նաև երկրի անկախ արտաքին քաղաքական կուրսին: Ահա թե ինչու մարդիկ քվեարկեցին Վ.Վ. Պուտինի օգտին. նա 2004, 2012, 2018 և 2024 թվականներին հաղթեց նախագահական ընտրություններում: 2008–2012 թթ. Ռուսաստանի Դաշնության նախագահը Դ.Ա. Մեդվեդևն էր. Վ.Վ. Պուտինը այդ ժամանակ գլխավորում էր Կառավարությունը:

§ 116. Երկրի տնտեսական զարգացումը XXI դարի սկզբին

Տնտեսական աճ ապահովելու քաղաքականությունը: Տնտեսական ոլորտում փոփոխությունները XXI դարի սկզբին նույնքան մասշտաբային էին, որքան քաղաքականության բնագավառում: Ինչպես գիտենք, հարկերից խուսափելը լայն տարածում գտավ 1990-ականներին: 2000-ականների սկզբին հարկային բեռը արմատապես կրճատվեց: Անձնական եկամտահարկը սահմանվեց 13 տոկոս: Միաժամանակ հաջողվեց հարկերից խուսափելու դեմ պայքարում բարձրացնել իրավապահ մարմինների

ջանքերի արդյունավետությունը: Արդյունքում հարկերից խուսափելու մասշտաբները զգալիորեն նվազեցին, իսկ հարկերի հավաքագրման մակարդակը կտրուկ աճեց: Սա նպաստեց բյուջեի եկամուտների աճին և հնարավորություն տվեց իրականացնել սոցիալական ծրագրեր ու ազգային նախագծեր:

XXI դարում Կառավարության աշխատանքում առաջնային դարձավ բյուջեի եկամուտների պլանավորումը՝ նախապես սահմանված ֆինանսական պահուստի հաշվառմամբ: Օրինակ՝ 2000 թվականին մեկ բարել նավթի իրական գինը կազմում էր մոտ 23-35 դոլար, սակայն բյուջեն ձևավորվել էր 18-19 դոլար գնի հիման վրա: Այս մոտեցումը ապահովում էր բյուջեի կայունությունը բորսաներում գնային տատանումների պայմաններում և երաշխավորում էր ծրագրված միջոցառումների իրականացումը: Էներգիայի գների տատանումներից բյուջեի կախվածությունը նվազեցնելու համար 2004 թվականին ստեղծվեց Կայունացման հիմնադրամը (2018 թվականից՝ Ազգային բարեկեցության հիմնադրամ), որտեղ ուղարկվում էին ածխաջրածինների վաճառքից ստացված «զատման գնից» բարձր եկամուտները (Ուրալս ապրանքանիշի նավթի մեկ բարելի դիմաց սահմանված էր 40 դոլար): Քանի որ 2000-2020-ական թվականների ընթացքում տվյալ ապրանքանիշի նավթի շուկայական գինը զգալիորեն գերազանցում էր հաշվարկային կամ «զատման գինը», դա հնարավորություն տվեց ստեղծել բյուջեի համար անհրաժեշտ ֆինանսական «անվտանգության բարձ»:

Ընդդիմադիր հրապարակախոսները 2000-ականների տնտեսական աճը բացատրում էին էներգակիրների գների բացառիկ բարենպաստ իրավիճակով: Իսկապես, այդ տասնամյակում նավթի և գազի գները բարձր են մնացել: Սակայն եթե համեմատենք Ռուսաստանի ՀՆԱ-ի աճի տեմպերը նավթ արտահանող երկրների մեծ մասի համանման ցուցանիշների հետ, ապա կարող ենք տեսնել, որ ռուսական տնտեսությունն ավելի դինամիկ է զարգացել: Սա Կառավարության տնտեսական քաղաքականության ճիշտ ուղու վկայությունն է:

Թվային տնտեսության կառուցումը: Ռուսաստանի ղեկավարությունը հատուկ ուշադրություն է դարձրել «թվային անհավասարության» դեմ պայքարին: Իրավիճակը, երբ Ռուսաստանի բնակչության միայն փոքրամասնությունն ուներ մուտք բջջային հեռախոսակապ և համացանց, մի կողմից սպառնում էր մեծացնել տեխնոլոգիական բացը արևմտյան երկրների հետ, իսկ մյուս կողմից՝ ավելացնել սոցիալական լարվածությունը: 2004 թվականին ընդունվեց «Կապի մասին» օրենքը, որը հիմնված էր տեղեկատվության և կապի ծառայություններից բոլոր քաղաքացիների հավասար հասանելիության սկզբունքի վրա՝ կապի ազգային ենթակառուցվածքների զարգացման և հեռահաղորդակցության քաղաքակիրթ շուկայի ձևավորման հիման վրա:

Այս օրենքի առանցքային դրույթներից էր համընդհանուր ծառայությունների հիմնադրամի ստեղծումը, որին օպերատորները սկսեցին փոխանցել կապի ծառայություններից ստացվող իրենց հասույթի 1,2 %-ը: Միջոցները նախատեսված էին կապի՝ սոցիալական նշանակության ծառայությունների ֆինանսավորման համար այն մարզերում, որտեղ դա տնտեսապես շահավետ չէր: 2006 թվականին օրենքում փոփոխություններ կատարվեցին, համաձայն որի՝ բջջային հեռախոսների մուտքային զանգերի

համար վճարումները վերացվում էին: Արդյունքները չուշացան: Եթե 2000 թվականին Ռուսաստանի 100 բնակչի հաշվով կար 2,3 SIM քարտ, ապա 2009 թվականին արդեն 162,5 էր: 2000-ականների վերջին Ռուսաստանը այս ցուցանիշով առաջ էր անցել ԱՄՆ-ից, Ճապոնիայից և Գերմանիայից: Բջջային կապի արժեքը այս ընթացքում նվազեց 7 անգամ և դարձավ ամենաէժաններից մեկն աշխարհում: Ռուսաստանում բջջային հեռախոսը շքեղության խորհրդանիշից դարձել էր առօրյա կյանքի ատրիբուտ:

2000-ականների երկրորդ կեսին սկսվեց ներքին բջջային կապի անցումը նախ 3G ստանդարտին, իսկ 2009 թվականից՝ 4G-ին: Այս ստանդարտների հիմքը շարժական ինտերնետի լայնաշերտ հասանելիությունն էր: 2010-ականներին Ռուսաստանում նկատելի դարձան համացանցային ծառայությունների շուկաների ինտեգրումը և բջջային ծառայությունները:

Եթե 2009 թվականին համացանցից օգտվել է 42 միլիոն մարդ, ապա 2019 թվականին օգտատերերի թիվը հասել է 95 միլիոնի, ինչի արդյունքում երկրում ձևավորվել է արդյունաբերության ցանցային ծառայությունների հսկայական ճյուղ:

Ժամանակակից երիտասարդությունը, որը չի վերապրել նախահամացանցային դարաշրջանը, դժվար է ընկալում, թե ինչպես կարելի է ապրել առանց ինտերնետ-բանկինգի, առանց առցանց առևտրի, առանց սոցիալական ցանցերի և մեսենջերների: Բայց որպեսզի այս ամենն աշխատեր, անհրաժեշտ էր մեթոդաբար և հետևողականորեն կազմավորել ցանցային ենթակառուցվածքը: Հազվադեպ կարելի է լսել այն տեսակետը, թե թվային տեխնոլոգիաների զարգացումը պայմանավորված էր միայն տեխնիկական առաջընթացով, և Ռուսաստանի իշխանությունները դրա հետ որևէ առնչություն չունեին: Բայց այս առաջընթացը հավասարապես տարածված էր աշխարհի բոլոր երկրներում: Եվ այնուամենայնիվ հենց Ռուսաստանում հնարավոր եղավ ապահովել բջջային կապի և ինտերնետի ամենացածր գներն աշխարհում, և Ռուսաստանի Դաշնությունը այդ տարիներին ընդգրկվեց ամենաարագ համացանցով և բջջային կապով ապահովված, լայնածավալ բնակչություն ունեցող երկրների շարքում: Առանց հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պետական նպատակաուղղված քաղաքականության նման առաջընթացն անհնար կլիներ:

Տրանսպորտային ենթակառուցվածքների ընդլայնումը: Երկրի զարգացման մեկ այլ կարևոր վեկտոր էր դարձել տրանսպորտային ենթակառուցվածքների ընդլայնումը, առանց որի տնտեսությունը չէր կարող արդյունավետ լինել: Պետությունը ծախսեր չի խնայել այս ոլորտում ներդրումներ կատարելու համար: Նոր օդանավակայաններ են կառուցվել Վլադիվոստոկում, Վլադիկավկազում, Գրոզնիում, Նիժնի Նովգորոդում, Դոնի Ռոստովում, Սամարայում, Սոչիում և այլ քաղաքներում: Խորհրդային Միության փլուզումից հետո ծովային մի շարք նավահանգիստներ մնացին ՌԴ սահմաններից դուրս: Առաջին պլան մղվեց նոր նավահանգիստների կառուցման հարցը, որոնք ընդունակ կլինեին ապահովել բեռների լայնածավալ փոխադրում: XXI դարում Ռուսաստանում կառուցվել են Վարանդեյ, Վիսոցկ, Օլյա, Պրիմորսկ, Սաբետտա, Տաման, Ուստ–Լուգա նավահանգիստները: Շարունակվել է կատարելագործվել երկաթուղային



Ղրիմի կամրջի կառուցումը Կերչի նեղուցով: 2018 թ., մարտ

ցանցը: ԲԱՄ-ի վրա շահագործման է հանձնվել Սեվերոմույսկի թունելը: ԲԱՄ-ից Յակուտսկի ուղղությամբ կառուցվել է Ամուր-Յակուտսկ մայրուղին: Երկաթուղու զգալի մասը էլեկտրաֆիկացվել է: 2000 թվականին երկաթուղիների բեռնաշրջանառությունը կազմել է 1,4, 2008 թվականին՝ 2,1, իսկ 2019 թվականին՝ 2,6 տրլն տոննա կիլոմետր: Լայն ճանաչում ունի Ղրիմի կամուրջը, որը շահագործման է հանձնվել 2018 թվականին: Այն XXI դարում Ռուսաստանում կառուցված նման մասշտաբի միակ կառույցն է: Ռուսաստանի 32 ամենաերկար կամուրջներից 22-ը կառուցվել են 2000 թվականից հետո: Դրանց թվում են Նախագահական կամուրջը Ուլյանովսկում, Ռուսական կղզի կամուրջը Վլադիվոստոկում, Յուրիբեյի կամուրջը Յամալում, Բոլշոյ Օբուխովսկի կամուրջը Սանկտ Պետերբուրգում, Վոլգայի կամուրջները Սարատովում և Վոլգոգրադում, Տեմերնիցկի կամուրջը Դոնի Ռոստովում, Ակադեմիական կամուրջը Իրկուտսկում, ինչպես նաև Նիկոլաևսկի կամուրջը Կրասնոյարսկում»:

Տնտեսության զարգացման արդյունքները: XXI դարում Ռուսաստանի ղեկավարությունը հենվեց ոչ թե տնտեսության սովետական դիրեկտիվ կառավարման կամ շուկային թերապիայի կողմնակիցներին բնորոշ շուկայի ինքնակազմակերպման գաղափարի վրա, այլ «փափուկ» կարգավորման մոտեցման վրա՝ ներառյալ վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունը, հարկային դրույքաչափերի ճշգրտումը, հստակ և հասկանալի (և ամենակարևորը՝ պարտադիր բոլորի համար) խաղի կանոնների ստեղծումը, ինչպես նաև բիզնեսի ակտիվացմանը նպաստող ենթակառուցվածքների ձևավորում: ՀՆԱ-ի աճի դինամիկան ցույց է տալիս, որ Ռուսաստանի տնտեսությունը XXI դարում զարգանում է աճման միտումով:

2005 թվականին Ռուսաստանը մարեց Արժույթի միջազգային հիմնադրամի պարտքը՝ վերադարձնելով 1990-ականներին ստացած վարկերը: 2006 թվականին Ռուսաստանի ՀՆԱ մակարդակը հավասարվեց 1990 թվականի ցուցանիշներին:

2008 թվականին Ռուսաստանի տնտեսությունը զգալիորեն տուժեց միջազգային տնտեսական ճգնաժամից: Սակայն, ինչպես երևում է աղյուսակից, հայրենական

տնտեսության անկումը եղել է կարճաժամկետ և վերականգնվել է արդեն 2010 թվականին: Հայրենական գյուղատնտեսությունը զգալի աճ գրանցեց: 2020-ականների սկզբին Ռուսաստանը հացահատիկի արտահանմամբ աշխարհում առաջատար դիրք գրավեց, իսկ 2020-ականների սկզբին այն դարձավ մսի արտահանող: Դա տեղի էր ունենում սննդամթերքի ներքին սպառման կայուն աճի ֆոնին:

Ռուսաստանի ՀՆԱ-ն 2000–2022 թթ .
(միլիարդ ռուբլի ընթացիկ գներով՝ ըստ Ռոսստատի)

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
ՀՆԱ	7.3	8.9	10.8	13.2	17.0	21.6	26.9	33.2
	2008	**2009**	**2010**	**20011**	**2012**	**2013**	**2014**	**2015**
ՀՆԱ	41.3	38.8	46.3	60.1	68.1	73.0	79.0	83.1
	2016	**2017**	**2018**	**2019**	**2020**	**2021**	**2022**	**-**
ՀՆԱ	85.6	91.8	03.7	109.6	107.7	135.3	153.4	-

Ռուսաստանում լայնածավալ սպորտային միջոցառումների անցկացումը՝ Սոչիի ձմեռային Օլիմպիական խաղերը (2014), ՖԻՖԱ-ի աշխարհի գավաթը (11 քաղաք, 2018), Համառուսաստանյան սպարտակիադան (12 քաղաք, 2022), Ապագայի խաղերը (Կազան, 2024) և այլն, դրական ազդեցություն ունեցավ տնտեսության վրա: Մարզական օբյեկտների կառուցումը և մրցումների անցկացումը նպաստեցին բազմաթիվ շրջանների զարգացմանը և ցույց տվեցին երկրի տնտեսական առաջընթացը թե՛ տեղացիներին, թե՛ օտարերկրյա այցելուներին:

2014 թվականին արևմտյան երկրները տնտեսական մի շարք պատժամիջոցներ (սահմանափակումներ) մտցրին Ռուսաստանի դեմ՝ պայմանավորված Ռուսաստանի և Ղրիմի վերամիավորմամբ և Դոնբասի ապստամբած հանրապետություններին Ռուսաստանի աջակցությամբ: Սակայն դա չհանգեցրեց ռուսական տնտեսության՝ արտասահմանում սպասվող փլուզմանը: Արդեն 2015 թվականին այն վերսկսեց աճը, իսկ 2018 թվականին գերազանցեց 2014 թվականի ծավալները: Ավելին, պատժամիջոցների ճնշումը հանգեցրեց ինչպես հասարակական կյանքի, այնպես էլ տնտեսության ինքնիշխանությանն ուղղված միջոցառումների ակտիվացմանը: Ձեռնարկվեց այլընտրանքային ուղեգիծ, որի ամենավառ ապացույցը դարձավ 2015 թվականին ստեղծված «Միր» ազգային վճարային համակարգը:

2020 թվականին Ռուսաստանի տնտեսությունը, ինչպես աշխարհի շատ երկրների տնտեսական համակարգերը, բախվեց արտակարգ իրավիճակի՝ կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված: Սակայն այս անկումը ընդամենը մեկ տարում նույնպես հաղթահարվեց: Այսպիսով, XXI դարում Ռուսաստանի տնտեսությունը ցուցաբերել է կայուն զարգացում՝ բարձր աճի տեմպերով և զգալի «կայունության պաշարով», ինչը թույլ տվեց նրան հարդյունավետ դիմակայել 2008 թվականի միջազգային տնտեսական ճգնաժամին, արտաքին պատժամիջոցներին և համաճարակային իրավիճակին:

§ 117. Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականությունը XXI դարի սկզբին

Հարաբերություններ արևմտյան երկրների հետ: 2001 թվականին ԱՄՆ-ը ենթարկվեց ահաբեկչական հարձակման: Ռուսաստանում, որը 1990-ականներին տուժում էր ծայրահեղականների հարձակումներից, դա անկեղծ կարեկցանք առաջացրեց: Հույսեր կային միասնական միջազգային հակաահաբեկչական ճակատի ձևավորման, որում ԱՄՆ-ը և Ռուսաստանը կարող էին հանդես գալ որպես դաշնակիցներ: Ռուսաստանը ԱՄՆ-ին տրամադրեց օդային միջանցք: Կուբայում և Վիետնամում խորհրդային ժամանակաշրջանից մնացած բազաները փակվեցին, իսկ 2002 թվականին ստեղծվեց Ռուսաստան-ՆԱՏՕ խորհուրդը, որը դիտվում էր որպես գործիք՝ Ռուսաստանի համագործակցությունը Հյուսիսատլանտյան պայմանագրի քաղաքական և ռազմական կառույցների հետ նոր մակարդակի հասցնելու համար: Ռուս քաղաքական գործիչները հետևաբեմերում հնչեցնում էին Ռուսաստանի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցը: Մի շարք փորձագետներ 2000–2004 թթ. նշում են որպես ռուս-ամերիկյան հարաբերությունների պատմական գագաթնակետ:

Հարկ է նշել, որ այս ընթացքում Ռուսաստանի ղեկավարության՝ արևմտյան աշխարհակարգին սերտաճելու ցանկությունը տարածվել է ոչ միայն քաղաքական և տնտեսական ոլորտների, այլև կրթության վրա: 2003 թվականին Ռուսաստանը միացավ Բոլոնիայի գործընթացին: Միասնական պետական քննության ներդրումը Ռուսաստանի Դաշնությունում (այն սկսվել է 2001 թվականից) իրականացվել է՝ հաշվի առնելով ԱՄՆ-ի և եվրոպական երկրների կրթական համակարգերում գնահատման թեստերի փորձը:

Սակայն Արևմուտքը շարունակեց ելնել Սառը պատերազմում հաղթողների վարքագծի տրամաբանությունից: 2003 թվականին, շրջանցելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները ներխուժեցին Իրաք: Մոսկվայի բողոքի ակցիաները անտեսվեցին: 2004 թվականին Ռուսաստանին կանգնեցրին ՆԱՏՕ-ի ընդլայնման փաստի առաջ, որի ընթացքում դաշինքին միացան Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Բուլղարիան, Ռումինիան, Սլովակիան և Սլովենիան: Այսպիսով, ՆԱՏՕ-ի սահմանները ընդհուպ մոտեցան Ռուսաստանին: ԱՄՆ-ը ողջունեց 2003 թվականին Վրաստանում տեղի ունեցած Վարդերի հեղափոխությունը և 2004 թվականի Նարնջագույն հեղափոխությունը Ուկրաինայում, որի արդյունքում այդ երկրներում իշխանության եկան հակառուսական ուժերը: 2006 թվականին ԱՄՆ փոխնախագահ Դ. Չեյնին փաստորեն Ռուսաստանին վերջնագիր ներկայացրեց. նրանից ակնկալում էին ընդունել թշնամական դիրք կամ վերադառնալ ժողովրդավարության սկզբունքներին»: Մոսկվային մեղադրում էին «շանտաժի», «տարածքային ամբողջականությունը խախտելու» և «ժողովրդավարական գործընթացներին միջամտելու» մեջ: Ռուսաստանի ղեկավարության փորձերը՝ պահպանել հավասար անվտանգության սկզբունքը, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության շահերը, հերթական անգամ անտեսվեցին:



Ռուս սակրավորների ջոկատը Չկալովսկի օդանավակայանում նախքան Սիրիա մեկնելը՝ Հալեպում ականազերծման աշխատանքների համար: 2016 թ., նոյեմբեր

Պարզ դարձավ, որ արևմտյան առաջնորդները ոչ միայն մտադիր չեն հաշվի առնել Ռուսաստանի շահերը, այլև ընդհանրապես կասկածի տակ են դնում Ռուսաստանի՝ սեփական շահեր ունենալու իրավունքը: Ռուսաստանի ղեկավարությունը ստիպված եղավ հաշվի առնել միջազգային քաղաքականության այս հայեցակետերը և համապատասխան կերպով արձագանքել ինչպես արտաքին քաղաքականության ոլորտում, այնպես էլ ներքին քաղաքականությունում: Հատկանշական է, որ Ռուսաստանի՝ 2020 թվականին ընդունված Սահմանադրության կարևոր փոփոխություններից մեկը վերաբերում էր այն կարգավորմանը, ըստ որի, ըստ Վ. Վ. Պուտինի, միջազգային օրենսդրության և պայմանագրերի հիմնական պահանջները, ինչպես նաև միջազգային մարմինների որոշումները կարող են գործել Ռուսաստանի տարածքում միայն այնքանով, որքանով դրանք չեն խախտում մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները և չեն հակասում երկրի Սահմանադրությանը:

Ռուսաստանը ակտիվացրեց իր գործունեությունը Շանհայի համագործակցության կազմակերպությունում, որը հիմնվել էր 2001 թվականին, և 2006 թվականին դարձավ ԲՌԻԿՍ-ի ստեղծման նախաձեռնողներից մեկը: Միջազգային քաղաքականության մեջ մեծ նշանակություն ունեցավ Սիրիայի բազմակողմ հակամարտությանը ռուսական զորքերի մասնակցությունը: 2015 թվականին օգնության հասնելով Բ. Ասադի օրինական կառավարությանը՝ 2017 թվականին ռուսական զորքերը արդեն վճռական պարտության մատնեցին «ԴԱԻՇ» ծայրահեղական կազմակերպության զինյալներին: Սա նպաստեց ինչպես Ռուսաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, այնպես էլ Մերձավոր Արևելքում իրավիճակի կայունացմանը:

Հարաբերություններ հետխորհրդային երկրների հետ: XXI դարում հետխորհրդային տարածքում տնտեսական ինտեգրման հարցերում զգալի առաջընթաց ձեռք

բերվեց: 2004 թվականին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի և Ուկրաինայի ներկայացուցիչները նախնական համաձայնագիր ստորագրեցին Միասնական տնտեսական տարածքի (ՄՏՏ) ստեղծման վերաբերյալ: Նույն թվականին Ուկրաինայում Նարնջագույն հեղափոխություն տեղի ունեցավ, որից հետո Կիևը հրաժարվեց ՄՏՏ-ին մասնակցելուց: 2010 թվականին ստեղծվեց Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի մաքսային միությունը. ստորագրվեց 17 հիմնարար փաստաթղթեր, որոնք ապահովում էին Միասնական տնտեսական տարածքի ստեղծումը, և որոշում կայացվեց հետագայում ՄՏՏ-ի հիման վրա ձևավորել Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ): ԵԱՏՄ-ի ստեղծման մասին պայմանագիրը ստորագրվել է Աստանայում 2014 թվականի մայիսի 29-ին (ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 1-ից):

Ընդհանուր առմամբ Ռուսաստանը բարիդրացիական հարաբերություններ էր պահպանում հետխորհրդային երկրների հետ: Այնուամենայնիվ այս կանոնից բացառություններ կային: 1990-ական թվականներին մի շարք հակամարտություններում Ռուսաստանը հանդես էր գալիս որպես խաղաղապահ, այդ թվում՝ Հարավային Օսիայում: 2003 թվականին Վարդերի հեղափոխության ժամանակ Վրաստանում իշխանության եկան Մ.Ն. Սահակաշվիլու կողմնակիցները: Այս քաղաքական կլանն ուներ ամերիկամետ և ռուսաֆոբ հայացքներ: 2008 թվականի օգոստոսին, խախտելով նախկինում կնքված պայմանագրերը, վրացական զորքերը հարձակվեցին Հարավային Օսիայում ռուս խաղաղապահների վրա: Ռուսաստանը ստիպված եղավ «Վրաստանին խաղաղության հարկադրելու» գործողություն սկսել: Հնգօրյա ճակատամարտի ընթացքում ռուսական զորքերը պարտության մատնեցին ագրեսորին և վերականգնեցին նախապատերազմական իրավիճակը: 2008 թվականին Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնիշխանությունը և պայմանագիր ստորագրեց այդ հանրապետությունների հետ՝ «Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին», որի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվեցին «սերտորեն համագործակցել միմյանց հետ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և անվտանգության ապահովման գործում»:

Ուկրաինայի հետ հարաբերություններում լարվածության աճը: Ուկրաինայի հետ հարաբերությունները նույնպես բարդ էին: Խորհրդային տարիներին Սիբիր-Արևմտյան Եվրոպա գազատարների մեծ մասն անցկացվել էր Ուկրաինական ԽՍՀ տարածքով: 1991 թվականից ի վեր Ուկրաինայի տարածքով գազի տարանցման և Ուկրաինային գազի մատակարարումների վճարման հարցը գնալով սրվում էր: Առանձնակի խնդիր էր գազի չարտոնված արդյունահանման գործելակերպը, որի ժամանակ ուկրաինական իշխանությունները պարզապես ծովահենային եղանակով տարանցիկ խողովակաշարից խլում տանում էին գազի մի մասը և հրաժարվում էին քննարկել չվճարված գազի դիմաց վճարի հարցը: Պարտքերը կուտակվեցին, բայց երբ Մոսկվան բարձրացնում էր էներգիայի դիմաց վճարելու հարցը, Կիևը սպառնում էր դադարեցնել տարանցումը: Քանի որ նավթի և գազի եկամուտներն այն ժամանակ առանցքային նշանակություն ունեին Ռուսաստանի համար, Մոսկվան նախընտրեց համակերպվել իրերի այս վիճակին:

Ուկրաինայի քաղաքականությունն այդ տարիներին երկակի բնույթ էր կրում: Մի կողմից ակնհայտ էր, որ տնտեսական առումով Ուկրաինան կշահի Ռուսաստանի հետ սերտաճումից: Երկու երկրները կապված էին միմյանց հետ կոոպերատիվ մատակարարումներով. ուկրաինական ձեռնարկությունները կախված էին ռուսական համալրումից, իսկ ռուսական գործարանները հանգույցներ և ագրեգատներ ստանում էին Ուկրաինայից: Ուստի Կրեմլն ակնկալում էր, որ ողջախոհությունը կհաղթի, և Ուկրաինայի հետ հարաբերությունները կսկսեն բարելավվել:

Մյուս կողմից, Ուկրաինայի գրեթե ողջ քաղաքական վերնախավը հետխորհրդային ժամանակաշրջանում նայում էր դեպի Արևմուտք՝ իր ապագան կապելով ՆԱՏՕ-ի, Եվրամիության կազմի մեջ մտնելու հետ: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո քաղաքական գործիչները սկսեցին ուկրաինական հասարակության մեջ ներդնել ազգայնական և ռուսաֆոբ գաղափարները: Նրանք պնդում էին, որ 1932 թվականի սովը ուկրաինացիների կանխամտածված ցեղասպանություն էր, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին նրանք դարձան միաժամանակ երկու բռնապետության՝ Հիտլերի և Ստալինի զոհերը, իսկ ուկրաինացի ժողովրդի պատմությունը ներկայացվում էր իբրև ազգային-ազատագրական պայքարի պատմություն՝ սկզբում Ռուսական կայսրությունից, իսկ հետագայում՝ ԽՍՀՄ-ից: Ուկրաինայի բնակչության ուղեղները լվացող մեքենային աջակցում էր Արևմուտքը, որը գործում էր «Ուկրաինան՝ հակառուսաստանյան» հայեցակարգի շրջանակներում՝ հրահրելով Ուկրաինային ընդդեմ Ռուսաստանի, թույլ չտալով նրանց մերձենալ տնտեսական, քաղաքական և հումանիտար ոլորտներում:

Ի վերջո, 2001 թվականին Ռուսաստանին հաջողվեց Ուկրաինայի հետ համաձայնագիր կնքել՝ «Լրացուցիչ միջոցների մասին՝ ապահովելու ռուսական բնական գազի տարանցումը Ուկրաինայի տարածքով»: Այս պայմանագրով Ռուսաստանը փաստացի դուրս էր գրում ուկրաինական կողմի՝ մինչ այդ պահը կուտակված բոլոր պարտքերը (ձևական առումով խոսքը գնում էր վերակառուցման մասին, բայց բոլորը հասկանում էին, որ Ուկրաինան երբեք չի կարողանա վճարել այդ գումարը): Փոխարենը Ուկրաինան Մոսկվային իրավունք տվեց վերահսկել գազի վերաարտահանումը, ինչը հնարավորություն տվեց լուծել չարտոնված զավթումների խնդիրը:

2004 թվականին Նարնջագույն հեղափոխության ժամանակ Ուկրաինայում իշխանության եկան բացահայտ արևմտամետ քաղաքական գործիչներ: Նրանք հրաժարվեցին Ռուսաստանի հետ սերտաճելու ծրագրերից և հռչակեցին Ուկրաինայի եվրոպական ընտրությունը: Այս քաղաքականության կարևոր խնդիրը դարձավ Կիևի պահանջը՝ հերթական անգամ վերանայել գազի պայմանագրի պայմանները՝ հօգուտ տարանցման վճարի բարձրացման: Սակայն այս անգամ Մոսկվան չնահանջեց, ինչի արդյունքում 2005–2006 թթ. ձմռանը և 2008–2009 թվականներին ծագեցին ռուս-ուկրաինական գազային հակամարտությունները: Արդյունքում ուկրաինական կողմը ստիպված եղավ համաձայնել գազի վաճառքի գների կտրուկ բարձրացմանը՝ դրանք հասցնելով համաշխարհային մակարդակի: Ուկրաինայի տնտեսությունը, որը նախկինում հիմնականում գոյատևում էր ռուսական գազի՝ ինքնարժեքից ցածր գների հաշվին, սկսեց ակնհայտ դժվարություններ ունենալ:

Այս իրադարձությունները դարձան ռուս-ուկրաինական հարաբերությունների հետագա վատթարացման նախաբան: Ուկրաինայում խրախուսվում էր ռուսաֆոբիան: Քանդվում եին Խորհրդային ազատամարտիկների հուշարձանները, վերանվանվում էին քաղաքներն ու ավանները, որոնց անուններն արտացոլում էին Ռուսաստանի և Ուկրաինայի պատմական ընդհանրությունը, ռուսաց լեզուն դուրս էր մղվում հաղորդակցության ոլորտից: Կիևի նոր քաղաքականության կարևոր տարրը Բանդերայի հրոսակախմբերի և ՍՍ «Գալիցիա» կամավորական դիվիզիայի զինվորների հերոսացումն էր: Աստիճանաբար նեոնացիզմն ավելի ու ավելի ազդեցիկ էր դառնում ուկրաինական քաղաքականության մեջ: Կիևի կողմից նեոնացիստական տարբեր խմբավորումների աջակցությամբ իրականացվող ուկրաինացման ակտիվ քաղաքականությունը վրդովմունք էր առաջացնում Ուկրաինայի ռուսալեզու բնակչության շրջանում:

§ 118. 2014–2022 թթ. արտաքին քաղաքական իրադարձությունները

Ռուսական գարուն: 2014 թվականի սկզբին Ուկրաինայում կրկին պետական հեղաշրջում տեղի ունեցավ՝ Եվրամայդան: Իշխանությունը զավթեցին արմատական ազգայնականները: Նախորդ տարիներին ակտիվորեն ներարկվող ռուսաֆոբիան և նեոնացիստական տրամադրությունները 2014 թվականից հետո ծայրահեղ ձևեր ստացան: Ջարդերի և նոր Կառավարության հակառակորդների նկատմամբ բռնության ալիքը տարածվեց ամբողջ երկրով: Կորսունի՝ 2014 թվականի փետրվարի 20-ի ջարդը դարձավ այս տեսակի ամենահայտնի գործողություններից մեկը, բայց այն հեռու էր միակը լինելուց: Հատկանշական է, որ «Եվրամայդանի ղեկավարների առաջին որոշումներից մեկը վերաբերում էր «Պետական լեզվական քաղաքականության հիմունքների մասին» օրենքի չեղարկմանը, որի համաձայն՝ Ուկրաինայում ռուսաց լեզվին շնորհված էր տարածաշրջանային լեզվի կարգավիճակ այն շրջաններում, որտեղ այն մայրենի լեզու էր բնակչության առնվազն 10%-ի համար, և նրան տրվում էին պետական ուկրաիներենին հավասար իրավունքներ: Ակնհայտ դարձավ, որ Կիևը որդեգրել էր հարկադիր ուկրաինացման քաղաքականություն:

Դա զանգվածային բողոքի ցույցեր առաջացրեց Ղրիմում, ինչպես նաև Դոնեցկում, Լուգանսկում, Օդեսայում, Խարկովում և Ուկրաինայի հարավային և հարավարևելյան այլ քաղաքներում: Այս շրջաններում սկսվեց ինքնապաշտպանական ջոկատների ձևավորումը, որոշ քաղաքներում ընտրվեցին «ժողովրդական քաղաքապետեր»: Հետագայում այս իրադարձությունները ստացան «ռուսական գարուն» անվանումը:

Ռուսաստանի և Ղրիմի վերամիավորումը: Չափազանց լարված իրավիճակ էր ստեղծվել հիմնականում ռուսալեզու Ղրիմում և Սևաստոպոլում, որոնք հրաժարվեցին ճանաչել Կիևի նոր կառավարության լեգիտիմությունը: Այս տարածաշրջանն ուներ յուրահատուկ առանձնահատկություն. նրա բնակիչները մշտապես պատմական կապ են ունեցել Ռուսաստանի հետ: 1990-ականներից նրանք հանդես էին գալիս առնվազն Ռուսաստանի Դաշնության հետ կապերի ընդլայնման, իսկ առավելագույնը՝ Ղրիմի՝ Ուկրաինայից դուրս գալու և Ռուսաստանին վերամիավորելու օգտին:

Եվրամայդանի հաղթանակից հետո տեղի բնակչությունը ստեղծեց իր կառավարման մարմինները, ինքնապաշտպանական ստորաբաժանումները, պաշտպանության համար դիմեց Ռուսաստանի ղեկավարությանը։ Նրանց օգնության եկան Սևաստոպոլում տեղակայված ռուսական սևծովյան նավատորմը և հատուկ գործողության ուժերի ստորաբաժանումները («բարեկիրթ մարդիկ»), որոնք վայրէջք էին կատարել թերակղզում։ Ուկրաինայի՝ Ղրիմում տեղակայված զինված ուժերի ստորաբաժանումները Կիևից զենք չեն վերցրել։ Ուկրաինացի զինծառայողների մի մասը մեկնեց Ուկրաինա, իսկ մյուսները նախընտրեցին մնալ Ղրիմում և հետագայում ընդունեցին Ռուսաստանի քաղաքացիություն։ Ղրիմի իրադարձությունների ժամանակ հաջողվեց խուսափել արյունահեղությունից։

2014 թվականի մարտի 16-ին Ղրիմում և Սևաստոպոլում տեղի ունեցավ հանրաքվե, որին հետևում էին ավելի քան 50 դիտորդներ 21 երկրներից, այդ թվում՝ Իսրայելից, Իտալիայից և Ֆրանսիայից։ Արդյունքում հանրաքվեի մասնակիցների 97 %-ը քվեարկեց Ղրիմի՝ Ռուսաստանին միանալու օգտին։ 2014 թվականի մարտի 18-ին Կրեմլում Ռուսաստանի Դաշնության և Ղրիմի Հանրապետության միջև ստորագրվեց Ղրիմի Հանրապետությունը Ռուսաստանի Դաշնության կազմում ընդգրկելու և Ռուսաստանի Դաշնության կազմում նոր սուբյեկտների ձևավորման մասին պայմանագիրը։ Ղրիմի Հանրապետությունը և Սևաստոպոլը, որոնք ստացան դաշնային նշանակության քաղաքի կարգավիճակ, դարձան Ռուսաստանի Դաշնության նոր սուբյեկտներ։

Կիևի իշխանությունները և արևմտյան երկրները չճանաչեցին Ղրիմի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու փաստը։ Ի պատասխան՝ Ռուսաստանի Դաշնության դեմ պատժամիջոցներ կիրառվեցին, և կասեցվեց նրա անդամակցությունը G8-ին։

Պայքար Դոնբասի անկախության համար: Ի տարբերություն Ղրիմի և Սևաստոպոլի, որոնք խաղաղ ճանապարհով, ժողովրդի կամքին համապատասխան, մտան Ռուսաստանի կազմի մեջ, Ուկրաինայի հարավում և արևելքում՝ հիմնականում ռուսալեզու շրջաններում այլ իրավիճակ էր ստեղծվել։ Այն բանից հետո, երբ Դոնբասը հրաժարվեց ենթարկվել Կիևի նոր իշխանություններին, 2014 թվականի ապրիլին Դոնեցկի և Լուգանսկի շրջանների բնակիչները հռչակեցին Դոնեցկի Ժողովրդական Հանրապետության (ԴԺՀ) և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետության (ԼԺՀ) ստեղծումը։ Հայտարարվել էր անկախության հանրաքվեի նախապատրաստման մասին։ 2014 թվականի մայիսի 2-ին ազգայնականների ամբոխը Օդեսայում հարձակվեց Եվրամայդանի հակառակորդների ցույցի վրա, ցուցարարներին ներս մղեցին արհիմիությունների շենք և այրեցին այդ շենքը մարդկանցով հանդերձ։ Ավելի քան 40 մարդ ողջակիզվեց։ Կիևի խունտան ոչ միայն չձերբակալեց ջարդարարներին, այլև, ընդհակառակը, սուգ հայտարարեց իբր վիրավորված ազգայնականների հիշատակին։ Այս իրադարձությունների լույսի ներքո մայիսի 11-ին կայացած հանրաքվեի ժամանակ ընտրողների մոտ 90 %-ը արտահայտվեց Դոնեցկի և Լուգանսկի Հանրապետությունների անկախության օգտին։

2014 թվականի գարուն–ամառ ժամանակահատվածում Ուկրաինայի իշխանությունները փորձեցին զենքի ուժով ոչնչացնել ԴԺՀ-ն և ԼԺՀ-ն։ Դոնբասի քաղաքներն ու

գյուղերը ենթարկվեցին ավիահարվածների և զանգվածային գնդակոծությունների: Ուկրաինայի ղեկավարությունը հրաժարվում էր ընդունել այս փաստերը՝ խոսելով «ինքնաբուխ օդորակիչների պայթյունների» և Դոնբասի բնակիչների կողմից «ինքնագնդակոծման» մասին:

Ռուսաստանից ժամանած կամավորների աջակցությամբ ժողովրդական հանրապետությունները դիմակայեցին և նույնիսկ կարողացան վերադարձնել նախկինում ուկրաինական զորքերի կողմից գրավված տարածքի մի մասը: Պարտություններիի արդյունքում Ուկրաինան համաձայնեց՝ Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի և ԵԱՀԿ-ի միջնորդությամբ բանակցել ԴԺՀ-ի և ԼԺՀ-ի կարգավիճակի շուրջ: 2015 թվականի փետրվարին Մինսկում ստորագրվեցին հրադադարի և Դոնբասում իրավիճակի փուլային կարգավորման մասին համաձայնագրեր: Կողմերը պայմանավորվեցին, որ ԴԺՀ-ն և ԼԺՀ-ն կմնան Ուկրաինայի կազմում, սակայն նրանց կտրվի ինքնակառավարվող մարզեր հատուկ կարգավիճակը: Իրականում խոսքը Ուկրաինան դաշնության վերածելու մասին էր: Այդ պայմանավորվածությունները չկատարվեցին ուկրաինական կողմի և նրա արևմտյան հովանավորների մեղքով: Ուկրաինական հրետանու կողմից շարունակվեցին Դոնեցկի և Լուգանսկի գնդակոծությունները, հազարավոր խաղաղ բնակիչներ զոհվեցին և խեղվեցին: Ինչպես հետագայում խոստովանեցին արևմտյան առաջնորդները, Գերմանիան և Ֆրանսիան ի սկզբանե «խաղում» էին Կիևի կողմից, որը մտադիր չէր կատարել իր վրա վերցրած պարտավորությունները: Նրանք Մինսկի համաձայնագրերը դիտարկում էին որպես Ուկրաինային զենք մատակարարելու անհրաժեշտության ձգձգում «Դոնբասի խնդրի» ռազմական լուծման համար: Միաժամանակ տնտեսական պատժամիջոցներ սահմանվեցին Ռուսաստանի Դաշնության դեմ՝ ԴԺՀ-ին և ԼԺՀ-ին օգնելու համար: Սակայն այդ պատժամիջոցները ռուսական տնտեսության համար էական հետևանքներ չունեին:

Հատուկ ռազմական գործողության սկիզբը: Իրավիճակը շարունակեց վատթարանալ: Ժողովրդական հանրապետությունների տարածքի գնդակոծումը դարձել էր մշտական: Ուկրաինայում ռուսաֆոբիայի մակարդակն օրեցօր աճում էր: 2017 թվականին ընդունվեց օրենք, ըստ որի՝ դպրոցներում և բուհերում կրթությունը տարվում էր բացառապես ուկրաիներենով: 2019 թվականին Ուկրաինայի Սահմանադրությունը օրենսդրորեն ամրագրեց երկրի կուրսը ՆԱՏՕ-ին միանալու ուղղությամբ: ՆԱՏՕ-ի դիրքերի առաջխաղացումը Կենտրոնական և Արևելյան Ուկրաինա ինքնին կրիտիկական սպառնալիք էր Ռուսաստանի համար: Ուկրաինական բանակը հագեցվում էր զենքով և շարունակական «սողացող գրոհ» անցկացնելով՝ դիրքեր էր գրավում կողմերից ոչ մեկին չպատկանող սահմանազատման գծի տարածքում: 2022 թվականի փետրվարի 18-ին Ուկրաինայի զինված ուժերի՝ ժողովրդական Հանրապետություններ լայնածավալ ներխուժման նախապատրաստությունն այնքան ակնհայտ դարձավ, որ հանրապետության ղեկավարությունը ստիպված եղավ հայտարարել բնակչության զանգվածային տարհանման մասին: (ԴԺՀ-ի մոտ 2 միլիոն բնակչից 700 հազարը՝ հիմնականում երեխաներ, կանայք և ծերեր, տարհանվեցին Ռուսաստան): 2022 թվականի փետրվարի 21-ին Ռուսաստանի Դաշնությունը ճանաչեց Դոնեցկի և Լուգանսկի

Ժողովրդական Հանրապետությունների անկախությունը: 2022 թվականի փետրվարի 24-ին, սպառելով քաղաքական կարգավորման հնարավորությունները և համոզվելով, որ ո՛չ Կիևի ռեժիմը, ո՛չ նրա հոգաբարձուներն ու հովանավորները Արևմուտքում մտադիր չեն իրականացնել Մինսկի պայմանավորվածությունները, Ռուսաստանը Ուկրաինայում սկսեց Հատուկ ռազմական գործողություն (ՀՌԳ):

